Մ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Х. А. БАРСЕГЯН

РАСПРОСТРАНЕНИЕ МАРКСИЗМА В АРМЕНИИ

БОРЬБА ЗА ПОБЕДУ МАРКСИСТСКО-ЛЕНИНСКИХ ИДЕЙ

1905—1920

КНИГА ВТОРАЯ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1975

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Խ. Հ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Д II / 56288

ՊԱՅՔԱՐ ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

1905—1920

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1975

ЭКП1 (С43)
Բ 37

Սույն աշխատությունը հեղինակի 1967 թ. լույս տեսած համանուն մենագրության երկրորդ գիրքն է։ Այն ընդգրկում է հայ իրականության մեջ մարքս-լենինյան գաղափարների տարածումը 1905—1920 թթ.։ Նրանում լուսաբանված է հայ հասարակական-քաղաքական մտքի արմատական շրջադարձը, Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանությունների և հրատարակությունների պատմությունը, բոլշևիկյան կազմակերպությունների պայքարը մարքսիստական-լենինյան գաղափարների հաղթանակի համար, ականավոր լենինյաններ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի, Ա. Մյասնիկյանի և այլոց տեսական-պրոպագանդիստական գործունեությունը։ Մարքսիզմ-լենինիզմի տարածման լույսի ներքո տրվում է բուրժուական և մանրբուրժուական գաղափարախոսությունների քննադատությունը, գիտականորեն նկարագրվում է հայ ժողովրդի ազատագրության լենինյան ուղին։

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում մեծ քանակությամբ արխիվային նյութեր և փաստաթղթեր։

Բ $\frac{10104}{703\ (02)-75}$ 15—75 © Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1975

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկա աշխատությունը «Մարքսիզմի տարածումը Հայաստանում» մենագրության երկրորդ գիրքն է: Առաջինը լույս է տեսել 1967 թ. Աշ. Հովհաննիսյանի խմբագրությամբ[1]: Երկրորդ գրքում (1905—1920) նույնպես պահպանել ենք ընդհանուր խորագիրը՝ ավելացնելով «Պայքար մարքս-լենինյան գաղափարների հաղթանակի համար»:

Աշխատության նպատակն է Ռուսաստանի պրոլետարիատի դասակարգային պայքարի ֆոնի վրա ցույց տալ Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման ու զարգացման ընթացքը, նրա հաղթանակը, հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ կատարված արմատական շրջադարձը, հայ ականավոր մարքսիստների՝ Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի, Ս. Կասյանի, Ա. Բեկզադյանի և այլոց գրական ժառանգության նշանակությունը:

Երկրորդ գրքում լուսաբանված են Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ ծավալված բանվորական հեղափոխական շարժումներն ու ելույթները, մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների՝ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների պատմությունը, բոլշևիկյան կուսակցության գաղափարական, կազմակերպական, տեսական, քաղաքական հիմունքների պրոպագանդան մարքսիստական հայ պարբերական մամուլում, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության գաղափարների տարածումը հայ իրականության մեջ: Մեծ տեղ է տրված Հայաստանում մարքսիստական-լենինյան մտքի զարգացման օրինաչափությունների, պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կուսակցության կառուցման լենինյան սկզբունքների լուսաբանմանը, գիտական կոմու-

---

[1] Խ. Հ. Բարսեղյան, *Մարքսիզմի տարածումը Հայաստանում (1880-ական թթ.—1904 թ.)*, գիրք առաջին, Երևան, ամփոփումը ռուսերեն:

նիզմի պրոբլեմների շուրջ ծավալված գաղափարական հակամարտությունների բացահայտմանը, դաշնակցության ռեակցիոն գործունեության, հնչակյան և «սպեցիֆիկյան» մանրբուրժուական սոցիալիզմի ու այլ տարատեսակների քննադատությանը: Արխիվային և հրապարակված նյութերի հիման վրա ցույց են տրված Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների գաղափարական մեծ ժառանգության թարգմանությունները ու հրատարակությունները, առաջին անգամ ամբողջական ձևով հանրագումարի է բերված Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների փորձը, Վ. Ի. Լենինի անգնահատելի դերը Հայաստանում մարքսիզմի տարածման ու պրոպագանդման, նրա հաղթանակի համար մղված պայքարում:

Մարքսիզմ-լենինիզմի մուտքը և տարածումը Հայաստանում սերտորեն առնչված է նրա գաղափարների ամուր հիմքի վրա ստեղծված բոլշևիկյան կուսակցության պատմության հետ:

Հայ ժողովրդի (Արևելահայաստանի) XX դարի հասարակական զարգացման բուն էությունը հայ պրոլետարիատի ձևավորումն ու նրա դասակարգային հասունացումն է, աշխատավոր զանգվածների քաղաքական ինքնագիտակցության աճը, ազգային-ազատագրական ընդվզումների, սոցիալ-դասակարգային գոտեմարտերի, բանվորական հեղափոխական և ագրարային շարժումների ճիշտ ընկալումը, նոր աշխարհայացքի՝ մարքսիզմ-լենինիզմի յուրացումը, գիտական սոցիալիզմի արմատավորումը, որը հանգեցրել է Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը, սոցիալիստական ինտերնացիոնալիզմի՝ մարքս-լենինյան գաղափարների հաղթանակին:

Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածումն ամենից առաջ արդյունք է հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման ընթացքում տեղի ունեցած արմատական ու բախտորոշ բեկման, կոմունիստական կուսակցության մարտական ջոկատներից մեկի՝ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կազմակերպական ձևավորմանն ու գործունեությանը:

Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման պատմությունը ոչ միայն սոցիալիստական գրականության թարգմանությունների սոսկ նկարագրությունն է, այլև հայ հասարակական-քաղաքական մտքի մեծ շրջադարձի՝ լենինյան փուլի արտացոլումը, ուտոպիական ու մանրբուրժուական սոցիալիզմի, բուրժուական գաղափարախոսության, բուրժուանացիոնալիստական դաշնակցական կուսակցության դեմ հայ լենինյանների մղած անհաշտ պայքարի, մարքս-լենինյան տեսության պաշտպանության ու զարգացման գիտական լուսաբանումը:

Մենագրության մեջ փաստական նյութերի հիման վրա ցույց են տրված մարքսիզմ-լենինիզմի տարածման ընդհանուր օրինաչափությունները ու առանձնահատկությունները, որոնք ամենից առաջ պայմանավորված են հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայ և արևմտահայ, աշխատավորության սոցիալ-քաղաքական զարգացման տարբեր աստիճաններով: Գաղափարական ցավատանջ պայքարի ուղիով է ընթացել հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացումը, մեծ դժվարությունների հաղթահարմամբ է մարքսիզմ-լենինիզմը թափանցել Հայաստան: Անգիտանալ հայ իրականության մեջ մարքսիզմի և նրա զարգացման բարձրագույն աստիճանի՝ լենինիզմի թափանցման ու արմատավորման պրոցեսում իրարամերժ քաղաքական հոսանքների ու կուսակցությունների միջև տեղի ունեցած գաղափարական սուր տարաձայնությունները ու անհաշտ բախումները, առանձին դեպքերում եղած խոտորումները ու նահանջները, նշանակում է պատմությունը գունազարդել, ամեն ինչ հաղթարշավի վերածել և դրանով իսկ խեղաթյուրել իսկական պատմությունը:

Հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման փուլերի անաչառ նկարագրությունը, պատմականության սկզբունքի կիրառումը կօգնեն պատմական ճշմարտության վերականգնմանը, երկու հակոտնյա՝ բուրժուական և սոցիալիստական գաղափարախոսությունների գոտեմարտի բացահայտմանը, ավագ սերնդի հեղափոխականների գործունեության ճիշտ ընկալմանը: Եթե XIX դարի 40-ական թթ. մինչև 90-ական թթ. Ռուսաստանի առաջադեմ միտքը,—ինչպես նշել է Վ. Ի. Լենինը,—ցարիզմի դաժան հալածանքների և վայրագ կամայականության պայմաններում, տենդագին եռանդով հեղափոխական տեսության առույգ կողմնացույց էր որոնում, և նա այդ գտավ «*չարչարանքով*, անլուր տանջանքների ու զոհերի, չտեսնված հեղափոխական հերոսության, անհավատալի եռանդի ու անձնվեր որոնումների, ուսման, պրակտիկայում փորձելու, հիասթափումների, ստուգման, Եվրոպայի փորձի զուգորդման կեսդարյա պատմությամբ»[2], ապա հայ իրականության մեջ այդ ամենին գումարվում էին նաև տեղական պայմաններից բխող առանձնահատկությունները ու դժվարությունները: Մարքսիստական միտքը Հայաստանում բավականաչափ առաջ անցավ երկրի տնտեսական և քաղաքական զարգացումից, համակեց աշխատավոր լայն մասսաներին, դարձավ բանվորների, գյուղացիների և մտավորականության գաղափարական հատու զենքը:

---

2 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 31, էջ 11։ Վ. Ի. Լենինից բերված քաղվածքները վերցված են Երկերի հայերեն հրատարակութիւնից (ռուսերեն չորրորդ հրատարակութիւնից թարգմանված) և համեմատված հինգերորդ հրատարակութեան համապատասխան տեքստի հետ։* Խ. Բ.:

Մենագրությունը գրված է մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների՝ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի, կոմունիստական կուսակցության ականավոր գործիչների աշխատությունների, պատմա-կուսակցական կարևորագույն վավերագրերի, հայ նշանավոր լենինյանների գրական ժառանգության ու ավանդույթների հիման վրա: Օգտագործված է թեմայի շուրջ եղած պատմա-կուսակցական գրականությունը: Աղբյուրների տեսությունը տրված է առաջին գլխում: Նոր լույս տեսած աշխատությունների մասին հիշատակվում է համապատասխան բաժիններում:

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

1. Գիտական կոմունիզմը: 2. Հակակոմունիզմի հիմնական կոնցեպցիաների քննադատությունը: 3. Կուսակցության մասին լենինյան ուսմունքի արդի նենգափոխողները: 4. Տրոցկիզմը հակակոմունիզմի գաղափարական զենքն է:

1

Կոմունիզմը, մարքսիզմը և բոլշևիզմը հոմանիշներ են։ Լենինիզմը մարքսիզմի բարձրագույն աստիճանն է, ինտերնացիոնալ ուսմունք։ Մարքսիզմ-լենինիզմը փիլիսոփայական, տնտեսագիտական և սոցիալ-քաղաքական հայացքների գիտական կուռ և ամբողջական սիստեմ է, բանվոր դասակարգի գիտական աշխարհայացքը։ Մարքսիզմ-լենինիզմը գիտություն է աշխարհը ճանաչելու և հեղափոխական ճանապարհով վերափոխելու մասին, հասարակության, բնության և մարդկային մտածողության զարգացման, բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի օրենքների մասին՝ հանուն կապիտալիզմի կործանման և աշխատավոր մարդկության ազատագրության ու երջանկության։

Մարքսիզմ-լենինիզմի բաղկացուցիչ մասն է կազմում գիտական կոմունիզմը, որն ուսումնասիրում է հեղափոխական ուղիով կապիտալիզմի տապալման և մարդկության առաջադիմության բարձրագույն աստիճանի՝ կոմունիստական հասարակության առաջացման ու զարգացման օրինաչափությունները։ Գիտական կոմունիզմը գիտություն է պրոլետարիատի դասակարգային պայքարի և սոցիալիստական հեղափոխության, կոմունիստական հասարակարգի՝ սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման սոցիալ-տնտեսական

օրինաչափությունների մասին: Հասարակության զարգացման օրինաչափությունների ուսումնասիրման հիման վրա գիտական կոմունիզմը ցույց է տալիս այն միջոցներն ու մեթոդները, որոնց օգնությամբ այդ օրինաչափությունները կարող են արդյունավետորեն օգտագործվել սոցիալական պրոցեսների ղեկավարման գործում[1]: Գիտական կոմունիզմն ունի ինտերնացիոնալ էություն և ստեղծագործական բնույթ, մարքսիզմ-լենինիզմի մյուս բաղկացուցիչ մասերի հետ մեկտեղ հանդիսանում է կոմունիստական և բանվորական կուսակցությունների ու սոցիալիստական պետությունների քաղաքականության գիտական մշակման տեսական հիմքը:

Գիտական կոմունիզմն անհաշտ է բուրժուական գաղափարախոսության հետ:

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը գիտական կոմունիզմի կուսակցություն է: Նրա պատմությունը մարքսիզմ-լենինիզմն է գործողության մեջ: ՍՄԿԿ-ն աշխարհի սոցիալիստական մյուս կառավարող կուսակցությունների հետ միասին մշակում ու զարգացնում է կոմունիստական հասարակարգի կառուցման սկզբունքային պրոբլեմները: Փոխադարձ փորձի ուսումնասիրումն ու ընդհանրացումը հնարավորություն են ընձեռում ճշգրտել սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափությունները, լիակատար չափով բացահայտել արդեն կառուցված սոցիալիզմի հիմնական գծերը:

ՍՄԿԿ ծրագրում ասված է. «Կոմունիզմը ամբողջ մարդկության պայծառ ապագան է: Կոմունիզմը անդասակարգ հասարակարգ է արտադրության միջոցների միասնական համաժողովրդական սեփականությամբ. հասարակության բոլոր անդամների սոցիալական լիակատար հավասարությամբ, որտեղ մարդկանց համակողմանի զարգացման հետ մեկտեղ շարունակ զարգացող գիտության և տեխնիկայի հիման վրա կաճեն նաև արտադրողական ուժերը, հասարակական հարստության բոլոր աղբյուրները լիառատ կհորդեն և կիրագործվի «յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքների» մեծ սկզբունքը: Կոմունիզմը ազատ և գիտակից աշխատավորների բարձր կազմակերպված հասարակություն է, որտեղ կհաստատվի հանրային ինքնավարություն, հասարակության բարօրության համար կատարվող աշխատանքը բոլորի համար կդառնա առաջին կենսական պահանջ, գիտակցված

---

[1] См. «Научный коммунизм», М., 1972, стр. 3.

անհրաժեշտություն, յուրաքանչյուրի ընդունակությունները կգործադրվեն ժողովրդի համար առավելագույն օգտավետությամբ»[2]:

Գիտական կոմունիզմի սկզբունքների զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ ՍՄԿԿ XXIV համագումարը, որն անգնահատելի ավանդ է մարքսիզմ-լենինիզմի գանձարանում: Համագումարի նյութերն ունեն քաղաքական, տեսական ծրագրային խոշոր նշանակություն: ՍՍՀՄ-ի բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության, մտավորականության ողջ աշխատանքային ստեղծագործական պաթոսը, ինչպես նաև համաշխարհային հեղափոխական շարժումն ընթանում են Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարի որոշումների ու գաղափարների ներգործությամբ: Զարգացած, հասուն սոցիալիզմի երկրի՝ ՍՍՀՄ-ի, բոլոր սոցիալիստական երկրների օրավուր աճող հզորությունը վճռական ազդեցություն է գործում համաշխարհային հեղափոխական պրոցեսի վրա[3]:

2

Հակակոմունիզմի դոկտրինաներն ու կոնցեպցիաները, կոմունիկացիաներն ու դոգմաները բազմազան են, էությունը մեկ՝ «քայքայել» մարքսիստական-լենինյան ուսմունքը: XX դարի 50—60-ական թթ. Արևմուտքում ձևավորվեցին մարքսիզմին թշնամի բազմաթիվ ուղղությունները: Դրանցից էր «Դեմոկրատական սոցիալիզմի» տեսությունը, որը և արագորեն ձախողվեց[4]*: Թեև 70-ական թթ. հակակոմունիզմը նոր կոնցեպցիաներ չտվեց, բայց առաջվա պես օգտագործում է իր զինանոցի բոլոր զենքերը՝ դոկտրինաներն ու կոնցեպցիաները: 60-ական թթ. վերջերից հայտնի դարձան «Մարքսի հետ—Մարքսից առաջ»— բուրժուական նկրտումները: Դրանց հիմնական խնդիրն է Կ. Մարքսին վերագրել այնպիսի գաղափարներ, որոնք հնարավոր լինեի օգտագործել գիտական կոմունիզմի՝ կոմունիստական հասարակարգի դեմ մղվող պայքա-*

---

2 *«ՍՄԿԿ ծրագիրը և կանոնադրությունը», Երևան, 1964, էջ 76:*

3 *Տե՛ս* XXIV съезд КПСС. 30 марта—9 апреля 1971 г. Стенографический отчет, т. 1 и 2, М., 1971; *Л. И. Брежнев*, О пятидесятилетии Союза Советских Социалистических республик (доклад на совместном торжественном заседании ЦК КПСС, Верховного Совета СССР, Верховного Совета РСФСР, 21 декабря 1972 г.), М., 1972.

4 *Տե՛ս* **Հ. Ռ. Սիմոնյան,** *Ինդուստրիալ հասարակության տեսությունները քննական տեսություն, Երևան, 1973: Г. А. Галоян*, Социалистическая Революция в Закавказье в освещении буржуазной историографии, М., 1960; Против буржуазных фальсификаторов истории и политики КПСС. (Сбор. статей), М., 1970.

յում։ Բուրժուական գաղափարախոսները մի կողմից բարբաջում են, թե մարքսիզմի մասին կարելի է խոսել իբրև մի գիտության, որը ոչ մի տեղ չի իրականացվել, քանի որ «Մարքսի սխեմայով» որևէ մի հեղափոխություն չի եղել, իսկ մյուս կողմից՝ կարելի է ընդունել մարքսիզմի վեհությունը «նոր մարքսիստական կուսակցությունների» (իմա հակակոմունիստական — Ա. Բ.) գործողություններում։ Կատարելով իրենց իմպերիալիստական տերերի պատվերը, նրանք ձգտում են կատարել մարքսիստական-լենինյան միասնական ուսմունքը, լենինիզմն անջատել մարքսիզմից, և այնուհետև մեկը մյուսին հակադրել։ Հակակոմունիստները ընդունում են Վ. Ի. Լենինի բացառիկ տաղանդը որպես կազմակերպչի, ղեկավարի, առաջնորդի, բայց ժխտում են նրա կողմից բանվոր դասակարգի գիտական աշխարհայացքի՝ հեղափոխական տեսության մշակումն ու զարգացումը, այն նորը, որ նա մուծել է մարքսիզմի գանձարանը։ Նրանք անհեթեթ ձևով պնդում են, որ լենինիզմ գոյություն չունի։ Այդպես են ասում, քանի որ լենինիզմը արդի դարաշրջանի մարքսիզմն է։ Ժխտելով սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսությունը, հայտարարելով, թե Կ. Մարքսն ու Վ. Ի. Լենինը նույնիսկ աշխատություններ չունեն այդ պրոբլեմին նվիրված, կեղծելով պատմական փաստերը, կույր ձևանալով սոցիալիզմի նվաճումների առջև, հակակոմունիզմի քարոզիչները ամեն կերպ աշխատում են սոցիալիստական հեղափոխության մասին ուսմունքը նենգափոխել «սուպերինդուստրիալ հեղափոխության» քիմերով, որի համաձայն գիտա-տեխնիկական առաջադիմությունը հանգում է հասարակական հարաբերությունների ողջ սիստեմի փոխարինմանը։ Վատ կիրքը սահման չունի։ Դրա համար էլ իմպերիալիզմի ձայնափողերը հորինում են հակագիտական այն տեսությունը, թե Վ. Ի. Լենինը «տարբեր ժամանակներում միայն լոզունգներ է առաջ քաշել, որոնք լավագույն կերպով մասսաներին հաղորդակից էին դարձնում բոլշևիկների կողմից իշխանության գրավման շարժմանը»[5]։

Ահա թե ինչ։

Հակակոմունիզմի կոնցեպցիաներից է, այսպես կոչված, «ապագաղափարականացման» («դեիդեոլոգիզացիայի») տեսությունը, որի համաձայն գիտա-տեխնիկական հեղափոխությունը հաղթահարում է գաղափարական կեղծ գիտակցությունը, ավարտում է ան-

---

5 Տե՛ս «Научный коммунизм и фальсификация его ренегатами», М., 1972.

ցումը գաղափարախոսությունից, այսինքն՝ պատրանքային գիտակցությունից դեպի գիտական գիտակցությունը: «Ապագաղափարականացման» տեսությունն ուղղված է բանվոր դասակարգի աշխարհայացքի դեմ, ծառայում է նրա գաղափարախոսության «էրոզիայի» իրականացմանը: Ամերիկյան սոցիոլոգ Դ. Բելլը, 15 տարի առաջ, իր «Գաղափարախոսության վերջը» գրքում փորձում էր հիմնավորել այն միտքը, որ իբր թե գաղափարախոսությունները ապրել են իրենց դարը և մարդկությունը թևակոխել է մի նոր ժամանակաշրջան՝ «ապագաղափարականացման» ժամանակաշրջանը: Բուրժուական որոշ փիլիսոփաներ որդեգրելով Դ. Բելլի դրույթները, 1968 թ. Վիեննայում տեղի ունեցած փիլիսոփաների համաշխարհային կոնգրեսում հանդես եկան նրա ոգով: «Ապագաղափարականացման» տեսության հորինողները նույնիսկ հղումներ են անում Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին: Բայց նրանք շրջանցում են այն փաստը, որ մարքսիզմի հիմնադիրները պատրանքային գիտակցությունից դեպի գիտական գիտակցության անցում ասելով նկատի ունեին բուրժուական գիտակցությունը: Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին դասակարգային մոտեցումը գատեսնգեց ոչ միայն մերկացնելու բուրժուական գաղափարախոսության պատրանքային բնույթը, այլև ճանապարհ բացելու դեպի գիտական գաղափարախոսության մշակումը, ստեղծելու մարքսիզմը՝ աշխարհում ամենաճշմարիտ և զորեղ ուսմունքը: Բուրժուական և ռեֆորմիստական տեսաբանների կարծիքով մարքսիզմ-լենինիզմի «ապագաղափարականացումը» մի պրոցես է, որը ի վերջո, վերջնագծում հասցնելու է տրամաբանական վախճանի՝ սցիենտիզմի: «Ապագաղափարականացման սցիենտիզմի» տեսությունը նման է ծխածածկույթի, որի շերտերում հակակոմունիստները նախ փորձում են ստեղծել «գաղափարական վակուում» և ապա այն լցնել բուրժուական հետադիմական գաղափարախոսությամբ:

Իմպերիալիստական պետությունների ղեկավար շրջանները կապիտալիստական կարգերի փրկության համար ճիգեր չեն խնայում սոցիալիզմը արատավորելու, սոցիալիստական համագործակցությունը կազմալուծելու համար: Կոմունիստական և հեղափոխական շարժման մասնատման քաղաքականությունը հակակոմունիզմի ստրատեգիայի գլխավոր զենքերից է: Իմպերիալիստները մեծ հույսեր են կապում մարքսիզմի ռենեգատների, ժամանակակից ռևիզիոնիստների քայքայիչ ու պառակտիչ գործունեության հետ:

Ռևիզիոնիզմը գիտական կոմունիզմի, միջազգային բանվորա-

կան հեղափոխական շարժման կատաղի թշնամին է։ Նրա դեմ բանվոր դասակարգի մղած պայքարն ունի իր պատմությունը։ Մարքսիզմի դեմ ծավալած պայքարում քաղաքական սնանկության և անփառունակ վախճան են ունեցել Կ. Կաուցկին, Է. Բեռնշտայնը և նրանց համախոհները։

Մեր օրերում ռևիզիոնիստները՝ Իտալիայում՝ «Մանիֆեստո» խումբը, Ֆրանսիայում՝ ռենեգատ Ռ. Գարոդին, Ավստրիայում՝ Է. Ֆիշերն ու Ֆ. Մարեկը, Վենեսուելայում՝ Պետկոֆը, Չինաստանում՝ Մաո Ցզե-դունը և ուրիշներ նենգափոխելով ու կեղծելով Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի գաղափարները, առաջ են քաշում մարքսիզմ-լենինիզմի տեսության հետագա զարգացման մասին իրենց ճամարտակությունները, որոնք մեծ վնաս են հասցնում հեղափոխական շարժմանը[6]։

ՍՄԿԿ XXIV համագումարի որոշումների լույսի տակ ժամանակակից ռևիզիոնիզմի գործունեության վերլուծությունը ամենից առաջ բերում է այն եզրակացության, որ գիտական կոմունիզմի ռենեգատները մարքսիզմ-լենինիզմի սկզբունքային հարցերում

---

[6] *Տե՛ս* «Научный коммунизм и фальсификация его ренегатами», М., 1972; «Научный коммунизм», М., 1972; *П. Н. Федосеев*, Марксизм и волюнтаризм, М., 1968; *его же*, Коммунизм и философия, М., 1971; *его же*, Возрастание роли партии—закономерность строительства социализма и коммунизма («Коммунист», М., 1971, № 15); *его же*, XXIV съезд КПСС и основные направления исследований в области общественных наук («Коммунист», 1972, № 1), *Р. Ульяновский*, «Научный социализм и освободившиеся страны («Коммунист», 1968, № 4); «Фальсификаторы теории научного коммунизма и их банкротство» («Коммунист», 1972, № 3); «КПСС в освещении западных советологов». Сборник рефератов и переводов, М., 1971; «Проблемы современного общества в зарубежной социологии», Реферативный сборник, т. II, М., 1971, «Реферативный бюллетень, выпуск I (31), Институт Дальнего Востока АН СССР. Сектор информации; *Р. Соколов*, «Борьба против правого и «левого» ревизионизма—одна из важнейших задач марксистов-ленинцев» («Вопросы истории КПСС», 1972, № 3); *С. Ф. Одуев*, Ленинское философское наследие и критика современного ревизионизма («Вопросы философии», 1972, № 3); *Б. Пономарев*, Актуальные проблемы теории мирового революционного процесса («Коммунист», М., 1971, № 14); *Х. Момджян*, Единая сущность и многообразие форм становления социализма («Коммунист», М., 1972, № 6); *Л. А. Слепов*, Пролетарский интернационализм и несостоятельность его буржуазной и ревизионистской критики («Вопросы истории КПСС», М., 1972, № 1); *А. Ф. Костин*, Ленинская концепция истории создания РСДРП и ее буржуазные критики, М., 1973.

փաստորեն կանգնած են բուրժուական գաղափարախոսության, հակակոմունիզմի և հակասովետիզմի դիրքերի վրա, հրաժարվում են բանվոր դասակարգի հեղափոխական ուսմունքի սկզբունքներից, աշխատավորների շրջանում սերմանում են տրոցկիստական նկրտումներ: Նրանք պայքարի գլխավոր հարվածն ուղղում են մարքսիզմ-լենինիզմի, նրա իսկական պաշտպանների դեմ, ժխտում և մերժում են գիտական կոմունիզմի տեսության հիմնական դրույթները, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները. ջանում են կայունացնել նացիոնալիզմի ու շովինիզմի դիրքերը: Ռենեգատները հարվածի սլաքն ուղղում են միջազգային հեղափոխական շարժման մեջ բանվոր դասակարգի առաջատար դերի, սոցիալիստական հասարակարգի, արդի փուլում կոմունիստական կուսակցության ղեկավար դերի աճի և այլ կարևորագույն սկզբունքների դեմ: Իրենց հակապրոլետարական գործունեությունը նրանք փորձում են քողարկել, այսպես կոչված, նոր, օբյեկտիվ պայմանների վերաբերյալ շաղակրատանքով: Ռևիզիոնիստները իրենց հակամարքսիստական տեսությունները փորձում են ներկայացնել իբրև ստեղծագործական մարքսիզմ, «մարքսիզմի կատարելագործում» և «բարելավում»: Ընդ որում, այդ բոլորը աշխատում են «հիմնավորել» մարքսիզմ-լենինիզմով, իսկական մարքսիստներին մեղադրելով մարքսիզմից հեռանալու, նրա նկատմամբ դոգմատիկ մոտեցում ունենալու մեջ:

Բուրժուական հրատարակիչները գրքային շուկան հեղեղեցին Ռ. Գարոդիի այնպիսի «տեսական» արտադրանքով, ինչպես «Հանուն սոցիալիզմի ֆրանսիական մոդելի», «Սոցիալիզմի մեծ շրջադարձը», «Ողջ ճշմարտությունը», «Հույսի վերականգնումը» և այլ գործերով[7]: Դավաճանելով իր երբեմնի գաղափարներին, որոնք իրենց արտացոլումն են գտել «Կոմունիզմը և բարոյականությունը» (1945), «Գիտական կոմունիզմի ֆրանսիական ակունքները» (1948), «Եկեղեցին, կոմունիզմը և քրիստոնեությունը» (1949) գրքույկներում, Գարոդին, կոմունիստական շարժումից դուրս մղվելուց հետո լուտանք էր թափում մարքսիզմ-լենինիզմի վրա, ստորաքարշությամբ ծառայում մոնոպոլիստական կապիտալիզմին: Գարոդիի

---

[7] *Roger Garaudy*, Pour un modèle français du socialisme. Gallimard, 1968; *Roger Garaudy*, Le grand tournant du socialisme. Gallimard, 1969: *Roger Garaudy*, Toute la vérité. Mai 1968—Février 1970. Paris, Editions Bernard Grasset, 1970.

ընդամենը, XX դարի երկրորդ կեսը բնութագրվում է ոչ թե սոցիալիզմի ու կապիտալիզմի միջև մղվող պայքարով, այլ գիտա-տեխնիկական հեղափոխության ծավալմամբ: Կրկնելով բուրժուական որոշ գաղափարախոսների, նա սոցիալական առաջադիմությունը կապում է միայն արտադրողական ուժերի զարգացման հետ, անտեսելով արտադրական հարաբերությունների, դասակարգային պայքարի դերը, ըստ էության ժխտելով սոցիալիստական հեղափոխության անհրաժեշտությունը: Հենց դա էլ փաստորեն, նրան նետեց տեխնոկրատական ռեֆորմիզմի գիրկը, թեև Գարոդին ասում է, թե իր տեսակետները «բոլորովին էլ ավանդական ռեֆորմիզմի տեխնոկրատական վարիանտը չեն»:

Վ. Ի. Լենինը «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունում գրել է. «Մարդու մասին դատում են ոչ թե նրանով, ինչ որ նա իր մասին ասում է, կամ մտածում, այլ նրա գործերով: Փիլիսոփաների մասին պետք է դատել ոչ թե այն ցուցանակներով, որ նրանք իրենք կախում են իրենց վրա... այլ նրանով, թե ինչպես են նրանք իրոք լուծում տեսական հիմնական հարցերը, ո՞ւմ հետ են գնում նրանք ձեռք-ձեռքի տված, ի՞նչ են ուսուցանում և ի՞նչ են ուսուցել նրանք իրենց աշակերտներին ու հետևորդներին»[8]: Նենգափոխելով մարքսիզմը, «փաստիկներ» խաղալով, Գարոդին գիտա-տեխնիկական առաջադիմության ժամանակաշրջանում հասարակական կյանքում առաջատար դերը վերապահում է թվականորեն աճող մտավորականությանը, որը հանդես է գալիս կամ բանվոր դասակարգի, կամ իր իսկ «հայտնագործած», այսպես կոչված, «պատմական նոր բլոկի» կազմում[9]:

Աղճատելով Կ. Մարքսի մտքերը, «հավաքական աշխատող» արտահայտությունը հավասարեցնելով «բանվոր դասակարգ» հասկացողությանը, հավակնելով, որ դրանով իսկ ժամանակակից գիտա-տեխնիկական հեղափոխության պայմաններում բանվոր դասակարգի շրջանները լայնացնելով, «ստեղծագործաբար զարգացնում է» մարքսիզմը, Գարոդին անտեսում է, որ մտավորականությունը մարքսիզմ-լենինիզմի տեսակետից երբեք ինքնուրույն դասակարգ չի եղել, որ կապիտալիզմի ժամանակ բանվոր դասակարգի հետ ինժեներա-տեխնիկական ու գիտական մտավորականության ավտոմատիկորեն միաձուլվելը սխալ է: Մարքսիզմ-լենինիզ-

---

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 14, էջ 285—286:

9 Տե՛ս *Roger Garaudy*, Toute la vérité, Paris, 1970, p. [illegible].

մը գտնում է, որ կապիտալիզմի պայմաններում մտավորականու-թյան նշանակալի մասը ոչ թե միաձուլվում, այլ մերձենում է բան-վոր դասակարգի հետ։ Եվ դա միանգամայն բնական է։ Հայտարա-րել, ինչպես անում է Ռ. Գարոդին, թե մտավորականությունը մըտ-նում է բանվոր դասակարգի մեջ, միաձուլվում նրա հետ, նշանա-կում է հաստատել, որ իբր կապիտալիզմի պայմաններում առանց սոցիալիստական հեղափոխության հնարավոր է վերացնել մտա-վոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակասություններն ու էական տարբերությունները։ Ռ. Գարոդիի այդ պնդման մեջ հստակ կերպով արտահայտվում է նրա նահանջը հեղափոխական մարք-սիզմից։ Նրա անցումը դեպի տեխնոկրատական ռեֆորմիզմի դիր-քերը[10]։

Մարքսիզմը ռեվիզիայի ենթարկելու իր փորձերում Ռ. Գարոդին խճճվում է. նա չի սահմանափակվում բանվոր դասակարգի կա-ռուցվածքի հարցի շրջանակներում. իր իսկ արտահայտությամբ «տանջալից վերանայում» է կատարում, առաջ քաշելով, այսպես կոչված, «պատմական նոր բլոկի» կոնցեպցիան, որն ըստ էու-թյան հանդիսանում է նրա փորձերի տրամաբանական շարունակու-թյունը բանվոր դասակարգի դերի նսեմացման ու մտավորականու-թյան դերը հիպերտրոֆիկ կերպով պատկերելու ուղղությամբ։

Գարոդին քարոզում է, որ միջին դասակարգերի, այն է՝ գյու-ղացիության, արհեստավորների, մանր առևտրականների հետ կա-րելի է կնքել տակտիկական դաշինք, իսկ մտավորականության նկատմամբ այդպիսի դաշինքի հարց դնել չի կարելի։ Մտավորա-կանության հետ, ասում է նա, պետք է կնքել ստրատեգիական դա-շինք։ Հենց այդ նոր օրգանական միավորումը Գարոդին անվանում է «պատմական նոր բլոկ»[11]։

Գարոդին բանվոր դասակարգին հեղափոխական շարժման մեջ վերապահում է շարքային տարրի դեր, նսեմացնում նրա հեղափո-խական, առաջատար դերը։ Նախապատվությունը տալով մտավո-րականությանը, Գարոդին ուսանողությանը կոչ է անում ինքնու-րույն հեղափոխական գործողությունների և դրանով իսկ երիտա-սարդական շարժումը կտրում իր ավանգարդից։

Գարոդիի՝ «Պատմական նոր բլոկի» տեսությունը ժխտում է

---

10 Տե՛ս «Научный коммунизм и фальсификация его ренегатами», М., 1972, стр. 13—38.

11 *Roger Garaudy*, Le grand tournant du socialisme, p. 241.

բուրժուական հասարակարգում դասակարգերի և սոցիալիստական հեղափոխության շարժիչ ուժերի մասին մարքս-լենինյան ուսմունքը:

Հավակնելով գտնել նոր Լյութեր, «Ալտերնատիվ» գրքույկում Ռ. Գարոդին խորացրեց «սոցիալիզմի նոր մոդելների» մասին իր հակագիտական մարզանքները և գլորվեց կրոնական միստիկայի վիհը:

Է. Ֆիշերը իր «Ի՞նչ է իրականում ասել Մարքսը», «Հիշողություններ ու տպավորություններ», «Հեղափոխությունը դա ոչ այլ ինչ է» գրքերում ինչպես և Ֆ. Մարեկի հետ գրած «Ինչ է իրականում ասել Լենինը»[12] և այլ գործերում ձայնակցում է Ռ. Գարոդիին։ Է. Ֆիշերը գրել է, որ «հեղափոխությունն իր համար գիտակցական մտածողության տարրը չի եղել, որ այն միշտ հանդիսացել է «պոռթկում», «զգացմունք»։ Եվ իզուր չէ, որ իրեն անվանում է «կամակոր անհատապաշտ», «հոգեկան ոլորտում պարտիզան»՝ նորից հաստատելով այն որակումը, որ իր և իր համախոհների մասին 1929 թ. հենց ինքն է տվել «...մեր սոցիալիզմը չի եղել ոչ գիտելիք, ոչ հստակություն, ոչ դասակարգային գիտակցություն. դա միայն զգացմունք է եղել. դա միայն կիրք է եղել՝ զուգակցված վհատ ջանքերի, արմատական անելության ու արմատական սիրո հետ»[13]:

Գիտա-տեխնիկական խոշոր տեղաշարժերի ֆետիշացումը Է. Ֆիշերին հանգեցնում է այն անհիմն և սխալ պնդմանը, որ համաշխարհային սոցիալական հեղափոխությունը ընթանում է «բոլորովին այլ կերպ, քան այն պատկերացնում էին Մարքսը և Լենինը»[14]։

Ռևիզիոնիստները պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման պահանջի դեմ առաջ են քաշում այն միտքը, թե դա անխուսափելիորեն ծնում է դեմոկրատիայի սահմանափակում։ Այսպես,

---

[12] *Ernst Fischer*, Was Marx wirklich sagte. Unter Mitarbeit von Franz Marek. Wien u. a., Molden, 1968; *Ernst Fischer*, *Franz Marek*, Was Lenin *wirklich* sagte. Wien-München-Zurich, Verlag Fritz Molden, 1969; *Ernst Fischer*. Erinnerungen und Reflexionen. Rowohlt, 1970: *Ernst Fischer*. Die Revolution ist anders. *Ernst Fischer* stellt sich zehn Fragen kritischer Schüler. Rowohlt, 1971.

[13] *Ernst Fischer*, Erinnerungen und Reflexionen, S. 10. (*ցիտում ենք ըստ* «Научный Коммунизм и фальсификация его ренегатами», *գրքի*)։

[14] *Մեջ ենք բերում ըստ վերոհիշյալ աշխատության, էջ 55։*

Է. Ֆիշերը հայտարարում է՝ «դիկտատուրայի պահանջը, թող այն կոչվի պրոլետարիատի դիկտատուրա, կամ դաստիարակման և կամ որևէ մի այլ դիկտատուրա, նպաստում է դիկտատորական տենդենցներին, կազմալուծում է դեմոկրատական տենդենցները»[15]։

Ինչ խոսք, դրանով իսկ Է. Ֆիշերը «դիկտատուրա» վերացական հասկացողությունը հակադրում է «դեմոկրատիային», այսինքն դիմում է բուրժուական գաղափարախոսության խոհանոցին։

Որն է Ռ. Գարոդիի, Է. Ֆիշերի և մյուս ռևիզիոնիստների քարոզչության ուղղվածությունը։ Այն անտեսում է բանվոր դասակարգի առաջատար, ղեկավար դերը, արհեստականորեն «հանում է» բանվոր դասակարգի և գիտա-տեխնիկական մտավորականության համատեղ գործողությունների ոլորտից, վերջինիս ներգրավումը բանվոր դասակարգի կողմում՝ մոնոպոլիաների դեմ նրա մղած պայքարում, քանի որ հայտարարվում է, որ մտավորականության այդ մասն արդեն մտել է բանվոր դասակարգի կազմի մեջ, «միաձուլվել» նրա հետ։ Նրանք անտեսում են սոցիալական ու քաղաքական տարբերակումը գիտատեխնիկական մտավորականության ու վարչական կադրերի շրջանում, նրանց սպեցիֆիկ շահերի ու պահանջների առկայությունը, որոնք ոչ միշտ են համընկնում պրոլետարիատի շահերին ու պահանջներին և պետք է հաշվի առնվեն կոմունիստների կողմից մտավորականության հետ կատարվող աշխատանքի ընթացքում։ Եվ վերջապես, հաստատվում է, որ արդեն կապիտալիզմի պայմաններում հնարավոր է մտավորականության միաձուլումը բանվոր դասակարգի հետ, որ հնարավոր է մտավոր ու ֆիզիկական աշխատանքի միջև եղած հակասությունների ու էական տարբերությունների վերացումը առանց սոցիալիստական հեղափոխության, առանց կոմունիստական հասարակարգի կառուցման, միայն գիտա-տեխնիկական փոփոխության ներգործությամբ[16]։

Եթե անցյալում ռևիզիոնիստների հավատո հանգանակը «մարքսից հեռացումն էր», պրոլետարիատի դասակարգային պայքարի գլխավոր նպատակից՝ սոցիալիզմից հրաժարումը, ապա ժամանակակից աջ ռևիզիոնիստները կեղծավորաբար կոչ են անում «ետ,

---

15 Մեջ ենք բերում ըստ վերոհիշյալ աշխատության, էջ 57։

16 Տե՛ս *П. Федосеев*, XXIV съезд КПСС и основные направления исследования в области Общественных наук («Коммунист», М., 1972, № 1), стр. 70–71.

ցեպի Մարքսը», «աղավաղված» սոցիալիզմի փոխարեն իբր ստեղծել «նոր», «լավագույն» մոդելներ։

Նրանք իրենց ներկայացնում են իբրև մարքսիզմի «իսկական» մարտիկներ, ընդդեմ նրա «աղճատման» հանդես են գալիս իբրև «հումանիստական և դեմոկրատական սոցիալիզմի» պաշտպաններ։ Դա արվում է խորամանկորեն, նպատակ ունենալով ռևիզիոնիստական ծուղակը գցել հեղափոխական շարժման քաղաքական ու գաղափարական տհաս ներկայացուցիչներին, իրենց կողմը գրավել մասսաներին։ Դա շատ նենգ մեթոդ է, քանի որ քողարկվելով «հումանիզմի» և «դեմոկրատիայի» ծխածածկույթով, ռևիզիոնիստները վերանայում են մարքսիզմ-լենինիզմի արմատական հիմունքները, հնարում «սոցիալիզմի նոր մոդելներ», ստեղծում պատրանքներ։ Ընթանալով բուրժուական կեղծարարների հետքերով, ժամանակակից ռևիզիոնիստները գաղափարական դիվերսիա են կատարում, նրանք լուտանք են թափում կոմունիստական շինարարության պրակտիկայի վրա, ժխտում հասարակական զարգացման օրինաչափությունները, ծուռ հայելու մեջ ներկայացնում ՍՄԿԿ պատմությունն ու քաղաքականությունը։ Էթիկայի բնագավառում նրանք առաջ են քաշում դասակարգային բովանդակությունից զուրկ փիլիսոփայական կատեգորիաներ։

Աջ ռևիզիոնիզմի սնող հողը բուրժուական գաղափարախոսների քարոզած «կոնվերգենցիայի» և «պլյուրալիզմի» տեսություններն են, որոնց խնդիրն է արդարացնել և պաշտպանել կապիտալիզմը։ «Կոնվերգենցիայի տեսության» ջատագովները ձգտում են ապացուցել, որ իբր թե գիտատեխնիկական հեղափոխության պրոցեսում տեղի է ունենում կապիտալիստական և սոցիալիստական սիստեմների մերձեցում՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, գաղափարական և այլ բնագավառներում, և դրա հետևանքով առաջանում է միասնական «ժամանակակից ինդուստրիալ սիստեմը», «մասսայական սպառման հասարակությունը»։

Նման տեսությունների հորինողները շրջանցում են ամենասուր տնտեսական, քաղաքական, սոցիալական և գաղափարական պրոբլեմները։ Բուրժուական նման մտածողների համար սոցիալիզմը պրոլետարիատի դիկտատուրա չէ, այլ միայն ու միայն պետական ազգայնացում։ Այդ դեպքում իրենց արտադրանքը 100%-ով պետությանը վաճառող մոնոպոլիստները գործնականորեն համարվում են ազգայնացված, ուստի և սոցիալիստական են։ Դժվար չէ նկա-

տել, որ այստեղ փորձ է արվում հավասարության նշան դնել կապիտալիզմի և սոցիալիզմի միջև[17]:

Քաղաքական «պլյուրալիզմը» ռևիզիոնիզմի փիլիսոփայությունն է։ Ըստ էության մետաֆիզիկական մի ուսմունք, որը հակադրվում է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմին։ Այն հեղափոխական ուժերի պառակտման կոչ է անում, պահանջում է սոցիալիզմի բազմազան տեսակների, «մոդելների» ստեղծում, անտեսում է սոցիալիստական շինարարության ընդհանուր օրինաչափությունները և հանգում սոցիալիստական հեղափոխության նվաճումների հրաժարմանը, կապիտալիստական հասարակարգի պայմաններում «դեմոկրատական սոցիալիզմի» անցմանը։ Կապիտալիստական կարգերի պաշտպանները, տեխնոկրատիայի տեսության ջատագովները ձգտում են յուրովի, իրենց դասակարգային դիրքերից իմաստավորել տեխնիկայի աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները, որ հաճախ նրանք կոչում են «նոր» կամ «երկրորդ արդյունաբերական հեղափոխություն»։ Նրանք ջանում են հավերժացնել կապիտալիզմը, գիտատեխնիկական հեղափոխության օգնությամբ բուժել կապիտալիզմի խոցերը, կատարելագործել կապիտալիստական հասարակարգը։ Այս ձգտումը հատկապես արտահայտված է Կոլումբիայի համալսարանի պրոֆեսոր, կոմունիզմի պրոբլեմների հետազոտման ինստիտուտի դիրեկտոր Զ. Բժեզինսկու «Երկու դարերի միջև։ Ամերիկան տեխնոտրոնիկայի դարաշրջանում», ԱՄՆ-ի Հուդզոնի ինստիտուտի դիրեկտոր Գ. Կանի «1980 թ. մոդելը», ֆրանսիական սոցիոլոգ «Էքսպրես» հանդեսի մշտական տեսաբան Ժան Ֆրանսուա Ռեվելի «Ո՛չ Մարքսը, ոչ Հիսուսը», ֆրանսիական ձախ ռադիկալ գործիչ, «Թան Մոդերն» ամսագրի խմբագրական կոլեգիայի ղեկավար Անդրե Գորցի «Ռեֆորմ և հեղափոխություն», Ֆրանսիայի ռադիկալ կուսակցության գլխավոր քարտուղար Ժ. Սերվան-Շրայբերի ու Մ. Ալբերի «Երկինք և երկիր։ Ռադիկալների մանիֆեստը» և այլ հեղինակների հակակոմունիստական աշխատություններում[18]։

---

[17] См. *Б. И. Поткин,* Советская интеллигенция в освещении современной буржуазной англо-американской историографии («История СССР», М., 1972, № 3, стр. 168).

[18] *Z. Brzezinski.* Between two ages. America's role in the technotronic era. N/Y., 1970, 334 p., *H. Kahn.* Modell fur 1980-in; Das 198. Jahrzehnt. Hamburg, 1969. s. 11—36, *Jean-Francois Revel,* Ni Marx, ni Jesus? P., 1970. *Andre Gorz.* Reforme et Revolution. Paris, Edition du Seuil, 1969.

ժամանակակից սոցիոլոգների շրջանում սովորություն է դարձել հայտարարել, թե իրենց երկրներում սոցիալիզմի կառուցման համար հազիվ թե նպատակահարմար լինի կրկնել ռուսական հեղափոխության փորձը: Սոցիոլոգները բազմիցս կրկնել են, որ ապագա Ֆրանսիան, Իտալիան, Անգլիան և կապիտալիստական մյուս երկրները Սովետական Միության նման չեն լինելու: Իհարկե, դեպի սոցիալիզմ անցման ժամանակ այդ երկրներում կլինեն առանձնահատկություններ, բայց միթե Սովետական Միության. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության փորձի մեջ չկան ինտերնացիոնալ բնույթի բովանդակություն, ընդհանուր օրինաչափություններ:

Վ. Ի. Լենինը «Մարքսիզմի ծաղրանկարի և «իմպերիալիստական էկոնոմիզմի» մասին աշխատությունում նշել է. «Բոլոր ազգերը կգան դեպի սոցիալիզմ՝ դա անխուսափելի է, բայց բոլորը կգան ոչ բոլորովին միատեսակ, յուրաքանչյուրը յուրահատկություն կմտցնի դեմոկրատիայի այս կամ այն ձևի մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի այս կամ այն տարատեսակության մեջ, հասարակական կյանքի զանազան կողմերի սոցիալիստական վերափոխումների այս կամ այն տեմպի մեջ»[19]:

Իլյիչը, այո՛, ընդգծել է, որ «կապիտալիզմից կոմունիզմին անցումը, իհարկե, չի կարող չբերել քաղաքական ձևերի ահագին առատություն և բազմազանություն, բայց դրանց բոլորի էությունը անխուսափելիորեն մեկ է լինելու՝ պրոլետարիատի դիկտատուրան»[20]:

Չ. Բժեզինսկին իր «Երկու դարերի արանքում» գրքում ասում է. «Կոմունիզմի, որպես ունիվերսալ հեռանկարի ողբերգությունը կայանում է նրանում, որ նա առաջացել է շատ շուտ և շատ ուշ: Շատ շուտ է ռուսական ինտերնացիոնալիզմի աղբյուր լինելու համար, քանի որ մարդկությունը հազիվ զարթնել էր ազգային ինքնագիտակցության համար... Շատ ուշ է ինդուստրիալ Արևմուտքի համար, քանի, որ նացիոնալիզմը և պետական ռեֆորմիզմի լիբերալ ուսմունքները քայքայել են ազգային պետության նկատմամբ նրա հումանիտար վերաբերմունքի նշանակությունը: Նա

---

248 p., *G. G. Servan-Schreiber* et *M. Albert.* Ciel et Terre. Manifeste radical. P., 1970, 298 p.

19 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 23, էջ 81:*

20 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 25, էջ 533:*

շատ շուտ է առաջացել նախաինդուստրիալ Արևելքի համար, որտեղ դառնար քնած մասսաներին զարթեցնող ղողանջ, հեղափոխական գաղափարախոսության և ռադիկալ նացիոնալիզմի զարգացման խթան... Այսօրվա աշխարհի համար կոմունիզմի պրակտիկ ռեալականությունը գլխավորապես կայանում է նրանում, ինչ նրանից ստեղծել է Ռուսաստանը»[21]*։*

Մարքսիզմի նկատմամբ կատարած իր հարձակումներով աչքի է ընկնում Հերբերտ Մարկուզեն։ «Սովետական մարքսիզմ։ Քննադատական վերլուծություն»[22] *գրքում նա դրսևորում է իր հակակոմունիստական նողկալի դեմքը, որպես իմպերիալիզմի գաղափարախոս առաջարկում «արմատապես վերանայել» հեղափոխության մասին մարքսիստական տեսությունը։*

ՍՍՀՄ-ում կառուցված հասուն, զարգացած սոցիալիզմը կուռ, ամբողջական սիստեմ է՝ տնտեսական, քաղաքական, գաղափարական սերտ միասնության մեջ։ Նրա փորձն ուսանելի շատ բան ունի սոցիալիզմի ուղին թևակոխած մյուս ժողովուրդների համար։

Հակակոմունիզմի փաստաբանները հորինել են «սոցիալիզմի էվոլյուցիաների» տեսությունը, որոնք ուղղված են կոմունիստական ֆորմացիաների դեմ։ Այն նպատակ ունի «հիմնավորել» սոցիալիզմի «վերասերման» հեռանկարը, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի «քայքայումը»։ Այստեղից էլ նրանք բխեցնում և տարածում են սոցիալիզմի ու սոցիալիստական համագործակցության «արտապատմական» ծագման տեսությունը, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ներկայացնում որպես կամային գործողություն, որ իբրև այն բոլշևիկները փաթաթել են ժողովրդի վզին։ Է. Գուդմենը (Նյու-Յորք) իր «Համաշխարհային պետության սովետական նախագիծը» գրքում զրպարտելով Սովետական Միությանը, ժխտում է մարքսիզմ-լենինիզմի դերը մարդկության առաջխաղացման, դեպի սոցիալիզմ ընթանալու գործում։

Իմպերիալիզմի վարձու գրչակ Ռ. Պայպսը (Նյու-Յորք) ամեն կերպ ջանում է ժխտել սոցիալիզմի նվաճումները, ծուռ հայելու մեջ ներկայացնել կոմունիստական շարժումը, ՍՍՀՄ լենինյան ազգային քաղաքականությունը, մարքսիզմ-լենինիզմի հաղթանակները։

---

[21] *Z. Brzezinski*, Between two ages. America's Role in the technotronic era, N. Y., 1970, p. 124.

[22] *Herbert Marcuse*, Soviet Marxism. A Critical Analysis. New-York, 1958.

Բուրժուական գաղափարախոսներին և ռևիզիոնիստներին ձայնակցում են նաև դաշնակցական գրչակները, որոնք զինվորագրվել են միջազգային իմպերիալիզմին, հակակոմունիզմին։

3

Արդի դարաշրջանում կոմունիստական կուսակցությունների ղեկավար դերի շուրջը ծավալվող գաղափարական-քաղաքական պայքարը սուր բնույթ է ստացել։ Միջազգային կոմունիստական շարժման շահերը պահանջում են բարձրացնել մարքս-լենինյան կուսակցությունների ղեկավար դերը համաշխարհային հեղափոխական պրոցեսում, անաղարտ պահել և զարգացնել լենինյան ուսմունքը կուսակցության ղեկավար դերի մասին։ Բուրժուական գաղափարախոսները փութաջանորեն կեղծում են բոլշևիզմի առաջացման, նրա անցած ուղու պատմությունը, ՌՍԴԲԿ-ի ձևավորման լենինյան տեսությունը, հարձակումներ են գործում դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքների վրա[23]։ Իմպերիալիզմի քարոզիչների, այսպես կոչված, «մարքսագետների», «լենինագետների», «սովետագետների» խծբծանքները լի են նմանօրինակ կեղծիքներով։

Կուսակցությունը պրոլետարիատի ավանգարդն է, նրա առաջավոր, գիտակից և կազմակերպված ջոկատը, պրոլետարական կազմակերպության բարձրագույն ձևը, բանվոր դասակարգի և միլիոնավոր մասսաների կապի մարմնացումը։

Գիտական կոմունիզմի թշնամիները, այդ թվում՝ ռևիզիոնիստները, ոչ միայն ժխտում են բանվոր դասակարգի ավանգարդի՝ կուսակցության ղեկավար դերը, այլև գործնական կյանքում ձգտում են նրան զրկել այդ դերից։ Նրանք շրջանցում են լենինյան դրույթն այն մասին, որ առանց պայքարում կոփված կուսակցության, որը վայելի այն ամենի վստահությունը, ինչ որ ազնիվ է տվյալ դասակարգի մեջ, առանց այնպիսի կուսակցության, որը կարողանա հետևել մասսաների տրամադրությանը և ազդել նրա վրա՝ անհնարին է այդպիսի պայքար մղել։

Կոմունիստական կուսակցության ղեկավար դերի լենինյան ուսմունքը սովորեցնում է, որ կուսակցությունը բացահայտում է կապիտալիստական շահագործման բնույթը, գիտականորեն հիմնա-

---

23 *А. Ф. Костин,* Ленинская концепция истории создания РСДРП и ее буржуазные критики. М., 1973.

վրում կապիտալիզմի ոչնչացման անխուսափելիությունը, մշտապես ընդհանրացնում պրոլետարիատի և աշխատավորական մյուս խավերի դասակարգային պայքարի փորձը, անմիջականորեն ղեկավարում հեղափոխական բոլոր ուժերի գործողությունները։ Հեղափոխության հաղթանակից հետո նա դառնում է կառավարող կուսակցություն և ուղղություն տալիս պրոլետարիատի դիկտատուրայի բոլոր լծակներին՝ կոմունիստական շինարարության կառուցման գործում։

Ժամանակակից ռևիզիոնիստները սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման շրջանում կուսակցության ղեկավար դերի նվազման կամ լրիվ վերացման իրենց «տեսություններով» ծառայում են իմպերիալիզմին։ Այսպես, չեխական խմբավարների «2000 խոսք»-ում սոցիալիստական բոլոր տերմինները կային, բացի կուսակցության ղեկավար դերի մասին հիշատակումից։

Ռևիզիոնիստները պնդում են, թե կոմունիստական կուսակցությունները իրենց ներկա վիճակով, կազմակերպական սկզբունքներով և այլն, արդեն ապրել են իրենց դարը, հնացել են, հետևաբար պետք է ստեղծել նոր տիպի, նոր ձևի կուսակցություններ։ «Իմ կարծիքով,— հայտարարում է Է. Ֆիշերը,— գոյություն ունեցող կուսակցությունների մեծ մասն իրենց ձևով, իրենց տիպով հնացել են։

Հնացած, հին քարացած գրքերին, ես տեսնում եմ համախոհների ու մարտիկների նոր միավորումների առաջացման հնարավորությունը։ Եթե կուզեք՝ մարքսիստներից և ոչ մարքսիստներից, կոմունիստներից ու սոցիալ-դեմոկրատներից, կաթոլիկներից ու բողոքականներից»[24]։ Է. Ֆիշերը, ըստ էության, նոր «հայտնագործություն» չի կատարում, նա փաստորեն կրկնում է Ռուսաստանի մենշևիկներին՝ մարտովականներին ու մենշևիկ-լիկվիդատորներին, որոնց դեմ մղած պայքարում աճել և ամրապնդվել է բոլշևիզմը։

Ռ. Գարոդին առաջարկում էր, որ բանվորական կուսակցությունը հրաժարվի միասնական աշխարհայացքից։ «Եթե կուսակցությունը չի ուզում դառնալ դոկտրինյորների աղանդ,— ասում էր նա,— այլ այն բոլոր ուժերի միջուկը, որոնք Ֆրանսիայում ուզում են սոցիալիզմ կառուցել, նա չի կարող ունենալ ինչ-որ «պաշտոնական փիլիսոփայություն», նա չի կարող սկզբունքով լինել ո՛չ իդեալիստական, ո՛չ մատերիալիստական, ո՛չ կրոնական, ո՛չ աթեիստա-

[24] „Stern", 1969, Heft № 49, Hamburg, S. 141.

կան»։ Դրանով Գարոդին հանդես էր գալիս ընդդեմ փիլիսոփայական գաղափարախոսության և քաղաքական գործունեության միջև «մեխանիկական» կապի, որը նրա կարծիքով, գոյություն ունի ժամանակակից կոմունիստական կուսակցությունների կյանքում, կոչ էր անում այն փոխարինել «դիալեկտիկական» կապով, գեն գցել «տոտալիտար-կլերիկալ» ուսմունքը, որը մի ամբողջության մեջ խառնում է քաղաքականությունն ու փիլիսոփայությունը[25]։

Սա ոչ թե սոսկ նահանջ է մատերիալիզմից, այլ բացահայտ դավաճանություն։ Եվ դա ասում է այն Գարոդին, որը 1949 թ. Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության 40-ամյակի առթիվ գրել է. «Մատերիալիզմի հարցում ամեն մի կոմպրոմիս թուլացնում է պրոլետարիատի դասակարգային պայքարը։ Դիալեկտիկական մատերիալիզմը միակ հեղափոխական փիլիսոփայությունն է... Ահա, թե ինչու մատերիալիզմից ամեն մի հեռացում հանդիսանում է բանվոր դասակարգին չհամապատասխանող գաղափարական արտահայտություն»[26]։

Բուրժուական առանձին գաղափարախոսներ, ինչպես և մարքսիզմի ռևիզիոնիստներ աշխատում են վարկաբեկել ՍՄԿԿ-ի գործունեությունը, հակադրության նշան դնել սովետական մտավորականության և կոմունիստական կուսակցության միջև։ Դա նկատվում է Կանբերրայի Ավստրալիական ազգային համալսարանին կից հասարակական գիտությունների բնագավառի հետազոտությունների դպրոցի քաղաքական գիտությունների պրոֆեսոր Տ. Ռիգբի «Սովետական Միության կոմունիստական կուսակցության կազմը. 1917—1967 թթ.», Ինդիանայի նահանգի Լաֆայետ քաղաքի Պերդյու համալսարանի քաղաքական գիտությունների պրոֆեսոր, Կալիֆորնիայի համալսարանին կից (ք. Բերկլի) Սլավոնական և արևելա-եվրոպական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատակից Մ. Գեհլենի «ՍՄԿԿ ֆունկցիոնալ վերլուծությունը», փիլիսոփայության մագիստր Բ. Լևիցկու «Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը։ Մի օրգանի դիմանկարը», Մ. Գեհլենի ու Մ. Մակբրայդի «ՍՄԿԿ Կենտկոմ։ Էլիտայի վերլուծությունը» և այլոց պամֆլետներում։

Հորինելով ՍՍՀՄ-ում «կուսակցության դիկտատուրայի» վերաբերյալ առասպելը, բուրժուական «սովետաբանները և առաջին

[25] *Roger Garaudy,* Le grand tournant du socialisme, p. 284.

[26] Cahiers du communisme, 1949, № 4, p. 469.

հերթին նրանք, որոնք ունեն տրոցկիստական հակումներ» կուսակցության դիկտատուրայի հաստատման՝ «էլիտայի» և «բյուրոկրատիայի» առաջացման մասին փաստարկները վերագրում են 30-ական թվականներին և ավելի ուշ ժամանակներին, հայտարարելով՝ «պրոլետարիատի ավանգարդից» կուսակցության «բյուրոկրատական վարչարարական մեքենայի» վերածման մասին[27]*:*

Բուրժուական գաղափարախոս Մ. Մալիան Հոկտեմբերյան հեղափոխությունը դիտում է, որպես «նոր պուգաչևշչինա», որի միջոցով «մտավորականությունը հասավ մինչև իշխանության»[28]*: Մելբուրնի համալսարանի քաղաքական ֆակուլտետի աշխատակից Լլոյդ Չերչուորդը իր «Ժամանակակից սովետական կառավարությունը» գրքում, հատկապես «ՍՄԿԿ-ն և Սովետական կառավարությունը» բաժնում, փաստերը ծուռ հայելում պատկերելով, չարակամորեն եզրակացնում է, որ ՍՍՀՄ-ը ոչ կատարյալ սոցիալիստական պետություն է, որտեղ նյութա-տեխնիկական բազիսը ավելի զարգացած է, քան քաղաքական վերնաշենքը, որ ՍՍՀՄ-ում «ամենից դեմոկրատական ժամանակաշրջաններն են 1917—1918, 1921—1927 թվականները և 1953 թվականի սկզբից սկսած... Ինչպես այժմ գոյություն ունեցող քաղաքական սիստեմների մեծ մասը, Սովետական Միությունը՝ խառնակազմ սիստեմ է, որը պարունակում է դեմոկրատիայի տարրեր»*[29]*: Նման գրքերում ասում են՝ մեկնաբանությունները ավելորդ են: Բայց ինչպես չասես կեղծիր, բայց չափը իմացիր:*

4

Ժամանակակից տրոցկիզմը, թեև հակասական զանազան հոսանքների ու խմբավորումների խառնուրդ է, բայց իր գործունեությամբ հակակոմունիզմի և հակասովետիզմի զենք է: Նա իր էությամբ ոչնչով չի տարբերվում այն տրոցկիզմից, որի դեմ Վ. Ի. Լենինը և լենինյանները հետևողականորեն ու անհաշտ պայքար են մղել նրա ձևավորումից մինչև գաղափարական ջախջախումը: Ժամանակակից տրոցկիզմը XX դարի առաջին երեք տասնամյակների

---

27 См. «История СССР», М., 1972, № 3, стр. 162.

28 *M. Molia*, What is the Intelligentsia-in: „The Russian Intelligentsia“, p. 17; см. История СССР, 1972, № 3, стр. 161.

29 *Տե՛ս* «Вопросы истории КПСС», М., 1972, № 5, стр. 96

տրոցկիզմի ժառանգորդն է, մարքսիզմի ռենեգատների, աջ և «ձախ» ռեֆորմիստների ու աղանդավորների մի խմբավորում։

Հայտնի է, որ Տրոցկին հորինել էր տխրահռչակ «առվակների»՝ հեղափոխականների ու համաձայնողականների նույն կուսակցության մեջ գոյակցության տեսությունը։ Նա միավորման կոչ էր անում բոլոր կազմակերպություններին ու խմբերին, անկախ նրանց այս կամ այն հոսանքին պատկանելությունից։ Տրոցկին հոխորտանքով «մեղադրում էր» Վ. Ի. Լենինին, հայտարարելով թե՝ նա ցանկանում է կուսակցությունը շեղել ճիշտ ճանապարհից և դարձնել «կարգապահության մեռած օղակ», հաստատել «միանձնյա դիկտատուրա»։ «Առվակների» տեսությունն ուղղված էր բանվոր դասակարգի ավանգարդի՝ մարքսիստական նոր տիպի կուսակցության ստեղծման լենինյան ուսմունքի դեմ։

Ժամանակակից տրոցկիստները «կուսակցության մեջ բյուրոկրատական ճնշման» քննադատության ծխածածկի տակ քարոզում են այդ նույն գաղափարները։

Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո Տրոցկին կապիտուլյանտական դիրք էր գրավել և հեղափոխության կենսունակությունը լիովին կապում էր եվրոպական պրոլետարիատի աջակցության հետ։ Այսօրվա տրոցկիստներն ու ռենեգատները նույն երգն են երգում։ Նրանք ասում են, որ կապիտալիստական երկրներում չկան այնպիսի ուժեր, որոնք կարող են հանդես գալ բանվոր դասակարգի դաշնակցի դերում, որ իբր հակաիմպերիալիստական ճակատի ստեղծումը թուլացնում է դասակարգային պայքարը։ Կրկնելով Տրոցկուն, նրանք ժխտում են հեղափոխական պրոցեսում համադեմոկրատական շարժման դերն ու նշանակությունը։ Նրանց հրատարակած բոլոր փաստաթղթերում այն միտքն է անցկացվում, որ իբր հանուն խաղաղության և դեմոկրատիայի պայքարը բանվոր դասակարգին շեղում է կապիտալիստական կարգերը հեղափոխական ճանապարհով տապալելուց։ Ժամանակակից տրոցկիստներն ասում են. «Պատերազմը հեղափոխության մայրն է»։ Այսպես կոչված չորրորդ ինտերնացիոնալի կոնգրեսը 1963 թ. իր բանաձևում ժխտել է կապիտալիստական երկրներում բանվոր դասակարգի հեղափոխության հնարավորությունը։ Տրոցկիստները ձգտում են ապացուցել, որ ոչ թե բանվոր դասակարգը, այլ գաղութային հեղափոխության ուժերն են հանդես գալիս համաշխարհային հեղափոխության ավանգարդի դերում։ Այսպիսով, «պրոլետարիատը առանց գյուղացիության» ձախ աղան-

գավառական գծին փոխարինելու է գալիս մյուս, նույնքան ազան-գավառական գիծը՝ «գյուղացիություն առանց համաշխարհային բանվոր դասակարգի»:

Ժամանակակից տրոցկիստները ևս շարժիչ ուժը համարում են երիտասարդությանը, իրենց գործողությունները համաձայնեցնում սոցիալիզմի երկրների թշնամական ուժերի հետ, ջուր լցնում իմպերիալիզմի ջրաղացին: ԳՖՀ-ի, այսպես կոչված, «Գերմանիայի ինտերնացիոնալիստ-կոմունիստների» երիտասարդական կազմակերպության 1971 թ. նոյեմբերին հրատարակած ծրագրային փաստաթղթի նախագծում ասված է. «Կապիտալիզմի դեմ պայքար չի կարելի մղել առանց սոցիալիզմի դեմ միաժամանակյա պայքարի: Գերմանական հողի վրա իմպերիալիզմի ու սոցիալիզմի դեմ միասնական պայքարը միաձուլվում է սկզբում պրոպագանդիստական, ապա, վերջապես, նյութական պլանի հիման վրա»:

Ժամանակակից տրոցկիզմը ժխտում է սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսությունն ու պրակտիկան, գտնում է, որ «ՍՍՀՄ-ում և մյուս երկրներում սոցիալիզմի կառուցումը մտացածին է», որ «14 բանվորական պետությունները սոցիալիզմի ուղիով չեն ընթանում»: Փողհարում է Տրոցկու «պերմանենտ հեղափոխության» տեսությունը, պահանջում բոլոր ուժերը կենտրոնացնել համաշխարհային հեղափոխության նախապատրաստման համար, որը, նրանց կարծիքով, պետք է սկսվի «ոչ ավելի, ոչ պակաս, քան ՍՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում կատարվող քաղաքական հեղափոխության, այսինքն այդ երկրների աշխատավորների իշխանության տապալումից և կոմունիստական կուսակցություններին ղեկավարությունից հեռացնելուց»:

Վ. Ի. Լենինը ասել է. ձախ թեքումը բանվորական շարժման մեջ առաջացել է իբրև II ինտերնացիոնալի լիդերների աջ-օպորտունիստական մեղքերի ռեակցիա: Այսօրվա «ձախ» և աջ օպորտունիստները հաճախ են միմյանց հետ ձեռք-ձեռքի տված հանդես գալիս: Տրոցկիզմը թեև միջազգային բանվորական շարժման մեջ ամուր հող չունի, բայց նրա աշխուժացումը մեր ժամանակներում տեղի է ունենում համաշխարհային զարգացման մի շարք գործոնների առկայության **պայմաններում**:

— Գաղափարական բնագավառում սոցիալիզմի և իմպերիալիզմի ուժերի պայքարի սրման պայմաններում հակակոմունիզմը օգտագործում է բոլոր միջոցներն ու մեթոդները, այդ թվում՝ տրոցկիստներին, կոմունիստական շարժումը ներսից ջլատելու համար:

— Պեկինի ղեկավարների քայքայիչ գործունեությունը թևավորում է տրոցկիստներին: Չինական ղեկավարները պառակտողական գործունեություն են ծավալում համաշխարհային կոմունիստական ու բանվորական շարժման դեմ: Մաոիզմը սկիզբ առավ մարքսիզմ-լենինիզմը Չինաստանի առանձնահատուկ պայմանների նկատմամբ «ստեղծագործաբար կիրառելու» ֆորմուլայով: Այնուհետև հանդես եկավ, այսպես կոչված, «չինականացված մարքսիզմի» ֆորմուլան, որով, ըստ էության, փորձ էր արվում մարքսիզմը հարմարեցնել չինական ղեկավարների նացիոնալիստական մտահղացումներին ու նպատակներին: Հետո ծնունդ առավ «ասիական մարքսիզմի» կոնցեպցիան, որով ճիգ էր արվում Մաո Ցզե-դունի գաղափարները ներկայացնել որպես մարքսիզմի մեկնաբանություն՝ Արևելքի բոլոր երկրների համար: Այդ էվոլյուցիայի վերջին հանգրվանը հանդիսացավ «կուլտուրական հեղափոխությունը», երբ Մաոն հայտարարվեց «բոլոր ժողովուրդների ուսուցիչը», համաշխարհային կոմունիստական շարժման «միակ մարքսիստ տեսաբանը», իսկ նրա գաղափարները՝ արդի դարաշրջանի մարքսիզմ-լենինիզմը: Այլ կերպ ասած, մարքսիզմ-լենինիզմը սկսվեց նենգափոխվել մաոիզմով[30]:

Մաոական պրոպագանդան չինական միապետականների զավթողական պատերազմները պատկերում է որպես «ազգային ու արդարացի», քարոզում է խանականների գերազանցությունը, «դեղին ռասիզմը»: Մաո Ցզե-դունը բազմիցս հայտարարել է այն տերիտորիաները Չինաստանին վերադարձնելու մասին, որոնք իբրև թե պատկանել են Չինաստանին կամ գտնվել են նրա տնօրինության տակ Խանի, Թանի, Մինի, Ցինի մեծ կայսրությունների ժամանակ: Մեծապետական շովինիզմի նկրտումներն ու մարքսիզմ-լենինիզմից հեռացումը մաոականներին հասցրեց նրան, որ 1964 թ. Պեկինում հրապարակեցին ֆաշիզմի գաղափարախոսների՝ Ռոզենբերգի և Գեբելսի «Երկերի» ժողովածուն՝ «Պրոպագանդիստական աշխատանքի մեթոդների մասին»: Ժողովրդին մոլորեցնելու համար մաոականները օգտվում են Ադոլֆ Հիտլերի դեղատոմսից. սուտը, որպեսզի նրան մարդիկ հավատան, պետք է լինի մեծ և ոչ թե փոքր: Զրպարտեք, որքան կարող եք, զրպարտանքը որևէ նստվածք անպայման կթողնի:

---

30 Տե՛ս «Научный коммунизм и фальсификация его ренегатами», М., 1972.

Չին ղեկավարությունը կոմունիստական կուսակցությունների հետ բանավեճից անցել է պառակտողական գործունեության, այժմեականության հեղափոխական ուժերը միմյանց դեմ հակադրելու քաղաքականության։ 1967 թ. 55 երկրներում գործում էին պրոպեկինյան 79, այսպես կոչված «մարքսիստական-լենինյան կուսակցություններ կամ մարքսիստական-լենինյան խմբավորումներ»։ Հետագայում աստիճանաբար նվազեց դրանց թիվը. մաոականներին չի հաջողվել այդ կեղծ կոմկուսներին միավորել։ Բնորոշ է Բելգիայում պրոչինական ուժերի նախկին հիմնական ներկայացուցիչ Ժ. Գրիպպայի շրջադարձը դեպի մաոիզմի քննադատությունը։ Նրա «Վիետնամից մինչև Բելգիա» բրոշյուրում (1970) ասված է, որ մաոականների կողմնակիցներն իրենց արկածախնդիր գործողություններով, բանվորական և կոմունիստական, իսկական մարքսիստական-լենինյան կուսակցությունների ու կազմակերպությունների դեմ իրենց կատաղի հարձակումներով, այն աստիճան են ծառայում հետադիմությանը, որ մի շարք պարագաներում նրանց գործողությունները կարելի է անվանել ոստիկանական հրահրումներ։ Մարքսիզմի «չինականացումը» հասցրել է «Չինաստանի գերազանցության վերածննդի», չինական նոր կայսրության ստեղծման վերաբերյալ դավանանքին։ Ոտնահարվում է դեմոկրատիան, սահմանադրությունը։ Մաո Ցզե-դունը դեմոկրատիան որակել է «Բուրժուական պանդուլակ»։ Եթե հիտլերականները քողարկվում էին «բոլշևիզմի դեմ պայքարով» և քաղաքակրթությունը «կարմիր վարակից» պաշտպանելու մասին աղաղակներով, մաոականները կրակ բացելով ՍՍՀՄ-ի, սոցիալիզմի համաշխարհային սիստեմի և միջազգային կոմունիստական շարժման դեմ, պճնազարդվում են «համաշխարհային հեղափոխության», «պայքար հանուն մարքսիզմ-լենինիզմի անաղարտության», «ընդդեմ ժամանակակից ռևիզիոնիզմի» ֆրազներով և նույնիսկ... ամերիկյան իմպերիալիզմի դեմ պայքարի մասին հայտարարություններով։ Չինաստանի կոմկուսի տասներորդ համագումարը խնդիր դրեց «ստեղծել ամենալայն միասնական ճակատ՝ հանուն պայքարի, ընդդեմ... երկու գերպետությունների՝ ԱՄՆ-ի և Սովետական Միության... Մինչև վերջ հասցնել պայքարը ժամանակակից ռևիզիոնիզմի դեմ»[31]։ Չինական մեծապետական շովինիզմը հակակոմունիզմի զենքն է։ Այդ է պատճառը, որ մաոականները պաշտպանություն են գտնում տրոցկիստական ամեն տիպի թափթփուկների կողմից։ Այսպես,

31 Տե՛ս «Литературная газета», 1974, № 32.

1960 թ. սեպտեմբերին չորրորդ ինտերնացիոնալը հատուկ նամակ է ուղարկել ՉԿԿ Կենտկոմին, որով ողջունում է ՉԿԿ ղեկավարությանը և հավաստում, որ չորրորդ ինտերնացիոնալը կանգնած է Պեկինի կողմում։

Լատինա-ամերիկյան տրոցկիստների պարագլուխ Պոսադասն ասել է. «ՉԿԿ ղեկավարների գործողությունները հաստատում են Տրոցկու պայքարը ու նրա թեզն այն մասին, որ չորրորդ ինտերնացիոնալի ծրագիրը պաշտպանություն կգտնի միլիոնների կողմից»։ Իսկ անգլիական տրոցկիստական «Ռեդ Ֆլեգ» («Կարմիր դրոշ») թերթը ողջունելով Պեկինի ղեկավարներին, 1963 թ. գրել է. «Այդ բոլորը մեր գաղափարներն են, մեր եզրահանգումները, մեր վերլուծությունը... Չինացիները դրանք կոչում են «25 կետ», իսկ մենք՝ անվանում ենք «տրոցկիզմ»։

Մաոիզմի գաղափարախոսությունը դարձել է աշխարհի խաղաղության սպառնալիքներից մեկի՝ Չինաստանի քաղաքականության հիմքը, որը և միջոցներ, և ուժ չի խնայում տարբեր երկրներում իր կողմնակիցներին պաշտպանելու, ֆինանսավորելու և ղեկավարելու համար։ Համաշխարհային հեղափոխական շարժման մեջ այդ բացասական գործոնի առկայությունը պահանջում է մաոիզմի մերկացում։

Ներկայումս ավելի քան երբևէ, դարակազմիկ դեր են խաղում սոցիալիզմի համաշխարհային սիստեմը, համաշխարհային կոմունիստական ու բանվորական, ինչպես նաև ազգային-ազատագրական շարժումները։ Այս երեք ուժերն են կերտում մարդկության ապագան։

Մարքսիզմի հակառակորդները ջանում են կազմալուծել այդ հեղափոխական-ազատագրական ուժերը, նրանց հակադրել միմյանց։ Կապիտալի աշխարհում սոցիալ-տնտեսական և քաղաքական ճակատամարտերում բանվոր դասակարգի առաջատար դերի մասին են վկայում մոնոպոլիստական կապիտալի քաղաքականության դեմ աշխատավոր մասսաների դասակարգային ելույթների լայն թափն ու ծավալը։ Կապիտալիստական առավել զարգացած վեց երկրներում գործադուլավորների քանակը 1950 թ. 8 միլիոն 619 հազարից 1970 թ. հասել է 15 միլիոն 923 հազարի, այդ թվում, համապատասխանաբար, Անգլիայում՝ 302 հազար և մեկ միլիոն 784 հազար, Ճապոնիայում՝ 763 հազար և մեկ միլիոն 950 հազար, ԱՄՆ-ում՝ մեկ միլիոն 320 հազար (1960) և երեք միլիոն 300 հազար։

Բուրժուական պրոպագանդան ամեն կերպ աջակցում է տրոց-

կիզմի տարածմանը։ Վերջին տարիներին կապիտալիստական մի շարք երկրներում մոդա է դարձել ինչպես Տրոցկու գործերի, այնպես էլ նրա մասին գրքերի հրատարակությունը։ Ռենեգատ Իսահակ Դոյչերը 1967 թ. լույս է ընծայել «Անավարտ հեղափոխություն. 1917—1967» նաապրությունը, որտեղ փորձում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը գնահատել Տրոցկու «պերմանենտ հեղափոխության» դիրքերից։

Տրոցկիզմի դեմ մղվող պայքարն այժմ էլ կարևոր պայման է բանվոր դասակարգի ու նրա ավանգարդի՝ կուսակցության կողմից աշխատավոր մասսաներին նվաճելու գործում։ Այդ պայքարն ունի մի այլ խնդիր ևս։ Այն պետք է խափանի բուրժուական պրոպագանդայի փորձերը, որոնց նպատակն է հարձակումներ գործել ՍՍՀՄ-ում և սոցիալիստական այլ երկրներում արդեն գոյություն ունեցող սոցիալիզմի վրա։

ՍՄԿԿ XXIV համագումարում ամբողջ ուժով ցուցադրվեց կոմունիստական կուսակցությունների և հակաիմպերիալիստական ուժերի հետագա համախմբվածությունը։ Եթե ՍՄԿԿ XIX համագումարին մասնակցել են 22 կուսակցությունների պատգամավորներ, XXI համագումարին՝ 73, XXIII համագումարին՝ 86, ապա XXIV համագումարին մասնակցել են կոմունիստական և բանվորական, ազգային դեմոկրատական և ձախ սոցիալիստական կուսակցությունների 102 պատգամավորներ՝ աշխարհի 91 երկրներից։

Մարքսիզմ-լենինիզմը թևածում է աշխարհով մեկ։ Բավական է նշել, որ Վ. Ի. Լենինի ծննդյան 100-ամյակին նվիրված միջոցառումներն անց են կացվել աշխարհի 126 երկրում։ Դա միջազգային խոշորագույն մասսայական, քաղաքական-գաղափարական շարժում էր, լենինիզմի գաղափարների հաղթարշավ։

«Տեսական աշխատանքը մեր ընդհանուր ինտերնացիոնալ, հեղափոխական պայքարի կարևոր մասն է,— ասված է ՍՄԿԿ XXIV համագումարին Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ։ Համաշխարհային ասպարեզում կապիտալիզմի և սոցիալիզմի ուժերի հակամարտությունը, ինչպես նաև հեղափոխական ուսմունքն ամլացնելու, սոցիալիստական և կոմունիստական շինարարության պրակտիկան խեղաթյուրելու՝ ամենայն տեսակի ռևիզիոնիստների փորձերը մեզանից պահանջում են այսուհետև ևս ավելի մեծ ուշադրություն նվիրել տեսության պրոբլեմներին, նրա ստեղծագործական զարգացմանը։ Հին ֆորմուլաների կրկնությունը այնտեղ, որտեղ դրանք արդեն իրենց սպառել են, նոր պրոբլեմներին նորովի մոտե-

633—3

նալ չկարողանալը կամ չցանկանալը՝ այս ամենը վնաս է բերում գործին, լրացուցիչ հնարավորություններ ստեղծում մարքսիզմ-լենինիզմի զանազան ռևիզիոնիստական խեղաթյուրումներ տարածելու համար։ Մեր տեսության ու պրակտիկայի վրա կատարվող բուրժուական և ռևիզիոնիստական հարձակումների քննադատության համոզչությունը հսկայական չափով ուժեղանում է այն ժամանակ, երբ դա հենվում է հասարակական գիտությունների, մարքս-լենինյան տեսության ակտիվ և ստեղծագործական զարգացման վրա»[32]։

XX դարը լենինիզմի դարն է։

Իբրև պատգամ հնչում է «Ի՞նչ անել» աշխատությունում Վ. Ի. Լենինի գրած խոսքերը. «Հարցը դրվում է միայն այսպես. բուրժուական կամ սոցիալիստական իդեոլոգիա։ Միջինը չկա... Ուստի սոցիալիստական իդեոլոգիայի ամեն մի նսեմացում, ամեն մի հեռացում նրանից, ինքնին նշանակում է բուրժուական իդեոլոգիայի ուժեղացում»[33]։

Ելնելով միջազգային քաղաքական արդի վիճակից, անհրաժեշտ է անհաշտ պայքար մղել բուրժուական գաղափարախոսության, ժամանակակից ռևիզիոնիզմի և ռենեգատների դեմ, մերկացնել նրանց հակակոմունիստական գործունեությունը, փակել բուրժուական գաղափարախոսության ճանապարհը։ Պետք է անհաշտ լինել նաև մեզ մոտ առանձին դեպքերում նկատվող գաղափարական սայթաքումների և խոտորումների դեմ, հանուն գիտության մարտնչող կուսակցականության։

Մարդկության ներկան և ապագան պատկանում են արդի միակ գիտական, ամենահաղթ ուսմունքին՝ մարքսիզմ-լենինիզմին, որ դարձել է աշխարհի առաջավոր մարդկության երազանքների ու խոհերի տիրակալը՝ աշխատանքի ու պայքարի մարտական դրոշը։

Սովետական Հայաստանը մարքսիզմ-լենինիզմի գաղափարների, լենինյան ազգային քաղաքականության հաղթանակի հիաքանչ օրինակ է, մեծ Հոկտեմբերի ծնունդ։ Լենինիզմի հաղթանակով, սովետական իշխանության շնորհիվ հայ ժողովուրդը արհավիրքներից հասել է իր վերածննդին, ձեռք է բերել ազատություն, խաղաղություն, պետականություն, ՍՍՀՄ կազմում գտել իր երջանկությունը։

---

32 Լ. Ի. Բրեժնև, *ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի հաշվետու զեկուցումը Սովետական Միության կոմունիստական կուսակցության XXIV համագումարին*, Երևան, 1971, էջ 163։

33 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 5, էջ 507։

Ա Ռ Ա Ջ Ի Ն   Բ Ա Ժ Ի Ն

ԼԵՆԻՆԻԶՄԸ ՄԱՐՔՍԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆՆ Է

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՎԱՆԳԱՐԴԸ

1. Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և նրա զարգացման օրինաչափությունները։ 2. Առաջին գրոհը ցարական ինքնակալության դեմ։ 3. Գործադուլային շարժման ղեկավարը։ 4. Քաղաքական կռիվը։ 5. ՌՍԴԲԿ Երևանի բոլշևիկյան կոմիտեն։ 6. Արձագանքներ Զանգեզուրում։ 7. «Ջորքը չի կարող, երբեք չի եղել և երբեք չի լինի չեզոք»։ 8. Դաշնակցությունը «Հայկական իրականության» դատաստանի առջև։ 9. Մեկնաբանություններ։

1

Մինչև Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը Հայաստանը, Վրաստանը, Ադրբեջանը տարածքով սահմանազատված չէին։ Երկրամասը կազմված էր Բաքվի, Թիֆլիսի, Երևանի, Ելիզավետպոլի, Քութայիսի նահանգներից, Կարսի և Բաթումի մարզերից, Զաքաթալայի ու Սուխումիի օկրուգներից։ Բնակչությունը գլխավորապես հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ և ռուսներ էին։ 1913 թ. Անդրկովկասի բնակչության ազգային կազմը հետևյալ պատկերն էր ներկայացնում[1] (տե՛ս էջ 38)։

Բնակչության մոտ 17%-ն ապրում էր քաղաքներում և քաղաքատիպ վայրերում։ Ռուսաստանի քաղաքային բնակչությունն այդ ժամանակ կազմում էր 13,7 տոկոս[2]։

Անդրկովկասում 1913 թ. կային մի շարք խոշոր քաղաքներ, այդ թվում Թիֆլիսը՝ 345 հազար, Բաքուն՝ 249 հազար, Սուխումին՝ 46

---

1 «Кавказский календарь» на 1915 г., Тифлис, 1916, стр. 218—269.
2 «Статистический ежегодник России на 1912 г.» СПб., 1913, стр. 60—61.

	Հայեր	Վրացիներ	Ադրբեջանցիներ	Ռուսներ	Լեռնականներ՝ օսեթին, լեզգի, աբխազ, աջար	Ընդամենը
Բաքվի նահանգ	113526	4239	827493	171449	65217	1181924
Բաթումի մարզ	20124	101515	44935	13026	11538	191138
Ելիզավետպոլի նահանգ	396815	1957	700387	36648	32059	1167866
Զաքաթալայի օկրուգ	3002	5240	22867	396	53152	84657
Կարսի մարզ	147401	4153	104611	19770	115278	391213
Քութայիսի նահանգ	7662	993272	2000	10000	25000	1037934
Սուխումի օկրուգ	17886	93159	2596	21764	52202	189607
Թիֆլիսի նահանգ	394115	672348	141238	123539	78816	1410056
Սեծովյան նահանգ	19598	6875	5497	132397	30096	194463
Երևանի նահանգ	604491	424	372801	16408	53063	1044097
Ընդամենը	1721530	1883182	2224425	545397	518421	6892955

հազար, Բաթումը՝ 38,6 հազար, Ալեքսանդրապոլը՝ 51 հազար, Երևանը՝ 46 հազար, Կարսը՝ 30 հազար բնակչությամբ և այլն:

Անդրկովկասի վարչական նմանօրինակ բաժանումն ու սոցիալ-քաղաքական իրադրությունն իր անդրադարձումն էր գտնում բանվոր դասակարգի ձևավորման ու զարգացման, նրա ընդհանուր օրինաչափությունների և առանձնահատկությունների մեջ[3]: Երկրամասի պրոլետարիատը բազմազգ էր: Բանվորական աճի դինամիկան ցույց է տալիս, որ դարասկզբին Բաքվում, Անդրկովկասի արդյունաբերական ամենախոշոր կենտրոնում աշխատում էր 65 հազար բանվոր, Վրաստանում՝ մոտ 50 հազար, այդ թվում՝ երկաթուղային տրանսպորտում՝ 6000, Բաթումիի նավթամշակման գործարաններում՝ 5000—6000, Քութայիսիի նահանգում՝ 8000, Թիֆլիսի ֆաբրիկա-գործարաններում՝ 7493, Ճիաթուրիի մարգանեցի հանքերում 3400—5000: Միայն Կովկասի հանքարդյունաբերության մեջ աշխատում էր 17603 բանվոր[4]:

Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում, երկաթուղային շինարարությունում և այնտեղ աշխատող 15 հազար բանվորներից բացի, տասնյակ հազարավոր մարդիկ ժամանակավոր աշխատանքի էին մեկնում արդյունաբերական կենտրոններ: Հայաստանում նույնպես պրոլետարիատը ինտերնացիոնալ կազմ,

---

3 *Տե՛ս* «Формирование рабочего класса в Закавказье. Доклады и тезисы научных сообщений», 20—27 апреля 1974 г., Тбилиси, 1974; *М. А. Адонц*, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, Ереван, 1957; *И. В. Стригунов*, Из истории формирования бакинского пролетариата (70—90-е гг. XIX в.), Баку, 1960; *З. В. Хоштариа*, Развитие промышленности и формирование пролетариата в Грузии XIX в. (автореферат диссертации на соискание степени доктора ист. наук. Тбилиси), 1969; *А. Рошин*, Формирование рабочего класса в России, М., 1958; *Г. А. Галоян*, Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии, М., 1960; *его же*, Рабочие движения и национальный вопрос в Закавказье, 1900—1922, Ереван, 1968; *Г. Б. Гарибджанян*, В. И. Ленин и большевистские организации Закавказья, Ереван, 1967: «История Коммунистической партии Азербайджана», часть первая, Баку, 1958: «Очерки истории коммунистической партии Грузии», часть вторая, Тбилиси, 1957; «Очерки истории Коммунистической партии Армении», Ереван, 1967.

4 *Տե՛ս* *Ст. Гулишамбаров*, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района. Тифлис, 1880; *Г. Пичикян*, Капиталистическое развитие нефтяной промышленности в Азербайджане. См. «История классовой борьбы в Закавказье, Тифлис, 1930, стр. 47, 108, 110; *А. Г. Рошин*, Формирование промышленного пролетариата в России, М., 1940, стр. 104.

ուներ։ Նրա շարքերում կային ռուսներ, ադրբեջանցիներ, վրացիներ, ուկրաինացիներ, հույներ, պարսիկներ և այլ ազգերի ներկայացուցիչներ։ Այսպիսով, դարասկզբին երկրամասում կար ավելի քան 40 հազար կազմակերպված հայ բանվոր, որը հիմնականում կենտրոնացված էր Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Երևանում, Ալավերդում, Ալեքսանդրապոլում, Ղափանում, Նոր Բայազետում։ 1913 թ. տվյալներով Բաքվի նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների 22,5%-ը հայեր էին։

1913 թ. Բաքվի բանվոր դասակարգի ազգային կազմը ըստ աշխատանքի բնույթի հետևյալ պատկերն էր ներկայացնում[5]

Ազգություն	Վարչա-գրասենյա-կային	Վարպետ	Վարպետի օգնական	Աշակերտ	Բանվոր	Սևագործ բանվոր	Մանր ծառայող
Ռուսներ	1222	4191	689	310	2171	1319	1037
Հայեր	1105	2009	587	273	3490	1714	917
Ադրբեջանցիներ	417	1383	478	43	7596	6580	980
Կազանի թաթարներ	27	154	70	10	524	380	551
Լեզգիներ	126	421	68	17	1875	2096	721
Այլ ազգեր	825	434	46	31	224	161	75

Պրոլետարիատն աճում էր գլխավորապես արտագնացության հաշվին։ Կ. Մարքսը նշել է, որ արտադրության կապիտալիստական ձևը մշտապես սակավածնում է հողագործությամբ զբաղվող բնակչությանը։ Վ. Ի. Լենինը «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» դասական աշխատության մեջ ցույց է տվել, որ «Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսին ու նրա հողագործական բնակչության արագ աճմանը զուգընթաց տեղի էր ունենում նաև բնակչության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերությանը հարելու պրոցեսը»[6]։

---

5 Փաստերը քաղել ենք արխիվային նյութերից, «Կավկազսկի կալենդարի» համապատասխան տարեթվերից, Կ. Պաժիտկովի, Վ. Սամեդովի, Մ. Ադոնցի, Ե. Գուլանյանի, Ի. Ստրուգովոիլի և այլոց աշխատություններից։ Տե՛ս *К. Пожитков*, Очерки по истории бакинской нефтяной промышленности. М., 1940; *М. А. Адонц*, Экономическое развитие Восточной Армении, Ереван, стр. 526—527; *В. Пакшевский*, Положение бакинского пролетариата накануне революции (1914—1917), Баку, 1927, стр. 10.

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 771—772

Արդյունաբերական պրոլետարիատի ձևավորման ու զարգացման սոցիալական գլխավոր աղբյուրը քայքայվող գյուղացիական հողազուրկ մասսան էր, որն աշխատանք էր որոնում քաղաքներում, գնալով խորանում էր բնակչության դասակարգային շերտավորումը։ Դարասկզբին Ռուսաստանում գյուղացիների մոտ հինգերորդ մասն արդեն այն վիճակում էր, նշել է Վ. Ի. Լենինը, որ նրանց «ամենագլխավոր զբաղմունքը» վարձու աշխատանքն էր ունևոր գյուղացիների և կալվածատերերի մոտ։ Միևնույն գյուղացիությունը, և՛ շուկա էր շպրտում միլիոնավոր բանվորների, որոնք վարձողներ էին որոնում, և՛ վարձու բանվորների պատկառելի պահանջ ներկայացնում[7]։ 1905 թ. վիճակագրական տվյալների համաձայն Վ. Ի. Լենինը հանգել է այն եզրակացության, որ Եվրոպական Ռուսաստանում կար 6.809.909 գործարանային բանվոր և սպասարկող, որից՝ 493,311-ը Կովկասում, այդ թվում՝ 407.131 արտադրական բանվոր, 91.180 վարձու սպասարկու[8]։

Հայաստանն ագրարային երկիր էր։ Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին հայկական գյուղերում պրոլետարական և կիսապրոլետարական բնակչությունը կազմում էր 350 հազար մարդ[9]։ Շարունակվում էր զանգվածային արտագնացության (պանդխտության) հոսքը երկրամասի արդյունաբերական կենտրոնները։ Քայքայվող գյուղացիությունը արտագաղթում էր առաջին հերթին Բաքու։ Պանդուխտ հայերի մեծ մասը դառնում էր մշտական, որակյալ բանվոր։ Միայն Երևանի նահանգից 1912 թ. արտագաղթել է 48,742 մարդ, այդ թվում՝ 17,446-ը տեղավորվել են նահանգի ներսում, 29,159-ը նրա սահմաններից դուրս, իսկ 2137-ը մեկնել են արտասահման[10]։ 1913 թ. պանդուխտ բնակչության թիվը Բաքվում հասնում էր 69,899 մարդու, որից 9500-ը գաղթել էին Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառից[11]։

Արդյունաբերական բնակչության աճը օբյեկտիվորեն առաջադիմական երևույթ էր, որը նպաստում էր դասակարգային գիտակ-

---

7 Նույն տեղում, էջ 292։

8 *Տե՛ս М. Адонц,* Экономическое развитие Восточной Армении, стр. 52.

9 *Տե՛ս М. Адонц,* Экономическое развитие Восточной Армении, стр. 52.

10 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 29, գ. 7, թ. 1։

11 *Б. Бутник-Северский,* Условия и формы расселения в капиталистическом Баку, рукопись диссертации, стр. 35; նույնը տե՛ս Գ. Հարությունյան, Ռևոլյուցիոն շարժումները և բոլշևիկների գործունեությունը Անդրկովկասում, 1910—1912 թթ., Երևան, 1959, էջ 33։

ցության բարձրացմանը։ Նա ազատում է բնակչությունը հնավուր,
հետամնաց, պատմության կողմից մոռացված խուլ անկյուններից
և ներգրավում է նրան արդի հասարակական կյանքի հորձանուտի
մեջ,— գրել է Վ. Ի. Լենինը,— բարձրացնում է բնակչության գրա-
գիտությունն ու նրա գիտակցությունը, պատվաստում է նրան կուլ-
տուրական սովորույթներ ու պահանջմունքներ[12]։

1904—1920 թթ. Հայաստանի երկաթուղային շինարարությու-
նում, լեռնահանքային արդյունաբերության, գինու-կոնյակի արտա-
դրության և այլ բնագավառներում աշխատող պրոլետարիատը կազ-
մավորվում և քաղաքական մեծ ուժ է դառնում։ Տակավին 1899 թ.
շահագործման է հանձնվում Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս, իսկ
1903 թ. Ալեքսանդրապոլ—Երևան երկաթգիծը, 1908 թ. Ջուլֆան
միանում է Երևանին։ Երկաթուղային տրանսպորտի նման ցանցի
ստեղծումը հնարավորություն է ընձեռում ոչ միայն իրարից կտր-
ված տնտեսական շրջանները միմյանց միացնելու, արագացնելու
ֆեոդալական սահմանափակ տնտեսության քայքայման պրոցեսը,
այլև արդյունաբերական պրոլետարիատի բազմապատկմանը, քա-
ղաքական ցույցերի ու գործադուլների ծավալմանը, մարքսիզմի
տարածմանը, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության
ակտիվացմանը։ Հայաստանում երկաթուղային ցանցի ստեղծումը,
Զանգեզուրը Եվլախի վրայով Բաքվի հետ կապելը, Դիլիջանը և մեր-
ձակա շրջանները՝ Աղստաֆայի հետ, իսկ Լոռին, Շիրակը և այլ
շրջանները՝ Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Երևան և Ալեքսանդրա-
պոլ—Կարս գծի հետ միացնելը արագացրեց կապիտալիստական
հարաբերությունների զարգացումը, ընդլայնեց առևտրական հարա-
բերությունները, այլև նպաստեց բանվոր դասակարգի զարգացմա-
նը, հեղափոխական շարժումների ծավալմանը։

Երկաթուղային շինարարության վրա 1905 թ. նախօրյակին
աշխատում էին 10 հազար բանվոր, որոնք ունեին ինտերնացիոնալ
կազմ, մի մասը, հիմնականում մասնագետները, եկել էին Ռու-
սաստանի արդյունաբերական քաղաքներից։ Նրանց մեջ կային ոչ
քիչ թվով ռուս, վրացի, ադրբեջանցի և այլ ազգի հեղափոխական
բանվորներ, որոնք նպաստեցին տեղացի բանվորների և աշխատա-
վոր զանգվածների քաղաքական դաստիարակությանը։ Հեղափո-
խական ուժերի առաջատար ջոկատներն էին երկաթուղայիններն ու
լեռնահանքային արդյունաբերության բանվորները։ Տակավին

12 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 3, էջ 746—747

1846 թ. շահագործվում են Ղափանի, իսկ երկու տասնամյակ անց՝ Ալավերդու պղնձահանքերը: Պղնձի արդյունաբերությունը Հայաստանում ուժեղ թափով սկսում է զարգանալ 1898 թ., երբ Ալավերդու, Շամլուղի և Ախթալայի պղնձահանքերը, ինչպես և Ալավերդու, Շամլուղի պղնձաձուլական գործարաններն անցնում են «Կովկասյան արդյունաբերական և մետալուրգիական ընկերության» ձեռքը: Հետագայում այդ ընկերությունն ավելի է ընդլայնում իր գործունեությունը: XX դարի առաջին տասնամյակում պղնձի հանքավայրերը հայտնաբերելու ուղղությամբ հետախուզական լայն աշխատանք է կատարվում: Բացի Ալավերդու և Շամլուղի «Պիրիտիկ» (պիրիտային) գործարաններից, բացվում է տեխնիկապես հագեցված նոր՝ «Մանես» (ֆրանսիացի ինժեների անունով) գործարանը, որը գործարկվում է 1900 թվականին: 1910 թ. ֆրանսիական կապիտալիստներն իրենց ձեռքն են վերցնում Շահալի-Էլարի հանքերը, իսկ 1911 թ. Զանգեզուրում սկսում են շահագործել նաև Սյունիքի և Ղափանի պղնձաձուլական գործարանները: 1912 թ. Հայաստանում արտադրվող պղնձի գրեթե 84 տոկոսը գտնվում էր օտարերկրյա կապիտալի ձեռքում: Եթե XIX դարի 80-ական թթ. Հայաստանում կար 16 պղնձաձուլական գործարան, ապա դարասկզբին դրանց թիվը կրճատվեց մինչև 5-ի, բայց պղնձի ձուլումն ավելացավ 12—15 անգամ:

1900—1906 թթ. պղնձի արտադրությունը Զանգեզուրում երկու անգամ ավելացավ, տարեկան հասնելով 140 հազար փթի[13], իսկ Հայաստանի պղնձարդյունաբերությունը 1901—1907 թթ. ձուլել է Ռուսաստանի պղնձի մոտ մեկ քառորդը[14]: 1912 թ. Հայաստանում արտադրվել է 316 հազար փութ, իսկ 1913 թ. 337 հազար փութ պղինձ[15]: 1911 թ. Զանգեզուրում արտադրվել է 508677 փութ հանքանյութ և ձուլվել 70152 փութ պղինձ[16]: Այս ամենի շնորհիվ արագորեն աճում էր լեռնահանքային արդյունաբերության ու պղնձաձուլական գործարանների բանվորների թիվը: Հիմնական բանվորների կողքին ավելանում էր նաև ժամանակավոր աշխատողների թիվը: Դրանց մի մասը, անշուշտ, բանվորներ չէին, այլ «հավաքա-

---

13 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ. ֆ. 195, ց. 38, թ. 22:

14 *В. Мелконян,* Металлургия меди в Армении, стр. 12.

15 *Брейтерман,* Медная промышленность России и мировой рынок. часть III, Л., 1930, стр. 217; Տե՛ս Գ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 26:

16 «Обзор Елизаветпольской губ. за 1911 г.», стр. 31.

կան աշխատողներ»։ Միայն ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանի լեռնահանքային արդյունաբերության մեջ աշխատում էին ավելի քան 11 հազար բանվոր, այդ թվում՝ Ալավերդում և շրջակայքում 5000—6000, իսկ Զանգեզուրում 5000[17]։ Թեև ստույգ տվյալներ չկան Երևանի նահանգի և Կարսի մարզի աղահանքերի բանվորների թվական կազմի մասին, բայց փաստ է, որ հիմնական բանվորների հետ միասին աշխատում էին նաև գյուղերից եկած պայմանագրային կարգով աշխատողներ, որոնք մեքենայացման բացակայության պատճառով ամբողջ աշխատանքը կատարում էին ձեռքով։

Սևանի ավազանում ձկնորսությամբ զբաղվողների քանակը հասնում էր 1500 մարդու։

Հայաստանի հեղափոխական շարժումների ծավալմանը մեծ չափով նպաստեցին Երևանի գինու և կոնյակի, կաշվի մշակման, մեխանիկական գործարանի և այլ ձեռնարկությունների բանվորական կոլեկտիվները։ Գինու-կոնյակի արտադրությամբ Հայաստանն առաջին տեղն էր գրավում Ռուսաստանում[18]։ Կոնյակի 75 և սպիրտի 90%-ն արտահանվում էր տարբեր երկրներ։ Միայն 1911—1914 թթ. Հայաստանից արտահանվել է 600000 դույլ գինի։ Այսուհանդերձ, ինչպես նշեցինք, Հայաստանն ագրարային երկիր էր, բանվոր դասակարգը մեծամասնություն չէր կազմում։

Ֆաբրիկա-գործարանային պրոլետարիատը լինելով հասարակության ավանգարդը, հանդես էր գալիս վարձու աշխատանքով ապրող սոցիալական մյուս խմբերի հետ միասին։ Հայկական պրոլետարիատը ընդհանուր օրինաչափությունների հետ միաժամանակ ուներ իր առանձնահատկությունները։ Այսպես, Վրաստանի պրոլետարիատի 30—35, իսկ Ադրբեջանի պրոլետարիատի 32%-ը հայեր էին։

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին հայկական պրոլետարիատը քաղաքական որոշակի ուժ էր։ Երկրամասի մյուս ժողովուրդների հետ դաշնակցած, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ նա գրոհում էր ցարիզմի և բուրժուազիայի դեմ, ազգային ազատագրական շարժումները սերտորեն շաղկապելով հեղափոխական պայքարի հետ։

---

17 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 195, գ. 38։

18 Տե՛ս «Обзор отраслей промышленности в Закавказском крае», Тифлис, 1922, стр 190, 193.

2

1905 թ. հունվարի 9-ի (22-ին) «Արյունոտ կիրակին» ազդարարեց ռուսական առաջին հեղափոխության սկիզբը։ Այդ օրը հազարավոր բանվորներ Պետերբուրգի բոլոր ծայրերից գնում էին դեպի Ձմեռային պալատի հրապարակը, որպեսզի ցարին հանձնեն իրենց խնդրագիրը։ Ինքնակալը հրամայում է զորքին՝ կրակել անզեն ամբոխի վրա. սպանվում են ավելի քան 1000 բանվոր, իսկ մի քանի հազարը վիրավորվում։ Խաղաղ ցույցի տմարդի գնդակոծումը սպանեց բանվորների հավատը ցարի նկատմամբ, արթնացրեց նրանց քաղաքական գիտակցությունը և հեղափոխական պայքարի կոչեց ժողովրդական վիթխարի մասսաներին։ Ցարի սոսկալի չարագործության լուրը ցնցեց ամբողջ Ռուսաստանը։ Պետերբուրգի պրոլետարիատի «Մահ կամ ազատություն» մարտակոչին արձագանքեց ամբողջ Ռուսաստանի բանվոր դասակարգը։ Երկրով մեկ հնչեց «Կորչի՛ ցարը» լոզունգը։ Ալեքսանդր աճեցին պրոլետարիատի գործադուլային շարժումները, Ռուսաստանում բռնկվեց ժողովրդական հեղափոխություն, որը համաշխարհային պատմության մեջ **առաջին** մեծ հեղափոխությունն էր, իմպերիալիզմի դարաշրջանի **առաջին** ժողովրդական հեղափոխությունը։

1905—1907 թթ. հեղափոխությունը մի ամբողջ դարաշրջան է մեր երկրի ժողովուրդների և Սովետական Միության կոմունիստական կուսակցության կյանքում։ Ռուսական առաջին հեղափոխությունը իրենց սոցիալական և ազգային ազատագրության համար Ռուսաստանի բանվորների և գյուղացիների մղած պայքարի մի կարևոր էտապն է։ Հեղափոխության ամբողջ ընթացքում ռուսական պրոլետարիատի և գյուղացիության հետ, ուս-ուսի տված՝ Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լեհաստանի, Մերձբալթիկայի, Անդրկովկասի, Միջին Ասիայի և ցարական Ռուսաստանի մյուս երկրամասերի բանվորներն ու գյուղացիները հերոսական պայքար էին մղում իրենց ընդհանուր թշնամիների՝ ցարիզմի և կալվածատերերի դեմ։

Ռուսական առաջին հեղափոխությունն իր բնույթով բուրժուադեմոկրատական էր։ Նրա նպատակն էր տապալել ցարական ինքնակալությունը և հաստատել դեմոկրատական հանրապետություն, սահմանել ութժամյա բանվորական օր, բռնագրավել կալվածատիրական հողերը։ Դրա հետ միասին ռուսական առաջին հեղափոխությունն իր պայքարի միջոցներով պրոլետարական էր։ Հեղափոխության գլխավոր առանձնահատկությունն այն էր, որ նրա հիմնական

շարժիչ ուժը և ղեկավարը պրոլետարիատն էր։ Պայքարի ուրույն պրոլետարական միջոցը՝ գործադուլը, իր կնիքը դրոշմեց հեղափոխական տարիների բոլոր իրադարձությունների վրա։

«Ռուսական հեղափոխությունը,— գրել է Վ. Ի. Լենինը,— համաշխարհային պատմության մեջ առաջին մեծ հեղափոխությունն է, որտեղ քաղաքական-մասսայական գործադուլն արտասովոր խոշոր դեր է կատարել, սակայն, անկասկած նա չի լինի վերջին մեծ հեղափոխությունը»[19]։

Պրոլետարիատը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության մեջ իր հեգեմոն դերն իրականացնում էր՝ վարելով գյուղացիության հետ դաշինքի և լիբերալ բուրժուազիայի մեկուսացման քաղաքականություն։ 1905—1907 թթ. հեղափոխության այդ յուրահատկությունը, նրա հիմնական տարբերությունը հին բուրժուական հեղափոխություններից պայմանավորված էր պատմական նոր իրադրությամբ։

Արևմտյան Եվրոպայի բուրժուական-դեմոկրատական հեղափոխությունները տեղի էին ունենում մինչմոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանում, երբ համատնտեսական զարգացումն ընթանում էր վերընթաց գծով։ Այն ժամանակ բուրժուազիան կարող էր կանգնել ժողովրդի գլուխ, ընդունակ էր պայքար մղելու հասարակությունը ֆեոդալիզմի կապանքներից ազատագրելու համար։ Պրոլետարիատը դեռ չէր գիտակցում իր հատուկ, բուրժուազիային հակադիր դասակարգային շահերը։ Նա սեփական քաղաքական կուսակցություն չուներ և չէր կարող հանդես գալ որպես ինքնուրույն քաղաքական ուժ, կալվածատերերի դեմ պայքարող գյուղացիությունը, այսպես կոչված, բուրժուազիայի պահեստային ուժն էր։

Ռուսական առաջին հեղափոխությունը կատարվեց արդեն ոչ թե վերընթաց, այլ վայրընթաց ուղիով ընթացող կապիտալիզմի՝ իմպերիալիստական ստադիայի պայմաններում։ Իմպերիալիզմը հասցրեց կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական, դասակարգային ու ազգային բոլոր հակասությունների աննախընթաց սրմանը, մեծ չափերի հասավ ժողովրդական մասսաների ճորտացումն ու աղքատացումը։ Կապիտալիզմի տնտեսական ու քաղաքական զարգացման անհամաչափությունը, որն ուժեղացել էր նոր դարաշրջանում, մեծ չափով սրեց իմպերիալիստական երկրների միջև եղած հակասությունները, առաջ բերեց պատերազմներ, որոնք ան-

---

19 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 315։

տանելի դարձրին աշխատավոր մասսաների դրությունը։ 1904—1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմը, որն արագացրեց հեղափոխության բռնկումը, հետևանք էր իմպերիալիստական հակասությունների սրման և մեծ տերությունների շահերի բախման։ Այն մերկացրեց ցարական Ռուսաստանի ռազմական մեքենայի և պետական կառուցվածքի նեխվածությունը, խոր դժգոհություն և զայրույթ առաջացրեց մասսաների մեջ։

Ռուսաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական զարգացման օբյեկտիվ պայմաններն անխուսափելիորեն հասցրին հեղափոխական պայթյունի։ Ռուսաստանում բռնկված քաղաքական գործադուլներում պրոլետարիատը, առաջադրելով ինքնակալությունը տապալելու, դեմոկրատական կարգեր հաստատելու, ամբողջ կալվածատիրական հողը բռնագրավելու պահանջներ, հանդես էր գալիս որպես համաժողովրդական լավագույն մարտնչող հեղափոխական ուժ։ 1885 թ. Մորոզովյան հռչակավոր գործադուլից սկսած Ռուսաստանի պրոլետարիատը կապիտալի և ինքնակալության դեմ մի շարք հեղափոխական ճակատամարտեր մղեց։ Դրանցից են 1901 թ. Օբուխովյան գործադուլը, 1902-ի Դոնի Ռոստովի և Բաթումի քաղաքական ցույցերը, 1903-ի Հարավային Ռուսաստանի արդյունաբերական խոշոր կենտրոնների գործադուլները, Բաքվի պրոլետարիատի 1904 թ. հուժկու գործադուլը և այլն։ 1904 թ. դեկտեմբերին Բաքվի բոլշևիկյան կոմիտեի ղեկավարությամբ նավթագործների անցկացրած քաղաքական գործադուլը վերջացավ բանվորների հաղթությամբ, Ռուսաստանի բանվորական շարժման պատմության մեջ առաջին անգամ բանվորների և նավթարդյունաբերողների միջև կնքվեց կոլեկտիվ պայմանագիր։

Բաքվի բանվորների դեկտեմբերյան գործադուլը նախափոթորկային կայծակ էր հեղափոխական մեծ մրրիկի նախօրյակին, որի սկիզբը շեփորեցին 1905 թ. հունվարի 9-ի դեպքերը Պետերբուրգում։ Հունվարի 3-ին գործադուլ սկսվեց Պետերբուրգի խոշորագույն՝ Պուտիլովյան գործարանում (այժմ՝ Կիրովյան)։ Նրանց միացան մայրաքաղաքի ուրիշ գործարաններ և ֆաբրիկաներ։ Գործադուլը համընդհանուր բնույթ կրեց։ Ցարական կառավարությունը վճռեց սկզբից ևեթ ճնշել գործադուլները։ Վնասակար դեր կատարեցին հայտնի պրովոկատոր Գապոն քահանան և նրա օգնությամբ ոստիկանության կազմակերպած «Ռուս-ֆաբրիկա-գործարանային բանվորների ժողովը»։ Հունվարի 9-ին Նիկոլայ II-ը հրամայեց գնդակոծել անզեն բանվորներին։ Պետերբուրգի փողոց-

ները ողողվեցին ցույցարների արյունով։ Նույն օրը երեկոյան, Պետերբուրգում բանվորները կառուցեցին բարիկադներ։ Բանվորներն ասում էին «Ցարը մեզ տուր տվեց, է՛հ — մենք էլ նրան տուր կտանք»։ Ժողովրդի մեջ ոչնչացվեց «հայր-ցարի» նկատմամբ տածված միամիտ հավատը։ Ամբողջ երկրում սկսվեցին գործադուլներ, որոնք քաղաքական սուր բնույթ ունեին։ Բանվորները թողնում էին աշխատանքը և դուրս գալիս փողոցներն ու հրապարակները՝ «Կորչի՛ ցարը» լոզունգով։ Հունվար-մարտ ամիսներին գործադուլ արեց 810 հազար արդյունաբերական բանվոր, այսինքն երկու անգամ ավելի, քան նախորդ տասը տարում։ Գործադուլային շարժման ավանգարդում էին մետաղագործները։ «...Աշխարհը,— գրել է Վ. Ի. Լենինը,— չէր տեսել գործադուլային այնպիսի մի հսկայական շարժում, ինչպես Ռուսաստանում 1905 թվականին»[20]։

Մայիսյան օրերին գործադուլ արեց ավելի քան 200 հազար բանվոր։ 1905 թ. գարնանը և աշնանը Օդեսայում, Վարշավայում, Լոձում և մի շարք այլ քաղաքներում տեղի ունեցան բանվորների զինված ընդհարումներ ցարական զորքերի հետ։ Ռուսաստանի պրոլետարիատի առաջավոր շարքերում գնում էին արդյունաբերական խոշորագույն կենտրոնների՝ Պետերբուրգի, Մոսկվայի, Վարշավայի, Ռիգայի, Իվանովո-Վոզնեսենսկի բանվորները։ 1905 թ. գործադուլ արեցին մոտ 3 միլիոն ֆաբրիկա-գործարանային բանվոր։ Դրան պետք է ավելացնել գործադուլավոր բազմաթիվ երկաթուղային բանվորների, փոստ-հեռագրի և առևտրի աշխատողների։

Գործադուլային շարժման բնորոշ գիծը տնտեսական և քաղաքական գործադուլների զուգակցումն էր։ 1905 թ. տնտեսական գործադուլներին մասնակցում էին 1,439 հազար ֆաբրիկա-գործարանային բանվոր, քաղաքական գործադուլներին՝ 1,421 հազար բանվոր։

Բանվոր դասակարգի ետևից բարձրանում է գյուղացիությունը։ Գյուղացիական հեղափոխական շարժումները ծավալվեցին ամբողջ երկրում։ Նրանք ավերում էին կալվածատիրական շենքերը, հրկիզում պաստակերտները, իսկ մի շարք տեղերում գրավում կալվածատերերի հողերը։ Գյուղացիական շարժումները մեծ թափ ստացան հատկապես Ուկրաինայում, Պովոլժիեում, Մերձբալթիկայում և Վրաստանում։

Բանվոր-գյուղացիական հուժկու շարժումներն իրենց ազդե-

---

20 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 316։

ցույթյունն ունեցան ցարական բանակի վրա, սկսվեց զինվորական ապստամբությունների շրջանը։ Գործադուլային և գյուղացիական շարժումներին հետևեցին զինվորների ապստամբությունները, որոնք բռնկվեցին Ռուսաստանի բոլոր ծայրամասերում։ Դրանցից ամենանշանավորը «Պոտյոմկին» զրահանավի վրա ծագած ապստամբությունն էր, որը հեղափոխական շարժումների պատմության մի փայլուն էջն է։ Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով պոտյոմկինցիների սխրագործությունը, գրել է. «Պոտյոմկին» զրահանավը մնաց որպես հեղափոխության չպարտված տերիտորիա, և ինչ վիճակ էլ նրան սպասելիս լինի, մեր առջևն է անկասկածելի և մեծանշանակ մի փաստ — **հեղափոխական բանակի կորիզ** կազմակերպելու փորձը»[21]։

«Պոտյոմկին» զրահանավի ելույթից հետո 1905 թ. հուզումներ սկսվեցին Խարկովի, Մինսկի, Տաշքենդի, Վորոնեժի, Պսկովի, Վարշավայի, Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի և այլ կայազորներում։

Հեղափոխական շարժումներ ծավալվեցին նաև Ռուսաստանի ճնշված, ոչ ռուս ժողովուրդների մեջ։ Լեհաստանի, Լատվիայի, Էստոնիայի բանվորները գնում էին ինքնակալության դեմ պայքարող առաջավոր մարտիկների շարքերում։

1905—1907 թթ. հեղափոխությունը լայն տարածում գտավ Անդրկովկասում։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորները բոլշևիկների ղեկավարությամբ անցան առաջին հեղափոխության բովով, քաղաքական մկրտություն ստացան ցարիզմի, բուրժուազիայի ու կալվածատերերի դեմ մղված դաժան պայքարում։ Անդրկովկասը ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ռուսաստանի առաջավոր ֆորպոստներից մեկն էր։ Բաքվի, Թիֆլիսի, Բաթումիի, Քութայիսի, Ալեքսանդրապոլի, Ալավերդու և այլ քաղաքների պրոլետարիատը, Ռուսաստանի պրոլետարիատի օրինակով, պայքարի ելավ ցարիզմի և բուրժուազիայի դեմ, ուժեղացրեց մարտակիրը բուրժուական նացիոնալիզմի դեմ, էլ ավելի համախմբվեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ։ Անդրկովկասի պրոլետարիատի և աշխատավորության պայքարը ղեկավարում էին Վ. Ի. Լենինը և նրա հավատարիմ զինակիցները։

1905 թ. փետրվարին Բաքվում տեղի ունեցավ պրոլետարիատի 50 հազարանոց համայնական ցույցը, որը ընթանում էր «Կորչի ինք-

21 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 723։

նակալության» լոզունգով։ Բաքվին հետևեցին Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի, Բաթումիի, Կարսի և այլ քաղաքների բանվորները։ Բոլշևիկները քաղաքական պայքարի հանելով մասսաներին, գլխավորում էին նրանց գործադուլները, ուժեղացնում ագիտացիան։ Միայն 1905 թ. Կովկասյան Միութենական Կոմիտեն ռուսերեն, հայերեն, վրացերեն և այլ լեզուներով տասնյակ հազար օրինակ թռուցիկներ, կոչեր, պրոկլամացիաներ տպագրեց և տարածեց։ Այդ օրերին էր, որ կարմիր թերթիկներով տպագրվեց և Անդրկովկասում տարածվեց պրոլետարական հայ գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանի «Մեկ է՛լ, մեկ է՛լ» նշանավոր բանաստեղծությունը։

1905—1907 թթ. հեղափոխության առաջին գծում էին Ս. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը, Կամոն (Սիմոն Տեր-Պետրոսյանը), Ա. Բեկզադյանը, Ս. Կասյանը և ուրիշներ։ Հեղափոխության բովով անցան և մարտական մկրտություն ստացան Սերգեյ Մարտիկյանը, Մարտիրոս Միրաքյանը, Լևոն Տեր-Հովսեփյանը, Ասք. Մռավյանը, Լևոն Յաղուբյանը, Մինաս Սարգսյանը (բանվոր Մինաս), Արտաշես Կարինյանը, Գերասիմ Մելիք-Գրիգորյանը, Հմայակ Բեգլուևը, Գևորգ Սահակյանը, Նիկոլայ Կոստանյանը, Արմենակ Սաքուլյանը և ուրիշներ։ Մովսես Արագին և Լևոն Յաղուբյանը 1905 թ. հունվարի 9-ին (22-ին) Պետերբուրգում մասնակցել են «Արյունոտ կիրակի»-ին, երեկոյան արդեն նրանք գտնվում էին բարիկադներ կառուցող բանվորների շարքերում, իսկ դրանից երկու օր անց մասնակցում են Մաքսիմ Գորկու գլխավորությամբ Պուտիլովյան գործարանում տեղի ունեցած բանվորական ցույցին։ Սերգեյ Մարտիկյանը, Գևորգ Սահակյանը, Նիկոլայ Կոստանյանը, Գերասիմ Մելիք-Գրիգորյանը, Արմենակ Սաքուլյանը այդ օրերին Անդրկովկասում ծավալված ժողովրդական հեղափոխության առաջին շարքերում էին։ Ա. Կարինյանը ռուսական առաջին հեղափոխության հենց սկզբից դուրս է գալիս ցարական ինքնակալության դեմ և աշխատավոր մասսաներին հասցնում լենինյան գաղափարները։

Ռուսական առաջին հեղափոխության ընթացքում բոլշևիկները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ հանդես եկան որպես մասսաների կազմակերպիչներ և քաղաքական ղեկավարներ։ ՌՍԴԲԿ III համագումարը, որը տեղի ունեցավ 1905 թ. Լոնդոնում, վճռական նշանակություն ունեցավ մենշևիկ պառակտիչների դեմ մղվող պայքարում։ Սահմանեց պրոլետարիատի, որպես հեղափոխության առաջնորդի,

խնդիրները և նշեց կուսակցության ստրատեգիական պլանը հեղափոխության առաջին էտապում՝ պրոլետարիատը ամբողջ գյուղացիության հետ դաշնակցած, մեկուսացնելով բուրժուազիային, պետք է պայքարի բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակի համար։

Վ. Ի. Լենինը «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» գրքում տվեց բոլշևիկյան տակտիկայի փայլուն հիմնավորումը, մենշևիկյան օպորտունիզմի քննադատությունը։ Մարքսիզմի պատմության մեջ առաջին անգամ Վ. Ի. Լենինը գիտական ողջ խորությամբ լուսաբանեց իմպերիալիզմի դարաշրջանում բուրժուա-դեմոկրատական հեղափոխության առանձնահատկությունները, նրա շարժիչ ուժերի և հեռանկարների հարցը, մշակեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերաճելու հանճարեղ պլանը, կուսակցությունը և բանվոր դասակարգին զինեց պարզորոշ հեռանկարով և տակտիկայով։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ հեղափոխությունը կարող է հաղթանակել մասսայական քաղաքական գործադուլների կազմակերպումով, գործադուլներ, որոնք իրենց մեջ պետք է ներգրավեն միլիոնավոր մասսաների։ Դաշնակցության տեսաբաններից Մ. Վարանդյանը (Հովհաննիսյան) չըմբռնելով քաղաքական գործադուլի նշանակությունը իր «Հ. Յ. Դաշնակցության պատմություն» գրքում ջանում է Ռուսաստանում քաղաքական ռեակցիայի առաջացումը կապել ՌՍԴԲԿ-ի և նրա գաղափարախոսության՝ մարքսիզմի «աղանդավորության» հետ։ Իր գրքի «Ցարական ռեակցիան և դաշնակցությունը» բաժնում նա գրել է. «Ռուս ուղղադավան մարքսիզմը անբաժան ուղեկիցն եղավ սկիզբեն ի վեր և որ ավելի խտացած ձևով Ռուսաստանեն անցավ Կովկաս, ջլատեց ազատագրական շարժումը, հեռացնելով իրարմե միևնույն նպատակին ձգտող պատկառելի հատվածներ։ Աղանդականությունը կբխեր նույնիսկ անոնց ընկերային աշխարհայացքի դոգմապաշտ էությունեն»։ Նրա կարծիքով լավ չէ, որ ռուսական հեղափոխությունը գտավ իր զարգացման ծայրակետը, իր գերագույն ու հարազատ արտահայտությունը գործադուլի մեջ։ «Եվ արևմտյան հանրային կարծիքը, գրել է նա,— ռուսաց «Շտուրմ ունդ դրանգի» փորձություններեն հանեց տխուր, ցավեցնող եզրակացությունը— une révolution impuissante contre un gouvernement incapable *(անկարող հեղափոխություն մը անընդունակ կառավարության մը դեմ)»*[22]։

22 Մ. Վարանդյան, *Հ. Յ. Դաշնակցության պատմություն, հատ. Բ, Գահիրե, 1950, էջ III։*

Մ. Վարանդյանը, ինչ խոսք, չի հասկանում, որ պրոլետարական քաղաքական գործադուլները հեղափոխության շարժափուլերն են։

Ռուսական առաջին հեղափոխությունը նշանավորեց մարքսիստական մտքի զարգացման նոր փուլը՝ լենինյան գաղափարների կենսունակությունը գործնականում ստուգելու, մարքսիզմը նոր, համարձակ դրույթներով հարստացնելու փուլը։ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մահից հետո Վ. Ի. Լենինն առաջին անգամ առաջ քաշեց զինված ապստամբություն կազմակերպելու հարցը՝ որպես գործնական խնդիր, որի լուծմանը ենթարկված է կուսակցության ամբողջ գործունեությունը հեղափոխության ժամանակ։ Ինքնակալության տապալումից հետո Վ. Ի. Լենինի գնահատմամբ՝ պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դեմոկրատական դիկտատուրայի քաղաքական օրգանը պետք է հանդիսանա զինված ժողովրդի վրա հենվող ժամանակավոր հեղափոխական կառավարությունը։

Վ. Ի. Լենինը հենվելով Կ. Մարքսի պերմանենտ հեղափոխության տեսության վրա, սովորեցնում էր. «...դեմոկրատական հեղափոխությունից մենք իսկույն ևեթ կսկսենք անցնել հենց մեր ուժի, գիտակից ու կազմակերպված պրոլետարիատի ուժի չափով, կսկսենք անցնել սոցիալիստական հեղափոխության։ Մենք կողմնակից ենք անընդհատ հեղափոխության։ Մենք կանգ չենք առնի կիսաճանապարհին»[23]։

Պատմական նոր պայմաններում, հասարակության հեղափոխական վերափոխման համար մղվող պայքարում, Վ. Ի. Լենինը ստեղծագործաբար զարգացնելով մարքսիզմը՝ ռուսական և միջազգային պրոլետարիատին զինեց գաղափարական հզոր զենքով։

«Նիրհող Ռուսաստանը,— գրել է Վ. Ի. Լենինը,— դարձավ հեղափոխական պրոլետարիատի ու հեղափոխական ժողովրդի Ռուսաստան»[24]։

Ռուսական առաջին հեղափոխության մրրիկներում ծնունդ առան և զարգացան սովետները, որոնք սկզբում հանդիսանում էին ժողովրդական իշխանության սաղմերը, իսկ հետագայում՝ 1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո, մեր երկրում դարձան պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձև, Սովետական սոցիալիստական պետության հիմքը, դեմոկրատիայի բարձրագույն ձևը։

---

23 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 9, էջ 297։

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 314։

Սովետներն առաջին անգամ ստեղծվեցին Մոսկվայում, Պետերբուրգում, Տվերում, Կոստրոմայում, Լուգանսկում, Դոնի Ռոստովում, Կիևում, Բաքվում, Իվանո-Վոզնեսենսկում և այլ խոշոր քաղաքներում։ Ռուսական առաջին հեղափոխության օրերին դրվեցին բանվորների և գյուղացիների դաշինքի հիմքերը։

Ռուսական առաջին հեղափոխության գագաթնակետը դեկտեմբերյան զինված ապստամբությունն էր Մոսկվայում, որը տեղի ունեցավ հոկտեմբերի 17-ի ցարական մանիֆեստից հետո։ Մանիֆեստում ցարը երկերեսանիորեն խոստանում էր բնակչությանը տալ քաղաքացիական ազատություններ, հրավիրել օրենսդրական դումա։

Դեկտեմբերյան զինված ապստամբության կարևոր հենակետը՝ նրա միջնաբերդը, Կրասնայա Պրեսնյան էր, որտեղ բանվորները հերոսաբար մարտնչում էին։ Բարիկադային այդ կռիվներին ակտիվ մասնակցություն ունեցավ նաև Սուրեն Սպանդարյանը։

Իր հերոսական գործադուլային պայքարով պրոլետարիատը նվաճեց Ռուսաստանում մինչև այդ չտեսնված խոսքի, մամուլի, պրոֆեսիոնալ միությունների և այլ կազմակերպությունների գործունեության ազատություն։

Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ սկսեցին լույս տեսնել հեղափոխական թերթեր։

Դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությամբ սկսվում է հեղափոխության վայրէջքը։ Բանվոր-դասակարգը, որն առաջինը պայքարի ելավ ինքնակալության դեմ, սկսում է նահանջել։ 1907 թ. հունիսին ինքնակալությունը հաղթանակ տարավ հեղափոխության դեմ։ Ռուսական հեղափոխության պարտության արմատական պատճառներից մեկը բանվոր դասակարգի և գյուղացիության ամուր դաշինքի բացակայությունն էր։ Այնուհետև, գյուղացիությունը բավականաչափ կազմակերպված չէր, բանակի մեծ մասը հավատարիմ էր մնացել ցարական կառավարությանը և դավաճանել էր ժողովրդին։ Համերաշխություն չկար բանվոր դասակարգի մեջ և բանվորական կուսակցության ներսում։ Շարժման ընթացքի վրա բացասական ազդեցություն ունեցավ «ոստիկանական սոցիալիզմը»՝ «զուբատովշչինան»։ Հեղափոխության ճնշման գործում ցարական կառավարությանն օգնեցին օտարերկրյա իմպերիալիստները։

Չնայած կրած պարտությանը, ռուսական առաջին հեղափոխությունը համաշխարհային պատմական մեծ նշանակություն ունե-

ցավ։ Նա հանդիսացավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության փորձն ու նախերգանքը։ «Առանց 1905 թվականի գլխավոր փորձի»,— գրել է Վ. Ի. Լենինը,— 1917 թվականի հոկտեմբերյան հեղափոխության հաղթությունն անհնարին կլիներ»[25]։ Միայն պրոլետարիատն է ի վիճակի հաղթությունների հետ միասին անհաջողություններից դասեր քաղելով նորանոր հաղթանակների հասնել։ Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատը օգտագործում էր ոչ միայն հարձակումը, այլև նահանջը, ի նոր գոտեմարտերի պատրաստության եռանդով։

Ռուսական առաջին հեղափոխությունը վիթխարի նշանակություն ունի ոչ միայն ՍՍՀՄ ժողովուրդների, այլև ամբողջ աշխարհի առաջավոր մարդկության մղած ազատագրական պայքարի պատմության մեջ[26]։ Ռուսաստանի բանվորները և գյուղացիներն ինքնակալության դեմ պայքարելու հարուստ փորձ ձեռք բերեցին, ստեղծվեց հեղափոխական ժողովուրդ, որին ղեկավարում էր հեղափոխական պրոլետարիատը։

1905—1907 թթ. հեղափոխության ազդեցությամբ փոխվում էին եվրոպական պրոլետարիատի դասակարգային պայքարի ձևերն ու մեթոդները։ Ռուսական հեղափոխությունը բոլոր երկրների աշ-

---

25 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 31, էջ 13։*

26 *Տե՛ս Р. Люксембург,* Русская революция (в кн.: «Старая и новая революция», СПб., 1905, стр. 23—28; *К. Цеткин,* Русская революция 1905 г. и западноевропейское рабочее движение (в кн.: «Первая русская революция 1905—1907 гг. и международное рабочее движение», Л., 1925, стр. 53—71); *К. Либкнехт,* Борьба в русской области и революция в России (см. «Избранные речи, письма, статьи». 1952, стр. 84—86); *Ф. Меринг,* 1905 год (в кн.: «Первая русская революция 1905—1907 гг. и международное рабочее движение», Л., 1925, стр. 75—79; *А. Бебель,* О русской революции, 1906; *Ж. Жорес,* Беспокойство консерваторов (в кн.: *Ж. Жорес,* Избранные речи и статьи, СПб., 1970, стр. 194—197; *Л. Штерн, Р. Зауерцапф,* Влияние первой русской революции 1905—1907 гг. на Германию, 1954; *Л. Базылев,* Вопросы сотрудничества польских и русских революционеров в 1905—1906 гг., 1963; *А. Найдус,* СДКПЛ и РСДРП. 1893—1907 гг., 1973; *О. Кодедова,* Влияние первой русской революции на революционное движение в чешских землях и в Словакии (в кн.: «Первая русская революция 1905—1907 гг. и международное революционное движение», ч. I, М., 1955, стр. 417—454); *М. Пиш,* Влияние русской буржуазно-демократической революции в Словакии (1905—1907 гг.), 1966 и др.

խատավորներին զինեց քաղաքական ու կազմակերպական, շահագործողների դեմ մղվող պայքարի հնկայական փորձով։

Ռուսական առաջին և երկրորդ հեղափոխությունները, քաղաքական գործադուլները, դեկտեմբերյան զինված ապստամբության դասերը պայմաններ ստեղծեցին 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի համար։

1917 թ. հունվարի 22-ին, Վ. Ի. Լենինը շվեյցարական բանվորական երիտասարդության ժողովում կարդացած զեկուցման մեջ, ընդգծելով 1905 թ. հեղափոխության նշանակությունը, ասել է, որ ռուսական հեղափոխությունը «Եվրոպական հեղափոխության նախերգանքն է մնում։ Կասկած չկա, որ այդ գալիք հեղափոխությունը կարող է լինել միմիայն պրոլետարական հեղափոխություն և այն էլ՝ այդ բառի առավել խոր նշանակությամբ՝ պրոլետարական, սոցիալիստական նաև իր բովանդակությամբ[27]։ Հեղափոխության ընթացքում քաղաքական փորձով հարստացան բոլշևիկյան կազմակերպությունները։ Աչքի ընկնող դեր խաղացին պրոֆեսիոնալ հեղափոխականները, որոնք մարքսիստական գաղափարների կենդանի կրողներն էին, կուսակցության կայուն միջուկը, որոնց շուրջը համախմբվեց Ռուսաստանի հեղափոխական կենսունակ ուժը՝ երիտասարդությունը։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները, զինված լենինյան տակտիկական և ստրատեգիական լոզունգներով, աշխատավոր մասսաների մեջ տարածում էին մարքս-լենինյան գաղափարները, հետևողականորեն մերկացնում համաձայնողական և բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հետադիմական գործունեությունը։

3

Ռուսական առաջին հեղափոխությանն ակտիվորեն մասնակցեցին Հայաստանի բանվորները և աշխատավորները, որոնք, քաղաքական մկրտություն ստանալով ցարիզմի, բուրժուազիայի և կալվածատիրության դեմ մղած դաժան պայքարում, էլ ավելի սերտորեն համախմբվեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ։

Մեծ թափ ու ծավալ ստացավ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակեր-

---

27 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 334—335։

պության գործունեությունը։ Ձևավորման առաջին իսկ օրերից կազմակերպությունը սերտ կապերի մեջ մտավ Թիֆլիսի և Կովկասի միութենական կոմիտեի հետ։ Բորչալուի կազմակերպության աշխատանքներին ղեկավար մասնակցություն էին ցույց տալիս Ստ. Շահումյանը, Մ. Ցխակայան, Ս. Սպանդարյանը, Մ. Մելիքյանցը (Դեդուշկա), Ա. Կախոյանը, Ս. Էվոյանը և ուրիշներ։ Բորչալուի գավառի մեջ էին մտնում Ալավերդի, Սանահին, Ախթալա, Քոլագիրան և երկաթուղային այլ կայարանները։ Ալավերդու և Շամլուղի պղնձահանքերն ու գործարանները, սղոցարանը և մի շարք մանր ու խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ։ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը Հայաստանի ակտիվ կազմակերպություններից մեկն էր։ Այստեղ էր կենտրոնացված բանվորության հիմնական մասը։ Միայն 1906 թ. Ալավերդու պղնձարդյունաբերության մեջ աշխատում էին մոտ 4500 բանվոր։ Զգալի թիվ էին կազմում նաև երկաթուղայինները։

Հայաստանի՝ այդ թվում՝ Բորչալուի պրոլետարիատի ձևավորման գործում մեծ դեր խաղաց երկաթուղային շինարարությունը։

ՌՍԴԲԿ Թիֆլիսի և Կովկասի միութենական կոմիտեի ղեկավարությամբ Բորչալուի կազմակերպությունը հսկայական աշխատանք է կատարում մասսաների մեջ մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման ուղղությամբ։ Նա ձեռք է բերում տպագրական սարքավորումներ, հրատարակում է պրոկլամացիաներ և կոչեր, ժամանակին արձագանքում քաղաքական իրադարձություններին։ Բորչալուի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ անցան Հաղպատի և Լոռու գյուղացիների քաղաքական ընդվզումները, Ալավերդու պղնձահանքերի, սղոցարանի և Սանահինի բանվորների գործադուլներն ու ցույցերը։

Հաղպատի գյուղացիները բոլշևիկների ղեկավարությամբ մի քանի անգամ ապստամբեցին կալվածատերեր Բարաթովի, Արամյանցի և մյուսների դեմ։ 1905 թ. ագրարային շարժումներին ջերմորեն արձագանքեցին ինչպես Հաղպատի, այնպես էլ Բորչալուի գավառի մյուս գյուղերի գյուղացիները։ Բոլշևիկյան կազմակերպությունները ճիշտ ուղղություն էին տալիս ագրարային հուզումներին։ ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի «Բորչալուի գյուղացիներին» խորագրով թռուցիկում մերկացվում են ցարիզմի գաղութային քաղաքականությունը, բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հակահեղափոխական նպատակները, պարզաբանվում բոլշևիկների ագրարային ծրագիրը։ Գյուղացիներին կոչ էր արվում՝

«Երես դարձնել սուտ բարեկամներից», նշվում, թե «Սոցիալ-դեմոկրատիան է այն կուսակցությունը, որ տանջված ու սոված, մերկ ու թշվառների շահերն է պաշտպանում և այդ շահերի համար կռիվ մղում»[28]:

Բորչալուի կուսակցական կազմակերպությունների եռանդուն գործունեության շնորհիվ շրջանի Հաղբատ, Ծաթեր, Ռանակ, Ուզունլար, Վարդաբլուր, Կոբթան և այլ գյուղերում ստեղծված հեղափոխական կոմիտեները քննարկում և լուծում էին գյուղացիության հուզող շատ հարցեր, պայքարում կուլակների և վաշխառուների դեմ, մերկացնում դաշնակցությանը[29]:

Գավառի բանվորներն ու գյուղացիները տնտեսական պահանջներին զուգահեռ առաջադրում էին հակացարական լոզունգներ: Ալավերդու բանվորների պայքարին քաղաքական բնույթ տվողը Բորչալուի բոլշևիկյան կազմակերպությունն էր: Հեղափոխության տարիներին ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունն անցկացրեց մի շարք ժողովներ, խորհրդակցություններ, կոնֆերանսներ, որտեղ քննության են առնվել հեղափոխության ընթացքում բոլշևիկյան կուսակցության տակտիկայի հարցերը, մշակվել են աշխատավորների պայքարը գլխավորելու միջոցառումներ:

1905 թ. փետրվար-մարտ ամիսներին գործադուլ արեցին Ալավերդու պղնձահանքերի բանվորները:

Նրանք հաջողությամբ անցկացրին նաև մայիսմեկյան ցույցը: Դրանից մի քանի օր անց Ստ. Շահումյանը Բորչալուի կազմակերպության ներկայացուցիչների խորհրդակցությունում շարադրում է ռուսական հեղափոխության մեջ բոլշևիկների կիրառելիք տակտիկայի Վ. Ի. Լենինի մշակած սկզբունքները:

Կովկասյան միութենական կոմիտեի հանձնարարությամբ 1905 թ. հուլիսին Ստ. Շահումյանը հանդես է գալիս Ղարաքիլի

---

28 ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 168: Նույնը՝ «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ, 1902—1921», Երևան, 1960, էջ 131. Հ. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռիում. Երևան, 1957:

29 Տե՛ս «Պրոլետարիատի կռիվը», № 6, 1905, էջ 15—16, «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963, էջ 84: Ծ. Աղայան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, էջ 98—113: Գ. Մուրադյան, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Երևան, 1964; *Г. А. Галоян.* Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922, Ереван, 1968.

սայում (այժմ՝ Կիրովական) կազմակերպված դիսկուսիայում և ջախջախիչ ընդդիմության ենթարկում դաշնակցությանը[30]:

Բորչալուի բոլշևիկյան կազմակերպությունն այդ օրերին լսելով Ստ. Շահումյանի զեկուցումները լենինյան տակտիկական գծի մասին և ելնելով ՌՍԴԲԿ III համագումարի որոշումներից, հակահարված տվեց մենշևիկներին և դաշնակներին: Շահումյանը Բորչալուի բոլշևիկներին զինեց լենինյան տակտիկայով: Հենց այդ օրերին, 1905 թ. հունիսին, մեծ տպաքանակով հայերեն հրատարակվեց Վ. Ի. Լենինի «Երեք կոնստիտուցիա կամ պետական կառուցվածքի երեք կարգ» պրոկլամացիան:

1905 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը խոշոր աշխատանք կատարեց գավառում ծավալված բանվորական շարժումները ղեկավարելու գործում: Նրա ղեկավարությամբ հոկտեմբերի 16-ից մինչև 29-ը տեղի ունեցան երկաթուղային բանվորների և ծառայողների ժողովներ ու միտինգներ, որտեղ նրանք հանդես էին գալիս իրենց տնտեսական և քաղաքական պահանջներով: Մերկացնելով ցարիզմի հետադիմական քաղաքականությունը, բոլշևիկները պրոկլամացիաներում և ժողովների բանաձևերում բանվորներին կոչ էին անում պայքարել մինչև իրենց ներկայացրած պահանջների լիակատար բավարարումը[31]: Նրանք առաջադրում էին «Կորչի ցարական ինքնակալությունը», «Կեցցե՛ դեմոկրատական հանրապետությունը», «Կեցցե սոցիալիզմը», «Կեցցե՛ ՌՍԴԲԿ-ն» և այլ քաղաքական լոզունգներ:

Հայաստանի հեղափոխական շարժումների պատմության մեջ ուշադրավ էջ է Սանահինի երկաթուղայինների գործադուլը: Գործադուլային կոմիտեն Ռուսաստանի խոշոր կենտրոններում ծնունդ առած սովետների օրինակով մոտ երկու ամիս գործում էր իբրև փաստական իշխանություն: Բոլշևիկյան կազմակերպության և գոր-

---

30 Տե՛ս Վահան Տերյան, *Երեք հանդիպում*, «Կարմիր դրոշակ», № 1, 1 մարտի 1919, Մոսկվա:

31 1905—1907 թթ. Հայաստանի հեղափոխական շարժումների մասին տե՛ս Ծ. Պ. Աղայան, *Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.*, Երևան, 1955: Մ. Արզումանյան, *Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թթ.*, Երևան, 1959: *Հին բոլշևիկների հիշողություններ*, գիրք առաջին, Երևան, 1958, գիրք երկրորդ, Երևան, 1961, Գ. Ղարիբջանյան, *Լենինը և Անդրկովկասը*, գիրք առաջին, Երևան, 1970, գիրք երկրորդ, Երևան 1973: Լ. Հ. Աբրահամյան, *Հայաստանում մարքսիզմի տարածման պատմությունից*, Երևան, 1959:

ծադուլային կոմիտեի մարտունակության մասին է վկայում անդրկովկասյան երկաթուղու ծառայության պետին ՌՍԴԲԿ Սանահինի շրջանային կազմակերպության կողմից ուղարկված հեռագիրը, որտեղ ասված է. «Ծառայողների և բանվորների կողմից պահանջված էր հեռացնել Սանահինի կայարանի պետ Մաքսիմովսկուն, բայց մինչև այժմ այդ պահանջը չի կատարված: Հետևողականորեն պահանջում ենք Մաքսիմովսկու հեռացումը:

ՌՍԴԲԿ Սանահինի շրջանային կազմակերպություն»[32]:

Բորչալուի բոլշևիկյան կազմակերպության գործունեության մեջ նշանավոր տեղ է գրավում 1905 թ. նոյեմբերյան քաղաքական ցույցերի ու գործադուլի կազմակերպումը, որն ավարտվեց գործադուլավոր բանվորների լիազորների և ֆրանսիական կապիտալիստների միջև կոլեկտիվ պայմանագրի կնքումով: ՌՍԴԲԿ տեղական բոլշևիկյան կոմիտեն, գործադուլային կոմիտեի հետ միասին, Մելիք Մելիքյանի ղեկավարությամբ, առաջավոր բանվորների, Միութենական կոմիտեի ներկայացուցիչների մասնակցությամբ մշակեց գործադուլավորների 22 կետից կազմված պահանջները, որոնք բազմացվեցին և տարածվեցին բանվորների մեջ:

1905 թ. նոյեմբերին բոլշևիկների ղեկավարությամբ տեղի ունեցած Ալավերդու հանքերի բանվորների գործադուլը քաղաքական դպրոց հանդիսացավ նրանց համար, էլ ավելի ամրապնդեց գործադուլավորների հավատը հաղթանակի նկատմամբ, նպաստեց լենինյան գաղափարների տարածմանը, ուժեղացրեց բոլշևիկների ազդեցությունը բանվորական մասսաների վրա: Բոլշևիկյան «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթը բարձր է գնահատել այդ գործադուլի հաղթանակը: Նկարագրելով այն հետաքրքրությունը, որ տարբեր ազգերի բանվորները հանդես էին բերում դեպի քաղաքական հարցերը, ուշադրությամբ լսում բոլշևիկ հռետորներին, թերթը գրել է. «...միատեսակ պայմանները միավորել էին տարբեր ազգության պատկանող բանվորներին»[33]:

ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը, որը 1906 թվականին իր շարքերում ուներ ավելի քան 1000 մարդ[34], հետագայում ևս

---

32 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 26, ց. 6, թ. 36:

33 «Кавказский рабочий листок». 1905, № 6.

34 Ստ. Շահումյանը, որը ՌՍԴԲԿ V համագումարի պատգամավոր էր ընտրված Բորչալուի կազմակերպությունից, համագումարում արտասանած իր ճառում ասել է. «Ճիշտ է, Բորչալուի կազմակերպությունը ավտոնոմ չէ, այլ ենթարկվում է Թիֆլիսի կազմակերպությանը, սակայն բավականաչափ անդամներ ունեցող

հաջողությամբ գլխավորեց բանվորների և գյուղացիների պայքարը։

Բորչալուի կազմակերպությունը հսկայական աշխատանք կատարեց Ալավերդու բանվորների 1906 թ. օգոստոսյան գործադուլի կազմակերպման և անցկացման գործում։ Այդ գործադուլը, որն ընթացավ Ստ. Շահումյանի ու Ս. Սպանդարյանի անմիջական ղեկավարությամբ և տևեց գրեթե մեկ ամիս, չնայած իր պարտությանը, քաղաքական մեծ նշանակություն ունեցավ[35]։

Բոլշևիկյան «Նոր խոսք» թերթի 1906 թ. օգոստոսի 31-ի № 6-ում հրապարակված «Անհաջող գործադուլ» խորագրով հոդվածում Ստ. Շահումյանը ցույց է տվել, որ գործադուլը ճնշելու հիմնական պատճառը բանվորական մասսայի քաղաքական գիտակցության պակասն էր, թույլ կազմակերպվածությունը, գործադուլին դիմանալու համար նրանց նյութական հնարավորությունների բացակայությունը, մի բան, որ կապիտալիստները ճարպիկ կերպով օգտագործեցին և փակելով առաջավոր բանվորներին, աշխատանքի հրավիրեցին հետամնաց խավերին՝ շարժակերեխերներին։ Օգոստոսյան գործադուլի պարտության պատճառներից մեկն էլ այն էր, որ բանվորները ադմինիստրացիայի հետ ունեցած բանակցությունների ընթացքում մինչև վերջը չլսեցին սոցիալ-դեմոկրատիայի ներկայացուցիչներին...[36]։ Ստ. Շահումյանը սովորեցնում էր, որ գործարանատերերի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է քաղաքական փորձ, բարձր գիտակցություն, կազմակերպվածություն, նյութական փոխադարձ օգնություն, բոլշևիկյան ղեկավարություն։

Բորչալուի բոլշևիկյան կազմակերպության կյանքում մեծ իրադարձություն հանդիսացան 1906 թ. հոկտեմբերի 15-ին և դեկտեմբերի 25-ին Ստ. Շահումյանի գլխավորությամբ անցկացված կուսակցական կոնֆերանսները։ Դրանցից առաջինում ներկայացված էին 10 տեղական կազմակերպություն, իսկ երկրորդում՝ 21 կազմակերպություն»[37]։ Այդ կոնֆերանսները քննության առան բուրժուա-

---

Բորչալուն, որպես առանձին ինքնամփոփ շրջան, կարող է ընտրել անկախ։ Մեզ՝ Բորչալուի կազմակերպության երկու պատգամավորներին, ձայն է տվել 1037 մարդ» (տե՛ս «Протоколы пятого (Лондонского) съезда РСДРП», стр. 236—238)։

35 Տե՛ս Հ. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռիում, Երևան, 1957, էջ 116, 120 և այլն։

36 «Նոր խոսք», № 6, 1906։

37 Տե՛ս Ստ. Շահումյան, Ճառ ՌՍԴԲԿ (Լոնդոնի) համագումարում։ Տե՛ս «V (Лондонский) съезд РСДРП. Протоколы», М., 1963, стр. 228—229.

կան ազգայնական կուսակցությունների նկատմամբ ունենալիք վերաբերմունքի, ս.-դ. և դումայական կամպանիայի անցկացման հարցերը և այլն: ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը ՌՍԴԲԿ V (Լոնդոնի) համագումարի պատգամավորներ ընտրեց Ստ. Շահումյանին, Ա. Կախոյանին և Մ. Ցխակայային[38]: Համագումարում Ստ. Շահումյանը ջախջախիչ հարվածներ հասցրեց մենշևիկներին, հատկապես վրաց մենշևիկներին և նրանց պարագլուխ Ն. Ժորդանիային[39]:

Ռուսական առաջին հեղափոխության պարտությունից հետո էլ, տեղատվության տարիներին, ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը շարունակեց իր գործունեությունը:

4

1904 թ. Ալեքսանդրապոլի բոլշևիկների կազմակերպած մայիսմեկյան տոնակատարությունը վերածվեց քաղաքական ցույցի: Նույն թվականի ապրիլին սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ գործադուլ են անում Ջիթողցյանի գործարանի և մի քանի այլ ձեռնարկությունների բանվորները՝ ընտրելով գործադուլային կոմիտե, որը և մշակում է տնտեսական պահանջներ և ներկայացնում գործարանատիրոջը: Երբ գործադուլավորների պահանջները մերժվում են, բոլշևիկներն ապրիլի 30-ին գործարա-

---

38 Ստ. Շահումյանը (Սուրեն, Սուրենին) և Ա. Կախոյանը (Բորչալինսկի) V համագումարի պատգամավոր էին ընտրվել վճռական ձայնով, իսկ Մ. Ցխակայան (Բարսով)՝ խորհրդակցական:

39 Ն. Ժորդանիան և նրա համախոհները համագումարում վայնասուն բարձրացրին Բորչալուի կազմակերպության բոլշևիկ պատգամավորների մանդատները ճանաչելու հարցում: Նրանք հայտարարեցին, թե Բորչալուում ս.-դ. կազմակերպություն չկա: Համագումարը մերժեց նրանց անհիմն պահանջը և օրինական ճանաչեց Ս. Շահումյանի Ա. Կախոյանի և Մ. Ցխակայայի մանդատները: Շահումյանը մերկացնելով մենշևիկների հարձակումները, պնդում էր, որ Բորչալուն ունի ս.-դ. խոշոր կազմակերպություն, որի շարքերում կան ավելի քան 1000 անդամ: Ինչ վերաբերում է ՌՍԴԲԿ IV համագումարին, Երևանի կազմակերպությունից Շահումյանին տրված մանդատին, ապա նա 1906 թ. համագումարի պատգամավոր էր ընտրվել ոչ միայն Երևանից, այլ հայկական պրովինցիայից: Ըստ որում Շահումյանին ձայն էին տվել 400 սոցիալ-դեմոկրատ, այդ թվում ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունից և Ուլուխանլուից՝ 240, Ալեքսանդրապոլից՝ 60, Երևանի նահանգի գյուղական կազմակերպություններից՝ 100: Տե՛ս «V (Лондонский) съезд РСДРП. Протоколы», М., 1963, стр. 671.

նի մաս կազմակերպում են ցույց, որին մասնակցում են հազարավոր բանվորներ։ Քաղաքական ճառերով հանդես են գալիս առաջավոր բանվորները։ Միայն ոստիկանության միջամտությունից հետո հաջողվում է ցրել ցույցը[40]։

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունները հիմնել էին ընդհատակյա տպարան և ագիտացիոն անլեգալ աշխատանք էին տանում աշխատավորների ու կայազորի զինվորների մեջ։

Հայաստանում հեղափոխությանն առաջինն արձագանքեցին Ալեքսանդրապոլի երկաթուղայինները։ 1905 թ. մարտի 20-ից գործադուլներ են անում Ալեքսանդրապոլ—Ղարաքիլիսա գծամասի և Ալեքսանդրապոլի դեպոյի բանվորներն ու ծառայողները։ Ալեքսանդրապոլի բոլշևիկներին հաջողվեց պայքարի հանել կայարանի բոլոր բանվորներին և նրանց շարժմանը տալ քաղաքական բնույթ։

Երկաթուղայինների գործադուլը ճնշվեց ցարական ոստիկանների և դաշնակցական խմբապետների կողմից։ Ձերբակալվեցին բազմաթիվ բանվորներ. երթևեկությունը վերսկսվեց միայն զենքի ուժով։ Սակայն գործադուլը անհետևանք չանցավ։ Դրանից դասեր առան ոչ միայն բանվորները, այլև, նախ և առաջ, բոլշևիկները, որոնք քաղաքի բանվորներին և աշխատավորներին ավելի լավ նախապատրաստեցին հոկտեմբերյան ընդհանուր գործադուլին։ Հոկտեմբերի 14-ին Անդրկովկասի երկաթուղային ծառայողների միության բյուրոն դիմելով բանվորներին նշում էր՝ լցվել է համբերության բաժակը. երկաթուղայինների գործադուլին արդեն միացել են 21 գծամասերի բանվորներ, բորբոքվում են բողոքի կայծերը և ընդգրկում նոր գծամասեր, հարկավոր է անցնել գործադուլավորների կողմը։ Հոկտեմբերի 15-ին աշխատանքը դադարեցրին Ալեքսանդրապոլ—Կարս—Երևան գծամասի բանվորներն ու ծառայողները։ Գործադուլը ղեկավարելու համար ստեղծվեց գործադուլային կոմիտե, որի կազմում մտան մի քանի բոլշևիկներ։ ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության հոկտեմբերի 16-ին հրապարակած թռուցիկում ասված էր. «Ընկերներ։ Մենք, դեպոյի և Ալեքսանդրապոլի կայարանի ծառայողներս, միանալով ռուսական երկաթուղայինների ընդհանուր գործադուլին, հայտարարում ենք, որ մենք ընդունել ենք բոլոր գործադուլավորների որոշումը՝ գործի չանցնել,

---

40 Տե՛ս Դ. Մնեյան, Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին, Երևան, 1956։

մինչև չբավարարվեն ներքոհիշյալ մեր այն պահանջները, որոնք գրավական են հանդիսանում Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների բարեկեցության»[41]։ Այնուհետև շարադրվում էին գործադուլավորների պահանջները, որոնց մեջ հատկապես ընդգծված էր խոսքի, մամուլի, ժողովների, միությունների ազատությունը։ Մարտական շնչով գրված թռուցիկը մեծ դեր խաղաց երկաթուղայինների հոկտեմբերյան համառուսական գործադուլի ժամանակ։ Հոկտեմբերի 15-ից Ալեքսանդրապոլ—Երևան—Ջուլֆա և Ալեքսանդրապոլ—Կարս գծամասերում իշխանությունը փաստորեն գտնվում էր Ալեքսանդրապոլի բոլշևիկների ձեռքում։ Քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում, երկաթուղում տեղի էին ունենում միտինգներ, ուր կրակոտ ճառեր էին արտասանում բանվորները։ Դեպոյի փականագործ Վասիլի Աբրիսիմովը իր ճառն ավարտում է «Կորչի ինքնակալությունը» կոչով։ Միտինգի մասնակից Յ. Մելիքսեթովը հարցաքննության ժամանակ հայտարարել է. «Գալով Ալեքսանդրապոլ կայարանը, ես տեսա, որ առաքման կետի մոտ ժողովուրդ է հավաքվել, ես անցա այնտեղ և ժողովրդի հետ միասին մտա առաքման կետի շենքը, որտեղ բազմությունից մի քանիսը, թե ով, ինչպես չեմ հիշում, առաջարկեցին նախագահ ընտրել, որպիսին ընտրվեց մեքենավար Նալբանդյանցը։ Իմ ներկայությամբ հանդես եկան թվով մոտ 20 հռետորներ... Հռետորներից մի քանիսը խոսում էին խիստ ձևով, պնդելով վերացնել բռնի միջոցները։ Իմ համոզմունքով լինելով ամեն մի բռնության հակառակորդ, իմ հերթին հանդես եկա որպես հռետոր և ճառ արտասանեցի»[42]։

1905 թ. նոյեմբերի 30-ին Ալեքսանդրապոլում կազմակերպված միտինգին մասնակցում էին նաև Կարսի բանվորները և քաղաքի բնակիչները[43]։

Քաղաքում բոլշևիկյան պրոպագանդայով աչքի էին ընկնում կայարանի հեռագրատան աշխատող Դ. Բրեդիձեն, Ա. Թումանյանը, Իպպոլիտովը, Ս. Գեղենաշվիլին և ուրիշներ[44]։

---

41 «Революционное движение в Армении 1905—1907 гг.», Сборник документов и материалов, Ереван, 1955, стр. 146—147.

42 ՎՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 213, գ. 1099, թ. 14—15։

43 Տե՛ս «Кавказский рабочий листок», 1905, № 10.

44 Տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 43։

ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության ընդհատակյա տպարանում տպագրվեցին մեծ թվով կոչեր և պրոկլամացիաներ։ Դրանցից էր ցարի՝ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի առթիվ ՌՍԴԲԿ ալեքսանդրապոլյան խմբակի 1905 թ. հոկտեմբերի 22-ի թռուցիկը, որում մերկացվում էին ցարական կառավարության խորամանկությունները և աշխատավորությանը կոչ էր արվում պայքարել մինչև ցարիզմի տապալումը և դեմոկրատական հանրապետության ստեղծումը։ «...Կառավարությունը, որ մինչև այդ ժողովրդի՝ երկիրը կառավարելու բոլոր ցանկություններն իրագործում էր գնդակներով ու աքսորով,— ասված էր կոչում,— այժմ, որպես բարձրագույն և մեծագույն ողորմածություն, առաջարկել է ժողովրդին մի կիսատ-պռատ սահմանադրություն։ Սակայն ցարի այդ «ողորմածությունը» ժողովուրդը կորզեց իր ուժի և գիտակցության ներգործությամբ, որն այս օրերին ցնցեց ողջ Ռուսաստանի կյանքը հիմքից սկսած։

... Խեղդվող ցարիզմն իր մահվան դալարումների մեջ աշխատում է կանգնեցնել կյանքը։ Իզուր են նրա հույսերը, ամբողջ Ռուսաստանը ապստամբել է ցարիզմի դեմ»[45]։

1905 թ. հոկտեմբերի 28-ին Ալեքսանդրապոլ ժամանեցին ցարական կառավարության կողմից Կարս աքսորված և այնտեղից վերադարձող Բաքվի 35 հեղափոխական։ Այս առթիվ կազմակերպված ցույցին մասնակցեցին ավելի քան երկու հազար մարդ։ Ճառեր արտասանեցին Ս. Ալիլուևը, Ա. Բագրաձեն, Ա. Խումարյանը և երկաթուղու բոլշևիկյան կազմակերպության ներկայացուցիչները[46]։

Բոլշևիկները բեղմնավոր աշխատանք կատարեցին երկաթուղայինների 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբության կազմակերպման ու անցկացման գործում։ Զինված պայքարն այնպիսի ծավալ ստացավ, որ ցարական կառավարությունը հարկադրված եղավ քաղաքական ռազմական դրություն հայտարարել։

ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի և Կովկասյան բոլշևիկյան մարզային բյուրոյի ղեկավարությամբ Ալեքսանդրապոլի բոլշևիկները համառ գործունեություն ծավալեցին 1906—1907 թթ. հեղափոխական բանվորական արհմիություններ ստեղծելու, զանգվածային ընտրու-

---

45 ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 201։
46 Տե՛ս С. Аллилуев, Пройденный путь, М., 1946, стр. 153.

թյունների ժամանակ բոլշևիկյան կուսակցության տակտիկական գիծը կենսագործելու ուղղությամբ։

Ալեքսանդրապոլը, որ բանվորական մեծ ուժեր էին կուտակված, ռուսական առաջին հեղափոխության տարիներին, դարձավ միտինգների և ցույցերի լայն ասպարեզ։ Այն 1906 թ., Կովկասի ոստիկանության վարչության պետի խոստովանությամբ, Երևանի նահանգի ամենահեղափոխական օջախն էր։

ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության ղեկավարությամբ անցան երկաթուղայինների, կոշկակարների, դարբինների, հացթուխների, ապարանների աշխատողների 1906 թ. քաղաքական ցույցերն ու գործադուլները։ Բոլշևիկները նույն թվականի մարտի 27-ին իրենց կոչերից մեկում, մերկացնելով դաշնակցությանը, պահանջում էին ստեղծել արհմիություններ, դասակարգային կռիվ մղել հարստահարիչների դեմ և համախմբվել սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ, «...որովհետև միայն սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն է, որ պաշտպանում է համայն աշխարհի պրոլետարիատի շահերը»[47]։

Մայիսի 27-ին գործադուլ արեցին քաղաքի դարբինները՝ թվով 200 մարդ, որոնք պատրաստակամություն հայտնեցին համախմբվել հեղափոխական դրոշի ներքո։ Գործադուլային ալիքը հատկապես բարձրացավ 1906 թ. ամռանը։ Բոլշևիկյան «Կայծ» թերթը, լուսաբանելով գործադուլի ընթացքը, նշել է, որ գնալով «ուժեղանում են հեղափոխական շարժումները, աճում է ՌՍԴԲԿ-ի դերը»[48]։

Ալեքսանդրապոլի բոլշևիկները կապ էին պահպանում զորամասերի, Երևանի, Բորչալուի, Կարսի և Հայաստանի այլ վայրերի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, նրանցից ստանում գրականություն ու թռուցիկներ։ Կազմակերպությանը մարքսիստական գրականությամբ հատկապես օգնում էին Մարտիրոս Միրաքյանը և Լևոն Տեր-Հովսեփյանը, որոնք կապված էին ՌՍԴԲԿ Բաքվի և Թիֆլիսի կոմիտեների հետ։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ալեքսանդրապոլը դարձավ Անդրկովկասի հեղափոխական շարժումների կարևոր հենակետերից մեկը։ Քաղաքում և զորամասերում շարժումները գլխավորում էին բոլշևիկները, որոնք հեղափոխական պայքարում քաղաքական մկրտություն էին ստացել։

---

47 ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33։

48 «Կայծ», 30, 1906։

633—5

5

1905 թ. մարտին գործադուլային շարժում սկսվեց Երևանի ձեռնարկություններում։ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը հենց սկզբից աշխատեց իր ձեռքը վերցնել շարժման ընդհանուր ղեկավարությունը։ Փետրվարին նա հրապարակեց «Երևան քաղաքի բոլոր բանվորներին» խորագրով պրոկլամացիան, որ պարզաբանելով հեղափոխության խնդիրները և մասսայականացնելով Երևանի հրուշակագործների առաջադրած պահանջները, կոչ է անում քաղաքի բոլոր բանվորներին՝ միասնական ճակատով պայքարի ելնել շահագործողների դեմ[49]։

Թռուցիկում շարադրելով հրուշակարանների և բուլկեղենի խանութների բանվորների 13 կետից բաղկացած պահանջները, Երևանի բոլշևիկյան կազմակերպությունը գրում է. «Ուրեմն, օրինակ վերցրեք նրանցից, ընկեր բանվորներ, ի մի համախմբվեցեք և հայտարարեցեք ձրիակեր հարուստներին, որ շուտով, շատ շուտով աշխարհի երեսից սրբելու եք բանվոր ժողովրդի բոլոր շահագործողներին։

Եվ վայ նրան, ով կփակի ձեր ճանապարհը»[50]։

Ցարական կառավարությունը Անդրկովկասի հեղափոխական ուժերը ջլատելու, աշխատավորության ուշադրությունը շեղելու նպատակով կազմակերպեց հայ-թաթարական կոտորածներ։ Այդ պրովոկացիոն ակտերի սկիզբը հանդիսացավ Բաքվի 1905 թ. փետրվարի 6-ի իրադարձությունը։ Ցարիզմի նենգ մտադրությունները խրախուսում և նրա վարած քաղաքականությունը թևավորում էին բուրժուական նացիոնալիստները, պանիսլամիստները, դաշնակցականները։ Մարտի սկզբներին հայ-թաթարական կոտորածներ տեղի ունեցան Երևանում։ ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն Երևանի բոլշևիկյան կազմակերպությունների առջև խնդիր դրեց՝ աշխատավորությանը պարզաբանել, որ ցարիզմը թակարդ է լարում, որ հարկավոր է վերջ տալ եղբայրասպան կռիվներին, համախմբվել պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի շուրջը, բոլոր ուժերով գրոհել ինքնակալության վրա։

ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն փետրվարի 13-ին հրապարակեց

---

49 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊԿԱ, ֆ. 1, ց. 1, գ. 297, թ. 5։ Նույնը՝ «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ, 1902—1921», Երևան, 1960, էջ 149—150։

50 Նույն տեղում։

«Կեցցե միջազգային եղբայրությունը» թռուցիկը, որի մեջ մերկացված էր ցարիզմի խարդախ քաղաքականությունը՝ այնտեղ ասված էր. «...զգաստ եղեք։ Դուք՝ հայեր, թաթարներ, վրացիներ, ռուսներ։ Ձեռք մեկնեցեք միմյանց, ավելի սերտորեն միացեք և ձեզ բաժանելու ուղղությամբ կառավարության փորձերին միահամուռ պատասխանեցեք— կորչի՝ ցարական կառավարությունը։ Կեցցե ժողովուրդների եղբայրությունը»[51]։

ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի վերոհիշյալ թռուցիկը այդ օրերին տարածվեց Երևանում[52]։ 1905 թ. գարնանը Երևանի բոլշևիկների նախաձեռնությամբ հրավիրվեց քաղաքի հայ և ադրբեջանցի աշխատավորների ներկայացուցիչների ժողով, որտեղ բոլշևիկներին հաջողվեց մերկացնել ցարիզմի և բուրժուական նացիոնալիստների հակաժողովրդական քաղաքականությունը, աշխատավորներին պարզաբանել, որ կոտորածների կազմակերպիչները նրանց թշնամիներն են։

1905 թ. ապրիլին գործադուլ արեցին Շուստովի և Սարաջևի սպիրտ-կոնյակի գործարանների և մի շարք այլ ձեռնարկությունների բանվորներն ու ծառայողները։ Ապրիլին տեղի ունեցած գործադուլներն ու ցույցերն այնպիսի սուր բնույթ ստացան, որ ժանդարմական վարչությունը նահանգապետին գրած իր զեկուցագրում խնդրում էր քաղաքից արտաքսել բոլշևիկ ղեկավարներին։ 1905 թ. ապրիլի 23-ին Երևանի նահանգային ժանդարմական վարչությունը ոստիկանության դեպարտամենտի հատուկ բաժնին ուղղված հաղորդման մեջ գրել է. «Մեր ունեցած գաղտնի տեղեկությունների համաձայն այս գործադուլի կազմակերպիչն է նախկին ուսանող Գևորգի Նիկոլաևիչ Սոկոլովսկին[53], որի արտաքսումը Երևանից չափազանց ցանկալի է, որովհետև նա նաև գլխավոր դեմք է սովորող մարդկանց շրջանում հավաքույթներ կազմակերպելու ուղղությամբ»[54]։

ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության գործունեության նշանավոր էջերից է 1905 թ. մայիսի 12-ին Ստ. Շահումյանի ղեկավարու-

---

51 Տե՛ս «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», էջ 110—111։

52 *А. Арутюнян,* Народы Закавказья в борьбе против царизма в годы первой русской революции, Ереван, 1957, стр. 62—65.

53 Գ. Ն. Սոկոլովսկին ծնվել է 1879 թ. Թիֆլիսում։ 1899—1904 թթ. սովորել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում։ 1904—1910 թթ. ակտիվ մասնակցություն է ունեցել ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության գործունեությանը։

54 ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 167։

թյամբ կազմակերպված քաղաքային ժողովը, որը տեղի ունեցավ Կոնդի թաղամասում, մասնակցում էին Ալեքսանդր Մյասնիկյանը, Բարժանսկին, Նինիաշվիլին, Կոստանդին Ալավերդովը, Վարդան Բաղդասարյանը և ուրիշներ։ «ՌՍԴԲԿ-ի խնդիրները հեղափոխության մեջ» թեմայով զեկուցման մեջ Շահումյանը հանգամանորեն լուսաբանում է ՌՍԴԲԿ III համագումարի որոշումների նշանակությունը, սուր քննադատության ենթարկում մենշևիկների օպորտունիստական գործելակերպը։ Շահումյանը «մանրամասնորեն բացատրեց ՌՍԴԲԿ-ի մասին, նշեց, որ բանվորի կյանքի բարելավումը, ծանր հոգսերից ազատագրումը, կախված է միայն կազմակերպվածությունից, բոլշևիկյան կազմակերպությունն է, որ պիտի բանվոր դասակարգին և աշխատավոր գյուղացիությանն ազատագրի շահագործողներից ու կեղեքիչներից։ Ստ. Շահումյանի ճառը լսվեց մեծ հետաքրքրությամբ»[55]։

Քաղաքային ժողովին մասնակցում էին երկաթուղու ձեռնարկությունների, սպիրտ-կոնյակի, կաշվի գործարանների և այլ ձեռնարկությունների բոլշևիկները։ Նրանցից շատերը թեև Շահումյանին առաջին անգամ էին հանդիպում, բայց միանգամից հարազատացան։ Շահումյանը հավաքվածներին է հասցնում լենինյան գաղափարները, խնդիր դնում ուժեղացնել աշխատանքը, ակտիվ բանվորներին ներգրավել կուսակցության շարքերը։

Երևանի բոլշևիկների ընդհանուր ժողովը որոշում է քաղաքի սոցիալ-դեմոկրատական անջատ-անջատ խմբակները միավորել և ստեղծել մի ընդհանուր կազմակերպություն, դրանով իսկ կոորդինացնել կուսակցական աշխատանքը, ապահովել նրա միասնական ղեկավարությունը։ Ժողովն ընտրեց ՌՍԴԲԿ Երևանի բոլշևիկյան կազմակերպության քաղաքային կոմիտե, որի կազմի մեջ մտան Ա. Մյասնիկյանը, Կ. Ալավերդովը, Վ. Բարժանսկին, Նինիաշվիլին, Վ. Բաղդասարյանը և ուրիշներ։ Հետագայում Երևանի կազմակերպության մեջ ղեկավար աշխատանք էին կատարում Մարտիրոս Միրաքյանը (Բանվոր Շանթ), Ասքանազ Մավյանը, Լևոն Տեր-Հովսեփյանը, Լևոն Յաղուբյանը և ուրիշներ[56]։

---

55 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33։ Տե՛ս նաև Դ. Անկոյովսկի. Երևան քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության համառոտ ակնարկ (1904—1910), «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, Երևան, 1958, էջ 100 և այլն։

56 Տե՛ս Գ. Անկոյովսկու և Ա. Մավյանի հիշողությունները։ ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33։ Տե՛ս նաև «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք առաջին, էջ 100—113։

«Երևանի կազմակերպությունը,— գրել է Գ. Սոկոլովսկին,— Ստեփանի միջոցով սերտորեն կապվեց Թիֆլիսի կազմակերպության հետ։ Ստեփան Շահումյանը դարձավ իմ անձնական բարեկամը և մեր Երևանի կազմակերպության ընկեր-բարեկամը»[57]։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Երևանի բոլշևիկյան կազմակերպության գործունեության մեջ ղեկավար դերը պատկանում է Ստ. Շահումյանին։

1905 թ. ամռանը Երևան է ժամանում Բ. Կնունյանցը, որը նույնպես գործնական օգնություն է ցույց տալիս քաղաքի բոլշևիկյան կազմակերպությանը[58]։

ՌՍԴԲԿ Երևանի բոլշևիկյան կազմակերպության հիմնադիրներից Ալեքսանդր Հակոբի Մալխասյանը (Մալխասովը), որը կրթված մարքսիստ էր, իր հեղափոխական դաստիարակությունը ստացել էր Ռուսաստանում։ 1900 թ. նա հարում է հեղափոխական շարժումներին, մինչև 1902 թ. ակտիվ մասնակցում Նիկոլաևի մարքսիստական խմբակների գործունեությանը։ 1902 թ. Ա. Մալխասյանը մեկնում է Տոմսկ և ընդունվում Տեխնոլոգիական ինստիտուտի լեռնային բաժինը։ Տոմսկում նա կապվում է տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ և ակտիվ գործունեություն ծավալում։ Դեռևս Նիկոլաևում սովորելիս նա հետապնդվում է ոստիկանության կողմից, որը գնալով, ավելի է ուժեղանում։ 1903 թ. գարնանը ուսանողական հուզումներին մասնակցելու համար Մալխասյանը վտարվում է ինստիտուտից, ձերբակալվում և աքսորվում Կանսկ քաղաքը, ուր մնում է 8 ամիս։ Այնուհետև, 1904 թ. վերադառնում է Երևան և շարունակում իր գործունեությանը։ Ա. Մալխասյանը խոշոր դեր է կատարել Երևանի բոլշևիկյան կազմակերպության կյանքում[59]։

---

57 «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք առաջին, էջ 101—102։ Գ. Սոկոլովսկու վկայությամբ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունն ուներ 150 անդամ։ Տե՛ս նույն տեղը։

58 Տե՛ս «Հին բոլշևիկ Փ. Կնունյանց-Ռիզելի զրույցը ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի աշխատողների հետ, 1955», ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33։

59 Տե՛ս «Революционное движение в Армении 1905—1907 гг.», Сборник документов и материалов, Ереван, 1950, стр. 433—434. Խ. Բարսեղյան, Բոլշևիկյան կազմակերպությունները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում, Երևան, 1955։ Ալեքսանդր Մալխասյանը վախճանվեց 1906 թ. հունվարի 13-ին, անձնվեր բոլշևիկի թաղումը վերածվեց քաղաքական ցույցի։

ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության եռանդուն գործունեության շնորհիվ 1906—1907 թթ. ավելի ծավալվեցին հեղափոխական շարժումները քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում, հիմնարկություններում և դպրոցներում: Բոլշևիկների ղեկավարությամբ անցավ 1905 թ. վերջերին Երևանի թեմական դպրոցի բարձր դասարանների աշակերտների դասադուլը, որը, ինչպես նշել է նրա մասնակից Ա. Մռավյանը, ուղղված էր դպրոցի հոգաբարձության և ուսուցչության հակադեմոկրատական, բյուրոկրատական բարքերի, հնացած ծրագրերի դեմ:

Երևանի բոլշևիկների ակտիվ աշխատանքի շնորհիվ է, որ 1905 թվականի հոկտեմբեր-նոյեմբերյան համառուսական քաղաքական գործադուլին լայն մասնակցություն ունեցան քաղաքի բանվոր-ծառայողները: Բոլշևիկների ղեկավարությամբ անցավ երկաթուղայինների 1905 թ. նոյեմբերյան գործադուլը, փոստ-հեռագրական ցանցի ծառայողների նոյեմբերի 15-ից սկսած գործադուլը, որը տևեց մինչև դեկտեմբերի 23-ը:

Մոսկվայի 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո ցարիզմը հարձակումներն ուժեղացրեց նաև Երևանի բոլշևիկյան կազմակերպության նկատմամբ: Չնայած դրան, այդ կազմակերպությունը, որ քաղաքական պայքարի բավականաչափ փորձ էր կուտակել, օրեցօր ավելի է ամրապնդվում և իր ազդեցությունը ուժեղացնում աշխատավոր մասսաների շրջանում: 1906 թ. փետրվարին, ճորտատիրական իրավունքի վերացման 45-ամյակի առթիվ հրատարակած պրոկլամացիայում աշխատավորներին կոչ էր արվում կազմակերպվել, ձեռք մեկնել Ռուսաստանի պրոլետարիատին և ընդհանուր ուժերով կործանել ցարական դահը[60]:

1906 թ. սկզբներին Թիֆլիսի մենշևիկյան կոմիտեն և կովկասյան մարզային կենտրոնը, տեսնելով Երևանի բոլշևիկյան կազմակերպության օրավուր ուժեղացումը, աշխատավոր մասսաների մեջ նրա ազդեցության լայն շրջագիծը, կազմակերպությանն իրենց ենթակայության տակ գցելու նպատակով, Երևան ուղարկեցին մենշևիկյան ակտիվ գործիչներից երկուսին: Սակայն այդ նպատակով «առաքյալների» գործադրած բոլոր ջանքերն իզուր անցան:

Կովկասյան մենշևիկյան մարզային կենտրոնը որոշել էր Երևանից ՌՍԴԲԿ IV համագումարի պատգամավոր ուղարկել մենշևիկի: Սակայն Երևանի կազմակերպությունը մերժեց այդ առաջարկը

60 Տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33:

և պատգամավոր ընտրեց Ստ. Շահումյանին։ «Ընտրական պայքարի ժամանակ,— ասել է Ստ. Շահումյանը ՌՍԴԲԿ հինգերորդ համագումարում արտասանած իր ճառում,— Կովկասյան մարզային կենտրոնը իմացավ, որ Երևանում մտադիր են ընտրել համագումարի համար բոլշևիկի, և մարզային կենտրոնը, որն իր գոյության ողջ ընթացքում ոչ մի հետաքրքրություն չէր ցուցաբերել երևանյան կազմակերպության վիճակի նկատմամբ, ոչ մի կապ չէր պահպանել այդ կազմակերպության հետ, հատուկ գործակալ է ուղարկում այնտեղ ընտրությունները տապալելու համար»[61]։

ՌՍԴԲԿ IV համագումարը, հակառակ մենշևիկների, հատկապես Ն. Ժորդանիայի (Կոստրով) և նրա կողմնակիցների, օրինական ճանաչեց Երևանի բոլշևիկյան կազմակերպության պատգամավորի մանդատը։

Համագումարին Ստեփան Շահումյանի ներկայացրած բունդի հետ միավորվելու վերաբերյալ բանաձևում առաջարկվում էր տեղերում ստեղծել միացյալ, ինտերնացիոնալ կուսակցական կազմակերպություններ, որոնք պետք է ղեկավարվեին դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքներով։

Համագումարում Վ. Ի. Լենինի հետ միասին մենշևիկների դեմ անհաշտ պայքարողների մեջ էր Ստ. Շահումյանը։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Երևանի բոլշևիկյան կազմակերպության գործունեության շրջանակներն ավելի ընդարձակվեցին, այն դուրս եկավ համառուսական քաղաքական ասպարեզ և դարձավ Վ. Ի. Լենինի ստեղծած մարքսիստական կուսակցության տեղական ջոկատներից մեկը։

ՌՍԴԲԿ IV (միավորիչ) համագումարը ավարտվելուց հետո Ստ. Շահումյանը վերադառնում է Կովկաս։ Նույն թվականի (1906) մայիսի երկրորդ կեսին գումարվում է ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ընդհանուր ժողովը, որի աշխատանքներին մասնակցում էին նաև Երևանի նահանգի մի շարք շրջանների բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Ժողովում համագումարի արդյունքների մասին ընդարձակ զեկուցումով հանդես է գալիս Ստ. Շահումյանը։ Հրապարակելով համագումարի արդյունքները[62],

---

61 «Протоколы пятого (Лондонского) съезда РСДРП», Политиздат, 1955.

62 Մայիսի 12-ից «Կայծ»-ը սկսել էր հրատարակել Ստ. Շահումյանի ծավալուն հոդվածը «ՌՍԴԲԿ-ի վերջին համագումարը» խորագրով, որը տպագրվեց թերթի № 13 (12 մայիսի), № 17, 18 (21, 24 մայիսի) համարներում։

Ստ. Շահումյանը համոզիչ կերպով ցույց է տալիս մենշևիկների, մասնավորապես կովկասյան, վերցրած կուրսի վտանգավորությունը։ Նրա «հմուտ կազմված և սահուն զեկուցը,— գրել է ժողովի մասնակից Ա. Մռավյանը,— կատարյալ հայտնություն էր մեզ համար... պարզյան բոլշևիկ Ստեփանի խոսքը, կրկնում եմ, մի կատարյալ հայտնություն էր։ Հարցերի մի ամբողջ տարափ էր նա պատասխանեց և մեր առաջ պատկերացավ կուսակցությունը իր ամբողջ կյանքով, ֆրակցիաների անհաշտ կռիվը, բոլշևիկների տակտիկական մարտական ոգին»[63]։ Ստ. Շահումյանը պատասխանում է ժողովականների բազմաթիվ հարցերին և կրկին կոչ անում՝ ուժեղացնել պայքարը մենշևիկների, դաշնակցականների և «սպեցիֆիկների» դեմ։

Երևանի բոլշևիկյան կազմակերպության 1906 թ. մայիսին գումարված ժողովը վերջացավ ուշ երեկոյան։ Հաջորդ օրը երեկոյան Ստ. Շահումյանը նույն թեմայով հանդես է գալիս մի այլ ժողովում։ Այնուհետև նա ելույթներ է ունենում Գաբրիելյանների կաշեգործարանում, սպիրտ-կոնյակի գործարանում և այլ ձեռնարկություններում։

Ստ. Շահումյանի երևանյան այս գործունեությունը նպաստեց ոչ միայն քաղաքի, այլև ամբողջ Հայաստանի կուսակցական կազմակերպությունների գաղափարական աշխատանքի մակարդակի բարձրացմանը։

Վերադառնալով Թիֆլիս, Շահումյանը «Կայծ»-ում և բոլշևիկյան մյուս թերթերում հանդես է գալիս բազմաթիվ հոդվածներով, որոնց մեջ հիացմունքով էր խոսում Հայաստանում հեղափոխական շարժումների ծավալման, կուսակցական աշխատանքների աշխուժացման մասին։

1906 թ. ձմռանը Երևանի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությամբ հրուշակ-բակլեղենի ձեռնարկությունների բանվորների անցկացրած հաջող գործադուլը լուրջ ազդակ հանդիսացավ հետագա հեղափոխական շարժումների համար։

Քաղաքական աշխույժ մթնոլորտում անցան 1906 թ. քաղաքից դուրս կազմակերպված հանդիպումները, որոնք հետագայում վերածվեցին հակացարական ցույցերի և գործադուլների։ «Կայծ» թերթի ապրիլի 23-ի համարում Երևանից ստացված ինֆորմացիայում

---

63 Ա. Մռավյան, Ստեփան Շահումյանը Երևանում (հուշեր), «Խորհրդային Հայաստան», № 213, 20 սեպտեմբերի, 1925 թ.։

տված է. «Ամսույս 16-ին, կիրակի օրը, ՌՍԴԲԿ տեղվույս կազմակերպության կողմից նշանակված էր միտինգ, քաղաքից դուրս մի այգում, դասախոսություններ եղան հայերեն և վրացերեն լեզուներով»[64]։ «Կայծ»-ը մայիսի 7-ի համարում ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ղեկավարությամբ անցած քաղաքի աշխատավորների մայիսմեկյան տոնի առիթով նշում է, որ Երևան քաղաքն էլ համեստ կերպով իր ուժերի չափ տոնեց մայիսի մեկը։ Առաջին տարին էր, որ մայիսի մեկը Երևանում տոնվում էր որպես միջազգային պրոլետարիատի քաղաքական մեծ տոն՝ Մայիսի մեկը։ Դեռ ապրիլի 29-ին ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը կարմիր թերթիկների վրա երեք լեզուներով հրավեր կարդաց բանվորներին՝ տոնել մայիսի մեկը։ Ապրիլի 30-ին նույն կազմակերպությունը բաց թողեց մի թռուցիկ, որի մեջ բացատրում էր այդ օրվա նշանակությունը։

Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ անցան 1906 թ. ամռան ամիսներին բանվորների և ծառայողների հեղափոխական մի շարք ելույթները։ Այդ պայքարում գնալով ավելի էր աճում բոլշևիկների ազդեցությունը աշխատավոր մասսաների վրա։ Հոկտեմբերին Երևանում սպիրտ-կոնյակի գործարանատերերը փորձում են «վերանայել» 1905 թ. գործադուլի շնորհիվ բանվորներին տրված զիջումները։ ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեն սեպտեմբերին քննության է առնում ստեղծված իրադրությունը և որոշում չհանձնվել։ Բոլշևիկները մշակում են նոր պահանջներ և գործադուլային կոմիտեի միջոցով ներկայացնում գործարանատիրոջը։ Երկշաբաթյա բանակցությունն ավարտվում է նրանով, որ գործարանատերը «համառում է» և հրաժարվում ընդունել գործադուլային կոմիտեին։ Հոկտեմբերի 1-ին բանվորները դադարեցնում են աշխատանքը։ Գործադուլը տևում է ավելի քան երեք և կես ամիս։ Գործարանի վարչության և գործադուլային կոմիտեի միջև եղած բանակցություններն ավարտվում են նրանով, որ ընդունվում են բանվորների առաջադրած բոլոր կետերը։

Ռուսական առաջին հեղափոխության վայրէջքի և տեղատվության ուժեղացման պահին դա Երևանի բանվորների տարած հաղթանակներից էր։

1906—1907 թթ. Երևանի բոլշևիկյան կազմակերպությունն ուժեղացրեց իր գործունեությունը արհմիություններ ստեղծելու ուղղությամբ։ Արհեստակցական միություններ ստեղծվեցին սպիրտ-

64 «Կայծ», № 7, 23 ապրիլի 1906 թ.։

կոնյակի գործարանների, կաշեգործարանի, հյուրանոցների, բաղնիքների, խանութների բանվորների, ծառայողների և գործակատարների շրջանում։ «Կայծ» և «Նոր խոսք» թերթերում հրապարակվեցին ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության կազմած արհմիութենական կանոնադրության նախագծերը։ Դաշնակները նույնպես սկսեցին կազմակերպել «իրենց» արհմիությունները։ Սակայն բոլշևիկների համառ աշխատանքի շնորհիվ նրանց այդ փորձերը ձախողվեցին։

1907 թ. քաղաքական հաջող ելույթներ ունեցան Երևանի տպարանների, սպիրտ-կոնյակի, հրուշակեղենի ձեռնարկությունների բանվորները։

1907 թ. բոլշևիկյան կազմակերպությունը զգալի աշխատանք է կատարում դումայական ընտրությունների կապակցությամբ։ Փետրվարին Երևանում ռուսերեն հրատարակվում է «Զակոն» թերթը, որը բոլշևիկների կողմից, հատկապես օգտագործվեց դումայական ընտրությունների առիթով։ Թերթի 1907 թ. փետրվարի 18-ի և մարտի 5-ի համարների[65] նյութերը նվիրված են հեղափոխությանը, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիաների տակտիկային։ Ուշագրավ են «Դումայի առաջին քայլերը», «Կովկասում», «Փաստեր», «Նամակ Հյուսիսից», «Թող իմանան», «Լոկաուտ Լոձում», «Մերձավոր հեռանկարները», «Բյուջեի իրավունքը» և այլ հոդվածները։ «Զակոն»-ին Հայաստանի տարածքում նախասովետական առաջին սոցիալ-դեմոկրատական թերթերից է։ Թերթի խմբագիրն էր Գ. Ն. Սոկոլովսկին (Յուրի Մոլոտով)։

1907 թ. հունիսերեքյան պետական հեղաշրջումից հետո ռեակցիան իր հալածանքներն ուժեղացրեց նաև Երևանի բոլշևիկյան կազմակերպության նկատմամբ։ Նրա անդամների մի մասը ձերբակալվեց, իսկ մյուսը՝ հեռացավ քաղաքից՝ ընդհատակում ուժերը պահպանելու և ցարիզմի դեմ նոր ուժով պայքարը ծավալելու հաստատակամությամբ։

1905—1906 թթ. հեղափոխության տարիներին Երևանի աշխատավորությունը բոլշևիկների ղեկավարությամբ ցարիզմի, կալվածատերերի և բուրժուազիայի դեմ մղված պայքարում ձեռք բերեց քաղաքական կռվի նշանակալից փորձ։

---

65 Մեր ձեռքի տակ են միայն այդ համարները։

6

Ռուսական առաջին հեղափոխությանն արձագանքեցին Զանգեզուրի, հատկապես Ղափանի բանվորներն ու աշխատավորները։ Քաղաքական-մասսայական լայն աշխատանք ծավալեցին Զանգեզուրի բոլշևիկները։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով Զանգեզուրի շատ գյուղացիներ աշխատանքի են մեկնում Անդրկովկասի քաղաքները, հատկապես Բաքու, իսկ մի մասն էլ Ղափանի հանքերն ու պղնձաձուլական ձեռնարկությունները։ Սյունիքի և Ղաթարի գործարաններում 1905 թ. ձուլվել է 47714 փութ սև պղինձ, 1906 թ.՝ 28681 և 1907 թ.՝ 56380 փութ, իսկ տասը տարվա ընթացքում (1901—1910)՝ 468121 փութ սև պղինձ[66]։

XX դարի սկզբին Ղափանի ձեռնարկությունները թևակոխել էին կապիտալիստական զարգացման խոշոր մեքենայական արդյունաբերության փուլը և նշանակալից տեղ էին գրավում Ռուսաստանի պղնձարդյունաբերության մեջ[67]։

Բաքվի պրոլետարիատի հետ Զանգեզուրի գյուղացիների և բանվորների շփումը բարերար ազդեցություն ունեցավ։ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն գնալով ուժեղացնում էր ուշադրությունը Ղափանի և Զանգեզուրի նկատմամբ։ Պրոպագանդիստների միջոցով նա մարքսիզմը տարածում էր Ղափանի (Ղաթար) հանքափորների, գավառի բատրակ և աշխատավոր գյուղացիների շրջանում։ ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի օգնությամբ 1905 թ. վերջնականապես ձևավորվում է Ղափանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը, որի շարքերում կային նաև Բաքվից եկած բանվորներ։ Պրոպագանդիստները Բաքվից ստացած մարքսիստական գրականությունը տարածում էին ոչ միայն հանքափորների, այլև գավառի գյուղացիության մեջ, որը մեծ նշանակություն ունեցավ Ղափանի բանվորների քաղաքական կոփման համար։ Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպության աշխատանքը հատկապես երևաց Ղափանի 1907 թ. մարտի 26-ի ընդհանուր գործադուլի ժամանակ։ Մարտի 22-ին ստեղծվեց գործադուլային կոմիտե, որը մշակեց բանվորների 27 կետից

66 Տե՛ս լեռնագործ ինժեներ Վոլոսկու 1912 թ. հունվարի 22-ի զեկուցագիրը։ Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 195, գ. 216։ Ծ. Աղայան, Բանվորների ռևոլյուցիոն պայքարը Ալավերդում 1905—1907 թթ., «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.», հոդվածների ժողովածու, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն, 1955, էջ 173։

67 Տե՛ս В. А. Мелконян, Металлургия меди в Армении, М., 1955.

բաղկացած պահանջները և ներկայացրեց գործարանատերերին։ Կոմիտեի աշխատանքները ղեկավարում էին Բաքվի կոմիտեի ներկայացուցիչներ Ս. Մարտիրոսյանը, Ս. Ստեփանյանը, Ջափարլին (մահացել է 1913 թ., աքսորում), որոնք աշխատում էին Կոնդուրովի հանքում։ Նրանց ղեկավարությամբ, մարտի 22-ին, ժողով է գումարվում և որոշվում — «չսկսել աշխատանքները, մինչև ներկայացված պահանջները լրիվ չընդունվեն»։ Բոլշևիկների եռանդուն աշխատանքի շնորհիվ Կոնդուրովի հանքերի բանվորների գործադուլին միացան Մելիք-Ազարյանի և այլ ձեռնարկությունների տարբեր մասնագիտությունների ավելի քան 2.500 բանվոր և ծառայող։ Մարտի 28-ին գործադուլը դարձավ համընդհանուր։ Բռնագրավվեցին պահեստները, ստեղծվեցին պաշտպանական խմբեր։ Չնայած իշխանության օրգանները Ղափանում հայտարարեցին ռազմական դրություն, աշխատեցին զենքի միջոցով ճնշել գործադուլը, սակայն այն ավարտվեց բանվորների հաղթանակով, գործարանատերերը տեղի տվեցին, ստիպված եղան բանվորներին առանձին զիջումներ անել։

Ղափանի բանվորների մարտական գործադուլը խիստ անհանգստություն էր առաջացրել հայ բուրժուազիայի, ցարական գործակալների և Կովկասի սահմաններից դուրս՝ Պետերբուրգի գործարար շրջաններում։ Բուրժուական գրչակները կառավարությունից պահանջում էին խիստ դատաստան տեսնել «անհնազանդ» մասսաների հետ։ Պետերբուրգում հրատարակվող «Բիրժևիյե վեդոմոստի» բուրժուական թերթը 1907 թ. մարտին գրել է. «Կովկասում անկարգությունները դեռ շարունակվում են։ Կովկասում Ղափանի հանքերի և գործարանների թվով 5000 բանվորներ գործադուլ են հայտարարել։ Նրանք ներկայացրել են աշխատավարձը բարձրացնելու, բանվորական օրը կրճատելու և այլ պահանջներ։ Ադմինիստրացիայի կողմից այդ պահանջների մերժման դեպքում բանվորները սպառնում են քանդել էլեկտրակայանը և ջրով հեղեղել հանքերը։ Հեռախոսային կապը դրասենյակի հետ դադարեցված է։

Ի՞նչ են մտածում իշխանությունները»[68]։

Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունը նշանակալից աշխատանք ծավալեց նաև գավառի, հատկապես հանքերի շրջակայքի վայրերի գյուղացիության մեջ։ Նրանք ընդհարումներ ունեցան կալվածատերերի հետ։ Այդ օրերին քաղաքական բնույթի կալ-

[68] «Биржевые ведомости», 30 марта 1907 г.

մակերպիչներից ու ղեկավարներից էր բոլշևիկ Կոստանդին Միխայլովը։ Ահա թե ինչ է ասել նա գյուղացիներին՝ ուղղված իր ելույթներից մեկում. «Եթե կառավարությունը մեզ հող չի տալիս, ապա մենք ինքներս կվերցնենք այն, դուրս կքշենք գյուղից պրիստավներին ու չինովնիկներին։ Թող կառավարությունն ու նրա չինովնիկները լավ իմանան, որ գյուղացին այլևս իր գլուխը չի խոնարհի, այլ նա գոչում է այժմ ամեն տեղ, կորչեն բռնակալները, կալվածատերերը և կապիտալիստները։ Կեցցե՛ ազատությունը»[69]։

Ցարական իշխանությունը ճնշելով Ղափանի գյուղացիության ելույթը, ձերբակալեց նրա աչքի ընկնող ղեկավարներին և ուղարկեց Մետեխի բանտը։ Առանձնապես խիստ վարվեցին Կ. Միխայլովի հետ։ Ցարական իշխանությունները նրան մեղադրում էին այն բանում, որ նա 1906—1907 թթ. Ղափանի պղնձահանքերի մի խումբ «բունտարարների» հետ միասին հրապարակային ճառեր է ասել ապստամբության մեջ՝ մարդկանց դրդելով գոյություն ունեցող կարգերի դեմ, Ղափանի գյուղացիներին համոզել է միանալ մյուս շրջանների գյուղացիներին, ուժով գրավել կալվածատերերի հողերը և բաժանել չքավորներին։ Կ. Միխայլովի և նրա ընկերների վերաբերյալ մեղադրական եզրակացության մեջ ասված էր, որ նրանք հայտարարել են, թե իշխանավորները բոլորն էլ մեկ են, նրանցից լավ բան չի կարելի սպասել, հարկավոր է գործել ուժով, վռնդել չինովնիկներին և նրանց փոխարինել ժողովրդից ընտրված մարդկանցով։

Կ. Միխայլովն ու նրա համախոհները գյուղացիներին կոչ են արել՝ հրաժարվել հարկեր վճարելուց և զինակոչից։ Այս անձնավորությունը խիստ վտանգավոր է, բանտային օրգանները նրան պետք է պահեն խիստ հսկողության տակ[70]։

Ցարական ատյանները Միխայլովին ոչ միայն պահեցին խիստ հսկողության տակ, այլև 1908 թ. առանց դատավարության, Ղափանի գյուղացիական շարժումների մյուս ղեկավար աշխատողներ Սափրիզոն և Իլյա Ցրանկոպուլ եղբայրների հետ միասին գնդակահարեցին։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին ՌՍԴԲԿ Բաքվի բոլշևիկյան կազմակերպության օգնությամբ սոցիալ-դեմոկրա-

---

69 ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 34, գ. 371։

70 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 3, թ. 15։

տական խմբակներ են ստեղծվում Շուշիում, Գորիսում, Խնձորեսկում, Մեղրիում[71]:

7

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին կայազորներ կային Ալեքսանդրապոլում, Կարսում, Երևանում և այլ քաղաքներում: Ռուսաստանի կենտրոնական քաղաքներից Հայաստան արտաքսված սոցիալ-դեմոկրատները հեղափոխական աշխատանք էին ծավալում ցարական բանակի զորամասերում: Նրանք սերտ կապ էին պահպանում Ալեքսանդրապոլի, Կարսի, Երևանի և այլ քաղաքների բոլշևիկյան կազմակերպությունների հետ: Զինվորական կազմակերպությունները հեղափոխական աշխատանքն ավելի ուժեղացրին «Պոտյոմկին» զրահանավի հերոս ծովայինների ապստամբությունից և ցարի 1905 թ. հոկտեմբերի 17-ի մանիֆեստից հետո: Պոտյոմկինցիների օրինակը ոգեշնչում էր նրանց: Բոլշևիկյան կազմակերպությունները զինվորներին կոչ էին անում չկրակել բանվորների և գյուղացիների վրա, միանալ նրանց հետ, աջակցել նրանց պայքարին: «Երբ մենք վերադառնանք տուն, մեր հայրերը և մայրերը կհարցնեն մեզ... Իսկ դու ինչ ես արել քո հայրենիքի համար, կրակել ես արդյոք քաղցած ու արհամարհված գյուղացու վրա, քո եղբոր վրա, հո չես առևանգել անպաշտպան կանանց, աղջիկներին:— Ոչ,— կպատասխանենք մենք,— այդ ժամանակ մենք էլ ձեզ հետ միասին աշխատել ենք պայքարել ժողովրդի երջանկության համար... Մենք էլ պայքարել ենք այն բանի համար, որպեսզի գոնե մի քիչ լավ ապրեն մեր աղքատ հայրենիքի տանջված զավակները»[72],— ասված է Ալեքսանդրապոլի ս.-դ. բյուրոյի կոչերից մեկում:

Քաղաքական գործադուլները ու ցույցերը զորքին հեղափոխական պայքարի հորձանուտն էին քաշում:

Հայաստանի կայազորների զինվորները բոլշևիկների ղեկավարությամբ պահանջում էին զորացրել բոլոր նրանց, ում ծառայության ժամկետը լրացել է: Նրանք իրենց պետերին հիշեցնում էին՝ «Թեև մեր սվինները սուր են, բայց նստել նրանց վրա չի կարելի»: Ուշադրավ է Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատա-

---

71 Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք երկրորդ:

72 ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33:

կան կազմակերպության 1905 թ. նոյեմբերի 3-ի թռուցիկը, ուղղված Ալեքսանդրապոլի կայազորի 1901 և 1902 թթ. ծառայության զինվորներին։ «Բավական է, ինչ մենք ծառայեցինք ժողովրդի թշնամիներին։ Պահանջեցեք զորացրելու բոլոր նրանց, ում ծառայության ժամկետը վերջացել է, իսկ մինչև այդ հրաժարվենք ամեն տեսակ ծառայություններից ու պարապմունքներից, չվախենանք մեր սպաներից, ժողովներ ու միտինգներ կազմակերպելուց, միավորվենք. քանի որ միավորվելու մեջ է ուժը, նույնը պահանջենք նաև մնացած ընկերների համար»[73]։

Ալեքսանդրապոլի կայազորային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունն իր առջև խնդիր էր դրել՝ պայքարել զինվորների համար ևս ձեռք բերելու խոսքի, միտինգների, ժողովների և մամուլի ազատություն, զինվորներին իրավունք վերապահել ընտրվելու և ընտրելու ժողովրդական Սահմանադրական ժողովում։

1905 թ. նոյեմբերին Ալեքսանդրապոլի երկաթուղային բանվորների հետ միասին ցույցի դուրս եկան 153-րդ (Բաքվի), 229-րդ, Հրետանային 150-րդ և այլ գնդերի զինվորները[74]։ Նոյեմբերի 28-ին 153-րդ Բաքվի հետևակ գնդի զինվորները բոլշևիկյան խմբի ղեկավարությամբ առաջադրում են մի շարք պահանջներ՝ զորքը դուրս չբերել բանվորների և գյուղացիների դեմ, ներում շնորհել քաղաքական կալանավորներին, զորացրել այն զինվորներին, որոնց ծառայության ժամկետներն անցել են, խոսքի, մամուլի, ժողովների ազատություն տալ։ Այս պահանջներին հավանություն տվեցին Կարսի և այլ կայազորների զինվորները։ Բանվորների դեպուտատների սովետների օրինակով Ալեքսանդրապոլի և Կարսի զորամասերում ստեղծվում են զինվորական հեղափոխական խորհուրդներ, որոնց մեջ մեծամասնություն էին կազմում բոլշևիկները։ 229-րդ գնդում ակտիվ աշխատանք էր տանում շարքային զինվոր բոլշևիկ Լևոն Վերմիշյանը, որն աչքի էր ընկնում զինվորների և քաղաքացիների մեջ հեղափոխական գրականություն և թռուցիկներ տարածելու հմտությամբ։ 1905 թ. Վերմիշյանը ձերբակալվեց և աքսորվեց Սիբիր։

ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կայազորի բոլշևիկյան կազմակերպությունների շարքերում 1905 թ. կար 150 անդամ։ Լենինյան «Պրո-

---

73 ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, ց. 169, գ. 207։

74 Տե՛ս Պ. Հարությունյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ. Երևան, 1956, էջ 80։

լետարի» թերթը այդ մասին 1905 թ. հոկտեմբերի 31-ին (նոյեմբերի 13-ին) գրել է. «Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական» կազմակերպությունը վերանվանվեց «Զինվորների Ալեքսանդրապոլի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն»: Նրա գործունեությունն ընդգրկեց զինվորների նոր շրջաններ և շատ նոր կապեր հաստատեց այլ քաղաքների զինվորական կազմակերպությունների հետ: Գոյություն ունի հատուկ «Զինվորական տպարան», որը նպատակ է դրել Կովկասի բոլոր քաղաքներին անհրաժեշտ թռուցիկներ մատակարարել: Բնագրերը պատրաստում են հենց իրենք զինվորները: Զինվորների մասսայի վրա թռուցիկների թողած տպավորությունն անհամեմատ բարձր է»[75]:

Բոլշևիկյան «Էխո» թերթը նկարագրելով Ալեքսանդրապոլի զինվորականության մեջ առաջացած խմորումները, 1905 թ. նշել է, որ զինվորներն իրենց ժողովներում քննարկում են հեղափոխության հետ առնչված ժամանակակից ամենահրատապ հարցեր:

ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական, Բաքվի, Թիֆլիսի, Երևանի կոմիտեները պրոպագանդիստների միջոցով կապ են պահպանում Հայաստանի տերիտորիայում ստեղծված սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ: Մարտիրոս Միրաքյանը 1905—1906 թթ. մի քանի անգամ մարքսիստական գրականություն և բոլշևիկյան թերթեր է Թիֆլիսից փոխադրել Ալեքսանդրապոլ և Երևան: Նա Ալեքսանդրապոլի զինվորական բոլշևիկյան կազմակերպություններին է հասցրել «Վպերյոդ», «Պրոլետարի», «Պրոլետարիատի կռիվը», «Կավկազսկի ռաբոչի լիստոկ», «Կայծ» թերթերը, Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» աշխատությունը, ՌՍԴԲԿ II համագումարի որոշումները և մարքսիստական այլ գրականություն[76]: 1906 թ. սկզբներին Մ. Միրաքյանը Երևանի ճանապարհին բոլշևիկյան հայերեն թռուցիկներ ու գրականություն փոխադրելիս ձերբակալվում և ուղարկվում է Ալեքսանդրապոլի գավառային բանտը, սակայն շուտով՝ փետրվարի 27-ին փախչում է բանտից[77]:

---

75 «Пролетарий», № 23, 3 (16) октября 1905 г.

76 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 201:

77 Ադրբ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 498, գ. 1, թ. 39: Մ. Միրաքյանի մոտ հայտնաբերված գրականության մեջ կային մեծ քանակությամբ գրքեր, այդ թվում՝

Երևանի զինվորականության մեջ մարքսիստական թռուցիկներ է տարածում և ժողովներում ելույթներ ունենում կոմունիստ Լևոն Տեր-Հովհաննիսյանը։ 1906 թ. փետրվարին կազմված մեղադրական գործում նրա մասին ասված է. Լ. Տեր-Հովհաննիսյանն իր գործունեության համար 1902 թ. երեք տարով աքսորված է եղել Սիբիր։ 1906 թ. ապրիլին ցարական դատարանը նրան նորից դատապարտում է բանտարկության։

1905 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում ցարական ոստիկանները խուզարկություններ են կատարում հեղափոխական զինվորների մոտ։ Նրանց հաջողվում է հայտնաբերել ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական կազմակերպության անլեգալ գրադարաններից մեկը։ Զինվորական գլխավոր դատական վարչությանը հասցեագրած զեկուցագրում, 1905 թ. ապրիլի 25-ին Ալեքսանդրապոլի ժանդարմական վարչությունը գրել է. «...Ինչ վերաբերում է հացթուխներ Զա-

---

1. ՌՍԴԲԿ—ծրագիրը ռուսերեն՝ 158 օրինակ, վրացերեն՝ 2050, հայերեն՝ 603 օրինակ։

2. ՌՍԴԲԿ համագումարի ծանուցումը՝ ռուսերեն՝ 4 օրինակ, վրացերեն՝ 384։

3. Վ. Ի. Լենինի (Ն. Լենին) «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ»՝ 17 օրինակ։

4. Հեղափոխական երգեր (ժողովածու)՝ 4 օրինակ։

5. Ֆ. Էնգելսի «Գյուղացիական հարցը Ֆրանսիայում և Գերմանիայում»՝ 1 օրինակ։

6. ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության կանոնադրությունը՝ 1 օրինակ։

7. Բանվորական դեպուտատների Սովետի որոշումները՝ 1 օրինակ։

8. Բանվորական օրը՝ 2 օրինակ։

9. «Երկու դասակարգ» բրոշյուր՝ 35 օրինակ, այդ թվում՝ 20 օրինակ՝ հայերեն։

Հայտնաբերվեցին նաև շատ թերթեր, ինչպես՝

1. «Իզվեստիա Սովետա ռաբոչիխ դեպուտատով», Պետերբուրգ, № 5, 1905։
2. «Իզվեստիա Սովետա ռաբոչիխ դեպուտատով», Բաքու, № 5, 1906։
3. «Էխո» («Արձագանք»), № 1, 1905։
4. «Նաչալո», № 5. № 10, 1905 (2-ական օրինակից)։
5. «Կավկազսկի ռաբոչի լիստոկ», № 1, 1, 3, 4, 5, 6, 7, 8, 10, 12, 14, 15 (2-ական օրինակից)։
6. «Պրոլետարի», № 2, 3, 4, 5, 6, 7. 8 (3-ական օրինակից), 9 (4 օրինակ), 12, 13, 23 (2-ական օրինակից)։
7. «Ռաբոչի», № 2, 1905 (2 օրինակից)։
8. «Վպերյոդ» № 4, 15 (2-ական օրինակից), 17, 1905։
9. «Իսկրա» № 52, 1903, № 58, 68, 74, 75, 1904, 82, 83, 84, 86, 94, 1905։
10. «Սոցիալ-դեմոկրատ», № 2, 1904 (տե՛ս ՍՄԿԿ կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 18, գ. 2)։

խաձեի, Գոնդաձեի, Բուրդիլաձեի, Լեքանիձեի մոտ կատարված խուզարկություններին, ապա միանգամայն բարենպաստ արդյունքներ են ստացվել։ Նրանց մոտ գանվում է՝ 1) Կախեթիայի գյուղացիությանն ուղղված պրոկլամացիայի մեկ օրինակ՝ վրացերեն լեզվով։ 2) Քանիերեք պրոկլամացիա «Բոլոր զինվորներին»՝ ռուսերեն լեզվով։ 3) Տասնյոթ օրինակ պրոկլամացիա վրացերեն լեզվով, նրանցից 15-ը՝ ուղղված վրացի-կախեթցի գյուղացիներին և երկուսը «Բանվոր Վկերիոզովի նամակը խմբագրությանը»։ 4) Հայերեն պրոկլամացիաների չորս օրինակ, նրանցից երեքը՝ «Հայ ժողովուրդը» և մեկը՝ «Բաքվի իրադարձությունները»։ 5) Կոմս Տոլստոյի հեղինակած «Զինվորի հուշաթերթը» բրոշյուրի հինգ օրինակ ռուսերեն լեզվով։ 6) «Երկու Եվրոպա» բրոշյուրի երկու օրինակ ռուսերեն լեզվով։ 7) «Գոլդբլատի ճառը» բրոշյուրի երկու օրինակ ռուսերեն լեզվով։ 8) «Ով պետք է հաղթի» բրոշյուրի երկու օրինակ ռուսերեն լեզվով։ 9) Մեկ բրոշյուր՝ «Պատրաստ եղեք» ռուսերեն լեզվով։ 10) Մեկ գրքույկ ռուսերեն լեզվով՝ «Կոմունիստական կուսակցական մանիֆեստը»։ 11) «Իսկրա» թերթի երկու օրինակ՝ №№ 86 և 87։ 12) «Քաղաքական տեսություն» առանձնատիպի վեց օրինակ։ 13) «Բանվորի այբբենարան» չորս գրքույկ։ 14) Վրացերեն լեզվով յոթ գրքույկ՝ «Մեծ հեղափոխություն»։ 15) Վրացերեն լեզվով չորս գրքույկ՝ «Բանվորական գործը Ռուսաստանում»։ 16) Վրացերեն լեզվով երկու գրքույկ՝ «Գյուղացիների կրիտիկական դրությունը»։ 17) Վրացերեն լեզվով երկու գրքույկ՝ «Գյուղական բանվորը»։ 18) 1 թերթ վրացերեն լեզվով՝ «Սոցիալ-դեմոկրատ» և 20) հայերեն «Հնչակ» թերթի մեկ օրինակ № 3, 1905 թ.։

Բացի թվարկվածներից, ստուգելու համար վերցված են տոմսակներ, նամակներ և հուշատետրեր»[78]։

ՌՍԴԲԿ զինվորական կազմակերպությունները 1905—1907 թթ. վճռական դեր խաղացին Հայաստանում հեղափոխական շարժումները ծավալելու, ցարիզմի քաղաքականությունը մերկացնելու, զինվորների քաղաքական պատրաստականությունը բարձրացնելու գործում։ Զորանոցը դառնում է հեղափոխության օջախ։ Վ. Ի. Լենինի պատկերավոր արտահայտությամբ՝ «զորքը չի կարող, երբեք չի եղել և երբեք չի լինի չեզոք»։ Զորք—քաղաքացիների պահանջները ժողովրդի պահանջներն էին։

78 ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 169։

* * *

1905—1907 թթ. սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ ստեղծվեցին Նոր Բայազետում, Սև Քարում, Մեծ Ղարաքիլիսայում, Իգդիրում, Սարիղամիշում, Կարսում և այլ տեղերում: Նոր Բայազետի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ստեղծման գործում ակտիվ դեր խաղաց Հովհաննես Սարուխանյանը, որը կապված էր ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության հետ: Այդ կազմակերպությունները նույնպես խոշոր դեր կատարեցին ռուսական առաջին հեղափոխության տարիներին բանվորական և գյուղացիական շարժումները ղեկավարելու, մասսաների ուժերը համախմբելու, ցարիզմի և բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հետադիմական քաղաքականությունը մերկացնելու գործում:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանի աշխատավորության պայքարը ղեկավարելու համար հզոր զենք հանդիսացավ մամուլը: Մարքսիստական հայերեն հեղափոխական գրականության, հրատարակության գործում մեծ դեր խաղաց հատկապես Հավլաբարի ընդհատակյա տպարանը: 1904 թ. մինչև 1906 թ. փետրվարի 25-ը միայն Հավլաբարի տպարանում հայերեն լեզվով լույս է տեսել հետևյալ գրականությունը.

Ամիս	Թիվ	Անվանումը	Հայկականի տպաքանակը	Կոմիտեի անունը
1	2	3	4	5
		1904		
Նոյեմբեր	20	Հասարակությանը (վրաց. հայերեն և ռուսերեն)	4400	Թիֆլիսի կոմիտե
Նոյեմբեր	20	Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցների բանվորներին (վրաց. հայ. ռուս.)	4500	Թիֆլիսի կոմիտե
Նոյեմբեր	27	«Պրոլետարիատի կռվի թերթիկ» (վրաց. հայ. ռուս.)	5000	Միութենական կոմիտե
Դեկտեմբեր	3	Ընկերներ (վրաց. հայ. ռուս.)	2800	Բաքվի կոմիտե
Դեկտեմբեր	16	Ընկերներ (վրաց. հայ. ռուս.)	5000	Թիֆլիսի կոմիտե
Դեկտեմբեր	16	Պահանջներ	7000	Թիֆլիսի կոմիտե

1	2	3	4	5
		1905		
Հունվար	8	Կովկասի բանվորներին (վրաց. հայ. ռուս)	3800	Միութենական կոմիտե
Հունվար	8	Միութենական կոմիտեի կանոնադրությունը	100	Միութենական կոմիտե
Հունվար	9	Հայ բանվորներին	3000	Միութենական կոմիտե
Հունվար	16	Դաշնակցականներին	3000	Միութենական կոմիտե
Հունվար	25	Ընկերներ	1500	Թիֆլիսի կոմիտե
Փետրվար	5	Թիֆլիսի կազմակերպված բանվորությանը	400	Միութենական կոմիտե
Փետրվար	11	«Պրոլետարիատի կռիվը»	1200	Միութենական կոմիտե
Փետրվար	11	Սոցիալիզմի մասին (գրքույկ)	2500	Միութենական կոմիտե
Փետրվար	11	Քաղաքացիներին	1500	Թիֆլիսի կոմիտե
Փետրվար	11	Ով ինչով է ապրում (գրքույկ)	2000	Միութենական կոմիտե
Մարտ	21	Վրաց գյուղացիությանը	3000	Միութենական կոմիտե
Մարտ	24	Ելիզավետպոլի խմբի պրոկլամացիան	800	Թիֆլիսի կոմիտե
Մարտ	26	«Վպերյոդ»-ից թռուցիկ	1800	Թիֆլիսի կոմիտե
Ապրիլ	1	Ինչ պարզվեց	5000	Միութենական կոմիտե
Ապրիլ	4	Զինվորներին	3000	Միութենական կոմիտե
Ապրիլ	5	Ելիզավետպոլի երկաթուղայիններին	700	Թիֆլիսի կոմիտե
Ապրիլ	6	Մարսելյոզ	1600	Թիֆլիսի կոմիտե
Ապրիլ	18	Ռուսաստանի բոլոր բանվորներին և բանվորուհիներին	3000	Բաքվի կոմիտեի բյուրո
Ապրիլ	22	Մայիսի մեկը	2500	Միութենական կոմիտե
Ապրիլ	23	Քաղաքացիներ	250	Կարմիր խաչի կոմիտե
Ապրիլ	25	Մարսելյոզ	5000	Միութենական կոմիտե
Մայիս	18	Օպորտունիզմի մասին	1000	Միութենական կոմիտե

1	2	3	4	5
Մայիս	22	Ելիզավետպոլի խումբը	1000	Միութենական կոմիտե
Մայիս	26	Բաթումի կոմիտեի պրոկլամացիան	300	Բաթումի կոմիտե
Մայիս	28	Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դեմոկրատական դիկտատուրան	1000	Միութենական կոմիտե
Հունիս	3	Կանոնադրություն	400	Միութենական կոմիտե
Հունիս	3	Բորչալուի խմբի թռուցիկը	400	Միութենական կոմիտե
Հունիս	15	Համառոտակի կուսակցական տարաձայնությունների մասին (գրքույկ)	1500	Միութենական կոմիտե
Հունիս	22	Ընկեր բանվորներ	800	Ելիզավետպոլի խումբ
Հուլիս	20	«Պրոլետարիատի կռիվը» № 6	1000	Միութենական կոմիտե
Հուլիս	22	Պետական կազմի երեք սահմանադրություն կամ երեք կարգ	1500	Թիֆլիսի կոմիտե
Հուլիս	23	Թերթիկ	300	Թիֆլիսի կոմիտե
Օգոստոս	12	«Պրոլետարիատի կռիվը» № 7	1000	Միութենական կոմիտե
Օգոստոս	22	Ընկեր բանվորներ	1000	Թիֆլիսի կոմիտե Միութենական կոմիտե
Օգոստոս	29	Արյուն է թափվում, պատրաստվեցեք ապստամբության	3000	Թիֆլիսի կոմիտե Միութենական կոմիտե
Սեպտեմբեր	10	Ընկերներ	1000	Թիֆլիսի կոմիտե Միութենական կոմիտե
Սեպտեմբեր	18	«Պրոլետարիատի կռիվը» № 8	1000	Միութենական կոմիտե
Հոկտեմբեր	6	Բոլոր քաղաքացիներին	1000	Թիֆլիսի կոմիտե
Հոկտեմբեր	6	Ծանուցումը ՌՍԴԲԿ երրորդ համագումարի մասին	500	Միութենական կոմիտե
Հոկտեմբեր	7	Բանվորներին	150	Թիֆլիսի կոմիտե
Հոկտեմբեր	13	Զինվորներին	1000	Թիֆլիսի կոմիտե Միութենական կոմիտե

1	2	3	4	5
Հոկտեմբեր	15	Թռուցիկ	100	Կարմիր խաչ
Հոկտեմբեր	18	Քաղաքացիներին	500	Թիֆլիսի կոմիտե Միութենական կոմիտե
Հոկտեմբեր	18	Պրոկլամացիա	1000	Թիֆլիսի կոմիտե Միութենական կոմիտե
Հոկտեմբեր	29	Քաղաքացիներ	100	Թիֆլիսի կոմիտե
Հոկտեմբեր	31	ՌՍԴԲԿ ծրագիրը, ընդունված երկրորդ համագումարում 1906	1500	Միութենական կոմիտե
Փետրվար	5	Պրոկլամացիա	800	Թիֆլիսի կոմիտե
Փետրվար	7	Նրանք ծիծաղում են, բայց նրանք սխալվում են	2000	Թիֆլիսի կոմիտե
Փետրվար	8	Ռեակցիայի մասին	3000	Միութենական կոմիտե
Փետրվար	12	Պետական դումա թե սահմանադիր ժողով	3000	Միութենական կոմիտե
Փետրվար	18	Փետրվարի 19-ի առթիվ	2000	Թիֆլիսի կոմիտե
Փետրվար	25	Առաջին շրջանի պրոկլամացիան	300	Թիֆլիսի կոմիտե
Փետրվար	25	Վերջին տեղեկություններ	200	Թիֆլիսի կոմիտե

Հեղափոխական մեծ թվով գրականություն՝ պարբերականներ, թռուցիկներ, կոչեր հրապարակվեցին Բաքվի, Ալեքսանդրապոլի և այլ անլեգալ տպարաններում։

Բոլշևիկյան կազմակերպությունները դուրս գալով ընդհատակից, կուսակցական-քաղաքական լայն գործունեություն ծավալեցին։

Ռուսաստանի բանվորների և գյուղացիների օրինակով ցարիզմի դեմ պայքարի ելած հայ աշխատավորությունը ձեռք բերեց քաղաքական կոփվածություն, ինքնակալության դեմ մաքառելու հարուստ փորձ։

8

1904 թ. հոկտեմբերի 1-ին (14-ին), «Պրոլետարիատի կռիվը» թերթում լույս տեսավ Ստ. Շահումյանի «Երևանից։ Հայ իրականությունից» խորագրով հոդվածը, որը գրել էր օգոստոսին Կովկասում

կատարած շրջադարձությունների տպավորությունների ազդեցությամբ[79]։ Թերթում տրված է կովկասահայ քաղաքական կյանքի մարքսիստական նկարագիրը, մերկացված է բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսությունը, մասնավորապես «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցության գործունեությունը, որը լինելով հետադիմական և անսկզբունք մի կուսակցություն՝ նացիոնալիստական թույնով էր վարակում հայ հասարակական-քաղաքական միտքը։

Ստ. Շահումյանը կոնկրետ փաստերով ցույց է տալիս հայ իրականության քաղաքական զարթոնքը՝ սոցիալ-անտեսական տեղաշարժերը, հայկական եկեղեցիական գույքը բռնագրավելու վերաբերյալ ցարի 1903 թ. հունիսի 12-ի օրենքի դեմ առաջացած ժողովրդական, հակացարական շարժումների նշանակությունը։ «Հունիսի 12-ի գիշատչական օրենքի հետևանքների շարքում,— ասում է Շահումյանը,— հանդիսանում է կովկասյան հայերի դրությունն ու կարիքները հաշվի առնելու անհրաժեշտության հարկադրական ճանաչումը հայ նացիոնալիստական կուսակցությունների կողմից «համազգային», թուրքահայ հարցի կողքին նաև ռուսահայ հարցի առկայության ճանաչումը»[80]։

Շահումյանը նշում է, որ նացիոնալիստական կուսակցությունները բորբոքելով շովինիստական զգացմունքներ, ջանում են կասեցնել բանվորական շարժումը Կովկասում, ռուսականացման քաղաքականության դեմ պայքարելու պատրվակով բնակչությանը հեռու պահել մարքսիստական գաղափարախոսության ազդեցությունից[81]։ Այնուհետև նշվում է, որ դաշնակցությունը էսեռների և վրաց ֆեդերալիստների զինակիցն է, բուրժուական գաղափարախոսության կրողը։ «Երևանից։ Հայ իրականությունից» հոդվածում Շահումյանը միաժամանակ պարզաբանում է հնչակյան կուսակցության մեջ տվյալ ժամանակաշրջանում առաջացած խմորումների պատճառը, նրանց առանձին կազմակերպությունների կողմից սոցիալ-դեմոկրատիայի նկատմամբ տածվող համակրանքի շարժառիթները, հույս է հայտնում, թե «...հեռու չէ այն ժամանակը, երբ նրանք վերջնականապես կթողնեն իրենց նացիոնալիստական ավանդույթները և ամբողջովին կհարեն մեր կուսակցությանը»[82]։

79 Տե՛ս Խ. Բարսեղյան, *Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, 1967, էջ 348—349։*

80 Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 1, էջ 48—49։*

81 *Տե՛ս* Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 1, էջ 50—51։*

82 *Նույն տեղում։*

Արդյունաբերական խոշոր կենտրոններին կից վայրերում,— ասում է Շահումյանը,— Թիֆլիսի, Բաքվի նահանգներում, նացիոնալիստների ազդեցությունը սաստիկ խախտված է: Հայկական շատ գյուղերում արդեն կան գյուղական երիտասարդության կազմակերպություններ, որոնք կապված են հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կոմիտեների հետ, ստանում են մարքսիստական գրականություն և լարված ուշադրությամբ հետևում են հայ, այլազգի բանվորների հերոսական պայքարին: Այս պայքարը արդեն բազմաթիվ փայլուն հաղթանակներ է տարել. նա հաղթանակ կտանի նաև այժմ մոլեգնող, սիրտ կտրատող հայկական ռեակցիայի դեմ: «Սոցիալ-դեմոկրատիան իր համարձակ պրոպագանդայով,— գրել է Շահումյանը,— «պայծառ ճառագայթի նման» կթափանցի հայկական պրովինցիայի այդ «մթին թագավորությունը», բնակչությունը կսովորեցնի մտածել քաղաքականորեն և գործել քաղաքականորեն, իր դրոշի տակ կկազմակերպի նրա պրոլետարական և կիսապրոլետարական մասսաներին. վճռական րոպեին նրանց կտանի գրոհելու ինքնակալությունը, եղբայրաբար միացած հենց այն ռուս ժողովրդի հետ, որի դեմ այնքան անմիտ, այնքան անարդարացի կերպով այժմ լի են նրանք այդպիսի կույր ատելությամբ[83]:

Ստ. Շահումյանի հոդվածը ջերմ արձագանք գտավ կովկասահայ քաղաքական կյանքում:

1904 թ. նոյեմբերի 28-ին «Իսկրա»-յում արտատպվեց Ստ. Շահումյանի համանուն հոդվածը մասնակի փոփոխություններով[84]: Ռուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, լենինյանները հանձին Շահումյանի և նրա հրապարակային ելույթների, իրազեկ էին Հայաստանի քաղաքական կյանքին: «Հայ իրականությունից»-ը օգնեց բոլշևիկներին ճիշտ ընկալելու կովկասահայ քաղաքական իրադարձությունները:

Էսէռների «Ռևոլյուցիոննայա Ռոսիա» թերթը պաշտպանության տակ առնելով դաշնակցությանը, իր էջերը սրտաբացորեն տրամադրում էր նրա գրչակներին: Դեռևս 1904 թ. դեկտեմբերին դաշնակցության կենտրոնական օրգան «Դրոշակ»-ը հանդես եկավ «Աղան-

---

83 Նույն տեղում, էջ 52:

84 Տե՛ս «Искра», № 78, 28 ноября 1904 г. Ինչ խոսք, Շահումյանը մենշևիկյան «Իսկրա»-յին չի աշխատակցել. բանի որ նրա հոդվածը արտատպվել է նրանում, շոշափած հարցերի առթիվ բանավեճ է մղվել դաշնակցության դեմ, նպատակահարմար գտանք գիտական շրջանառության մեջ դնել այդ նյութերը:

պավորության հեղափոխական շարժման մեջ: («Ռուսական սոցիալ-դեմոկրատիայի» հոդվածով: Մարքսիզմի հանրահայտ ճշմարտությունների մասին մի քանի ընդհանուր, ոչինչ չասող, տհաս դատողություններից հետո «Դրոշակ»-ը գանգատվում էր այն բանից, թե ինչու է մարքսիզմը ճանաչում գտել և դարձել հեղափոխական պայքարի ուղեցույց: Չըմբռնելով Ռուսաստանում մարքսիզմի տարածման և նրա զարգացման լենինյան փուլի սկզբնաշրջանի առանձնահատկությունները,— «Դրոշակ»-ը հեղափոխական մարքսիստներին համարում էր «աղանդավորներ»: Արևմուտքում անզոր դոկտրինյորության համակրելի երևույթը պարարտ հող է գտնում՝ խորդան, կիսամշակ Ռուսաստանում,— գրել է «Դրոշակ»-ը: Սոցիալիստական ճշմարտությունները քարոզվում և կրացվում են այնտեղ պարզ ու բացարձակ ձևով և մասսան, ինտելիգենտ ու թերուս մեծ մասամբ կուրորեն հետևում են սոցիալիստական «առաքյալներին», որոնք, տարաբախտաբար «իրենց կողմից հանդիսանում են կույր հետևողներ արևմտյան սոցիալիստ մտածողների»[85]:

«Դրոշակ»-ը աղճատելով ՌՍԴԲԿ ագրային ծրագիրը, հարձակումներ էր կատարում նրա սկզբունքների վրա, քննադատում դեմոկրատական ցենտրալիզմը: ՌՍԴԲԿ-ում առաջացած տարաձայնությունները «Դրոշակ»-ը ջանում է բացատրել ֆանատիզմով և աղանդավորությամբ: Նրան դուր չի գալիս, որ բոլշևիկները քննադատում են Բունդին, սահմանազատվում նրանից: «Կարդացեք միայն «Իսկրա» թերթը,— գրել է «Դրոշակ»-ը,— այդ կուսակցության կենտրոնական օրգանը: Նույնիսկ այժմյան ծանր վայրկյաններում կենդանի գործը չէ, որ զբաղեցնում է նրա էջերը, այլ անվերջ, տաղտկալի բանակռիվները՝ թեորիական խնդիրների մասին՝ մատերիալիզմի ուղղափառության, օպորտունիզմի և այլն, որ արամազդյան շանթեր են թափվում և՛ Ժորեսի դեմ և՛ սոցիալիստ հեղափոխականների դեմ, և բունդիստների ու վրացի ինքնավարականների դեմ, և «Հայ հեղափոխական դաշնակցության» դեմ... Դրանք բոլորը, ընթերցող, մի-մի ահարկու թշնամիներ են ազատության համար, կարծես նույնիսկ ավելի ահարկու, քան ինքը ցարիզմը... Եվ սոցիալ-դեմոկրատիայի վարիչ օրգանը, որի գլուխ են կանգնած ամենամոլեռանդ դոկտրինյոր-մարքսիստները, անընդհատ արշավում է այդ բոլոր ուժերի դեմ, որակելով նրանց մի

---

85 «Դրոշակ», № 12 (153), դեկտեմբեր, 1904, էջ 191—194:

թանի շաբլոնական ածականներով, նրանք բոլորը «նացիոնալիստներ են», «օպորտունիստներ», «բուրժուաներ», «հետադեմներ»[86]։

Երկար ու բարակ դատողություններ անելով նացիոնալիզմի մասին, «Դրոշակ»-ը դժգոհում էր հեղափոխական մարքսիստներից իր և էսեռների հասցեին ՌՍԴԲԿ-ի արած քննադատությունից։

Ստ. Շահումյանը ծանոթանալով «Դրոշակ»-ի վերոհիշյալ հոդվածին, 1905 թ. հունվարին Վ. Ի. Լենինին գրել է. «Դրոշակ»-ի դեկտեմբերյան համարում մի մեծ հոդված է տպագրված ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մասին՝ «Աղանդավորությունը հեղափոխական շարժման մեջ» վերնագրով, ես հիմա թարգմանում եմ այդ հոդվածը և մոտ օրերս կուղարկեմ Ձեզ, շատ լավ կլիներ, եթե դուք պատասխանեիք նրան»[87]։

Վերադառնանք Ստ. Շահումյանի «Երևանից։ Հայ իրականությունից» հոդվածին։ «Ռևոլյուցիոննայա Ռոսիա», թերթի 1905 թ. 68-ում «Վ.» ստորագրությամբ լույս տեսավ Միքայել Վարանդյանի «Հայ հեղափոխական դաշնակցությունը» «աղանդավոր թերամիտների դատի առջև» պասկվիլը։ Նրանում հեղինակը անզուսպ հարձակումներ է կատարում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության և նրա տեղական կազմակերպությունների վրա, պաշտպանության տակ առնում էսեռներին, բունդականներին, բոլոր տեսակի նացիոնալիստներին, թմբկահարում դաշնակցությանը։ Նրա կարծիքով նրանք, ովքեր քննադատում են նացիոնալիզմը և պաշտպանում պրոլետարական ինտերնացիոնալիզմը «աղանդավոր թերամիտներ են»։ Մ. Վարանդյանը, զանազան սոփեստություններով փորձում էր արդարացնել դաշնակցության նացիոնալիզմը, նրա հետադիմական գործունեությունը։ Էսեռների օրգանը, «Ռևոլյուցիոննայա Ռոսիան» հովանավորելով դաշնակցությանը, պաշտպանում էր իր հակամարքսիստական էությունը, բուրժուական գաղափարախոսությունը։

«Ռևոլյուցիոննայա Ռոսիա» թերթի և դաշնակցության գաղափարախոս Մ. Վարանդյանի հարձակումները անպատասխան չմնացին։ Այդ օրերին բոլշևիկյան «Պրոլետարի» թերթին է ուղարկվել «Հայկական հեղափոխական դաշնակցությունը» «Հայկական իրա-

86 Նույն տեղում, էջ 192։

87 «Исторический архив», № 2, 1957; Նույնը՝ Ստ. Շահումյան, Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 21։

կանության» դատաստանի առջև» հոդվածը՝ «М. Южанин» *ստորագրությամբ*[88]*:*

Թեև այն ժամանակին չի հրապարակվել մամուլում, բայց ճիշտ տեղեկություն է հաղորդել լենինյան «Պրոլետարի»-ին, նրանում արծարծված հարցերին ծանոթ են եղել կովկասահայ կյանքով մտահոգված մարքսիստները, Կովկասի հեղափոխական գործիչները: ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպության, Բեռլինի խմբի քարտուղար Մ. Ստեփանովը (հավանաբար Մ. Դավիթաշվիլին) 1905 թ. օգոստոսի 20-ին «Պրոլետարիի» խմբագրությանը գրել է.

«Հարգելի ընկեր

15 օր առաջ իմ կողմից Կենտրոնական օրգանի խմբագրությանն է ուղարկվել «Հայկական հեղափոխական դաշնակցությունը» «Հայկական իրականության» դատաստանի առջև» խորագրով հոդվածը: Մինչև այժմ ինձ հայտնի չէ, այն խմբագրությունը ստացել է, թե ոչ, ինչպես և այն ընդունելի է, թե ոչ:

Թախանձագին խնդրում եմ «Պրոլետարի»-ի մոտակա համարներից մեկում, «Փոստ-արկղ» բաժնում ինձ հայտնել այդ մասին:

Պատասխանը հասցեագրել «М. Ю»*-ին:*

Ընկերական բարևներով

Բեռլինյան խմբի քարտուղար՝

Մ. Ստեփանով,

1905, VIII 20.

Charlot»[89]

Մ. Յուժանինի վերոհիշյալ հոդվածում պատկերված է կովկասահայ քաղաքական կյանքը, ցույց է տրված «Երևանից: Հայ իրականությունից» հոդվածի նշանակությունը, մերկացված է դաշնակցության քաղաքական ու ազգայնական գործունեությունը: Հեղինա-

---

88 *Այն առաջին անգամ հրապարակել է Գ. Ղարիբջանյանը, տե՛ս Г. Б. Гарибджанян,* Революционная деятельность С. Г. Шаумяна за границей (1902—1907 гг.), Ереван, 1971, стр. 112, «М. Южанин»*-ը հավանական է Ստ. Շահումյանն է: Դա երևում է այն հատվածից, որ բանավիճելով Մ. Վարանդյանի հետ, հոդվածագիրը ասում է. «Պ.-ն Վ.-ն և նրա մերձավորները ինձ մեղադրում են «ազգափառ-թերամտության» մեջ:*

Հոդվածը «Պրոլետարի» թերթին է ուղարկվել ՌՍԴԲԿ արտասահմանյան կազմակերպության Բեռլինի խմբի միջոցով: Այն Շահումյանի ձեռագրով չի գրված, գաղտնապահության և գրական էթիկայի իմաստով դա անհրաժեշտություն էր:

89 ЦПА ИМЛ при ЦК КПСС, фонд газ. «Вперед», и «Пролетарий», ф. 26. оп. 27 и. д. 325; *Մ. Ստեփանովի սույն գրության և Մ. Յուժանինի ձեռագրերը նույնպես տարբեր են*—Խ. Բ.:

էր գտնում է, որ դաշնակցության կերպարանափոխությունը, սոցիալիզմի դիմակի տակ քողարկվելը բնավ չի թաքցնում նրա նացիոնալիստական հետադիմական էությունը։ «Այդ հոդվածում,— գրել է Մ. Յուժանինը,— պ-ն Վ.-ն ոչ միայն ջանում է ստախոսության մեջ մերկացնել թղթակցության հեղինակին (խոսքը «Հայ իրականությունից» հոդվածի մասին է— Ա. Ի.)։ այլև միաժամանակ ձգտում է ապացուցել, որ «նացիոնալիստական» «դաշնակցություն» կուսակցությունը ինքնատիպության «սոցիալիստական» է։

Պ-ն Վ.-ի միամիտ փորձերի դեմ կարելի էր չառարկել, սակայն հիմա, երբ «դաշնակցություն» կուսակցությունն իր կենտրոնական օրգան՝ «Դրոշակ»-ում (տե՛ս № 5), տպագիր հայտարարում է, որ իր օրգանի էջերում 15 տարվա ընթացքում ինքը պրոպագանդել է սոցիալիզմի գաղափարները, չէր խանգարի ավելի մոտիկից դիտարկել այդ նոր մկրտված ինքնակոչ սոցիալիստական կուսակցության «սոցիալիստական կերպարանքը»։ Այն, որ «Դաշնակցություն» կուսակցությունը 15 տարիների ընթացքում պրոպագանդել է «նեղ նացիոնալիստական գաղափարներ՝ դա հայտնի է, սակայն այն, որ նա գործել է «սոցիալիզմի» դրոշի ներքո՝ դրանում պետք է կասկածել, չնայած «Ռևոլյուցիոննայա Ռոսիա»-ի և հենց «Դրոշակ»-ի հավաստիացումներին։

Ըստ որում, «Դրոշակ»-ը հենց նույն տեղում նշում է. «Մեր սոցիալիստական պրոպագանդան կրում էր զուտ տեսական բնույթ, քանի որ մեր ամբողջ գործունեությունը կենտրոնացված էր «Թուրքահայաստանում», որտեղ և «հող չկար «սոցիալիստական պրոպագանդայի համար» և որպես հետևողական «սոցիալիստներ» նրանք «Թուրքահայաստանում» «նացիոնալիստական պրոպագանդա են մղել», դեռ ավելին, այդ նորելուկ սոցիալիստները ավելի հեռու են գնացել և իրենց նացիոնալիստական քարոզչությունը տարածել նաև Կովկասում, որտեղ ըստ բոլոր տվյալների, արդեն հող կար սոցիալիստական պրոպագանդայի համար»[90]։

Մ. Յուժանինի հոդվածում լիովին բացահայտված են «Ռևոլյուցիոննայա Ռոսիա» և «Դրոշակ» թերթերի ազգայնական միտումները, հակասոցիալիստական գաղափարները, ընդգծված, որ դաշնակցականները «եղել են և մնում են նացիոնալիստներ»։

Փաստագրելով Կովկասում ծավալված բանվորական հեղափոխական և ագրարային շարժումների ազդեցությամբ «Դաշնակցու-

---

90 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 25, оп. 1, д. 3, ч. 1, лл. 1—12.

թյան» քաղաքական կերպարանափոխությունը, Մ. Յուժանինը անդրադառնում է ցարի հունիսի 12-ի օրենքի հետևանքով առաջացած հուզումներին, նշում, որ դաշնակցությունը փորձում էր այն օգտագործել իր նպատակներին հասնելու համար։ Ոչնչացնող քննադատության ենթարկելով «Ռևոլյուցիոննայա Ռոսիա» թերթին, «դաշնակցությունը» և նրա գաղափարախոս Մ. Վարանդյանին, Մ. Յուժանինը ասում է. «Ես ինքս էլ կցանկանայի փոքր ինչ կանգ առնել Կովկասում պարոնայք դաշնակցականների պրակտիկ գործունեության և «սոցիալիստական» պրոպագանդայի վրա... Սրանից երկու տարի առաջ ինձ վիճակվել է լինել բազմաթիվ ժողովներում՝ սկսած մտավորականների և վերջացրած բանվորների, որտեղ խոսում էին «դաշնակցականները» կոմիտեի կողմից հատկապես ուղարկված «կուսակցության անդամ» «պրոպագանդիստները», որոնք մղում էին նեղ նացիոնալիստական պրոպագանդա և պաշտպանում նեղ նացիոնալիստական հայացքներ... ընդ որում ես խոսում եմ այն ժամանակաշրջանի մասին, երբ «սոցիալիստ-նացիոնալիստները», «տեղական» պայմանների համապատասխան հարմար գտան զեն նետել իրենց անվանման առաջին մասը, ճիշտ այնպես, ինչպես և հիմա, փոփոխված պայմաններին համապատասխան, ավելի նպատակահարմար են գտնում զեն նետել անվանման երկրորդ մասը, ընդհուպ մինչև պայմանների նոր փոփոխություն։ Նրանք «սոցիալիստական» հավատքն ընդունել են 1904 թ. սկզբներից, որը «դաշնակցականների» լեզվով հավասարազոր է Կովկասում աշխատավոր մարդու տնտեսական դրության բարելավման համար պայքարի անհրաժեշտության ճանաչմանը։ Սոցիալիստական ոգու յուրօրինակ ըմբռնումով էլ մացվել է բանաձև, որն ընդունվել է յուրօրինակ սոցիալիստների համագումարում, ուր հայտարարվում է. «դաշնակցության բանվորական խմբերը այն գործարանների ու ֆաբրիկաների սահմաններում, *որտեղ նրանք աշխատում են, մասնակցում են բոլոր* գործադուլներին և հուզումներին, *որոնք կապված են այդ գործարաններում ու ֆաբրիկաներում բանվորների ընդհանուր մասնակցության հարցերի հետ»։*

Եվ եթե «գործադուլը» և «հուզումը» չեն «կապված բանվորների ընդհանուր մասնակցության հետ» ֆաբրիկաների և գործարանների «սահմաններում», որտեղ նրանք աշխատում են։ Եվ եթե հուզումները կրում են քաղաքական բնույթ։ Այդ դեպքում ինչ անել։ Հասկանալի է։ Նրանք գործ չունեն պոլիտիկանության, քաղաքական պայքարի հետ, դաշնակցությունը Կովկասում միայն և միայն

ճանաչում է պաշտպանողական քաղաքականություն։ Այն ճանաչում է «ազգային ինքնապաշտպանություն» և չի մտադրվել մասնակցել հեղափոխական-հարձակողական շարժմանը։ Այսպես էր գործերի վիճակը մինչև 1905 թ.։ Այժմ կուսակցությունն ավելի ձախ թեքվեց, այն հայտարարում է, որ ինքնապաշտպանությունից անցնում է հարձակման... փառք աստծու։

Մենք շատ և շատ ուրախ ենք նոր դաշնակիցների համար։ Սակայն լինելով վստահ այն բանում, որ պ-ն Վ.-ն և նրա մերձավորներն ինձ մեղադրում են «ողջախոհ թերամտության» մեջ, այնուամենայնիվ, հայտարարում եմ, որ այդ «դաշինքին» կարելի է այնքան նշանակություն տալ, որքան այլ բուրժուա-դեմոկրատական կուսակցությունների հետ ժամանակավոր դաշինքներին... Դաշնակցության «սոցիալիստականության» անկեղծ լինելուն, ես՝ մեղավոր անձս, չեմ հավատում...»[91]։

Ահա այսպիսին էին Շահումյանի «Հայ իրականությունից» հոդվածի քաղաքական արձագանքները։ Բոլշևիկները այսպես են մերկացրել դաշնակցության նացիոնալիզմը, հետևողականորեն պաշտպանել մարքսիզմի գաղափարների անաղարտությունը։

9

1904 թ. «Դրոշակ»-ի № 6-ում լույս տեսավ Միջազգային Սոցիալիստական բյուրոյի մայիսի 12-ի նամակը՝ ուղղված «Դրոշակ»-ին։ Նրանում ասված էր՝ «Տրիբուն Ռուս»-ի մայիսի 10-ի համարից իմացել ենք, որ «Ձեր կազմակերպությունը հարել է Միջազգային սոցիալիստական կոնգրեսների հեղափոխություններին», ուստի խնդրում ենք այդ առթիվ ձեր պաշտոնական հղումը։

«Դրոշակ»-ը մայիսի 17-ին Միջազգային Սոցիալիստների բյուրոյին հայտնել է, որ «Մենք հարել ենք միջազգային սոցիալիզմի սկզբունքներին և արդեն ավելի քան 15 տարի է, ինչ այդ սկզբունքները տարածում ենք հրատարակչությունների միջոցով, հատկապես մեր կուսակցության օրգան «Դրոշակ»-ում։

Բայց այդ հարումը և պրոպագանդան մինչև այսօր ունեցել են միայն տեսական բնույթ, որովհետև մեր գործունեությունը կենտրոնացված է եղել «Թուրքահայաստանում», որտեղ հիմք չկա սոցիալիստական եռանդուն պրոպագանդայի համար։

Եվ ահա արդեն երկու տարի է, ինչ Հայկական հեղափոխական

---

91 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 25, оп. 1, ед. хр. 3, ч. 1, лл. 1—12, ф. 18, оп. 34, ед. хр.

ֆեդերացիան պայքար է տանում նաև ռուսական Հայաստանում, և քանի որ մեր երկրի այդ մասի պայմանները բարենպաստ են սոցիալիստական շարժումը կազմակերպելու համար, ուստի մեր կուսակցության խորհուրդը մարտ ամսվա նիստում անհրաժեշտ գտավ Կովկասի համար մշակել սոցիալիստական ծրագրի նախագիծ, որով նա ընդունում է միջազգային սոցիալիստական կոնգրեսների հիմնական բանաձևերը։

Այդ բանաձևերի հիման վրա վերջերս մենք համաձայնության ենք եկել ռուսական ինքնակալության հեղափոխական- սոցիալիստական կուսակցությունների հետ, միասին գործել՝ ընդդեմ ցարիզմի և կապիտալիզմի։

Վերոհիշյալ նախագծի մասին պաշտոնապես կհայտնենք ձեզ այն բանից հետո, երբ այն կհաստատվի մեր կուսակցության հերթական ընդհանուր ժողովում։

Ընդունեցեք, սիրելի քաղաքացիներ,
մեր եղբայրական ողջույնները։

17 մայիսի 1904 թ.
Ժնև «Դրոշակի» խմբագրություն[92]։

Ինչպես տեսնում ենք, «Դրոշակ»-ն այս անգամ ևս խեղաթյուրելով փաստերը, փորձում է ապակողմնորոշել և՛ Միջազգային սոցիալիստական բյուրոյին և՛ ընթերցողներին։ Ստ. Շահումյանը մերկացրել է «Դրոշակ»-ի կեղծիքները։

«Պրոլետարիատի կռիվը» թերթի 1905 թ. հունիսի 1-ի (14) 6-ում Ստ. Շահումյանը հրապարակել է վերոհիշյալ նամակները՝ համապատասխան մեկնաբանություններով*։ Նա բացահայտում է դաշնակցության նացիոնալիստական բնույթը, ընդգծում, որ այդ կուսակցությունը ընդհանուր ոչինչ չունի մարքսիզմի, գիտական սոցիալիզմի ու բանվորական հեղափոխական շարժումների հետ։

«Եվ այսպես,— գրել է Ստ. Շահումյանը,— «Դրոշակը» արդեն 15 տարի է, ինչ սոցիալիստական պրոպագանդա է մղում և տարածում միջազգային սոցիալիզմի դրույթները։ Ափսոս, որ խմբագրությունը չի նշում, թե որտեղ, երբ, թերթի որ համարներում, կամ քաղաքական որ ելույթների ընթացքում է նրանց ֆեդերացիան հա-

---

92 «Դրոշակ», № 6, 1904։

* Այն լույս է տեսել «Պրոլետարիատի կռիվը» թերթի ռուսերեն թողարկման 1905 թ. հուլիսի 1-ի (14) № 1-ում։

մաձայնեցրել իր գործունեությունը Միջազգային կոնգրեսների բանաձևերի հետ: Գուցե դրոշակիստները իսկապես երբևիցե ինքնուրույն քաղաքականություն են վարել և ձգտել են կազմակերպել հայ բանվորներին դասակարգային կուսակցության անջատմամբ, հակառակ բուրժուական բոլոր կուսակցությունների: Գուցե նրանք իսկապես ամբողջ ժամանակ քարոզել են բոլոր ազգերի պրոլետարների հետաքրքրությունների համերաշխություն, և ոչ թե բոլոր հայերի համերաշխության օգտին, առանց դասակարգային տարբերության: Գուցե նրանք չեն ամբողջ ուժերով աշխատել սոցիալ-դեմոկրատական աճին հայկական պրոլետարիատի շրջանում, բանավոր ագիտացիայի ընթացքում նշել վերջինիս քիչ գիտակից տարրերին, որ հայ աշխատավորության համար այսպիսի վճռական պահին աշխատանքային պայմանների բարելավման համար պայքարը հանդիսանում է ազգային գործի դավաճանություն և այլն և այլն: Բայց բավական է: Ինչպիսի քողով էլ ծածկվեն դրոշակիստները, ինչպես էլ քաշեն նրանց ականջներից դեպի սոցիալիստական լագերը նրանց արժանի ընկերները՝ «սոցիալիստ-հեղափոխականները», հայ պրոլետարիատը չի խաբվի: Նա այնքան ծայրաստիճան նրանց լավ գիտե, որպեսզի մի պահ անգամ կասկածի նրանց բուրժուական էության մեջ»[93]: Դաշնակցական կուսակցության կեղծ սոցիալիստական գեղազարդումները բնավ էլ չեն քողարկել նրանց գործունեության նացիոնալիստական էությունը:

«Հայկական խակամտությունից» հոդվածի առթիվ «Պրոլետարի» թերթին ուղարկած հոդվածը և «Պրոլետարիատի կռիվը» թերթի վերոհիշյալ մեկնաբանությունները կասկած չեն հարուցում, որ դրանք պատկանում են միևնույն հեղինակի՝ Ստ. Շահումյանի գրչին: Միաժամանակ հավաստում են, թե բոլշևիկներն ինչպիսի հետևողականությամբ են պայքարել բուրժուական նացիոնալիզմի և նրա կրողների, մասնավորապես դաշնակցության դեմ:

* * *

Ռուսաստանի հեղափոխական շարժումները հզոր խթան հանդիսացան Հայաստանի կոմունիստական շարժման համար: Լենի-

---

93 «Պրոլետարիատի կռիվը», 1. 1 (14) հունիսի 1905 թ.: Մեկնաբանությունը պատրաստ էր, երբ լույս տեսավ ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի «Աշխատություններ» ժողովածուն, որտեղ Վ. Ավետիսյանը և Գ. Մանուկյանը հրապարակել են Ստ. Շահումյանի «Մեկնաբանությունները», տե՛ս «Труды», 1974, № 3, стр. 157.

նիզմը Թափանցեց Հայաստան, լուսավորեց բանվորական, ագրարային և ազգային-ազատագրական հեղափոխական շարժումների ճանապարհը։ Հայ ժողովուրդը լենինյան կուսակցությանը տվեց աչքի ընկնող հեղափոխական գործիչներ, մարքսիզմ-լենինիզմի նշանավոր պրոպագանդիստներ, կոմունիզմին անձնվեր մարտիկներ։

ԴԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՆ

1. ՌՍԴԲԿ Երկրորդ համագումարի որոշումների ժնևյան հայերեն հրատարակությունները: 2. Վիկտոր Կուռնատովսկին Կովկասում: 3. Լենինյան «Վպերյոդ»-ի կովկասյան զինակիցը: 4. Ստ. Շահումյանի «Էվոլյուցիոնիզմը և հեղափոխականությունը հասարակական գիտության մեջ» տնտեսագիտական փիլիսոփայական աշխատությունը: 5. Հեղափոխական շարժումների արտացոլումը: 6. Ինտերնացիոնալը աշխարհը կփրկե... 7. Տեղատվության տարիների բոլշևիկյան հայ հրապարակախոսությունը: 8. Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մարտական դիրքերում: 9. «Սաակ-կանական սոցիալիզմի» (շենդրիկովականության) մերկացումը: 10. «Մենք ամբողջովին Իլյիչի կողմն ենք...»:

I

ՌՍԴԲԿ Կենտկոմին կից վրացերեն և հայերեն մարքսիստական գրականության հրատարակման հանձնաժողովը Ստ. Շահումյանի գլխավորությամբ 1904 թ. հաջողությամբ իրականացրեց ՌՍԴԲԿ II համագումարի նյութերի հայերեն հրատարակությունը, առաջին հերթին ծրագրի ու կանոնադրության տպագրությունը:

1904 թ. գարնանը Ժնևում 2300 տպաքանակով հրատարակվեց «Ծանուցումն Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության երկրորդ համաժողովի մասին» գրքույկը: Նրանում զետեղված էին ՌՍԴԲԿ Կենտկոմի ծանուցումը, II համագումարում ընդունված ՌՍԴԲԿ ծրագիրը, Կանոնադրությունը և գլխավոր որոշումները: «Ծանուցումը»,— ինչպես հիշատակել ենք առաջին գըրքում,— լույս է տեսել 2300 տպաքանակով[1]*: Հաշվի առնելով այդ նյութերի մեծ պահանջարկը, Ժնևյան հանձնաժողովը նույն թվականին «Ծանուցումը» հրատարակեց երկրորդ անգամ, որը բաց-*

[1] ՌՍԴԲԿ Կենտկոմին կից մարքսիստական գրականության, հրատարակության հայերեն և վրացերեն հանձնաժողովի մասին տե՛ս Խ. Բարսեղյան. Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, 1967, էջ 350—363:

վում էր «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կենտրոնական կոմիտեից» հաղորդագրությամբ։ Նրանում համառոտակի պատմվում է II համագումարի նախապատրաստման ու անցկացման մասին, նշվում, որ կուսակցության ծրագրի լիակատար ընդունումը, Կանոնադրությունը և Համաժողովի գլխավոր վճիռները հրատարակվում են ներկա գրքույկում Կենտրոնական կոմիտեի և Կենտրոնական օրգանի հավանությամբ։ Իսկ ինչ վերաբերում է Համաժողովի արձանագրությանը, որը յուրաքանչյուր ժողովում մանրամասն գրվում էր, նույն հրատարակության հարցը հանձնված է համաժողովի կողմից ընտրված առանձին մասնաժողովի...

«Ընկերնե՛ր,— ասված էր հաղորդագրության մեջ,— այժմ մեր առաջ մի առաջին խնդիր կա— կյանքի մեջ մտցնել այն որոշումները, որ արել է երկրորդ Համաժողովը, գործով մեր կուսակցությանը դարձնել այն՝ ինչ որ նա պետք է լինի Համաժողովի միտումով— այսինքն սկզբունքով կայուն հավաքական մի ուժ կազմել, ընդունակ ղեկավարելու դասակարգային կռվի բոլոր արտահայտությունները՝ հանուն բոլոր ժողովրդի ազատության, հանուն աշխատանքի բոլոր տեսակի ճնշումներից ու շահագործումներից ազատության։

Ընկերներ, մենք շատ լավ ենք ըմբռնում այդ խնդրի առաջին ծանրությունը ու դժվարությունը, բայց մենք հաստատ գիտենք, որ նա կարող է իրագործվել և կենսագործվել, դորան երաշխավոր է Ռուսաստանի բանվոր դասակարգի աճող և զարգացող գիտակցությունը, որը ավելի եռանդով ու ավելի խոշոր մասսաներով է դուրս գալիս կռվի և շարունակում վերջին մարտի՝ թշնամու դեմ։ Այլևս չկան ցիր ու ցան եղած և շրջմոլիկ սոցիալ-դեմոկրատներ։ Նախապատրաստական գործը ավարտված է։ Դե՛, եռանդով ուրեմն սկսենք գործել և թող կուսակցության բոլոր անդամները լինեն նորա կոմիտեներում, խմբերում, շրջաններում և կամ բանվորական միություններում կազմ ու պատրաստ լինեն ինչպես մի հոգի և հառա՛ջ ու հառա՛ջ պրոլետարիատի բոլոր թշնամիների դեմ լիակատար հաղթանակ տանելու համար։

Կորչի՛ ինքնակալությունը։

Կեցցե՛ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան։ Կեցցե միջազգային հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան»

1903 թ. հոկտեմբեր

Կենտրոնական Կոմիտե ՌՍԴԲԿ»[2]։

---

[2] «Ծանուցումը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակ-

Կուսակցության Կենտկոմը հանձնարարում էր ՌՍԴԲԿ բոլոր կազմակերպություններին արտատպել «Ծանուցումը» և տարածել ամենուրեք։

1905 թ. հունվարին Ռուսչուկում, ապա Փարիզում՝ Ավետիս Նազարբեկի խմբագրությամբ հրատարակվող սոցիալ-դեմոկրատական հնչակյան «Ապագա» թերթը մի նոր թարգմանությամբ հրատարակեց «Ծանուցումը»։ Այն լույս է տեսել թերթի 2, 3, 4 և 5 համարներում։ «Ապագայի» 2-րդ համարի 6-րդ էջը բացվում է «Ծանուցումը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության երկրորդ հերթական համագումարի մասին» ընդհանուր վերտառությամբ ՌՍԴԲԿ կենտկոմի երկու «Ծանուցումներով»։ Առաջին «Ծանուցումը» գրված է համագումարի նյութերի ժնևյան հայերեն հրատարակության առթիվ և, ըստ էության, այն պատմական մեծ նշանակություն ունի։ Նկատենք, որ «Ապագան» իր ճակատին կրում էր. «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» միջազգային պրոլետարիատի նշանաբանը, որը արժանացել է Ստ. Շահումյանի ուշադրությանը։ «Մենք ողջունում ենք «Ապագայի» երևան գալը,—1905 թ. փետրվարին բոլշևիկյան «Վպերյոդ» թերթում գրել է Ստ. Շահումյանը,— որը բանվորական շարժման մի նոր հաղթանակն ու նոր նվաճումն է Կովկասում, և հաջողություն ենք ցանկանում նրան նշված խնդիրների ամենաարագ իրագործման մեջ»[3]։

Ստորև հրապարակում ենք ՌՍԴԲԿ II համագումարի նյութերի հայերեն հրատարակության առթիվ ՌՍԴԲԿ Կենտկոմի «Ծանուցումը»։

«Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Կենտրոնական կոմիտեից

«Հրատարակելով հայերեն լեզվով ներկա բրոշյուրը կուսակցության երկրորդ համագումարի մասին՝ Կենտրոնական կոմիտեն առաջին փորձն է անում ստեղծելու այն տեսակ սոցիալ-դեմոկրատական գրականություն, որը ընդունակ լիներ ծառայելու միապե-

---

ցության II Համաժողովի մասին, Ժնև, 1904։ Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի գրադարան։

3 «Вперед», № 7, 21 (3) февраля 1905 г. Ստ. Շահումյան. Նամակներ, 1918, Երևան, 1959, էջ 23—24։

տության լծի տակ ճնշվող զանազան ազգությունների, բանվորական շարժման գործին, ազգություններ, որոնց լեզուն «տիրապետող» չէ ճանաչված, այլ համարվում է հազիվ-հազ հանդուրժելի։

Ընդհանուր կուսակցական սոցիալ-դեմոկրատական գրականություն ստեղծելը՝ Ռուսաստանում ապրող բոլոր ազգությունների համար, մեր շարժման ամենաէական խնդիրներից մեկն է։ Միայն այդ տեսակ գրականությունը հրատարակված զանազան լեզուներով և լայն տարածված ամբողջ երկրում կարող կլինի վճռական հարված հասցնել ազգային փոխադարձ խտրություններին ու մինչև իսկ թշնամության, որ կտակել է մեզ թալանի ու հափշտակության դարավոր քաղաքականությունը,— թալանի ու հափշտակության բոլոր ստրկացած ժողովուրդների և նրանց միջի բոլոր ստրկացած դասակարգերի վերաբերմամբ։ Սոցիալ-դեմոկրատիայի գործն է անհաշտ ու անշեղ կռիվ մղել այդ քաղաքականության և նրա առաջացած ազգային խտրությունների դեմ։ Սոցիալ-դեմոկրատիայի գործն է մոտեցնել իրար բոլոր ազգությունների ստրկացված դասակարգերը, միացնել բոլոր երկրների պրոլետարներին։

Այնպիսի պետության մեջ, ինչպիսին է Ռուսաստանը, սոցիալ-դեմոկրատիայի այդ խնդիրն առանձնապես կարևոր նշանակություն է ստանում։ Թալանի ու հափշտակության քաղաքականությունը, որ գործ է դնում միապետությունը լեհացիների, ֆինլանդացիների, հրեաների, հայերի, վրացիների և առհասարակ բոլոր ոչ-ռուս ազգությունների վերաբերմամբ, բողոք և դիմադրություն է առաջացնում այդ բոլոր ազգությունների բոլոր առաջադեմ խավերի կողմից։ Իսկ միևնույն ժամանակ կապիտալիզմի զարգացումը ավելի ու ավելի է ուժեղացնում ամեն մի ազգության մեջ աշխատավոր դասակարգերի շահագործումը և ոտքի է կանգնեցնում պրոլետարիատի ավելի զարգացած խավերը։ Բանվորական շարժումը Ռուսաստանում ընդգրկում է ոստիկանական դեսպոտիզմի տակ հեծող բոլոր ազգությունները, և մեր կուսակցությունը ամեն ջանք պետք է գործ դնի այժմ, որպեսզի իսկապես ի մի ձուլի բոլոր ազգությունների բանվորական շարժումը։ Համայն աշխարհի բանվորների եղբայրության գաղափարի լայն պրոպագանդան, անդադար ագիտացիան՝ ամեն տեսակ ազգային հալածանքների դեմ, բանվորների մերձեցումը՝ շարժման գործնականի մեջ, նրանց մերձեցումը զանազան լեզուներով միևնույն սոցիալ-դեմոկրատական գրականությունը հրատարակելու միջոցով, մի ազգության պրոլետարիատի ծանոթացումը մյուս ազգությունների կենցաղային պայ-

մանների ու ազատագրական շարժման առանձնահատկությունների հետ՝ ահա թե որոնք են մեր մոտավոր գործնական խնդիրները։

Ուրեմն առա՛ջ և առա՛ջ դեպի բոլոր երկրների պրոլետարների գործնական մերձեցումը և միացումը։ Թող ազգային ճնշումների սաստկացումը միապետության կողմից և նրա ձգտումը՝ գրգռել իր հպատակ ազգերի շովինիստական զգացմունքները և փոխադարձ ատելություն առաջ բերել նրանց մեջ,— կրկնակի վճռականություն հաղորդի բոլոր ազգերի պրոլետարներից բաղկացած և բոլոր լեզուներով սոցիալական հեղափոխություն քարոզող մի և միացյալ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության կողմից։ Թո՛ղ մեր ընկերները— զանազան ազգությունների պատկանող սոցիալ-դեմոկրատները օգնության հասնեն ՌՍԴԲԿ Կենտրոնական կոմիտեին իր նորսկսած գործի մեջ։

Մա՛հ միապետությանը։
Կեցցե՛ ժողովուրդների ազատությունը։
Կեցցե՛ միջազգային սոցիալ-դեմոկրատիան։

ՌՍԴԲԿ Կենտրոնական Կոմիտե»[4]։

ՌՍԴԲԿ II համագումարը, հիրավի, նշանավոր ուղենիշ էր Ռուսաստանի բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի պատմության, շրջադարձային կետ համաշխարհային բանվորական շարժման մեջ։ Այն ավարտեց հեղափոխական մարքսիստական կազմակերպությունների միավորման պրոցեսը, հիմք դրեց նոր տիպի պրոլետարական կուսակցությանը՝ լենինյան մեծ կուսակցությանը։ Իրականացավ Վ. Ի. Լենինի՝ դարասկզբին երազած հեղափոխականների այն կազմակերպության ձևավորումը, որը հակառակ բոլոր թշնամիների, 1905 թ. դասակարգային թեժ գոտեմարտերի միջով աշխատավորությանը տարավ դեպի 1917 թ. փետրվարը, ապա մեծ Հոկտեմբերը։ Այն վերափոխեց ողջ Ռուսաստանը և իր տիրական թևերը փռեց աշխարհի առաջադեմ մարդկության վրա։

4 «Ծանուցում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության երկրորդ՝ հերթական, Համագումարի մասին», Ժնև, 1904։ Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի գրադարանը։ Տե՛ս նաև «Վպերյոդ», № 2, 15 (28 հունվարի 1905 թ.: «Լենինյան ուղիով», № 7, 1973, էջ 26—32։

Երկրորդ համագումարի նյութերի հայերեն հրատարակությունը, որը Կովկաս է տարվել ՌՍԴԲԿ Կենտկոմի կողմից, մեծ չափով նպաստեց Հայաստանում լենինյան գաղափարների տարածմանը և բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորմանը։

Անդրկովկասում մարքսիզմի տարածման գործում ակտիվ դեր են խաղացել ռուս մարքսիստները՝ Վ. Կուռնատովսկին, Լ. Կրասինը, Մ. Կալինինը, Վ. Շելգունովը, Ի. Լուիզինը, Գ. Ֆրանչեսկին, Ս. Ալլիլուևը, Ի. Կոգանը, Ի. Ֆիոլետովը, Ն. Կոզլենկոն. Մ. Մոնտինը, Ֆ. Աֆանասևը և ուրիշներ։

2

Պրոֆեսիոնալ հեղափոխական և մեծ գիտելիքների տեր Վիկտոր Կուռնատովսկին ընդամենը 44 տարեկան էր, երբ 1912 թ. սեպտեմբերին, հայրենիքից հեռու, Փարիզի հիվանդանոցներից մեկում հրաժեշտ տվեց կյանքին։ Նա շուրջ 24 տարի անցկացրեց ցարական բանտերում և աքսորներում, վտարանդիության մեջ, պրոլետարական հեղափոխականին հատուկ խիզախությամբ հաղթահարելով բոլոր դժվարությունները, մինչև վերջ հավատարիմ մնալով մարքսիզմ-լենինիզմին։ Նա ծնվել է 1868 թ. հունիսի 28-ին, Ռիգայում. զինվորական բժշկի ընտանիքում։ Տասնութամյա պատանին ավարտելով գիմնազիան, ձգտում է ուսումը շարունակել Պետերբուրգի համալսարանում։ Այստեղ սովորելուն զուգընթաց նա որոշ ժամանակ հրապուրվում է նարոդնիկության գաղափարներով, կապվում Վ. Ի. Լենինի ավագ եղբայր՝ Ալեքսանդր Ուլյանովի խմբակի հետ, պրոպագանդիստական ակտիվ աշխատանք տանում բանվորների շրջանում։ Վ. Կուռնատովսկին, որ բացահայտ ու համարձակորեն դուրս էր եկել ինքնակալության դեմ, 1887 թ. հեղափոխական գործունեության համար ձերբակալվում է և աքսորվում Պետերբուրգից։

1888 թ. նա ընդունվում է Մոսկվայի համալսարանը, նոր եռանդով շարունակում հեղափոխական աշխատանքը, դառնում Ռուսաստանում մարքսիստական անդրանիկ խմբակների ստեղծողներից մեկը, վերջնականապես կապերը խզում նարոդնիկությունից։ Մոսկվայում ևս աննկատ չի մնում Կուռնատովսկու հեղափոխական պայքարը, շուտով հեռացվում է համալսարանից և արտաքսվում Արխանգելսկի նահանգ։ Կապ հաստատելով աքսորական սոցիալ-դեմոկրատների հետ, նա շարունակում է հեղափոխական գործունեությունը, անխոնջ զբաղվում տեսական պատրաստականության բարձրացմամբ, ուսումնասիրում սոցիալիստական գրականությունը։

1892 թ. աքսորի ժամկետը լրանալուց հետո, Վ. Կուռնատովսկին մեկնում է արտասահման, մինչև 1896 թ. սովորում Ցյուրիխի պոլիտեխնիկական ինստիտուտում և միաժամանակ մասնակցում մարքսիզմի տարածմանը Ռուսաստանում։

1895 թ. մայիսի 13-ին և դեկտեմբերի 21-ին Գ. Պլեխանովին գրած նրա նամակները համոզում են, թե քաղաքական ինչպիսի բարձր հասունության էր հասել Վ. Կուռնատովսկին։ Դրանից երկու տարի առաջ, 1893 թ. օգոստոսին նա մասնակցել էր արտասահմանի սոցիալ-դեմոկրատական խմբակների ներկայացուցիչների այն խորհրդակցությանը, ուր հիմք էր դրվել «Ռուս սոցիալ-դեմոկրատների միությանը»։

Արտասահմանում Վ. Կուռնատովսկին ոչ միայն խորապես ծանոթացավ Եվրոպայի բանվորական հեղափոխական շարժումներին, այլև մերձավոր կապեր հաստատեց սոցիալ-դեմոկրատական բազմաթիվ նշանավոր գործիչների, այդ թվում՝ Ա. Բեբելի և Վ. Լիբկնեխտի հետ, երկրորդ ինտերնացիոնալի ցյուրիխյան կոնգրեսում բախտ ունեցավ անձամբ տեսնելու և լսելու գիտական կոմունիզմի մեծ հիմնադիրներից մեկին՝ Ֆ. Էնգելսին։

Վ. Կուռնատովսկին Պետերբուրգի պրոլետարիատի հեղափոխական գործողությունների ազդեցությամբ գրում է «Բանվորական օր» բրոշյուրը, որը 1897 թ. լույս է տեսնում ռուս սոցիալ-դեմոկրատների Ժնևյան տպարանում և տարածվում Ռուսաստանում։ 1900—1905 թթ. այն մի քանի անգամ հրատարակվել է նաև հայերեն*։

Ոստիկանության դեպարտամենտի արտասահմանյան գործակալները Ցյուրիխում ևս հետապնդում էին Վ. Կուռնատովսկուն։ 1897 թ. ապրիլի 29-ին, Ռուսաստան վերադառնալու ճանապարհին, ժանդարմները Վերժբոլովա սահմանային կայարանում ձերբակալում են նրան, հասցնում Պետերբուրգ և բանտարկում։ Շուտով Վ. Կուռնատովսկուն աքսորում են Արևելյան Սիբիր։ Մինուսինսկի աքսորում նա առաջին անգամ հանդիպում է Վ. Ի. Լենինին և Ն. Կ. Կրուպսկայային։ Իլյիչի հետ ունեցած հանդիպումը բախտորոշ նշանակություն ունեցավ նրա կյանքում։ Վ. Կուռնատովսկին ընդմիշտ զինվորագրվեց լենինիզմին։ Վ. Ի. Լենինը 1899 թվականի հունվարի 30-ին (փետրվարի 11-ին) իր մորը գրած նամակում սիրով է խոսում Վ. Կուռնատովսկու հետ ունեցած հանդիպման մասին։ Նույն

* Տե՛ս «Բանվորական օր», Ժնև, 1904, Հրատարակություն «Կովկասյան Ռ. Դ. Բ. կազմ. միության», 48 էջ։ Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի գրադարանը։

թվականի մարտի 17-ի նամակում Վ. Կուռնատովսկին հիշատակում է, որ Շուշինսկոյում հանդիպել է Վլադիմիր Իլյիչին[5]։ Սիբիրյան աքսորում Վ. Ի. Լենինը և Վ. Կուռնատովսկին փոխադարձաբար այցելում են միմյանց, խորհրդակցում քաղաքական հարցերի շուրջը, միասնական ձևով պայքարում «էկոնոմիստների», «լեգալ մարքսիստների» և այլ հոսանքների դեմ։

Աքսորի ժամկետը լրանալուց հետո Վ. Կուռնատովսկին չորս ամիս շրջագայում է Ռուսաստանի քաղաքներում, ապա 1900 թ. նոյեմբերին՝ կուսակցության հանձնարարությամբ տեղափոխվում Թիֆլիս։ Ռուսաստանից Կովկաս աքսորված մարքսիստների հետ միասին նա բեղմնավոր աշխատանք է կատարում երկրամասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ձևավորման, բանվորական հեղափոխական շարժումների ծավալման, մարքսիստական կադրերի պատրաստման գործում։ Մարքսիզմի մասին նա զեկուցումներ է կարդում երկաթուղու գլխավոր արհեստանոցի բանվորների համար, Կովկասի սոցիալ-դեմոկրատական ղեկավար գործիչներին հաղորդում Վ. Ի. Լենինի գաղափարները, կազմակերպում «Իսկրա»-ի և իսկրայական հրատարակությունների տարածումը։ Կովկասում Վ. Կուռնատովսկին որպես «Իսկրա»-ի գործակալ մեծ ջանքեր է թափում Կարլ Մարքսի ուսմունքը պրոպագանդելու, «Կապիտալ»-ի գաղափարները մեկնաբանելու ուղղությամբ։ Նա հետևողականորեն պայքարել է ռեվիզիոնիզմի՝ բեռնշտեյնականության, հակամարքսիստական մյուս հոսանքների, հատկապես Նոյ Ժորդանիայի օպորտունիստական հայացքների դեմ։

Վ. Կուռնատովսկին գործուն մասնակցություն է ունեցել Անդրկովկասի բանվորական հեղափոխական շարժումներին, ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի կոմիտեների, «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» գործունեությանը։ Նա սերտ շփման մեջ է եղել բազմաթիվ հայ հեղափոխական գործիչների հետ։ Այդ մասին է վկայում նրա նամակագրությունը Գ. Ղարաջյանի հետ։

1901 թ. մարտին ցարական գործակալները ձերբակալում են Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մի շարք ղեկավարների, այդ թվում՝ Վ. Կուռնատովսկուն, Ֆ. Մախարաձեին, Գ. Ղարաջյանին, Գ. Վարդոյանին, Հ. Ջարդարյանին, Գ. Լելաշվիլուն, Զ. Չոդրիշվիլուն և ուրիշների ու նետում Մետեխի բանտը։ Բաքվի բանտից այստեղ է փոխադրվում նաև Լադո Կեցխովելին՝

---

5 «Владимир Ильич Ленин, Биографическая хроника», т. I, М., 1970, стр. 203.

Վ. Կունատովսկու մերձավոր բարեկամը։ Վ. Կունատովսկին քաղաքական բանտարկյալներին շարունակում է հաղորդել իր մարքսիստական գիտելիքները, հեղափոխական փորձը, կազմակերպել նրանց քաղաքական ուսուցումը։ Մետեխի բանտում Վ. Կունատովսկին թարգմանել է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը»։

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին նա գտնըվում էր Յակուտիայի աքսորավայրում։ 1904 թ. նրա ղեկավարությամբ քաղաքական աքսորականները բողոքում են («Ռոմանովյան բողոք») ինքնակալության դեմ։ Այստեղ նա գրում է «1903— հեղափոխական տարի» բրոշյուրը, որն ուղարկում է ՌՍԴԲԿ Իրկուտսկի բոլշևիկյան կոմիտեին՝ հրատարակության։ Բրոշյուրում արտահայտված մտքերը լի են լենինիզմի նկատմամբ ունեցած բոլշևիկյան համոզվածությամբ։

1905 թ. Վ. Կունատովսկին գտնվում էր Չիտայում։ Նա խմբագրում է «Զաբայկալսկի ռաբոչի» բոլշևիկյան թերթը, ակտիվ մասնակցություն ցուցաբերում տեղի բոլշևիկյան կազմակերպությունների։ Թերթի առաջին համարի՝ «Չիտա— 1905 թվական» առաջնորդողը Վ. Կունատովսկին սկսում է Ֆ. Էնգելսի «Օ՜, եթե Մարքսը կենդանի լիներ, այդ ամենը տեսներ սեփական աչքերով» խոսքերով, պարզաբանում տպագիր օրգանի առաջադիր խնդիրը, հավատալով, որ այն պարտավոր է պրոպագանդել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքը։

«Մեր թերթը ամբիոնն է, գրել է նա,— որտեղից սոցիալիստական հասարակության ստեղծման համար պայքարող ամեն մի քաղաքացի կարող է իր խոսքն ասել»։

1907—1910 թթ. Վ. Կունատովսկին երկար դեգերումներից հետո, քայքայված առողջությամբ փոխադրվում է Փարիզ։ Վ. Ի. Լենինը իմանալով այդ մասին, հանդիպում է նրան, շրջապատում հոգատարությամբ, նշանավոր մասնագետներ հրավիրում։ 1911 թ. Վ. Կունատովսկին մասնակցում է Պոլ Լաֆարգի թաղմանը, որտեղ ճառեր են արտասանել Վ. Ի. Լենինը, Ա. Կոլոնտայը և ուրիշներ։

Փարիզից նա շարունակում է կապը Կովկասի հետ։ Ուշագրավ է նրա նամակագրությունը Գ. Ղարաջյանի հետ։ 1911 թ. ապրիլի 18-ի նամակում հայտնում է, որ «հեղափոխական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» աշխատությունն արժեքավոր է, և «առայժմ ս.-դ շարժման պատմության նվիրված միակ մենա-

դրությունն է»։ 1912 թ. մարտի 4-ի, հունիսի 25-ի և օգոստոսի 3-ի նամակներում պատմում է իր մասին, դատապարտում մենշևիկ-լիկվիդատորներին։ «Ես ինքս ֆրակցիաներից դուրս եմ,— գրել է Կունտատովսկին,— բայց համենայն դեպս, ոչ մի դեպքում լիկվիդատորության կողմը չեմ։ Ես այդ ուղղությունը չեմ բաժանում»։

Վ. Կունտատովսկին փափագում էր հայրենիքը տեսնել մեծ ու ազատ, բանվոր դասակարգին ու աշխատավոր զանգվածներին՝ կապիտալի լծից ազատագրված։ Նա ամենուրեք մասսաների հետ էր, ապրում էր մասսաների համար։ Կովկասյան սոցիալ-դեմոկրատները շատ բան սովորեցին Վ. Կունտատովսկուց՝ Վ. Ի. Լենինի հավատարիմ զինակցից։

3

1905 թ. հունվարի 4-ին Ժնևում լույս տեսավ բոլշևիկյան «Վպերյոդ» («Առաջ») շաբաթաթերթի առաջին համարը։ Այն հիմնադրել և խմբագրել է Վ. Ի. Լենինը։ Բացի Իլյիչից, խմբագրության կազմում էին Վ. Վ. Վորովսկին, Ա. Վ. Լունաչարսկին, Մ. Ս. Օլմինսկին։ Ռուսաստանի հետ ամբողջ գրագրությունը վարում էր Ն. Կ. Կրուպսկայան։ «Վպերյոդ»-ը խոշոր դեր խաղաց լենինյան «Իսկրա»-ի գործն ու ավանդույթները շարունակելու, հեղափոխական մարքսիզմի գաղափարները պաշտպանելու, բոլշևիկների տակտիկան պրոպագանդելու, տեղական կուսակցական կազմակերպությունների հետ կապերն ամրապնդելու և ընդարձակելու գործում։ «Հանուն հին «Իսկրա»-ի,— գրել է Վ. Ի. Լենինը,— «Վպերյոդ»-ը վճռականորեն պայքարում էր նոր, մենշևիկյան «Իսկրա»-ի դեմ»։

ՌՍԴԲԿ II համագումարից հետո կուսակցության ներսում պայքարը սրվեց և բորբոքվեց նոր ուժով։ Մենշևիկները համագումարում խայտառակ պարտություն կրելով, չէին հանգստանում։ Նրանք խաբեությամբ գրավելով կուսակցության կենտրոնները՝ կենտրոնական օրգանը՝ «Իսկրա»-ն, կուսակցության խորհուրդը և Կենտկոմը, ձգտում էին վրեժ լուծել լենինյաններից, կազմալուծել կուսակցության գործունեությունը։ Վ. Ի. Լենինը և կայուն լենինյանները՝ Ն. Է. Բաումանը, Պ. Ա. Կրասիկովը, Ս. Վ. Շաումանը, Դ. Ի.

* Վ. Կունտատովսկու՝ Գ. Ղարաջյանին (Բիձա) գրած նամակները պահվում են ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվում, ֆ. 4051, ցուց. 1, գ. 16, թ. 1—5։

Ուլյանովը, Ս. Ի. Գուսևը, Մ. Ն. Լյադովը, Ա. Մ. Ստոպանին, Ռ. Ս. Զեմլյաչկան, Բ. Մ. Կնունյանցը, Ա. Գ. Զուրաբյանը և ուրիշներ ինչպես համագումարում, այնպես էլ հետհամագումարյան շրջանում մերկացնում էին մենշևիկների օպորտունիզմը։

Բոլշևիկյան հին գվարդիայի կոհորտայում էր և Ստ. Շահումյանը, որը Իլյիչի հանձնարարությամբ մեծ աշխատանք կատարեց ինչպես արտասահմանում, այնպես էլ Կովկասում։

Հեղափոխական մարքսիզմի աղճատումների դեմ մղած պայքարում լենինյանների ձեռքում հզոր զենք հանդիսացավ բոլշևիկյան «Վպերյոդ»-ը։ Հին իսկրայական ուղղության թերթը ստեղծելու առաջին միտքը Վ. Ի. Լենինն արտահայտել է 1904 թ. օգոստոսին՝ Ժնևի շրջակայքում տեղի ունեցած 22 բոլշևիկների խորհրդակցությունից որոշ ժամանակ անց։ «Այժմ այդ օրգանի մեջ է ամբողջ էությունը»,— ասում էր Վ. Ի. Լենինը։ Նույն թվականի նոյեմբերի 29-ին (դեկտեմբերի 12-ին), Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ Ժնևում կայացած բոլշևիկների ժողովը հաստատեց թերթի՝ «Վպերյոդ» անունը, որն առաջարկել էր Իլյիչը։ Վ. Ի. Լենինը դրանով իսկ արտահայտել էր բոլշևիկների ձգտումը առաջ ընկնելու հեղափոխական մարքսիզմի դրոշի ներքո՝ կուսակցության ամրապնդման և բանվորական շարժման կազմակերպման գործում։ Իր «Մի քայլ առաջ, երկու քայլ ետ» աշխատությունում, անդրադառնալով ՌՍԴԲԿ II համագումարի բանավեճերին, Իլյիչը գրել է. «Չեմ կարող այս առթիվ չհիշել իմ մի խոսակցությունը համագումարում «Կենտրոնի» պատգամավորներից ինչ-որ մեկի հետ։ «Ի՞նչ ծանր մթնոլորտ է իշխում մեր համագումարում,— գանգատվում էր նա ինձ։— Այս կատաղի պայքարը, այս ագիտացիան միմյանց դեմ, այս խիստ բանակռիվը, այս ոչ ընկերական վերաբերմունքը...»։ Ի՜նչ հիանալի բան է մեր համագումարը,— պատասխանեցի ես նրան։— Բա՜ց, ազատ պայքար. կարծիքներն արտահայտված են։ Երանգները ուրվագծվել են։ Խմբերը նշվել են... Առաջ,— ա՜յ այսպես։ Սա կյանք է։ Սա ինտելիգենտական անվերջ ձանձրալի բանավեճերը չեն, որոնք վերջանում են ոչ թե այն պատճառով, որ մարդիկ լուծել են հարցը, այլ պարզապես այն պատճառով, որ հոգնել են խոսելուց...»[6]։

«Վպերյոդ»-ի գործունեությունը զուգադիպեց ռուսական առաջին հեղափոխության սկզբնաշրջանին։ Այն հրատարակվել է 1905 թ.

---

6 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 7, էջ 443։

հունվարի 4-ից մինչև մայիսի 18-ը, ընդամենը՝ 18 համար, 7—10 հազար տպաքանակով: Յուրաքանչյուր համարում հրապարակվել է Վ. Ի. Լենինի չորսից ավելի հոդված, ինֆորմացիա: Առաջին համարը բացվում է «Ինքնակալությունը և պրոլետարիատը» լենինյան ծրագրային առաջնորդողով: Նույն համարում տպագրվել են Իլյիչի «Ժամանակն է վերջ տալ», «Պրոլետարների լավ ցույցերի և մի քանի ինտելիգենտների վատ դատողությունների մասին», «Կոմիտեների կոնֆերանսները» հոդվածները: «Վպերյոդը» նոր էր սկսել իր գործունեությունը, երբ Ռուսաստանում բռնկվեց ռուսական առաջին հեղափոխությունը: 1905 թ. հունվարի 9-ի իրադարձությունների մասին Վ. Ի. Լենինն իմացավ հայրենիքից հեռու՝ հաջորդ առավոտյան: Սպասված լուրը խորապես հուզեց նրան: Թեև «Վպերյոդ»-ի 3-րդ համարն արդեն պատրաստ էր տպագրության, բայց Իլյիչը չէր կարող չարձագանքել քաղաքական այդ նշանավոր իրադարձությանը: Նույն օրն էլ նա գրեց «Հեղափոխությունը Ռուսաստանում» մարտաշունչ հոդվածը, որը խոշոր տառերով շարվեց չորրորդ էջում: Վ. Ի. Լենինն այդ հոդվածում առաջին անգամ հունվարի 9-ի իրադարձությունները արժեքավորում է որպես հեղափոխության սկիզբ: Վառ գույներով նկարագրելով Պետերբուրգի պրոլետարիատի հերոսական պայքարը, նա ընդգծում էր, որ «Բանվորական շարժումն այս օրերին ընթանում է, իրոք, յոթ մղոնանոց քայլերով, որ բանվորների լոզունգն է՝ «մա՛հ կամ ազատություն»: «Վպերյոդ»-ի հաջորդ՝ 4-րդ և 5-րդ համարները լիովին նվիրված են ռուսական առաջին հեղափոխությանը, հունվարի 9-ի իրադարձություններին: «Հեղափոխության սկիզբը Ռուսաստանում», «Հեղափոխական օրեր» հոդվածաշարում, «Ի՞նչ է կատարվում Ռուսաստանում», «Պետերբուրգի ճակատամարտի պլանը», «Մարտեր բարիկադների վրա» և այլ աշխատություններում Վ. Ի. Լենինը վառ կերպով պատկերել է ռուսական առաջին հեղափոխության անդրանիկ զոհամարտերը: «Վպերյոդի» էջերից նա ճշմարտության լույսով լուսավորում էր Ռուսաստանի պրոլետարիատի ազատագրական պայքարի ուղին: «Մենք պետք է անենք հրապարակախոսների մըշտական գործը»,— գրել է Վ. Ի. Լենինը «Հեղափոխական օրեր» հոդվածում,— գրենք արդիականության պատմությունը»:

«Վպերյոդ»-ում զետեղված Վ. Ի. Լենինի ավելի քան 80 հոդվածներում և այլ նյութերում տրված են ցարական ինքնակալության ռազմական կրախի և քաղաքական ճգնաժամի վերլուծությունը, բոլշևիկյան կուսակցության տակտիկայի հիմնավորումը, մենշևիկ-

ների տակտիկայի բնութագրությունը, ռուսական առաջին հեղափոխության սկզբնաշրջանի պատմությունը: Նրանցում կարմիր թելի նման անցնում են հեղափոխության մեջ պրոլետարիատի առաջատար դերի, համաժողովրդական զինված ապստամբության, բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստականի վերաճելու գաղափարները: «Վպերյոդ»-ում լույս են տեսել Ա. Լունաչարսկու «Երկգլխանի արծվի տարակուսանքները», «Եվրոպական պրոլետարիատի հեղափոխական պայքարի պատմության ուրվագծերը», «Վ. Վորովսկու «Ճիշտ է, արդյոք», «Դեմագոգիայի պտուղները», «Ռուսական գործադուլների համագումարը», Մ. Օլմինսկու «Պետերբուրգի իրադարձությունների արձագանքները արտասահմանում», «Օպորտունիզմի մի տարատեսակությունը», Վլ. Բոնչ-Բրուևիչի «Պրոլետարիատի ուժը» և մյուս լենինյանների գործերը:

«Վպերյոդ»-ը հին «Իսկրա»-ի օրինակով պայքարել է հեղափոխական մարքսիզմի հաղթանակի համար: Այն խոշոր դեր է խաղացել կուսակցության ամրապնդման համար մղվող պայքարում, ՌՍԴԲԿ III համագումարի նախապատրաստման, կուսակցության կանոնադրության առաջին պարագրաֆի լենինյան ձևակերպման հիմնավորման ու պրոպագանդման, տեղական կազմակերպությունների ու խմբերի համախմբվածությանն ապահովելու, ՌՍԴԲԿ II և III համագումարների միջև ընկած շրջանում ծավալված ներկուսակցական տարաձայնությունները հաղթահարելու գործում:

«Վպերյոդ»-ի տակտիկական գիծը դարձավ ՌՍԴԲԿ III համագումարի տակտիկական գիծը:

«Վպերյոդ»-ը սերտ կապերի մեջ էր Մոսկվայի, Պետերբուրգի, Կիևի, Օդեսայի, Եկատերինոսլավի, Անդրկովկասի և Ռուսաստանի այլ վայրերի բոլշևիկյան կազմակերպությունների հետ: Անդրկովկասի բոլշևիկները, նրանց տպագիր օրգանները ջերմորեն պաշտպանում էին «Վպերյոդ»-ին, ամեն տեսակի աջակցություն ցույց տալիս նրան: Անդրկովկասից «Վպերյոդ»-ին աշխատակցել են Մ. Ցխակայան, Ստ. Շահումյանը և ուրիշներ: Թերթը լայնորեն լուսաբանել է երկրամասի բանվորական և ագրարային շարժումները, Գուրիայի և այլ վայրերի գյուղացիական ելույթները: Տպագրվել են «ՌՍԴԲԿ կովկասյան միության հայտարարությունը», Ստ. Շահումյանի «Հնչակների նոր օրգանը» գրախոսությունը, Բաքվի, Բաթումի, Քութայիսի և այլ վայրերի հեղափոխական շարժումները լուսաբանող նյութեր: «Վպերյոդի» № 10-ում հրապարակվել է «Բաքվի ջարդը» ծավալուն հոդվածը, որ մերկացվում էր ցարիզմի

ապացուցած քաղաքականությունը՝ հայ-ադրբեջանական ժողովուրդների միջև ազգային թշնամանք հրահրելու և կոտորածներ կազմակերպելու գործում:

Նախահոկտեմբերյան բոլշևիկյան հայ պարբերական մամուլը՝ «Պրոլետարիատ», «Պրոլետարիատի կռիվը», «Պրոլետարիատի կռվի թերթիկ», «Բանվորի ձայնը», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր», «Սոցիալ-դեմոկրատ», «Պայքար», «Բանվորի կռիվը» և այլն հետևողականորեն պրոպագանդել են մարքսիզմ-լենինիզմի գաղափարները, համախմբել աշխատավորության ուժերը՝ հեղափոխական պայքարի համար[7]:

Լենինյան «Վպերյոդ»-ի և «Պրոլետարիի» օրինակով «Պրոլետարիատի կռիվը», «Պրոլետարիատի կռվի թերթիկը» լուսաբանում էին հեղափոխական իրադարձությունները, լենինյան տակտիկան ու ստրատեգիան, ազգային հարցի մարքսիստական-լենինյան սկզբունքները: «Ռուսական բանվորական շարժումը,— գրել է հունվարի 9-ի առթիվ Վ. Ի. Լենինը,— մի քանի օրում բարձրագույն աստիճանի հասավ»[8]:

Հունվարի 1-ին (14) լույս է տեսնում «Պրոլետարիատի կռիվը» թերթի 5-րդ համարը (վրացերեն 8-րդ, հերթականությունը հաշվված է «Պրոլետարիատ»-ից և «Բրձոլա»-ից, որտեղ զետեղված էին «Պրոլետարների դասակարգը և պրոլետարների կուսակցությունը» (անստորագիր, հեղինակը Ի. Վ. Ստալինն է), «Գիտակից պրոլետարիատի կռիվը» (անստորագիր, հեղինակը Ա. Ծուլուկիձեն է), «Լիբերալների տենչանքը», «Սոցիալիզմի մասին», «Սոցիալիստական միջազգային կոնգրես», «Բեբելի ճառը» և այլ հոդվածներ:

---

7 Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի մասին տե՛ս Խ. Բարսեղյան, Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն, Երևան, 1956, նույնը՝ ռուսերեն, 1958, նույնի, Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, Երևան, 1960. «Հեղափոխության կոչեր և թռուցիկներ», Երևան, 1960: «Պրոլետարիատի կռվի թերթիկ»-ի 1903 թ. նոյեմբերի 1 (14)-ի № 3-ը մինչև վերջերս չէր հայտնաբերվել: 1967 թ. այդ համարից մեկ օրինակ ձեռք է բերել ՀՍՍՀ Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանը: Նրանում հրապարակված են «Կովկասյան խրոնիկա», «Թիֆլիս», «Բաթում», «Քութայիսից», «Խոնիից», «Խմբագրությունից» խորագրով ինֆորմացիաներն ու թղթակցությունները, որոնք նվիրված են 1903 թ. գործադուլային շարժումներին: «Խմբագրությունից»-ից Միութենական կոմիտեն բանվորներին և աշխատավոր գյուղացիներին կոչ է անում աջակցել «Պրոլետարիատի կռվին» և «Պրոլետարիատի կռվի թերթիկին»:

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 8, էջ 84:

«Պրոլետարների դասակարգը և պրոլետարների կուսակցությունը» նվիրված է կուսակցության կանոնադրության առաջին պարագրաֆի լենինյան բանաձևման պաշտպանությանը։ Նրանում հենվելով Վ. Ի. Լենինի «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» աշխատության վրա, պաշտպանում է կոմունիստական կուսակցության կազմակերպական հիմունքները, պայքարում օպորտունիզմի դեմ։ «Մեր կուսակցությունը մի ամրոց է,— ասված է հոդվածում,— որի դռները միայն ստուգվածների համար են բացվում»[9]։

Ս. Ծուլուկիձեի «Գիտակից պրոլետարիատի կռիվը» հոդվածում նշվում էր, որ պրոլետարիատը պետք է քաղաքական կռիվ մղի տիրող կարգերի դեմ։ Դասակարգային հակասությունները առաջացնում են դասակարգային կռիվ։ Հենվելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունների վրա, Ս. Ծուլուկիձեն ցույց է տալիս, որ գիտակից պրոլետարիատի աշխարհայացքը մարքսիզմն է։ «Պրոլետարիատը»,— գրել է նա.— պետք է մյուս դասակարգերին հակադրի իր ուժը, որ պրոլետարիատը պետք է կազմակերպվի, մի քաղաքական կուսակցության դառնա, որ կուսակցությունը պրոլետարիատի առաջատար ջոկատն է, նրա ավանգարդը։

Մի այլ հոդվածում «Պրոլետարիատի կռիվը» կոչ էր անում բանվորներին և՛ ավելի համախմբվել հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի շուրջը, որի դրոշակին գրված է. «Կորչի ինքնակալությունը, կեցցե՛ սոցիալիզմի համար մղվող պայքարը»։ «Պրոլետարիատի կռիվը» ծավալուն հոդվածներ է նվիրել Կարլ Մարքսին և Ֆ. Էնգելսին, բնութագրել նրանց գրական-գիտական ժառանգությունը, պարզաբանել մարքսիզմի գլխավոր դրույթները[10]։

Թերթը գովասանել է երկրամասի անդրանիկ մարքսիստների, հատկապես Վլադիմիր (Լադո) Կեցխովելու, Ալեքսանդր (Սաշա) Ծուլուկիձեի և այլոց հեղափոխական ծառայությունները. ցույց տվել պրոլետարական հեղափոխության տեսության ազգային հարցի մշակման գործում նրանց կատարած ներդրումը։

Երբ 1904 թ. դեկտեմբերին լույս տեսավ «Վպերյոդ» թերթի հրատարակելու վերաբերյալ հայտարարությունը, ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն կազմեց գրական խմբակ՝ «Վպերյոդ»-ին աջակցելու համար։ «Պրոլետարիատի կռիվը» ստանալով

9 «Պրոլետարիատի կռիվը», № 5, 1 (14) հունվարի 1905 թ.։

10 Տե՛ս «Պրոլետարիատի կռիվը», № 2—3, ապրիլ-մայիս, 1903, № 6, 1 (14) հունիսի 1905 թ.։

թերթի առաջին համարները, որոնց ողջունում է այդ կարևոր երևույթը և հաջողություն ցանկանում։ «Պրոլետարիատի կռվին» աշխատակցելու վերաբերյալ Միութենական կոմիտեի հրավերին Վ. Ի. Լենինը դրական պատասխանելով, 1904 թ. դեկտեմբերի 20-ին գրել է. «Խնդրում եմ ուղարկեցեք ավելի շատ, ավելի շատ և ավելի շատ բանվորական թղթակցություններ»[11]*։*

«Պրոլետարիատի կռիվը» սերտ կապ է հաստատում «Վպերյոդի» և ապա՝ «Պրոլետարիի» հետ, տարածում նրա գաղափարները, թարգմանում առանձին հոդվածներ։ Կովկասի բոլշևիկները նույնիսկ որոշում են թարգմանել և վրացերեն ու հայերեն հրատարակել «Վպերյոդը»։ Իլյիչի հանձնարարությամբ Ն. Կրուպսկայան 1905 թ. մարտի 4-ին գրել է. «...իհարկե, շատ ուրախ կլինենք, եթե «Վպերյոդը» թարգմանվի և վերահրատարակվի Կովկասում, դրա դեմ ինչ առարկություն կարող է լինել»[12]*։ Թեև այդ հնարավոր չեղավ, բայց, ինչպես ասացինք, «Վպերյոդ»-ից շատ հոդվածներ թարգմանվում և հրատարակվում էին «Պրոլետարիատի կռիվը» թերթում։*

ՌՍԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեի որոշմամբ «Պրոլետարիատի կռիվը» հրատարակվում է նաև ռուսերեն, մի հանգամանք, որն ավելի մեծ հնարավորություններ ստեղծեց Կովկասի բոլշևիկների հեղափոխական փորձը երկրի մյուս կազմակերպություններին հաղորդելու համար։

Երեք լեզուներով հրատարակվող Միութենական կոմիտեի օրգան «Պրոլետարիատի կռիվը» և «Պրոլետարիատի կռվի թերթիկը» դարձան ռուսական առաջին հեղափոխության ընթացքում աշխատավոր մասսաներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով դաստիարակելու լավագույն միջոցները։

«Պրոլետարիատի կռիվը» հետևողականորեն քննադատել է էսեռներին, նրանց անարխիստական, մանրբուրժուական «սոցիալիզմը», որը հեռու է Մարքսի սոցիալիզմից, ինչպես երկինքը՝ երկրից»[13]*։*

«Պրոլետարիատի կռիվը» թերթում տպագրված հոդվածներում մեծ տեղ էին գրավում բոլշևիկների կուսակցության գաղափարա-

---

11 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 34, էջ 315։*

12 «Пролетарская революция», № 5 (46). 1925, стр. 44—45.

13 *«Պրոլետարիատի կռիվը», № 5, 1905։*

կան, կազմակերպական և տակտիկական հիմունքների մշակման, երկրամասի ժողովուրդների բարեկամության, եղբայրության ու համագործակցության հարցերը։ «Վպերյոդ»-ի և «Պրոլետարի»-ի սկզբունքներին հավատարիմ «Պրոլետարիատի կռիվը» պայքարում էր բոլշևիկյան կազմակերպությունների ամրապնդման համար, բանվոր դասակարգին ու աշխատավոր գյուղացիությանը պարզաբանում ազգային հարցի մարքսիստական տեսությունն ու ծրագիրը, Ռուսական առաջին հեղափոխության հիմնական խնդիրները, ջախջախիչ հարվածներ հասցնում բուրժուական նացիոնալիզմին ու նրա կրողներին՝ բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններին։

«Պրոլետարիատի կռիվը» պրոպագանդելով և պաշտպանելով լենինիզմի տեսական դրույթները, միաժամանակ երկրամասի հեղափոխական շարժումների տարեգիրն էր։ Այն աճեցրել և դաստիարակել է պրոֆեսիոնալ հեղափոխականների, անձնվեր լենինյանների մի հիասքանչ սերունդ, որը երկրամասում պրոլետարական ինտերնացիոնալիզմի ամուր հիմքերը դրեց և ուսանելի օրինակ դարձավ։

4

Երկրամասում մարքսիստական-լենինյան գաղափարների տարածման գործում մեծ է ՌՍԴԲԿ Կովկասյան Միության կոմիտեի լեգալ օրգան «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթի դերը։ Հանդես գալով 1905 թ. վերջերին (նոյեմբեր-դեկտեմբեր), թերթը վարել է բոլշևիկյան սկզբունքային գիծ, կուսակցական մարտական հրապարակախոսության օրինակ տվել։ Թերթի առաջին համարում խմբագրությունը ընթերցողներին հայտնում էր, որ «Կավկազսկի ռաբոչի լիստոկը» հեղափոխական դեմոկրատիայի օրգանն է։ Այն լուսաբանելու է բանվոր դասակարգի կարիքներն ու շահերը, վերջնական նպատակը և մոտավոր խնդիրները՝ գիտական սոցիալիզմի տեսակետներով, բանվորների և աշխատավոր ժողովրդի մյուս շերտերում մասսայականացնելու է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հերթական լոզունգները։ Իր բոլոր 17 համարներում թերթը ծանրակշիռ տեղ է տվել զինված ապստամբության, ժամանակավոր հեղափոխական կառավարության հետ կապված հարցերին։ «Կավկազսկի ռաբոչի լիստոկ»-ը մարքսիզմի ջատագովն էր։ Թերթի

առաջին համարը բացվում է Կ. Մարքսի, իսկ 9-րդը՝ Ֆ. Էնգելսի նկարներով:

«Կավկազսկի ռաբոչի լիստոկ»-ում են առաջին անգամ տպագրվել նրա խմբագիր Ստ. Շահումյանի «Հեղափոխության նոր հաղթությունը» (№ 3), «Էվոլյուցիոնիզմը և հեղափոխականությունը հասարակական գիտության մեջ» (№ 6), «Ութժամյա բանվորական օրը և բանվորների պետական ապահովագրումը» (№ 8) և այլ արժեքավոր հոդվածները:

«Հեղափոխության նոր հաղթությունը» հոդվածում Ստ. Շահումյանը բնութագրելով քաղաքական իրադրությունը Լեհաստանում, ցույց է տալիս, որ հեղափոխությունը մի նոր հաղթանակ տարավ. Լեհական պրոլետարիատը,— ասում է նա,— ավելի լավ հասկացավ, թե իր բախտը որքան սերտորեն է կապված ռուսական հեղափոխության բախտի հետ, լեհ բանվորն ավելի մոտիկից ճանաչեց իր բարեկամին՝ ռուս բանվորին:

Մեկնաբանելով պրոլետարական հեղափոխության մարքսիստական տեսակետը, Շահումյանը ցույց է տալիս, որ ցարական լծի տակ հեծող բոլոր ազգությունների, այդ թվում՝ Կովկասի բազմազգ պրոլետարիատի համերաշխությունը հեղափոխության գլխավոր գրավականն է:

Ստ. Շահումյանի վաղ շրջանի տնտեսագիտական-փիլիսոփայական աչքի ընկնող գործերից է «Էվոլյուցիոնիզմը և հեղափոխականությունը հասարակական գիտության մեջ» աշխատությունը, ուր նա մատերիալիստական դիալեկտիկական մեթոդը համարում է այն միակ գիտական մեթոդը, որի օգնությամբ միայն կարելի է ճիշտ գնահատել հասարակական, գաղափարական հարցերը: Շահումյանը քննադատում է միջազգային օպորտունիզմի՝ ռևիզիոնիզմի պարագլուխ Էդուարդ Բեռնշտայնին և բուրժուական սոցիոլոգ Վեռներ Զոմբարդին, պարզաբանում էվոլյուցիոնիզմի ու հեղափոխականության էությունը, արտադրական հարաբերությունների և արտադրողական ուժերի փոխհարաբերության, պատմության շարժիչ ուժերի հարցերը: Դիալեկտիկական մեթոդը Շահումյանը համարում է հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցության ուժն ու հպարտությունը: Նա «Էվոլյուցիոնիզմը և հեղափոխականությունը հասարակական գիտության մեջ» աշխատությունում պաշտպանելով մարքսիստական փիլիսոփայության կարևորագույն դրույթները. դրսևորել է մարքսիստական դիալեկտիկայի խոր իմացություն, այն պրոպագանդելու մեծ կարողություն:

Երկրամասի 1905—1907 թթ. հեղափոխական շարժումներին ուղղություն էր ցույց տալիս ՌՍԴԲԿ Կովկասյան Միութենական կոմիտեն և նրան հաջորդած Գրական բյուրոն, որն, ըստ էության, բոլշևիկյան ղեկավար կենտրոնն էր։ 1906 թ. մարտին Բաքվում, Ս. Կասյանի խմբագրությամբ, լույս է տեսնում ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության օրգան «Բանվորի ձայնը»։ Հրատարակվելով անլեգալ, այն խնդիր ուներ Անդրկովկասի բազմազգ աշխատավորներին համախմբել բոլշևիկյան կուսակցության դրոշի տակ։ «Բանվորի ձայնը» իր առաջին իսկ համարից պարզաբանում էր, որ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ծրագիրը լիովին արտահայտում է ճնշված ազգությունների ազատագրական ձգտումները, վերապահելով յուրաքանչյուր ազգության ինքնորոշման ազատություն։ Թերթը պրոպագանդում էր հեղափոխական մարքսիզմի գաղափարները, լուսաբանում բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի՝ բոլշևիկյան կուսակցության ղեկավար դերը։

Արժեքավոր է թերթում հրապարակված «Երկու ազգ» հոդվածը (որը միաժամանակ լույս է տեսել բոլշևիկյան «Կայծ» թերթի № 2-ում), որտեղ մերկացվում են ազգայնական և շովինիստական շարժումները, մտայնությունները, պարզաբանվում հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազգային քաղաքականությունը։ «Բանասիրական» բաժնում թերթը լուսաբանում է Պետական դումայի հանդեպ բոլշևիկյան կուսակցության մշակած տակտիկայի էությունը։

«Բանվորի ձայնը», զինված բոլշևիկյան կուսակցության III համագումարի որոշումներով, Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» աշխատությամբ, մերկացնում էր ցարիզմի կողմից ժողովրդական մասսաների նոր խաբեությունները, պատռում Դումայի՝ այդ անուժ սահմանադրության հավելուկի, խոցերը ծածկող քողը։

«Բանվորի ձայնը», «Դաշնակցականների և հնչակյանների պատերազմը Խնձորեսկ գյուղում» հոդվածում ցույց է տվել, որ դաշնակները հայ ժողովրդի ոխերիմ թշնամիներն են, որ նրանց համար հայ ժողովրդի «արյունն անարժեք ջուր է, իսկ կյանքը կոպեկանոց գոյություն»[14]։ Թերթը ժողովրդից պահանջում էր ճա-

14 «Բանվորի ձայն», № 1, 1906, Բաքու։

նաչել իր թշնամիներին, որոնք քողարկված էին բարեկամների կեղծ դիմակի տակ։ Մերկացնելով դաշնակցության ազգակործան քաղաքականությունը, «Բանվորի ձայնը» նշել է, որ այդ կուսակցությունը բուրժուազիայի շահերի արտահայտիչն է, նրա սպասարկուն։

1906 թ. մարտի 27-ին Բաքվի ոստիկանությունը հայտնաբերում է ՌՍԴԲԿ Բաքվի ընդհատակյա այն տպարանը, որտեղ տպագրվում էր «Բանվորի ձայնը»[15]։ Կոնֆիսկացիայի է ենթարկվում 2-րդ համարը, ձերբակալվում են բանվորներ Սիմոն Սուլթանյանը, Միքայել (ծածկանունը՝ «Ինժեներ») և Միսակ Առաքելյանները[16]։ Բաքվի նահանգապետի կարգադրությամբ «Բանվորի ձայնը» արգելվում է՝ «վտանգավոր ուղղության» համար[17]։ Խուզարկության ժամանակ պատրաստ է եղել միայն առաջին երեք էջի շարվածքը։ Չափազանց արժեքավոր է 2-րդ համարի առաջնորդող հոդվածը, որը սկսվում է «Հեղափոխությունն իր տրամաբանությունն ունի» խոսքերով։ Այստեղ շարադրված է ռուսական հեղափոխության նշանակությունը, բանվոր դասակարգի և նրա ավանգարդի՝ բոլշևիկյան կուսակցության ղեկավար դերը հեղափոխության գործնական կազմակերպման մեջ։ «Հեղափոխությունը առաջ է շարժվում ոչ թե նրա համար, որ այդպես է «ցանկանում» սոցիալ-դեմոկրատիան, այլ նրա համար, որ նրա կոչերը արձագանք են գտնում պրոլետարիատի դասակարգային գիտակցության մեջ, նրա պահանջները գտնում են մասսայի ցանկությունը, նրա՝ դեմոկրատական կարգերին հասնելու սուբյեկտիվ ձգտումը համապատասխանում է պատմության օբյեկտիվ ընթացքին։

Սոցիալ-դեմոկրատական շարժում և պատմական զարգացում, ահա այն սերտ համերաշխությունը, որը պահանջում է Ռուսաստանի հեղափոխության տրամաբանությունը»[18]։

---

15 Բոլշևիկյան «Կայծ» թերթի առաջին համարում այդ առթիվ ասված է. «Մարտի 27-ին Բաքվում բռնվեց ՌՍԴԲԿ կուսակցության հայկական գաղտնի տպարանը, իր երեք գրաշարներով։ Եղել են խուզարկություններ» («Կայծ», № 1, 1 ապրիլի 1906 թ.)։

16 Ականավոր բոլշևիկ Մ. Ազիզբեկովն իր հայրական կալվածքը գրավ է դնում և որոշ ժամանակ ոստիկանությունը բանտից ազատում է այդ ընկերներին, մինչև դատարանը քննում է նրանց գործը. Ս. Սուլթանյանը և Միքայելը աքսորվում են Բաքվից, իսկ Մ. Առաքելյանին հաջողվում է թաքնվել և ազատվել դատից։

17 Տե՛ս Архив Груз. филиала ИМЛ при ЦК КПСС, ф. 39, д. 233.

18 «Բանվորի ձայն», № 2, 2 ապրիլի 1906 թ., Բաքու։ Քաղվածքը բերվում է մեր ձեռքի տակ գտնվող ֆոտոպատճենից։

Երկրորդ համարում զետեղվել է Ս. Կասյանի «Հայ-թրքական ընդհարումները և հաշտությունը» հոդվածը, որն ամբողջովին ներթափանցված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով։ «Բանվորի ձայնի» հրատարակությունը դադարեցնելու պատճառով այդ հոդվածը լույս է տեսել բոլշևիկյան «Կայծ»-ում (տես № 1 և № 6)։

«Բանվորի ձայնը» ուշագրավ էջ է բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմության մեջ։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին երկրամասի բոլշևիկների ձեռքին գաղափարական ուժեղ զենք էր նաև «Կայծը» և նրան հաջորդած «Նոր խոսքը»։ Եթե մինչև այդ բոլշևիկյան թերթերն անլեգալ էին, ապա «Կայծը» և նրա հետևորդները՝ «Նոր խոսք»-ը, «Օրեր»-ը, դարձան աշխատավոր մասսաների ամբիոն, բոլշևիկները հնարավորություն ստացան այդ թերթերի միջոցով կապվել Հայաստանի բանվորների և աշխատավոր գյուղացիության հետ, խոսել պարզ, հասկանալի լեզվով, պրոպագանդել լենինիզմը։ «Կայծը» իր առաջին համարի «Մեր օրգանը» առաջնորդող հոդվածում, որը գրել է Ստ. Շահումյանը, շարադրելով բոլշևիկյան մամուլի օրգանի խնդիրները, նշել է, մեր թերթը պետք է լինի բերան հայ բանվորության, պրոլետարական համաշխարհային բանակի փոքրիկ, անբաժան գնդերից մեկը։ Նա պաշտպան ու արտահայտիչ պետք է լինի պրոլետարիատի, վսեմ, միջազգային իդեալի։ Նա ընկեր և ուսուցիչ պետք է լինի բուրժուական ազգայնական գաղափարախոսության ստրուկ դարձած և այդ ստրկությունից այժմ ազատվող հայ բանվորներին... նա կաշխատի իր կարողության չափ ծառայել հայ բանվորության և նրա բնական բարեկամ ու դաշնակից՝ հայ աղքատ գյուղացիության շահերին[19]։ «Մեր օրգանը» առաջնորդողում Ստ. Շահումյանը նշում էր, որ ծառացած հարցերը լուծելու համար անհրաժեշտ կլիներ ժողովրդի, ամենից առաջ պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական ուժերի հսկայական լարում։ Շահումյանը պարզաբանում էր, որ «Կայծը» մի օրգան է, որն ուզում է քայլ առ քայլ հետևել հեղափոխական պրոլետարիատին՝ նրա հզոր կռվում, ուզում է արտահայտել և ղեկավարել այդ կռիվը, իրեն նպատակ է դրել լուսավորելու այն փշոտ ու արյունոտ ճանապարհը, որով ընթանում է հեղափոխական պրոլետարիատը։ Ստ. Շահումյանը գտներ, որ

---

19 *Տե՛ս «Կայծ», № 1, 1906։*

ցարիզմի դաժան պայմաններում շատ դժվար է լինելու բոլշևիկյան լեգալ թերթի առաջադիր խնդիրների կատարումը, բայց, իբրև հավատարիմ լենինյան, բնավ չէր սարսափում դժվարություններից, ընդհակառակը, նա խիզախորեն նվիրվել էր պրոլետարական հեղափոխության գործին և հայտարարում էր. կաշխատենք չխնայել մեր բոլոր ուժերը, որպեսզի հնարավորին չափ բարեխղճությամբ ու հաջողությամբ կատարենք մեզ վրա ընկած այդ մեծ ու վսեմ պարտականությունը:

Ստ. Շահումյանի «Մեր օրգանը» առաջնորդողը, ինչպես և մյուս հոդվածները բոլշևիկյան հրապարակախոսության այն լավագույն գործերից են, որոնք աչքի են ընկնում քաղաքական հագեցվածությամբ, հրատապ հարցերի բազմակողմանի ընդգրկումով, գրելու բարձր կուլտուրայով, լեզվի պարզությամբ ու հստակությամբ:

Ռուսական առաջին հեղափոխությունն իր լուսաբանությունն է ստացել «Կայծ»-ում: Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի, Մ. Մելիքյանի, Ա. Խումարյանի, Ս. Խանոյանի, Դ. Շահվերդյանի, Ռ. Դաշտոյանի, Հ. Հակոբյանի և այլոց «Կայծ»-ում հրապարակված հոդվածները, մամուլի տեսությունները, խմբագրականները դրա լավագույն վկայությունն են:

Լենինիզմի սկզբունքների պաշտպանությանն են նվիրված Ս. Սպանդարյանի «Հեղափոխության ալիքը բարձրանում է», «Ինքնակալությունը և գյուղացիությունը», «Հեղափոխություն մի թաս ջրում» և այլ հոդվածները: «Հեղափոխության ալիքը բարձրանում է» հոդվածում Սպանդարյանը ցույց է տալիս, որ ժողովրդական մասսաների մեջ սկսվում են հեղափոխական նոր ըմբռնումներ, գնալով ամբողջ երկիրը բաժանվում է երկու հակադիր բանակների՝ հեղափոխության և հակահեղափոխության: «Տակտիկայի հարցերից» հոդվածում հրապարակախոսը իրեն հատուկ սկզբունքայնությամբ և կրքոտությամբ պաշտպանում է լենինյան տակտիկական գիծը:

«Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» և բոլշևիկյան մամուլի այլ օրգաններում հրապարակված հոդվածներում Ս. Սպանդարյանը հետևողականորեն պայքարել է բուրժուական նացիոնալիզմի դեմ, մերկացրել դաշնակցությանը:

«Կայծ»-ը պաշտպանելով բոլշևիկյան կուսակցության տակտիկան, կոչ էր անում խորտակել ցարիզմը, ստեղծել հեղափոխական, դեմոկրատական կարգեր: ՌՍԴԲԿ-ում հեղափոխական

բոլշևիկյան և օպորտունիստական՝ մենշևիկյան գծերի պայքարը, որը ծավալվեց բոլշևիզմի առաջացման ժամանակաշրջանում գաղափարական և կազմակերպական հարցերի շուրջ, առանձին սրություն ձեռք բերեց ռուսական առաջին հեղափոխության տարիներին, երբ տակտիկական հարցերը առաջնահերթ դարձան: Բոլշևիկները՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ վերցրել էին ժողովրդական հեղափոխության ծավալման, ցարիզմի ու կալվածատերերի ճնշումից աշխատավորներին ազատագրելու, բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը մինչև հաղթական ավարտ հասցնելու կուրս:

Բոլշևիկյան հայ պարբերական մամուլը 1905—1907 թթ. իր ամբողջ գործունեությունը նվիրեց բոլշևիկյան տակտիկական գծի պարզաբանմանն ու իրականացմանը: Դա, ամենից առաջ, կարմիր թելի պես անցնում է «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» թերթերում հրապարակված Ստ. Շահումյանի ավելի քան 50 հոդվածներում, այդ թվում՝ «Կադետները և սոցիալ-դեմոկրատիան», «Պլեխանովի նամակի առթիվ», «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան», «Պետական դումայի նոր քայլը», «Զինվորական դիկտատուրայի ուրվականը», «Ստոլիպինը գործում է» հոդվածներում:

Քննադատելով Գ. Պլեխանովի սխալներն ու տատանումները՝ Շահումյանը 1906 թ. հունիսին «Կայծ»-ում գրել է. «Պլեխանովը ցույց տվեց մեզ իր տխուր օրինակով, որ կարելի է լինել շատ լավ թեորետիկ, բայց անընդունակ գտնվել մասսայական ղեկավար լինելու կուսակցության համար՝ նրա ակտիվ գործունեության ժամանակ, որ կարելի է օրթոդոքս հեղափոխական մարքսիստ լինել տեսական հարցերում, բայց, շնորհիվ իրականության թյուր ըմբռնման, ծայրահեղ օպորտունիստ դառնալ տակտիկայի մեջ»[20]:

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին, ինչպես նշեցինք, դաշնակցությունը կերպարանափոխվեց՝ թաքցնելով իր նացիոնալիստական էությունը: Բոլշևիկյան հայ մամուլը մերկացնում է դաշնակցությունը, պատռում նրա դիմակը, մատնացույց անում նրա հակահեղափոխական, հակասոցիալիստական բնույթը: Ստ. Շահումյանը ցույց է տալիս, որ դաշնակցությունը Կովկասի ժողովուրդների ազատության թշնամին է, սոցիալիզմի վսեմ գաղափարները ննեղափոխող: «Կովկասի հայ բուրժուազիան,— գրել է Ստ. Շահումյանը,—բնականորեն «Դաշնակցության» կուսակցու-

---

20 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 156:

բյան մեջ տեսնում է իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտչին ու պաշտպանին, և այդ պատճառով բոլոր ուժերով, նյութապես ու բարոյապես աջակցում էր այդ կուսակցությանը»[21]:

«Նոր խոսք»-ի 1906 թ. սեպտեմբերյան համարներում հրատարակված «Մեր դերը գյուղերում» հոդվածաշարում Ս. Սպանդարյանը՝ ղեկավարվելով Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքը դեպի գյուղացիական շարժումը» աշխատության սկզբունքներով՝ մատնանշում է, թե երկրամասի բոլշևիկները ինչպիսի աշխատանք պետք է տանեն գյուղերում: Իբրև փաստական նյութ օգտագործվում էին Բորչալուի գավառի գյուղացիության և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կյանքից քաղված օրինակները: Հակառակ մենշևիկների և օպորտունիստների պնդման, Սպանդարյանը հավատացած էր, որ Հայաստանում ևս «ագրարային շարժման համար հարուստ հող կա և՛ ինչպես հեղափոխական և՛ ինչպես սոցիալիստական կուսակցությունը շատ գործ կարող է կատարել այնտեղ»: Նա պահանջում էր գյուղերում մեծ զգուշություն ցուցաբերել կուսակցության շարքերն ընդունվողների նկատմամբ, հատուկ ուշադրություն դարձնել կուսակցության որակական կազմի վրա, միաժամանակ ստեղծել անկուսակցական դեմոկրատական կազմակերպություններ, օրինակ՝ գյուղացիական միություններ:

Հեղափոխական շարժումների ու ժողովուրդների բարեկամության հարցերը պատշաճ լուսաբանություն են ստացել Ստ. Շահումյանի, Պ. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի և այլոց ջանքերով հիմնադրված «Կոչ-Դևեթ» թերթում, որը լույս է տեսել 1906 թ. ամռանը Բաքվում՝ հայերեն-ադրբեջաներեն՝ միացյալ թողարկմամբ, և ռուսերեն: Ցարական կառավարությունը կայսրության տերիտորիայում բնակվող ժողովուրդներին հրահրում էր միմյանց դեմ, կազմակերպում հրեական ջարդեր, հայ թաթարական կոտորածներ: Բաքվի բոլշևիկների նախաձեռնությամբ ստեղծված «Կոչ-Դևեթը» խոշոր դեր է կատարում հայ-ադրբեջանական ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու, ցարիզմի ու նրա կամակատարների, բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հակաժողովրդական գործունեությունը մերկացնելու, երկրամասի աշխատավորությանը բոլշևիզմի շուրջը համախմբելու ուղղու-

[21] *«Կայծ», № 22, 2 հունիսի 1906 թ.:* Ստ. Շահումյան. *Երկեր, հատ. 1, էջ 284:*

թյամբ։ Թերթը ցասումով մերկացնում էր կոտորածների կազմակերպիչներին, պահանջում՝ երկու դարավոր դրացի ժողովուրդների միջև կրկին վերականգնել նախկին բարեկամական կապերն ու համագործակցությունը, ստեղծել իսկական խաղաղություն, «...ամեն մի արյունոտ ընդհարում բացասող խաղաղություն... հասարակ ժողովրդի, մասսաների համար անհրաժեշտ խաղաղություն»։

«Ո՞ւր է ելքը» խորագրով խմբագրական հոդվածում, որը հրապարակվել է թերթի 2-րդ և 3-րդ համարներում, սպանիչ քննադատության են ենթարկված դաշնակցականներն ու պանիսլամիստները, որոնք նացիոնալիստական, շովինիստական թույն էին սերմանում դրացի ժողովուրդների միջև։ «Կոչ-Դևեթը» ի լուր բոլորի հայտարարում էր. «Հարկավոր է մասսաների գիտակցությանը հասցնել, որ նա, ով խախտում է երկու հարևան ժողովուրդների միությունը՝ խաղաղությունը, ոչ ադրբեջանցի է, և ոչ էլ հայ, պրովոկատոր և երկու ժողովուրդների ընդհանուր թշնամին»[22]։

«Մի դեպք հայ-թաթարական կոտորածներից» հոդվածում (№ 14), մի սրտաճմլիկ ու ազնիվ զրույց է պատկերված։ Մուխտարի մահից հետո հայորդի Արսենը ողբում է և իր արտասուքով ողողում Մուխտարի գերեզմանը, համբուրում անշունչ քարերը և երդվում՝ ընդհանուր թշնամուն ոչնչացնելու համար իր կյանքը չխնայել, խոստանում նրա ընտանիքը սրբություն դարձնել իր համար։ «Մնաս բարով անմոռանալի ընկեր,— ասում է Արսենը,— քո վաղաժամ շիրիմը այն վեհ կամուրջն է, որով պիտի անցնեն միացած ադրբեջանցի և հայ մասսաները»[23]։

«Կոչ-Դևեթը» հայ և ադրբեջանական ժողովուրդների ազատությունը տեսնում էր բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի մեջ։ Թերթը հավատում էր, որ հայերի ու ադրբեջանցիների ապագան, երկրի բախտը գտնվում է բանվորի կոշտացած ձեռքերում։

Ուշագրավ են «Բանվորական կյանքից» (№ 3), «Ինչո՞ւ համար է ժողովրդին սահմանադրություն հարկավոր» (5—10) և այլ հոդվածները։

«Կոչ-Դևեթը» ժողովուրդների միջև խաղաղության, բարեկամության և համագործակցության իր կոչով, ռուսական առաջին հե-

---

22 «Կոչ-Դևեթ», № 3, 1906։

23 «Կոչ-Դևեթ», № 14, 1906։

հեղափոխության տարիներին որոշակի դեր խաղաց աշխատավորության զանգվածային պայքարը կազմակերպելու և ցարիզմը մերկացնելու գործում:

Ինչպես նշեցինք, «Կոչ-Դևեթ»-ի ստեղծման գործում ակտիվ դեր է խաղացել Մ. Ազիզբեկովը: Մեշադի Ազիզբեկ օղլի Ազիզբեկովը (1876—1918) տակավին 13 տարեկան էր, երբ Սիբիրի աքսորում մահացավ նրա հայրը:

Քսանամյա Ազիզբեկովը, ավարտելով ռեալական դպրոցը, մեկնում է Պետերբուրգ, սովորում Տեխնոլոգիական ինստիտուտում: Այստեղ, հեղափոխական շարժումների հնոցում, նա ակտիվ մասնակցություն է ունենում ուսանողական ցույցերին, զբաղվում մարքսիզմի ուսումնասիրությամբ: 1898 թ. ընդունվում է ՌՍԴԲԿ շարքերը: 1904 թ. ռուս-ճապոնական պատերազմի պատճառով Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը ժամանակավորապես փակվում է: Մ. Ազիզբեկովը վերադառնում է Բաքու: ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ, որի հետ նա կապված էր վաղուց, ղեկավարում է սոցիալ-դեմոկրատական մուսուլմանական «Հումմեթ» («Եռանդ») կազմակերպությունը և նրա օրգան համանուն թերթը: Բաքվի բազմազգ պրոլետարիատի ինտերնացիոնալ ընտանիքում Մ. Ազիզբեկովը Ստ. Շահումյանի, Պ. Ջափարիձեի, Բ. Կնունյանցի, Ի. Ֆիոլետովի, Գ. Օրջոնիկիձեի, Ն. Նարիմանովի, Ս. Սպանդարյանի և այլոց հետ միասին ղեկավար մասնակցություն է ունեցել պրոլետարիատի քաղաքական ելույթներին, ցարիզմի ու կապիտալիստների դեմ մղված զանգվածային գոտեմարտերին: Մ. Ազիզբեկովի անվան հետ են կապված ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի մի շարք երևելի ձեռնարկումների իրականացումը, ադրբեջանական ժողովրդի մեջ մարքս-լենինյան գաղափարների տարածումը, քաղաքական ցույցերի կազմակերպումը: Ռուսական առաջին հեղափոխության ժամանակ, գտնվելով պայքարի առաջին գծում, Մ. Ազիզբեկովը դրսևորում է լավագույն ինտերնացիոնալիստի և մասսաների տաղանդավոր կազմակերպչի իր ունակությունները: Ցարիզմի հրահրած ազգամիջյան ընդհարումների օրերին նա կազմակերպում է բանվորների, սովորողների և քաղաքի աշխատավորների մասսայական միտինգներ, որտեղ հանդես է գալիս կրակոտ ճառերով, մերկացնում ցարիզմի և հակահեղափոխական ուժերի ոտնձգությունները:

Մ. Ազիզբեկովը չթուլացող թափով շարունակել է աշխատանքը տեղատվության, ինչպես նաև բանվորական հեղափոխական

շարժման նոր վերելքի. առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման և իրագործման ժամանակաշրջանում։ Ստ. Շահումյանի հետ միասին 1912 թ. Մ. Ազիզբեկովը գլխավորել է ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն, Բաքվի պրոլետարիատի 1913 և 1914 թթ. քաղաքական գործադուլները։ Նա գործուն մասնակցություն է ունեցել Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների 1915 թ. հոկտեմբերյան խորհրդակցության նախապատրաստմանը, նրա որոշումների իրականացման համար ծավալված պայքարին։

Մ. Ազիզբեկովը, վայելելով Բաքվի պրոլետարիատի համակրանքը, 1917 թ. ընտրվել է Բաքսովետի կազմում, բեղմնավոր աշխատանք է կատարել գյուղացիության շրջանում։ Բաքվի մերձակա շրջանների (Շուշի, Ջաբրայել, Ելիզավետպոլ, Նուխի, Զանգեզուր, Ղազախ) և այլ գավառների գյուղացիական շարժումները ղեկավարելու և գյուղացիական համագումար հրավիրելու գործում մեծ երախտիք ունի Մ. Ազիզբեկովը։ 1917 թ. սեպտեմբերի վերջերին Բաքվի պրոլետարիատը Պ. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի և մյուսների գլխավորությամբ քաղաքական խոշոր գործադուլ կազմակերպեց, որը վերջացավ հաղթանակով։ Բոլշևիկների կուսակցության կենտրոնը, ողջունելով Բաքվի պրոլետարիատի այդ հաղթանակը, գրել է, «Ողջունում ենք Բաքու քաղաքի հեղափոխական պրոլետարիատին, որը բաց կռվում հաղթել է կազմակերպված կապիտալին»[24]։

Մ. Ազիզբեկովի կյանքի ու գործունեության բեղմնավոր էջերից է Բաքվի կոմունայի ժամանակաշրջանը։ Նշանակվելով նահանգական կոմիսար, նա իր հեղափոխական ողջ եռանդը նվիրաբերեց սոցիալիզմի վեհ գործին։

* * *

Ինչպես միշտ, այնպես էլ 1905—1907 թթ., բոլշևիկյան հայ պարբերական մամուլը իր էջերում հաջողությամբ էր լուսաբանում ժամանակի հեղափոխական իրադարձությունները։

Վ. Ի. Լենինը 1905 թ. հոկտեմբերին Ս. Մ. Էսսենին գրած նամակում, պարզաբանելով ՌՍԴԲԿ Կենտկոմի տակտիկական դիրքը, նշել է, թե տվյալ էտապում միանգամայն ճիշտ է, որ ծանրության կենտրոնը փոխադրվել է գրական ղեկավարության վրա։

---

[24] «Рабочий путь», «Правда», № 29, 4 октября 1917 г.

«Ղեկավարել կուսակցությունը շարժման այժմյան վիճակի, չտեսնված աճման պայմաններում,— գրել է Վ. Ի. Լենինը,— կարելի է միայն մամուլի միջոցով»[25]:

6

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին աշխատավորության քաղաքական դաստիարակության, մարտական տրամադրության բարձրացման գործում նշանակալից դեր էր խաղում հեղափոխական երգը: ՌՍԴԲԿ Կովկասյան Միությունը, Բաքվի, Բաթումի, Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի և այլ կոմիտեները հայերեն, վրացերեն և ռուսերեն տասնյակ հազար տպաքանակով, առանձին թերթիկների ձևով հրատարակում և տարածում էին «Ինտերնացիոնալ»-ը, «Մարսելյոզ»-ը, «Վարշավյանկա»-ն և այլ երգեր: Քանի-քանի սրտեր է հեղափոխության կրակով բոցավառել «Ինտերնացիոնալ»-ը: Այն խրոխտ երգում էին քաղաքական գործադուլավորներն ու աքսորականները, ցուցարարներն ու բանտարկյալները: Մահվան զնդաններում, կախաղանների վրա ճոճվելու պահին անգամ հնչում էր.

...Սա է վերջին կռիվը և պայքարը մեր մեծ.
Ինտերնացիոնալը աշխարհը կփրկե...

Հեղափոխական փոթորիկներով ալեկոծվող համայն Ռուսիայում տարածվել էր «Մարսելյոզ»-ը՝ ֆրանսիական հեղափոխական երգը, որի խոսքերն ու երաժշտությունը 1792 թ. գրել էր զինվորական ինժեներ Ռուժե դե Լիլը: Հետագայում այն դարձավ ֆրանսիական հանրապետության պետական հիմնը: «Մարսելյոզ»-ը Ռուսաստան էր մուտք գործել տակավին XIX դարի 80—90-ական թվականներին՝ ստեղծագործական վերամշակման ենթարկվելով ռուս հեղափոխականների կողմից: Երգի երաժշտությանը հարմարեցվել է բոլորովին նոր տեքստ, երաժշտությունը նույնպես իր հերթին կրել է որոշ ինտոնացիոն և ռիթմիկ փոփոխություններ: Այդ երգը Ռուսաստանում կոչվեց «Բանվորական մարսելյոզ», որը լայնորեն տարածվեց բանվորների և մտավորականության շրջանում: «Բանվորական մարսելյոզ»-ի տեքստը, որը ինքնուրույն մի ստեղծագործություն է, գրել է Պ. Լավրովը և հրապարակել «Վպեր-

---

25 Վ. Ի. ԼԵՆԻՆ, *Երկեր, հատ. 34, էջ 414:*

յող» թերթի 1875 թ. հուլիսի 1-ի № 12-ում։ Այդ տեքստը մասնակի փոփոխություններով, վրացերեն առաջին անգամ թարգմանվել և հրատարակվել է «Բրձոլա» («Պայքար») թերթի 1902 թ. № 4-ում, իսկ 1904 թ. ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն այն հրատարակել է վրացերեն, ռուսերեն և հայերեն լեզուներով։ Հայերեն թարգմանությունը կատարել է Հակոբ Հակոբյանը։ 1905 թ. մայիսմեկյան տոնի նախօրյակին, Կովկասյան միութենական կոմիտեն երեք լեզուներով՝ ռուսերեն, վրացերեն և հայերեն, 17.600 օրինակ տպաքանակով կրկին հրատարակեց և տարածեց «Մարսելյոզ»-ը։ Հետագայում այն հայերեն բազմաթիվ հրատարակություններ է ունեցել։

«Մարսելյոզ»-ը երգում էին հեղափոխականները, բանվորները, նրանք, որոնք պայքարի էին ելել ինքնակալության դեմ, հնչեցնում էին «Մարսելյոզ»-ի խոսքերը.—

Բավ է, որքան ցավ լուռ կրեցինք մենք.
Այսուհետև պիտի կռվենք անհապաղ,
Դնեպրից սկսած մինչև Արևելք—
Վոլգայից մինչև հեռավոր Կովկաս,
Բռունցքներ՝ տերտերներին, կուշտ հարուստներին
Եվ վամպիր բարբարոս նենգ ցարին.
Ջնջենք մենք նզոված այդ ոսոխներին,
Որ փայլ տա արևը մեր օրին:

Դե՜ն, ելի՛ր, բողոքիր. Քաջ բանվոր դասակարգ.
Դեմ ելե՛ք թշնամուն կռվելու, ջա՜ն եղբայրք.
Թո՛ղ զրոհ տա բանվորը անվա՜խ. Քա՛ջ.
Առա՜ջ, առա՜ջ, առա՜ջ...[26]

Ռուսաստանի և Լեհաստանի պրոլետարիատի սիրած հեղափոխական երգերից է «Վարշավյանկա»-ն, որը ստեղծվել է 1883 թվականին։ Լեհական տեքստը գրել է Վացլավ Սվենցիցկին։ Ռուսերեն ինքնուրույն տեքստը 1897 թ. գրել է Գ. Մ. Կրժիժանովսկին։ Այդ ժամանակից էլ «Վարշավյանկա»-ն դառնում է Ռուսաստանի բանվոր դասակարգի և հեղափոխական ուսանողության մարտական

26 *Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 12798, ցուց. 4, գ. 79։ «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ. 1902—1921», Երևան, 1960, էջ 114—116։*

քայլերգը։ Ռուսերեն առաջին հրատարակությունները սկսեցին լույս տեսնել թռուցիկների ձևով՝ 1902 թվականից։ «Վարշավյանկա»-ն հատկապես լայն տարածում գտավ ռուսական առաջին հեղափոխության տարիներին։ Այդ երգը Հակոբ Հակոբյանի թարգմանությամբ առանձին թերթիկով լույս է տեսել 1906 թ. հունիսին՝ «Կայծ» թերթի հուլիսի 23-ի № 43-ում։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին առանձին գրքով լույս տեսավ «Հեղափոխական երգեր» ժողովածուն[27], որը որոշակի դեր խաղաց հեղափոխական երգերի տարածման, աշխատավորության մարտական տրամադրությունների բարձրացման գործում։

7

1907 թ. հունիսերեքյան հեղաշրջումից հետո ցարիզմը կատաղի հարձակում սկսեց երկրի հեղափոխական ուժերի դեմ։ Կովկասի փոխարքան 1907 թ. հունիսի 4-ին նահանգապետներին հրամայեց հնարավոր բոլոր միջոցներով պաշտպանել հունիսերեքյան հեղաշրջմամբ ստեղծված ռեժիմը, «ոչ մի դեպքում... ցույցեր չթույլատրել»[28]։

Մոլեգնում էր ստոլիպինյան սև ռեակցիան։ Հալածվում, բանտարկվում, աքսորի ու մահվան էին դատապարտվում հազարավոր մարդիկ։ Պաշտոնական, ակնհայտ նվազեցված տվյալներով, միայն Երևանի նահանգում 1908—1911 թթ. բանտարկվել են քաղաքական տարբեր հայացքների տեր 16565 մարդ, այդ թվում՝ 1903 թ.՝ 5351, 1909 թ.՝ 6400, 1910 թ.՝ 6909, 1911 թ.՝ 7901 մարդ[29]։

Կուսակցական-քաղաքական աշխատանքը ընթանում էր ընդհատակի ծանր պայմաններում։ Ռուսաստանի արդյունաբերական խոշոր քաղաքներից և պրոլետարական կենտրոններից տեղափոխության կատաղի ալիքը Հայաստան էր նետել բազմաթիվ բոլշևիկների և նշանավոր հեղափոխականների։ Շատ հեղափոխականներ կային զորամասերում, որոնք, իբրև «անբարեհույսներ» արտաքսվել էին Կովկաս։ Ինչ խոսք, նրանք բարեբար ազդեցություն գործեցին Հայաստանում տարվող կուսակցական աշխատանքի,

27 Պրոլետար (Հակոբ Հակոբյան), *Հեղափոխական երգեր*, 1906։

28 Տե՛ս Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 102, ց. 81, թ. 58։ Տե՛ս նաև «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», 1963, էջ 108։

29 Տե՛ս «Обзор Эриванской Губернии за 1908—1911 гг.».

բանվորների քաղաքական ելույթների վրա։ Բացի այդ, Հայաստանի բոլշևիկներին մեծ օգնություն էին ցույց տալիս Կովկասի բոլշևիկների Գրական բյուրոն*, ՌՍԴԲԿ Բաքվի, Թիֆլիսի կոմիտեները, հատկապես Բաքվի բոլշևիկները։ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Կասյանը, Վահան Հովսեփյանը, Մ. Մելիքյանը, Ս. Խանոյանը, Ի. Բաթանյանը, Ա. Խումարյանը, Ա. Կախոյանը, Գ. Շահվերդյանը և տասնյակ այլ բոլշևիկներ նույնպես գործուն մասնակցություն էին ցույց տալիս ՌՍԴԲԿ Երևանի, Ալեքսանդրապոլի, Բորչալուի և Ղափանի բոլշևիկներին։ Նրանք հաճախ էին Հայաստանի գավառներում աշխատավոր մասսաների առջև հանդես գալիս բոլշևիկների քաղաքականության պարզաբանմամբ։ Ընդհատակում տպագրվում և տարածվում էին մեծ քանակությամբ հեղափոխական կոչեր, թռուցիկներ, բրոշյուրներ։ Միայն 1907—1910 թթ. լույս են տեսել ավելի քան 70 անուն հայերեն թռուցիկ. այդ թվում ՌՍԴԲԿ V (Լոնդոնի) համագումարի որոշումները[30]։ 1906 թ. օգոստոսին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն հրապարակեց «Քաղաքացիներ» թռուցիկը, որտեղ հանգամանորեն ցուցադրվում էր հունիսերեքյան հեղաշրջման էությունը և պարզաբանվում պրոլետարիատի խնդիրները։ «Հունիսի 3-ին տեղի ունեցած հեղաշրջումը,— ասված էր թռուցիկում,— պատռեց այն բոլոր ծածկոցները, որոնք արհեստականորեն քողարկում էին ժողովրդից իրերի իսկական դրությունը։ Հանդիսավոր կերպով հայտարարած բոլոր խոստումները, մանիֆեստները, ռեսկրիպտները, պետության հիմնական օրենքները, ժողովրդական ներկայացուցիչների անձեռնմխելիությունը, այս բոլորը ցեխոտված, ոտնակոխ է արված»[31]։

---

* Վերջին տարիներին Վրաստանի պատմաբանների մեջ բանավեճ է գնում Գրական բյուրոյի անվան և գործունեության ոլորտի շուրջը։ Պ. Վ. Գ. Էխաշվիլին իր «Վ. Ի. Լենինը և Վրաստանի բոլշևիկյան կազմակերպությունները» մենագրության մեջ (Թբիլիսի, 1959, վրացերեն, էջ 176—190, հինգերորդ գլխի առաջին պարագրաֆ) հենվելով որոշ նյութերի վրա, գտնում է, որ Գրական բյուրոն 1907—1909 թթ. ոչ թե համակովկասյան ղեկավար օրգան էր, այլ փոխարինում էր Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեին։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների պատմության ուրվագծերում նշում է, որ Գրական բյուրոն ոչ միայն Թիֆլիսի, այլ ամբողջ Կովկասի բոլշևիկյան կենտրոնն էր։ Մենք հակված ենք ճիշտ համարելու վերջին կարծիքը, որը, ի դեպ, «Վրաստանի կոմկուսի պատմության ուրվագծերում»-ում պաշտպանել է նաև Վ. Գ. Էխաշվիլին։

30 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, գ. 331։

31 Տե՛ս «Հեղափոխական կոչեր և թռուցիկներ», 1902—1921, Երևան, 1960, էջ 295—365։

1907—1910 թթ. հայերեն հազարավոր օրինակներով տպագրվեցին և տարածվեցին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի «Ընկեր բանվորներ» (1907 թ. օգոստոս), «Ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր» (1907 թ. սեպտեմբեր), «Քաղաքացիներ» (սեպտեմբեր, 1907 թ.). «Ընկերնե՛ր և քաղաքացինե՛ր» (փետրվար, 1908 թ.), «Բոլոր բանվորներին» (ապրիլ, 1908 թ.), «Կառավարության նոր ավանտյուրան» (մայիս, 1909 թ.), ՌՍԴԲԿ Բորչալուի կոմիտեի՝ («Երկրորդ Պետական դուման արձակված է» (1907 թ.), ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի «Ընկերներ» (մայիս, 1909 թ.) և այլ կոչերն ու թռուցիկները: Առանձին թերթիկով հրապարակվեցին ՌՍԴԲԿ V (Լոնդոնի) համագումարի որոշումները, այդ թվում՝ «Կուսակցության վերաբերմունքը դեպի ոչ պրոլետարական կուսակցությունները», «Պետական դումայի մասին», «Բանվորական համագումարի և բանվորական անկուսակցական կազմակերպությունների մասին», ինչպես նաև պրոֆեսիոնալ միությունների, պարտիզանական գործողությունների, զորքի մեջ գործելու և այլ հարցերի մասին[32]:

Երկրորդ պետական դումայի արձակման առթիվ ՌՍԴԲԿ Բորչալուի կոմիտեի թռուցիկը, որ կարևորագույն վավերագրերից է, աշխատավոր մասսաներին պարզաբանում էր ժողովրդի նկատմամբ ցարի սարքած որոգայթները, խորհուրդ էր տալիս «կազմակերպվել, և խտացնել հեղափոխական շարքերը»[33], քանի որ հեղափոխության միջոցով կարելի է ձեռք բերել ներկայացված պահանջները: Բաքվի բոլշևիկների 1909 թ. «Ընկերնե՛ր» թռուցիկում հանրագումարի են բերված Բաքվի պրոլետարիատի մայիսյան քաղաքական ելույթները, ուշադրություն է նվիրվում տեղատվության պայմաններում կուսակցական կազմակերպությունների աշխատանքն ավելի կուռ դարձնելու և գաղափարապես ամրապնդելու հարցերին:

Գրվատելով Բաքվի պրոլետարիատի ծառայությունները, նրա կայունությունը, կռվածությունը, թռուցիկում գիտակից բանվորներին, աշխատավոր մասսաներին կոչ էր արվում համախմբվել

32 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, գ. 322, գ. 335, ՄԼԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 3, գ. 183, ֆ. 33, գ. 589, գ. 642 և այլն նաև՝ «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ, 1902—1921», Երևան, 1960, էջ 319—363։ Ադրբեջանական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 46, ցուց. 20, գ. 11, թ. 170—177, «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, 1962, էջ 13—15։

33 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, գ. 322։

ՌՍԴԲԿ-ի կարմիր դրոշի ներքո, ընդլայնել և ամրապնդել նրա շարքերը: Միայն կազմակերպվածությամբ, հետևողական ու համարձակ պայքարով կարելի է հաղթել ինքնակալությանը[34]:

Տեղատվության տարիներին բոլշևիկյան շատ քիչ թերթեր էին հրատարակվում: Ամբողջ երկրում լույս են տեսել շուրջ 30 անուն պարբերական, որոնք շատ կարճ կյանք են ունեցել: Անգամ այդ ծանր պայմաններում Անդրկովկասի բոլշևիկները, հավատարիմ իրենց ինտերնացիոնալիստական ավանդույթներին, շարունակում էին օգտագործել եղած հնարավորությունները: Բաքվում ռուսերեն հրատարակվող բոլշևիկյան «Գուդոկ» արհմիութենական թերթում հաճախ հայերեն տպագրվում էին բանվորներին հուզող հարցերի վերաբերյալ տարաբնույթ նյութեր: «Գուդոկ»-ը հրատարակում էր նաև հայերեն հանրամատչելի թերթիկներ:

Բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպություններ և խմբեր էին գործում Երևանում, Ալեքսանդրապոլում, Ալավերդում, Ղափանում, Կարսում, Իգդիրում և Հայաստանի այլ վայրերում: Իր ակտիվությամբ աչքի էր ընկնում ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը: Գ. Սոկոլովսկին, որ գլխավորում էր կազմակերպությունը, Ստ. Շահումյանի առաջարկությամբ ընտրվում է ՌՍԴԲԿ V (Լոնդոնի) համագումարի պատգամավոր[35]:

Երևանում ակտիվ աշխատանք էին կատարում Լևոն Տեր-Հովսեփյանը, Ն. Մաղնեչյանը, Գևորգ Աթարբեկյանը, Կոստանդին Ալավերդովը (Ալավերդյան) և ուրիշներ: Երևանի կազմակերպությունը մեծ գործ կատարեց Շուստովի, Սարաջևի գինու-կոնյակի, Տեր-Ավետիքովի մեխանիկական գործարաններում, կայազորում, ուսուցչական սեմինարիայում բոլշևիկների ղեկավարությամբ

---

34 Տե՛ս Ադրբեջանական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 46, ցուց. 20, գ. 11, թթ. 179—180: Թռուցիկի մեկ օրինակը 1909 թ. մայիսյան օրերին Բաքվի ժանդարմական վարչությունը հայերենից ռուսերեն է թարգմանել և ներկայացրել իր վերադասին:

35 Տե՛ս Գ. Սոկոլովսկու 1934 թ. հունվարի 31-ի նամակը Մարքս-Էնգելս-Լենինի ինստիտուտին և «Պրավդա»-ի խմբագրությանը: Այն պահվում է Կենտրոնական կուսակցական արխիվում:

Նամակի մեքենագիր օրինակը գտնվում է մեր ձեռքի տակ: «ՌՍԴԲԿ հինգերորդ համագումարում ես հարում էի բոլշևիկյան ֆրակցիային,— գրել է Գ. Սոկոլովսկին,— բոլշևիկների հետ միասին մասնակցել եմ բոլոր խորհրդակցություններին և հիմնական հարցերում քվեարկել նրանց օգտին: Այդ ժամանակ ես Երևան քաղաքի և նահանգի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության նախագահն էի և հինգերորդ համագումարի պատգամավորության համար իմ թեկնածությունն առաջադրել էր հանգուցյալ Ստ. Շահումյանը»:

սանձվեց շինարար բանվորների միություն, որի մեջ ընդգրկվեց մոտ 150 մարդ[36]։

Տեղատվության տարիներին Հայաստանի բոլշևիկների կյանքում կարևոր տեղ են գրավում Բորչալուի կազմակերպության 1907 թ. կոնֆերանսը, 1908 թ. ապրիլի 15-ի խորհրդակցությունը և այլ միջոցառումներ, որոնք առաջին հերթին ուղղված էին մենշևիկների պառակտիչ գործողությունների դեմ։ Բորչալուի կազմակերպությունում իրենց աշխատանքով աչքի էին ընկնում Սիմոն Էվոյանը, Շաքար Բեժանյանը, Անուշավան Բումանյանը և ուրիշները[37]։ Բորչալուի բոլշևիկների 1907 թ. աշնանը տեղի ունեցած կոնֆերանսը, որին մասնակցում էին 13 գյուղական ս.-դ. կազմակերպությունների 55 ներկայացուցիչ, քննարկեց գավառային կոմիտեի հաշվետվությունը գյուղացիական հարցը (հողի վարձակալության մասին) և բոլշևիկյան կազմակերպությունների խնդիրները։ Կոնֆերանսը տեղական բջիջներին առաջարկեց «է՛լ ավելի համախմբել գյուղացիներին ու գյուղական ընդհանուր ժողովներ կազմել և բողոքել ու չավելացնել (վարձագինը— Խ. Բ.) ոչ մի տոկոս, իսկ տվյալ գյուղին առաջարկված և գյուղացիների կողմից մերժված գումարը հարևան գյուղացիներին թույլ չտալ վճարելու։ Հարևան գյուղերում տանել բացատրական աշխատանք»[38]։

Բորչալուի կազմակերպության 1908 թ. ապրիլյան խորհրդակցությունը քննության առավ կուսակցական աշխատանքների բարելավման, ժողովուրդների բարեկամության ամրապնդման ու բուրժուական նացիոնալիզմի դեմ պայքարն ավելի ուժեղացնելու հարցերը։ Խորհրդակցությունը որոշեց ՌՍԴԲԿ Թիֆլիսի կազմակերպությունից խնդրել երկու փորձված պրոպագանդիստ՝ մեկը հայ, մյուսը՝ ադրբեջանցի։ Այնուհետև, որոշվեց վերակառուցել երկաթուղային բջիջը, ընտրություններ անցկացնել Հաղբատի չորրորդ բջիջում, ուժեղացնել պայքարը դաշնակցության ոտնձգությունների դեմ[39]։

Հայաստանի բոլշևիկների գործունեության մեջ կարևորագույն

---

36 Տե՛ս Գ. Սահակյանի. Երևան քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության պատմության համառոտ ակնարկ (1904—1910)։ Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք 1, էջ 100—113։

37 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4040, ց. 6, թ. 53։ Հ. Մելիքյան. Մարքսիստական կազմակերպությունները և նրանց պայքարը Լոռում (1899—1908 թթ.), Երևան, 1957։

38 Նույն տեղում։

39 Տե՛ս «Революционное движение в Армении 1905—1907 гг.», Сборник документов и материалов, 1955, стр. 235.

իրադարձություն էր 1908 թ. օգոստոսին Ստ. Շահումյանի ղեկավարությամբ Ջալալօղլում հրավիրված կուսակցական խորհրդակցությունը, որը հատկապես մշակեց ռեակցիայի պայմաններում Հայաստանի բոլշևիկների վերելքի քաղաքական գործունեության գըլխավոր ուղղությունը:

Բոլշևիկ բանաստեղծ Հակոբ Հակոբյանը, որ մասնակցել է այդ խորհրդակցությանը, 1908 թ. օգոստոսի 12-ին վտարանդիության մեջ գտնվող (Ժնև) Միխա Ցխակայային գրել է, որ այնտեղ հանդիպել է Ստ. Շահումյանին, Գ. Շահվերդյանին, Ս. Սպանդարյանին, Ա. Կախոյանին և հեղափոխական այլ գործիչների, որոնք հավաքվել էին կուսակցական կարևորագույն գործով[40]: 1908 թ. օգոստոսի 6-ին Արշավիր Մելիքյանին Ջալալօղլուց ուղարկված մի նամակում ասված է, «Շահումյանը ամսույս 15-ին այստեղ կլինի, գուցե այդ ավելի ձեզ հետաքրքրի և ավելի լավ տրամադրությամբ կգար»[41]:

Հայաստանի բոլշևիկները թեժ գաղափարամարտում ջախջախիչ հարվածներ հասցրին մենշևիկներին, մերկացրին նրանց պառակտիչ գործողությունները, բարձր պահելով կայուն լենինյանների վսեմ կոչումը: Թեև ռեակցիայի տարիներին ծանր հալածանքների էր ենթարկվել Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը (նրա ակտիվ գործիչներից շատերը բանտարկվել էին), այնուամենայնիվ, հեղափոխական ավանդույթներով հարուստ Ալեքսանդրապոլում, կուսակցական աշխատանքը ընդհատակյա պայմաններում շարունակվում էր: Ռուսական առաջին հեղափոխության բովով անցած բանվորները, որոնք ցարիզմի դեմ մղված գոտեմարտում քաղաքական պայքարի մկրտություն էին ստացել, ռեակցիայի պայմաններում միավորվել էին արհմիություններում, համախմբվել լեգալ կազմակերպությունների շուրջը և պատրաստվում էին գալիք մեծ իրադարձությունների: Կուսակցական աշխատանքը քաղաքում ղեկավարում էին Աղասի Շահինյանը, Վասիլ Խաչատրյանը և ուրիշներ: Հայ մարքսիստները ուժեղացրին պայքարը հակալենինյան գաղափարախոսության դեմ, մերկացրին «Միտք» ժողովածուի շուրջ համախմբված հայ մախիստներին: Բուրժուա-

40 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 157, оп. 2, ед. хр. 57, л. 1–2; «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1962:

41 Նամակը մեզ է տրամադրել Արշ. Մելիքյանի կինը՝ Ե. Ն. Սոկոլովսկայա-Մելիքյանը:

կան ռեակցիոն փիլիսոփայության և ռևիզիոնիզմի դեմ մղվող պայքարում հզոր զենք հանդիսացավ Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը։

8

1909 թ. մայիսին Մոսկվայի «Զվենո» հրատարակչությունը լույս ընծայեց Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ։ Քննադատական նյութեր մի ռեակցիոն փիլիսոփայության մասին» աշխատությունը։ Իլյիչն իր այդ երկի վրա աշխատեց Ժնևում և Լոնդոնում՝ շուրջ ութ ամիս։ Բացի Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններից նա ուսումնասիրեց ավելի քան 200 անուն գիրք, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն, նորից կարդաց Գ. Պլեխանովի, Լ. Ֆոյերբախի, Ֆ. Մերինգի և այլոց փիլիսոփայական աշխատությունները։

«Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ»-ի առաջին հրատարակությունը շատ շուտ մեծ տարածում գտավ։ Այն հավասարապես դասվեց Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի փիլիսոփայական այնպիսի դասական երկերի շարքին, ինչպիսիք են՝ «Փիլիսոփայության աղքատությունը», «Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը», «Անտի Դյուրինգ» և այլն։

Ստոլիպինյան ռեակցիայի ծանր տարիներին մեկը մյուսի ետևից հրապարակ իջան բազմաթիվ գրքեր, հոդվածներ, որոնցում խեղաթյուրվում, «հերքվում» էին մարքսիստական դիալեկտիկայի և պատմական մատերիալիզմի արմատական դրույթները։ Փույթ չէ, որ նրանց հեղինակները հանդես էին գալիս զանազան անուններով (էմպիրիոկրիտիկներ, էմպիրիոսիմվոլիստներ, էմպիրիոմոնիստներ), բայց նրանց բոլորի էությունը նույնն էր։ Միավորվելով մարքսիստական փիլիսոփայության դեմ կազմակերպված արշավին, նրանք ջանում էին բուրժուական գաղափարախոսություն սերմանել։ Հակամարքսիստական զինանոցում հատկապես աչքի էր ընկնում էմպիրիոկրիտիցիզմը՝ «քննադատական փորձի» փիլիսոփայությունը, որի հիմնադիրներն էին ավստրիական ֆիզիկոս ու փիլիսոփա Էռնստ Մախը և գերմանական փիլիսոփա Ռիխարդ Ավենարիուսը։

Լենինյան աշխատության ստեղծմանն անմիջական առիթ ծառայեցին ռուսական մախիստների՝ Վ. Բազարովի, Ա. Բոգդանովի, Յա. Բերմանի, Օ. Գելֆոնդի, Պ. Յուշկևիչի և Ս. Սուվորովի աշխա-

տությունները։ «Ես կարդացի բոլոր հոդվածները, բացի Սուվորովինը (դա կարդում եմ),— 1908 թ. փետրվարի 25-ին Վ. Ի. Լենինը գրել է Մաքսիմ Գորկուն,— և յուրաքանչյուր հոդվածից ուղղակի կատաղում էի զայրույթից։ Ո՛չ, դա մարքսիզմ չէ։ Եվ խրվում են մեր էմպիրիոկրիտիկները, էմպիրիոմոնիստները և էմպիրիոսիմվոլիստները ճահճի մեջ»[42]։

1908 թ. ապրիլին, Կ. Մարքսի մահվան 25-ամյակի կապակցությամբ, Վ. Ի. Լենինը տպագրության հանձնեց «Մարքսիզմ և ռևիզիոնիզմ» նշանավոր հոդվածը, որով անողոք պատերազմ հայտարարեց ռևիզիոնիստներին։ Համոզիչ փաստերով և իրեն հատուկ գիտական խոր ընդհանրացումներով Իլյիչը ցույց տվեց, որ ռևիզիոնիզմը միջազգային երևույթ է, որը դասակարգային խոր արմատներ ունի կապիտալիստական հասարակության մեջ։ Քանի դեռ կապիտալիզմը գոյություն ունի, գոյություն կունենա և ռևիզիոնիզմը։ Ուստի անհրաժեշտ է հետևողական պայքար մղել ռևիզիոնիզմի դեմ, հանուն մարքսիզմի անաղարտության։

«Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ Մախը և բուրժուական մյուս փիլիսոփաները «էմպիրիոկրիտիցիզմ»-ի դիմակի տակ ներմուծում են մատերիալիզմի մարտնչող թշնամի՝ Բերկլիի հայացքները։

Բոլշևիկյան կուսակցության աշխարհայացքի, նրա փիլիսոփայության, մարքսիզմի հիմունքների պաշտպանության և հետագա զարգացման գործում անգնահատելի դեր խաղաց Վ. Ի. Լենինի փիլիսոփայական հռչակավոր գիրքը։ Այն մի ամբողջ դարաշրջան կազմեց մարքսիստական փիլիսոփայության զարգացման մեջ։ Նա իր հանճարեղ աշխատությամբ ետ մղեց բուրժուական գաղափարախոսների և ռևիզիոնիստների գրոհները փիլիսոփայական մատերիալիզմի դեմ, փաստական հարուստ նյութի հիման վրա ապացուցեց, որ աշխարհի գիտական պատկերը տալիս է միայն մեկ փիլիսոփայություն՝ դիալեկտիկական մատերիալիզմը, լուծեց մեծագույն խնդիր՝ բնագիտության նորագույն հայտնագործությունների մարքսիստական ընդհանրացումը, պաշտպանեց և զարգացրեց մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը, մարքսիստական մատերիալիստական դիալեկտիկան, պատմական մատերիալիզմը, զարգացրեց և հիմնավորեց փիլիսոփայության կուսակցականության սկզբունքը։ Իր հռչակավոր գրքում Վ. Ի. Լենինը

42 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 13, էջ 578։

տվեց մատերիայի դասական սահմանումը. մատերիան օբյեկտիվ ռեալություն է, որը գոյություն ունի մարդկային գիտակցությունից անկախ և արտապատկերվում է նրա կողմից, աշխարհը հավերժաբար շարժվող և զարգացող մատերիա է։

Ռեակցիայի ժամանակաշրջանում Վ. Ի. Լենինը պաշտպանեց և զարգացրեց բոլշևիկյան կուսակցության տեսական հիմքերը, առաջ մղեց աշխատավոր մասսաների պայքարում կուսակցության ղեկավար դերի մասին ուսմունքը, կուսակցության՝ որպես պրոլետարիատի դասակարգային կազմակերպության բարձրագույն ձևի նշանակության մարքսիստական ըմբռնումը։

Վ. Ի. Լենինի կարևորագույն ծառայությունն այն է, որ նա տվեց մատերիալիզմի ամենահետևողական ու բազմակողմանի հիմնավորումը և, խորացնելով աշխարհի նյութականության ու նրա զարգացման օրենքների օբյեկտիվ բնույթի վերաբերյալ գիտական պատկերացումները, ամրապնդեց, ընդլայնեց հասարակության վերաբերյալ Կ. Մարքսի ուսմունքի մատերիալիստական հիմունքները։ Մարքսիզմի քաղաքական գիծը անխզելիորեն կապված է նրա փիլիսոփայական հիմքերի հետ։

Վ. Ի. Լենինը զարգացրեց Ֆ. Էնգելսի հայտնի բանաձևումը մատերիայի ու գիտակցության հարաբերակցության՝ փիլիսոփայության այդ հիմնական հարցի մասին։ Սուբյեկտիվ իդեալիզմի և ագնոստիցիզմի դեմ մղվող պայքարում նա հարստացրեց աշխարհի ճանաչողության մասին ուսմունքը՝ արտացոլման տեսությունը։ Վ. Ի. Լենինն իր հանճարի ողջ ուժով ապացուցեց, որ մարդը փոշեհատիկ չէ Երկիր մոլորակի վրա, նա հսկա է, քանի որ զինված է մտքով, իմացությամբ և գիտությամբ։ «Էմպիրիոկրիտիկները» պնդում էին, թե ուղեղը մտքի օրգան չէ, հետևաբար հնարավոր է միտք առանց ուղեղի։ Վ. Ի. Լենինը նման «փիլիսոփայությունը» որակեց անուղեղ և անապացույց։ Չի կարելի հաջողությամբ մարտնչել պրոլետարական հեղափոխության, սոցիալիզմի և կոմունիզմի համար, առանց պաշտպանելու գիտական, մարքսիստական աշխարհայեցողության անաղարտությունը։

Հանձին մարքս-լենինյան փիլիսոփայության, ժողովրդական մասսաները, հիրավի՛, ունեն անփոխարինելի հոգևոր զենք, իսկ փիլիսոփայությունը՝ հանձին բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների՝ անխորտակելի նյութական ուժ։ Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունը տեսական սուր զենք հանդիսացավ բոլշևիկների ձեռքում։ Այն բոլշևիկները մեծ

հետաքրքրությամբ ընդունեցին Ռուսաստանում։ Այս երկը խոր տպավորություն թողեց բոլշևիկյան կադրերի, պրոֆեսիոնալ հեղափոխականների, առաջավոր մտավորականության վրա։ «Բակինսկիե վեստի» թերթի 1909 թ. մայիսի 19-ի համարում «Տ-ն» ստորագրությամբ լույս տեսավ Պ. Ջափարիձեի գրախոսությունը «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքի մասին։ Նրանում ասված է, թե Վ. Ի. Լենինի աշխատությունն ամենից առաջ նվիրված է Մախի, Ավենարիուսի և նրանց ռուս աշակերտների ուսմունքի քննադատությանը, որ նրա հեղինակը «օժտված լինելով պատկառելի էրուդիցիայով վերջին երկու դարերի փիլիսոփայական գրականության մեջ, բավականաչափ ծանոթ է նաև բնագիտության արդի վիճակին», անհերքելիորեն բացահայտում է փիլիսոփայության մեջ մախիստական ուղղության ռեակցիոն բնույթը, նրա վերադարձը դեպի Բերկլիի սուբյեկտիվ իդեալիզմը։ Պ. Ջափարիձեն ջերմորեն պաշտպանելով Վ. Ի. Լենինի փիլիսոփայական երկը, նշում է, թե մահացու շարադրման պարզությամբ հավլագեղ քննադատության հետ մեկտեղ, հեղինակը զուգահեռաբար զարգացնում է նաև դիալեկտիկական մատերիալիզմի հայացքները քննարկվող հարցերի վերաբերյալ, իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելով արմատական հարցի, իդեալիզմի և մատերիալիզմի միջև եղած վիճի վրա, կեցության և գիտակցության հարցի վրա»[43]։

Լենինյան աշխատության մասին «Օդեսսկոյե օբոզրենիե» թերթի 1909 թ. հունիսի 5-ի № 439-ում լույս տեսավ Վ. Վորովսկու արժեքավոր հոդվածը։

Հայ ականավոր մարքսիստները՝ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը, Ա. Մյասնիկյանը, Ա. Բեկզադյանը, Ս. Կասյանը, Արշ. Մելիքյանը պաշտպանելով մարքսիզմի տեսական-փիլիսոփայական սկզբունքների անաղարտությունը, քննադատական կրակի տակ ուղղեցին մախիզմի, նրա ռուսական տարբերա-

---

[43] «Բակինսկիե վեստի», 19 մայիսի 1909 թ.։ Տե՛ս «Вопросы истории КПСС», 1969, № 8, стр. 113—114. «Տ-ն»-ի վերծանումը կատարել է Մ. Սիլագաձեն «Ցիսկարի» («Լուսաբաց») ժուռնալում հրապարակված հոդվածում (11, 1968). Ի. Վ. Ստալինը կարդալով «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունը 1909 թ. դեկտեմբերին բոլշևիկյան «Պրոլետարի» թերթին գրել է. «Книга Ильича является единственной в своем роде сводкой положений философии «гносеологии марксизма» (см. ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 558, оп. 1, ед. хр. 5225, л. 3 об.; «История Коммунистической партии Советского Союза, т. 2, М., 1966. *Г. Б. Гарибджанян*, В. И. Ленин и большевики Закавказья, М., 1971, стр. 103.

կի՝ «աստվածաշինարարների», ինչպես և նրանց հայ ջատագովների գրքերի վրա, բացահայտելով նրանց գաղափարախոսության սուբյեկտիվ իդեալիստական ու ագնոստիկական էությունը։ Ստ. Շահումյանը 1908—1910 թթ. գրած աշխատություններում, արտասահմանում գտնվող Ն. Կ. Կրուպսկայային, Մ. Ցխակայային և այլ գործիչներին ուղարկած նամակներում հիացմունքով էր խոսում Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մասին, լենինյան դիտակետից քննադատում էմպիրիոկրիտիցիզմը։ «Մենք հաստատ համոզված ենք Իլյիչի դիրքավորման ճշտությանը,— 1908 թվականի հուլիսի 27-ին Ստ. Շահումյանը գրել է Մ. Ցխակայային,— մեծ անվստահությամբ ենք վերաբերվում էմպիրիոմոնիզմին»[44]։

Բոլշևիկ Միլտոն Ցիլիան 1910 թ. հոկտեմբերին Փարիզում հանդիպելով Վ. Ի. Լենինին, հաղորդել է, թե Անդրկովկասի բոլշևիկները մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրում են «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը։

Ցարիզմի դաժան հալածանքների պայմաններում բոլշևիկները հետևողականորեն պայքարում էին բուրժուական գաղափարախոսության և նրա կրողների դեմ, պսակազերծում անկումային տրամադրությունները։ Հեղափոխականները, Ռուսաստանի ազատության մարտիկները շարունակում էին դիմակայել հետադիմության հարվածներին։ Ստ. Շահումյանը 1908 թ. նոյեմբերին Մ. Ցխակայային ուղարկած նամակում գրել է. «Աշխատանքի պայմանները սոսկալի դժվարացել են, մեզ տառացիորեն խաչում են, ամեն կողմից թքակոծում են, ստորացնում։ Բացի դրանից, ռեակցիան բանվորների մեջ (ներքին ռեակցիան) օրեցօր ուժեղանում է, մեզ երբեմն լքում են բանվորներին պատկանող լավագույն ընկերները, բայց մենք չենք վհատվում։ Հավատը դեպի ապագան և սերը դեպի մեր գործը անսպառ եռանդ են ներշնչում մեզ... Եվ ահա մնալով այսպես փոքրաթիվ, այդքան դժվարին ու բարդ աշխատանքի հանդեպ, ինչպիսին մեր աշխատանքն է այստեղ, մենք ծանրաբեռնված ենք ամեն տեսակի գործերով ու հոգսերով... Ցավոք սրտի մեր պայմաններում ոչ մի հնարավորություն չկա լրջորեն փիլիսոփայությամբ զբաղվելու»[45]։

---

44 Ստ. Շահումյան, *Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 159։ Նույնը տե՛ս* Ս. Շահումյան, *Երկեր, հատ. 2, Երևան, 1957, էջ 40։*

45 Ստ. Շահումյան, *Նամակներ, 1896—19718, Երևան, 1959, էջ 162—163, նույնը տե՛ս* Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 2, էջ 66—67։*

Այսուհանդերձ, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Բեկզադյանը, Ա. Մյասնիկյանը, Ա. Մելիքյանը և ուրիշ հայ մարքսիստներ զբաղվում էին փիլիսոփայության ուսումնասիրությամբ, ելակետ ունենալով Վ. Ի. Լենինի աշխատությունները։ «Պետք է ասել,— 1908 թ. հուլիսի 27-ին գրել է Ստ. Շահումյանը Մ. Ցխակայային,— որ մենք էլ այստեղ սկսել ենք խիստ հետաքրքրվել փիլիսոփայությամբ, ընթերցում և վերընթերցում ենք Դիցգենին, Պլեխանովին, Բոգդանովին և այլն...[46]։ Իսկ դրանից երեք ամիս անց, 1908 թ. նոյեմբերի սկզբին, գրել է. «Համենայնդեպս, էմպիրիոմոնիզմի երեք հատորները շարունակ իմ սեղանի վրա են և ըստ հնարավորին կարդում եմ դրանք։ Ես կարդացի նրա (Բոգդանովի— Խ. Բ.) «Հասարակության հոգեբանությունից»-ը։ Մինչև այժմ իմ կարծիքը ծայրաստիճան բացասական է։ Կեցության ու գիտակցության նույնության վրա նրա դրույթը, ըստ իս, կործանում է Մարքսի ամբողջ սիստեմը»[47]։

Այստեղ ամեն ինչ ասված է։ Դիալեկտիկական մատերիալիզմը Շահումյանը լավ էր յուրացրել։

Ստ. Շահումյանն իր «Ռեֆերատ ազգային հարցի մասին» աշխատությունում նշել է. «Ով ծանոթ է բուրժուական փիլիսոփայության և հասարակական գիտությունների մեջ այժմ իշխող «էմպիրիոկրիտիցիզմ» կոչվող «նոր» ուղղության հետ, նրա համար հասկանալի կլինի, որ այդ երևույթը մի բացառիկ և պատահական երևույթ չէ։ Նույնացնել իրականությունը «գիտակցության» հետ, «գաղափարի» հետ և ապա ժխտել այդ իրականությունը հանուն վերացական «գաղափարի», հետո միստիկական ու ֆանտաստիկական կերպարանքով ներկայացնել կենդանի հասարակական պրոբլեմները և միամիտ ընթերցողների աչքերին թոզ փչել, շփոթություն առաջացնել անգիտակից մասսաների ուղեղներում,— ահա թե ինչ է տալիս հասարակական գիտությունների մեջ «կրիտիցիզմը», բուրժուական փիլիսոփայության այդ «վերջին խոսքը»[48]։

Ա. Մյասնիկյանը բարձր գնահատելով Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության նշանակությունը բուրժուական գաղափարախոսության, սուբյեկտիվ իդեալիզմի դեմ մղված պայքարում, «Վ. Ի. Լենինը որպես թեորետիկ» հոդվածում

---

46 Ստ. Շահումյան, *Երկեր*, հատ. 2, էջ 42։

47 Ստ. Շահումյան, *Նամակներ, 1896—1918*, Երևան, 1959, էջ 163։

48 Ստ. Շահումյան, *Երկեր*, հատ. 2, էջ 229։

գրել է. իդեական հոսանքների պայքարի այդ ժամանակաշրջանում Լենինը հավատարիմ մնաց իր հեղափոխական բնագծին։ Նա խորանում է մարքսիզմի փիլիսոփայական ուսումնասիրության մեջ։ 1908 թ. սկզբներին լույս է տեսնում նրա ոչ մեծ հոդվածը՝ «Մարքսիզմը և ռևիզիոնիզմը», որտեղ նա նշում է այն խոր վիհը, որ ընկած է մարքսիզմի և ռևիզիոնիզմի փիլիսոփայության միջև, դիալեկտիկական մատերիալիզմի և էմպիրիոմոնիզմի, նեոկանտականության և այլ զանազան անուններ կրող իբրև թե մատերիալիզմի միջև։ «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մեջ Վ. Ի. Լենինը սուր քննադատության է ենթարկում խորամանկորեն փիլիսոփայող «մարքսիստ», աստվածորոնողներին», մախիստներին, որոնք կատարում էին մենշևիկների «տակտիկական օպորտունիզմը քննադատելու դրոշի տակ հին ռեակցիոն հնոտին անցկացնելու խորապես սխալ փորձերը»։ Այդ գիրքն ընթերցողին ապշեցնում է հեղինակի փիլիսոփայական վիթխարի էրուդիցիայով, ամենածանրակշիռ պրոբլեմների պարզորոշ, ծայր աստիճան հասկանալի հարցադրումներով և խոր ու հետևողական հեղափոխականությամբ։ Իլյիչի «Մատերիալիզմը» մեկընդմիշտ որոշեց մեր կուսակցության, բոլշևիզմի տեղը որպես իսկական սոցիալիստական շարժում և միակ մարքսիստական հոսանք[49]։

Ռեակցիայի տարիները, ասում է Ա. Մյասնիկյանը, թեորիական ու կազմակերպական նոր պառակտում առաջ բերեցին Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատների շարքերում։ Մի կողմից՝ «լիկվիդատորները», իսկ մյուս կողմից՝ ամեն տեսակ «աստվածորոնողները»՝ էմպիրիոմոնիստները, էմպիրիոկրիտիկները և զանազան գույնի ու կարգի իդեալիստները մի ամբողջ արշավանք սկսեցին ռուսական մարքսիզմի դեմ[50]։

Ուշագրավ է Ա. Մյասնիկյանի «Հայկական մանչեստրականությունը» հոդվածը, որը գրել է 1914 թ. Մոսկվայում։ Բայց, ինչպես ինքն է նշել, ինչ-ինչ պատճառով մինչև 1924 թ. անտիպ է մնացել։ Այն առաջին անգամ լույս է տեսել 1924 թ.՝ «Նորք» հանդեսում։ Հոդվածում արծարծված գաղափարները ժամանակին ծանոթ էին հայ մարքսիստներին, առանձին դրույթներ հեղինակը շոշափել է նաև իր մյուս աշխատություններում, որոնք լույս են տեսել 1908—1914 թվականներին։

---

49 Ա. Մյասնիկյան, *Ընտիր երկեր*, Երևան, 1957, էջ 266։

50 *Նույն տեղում*։

Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Մյասնիկյանը, Արշ. Մելիքյանը և նրանց համախոհներն իրենց աշխատություններում ցույց էին տալիս մախիզմի գաղափարական սնանկությունը, մատնանշում, որ էմպիրիոկրիտիցիզմը իդեալիզմի տարատեսակներից է և ոչ մի կապ չունի կյանքի հետ, բանվոր դասակարգի հեղափոխական աշխարհայացքի հետ[51]:

Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունը, որը ՍՍՀՄ-ում հրատարակվել է ավելի քան 5 միլիոն տպաքանակով, հատու զենք է բուրժուական գաղափարախոսության դեմ մղվող պայքարում, ծանրակշիռ ավանդ մարքսիզմի գանձարանում:

9

1917 թ. մարտի 3-ին ատրճանակի կրակոցով իր կյանքին վերջ տվեց Մոսկվայի քաղաքական գաղտնի ոստիկանության (Օխրանկայի) նախկին պետ Ս. Զուբատովը: Բանվորական հեղափոխական շարժումները կոտորակելու, քաղաքական պայքարից շեղելու նրա մշակած ծրագիրը դարձավ ռուսական «ոստիկանական սոցիալիզմի» հիմքը: Զուբատովը միապետականության հավատարիմ ծառաներից էր: Դեռևս 1898 թ. նա մշակել էր բանվորական հեղափոխական շարժումը ջլատելու խորամանկ պլան: Նույն թվականի ապրիլի 8-ին ծավալուն զեկուցագիր է ներկայացնում Մոսկվայի օբեր պոլիցմեյստեր Դ. Տրեպովին, հիմնավորում այն միտքը, թե հարկավոր է Ռուսաստանում բանվորական շարժումը լեգալացնել, քանզի այդ ճանապարհով հնարավոր է բանվորներին հեռու պահել քաղաքական պայքարից և ինքնակալության օգտին պրոպագանդա ծավալել[52]: Լինելով մոլեռանդ միապետական[53], ոստիկանության դեպարտամենտի օգնությամբ նա ձեռնամուխ է լինում Մոսկվայում, Մինսկում, և այլուր գաղտնի գործակալների՝ «բանվոր նախաձեռնողների» հավաքագրմանը: Նրա ակտիվ գործակալներից

---

51 Սիմոն Տեր-Պետրոսյանը (Կամո) նույնպես հետաքրքրվել է փիլիսոփայական այդ ուղղություններով: Ցավոք սրտի, տեսականորեն նա ճիշտ չի ըմբռնել էմպիրիոկրիտիցիզմի նշանակությունը, չափից ավելին է հրապուրվել Բոգդանովի աշխատություններով:

52 Տե՛ս «Гражданин», 1906, № 3, стр. 4. «Исторические записки», т. 92, М., 1973.

53 1906 թ. դեկտեմբերի 12-ին Զուբատովը Լ. Բրուցևին գրած նամակում խոստովանել է. «Я монархист самобытный. На свое сальтик и потому глубоко верующий», см. *Б. Кузьмин*, С. В. Зубатов и его корреспонденты, М.—Л., 1928, стр. 64.

էին նախկին սոցիալ-դեմոկրատ Մ. Աֆանասևը (Մոսկվա), նախկին բունդական Մ. Վիլբուշևիչը (Մինսկ), Լև, Գլեբ և Իլյա Շենդրիկով եղբայրները (Բաքու) և ուրիշներ: Իր շուրջը հավաքելով լիբերալ մտավորականություն, ստեղծելով փոխադարձ օգնության դրամարկղներ, բանվորներին տնտեսական զիջումների միջոցով շեղելով քաղաքական պայքարից, Զուբատովը նույնիսկ վաստակել էր «սոցիալիստ» և «հեղափոխական» անունները, բայց իրականում նա բանվորական շարժման կատաղի թշնամին էր: 1901 թ. աշնանը Զուբատովը Պետերբուրգում ստեղծում է բանվորական լեգալ կազմակերպություններ, Մոսկվայից հրավիրում իր գործակալներից՝ բանվոր-զուբատովականների և հիմք դնում այն կորիզին, որը հայտնի է «Ռուսական ժողով» անունով: Ընկերության գլուխ է կանգնում գաղտնի քաղաքական ոստիկանության գործակալ Գապոն քահանան: ՌՍԴԲԿ Մոսկվայի, Պետերբուրգի կոմիտեները մերկացնում են Զուբատովին: ՌՍԴԲԿ Պետերբուրգի կոմիտեն 1903 թ. հրապարակեց «Տրեդյունիոնիզմի և սոցիալիզմի մասին» նշանավոր թռուցիկը, որի մեջ մերկացնում էր զուբատովականությունը, բանվորներին նախազգուշացնում հեռու մնալ նրանցից: «Զուբատովը ուզում է պղտոր ջրում ձուկ որսալ,— ասված է Պետերբուրգի բոլշևիկների թռուցիկում,— իհարկե, հարկավոր է միություններ կազմել, ժողովներ անել, բայց և պետք է խելք ունենալ և չհավատալ լրտեսների փաղաքշական խոսքերին»[54]: Այնուհետև նշվում էր, թե Զուբատովի բանվորական միությունները ոչ թե տրեդյունիոնիստական են, այլ լրտեսական, որտեղ ավելի հաչող կերպով կարելի է հետևել կրթված, հեղափոխական բանվորներին և բանտ նետել: Զուբատովականներն օգտագործում էին բեռնշտեյնականությունը, «լեգալ մարքսիզմը», բուրժուական լիբերալների բանվորական հարցի վերաբերյալ դրականությունը: Դա ավելի էր մոլորեցնում բանվորներին:

1904 թ. փետրվարի 15-ին հաստատվում է զուբատովական կազմակերպության կանոնադրությունը. դարանակալ Գապոնը գործի է անցնում: Նա շրջագայում է Մոսկվայում, Կիևում, Խարկովում, Պոլտավայում և այլ քաղաքներում, ստեղծում «Ռուսական ժողովի» մասնաճյուղեր: Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին զուբատովյան կազմակերպությունների շարքերում կար 10 հազար մարդ: Զուբատովականությունը՝ «ոստիկանական սոցիալիզ-

54 «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ»; 1902—1921, Երևան, 1960, էջ 51:

մի» եզրափակիչ շրջանը գապոնականությունն էր։ Վ. Ի. Լենինը բացահայտել է նրա հետադիմական բնույթը։ Զուբատովը, Տիխոմիրովը և Գապոնը «ֆեոդալական սոցիալիզմի» ջատագովներն էին։ Ռուսական «ոստիկանական սոցիալիզմը» առաջացավ ի հակադրություն բանվորական հեղափոխական շարժման և բանվորների շրջանում գիտական սոցիալիզմի գաղափարների տարածման։ «Բանվորները, գրել է Վ. Ի. Լենինը,— ոստիկանական արգելումները փաստորեն անզոր դարձրին...»[55]։

Զուբատովականությունն իր շոշափուկները տարածել էր Կովկասում, մասնավորապես Բաքվում, որը Շենդրիկով եղբայրների անունով կոչվեց շենդրիկովշչինա։ 1904 թ. սկզբներին Աստրախանից Բաքու են գալիս Լև, Գլեբ և Իլյա Շենդրիկով եղբայրները։ Նրանք Զուբատովի թելադրանքով այստեղ ստեղծում են «Բալախանի և Բիբի-Հեյբաթի կազմակերպություն», որը հետագայում կոչվեց «Բաքվի բանվորների միություն»։ Շենդրիկովշչինան զուբատովյան կազմակերպություն էր, որը խնդիր ուներ Բաքվի բանվորներին հեռու պահել քաղաքական-հեղափոխական պայքարից։ Շենդրիկովականները պրովոկատորական կամպանիա էին մղում բոլշևիկների դեմ, քաղաքականապես թույլ և հետամնաց բանվորների մի մասին տանում իրենց հետևից։

Առաջադրելով նեղ, ցեխային լոզունգներ, նրանք ջանում էին կազմալուծել գործադուլները, փորձում էին բանվորներին հաշտեցնել կապիտալիստների հետ։ Ցարական կառավարությունը և նավթարդյունաբերողներն ամեն տեսակ աջակցություն էին ցույց տալիս շենդրիկովականներին։ Կովկասի փոխարքայի տեղակալ Ջունկովսկին 30 հազար ռուբլի է տվել նրանց։ Թեև «Բաքվի բանվորների միությունը» (Շենդրիկովյան կազմակերպությունը) համարվում էր անկուսակցական, բայց Բաքվի մենշևիկները, ՌՍԴԲԿ խորհուրդը և մենշևիկյան «Իսկրա»-ն 1904 թ. այն ճանաչեցին որպես կուսակցական կազմակերպություն։ Բաքվի բոլշևիկները վճռական պայքար էին մղում շենդրիկովականների դեմ, բանվորներին պարզաբանում նրանց գործունեության վնասակարությունը։ Ա. Մ. Ստոպանին (Тур) 1905 թ. հունվարին Վ. Ի. Լենինին գրած նամակում

---

55 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 6, էջ 274։ Զուբատովականության մասին տե՛ս* *М. Григорьевский (М. Г. Лунц)*, Полицейский социализм в России. СПб., 1906. С. С. Айнзафт. Зубатовщина и гапоновщина, М., 1923. «Исторические записки», т. 92, М., 1973, стр. 109—152.

նկարագրում է Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության վիճակը, դատապարտում շենդրիկովականությունը, ողջունում «Վպերյոդ»-ի երևան գալը: Շենդրիկովականները,— ասում է նա,— բանվորական գործադուլներին, մասսայական աշխատանքներին ներարկում են իրենց լրտեսական մեքենայությունները, բացականչում՝ «կորչի քաղաքականությունը», «կորչի կոմիտեն»: Նրանց հռետորները, մասնավորապես Իլյա Շենդրիկովը՝ «այդ քրիստոսը», էսէսների հետ գործակցած մոլորեցնում են բանվորներին, հայտարարում՝ կոմիտեն վաճառվել է, գործակցեք միայն ոստիկանության, կապիտալիստների հետ: Վերջինս նրանք փողհարում են նույնիսկ թերթիկով[56]: Պ. Ջափարիձեն «Կուսակցության ՌՍԴԲԿ III համագումարում Բաքվի կոմիտեի զեկուցման» կոնսպեկտում նշել է, որ Բաքվի կոմիտեն բախվել է Աստրախանից եկած երկու պրոպագանդիստների (շենդրիկովների— Խ. Բ.) հետ, նրանց գործունեությունը վնասակար է[57]:

Ստ. Շահումյանն իր աշխատություններում, հատկապես 1908 թ. սկզբներին գրած՝ «Դեպի խորհրդակցություն բանվորական հինգ գարանտիաներով» գրքում մերկացրել է շենդրիկովականությունը: Այսպես են վարվել այն ժամանակ Բաքվում աշխատող Ի. Ստալինը, Ս. Սպանդարյանը և Պ. Ջափարիձեն: Ստ. Շահումյանը գրել է. «Եթե բանվորները ընդունեին «խորհրդակցության» առաջարկը, առանց հետաքրքրվելու պայմանների մասին, նրանք ցույց կտային, որ չեն հասկանում «խորհրդակցության» կարևոր նշանակությունը, և դրա հետևանքը կարող էր լինել այն, որ կապիտալիստները կխաբեին նրանց, ապարդյուն կդարձնեին նրանց տարիների կռիվը և զոհաբերությունները:

Այսպիսի խոշոր սխալ երկու անգամ արել է Բաքվի բանվորությունը, ավելի ճիշտ ասած նրա մի մասը, որ մասնակցել է կապիտալիստների առաջարկած խորհրդակցություններին՝ 1905 թ. դեկտեմբերին և 1906 թ. օգոստոսին: Առանց հարցնելու ինչպե՞ս, ի՞նչ պայմաններում, «շենդրիկովշչինա» կոչվող ցավով բռնված նավթարդյունաբերական բանվորների մի մասը կապիտալիստների առաջին հրավերով, աչքերը փակած, գցել է իրան կապիտալիստների և կառավարության ճանկերը: Ոչ մի օգուտ այդ տեսակ «խորհրդակցությունից», պարզ է, չէր կարող ստանալ բանվորու-

---

56 Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, թռուցիկների ֆոնդ:

57 Տե՛ս Պ. Ջափարիձե, Ընտիր հոդվածներ, ճառեր, նամակներ, 1905—1918, Երևան, 1970, էջ 17: ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 35, оп. 1, д. 3, л. 17.

թյուն։ Ամենալավ դեպքում նա հուսախաբություն, լքումն և կազմալուծում պետք է առաջացներ բանվորության շարքերում»[58]։

Ս. Սպանդարյանը 1908 թ. մայիսին «Բաքինսկի պրոլետարի» թերթի № 4-ում հրապարակված «Միավորողները» հոդվածում, մերկացնելով շենդրիկովականությունը, գրել է, թե Բաքվի կոմիտեն ամենաեռանդուն կերպով պայքարել և պայքարում է բանվորների կողմից մղվող պայքարի այլանդակ ձևերի դեմ։ Նա ստիպված է լինում,— ասում էր Սպանդարյանը,— հսկայական եռանդ թափել շենդրիկովշչինայի (Բաքվի մենշևիզմի) մնացուկների դեմ պայքարելու համար»[59]։

Բաքվի բոլշևիկները 1907—1908 թթ. վերջնականապես ջախջախեցին շենդրիկովականներին, մերկացնելով նրանց որպես ցարական պահնորդական բաժանմունքի վարձակալների[60]։ Նրանց գաղափարական ջախջախումը «ոստիկանական սոցիալիզմի» դեմ տարած հաղթանակներից էր։ Այն ուղի հարթեց բանվորական հեղափոխական կազմակերպությունների գործունեության ակտիվացման, հեղափոխական շարժումների հետագա ծավալման, բանվորների քաղաքական կոփվածությունը բարձրացնելու համար։

10

Ռեակցիայի տարիներին ցարական կառավարության և նրա գործակալների սանձարձակ հարձակումը՝ ռեպրեսիաներն ու հալածանքներն առաջին հերթին ուղղված էին բանվոր դասակարգի և նրա մարտական ավանգարդի՝ բոլշևիկյան կուսակցության դեմ։ Անդրկովկասում ռեակցիային ակտիվորեն նպաստում էին բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները, որոնց ընդհանուր խառնամբոխին ձայնակցում էին մենշևիկները։ Նրանք բանվորների շարքերում հուսալքություն և անկումային տրամադրություններ էին տարածում, քարոզում էին համակերպվել գոյություն ունեցող անարդարացի կարգերին, հրաժարվում էին հեղափոխական պայքարից։

---

58 Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 2, էջ 10։ Բաքվի* «Известия Совета рабочих депутатов» *թերթի 1905 թ. համարներում «Կայծ» ստորագրությամբ լույս տեսած հոդվածների հեղինակը ևս Շենդրիկովն է։*

59 Ս. Սպանդարյան, *Երկեր (երկու հատորով), հատ. 2, 1959, էջ 178։*

60 *Տե՛ս* Պ. Ջափարիձե, *Ընտիր հոդվածներ, ճառեր, նամակներ, 1905—1918, Երևան, 1970, էջ 385—386։*

Բաքուն, որպես Ռուսաստանի, մասնավորապես Անդրկովկասի հեղափոխական շարժումների կենտրոն, իր վրա էր գրավում թե՛ ցարական կառավարության և թե՛ բոլոր հակահեղափոխական կուսակցությունների ու հոսանքների ուշադրությունը։ Յուրաքանչյուրը ձգտում էր ամրանալ Բաքվում, իր ազդեցության տակ գցել բազմազգ պրոլետարիատի հոծ զանգվածներին։ Մենշևիկները, էսեռները, դաշնակցականները և հակալենինյան այլ կուսակցություններն իրենց գլխավոր ուժերը կենտրոնացրել էին Բաքվում։ Այսուհանդերձ, Բաքվի պրոլետարիատի ճնշող մեծամասնությունը հետևում և հավանություն էր տալիս բոլշևիզմին, որպես միակ հետևողական հեղափոխական, իսկական մարքսիստական կուսակցության։

Բաքվի բոլշևիկներն արտահայտելով երկրամասի հեղափոխական աշխատավորության ազատագրական այս տրամադրությունները, բարձր պահեցին լենինիզմի դրոշը։

Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը, Ա. Մյասնիկյանը, Ս. Կասյանը ինչպես միշտ, այնպես էլ այդ ժամանակաշրջանում հեղափոխական լենինյաններին հատուկ մեծ կամք և արիություն հանդես բերեցին։ Շահումյանն ու Սպանդարյանը որպես բացառիկ հեղափոխականներ և կայուն լենինյաններ գործնական աշխատանքի հետ միաժամանակ ժուռնալիստական-հրապարակախոսական բեղմնավոր գործունեություն են ծավալում, պրոպագանդում են մարքսիստական-լենինյան գաղափարները, խմբագրում բոլշևիկյան թերթեր, հանդես գալիս կրակոտ հոդվածներով, կոչ անում բանվորներին, աշխատավոր գյուղացիներին՝ երբեք չկորցնել հեղափոխության հաղթանակի նկատմամբ ունեցած հավատը և համոզված լինել, որ ամենամոտիկ տարիներին կսկսվի հեղափոխական նոր վերելք։

Թեև Հայաստանի բոլշևիկները 1908—1911 թթ. գրեթե հայերեն թերթեր չունեին, բայց հայ մարքսիստ հրապարակախոսներն ակտիվորեն աշխատակցում էին Բաքվում, Թիֆլիսում ռուսերեն հրատարակվող «Բակինսկի պրոլետարի», «Բակինսկի ռաբոչի», «Գուդոկ», «Վոլնա» և այլ պարբերականներին։

«Բակինսկի պրոլետարի» թերթի 1907 թ. համարներում տպագրված «Քաղաքական ակնարկներ» հոդվածաշարում Ս. Սպանդարյանը մարքսիստական-լենինյան վերլուծության է ենթարկել ռուսական ցարիզմի ներքին և արտաքին քաղաքականությունը, մեր-

կացրել իմպերիալիստական պետությունների գիշատիչ էությունը, նրանց դիվանագիտական կեղծությունն ու փարիսեցիությունը։ Անդրադառնալով երկրորդ պետական դումայի ընտրական կամպանիային, Ս. Սպանդարյանը սպանիչ քննադատության է ենթարկում Հայկական կուսակցությունների՝ կադետների, էսեռների և մենշևիկների դավաճանական տակտիկան, գիտականորեն հիմնավորում Ռուսաստանում հեղափոխության նոր վերելքի անխուսափելիությունը։ Նա գտնում էր, որ բոլշևիկյան կուսակցությունն ամբողջ ուժով պետք է բանվորներին ու աշխատավոր գյուղացիներին նախապատրաստի նոր հեղափոխության։ Ս. Սպանդարյանը մերժում էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը արևմտա-եվրոպական տիպի ռեֆորմիստական կուսակցության վերածելու մենշևիկյան փորձերը։

«Բաքվի կազմակերպության պառակտման առթիվ», «Միավորողները...» և այլ հոդվածներում, որոնք լույս են տեսել «Բակինսկի պրոլետարի» թերթում, Ս. Սպանդարյանը մերկացնում էր մենշևիկների պառակտողական, կազմալուծիչ տակտիկան, ցույց տալիս նրանց անսկզբունքայնությունը։

«Դասակարգային պայքարը և տնտեսական տեռորը» խորագրով հոդվածում, որը լույս է տեսել «Բակինսկի պրոլետարի» թերթի 1908 թ. մայիսի 15-ի համարում, Ստ. Շահումյանը ցույց է տալիս դասակարգային պայքարի նշանակությունը, դատապարտում տեռորը։ Արդյոք ինքնակալությունը տապալվեց այն բանից, որ սպանվել էր Ալեքսանդր II-ը,— ասում էր Շահումյանը և պատասխանում,— ո՛չ, նույնիսկ ընդհակառակը,— նա ամրապնդվեց Ալեքսանդր III-ի թագավորությամբ։ Արդյո՞ք որևէ բան կորցրեց ցարական կառավարությունը, երբ սպանեցին Պլեհեին։ Ընդհակառակը, նա ձեռք բերեց Ստոլիպինին, որը շատ ավելի խելացիորեն ու ավելի եռանդով էր պաշտպանում ինքնակալության շահերը։ Էլ ավելի քիչ կարող է վնասել բուրժուազիային տեռորը տնտեսական պայքարում։ Այն մաղաչափ էլ չի կարող խարխլել կապիտալիստական շահագործման հիմքերը։ Այն սարսափելի չէ նույնիսկ առանձին կապիտալիստների համար,— ասում էր Շահումյանը։

Ստ. Շահումյանը մեկնաբանում էր տնտեսական տեռորի վնասակարությունը, պարզաբանում այն անգիտակից բանվորների սխալ դատողությունները և գործելակերպը, որոնք կարծում էին, թե տիրոջ չար կամքն է աղքատության և կեղեքման պատճառը։ Բոլշևիկները մերժում են տնտեսական տեռորը, որը ուժեղ կերպով

խանգարում է ամենօրյա մասսայական-քաղաքական պրոպագանդային ու ագիտացիային: Մենք դատապարտում ենք անհատական տեռորը,— գրել էր Շահումյանը,— ոչ թե նրա համար, որ չենք ուզում «ահաբեկել», այսինքն վախեցնել, սարսափեցնել բուրժուազիային, ընդհակառակը, մենք մերժում ենք անհատական տեռորը հատկապես իբրև միջոց, որը բավականաչափ չի վախեցնում բուրժուազիային, այլ միայն կազմալուծում է պրոլետարիատին:

Մենք անհատական տեռորը մերժում ենք՝ հանուն մասսայական հեղափոխական տեռորի:

Տեղատվության ժամանակ Բաքվի բոլշևիկյան մամուլը պրոլետարիատի և աշխատավոր զանգվածների ջերմ պաշտպանն էր:

Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների պրոպագանդման, նրա հաղթանակին սատարելու ասպարեզում խոշոր դեր է խաղացել «Բակինսկի ռաբոչի» թերթը:

Բաքվի և Պետերբուրգի բոլշևիկյան մամուլում լույս տեսան Բ. Կնունյանցի կրակոտ հոդվածներն ու ճառերը: 1904 թ. փետրվարի վերջին ՌՍԴԲԿ Մոսկվայի կոմիտեի ստորագրությամբ հրատարակվեց Բ. Կնունյանցի կազմած «Ո՞վ է մեղավոր» թռուցիկը, որ մերկացնում էր ցարիզմի քաղաքականությունը: 1905 թ. բոլշևիկյան մամուլում և «Վպերյոդի» հրատարակությամբ առանձին բրոշյուրով լույս տեսավ Բ. Կնունյանցի «Դատ դատի դեմ» (Суд над судом) նշանավոր ճառը, որը նա արտասանել էր 1905 թ. մարտի 31-ին ցարական դատարանում, համարձակորեն մերկացնելով ինքնակալության վարած ազգային և սոցիալական քաղաքականությունը: «Դատեցեք, պարոնայք դատավորներ,— իսկ մեզ ձեզ հետ միասին կդատի հեղափոխությունը»,— այսպես էր ավարտել իր խոսքը անվեհեր հեղափոխականը: «Կազմակերպությունների մասին», «Դիմակը պատռված է», «Հեղափոխությունը գալիս է», «Կազմակերպվեք», «Բանվոր դասակարգին ընտրական ինչ իրավունք է հարկավոր», «Պայքար ութժամյա բանվորական օրվա համար», «Բանվորական դեպուտատների առաջին սովետը», «Նոր ինտերնացիոնալի յոթերորդ կոնգրեսը», «Նորից խորհրդակցության մասին» և այլ հոդվածներում ու աշխատություններում Բ. Կնունյանցը արձագանքել է ժամանակի հրատապ պրոբլեմներին, պրոպագանդել լենինյան գաղափարները:

Տակավին 1907 թ. Օբդորսկի (Սալեխարդ) աքսորավայրում Պետերբուրգի բանվորների դեպուտատների սովետի աքսորված

գործիչներին Բ. Կնունյանցը դիմում էր՝ «Մենք սովետականներս» արտահայտությամբ:

Անդրկովկասի բոլշևիկները ինչպես միշտ, տեղատվության ծանր օրերին ևս, հեղափոխական պայքարի առաջին գծում էին: Ստ. Շահումյանն ՝ արտահայտելով Երկրամասի հեղափոխական ուժերի միասնական կամքը, 1908 թ. գրել է. «Մենք՝ ամբողջովին Իլյիչի կողմն էինք»[61]:

---

61 Ստ. Շահումյան. *Երկեր*, հտ. 2, էջ 67:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵՐԿՈՒ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

1. Հակոբ Հակոբյանի («Պրոլետար») նամակները ժնև՝ Միխա Ցխակայային: 2. Կարլ Մարքս (1910), հայերեն գրքույկը: 3. Հեղափոխական շարժման նոր վերելքը: 4. Մարքսիստական հայ գրականագիտության ձևավորումն ու զարգացումը: 5. Բոլշևիկյան «Նոր խոսք» հանդեսը: 6.* Լենինյան «Մանուցումը» հայերեն: 7. Տարածել և խորացնել մարքսիզմը: 8. Ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի: 9. Պատերազմի բացերի միջով: 10. Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսների լույսը:

1

Պրոլետարական հայ պոեզիայի հիմնադիր, Անդրկովկասի հեղափոխական շարժումների ակտիվ գործիչ Հակոբ Հակոբյանը 1908—1914 թթ. սերտ նամակագրություն է ունեցել վտարանդիության մեջ գտնվող ականավոր բոլշևիկ Միխա Ցխակայայի հետ։ Իր նամակներում, որոնց մի մասը առաջին անգամ հրապարակվել է 1963 թ.[1]*, իսկ ամբողջությամբ գիտական շրջանառության մեջ է դրվում այժմ, արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին։ Տեղատվության շրջանում բոլշևիկ բանաստեղծը Միխա Ցխակայայի (Ռեկկոնենի) միջոցով վտարանդիության մեջ գտնվող ժնևյան ռուսական գործիչներին իրազեկ է դարձրել Կովկասի հեղափոխական կյանքին, արժեքավոր փաստեր հաղորդել Ստ. Շահումյանի, Պ. Ջափարիձեի, Գ. Օրջոնիկիձեի, Ս. Սպանդարյանի,*

---

[1] Խ. Բարսեղյան, *Հակոբ Հակոբյանի անտիպ նամակները, տե՛ս «Պատմաբանասիրական հանդես», № 1, 1963, էջ 211—233։*

Ցա. Ջինի, Դ. Շահվերդյանի, Ա. Կախոյանի, Ն. Աղաջանովայի (Աղաջանյան) և այլոց մասին: Նա նկարագրել է բոլշևիկների և մենշևիկների տարաձայնությունները ու ներկուսակցական պայքարը, բոլշևիկյան հրատարակությունների վիճակը, նյութեր է ուղարկել բոլշևիկյան «Պրոլետարի», «Սոցիալ-դեմոկրատ», «Պրավդա» և այլ թերթերին: Հ. Հակոբյանի նամակներում ուշագրավ մտքեր և տեսություններ են արտահայտված գրականության, արվեստի, բարոյականության, կուսակցականության, մարքսիզմ-լենինիզմի նկատմամբ ցուցաբերվող հավատարմության մասին: Հ. Հակոբյանը ակնածանքով է խոսում պրոլետարական գրականության հիմնադիր Մաքսիմ Գորկու, նրա հանճարի մասին: Նամակներում միաժամանակ զգացվում է բանաստեղծի՝ տեղատվության տարիների որոշ տատանումները, Ա. Բոգդանովի և նրա համախոհների նկատմամբ տածած համակրանքը, որը նա աստիճանաբար հաղթահարեց և բանվորական հեղափոխական շարժման նոր վերելքի ազդեցությամբ ամուր կանգնեց բոլշևիկյան դիրքերում:

Հ. Հակոբյանի Ժնև Միխա Ցխակայային գրած նամակները լույս են սփռում երկրամասում մարքսիզմ-լենինիզմի տարածման պատմության գիտական ուսումնասիրության վրա, օգնում են ճիշտ մեկնաբանելու չուսումնասիրված առանձին պրոբլեմներ:

1908 թ. օգոստոսի 12-ին Ջալալօղլուց Ժնև՝ Միխա Ցխակայային ուղղված նամակում Հ. Հակոբյանը պատմում է, որ հեղափոխական գործունեության համար ոստիկանությունը հետապնդում է իրեն, որի պատճառով էլ ինքը ժամանակավորապես հեռացել է Թիֆլիսից: Ջալալօղլում Հ. Հակոբյանը հանդիպել է Ստ. Շահումյանին, Ս. Սպանդարյանին և ուրիշների: Այստեղ ես տեսա Ստեփանին*, Դանուշին**, Տիմոֆեյին***, Բորչալուի ներկայացուցչին և մի քանի այլ ընկերների»[2]: Այնուհետև նա գրում է, որ Կովկասի բոլշևիկները 1908 թ. օգոստոսին, Բաքվի կոնֆերանսում՝ Ստ. Շահումյանի առաջարկությամբ ՌՍԴԲԿ V (Համառուսական) կոնֆերանսի պատգամավոր են ընտրել Վ. Ի. Լենինին: «Մանդատի առթիվ,— գրել է Հ. Հակոբյանը,— Ստեփանն ասում է՝ մանդատը հան-

---

* Ստեփան՝ Շահումյան:

** Դանուշ՝ Դ. Շահվերդյան:

*** Տիմոֆեյ՝ Ս. Սպանդարյան:

2 Հ. Հակոբյանի («Պրոլետար») Ժնև՝ Միխա Ցխակայային գրած նամակները տե՛ս ЦПА ИМЛ, ф. 157, оп. 2, д. 57, л. 1—62, տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես», № 1, 1963, էջ 211—235:

ձոնված է Լենինին»[3]: Հակոբյանը խնդրում է կանոնավոր ուղարկել «Պրոլետարին», պատրաստակամություն է հայտնում Թիֆլիսի «Բորբան» ժամանակին հասցնել նրանց, ափսոսանքով նշելով, «որ հապճեպորեն դուրս եկա Թիֆլիսից և չկարողացա պատրաստի բան ուղարկել Ձեր խմբագրության համար, այն է՝ Մետեխից ուղարկված նամակը, որտեղ նկարագրում են այդ դամբարանի անտանելի ռեժիմը: Վաղը ես վերադառնում եմ և կաշխատեմ առաջին իսկ փոստով ուղարկել Ձեզ, հուսով եմ, որ կզետեղվի առաջիկա համարներից մեկում»[4]: Նույն թվականի սեպտեմբերի 18-ի նամակում Հ. Հակոբյանը գրել է. «Մեզ մոտ սեպտեմբերի 13-ին, շաբաթ օրը, երեկոյան ժ. 6-ին, տեղի ունեցավ ռումբերի, գործիքների, շրիֆտի, և այլնի պահեստի մի շատ խոշոր ձախողում, վերցրին մոտ 200 ռումբ, մեծ թվով հրացաններ, ՌՍԴԲԿ բան. միության կնիքը և ՌՍԴԲԿ դրամարկղի վերահսկման կնիքը:

Պահեստը տեղավորված էր Նադիրովսկի հողերի մերձակայքում և իր ձևով ու կառուցվածքով ճիշտ այնպես էր սարքավորված, ինչպես և Հավլաբարի տապալված ընդհատակյա տպարանը»[5]: Հ. Հակոբյանը Միխա Ցխակայային հարցում է անում՝ ստանո՞ւմ եք «Բակինսկի ռաբոչի»-ն, որը լեգալ լույս է տեսնում Բաքվում և շատ բովանդակալից է: Կարդալով այդ օրգանը,— ասում է նա,— ակամայից հիշում ես 1905 թ. ազատության օրերը, ամսագրից թարմության առույգության և անվեհերության հոտ է փչում: Բանաստեղծն իր նամակներում արծարծում է գիտակից պայքարի, դասակարգային գիտակցության և կազմակերպվածության հարցեր: Վերջում խնդրում է իրենց էլ «բաժին հանել ժնևյան նորություններից», ուղարկել «Պրոլետարի» № 33-ը և № 34-ը, «Ռադուգա»-ի համարները և այլ գրականություն:

1908 թ. դեկտեմբերի 2-ին գրած մի այլ նամակում Հակոբյանը մերկացնում է Կովկասի մենշևիկներին, դրվատում բոլշևիկների եռանդուն գործունեությունը, նշում, որ «այստեղ (Թիֆլիսում) լույս են տեսել բոլշևիկյան «Բորբա»-ի № 3—4-ը՝ երկու լեզուներով», որ Ալյոշա Ջափարիձեն և Միխա երկրորդը (Ձոդրիաշվիլին) բարևում են Միխա Ցխակայային: «Բազմաթիվ նորություններ կան Բաքվից,— գրել է Հ. Հակոբյանը,— բայց ես հետաձգում եմ տեղ

3 ЦПА ИМЛ, ф. 157, оп. 2, д. 57, л. 2.

4 Там же.

5 Там же, л. 3.

չլինելու պատճառով. այժմ մեզ բոլորիս հուզում է մենշևիկների վարմունքը. պատգամն ուղարկեցիր էջ[6]: Հ. Հակոբյանը 1908 թ. դեկտեմբերի 31-ի նամակում արժեքավոր նորություններ է հաղորդում Միխա Ցխակայային և ժնևյան ռուսաստանցի հեղափոխական վտարանդիներին: «Առայժմ զբաղված եմ փող հավաքելով,— գրել է Հ. Հակոբյանը,— հայերեն լեզվով օրգան հրատարակելու համար, որպիսին բացակայում է արդեն տարուց ավելի: Ստեփանը (խոսքը Ստ. Շահումյանի մասին է— Խ. Բ.) նույնպես հոգ է տանում այդ միտքը իրականացնելու մասին: Օրերս նրանից ստացա մի նամակ (Շահումյանի այդ նամակը տակավին չի հայտնաբերված— Խ. Բ.), որտեղ ի միջի այլոց հաղորդում է, թե իրենց մոտ «Բակինսկի ռաբոչի»-ի փոխարեն շուտով լույս կտեսնի «Վոլնա»-ն: Օրերս ծանրոցով Ձեզ կուղարկեմ այն ամենը, ինչ հնարավոր է, նաև «Բորբա»-ի № 2-ը: Խնդրում եմ ուղարկել «Պրոլետարի»-ի № 35-ը: Դա կարևոր է 3-րդ համարի համար, իսկ ինչ վերաբերվում է № 33-ին, 34-ին և 40-ին, ապա ես դրանք դեռ չեմ ստացել: Խնդրում եմ այդ համարները, ինչպես նաև հաջորդ համարները առաքել Շպիլմանի անունով (ինչպես և ուղարկվում է), միայն թե հասցեն գրել ոչ թե ռուսերեն, այլ ֆրանսերեն լեզվով»[7]:

«Ս. Բոգդանովին թեպետ անձնապես ծանոթ չեմ,— գրել է Հ. Հակոբյանը,— բայց համակրում եմ որպես «Կարմիր աստղի» հեղինակի: Իր ժամանակին ես ագիտացիա եմ մղել, տարածել եմ այդ գիրքը և մինչև հիմա էլ մեզ մոտ տաք վիճաբանություն է գնում այդ գրքի մասին: Տ-նայի (Տատյանայի), Ալյոշայի և մյուսների հետ միամոնության և բազմակնության մասին: Հետաքրքրական է իմանալ, թե ինքը՝ Բոգդանովը ինչպես է նայում այդ հարցերին: Արդյոք նա միամոնության կողմնակից է, թե ընդհակառակը: Ինչպես է նա հիմնավորում: Ինձ շատ կուրախացնեք, եթե Ձեր հաջորդ նամակում պատասխանեիք իմ հարցերին: Արդյո՞ք ս.-դ.-ները ընդունում են և պետք է ընդունեն բարոյականությունը, ինչպես որ նա կա, թե արդի բուրժուական իրավակարգում մենք պետք է տարբերվենք մի այլ բարոյականությամբ: Ոմանք այս հարցերը այլ կերպ են լուսաբանում և ես կցանկանայի անձամբ Բոգդանովի կար-

---

[6] ЦПА ИМЛ, ф. 157, оп. 2, д. 57, л. 5.

[7] ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 157, оп. 2, д. 57, л. 8. Շպիլմանը աշխատում էր Թիֆլիսի բանկում՝ Հ. Հակոբյանի հետ միասին: Թիֆլիսի բոլշևիկները օգտվում էին նրա ծառայություններից, արտասահմանյան նամակները ստանում նրա հասցեով:

ծիքը լսել։ Մեծ լավություն կանեք, եթե դուք որևէ բան գրեք Բոգդանովի էմպիրիոմոնիզմի մասին։ Կարդում եմ և դժվար է հասնում մտածողությանը և հասկացողությանը։ Գիտական բան է, խոսք չկա, բայց արդյոք չէր կարելի համառոտ շարադրել բրոշյուրի ձևով ոչ թե ակադեմիական, այլ հանրամատչելի լեզվով»[8]։

Հ. Հակոբյանը խնդրում է հաղորդել ժնևյան նորությունները, որոնք Կովկասում կլանվում են արագորեն։ Նա քննադատում է իր «հին ընկերոջը»՝ Գ. Ղարաջյանին («Մակը»), ցավում, որ նա ևս թեքվել է Գ. Պլեխանովի կողմը և չարախնդում է բոլշևիկների հասցեին։

Նամակներից մեկում (1911) նա պատմում է, որ իր գլխավոր հոգսերից մեկն է, որ «Թիֆլիսում» հրատարակվեր «Արև» անունով հայերեն թերթը։ Այդ թերթը, իհարկե, խիստ կայուն կլիներ, ինչպես «Զվեզդան»[9]։

Հ. Հակոբյանի նամակները Կովկասի քաղաքական կյանքի խրոնիկա են, երկրամասում մարքսիզմի տարածման մասին փաստագրական վկայություններ։ 1909 թ. հունվարի 22-ի նամակում բանաստեղծը հարցնում է. «արդյոք ստացել ե՞ք երևանյան հրապարակի դեպքերի վերաբերյալ թռուցիկը, որ ես ուղարկել եմ Ֆեոդորի միջոցով, Մրն. Գորայի հասցեով»[10]։

Այնուհետև նա հաղորդում է, թե «այսօր ստացել եմ ծանուցում կենտկոմի օրգան «Սոցիալ-Դեմոկրատի» հրատարակության մասին։ Խնդրում եմ աջակցել օրգանին։ Օգտվելով առիթից, քեզ եմ ուղարկում Թիֆլիսի բոլշևիկների բյուրոյի հաշվետվությունը և խնդրում եմ, որ ինքդ կարգադրես տպագրելու կամ «Պրոլետարի»-ում կամ «Սոցիալ-դեմոկրատ»-ում... Ձեր հայեցողությանն եմ թողնում, որտեղ որ դուք ուզենաք, այնտեղ էլ տպագրեք։ Թանկագին ընկեր, ես չեմ մոռացել խոստացածս գրականությունն ուղարկելը, ես այդ մտադիր եմ անել այս օրերը՝ ծանրոցով։ Այդտեղ կլինեն և՛ բրոշյուրներ և՛ այլ հրատարակություններ, «Բորբա»-ի № 2-ը և էլ ուրիշ բան...

Օրերս կայացավ բոլշևիկների կոնֆերանս։ Հավաքվել էին 12 պատգամավոր։ Կից ուղարկվող հաշվետվությունից կարելի է եզրակացնել բյուրոյի ութ ամսյա գործունեության մասին։ Այստեղ

---

[8] ЦПА ИМЛ, ф. 157, оп. 2, д. 57, л. 8—9.

[9] ЦПА ИМЛ, ф. 157, оп. 2, д. 57, л. 48.

[10] *Նույն տեղում, էջ 14։*

ինչպես տեսնում եք, կարճ ժամանակում արել են հնարավոր ամեն ինչ: «Ողջույն ընկերներին»[11]:

Մի այլ նամակում Հ. Հակոբյանը, անհանգստացած, Միխա Ցխակայային հարցնում է. «Ի՞նչ եղան բոլշևիկյան կոնֆերանսի հաշվետվությունը և բյուրոյի դրամական հաշվետվությունը»[12]:

Նամակներից մեկում բոլշևիկ բանաստեղծը ափսոսանք է հայտնում, որ Ժնևի վրացական գրադարանին հասցեագրված ծանրոցը տեղ չի հասել. նրանում կային «Բորբա»-ի համարները, գրականություն, թերթիկներ և այլն: Տեղ չէր հասել նաև Ռեկկոնենին (Միխա Ցխակայային) ուղարկված նամակը, ուր ասված է. «Այնտեղ ես հայտնել էի փիլիսոփայական բարոյական բնույթ ու բովանդակություն ունեցող քո երկարաշունչ նամակն ստանալու մասին, որը ընթերցվել էր Տատյանայի, Միխայի*, Ալյոշայի**, Նուշիկի***, Եվայի**** և մյուսների շրջանում: Խոստովանում եմ, իմ հարցերին քո տված պատասխանները շարադրված էին չափազանց «կարծր» ոճով և մենք կցանկանայինք յուրաքանչյուր միտք, յուրաքանչյուր նախադասություն մեր ուզածին պես հասկանալ, դժբախտաբար, մենք բոլորս էլ զրկված էինք այդ հնարավորությունից, որովհետև ակադեմիական-գիտական ոճը մեզ թույլ չտվեց հասկանալու այնպես, ինչպես եթե այդ մտքերն ու բացատրությունները շարադրված լինեին հանրամատչելի լեզվով: Բայց հիմնական միտքը, նրա տրամաբանական հետևությունը շարադրված էին ճիշտ և համոզիչ. Դա բարոյականությունն է: Դա բուրժուազիայի բնություններով կազմավորված ու հաստատված «իրավունքն է», դա ինձ հասկանալի է, բայց որ բարոյականությունը՝ հասարակական հիգիենա է— դա հազիվ թե ճիշտ լինի, այն ինչը լավ է, նորմալ՝ չի վնասում հասարակությանը, դա բարոյական է, և ընդհակառակը, որ մենք պետք է մեզ համար ստեղծենք միանգամայն նոր բարոյականություն՝ պրոլետարական բարոյականություն՝ դա հասկանալի է[13]...»: Նամակի վերջում Հ. Հակոբյանն ասում է. «Դու ցանկանում էիր ունենալ Ստեփանի (Շահումյանի—Խ. Բ.) հասցեն—ահա խնդրեմ.

---

11 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 157, оп. 2, д. 57, л. 15.

12 Նույն տեղում, էջ 17:

* Միխա՝ Միխո Ջողրիաշվիլի:

** Ալյոշա՝ Ալյոշա Ջափարիձե:

*** Նուշիկ՝ Նուշիկ Զավարյան:

**** Եվա: (?):

13 Նույն տեղում, էջ 16:

Բաքվի նահանգ, Բալախանի (Բաքու), Շիրանի նավթահանք: Նա, ինչպես ես արդեն նշել եմ, Տիմոֆեյի (Սպանդարյանի — Խ. Բ.) հետ միասին ձերբակալվել էր մայիսմեկյան օրերին: Սուրենին բաց թողեցին երկու շաբաթից հետո, իսկ Տիմոֆեյին մեկ ամսից հետո»[14]:

Նամակներում Հ. Հակոբյանը հաճախ է անդրադառնում Կովկասի բոլշևիկների և մենշևիկների ներկուսակցական տարաձայնություններին, աջից և «ձախից» եկող լիկվիդատորներին, պաշտպանում բոլշևիկների քաղաքականությունը, բայց չափից ավելի հրապուրված լինելով Ա. Բոգդանովով, երբեմն անհետևողականություն է ցուցաբերում: Այսուհանդերձ, նրա ուղարկած ինֆորմացիան, ինչպես տեսանք, պարունակում է այնպիսի փաստեր, որ ուրիշ աղբյուրներում չենք գտնի: Այս իմաստով էլ Հ. Հակոբյանի քննարկվող նամակները, անշուշտ, արժանի են ուշադրության:

1909 թ. Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսում, իսկ այնուհետև 1910 թ. առանձին գրքույկով լույս տեսավ Հ. Հակոբյանի «Նոր տավիղ» պոեմը: Այն լավատեսությամբ լցված մի ստեղծագործություն է, որն արժանացել է Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի ուշադրությանն ու բարձր գնահատականին: Ս. Սպանդարյանը Հ. Հակոբյանին բնութագրելով որպես տաղանդավոր գրողի ու նոր տիպի բանաստեղծի, 1911 թ. փետրվարին գրել է. «Հ. Հակոբյանի նոր երկը՝ «Նոր տավիղը» պատկերում է անհատական և հասարակական ձգտումների ընդհարում անհատի մեջ: Առանձնապես հաջող և գունագեղ են այն տողերը, ուր սիմվոլիկ ձևով նկարագրվում են ժամանակակից ֆաբրիկաները, գործարանները, հանքերը, բանվորների աշխատանքը, նրանց տառապանքները, նրանց հույսերը»[15]:

Ստ. Շահումյանը, որը մեծ ազդեցություն է գործել Հ. Հակոբյանի քաղաքական և գրական հայացքների ձևավորման վրա, ցույց է տվել, որ բանաստեղծը, հիրավի, եղել է հայ բանվորների, աշխատավոր զանգվածների հույսերի և ուրախությունների երգիչը, նրանց սիրելի բանաստեղծը: Հ. Հակոբյանը շատ բարձր էր գնահատում Շահումյանի ամեն մի խոսքը: «Նոր տավիղ» պոեմից նա մի օրինակ ուղարկում է Շահումյանին, որն ուշադրությամբ ծանոթանում է ստեղծագործությանը, ողջունում հեղինակին և գրքույկի լույսընծա-

---

14 Նույն տեղում, էջ 17:

15 «Листок Копейки», № 21, 9 февраля (22 января) 1911 г. Նույնը՝ Ս. Սպանդարյան, Երկեր, հատ. 2, էջ 169:

ներում խիստ արժեքավոր դիտողություններ անելով նրա լեզվի, ոճի, պատկերների մասին, վերադարձնում է հեղինակին[16]*։*

Ստ. Շահումյանի դիտողությունների համաձայն Հ. Հակոբյանը վերամշակում է պոեմը, այն դարձնում ավելի կուռ, գաղափարական տեսակետից՝ ավելի ամբողջական։

Միխա Ցխակայային գրած նամակներից պարզվում է, որ Հ. Հակոբյանը «Նոր առավոտ» պոեմի օրինակներից ուղարկել է բոլշևիկյան կուսակցության նաև ուրիշ նշանավոր գործիչների, մարքսիստ-գրականագետների և խնդրել, որ նրանք նույնպես ծանոթանան և օգնեն իրենց խորհուրդներով։ 1911 թ. փետրվարի 1—2-ին Միխա Ցխակայային գրած մի այլ նամակում Հ. Հակոբյանը խնդրում է ծանոթանալ պոեմի բովանդակությանը և իր խոսքն ասել։ Բացի այդ, բանաստեղծը հինգ օրինակ ուղարկել էր Ժնև՝ ռուս վտարանդիների կուսակցական գրադարանին, Մաքսիմ Գորկուն և այլ ընկերների։

Հ. Հակոբյանը ինչպես այդ, այնպես էլ մյուս նամակներում, շարադրել է «պոեմի բովանդակությունը, ցույց տվել նրա գլխավոր իմաստն ու նշանակությունը»[17]*։*

Հ. Հակոբյանը Միխա Ցխակայային հայտնում է, թե նամակ է ստացել Ստեփան Շահումյանից, և «նրանք շուտով կունենան իրենց թերթը», թույլտվությունը վաղուց է վերցված, իսկ № 1-ը լույս կտեսնի այս շաբաթ[18] *(հավանական է խոսքը «Սովրեմեննայա ժիզն»-ի մասին է—* Խ. Բ.)։

Հ. Հակոբյանի Ժնև՝ Միխա Ցխակայային գրած նամակները ունեն նաև այլ արժանիքներ, հատկապես մարքսիստական հայ գրականագիտության առումով։ Մենք միայն ընդհանուր գծերով շարադրեցինք այն փաստերը, որոնք առնչվում են երկրամասում մարքս-լենինյան գաղափարների տարածման, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության և կոմունիստական գաղափարախոսության հարցերին։

2

Կ. Մարքսի դժվարին ու լուսապայծառ կյանքի պատմությունը գրելու առաջին փորձերն արել է Ֆ. Էնգելսը, հրապարակելով մի

---

16 *Տե՛ս* Ստ. Շահումյան, *Գրականության մասին, Երևան, 1948, էջ 125—135։ Տե՛ս նաև՝* Խ. Գյուլնազարյան, Ս. Մանուկյան, *Հակոբ Հակոբյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1965։*

17 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 157, оп. 2, д. 57.

18 *Նույն տեղում, էջ 36։*

շարք արժեքավոր հոդվածներ։ Ցավոք, Էնգելսը չկարողացավ իրականացնել իր երազանքը՝ ստեղծել իր բարեկամի ընդարձակ և համապարփակ կենսագրությունը։ 1903 թ. մարտի 1-ին լենինյան «Իսկրա»-ի 35-ում հրապարակվեց Գ. Վ. Պլեխանովի «Կարլ Մարքս» հոդվածը, որը շուտով թարգմանվեց և հայերեն տպագրվեց «Պրոլետարիատի կռիվը» թերթի 1903 թ. ապրիլ-մայիսյան 2—3 միացյալ համարում[19]։ Այն նվիրված էր գիտական կոմունիզմի մեծ հիմնադրի մահվան 20-ամյակին։ Աղբյուրագիտական հարուստ նյութերի հիման վրա Գ. Պլեխանովը ցույց էր տալիս Կ. Մարքսի պատմական ծառայությունները, նրա ուսմունքի ճշմարտացիությունը և ուժը։ Հոդվածում ասված է. «Եթե սոցիալիզմը այժմ գիտությունների շարքն է անցել, դրանով մենք Մարքսին ենք պարտական։ Եվ եթե գիտակից պրոլետարները այժմ լավ հասկանում են, որ բանվորական դասակարգի վերջնական ազատության համար անհրաժեշտ է սոցիալիստական հեղափոխություն, և որ այդ հեղափոխությունը հենց իրեն բանվոր դասակարգի գործը պետք է լինի, եթե նրանք այժմ բուրժուական կարգերի անհաշտ և անխնա թշնամիներն են, դրա մեջ երևում է գիտական սոցիալիզմի ազդեցությունը»[20]։

Հայ ընթերցողն այդ հոդվածով ծանոթացավ Կ. Մարքսի կենսագրությանը։

1907 թ. հայերեն լույս տեսավ «Մայիսի մեկը» բրոշյուրը[21], որտեղ զետեղված էին «Կարլ Մարքս», «Ֆրիդրիխ Էնգելս», «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» հոդվածները։ Այստեղ համառոտակի շարադրված էին գիտական կոմունիզմի մեծ հիմնադիրների կենսագրությունները, սոցիալիզմի սկզբունքները, «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի նշանակությունը։ Ժողովածուում հրապարակված էր նաև Ա. Մյասնիկյանի (Ա. Մ-նիկյան) «Ռամկավար հանրապետություն» հոդվածը։

Կ. Մարքսի կյանքի ու հեղափոխական գործունեության հետ հայ հեղափոխականներն ու աշխատավորներն իրազեկ են դարձել Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի, Արշ. Մելիքյանի, Սուրեն Հովսեփյանի և այլոց աշխատություններից։ «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» (1905), «Սովրեմեն-

---

19 «Искра», № 35, 1 марта 1903 г. *Տե՛ս Г. Плеханов,* Сочинения, т. XII, стр. 325, 333 *«Պրոլետարիատի կռիվը», № 2—3, ապրիլ-մայիս, 1903, Բաքու, էջ 4—6։*

20 *Նույն տեղում, էջ 4։*

21 *Մայիսի մեկը, 1907 թ.։*

նայա միջին» (1911) և բոլշևիկյան այլ պարբերականներում, դեմոկրատական ուղղության հայ մամուլում առանձին հոդվածներ, ինֆորմացիաներ են հրապարակվել, նվիրված Կ. Մարքսի գործունեությանը: 1908 թ. «Խաթաբալա» հանդեսը Կարլ Մարքսի մահվան 25-ամյակի առթիվ հրատարակել է նրա նկարը՝ «Աշխարհահռչակ սոցիալիստ և քաղաքատնտես» մակագրությամբ[22]:

1910 թ. «Վերածնություն» գրադարանի մատենաշարով Փարիզում հայերեն լույս տեսավ Ս. Մուրադյանի «Կարլ Մարքս (Կենսագրություն)» գրքույկը*: Այն բացվում էր Կ. Մարքսի նկարով: Դա, ըստ էության, հայ քաղաքական գրականության մեջ տպագրված Կ. Մարքսի առաջին նկարներից էր: Հեղինակը համառոտակի շարադրել է գիտական կոմունիզմի մեծ հիմնադրի կյանքի պատմությունը:

Ընթերցողի առջև պատկերվում են Կարլ Հենրիխ Մարքսի մանկությունն ու պատանեկությունը, ուսանողական տարիները Բոննում և Բեռլինում, գիտական առաջին քայլերը, քաղաքական գործունեության սկիզբը, անցումը մատերիալիզմին և կոմունիզմին: «Փոքր հասակից արդեն Մարքսը մի առանձին ընդունակություն և իմացականություն է ցույց տալիս,— գրել է հեղինակը: Աշխույժ ու թափանցող միտք լինելով՝ հաջողապես ավարտում է միջնակարգ կրթությունը և 1834-ին մտնում Բոննի իրավագիտական համալսարանը՝ Պրուսիայում պրոֆեսոր լինելու մտադրությամբ: Համալսարանի մտավորական շրջապատը նրա վրա մեծ ազդեցություն է գործում և նա մասնավորապես ուսումնասիրում է պատմություն և փիլիսոփայություն: 1842 թ. նա Ենայի համալսարանում ներկայացնում է իր թեզը (խոսքը դոկտորական դիսերտացիայի մասին է—Խ. Բ.), որ նվիրված էր Դեմոկրիտ և Էպիկուր հույն փիլիսո-

22 «Խաթաբալա», № 14, 1908, էջ 160:

* Երվանդ Սահրատի Մուրադյան՝ Երվանդ Սաֆո, ծնվել է Կարինում, սովորել է Փարիզի համալսարանում, 1909 թ. Կ. Պոլսի «Կոչնակ» թերթում Ս. Մուրադյան ստորագրությամբ հրապարակել է «Նորագույն սահմանադրական իրավունքի մի շարք սկզբունքները» հոդվածաշարը (տե՛ս «Կոչնակ»-ի մայիս-օգոստոսյան համարները), որից և կազմել է «Նորագույն սահմանադրական իրավունքը» գրքույկը: Նույն թվականի հոկտեմբերին «Կոչնակ»-ում լույս է տեսել նրա Փարիզյան նամականին, որի մեջ հիացմունքով է խոսում Ժան Ժորեսի մասին: 1913—1917 թթ. Սիրվարդի հետ միասին խմբագրել է «Երիտասարդ Հայաստան» (ԱՄՆ) թերթը, 1918 թ. ապրիլին զոհվել է Բաքվում հակահեղափոխության դեմ մղված մարտերում (տե՛ս «Կոչնակ» № 1, 2, 4, 6, 8, 13 և 14, 1909 թ.: «Պատմություն ս. դ. հնչակյան կուսակցության», Բեյրութ, 1962, հատ. Ա., էջ 48, 70, 88, 89, 111, 182 և այլն):

փաներին։ Նա ստանում է փիլիսոփայության ուսուցչի (դոկտորի— Խ. Բ.) աստիճան և այնուհետև սկսում դասախոսել Բոննի համալսարանում»[23]։

1842 թ. նոյեմբերի վերջին Կ. Մարքսն առաջին անգամ հանդիպում է Ֆ. Էնգելսին, բախտորոշ մի հանդիպում, որը հիմք դրեց նրանց մեծ բարեկամությանը։ Հանձին Էնգելսի, Մարքսն ունեցավ իր համախոհն ու հավատարիմ զինակիցը, որի հետ ձեռք-ձեռքի տված անցավ իր կյանքի սխրանքներով ու պայքարով լի ուղին։

«Ֆ. Էնգելսը,— գրել է Ս. Մուրադյանը,— միշտ Մարքսի ամենամտերիմ և սրտագին բարեկամը մնաց։ Այդ հանգամանքը գլխավորապես բացատրվում է նրանով, որ առաջին տեսությամբ իսկ նրանք նկատել են իրենց հայացքների զարմանալի ու դիպվածական զուգադիպությունը։ Տնտեսական իրողությունների ու ժամանակակից հեղափոխության ուշադիր քննությունը նրանց երկուսին էլ միևնույն տրամաբանական եզրակացությանն էր առաջնորդել»[24]։

Կապիտալիստական հարաբերությունների բազայի վրա ծնունդ առած պրոլետարիատը պատմության արենայում հանդես է գալիս իբրև քաղաքական ինքնուրույն ուժ։ Լիոնի տեքստիլագործների 1831 թ. առաջին ապստամբությունը, 1838—1842 թթ. անգլիական բանվորական առաջին փոթորկոտ ելույթները՝ չարտիստական շարժումը, անցյալ դարի 40-ական թվականների Գերմանիայում բանվորական զանգվածների հնչեցրած ազատաշունչ պահանջները, Սիլեզիայի ջուլհակների 1844 թ. ապստամբությունը, Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում պրոլետարիատի ու բուրժուազիայի միջև մղված դասակարգային դատեմարտերը արթնացրին աշխատավորական զանգվածներին։

Ս. Մուրադյանը հենվելով հավաստի աղբյուրների վրա, ցույց է տալիս մարքսիզմի ձևավորման պրոցեսը, նրա կապը հեղափոխական գործիչների հետ։ Կ. Մարքսը դառնալով Հենրիխ Հայնեի մերձավոր բարեկամը,— գրել է Ս. Մուրադյանը,—նրա աշխատակցությամբ հրատարակում է «Առաջ» խորագրով թերթը։

Շարադրելով Կ. Մարքսի մինչև 1847 թ. գրած աշխատությունների բովանդակությունը, հեղինակը մեծ տեղ է տալիս նրա հետագա շրջանի գործունեությանը, հատկապես «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի ստեղծման պատմությանն ու այդ մեծ փաստաթղթի խաղացած դերի պարզաբանմանը։

---

23 Ս. Մուրադյան, Կարլ Մարքս, Փարիզ, 1910, էջ 1—2։

24 Նույն տեղում

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»— գրել է Ս. Մուրադյանը,— վերջնական հարվածը տվեց նախորդ սոցիալիստների բոլոր շենքերին, սկիզբը դրեց բանվորական շարժման մի նոր դարագլխի: Առաջին անգամը լինելով պատմության նյութապաշտական հասկացողության, կամ ավելի ճիշտն ասած, տնտեսական դետերմինիզմ (déterminisme) միջոցով բարձրաձայն հռչակվեց, որ բոլոր հասարակությունների պատմությունը, մինչև այսօր ոչ այլ ինչ է եղել, եթե ոչ դասակարգային կռվի պատմություն: Պատմության այդ նշանակալից մեկնաբանությամբ հօդս ցնդեց XVIII դարի փիլիսոփաների և մտացածին սոցիալիստների այն սխալ տեսակետը, ըստ որում մարդկության բնությունը մի՛ չափանիշ (կրիտերիում) էր մարդկության պատմական շարժումները բացատրելու: Հասարակագիտության մեջ շրջափոխության (evoluiin) օրենքը ներմուծելով, Մարքսը ու Էնգելսը հիմնեցին պատմության իրենց այդ նյութապաշտական ըմբռնումը, —ինչպես որ Դարվինը բնագիտության մեջ ներմուծելով բնական ընտրողականության (selection naturelle) տեսությունը, նրանով բացատրեց կենդանական տեսակների զարգացումը, նրանց աստիճանական ձևափոխությունները, այնպես էլ Մարքսն ու Էնգելսը հասարակագիտության մեջ շրջափոխության օրենքի՝ հարստությունների արտադրության ու փոխանակության ձևերի փոփոխության միջոցով բացատրեցին մարդկային ընկերության քաղաքական ու հասարակական հեղաշրջումները»[25]:

Հեղինակը հեռատեսականորեն պարզաբանում է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի ծրագրային դրույթները, ընդգծում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մեծագույն հայտնագործությունների նշանակությունը, մարդկության ամենաառաջավոր և հեղափոխական դասակարգի՝ պրոլետարիատի պատմական դերը: «Մինչև այժմ էլ,— գրել է Ս. Մուրադյանը,— այդ «Մանիֆեստ»-ը բոլոր երկրների սոցիալիստական կուսակցության աշխարհայացքների, ձգտումների ու գործելակերպի կատարյալ համադրությունն է ներկայացնում: Վերջավորող «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» հռչակավոր կոչը՝ սկսած Ամերիկայից և Եվրոպայից մինչև Աֆրիկա ու ծայրագույն Արևելք—միջազգային գործավոր դասակարգի մարտական նշանաբանն է դարձել հիմա»[26]:

---

25 Նույն տեղում, էջ 6—7:

26 Նույն տեղում:

«Կարլ Մարքս» բրոշյուրում մեծ տեղ է տրված Կ. Մարքսի 1848—1849 թթ. հեղափոխական գործունեությանը։ Այդ տարիներին (որոնք Կ. Մարքսից պահանջեցին ուժերի գերագույն լարում), ամբողջ ուժով դրսևորվեցին հեղափոխական մարտիկի նրա հանճարը, անսպառ եռանդը, աննկուն կամքը, անձնուրացությունն ու խանդավառությունը։ Չնայած հեղափոխության պարտությանը, 1848—1849 թթ. ոչ միայն գործնականում ապացուցեցին մարքսիզմի կենսական ուժը, նրա գերազանցությունը մյուս բոլոր սոցիալիստական տեսությունների հանդեպ, այլև հանդիսացան այդ մեծ ուսմունքի զարգացման ու հարստացման հզոր աղբյուրը։ Այդ տարիների հեղափոխական պայքարի փորձի վրա են հիմնված Կ. Մարքսի տեսական մտքի մեծագույն նվաճումները, որոնք դասական ձևակերպում ստացան հեղափոխության դասերի ընդհանրացմանը նվիրված նրա աշխատություններում։

Կ. Մարքսի գլխավոր աշխատությունը «Կապիտալն» է, մեր դարաշրջանի տնտեսագիտական-քաղաքական նշանավոր երկը։ «Կարլ Մարքս» գրքում հատուկ տեղ է տրված «Կապիտալ»-ին։ «Կապիտալը» «մեր սուրն է, մեր զրահը, հարձակման և պաշտպանության զենքը»,— ասել է Ի. Բեկկերը։ «Կապիտալը» բուրժուական քաղաքատնտեսության նկատմամբ Կ. Մարքսի ուսմունքի մեթոդոլոգիական գերազանցության վառ վկայությունն է։ Այն խորապես կուսակցական երկ է, որը գիտական օբյեկտիվության հոմանիշ է. «Կապիտալով» Մարքսը հիմնովին հեղափոխում է տնտեսագիտությունը,— գրել է Ս. Մուրադյանը, ...Մարքսը «Կապիտալ»-ի մեջ վերլուծում է բուրժուական ընկերության մարմնակազմությունը և գիտականորեն ցույց տալիս, որ նրա մահը անխուսափելի ու բնական է»[27]։ Հակառակ բուրժուական տնտեսագետների ամեն տեսակ քննադատության ու հարձակման,— գրել է հեղինակը,— «Կապիտալ»-ը մշտապես կմնա այն հարուստ զինարանը, որտեղից միջազգային բանվոր դասակարգը վերցնելով իր մտավոր զենքերը, անողոք կռիվ կմղե մասնավոր, անհատական սեփականության և աշխատանքի ազատության՝ ազատ մրցման վրա և տիրող կարգերի դեմ, այն փոխարինելով սոցիալիզմի վրա հիմնված ազատ և ներդաշնակ կարգերով։

«Կարլ Մարքս» բրոշյուրի հաջորդ բաժիններում լուսաբանություն են ստացել Կ. Մարքսի գործունեության հետագա տարիները

---

27 Նույն տեղում, էջ 10, 12։

633—11

Առաջին ինտերնացիոնալի հիմնադրումն ու ղեկավարումը, Փարիզի կոմունան, ինտերնացիոնալի գաղափարական դրոշի անաղարտության համար մղված պայքարը, բանվորական շարժման տեսության ու տակտիկայի հետագա զարգացման հարցերը և այլ պրոբլեմներ։ Բարձր գնահատելով Առաջին ինտերնացիոնալի խաղացած դերը, Ս. Մուրադյանը նշում է, որ այն միջազգային պրոլետարիատի շահերի համերաշխության կենդանի արտացոլումն էր։ Ինտերնացիոնալի դասերը սովորեցրին,— գրել է նա,— որ բանվոր դասակարգը իր «ազգային ատաղձարանի» վրա իր «ազգային պատնեշներից» ներս էր, որ պիտի կազմակերպվեր դասակարգային կուսակցության դրոշակի տակ և հետո միայն, իր սահմանային պարիսպներից վեր բարձրանալով ձեռք մեկներ իրեն բախտակից, նույն շահերով և իդեալներով ոգևորվող դասակարգին և նրա հետ միասին, համընթաց գործունեությամբ, միջազգային հողի վրա մղեր մարդկության ընդհանուր ազատագրական մարտը։ Այդ տեսակետից առաջնորդվելով է, որ նա երկու թարմ ուժերի՝ Բեբելի ու Լիբկնեխտի աջակցությամբ, աշխատեց Գերմանիայում մի ազգային կազմակերպություն հիմնել»[28]։

«Կարլ Մարքս» գրքույկի վերջում հատուկ տեղ է տրված գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության առաջացմանը, Գոթայի և Էրֆուրտի ծրագրերի մեկնաբանմանը, մարքսիզմի տարածմանը։

«Հեղափոխական ու գրական այնքան երկար ու մաշող աշխատանքից հետո,— գրել է Ս. Մուրադյանը,— բնական է, որ Մարքսի առողջությունը քայքայվել էր։ 1881-ին իր սիրելի կենակցի մահը նրան խոր տխրություն ու վիշտ պատճառեց, իսկ 2 տարի հետո իր անդրանիկ աղջկա կորուստը նրան ծանր ու վճռական հարված հասցրեց։ Երեք ամիս հետո, մարտի 14-ին, նա կնքեց իր մահկանացուն, խոր սգի մեջ թողնելով համաշխարհային բանվոր դասակարգին, որը նրա մահով կորցրեց իր տեսական ու գործնական դաստիարակության նվիրված տաղանդավոր անխոնջ ուսուցչին»[29]։

«Կարլ Մարքս» գրքույկի հրատարակությունը, ինչ խոսք, աչքագրավ երևույթ է Հայաստանում մարքսիզմի տարածման պատմության մեջ։ «Կարլ Մարքս» գրքույկը, անշուշտ, զերծ չէ թերություններից, բայց ամբողջությամբ վերցրած ուշագրավ է որպես նրա

---

28 Նույն տեղում, էջ 15։

29 Նույն տեղում, էջ 16։

կենսագրությունը հայ ընթերցողին ծանոթացնող անդրանիկ գործերից մեկը:

«Կովկասյան լրաբերի» 1913 թ. մարտի 2-ի համարում, Կ. Մարքսի մահվան 30-ամյակի առթիվ «Հ.» ստորագրությամբ լույս տեսավ «Կարլ Մարքս» արժեքավոր հոդվածը: Հեղինակը (հավանական է Հարություն Սուրխաթյանն է կամ Հայկ Ազատյանը) համառոտակի պատմում է գիտական կոմունիզմի մեծ հիմնադրի փոթորկալից կյանքը, նշում՝ «թեև Մարքսը թափառում էր վտարանդի, հալածվելով տիրող դասակարգերի օրենքներից՝ տվեց քաղաքատնտեսության անգնահատելի օգուտներ, մեծահռչակ գրականություն և զուտ գիտական-փիլիսոփայական «Կապիտալ» մեծահատոր աշխատությունը... Պրոլետարիատի ավետարանը»: Հոդվածագիրը գովատելով Մարքսի ուսմունքի արժանիքները, լավատեսությամբ լցված, անհուն հավատով լի ասում է՝ քանի դեռ երկրի վրա գոյություն ունի աշխատանքը, քանի դեռ կյանքում ապրում են ու ստեղծագործում բանվորի կոշտերով ծածկված բազուկները, քանի դեռ կապիտալի ու աշխատանքի միջև գոյացած անդունդը չի հաղթված, կա ու կմնա Կ. Մարքսի անմահ գաղափարը: Նա պրոլետարիատի դասակարգային կռվի ուղեցույց աստղն է:

Կ. Պոլսում Եդուարդ Ամատունու խմբագրությամբ լույս տեսնող «Կայծ» հանդեսի 1913 թ. ապրիլ-մայիսյան համարը նվիրված էր Կ. Մարքսին և մարքսիզմին: Նրանում զետեղված էին Մարքսի նկարը, կենսագրությունը և մի քանի հոդվածներ: Դրանք գերազանցապես քաղված էին լեգալ մարքսիստների գործերից և պարունակում էին լուրջ սխալներ: Բայց հարազատ մնալով պատմականությանը, այնուհանդերձ, մատնացույց ենք անում այդ փաստը:

3

Ավարտվում է 1910 թվականը: Ռուսաստանի հեղափոխական շարժման մեջ նկատվում է նոր վերելք: «Սևհարյուրակային ռեակցիայի լիակատար տիրապետության շրջանը վերջացավ» 1910 թ. դեկտեմբերին, գրել է Վ. Ի. Լենինը իր «Ցույցերի սկիզբը» հոդվածում:— Սկսվում է նոր վերելքի շրջանը: Պրոլետարիատը, որը 1905—1909 թթ. նահանջում էր՝ թեպետև մեծ ընդմիջումներով, ուժ է կուտակում և սկսում հարձակման անցնել»[30]:

[30] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 16, էջ 466:

Ռուսաստանի պրոլետարիատը, հաղթահարելով ստոլիպինյան ռեակցիայի սև պատնեշը, գրոհի անցավ։ Հիրավի, ցարիզմի մասսայական հարձակումը, բռնություն և իրավազրկումների եռամյա խրախճանքը անզոր էին կաշկանդելու 1905 թ. բովով անցած ռուսական պրոլետարիատի ազատատենչ կամքը։ Աստիճանաբար ոտքի ելան բանվորները, աշխատավոր զանգվածները և նորից բորբոքեցին հեղափոխական պայքարը։ Գործադուլային շարժման առաջևից էին ընթանում Մոսկվայի, Պետերբուրգի և մյուս քաղաքների բանվորները։ Արդեն 1911 թ. Ռուսաստանում գործադուլավորների թիվը հասավ ավելի քան հարյուր հազար մարդու[31]։ Ավանգարդում էին մետաղագործները։ 1911—1912 թթ. մայիսյան ցույցերն արթնացրին հարյուր հազարավոր մարդկանց և նետեցին քաղաքական ակտիվ պայքարի հորձանուտը։

Բանվորական հեղափոխական շարժման վերելքը գլխավորում էր ծանր փորձություններով անցած բոլշևիկյան կուսակցությունը։ «Ռուսական առաջին հեղափոխությունում պրոլետարիատը ժողովրդական մասսաներին սովորեցրեց պայքարել ազատության համար,— ասում էր Վ. Ի. Լենինը,— երկրորդ հեղափոխությունում նա պետք է հաղթանակի հասցնի նրանց»[32]։

Հեղափոխական շարժումը Ռուսաստանի պրոլետարական խոշոր քաղաքներից, ալեկոծվելով, հասավ կայսրության ծայրամասերը, աստիճանաբար թափանցեց Անդրկովկաս, այդ թվում՝ Հայաստան։ Ուլուխանլու կայարանում, Ղափանի և Ալավերդու պղնձահանքերում, Սիսիմադանում, Ալեքսանդրապոլում, Երևանի ձեռնարկություններում, Երևանի նահանգի Կողբի աղահանքերում և այլուր 1910—1914 թթ. բանվորական ցույցերն ու գործադուլները բարձրացնում են աշխատավորների դասակարգային գիտակցությունը։ Հեղափոխական բանվորների շարքերը ստվարացան հատկապես Լենայի նշանավոր իրադարձություններից հետո։

Բանվորների օրինակով քաղաքական ելույթներ են ունենում գյուղացիները, ծառայողները։ Գյուղացիական շարժումներն իրենց սուր ծայրով ուղղված էին ցարիզմի ագրարային դաժան քաղաքականության դեմ։

Մեկը մյուսի ետևից աշխուժանում են տեղատվության հետև-

---

31 *Տե՛ս П. Кабанов, Р. Ермак, Н. Кузнецов, А. Ушаков,* Очерки истории Российского пролетариата, М., 1963, стр. 265.

32 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 16, էջ 468։*

վանքով, հատկապես 1908—1909 թթ. տուժած կուսակցական կազմակերպությունները։ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության անդամները հաջողությամբ օգտագործում են լեգալ և անլեգալ հնարավորությունները։

Կուսակցական աշխատանքը զարթոնք է ապրում Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Զանգեզուրում և այլ վայրերում։

Երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները, ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, մեծ աշխատանք են կատարում համակուսակցական կոնֆերանսի նախապատրաստման, հեղափոխական նոր վերելքը գլխավորելու համար։ Ապագայի նկատմամբ ունեցած հավատն անսպառ եռանդ էր ներշնչում Ստ. Շահումյանին, Ս. Սպանդարյանին, Ս. Կասյանին, Վ. Կասպարովին, Ա. Բեկզադյանին, Ա. Մելիքյանին, Բ. Բորյանին և մյուս հայ մարքսիստներին։ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը ակտիվ մասնակցություն են ցույց տալիս Պրագայի կոնֆերանսի նախապատրաստմանն ու անցկացմանը։

1911 թ. հունիսին Փարիզում Վ. Ի. Լենինի գլխավորությամբ գումարված ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամների խորհրդակցությունից հետո Պրագայի կոնֆերանսը նախապատրաստելու և հատուկ ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողով ստեղծելու նպատակով Գ. Օրջոնիկիձեն 1911 թ. ամռանը գալիս է Ռուսաստան։ Երկու ամիս շարունակ նա շրջագայում է Ռուսաստանի և Անդրկովկասի արդյունաբերական խոշորագույն կենտրոնները, կազմակերպական աշխատանք ծավալում, տեղական կազմակերպություններին հասցնում Իլյիչի ցուցումները։ Մինչ այդ, Ստ. Շահումյանը չթուլացող թափով շարունակում էր ջերմ նամակագրությունը Վ. Ի. Լենինի հետ, խորհրդակցում կուսակցական բազմապիսի հարցերի մասին, նրան իրազեկ պահում Կովկասում կատարվող կուսակցական աշխատանքներին։ 1911 թ. գարնանը Շահումյանը նամակով Վ. Ի. Լենինին խնդրում է աշխատակցել իր խմբագրությամբ Բաքվում հրատարակվող «Սովրեմեննայա ժիզն» թերթին։ Վ. Ի. Լենինը, ընդունելով նրա առաջարկը, հոդվածներ է գրում այդ թերթի համար։ Վ. Ի. Լենինի հոդվածներից մեկը՝ «Մարքսիզմը» և «Наша заря»-ն» խորագրով, Վ. Իլյին ստորագրությամբ, առաջին անգամ լույս տեսավ «Սովրեմեննայա ժիզն»-ի վերջին՝ 1911 թ. ապրիլի 22-ի № 3-ում։ Այն, ուղղված լինելով լիկվիդատորների դեմ, վճռական դեր խաղաց ներկուսակցական պայքարի ընթացքում։ «Սովրեմեն-

նայա ժիզն»-ի փակվելու հետևանքով, Վ. Ի. Լենինի մյուս հոդվածները հնարավոր չեղավ տպագրել։ Շահումյանը, ինչպես վկայում են ժամանակակիցները, լենինյան անտիպ հոդվածները արտագրում և ուղարկում է Իլյիչին, բնագիրը պահում իր մոտ[33]։ Անհաշտ պայքար ծավալելով օտզովիստների, լիկվիդատորների ու տրոցկիստների քայքայիչ գործունեությունների դեմ, Գ. Օրջոնիկիձեին հաջողվում է Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ե. Ստասովայի (Թիֆլիս), Ս. Շվարցի (Եկատերինբուրգ) աջակցությամբ 1911 թ. սեպտեմբերի վերջին Բաքվում անցկացնել Ռուսաստանի խոշոր կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն և կազմել Համառուսակցական կոնֆերանսի հրավիրման Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողով։ Այն աշխատում էր ծանր պայմաններում։ Ստ. Շահումյանը 1911 թվականի սեպտեմբերին Բաքվից Ն. Կ. Կրուպսկայային գրած նամակում մերկացնում է Արտասահմանյան կազմակերպական հանձնաժողովի համաձայնողականներին, որոնք արգելակում էին Համառուսական կուսակցական կոնֆերանսի նախապատրաստությունը։ «Մոտ մի ամիս մարդուն

---

33 1911 թ. օգոստոսի 19-ին Բաքվի պահնորդական բաժանմունքը «Ֆիկուս» ծածկանունով իր գործակալից ինֆորմացիա է ստանում ՌՍԴԲԿ Բաքվի միացյալ կոմիտեի օգոստոսի 6-ի նիստի մասին, որին մասնակցել է այդ նպատակով Ռուսաստան մեկնած Գ. Օրջոնիկիձեն (տե՛ս ЦГИАМ, ДП. 1911. д. 5, ч. 6, л. Б. л. 23—34.

Ինֆորմացիայի վերջում «Ֆիկուսը» հաղորդում է, թե օրերս Շահումյանը նամակ է գրել կենտրոնական օրգանին հրապարակելու համար, որի պատճենը կցվում է։ Հաջորդ օրը ոստիկանապետ Մարտինովը այդ նյութերը ուղարկել է ոստիկանության դեպարտամենտին՝ նամակի վրա մակագրելով՝ «Ստ. Շահումյանի հոդվածը»։

1955 թ. ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալում աշխատելու ժամանակ հայտնաբերելով այդ հոդվածը (տե՛ս архив Груз. филиала ИМЛ, при ЦК КПСС, ф. 31. д. 119. л. 49—50) օգտագործել ենք մեր՝ «Степан Шаумян, Очерк журналистско-публицистической деятельности», Армгиз, Ереван, 1955, стр. 124—125 գրքում։ Բայց շատ չանցած մեզ մոտ տարակուսանք առաջացավ նրա հեղինակի շուրջը։ Հետագայում հոդվածի ուսումնասիրությունը բերեց այն եզրակացության, որ նրա հեղինակը Վ. Ի. Լենինն է։ Հոդվածի տեքստը մեր կողմից 1955 թ. ուղարկվել է Մոսկվա՝ ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտին՝ համապատասխան բացատրության հետ միասին։ Ինստիտուտում վերջնականապես հաստատվել է, որ դա լենինյան հոդվածներից է և հրապարակվել է «Կոմունիստ» ամսագրի 1956 թ. № 5, (էջ 38—40) «Положение дел партии» վերնագրով։ Այդ մասին տե՛ս նաև Լ. Մ. Լիֆշիցի, «Վոպրոսի իստորիի» ժուռնալի 1956 թ. 1 տպագրված «Важный документ в борьбе за созыв VI (Пражской) партийной конференции» խորագրով հոդվածը։

(Գ. Կ. Օրջոնիկիձեին— Խ. Բ.) թողել էին աշխատանքը շարունակելու համար, առանց փողի, բոլորովին անտեղյակ վիճակում: Նա ստիպված է եղել ամենաանախորժ ենթադրություններ անելու: Նկատի ունենալով Կազմ. Կոմ.-ի այդպիսի վերաբերմունքը դեպի գործն ու մարդիկ, մենք այժմ քիչ ենք հավատում նրա աշխատունակությանը... Տեղական գործերն ընթանում են սովորական կարգով, այսինքն՝ վերջին ժամանակների համար ոչ վատ: Կան նոր լավ ձեռնարկումներ, բայց անհարմար եմ համարում նրանց մասին գրել: Հավատացե՛ք ասածիս: Լիկվիդատորները շարժվել են սկսել վերջին ժամանակները, բայց ոչ երկար ժամանակով և շատ անհաջող: Այստեղ նրանք հունձ ընդհանրապես չեն ունենա»[34]:

Ոստիկանության կատաղի հարձակումների պատճառով, որի ընթացքում ձերբակալվեցին Շահումյանը և Բաքվի կոմիտեի պատասխանատու այլ աշխատողներ, ՌԿՀ-ն իր գործունեությունը փոխադրեց Թիֆլիս և շարունակեց կոնֆերանսի նախապատրաստումը: «Հակառակ ոստիկանական բոլոր ծանր պայմաններին,— ասված էր «Կուսակցական կոնֆերանսի հրավիրման Ռուսաստանյան կազմակերպական հանձնաժողովի ծանուցման» մեջ,— չնայած սև ռեակցիայի ստոր պրովոկացիային և մոլեգնությանը, կենդանի է հեղափոխական ոգին Ռուսաստանի պրոլետարիատի մեջ, ուժեղ է բանվոր դասակարգի առաջավոր տարրերի սոցիալ-դեմոկրատական գիտակցությունը, ամուր է սերը դեպի անլեգալ պանծալի ՌՍԴԲԿ-ն: Հաշվի առնելով բանվորական մասսայի այդ տրամադրությունը, Ռուսաստանի կազմակերպական հանձնաժողովը հաստատ հավատով ձեռնամուխ է լինում կուսակցական շինարարության մեծ գործին, որի առաջին քարն էլ հենց կլինի համակուսակցական կոնֆերանսը»[35]:

1912 թ. հունվարի 5—7-ին Պրագայում գումարված համառուսաստանյան VI կոնֆերանսը՝ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, ավարտեց լիկվիդատորության դեմ մղված քառամյա պայքարը, կուսակցությունից դուրս շպրտեց լիկվիդատորներին և ամրապնդեց լենինյանների հաղթանակը:

Կոնֆերանսում Ս. Սպանդարյանը զեկուցեց Բաքվի, Թիֆլիսի, Սուխումիի, Բաթումիի, Քութայիսիի, Փոթիի, Գորիի կուսակցական աշխատանքների մասին: Կոնֆերանսն ընտրեց Կենտրոնական կոմիտե՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ: Կենտկոմի կազմում, բոլ-

34 Ստ. Շահումյան, Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 172:

35 Տե՛ս «ՍՄԿԿ-ն բանաձևերում...», մաս 1, էջ 313:

շևիկյան կուսակցության մի շարք ականավոր գործիչների հետ միասին ընտրվեցին Ս. Սպանդարյանը, Ի. Ստալինը և Ստ. Շահումյանը։

Հայաստանի բոլշևիկները կոնֆերանսից հետո ակտիվ գործունեություն ծավալեցին։ Պրագայի կոնֆերանսի որոշումները 1912 թ. Հայաստանի բոլշևիկներին հասցրին Ս. Կասյանը (Ալավերդի, Սանահին, Բորչալու), Բ. Բորյանը (Երևան), Գ. Աթարբեկյանը (Նոր Բայազետ) և ուրիշներ։ Կոնֆերանսից հետո Ս. Սպանդարյանին, Ե. Ստասովային, Վ. Շվեյցերին և այլոց հաջողվում է Թիֆլիսում հրատարակել կուսակցական մի շարք կարևորագույն փաստաթղթեր, այդ թվում՝ «ՌՍԴԲԿ ընտրական պլատֆորմը», որը գրել էր Վ. Ի. Լենինը, ինչպես և ՌՍԴԲԿ Կենտկոմի՝ «Հանուն կուսակցության», «Կեցցե՛ մայիսի 1-ը» թռուցիկները։ Համակուսակցական կյանքում այդ փաստաթղթերը վճռական նշանակություն ունեցան։ Դրանցով կազմակերպությունները կողմնորոշվում էին՝ ընտրական կամպանիայի ընթացքում, ղեկավարվում էին լենինյան տակտիկայով և համախմբվում կուսակցության Կենտկոմի շուրջը[36]։

---

36 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 17, էջ 626—627։ «ՌՍԴԲԿ ընտրական պլատֆորմը» տպագրվել է 10.000, իսկ «Հանուն կուսակցության» թռուցիկը՝ 6000 օրինակ տպաքանակով։ Բացի Կովկասից, այն ուղարկվել է արտասահման՝ Վ. Ի. Լենինին, ինչպես և Ռուսաստանի 18 խոշոր քաղաքներ։ Ն. Կ. Կրուպսկայան ստանալով այդ նյութերը, սրտանց ողջունել է Թիֆլիսի բոլշևիկներին (տե՛ս ՍՄԿԿ-ին կից ՄԼԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 169, թ. 269), իսկ կուսակցության Կենտկոմի օրգան («Սոցիալ-դեմոկրատ»-ը 26, 8-ը մայիսի 1912 թ.) հատուկ հոդված է նվիրել այդ թռուցիկներին։ Հարկավոր է նկատել, որ «Հանուն կուսակցության» թռուցիկի ձեռագիրը 1912 թ. ցարական ոստիկանության ձեռքն է ընկել։ Ըստ էքսպերտ հանձնաժողովի եզրակացության, այն գրել է Ս. Սպանդարյանը։ Հենց այդ էլ հիմք է ծառայել, իբրև իրեղեն ապացույց, նրան մեղադրելու և Կրասնոյարսկ աքսորելու համար (տե՛ս Ս. Սպանդարյան, Հոդվածներ, ճառեր, փաստաթղթեր, Երևան, էջ 280—285։ Նաև՝ ՄԼԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 31, գ. 86, թթ. 10—52)։ 1926 թ. Ս. Սպանդարյանի մահվան 10-ամյակի առթիվ, այլ նյութերի հետ միասին, «Զարյա վոստոկա» թերթը հրապարակեց՝ «Հանուն կուսակցության» թռուցիկը որպես Ս. Սպանդարյանի գրվածք (տե՛ս «Զարյա վոստոկա», 1286, 26-ը սեպտեմբերի, 1926 թ.)։ Նույն համարում զետեղված է նաև Ե. Ստասովայի հոդվածը, որտեղ հավաստվում է, որ «Հանուն կուսակցության» թռուցիկը գրել է Ս. Սպանդարյանը։ Այնուհետև այդ թռուցիկը մի քանի անգամ հրապարակվել է Ս. Սպանդարյանի Երկերի ժողովածուներում (տե՛ս Ս. Սպանդարյան, Հիշողություններ և փաստաթղթեր, 1929, Ս. Սպանդարյան, Հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր, Երևան, 1939, նույնը՝ ռուսերեն լեզվով և այլն)։

ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի 1963 թ. հունիսի 20-ին գրած նամակում Ե. Ստա-

Ուշադրության արժանի է նաև ՌՍԴԲԿ Կենտկոմի 1912 թ. մայիսմեկյան այն թռուցիկը, որը լույս է տեսել Թիֆլիսում, ընդհատակյա պայմաններում՝ ռուսերեն, հայերեն, վրացերեն և որի տպաքանակը փոխադրվել է Պետերբուրգ՝ երկրի տարբեր քաղաքներում և գավառներում տարածելու համար[37]։

Հեղափոխական նոր վերելքի տարիներին Հայաստանում կուսակցական քաղաքական աշխատանք էին կատարում Արշ. Մելիքյանը, Լ. Տեր-Հովսեփյանը, Վարդան Բաղդասարյանը (Երևան), Մ. Մանուչարյանը, Ա. Մարտիրոսյանը, Լ. Առուստամյանը (Ղափան), Հ. Սարուխանյանը, Լ. Ղազարյանը, Բ. Ղարիբջանյանը, Գ. Ղալաչյանը (Կաղզվան), Վ. Հովսեփյանը, Բ. Սահակյանը (Կարս) և շատ ուրիշներ։ Բաքվի, Թիֆլիսի և երկրամասի այլ քաղաքների բոլշևիկների հետ ունեցած կապը պահպանվում էր Մելիք Մելիքյանի, Ս. Կասյանի, Աշ. Թումանյանի, Դ. Շահվերդյանի, Հ. Սոլովյանի և այլոց միջոցով։ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը Արշ. Մելիքյանի խմբագրությամբ 1913 թ. դեկտեմբերի 30-ից մինչև 1914 թ. հունիսի 20-ը հրատարակում էր «Խոսք» լեգալ թերթը, որը հմտորեն օգտագործվում էր բոլշևիկների կողմից։

Այս շրջանում Հայաստանի բոլշևիկներն ավելի ակտիվացրին գաղափարական-քաղաքական աշխատանքը բանվորների և աշխատավոր զանգվածների շրջանում, պայքար ծավալեցին ՌՍԴԲԿ VI (Պրագայի) կոնֆերանսի որոշումների կենսագործման, աշխատավորների քաղաքական դաստիարակության համար։

4

Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի, Ա. Մյասնիկյանի և հայ մյուս բոլշևիկ լրագրողների՝ 1910—1912 թթ. գործունեության մեջ հատուկ տեղ են գրավում մարքսիստական նոր տիպի կուսակցության տեսական հիմունքների, գիտության, գրա-

---

ռվան կրկին ընդգծում է իր միտքը (տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4006)։ Տե՛ս մեր «История Армянской большевистской периодической печати. 1900—1920 гг.», դոկտորական դիսերտացիան, գիրք առաջին, 1959, 1962. Երևան—Թբիլիսի։

37 «Կեցցե՛ մայիսի մեկը» թռուցիկի հայերեն հրատարակության մեկ օրինակը պահվում է Վրացական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 31, գ. 357, թ. 211։ Այն իր ժամանակին, բնագրավվել է Թիֆլիսի ոստիկանական վարչության կողմից։ Տե՛ս նաև «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ» 1902—1921, Երևան, 1960, էջ 274—278։

կանության, արվեստի, թատրոնի, կրթության և այլ հարցեր, լենինյան կուսակցականության սկզբունքների պաշտպանությունը: Ռեակցիայի տարիներին ամեն տեսակ խավարամոլ գրչակները ձգտում էին ընդմիշտ թաղել ռուսական առաջավոր գրականությունը՝ Պուշկինի, Լերմոնտովի, Նեկրասովի, Բելինսկու, Գերցենի, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, Սալտիկով-Շչեդրինի մեծ ավանդույթները, ժողովրդական-ռեալիստական ճշմարիտ արվեստը, փականքի տակ դնել Լ. Տոլստոյի, Ա. Չեխովի, Մ. Գորկու հանճարեղ երկերը և այդ ամենի փոխարեն հրամցնել հակաժողովրդական, սևհարյուրակային նեխած «գրականությունն» ու արվեստը: Եվ այդ ամենն արվում էր «արվեստն արվեստի համար» ռեակցիոն տեսության հիմնավորումով:

Վ. Ի. Լենինի գրականության կուսակցականության մասին ուսմունքի լույսի տակ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Բ. Կնունյանցը, Ա. Մյասնիկյանը բազմաթիվ հոդվածներ են գրում, որտեղ պարզ կերպով դրսևորված է գրականության ու արվեստի հարցերի նկատմամբ ունեցած կուսակցական սկզբունքայնությունը: Նրանք ձևավորում և զարգացնում են մարքսիստական հայ գրականագիտությունը:

1911 թ. մարտի 26-ին (ապրիլի 8-ին) Բաքվում Ստ. Շահումյանի խմբագրությամբ սկսում է լույս տեսնել «Սովրեմեննայա ժիզն» բոլշևիկյան շաբաթաթերթը: Երեք համար հրատարակվելուց հետո ցարական կառավարությունը փակում է այդ թերթը:

Թերթի առաջին համարի առաջնորդողը գրել է Ստ. Շահումյանը: Նրանում նկարագրում է ցարական Ռուսաստանի վերջին տարիների մռայլ կացությունը, բանվորների համար ստեղծված դժվարությունները, և ապա պարզաբանում նոր օրգանի խնդիրները՝ ստեղծված իրադրությունում ամենագործոն մասնակցություն ունենալ հասարակական-քաղաքական կյանքում, ուղիներ մատնանշել պրոֆմիությունների, կուլտուր-լուսավորական ընկերությունների և պրոլետարիատի դասակարգային այլ կազմակերպությունների ամրապնդման համար: Թերթի մյուս կարևոր խնդիրը ընթերցողների լայն շրջաններին բանվորական շարժման տեսության և պրակտիկայի հետ ծանոթացնելն էր:

Շահումյանը հույս էր հայտնում, որ ներկա հրատարակությունը կլրացնի Բաքվի բանվորների կյանքի մեջ եղած խոշոր բացը: Նա ընթերցողներին հրավիրում էր, ըստ հնարավորության, գործոն մասնակցություն ունենալ, օգնել ինչպես տպագիր օրգանի գաղա-

փարական մասի, այնպես էլ նրա տարածման գործում։ «Բանվորների հոդվածները և նամակները, ինչպես և նավթահանքերից, գործարաններից և այլ առևտրա-արդյունաբերական հաստատություններից ստացվող խրոնիկաները,— ասում էր Շահումյանը,— մեր կողմից ընդունվելու են մեծ շնորհակալությամբ։ Ընթերցողի՝ նման մասնակցությունն իր օրգանի բախտում մենք համարում ենք նրա գոյության և հաջողության նախապայմանը»[38]։

«Սովրեմեննայա ժիզն» թերթում են լույս տեսել Ստ. Շահումյանի՝ «Գորկու մասին», «Մի քանի խոսք Լ. Ն. Տոլստոյի կրոնի մասին», «Մայիսմեկյան տոնն արտասահմանում», «Բաքվի նավթարդյունաբերության դրության շուրջը» և այլ հոդվածները։

Վ. Ի. Լենինը հատկապես բարձր է գնահատել Լ. Ն. Տոլստոյի ռեալիզմը։ Իլյիչը նշել է, որ Լ. Ն. Տոլստոյը մեծ գեղարվեստագետ է, կարողացել է արտահայտել աշխատավոր գյուղացիության տրամադրությունները, նրա բողոքի ու զայրույթի տարերային պոռթկումը։ «Տոլստոյի երկերում արտահայտվեցին հատկապես գյուղացիական մասսայական շարժման թե՛ ուժը և թե՛ թուլությունը, թե՛ հզորությունը և թե՛ սահմանափակությունը»[39],— գրել է Վ. Ի. Լենինը։

Ստ. Շահումյանը, ղեկավարվելով Լ. Ն. Տոլստոյին տրված լենինյան գնահատականներով, բարձր է գնահատել գրական այդ տիտանի գեղարվեստական մեծ հանճարը, նրա ստեղծագործությունների մերկացնող քննադատական ուժը։

1910 թ. մահացավ Լ. Ն. Տոլստոյը։ Հանճարեղ գրողի մահը խոր հուզումներ առաջացրեց ոչ միայն Ռուսաստանում, այլև նրա ծայրամասերում։ Այսպես, Բաքվի կադետները և նրանց օրգան «Բաքու» թերթը ոչ մի բանի առաջ կանգ չէին առնում կեղծ ֆրազների տակ վարագուրելու Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործությունների սոցիալական խորքը և նրան ներկայացնելու որպես մարդկության «մեծագույն խիղճ» կամ «կյանքի ուսուցիչ»։ Կադետները Լ. Ն. Տոլստոյին «մեծարում էին» նրա աշխարհայեցողության թուլության, կրոնական ուսմունքի համար։

Վ. Ի. Լենինը մերկացնում էր պետական-պաշտոնական, լիբերալ-բուրժուական մամուլի երեսպաշտությունն ու կեղծարարությունը։ «Նրանք օձիքն պատռում են այն սնամեջ, կալյոննի—լիբե-

---

38 «Современная жизнь», 1911, № 1.

39 Վ. Ի Լենին. Երկեր, հատ. 16, էջ 421։

րալ, մաշված-պրոֆեսորական ֆրազներով «քաղաքակիրթ մարդկության ձայնի» մասին, «աշխարհի միահամուռ արձագանքի» մասին, «արդարության, բարության գաղափարների» մասին և այլն, որոնց համար այնպես խարազանում էր Տոլստոյը»— և իրավացի էր խարազանում—բուրժուական գիտությանը»[40]։

Կառավարական պաշտոնական թերթերը և բուրժուական վարձու գրչակները ամեն ջանք գործադրում էին հավատացնելու, որ իրենց համար ևս Տոլստոյը ազգային մեծ հանճար է, որ իրենք հարգում են «մեծ գրողին», միևնույն ժամանակ պաշտպանելով «սրբազան» սինոդին։ Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ նրանք չեն կարող ուղղակի և պարզորոշ արտահայտել պետության, եկեղեցու, հողային մասնավոր սեփականության, կապիտալիզմի մասին Տոլստոյի հայացքների իրենց գնահատականը,—«ոչ թե այն պատճառով, որ գրաքննությունը խանգարում է. ընդհակառակը, գրաքննությունը օգնում է նրանց դուրս գալու դժվարությունից,— այլ այն պատճառով, որ Տոլստոյի քննադատականի մեջ յուրաքանչյուր դրույթ մի ապտակ է բուրժուական լիբերալիզմին»[41]։

Լիբերալները և հետադիմական բոլոր տարրերը ջանում էին առաջին պլան քաշել Տոլստոյի միստիկան, որ իբր թե Տոլստոյը մարդկության «մեծ խիղճն է»։ Այդ բոլորը հետապնդում էր մի նպատակ՝ հասարակական լայն շրջաններից ծածկել Տոլստոյ-գեղագետի կողմից մերկացված ցարական Ռուսաստանի ծանր ու դաժան իրականությունը և ցույց տալ, թե իբր Տոլստոյը համամիտ է եղել ցարական կարգերին։

Ստ. Շահումյանն անողոքաբար մերկացրեց Բաքվի լիբերալ-կադետական մամուլի կողմից Տոլստոյի շուրջը ծավալված երկերեսանի շաղակրատանքը։ 1910 թ. դեկտեմբերի 5-ին գրած իր «Ընթերցողի տարակուսանքը» հոդվածում նա նշել է, որ Լև Նիկոլաևիչ Տոլստոյի մահը և այն ամենը, ինչ կապված է այդ մահվան հետ, տիրաբար իր վրա է բևեռում ամբողջ աշխարհի ուշադրությունը։ Բոլորը խոսում են «անթապալկիր արքայի»՝ Լ. Ն. Տոլստոյի մահվան մասին։ Շահումյանը լենինյան դիրքերից գրվատում է Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործությունների արժանիքները և վճռաբար մերկացնում Տոլստոյի ուսմունքի հետադիմական կողմը։ «Սիրեցեք Տոլստոյին,

---

40 Նույն տեղում, էջ 423։

41 Նույն տեղում, էջ 424։

բայց ճշմարտությունն ավելի սիրեցեք, քան Տոլստոյին»[42],— գրել է Շահումյանը։

Ստ. Շահումյանի հոդվածները Լ. Ն. Տոլստոյի մասին այն ընդհանուր պայքարի արձագանքներն են, որ բոլշևիկները վարում էին «տոլստովշչինայի» խավարամոլության դեմ, հանուն գեղարվեստական խոսքի մեծ հանճարի։

1911 թ. «Լիստոկ կոպեյկա» թերթում տպագրված իր «Մեծարում, թե՞ ռեկլամ» հոդվածում Ս. Սպանդարյանը բացահայտում է բուրժուական լիբերալների փարիսեցիությունը, որոնք մեծարելով գրողի հիշատակը, գռեհկացնում և զավեշտի էին վերածում հանճարի հիշատակի հարգանքը, կազմակերպելով Նրա «Հարության» վեպի հերոսի՝ Նեխլյուդովի գրական դատը։

Լ. Ն. Տոլստոյի մասին Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի աշխատությունները օգնել են Անդրկովկասի աշխատավորությանը ճիշտ կողմնորոշվելու հանճարեղ գրողի շուրջը ծավալված քաղաքական ու գրական վեճերում, ավելի զգայուն, ավելի ակնածալից վերաբերմունք դրսևորելու դեպի մեծ գրողի հիշատակը։

Ստ. Շահումյանը առաջիններից մեկն էր, որ հայ ընթերցողներին ծանոթացրեց պրոլետարական գրականության և սոցիալիստական ռեալիզմի մեծ հիմնադիր Մաքսիմ Գորկու ստեղծագործություններին։

Նա միշտ ջերմ սիրով է արտահայտվել Մ. Գորկու մասին։ Դեռևս 1901 թ. փետրվարին Ռիգայից ուղարկած նամակներից մեկում գրել է. «... կարդալու համար ռուս գրողներից խորհուրդ կտամ վերցնել Չեխովին, Գորկուն, Վերեսաևին, Չիրիկովին, ժամանակակից աստղերը դրանք են»։

1901 թ. Շահումյանի թարգմանությամբ առանձին գրքով Թիֆլիսում լույս է տեսնում Մ. Գորկու «Մի անգամ աշնանը» պատմվածքը։ Գրողի երկերից դա առաջին հայերեն գիրքն է։ Սահուն ոճով, գեղեցիկ այդ թարգմանությունը հիմք դրեց Գորկու ստեղծագործությունների հայերեն հրատարակություններին։ 1903 թ. Ստ. Շահումյանը Բեռլինում դիտել է Մ. Գորկու «Հատակում» պիեսի բեմադրությունը և իր ջերմ համակրանքն արտահայտել պիեսում արծարծված գաղափարների նկատմամբ։

1911 թ. մարտի 20-ին «Սովրեմեննայա ժիզն» շաբաթաթերթում «Ստիվին» ստորագրությամբ լույս է տեսել Ստ. Շահումյանի

---

42 Ստ. Շահումյան, Գրականության մասին, Երևան, 1948, էջ 197։

«Գորկու մասին» փայլուն հոդվածը: «Մաքսիմ Գորկին ռուս բանվորների սիրելին է»,— ասում է Շահումյանը:

Բազմակողմանիորեն քննարկելով Մաքսիմ Գորկու հոդվածը «Ինքնուս գրողների մասին», Շահումյանը ցույց է տալիս նրա սերտ կապը ժողովրդական լայն մասսաների, առանձնապես սկսնակ գրողների և թղթակիցների հետ:

Ստոլիպինյան տեղատվության տարիներին Մ. Գորկին իր հրապարակախոսությամբ բոլշևիկյան կուսակցականության օրինակ էր տալիս:

Նրա պատմվածքները զարդարում էին բոլշևիկյան «Զվեզդա»-ի էջերը: Աշխատավոր մասսաների ներկայացուցիչները՝ բանվորները, գյուղացիները, աքսորականները, զինվորները և ուրիշներ, իրենց հարազատ ու մոտ էին համարում Մաքսիմ Գորկուն, իրենց ստեղծագործությունների ձեռագրերը ուղարկում էին նրան և սպասում խորհրդի: Շահումյանը նշել է, որ հազարավոր թելեր ձգվում էին գիտակից կյանքի համար արթնացող, ժողովրդի ծոցից ելած, գրականությամբ հետաքրքրվող մարդկանց սրտերից դեպի իրենց պանծալի ընկերակիցը՝ Մաքսիմ Գորկին: Ով կարիք էր զգում արտահայտելու իր զգացմունքներն ու խոհերը մտերիմ մարդու առաջ, ում մեջ ցանկություն էր հղանում գրել որևէ բան, փորձել իր բախտը գրականության մեջ, Գորկուն էր ուղարկում իր ձեռագրերը, նամակներն ու բանաստեղծությունները: Ստ. Շահումյանը, բարձր գնահատելով Մաքսիմ Գորկու դերը պրոլետարական գրականության զարգացման գործում, գրել է. «Գորկին պրոլետարական գրականության զարդն ու պարծանքն է... Եվ բանվորները հպարտությամբ կարող են հայտարարել. «Այո, Գորկին մերն է, նա մեր արվեստագետն է, մեր բարեկամն ու զինակիցը՝ աշխատանքի ազատագրության վեհ պայքարի մեջ»[43]:

Հետագայում, մինչև իր կյանքի վերջը, Ստ. Շահումյանը մի շարք անգամ անդրադարձել է Գորկու ստեղծագործություններին: 1916 թ. Շահումյանն իր մի հոդվածում խոսելով Մաքսիմ Գորկու աշխատակցությամբ հրատարակվող «Լետոպիս» ամսագրի մասին,— գրել է. «Ներկա համարի գեղարվեստական բաժնի զարդը, ինչպես միշտ, Գորկու գրվածքն է... Գորկու ամեն մի տողը կարդացվում է էսթետիկական մեծ հաճույքով ու հետաքրքրությամբ»[44]:

---

43 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, Երևան, 1948, էջ 295, 296:

44 «Պայքար», № 37, 1916, Թիֆլիս:

1911 թ. ապրիլի 22-ին (մայիսի 5-ին) ցարական կառավարությունը փակում է «Սովրեմեննայա ժիզն» թերթը: Վ. Ի. Լենինը Մաքսիմ Գորկուն ուղղած 1911 թ. մայիսի 27-ի նամակում գրում է. «Սովրեմեննայա ժիզն»-ի վրա Բաքվում նույնպես կալանք դրին և խեղդեցին»[45]: 1910—1913 թթ. Ալ. Մյասնիկյանն առանձին հոդվածներով հրատարակում է «Միքայել Նալբանդյան» աշխատությունը, որը 1919 թ. Մոսկվայում լույս տեսավ առանձին գրքով: Հեղափոխական դեմոկրատական հոսանքի առաջնորդի գործունեության մարքսիստական նկարագիրն է տրված այդ աշխատությունում: Մյասնիկյանն իր հոդվածով հիմք դրեց մարքսիստական նալբանդյանագիտությանը, հստակ պատասխան տվեց մինչ այդ շրջանցված կամ էլ չլուծված հարցերին[46]:

Արժեքավոր են 1913—1914 թթ. «Ազգային հարցի առթիվ» նրա հրապարակած հոդվածները:

Արժեքավոր է Հովսեփ Կարախանյանի «Դասակարգային արշինը գեղարվեստական քննադատության մեջ» հոդվածը, որը գրել է 1912 թ. նոյեմբերին: Բանավիճելով Մարտիրոս Հարությունյանի հետ, նա փաստերով ցույց է տալիս մարքսիստական գրաքննադատության նշանակությունը: Հոդվածում սուր քննադատության են ենթարկված նարոդնիկությունը և «լեգալ մարքսիզմը»[47]:

Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Մյասնիկյանը դրեցին մարքսիստական հայ գրական քննադատության հիմքը: Նրանց էսթետիկական հայացքները սերտորեն առնչված են տեսական, հասարակական, քաղաքական և հեղափոխական գործունեության, մարքսիստական ընդհանուր աշխարհայացքի հետ: Իրենց աշխատություններում միշտ հանդես բերելով բարձր կուսակցականություն և սկզբունքայնություն, լենինյան դիրքերից գնահատելով ռուս առաջավոր գրականության դերը, նրանք ցույց են տվել հեղափոխական մեծ դեմոկրատներ Գերցենի, Բելինսկու, Չերնիշևսկու, Դոբրոլյուբովի, ինչպես նաև Ա. Ս. Պուշկինի, Լ. Ն. Տոլստոյի, Մ. Յու. Լերմոնտովի, Ն. Ա. Նեկրասովի, Ն. Վ. Գոգոլի, Ա. Պ. Չեխովի, Տարաս Շևչենկոյի և մյուս գրողների բարերար ազդեցությունը հայ գրականության վրա:

Սովետահայ գրականագիտության համար չափազանց արժեքավոր են Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Մյասնիկյանի

45 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 34, էջ 523:

46 Տե՛ս Ա. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1959, էջ 17—42:

47 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊԿԱ, ֆ. 227, գ. 301, թ. 7—16:

ու մյուս հայ ականավոր մարքսիստների կարծիքներն ու բնութագրությունները խաչատուր Աբովյանի, Րաֆֆու, Վ. Փափազյանի, Հովհ. Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Ալ. Խասհակյանի, Հակոբ Հակոբյանի, Գաբրիել Սունդուկյանի և մյուս գրողների ստեղծագործությունների մասին։ Ստ. Շահումյանը շատ բարձր է գնահատել խաչատուր Աբովյանին և նրա «Վերք Հայաստանի» հուշակավոր երկը։

Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը խոշոր աջակցություն են ցույց տվել հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանին և բարձր գնահատել նրան։

5

1911 թ. նոյեմբերից մինչև 1912 թ. հունվարը Բաքվում՝ Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս է տեսնում մարքսիստական հայերեն առաջին լեգալ հանդեսը՝ «Նոր խոսք»-ը։ Բացի Ստ. Շահումյանից, «Նոր խոսք»-ին գործուն մասնակցություն են ունեցել Արտաշես Կարինյանը, Ալեքսանդր Ստոպանին, Հակոբ Հակոբյանը, Վահան Տերյանը, Ռուբեն Դաշտոյանը, Հովսեփ Կարախանյանը, Ա. Վարդանյանցը[48] և ուրիշներ։

Ստ. Շահումյանը չափազանց մեծ նշանակություն էր տալիս հայերեն մարքսիստական տեսական պարբերականի հրատարակությանը։ Ա. Կարինյանը, որ Ստ. Շահումյանի հանձնարարությամբ խմբագրել է «Նոր խոսք»-ի շատ նյութեր և մոտ է եղել հանդեսի խմբագրությանը, իր հիշողություններում պատմում է.— Շահումյանն անդադար հիշեցնում և շեշտում էր, որ անհրաժեշտ է օր առաջ ստեղծել հայերեն մարքսիստական տեսական պարբերական։ Եթե հայ մարքսիստները ցանկանում են ամրացնել մարքսիզմի ազդեցությունը երիտասարդության ու բանվոր դասակարգի առաջավոր ջոկատի վրա, նրանք պարտավոր են մարքսիզմի տեսակետով լուսաբանել հայ իրականության հարցերը, Հայաստանի պատմության, կուլտուրայի, գրականության հիմնական պրոբլեմները։

Շահումյանը սովորեցնում էր, որ հայ բուրժուական նացիոնալիստների դեմ պայքարելու համար հարկավոր է զինվել մարք-

---

48 Ա. Վարդանյանցը (Վարդանովը) ՌՍԴԲԿ անդամ էր 1905 թ.։ Ռուսական առաջին հեղափոխության 50-ամյակի առիթով պարգևատրվել է Լենինի շքանշանով, վախճանվել է 1957 թ. Բաքվում։

սիստական տեսությամբ, պրոլետարիատին համախմբել բոլշևիկյան կուսակցության դրոշի տակ։

«Նոր խոսք»-ը կոչված էր պրոպագանդելու մարքսիզմը, պայքարելու բուրժուական նացիոնալիզմի դեմ։ Հանդեսի փաստական խմբագիրը, բանվոր բոլշևիկ Ա. Վարդանյանցն էր[49]։

Բնորոշ է այն փաստը,— պատմում է Ա. Կարինյանը,— որ «Նոր խոսք»-ի երևան գալը իրարանցում է առաջացնում հայ բունդականների՝ «սպեցիֆիկների» մեջ, որոնք դիմում են խորամանկության (ավելի ճիշտ խարդախության)։ Երևանցյանի տպարանում, ուր տպագրվում էր «Նոր խոսքը», հրատարակության են հանձնում իրենց նացիոնալիստական-մենշևիկյան «Նոր կյանք» ամսագիրը։ Հայ բունդականները՝ մարքսիզմի հակառակորդ Դավիթ Անանունու ղեկավարությամբ, բանվորներին մոլորեցնելու նպատակով, իրենց պարբերականի ֆորմատը, շրիֆտը, շապիկը, ձևավորումը, նյութերի դասավորությունը ընտրել էին «Նոր խոսք»-ի օրինակով։

Պրոլետարիատին խաբելն այնքան էլ հեշտ չէր։ № 1—2-ը բացվում է Հակոբ Հակոբյանի» «Մուրճը ձեռքներիդ, մաքառման ժամին» բանաստեղծությամբ, որը հեղինակը գրել է 1911 թ. սեպտեմբերի 25-ին, հատկապես «Նոր խոսք»-ի համար։ Բանաստեղծը անհուն հավատ է ներշնչում պրոլետարիատին, ոգեկոչում նրան երբեք չթուլանալ և զարկել «քանի երկաթն է տաք-տաք»։ Հակոբյանը տեսնում էր հեղափոխության վերահաս վերելքը։

Հակոբ Հակոբյանի այս բանաստեղծությունը բնորոշում էր մարքսիստական հայ անդրանիկ հանդեսի ուղղությունը, որը լայն արձագանք գտավ Բաքվի պրոլետարիատի շարքերում։

Մարտական տրամադրությամբ էր համակված տրիբուն-բանաստեղծի երկրորդ ոտանավորը՝ «Էտապը», որի մեջ պոետը նկարագրում էր «թև-թևի կապված», շղթայակիր աքսորական-հեղափոխականների երթը դեպի Ուրալ՝ «Խրոխտ ու հաղթ» նրանք ընթանում էին «կող-կողի հպված», աչքերում՝ երազանքներ լույս, սրտերում՝ հեղափոխության բոցը կարմիր։ Անպարտ ու անընկճելի են նրանք աքսորի դժբախտության մեջ անգամ։

Շատ գնացին, քիչ՝ հպարտ, չպարտված՝
Նրանց կրծքերից չլսվեց հառաչ[50]։

---

49 Տե՛ս Ա. Կարինյանի հուշերը «Նոր խոսք»-ի մասին, ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ։

50 «Նոր խոսք», № 1—2, 2 նոյեմբերի 1912 թ., էջ 12։

Հայ մարքսիստական առաջին հանդեսի էջերը զարդարում էին սոցիալիստական ռեալիզմի հիմնադիր Մաքսիմ Գորկու և Վահան Տերյանի բանաստեղծությունները:

Բոլշևիկյան «Զվեզդա»-ից թարգմանվել և «Նոր խոսք»-ում տպագրվել են Մաքսիմ Գորկու իտալական հեքիաթներից երկուսը, որոնք համակված էին հեղափոխական տրամադրությամբ:

«Նոր խոսք»-ի գեղարվեստական բաժնում հրապարակվել են Վահան Տերյանի «Ես կանգնած եմ վայրի ժայռի կատարին», «Արշալույս» բանաստեղծությունները:

Շրջադարձը տաղանդավոր բանաստեղծին տարավ բոլշևիկյան կուսակցության շարքերը, նրան դարձրեց մարքսիզմ-լենինիզմի բոցաշունչ պրոպագանդիստներից մեկը: Վահան Տերյանը զգաց, որ երկար չի կարող շարունակվել ստոլիպինյան տեղատվության «դաժան ու լռին» խավարը:

«Նոր խոսք»-ում տպագրվեցին Ստ. Շահումյանի՝ «Տիեզերական թութակը», «Իրականություն և հեռանկարներ» հոդվածները*: Նա ծրագրել էր «Տիեզերական թութակը» խորագրով երեք հոդված գրել, բայց նրան ձերբակալեցին, և միայն առաջինը հանձնեց տպագրության: «Տիեզերական թութակում» Շահումյանը տալիս է դաշնակցության, այսպես կոչված, «տեսաբան» Միքայել Վարանդյան-Հովհաննիսյանի «Հոսանքներ» գրքի և նրա սնամեջ «տեսության» մարքսիստական քննադատությունը:

Ստ. Շահումյանը ցույց է տալիս, որ միակ հեղափոխական ուսմունքը մարքսիզմն է, որի դրոշի տակ էլ համախմբված է բոլշևիկյան կուսակցությունը:

«Նոր խոսք»-ի «Ներքին տեսություն» բաժնում հրապարակված նյութերից ուշագրավը Շահումյանի «Իրականություն և հեռանկարներ» քաղաքական-հրապարակախոսական հոդվածն է, նրանում ցույց է տրված, որ տիրող կարգերը սարսափում են բանվոր դասակարգից, որ Պետական դումայի ամբիոնից, այնուամենայնիվ «ազատ հնչում է բանվորական ու գյուղացիական դեմոկրատիայի ներկայացուցիչների մտրակող խոսքը»: Շահումյանը համոզված է, որ Ռուսաստանի պրոլետարիատը շարունակելով փշոտ ու ծանր ճանապարհը, կհասնի իր վերջնական նպատակին՝ կտապալի ապա-

---

* «Նոր խոսք»-ում Շահումյանի հոդվածները լույս են տեսել «Շ-յան», «Ego), «Շ.» ստորագրություններով:

կանված իրականությունը և կիրականացնի իր նվիրական ձգտումները։

«Նոր խոսք»-ի № 1—2-ում տպագրված «Մատենախոսությունում» Շահումյանը պաշտպանում է Վ. Ի. Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության դրույթները, մերկացնում նարոդնիկ Պետրովիչին, «Միակ նորությունը պ. Պետրովիչի գրքույկի մեջ,— գրել է Շահումյանը,— նրա նարոդնիկական տեսակետն է։

...Ամբողջ գրքից առհասարակ,— թե՛ նրա բերած վիճակագրական թվերից և թե՛ դատողություններից ու եզրակացություններից,— սաստիկ հնության հոտ է փչում»։

Շահումյանի գրախոսությունը Պետրովիչի գրքի մասին 1911—1912 թթ. խոշոր նշանակություն ունեցավ Բաքվի պրոլետարիատի համար, պրոլետարիատ, որին նացիոնալիստական տարրերը ձգտում էին իրենց ազդեցության տակ գցել։

Խմբագրության հայտարարություններից երևում է, որ Շահումյանը «Նոր խոսք»-ի համար պետք է գրեր նաև «Ղազարոս Աղայան», «Ալեքսանդր Գերցեն», «Վ. Փափազյանը պատմագետի դերում» աշխատությունները, բայց ցարիզմի կողմից Աստրախան աքսորվելու պատճառով նա հնարավորություն չունեցավ այդ աշխատությունները հրապարակել*։

Բուրժուական պատմագիտությունը, կեղծելով ճշմարտությունը, ձգտում էր հայ ժողովրդի պատմությունը ներկայացնել որպես, այսպես կոչված, «միասնական Հայաստանի», «ընդհանրապես հայերի» պատմություն, որը ի վերջո հանգեցնում էր թագավորների, զորավարների, կաթողիկոսների կենսագրությունների տաղտկալի շարադրանքի։ Նրանց հիմնական սկզբունքն է եղել այն, թե «կա մի հոտ և մի հովիվ», այսինքն՝ «կույր ու տգետ ամբոխ» և «իմաստուն թագավոր և կաթողիկոս»։ Բոլորովին անտեսելով ժողովրդական մասսաների հերոսական պայքարը, բուրժուական և կղերա-ֆեոդալական պատմաբանները «բարերար» և «հրաշագործ» էին դարձնում թագավորներին ու մյուս բռնակալներին։ Հենց այդ է նկատի ունեցել Ստ. Շահումյանը, երբ պահանջել է, թե պատմական գիտությունը, եթե ուզում է իսկական գիտություն լինել, չի կարող հասարակական զարգացման պատմությունը հանգեցնել արքանե-

* Շահումյանի «Վ. Փափազյանը պատմագետի դերում» աշխատությունը երկար ժամանակ մնաց անտիպ և առաջին անգամ լույս տեսավ 1941 թվականին։

րի ու զորավարների գործողություններին, այլ, ամենից առաջ, պետք է զբաղվի նյութական բարիքներ արտադրողների պատմությամբ, աշխատավոր մասսաների պատմությամբ, ժողովուրդների պատմությամբ։

Ստ. Շահումյանը իր «Վ. Փափազյանը պատմագետի դերում» աշխատության մեջ չժխտելով գրողի գեղարվեստական ստեղծագործությունների արժանիքները, քննադատելով բուրժուա-նացիոնալիստական «միասնական հոսանքի» կեղծ տեսությունը, պատմաբանից՝ անցյալի դեպքերը և դեմքերը գեղարվեստական գրականության ու պատմության նյութ դարձնող հեղինակից, պահանջում էր ամենից առաջ պատմական մոտեցում, հանձնարարում հարազատ մնալ փաստերին, չաղավաղել դրանք, և երբեք չանտեսել պատմության իսկական կերտողին՝ աշխատավոր ժողովրդին։ Նա գտնում էր, որ հայ ժողովրդի իսկական, մարքսիստական պատմությունը կարող է գրել նոր սերունդը, որն իր դաստիարակությունը ստացել է ռուսական հեղափոխության ավազանում։ Մարքսիստ երիտասարդությունը, զինված պատմության մատերիալիստական ըմբռնման գիտական նոր մեթոդով, պետք է ուսումնասիրի եղած թե՛ հայկական և թե՛ օտարազգի ուղղակի և կողմնակի պատմական աղբյուրները,— ասում էր Շահումյանը,— և լույս սփռի մեր պատմական անցյալի վրա։

Ստ. Շահումյանի «Վ. Փափազյանը պատմագետի դերում» աշխատությունը այժմ էլ լուրջ զենք է բուրժուական օբյեկտիվիզմի և նացիոնալիզմի դրսևորումների դեմ մղվող պայքարում։

«Նոր խոսք»-ը բացի գրականության, արվեստի հարցերից իր էջերում մեծ տեղ էր տալիս բանվորական հեղափոխական շարժումներին, տնտեսական և այլ հարցերի լուսաբանությանը։

«Նոր խոսք»-ում հրապարակվել են Ալեքսանդր Ստոպանիի* «Հայ բանվորի բյուջեն», «Նավթարդյունաբերությունը, ներկա դրությունը», «Ինչպես են հաշմանդամվում նավթարդյունաբերության բանվորները», Ա. Խումարյանի «Գործադուլները 1911 թվականին» և այլ հոդվածներ։

Ալեքսանդր Ստոպանին, որը դեռևս 1904 թ. Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար գործիչներից մեկն էր, հայտնի

* Ալեքսանդր Միտրաֆոնովիչ Ստոպանիի հոդվածները «Նոր խոսք»-ում լույս են տեսել «Слово глагол», «Նաթալան», «Սեվերյան», և այլ ստորագրություններով։

էր նաև իր տնտեսագիտական-վիճակագրական աշխատություններով։ Լինելով «Գուդոկ»-ի քարտուղարը՝ նա հիմնականում հանդես էր գալիս նավթարդյունաբերության հարցերի շուրջ ծավալվող գիտական բանավեճերի ժամանակ։ «Նոր խոսք»-ի առաջին գրքում լույս տեսավ նրա «Հայ բանվորի բյուջեն» հոդվածը[51], որը փաստերով հարուստ և բովանդակալից մի ուսումնասիրություն էր։ Այն ուշագրավ էր իր քաղաքական նպատակասլացությամբ։ «Հայ բանվորի բյուջեն» բոլշևիկյան հայ ժուռնալիստիկայի պատմության մեջ տնտեսագիտական թեմայով գրված մարքսիստական առաջին ինքնուրույն աշխատություններից է։ Բոլշևիկյան կուսակցության և պրոլետարիատի շահերից են բխում Ա. Ստոպանիի նաև մյուս հոդվածները, որոնք ժամանակին մեծ հետաքրքրություն են առաջացրել Բաքվի պրոլետարիատի շրջաններում։

«Նոր խոսք»-ում Խարկովի համալսարանի նախկին շրջանավարտ, բոլշևիկ Գաբրիել Գրիգորյանը հանդես եկավ արդյունաբերական ճգնաժամերի մասին հոդվածով, որտեղ, հենվելով Կ. Մարքսի «Կապիտալ»-ի վրա, վերլուծում էր արդյունաբերական ճգնաժամերը։ Երիտասարդ մարքսիստի հոդվածը հայ իրականության մեջ արդյունաբերական ճգնաժամերը բնութագրելու անդրանիկ փորձն էր։

«Նոր խոսք»-ում ակտիվ դեր է խաղացել Ա. Կարինյանը։ Նա սերտ կապ հաստատելով ձերբակալված Շահումյանի հետ, «Նոր խոսք»-ը վարում էր բոլշևիկյան դիրքերից։ Լինելով փորձված լրագրող-հրապարակախոս, նա ամեն բան անում է հայերեն միակ բոլշևիկյան պարբերականը պահպանելու, պրոլետարիատի գաղափարախոսության ամբիոն դարձնելու համար։ Յուրաքանչյուր համարում լույս էին տեսնում Ա. Կարինյանի բովանդակալից հոդվածները։ Նա հիմնականում հանդես էր գալիս գրաքննադատական-գրականագիտական ելույթներով։ Ա. Կարինյանի՝ «Գյուղացին ռուսահայ գրականության մեջ», «Գծեր արևմտահայ գրականությունից» և այլ աշխատությունները, որոնք գրված են հատկապես «Նոր խոսք»-ի համար, ուշագրավ են թե իրենց բովանդակությամբ և թե նրանցում արծարծված հարցերով։ Դրանք միաժամանակ մարքսիստական հայ գրականագիտության առաջին գործերից են։

---

51 ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, տե՛ս Ա. Կարինյանի «Ստ. Շահումյանը և «Նոր խոսք» ժուռնալը» հուշերը։

«Նոր խոսք»-ի երրորդ և վերջին գիրքը լույս տեսավ 1912 թ. ապրիլի 8-ին։ Նրանում հրապարակվել են Հովսեփ Կարախանյանի «Կոլեկտիվիզմի գաղափարը և դպրոցը», ինչպես և «Սիմվոլիզմի փիլիսոփա բանաստեղծը (Մ. Մետերլինկ)», «Գերմանական պրոլետարիատի նահապետը (Ավգուստ Բեբելի մեմուարները)», «Չինական մեծ հեղափոխությունը», Հ. Սոլովյանի «Քննադատական տեսություններ. Johonnes: Հայ քնարերգության փիլիսոփայություն», «Ռուսաց լիբերալիզմի քառասնամյակը», «Բանվորական օրենսդրությունը պետական դումայում» և այլ հոդվածներ։ Ստ. Շահումյանի հիմնադրած մարքսիստական հայերեն անդրանիկ հանդեսը որոշակի դեր խաղաց մասսաներին մարքս-լենինյան գաղափարներով զինելու գործում։ «Նոր խոսք»-ը իր հաստատուն տեղն ունի Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման, բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմության մեջ։

6

ՌՍԴԲԿ Պրագայի համառուսաստանյան կոնֆերանսի (1912) և նրա որոշումների դեմ վայնասուն բարձրացրին Բունդի արտասահմանյան կոմիտեն, «Վպերյոդ» խումբը, «Գոլոս սոցիալ-դեմոկրատա»-ն, Տրոցկու Վիեննայի «Պրավդա»-ն, մենշևիկ-կուսակցականներն ու հաշտվողականները։ Նրանց ներկայացուցիչների 1912 թ. մարտի 12-ի փարիզյան խորհրդակցությունում հակալենինյան բանաձև ընդունվեց։ Այն հրապարակվեց սկզբում առանձին թերթիկով, իսկ հետո Վիեննայի «Պրավդա»-ում և Բունդի «Ինֆորմացիոնի լիստոկ»-ում։ Վ. Ի. Լենինը, որպես Միջազգային սոցիալիստական բյուրոյում ՌՍԴԲԿ Կենտկոմի ներկայացուցիչ, այդ բանաձևի առթիվ մարտին գրեց պաշտոնական հայտարարություն և ապա նամակ ՄՍԲ քարտուղար Կ. Գյույսմանսին։ Վ. Ի. Լենինի զեկուցումը, որպես պաշտոնական զեկուցագիր Կ. Գյույսմանսը մարտի 18-ին ուղարկեց բոլոր սոցիալիստական կուսակցություններին*։ Ծանուցագիրն ուղարկվեց Միջազգային սոցիալիստական բյուրոյի № 4 շրջաբերականով, որի մեջ խնդրվում էր սոցիալիստական կուսակցություններին՝ այն հրապարակել մամուլի իրենց

---

* Վ. Ի. Լենինի «Զեկուցում միջազգային սոցիալիստական բյուրոյին ՌՍԴԲԿ Համառուսաստանյան կոնֆերանսի մասին»-ը ռուսերեն առաջին անգամ լույս է տեսել 1929—1930 թթ., Երկերի 2-րդ և 3-րդ հրատարակություններում (տե՛ս

օրգաններում։ Այն հրապարակվեց Բելգիական բանվորական կուսակցության «Le peuple» («Ժողովուրդ») օրգանում՝ 1912 թվականի մարտի 23-ին — նոր տ.), գերմանական սոցիալ-դեմոկրատիայի օրգան «Vorwärts»-ում նույն թվականի մարտի 26-ին (տե՛ս № 72, Հավելված 1)։

«Vorwärts» թերթը կոնֆերանսի վերաբերյալ ծանուցագրին կցեց Տրոցկու զրպարտչական մեկնաբանությունները։ Նրան հետևեց «Դրոշակ»-ը, որն իր 1912 թ. մարտյան համարում Վ. Ի. Լենինի «Ծանուցման» հետ միասին հրատարակեց հակալենինյան խմբավորումների, այսպես կոչված, «Բողոքը»։

Իբրև լենինյան «Ծանուցման» հայերեն առաջին թարգմանություն, փաստն ուշագրավ է։

Ահա լենինյան «Ծանուցման» հայերեն առաջին հրատարակության տեքստը.

«Միջազգային ընկերվարական բյուրոն խնդրում է մեզ՝ հրատարակության տալ հետևյալ երկու ծանուցումները, որ գալիս են ռուսական սոցիալ-դեմոկրատիայի երկու հակամարտ հատվածների կողմից,— գրել է «Դրոշակ»-ը։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ ԼԵՆԻՆԻ

Վերջին տարիներս Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մեջ տիրում էին շփոթություն և կազմալուծում։ Երեք տարվա ընթացքում կուսակցությունը չկարողացավ գումարել ոչ կոնգրես, ոչ իսկ խորհրդաժողով, և երկու ձիգ տարիներ՝ նրա կենտրոնական կոմիտեն ընավ չպաշտոնավարեց։

Կուսակցությունը շարունակում էր ապրել, բայց ցրիվ, կղզիացած խմբերի ձևով (քանի որ չկար կենտրոնական կոմիտե), ապրում էր քիչ շատ կարևորություն ունեցող քաղաքներում։

Սակայն, մի քանի ժամանակից ի վեր, ռուսական պրոլետարիատի զարթնումի ազդեցության տակ, կուսակցությունը սկսել է վերակազմվել և նորերս կարողացանք, վերջապես, գումարել կուսակցության խորհրդաժողով, կոնֆերանս (մի բան, որ անկարելի էր եղած 1908 թ. ի վեր), որին ներկա էին երկու պատգամավորներ՝

հատ. XV)։ Երկերի 4-րդ հրատարակությունում զետեղված է XVII հատորի 623—625 էջերում, իսկ Երկերի լիակատար ժողովածուում XXI հատորի 173—175 էջերում։

երկու մայրաքաղաքների կազմակերպություններից, Հյուսիս-արևմտյան և հարավային սահմաններից։ Կովկասից և կենտրոնական Ռուսաստանի արդյունաբերական վայրերից, ընդամենը 20 կազմակերպություն հայտնեցին իրենց համերաշխությունը Կազմակերպիչ Յանձնախմբի հետ, որ գումարել էր այդ խորհրդաժողովը, այսինքն գրեթե բոլոր կազմակերպությունները՝ մենշևիկ թե բոլշևիկ, որ ներկայումս գոյություն ունեն Ռուսաստանում։

Խորհրդաժողովը ինքինքը հռչակեց որպես կուսակցության միահեծան օրգան. 23 նիստի մեջ նա քննեց օրակարգի մեջ նշանակված բոլոր խնդիրները, որոնցից մի քանիսը ունեին կենսական կարևորություն։ Նա խորապես և կատարելապես գնահատեց ներկա քաղաքական կացությունը և կուսակցության քաղաքականությունը. մի գնահատություն՝ որ կատարելապես համաձայնվում է 1908-ի խորհրդաժողովի և 1910-ին Կենտրոնական կոմիտեի համագումար ժողովների օրակարգերի հետ։ Նա մասնավոր ուշադրություն առավ Պետական Դումայի ընտրությունները, որ տեղի պիտի ունենան մի քանի ամսից հետո և այդ առթիվ մշակվեց երեք բաժնից բաղկացած մի օրակարգ, որը շատ կոնկրետ ու մանրամասն ձևով նախատեսում է մեր ընտրական օրենքի բազմապիսի բարդացումները, կարծիք հայտնեց ընտրական համաձայնությունների մասին ուրիշ կուսակցությունների հետ և քննեց բոլոր կողմերից կուսակցության դիրքն ու գործունեությունը առաջիկա ընտրողական արշավանքի ընթացքում։

Սովի հարցը, բանվորական ապահովագրությունը, սինդիկատներն ու գործադուլներն ևս քննության առարկա եղան և լուծումն ստացան։

Խորհրդաժողովը քննեց նաև «հաշվեհարդարների», «լիկվիդատորների» խնդիրը։ Այդ հոսանքը մերժում է գաղտնի, իլլեգալ կուսակցության գոյությունը, հայտարարում, որ նա արդեն վերջացած է (կուսակցությունը լուծված է), որ նրա վերականգնումը սոսկ մի հետադիմական ցնորք է և պնդում է, որ նա կարող է վերածնվել միայն իբրև լեգալ, օրինական կուսակցություն։ Եվ այնուամենայնիվ, այդ հոսանքը, որ հրաժարվել է գաղտնի կուսակցությունից, մինչև օրս չի կարողացել հաստատել օրինական կուսակցություն։

Խորհրդաժողովը արձանագրեց, որ կուսակցությունը չորս տարուց ի վեր պայքարում է այդ հոսանքի դեմ, որ 1908-ի կոնֆերանսը և 1910-ի կենտրոնական կոմիտեի համագումար ժողովը ժխտական դիրք են բռնել դեպի լիկվիդատորները, որ չնայած ի գործ

գրված բոլոր ջանքերին, նրանք շարունակում են պաշտպանել իրենց առանձնացած դիրքերը և հարձակումներ գործել կուսակցության դեմ՝ օրինական մամուլի մեջ:

Խորհրդաժողովը, հետևապես, հայտարարեց, որ իրենց ամբողջ գործունեությամբ լիկվիդատորները համախմբված «Նաշա ժիզն» և «Դելո ժիզնի» օրգանների շուրջը (որոնց պետք է այժմ ավելացնել «Ժիվոյե դելո») իրենք զիրենք դուրս են ձգել Ռուսաստանի ս. դ. բանվորական կուսակցությունից:

Ի վերջո ընտրվեց կենտրոնական կոմիտե և «Սոցիալ-դեմոկրատ» կենտրոնական օրգանի խմբագրություն: Ավելի ևս քանի որ մենք ունեինք արտասահմանում ահագին թվով խմբումներ, որոնք սոցիալիստ են քիչ թե շատ, որոնք համենայնդեպս կատարելապես կտրված են ռուս պրոլետարիատից և նրա սոցիալիստական գործունեությունից, ուստի և միանգամայն անպատասխանատու,— Խորհրդաժողովը հատկապես որոշեց, որ այդ խմբումները ոչ մի կերպ չեն կարող ներկայացնել Ռուսաստանի ս. դ. բանվորական կուսակցությունը, որ վերջինը պատասխանատու չէ, ոչ էլ երաշխավոր նրանց համար և որ բոլոր հարաբերությունները Ռուսաստանի ս. դ. բանվորական կուսակցության հետ պետք է պահպանել կենտրոնական կոմիտեի միջոցով:

Տրված է Վլադ. Ուլյանովի հասցեն)»*:

Ինչպես ասացինք, «Դրոշակ»-ը հրապարակել է նաև մենշևիկ-լիկվիդատորների «Բողոքը» Պրագայի կոնֆերանսի և նրա որոշումների վերաբերյալ:

Հայտնի է, որ Վ. Ի. Լենինը 1912 թ. Փարիզում, «Սոցիալ-դեմոկրատ»-ի գրիֆով, գերմաներեն հրատարակել է իր «Անանիմը «Vor warts»-ից և «Իրերի դրությունը ՌՍԴԲԿ»-ում բրոշյուրը, որը պատասխան էր Տրոցկու անանիմ զրպարտչական ելույթին: Ինչը մերկացնում է Տրոցկու և նրա համախոհների հակակուսակցական, զրպարտչական վարքագիծը, ցույց տալիս Պրագայի կոնֆերանսի պատմական մեծ նշանակությունը: «Կոնֆերանսը հանդիսացավ ՌՍԴԲԿ կողմից լիկվիդատորների դեմ մղվող քառամյա պայքարի բոլորումը,— գրել է Վ. Ի. Լենինը,— և այն տեղի ունեցավ, չնայած

---

* «Դրոշակ», 3 (221), ապրիլ, 1912, էջ 79: «Դրոշակ»-ը Վ. Ի. Լենինի հասցեն չի նշել: «Ծանուցման» տակ նշված է եղել Владимир Ульянов. 4 Ruc marll Rok. Париж. XIV (для Центрального комитета), см. *В. И. Ленин*, Полн. собр. соч., т. 21, стр. 175.

լիկվիդատորների բոլոր ինտրիգներին, որոնք ուզում էին ինչ գնով էլ լինի խանգարել կուսակցության վերականգնումը։ Կոնֆերանսը լիկվիդատորներին հայտարարեց կուսակցությունից դուրս»[52]։ Վ. Ի. Լենինը պարզաբանում է, որ աշխարհում ոչ մի սոցիալ-դեմոկրատական կուսակցություն չի ստեղծվել, մանավանդ բուրժուական հեղափոխությունների դարաշրջանում, առանց ծանր պայքարի և մի շարք պառակտումների՝ պրոլետարիատի բուրժուական ուղեկիցների հետ։ Այդպիսի ուղեկիցների դեմ մղվող ծանր պայքարում ստեղծվում և 1898 թ. սկսած, աճում, ամրանում ու կոփվում է, հակառակ բոլոր խոչընդոտներին, նույնպես և ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը։

Է

Անդրկովկասի բոլշևիկները 1913 թ. աշխատանք ծավալեցին լենինյան պրավդիստական ուղղությամբ հայերեն թերթ ստեղծելու համար։ Ստ. Շահումյանն Աստրախանի աքսորից գրած նամակներում Թիֆլիսում գտնվող բոլշևիկներին խորհուրդ էր տալիս արագացնել թերթի հրատարակությունը։

1913 թ. նոյեմբերի 8-ի (21-ի և 25-ի) դեկտեմբերի 8-ի ՌՍԴԲԿ(բ) Կենտկոմին գրած նամակներում Ս. Կասյանը պատմում է Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքի, կենտրոնի հետ կապը բարելավելու, մարքսիստական անլեգալ գրականություն ստանալու մասին։ Նա միաժամանակ խնդրում է Վ. Ի. Լենինին՝ աշխատակցել Կովկասում, առաջիկայում հայերեն հրատարակվելիք մարքսիստական շաբաթաթերթին։ «Մենք կխնդրեինք Իլյիչին,— գրել է Ս. Կասյանը,— գոնե մեկ հոդված տալ մեզ՝ Կովկասում Ռուսաստանյան բանվորական շարժման նշանակության ու դերի մասին, նրա անունն իսկույն կբարձրացնի մեր օրգանի նշանակությունը ոչ միայն Կովկասի զանազան ազգությունների բանվորների, այլև ամբողջ հասարակության մեջ[53]։ 1914 թ. հունվարի

---

52 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 17, էջ 661։*

53 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 2, д. 55, л. 3—4. Х. А. *Барсегян*, История армянской большевистской периодической печати. Ереван, 1958, стр. 346—349. Ս. Կասյան, *Ընտիր երկեր, Երևան, էջ 43—46։ Դեռևս 1913 թ. հոկտեմբերի 29-ին (նոյեմբերի 11-ին) Ն. Կ. Կրուպսկայան՝ Տ. Յա. Սիկորսկուն (Ս. Ի. Կասյանին) գրել է, թե ստացել են նրա հոկտեմբերի 20-ի նամակը, պատմում է Պորոնինոյի խորհրդակցության և նրա որոշումների մասին, խնդրում*

26-ին Ս. Կասյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Մեր խոսքը» թերթի առաջին և միակ համարը, որն իր «վտանգավոր ուղղության» պատճառով բռնագրավվում է ցարական կառավարության գործակալների կողմից, իսկ պաշտոնական խմբագիրը դատի է տրվում:

«Մեր խոսքը» բանվորական հեղափոխական շարժման նոր վերելքի ծնունդ էր: Այն հայ բանվորությանն ավետում էր, որ կրկին ծածանվում է հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դրոշը, որի շուրջը համախմբվում են աշխատավոր մասսաները: Առաջնորդող հոդվածում ընթերցողներին պարզաբանվում էին շաբաթաթերթի նպատակները, հավաստիում, որ այն ունենալու է բոլշևիկյան ուղղություն և ծառայելու է աշխատավորության շահերին: «Լինելով հեղափոխական մարքսիզմի արտահայտիչ և բերան գիտակից, կազմակերպիչ հայ բանվորության,— ասված է առաջնորդողում,— «Մեր խոսքը» աշխատելու է տարածել և խորացնել հայ կյանքում՝ հայ բանվորության և դեմոկրատիայի լայն խավերում այդ ուսմունքի սկզբունքները, վերլուծել ու լուսաբանել բոլոր քաղաքական, սոցիալ-տնտեսական և հասարակական բոլոր դեպքերն ու երևույթները, հրապարակ հանել հայ բանվորության պահանջներն ու իղձերը, նրանց մոտեցնել ու կապել այլազգի բանվորության հետ՝ դարձնելով նրան միջազգային պրոլետարիատի ընտանիքի հարազատ անդամը»[54]: Թերթը հայտարարում էր, որ իր առջև դրված խնդիրները կատարելու համար ձգտելու է ժամանակին արձագանքել քաղաքական բոլոր իրադարձություններին, համախմբել մարքսիստներին, լայն տեղ տալ բանվորական թղթակցություններին:

Տարածել և խորացնել մարքսիզմը, հավաքել ու համախմբել հայ մարքսիստներին, սոցիալիստական գաղափարախոսություն տարածել բանվորների մեջ, լինել պրոլետարական ինտերնացիոնալիզմի պրոպագանդիստ,— ահա «Մեր խոսքը» թերթի նշանաբանը:

Թերթում տպագրվել են Ստ. Շահումյանի «Չորրորդ Պետական դումա» («Քաղաքական կյանք» բաժնում՝ «Ս. Շ.» ստորագրությամբ), Ս. Կասյանի «Հասարակական կարծիքը և մամուլը», «Հայ-

---

մանրամասն ինֆորմացիա հաղորդել Կովկասի հեղափոխական շարժումների և այլ հարցերի մասին (տե՛ս «Грузинские страницы Лениниана», Тб., 1970, стр. 141). Դրանից չորս ամիս անց, 1914 թ. մարտի 28-ին (ապրիլի 10-ին) Ն. Կ. Կրուպսկայան Ս. Կասյանին ուղարկած նամակում ցուցումներ է տալիս և կրկին Կովկասի վերաբերյալ ինֆորմացիա խնդրում (տե՛ս «Исторический архив», 1958, № 6, стр. 7).

54 «Մեր խոսքը», № 1, 1914:

կական հարցը և հայ դեմոկրատիան», («Հասարակական կյանքը Կովկասում» բաժնում), ինչպես նաև «ՌՍԴԲԿ ֆրակցիա» «Բանվորական շարժումը Ռուսաստանում», «Բանվորական շարժումը Կովկասում», «Մի խնայողական դրամարկղի առիթով», «Ապահովագրական պայքարը Կովկասում» և այլ հոդվածներ։ Թարգմանվել և տպագրվել է Մաքսիմ Գորկու «Ամեն տեղ է» պատմվածքի առաջին մասը (շարունակությունը լույս չտեսավ թերթը արգելելու պատճառով)։

«Չորրորդ Պետական դուման» հոդվածում Շահումյանը մերկացնում է ցարական կառավարության ռեակցիոն դիրքորոշումը, ցույց տալիս, որ հունիսներեքյան օրենքով կառավարությանը հաջողվել է Պետական դուման դարձնել հետադիմության գործիք, հլու հնազանդ Ստոլիպինի կամքին և ամեն կերպ նպաստում է վերջինիս՝ նոր շղթաներ կռելու ժողովրդի համար։ Կառավարող կուսակցությունները այդ ժամանակ սարսափում էին հեղափոխական նոր, հզոր վերելքից, բոլշևիզմի հաղթանակը սարսափ էր տարածում բուրժուական-ազնվականների և նրանց կամակատարների մեջ։

«Ինչ որ մահ է բերում պուրիշկևիչների համար, նա կյանք է խոստանում տառապող ժողովրդին»,— այսպես է ավարտվում Ստ. Շահումյանի հոդվածը։

«Մեր խոսքը» պարզաբանում էր, որ մամուլը հասարակական կարծիքի տրիբունա է, որ մարքսիստական մամուլը կոչված է ոչ միայն լուսավորելու ժողովրդի պայքարի ուղին, այլև կոլեկտիվ կազմակերպչի դեր կատարելու։

«Մեր խոսքը» պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության պրոպագանդիստն էր, այն եղբայրական համագործակցության էր կոչում կովկասյան ժողովուրդներին։

Ոչ թե դիվանագիտական դաշինք, այլ դրացի ժողովուրդների բարեկամության է՛լ ավելի ամրապնդում ու խորացում, բանվորական խիտ շարքերի սերտ համախմբվածություն,— ահա թե առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ինչ էր պահանջում մարքսիստական հայերեն թերթը։

Բոլշևիկյան «Պուտ պրավդի»-ն («Պրավդա») բարձր է գնահատել «Մեր խոսքը» թերթի գործունեությունը։ «Թիֆլիսում լույս է տեսել մարքսիստական ուղղության հայերեն պարբերականի առաջին համարը,— գրել է «Պուտ պրավդի»-ն,— համարը կազմված է հետաքրքիր ու բազմակողմանի։ Ընկ. Ս. Շ.-ի «Չորրորդ Պետական դուման» հոդվածը վերլուծում է դումայում ստեղծված ճըգ-

նաժամը բացահայտում կադետների «սահմանադրական պատրանքների և լիկվիդատորների «լեգալիզմի» խորտակման արմատական պատճառները...

Հայ բանվորների երիտասարդ օրգանին ցանկանում ենք հաջողություն և երկարատև գոյություն բանվորական մամուլի համար այս ծանր տարում»[*]։

Երկրամասի բոլշևիկները բեղմնավոր աշխատանք կատարեցին աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության ուղղությամբ։ Վ. Ի. Լենինը հիացմունքով էր խոսում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ինտերնացիոնալ սկզբունքների մասին։ 1913 թ. փետրվարին Կրակովից Կապրի կղզի (Իտալիա) Մաքսիմ Գորկուն ուղարկած նամակում Իլյիչը խոսելով Ռուսաստանի և Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ինտերնացիոնալ կառուցվածքի մասին գրել է. «Մեզ մոտ և Կովկասում ս.-դ. վրացիները+հայերը+թաթարները+ռուսները աշխատում էին միասին տասը տարուց ավելի միասնական ս. դ. *կազմակերպության մեջ։ Այդ ֆրազ չէ, այլ ազգային հարցի պրոլետարական լուծում։ Միակ լուծումը»*[55]։

8

Առաջին համաշխարհային պատերազմը մեծ փորձություն հանդիսացավ միջազգային բանվորական շարժման բոլոր հոսանքների համար։ Պատերազմն ազդարարող հրանոթային առաջին համազարկերի հետ միասին տրոհվեց և կրախի մատնվեց II Ինտերնացիոնալը։ II Ինտերնացիոնալի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների աջ ղեկավարները, որոնք վաղուց արդեն գլորվել էին ռեֆորմիզմի ճահիճը, լիովին դավաճանեցին բանվոր դասակարգին և պրոլետարիատի համերաշխության սկզբունքներին։ Գրեթե բոլոր կուսակցությունները լքեցին բանվոր դասակարգին և անցան իրենց երկրների բուրժուազիայի կողմը, սկսեցին պաշտպանել նրան իմպերիալիստական պատերազմում։ Սոցիալ-շովինիստներն, այդ թվում նաև ռուսական մենշևիկներն ու էսեռները քարոզում էին բան-

[*] «Путь правды», № 14, 6 февраля 1914 г. *Ճ. Ղարաղաշը իր «Պայքարի ճամբին» (Երևան, 1932) սխալ է գնահատել «Մեր խոսք» թերթի գործունեությունը։*

[55] Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 35, էջ 79։*

վարների ու բուրժուազիայի դասակարգային հաշտության երկրի ներսում և պատերազմ մյուս ժողովուրդների դեմ՝ իրենց երկրից դուրս։

Միայն լենինյան կուսակցությունն էր, որ մինչև վերջ հավատարիմ մնաց ինտերնացիոնալիստական դիրքերին[56]։ Պատերազմի, խաղաղության և հեղափոխության հարցերում անշեղորեն ղեկավարվելով մարքսիստական-լենինյան տեսությամբ, բոլշևիկյան կուսակցությունը պայքարում էր իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու, Ռուսաստանում կապիտալիստների իշխանությունը տապալելու, բոլոր երկրներում իմպերիալիստների դեմ մղվող պայքարը պաշտպանելու համար։ Վ. Ի. Լենինը բոլշևիկների կուսակցությունը զինեց հեղափոխական տակտիկայով և ստրատեգիայով։ «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները եվրոպական պատերազմում» (1914 թ. օգոստոս), «Եվրոպայի միացյալ նահանգների լոզունգի մասին» (1915), «Պրոլետարական հեղափոխության ռազմական ծրագիրը», «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» (1916) և այլ դասական աշխատություններում Վ. Ի. Լենինը ջախջախիչ քննադատության էր ենթարկում սոցիալ-շովինիստներին, մերկացնում իմպերիալիզմի խոցերը, պրոլետարիատին զինում հեղափոխական պայքարի զենքով։ Նա հիմնավորում էր այն դրույթը, որ իմպերիալիզմը սոցիալիստական հեղափոխության նախօրյակն է։ Ռուսաստանի բոլոր երկրների բանվոր դասակարգի համար մեծ նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» աշխատությունը, որը նշանավոր ավանդ էր ստեղծագործական մարքսիզմի գանձարանում։

Վ. Ի. Լենինը բոլշևիկների կուսակցությունը, ամբողջ պրոլետարիատին զինեց սոցիալիստական հեղափոխության մարքսիստական տեսությամբ։ Բոլշևիկներն իրենց գործունեությունը ծավալում էին լենինյան նոր գաղափարների յուրացման հիման վրա։ Նրանց ձեռքում հատու զենք էին լենինյան աշխատությունները, բոլշևիկյան մամուլը։ Հաղթահարելով բոլոր դժվարությունները, Վ. Ի. Լենինը կազմակերպում է մարքսիստական հրատարակությունների տպագրումն ու տարածումը։

---

56 Ինտերնացիոնալիստական մի քանի խմբեր կային Բուլղարիայի, Գերմանիայի, Հոլանդիայի և այլ երկրների բանվորական կուսակցություններում, որոնք հետագայում մասնակցեցին կոմունիստական III Ինտերնացիոնալի ստեղծմանը։

Բոլշևիկյան հայ պարբերական մամուլն այդ տարիներին ուշադրության կենտրոնում էր պահում տեսական ու տակտիկական հարցերը, հայ աշխատավորությանը հասցնում լենինյան անմահ գաղափարները։ Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով՝ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները լիցք և ուղղություն էին տալիս աշխատավորության հեղափոխական պայքարին։ Լայն թափով սկսեցին հրատարակվել ու տարածվել հեղափոխական կոչերն ու թռուցիկները։

ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան բյուրոն 1915 թ. օգոստոսին Գանձակի մոտ (այժմ՝ Կիրովաբադ) Կորյունապատ գյուղի ընդհատակյա տպարանում 20 հազար 200 տպաքանակով տպագրում է պատերազմի թալանչիական բնույթը մերկացնող թռուցիկ։ Տպարանը վտանգի չենթարկելու նպատակով թռուցիկը սկզբում տարածվեց Թիֆլիսում, Բաթումիում, Քութայիսում և ապա՝ Բաքվում, Գանձակում, Հայաստանում։ Այն տարածվեց ոչ միայն Անդրկովկասի աշխատավորության մեջ, այլև զինվորական մասերում։ «Պատերազմը սոսկալի է,— ասված է թռուցիկում,— երբ հազարավոր և միլիոնավոր պրոլետարներ իրենց արյունն են թափում ուրիշի շահերի համար, բուրժուազիայի, յունկերների, ազնվականների՝ հանուն ոսկու պարկի, բայց դեռ հարյուր աստիճան ավելի սոսկալի է, երբ զորքը ծախում են որպես միս կամ փայտ... Սակարկում են Ռուսաստանի զավակների արյունը։

Ընկերնե՛ր, հիշեցե՛ք Մակարովի հայտնի խոսքերը. «Այդպես եղել է, այդպես էլ կլինի»։ «Երբ մեկ հարցնի պատերազմից վերադարձած զինվոր հերոսը, թե ո՞ւր են այն մարդիկ, որոնք ցանկանում էին թիկունքից հարված հասցնել»— ասում էր դատախազը Պետական դումայի մեր սոցիալ-դեմոկրատ ընկերներին, «մենք նրանց կպատասխանենք՝ նրանք մեր մեջ չեն»։ Ինչպիսի՞ հեգնանք է հնչում այդ խոսքերում։ Մյասոեդովի գործը ցույց տվեց, թե նրանց որտեղ պետք է որոնել։ Ռուսաստանի ժողովրդի մեջ չկան դավաճաններ, չկան զինվորի թիկունքին հարվածել ցանկացողներ, չկան ցանկացողներ՝ թափելու Գերմանիայի և Ավստրիայի պրոլետար եղբայրների արյունը... Ռուսաստանի ժողովրդի մեջ չկան այդպիսիք... նրանք այնտեղ, վերևում են, կառավարության մեջ, մինիստրության ոսկով փայլող սալոններում...»[57]։ Այնուհետև մերկաց-

57 ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 396։

վում են պատերազմի հանցագործները, կոչ է արվում՝ վերջ տալ արյունարբու հրեշին և պատերազմի սարսափներին: «Այդ մեծ գործը կարող է կատարել միջազգային պրոլետարիատի ուժը: Միայն նա է, որ արյունոտ սպանդանոցը կվերածի ժողովրդի և պրոլետարիատի միջազգային մեծ ճակատամարտի, ընդդեմ շահագործող և ոճրագործ կառավարությունների: Ռուսաստանի պրոլետարիատը հայտարարում է իր հեղափոխական հին լոզունգները և նրանց տակ գնում է կռվի՝ ոճրագործների և մարդասպանների կառավարության դեմ...»[58]:

Բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում մեծ դեր խաղաց բոլշևիկյան հայ պարբերական մամուլը, մասնավորապես «Պայքար» թերթը, որի առաջին համարը լույս տեսավ 1915 թ. դեկտեմբերի 6-ին (19-ին): Այն կոչված էր հայ աշխատավորությանը դաստիարակելու պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով, պաշտպանելու բոլշևիկյան կուսակցության տակտիկան ու ստրատեգիան՝ պատերազմում, մերկացնելու հայ բուրժուա-նացիոնալիստների, հատկապես դաշնակցության հակաժողովրդական քաղաքականությունն ու մեքենայությունները: Թերթի խմբագրական կազմում էին Աս. Մռավյանը և Ս. Խանոյանը: Մինչև 1917 թ. հունիսի 10-ը «Պայքար»-ին ակտիվ աշխատակցում էին Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Արսեն Ամիրյանը, Արտաշես Կարինյանը, Մելիք Մելիքյանցը, Հակոբ Հակոբյանը, Հակոբ Կամարին, Ազատ Վշտունին, Սիմակ Սահակյանը, բանվոր Գարագաշը, Հովհ. Պողոսյանը և ուրիշներ:*

Արժեքավոր է «Պայքար»-ի 1917 թ. հունիսի 3-ի համարում հրապարակված «Ընկեր Լենինի մասին» խմբագրական հոդվածը, ուր ասված է, թե բուրժուական «դեղին» մամուլը ինչպիսի կեղտոտ հերյուրանքներ է տարածում Վ. Ի. Լենինի հասցեին: «Պայքար»-ը ըմբոստանալով հակահեղափոխական մամուլի դեմ, դրվատում է Լենինի և լենինյանների ծառայությունները: Թերթը ծանոթացնում է Իլյիչի կյանքին ու հեղափոխական գործունեությանը, ընդգծում՝ «Լենինը չունի, այսպես կոչված, «անձնական կյանք», նա «ամբողջապես պատկանում է հեղափոխությանը», ...նա մի հոգս միայն

58 Նույն տեղում:

* 1915 թ.՝ լույս տեսան «Պայքար»-ի չորս համար, 1916 թ.՝ հիսունհինգ, իսկ 1917 թ., մինչև հունիսի 10-ը՝ քառասունմեկ: Այսպիսով, 18 ամսվա ընթացքում հրատարակվեց «Պայքար»-ի 100 համար:

ունի, դա կուսակցությունն է[59]: Հոդվածագիրը, որ ըստ երևույթին, մոտիկից ծանոթ էր Իլյիչին, պատմում է նրա մարդկային բարեմասնությունների մասին, նշում է՝ «Վլադիմիր Իլյիչը ձգտում չունի դեպի փառքը, նա թշնամի է իր անունը ռեկլամ անելուն»[60]:

«Պայքար»-ը պահանջում էր վճռականորեն մերժել բուրժուական մամուլի բամբասանքները Վ. Ի. Լենինի մասին, ճշմարտությունն ասել ժողովրդին, խնդրել Վ. Ուլյանովին, որ «գոնե այժմ իր բոլոր հոդվածները ստորագրի Լենին անունով»: Խնդիր էր դրվում հրատարակել Լենինի այն բոլոր հոդվածները, որոնք գրվել են ընդհատակի տարիներին: «Ինքը՝ Լենինը դժվար թե ժամանակ գտնի կամ մտածի անելու— այդպես է նրա բնավորությունը. Թող ընկերները գոնե մտածեն այդ կարևոր գործն անելու»: «Անհրաժեշտ է, հրատարակել Լենինի այն հոդվածները, որոնք լույս են տեսել հին «Պրավդա» (1912—14), «Զվեզդա», «Պրոսվեշչենիե», արտասահմանի «Սոցիալ-դեմոկրատ» օրգաններում և ընդհանրապես, 1911 թ. մինչև մեր օրերը գրածները: Ճիշտ է, այդ հոդվածների թիվը շատ-շատ է, բայց բոլորն էլ պետք է հրատարակել, որովհետև նրանց արժեքը շատ մեծ է: Այդ հոդվածներից մեր երիտասարդ ընկերները շատ բան կսովորեն»[61]:

Դրանք Վ. Ի. Լենինի կյանքին նվիրված հայերեն առաջին գործերից էին:

Ուշագրավ են Ստ. Շահումյանի գրախոսությունը Մաքսիմ Գորկու խմբագրությամբ հրատարակված «Сборник Армянской литературы» ժողովածուի մասին, Ա. Կարինյանի՝ «Ռուսահայ կյանքից և գրականությունից», Ա. Մռավյանի գրախոսությունները Ան. Վարդանյանի «Տգիտության զոհեր» դրամայի, Մ. Գորկու «Հեքիաթների» մասին և այլն: Ստ. Շահումյանի հիշատակված գրախոսության մեջ պաշտպանված են գրականության բոլշևիկյան կուսակցության սկզբունքները, ըստ ամենայնի գնահատված են պրոլետարական հայ գրականության ներկայացուցիչները: Նրանում Շահումյանը միաժամանակ իր խոր համակրանքն է արտահայտում «միջազգայնության մաքուր զգացմունքների և ձգտումների դրոշակակիր» Մաքսիմ Գորկուն: Խ. Աբովյան, Մ. Նալբանդյան, Ռ. Պատ-

59 «Պայքար», № 39 (94) 3 հունիսի 1917 թ.:

60 Նույն տեղում:

61 «Պայքար», № 39, 3 հունիսի 1917 թ.: Ս. Մնացականյան. Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963, էջ 256:

կանյան, Գ. Սունդուկյան, Րաֆֆի, Ալ. Շիրվանզադե, Գ. Զոհրապ, Հովհ. Թումանյան, Վահան Տերյան, Ավ. Իսահակյան, Շ. Կուրղինյան և շատ ուրիշներ,— ահա հայ գրողների այն ոչ լրիվ ցանկը, որոնց մասին ժամանակին իր խոսքն է ասել «Պայքար»-ը։ Թերթի 1916 թ. մարտի 27-ի առաջին էջը նվիրված է Միքայել Նալբանդյանի հիշատակին։ Տպագրվել են հեղափոխական մեծ դեմոկրատի նկարը, նրա մասին հոդվածներ, այդ թվում՝ «Ազատության գրված զինվորը» առաջնորդողը (ավելի քան 16 տող գրաքննիչի կողմից հանված է)։ Թերթը նշում է, որ Նալբանդյանը հայ ազատագրական շարժման ռահվիրաներից է, նրա «...սիրտը ամբողջովին լցված էր իր ժողովրդի և ամբողջ մարդկության ցավերով, որի առանձին հոգսի առարկան հայ մասսայի թշվառությունն էր, ստրկությունը և աղքատությունը»։

Շատ կարճ ապրեց Միքայել Նալբանդյանը, ընդամենը 37 տարի, բայց լինելով մեծ մտածող, փիլիսոփա, գրող, հրապարակախոս, լրագրող, լուսավորիչ՝ շատ ու շատ բան տվեց հայ գրականությանը՝ քանակով քիչ, որակով բարձր։

«Պայքար»-ը, ընթերցողներին ծանոթացնելով Մ. Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը, պատմում է այն սերտ կապերի մասին, որ Նալբանդյանն ունեցել է ռուս հեղափոխական մեծ դեմոկրատների, հատկապես Գերցենի հետ։

«Պայքար»-ը հրապարակել է Մաքսիմ Գորկու «Մրրկահավի երգը», «Ամեն տեղ է» պատմվածքը, բազմաթիվ հեքիաթներ։ Նրանում լույս են տեսել Հ. Հակոբյանի մոտ տասնհինգ բանաստեղծություն, «Կարմիր ալիքներ» պոեմը, մի շարք հոդվածներ, հուշեր։

Մովսես Արազին «Պայքար»-ում հրապարակել է պատմվածքներ, Հակոբ Կամարին՝ բանաստեղծություններ։ Արձակ և չափածո գործերով հանդես են եկել Ազատ Վշտունին, Սիմակը, Սուսանը, Գառնիկ Ղազարյանը, Գուրգեն Հայկունին, Հովհ. Պողոսյանը և ուրիշներ։ Պրոլետարական հայ գրականության առաջամարտիկներն իրենց ստեղծագործություններում երգել են բանվոր դասակարգին, պայծառ լավատեսությամբ լցված՝ աշխատավոր մասսաներին անհուն հավատ ներշնչել սոցիալիստական ապագայի նկատմամբ։

Բոլշևիկ պոետ Հ. Հակոբյանը «Պայքար»-ի 1915 թ. առաջին իսկ համարում զետեղում է իր «Պահակը» զողտրիկ բանաստեղծությունը, որտեղ նա անսահման հավատ է հայտնում հեղափոխության գործի նկատմամբ և համոզված է, որ եթե ինքն ու իր ընկերները նույնիսկ ընկնեն կյանքի ու մահվան այդ օրհասական

կռվում, միևնույն է՝ նրանց կփոխարինի մի ամբողջ սերունդ, որը սկսված պայքարը կհասցնի մինչև հաղթական ավարտ։

«Կյանքը կռվի մեջ է», ասում է պոետը.

Եվ երբ հանկարծ թշնամին կյանքիս
Սրբին անկյունից մահ ու դավ լարի՝
Ոչինչ, կմեռնեմ ժպիտը դեմքիս—
Նշան հավատի գալիք հաղթ օրի...

Իմ ետևից կգա մի առողջ սերունդ,
Ուժեղ և հպարտ իր նախորդներից,
Փոշու մեջ թավալված մարտիկների գունդ՝
Դրոշը թշնամուց կփրկի նորից...

Մերկացնելով պատերազմի թալանչիական բնույթը, «Պայքար»-ը հայ աշխատավորներին օգնում էր հավատարիմ մնալ պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին, երբեք չհավատալ բուրժուական նացիոնալիստների խաբեություններին։ Ստ. Շահումյանի՝ «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը», «Պայքար», (№ 48, 49, 1916 թ.), Անաստաս Միկոյանի՝ «պ.-ն Ահարոնյանը իր լռության մասին», «Վրաց նացիոնալիստները և դեմոկրատիան», «Բրեշկո Բրեշկովսկայան իմպերիալիստական բուրժուազիայի գաղափարախոս» (№ 47, 1916 թ.), Ս. Ամիրյանի՝ «Մեր մարքսիստները» (№ 39 (43), 1916 թ.) և այլ հոդվածներում սպանիչ քննադատության են ենթարկված ազգայնական կուսակցությունները ու նրանց գաղափարախոսները, պարզաբանված են պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները։ Նացիոնալիզմը դիտելով բուրժուական գաղափարախոսության առանձնահատկություններից մեկը, Ստ. Շահումյանը նշում է, որ ազգայնականությունն ու լիբերալիզմն անբաժանելիորեն կապված են միմյանց հետ։ «Նացիոնալիզմը նույնպես «իմմանենտ» է բուրժուական աշխարհայացքին և բուրժուական պրակտիկային,— գրել է նա,— ինչպես ինտերնացիոնալիզմը— նոր ընկերվարական (սոցիալիստական) աշխարհայացքին։ Ո՛վ չի հասկացել այդ, ո՛վ կարծում է, որ կարելի է ժխտել լիբերալիզմը, իմպերիալիզմը, բայց պահպանել նացիոնալիզմը, ով խոսում է «առողջ» և «անառողջ» նացիոնալիզմի մասին և փորձում է զանազան սոփեստություններով հաշտեցնել նացիոնալիզմը ինտերնացիոնալիզմի և առհասարակ կոմունիստական նոր

աշխարհայացքի հետ, նա ոչինչ չի հասկացել ո՛չ լիբերալիզմից և ո՛չ այդ նոր աշխարհայացքից»[62]:

Նացիոնալիզմը ժողովրդական մասսաներին սոցիալ-դասակարգային պայքարից հեռու պահելու զենքերից է: Ազգային բացառիկությունը, պատմական հեռավոր անցյալի իդեալականացումը, մնապարծությունը, ուրիշ ազգերի նկատմամբ ատելություն տածելը և բորբոքելը, ազգը որպես մի միասնական ու միատարր օրգանիզմ ներկայացնելը, ազգի ներսում եղած դասակարգային հակամարտության սքողումը, դասակարգային պայքարի հոգեբանության ու մտայնության շրջանցումը,— այս բոլորը նացիոնալիզմի բնորոշ գծերն են:

Հայկական բուրժուական նացիոնալիզմին հատուկ է եղել նաև ստորաքարշությունը Եվրոպայի իմպերիալիստների առջև, նրանցից «Հայկական հարցի» «լուծումն» սպասելը, Եվրոպայի ֆետիշացումը, եվրոպական կապիտալիստական ռեակցիոն քաղաքականության գովերգումը, ամերիկյան, անգլիական, ֆրանսիական, գերմանական իմպերիալիստական գիշատիչ նվաճողների առաջ խոնարհվելը, շողոքորթելը, ազգային արժանապատվության ոտնահարումը: Հայտնի է, թե պատերազմը ինչպիսի ծանր հարված հասցրեց բազմաչարչար հայ ժողովրդին: Ցարական կառավարությունը և նրա դաշնակիցները՝ Անգլիան, Ֆրանսիան մեծադղորդ խոստումներ էին տալիս հայ ժողովրդին, հավաստիացնելով, որ իբր թե պատերազմում նրանց գլխավոր հոգսերից մեկը Արևմտահայաստանի ազատագրումն է: Դիվանագիտական խորամանկ խաղերով նրանք խաբում էին հայ ժողովրդին: Պարտադիր օրենքով ցարական կառավարությունը միայն 1915 թ. զորակոչեց 120 հազար հայ: Դաշնակցությունը, հայ կադետները, ինչպես և հնչակյանները կամավորական ջոկատներ են ստեղծում: 1915 թ. հայկական կամավորական ջոկատներում կար շուրջ 10 հազար զինվոր»: Հայ կամավորները չափազանց վատ էին զինված և հանդերձավորված, բայց հարազատ ժողովրդի ազատագրման պատրանքներով տարված. ցարական բանակի հետ միասին մեկնեցին ռազմաճակատ՝ «փրկելու Հայաստանը»[63]: Ինչ խոսք, կամավորական շարժմանը մասնակցող շարքային հայ զինվորները տոգորված էին սուլթանական ծանր լծից արևմտահայերին ազատագրելու ազնիվ ձգտումներով:

---

62 «Պայքար», № 48, 4 դեկտեմբերի 1916 թ.:

63 Տե՛ս Վրացական ՍՍՀ, ԿՊԿԱ., ֆ. 2, գ., գ. 3595, թ. 25—28:

Բայց դաշնակցության կողմից տարիներ շարունակ հրահրված ազգային թշնամանքի ավանտյուրիստական քաղաքականությունը, բացի նորանոր դժբախտություններից, ոչինչ չտվեց հայ ժողովրդին։ Այդ է պատճառը, որ բոլշևիկները, ջերմորեն պաշտպանելով արևմտահայերի ազատագրական ձգտումները, բացասական դիրք գրավեցին կամավորական շարժման նկատմամբ, կանխազգալով, որ այդ շարժումը թուրքական կառավարությունը կարող է օգտագործել որպես պատրվակ վաղուց նախապատրաստված հայկական կոտորածները արդարացնելու համար։ Հայ իրականության մեջ տեղի ունեցավ մեծ աղետ։ Թուրքական բռնակալները, գերմանական իմպերիալիստների հովանավորությամբ, օգտագործելով պատերազմական իրադրությունը, արյունոտ դատաստան տեսան արևմտահայերի նկատմամբ։ Սուլթանական Թուրքիայի կառավարող շրջանների կողմից հայ ժողովրդի նկատմամբ վարած ցեղասպանությունը մարդկության նորագույն պատմության սև էջերից է։ Պատերազմի տարիներին ավելի քան մեկ ու կես միլիոն հայեր սրի քաշվեցին կամ զենքի ուժով տեղահան արվեցին հայրենի օջախներից և քշվեցին Միջագետքի անապատները։ Թուրքական յաթաղանից հրաշքով ազատված մի քանի հարյուր հազար հայեր ապաստան գտան Ռուսաստանում և արտասահմանյան այլ երկրներում։ Մղձավանջային ծանր տառապանքներ բաժին ընկան արևմտահայերին։ Ահա այս պայմաններում էր, որ Ստ. Շահումյանը մերկացնելով բուրժուական լիբերալիզմը, նացիոնալիզմը, պրոլետարիատից և աշխատավոր գյուղացիներից պահանջում էր համախմբվել ինտերնացիոնալիզմի դրոշի տակ։

Ա. Միկոյանը իր հեղափոխական գործունեությունը սկսելով 1915 թ. էջմիածնի հոգևոր ճեմարանում, կազմակերպում է բոլշևիկյան խումբ, որը վճռական պայքար է սկսում դաշնակների դեմ։ 1916 թ. նա ակտիվորեն աշխատակցում է «Պայքար»-ին։ Թերթի 1916 թ. նոյեմբերի 27-ի համարում զետեղված «Պ.-ն Ահարոնյանը իր լռության մասին» հոդվածում նա բոլշևիկյան կրքոտությամբ մերկացնում է դաշնակներին և նրանց ակտիվ գաղափարախոս Ահարոնյանին։ Ա. Միկոյանը ասում է. դաշնակցական գաղափարախոս Ահարոնյանը կաշվից դուրս է գալիս, որպեսզի հիմնավորի, որ իբր թե «հայ ազգը միատարր է», «նրա մեջ չկա ներքին անտագոնիզմը» և որ «հայը հայ է, ընտրյալ և մյուս ժողովուրդներից բարձր»։

Ում հայտնի չէ, որ «...հայ ժողովուրդը ամենևին այնպիսի միաձույլ բնական օրգանիզմ, անհատականություն չէ՝ զերծ ներքին պայքարից ու օժտված մի կամքով... որ հայ ժողովուրդը մյուսների մեջ բացառություն չի կազմում...»[64],— գրել է Ա. Միկոյանը: Նա այն միտքն է զարգացնում, թե պետք է անողոքաբար քննադատել, վերլուծության ենթարկել մեր հասարակական կյանքը, մի կողմից՝ սնունդ տալ մեր արթնացած ժողովրդի պահանջին, ազատել նրան վնասակար ճամարտակությունների ազդեցությունից, և մյուս կողմից՝ ճոռոմաբանության գերի, բայց դեմոկրատական հավակնություններ ունեցող երիտասարդության աչքերը բացել և նրան նոր ուղի հանել:

Ստ. Շահումյանը 1916 թ. սեպտեմբերին բանտարկված էր, երբ լուր ստացավ, որ Կրասնոյարսկի քաղաքային հիվանդանոցում վախճանվել է իր մերձավոր ընկեր, բոցաշունչ հեղափոխական Ս. Սպանդարյանը: Շահումյանի՝ այդ առթիվ գրված հոդվածը լույս տեսավ «Պայքար»-ի 1916 թ. սեպտեմբերի 18-ի համարում՝ «Մեր Սուրենը» խորագրով: Այդ հոդված-մահախոսականում Ստ. Շահումյանը ցույց է տվել, որ հայ իրականության համար Սուրեն Սպանդարյանն իր կյանքով և իր մահով մի նոր երևույթ է, անսովոր ու անհասկանալի այդ իրականության հին-հին գաղափարներով սնված մարդկանց համար, «...Սուրենը Ռուսաստանի նոր համապետական կյանքի, ավելի հեռու, միջազգային կյանքի միջավայրի ծնունդ էր,— գրել է Շահումյանը:— Նրա ուսուցիչները չեն եղել և չէին կարող լինել Ստ. Նազարյան, Արծրունի, Րաֆֆի, Քրիստափոր Միքայելյան: Նրա հոգևոր հայրերն ու ուսուցիչները եղել են՝ Չերնիշևսկի, Բելինսկի, Պլեխանով և ապա՝ Մարքս, Էնգելս...»[65]:

Հայ բուրժուազիայի և նրա գաղափարախոսության քննադատությունը տրված են նաև «Պայքար»-ում տպագրված Ա. Մռավյանի, Ա. Ամիրյանի, Ա. Կարինյանի, Մ. Մելիքյանցի և ուրիշների հոդվածներում:

Ա. Ամիրյանը իր «Մեր մարքսիստանմանները» հոդվածում սպանիչ քննադատության է ենթարկել դաշնակցությանը, «սպեցիֆիզմին», հատկապես Բ. Իշխանյանին, Դ. Անանունին և մյուսներին:

Ա. Ամիրյանը մերկացնելով «Մշակ»-ի շուրջը համախմբված

---

64 «Պայքար», № 47 (51), 27 նոյեմբերի 1916 թ.:

65 «Պայքար», № 38, 18 սեպտեմբերի 1916 թ.:

նացիոնալիստներին՝ Իշխանյանին, Անանունին, նշել է, որ նրանք ոչինչ չունեն մարքսիզմի հետ և «...ձգտում են մարքսիզմը միացնել մշակականության հետ։ Անձնական տեսակետից Պ. Պ. մարքսիստանմանները, իհարկե, չափազանց «խելոք» մարդիկ են, բայց հասարակական տեսակետից դրանք անպայման դատարկ մարդիկ են։ Դրանք էնգելսի արտահայտությամբ, «էժան մատերիալիզմի շրջմոլիկները», մատերիալիստական վեհ ուսմունքի կեղծողներն են։ Չարժե ափսոսալ նրանց, բայց մերկացնել նրանց՝ անհրաժեշտ է»։

«Պայքար»-ը հետևողականորեն քննադատել է նացիոնալիստական «Հորիզոն», «Արև» և այլ թերթերին։ Նա շատ լավ էր ճանաչում լիբերալ բուրժուազիային և նրա մամուլը։ Վ. Ի. Լենինը սովորեցրել է, որ ռուսական լիբերալիզմը բավական «ճարպիկ» պոլիտիկան դուրս եկավ, որպեսզի իրեն «դեմոկրատիա» անվանի՝ դեմոկրատիայի դեմ պայքարելու և նրա ինքնորոշությունը ճնշելու նպատակով։ Ամեն տեսակ լիբերալ բուրժուազիայի գործողության սովորական նորմալ եղանակը բոլոր կապիտալիստական երկրներում այս է՝ դեմոկրատիզմի ցուցանակով խաբել մասսաներին՝ նրանց իսկական դեմոկրատական տեսությունից և իսկական դեմոկրատական պրակտիկայից հեռացնելու համար։

«Պայքար»-ի յուրաքանչյուր համար,— Ս. Շահումյանի բնութագրությամբ,— մի-մի կենդանի բողոք է նացիոնալիզմի և նացիոնալիստների դեմ»[66]։

---

66 «Պայքար», 39 (43), 25 սեպտեմբերի 1916 թ.։ Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 363։ Մարքսիստների ոչ մարքսիստական մամուլին, մասնավորապես «Մշակ»-ին աշխատակցելու հարցի վերաբերյալ առաջացած բանավեճին մասնակցել են Ստ. Շահումյանը, Ա. Մյասնիկյանը, Ա. Կարինյանը և ուրիշներ, քննադատել Բ. Իշխանյանի (intimus) հրապարակած ճամարտակությունները։ Ստ. Շահումյանը «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» գրքում գրել է. «Մենք դեռ առիթ կունենանք, երևի, խոսելու թե այդ պարոնի (խոսքը Բ. Իշխանյանի մասին է—Խ. Բ.) և թե «նրան համբերողարար» ձեռք մեկնող և նրա հետ միասին «Մշակ»-ում աշխատող մյուս «մարքսիստ» կոչեցյալների մասին։ Մենք այստեղ օգտվում ենք միայն առիթից՝ զգուշացնելու ում հարկն է, որ հալած յուղի տեղ չընդունեն ամեն մի տեղից վեր կացող և իրեն «մարքսիստ» հայտարարող պարոնների աղաղակները։ Հարկավոր է հալածել ու հալածել մարքսիզմը շահագործողներին ու այպանող բախչիններին» (Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 273)։ Ա. Մյասնիկյանը 1914 թ. հունիսի 25-ին «Մշակ»-ի խմբագրությանը նամակ է գրել, որը, սակայն, չի հրապարակվել։ Նրանում ասված է. «Մշակ»-ում գրող մարքսիստների և նրանց թվում իմ՝ այդ թերթում աշ-

Այդ բողոքը և կռիվը նացիոնալիզմի դեմ հրամայական պահանջ էր ամեն մի գիտակից մարքսիստի համար։

«Պայքար»-ն այն ջահն էր, որը լույսի շող ձգեց հայ իրականության մեջ, պրոպագանդելով մարքս-լենինյան գաղափարները, մարտնչելով բուրժուական նացիոնալիզմի դեմ։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանում Անդրկովկասում լույս էին տեսնում բոլշևիկյան մի շարք թերթեր, այդ թվում՝ Բաքվում՝ «Բակինսկի ռաբոչի», «Սոցիալ-դեմոկրատ» (հայերեն), «Հումմեթ» (ադրբեջաներեն), Թիֆլիսում՝ ռուսերեն «Կավկազսկի ռաբոչի», հայերեն՝ «Բանվորի կռիվը», վրացերեն՝ «Բրձոլա» («Պայքար») թերթը, Ալեքսանդրապոլում՝ «Նոր կյանք»-ը և այլն։ 1917 թ. մայիսի 1-ից (ապրիլի 18-ից) մինչև օգոստոսի 16-ը Բաքվում Ստ. Շա-

---

խատակցության մասին որոշ տեսակի հայ մամուլում վերջին ժամանակներս գրվեց շատ ու հախուռն կերպով։ Ես ոչ մի ուշադրության չդարձրի դրան, որի համար բազմիցս հարցապնդման ենթարկվեցի, թե ինչու լուռ եմ ես։ Սակայն, թվում է, թե դա պարզ պետք է լիներ։ Մարքսիստների ու մարքսիստական թերթերում աշխատելու մասին, օ, բախտի ծաղր, խոսում են ոչ մարքսիստները՝ հայ մանր բուրժուականներն ու քաղքենիները, որոնք խմբված են «Հայ մարտական կազմակերպության» ցնցոտիապատ պաստառների շուրջը։ Դեռ մի կողմ թողած այն, որ այդ մարդիկ հարցը կապում են միմիայն «Մշակ»-ի հետ, տարօրինակ չէ այն հանգամանքը, որ մեր տանու խնդիրները, միայն մեզ մարքսիստներիս համար ըմբռնելի ու լուծելի հարցը նրանք իրանց ծամոն են դարձրել։ Եվ ինչ պատասխան կարելի էր տալ նրանց, քան լռությունը, այլապես մենք մեզ ձգած կլինեինք ծիծաղելի դրության մեջ։

Բայց ահա մեզ զբաղեցնող հարցի մասին խոսեցին և մեր շրջաններում։ Միմիայն այսօր ձեռքս ընկավ Թիֆլիսում հրատարակվող մի հայ թերթի այս տարվա № 72 և 75, որտեղ Ս. Կարինյանը, «Մշակ»-ում գրող մարքսիստներին մի «բաց նամակ» է ուղղել։ Այդ նամակին կարևոր է արձագանք տալ։ Սակայն դժբախտաբար, ես այժմ ոչ մի հնարավորություն չունեմ այդ բանն անելու, թեկուզ շատ մոտ ապագայում հնարավորության ստեղծվի, և այն ժամանակ ես հանգամանորեն կարտահայտվեմ մարքսիստի ու մարքսիստական օրգաններում աշխատակցելու մասին ընդհանրապես ու իմ «Մշակ»-ի հետ ունեցած տարբերության մասին՝ մասնավորապես։

Ալ. Մարտունի

Հ. Գ. Կխնդրեի շատ շուտով զետեղել այս նամակս և զետեղել ոչ թե «Նամակ խմբագրության» բաժնում, այլ տեքստում։ Հուսով եմ չեք մերժի, ի նկատի ունենալով հարցի լրջությունն ու նամակիս առանց այն էլ ուշանալը։ Նույնը»։ Նամակի տեքստի վրա մակագրված է՝ «չտպել 30/6—1914 թ.» (տե՛ս ՄԼԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 2916, ց. 1, գ. 7, թ. 30—31)։ Այժմ այդ ֆոնդը գտնվում է ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալում, ֆ. 4004, ցուց. 1։

հումյանի խմբագրությամբ լույս էր տեսնում ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի օրգան «Սոցիալ-դեմոկրատ»-ը։ Այն բոլշևիզմի իսկական տրիբունա էր։ Նրանում են առաջին անգամ տպագրվել Ստ. Շահումյանի՝ «Մինիստրական կրիզիսի առթիվ», «Կոալիցիոն մինիստրությունը», «Քաղաքական ճգնաժամը», «Հեղափոխության ընթացքը» և այլ հոդվածներ։ «Մինիստրական կրիզիսի առթիվ» հոդվածում Շահումյանը դիմակազերծ է անում ժամանակավոր կառավարությանը։

«Կոալիցիոն մինիստրությունը» առաջնորդող հոդվածում պարզաբանվում էր, որ հեղափոխությունը դեռ չի վերջացել, նա շարունակվում է։ Այժմ հեղափոխությունը ուղղված է ընդդեմ կալվածատիրական, ֆինանսական և արդյունաբերական բուրժուազիայի։ Հեղափոխությունը ուղղված է այն բուրժուազիայի դեմ, որի ներկայացուցիչներն են Լվովը, Միլյուկովը, Շինգարևը և ուրիշներ, հենց նրանք, որոնցից կազմվեց ժամանակավոր ռեակցիոն կառավարությունը։

Իշխանությունը լիովին պիտի անցնի Բանվորական և գյուղացիական սովետների ձեռքը, ահա այսօրվա նշանաբանը,— գրում էր Շահումյանը։

«Սոցիալ-դեմոկրատ»-ում հրապարակված հոդվածներում Շահումյանը մարքսիստական վերլուծության է ենթարկում ռուսական հեղափոխության ընթացքը, հույս և հավատ ներշնչում, որ կյանքն ու ապագան մեզ հետ են, որ վաղ թե ուշ Ռուսաստանի երկնակամարը, որ ժամանակավորապես սև ռեակցիայի խիտ ամպերով է պատած, կշառագունի, և որ հզոր Դեմոսը նորեն հեղափոխության դրոշակը պարզած և զինված անցյալի փորձով առանց մոլորվելու և տատանվելու կտապալի կապիտալիստների տիրապետությունը, իշխանությունը կառնի իր ձեռքը և եվրոպական պրոլետարիատի հետ միասին վերջ կդնի ներկա սպանդանոցին և կփրկի աշխարհը կորստից։

Ահա այս բարձր գիտակցությամբ և հավատով ենք կազմակերպվում, պատրաստվում կռվի,— ասում է Շահումյանը։

«Սոցիալ-դեմոկրատ»-ի համարներում տպագրված Ա. Միկոյանի հոդվածներից արժեքավոր են «Քաղաքական կրիզիսը և կոալիցիոն մինիստրությունը»*, «Եղբայրացումը ֆրոնտում», «Դաշ-

* Ա. Միկոյանը հոդվածների տակ ստորագրում էր՝ Ա. Միկոյան, Ա. Միկոյան, Կոմունիստ և այլն

նակցականները աշխատավորության պաշտպան», «Ի՞նչ է նշանակում հաշտություն առանց անեքսիայի և կոնտրիբուցիայի», «Ներսի տգիտություն, թե՞ աններսի գրագիտություն», «Ովքեր են մենշևիկները և բոլշևիկները», «Ազատությունը վտանգված», «Խելքի են գալիս», «Կորչի բուրժուազիան, կեցցե բանվորների, զինվորների և գյուղացիների հեղափոխական դիկտատուրան» և այլն։ Նրանցում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ ժամանակավոր կառավարությունը ռեակցիոն է, և ոչ մի աջակցություն չպետք է ցույց տալ նրան։ Այնուհետև մերկացվում են հեղափոխական ու օպորտունիստական կուսակցությունները, հաստատ հավատ է ներշնչվում, որ բոլշևիկյան տակտիկան կհաղթանակի։

«Ներսի տգիտություն, թե՞ աններսի գրագիտություն» և այլ հոդվածներում Ս. Միկոյանը մերկացրել է դաշնակների, բուրժուական նացիոնալիստների նողկալի դեմքը, ցույց տվել, որ բուրժուազիան և նրա կամակատարները, չկարողանալով բոլշևիկների դեմ գաղափարական բանակռիվ մղել, դիմում են ամենակեղտոտ դեմագոգիայի, պրովոկացիայի։

«Սոցիալ-դեմոկրատ»-ին, բացի Ստ. Շահումյանից և Ա. Միկոյանից, ակտիվորեն աշխատակցել են Ա. Մյասնիկյանը, Մ. Մելիքյանցը, Հ. Հակոբյանը, Ա. Կարինյանը, Ս. Կասյանը, Ս. Վարդանյանը, Գ. Ղազարյանը, Հ. Կամարին, Հակոբ Հովհաննիսյանը և ուրիշներ։

Ալ. Մյասնիկյանը «Պրոլետարիատն ու բուրժուազիան արդի հեղափոխության մեջ» հոդվածում ղեկավարվելով սոցիալիստական հեղափոխության լենինյան տեսությամբ, ցույց է տալիս, որ պրոլետարիատը հասարակության ամենահեղափոխական դասակարգն է, նրա ամենակենսունակ, առաջադիմ ու գործուն ուժը, որ նա կոչված է հեղափոխությունը հասցնելու մինչև հաղթական վախճան։ Մերկացնելով բուրժուազիայի և նրա գործակալների դավաճանական քաղաքականությունը՝ հեղինակը նշում է, որ հեղափոխությանը հավատարիմ է մնացել միայն բոլշևիկյան կուսակցությունը, որը հենվելով պրոլետարիատի վրա, կռիվ է մղում բուրժուազիայի դեմ, խտացնում պրոլետարիատի շարքերը, նրանց շուրջն է համախմբում գյուղացիությանը և ձգտում բանվորների ու գյուղացիների միջոցով ապահովելու սոցիալիստական հեղափոխության հաղթանակը։

«Սոցիալ-դեմոկրատ»-ը քննադատել է բուրժուական և լիբերալ մամուլը, բացահայտել նրա մեքենայությունները։ 1917 թվա-

կանին «Մշակ»-ի՝ Բաքվի մի խումբ աշխատակիցներ հիմնեցին «Բանվոր» թերթը, որը, ըստ խմբագրության հայտարարության, պետք է ունենար սոցիալ-դեմոկրատական ուղղություն։ «Սոցիալ-դեմոկրատ» թերթը հանգամանորեն քննարկեց «Բանվոր»-ի (Բաքու) առաջին համարները և ընթերցողներին պարզաբանեց, որ նրանք զգուշանան հայ բանվորներին հեղափոխական պայքարից շեղող «մշակական-բուրժուական գաղափարների կույտերից»։ «Բանվոր»-ի շուրջը համախմբվածները քարոզում էին բուրժուական գաղափարներ և ոչ մի կապ չունեին հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հետ։ «Սոցիալ-դեմոկրատ»-ը ճշմարտությունը շուրթերին մարտնչում էր ընդդեմ ժամանակավոր կառավարության և բուրժուական նացիոնալիզմի։

Փետրվարյան հեղափոխությունից հետո «Պայքար»-ը մերկացնելով մենշևիկների և էսեռների դիմացրությունը, պրոպագանդում և պաշտպանում էր բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստականին անցնելու բոլշևիկյան լոզունգը։ «Ժամանակավոր կառավարությունը և հեղափոխական դեմոկրատիան» հոդվածում Ա. Միկոյանը հայ աշխատավորությանը պարզաբանում է փետրվարյան հեղափոխության արդյունքները, ստեղծված երկիշխանության՝ բանվորական և զինվորական դեպուտատների Սովետների և ժամանակավոր կառավարության քաղաքականությունը։ Բանվորական և զինվորական դեպուտատների Սովետները,— գրել է Ա. Միկոյանը,— հեղափոխության շարժիչ ուժերն են, բանվորների և զորքի կամքի արտահայտիչները, որի հետևում կանգնած է Ռուսաստանի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը, իսկ երկրորդը՝ ժամանակավոր կառավարությունը, իր կազմով և ձգտումներով հակահեղափոխական է, բուրժուազիայի շահերի պաշտպանը, որը ոչ միայն չի մասնակցել հեղափոխությանը, այլև ամեն կերպ աշխատել է խեղդել նրան հենց իր բնի մեջ։

Երկիշխանությունը չէր կարող երկար ժամանակ գոյություն ունենալ։ Ա. Միկոյանը ելնելով սոցիալիստական հեղափոխության և երկիշխանության վերաբերյալ լենինյան դրույթներից, ցույց է տալիս, որ անհրաժեշտ է իշխանությունն ամբողջովին հանձնել բանվորական և զինվորական դեպուտատների Սովետներին։ «Ուրիշ ոչ մի իշխանություն,— գրել է Ա. Միկոյանը,— բացի բանվորների, զինվորների և գյուղացիների խորհուրդներից, չէր կարող կատարել այն պատասխանատու դերը, որ դնում է ներկա հեղափոխությունը

նրա վրա։ Սպասենք և պատրաստվենք հեղափոխության զարգացման երկրորդ էտապին»[67]։

«Պայքար»-ը «Քաղաքական դրությունը և մոմենտի պահանջները»[68] առաջնորդող հոդվածում ընթերցողներին ուրախությամբ հաղորդում է, որ ցարական կառավարությունը տապալված է և հարկավոր է բոլոր միջոցներով օգնել Պետրոգրադի բանվորների և զինվորների դեպուտատների Սովետին։ Դրանից մեկ օր հետո տպագրվել է ՌՍԴԲԿ(բ) Կովկասյան շրջանային Կոմիտեի կոչը՝ ուղղված ազգաբնակչությանը և զորքին։ «Քաղաքացիներ,— ասված է նրանում,— բանվորների, հեղափոխական զորքի ընդհանուր ուժերով հին պետական կարգերին վճռական հարված է հասցված։

Փա՛ռք ու պատիվ հերոսներին՝ 1905 թ. մեծ հեղափոխության մարտիկներին, որոնք փտած բյուրոկրատական շենքի անկումը նախապատրաստեցին։

Փա՛ռք ու պատիվ Պետրոգրադի և Մոսկվայի բանվորներին ու այն սպաներին և զինվորներին, որոնք 1905 թ. հարթած ուղիով գնալով, հունիսի 3-ի ռեժիմին մահացու հարված հասցրին...»։

Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Ա. Մռավյանը, Ա. Ամիրյանը, Սիմակը, Շավարշ Գարագաշը և ուրիշներ «Պայքար»-ի էջերից իրենց կրակոտ հոդվածներով մերկացրել են ժամանակավոր կառավարությանը, հայ աշխատավորությանը կոչ արել՝ համախմբվել բանվորների ու զինվորների դեպուտատների Սովետների շուրջը, օգնել՝ հեղափոխությունը հասցնելու իր հաղթական վախճանին։ «Պայքար»-ի 1917 թ., հունիսի 6-ի համարում Ա. Մռավյանը, «Մինիստր Կերենսկին» հոդվածում բացահայտել է բուրժուական ժամանակավոր կառավարության և նրա ղեկավարների դավաճանությունը։

«Պատմական նոր դարաշրջանը» խմբագրական հոդվածում, որը տպագրվել է 1917 թ. մարտի 25-ին, թերթը հանգամանորեն խոսում է ռուսական երկրորդ հեղափոխության վիթխարի նշանակության մասին, հեղափոխություն, որը օրեցօր ընդարձակում, նոր և անսահման հորիզոններ է բացում մարդկության առջև։ Ռուսաստանի հեղափոխությունը,— գրել է «Պայքար»-ը, միջազգային դեմոկրատիայի համար ամենալայն ասպարեզն է բացում, չկա այլևս,

---

67 «Պայքար», № 20 (75), 7 մայիսի 1917 թ.։

68 «Պայքար», № 9 (64), 5 մարտի 1917 թ.։

«Եվրոպայի ժանդարմ» ցարական կառավարությունը, «...բոլոր... երկրները պետք է Ռուսաստանի օրինակին հետևեն»:

Հայաստանի աշխատավորները, մաքառելով սեփական և օտարերկրյա հարստահարիչների դեմ, իրենց ազատման ճանապարհին ազատագրությունը տեսան Ռուսաստանի դեմոկրատական-հեղափոխական ուժերի հետ սերտ համագործակցության մեջ, ռուսական պրոլետարիատի հեղափոխական պայքարի թեժ գոտեմարտերում: Հայաստանը պատերազմի բոցերում ընթանում էր դեպի մեծ Հոկտեմբերը:

Աշխատավոր մասսաների նվաճման ճանապարհին լուրջ դըժվարություններ էին ծառացած Անդրկովկասի բոլշևիկների առջև: Տակավին 1915 թ. հոկտեմբերին Շահումյանի ղեկավարությամբ գումարված Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդակցությունը, որն ըստ էության, կոնֆերանսի նշանակություն ունեցավ, քննության առավ պատերազմի, ազգային, կազմակերպական ու այլ հարցեր: Տվյալ էտապի գլխավոր խնդիրը համարվեց միապետության տապալման համար մղվող պայքարը, բանվորների և գյուղացիների դաշինքի ամրապնդումը և սոցիալիստական հեղափոխության հաղթանակը: Հաստատվեց Ստ. Շահումյանի ներկայացրած բանաձևը, որտեղ շարադրված էր բոլշևիկների վերաբերմունքը պատերազմի նկատմամբ: «Գլխավոր դասը, որ ժողովուրդները պետք է քաղեն այս սոսկալի աղետից,— ասված էր բանաձևում,— այն է, որ միայն կապիտալիստական կարգի ոչնչացումը... և այդ կարգը սոցիալիստական կարգով փոխարինելը ժողովուրդներին կարող է փրկել հետագա գազանացումից և ինքնաոչնչացումից ու մարդկությանը դուրս բերել հետագա պրոգրեսի ուղին»[69]:

Հանգամանորեն մշակելով Անդրկովկասի բոլշևիկների գործունեության ծրագիրը, Շահումյանը խնդիր դրեց. «...Կոչ անել Կովկասի բանվորներին և բնակչության լայն մասսաներին՝ չենթարկվել տիրապետող դասակարգերի, նացիոնալիստական կուսակցությունների պրովոկացիաներին և հիշել, որ միայն բոլոր ազգությունների դեմոկրատիայի միասնության մեջ է նրանց հաղթանակի ու ազատագրման գրավականը և որ, ընդհակառակը, ազգային

---

69 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 351:

թշնամության հետագա ուժեղացումը Կովկասը կարող է դարձնել արյունալի ազգային ընդհարումների ասպարեզ»[70]։

Հայաստանի բոլշևիկներն այդ ժամանակ մեծ եռանդ ներդրեցին Բաքվի խորհրդակցության բանաձևերի շուրջ աշխատավորներին համախմբելու, նրանց գալիք մարտերին նախապատրաստելու ուղղությամբ։ Այդ ժամանակ աչքի ընկնող դեր էին կատարում Ա. Միկոյանը, Ս. Հովհաննիսյանը, Ա. Մելիքյանը, Ս. Ալավերդյանը, Գ. Աթարբեկյանը, Պ. Արվելաձեն, Լ. Տեր-Հովսեփյանը, Ս. Կախոյանը, Ս. Խանոյանը և ուրիշներ։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո ավելի ու ավելի բացահայտ էր դառնում երկրի բաժանումը միմյանց հակադիր երկու թշնամի լագերների՝ հեղափոխության և հակահեղափոխության, պրոլետարիատի և բուրժուազիայի միջև։ Իրադարձությունները և ժամանակավոր կառավարության վարքագիծն օրեցօր հաստատում էին բոլշևիկների գծի ճշմարտացիությունը։ Հեղափոխության խորացման ու զարգացման շնորհիվ պարզ էր դառնում, որ հեղափոխական ուժերի և ժամանակավոր կառավարության միջև հաշտություն լինել չի կարող, հաղթելու են կամ հեղափոխական ուժերը, կամ հակահեղափոխությունը։ Պրոլետարիատի և բուրժուազիայի միջև միջին դիրք գրավելու էսեռա-մենշևիկյան քաղաքականության սնանկությունը գնալով ավելի ակներև էր դառնում...

Երկիշխանությունը մոտենում էր իր վախճանին։

Ամբողջ երկրում հզոր հեղեղի նման ծավալվում էին բանվորական շարժումները։ Ռուսաստանի հերոսական պրոլետարիատը ժամանակավոր կառավարության հակաժողովրդական քաղաքականությանը պատասխանում էր բողոքի մասսայական ցույցերով և միտինգներով։ Երկրում լայն ծավալ էին ստացել գյուղացիական շարժումները և ազգային-ազատագրական պայքարը։

Վ. Ի. Լենինը վտարանդիությունից գրած նամակներում, հոդվածներում Ռուսաստանի պրոլետարիատին, զինվորներին և աշխատավոր մասսաներին պարզաբանում էր տվյալ մոմենտի առաջադիր խնդիրները, ցույց տալիս ժամանակավոր կառավարության հետադիմական բնույթը և կոչ էր անում՝ հեղափոխությունը հասցնել մինչև հաղթական վախճան։ Բախտորոշ նշանակություն ունեցան Վ. Ի. Լենինի Ապրիլյան հռչակավոր թեզիսները («Պրոլետա-

---

70 Նույն տեղում, էջ 363։

րիատի խնդիրները տվյալ հեղափոխության մեջ»), որոնք բոլշևիկյան կուսակցությանը հստակ կողմնորոշեցին ցարիզմի տապալումից հետո մղվելիք պայքարում: Ապրիլյան թեզիսները ամփոփում էին բոլշևիկյան կուսակցության հսկայական փորձը: Իլյիչը իր թեզիսներով լուսավորեց հեղափոխական Ռուսաստանի խիստ բարդ իրադրությունը և նշեց կոնկրետ պլան՝ հեղափոխության առաջին էտապից երկրորդ էտապին՝ սոցիալիստական հեղափոխությանն անցնելու վերաբերյալ:

Թեզիսների հիմքում դրված էր սկզբում մեկ, առանձին վերցրած երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության տեսությունը: Կուսակցության և բանվոր դասակարգի առջև Թեզիսները բացում էին հեղափոխության զարգացման հրապուրիչ հեռանկարներ, ոգեշնչում բանվորներին գոտեմարտելու բուրժուազիայի տապալման և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման համար: Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսները ստեղծագործական մարքսիզմի փայլուն փաստաթուղթ է:

1917 թ. ապրիլի 22-ին (մայիսի 5-ին) Շահումյանի խմբագրությամբ Բաքվում լույս տեսավ «Բակինսկի ռաբոչի» թերթի առաջին համարը: Նրանում հրապարակված էին Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսները, Շահումյանի խմբագրական ծանոթագրությամբ. Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը տակավին չէր հասցրել քննարկել թեզիսները: Հրապարակելով «Թեզիսները», ընկերները հնարավորություն կունենան ծանոթանալու նրա բովանդակությանը,— ասում է Շահումյանը: Այնուհետև նա նշում էր, որ Վ. Ի. Լենինը մինչև այժմ համարվել է Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիայի ականավոր գործիչներից մեկը, բուրժուական մամուլը Լենինի Ռուսաստանում երևալու օրից կատաղի լուտանք է թափում նրա անվան շուրջը: Ամեն օր թերթերը կեղծ ու ֆանտաստիկ հեռագրեր են հրապարակում, թե ինչ է ասել Լենինը, ինչպես վերաբերվել Լենինին և այլն, Լենինի անվան շուրջը սովորական թեթևամտությամբ թվում են և խաղում տեղական կեղծ ֆելիետոնիստները՝ Ստարցովը և Իգլան: Շահումյանը ցիտում է Ավգուստ Բեբելի հետևյալ խոսքերը՝ «երբ առավոտները կինս թերթերը ձեռքին գալիս է ինձ մոտ և դառնությամբ պատմում, որ թերթերը նորից հայհոյում են ինձ, ես նրան միշտ պատասխանում եմ, հիմար, դա լավ է, որ բուրժուական թերթերը հայհոյում են ինձ: Եթե նրանք ինձ չհայհոյեն, ես կմտածեի, որ բանվորների շահերը վատ եմ պաշտպանում», և ապա ավելացնում՝ «բուրժուական թերթերի այդ բոլոր թունավո-

րումը, նրանց չարանենգությունը և զրպարտանքը կարող է հասցնել հակառակ արդյունքների և միայն ծառայություն մատուցել Լենինին»[71]:

Վ. Ի. Լենինի «Ապրիլյան թեզիսները» առաջինը լույս տեսան Բաքվի բոլշևիկյան մամուլում:

Բոլշևիկների դեմ միացյալ ճակատով հանդես էին գալիս վրացական մենշևիկները, հայկական դաշնակցականները և ադրբեջանական մուսավաթականները, որոնք քողարկվելով դեմագոգիկ լոզունգներով և սոցիալիստական ֆրազներով, իրենց հետևից էին տանում աշխատավորների նշանակալից խավեր: Նրանց ազդեցությունն առանձնապես նշանակալից էր գյուղացիության մեջ:

Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարում նախամարտիկը Բաքվի պրոլետարիատն էր: Բաքվի բոլշևիկները Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի գլխավորությամբ, զինված Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսներով, կուսակցության Ապրիլյան կոնֆերանսի և 6-րդ համագումարի որոշումներով, կազմակերպում են Անդրկովկասի բոլշևիկների պայքարը՝ հանուն սոցիալիստական հեղափոխության, հանուն Սովետական իշխանության:

Բաքվի բոլշևիկների կոնֆերանսը, այդ օրերին, ողջունելով 6-րդ համագումարը, իր որոշման մեջ առանձին ուժով ընդգծեց, որ միայն բուրժուազիայի հետ կապերը լիովին խզելով և իշխանությունը հեղափոխական դեմոկրատիային ամբողջովին հանձնելու պայմաններում է հնարավոր ակտիվորեն պայքարել հակահեղափոխության դեմ[72]:

Հայաստանի աշխատավորները, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, առաջնորդվելով Վ. Ի. Լենինի Ապրիլյան հռչակավոր թեզիսներով և կուսակցության VI համագումարի որոշումներով, առաջ էին ընթանում դեպի մեծ Հոկտեմբերի հաղթանակը:

---

71 *Տե՛ս* «Бакинский рабочий», № 1, 22 апреля 1917 г. *տես* Խ. Հ. Բարսեղյան, *Ստեփան Շահումյանի կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Երևան, 1968, էջ 406—407:*

72 «Бакинский рабочий», № 48, *3 սեպտեմբերի 1917 թ.:*

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

1. Ժողովրդի խորհրդարան: 2. Թարմ շունչ է փչում: 3. Բ. Կնունյանցի հոդվածները «Նովայա ժիզն» թերթում: 4. Ընդդեմ մենշևիկ լիկվիդատորների և օտզովիստների: 5. Ս. Տ. Արկոմեդի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գրքի արձագանքները: 6. «Պրավդա»-ն և հայ իրականությունը:

I

Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով բոլշևիկյան մամուլի դերը գրել է. «Այն **բոլոր** *հարցերը, որոնց համար մասսաները զինված պայքար էին մղում 1905—1907 և 1917—1920 թվականներին, կարելի է (և պետք է) հետաքննել սաղմնային ձևով այն ժամանակվա մամուլով»*[1]*:*

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գաղափարական կյանքը, մարքսիստական գրականության ու մամուլի տարածման, հեղափոխական շարժումների ծավալման, ներկուսակցական պայքարի հարցերը ժամանակին արձագանք են գտել ՌՍԴԲԿ կենտրոնական մամուլում»[2]*:*

---

[1] Վ. Ի. Լենին. *Երկեր, հատ. 31, էջ 12:*

[2] *Այդ մասին տե՛ս* Խ. Բարսեղյան, *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն, Երևան, 1956, նույնը՝ ռուսերեն:* Հ. Ս. Խանակյան, *ՌՍԴԲԿ կենտրոնական մամուլը և Անդրկովկասը (1901—1917), Երևան, 1971: Նույնի կազմած ժողովածուները՝ լենինյան «Իսկրան» Անդրկովկասի մասին, Երևան, 1960,* Центральные газеты РСДРП о Закавказье, 1905, Ереван, 1965; «Правда» и «Социал-демократ» о Закавказье, Ереван, 1968; Большевистские газеты «Пролетарий» и «Звезда» о Закавказье, Ереван, 1971.

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին բոլշևիկյան «Վպերյոդ», «Պրոլետարի» թերթերը ոչ միայն տարածվում էին Հայաստանում, այլև նրանց էջերում պարբերաբար նյութեր էին հրապարակվում Անդրկովկասից, այդ թվում՝ Հայաստանից։ Հայ լենինյաններից կենտրոնական թերթերին աշխատակցում էին Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Հ. Հակոբյանը, Ս. Կասյանը և ուրիշներ։ Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան, Կենտկոմի էքսպեդիցիայի միջոցով, 1904-թվականին մեծ քանակությամբ մարքսիստական գրականություն ուղարկեցին Կովկասի բոլշևիկներին, այդ թվում՝ «ՌՍԴԲԿ II համագումարի բանաձևերը», Գալյորկայի (Մ. Ս. Օլմինսկու) «Կորչի Բոնապարտիզմը» բրոշյուրը, կուսակցության խորհրդի որոշումները, որոնք հրատարակվել էին «Իսկրա»-ում, և այլն[3]։

Երկրամասի բոլշևիկները, հեղափոխական բանվորները, մեծ հետաքրքրությամբ ընթերցում էին լենինյան հրատարակությունները, աշխատակցում բոլշևիկյան մամուլին։ Միայն 1905 թ. մարտին բոլշևիկյան «Վպերյոդ»-ը շուրջ 100 թղթակցություն, նամակ և ինֆորմացիա է ստացել Անդրկովկասից։ Այդ թղթակցություններում լուսաբանվել են ցարիզմի սարքած հայ-թաթարական (ադրբեջանական) ընդհարումները։ Համագումարի բերելով տպագրած նյութերում վերհանված խնդիրները, «Վպերյոդ»-ը պարզաբանում էր Անդրկովկասի քաղաքական իրադրությունը, մերկացնում փոքր ազգերի, մասնավորապես կովկասյան ազգերի նկատմամբ ցարիզմի վարած բիրտ, ազգահալած քաղաքականությունը։ Դուք քաղաքացի մուսուլմաններ,— գրել է թերթը,— ցարական կառավարության կողմից բոլորից շատ խաբվածներ, պետք է անմիջապես երես դարձնեք նրանից։ Նա ձեզ իր հանցավոր նպատակների գործիքը դարձրեց և այժմ ամբողջ մեղքը պետք է ձեզ վրա դցի... Դուք գործնականում համոզվեցիք, թե ոստիկանության տարածած լուրերը ինչպիսի անհեթեթություններ էին։ Բոլոր ազգերի հետ ձեզ եղբայրական միության կոչ ենք անում։

Հայաստանում հեղափոխական ու հակացարական շարժումների ընթաց պատմության արտացոլումը «Իսկրա»-ում լուսաբանել ենք սույն աշխատության առաջին գրքում։

3 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 25, оп. 40, ед. хр. 37572, л. 20; XV. Ленинский сборник; Տե՛ս նաև՝ Հ. Ա. Իսահակյան, ՌՍԴԲԿ կենտրոնական մամուլը և Անդրկովկասը, Երևան, 1971, էջ 129։

Քաղաքացի հայե՛ր։ Ձեզ համար նույնպես պետք է ակնհայտ լինի, որ կոտորածի մեղավորը ոչ թե մուսուլմանական մասսան է, այլ բոլոր ազգությունների ընդհանուր թշնամին՝ ցարական ինքնակալությունը…

Եվ դուք, ռուս քաղաքացիներ, որպես Բաքվի փողոցներում հենց նոր տեղի ունեցած դաղանությունների վկաներ, կրկնապատկված ուժերով պետք է կործանենք նույն դահճին՝ ցարական կառավարությունը[4]։

«Վպերյոդ»-ը, որ երկրամասում ընթերցվում էր հետաքրքրությամբ, լուսավորում էր գրկից ժողովուրդների ազատագրական պայքարի ուղին, նրանց մեջ սերմանում եղբայրական համագործակցություն, բարեկամություն։

Հայաստանում բանվորական գործադուլային շարժումները, հակացարական ընդվզումները, գյուղացիական պոռթկումները ջերմ արձագանք ու պաշտպանություն էին գտնում լենինյան տպագիր օրգաններում։ «Վպերյոդ», «Պրոլետարի», «Սոցիալ-դեմոկրատ», «Զվեզդա», «Պրավդա» և այլ պարբերականների էջերում տպագրված նյութերը դրա լավագույն ապացույցն են։

Բոլշևիկյան «Պրոլետարի»-ին լուսաբանել է Հայաստանի երկաթուղայինների 1905 թ. գործադուլային շարժումները, Ալավերդու պղնձաձուլական գործարանի ու հանքերի բանվորների քաղաքական ելույթները[5]։ «Պրոլետարին» անդրադառնալով 1905 թ. Երևանում ստեղծված դրությանը, գրել է «Երևանում սարսափելի լարված վիճակ է, որ ավելի ճիշտ կլինի կոչել զինված խաղաղություն»[6]։

Երկրամասի աշխատավոր մասսաները բոլշևիկների գլխավորությամբ ցարիզմի ազգահալած քաղաքականությանը դիմակայեցին ժողովուրդների բարեկամության դաշինքով և ինտերնացիոնալ միասնությամբ, ձախողեցին ցարիզմի և կովկասյան բռնադատիչների հրահրած հայ-թաթարական արյունոտ սպանդը։ Այդ առթիվ «Վպերյոդ»-ի № 13-ում Կովկասից ուղարկված թղթակցության մեջ ասված է. «Տեսնելով, որ կոտորածից հետո ազգային կռիվներ բորբոքել չհաջողվեց, ոստիկանության գնդապետը, քահանա Բուլնիցկին, մի քանի չինովնիկներ և առևտրականներ ցարին հեռագիր

---

4 Տե՛ս «Вперед», № 11, 1905.

5 Տե՛ս «Пролетарий», № 1, 27/14 մայիսի և 3 հունիսի (21 մայիսի) 1905 թ.: ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, ց. 125։ Գ. 167, գ. 264, Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 34, ցուց. 1, գ. 1046, Հ. Ա. Խանամիրյան. ՌՍԴԲԿ կենտրոնական մամուլը և Անդրկովկասը, Երևան, 1971, էջ 208—216։

6 «Пролетарий» № 5, 1905.

ուղարկեցին: Նրանք գրում են, որ եթե հայերը և թաթարները (ադրբեջանցիները— Խ. Բ.) միավորվեն, ապա ցարական արքունիքին Կովկասում հնարավոր չի լինի ապրել և այդ պատճառով անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել:

Միջոցներ իսկապես ձեռնարկվեցին՝ «...քաղաքը (Բաքուն) բառացիորեն ողողված է լրտեսներով ու զորքով, հրետանի է կանչված, բանտերը լեփ-լեցուն են»[7]:

«Վպերյոդ»-ը «Բանտ և աքսոր», «Խրոնիկա» և այլ բաժիններում հաղորդում էր Ռուսաստանի քաղաքական կյանքի, հեղափոխականների ձերբակալությունների, աքսորականների մասին: Հաղորդումներից մեկում ասված է. «Մոսկվայի բանտում նստածների մեջ է Բ. Կնունյանցը»[8], սահմանի վրա ձերբակալման ենթակաների ցուցակում նշված է Ստ. Շահումյանի անունը[9]: 1905 թ. սեպտեմբերին «Պրոլետարի»-ն «Փոստարկղ» բաժնում հաղորդել է. «Սեմյոնովին (Ս. Շահումյանին— Խ. Բ.)— երկու օրինակներն էլ ստացվել են»[10]:

«Վպերյոդ»-ն ու «Պրոլետարի»-ն բազմաթիվ հոդվածներ ու թղթակցություններ են արտատպել ՌՍԴԲԿ Կովկասյան միության օրգաններից՝ «Պրոլետարիատի կռիվը», «Պրոլետարիատի կռվի թերթիկը», «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» և այլ թերթերից, ինչպես և բոլշևիկյան մի շարք կոչեր և թռուցիկներ: Այսպես, «Պրոլետարին» արտատպել է Կովկասյան միության 1905 թ. օգոստոսի 30-ի թողարկած «Բյուլետենը»[11], Թիֆլիսի կոմիտեի օգոստոսի 29-ի՝ «Արյուն է թափվում, պատրաստվեցեք ապստամբության» մարտական թռուցիկը, որը լույս է տեսել հայերեն, վրացերեն և ռուսերեն[12]: Այդ թռուցիկներում բոլշևիկյան դիրքերից աշխատավորությանը զինված ապստամբության կոչ էր արվում: «Արյան դիմաց արյուն, մահվան դիմաց մահ՝ ահա ինչով պետք է պատասխանենք: Ի՛ զեն, ի՛ վրեժ, կեցցե՛ ապստամբությունը,—ահա մեր լոզունգները, ընկերներ[13]:

---

7 «Вперед», № 13, 1905.

8 «Вперед», № 2, 1905.

9 Տե՛ս «Вперед», № 12, 1905.

10 «Пролетарий», № 15, 5 սեպտեմբերի (23 օգոստոսի) 1905 թ.:

11 Տե՛ս «Листовки Кавказского Союза РСДРП». 1903, 1905; М., 1955, стр. 391—392.

12 Տե՛ս «Пролетарий» ,№ 18, 1905.

13 Տե՛ս «Пролетарий», № 18, 26 (13) սեպտեմբերի 1905 թ.:

Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, ղեկավարվելով ՌՍԴԲԿ III համագումարի որոշումներով, հետևողականորեն մերկացնում են մենշևիկներին, պրոպագանդում բոլշևիկյան կուսակցության տակտիկան ու ստրատեգիան, լենինյան գաղափարները:

Հայաստանի ագրարային շարժումները ևս արձագանք գտան ՌՍԴԲԿ կենտրոնական տպագիր օրգաններում: «Վպերյոդ»-ը արձագանքելով Բորչալուի գավառի Ղարաքիլիսա, Շիշթափա գյուղերի, Էջմիածնի գավառի գյուղական բնակավայրերի և Հայաստանի այլ շրջանների գյուղացիական ելույթներին, գրել է. «գյուղացիական շարժումը հատուկ ուժով ընդգրկել է հայերով բնակեցված, գերազանցապես սահմանամերձ վայրերը Երևանի նահանգում և Կարսի մարզում»[14]:

Հայաստանի զորամասերի, սովորող երիտասարդության, աշակերտների, ծառայողների հեղափոխական ելույթները ևս ջերմ պաշտպանություն են գտել «Վպերյոդ», «Պրոլետարի» և բոլշևիկյան այլ պարբերականների կողմից: Վ. Ի. Լենինը բացառիկ նշանակություն էր տալիս Ռուսաստանի հեղափոխական երիտասարդությանը: Իլյիչն ասում էր. «Մենք հին նեխվածքի դեմ անձնուրաց կերպով պայքարող կուսակցություն ենք, իսկ անձնուրաց պայքարի առաջինը կգնա միշտ երիտասարդությունը»[15]: Վ. Ի. Լենինն այնուհետև ասում է. «Մենք միշտ կլինենք առաջավոր դասակարգի երիտասարդության կուսակցությունը»[16]: Լենինյան «Վպերյոդ»-ն ու «Պրոլետարի»-ն հայ ժողովրդի խորհրդատուն էին:

ՌՍԴԲԿ կենտրոնական մամուլում լայն արձագանք է գտել 1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբության համար Անդրկովկասի բոլշևիկների և հեղափոխական մասսաների ծավալած պայքարը: «Վպերյոդ»-ին Բաքվից ուղարկված մի նամակում ասված է.

«Այժմ մեզ անհրաժեշտ է երկու զենք՝ կենտրոնական ապարատ, որը փաստորեն կմիավորվեր մեզ, և զենք, այս բառի տառացի իմաստով,— այսինքն՝ զինում: Անհրաժեշտ է, որ «Վպերյոդ»-ի էջերում ապստամբության մասին մի շարք հոդվածներ տպագրվեն»... Մինչև այժմ բանվորները ինչ-որ շատ քիչ են պատկերացնում ապստամբության կոնկրետ ձևերը... Հարկավոր է գրականու-

---

14 «Вперед», № 11, 1905.

15 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 11, էջ 442:

16 Նույն տեղում.

թյան մեջ ցույց տալ այն բացառիկ գիծը, որ բաժին է ընկել ռուսական սոցիալ-դեմոկրատիային, որը տվյալ դեպքում ոչ ոքից չի կարող օրինակ վերցնել։ Հնարավոր չէ այս գործում սովորել եվրոպական կուսակցություններից, անհրաժեշտ է բացել իր, սեփական ուղին»։

«Վպերյոդ»-ը ընդառաջեց բաքվեցիների խնդրանքին, շատ հոդվածներ նվիրեց զինված ապստամբության հարցերին, պարզաբանեց՝ զինված ապստամբությունն արվեստ է մարքսիստական դրույթը։

2

ՌՍԴԲԿ III համագումարի՝ «Պրոպագանդայի և ագիտացիայի մասին» ընդունած որոշման համաձայն 1905 թ. օգոստոսից Մոսկվայում սկսեց լույս տեսնել «Ռաբոչի» անլեգալ թերթը։ Այն համառուսական բոլշևիկյան գաղափարականությամբ տոգորված թերթ էր, որը Վ. Ի. Լենինի բնութագրությամբ «հիանալի ապավորություն էր թողնում»[17] և թարմ շունչ հաղորդում։ «Ռաբոչի»-ին իր էջերում լայն տեղ է տվել Կովկասի քաղաքական կյանքին, մերկացրել հայ-թաթարական կոտորածներ կազմակերպողներին։ «Կովկասը ամբողջությամբ, և քաղաքները և գյուղերը, բռնկված է ապստամբությամբ,— գրել է թերթը,— ժողովուրդը՝ բանվորները, գյուղացիները, ազատություն են պահանջում ոչ թե խոսքերով, ոչ էլ նույնիսկ գործադուլներով, այլ զենքի ուժով։

Ռումբը ռումբի ետևից է պայթում, սպանում են նահանգապետերին ու ցարական բաշիբոզուկներին... Այս ամենին զուգընթաց ընթանում են նաև գործադուլները»[18]. «Ռաբոչի»-ն, որ լույս է տեսել չորս համար, հատուկ տեղ է տվել Անդրկովկասի ագրարային շարժումների՝ Գուրիայի գյուղացիության հեղափոխական ելույթների լուսաբանությանը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքին, նրանց համագործակցած գործողություններին։ Թերթը պարզաբանում էր մարքսիստների ագրարային քաղաքականությունը, հիշեցնում, թե Մարքսը սովորեցրել է, որ պրոլետարիատը չի կարող հաղթանակել առանց դաշնակցի՝ գյուղացիության։ Հանձին գյուղացիության «պրոլետարական հեղափոխությունը կըս-

---

17 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 36, էջ 142։*
18 «Рабочий», № 1, 1905.

տանա այն երգչախումբը, առանց որի նրա մեներգը բոլոր գյուղացիական երկրներում կդառնա կարապի երգ»[19]: «Ռաբոչի»-ն պարզաբանում էր, թե բանվոր դասակարգի ընտրած հեղափոխական պայքարի ճանապարհին պետք է կանգնի նաև գյուղացիությունը: «Առանձին անկյուններում գյուղացիները սոցիալ-դեմոկրատական բնույթի կոմիտեներ և խմբեր են ստեղծում,— գրել է թերթը,— իսկ Անդրկովկասում (Գուրիա)... տեղի են ունենում գյուղացիների ճիշտ կազմակերպված սոցիալ-դեմոկրատական շարժումներ»[20]:

Ուշագրավ է «Ռաբոչի»-ի «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը Ռուսաստանում» խորագրով խմբագրական հոդվածը: Նրանում ասված էր, թե երկրի այլ շրջանների հետ միասին Անդրկովկասում ևս տեղի են ունենում «փողոցային կռիվներ, բարիկադներ են կառուցվում և արյունալի մարտեր են մղվում»[21]:

«Ռաբոչի»-ն քննադատել է ցարիզմի ազգային քաղաքականությունը, Անդրկովկասի բոլշևիկներից պահանջել ժողովրդին բացատրել, որ նրանց թշնամին ցարական կառավարությունը և կապիտալիստներն են, որ նրանց եղբայրներն ու բարեկամները ոչ թե մոլլաները, բեկերը և ոստիկաններն են, այլ բանվորները՝ ինչ ազգի ու հավատքի էլ որ նրանք պատկանեն[22]:

Մոսկվայի բոլշևիկյան կոմիտեի օրգան «Ռաբոչի»-ն առաքվել է նաև Հայաստան, որը կարևոր դեր է խաղացել կուսակցական կազմակերպությունների գաղափարական կյանքում[23]:

3

Ռուսական առաջին հեղափոխության ընթացքում պրոլետարական մասսաների կազմակերպման և համախմբման լավագույն միջոց էր «Նովայա ժիզն»-ը: Այն, ըստ էության, բոլշևիկյան կուսակցության կենտրոնական օրգանն էր: «Նովայա ժիզն»-ին աշխատակցել են Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը և ուրիշներ: Թերթի նոյեմբերյան համարում ասված է. «Թիֆլիս (սեփ. թղթ.) քանին կսկսի լույս տեսնել մեր թերթը՝ «Կավկազսկի ռաբոչի լիստոկը»:

---

19 *К. Маркс, Ф. Энгельс,* Соч., т. 8, стр. 607.

20 «Рабочий», № 3, 1905.

21 «Рабочий», № 1, 1905.

22 *Տե՛ս* «Рабочий», № 3, 1905.

23 *Տե՛ս* Խ. Հ. Բարսեղյան, *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն, Երևան, 1956. նույնը՝ Երևան, 1958, ռուսերեն լեզվով:*

Շատ հոդվածներ և թղթակցություններ ուղարկեցեք։ Ոտարիչեսկա-յա 11. Շահումյանին»[24]։

Ուշագրավ է այն փաստը, որ նշված է թե Ստ. Շահումյանը հանդիսանում է «Նովայա ժիզնի» «սեփական թղթակիցը»։ Դա հիմք է տալիս եզրակացնելու, որ «Նովայա ժիզն»-ում Կովկասից ստորագրված անստորագիր նյութերի մի մասը, հավանաբար, պատկանում է Շահումյանի գրչին։ Արժեքավոր են «Վրաստանի գյուղացիական շարժումների շուրջը», «Հոկտեմբերյան օրերը Թիֆլիսում» և այլ հոդվածներ։ Նրանցում նկարագրված են գյուղացիական շարժումները, ցարական մանիֆեստի նկատմամբ երկրամասի, հատկապես Թիֆլիսի պրոլետարիատի, արհամարհանքն ու ատելությունը, բոլշևիկների ղեկավարությամբ աշխատավոր զանգվածների ցուցաբերած վճռականությունը՝ հանուն ժողովրդական իշխանության, դեմոկրատական հանրապետության։ «Հոկտեմբերյան օրերը Թիֆլիսում» (ստորագրությունը՝ «E. K.») հոդվածում քննադատվում են էսեռները, բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները՝ վրաց մենշևիկները և դաշնակցականները։ Մերկացնելով դաշնակցությանը, հեղինակը գրել է, թե նրանք «զգալով պրոլետարիատի հեղափոխական ուժը, այժմ աշխատում ՚են թաքցնել իրենց ոչ պրոլետարական պահանջները և ելույթ են ունենում պրոլետարիատի անունից։ Այսպիսին է կյանքի հեգնանքը, այն կուսակցությունները, որոնք իրենց ողջ կյանքի ընթացքում «դասակարգային նեղ» շահերից թշնամանքով էին վերաբերվում բանվոր դասակարգի կուսակցությանը, այժմ ստիպված են զարդարվել նրա համազգեստով և պաշտպանել նրա լոզունգները»[25]։

Բ. Կնունյանցը հանդես է եկել «Կազմակերպության մասին», «Բանվորների դեպուտատների Սովետը, թե՞ կուսակցությունը», «Դիմակը հանված է», «Հեղափոխությունն ընթանում է», «Դարձյալ բուրժուական մի կուսակցություն», «Պայծառափայլ խուլիգանները» և այլ հոդվածներով[26]։

«Կազմակերպության մասին» հոդվածում, որը լույս է տեսել «Բ. Ռադին» ծածկանվամբ, Կնունյանցը քննարկում է հեղափոխու-

---

24 «Նովայա ժիզն», 14, 16 (29-ին) նոյեմբերի 1905 թ.։

25 «Новая жизнь», № 7, 3 (21 նոյեմբերի) 1905 թ.։

26 Տե՛ս «Новая жизнь», № 3, 29 հոկտեմբերի (11 նոյեմբերի) № 5, 1 (14) նոյեմբերի, № 6, 2/15 (նոյեմբերի), № 16, 18 նոյեմբերի (1 դեկտեմբերի), № 20, 24 նոյեմբերի (7 դեկտեմբերի) 1905 թ.։

թյան հարցերը, նշում, որ պրոլետարական շարժումները ղեկավարելու համար ամենից առաջ անհրաժեշտ է բոլշևիկյան ամուր կազմակերպություն։ Պրոլետարիատը պետք է համախմբի իր ուժերը, զինվի և պատրաստ լինի դասակարգային վճռական մարտերի համար։ Գիտակից պրոլետարը,— ասում է Կնունյանցը,— չի կարող հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի շարքերում չլինել, քանի որ նա իր դասակարգի շահերի միակ արտահայտիչն է[27]։

«Բանվորների դեպուտատների Սովետը, թե՞ կուսակցությունը» հոդվածում, ինչպես և 1906 թ. առանձին գրքույկով հրատարակված «Բանվորների դեպուտատների առաջին սովետը» և այլ աշխատություններում Բ. Կնունյանցը լուսաբանել է բանվորների դեպուտատների անդրանիկ սովետների, մասնավորապես Պետերբուրգի սովետի գործունեությունը, կուսակցության և սովետի փոխհարաբերության, նրանց ֆունկցիաների և հարակից այլ հարցեր. Դասակարգային պայքարում Սովետի դերի ու տեղի հարցերի լուսաբանությունը կարևոր նշանակություն ուներ։ Բ. Կնունյանցը հիմնականում ճիշտ մոտեցում ունենալով, միաժամանակ թույլ է տալիս որոշ սխալներ, որոնք Վ. Ի. Լենինի օգնությամբ նա ուղղեց։ «Բանվորների դեպուտատների սովետը, թե՞ կուսակցությունը» հարցադրումը, ինքնըստինքյան, ճիշտ չէր։ Վ. Ի. Լենինը «Մեր խնդիրները և բանվորների դեպուտատների սովետը» հոդվածում գրել է. «Ինձ թվում է, թե ընկ. Ռադինը իրավացի չէ, երբ «Նովայա ժիզն»-ի № 5-ում... հարց է դնում բանվորների դեպուտատների սովետ, թե կուսակցություն։ Ինձ թվում է, որ հարցն այսպես դնել չի կարելի, որ լուծումն անպայման պետք է լինի և՛ բանվորների դեպուտատների Սովետ, և՛ կուսակցություն։ Հարցը— այն էլ չափազանց կարևոր հարցն այն է միայն, թե ինչպես բաժանել կամ ինչպես միացնել Սովետի խնդիրները և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության խնդիրները»[28]։

---

27 Տե՛ս «Новая жизнь», № 3, 29 октября (11 ноября) 1905 г. Տե՛ս նաև Б. М. Кнунянц, Избр. произвед., Ереван, 1958, стр. 93—97.

28 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 5, 6։ Վ. Ի. Լենինի Կրեմլի գրադարանում պահվող Բ. Ռադինի (Կնունյանցի) «Բանվորների դեպուտատների Սովետը (1906)» գրքի VI—VII, 3—5, 7—15, 7—19, 22—27, 29—34, 36, 38, 40, 42—44, 54, 55, 59—64, 67, 68, 70, 71, 73—75, 77—84, 86—88, 90—95, 98, 101—106, 111, 115—118 էջերի վրա Իլյիչը կապույտ մատիտով նշումներ է կատարել։ Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 2227, 1961. Տե՛ս նաև «Библиотека В. И. Ленина в Кремле», М., 1961.

«Դիմակը հանված է» հոդվածում Բ. Կնունյանցը մերկացնում է ցարիզմի հետադիմական քաղաքականությունը, Հոկտեմբերյան մանիֆեստի խաբուսիկ լինելը։ «Ռուսաստանին հանդիսավոր խոստացան անձի անձեռնմխելիություն,— գրել է Բ. Կնունյանցը,— իրականում դա արտահայտվեց քաղաքացիների մեջքին կազակների մտրակի ազատ շառաչյունով, զինվորական դատարանների լիակատար տիրապետությամբ, որոնք քաղաքացիներին կախում են 24 ժամվա ընթացքում, ծպտված ոստիկանական պաշտոնյաների կողմից՝ կառավարության անհաճելի անձնավորությունների նենգ սպանություններով և այլն և այլն։ Այսպիսին են խոստացված ռեֆորմները»[29]։

4

Վ. Ի. Լենինը սովորեցրել է, որ չի կարելի հաղթել՝ առանց սովորելու ճիշտ հարձակվել ու ճիշտ նահանջել։ Ստոլիպինյան տեղատվության տարիներին բոլշևիկյան կենտրոնական մամուլը նկարագրել է Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների քաղաքական գործունեությունը, լեգալ և անլեգալ հնարավորությունների օգտագործման մեթոդները։ Բոլշևիկյան «Պրոլետարի» թերթում հրապարակված «Բունդի օրգանում տպագրված մի հոդվածի առթիվ» երկում Վ. Ի. Լենինը նշել է, որ անլեգալ պայմաններում հրատարակվող «Պրոլետարի»-ն հնարավորություն չունի հետևելու ազգային լեզուներով լույս տեսնող սոցիալ-դեմոկրատական գրականությանը, պարբերական մամուլին։ «Այդ պատճառով մենք թախանձագին խնդրում ենք բոլոր այն ընկերներին, որոնք գիտեն լատիշերեն, ֆիններեն, լեհերեն, հրեերեն, հայերեն, վրացերեն և այլ լեզուներ և ստանում են այդ լեզուներով ս. դ. թերթեր— օգնել մեզ ս.-դ. շարժման վիճակի մասին և ոչ ռուսական ս. դ. տակտիկական հայացքների մասին ռուս ընթերցողներին տեղյակ դարձնելու գործում։ Օգնությունը կարող է արտահայտվել ոչ միայն... ս. դ. գրականության տեսություններ հասցնելու մեջ, այլև առանձին հոդվածների կամ նույնիսկ այս կամ այն հոդվածի առավել ցայտուն տեղերի թարգմանություններն ուղարկելու մեջ»[30]։ Լենինյան կոչին ջերմորեն արձագանքեցին Կովկասի բոլշևիկ-հրապարակախոսնե-

---

29 «Новая жизнь», № 6, 2 (15) ноября 1905 г.

30 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 11, էջ 469։

րը։ «Բորբա» (Թիֆլիս), «Բակինսկի ռաբոչի» և այլ պարբերականներից «Պրոլետար»-ին արտատպել է որոշ հոդվածներ։ «Պրոլետարի»-ի «Փոստարկղը» տեղական բոլշևիկյան կազմակերպությունների հետ սերտ կապի միջոց էր։

Բոլշևիկյան կուսակցության կենտրոնական մամուլը՝ «Պրոլետարի», «Սոցիալ-դեմոկրատ» և այլն, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպություններին օգնել է մենշևիկ-լիկվիդատորների, օտզովիստների և հակալենինյան մյուս խմբավորումների դեմ մղվող պայքարում։ «Պրոլետարի»-ի № 37-ումն է առաջին անգամ հրապարակվել Ստ. Շահումյանի Բաքվի բուրժուազիայի հակաբանվորական քաղաքականությունը՝ լոկաուտը մերկացնող հոդվածը։ Շահումյանը բանվորներին կոչ էր անում չընկճվել, համախմբվել կապիտալի հարձակման դեմ գործնական պայքար մղելու համար[31]։ Բանվորներին միավորման նույնպիսի կոչ էր անում «Սոցիալ-դեմոկրատը»։ «Մեր պատմությունը կդատի,— ասված է «Սոցիալ-դեմոկրատ»-ում տպագրված Բաքվի բանվորների 1909 թ. ժողովներից մեկի բանաձևում,— և մենք գիտենք, որ այդ դատը մոտ է. Երկու թշնամական ուժեր դարձյալ բախվելու են։ Մի կողմում ինքնակալությունն է՝ իր ծառաներով... մյուսում՝ պրոլետարիատը և հեղափոխական գյուղացիությունը։ Վճռական մարտը սարերի ետևում չէ, և մենք հավատում ենք, որ հրանոթներով, գնդացիրներով և գնդակահարություններով ինքնակալությանը չի հաջողվի նորից ծունկի բերել ապստամբած ժողովրդին... Ժողովը Բաքվի պրոլետարիատին կոչ է անում պրովոկացիաներին չենթարկվել և շարունակել միավորումը իրենց միությունների և կուսակցության շուրջը»[32]։ «Սոցիալ-դեմոկրատ»-ը քննադատելով Բաքվի լիկվիդատորներին, ասում էր, թե նրանք ամենից շատ կուսակցությունից են վախենում, ժխտում են անլեգալ կուսակցությունը և նրա գոյությունը համարում վտանգավոր, ցնցվում են նույնիսկ անլեգալ թերթիկների մտքից, սարսափահար քարոզում են Պետիցիա ուղարկել Գուչկովին[33]։

Քաղաքական մթնոլորտը ծանր էր։ Ստոլիպինյան ռեակցիան սանձարձակ էր դարձել։ Հեղափոխական մտավորականության մի

---

31 Տե՛ս Ս. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 71—73։

32 «Социал-демократ», № 7—8, 1909.

33 Տե՛ս «Один из итогов (10 апреля 1911 г.)», «Наша заря», № 5, 1911, стр. 50—59. «Старое и новое», «Наша заря», № 6, стр. 17—27.

մասը տեղի ունեց լիկվիդատորության, չդիմացավ ռեակցիայի դաժան հարձակումներին։ Նույնիսկ լենինյան կայուն իսկրայական Բոգդան Կնունյանցը՝ բոլշևիկյան կուսակցության ակտիվ կառուցողներից մեկը, մահից առաջ «Նաշա Զարյա»-ում հրապարակված իր «Հանրագումարներից մեկը», «Հինը և նորը» հոդվածներում որոշ տատանումներ ունեցավ և նահանջեց իր նախկին մարքսիստական-լենինյան դիրքերից։ Ըստ երևույթին դրանում քիչ դեր չխաղացին սիբիրյան աքսորը, բանտային դաժան պայմանները, քաղաքական ակտիվ կյանքից կտրվելը և այլ հանգամանքներ[34]։ Այսուհանդերձ, Բ. Կնունյանցը լենինյան կոհորտայի այն նշանավոր հեղափոխականներից է, որն աչքի ընկնող դեր խաղաց ռուս մարքսիստների շրջանում, իր կյանքը լիովին նվիրաբերեց բոլշևիզմին, մարքս-լենինյան գաղափարների տարածմանն ու հաղթանակին։

Լիկվիդատորությունը Կովկասում զարգացման հող չգտավ։ Ուշագրավ է Գ. Ղարաջյանի (Ա. Տ. Արկոմեդ)՝ 1909 թ. օգոստոսին Ժնևից Գ. Պլեխանովին գրած նամակը, որտեղ իր հայացքները շարադրելով ներկուսակցական-քաղաքական տարաձայնությունների առթիվ, դատապարտում է լիկվիդատորներին։ Գ. Ղարաջյանը այդ ժամանակ պլեխանովական էր, և չէր համերաշխվում լիկվիդատորների հետ։

«Ինձ թվում է «լիկվիդատորական» տենդենցը անխզելիորեն կապված է «լեգալիստական» տենդենցի հետ,— գրել է Գ. Ղարաջյանը,— մեկը մյուսին է ենթադրում, մեկը մյուսի հետ սերտ կապված է։ Ով խոսում և մտածում է «պրոլետարական մասսայական շարժման հիմունքներով» վերակառուցման մասին, իսկ դա այդ ընկերների շուրթերում նշանակում է ոչ թե վերակառուցում գոյություն ունեցող կուսակցության ընդլայնման, ամրապնդման և պահպանման իմաստով, այլ նրա «լիկվիդատորություն» որպես «ոչ պրոլետարական», «ինտելիգենտական, կուսակցության, ինչպես նրանք հաճախ սիրում են անվանել, անկասկած խոսում և մտածում է այնպիսի լեգալ պայմանների ստեղծման մասին, որոնք կապահովեին հատկապես այդպիսի բանվորական սոցիալ-դեմոկրատական կուսակցության զարգացումը և գոյությունը»։— Ձգտումը, առանձնացնել սոցիալ-դեմոկրատիային համահեղափոխական, քաղաքական խնդիրների ոլորտից, սահմանափակելով այդ հեղափոխական

[34] Տե՛ս «Один из итогов (10 апреля 1911 г.)», «Наша заря», № 5, 1911, стр. 50—59. «Старое и новое», «Наша заря», № 6, 1911, стр. 17—27.

գործունեության ոլորտը միայն «բացահայտ գոյության պայքարով և այլն», չի հանդիսանում արդյո՞ք հեղափոխական գործունեության ծխական ոգու և ծխական մեթոդի հատկանիշ,— ասում է Ղարաջյանը։ «Լեգալիզատորական» տենդենցիան մեր կուսակցությունում ծագել է ռուսական ժամանակաշրջանից,— շարունակում է նա,— երբ որոշ հնարավորություն ստեղծվեց այս կամ այլ բանվորական կազմակերպություններում լեգալ աշխատելու համար։ Կովկասյան սոցիալ-դեմոկրատիայում նմանապես գտնվեցին որոշ ընկերներ, որոնք անչափ տարվեցին լեգալիզմով տուրք տալով պրոֆեսիոնալիզմին, կտրեցին ամեն տեսակ կապեր «ընդհատակյա» հեղափոխական կազմակերպության հետ։ Վրա հասավ «լուսավորչական» պրոֆեսիոնալ, «կոոպերատիվ» եռուզեռի ժամանակաշրջանը, որի ընթացքում հեղափոխական ապարատի կազմակերպական կապերը խիստ կազմալուծվեցին։

Աշխատակիցների մի մասն անցավ դեպի պրոֆեսիոնալ շարժում, մյուս մասը ընդմիշտ լքեց կազմակերպությանը, մյուսներն էլ մնալով կազմակերպությունում, հազվադեպ էին այցելում ժողովների, և ընդհանուր առմամբ չափազանց քիչ ակտիվություն ցուցաբերում։

Տարաձայնության և խուճապի պատճառների պարզաբանման նպատակով, որը հետևեց սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունում հունիսի 3-ի հեղաշրջումից և ռեակցիայի ուժեղացումից հետո հատկապես, որոշ Թիֆլիսցի ընկերներ, սոցիալ-դեմոկրատիայի վաղեմի աշխատողներ, 1907 թ. սեպտեմբերին Թիֆլիսում կազմակերպեցին մի շարք խորհրդակցական ժողովներ։ Այդ ժողովներում շատ բան պարզաբանվեց, ի միջի այլոց պարզաբանվեց այն հետաքրքիր երևույթը, որ որոշ ընկերներ միակողմանի և ուժգնորեն հափշտակվելով աշխատանքի լեգալ հնարավորություններով, հանդիսա սրտով պատրաստակամություն ցուցաբերեցին խզել կապերը գոյություն ունեցող կազմակերպության հետ...

Ինչ-որ հուսկացության խառնաշփոթություն է պարուրել այդ ընթացքում շատ ընկերների գլուխները և մշուշապատել էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրների ճիշտ ըմբռնումը։

Տեղեկություններ հաղորդելով Կովկասի քաղաքական կյանքից, Ղարաջյանն իր նամակն ավարտել է այսպես, «Պառակտումից ես միշտ վախեցել և վախենում եմ, բայց ոչ մի րոպե չեմ մոռացել

ՌՍԴԲԿ-ի բարձր շահերը, ես պատրաստ եմ նույնիսկ ընդունել այն իբրև չարիքի փոքրագույն»[35]*։*

Սույն նամակը, որ տակավին գիտական շրջանառության մեջ չի դրվել, հաստատում է, մեր պատկերացումները լիկվիդատորության դեմ մղած պայքարի վերաբերյալ։

5

1910 թ. ժնևում ռուսերեն լույս տեսավ Ս. Տ. Արկոմեդի (Ղարաջյան) «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» խորագրով աշխատությունը։ «Բանվորական շարժումը...» մենագրության մտահղացումը հեղինակի մոտ ծագել է 1903 թ. Սիբիրի աքսորավայրում։ Այնտեղ նա ծրագրել էր հանրագումարի բերել երկրամասի հեղափոխական, սոցիալ-դեմոկրատական շարժման նախաքայլերը՝ իր ձևավորումից մինչև 1904 թ. ցույց տալ նրա առանձնահատկությունները։ Աքսորից վերադառնալով և մեկնելով արտասահման, Գ. Ղարաջյանը նախապատրաստում և Գ. Պլեխանովի առաջաբանով հրատարակում է իր մենագրությունը։ Դա Անդրկովկասում մարքսիզմի տարածման, հեղափոխական և սոցիալ-դեմոկրատական շարժման զարգացման պատմության լուսաբանման առաջին փորձերից էր։ «Միանգամայն ժամանակին եմ համարում ընկ. Ս. Տ. Արկոմեդի գրած Կովկասի հեղափոխական շարժման պատմության *գրվածքի լույս ընծայումը,— գրել է Գ. Պլեխանովը։— Այս գրվածքը վերականգնում է ընթերցողների հիշողության մեջ այնպիսի՜ փաստեր, այնպիսի՜ գաղափարներ ու պայքարի այնպիսի՜ միջոցներ, որոնք առանձնապես պարզ ու հասկանալի են դարձնում «լիկվիդատորական» դատողությունների խայտառակ անհեթեթությունները... Ընկ. Ս. Տ. Արկոմեդի գիրքը ընթերցողի հիշողության մեջ վերականգնում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ամենալավ ավանդները»*[36]*։ Հիրավի, Ս. Տ. Արկոմեդի աշխատությունը փաստ-*

---

[35] «Дом Плеханова». Л., ф. 46, ед. хр. В-272.

[36] *Տե՛ս С. Т. Аркомед,* Рабочее движение и социал-демократия на Кавказе (с 80-х гг. по 1905 г.), с предисловием Г. В. Плеханова, ч. I. Ж. 1910. *Նույնը՝ հայերեն, Մոսկվա, 1923, Երևան, 1929, էջ 20, 30։ Ս. Տ. Արկոմեդի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գրքից երկու օրինակ գտնվում է Վ. Ի. Լենինի Կրեմլի գրադարանում։ 1910 թ. ժնևյան հրատարակության վրա կա Իլյիչի շտամպը՝* «Vl. Oulianrtt» *գրքի շապիկի չորրորդ էջի վրա Վ. Ի. Լենինը մակագրել է՝* «С XI-тезис Ан-а (Н. Жордания). XI, XII *և* XV

տական արժեքավոր նյութեր է պարունակում 1880-ական—1904 թթ. երկրամասի հեղափոխական շարժումների վերաբերյալ։ Գրքում խոսվում է Անդրկովկասի հեղափոխական շարժման ծագման, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջացման, Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի և այլ քաղաքների բանվորական առաջին գործադուլների, քաղաքական ցույցերի, «Մեսամե-դասի» խմբի գործունեության մասին։ Ինչ խոսք, մենագրությունը զերծ չէ թերություններից, բանավեճ հայցող ձևակերպումներից[37]։

Երբ 1910 թ. լույս տեսավ «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» աշխատությունը, հեղինակի վկայությամբ, Վ. Ի. Լենինը ՌՍԴԲԿ Կենտկոմի անունից նյութական օգնություն ցույց տվեց Գ. Ղարաջյանին՝ տպարանից ստանալու գրքի 2000 տպաքանակը[38]։ Այն տարածվեց արտասահմանում՝ ռուս հեղափոխական վտարանդիների շրջանում, առաքվեց Ռուսաստան, Կովկաս, աշխույժ բանավեճեր հարուցեց Կովկասում։ «Բանվորական շարժումը...» գրքին ջերմորեն արձագանքեցին ՌՍԴԲԿ կենտկոմի օրգան «սոցիալ-դեմոկրատ»-ը, Կ. Կաուցկու խմբագրությամբ լույս տեսնող «Neue zeit»[39] և այլ թերթեր, որոնք դրվատում էին նրա արժանիքները։ Բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ»-ը սրտանց ողջունում էր «այդ բրոշյուրի երևան գալը, որը պարունակում էր փաստական շատ նյութեր և արժանի էր ամենալայն տարածման։ «Թերթը միաժամանակ ընթերցողի ուշադրությունը հրավիրում էր» Գ. Վ. Պլեխանովի հետաքրքիր առաջաբանի վրա», որը բացի գրքի արժանիքներին ընդգծելուց, ոչնչացնող քննադատության էր ենթարկում մենշևիկ-լիկվիդատորներին[40]։

էջերում կարմիր, կապույտ և սև մատիտով կան նշումներ (տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 2, оп. 1, ед. хр. 2769; Տե՛ս «Библиотека В. И. Ленина в Кремле», М., 1961, стр. 139—140.

37 Այդ մասին տե՛ս Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Երևան, 1967, էջ 15—16։

38 Տե՛ս Ս. Տ. Արկոմեդ, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս Ա, Երևան, 1929, էջ 31։

39 Տե՛ս «Neue zeit», № 7, за 1910, стр. 151. ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4051, ցուց. 1, գ. 14, թ. 4—7. գրախոսություն է տպագրվել նաև «Парижский листок»-ի 1910 թ. սեպտեմբերի 24-ի № 29-ում, Մ. Վարանդյանը «Դրոշակ»-ի 1910 թ. № 7—9-ում, (էջ 67) իր դժգոհությունն է արտահայտել Գ. Ղարաջյանի գրքից։

40 Տե՛ս «Социал-демократ», № 15—16, 12 сентября 1910 г., стр. 11. Մենք այն կարծիքին ենք, որ «Սոցիալ-դեմոկրատ»-ի վերոհիշյալ գրախոսությունը

Ուշագրավ է այն փաստը, որ 1923 թ. Մոսկվայում «ՌԿ(բ)Կ կենտկոմի՝ ՌԿ(բ)Կ և Հոկտեմբերյան հեղափոխության պատմության հանձնաժողովի» դրոշմով հրատարակվել է Ս. Տ. Արկոմեդի «Բանվորական հեղափոխական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» մենագրությունը: Նոր հրատարակության մասին դրական գրախոսություններ են գրել Ա. Կարինյանը, Ա. Մռավյանը և ուրիշները: «Պեչատ ի ռևոլյուցիա» պարբերականի 1923 թ. մայիսյան համարում լույս է տեսել Ա. Կարինյանի գրախոսությունը. Ս. Տ. Արկոմեդի գիրքը,— նշել է նա,— արժեքավոր ներդրում է բանվորական շարժմանը նվիրված մեր գրականության մեջ: Այն, ամենից առաջ, հետաքրքիր է նրանով, որ հանդիսանում է Կովկասի բանվորական շարժման սկզբնական շրջանի մասնակցի աշխատությունը: Ղարաջյանի հուշերը, նրա հաղորդած փաստական նյութերը վերականգնում են հեռավոր անցյալի էջերը և ծառայում են այն պատմագիր հենքը, որի շուրջը պիտի հյուսվի Կովկասի բանվորական շարժման պատմությունը[41]:

Ս. Տ. Արկոմեդի մենագրությունը բարձր է գնահատել Ա. Մռավյանը:

6

Անդրկովկասի հեղափոխական շարժումները լայն արձագանք են գտել «Զվեզդա» և «Պրավդա» թերթերում, մարքսիստական «Պրոսվեշչենիե» ժուռնալում: «Զվեզդա»-ում են լույս տեսել Ս. Սպանդարյանի («Յունիուս» ծածկանվամբ) հոդվածները: «Կադետների դիտավորության մասին» հոդվածում Սպանդարյանը մերկացնում է կադետներին, ցույց տալիս, որ նրանք ջանում են Կովկասում ուժեղացնել իրենց քաղաքական ազդեցությունը:

«Դաշնակցության պատավորության շուրջը», «Դաշնակցականների դաշինքը երիտ-թուրքերի հետ» և այլ հոդվածներում թերթը քննադատել է բուրժուա-նացիոնալիստական դաշնակցության կուսակցությունը: Արժեքավոր են «Ռաբոչայա գազետա»-ում հրատարակված Կովկասի քաղաքական կյանքն արտացոլող նյութերը:

գրել է Վ. Ի. Լենինը: «Բանվորական շարժումը...» գրքի տպաքանակը ձեռք բերելու համար ՌՍԴԲԿ Կենտկոմի միջոցներից Վ. Ի. Լենինի գիտությամբ ֆինանսավորումը, գրախոսության ոճը, Գ. Ղարաջյանի գրավոր վկայությունը, որը պահվում է ՍՄԿԿ կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվում (Գ. Ղարաջյանի ֆոնդում) հիմք են տալիս նման եզրակացության համար: Այս միտքը հայտնել ենք 1962 թ. և մինչև այսօր առարկություն չի հարուցել:

41 Տե՛ս «Печать и революция», № 5, 1923, стр. 208–209. Տե՛ս «Նորք», № 3, Երևան, 1923, էջ 299—300:

Անդրկովկասի, այդ թվում՝ Հայաստանի աշխատավորության հեղափոխական դաստիարակության և համախմբվածության գործում մեծ դեր է խաղացել լենինյան «Պրավդա»-ն, որի առաջին համարը լույս է տեսել 1912 թ. ապրիլի 22-ին (մայիսի 5-ին)։ «Պրավդա»-ի հանդես գալը բանվորների համար խնդության տոն էր։ «1912—1913 թթ. երբ ստեղծվեց բոլշևիկյան լեգալ «Պրավդա»-ն,— գրել է Վ. Ի. Լենինը,— նրա հետևում կանգնած էին տասնյակ և հարյուր հազարավոր բանվորներ, որոնք իրենց կոպեկների հանգանակությունով հաղթեցին թե՛ ցարիզմի ճնշումը, թե՛ սոցիալիզմի մանր բուրժուական դավաճանների՝ մենշևիկների կոնկուրենցիան»[42]։ «Պրավդա»-ն բոլշևիկյան մամուլի մեծ դրոշակակիրն էր։ Այն լուսաբանել է հայ իրականության հարցերը, հայ ժողովրդին ցույց է տվել նրա ազատագրության ճիշտ ուղին։ Հայ անդրանիկ պրավդիստներ Ստ. Շահումյանը, Ս. Հովսեփյանը, Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը, Բ. Բորյանը, Ս. Կասյանը, Ա. Շահսուվարյանը, Հ. Հակոբյանը և շատ ուրիշներ 1912—1914 և ապա՝ 1917 թթ. «Պրավդա»-ում հրապարակված իրենց հոդվածներում ճշմարտացիորեն արտացոլել են Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման ընթացքը, լուսաբանել երկրամասի հասարակական-քաղաքական կյանքը, բոլշևիկյան կազմակերպությունների բեղմնավոր գործունեությունը։ Հին բոլշևիկ Ա. Ենուկիձեն պատմում է, որ երբ 1912 թ. ապրիլին սկսեց լույս տեսնել «Պրավդա»-ն, ինքը՝ Ստ. Շահումյանը, Ս. Կասպարովը գտնվում էին Բաքվի կենտրոնական բանտում։

«—Մենք նույնիսկ բանտից չէինք կորցրել մեր կապը Վ. Ի. Լենինի հետ,— ասում է նա։— Իլյիչից ստանում էինք նամակներ։ Մենք էլ մեր հերթին էինք գրում նրան։ Բանտում, երբ մի անգամ Վ. Ի. Լենինից ստացանք բացիկ, որի մեջ ասված էր, թե՝ «ինձ լավ եմ զգում և շատ գոհ եմ», դա մեզ բավական էր, որպեսզի հասկանայինք, որ «մեր գործերը լավ են ընթանում»[43]։

1913—1914 թթ. Ստ. Շահումյանը Աստրախանի աքսորավայրից աշխատակցում է «Պրավդա»-ին, իսկ 1913 թ. ապրիլին մեկնում Պետերբուրգ։ Ա. Ենուկիձեն 1913 թ. փետրվարի վերջին Պետերբուրգից Աստրախան Ստ. Շահումյանին գրած նամակում պատմում է «Պրավդա»-ի մասին և ավելացնում՝ «Պր.»-ի գործերն առայժմ առաջվա պես են, և ափսոս, քանի որ թերթի տպաքանակը

---

42 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 413։

43 «Правда», № 99, 5 мая 1929 г.

խիստ աճում է, իսկ նա խմբագրվում է (...) չգիտես թե ինչպես, մի խոսքով ու Բաքվի պես Կ-ն հաղորդել է ինձ Ի-չի (Լենինի) հետևյալ խոսքերը. «Միակ ճշմարիտ, արդարացի, միշտ էլ գիծը հասկացող են եղել բաքվեցիները։ Ես միշտ էլ կարող եմ վստահել նրանց»[44]։

Իլյիչի պահանջով Շահումյանը փոխադրվելով Պետերբուրգ կարճ ժամանակով խմբագրում է «Պրավդա»-ն։ Քաղաքական աքսորականի վիճակը և այլ հանգամանքներ թույլ չեն տալիս Շահումյանին երկար մնալ մայրաքաղաքում և խմբագրել «Պրավդա»-ն[45]։ «Պրավդա»-ում են առաջին անգամ լույս տեսել Շահումյանի «Աստրախանի բանվորների երկու բանաձևերը» «Պրավդա» թերթի մասին և սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի մասին, ու այլ հոդվածներ։ Շահումյանը, աքսորավայրից շարունակելով իր սերտ կապը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հետ, երկրամասի բոլշևիկների շրջանում կազմակերպում է «Պրավդա»-ի տարածումը և նրա «Երկաթյա ֆոնդին» տրվող բանվորական մուծումները։ Բացի այդ, Անդրկովկասի բոլշևիկներն ակտիվորեն աշխատակցում են «Պրավդա»-ին և նույնիսկ տեղական կոմիտեների տպարաններում արտատպում նրա առանձին համարները։ Միայն 1913 թ. ապրիլից մինչև 1914 թ. ապրիլը Կովկասից «Պրավդա»-ին ուղարկվել է ավելի քան 200 հոդված, թղթակցություն և նամակ, այդ թվում՝ մոտ 100-ը Բաքվից։ 1913 թ. ամռանը Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Ն. Կ. Կրուպսկայան գրել է Բաքվի ընկերներին, որ «Պրավդա»-ի խմբագրությունը խոստացել է նավթարդյունաբերական բանվորների մասին տալ ներդիր թերթիկ։ Բիբի-էյբաթի բանվորները, արտահայտելով Անդրկովկասի աշխատավորների ջերմ զգացումները, «Պրավդա»-ի տարեդարձի առթիվ գրել են. «Պրավդա»-ն միշտ էլ եղել է այն փայլուն լուսատու աստղը, որը լուսավորել է մեր տանջալի կյանքը, մեզ ցույց է տվել ազատության ուղին և հոգեկան տվայտանքի րոպեներին միշտ էլ քաջալերել է մեզ, ոգեշնչել ու դեպի առաջ կանչել։ Եվ մենք այնքան վարժվեցինք նրան, այնքան, որ նա մեզ համար դարձավ հարազատ, թանկագին... «Պրավդա»-ն մեզ լուսավորեց դասակարգային ինք-

---

44 ЦГАОР СС, ф. 102, 1913, оп. 265, д. 882, л. 340—342. Խ. Բարսեղյան, *Ստեփան Շահումյան։ Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Երևան, 1968, էջ 296—300։*

45 *Տե՛ս* ЦГИАМ ДП 00, 5 ч., 1913, л. 1—2, 4, 5.

նագիտակցության լույսով, սովորեցրեց պայքարել, իր շուրջը համախմբեց բանվորական միասնական ընտանիքը, երբ միատեսակ են մտածում ու զգում միլիոնավոր բանվորների հետ»[46]։

1914 թ. հունիսի 8-ին, իր «Բաքվի բանվորների խնդիրները» առաջնորդողում, «Պրավդա»-ն Բաքվի բոլշևիկներին խորհուրդ է տվել, որ առանց թերթի՝ կոլեկտիվ պրոպագանդիստի և կազմակերպչի դժվար կլինի բանվորներին համախմբել։ Հարկավոր է Բաքվում անմիջապես ստեղծել բանվորական օրգան՝ երեք լեզուներով՝ ռուսերեն, հայերեն, ադրբեջաներեն,— ասում էր «Պրավդա»-ն։ Միայն թերթը կարող է դասակարգային ինքնագիտակցությունն առաջ մղել։ «Պրավդա»-ի օգնությամբ 1914 թ. ապրիլին ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն Ստ. Շահումյանի ղեկավարությամբ հրատարակեց «Նաշա ժիզն» թերթը։ «Բանվորական մամուլի օրը» առաջնորդողում, որը գրել է Ստ. Շահումյանը, հանրագումարի բերելով բոլշևիկյան մամուլի գործունեությունը, նշել է, որ բանվորական մամուլը նրանց դասակարգային զարգացման միջոցներից մեկն է, այն մի ընտանիքում է միավորում ամբողջ բազմացեղ և բազմալեզու բանվորական Ռուսաստանը և համախմբում նրան՝ պլանաչափ ու տոկուն պայքար մղելու բանվորական շահերի համար։

«Պրավդա»-ի երևան գալը ջերմորեն ողջունեցին Վրաստանի և Հայաստանի բոլշևիկները։ Թիֆլիսի կարի մեքենայի «Զինգեր, և ընկ.» ֆիրմայի բանվորները 1912 թ. օգոստոսին «Պրավդա»-ին գրած նամակում հայտնում են, որ նրանք ուղարկում են 21 ռ. 20 կ. և խնդրում են 20 ռ. հանձնել գործադուլավոր բանվորներին, իսկ մնացածի դիմաց թերթ ուղարկել։ Նրանք պարտավորվում են ամեն ամիս կանոնավոր վճարել ստացված թերթերի համար։

1914 թ. ապրիլին, երբ «Պուտ պրավդի»-ում ազդարարվեց այն մասին, որ նա որոշել է հավելվածի ձևով առանձին թերթիկներ հրատարակել Ուրալի, Կովկասի, և Ռուսաստանի արդյունաբերական մի շարք այլ շրջանների համար, Անդրկովկասի բոլշևիկները, առաջին հերթին Բաքվի պրոլետարիատը, ջերմորեն արձագանքեցին «Կովկասյան թերթիկը» հրատարակելու վերաբերյալ «Պրավդա»-ի նախաձեռնությանը[47]։

1912—1914 թթ. «Պրավդա»-ում շատ հոդվածներ են տպագրվել հայ ժողովրդի ազատագրական-հեղափոխական պայքարի, Հայաս-

46 «Правда», № 106, 10 мая 1913 г.

47 Տե՛ս «Трудовая правда», № 1, 22 мая 1914 г.

տանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության և այլ հարցերի վերաբերյալ։ Հատկապես արժեքավոր են «Թուրքական հրապարակումները», «Երազում էին...», «Մարգարեի հետնորդների կայսրությունը» (1912), «Փոքր Ասիան և հայկական հարցը», «Կովկասյան մարքսիստները», «Հայկական հարցի շուրջը», «Հայկական բանվորական հրատարակությունները», «Բաքվի գործադուլը և հայկական հարցը» (1914) և այլ հոդվածները, որոնց մեջ բացի երկրամասի հեղափոխական շարժումների նկարագրություններից, մերկացվում էին դաշնակցականները, ինչպես նաև օտարերկրյա իմպերիալիստների զավթողական քաղաքականությունը Հայաստանում։ «Փոքր Ասիան և հայկական հարցը» (27 հուլիսի, 1913) հոդվածում բացահայտված են գերմանական իմպերիալիզմի թալանչիական քաղաքականությունը և նրա հրեշավոր պլանները, մերկացված է դաշնակցության հակաժողովրդական գործելակերպը։ Բոլշևիկյան «Պրավդա»-ն զգուշացնում էր՝ այն խոշոր վտանգի և աղետի մասին, որ գերմանական իմպերիալիստները և նրանց օսմանյան գործակալները նենգորեն նախապատրաստում էին հայ ժողովրդի համար։ «...Ի՞նչ տեղի կունենա այդ ժողովրդի հետ,— գրել է «Պրավդա»-ն,—որ ամբողջ Առաջավոր Ասիայում հանդիսանում է միակ կուլտուրաբերները։ Ի՞նչ տեղի կունենա այդ ժողովրդի հետ, որն առանց այդ էլ ստրուկ է դարձել թուրքական բեյերին, որոնք պետության և թագավորի օգնությամբ հայկական հողի ամբողջ հարստությունը բաժանել են իրենց միջև։ Ինչ տեղի կունենա իրավազուրկ, սովահար ու ցրտահար հայ գյուղացիության հետ, որը շահագործվում է Հայաստանի նահանգներում նահանգապետների պաշտոններ ունեցող քրդական ֆեոդալների կողմից... Այն ժողովրդի հետ, որի 85 տոկոսը գյուղացիությունն է, որից քուրդ ֆեոդալները հարկերը գանձում են հրետանու և հեծելազորի օգնությամբ։ Հայ գյուղացիությունը հարկ է վճարում ընտանիքի ամեն մի անդամի համար, անասունների համար, հողի համար, բույսերի համար, այն ամենի համար, ինչ ծնում է հողը։ Հարկերի գումարը որոշում է նահանգապետն իր հայեցողությամբ։ Ներկա ռեժիմի պայմաններում Ադանայում արդեն գնդակահարվել են հայ ժողովրդից 30 հազար մարդ»[48]։ Թերթը մեջ է բերում գերմանական տնտեսագետ Ռոշերի խոսքերն այն մասին, որ Անատոլիան Գերմանիային հարկավոր է որպես շահույթի վայր, որտեղ հնարավոր կլի-

[48] «Рабочая правда», № 13, 27 июля 1913 г.

նի բնակեցնել 30 միլիոն գերմանացի, իսկ Ալաշկերտի հովտում և Արևելյան Անատոլիայի մյուս նահանգներում հայ և արաբ աղջիկների ձեռքերով մշակված բամբակը «լիովին կբավարարի գերմանական արդյունաբերության պահանջը»։

«Պրավդա»-ն ճշմարտացիորեն մեկնաբանում էր հայ ժողովրդի ծանր դրությունը, իր ձայնը հնչեցնում դաժան ցեղասպանության դեմ, պարզաբանում երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների ինտերնացիոնալ բնույթը, ցույց տալիս նրանց պայքարը բուրժուական նացիոնալիզմի դեմ, հայկական հարցի լուծման մարքսիստական ուղին, ազգերի ինքնորոշման իրավունքի բոլշևիկյան պահանջի նշանակությունը։

Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների պրոպագանդման գործում մեծ երախտիք ունի 1907 թ. բոլշևիկյան կուսակցության անդամ, հրապարակախոս-գրականագետ Արտաշես Կարինյանը։ 1914 թ. «Պրավդա»-ում լույս են տեսել նրա «Ռեալիզմի վերածնունդը», Մաքսիմ Գորկու «Հեքիաթները», «Բանվորի երազարանը» և այլ հոդվածները։ Գրականության լենինյան կուսակցականության սկզբունքներից նա գնահատում է պրոլետարական գրականության մեծ հիմնադիր Մաքսիմ Գորկուն և նրա անգնահատելի ստեղծագործությունները։

1913—1914 թթ. բոլշևիկյան կենտրոնական մամուլում լույս են տեսել Սուրեն Հովսեփյանի (Ն. Սուրին) արժեքավոր հոդվածները։ Սուրեն Գրիգորի Հովսեփյանը (1890—1918) տասնհինգ տարեկան էր, երբ սկսեց հարել սոցիալ-դեմոկրատական աշակերտական կազմակերպություններին։ Գիմնազիան ավարտելուց հետո սովորել է Մոսկվայի համալսարանում, 1909 թ. ընդունվել ՌՍԴԲԿ շարքերը, իբրև Մոսկվայի քաղաքային կոմիտեի անդամ, պրոպագանդիստական ակտիվ գործունեություն է ծավալել։ 1913 թ. մարքսիստական «Պրոսվեշչենիե» հանդեսում և «Պրավդա»-ում տպագրվել են նրա մի քանի հոդվածները, որոնց մեջ պրոպագանդում է մարքսիզմ-լենինիզմի տեսության հարցերը, դրսևորում իր տեսական մեծ կարողությունները, քննարկում ֆրանսիական մատերիալիստների աշխատությունները։ Հովսեփյանը կենտրոնական և տեղական մամուլի էջերից մերկացնում է դաշնակցության հետադիմական գաղափարախոսությունը, սպանիչ քննադատության ենթարկում բուրժուական նացիոնալիստներին*։

* 1914—1917 թթ. նա եղել է Իրանում՝ զինվորական ծառայության մեջ, 1918 թ. նշանակվել է Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի օր-

1913 թ. ապրիլի 11-ին Ս. Հովսեփյանը (Սուրին) «Պրավդա»-ին գրած նամակում պատմում է, որ դաշնակցության մասին հոդված եմ ուղարկել, բայց իմ ձեռքի տակ եղած համարներում այն լույս չի տեսել։ Մի շաբաթից ավել է ինչ Թիֆլիսում եմ, սակայն ոչ մի կերպ «Պրավդա»-ն չեմ գտնում և փոստով էլ չեմ ստացել, թեև բաժանորդագրված եմ։ Նա խնդրում է հաղորդել, թե վերոհիշյալ հոդվածը հրապարակվե՞լ է, թե՞ ոչ։ Այնուհետև նա գրում է, թե Կարլ Մարքսի մահվան 30-ամյակի առթիվ (Մարքսիստական փիլիսոփայության մասին) մեկ թերթոնի ծավալով պատրաստի հոդված ունի, ուղարկի «Պրավդա»-ին, թե՞ ոչ։ Նամակի հետ միասին Ս. Հովսեփյանը հոդված է ուղարկել Բաքվի արհեստակցական միությունների գործունեության մասին։ «Անհամբեր սպասում եմ թերթի ծավալի մեծացմանը»,— գրել է նա[49]։

1913 թ. հունիսին «Պրավդա»-ում հրապարակվել են բոլշևիկ Գ. Հովհաննիսյանի և ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի անդամ Բագրատ Բորյանի հոդվածները[50]։ Նույն թվականի մարտի 18-ին Բաքվից Սիմոն Ավետիսյանը (հավանական է Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» 1898 թ. անդամ) «Պրավդա»-ին գրած նամակում խնդրել է ավելի շատ հոդվածներ տալ մենշևիկ լիկվիդատորների մասին։

դան «Կավկազսկայա կրասնայա արմիա» թերթի, իսկ այնուհետև՝ Բաքվի «Իզվեստիա» թերթի խմբագիր։

49 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 364, оп. 3, ед. хр. 41535, л. 1—2

50 *Տե՛ս* «Правда», № 104, 13 июня 1913 г., № 106, 15 июня 1913 г.

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Իդեալիստական փիլիսոփայության բավիղներում: 2. Թե ինչպես «Դրոշակ»-ը նշեց Կ. Մարքսի մահվան 25-ամյակը: 3. Միքայել Վարանդյանի «Հոսանքները»: 4. Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի ջատագովների ռեակցիոնությունը: 5. Թյուր ըմբռնումներ: 6. Կեղծ մարքսիստների սոցիալական մերկացումը:

1

Դեռևս դարասկզբին Ստ. Շահումյանը ճիշտ կերպով նկատում էր, որ «այժմ մենք ունենք ամբողջ դասակարգեր, որոնք իրենց իրական կյանքով ներկայացնում են որպես արդյունք նույն սոցիալ-տնտեսական պայմանների հեղաշրջման, որ առեղծվել էր նաև մեր կյանքում: Երկրի տնտեսական զարգացումն էր՝ իր բնական և անխուսափելի ընթացքով, որ առաջ բերեց մեր կյանքում այդ արմատական հեղաշրջումը»[1]:

Հայկական իրականության (Հայաստանի) սոցիալ-տնտեսական նոր պայմաններին և քաղաքական կյանքին համապատասխան երկրի ընդհանուր զարգացման վրա իրենց կնիքն էին դնում տրամագծորեն հակադիր երկու գաղափարախոսությունները՝ մարքսիստական փիլիսոփայությունը՝ պրոլետարիատի աշխարհայացքը և իդեալիստական փիլիսոփայությունը՝ հայկական բուրժուազիայի և հետադիմական ուժերի մտայնությունը՝ իր տարատեսակներով:

Բուրժուական կուսակցությունների ու գաղափարախոսներն, անկախ իրենց քաղաքական հայացքների տարբերությունից, միացել

---

1 Ստ. Շահումյան, *Երկեր*, *հատ. 1, էջ 123*:

էին դիալեկտիկական մատերիալիզմի հանդեպ իրենց տածած թշնամանքով։

Հայ բուրժուազիան մարքսիզմի դեմ պայքարն ուժեղացնելու համար ոչ մի բանի առջև կանգ չէր առնում։ Նա դիմում էր իդեալիստական փիլիսոփայության բոլոր ձևերի օգնությանը։ Դաշնակցության, այսպես կոչված, գաղափարախոսները՝ Միքայել Վարանդյանը (Հովհաննիսյան), Երվանդ Ֆրանգյանը, Երվանդ Կուպյանը, Արշակ Հովհաննիսյանը, Վահան Խորենին (Գրիգորյան) և այլք, ինչպես և «սպեցիֆիկներ» Բախշի Իշխանյանը, Դավիթ Անանունը հարձակվում էին մարքսիզմի վրա, դրոշ դարձնում սուբյեկտիվ իդեալիզմի նկրտումները, խավարամոլության որջերից կեղծ ու մոլոր քարոզներ կարդում։ Նրանք մի կողմից՝ բացահայտորեն գրոհում էին մարքսիզմի, նրա փիլիսոփայության հիմնական սկզբունքների վրա, իսկ մյուս կողմից՝ քողարկվելով սոցիալիստական ֆրազաբանությամբ, ռևիզիայի ենթարկում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքը։ Դա, ամենից առաջ, արտահայտված է Ե. Ֆրանգյանի «Քննադատական փիլիսոփայություն (Հյում)», «Քննադատական փիլիսոփայություն (Կանտի քննադատական մեթոդը)», «Փիլիսոփայական նամակներ», «Էմպիրիոկրիտիցիզմի հիմնական դրույթների շուրջը», «Ն. Կ. Միխայլովսկին որպես փիլիսոփա-սոցիոլոգ», «Պեսիմիզմի փիլիսոփան», «Հասարակագիտական էտյուդներ», «Կյանք և փիլիսոփայություն (պրագմատիզմ)» և այլ հոդվածներում ու գրքույկներում[2]։

Մախիզմը՝ էմպիրիոկրիտիցիզմը սուբյեկտիվ իդեալիստական փիլիսոփայության տարատեսակ է։ Ե. Ֆրանգյանը և դաշնակցության մյուս «տեսաբանները» հայ իրականության մեջ տարածում էին Էռնստ Մախի, Ռիխարդ Ավենարիուսի և նրանց ռուսական հետևորդների՝ Բոգդանովի, Յուշկևիչի և այլոց իդեալիստական հորինաբանությունները։ Իր «Փիլիսոփայական նամակներում» Ե. Ֆրանգյանը պաշտպանելով «ֆենոմենալիզմը» («ռեալիստական փիլիսոփայությունը»), գրել է. «այն վարդապետությունը, որը մենք ներկայացնում ենք և պիտի զարգացնենք աստիճանաբար... և որի պրիզմայով պիտի քննադատենք մյուս փիլիսոփայական դպրոցները

---

2 Հայ Բուրժուական փիլիսոփայության քննադատության մասին տե՛ս Հ. Գաբրիելյան. Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 4. Երևան, 1965։ Վ. Սեյան, Հայ բուրժուական փիլիսոփայության քննական վերլուծություն, Երևան, 1971։ Բ. Հ. Անանիկյան, Դաշնակցության գաղափարական քաղաքական կրախը, Երևան. 1974

և գիրք բռնենք համաշխարհային պրոբլեմների հանդեպ— ռեալիստական փիլիսոփայությունն է: Իսկ այն պատմա-փիլիսոփայությունը, որ այդ համապարփակ փիլիսոփայության մի բաղկացուցիչ մասնիկն է, կազմում և որի տեսակետով մոտենալու ենք հասարակական շարժումների և երևույթների անալիզին և նրանց գնահատականին, այդ ռեալիստական պատմահայեցողությունն է»[3]: Զբաղվելով նման բանաձևումով, ինչպես «Փիլիսոփայական նամակներ»-ում, այնպես էլ իր մյուս գործերում նա նենգափոխում է փաստերը, ջանում ապացուցել, որ մարքսիզմը իր փիլիսոփայությունը չունի: Ֆենոմենալիզմը, որի տեսական աղբյուրը մախիզմն է, երկրպագում է սուբյեկտիվ իդեալիստական փիլիսոփայությանը: Ե. Ֆրանգյանը և նրա համախոհները իդեալիստական հայացքներ էին քարոզում մատերիայի և գիտակցության փոխհարաբերության, փիլիսոփայական կատեգորիաների և այլ կարևորագույն հարցերում: Իր «Հասարակագիտական էտյուդներ» պասկվիլում Ե. Ֆրանգյանը «գուշակում էր» մարքսիզմի «մայրամուտը» և իդեալիստական փիլիսոփայության «արշալույսը»: «Որոշ փիլիսոփայական սիստեմներ (իմա՝ դիալեկտիկական մատերիալիզմը— Խ. Բ.) ապրել են իրենց դարը,— գրել է նա,— հետևապես արժեքազրկվում են, դառնում անկիրառելի»[4]:

Մեկ ուրիշ դաշնակցական՝ Արշակ Հովհաննիսյանը, արձագանքելով Ֆրանգյանին, ասում էր. «Սոցիոլոգիական խնդիրներում մարքսիզմն այսօր գրեթե բոլոր ասպարեզներում արդեն հետ է նահանջում: Դեռ ավելին: Փիլիսոփայական տեսակետն ևս այսօր տատանվելու վրա է»[5]: Դաշնակցության «գաղափարախոսների» հակամարքսիստական հայացքները սնուցող աղբյուրը սուբյեկտիվ իդեալիզմն է: Տխրահռչակ Ռ. Դարբինյանը, ժխտելով դաշնակցության փիլիսոփայության դուալիզմի վերաբերյալ թեզը, նշել է՝ դաշնակցությունը ռուսական էսեռների նման ունի մախիստական փիլիսոփայական հայացքներ: «Դաշնակցության փիլիսոփայությունը,— գրել է նա,— ամեն պարագայի տակ, կներկայացնի ընդհանուր գծերով ռուս սոցիալ-հեղափոխականներու աշխարհայեցողությունը, որն իր հիմունքներով այսօր ամենեն մոտ է Մախի և

3 Տե՛ս «Գործ», 3 հոկտեմբերի 1908 թ.:
4 Ե. Ֆրանգյան, Հասարակագիտական էտյուդներ, էջ 3:
5 Տե՛ս «Միտք», 1910, Երևան, էջ 176:

Ավենարիուսի էմպիրիոկրիտիցիզմին, փիլիսոփայական սիստեմ մը, որ գերազանցապես մոնիստական (միավորական) է»[6]։

Հայ բուրժուական փիլիսոփայությունը հավատարմորեն ծառայելով շահագործող դասակարգերին, ռևիզիայի էր ենթարկում մարքսիզմը, նենգափոխում պատմական փաստերը, Կ. Մարքսին հակադրում հենց իրեն՝ Մարքսին, կամ Ֆ. Էնգելսին հակադրում Կ. Մարքսին, ավելին, հայտարարելով, թե իբր Էնգելսն իր գործունեության վերջին շրջանում, Մարքսի մահից հետո, դարձել էր ռեֆորմիստ։

Նեոկանտականության հայ ներկայացուցիչ Սնարը[7] ևս աղճատելով մարքսիզմի հիմնական դրույթները փորձում էր մարքսյան փիլիսոփայությունից քաղել, ավելի ճիշտ կորզել, այնպիսի մտքեր, որոնք օգտակար էին իր իդեալիստական հայացքները տարածելու համար։ Գործելով «Ետ դեպի Կանտը» նշանաբանով, Սնարը իր «Կանտ և Մարքս, նրանց հաշտեցման հարցի շուրջը» հոդվածում արդարացնում էր ռևիզիոնիստներին, պնդելով, թե նրանց «բոլոր տեսական ձգտումները, ուղղված են ո՛չ թե մարքսիզմի վերացման կողմը, այլ նրա «բարենորոգման»։ Նրա կարծիքով, «Մարքսիզմի հիմունքները չափազանց ճոճվող վիճակի մեջ են ներկայումս... այդ ճոճվող հիմունքները մի կանտյան իմացականության կամ առհասարակ փիլիսոփայության պայմանական լուսաբանությամբ և կիրարկումով կարելի է մարքսիզմն առժամապես գոտեպնդել, նրա վերջին օրը մի փոքր հետաձգելու համար»[8]։ Սնարը և նրա գաղափարական զինակիցները «ետ դեպի Կանտ» քարոզով ձգտում էին Կ. Մարքսին լրացնել Կանտով, Մարքսի և Կանտի միջև կամուրջ գցելով «երիտասարդացնել» մարքսիզմը... Կ. Մարքսի մատերիալիզմը Կանտի «կրիտիցիզմի» միջոցով հասցնել «բարձրագույն աստիճանին»։

Դա իրականում նշանակում էր հրաժարվել մարքսիզմից և ընդունել Կանտի փիլիսոփայությունը, որը և անում էին բուրժուազիայի հայ գաղափարախոսները։ Դաշնակցականները սնունդ էին քա-

---

6 Տե՛ս «Ազատամարտ», 21 մայիսի 1911 թ.։

7 Սնար-Սնարյան՝ Սիմոն Հակոբյան (1887—1937) ծնվել է Շուշիում, երիտասարդ տարիներին մեկնել ԱՄՆ, 1922—1923 թթ. խմբագրել է Նյու-Յորքում հրատարակվող «Բանվոր» թերթը, 1924, 1925 թթ.՝ «Նոր շավիղ» առաջադիմական թերթը, 1928 թ. տեղափոխվել է Երևան, խմբագրել ՀՕԿ-ի «Տեղեկագիրը», հետագայում աշխատել է Երևանի թանգարանում։

8 Տե՛ս «Միտք», էջ 207։

զում միջազգային ռևիզիոնիզմի գաղափարախոսական սեղանից, մասնավորապես Բեռնշտայնի մտառումներից։ Աջ և ձախ օպորտունիզմը ներքին հարազատություն ունեն, երկուսն էլ բանվորական շարժման մեջ բուրժուական ազդեցության արտացոլումն են, սոցիալական միատեսակ արմատներ ունեն։

Երկրամասի բոլշևիկները, զինված Վ. Ի. Լենինի աշխատություններով, մերկացնում էին իդեալիստական փիլիսոփայության բավիղներում խարխափող, գիտական սոցիալիզմի նկատմամբ ատելությամբ լցված դաշնակցական տեսաբաններին։

Գրական գրչակ Բախշի Իշխանյանը (B. luciter, B. intimus) դաշնակցության գաղափարախոսների երգն էր հանդերգում, ջանալով դիալեկտիկան նենգափոխել մետաֆիզիկայով, մարքսիզմը ծառայեցնել շահագործող դասակարգերի շահերին։ Ա. Մյասնիկյանը, մերկացնելով Իշխանյանի կեղծ ու երեսպաշտ ելույթները, գրել է. «Մի ժամանակ եղել է մի «մարքսիստ», որը ծառայեցրել է մարքսիզմը բուրժուազիային ու նրա գաղափարախոսությանը։ Նա գրել է, որ բուրժուազիան արդի ամենապրոգրեսիվ, դրական ու շինարար տարրն է և քանի որ մարքսիզմը ժամանակի առաջընթացության ամենախիզախ և ուժեղ վարդապետությունն է, այն կարելի է գործիք դարձնել բուրժուազիայի ձեռքում։ Մանչեստրականություն (բուրժուական տնտեսագիտություն, տնտեսական լիբերալիզմի տեսություն), և մարքսիզմ՝ սա միևնույն բանն է,— ահա այն, ինչ քարոզել է չակերտավոր մարքսիստ և առանց չակերտների բուրժուական սպասավոր Իշխանյանը»[9]։

Բ. Իշխանյանը մետաֆիզիկ էր։ Նա չէր հասկանում մարքսիստական դիալեկտիկան, պատմական երևույթները դիտում էր մակերեսորեն, մեխանիկորեն կրկնում սուբյեկտիվ իդեալիստների քարոզները։ Իսկ դիալեկտիկան, պարզաբանում էր Ա. Մյասնիկյանը,— «մի ամբողջ պրոցես է, շարժում, զարգացում, եթե այդ շարժման ընթացքում առաջ են գալիս դրության բացասություն կամ բացասության բացասություն, ապա այդ ամենը շարժման հետևանքն է և ոչ թե պատճառը, այլ խոսքով՝ դա դիալեկտիկայի հատկանիշն է և ոչ թե որոշիչը[10]։

Բուրժուական հայ փիլիսոփայության ներկայացուցիչները մարքսիզմի ռևիզիայի իրենց փորձերի ընթացքում կառչում էին

---

9 Ա. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1958, էջ 121։

10 Նույն տեղում, էջ 127։

ֆենոմենալիզմին, որը մախիզմի տարատեսակն է։ Ժխտելով մատերիայի օբյեկտիվ գոյությունը, նրանք արդեցրում էին «շարժումն առանց մատերիայի» սուբյեկտիվ իդեալիստական տեսակետը, խնկարկում էին ագնոստիցիզմը, խեղաթյուրում իմացության պրոցեսի դիալեկտիկան, ճշմարտության և նրա չափանիշի մարքսիստական ըմբռնումը»[11]։ Հայ բուրժուական գաղափարախոսները մարքսիզմի աղճատողներն ու թշնամիներն էին, ռևիզիոնիզմի էպիգոնները։ Վ. Ի. Լենինը պատասխանելով այն հարցին, թե ինչ նոր բան են մտցրել մարքսիստական տեսության մեջ ռևիզիոնիստները «նորագիլները», գրել է. «բացարձակապես ոչինչ, նրանք ոչ մի քայլ առաջ չշարժեցին այն գիտությունը, որ Մարքսն ու Էնգելսը մեզ ավանդեցին զարգացնել. նրանք պրոլետարիատին չսովորեցրին պայքարի ոչ մի նոր ձև, նրանք միայն ետ էին նահանջում, փոխառնելով հետամնաց տեսությունների ծվեններ և պրոլետարիատին քարոզելով ոչ թե պայքարի տեսություն, այլ զիջողության տեսություն, զիջողություն պրոլետարիատի ամենաոխերիմ թշնամիների նկատմամբ, կառավարությունների և բուրժուական կուսակցությունների նկատմամբ, որոնք չեն հոգնում սոցիալիստներին հալածելու համար նոր միջոցներ գտնելու»[12]։

2

1908 թ. մարտին, Կարլ Մարքսի մահվան 25-ամյակի առթիվ «Դրոշակ»-ում լույս տեսավ «Կարլ Մարքս» հոդվածը։ Դաշնակցության գաղափարախոս Միքայել Վարանդյանն առիթն օգտագործեց մարքսիզմի վրա մի նոր, սանձարձակ արշավանք կատարելու համար։ Նա աշխատում էր ցույց տալ, որ իբրև թե Մարքսի մի շարք ենթադրությունները ու մարգարեությունները չարդարացան. «Դոգմայական միապաղաղ դպրոցը ալեկոծվեց»[13], որ մարքսիզմին հերթափոխի է եկել ռևիզիոնիզմը։ «Դրոշակ»-ի հաջորդ, ապրիլյան համարում լույս տեսավ «Հակասական թռիչքները մարքսիզմի էվոլյուցիայի մեջ» հավակնոտ հոդվածը։ Նրանում զարգացվում էր երկու Մարքսի և երկու Էնգելսի առասպելը, կեղծվում պատմական

---

11 Տե՛ս Վ. Սեյան, Հայ բուրժուական փիլիսոփայության բնական վերլուծություն, Երևան, 1971։ Հ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հատ. 4, Երևան, 1965։

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 4, էջ 261։

13 Տե՛ս «Դրոշակ», № 4, մարտ, 1908, էջ 45—46։

փաստերը։ Հարձակումներ կատարելով մարքսիզմի վրա, դաշնակցության տեսաբանը հորինում է այն սխալ վարկածը, որ իբրև թե մարքսիզմն անտեսում է ազգային հարցը, նրա համար «գոյություն ունի միայն դասակարգային կամ սոցիալական հարցը և նա հռչակում է 1848-ի Մանիֆեստի մեջ իր զուտ կոսմոպոլիտական համաշխարհային դավանանքը, հայտնի դարձվածքով՝ «աշխատավորները չունեն հայրենիք... ուր շահ, այնտեղ և հայրենիք»,— այս չոր բանաձևին էր վերածվում ազգային հարցը և հայրենասիրությունը»[14]։ Սոցիալիզմի մասին մի երկու հակասական տեղեկություններ տալուց հետո, «Դրոշակ»-ը հայտարարում էր՝ Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը «աստիճանաբար շտկեցին իրենց մոլորությունը, շրջադարձ կատարեցին, ընդունեցին ազգային հարցը»։ «Դրոշակ»-ի ասելով՝ Կ. Մարքսը «մոլեռանդ և լավատես հեղափոխական էր մինչև 70-ական թվականները։ Ղրիմի պատերազմի ընթացքում նա շարունակեց մեծ պայթյուններ ու կատաստրոֆներ գուշակել։ Նրա ղեկավարության տակ գտնվող Ինտերնացիոնալը մասնակցեց Փարիզի հռչակավոր կոմունային, որը ֆրանս-պրուսական պատերազմի միջոցին ապստամբեց հայրենի կառավարության դեմ և Փարիզի տերը դարձավ ամբողջ երկու ամիս[15]։

Զարախնդալով Փարիզի կոմունայի՝ պրոլետարիատի դիկտատուրայի առաջնեկի վրա, «Դրոշակ»-ը հայտարարում է՝ «իրականություն եկավ, սակայն, մի դառն ու ահեղ դաս տալու նրանց, նա եկավ հաստատելու, որ ո՛չ օբյեկտիվ պայմաններն են հասունացած այդ ցանկալի հեղաշրջման համար, ոչ էլ ինքը պրոլետարիատն է բավականաչափ հասունացած, կազմ ու պատրաստ, որ կարողանա տևողաբար պահել իր ձեռքում ժողովուրդների քաղաքական ղեկը և վարել նրանց ճակատագիրը։ Հեղափոխական խանդավառությունն իջավ, Մարքսի մարգարեական ձայնն էլ կարծես լռեց»[16]։

«Դրոշակ»-ը կեղծելով փաստերը, այն միտքն է հայտնում, որ իբրև թե Կ. Մարքսը նահանջեց իր նախկին դիրքերից, «մեղմեց իր թափը, զգաստացավ, չափավորվեց, թուլացավ նրա հավատը դեպի կրիզիսների ու հեղափոխության հրաշագործ ուժը և նա սկսեց մերթ ընդ մերթ նույնիսկ խաղաղասիրական հայտարարություններ անել»։

---

14 Նույն տեղում, էջ 54։

15 «Դրոշակ», № 4, ապրիլ, 1908, էջ 56։ Տե՛ս նաև՝ Մ. Վարանդյան. Հոսանքներ, էջ 34։

16 Տե՛ս նույն տեղում։

«Դրոշակ»-ի պնդմամբ նույնպիսի էվոլյուցիա է ապրել Ֆ. Էնգելսը, Կ. Մարքսի հավատարիմ զինակիցը, որի նշանաբանն էր «Ամեն բան, կամ ոչինչ»։ 1895 թ. իր մահվան նախօրյակին Ֆ. Էնգելսը հանդիսավոր կերպով ժխտեց իր այդ կարծիքը,— գրել է «Դրոշակ»-ը,— և ամբողջ մարքսիզմը հայտարարեց իբրև ռեֆորմիստ, բարենորոգչական մի վարդապետություն, նա քարոզեց իր հեղինակավոր ձայնով մարքսիստական շկոլային ընդունել «մանրբուրժուական տակտիկան, որից դուրս չիք փրկություն... դա այն հռչակավոր խոստովանությունն է, որ պետք է համարել մարքսիզմի վերջին խոսք և որ հրատարակվեց իբրև նախաբան „Die klasscnkonptt in Frankelh 1848-dis 1950 գրվածքի[17]“։

Նենգափոխելով փաստերը, «Դրոշակ»-ը Ֆ. Էնգելսին այն միտքն էր վերագրում, որ իբրև նա ասել է՝ պատմությունը չարդարացրեց մեզ և իր ընկեր Մարքսին, որն ունեցել է նույն պատրանքները՝ «մոտալուտ կատաստրոֆա» սոցիալիզմի վաղահաս հաղթության մասին։ Անկարելի է,— ասում է նա,— հեղաշրջել հասարակությունը «մի հատիկ մեծ ճակատամարտով», այլ անհրաժեշտ է դժվարին, համառ ու հարատև պայքար, որ առաջացներ մեզ դիրքից դիրք աստիճանաբար»։

Ըստ «Դրոշակ»-ի հորինաբանության, Ֆ. Էնգելսն ասել է. «անցել է ժամանակը, երբ հեղափոխությունները կատարվում էին անակընկալ, մի հարվածով, չնչին ու գիտակից փոքրամասնության ձեռքով, որ գլուխ էր կանգնում անգիտակից մասսաների... Այնտեղ, ուր հասարակական օրգանիզմի լիակատար հեղաշրջման խնդիր է դրված՝ այնտեղ անհրաժեշտ է գործակից ունենալ գիտակից մասսաներին»[18]։

Ֆ. Էնգելսը, դատապարտելով հին տակտիկան, ասում է. «Դրոշակ»-ը քարոզում է նորը, միակ խելացին ու նպատակահարմարը։ Դա «օրինականությունն է», խաղաղ պայքարը պառլամենտական հողի վրա, ընտրողական քվեներով։ Դա ռեֆորմիստական ճանապարհն է։

Մարքսիզմն իր զարգացման վերջին էտապում, «Դրոշակ»-ի հավաստիացումներով, ջատագովում է այն տակտիկան, որ ինքն իսկ դատապարտում էր մի ժամանակ՝ իբրև թուլամորթ, հակահեղափոխական, իբրև օպորտունիստ ու մանրբուրժուական։ Եվ այդ

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում։

ջատագովված ռեֆորմիստական տակտիկայի ամենահավատարիմ հետևողն է ներկայումս գերմանական սոցիալ-դեմոկրատիան»[19]։ Հայ բուրժուական գաղափարախոսները միշտ օգտվել են իրենց դարն ապրած, իդեալիստական տեսություններից։ Դաշնակցության արշավանքը մարքսիզմի դեմ գլխավորել է Մ. Վարանդյանը, որն իր գաղափարական զինակիցների բնութագրությամբ «հայկական Կաուցկին էր»։ Բայց իրականում նա ստեղծում էր սոցիալիզմի ծաղրանկարը, սոցիալիզմի ռեակցիոն բոլոր տեսությունները մի կաթսայի մեջ լցնում և շիլա շփոթ էր պատրաստում։ Ճիշտ է նկատել Բ. Անանիկյանը, թե դաշնակցության «սոցիալիզմը» բուրժուական սոցիալիզմի հայկական տարբերակն է, «գաղափարների մի այնպիսի մեռելահացություն, որ քիչ է հանդիպում բուրժուական մյուս կուսակցությունների պրակտիկայում»։

Հայրենիքից վտարված Միքայել Վարանդյանը հետագայում՝ իր «Համայնավարությունը և համաշխարհային հեղափոխությունը» պամֆլետում կեղծ վկայակոչումներ անելով Կ. Մարքսից և Ֆ. Էնգելսից, խեղելով պատմական փաստերը, վարկաբեկում էր կոմունիզմը. զրպարտում դրացի ժողովուրդներին։

Մ. Վարանդյանը կառչելով Կ. Մարքսի «Դասակարգային պայքարը Ֆրանսիայում 1848-ից մինչև 1850 թ.» աշխատության համար 1895 թ. Ֆ. Էնգելսի գրած «Ներածական»-ից, «Vor Warts»-ում ինքնակամ հրապարակված աղճատված մտքերի վրա աշխատում էր հակասություններ գտնել մարքսիզմի և լենինիզմի միջև։ Նա թաքցնում էր Էնգելսի 1895 թ. ապրիլի 1-ի նամակը Կ. Կաուցկուն, որտեղ գիտական սոցիալիզմի պատրիարքը զայրույթով գրել է. «Ի զարմանս իմ, առանց իմ գիտության, այսօր «Vor Warts»-ում քաղվածքներ են տպագրվել իմ «Ներածությունից», որն այնքան է շպարված, որ ես նրանում ըստ ամենայնի ներկայանում եմ որպես օրինականության խաղաղասեր երկրպագու։ Ինձ առավել ուրախություն է պատճառում այն, որ այժմ «Ներածությունը» ամբողջությամբ լույս կտեսնի «Ncue Zeit»-ում և այդ խայտառակ տպավորությունը կցրվի»[20]։

Կույր ձևանալով Սովետական Հայաստանի նվաճումների, նրա ազգային վերածննդի նկատմամբ, 1926 թ. Մ. Վարանդյանը գրել է. «Պիտի կերտվի նույն ավերակի վրա Հայաստանը՝ այդ էա-

---

19 «Դրոշակ», № 4, ապրիլ, 1908, էջ 56։

20 *К. Маркс, Ф. Энгельс,* Соч., т. 39, стр. 373.

պես նվիրապատիվ համայնքը, որ հինգերորդ դարից ի վեր, երբ քրիստոնեության նշանակի տակ, տառերի գյուտից հետո մեկեն ի մեկ բողբոջեց իր շքեղ գրականությունը և փարթամ մշակույթը, բնազդորեն մղվել է դեպի Արևմուտք, ձգտելով իրեն արժանի տեղը բռնելու ազատ ազգերի գերդաստանում, բայց որի բոլոր ազատական և շինարար մղումները խաթարելու են հավիտենորեն իր ասիատիպ, ապիկար ու ազգասպան դրացիների ձեռքով»[21]։

«Դրոշակ»-ի և նրա տեսաբան Մ. Վարանդյանի սուտ քողը պատռելով, բոլշևիկները ցույց են տվել բուրժուական հայ գաղափարախոսության սնանկությունը։

3

«Դրոշակ»-ում և դաշնակցական այլ պարբերականներում հրատարակած հոդվածներն ի մի հավաքելով, Մ. Վարանդյանը հրատարակեց իր «Հոսանքներ» գիրքը։ Առանձին բաժնում նա խոսում էր Կովկասում մարքսիզմի տարածման հարցերի շուրջ։

Ինչպես գրքի մյուս բաժիններում, այստեղ էլ Վարանդյանը կրկնում է հանրահայտ փաստերը, մեղանչում ճշմարտության առջև[22]։ «Հոսանքներ» գիրքն առաջինը քննադատեց Ստ. Շահումյանը։ 1911 թ. բոլշևիկյան «Նոր խոսք» պարբերականում հրապարակված «Տիեզերական թութակը» հոդվածում նա մերկացնում է Մ. Վարանդյանին, նշելով թե՝ «որովհետև վարանդյանները երկու ոտքով թաղված էին իրենց ճահիճների մեջ, որովհետև նրանք սկզբից լցված էին մի անասելի կատաղությամբ ու ատելությամբ դեպի մարքսիզմը, որը սոցիալիզմի միակ գիտական տեսությունն է,— նրանք չկարողացան մոտենալ սոցիալիզմին և կանոնավոր կերպով ծանոթանալ նրա հետ»[23]։ Մարքսիզմի մասին դաշնակցության և նրա գաղափարախոսների գիտելիքները քաղված էին հակամարքսիստական զինանոցից։ Շահումյանը բացահայտելով «Հոսանքներ» գրքի արատները՝ «տիեզերական բամբասանքները», նշել է, թե չկա

---

21 Մ. Վարանդյան, *Համայնավարությունը և համաշխարհային հեղափոխությունը, Գահիրե, 1926, էջ 238։*

22 *Տե՛ս* Միք. Վարանդյան, *Հոսանքներ, Ժնև, 1910։*

23 Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 2, էջ 163։ Շահումյանը 1911 թ. սեպտեմբերի 10-ին ձերբակալվեց, որի պատճառով էլ հոդվածի շարունակությունը լույս չի տեսել։ Նա ծրագրել էր մի շարք հոդվածներով քննարկել «Հոսանքներ» գիրքը։*

մի հարց, որ շոշափած չլինի այս գրքում Մ. Վարանդյանը, չկա մի բամբասանք, մի «սպլետնյա», որ նա կրկնած չլինի*։

Մ. Վարանդյանի «Հոսանքները» խառնիճաղանճ, պղտոր մըտքերի հավաքածու է, հասարակական-քաղաքական հոսանքները, մասնավորապես մարքսիզմը՝ ծուռ հայելում արտացոլող պասկվիլ։

4

1913 թ. Աստրախանի աքսորավայրում Ստ. Շահումյանը գրեց իր «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» տեսական աշխատությունը, որն «Այաքս» կեղծանունով լույս տեսավ 1914 թ. հուլիսին, Թիֆլիսում։ Քողարկման նկատառումով հրատարակության վայրը նշված է Թեհրան։ Շահումյանը, որ 1913—1914 թթ. Վ. Ի. Լենինի հետ նամակագրության մեջ էր ազգային հարցի շուրջ, 1914 թ. ապրիլի 17-ի նամակում, մեկնաբանելով իր այդ աշխատությունը գրելու շարժառիթները, նշել է. «...Հարկավոր էր հայերեն լեզվով բրոշյուր գրել ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին։ Ան-ի ելույթից հետո այդ պահանջը Կովկասում դարձել է չափազանց ժողովրդական։ Բրոշյուրը (քննադատական) վաղուց արդեն գրված է, և շուտով, հավանաբար, կհանձնեմ տպագրության»[24]։

Ստ. Շահումյանի «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատությունը պատասխան էր Դ. Անանունի «Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածին, որը լույս էր տեսել 1913 թ. նացիոնալիստական «Նոր հոսանք»-ի փետրվար-մարտյան համարներում։ Նրանում քննադատված էին ոչ միայն հայ ազգայնականները, այլև բունդականները, ազգային-կուլտուրական ավտոնոմիայի բոլոր ջատագովները։ Շահումյանն իբրև ազգային հարցի խոր գիտակ, մարքսիստական բարձրակետից բացահայտում էր ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջի բուրժուա-նացիոնալիստական էությունը։ Վ. Ի. Լենինն իր «Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին» աշխատությունում փայլուն կերպով ցույց է տվել բուրժուական նացիոնալիզմի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի հակոտնյա բովանդակությունը, ընդգծել, որ, այսպես կոչված, «ազգային-կուլտուրական ավտոնոմիայի» բունդական ծրագիրը բանվորական միջավայրում նացիոնալիզմ

---

* Ստ. Շահումյանն է այսպես որակել նրան, Վարանդյանը շատ էր սիրում օգտագործել «տիեզերք», «տիեզերական» բառերը։

24 Ստ. Շահումյան. Նամակներ։ 1896—1918, Երևան, 1959, էջ 43։

633—16

սերմանելու միջոց է։ «Ամրապնդել նացիոնալիզմը «արդարացիորեն» սահմանազատված որոշ ոլորտում,— գրել է Վ. Ի. Լենինը,— «սահմանագծել նացիոնալիզմը» բոլոր ազգերը առանձին պետական հաստատության միջոցով իրարից ցանկապատել պինդ ու ամուր,— ահա ազգային կուլտուրական ավտոնոմիայի գաղափարական հիմքն ու բովանդակությունը։ Այդ միտքը ամբողջապես բուրժուական է և ամբողջապես կեղծ»[25]։

Ստ. Շահումյանը լենինյան դիրքերից էր քննադատում նացիոնալիստներին։ Դաշնակցությունից «սպեցիֆիզմի» շարքերն անցած Դ. Անանունը իր ձայնը միացնելով բունդի, վրաց մենշևիկների պարագլուխ Նոյ Ժորդանիայի, հայ ազգայնականների բարձրացրած աղմուկին, թմբկահարում էր ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը, ջլատում հարձակումներ գործում բոլշևիկյան կուսակցության ազգային ծրագրի, հատկապես ազգերի ինքնորոշման դրույթի վրա։ Շահումյանը մերկացնելով Դ. Անանունի սոցիալիստական կեղծ զգեստավորումը, ցույց է տալիս, որ նրա հոդվածը մի անհաջող փորձ է՝ հիմնավորելու ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջը մարքսիստական տեսակետից։ «Մեր ժամանակներում ինչ ասեք, որ չեն փորձում արդարացնել մարքսիզմով,—գրել է Ստ. Շահումյանը,—և ով ասեք, որ իրեն մարքսիստ չի հայտարարում։ Առանձնապես տգեղ և այլանդակ ձևեր է ընդունել մարքսիզմի շահագործումը «Մշակ»-ում աշխատող մի խումբ անսկզբունք գրողների կողմից, որոնց գլուխ է անցած Բախշի Իշխանյան կոչվող մի բախտախնդիր»[26]։ Շահումյանը պարզաբանում էր, որ «Մշակ»-ի և նրա շուրջ համախմբված հայ ազգայնականների տեսական մարդանքները ոչ մի կապ չունեն իսկական, հեղափոխական մարքսիզմի հետ, որ Բ. Իշխանյանը «այնքան է կապված ժամանակակից բանվորության ազատագրական շարժման հետ՝ բարոյապես թե իրապես, որքան Տիբեթի Դալայ-Լաման։ Բայց տեսեք, թե ինչպես է նա կուրծք ծեծում «Մշակ»-ի էջերում՝ հավատացնելու միամիտ հայ ընթերցողին, թե նրա բերանով խոսում է ինքը՝ Կարլ Մարքսը.

Որպիսի դառն հեգնանք. ամենամաքուր գործին մոտենում են ամենակեղտոտ ձեռքերը»[27]։

---

25 Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 20, էջ 25։
26 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 2, էջ 272—273։
27 Նույն տեղում, էջ 273։

Շահումյանը նշում է, թե հանուն գրականության ազնիվ սկզբունքների, հանուն Բելինսկու և Չերնիշևսկու ավանդույթների, հարկավոր է հարվածել այդ գրչակներին, քանզի գրականությունը մի տաճար է, ուր կարելի է մտնել միայն մաքուր խղճով և ազնիվ մտումներով: Այնուհետև, նա ասում է, Դ. Անանունի գրական դեմքը թեև ոչ մի հետաքրքրություն չի ներկայացնում, բայց հարկավոր է ցույց տալ, որ նրա խնկարկած ազգային-կուլտուրական ավտոնոմիան մի վնասակար և հետադիմական պահանջ է:

Դ. Անանունը իր հոդվածը խորագրել էր «Ազգային հարցը և դեմոկրատիան»: Շահումյանը հեգնելով ասում է, ո՞ր դեմոկրատիայի մասին է խոսքը՝ բուրժուական թե՞ պրոլետարական: Հենվելով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի ծրագրային դրույթների վրա, Շահումյանը ցույց է տալիս, որ ազգային հարցը մարքսիզմը լուծում է ամեն մի առանձին դեպքում իր ուրույն ու կոնկրետ պատմական արտահայտությունների մեջ և ոչ «ընդհանրապես» անկախ ժամանակի և տեղի պայմաններից: Զինված մարքսիստական-լենինյան տեսությամբ, Շահումյանը գիտականորեն հիմնավորում է ազգերի առաջացման ու զարգացման պատմությունը, շարադրում մարքսիզմի ելակետային դրույթները ազգային հարցի լուծման, ազգերի ինքնորոշման պահանջի իրականացման վերաբերյալ: Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից նա բացահայտում է ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջի վնասակարությունը, նրա նացիոնալիստական բովանդակությունը: Բոլոր ազգայնականները հայոց փրկությունը տեսնում էին ավտոնոմիայի մեջ: Ավտոնոմիային հակադրելով ազգերի ինքնորոշման լենինյան սկզբունքը, Շահումյանը նշում է, որ նման ավտոնոմիան ջլատում է բանվոր դասակարգի ուժերը, թշնամանք սերմանում նույն տարածքում բնակվող տարբեր ազգերի աշխատավորների միջև: Ազգային հարցի արմատական լուծումը Շահումյանը կապում էր սոցիալիստական հեղափոխության հետ: Բանվորներին հարկավոր է ոչ թե ազգային, այլ դասակարգային շահերից ելնելով վարել գործերը: «Մարքսիստները,— ասում էին մեր ուսուցիչները,— տարբերվում են մյուս բանվորական կուսակցություններից միայն նրանով, որ նախ՝ նրանք միջազգային բանվորական կուսակցություն են և ոչ ազգային, հետևապես նրանք հեռու են նացիոնալիզմից: Եվ երկրորդ՝ որ նրանք

միշտ ի նկատի ունեն շարժման ընդհանուր շահերը և ոչ րոպեի, մոմենտի շահը, հետևապես նրանք հեռու են օպորտունիզմից»[28]։

Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի պահանջն էին առաջադրում լիկվիդատոր-օպորտունիստները, որոնց թվում Դ. Անանունին։

Դ. Անանունի հոդվածի էպիգրաֆը կրում էր նացիոնալիստական մի հրատարակության հետևյալ տողերը՝ «Այն բանվոր դասակարգը, որ հաշտվում է ստորին ցեղի վիճակի հետ, չի ըմբոստանալու և ստորին դասակարգի դեմ»[29]։ Դա հայ բանվորին ասում էր՝ եթե ուզում ես լավ սոցիալիստ լինել, դու պետք է նախ և առաջ լավ ազգասեր լինես։ Եղիր նախ լավ հայ, ապա կլինես լավ բանվոր։ Ինչ խոսք, նացիոնալիստ Դ. Անանունին իր դասակարգի շահերից ելնելով հաջող բնաբան էր ընտրել։ Իսկ եթե մենք ուզենայինք բնաբան ընտրել մեր աշխատությանը,— ասում է Ստ. Շահումյանը,— Դ. Անանունի այդ տողերին կհակադրեինք գերմանական մարքսիստների վետերան Վիլհելմ Լիբկնեխտի հետևյալ թևավոր խոսքերը. «Մեզ, սոցիալիստներիս համար, գոյություն չունի ազգությունների խնդիրը։ Մենք ճանաչում ենք միայն երկու ազգություն, մի կողմից՝ կապիտալիստների, բուրժուազիայի, իշխող դասակարգի ազգություն, իսկ մյուս կողմից՝ պրոլետարների, բախտից հալածվածների, բանվոր դասակարգի ազգությունը... բոլոր երկրների բանվորները կազմում են մի ազգություն՝ հակառակ մյուս ազգության, որը նույնպես մի է բոլոր երկրներում»[30]։

Հիրավի, որքան Դ. Անանունու հոդվածի բնաբանում շեշտված է նացիոնալիզմի նեղ, հետադիմական գաղափարը, նույնքան Շահումյանի ընտրած բնաբանում շեշտված են պրոլետարական ինտերնացիոնալիզմի լայն ու լուսավոր գաղափարները։ Հայ ազգայնականների համար, ինչ խոսք, միջազգայնության սկզբունքները խորթ էին, նրանք ի վիճակի չէին հեռուն տեսնելու։ Ստ. Շահումյանը, քննադատելով նրանց գաղափարական տկարությունը, իր աշխատությունն ավարտել է Հովհ. Թումանյանի խոսքերով՝

Որոնք, անտեղյակ առաջին լույսին,
Չեն հրճվում նրա ծագման հանդեսով,

28 Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 2, էջ 323։*

29 *Տե՛ս* «Формы национального движения в современных государствах». *Քաղվածքը բերվում է ըստ Ստ. Շահումյանի, Երկեր, հատ. 2, էջ 325։*

30 *Նույն տեղում։*

Այլ միայն կեսօրին ապուշ երեսով,
Նկնում են ճանկարծ, տեսնում ընեած
Գլխների վերև արևը կանգնած»[31]:

Ստ. Շահումյանը հպարտ էր այն գիտակցությամբ, որ երբ պրոլետարական ինտերնացիոնալիզմի արևը կլուսավորի հայոց երկնակամարը, հետևողական մարքսիստներին չի դտնի բանաստեղծի ասած «չիքերի» և «ապուշների» աննախանձելի վիճակում:

Վ. Ի. Լենինը խրախուսել էր Ստ. Շահումյանի աշխատությունը: 1914 թ. մայիսի 19-ին Ստ. Շահումյանին գրած նամակում նա խորհուրդ է տվել. «Ան-ի դեմ Ձեր բրոշյուրի մասին» Պրոսվեշչենիե»-ում անպայման տվեք seldslanzeige *(հաղորդում հեղինակից—Խ. Բ.) կամ շարադրանքը»*[32]*:*

Ստ. Շահումյանի «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» աշխատությունը գաղափարական զենք հանդիսացավ երկրամասում բուրժուական նացիոնալիզմի, մասնավորապես ավտոնոմիայի ջատագովների դեմ մղվող պայքարում, բոլշևիկյան կուսակցության լենինյան ազգային ծրագրի պարզաբանման գործում: Այն ջախջախիչ հարված հասցրեց հայ բունդականներին, մասնավորապես նրանց պարագլուխ Դ. Անանունին և նրա համախոհներին:

Դաշնակցական Արտաշես Ջիլինգարյանը (Ռ. Դարբինյան) արձագանքելով Դ. Անանունին իր «Հայ մամուլը և սոցիալիզմը» հոդվածում, երկար ու բարակ դատողություններ անելով սոցիալիզմի մասին, փառաբանում է նացիոնալիզմը, ամբաստանում բոլշևիկներին: Նա դանդատվում է Ստ. Շահումյանի խմբագրությամբ Բաքվում հրատարակվող բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ»-ից, գովերգում ազգային-կուլտուրական ավտոնոմիայի, բանվորներին ըստ ազգության բաժանելու հայ բանվորական կազմակերպության

---

31 Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 2, էջ 327: Տե՛ս* Հովհ. Թումանյան, *Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1940, էջ 97:*

32 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 35, էջ 40: Նույնը տե՛ս* Ստ. Շահումյան, *Նամակներ, 1896—1918, էջ 44: 1917 թ. ապրիլին նացիոնալիստական «Գործ» հանդեսում Դ. Անանունին հրապարակեց «Մտքի տկարությունը ազգային հարցի լուծման խնդրում» (գրելու տարեթիվը հիշատակել է «1915, սեպտեմբեր»), պամֆլետը: Նրանում Դ. Անանունին նացիոնալիստական թույնով լցված հարձակումներ էր կատարում բոլշևիկների, Վ. Ի. Լենինի և նրա զինակից Ստ. Շահումյանի վրա, իր տհասությունը ցուցադրում բոլշևիկների հռչակած ազգերի ինքնորոշման մասին՝ մարքսիստական ծրագրային դրույթն ըմբռնելու գործում:*

«սպեցիֆիզմի» նացիոնալիստական կանխադրույթը: «Սոցիալիստական ուսմունքը, ասում է նա,— մեր հասարակական կյանքի և մտքի արտադրությունը չէ, նա, այսպես ասած, դրսից, արտասահմանից բերված մի ապրանք է: Հայ հանրային միտքը տակավին չէ կարողացել օտար սոցիալիստական սկզբունքներն ու տեսությունները գիտական քննության բովից անցկացնել և նրանց տալ մեր կյանքի պահանջներին համապատասխան ձևակերպություն»[33]:

Խեղաթյուրելով մարքսիզմը, Ռուսաստանում նրա տարածման պատմությունը, Ա. Ջիլինգարյանը պաշտպանում է դաշնակցության հետադիմական քաղաքականությունը, հարձակվում պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա: «Հայ սոցիալիստական մտքին վիճակված է զարգանալ Ռուսաստանի անմիջական միջավայրում,— գրել է Ա. Ջիլինգարյանը,— մեծապես ազդվելով ռուս ժամանակակից սոցիալիզմին հատուկ բոլոր հիվանդություններից: Կուզեինք հավատալ, որ հայ սոցիալիստական միտքը, այնուամենայնիվ, պիտի կարողանա ի վերջո գտնել իր իսկական, ուրույն ուղին և այդպիսով դառնալ մեր հանրային կյանքի բեղմնավորիչ և իրապես ստեղծագործ ազդակներից մեկը»[34]: «Իսկական ուրույն ուղի» ասելով նա հասկանում էր նացիոնալիզմը, մարքսիզմի աղճատումն ու գռեհկացումը:

Դաշնակցական գրչակը մարքսիստական գաղափարների տարածման նկատմամբ խոր թշնամանքով լցված ջանում էր Հայաստանի աշխատավոր մասսաներին շեղել հեղափոխական պայքարից, նրանց շարքերում սերմանել նացիոնալիզմ:

Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների հաղթանակի համար մղած պայքարում որոշակի նշանակություն է ունեցել ազգային-կուլտուրական ավտոնոմիայի ջատագովների մերկացումը, որն այնքան հաջողությամբ իրականացրել են Ստ. Շահումյանը, Ա. Մյասնիկյանը և նրանց գաղափարական զինակիցները:

Հայ լենինյանները՝ Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Կասյանը, Ա. Մյասնիկյանը, Ս. Հովսեփյանը, Ա. Մռավյանը, Արշ. Մելիքյանը և մյուսները հետևողականորեն մերկացնում էին բուրժուական գաղափարախոսներին, մարքսիստական ճշմարտության լույսով լուսավորում Հայաստանի աշխատավորության ազատա-

---

33 «Գործ» (Բաքու), № 4, 1917, էջ 230:

34 Նույն տեղում, էջ 256:

գրական, դասակարգային պայքարը, պրոպագանդում մարքսիզմ-լենինիզմը։ Բարձր պահելով հեղափոխական մարքսիզմի դրոշը, նրանք պաշտպանում էին դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի սկզբունքները, մարքսիզմ-լենինիզմի անաղարտությունը, քննադատում ու մերկացնում սուբյեկտիվ իդեալիզմի՝ մախիզմի հայկական երկրպագուներին՝ ֆենոմենալիզմի, ռեֆորմիզմի և ռևիզիոնիզմի ջատագովներին։

Այդ պայքարում վճռական դեր խաղացին Վ. Ի. Լենինի աշխատությունները։

5

Հակառակ նացիոնալիստների վայնասուններին, մարքսիզմ-լենինիզմը թափանցում էր Հայաստան, համակում աշխատավոր զանգվածներին։ Ազգայնականներն ամեն կերպ աշխատում էին խեղաթյուրել իրականությունը, աշխատավորությանը շեղել հեղափոխական պայքարից։ 1918 թ. Բաթումում լույս տեսավ դաշնակցական Մ. Մինասյանի «Ինչու կհակառակինք հայերուս մեջ ընկերավարության բրոպագանդին» գրքույկը։ Հեղինակը ջանում էր հիմնավորել այն միտքը, որ իբրև թե Հայաստանում կոմունիստական գաղափարների զարգացման հող չկա։ «Հայ ընկերավարներու թոռանց թոռներու թոռները տակավին չպիտի կարողանան մտնել ընկերավարության խոստացած քանանը,— գրել է նա,— թեև կզգուշանան իրենց քաջ ըմբռնած այս ճշմարտությունը հաղորդել իրենց հետևորդներին։ Որչափ ատեն որ անձնասիրության ինքնապաշտպան բնազդը կտիրապետե մարդկային ցեղին մեջ, որչափ ատեն որ ծնողական սերը կապրի մարդկային սրտին մեջ, որչափ ատեն որ անհատական ազատության և արդարության սկզբունքները հող կգտնեն մարդկային ընկերության միջև, որչափ ատեն որ երկիր մը ժողովրդին ջախջախիչ մեծամասնությունը կբաղկանա անհատական սեփականատերերէ, ճիշտ նույն չափ ատեն ալ Կարլ Մարքսի «գիտական սոցիալիզմը» երբեք ու երբեք չկրնար հաստատվել մարդկային ընկերության մեջ»[35]։ Իմպերիալիզմի ջատագովը, կոմունիզմի գաղափարից սարսափահար, հարձակումներ էր կատարում Կ. Մարքսի վրա, «Կապիտալ»-ը համարում է «ազգաքանդ

35 «Ինչո՞ւ կհակառակինք հայերու մեջ ընկերավարության բրոպագանդին», գրեց Մ. Մինասյանը, 1918, Բաթում, էջ 9—10։

գործ», «ազգային կենաց դեմ կատարված ոճրագործություն մը՝ անոր քարոզությունը ժողովրդին»։ Նա կոչ էր անում «Հայերի մեջ ազգային ոգի սնուցել»[36]։ «Ընկերավարության նյութապաշտության փիլիսոփայությունը» բաժնում ժխտում է մարքսիստական փիլիսոփայական մատերիալիզմը, պաշտպանում մետաֆիզիկան, հայերի մեջ պրոպագանդվող կոմունիստական գաղափարները հայտարարում «ժանտախտ»։ «Ընկերավարությունը հայ մտավորականության և հայ կենաց մեջ տարածմամբ ու տիրապետությունովը արդեն իսկ կորսված պիտի ըլլանք, ամեն ինչն, որ թանկագին է ու նվիրական մեր ազգային պատմության մեջ, ինչպես նաև կորսված պիտի ըլլանք Հայկական վերածնության ամեն հույսը և այսքան դարերու տառապանաց ու նահատակության ոգին ձեռք բերելիք մեր ազգային բովանդակ ժառանգություններովը պիտի դահավիժենք կորստյան անդունդներուն մեջ»[37]։

Կյանքը լիովին հերքել է այս և նմանօրինակ թյուր ըմբռնումները, ցույց տալով նրա հորինողների մտքի տկարությունը։

6

Հայաստանում մարքսիզմի տարածումը հարթ չի ընթացել։ Կեղծ մարքսիստների, հատկապես Արևմտյան Հայաստանում սոցիալիստական երանգներով պճնազարդված ազգայնականների քաղաքական կերպարը ուժեղ սարկազմով է ծաղրել Երվանդ Օտյանը՝ «Հեղափոխության մակաբույծները», «Պրոպագանդիստը» և «Ընկեր Փանջունին» ստեղծագործություններում[38]։ Օտյանը թեև մարքսիստ չէ, բայց նրա ստեղծագործությունները սուտ մարքսիստների մերկացման գործում ուշագրավ են և անարձագանք չեն մնացել։ «Հեղափոխության մակաբույծներ»-ում հեղինակը ժխտողական վերաբերմունք ունի դեպի ազգայնական կուսակցությունները։ Նա բացահայտում է արհավիրքի եզրին կանգնած արևմտահայերի սոցիալ-հասարակական վիճակը, նրա բախտը սեփական շահընկալությանը զոհող գործիչների քաղաքական արատավոր վարքագիծը։

36 Նույն տեղում, էջ 29, 33։

37 Նույն տեղում, էջ 91։

38 Տե՛ս Ա. Մակարյան, Երվանդ Օտյան (Ե. Օտյանի Երկերի ժողովածուի առաջաբանը), Երևան, 1960, հատ. 1, էջ IX, XIII, XXIII—XXIV։ Նույնի՝ Երվանդ Օտյան, Երևան, 1965, էջ 189—213, 232—296։ Ա. Տերտերյան, Հայ կլասիկներ, Երևան, 1944, էջ 756—776։

Երգիծանքի մտրակն առաջին հերթին շաչում է դաշնակցության գլխին, որը կտրված ժողովրդից, իր սեփական, դասակարգային նախասիրությունները փաթաթում է հայրենիքի վզին: Երգիծանքի դատաստանին է հանձնվում որոշակի մի խավ, որը կեղծ-հայրենասիրական աղմուկ-աղաղակով բանել էր արկածախնդրական այն ուղին, որով ընթանում էին մակաբույծները՝ ազգայնականները: Հանրությանն է հասցվում այն ճշմարտությունը, որ ազգայնականները զուրկ են որևէ հեռանկարից, նրանք և գաղափարապես և գործնականորեն սնանկ են: Ե. Օտյանը քողազերծում է նացիոնալիստական կուսակցությունների գործունեությունը, նրանց խոսքի և գործի մեջ տիրող աղաղակող հակասությունը, որոնք ազգայնական ճամարտակությամբ փորձում էին մոլորեցնել ժողովրդին, չարաշահել նրա ազնիվ, հայրենասիրական զգացմունքները: Արտասահմանում ծվարած նացիոնալիստ գործիչները, հատկապես ժնևում՝ դաշնակցականները, Լոնդոնում՝ հնչակյանները, որքան էլ փորձում էին հեղափոխական կեցվածք ընդունել, այնուամենայնիվ մերկացվում էին: Գրողը սուր ծաղրի է ենթարկել հենց այդ կենտրոնների հետ կապված, առավել ևս այնտեղից եկած գործիչներին, ինչպես նաև դրանց հետ կապված մոլորված, քաղաքականապես չհասունացած մարդկանց պատրանքները: Այդ միտումն առանձնապես ուժեղ է ընդգծված Զաքեոսի և Կակայանցի կերպարներում: Ազգայնական կուսակցությունները, ինչպես նկատում է հեղինակը, պայմաններ էին ստեղծում ամեն տեսակ թափթփուկների և բախտախնդիրների սնուցման ու շահատակությունների համար: Հեղափոխական գործչի քողի տակ նրանք ծածկում էին ոճրագործի, գողի, խաբեբայի և դրամաշորթի իրենց նկարագիրը: Այսպես, հայրենասիրության բարձրագոչ հորդորներով քողարկված խմբագիր Զաքեոսը իր առջև խնդիր է դրել հարստություն ձեռք բերել. Նա ձեռնարկել էր հեղափոխական թերթ հրատարակել սոսկ այն պատճառով, որ իրեն չի հաջողվել հրաձիգ դառնալ: Երգիծաբանը սպանիչ սատիրայով մերկացնում է նրան, միաժամանակ հարվածում առավել խոշոր մակաբույծներին՝ հանձին Ղազաբեկյանի, որը խաբում և խարդախում է ամեն քայլափոխին, ճարպկորեն հարստահարելով մարդկանց և ոտնահարելով նրանց ազգային զգացմունքները:

Մակաբույծի խտացված կերպար է Կակայանցը, որը զինվել է հայ հեղափոխականի բառապաշարով և հանդես է գալիս կեղծ հերոսի կեցվածքով: Սրա սիրած ասպարեզը հանդանակությունն է, որ կազմակերպում է այնքան հաճախ, որքան ինքն է ցանկանում,

նախապես որոշակի ճառեր արտասանելով ունկնդիրների առջև: Կակայանցը ինքն է յուրացնում հավաքած դրամը՝ հեղափոխական նպատակների վերջնական հանգրվան ծառայեցնելով սեփական գրպանը: Ուշագրավ է, որ Ե. Օտյանը նրան ներկայացնելով որպես անհատ, չի վարանում ցույց տալ, որ նա իր գաղափարական միջավայրի հարազատ ծնունդն է: Գրողը նկատում է, որ եթե Կակայանցն իր կենտրոնին ես բաժին հաներ շորթած դրամից, ապա նրան չէին վտարի կուսակցությունից: Մի դարձվածքով, որ անհատականացնում է Կակայանցին, հեղինակը բացահայտում է նրա փարիսեցիությունը, խոսքի և գործի հակասությունը: Միշտ պատճառաբանելով իր՝ կռվի դաշտում չլինելը, Կակայանցը դիմում է խոսակիցներին՝ «Հերն եմ անիծել այն ռևմաթիզմային, որ զիս գամել է, այստեղ: Առանց դրան ես այս րոպեիս պետք էր լինեի Մասիսի գագաթումը»:

Նացիոնալիստական կուսակցությունների մի այլ բնութագրական կողմը՝ պատրանքները դեպի եվրոպական երկրների ազատագրական միսիան, մերկացված է «Հեղափոխության մակաբույծներից»՝ Վարդհովյանի կերպարում: Իր փաստարկումներում նա հաճախ է գործածում Փարիզ և Լոնդոն բառերը, հենվում սրանց կարծեցյալ օգնության և համակրության վրա ու ներկայանում որպես ամբարտավան, ամենիմաց մի գործիչ, որ մոլորեցնում է միամիտ մարդկանց: Վարդհովյանը մշակել է իր ուրույն խոսելաձևը, «Մեր ազգային փրկության մասին տեսակցել բարձրաստիճան անձերու հետ»՝ ըստ Վարդհովյանի նշանակում էր գնալ դրամ մուրալու: Սնապարծ պատմություններով է իր ունկնդիրների գլուխը պտտեցնում մի ուրիշ մակաբույծ՝ Դաշույն Արտունին: Սա նկատում է, որ ժողովուրդը ինչ-որ ակնածանք ունի հեղափոխության, ազատագրական շարժման հանդեպ, ուստի և ինքը «եւս ուզած էր պատրաստ գտնվել ամեն պատահականության հանդեպ և ասոր համար պատշաճ դատած էր հեղափոխականի դույն մը տալ իր խոսքերուն, մորուքին ու գավազանին»:

Հայկական լիբերալիզմի ստորաքարշությունն ու դիմազրկությունը սուր ծաղրի է արժանացել «Հեղափոխության մակաբույծներում»՝ հանձին Միսակի, որն արտահայտում էր հայ բուրժուազիայի գաղափարներն ու համոզմունքները: Միսակի համար իդեալական է այն ամենը, ինչ կապված է բուրժուազիայի տնտեսական և հասարակական շահագրգռությունների հետ:

«Հեղափոխության մակաբույծների» հերոսները այս կամ այն

առիթով կապված են որոշակի անձնավորությունների հետ, սոսկ անհատ լինելուց բացի պատկանում են տարբեր հոսանքների կամ կուսակցությունների, ուստի Ե. Օտյանի սլանիչ երգիծանքն ընդհանրացված ուժով ուղղված է հենց նրանց դեմ:

Գրողի քաղաքական երգիծանքը առավել հասուն է դառնում «Պրոպագանդիստը» անավարտ վիպակում, որն ունի հասարակական-քաղաքական ընդգրկման անհամեմատ լայն շրջանակներ և նրանում ընդգրկված կերպարներն առավել բազմազան են: Հեղինակը պոլսահայ իրականության ընդհանուր ֆոնի վրա բացահայտել է 90-ական թթ. դաշնակցության գործունեությունը: Իրադարձությունների կենտրոնում են պրոպագանդիստ-դաշնակցական Կուլտամյանցը, ժնևի կենտրոնի՝ նույն կուսակցության ներկայացուցիչ Ինձեյտուրյանցը, խմբապետներ Աշոտ Սևանը, Կամացուկը, Մարգարը:

Կուլտամյանցը հախուռն նկարագիր և անմիտ գործողությունների հակում ունեցող անձնավորություն է: Գրողը ցուցադրում է նրա բացասական նկարագիրը՝ աղմկարարությունն ու ստորությունը, շահամոլությունն ու տհաս լինելը, գծեր, որոնք խիստ բնորոշ են տվյալ կուսակցության համար:

Անհատականացված են Կուլտամյանցի և Ինձեյտուրյանցի կերպարները, որոնք նույն գաղափարախոսության ու գործելակերպի մարդիկ են՝ մասնակի տարբերություններով: Այսպես, եթե Կուլտամյանցը իրականության մասին ունեցած իր աննշան իմացությունը ծառայեցնում է իր շահատակություններին, ապա Ինձեյտուրյանցը բոլորովին կտրված է ժողովրդի կյանքից ու նրա հասարակական նպատակադրումներից: Ինձեյտուրյանցի և Կուլտամյանցի անուններն իսկ չափազանց իմաստալից են և բացահայտում են նրանց եսամոլությունը: Կենդանի և գունագեղ են նաև մյուս կերպարները՝ Մարգարը, Աշոտը, Կամացուկը, խանութպան Ակոբջանը, վաշխառու Մարտիկը և մյուսները, որոնցով հեղինակը ամբողջացնում է տվյալ միջավայրի նկարագիրը:

«Ընկեր Փանջունի» վեպում, որը հրատարակվել է 1909—1923 թթ., մերկացված է սոցիալիստական կեղծ ֆրազաբանությամբ պճնված բուրժուական կուսակցությունների և հոսանքների, մասնավորապես՝ դաշնակցության հակաժողովրդական էությունը: Իթթիհատի հետ մերձեցած դաշնակցությունը 1908 թ. իր սոցիալ-քաղաքական անհեռանկարայնությունը քողարկում էր սոցիալիստական ձախ զգեստավորումով՝ ժողովրդին ապակողմնորոշելու

համար։ Դաշնակցության պարագլուխներն այս շրջանում խոսում էին սոցիալ-տնտեսական կեղեքման, շահագործվող աշխատավորների անունից՝ գործնականում հերքելով իրենց իսկ հայտարարությունները։ «Ընկեր Փանջունին» դիմազերծում է դաշնակցության երկդիմությունը, ուժեղ հարված հասցնում նրան։ Այդ կուսակցության ոչ անհայտ լիդերներից մեկը՝ Ս. Վրացյանը, դատափետում էր Օտյանին այն բանի համար, որ նա «...դաշնակցության վզին է բարդում բոլոր այն անհիմն ու ակնհայտնի կերպով չարակամությունից բխող ամբաստանությունները, որոնցով ժամանակի չեյբաթչի մամուլը աշխատում էր սևացնել դաշնակցությունը»[39]։

Վեպն ունի ճշմարտապատումի հանող ճանաչողական մեծ արժեք։ Իրապատումները վերցված են ռեալ իրականությունից, իրական են նաև հերոսների նախատիպերը։

Հեղինակը մերկացնում է դաշնակցությունը որպես բուրժուական իթթիհատական կուսակցության գործակալ։ Այդ է պատճառը, որ «պանթուրքիզմի» գաղափարախոսները 1910 թ. հաստատեցին դաշնակցական կուսակցության ծրագիրը և այն դարձրին լեգալ։

Վեպի 1-ին և 2-րդ մասերը նվիրված են դաշնակցության 1908—1914 թթ. գործունեությանը։ Համոզիչ, գեղարվեստական ընդհանրացումներով բացահայտված է, որ «սոցիալիստական» այդ կուսակցությունը և՛ իր գործելակերպով, և՛ իր վերջնական նպատակներով՝ նացիոնալ-ռեֆորմիստական, բուրժուա-ազգայնական կուսակցություն է։ Այստեղ հեղինակն ընդգծում է քաղաքական այն իրողությունը, որ հեղափոխական ժամանակաշրջանում ասպարեզ եկած հետադիմական կուսակցություններն անհարկի զարդարվում էին կեղծ հեղափոխական հանդերձով, այդ պատճառով էլ նրանց մերկացնելու հանգամանքը անհրաժեշտություն էր դառնում։

Փանջունու կերպարին բնորոշ է եսամոլությունը, որն ի վերջո կերպարի զարգացման ընթացքում կոնկրետանում է սոցիալ-քաղաքական որոշակի իրադրության մեջ և հասնում մակաբուծության։ «Ընկերվարությունը» այն մոլորեցնող միջոցն է, որտեղ հանգրվանում է այդ հրեշավոր պարազիտիզմը։ Հավասարության ձգտող Փանջունին ամենից առաջ գաղափարազուրկ մի անձնավորություն է, որն այդ հասկացողությունը վաճառքի է հանում՝ սեփական բարեկեցության հասնելու համար։ Դաշնակցությունն իր

---

39 Տե՛ս «Վեմ», գիրք, 1934, էջ 131—132։

դաները լայնորեն բացել էր մակաբույծ տարրերի առջև, որոնք «հեղափոխական» կամ «ընկերվարական» էին դառնում սոսկ կողոպտելու, ուրիշի վաստակը յուրացնելու դիտավորություններով։ Թալանելով վանքը՝ հանուն «ընկերվարության», Փանջունին նշում է իր նոր հասցեն՝ «Վանա նահանգի Բջիջ դյուղ, Ս. Կրապետիկինի վանքի աշխարհական վանահայր ընկեր Բ. Փանջունի»։

Փանջունու մերձավորների մեջ, ի թիվս այլոց, գործում են թուրք ջարդարարն ու քուրդ ելուզակը։ Սրանք միանգամայն համամիտ էին Փանջունու «էքսբրոբրացիայի» տեսությանը, այսինքն՝ ժողովրդի ունեցվածքը սեփականացնելու գաղափարին։

Փանջունու և թուրք ու քուրդ ջարդարարների մտերմության փաստով հեղինակը ծաղրել է նաև իթթիհատի ու դաշնակցության համագործակցությունը։ Փանջունին իր կուսակցության ավանտյուրիզմը մարմնավորում է նաև այլ օրինակներով։ Այսպես, ժողովրդին իր խաբեությունների ցանցը գցելու նպատակով, նա որոշում է նախ ընկճել նրան՝ կազմակերպելով «մի փոքր» հայկական ջարդ։

Իր երգիծանքն ավելի սուր դարձնելու նպատակով Ե. Օտյանը հաճախ է դիմում կոմիկական տարբեր իրավիճակների։ Այսպես, Փանջունին գործում է արևմտահայ խեղճ ու կրակ՝ Ծապլվար կոչված գյուղում։ Նրան այնքան էլ դուր չի գալիս նահապետական գյուղի կյանքը, որտեղ «տգետ», տխմար գյուղացիները չեն մտածում կապիտալիզմի, ագրարային հարաբերությունների, բուրժուազիայի կամ հեղափոխության մասին։ Փանջունին իրականությունը ձևում է իր պատկերացումների համեմատ՝ գյուղում տեղացիներին դասակարգում է ճիշտ այնպես, ինչպես կաներ կապիտալիստական զարգացած քաղաքում։ Ծապլվարցիները նրա մտահղացմամբ բաժանվում են բուրժուազիայի և բանվոր դասակարգի, կղերականության ու հետադիմության։ Հայտնվում է նաև «ագրարային պրոլետարը»՝ հանձին Սմենց Վարդանի։ Ինչպես տեսնում ենք, Ե. Օտյանը երգիծում է քաղաքական տխմարությունն ու ապշությունը։ «Շատ ջանացի,— ասում է Փանջունին,—որ Մկոն համողեմ ընդհանուր գործադուլ հայտարարելու և ռես Սերգոյի՝ էշն առանց պայտի ձգելու։ Այդ շատ ցնցող տպավորություն պիտի գործեր առհասարակ... Բայց Մկո ընդդիմացավ, որովհետև տակավին բավական պրոպագանդ չէր ըրած»։ Այս կերպ է ցուցադրվում Փանջունու ամբողջ գործունեությունը Ծապլվարում։ Հատկանշական է, որ այս գյուղի կործանումն ավելի է ոգևորում Փանջունուն։ Նա, չմտահոգվելով ժողովրդի ողբերգական վիճակով, կրկին հոխորտում է դա-

ղափարի անմահության, արգասավորության և այլ հարցերի մասին՝ ամբողջացնելու ժողովրդի բախտը վաճառքի հանող իր կուսակցության նկարագիրը։

Փանջունու ֆրազամոլության և քաղաքական ստահակության միջոցով Ե. Օտյանը ցույց է տալիս դաշնակցության մի այլ բնորոշ գիծը՝ տեսական հետամնացությունը։ Դառնալով խեղճ ջուլհակների թշվառության պատճառը, Փանջունին և Սարսափունին վկայակոչում են Կ. Մարքսին, Ա. Բակունինին, Կրապոտկինին, Հեգելին ու Ա. Բեբելին՝ տեսականորեն հիմնավորելով իրենց իրարամերժ գաղափարները։ Այս կերպարների միջոցով հեղինակը բացահայտում է դաշնակցության գաղափարական սնանկությունը։ Փանջունու գործելակերպից և դատողություններից պարզորոշ երևում է, որ դաշնակցականներն իրենց տեսակետներով հարում են նաև բեռնշտայնականությանը։ Անընդհատ խառնակչություն, կռիվ ու խարդավանքներ հրահրող Փանջունին այն կարծիքն է հայտնում, որ հեղափոխականի միակ նպատակը՝ պայքարն է, իսկ դրա արդյունքն ամենևին էլ կարևոր չէ։ Օտյանը բազմիցս ծաղրել է «պայքարը՝ պայքարի համար» սկզբունքը՝ դիմազերծելով ոչ միայն դաշնակցությանը, այլև բուրժուական քաղաքական մյուս հոսանքներին։

Վեպի երկրորդ մասում Փանջունու գործողությունների վայրը Վանն է։ Հեղինակը ցույց է տալիս, որ Փանջունուն խիստ մտահոգում է իր կուսակցության հեղինակության հարցը։ Կենտրոնին գրած մի նամակում նա գանգատվում է, որ ժողովուրդը «թշնամական վերաբերմունք ցույց կտա մեզի հանդեպ»։ Այդ արհամարհական վերաբերմունքը փոխելու միակ միջոցը նա համարում է քաղաքական շիկացած մթնոլորտ ստեղծելը, սարսափի և կոտորածի պայմաններ վերածնելը։

«Իմ աշխարհայացքները» հատվածում հեղինակը հետևողականորեն մերկացնում է Փանջունու և նրա կուսակցության գաղափարազրկությունն ու նեղ կուսակցական շահախնդրությունները։ Վերջին մասում, որ լույս է տեսել 1923 թ. կրում է՝ «Ընկ. Փանջունին տարագրության մեջ» վերնագիրը, խարազանվում են ազգայնական-դաշնակցական գործիչները։ Փանջունին այստեղ պատկերված է նոր իրադրության՝ տարագրության մեջ։ Նրա համար եսամոլությունն արդեն դարձել է ամենաբնորոշ գիծը, ընդ որում, նա նույնիսկ ձգտում է գաղափարապես հիմնավորել այն։ Տարագրությունն ամենևին չի փոխել Փանջունուն, այլ ավելի զազիր ու ողորմելի է դարձրել նրան։ Այսպիսին է Ե. Օտյանի վերաբերմունքը Փանջունու և նրա կուսակցության՝ դաշնակցության նկատմամբ։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ

ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Կ. ՄԱՐՔՍԻ, Ֆ. ԷՆԳԵԼՍԻ, Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունները հայերեն: 2. Հայկական Լենինապատում: 3. Մարքսիստական գրականության առաջին հայ թարգմանիչներն ու խմբագիրները:

1

Հայաստանում մարքսիստական-լենինյան գրականության տարածումը իսկական առումով իրականացվել է մարքսիզմի զարգացման լենինյան փուլում։ Մինչև Ռուսական առաջին հեղափոխությունը, շուրջ մեկ տասնամյակ, հայ հասարակական-քաղաքական մտքի նշանավոր ներկայացուցիչները՝ սոցիալ-դեմոկրատները, զբաղված էին Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների թարգմանությունների ու հրատարակությունների նախապատրաստմամբ։ Դրանք առաջին քայլերն էին։ Ձևավորվում է մարքսիստական միտքը, որն հետագայում զարթոնք է ապրում և տարածվում՝ համակելով աշխատավոր մասսաներին։ 1893—1895 թթ. հայերեն թարգմանվում և հրատարակվում են Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի երկու գլուխները, Կ. Մարքսի «Ի՞նչ է աշխատանքի վարձը», Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմը», Ֆ. Լասսալի «Սահմանադրության էությունը», Ս. Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում», Պ. Լաֆարգի «Իրավունք ծուլանալու» և այլ գրքեր[1]:

---

[1] 1893—1904 թթ. հրատարակված մարքսիստական հայերեն գրականության մասին տե՛ս Խ. Բարսեղյան, *Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Երևան, 1967:*

1893 թ. Աթենքում լույս է տեսնում Ակն-հանցի (Նազարբեկի) «Հայերն Ամերիկայում» գրքույկը, որտեղ զետեղված էր նաև Կ. Մարքսի «Ի՞նչ է աշխատանքի վարձը» երկը:

633—17

1894 թ. Վիեննայում հայերեն լույս է տեսնում Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմ» աշխատությունը։ Դա հեղինակի «Անտի-Դյուրինգ» երկի երրորդ՝ «Սոցիալիզմ» բաժինն է, մասնակի փոփոխություններով, որը, ըստ էության, շատ մոտ է «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» աշխատությանը[2]։

1904 թ. ՌՍԴԲԿ Ժնևյան հրատարակչական հանձնաժողովը լույս է ընծայում Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» աշխատությունը՝ Ֆ. Էնգելսի՝ 1891 թ. ապրիլի 30-ին Լոնդոնում գրած ներածականով։ Այն գերմաներենից թարգմանել էր Բ. Ի.-ը [Բ. Իշխանյան]։ Վերջինս, թեև լիովին չէր հաղթահարել եղած դժվարությունները, աղավաղել էր տնտեսագիտական շատ տերմիններ, նույնիսկ բաց էր թողել առանձին պարբերություններ, բայց հրատարակության փաստը մատենագիտական առումով հարկ է նշել։ Երկու տարի անց, 1906 թ. Թիֆլիսում Ստ. Շահումյանի թարգմանությամբ հրատարակվում է Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ»-ը։ Այն նույնպես թարգմանվել էր գերմաներենից։ Օգտագործելով «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի և սոցիալիստական այլ գրականության թարգմանական փորձը. Ստ. Շահումյանն այն հայ ընթերցողին է ներկայացնում սահուն ու հստակ ոճով, հարուստ հայերենով, հարազատ մնալով հեղինակի գաղափարական-գիտական եզրահանգումներին՝ և բանաձևումներին։

Ստորև հրապարակվող քաղվածքները որոշակի գաղափար են տալիս երկու թարգմանությունների մասին.

Բ. Իշխանյան 1904	Ստ. Շահումյան 1906
Ինչ է աշխատավարձը, ինչպես է նա որոշվում։ *էջ 20*	*Ինչ է աշխատավարձը և ինչով է նա որոշվում* *էջ 3*
Իրողությունն այն է, որ նրանք ծախում են փողով կապիտալիստի վրա իրենց աշխատանքի ուժը։ Կապիտալիստը գնում է այդ աշխատանքի ուժը մի օրով... *էջ 20*	*Իրապես նրանք ծախում են կապիտալիստին փողով ոչ թե իրենց աշխատանքը, այլ իրենց աշխատանքի ուժը կամ ուրիշ խոսքով, իրենց բանվորական ուժը։ Այդ բանվորական ուժը կապիտալիստը գնում է մի օրով...* *էջ 3—4*

2 Տե՛ս Խ. Բարսեղյան, *Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Երևան, 1967. էջ 217։*

Այն երկու մարկը, որով նա երկու ֆունտ շաքար է գնում, կազմում է երկու ֆունտ շաքարի գինը: Իսկ այդ երկու մարկը, որով նա գնում է աշխատանքի ուժի 12 ժամվա գործածությունը, կազմում է 12 ժամվա աշխատանքի գինը: Ուրեմն, աշխատանքի ուժը մի այնպիսի ապրանք է, ոչ ավելի կամ պակաս, ինչպես շաքարը: Առաջինը չափվում է ժամացույցով, իսկ երկրորդը՝ կշռով:

էջ 21

Այն երկու մարկն էլ, որ կապիտալիստը վճարում է բանվորական ուժի 12-ժամյա գործածության համար, կազմում է 12-ժամյա աշխատանքի գինը: Այսպիսով, բանվորական ուժը ճիշտ նույն տեսակ մի ապրանք է, ինչպես շաքարը, միայն նա չափվում է ժամերով, իսկ շաքարը՝ քաշով:

էջ 4

Մենք վերևը տեսանք, թե ինչպես միմյանց հաջորդող պաշարի և պահանջի տատանումները միշտ վեր ենածում ապրանքի գինը արդյունաբերության ծախսերի վրա, քրավ, մի ապրանքի իսկական գինը մշտապես կանգնած է լինում արդյունաբերության ծախքերից բարձր կամ ցածր, բայց բարձրանալն ու ընկնելը փոխադարձաբար լրացնում են իրար: Այնպես որ մի որոշ ժամանակի ընթացքում, ինդուստրիայի աղբատ կամ բարգավաճ վիճակը ի նկատի առնելով, ապրանքները փոխանակվում են՝ համապատասխան իրենց արդյունաբերության ծախքերի, նրանց գները որոշվում են արդյունաբերության ծախքերի միջոցով:

էջ 31

Մենք տեսանք բիչ վերև, որ պահանջի ու առաջարկի տատանումները միշտ մղում են ապրանքի գինը դեպի արտադրության ծախքերը: Ճիշտ է, ապրանքի իսկական գինը միշտ կամ բարձր է, կամ ցածր արտադրության ծախքերից, բայց վերջ ի վերջո այդ բարձրանալը և ընկնելը հավասարակշռում են միմյանց, այնպես որ մի որոշ ժամանակաշրջանում, որի միջոցին կատարվում է արդյունաբերական մակընթացություն ու տեղատվություն, ապրանքները փոխանակվում են արտադրության ծախքերի համեմատ, և, հետևապես, արտադրության ծախքերն են, որ որոշում են ապրանքների գինը:

էջ 14

Ուրեմն որն է այն ընդհանուր գինը, որ որոշում է աշխատավարձի և շահի անկումն ու բարձրացումը՝ իրենց փոխադարձ հարաբերության մեջ:

Նրանք կանգնած են հակառակ հարաբերության մեջ: Կապիտալի բաժինը՝ շահը, բարձրանում է նույն հարաբերությամբ, որով աշխատանքի բաժինը՝ օրավարձը, ընկնում է, և ընդհակառակը: Շահը բարձրանում է նույն չափով, որով աշխատավարձը ընկնում է, նա ընկնում է նույն չափով, որով աշխատավարձը բարձրանում է:

էջ 47

Որն է ուրեմն ընդհանուր օրենքը, որ դեկավարում է աշխատավարձի և շահի ընկնելու և բարձրանալու փոխադարձ հարաբերությունը: Աշխատավարձի և շահի փոխադարձ կախումը հակառակ-հարաբերական է (Обратно пропорционально)*: Կապիտալի բաժինը՝ շահը աճում է նույն չափով, որչափով ընկնում է աշխատանքի բաժինը — աշխատավարձը, և ընդհակառակը՝ շահը ավելանում այն չափով, որչափով պակասում է աշխատավարձը, և շահը պակասում է այն չափով, որչափով ավելանում է աշխատավարձը:*

էջ 30

Ինչպես նկատել է Ռ. Ավդալբեգյանը, Ստ. Շահումյանի թարգմանությունն ավելի ճիշտ է արտահայտում հեղինակի միտքը: Նրա լեզուն սահուն է, տնտեսագիտական տերմինները հստակ, նյութի դասակարգային բովանդակությունը բացահայտող: Այդ է պատճառը, որ Սովետական Հայաստանի պետական հրատարակչությունը 1921 թ. լույս ընծայեց Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ»-ի Ստ. Շահումյանի թարգմանությունը[3]: «Հայերեն ներկա հրատարակության առթիվ» խորագրով առաջաբանում Ռ. Ավդալբեգյանը պատշաճը հատուցելով Ստ. Շահումյանին, նշում է, որ նրա թարգմանությունը «ավելի կանոնավոր և մաքուր լեզվով է կատարված»:

Այսուհանդերձ, հրատարակչությունը ճիշտ չի վարվել առանձին դեպքերում միջամտելով Շահումյանի թարգմանությանը, քանի որ այն պատմական նշանակություն ունի. գաղափար է տալիս դարասկզբի մարքսիստական հայերեն տերմինների, ավելի ճիշտ, քաղաքական գրականության թարգմանության աստիճանի մասին: Նկատենք նաև, որ Ստ. Շահումյանն ամեն կերպ աշխատել է հարազատ մնալ բնագրին, բացահայտել մարքսյան տնտեսագիտական աշխատության խոր բովանդակությունը: Բերենք միայն մի օրինակ. 1906 թ. Ստ. Շահումյանի թարգմանության մեջ ասված է. «Իրապես նրանք ծախում են կապիտալիստին փողով ոչ թե իրենց աշխատանքը, այլ իրենց աշխատանքի ուժը կամ ուրիշ խոսքով, իրենց բանվորական ուժը: Այդ բանվորական ուժը կապիտալիստը գնում է մի օրով...»[4]: 1921 թ. հրատարակության մեջ այդ պարբերությունը թարգմանվել է այսպես. «Իրապես նրանք փողով ծախում են կապիտալիստին ոչ թե իրենց աշխատանքը, այլ բանվորական ուժը: Այդ բանվորական ուժը կապիտալիստը գնում է մի օրով...»[5]: «Վարձու աշխատանք և կապիտալ»-ի 1953 և 1972 թթ. հրատարակությունները ավելի հարազատ են Ստ. Շահումյանի 1906 թ. թարգմանությանը[6]:

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը մարքսիզմի ծրագրային առաջին կարևորագույն

---

3 Տե՛ս Կ. Մարքս, Վարձու աշխատանք և կապիտալ, Ֆ. Էնգելսի ներածությամբ, Բ տպագրություն՝ Ստ. Շահումյանի թարգմանությամբ, Երևան, 1921:

4 Կ. Մարքս, Վարձու աշխատանք և կապիտալ, 1904, Ժնև, էջ 3—4:

5 Կ. Մարքս, Վարձու աշխատանք և կապիտալ, Երևան, 1921, էջ 4:

6 Տե՛ս Կ. Մարքս, Վարձու աշխատանք և կապիտալ, Երևան, 1953, Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, Երևան, 1972, հատ. 1, էջ 197—230:

փաստաթուղթն է։ Այն լույս տեսավ գերմաներեն՝ 1848 թ. փետրվարին, «Կոմունիստների միության» անդամ, գերմանացի վաճառանոցի Բուրգհարդին պատկանող լոնդոնյան մի փոքրիկ տպարանում։ «Մանիֆեստի» ասպարեզ գալը, որը զուգադիպեց Ֆրանսիայի փետրվարյան հեղափոխությանը, քաղաքական բախտորոշ իրադարձություն էր մարդկային հասարակության պատմության մեջ։ Ընդհանրացնելով հասարակական կյանքի զարգացման օրինաչափությունները և ստեղծված քաղաքական իրավիճակը, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ի լուր աշխարհի հայտարարեցին՝ ժամանակն է արդեն, որ կոմունիստներն ամբողջ աշխարհի առջև բացեիբաց շարադրեն իրենց հայացքները, իրենց նպատակները, իրենց ձգտումները և կոմունիզմի ուրվականի մասին հեքիաթներին հակադրեն իրենց կուսակցության մանիֆեստը։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը մարտական ծրագիր է հին, կապիտալիստական աշխարհը կործանելու և նոր, սոցիալիստական աշխարհ կառուցելու համար մղվող պայքարում։ Ֆ. Էնգելսը 1888 թ., արդարացիորեն, «Կոմունիստական մանիֆեստ»-ն անվանել է ամբողջ սոցիալիստական գրականության ամենատարածված, առավել միջազգային ստեղծագործություն, ընդհանուր ծրագիր, որն ընդունում են միլիոնավոր բանվորներ՝ Սիբիրից մինչև Կալիֆորնիա։ «Մանիֆեստ»-ում առաջին անգամ սեղմ և ամբողջական շարադրված է մարքսիզմը՝ իր երեք կողմերով՝ փիլիսոփայություն՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը, քաղաքատնտեսություն և գիտական կոմունիզմ. «...հանճարեղ պարզությամբ ու ցայտունությամբ ուրվագծված է նոր աշխարհայեցողությունը, նաև սոցիալական կյանքի բնագավառը ընդգրկող հետևողական մատերիալիզմը, դիալեկտիկան, որպես ամենաբազմակողմանի ու խոր ուսմունք զարգացման մասին, դասակարգային պայքարի և նոր, կոմունիստական հասարակություն ստեղծող պրոլետարիատի համաշխարհային-պատմական հեղափոխական դերի թեորիան»[7]։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ում գիտականորեն շարադրված են մարքսիզմի ուսմունքը կոմունիստական կուսակցության առաջավոր և ղեկավար դերի, բանվոր դասակարգի ավանդարդի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի վերաբերյալ։

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» անմահ երկ է։ Նրա գաղափարները համակել են ամբողջ աշխարհը, կենդանի

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 45—46։

մարմնացում գտել և հաղթանակել ՍՍՀՄ-ում, ժողովրդական դեմոկրատիայի երկրներում։

Հայտնի է, որ XIX դարի 30—40-ական թվականներին, երբ կազմավորվում էին Կ. Մարքսի հայացքները, կապիտալիզմը որպես ստադիա որոշ զարգացում էր ապրել։ Արդյունաբերական կապիտալն արևմտյան Եվրոպայի երկրներում սկսել էր զարգանալ XVIII դարի կեսերից, երբ սկսվեց արդյունաբերական հեղաշրջումը Ֆրանսիայում և հատկապես Անգլիայում կապիտալիզմին հատուկ հակասությունները լիովին դրսևորվեցին XIX դարի երկրորդ քառորդում։ Հեղափոխական պրոլետարիատը, որը լցվել էր արդյունաբերական կենտրոններն ու խոշոր քաղաքները, հանդես եկավ որպես ինքնուրույն պատմական ուժ։ Լիոնում (Ֆրանսիա), որը տեքստիլ արդյունաբերության կենտրոնն էր, 1830 թ. բռնկվեց բանվորական առաջին ապստամբությունը։ 1838—1842 թթ. իր բարձրագույն կետին հասավ անգլիական առաջին բանվորական՝ չարտիստական շարժումը։

XIX դարի 40-ական թվականներին Գերմանիայում ևս բանվորական մասսաները սկսեցին հանդես գալ իրենց պահանջներով։ 1844 թ. տեղի ունեցավ Սիլեզիայի ջուլհակների ապստամբությունը։

Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում դասակարգային պայքարը պրոլետարիատի և բուրժուազիայի միջև ընդունեց սուր բնույթ։ Այդ երկրներում բանվորական հեղափոխական շարժման զարգացման մեջ տեղի էր ունենում բեկում։ Վ. Ի. Լենինի արտահայտությամբ՝ այն ժամանակ բուրժուական դեմոկրատիայի հեղափոխականությունն արդեն մահանում էր (Եվրոպայում), իսկ սոցիալիստական պրոլետարիատի հեղափոխականությունը դեռ չէր հասունացել։

Կապիտալիզմը ապրում էր իր զարգացման սկզբնական շրջանը, սակայն պրոլետարիատը դեռևս չէր ազատագրվել բուրժուազիայի գաղափարական ու քաղաքական ազդեցությունից։ Բանվորները, մանավանդ գերմանական, լիովին չէին խզել իրենց կապերը արհեստավորական, մանրբուրժուական անցյալի հետ։

Արդյունաբերական կապիտալիզմի զարգացումն առաջ էր ընթանում բուռն թափով։ Արհեստավորական արտադրությունը հետզհետե իր տեղը զիջում էր մեքենայական խոշոր արդյունաբերությանը։ Այդ տեղաշարժերն իրենց արտացոլումն էին գտնում բանվորների գիտակցության մեջ։ Նրանց միջավայրում աճում էր հասարակության մեջ կատարվող փոփոխությունների ըմբռնման պա-

հանջը։ Կենդանի հետաքրքրություն էր առաջանում դեպի տեսական հարցերը։ Բանվորական խմբակները դարձան Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գաղափարների ըմբռնման ու տարածման կարևոր օղակները։ 1842 թ. նոյեմբերի վերջին Կ. Մարքսն առաջին անգամ հանդիպում է Ֆ. Էնգելսին։ Այդ հանդիպումն էլ բախտորոշ եղավ նրանց կյանքում։ Հիմք դրվեց մեծ բարեկամությանը։ Հանձին Ֆ. Էնգելսի, Կ. Մարքսն ունեցավ իր համախոհն ու հավատարիմ զինակիցը, որի հետ ձեռք-ձեռքի տված անցավ իր հետագա կյանքի աշխատանքային սխրանքներով ու պայքարով լի ուղին, գիտական ստեղծագործության մեջ և գործնական պայքարում ունեցավ անփոխարինելի օգնական, մի մարդու, որի անունն անխզելիորեն կապվեց նրա անվան հետ։ Զուգակցելով լեգալ և անլեգալ աշխատանքը, օգտագործելով մամուլը, կապեր պահպանելով այն ժամանակվա սոցիալիստական շարժման ակտիվ գործիչների հետ, Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը իրենց հայացքների սիստեմատիկ պրոպագանդա էին անում։ Նրանք կապեր էին պահպանում Արդարների միության գաղտնի կոմունիստական ընկերության հետ։

Անողոքաբար քննադատելով մանրբուրժուական սոցիալիզմի տարբեր ուսմունքները, 1846—1847 թթ. նրանք կարողացան վճռական ազդեցություն գործել Արդարների միության վրա, որը Եվրոպայի ամենախոշոր հեղափոխական և ինտերնացիոնալ բանվորական կազմակերպությունն էր։ Այն ժամանակ բանվորների մեջ տարածված ուտոպիստական ու մանրբուրժուական գաղափարներին Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը հակադրեցին պրոլետարիատի կազմակերպված դասակարգային պայքարի իրենց տեսությունը։ Նրանք պայքար էին մղում Գ. Գրյունի՝ գերմանական «ճշմարիտ սոցիալիզմի» ներկայացուցիչների մանրբուրժուական ուղղության և Պրուդոնի ուսմունքի դեմ։ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի պրոպագանդիստական աշխատանքը և պայքարը տվեցին իրենց արդյունքները։ Շուտով Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը Արդարների միության կենտրոնական կոմիտեի կողմից հրավիրվեցին (Միության ղեկավարներից մեկը՝ ժամագործ Իոսիֆ Մոլլը նախ այցելեց Բրյուսել՝ Կ. Մարքսին, իսկ հետո Փարիզ՝ Ֆ. Էնգելսին) միության մեջ մտնելու, միության համագումարին մասնակցելու և իրենց սկզբունքներն առաջադրելու խնդրանքով։ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսն ընդունեցին այդ առաջարկը։

1847 թ. հունիսի սկզբին Ֆ. Էնգելսի մասնակցությամբ տեղի ունեցավ Արդարների միության կոնգրեսը։ Միությունը վերակա-

ռուցվեց և մշակվեց կանոնադրությունը։ Այդ վերակառուցումից հետո Արդարների միությունն սկսեց կոչվել Կոմունիստների միություն, որը նոր, անլեգալ կազմակերպություն էր և պրոպագանդում էր գիտական կոմունիզմի գաղափարները։ Կոմունիստների միության հիմնումը, որը գիտական կոմունիզմը հռչակեց իր գաղափարական դրոշը, սկզբնավորեց մարքսիզմի միացումը բանվորական շարժմանը։

1847 թ. սեպտեմբերին լույս տեսավ Կոմունիստների միության տպագիր օրգանի՝ «Կոմունիստական ժուռնալ»-ի փորձնական համարը՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» նշանաբանով, որը և դարձավ Կոմունիստների միության խորհրդանշանը։

1847 թ. նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 8-ը Լոնդոնում տեղի ունեցավ Կոմունիստների միության II կոնգրեսը։ Ծրագրի նախագծի շուրջը տասը օր տևող վիճաբանությունից հետո որոշվեց հանձնարարել Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին կազմել ծրագիր և այն հրապարակել որպես Մանիֆեստ։

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը գրեցին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և 1848 թ. հունվարի վերջերին Բրյուսելից այն ուղարկեցին Լոնդոն՝ տպագրելու համար։

Երբ 1848 թ. փետրվարին լույս տեսավ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», Կ. Մարքսը 29 տարեկան էր, իսկ Ֆ. Էնգելսը՝ 27։ «Մարքսն իր ուսմունքն առաջին անգամ առաջադրեց 1844 թ.,— գրել է Վ. Ի. Լենինը։ Մարքսի ու Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստ»-ը, որ լույս տեսավ 1848 թ., արդեն տալիս է այդ ուսմունքի ամբողջական, սիստեմատիկ, մինչև օրս լավագույնը մնացող շարադրանքը։ Համաշխարհային պատմությունը այդ ժամանակից ի վեր ակներևաբար բաժանվում է երեք գլխավոր ժամանակաշրջանների. 1) 1848 թ. հեղափոխությունից մինչև Փարիզյան Կոմունան (1871). 2) Փարիզյան Կոմունայից մինչև ռուսական հեղափոխությունը (1905), 3) Ռուսական հեղափոխությունից սկսած»[8]։

Կոմունիստների միությունը այն միջազգային առաջին կուսակցական կազմակերպությունն էր, որի գործունեության հիմքում ընկած էին գիտական կոմունիզմի սկզբունքները։ Միությունը հանդիսացավ բանվորների միջազգային ընկերության՝ Առաջին Ինտերնացիոնալի նախորդը,— որը, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, դրեց բանվորների միջազգային կազմակերպության հիմքը՝ կապիտալի վրա

8 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 18, էջ 736։

նրանց կատարելիք հեղափոխական դրոշը նախապատրաստելու համար։

«Մի ուրվական է շրջում Եվրոպայում—կոմունիզմի ուրվականը»— այսպես է սկսվում հռչակավոր «Մանիֆեստ»-ը։ Եվրոպայի բոլոր ուժերը կոմունիզմն արդեն որպես ուժ էին ճանաչում և ժամանակն էր, որ կոմունիստները ամբողջ աշխարհի առջև բացորոշ շարադրեին իրենց հայացքները, նպատակներն ու ձգտումները և կոմունիզմի ուրվականի մասին եղած հեքիաթներին հակադրեին կոմունիստական կուսակցության մանիֆեստը»։

Պատմության մատերիալիստական ըմբռնման հիման վրա «Մանիֆեստ»-ի առաջին բաժնում Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը ցույց տվեցին, որ մարդկության պատմությունը դասակարգային պայքարի պատմություն է։ Բնութագրելով բուրժուական հասարակությունը, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը նշել են, որ բուրժուական դարաշրջանում էլ ավելի խորացան դասակարգային հակասությունները, հասարակությունը բաժանվեց երկու հակադիր բանակների՝ բուրժուազիայի և պրոլետարների։ Ուրվագծելով բուրժուազիայի և պրոլետարիատի ծագումը, նրանց մեջ գործող ներհակությունները, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը նշում են բուրժուազիայի պատմական առաջադիմական դերը արտադրողական ուժերի, ինչպես և հասարակական-քաղաքական կյանքի զարգացման գործում։

Բուրժուազիան ամենուրեք, որտեղ նա տիրապետության հասավ, խորտակեց բոլոր ֆեոդալական, նահապետական իդիլիական հարաբերությունները «մարդկանց միջև ոչ մի այլ կապ չթողեց, բացի մերկ շահից, անսիրտ «կանխիկ հաշվից», բոլոր ազատությունների փոխարեն դնելով մի անխիղճ ազատություն— միայն առևտրի ազատությունը... Շահագործման հին ձևերը բուրժուազիան փոխարինեց պարզ, լկտի, անմիջական չոր ու ցամաք շահագործման հարաբերություններով։ «Մի խոսքով՝ կրոնական ու քաղաքական պատրանքներով քողարկված շահագործումը նա փոխարինեց բացահայտ լկտի, ուղղակի կոշտ ու կոպիտ շահագործումով... բուրժուազիան պատռեց սրտաշարժ-սենտիմենտալ քողը ընտանեկան հարաբերություններից և դրանք վերածեց զուտ դրամական հարաբերությունների»[9]։

Այսպիսով, ֆեոդալիզմի ընդերքում առաջացած բուրժուազիան

9 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1973, էջ 57։

ժիր իսկ ստեղծած հասարակարգի ներսում ստեղծեց բոլոր նախադրյալները՝ իր դասակարգի կործանման համար։

Բնութագրելով բուրժուական արտադրության անբաժան ուղեկիցը հանդիսացող գերարտադրության ճգնաժամերը և նրանց ավերիչ բնույթը, Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ցույց են տալիս, որ բուրժուազիան ստեղծել է այնպիսի արտադրողական ուժեր և հարաբերություններ, որոնք այլևս ոչ միայն չեն նպաստում հասարակական հարաբերությունների, այլև, ընդհակառակը, արգելակում են նրանց զարգացումը։

Հանդես է գալիս արդյունաբերական պրոլետարիատը։ Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը նշում են, որ միակ հեղափոխական դասակարգը՝ պրոլետարիատն է, որն իր ստեղծման առաջին իսկ օրից պայքարի մեջ է բուրժուազիայի հետ։ Բուրժուազիան, ասված է «Մանիֆեստ»-ում, «ոչ միայն կռեց իրեն մահ բերող զենքը, նա ծնեց նաև մարդկանց՝ ժամանակակից բանվորներին, պրոլետարներին, որոնք այդ զենքը նրա դեմ կուղղեն»[10]։ Պրոլետարիատը որպես ամենահեղափոխական դասակարգ, պետք է հիմնահատակ անի կապիտալիստական կարգերը։ Բուրժուազիան՝ հանձին պրոլետարիատի, ստեղծում է իր սեփական գերեզմանափորին, ուստի բուրժուազիայի անկումն ու պրոլետարիատի հաղթանակը հավասարապես անխուսափելի են։

Կ. Մարքսի ուսմունքի մեջ գլխավորը ոչ թե դասակարգային կռիվն է, այլ պրոլետարիատի դիկտատուրան, պրոլետարիատի՝ իբրև սոցիալիստական հասարակության կերտողի, համաշխարհային պատմական դերի պարզաբանումը։ Պրոլետարիատի դիկտատուրա տերմինը Կ. Մարքսը առաջին անգամ օգտագործել է «Դասակարգային պայքարը Ֆրանսիայում 1848—1850 թթ.» աշխատությունում։ 1852 թ. մարտի 5-ին Կ. Մարքսը Վեյդեմեյերին գրած նամակում նշել է.

«Իմ արած նորն այն է, որ ես ապացուցել եմ հետևյալը.

1. Որ դասակարգերի գոյությունը կապված է արտադրության զարգացման որոշ պատմական փուլերի հետ միայն։

2. Որ դասակարգային պայքարը անհրաժեշտաբար տանում է դեպի պրոլետարիատի դիկտատուրան։

3. Որ այդ դիկտատուրան ինքը սոսկ մի անցում է դեպի ամեն

---

10 Նույն տեղում։

տեսակ դասակարգերի ոչնչացում ու դեպի անդասակարգ հասարակություն»-ը[11]:

«Մանիֆեստ»-ի երկրորդ բաժնում, որը կոչվում է «Պրոլետարներ և կոմունիստներ», Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը բնութագրելով պրոլետարների և կոմունիստների հարաբերությունները, ցույց տվեցին, որ կոմունիստական կուսակցության մերձավոր նպատակը պրոլետարիատի դասակարգային կազմակերպումն է, բուրժուազիայի տիրապետության տապալումը և պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճումը: Կոմունիզմի հատկանշական գիծը,— գրել են Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը,— ոչ թե առհասարակ սեփականության վերացումն է, այլ բուրժուական սեփականության վերացումը»[12]:

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը մերկացնելով բուրժուական գրչակների անհեթեթ մեղադրանքները կոմունիզմի հասցեին, ընդգծեցին մասնավոր սեփականության վերացման անհրաժեշտությունը, սեփականության այն ձևի վերացումը, որը ստեղծում է հասարակական ուժի վրա հիմնված կապիտալ:

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը հայտարարեցին, որ կոմունիստները իրենց տեսությունը կարող են արտահայտել մի դրույթով՝ մասնավոր սեփականության ոչնչացում:

«Կոմունիզմը,— գրել են Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը,— ոչ ոքից չի խլում հասարակական արտադրանքները յուրացնելու հնարավորությունը. նա լոկ խլում է այդ յուրացման միջոցով ուրիշի աշխատանքն իրեն ստրկացնելու հնարավորությունը»:

Կոմունիզմը ամրապնդում է ազգերի դաշինքը և ընտանիքը:

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսն ընդգծում են, որ բանվորական հեղափոխության մեջ առաջին քայլը պրոլետարիատին տիրող դասակարգ դարձնելն է, դեմոկրատիայի նվաճումը:

«Մանիֆեստ»-ի երրորդ բաժնում՝ «Սոցիալիստական և կոմունիստական գրականություն»,—հեղինակները մերկացնում են ռեակցիոն հոսանքների էությունը, բացահայտում ուտոպիական սոցիալիզմի տեսությունները և ընդգծում գիտական սոցիալիզմի արմատական տարբերությունը սոցիալիստական մյուս հոսանքներից:

Նրանք քննության են ենթարկում ու մերկացնում հետադիմական, այդ թվում՝ ֆեոդալական, մանրբուրժուական, գերմանական

---

11 Կ. Մարքս. Ֆ. Էնգելս, *Ընտիր երկեր, հատ. 2, էջ 583—584:*

12 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1973, էջ 74:*

կամ «ճշմարիտ» պահպանողական կամ բուրժուական, քննադատական-ուտոպիական սոցիալիզմը և այլն:

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը ավարտվում է հետևյալ տողերով. «Թող սարսափեն տիրող դասակարգերը կոմունիստական հեղափոխության առջև: Պրոլետարները այդ հեղափոխության մեջ ոչինչ չունեն կորցնելու՝ բացի իրենց շղթաներից: Իսկ ձեռք կբերեն մի ամբողջ աշխարհ:

Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»[13]:

«Մանիֆեստ»-ի հրապարակ գալով մարքսիզմը հաստատվեց որպես ընդհանուր գծերով ձևակերպված ամբողջական հեղափոխական աշխարհայացք, վճռական քայլ արվեց սոցիալիզմը ուտոպիայից գիտության վերածելու ուղղությամբ:

«Մանիֆեստ»-ը շրջադարձային կետ հանդիսացավ գիտական կոմունիզմի պատմության մեջ: «Կոմունիստների միության», հետագայում նաև առաջին Ինտերնացիոնալի Գլխավոր խորհրդի անդամ Ֆրիդրիխ Լեսները իր հուշերում գրել է. «Մենք Մանիֆեստը ստացանք Փարիզում, փետրվարյան հեղափոխությունը սկսելու լուրերի հետ միաժամանակ... Մեզ համակեց ոգևորության փոթորիկ: Մեզ տիրեց մի զգացմունք, մի միտք՝ զոհել ամեն ինչ մարդկության ազատագրության համար»:

«Մանիֆեստ»-ը նոր հորիզոններ բացեց և հեղափոխական տեսության զարգացման, և՛ այն հեղափոխական պայքարի ընթացքում իրագործելու համար:

«Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը թարգմանվեց եվրոպական գրեթե բոլոր լեզուներով: Մինչև դարասկիզբը այն Ռուսաստանում անլեգալ հրատարակվել է 40 անգամ: Նրա ռուսերեն առաջին հրատարակությունը լույս է տեսել 1869 թ.՝ Ժնևում, Ա. Գերցենի «Կոլոկոլ» պարբերականի տպարանում՝ Մ. Բակունինի թարգմանությամբ:

1881 թ. մարտին «Նարոդնայա վոլյա»-ի ղեկավարներից մեկին՝ Ն. Կիբալչիչին ձերբակալելու ժամանակ, նրա մոտ գտել են «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի մեկ օրինակ, որը ականավոր հեղափոխականը սկսել էր թարգմանել դեռևս 1875 թվականին: «Մանիֆեստ»-ի, ինչպես նշել ենք սույն աշխատության առաջին գրքում, հրատարակությունը լույս է տեսել Ժնևում, 1882 թ.,

---

13 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական կուսակցության մանիֆեստը, Երևան, 1973, էջ 103:

Գ. Վ. Պլեխանովի թարգմանությամբ։ Այդ հրատարակությանը կցված էր Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի Առաջաբանը, որը ստացվել էր Պ. Լավրովի միջոցով։ Մարքսիզմի հիմնադիրներն այդ փաստաթղթում նորից ձևակերպեցին իրենց հետևությունները ռուսական հեղափոխության մոտալուտ լինելու և նրա պատմական մեծ նշանակության մասին։ Ռուս հեղափոխականների գործունեության թարմ տպավորության տակ «Մանիֆեստ»-ի հեղինակները գրել են. «Ռուսաստանը ներկայացնում է հեղափոխական շարժման առաջավոր ջոկատը[14]*։*

1890 թ. Սամարայում երիտասարդ Վ. Ի. Լենինը ռուսերեն է թարգմանում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը։ Սամարայի հեղափոխականները այն կարդում էին լենինյան թարգմանությամբ, որը հետագայում ոչնչացվեց ոստիկանության խուզարկությունների ժամանակ։

Ինչպես Ռուսաստանի բանվոր դասակարգի հեղափոխական շարժումների արշալույսին, այնպես էլ մեր երկրում, սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» հանդիսացել է բոլշևիկյան կուսակցության գաղափարական ամենաուժեղ զենքերից մեկը։ Դեռևս ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, ռուսերեն և այլ լեզուներով անլեգալ կազմակերպվում է «Մանիֆեստ»-ի հրատարակությունը և լայնորեն տարածվում բանվորների և աշխատավորների միջև։ Ոչ լրիվ տվյալներով, 1905—1907 թթ. կուսակցական անլեգալ տպարաններում «Մանիֆեստ»-ը լույս է տեսել ավելի քան 25 անգամ։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից մինչև այժմ այն ՍՍՀՄ-ում հրատարակվել է 450 անգամ՝ 25 միլիոն տպաքանակով։ Պրոֆեսիոնալ հեղափոխականները «Ինտերնացիոնալ»-ի, «Մարսելյազ»-ի, «Վարշավյանկա»-ի և այլ պրոլետարական երգերի հետ միասին արտագրում կամ խմորատիպով բազմացնում էին «Մանիֆեստը» և տարածում։

«Կոմունիստական մանիֆեստը» ջերմ ընդունելություն է գտել նաև Հայաստանում՝ հայ իրականության մեջ։ Մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական գրականության հայերեն հրատարակության առաջին փորձերը կատարեցին ռուսական կենտրոնական քաղաքներում և Եվրոպայում սովորող հայ ուսանողները։ 1880-ական թվա-

---

14 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Կոմունիստական կուսակցության մանիֆեստը*, Երևան, 1973, էջ 18.

կաններից սկսած արտասահմանում սովորող առանձին հայ ուսանողներ անձնական կապեր են հաստատում Գ. Պլեխանովի հետ, ծանոթանում «Աշխատանքի ազատագրություն» խմբի գործունեությանը, ձեռնարկում սոցիալիստական գրականության, այդ թվում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի թարգմանությանը:

«Մանիֆեստի» հայերեն թարգմանությանը Ֆ. Էնգելսն առաջին անգամ անդրադարձել է 1887 թվականի հունվարի 30-ին գրած առաջաբանում: «Հայերեն թարգմանությունը,— գրել է Ֆ. Էնգելսը, որ մի քանի ամիս առաջ պետք է տպագրվեր Կոստանդնուպոլսում, ինչպես ինձ հաղորդել են, լույս չտեսավ այն պատճառով միայն, որ հրատարակիչը վախեցել է Մարքսի անունը կրող գիրքը լույս ընծայել, իսկ թարգմանիչը չի համաձայնվել «Մանիֆեստը» ներկայացնել որպես իր աշխատությունը[15]:

«Մանիֆեստի» 1890 թ. գերմաներեն նոր հրատարակության առաջաբանում Ֆ. Էնգելսը կրկին հիշատակում է այդ գրքի հայերեն առաջին հրատարակության մասին: «Որպես կուրյոզ հիշատակեմ նաև, որ 1887 թ. Կոստանդնուպոլսում մի հրատարակչի առաջարկվել էր «Մանիֆեստի» հայերեն թարգմանության ձեռագիրը, սակայն այդ բարի մարդը քաջություն չի ունեցել տպագրելու Մարքսի անունը կրող երկը, և ավելի հարմար է համարել, որ թարգմանիչն իրեն անվանի այդ գործի հեղինակը, որին, սակայն, թարգմանիչը չի համաձայնել»[16]:

1893—1894 թթ. Շտուտգարտում Հովսեփ Աթաբեկյանցը գերմաներենից հայերենի է թարգմանում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը...» աշխատությունը: «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության հրատարակության համար համառոտ առաջաբան ստանալու ակնկալությամբ 1894 թ. նոյեմբերի 1-ին նամակով նա դիմում է Ֆ. Էնգելսին: Նամակի վրա կա Կարլ Կաուցկու հետևյալ հավելումը. «Սիրելի գեներալ (խոսքը Ֆ. Էնգելսի մասին է— Խ. Բ.) Աթաբեկյանցը հայտնի է ինձ իբրև լուրջ և ջանասեր ընկեր, թերևս այդքանն էլ

---

15 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Կոմունիստական կուսակցության մանիֆեստ*, Երևան, 1973, էջ 27:

16 Նույն տեղում, էջ 3:

բավական է: Նրա նամակը, համենայն դեպս, ինքնին իսկ խոսում է իր մասին»[17]:

Նամակի փաստը ինքնին ուշագրավ է:

Ֆ. Էնգելսը 1894 թ. նոյեմբերի 23-ին Հ. Աթաբեկյանցին պատասխանում է նամակով, շնորհակալություն հայտնում «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության համար և նշում, որ չի կարող առաջաբան գրել, բայց օգտվելով առիթից հայտնում է իր դրական կարծիքը հայ ժողովրդի ազգային-քաղաքական ազատագրական գործում, որը և գաղափարական ուղենիշ դարձավ հայ հեղափոխական մարքսիստների սկզբունքային վարքագծի մշակման համար:

«Կոմունիստական մանիֆեստ»-ի հայերեն հրատարակությունների պատմության վերաբերյալ մեր պատկերացումները հարըստանում են մի նոր փաստով ևս: Այսպես, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի Երկերի ռուսերեն երկրորդ հրատարակության 39-րդ հատորում զետեղված է Ֆ. Էնգելսի 1894 թ. դեկտեմբերի 29-ի նամակը Կ. Մարքսի դստեր՝ Լաուրա Լաֆարգին, որն առաջին անգամ լույս է տեսել Փարիզում 1959 թ., Ֆ. Էնգելսի, Պ. և Լ. Լաֆարգների «Նամականիի» III հատորում: Նամակում ասված է. «Ինչ վերաբերում է ֆրանսերեն «Մանիֆեստ»-ի առաջաբանին, ապա իմ առաջարկությունը հետևյալն է. գերմաներեն չորս առաջաբաններից կազմած առաջաբանը առաջաբանի նման մի բան կլիներ, որտեղ կբերվեին այդ երկի ճակատագրի մասին այն տվյալները, որոնք կարող են հետաքրքրել ձեր ընթերցողներին, այնուհետև, ինձ ուղարկիր ձեռագիրը, որպեսզի ես կարողանամ լրացումներ առաջարկել (Ես հենց նոր ստացա հայերեն թարգմանությունը*) և իմ անունից մի քանի բառ ավելացնել: Դու ի՞նչ ես մտածում այդ դժվարության հաղթահարման նման եղանակի կապակցությամբ»[18]:

Ինչպես տեսնում ենք, տակավին 1894 թ. Ֆ. Էնգելսն իր ձեռքի տակ ունեցել է «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության տեքստը: Թե ինչպիսին է եղել նրա ճակատագիրը, հետագա որոնումները նոր լույս կսփռեն այդ երկի հայերեն հրատարակության պատմության վրա, նոր խոսք կասեն Ֆ. Էնգելսի և հայ հասարակական գործիչների կապերի մասին:

1900—1902 թթ. «Մանիֆեստ»-ի հայերեն թարգմանության

---

17 Տե՛ս Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, Երևան, 1967, էջ 208:

* Ընդգծումը մերն է—Խ. Բ.:

18 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 39, стр. 291.

փորձեր են արվում նաև Թիֆլիսում, Ժնևում և այլուր։ 1901 թ. Թիֆլիսում «Մանիֆեստ»-ը թարգմանվում է հայերեն՝ ռուսերեն երկրորդ հրատարակությունից (Գ. Վ. Պլեխանովի 1882 թ. թարգմանությունից)։ Ժնևում «Մանիֆեստ»-ը թարգմանվում է արևմտահայերեն՝ Պոլ Լաֆարգի ֆրանսերեն թարգմանությունից, սակայն դրանք ևս չհրատարակվեցին։

Ռուսաստանի ուսանողները, այդ թվում՝ հայերը, Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին խնդրում էին ռուսական երիտասարդությանը մասնակից անել հեղափոխական շարժումներին, խորհուրդներ, «ավելի ճիշտ հրամաններ տալ, որպեսզի հետևելով մարքսիստների ծրագրին, իրենց բաժինը մտցնեն այն շենքի կառուցման մեջ, որ նրանք բարձրացնում են հին հասարակության փլատակների վրա»[19]։

1894 թ. Ժնևում (հրատարակության վայրը ցույց է տրված Աթենք) հայերեն հրատարակվող հնչակյան նաամսյա «Գաղափար» հանդեսի հուլիս-սեպտեմբերի համարներում տպագրվել են «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի երկու գլուխները՝ «Բուրժուա ու պրոլետարի» (տե՛ս «Գաղափար», № 1, 1894, էջ 15—33) և «Պրոլետարներն ու կոմունիստները» (№ 2, էջ 107—117)։ Թարգմանությունը կատարել են Մարո և Ավետիս Նազարբեկյանները։ «Գաղափարի» № 2-ի 184-րդ էջում ազդարարվում էր, թե առանձին գրքույկի ձևով մամուլի տակ է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը։ Բայց այն ոչ միայն առանձին բրոշյուրով չհրատարակվեց, այլև հաջորդ գլուխները լույս չտեսան ոչ «Գաղափար»-ում և ոչ էլ հնչակյան մյուս օրգաններում։

Այս ամենը հայ իրականության մեջ մարքսիզմի գաղափարների տարածման նախաքայլերն էին։

Հայաստանում և հայ իրականության մեջ հեղափոխական մարքսիզմի, գիտական կոմունիզմի գաղափարների առաջին և հետևողական տարածողները, անշուշտ, եղել են լենինյանները։

Կովկասում լենինյան գաղափարների տարածմանը, բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորմանը և գործունեությանը խոշոր չափով օգնեց Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ, ՌՍԴԲԿ II համագումարից հետո (1904), ՌՍԴԲԿ Կենտկոմի հրատարակչությանը կից ստեղծված վրացերեն և հայերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակությունների Ժնևյան հանձ-

---

[19] Տե՛ս «Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», Երևան, 1954, էջ 235։

նաժողովը: Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ հանձնաժողովի աշխատանքները ղեկավարում էր Ստ. Շահումյանը: Ժնևյան հանձնաժողովը նյութական ու բարոյական օգնություն ստանալու նպատակով Բեռլինում, Ժնևում և այլ քաղաքներում ստեղծում է առանձին խմբեր, իր շուրջն է համախմբում «Եվրոպայի հայ ուսանողների միության» որոշ անդամների:

Ստ. Շահումյանը ձեռնարկում է մարքսիստական մի շարք նշանավոր երկերի, այդ թվում՝ Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ», Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և այլ գործերի թարգմանությանն ու հրատարակությանը: Ժնևյան հանձնաժողովը կարճ ժամանակամիջոցում հրատարակեց ՌՍԴԲԿ ծրագրերն ու կանոնադրությունը, «Ծանուցումը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության երկրորդ հերթական համագումարի մասին», Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությանը», «Ռուսաստանի պրոլետարիատին» և այլ գործեր: Ժնևյան հայկական հրատարակչական գործին օգնելու նպատակով Ստ. Շահումյանը Բեռլինից հրավիրում է իր դասընկերներից Մ. Մանուչարյանին (Զար): Նա ձեռնարկում է բոլոր միջոցները «Մանիֆեստի» հրատարակությունն արագացնելու համար: «1903 թվականի ամառային արձակուրդներից հետո Կովկասից Բեռլին վերադառնալով,— գրել է Մ. Մանուչարյանը,— ես այլևս Շահումյանին չտեսա Բեռլինում: Դրա փոխարեն ընկերներն ինձ հանձնեցին նրա մի նամակը, որտեղ նա պնդում էր, որ անհրաժեշտ է իմ տեղափոխվելը Շվեյցարիա: Նա գրում էր, որ ամռանը ապրելով Կովկասում, նա եկավ այն համոզման, որ Անդրկովկասի բանվորական մասսաների մեջ տարվող աշխատանքի արգելակը հայերեն և վրացերեն սոցիալ-դեմոկրատական գրականության բացակայությունն է, որ հարկավոր են ինչպես հանրամատչելի գրքույկներ բանվորների համար, այնպես էլ թեորիական բովանդակությամբ հագեցված աշխատություններ տեղական ինտելիգենցիայի այն խավերի համար, որոնք բավականաչափ չգիտեն ռուսաց լեզուն: Այնուհետև նա գրում էր, որ այդ ուղղությամբ Ժնևում արդեն որոշ քայլեր են ձեռնարկված և որ ես ինձ հետ բերեմ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստ»-ի այն թարգմանության սկիզբը, որ ես սկսել էի 1902 թ. և որը մնացել էր անավարտ: Սակայն ես միայն գարնանը գնացի Ժնև և տեսա Ստեփանին կուսակցական ամենաեռուն աշխատանք կատարելիս...

Ամառվա վերջերին մենք միասին ավարտեցինք «Կոմունիստական մանիֆեստ»-ի թարգմանությունը»[20]։

Իր ձեռքի տակ ունենալով «Մանիֆեստ»-ի մինչ այդ կատարված ևս երկու ձեռագիր թարգմանությունները, Մ. Մանուչարյանի օգնությամբ Ստ. Շահումյանը կարճ ժամանակամիջոցում ավարտում է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի հայերեն թարգմանությունը և հանձնում տպագրության[21]։

Չնայած առողջական ծանր վիճակին, Ստ. Շահումյանն օր ու գիշեր աշխատում էր, թարգմանությունը նորից ու նորից համեմատում գերմաներեն և այլ լեզուներով հրատարակությունների հետ։ Նա հետևում էր «Մանիֆեստ»-ի տպագրությանը, խմբագրում և սրբագրում շարվածքը։ «Հենց այժմ իմ աչքի առաջ, ինչպես կենդանի,—գրել է Մ. Մանուչարյանը,—տեսնում եմ գրաշարների կողքին, տառարկղների վրա գլուխը կախած Ստեփանին, մի փոքրիկ տպարանում, որտեղ տպագրվում էին «Իսկրա»-ն և մեր գրքույկները»[22]։

Վ. Ի. Լենինը օգնում էր «Մանիֆեստ»-ի հայերեն հրատարակությանը։ Թարգմանությունը փաստորեն իրականացվել է Իլյիչի ղեկավարությամբ։ Ժնևի հայերեն մարքսիստական հրատարակությունների վերջում տրվում էր Վ. Ի. Լենինի հասցեն։

Այսպիսով, հայ իրականության մեջ 1904 թ. ամռանը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, Ստ. Շահումյանի թարգմանությամբ և խմբագրությամբ, ՌՍԴԲԿ Կենտկոմի Ժնևի տպարանում առաջին անգամ լույս է տեսնում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»՝ Մարքսի և Էնգելսի երեք առաջաբաններով (1873, 1883 և 1890 թթ. գերմաներեն հրատարակություններ)։

Ի տարբերություն «Մանիֆեստը» թարգմանելու և հրատարակելու բոլոր նախորդ փորձերին, առաջին անգամ, շնորհիվ Ժնևի բոլշևիկյան հրատարակության, գիտական կոմունիզմի ծրագրային այդ մեծ փաստաթուղթը մատչելի է դառնում հայ պրոլետարիատին, տարածվում նրանց շրջաններում։ «Մանիֆեստ»-ի Ժնևյան հրատարակությունը քաղաքական նշանակությունից բացի, կարևոր դեր

---

20 «Бакинский рабочий», № 211, 20 сентября 1922 г.

21 *Տե՛ս նաև* Խ. Բարսեղյան, *Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Երևան, 1967, էջ 133—144։*

22 «Бакинский рабочий», № 211, 20 сентября 1922 г.

խաղաց նաև մարքսիստական գրականության հետագա թարգմանությունների գործում, խոր ակոս գծեց հայ հասարակական-քաղաքական մտքի վրա։ Շահումյանը ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով «Մանիֆեստ»-ի թարգմանությանը, հարազատ է մնացել տեքստի բովանդակությանը, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, ստեղծել ու գիտական շրջանառության մեջ է մտցրել մի շարք տերմիններ, որոնք մեծապես օգնեցին մայրենի լեզվի մարքսիստական, հասարակական-քաղաքական տերմինաբանության մշակմանը՝ հեղափոխական գրականության հայերեն թարգմանությունների և ինքնուրույն գործերի շարադրման ժամանակ։ «Մանիֆեստ»-ի ժնևյան հրատարակությունում պահպանված են բնագրի ուժն ու ոճը։

«Մանիֆեստ»-ի հայերեն առաջին հրատարակությունը նշանավոր իրադարձություն էր հայ հասարակական մտքի զարգացման, Հայաստանում մարքսիզմի տարածման ու բոլշևիկյան կազմակերպությունների պատմության մեջ։

Ի տարբերություն նախորդ փորձերի, ժնևի հրատարակությունը հայ ընթերցողներին հասցրեց Մանիֆեստ»-ի լրիվ տեքստը, որը որոշակի դեր խաղաց Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման գործում։

1906 թ. Բաքվում՝ Շահումյանի խմբագրությամբ վերահրատարակվում է «Մանիֆեստ»-ի ժնևյան թարգմանությունը։ 1918 և 1922 թթ. Մոսկվայում Պ. Մակինցյանի թարգմանությամբ հրատարակվում է «Մանիֆեստ»-ը։ 1924 թ. «Գիտական սոցիալիզմի գրադարան» մատենաշարով՝ Պ. Մակինցյանի թարգմանությամբ, Մոսկվայում, 1200 տպաքանակով նորից է լույս տեսնում «Մանիֆեստ»-ը։ Այն խմբագրել է Դ. Սիմոնյանը, ներածությունը և պարզաբանումները թարգմանել է Արիսյանը։

Անցած ժամանակաշրջանում «Մանիֆեստ»-ը հայերեն հրատարակվել է 32 անգամ, ավելի քան 250 հազար տպաքանակով։ 1920 թ. հայերեն այն լույս է տեսել նաև Ամերիկայում և Բուլղարիայում։ «Միակ գիրքը, թերևս, որ տպված է Տիթրոյիթի մեջ, եղած է Կոմունիստ մանիֆեստի արտատպումը, ավելի քան տասնյակ մը տարի առաջ»— 1931 թվականին գրել է Ս. Ծոցիկյանը[23]։ 1933 թ.

---

23 Ս. Մ. Ծոցիկյան, Տիթրոյիթի հայ գաղութը, տե՛ս «Հայ Տարեգիրք Տիթրոյիթի և շրջակայից 1930—1931», Առաջին տարի, հրատարակիչք Գ. Ավագյան և Ա. Գալաֆյան, Տիթրոյիթ, 1931, էջ 178։

Աթենքում, Ֆրանսիայի կոմկուսի հայկական սեկցիայի հրատարակությամբ, Ժակ Դյուկլոյի առաջաբանով լույս է տեսնում «Կոմունիստական մանիֆեստը»: «Առաջին անգամ Ֆրանսիայի մեջ, Կարլ Մարքսի և Ֆրիդրիխ Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստը» կհրատարակվի հայերենով, գրել է Ժակ Դյուկլոն: Այս հրատարակությունը, որը կատարված է Մարքսի մահվան 50-ամյակի առթիվ, չի կրնար խոր արձագանք չգտնել հայ բանվորության մեջ, որոնք կապրին և կաշխատին Ֆրանսիա»[24]: «Մանիֆեստը» թևածում է հողագնդով մեկ: Այն աշխարհում ամենատարածված գիրքն է, հրատարակվել է 101 լեզվով: Մարքսիզմի ծրագրային առաջին փաստաթուղթը մայրենի լեզվով են թարգմանել իտալական սոցիալիստ Լուսն Մեսը, Բուլղարիայի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիր Դիմիտրի Բլագոևը, Հունգարիայի կոմունիստների ղեկավար Բելա Կունը և ուրիշներ: «Մանիֆեստ»-ում Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը գիտականորեն ապացուցեցին այն ճշմարտությունը, որ կոմունիզմը երազողների անկյալություն չէ, այլ իրական, պատմական հզոր շարժում: Պայքարը կոմունիզմի համար XIX դարից սկսած դարձավ կենսական օրենք: Կ. Մարքսի մեծագույն ծառայությունները այդ օրենքի հայտնագործման, պրոլետարիատի և աշխատավոր մասսաների գաղափարական դաստիարակության և ազատագրական պայքարի ուղին լուսավորելու գործում պատկերավոր է արտահայտել սոցիալիստական դարաշրջանի ականավոր բանաստեղծ Վլադիմիր Մայակովսկին.

Թվում էր թե՝
    ծովախորշը կոմունիզմյան
ալիքը պատահմունքի
    կձգի մեզ միայն:
Մարքսը
    բացեց օրենքը պատմության.
պրոլետարիատին
    դրեց
    ղեկի վրան:
Մարքսի գրքերը

24 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, *Մանիֆեստ Կոմունիստական կուսակցության: Ֆրանսերենեն թարգմանեց Փանոս, Աթենք, տպ. «Սևան», Հրատ. Ֆրանս. Կոմկուսի, 1933: ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալում պահվում է այդ գրքի օրինակը, որը գրադարանին է նվիրել Ավետիք Իսահակյանը:*

սյունակներ չեն
շարվածքների
և ոչ էլ՝
չոր
աղյուսակներ են թվերի,—
Մարքսը
կանգնեցրեց ոտքի
բանվորներին.
Մարտի տարավ
զորասյուները
ավելի կանոնավոր
քան շարքերը թվերի[25]:

Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով «Մանիֆեստ»-ի նշանակությունը, 1895 թ. գրել է. «Այս փոքրիկ գրքույկն արժե ամբողջ հատորներ. նրա ոգով է ապրում ու շարժվում մինչև այժմ քաղաքակիրթ աշխարհի ամբողջ կազմակերպված ու մարտնչող պրոլետարիատը»[26]:

«Մանիֆեստը» համաշխարհային պատմական նշանակություն ունի: Նրա գաղափարները խոր զարգացում են գտել Վ. Ի. Լենինի աշխատություններում, ՍՄԿԿ գործերում, մարմնավորված են համձինս լենինիզմի: Այն աշխարհի կոմունիստների գաղափարական հատու զենքն է:

Մի առիթով Ֆ. Ջորգեն ասել է. «Այն ինչ ստեղծեց Մարքսը որպես գիտության մարդ, որպես բանվոր դասակարգի պաշտպան, ոչ չուզունի հուշարձանների կարիք ունի, ոչ էլ բոցավառ ճառերի: Մարքսի գործերի մասին խոսում են ոչ թե բրոնզե ու գրանիտե հուշարձանները, այլ աշխարհի բոլոր մասերի բանվորների անհամար շարքերը, որոնք հետևում են Մարքսի անմահ մարտական կոչին՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացեք»[27]:

* * *

Կ. Մարքսի գլուխգործոցը «Կապիտալն» է, որի առաջին հատորը 1000 օրինակ տպաքանակով լույս է տեսել 1867 թ.՝ Համբուր-

---

25 *Вл. Маяковский.* Соч., т. 3, 1973, стр. 204—205.

26 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 2, էջ 12:*

27 *Քաղվածքը բերվում է ըստ «Կարլ Մարքս: Կենսագրություն» գրքի, Երևան, 1972, էջ 808:*

գում: «Կապիտալ»-ը այն գիրքն է, որին Կ. Մարքսը, իր իսկ խոստովանությամբ, «զոհաբերեց առողջությունը, կյանքի երջանկությունն ու ընտանիքը»[28]: «Կապիտալ»-ը, ինչպես պատկերավոր բնութագրել է Կ. Մարքսը,— այն ամենաահեղ գնդակն է, որ երբևէ արձակվել է բուրժուազիայի և կալվածատերերի գլխին: Գրքի տիտղոսաթերթի վրա գրված է. «Նվիրում եմ անմոռանալի բարեկամ, պրոլետարիատի խիզախ, հավատարիմ, ազնիվ առաջամարտիկ Վիլհելմ Վոլֆին: Ծնվել է Տառնաուում, 1809 թ. հունիսի 21-ին: Մեռել է տարագրության մեջ՝ Մանչեստրում՝ 1864 թ. մայիսի 9-ին»:

«Կապիտալ»-ը արդի դարաշրջանի տնտեսագիտական գրականության ամենանշանավոր երկն է: Կ. Մարքսը 1867 թ. նոր էր ավարտել առաջին հատորը, երբ Առաջին ինտերնացիոնալի երրորդ կոնգրեսը (Բրյուսել, 6—13 սեպտեմբերի 1868 թ.) հատուկ բանաձևով հանձնարարեց բոլոր ազգությունների բանվորներին՝ ուսումնասիրել նոր լույս տեսած «...դարի մեծագույն քաղաքատնտեսական երկը»: «Կապիտալ»-ը դեռևս նրա հեղինակի կենդանության ժամանակից թարգմանվել և հրատարակվել է աշխարհի շատ ժողովուրդների լեզուներով:

Ռուսաստանում մարքսիզմի տարածման, ռուս հասարակական առաջավոր մտքի զարգացման համար գաղափարական հզոր նախադրյալ ծառայեց «Կապիտալ»-ի առաջին հատորի տպագրությունը, որը 1872 թ. ապրիլին Պետերբուրգում իրականացրել են Գ. Չեռնիշևսկու ջերմեռանդ հետևորդ, Առաջին ինտերնացիոնալի խորհրդի անդամ Գ. Լոպատինը և տնտեսագետ նարոդնիկ Ն. Դանիելսոնը: Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Գ. Լոպատինի, Ն. Դանիելսոնի հարուստ նամակագրությունից երևում է, թե ինչ ծանր պայմաններում է իրականացվել «Կապիտալ»-ի ռուսերեն անդրանիկ հրատարակությունը, որը օտար լեզվով առաջին թարգմանությունն էր: Ռուսական թարգմանության տպագրությունն (3000 օրինակ) ավարտվեց 1872 թ. մարտի 27-ին: Ցարական գրաքննությունը, թույլատրելով «Կապիտալ»-ի հրատարակությունը, ենթադրում էր, որ այն Ռուսաստանում քչերը կկարդան, իսկ ավելի քչերը կհասկանան»[29]: Մինչդեռ, դրանից մի քանի տարի անց, 1880 թ. հուլիսի 25-ին, Մ. Գորբունովա-Կաբուկովան Ֆ. Էնգելսին գրել է. «Ես

---

28 *К. Маркс, Ф. Энгельс,* Соч., т. 31. стр. 454.

29 *Ցարական գրաքննիչ Սկուրատովի կարճամիտ դատողությունն այդ մասին տե՛ս* «Красный архив», *հատ. 1 (56), 1933, էջ 7:*

խնդրում եմ Ձեզ նաև հաղորդել պարոն Մարքսին, որ նրա «Կապիտալ» երկը լայնորեն տարածված է Ռուսաստանում, որ ոչ միայն գիտնականների շրջանում, այլ գլխավորապես նրանց, ովքեր որևէ հետաքրքրություն են ցուցաբերում դեպի սոցիալական գիտություններ և ժողովրդի դրությունը: «Կապիտալ»-ը շատ են կարդում ուսուցիչներն ու ուսուցչուհիները, այսինքն դրանցից նրանք, ովքեր լուրջ են վերաբերվում իրենց պրոֆեսիային: Բայց որքան շատ է կարդացվում «Կապիտալ»-ը, որքան ավելի են ընթերցողներն ու երիտասարդները խորանում նրա հիմնական դրույթներում, այնքան ավելի վատ համբավ է վայելում այդ գիրքը մեր դատախազների ու դատաքննիչների մոտ: Մեզ համար այդ գիրքը թանկագին ու հարգելի ուսուցիչ է»[30]:

1881 թ. փետրվարի 16-ին Կ. Մարքսին նույն բովանդակությամբ նամակ է գրել ռուս հեղափոխական Վերա Զասուլիչը: 1880 թ. Կ. Մարքսը գոհունակությամբ նշում էր, որ Ռուսաստանում «Կապիտալ»-ը կարդում և գնահատում են ավելի շատ, քան որևէ այլ տեղ:

Նախահոկտեմբերյան շրջանում «Կապիտալ»-ից լայն քաղվածքներ են բերվել հայ պարբերական մամուլում: Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ա. Արասխանյանը թարգմանում է «Կապիտալ»-ի առաջին հատորը և նույնիսկ մամուլում ազդարարում բաժանորդագրություն անցկացնելու մասին:

«Հրավեր բաժանորդագրության
Կարլ Մարքս
Կապիտալ
հատոր 1

Հայերեն լիակատար թարգմանությամբ և հրատարակությամբ Ստրասբուրգի համալսարանի պետակ. և իրավաբ. գիտությունների դոկտոր Ավետիք Արասխանյանցի:

Պիտի սկսի տպագրել առաջիկա հունվար ամսից:

Թարգմանություն գերմաներեն բնագրից, որը կազմում է մոտ 800 խիտ տպած մեծադիր էջեր՝ բազմաթիվ և մեծածավալ ծանոթություններով և Մարքսի ու Էնգելսի չորս առաջաբաններով:

---

30 «Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», Երևան, 1954, էջ 309:

Հատորը լույս է տեսնելու 7 պրակներով՝ համեմատ հատվածների թվին, որոնց խորագրերն են.

I. Ապրանք և փող (3 գլուխ), II. Փողի կապիտալ դառնալը (4 գլ.), III. Բացարձակ հավելյալ արժեքի արտադրություն (5 գլ.), IV. Հարաբերական հավելյալ արժեքի արտադրություն (4 գլ.), V. Բացարձակ ու հարաբերական հավելյալ արժեքի արտադրություն (3 գլ.), VI. Աշխատանքի վարձը (4 գլ.), VII. Կապիտալի կուտակման պրոցեսը (5 գլ.):

Ծանոթ. Գիրքը բացի թեորիական նյութ անալիզներից, պարունակում է նաև տնտեսական զարգացման տեսություններ՝ գլխավորապես անգլիական կյանքից, որպես տնտեսապես ամենազարգացած երկրից:

Բաժանորդավճարն է 3 ռուբլի 50 կոպ. (=9 ֆրանկ), փոստի ծախքով միասին այժմյանից մինչև առաջիկա դեկտեմբերի վերջը բաժանորդագրվածների և գինը վճարածների համար: Գիրքը լույս տեսնելուց հետո գինը կրկնապես կբարձրացվի:

Բաժանորդագրության համար դիմել— Тифлис, Книжная торговля, «Гутенберг» *կամ հրատարակչին՝* Тифлис, А. М. Арасханяну, Кадетский пер. II *Արտասահմանից,* Tiflis (Russie), Caucase, Librairie „Guttenberg“: Tiflis, A. M. Araskhaniantz, Kadetski Pereoulok“[31].

«Կապիտալ»-ի թարգմանության գործում Արասխանյանին օգնում էին բոլշևիկները: Դեռևս տակավին մշուշապատ է Ա. Արասխանյանի թարգմանության ճակատագիրը, բայց փաստն ինքնին ուշագրավ է:

«Կապիտալ»-ի հայերեն թարգմանության վերաբերյալ փորձերը հաջողություն ունեցան միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո: Մի փոքր առաջ անցնելով նշենք, որ 1933 թ. Երևանում Ռ. Ավգալբեգյանի թարգմանությամբ լույս տեսավ Կ. Մարքսի «Կապիտալ»-ի առաջին հատորը, իսկ 1936 թ.՝ երկրորդ հատորը: Հետագայում՝ 1947 և 1949 թթ. ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի կողմից հրատարակվել են «Կապիտալ»-ի երրորդ հատորի առաջին և երկրորդ գրքերը:

Ռ. Ավգալբեգյանը 1924 թ. թարգմանելով Ֆ. Մերինգի և Ռոզա Լյուքսեմբուրգի «Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի համառոտ շարա-

---

31 *Տե՛ս «Նոր խոսք» (Թիֆլիս), № 12, 5 սեպտեմբերի 1906 թ.:*

դրանքը» աշխատությունը, նշել է, որ «Հայ ընթերցողը առ ի չգոյէ» պետք է բավականանա այս փոքրիկ արտացոլումով, մինչև որ պայմանները հնարավորություն տան որևէ մեկին բախտ ունենալու և հրապարակ հանելու համաշխարհային անտեսագիտական գրականության հրաշալիքներից մեծագույնը՝ «Կապիտալ»-ը հայերեն թարգմանությամբ»[32]։

Այդ բախտը վիճակվեց հենց իրեն՝ Ք. Ավդալբեգյանին։ Շուրջ յոթ տարի նա անխոնջ կերպով աշխատում է «Կապիտալ»-ի թարգմանության վրա, հաղթահարելով անասելի դժվարություններ, մշակելով անտեսագիտական համապատասխան հայերեն տերմիններ, ձևակերպումներ, պահպանելով մարքսյան դասական աշխատության գաղափարական անաղարտությունը։ «Կապիտալ»-ի հայերեն թարգմանությունը բնագրից՝ սխրանք էր, հայ մարքսիստական մտքի պատմության պայծառ էջ։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունների նախահոկտեմբերյան շրջանի հայերեն հրատարակությունների շարքում առանձնակի տեղ են գրավում Ստ. Շահումյանի թարգմանությունները։ Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ստ. Շահումյանը գերմաներենից թարգմանում և հրատարակության է ներկայացնում Կ. Կաուցկու «Կարլ Մարքսի տնտեսական ուսմունքը» աշխատությունը։ Այդ գիրքը 1907 թ. ամռանը, Թիֆլիսի «Գուտենբերգ» տպարանում տպագրվում է 1200 տպաքանակով, բայց իշխանության ներկայացուցիչները արգելում են նրա տարածումը։ 1907 թ. հունիսի 23-ին Թիֆլիսի դատական պալատը որոշում է ընդառաջել մամուլի կոմիտեի հունիսի 14-ի ներկայացրած պահանջին և ոչնչացնել Կ. Կաուցկու «Կարլ Մարքսի տնտեսական ուսմունքը» աշխատությունը։ Թեև ոչնչացվել է հայերեն հրատարակության ողջ տպաքանակը, բայց Շահումյանի թարգմանության ձեռագիրը ժամանակին լայն տարածում է գտել։ Թարգմանությունը կատարված է մեծ հմտությամբ։

Կ. Կաուցկու «Կարլ Մարքսի տնտեսական ուսմունքը» 1922 թ. հայերեն լույս տեսավ Մոսկվայում՝ Ա. Ջիլինգարյանի թարգմանությամբ և Հ. Կոսիկյանի խմբագրությամբ։ Այն թարգմանվել էր 1905 թ. Պետերբուրգում ռուսերեն հրատարակված օրինակից և համեմատվել գերմաներեն 19-րդ հրատարակության հետ, որը 1920 թ.

---

32 Ֆ. Մերինգ, Ռ. Լյուքսեմբուրգ, Կարլ Մարքսի «Կապիտալ»-ի համառոտ շարադրանքը, Երևան, 1924, էջ 7։

լույս է տեսել Շտուտգարդում։ Առաջաբանները թարգմանել է Կուսիկյանը։

Աշխատությունը կազմված է «Ապրանք, փող, կապիտալ», «Հավելյալ արժեքը» և «Աշխատավարձը ու կապիտալի եկամուտը» բաժիններից։ Դա Կ. Մարքսի «Կապիտալ»-ի և մասամբ էլ տնտեսագիտական մյուս աշխատությունների հանրահայտ մեկնաբանությունն էր։ «Ներկա աշխատությունը պետք է լինի ոչ միայն Մարքսի ուսմունքի շարադրությունը,— գրել է Կ. Կաուցկին,— այլև ծառայի որպես ձեռնարկ Մարքսի աշխատությունների բնագրերը ուսումնասիրելիս»[33]։

Հետագայում, 1930 թ., Կ. Կաուցկու այդ աշխատությունը լույս է տեսել Երևանում՝ Երվանդ Տեր-Մինասյանի թարգմանությամբ։ Ստ. Շահումյանի թարգմանությունը, մեր կարծիքով, ավելի է հարազատ բնագրին և ճիշտ է արտացոլում Կ. Մարքսի տնտեսագիտական ուսմունքը։ Ա. Չիլինգարյանի թարգմանությունը անհաջող է, օգտագործված են արխաիկ ոճեր, ճապաղ ձևակերպումներ։ Թարգմանության խմբագիր Հ. Կուսիկյանն այդ առթիվ գրել է. «Ջափազանց դժվար էր և տեղ-տեղ անհնարին էր լիովին խմբագրել թարգմանությունից թարգմանվածը և այնպես, որ վերջինը բնագրին շատ մոտ լիներ... Դժբախտաբար գրքի ուղղագրության մեջ կան հնացած ձևեր, որ զանազան պատճառներով դժվար էր վերացնել»[34]։

Ստորև հրապարակվող քաղվածքները որոշակի գաղափար են տալիս վերոհիշյալ աշխատության թարգմանությունների մասին (տե՛ս էջ 283)։

---

33 Կ. Կաուցկի, Կարլ Մարքսի տնտեսական ուսմունքը, Մոսկվա, 1922։
34 Նույն տեղում։

Ստ. Շահումյանի թարգմանությամբ (1905)	Ա. Ջիլինգարյանի թարգմանությամբ (1922)	Ե. Տեր-Մինասյանի թարգմանությամբ (1930)
№ 1	№ 1	№ 1
Եթե քննենք ժամանակակից հասարակությունը, մենք կտեսնենք, որ նրա հարստությունը բաղկացած է ապրանքներից։ Ապրանքը աշխատանքի այն տեսակ արդյունքն է, որ արտադրվում է ոչ թե արտադրողի կամ նրա հետ կապված մարդկանց սեփական գործածության համար, այլ ուրիշ արդյունքների հետ փոխանակելու նպատակով։ Այսպիսով, ոչ թե բնական, այլ հասարակական առանձնահատկություններն են, որ արդյունքը դարձնում են ապրանք։ ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական արխիվ, ֆ. 4007, ցուց. 1, գ. 62, էջ 5։	Ժամանակակից հասարակութեան կեանքը դիտելով, մենք կը նկատենք, որ նրա հարստութիւնը պարփակւում է ապրանքների մէջ։ Ապրանքը աշխատանքի մի այնպիսի արդիւնք է, որ արտադրուած է ոչ թէ արտադրողի կամ նրա հետ սերտօրէն կապուած մարդկանց սեփական սպառման համար, այլ փոխանակութեան համար ուրիշ արդիւնքների վրա։ Հետեւաբար, ոչ թե բնական, այլ հասարակական յատկութիւնները արդիւնքը ապրանք են դարձնում։ Էջ 4։	Եթե մենք դիտենք ժամանակակից հասարակությունը, կգտնենք, որ նրա հարստությունը ապրանքներից է բաղկացած։ Ապրանքն աշխատանքի այնպիսի մի արդյունք է, որ արտադրված է ոչ թե արտադրողի կամ նրա հարազատների սեփական գործածության համար, այլ ուրիշ արդյունքների հետ փոխանակվելու նպատակով։ Հետևաբար՝ ոչ թե բնական, այլ հասարակական առանձնահատկություններն են, որ արդյունքն ապրանք են դարձնում։ Էջ 20։
№ 2	№ 2	№ 2
Նույն արդյունագործության միջոցների բնավորությունը, արդյունագործների մեջ ծնունդ են տանում, բնականաբար, տարբեր հասարակական հարա-	Արտադրութեան միջոցների բնոյթից կախուած՝ փոխւում են և արտադրողների հասարակական փոխադարձ յարաբերութիւնները, փոխւում են նրանց միարան գործունէութեան պայմանները, ինչպէս նաև նրանց արտադրութեան պայմաննե-	Արտադրության միջոցների բնույթի հետ կապված՝ բնականաբար տարբեր կլինեն այն հասարակական հարաբերությունները, որի մեջ են մտնում արտադրողները միմյանց հետ, այն պայմանները, որոնց մեջ նրանք փոխանակում են իրենց գործունեությունները և

Ստ. Շահումյանի թարգմանությամբ (1905)	Ա. Ջիլինգարյանի թարգմանությամբ (1922).	Ն. Տեր-Մինասյանի թարգմանությամբ (1930)
բերություններ, տարբեր պայմաններ, որոնց մեջ նրանք փոխանակում են իրենց գործողությունները։ Պատերազմական մի նոր գործիքի՝ հրաձիգ զենքի գյուտը, անհրաժեշտորեն փոխեց զորքի ամբողջ ներքին կազմակերպությունը, միանգամայն կերպարանափոխեց զորքը կազմող անհատների և նույնիսկ առանձին զորքերի փոխադարձ հարաբերությունները։ *Նույն տեղում, էջ 8։*	*րը արտադրության բովանդակ ընթացքին։ Նոր ռազմական գործիքի՝ հրազենի գյուտից յետոյ անհրաժեշտօրէն փոխուեց և բանակի ամբողջ ներքին կազմակերպութիւնը, ինչպէս նաև փոխադարձ յարաբերութիւնները, որոնք տիրում են բանակը կազմող անձերի միջև և որոնց շնորհիւ նա ներկայացնում է իրենից մի կազմակերպուած միութիւն. վերջապէս, փոխուեցին նոյնպէս և ամբողջ բանակների փոխադարձ յարաբերութիւնները։* *էջ 7։*	*մասնակցում են արտադրության ամբողջ ակտին։ Պատերազմի նոր գործիքի, հրացանի հայտնագործումով անհրաժեշտաբար փոխվեց բանակի ամբողջ ներքին կազմակերպությունը, կերպարանափոխվեցին այն հարաբերությունները, որոնց ներսում առանձին անհատները կարող են բանակ կազմել և իբրև բանակ գործել, փոխվեց նաև զանազան բանակների փոխադարձ հարաբերությունը։* *էջ 21։*
№ 3 *Ինչպես տեսանք, ապրանքի նպատակը՝ փոխանակություն է (փոխանակվելն է)։ Բայց դրա համար պահանջվում է, որ նա բավարարություն տա որևէ մարդկային կարիքի, լինի այդ կարիքը դրական թե բացասական ոչ ոք չի փոխանակի իր արդյունքը ուրիշի արդյունքի հետ, եթե այդ վերջինը օգտակար չեղավ իր համար։ Ապրանքը, ուրեմն, պետք է մի*	**№ 3** *Ինչպես մենք տեսանք, ապրանքի կոչումը կայանում է փոխանակված լինելու մեջ։ Բայց այդ հնարավոր է միայն այն դեպքում, երբ նա բավարարություն է տալիս որ և է—միևնույն է՝ իրական թե երևակայական-մարդկային պահանջի։ Ոչ ոք չի փոխանակէ իր արդյունքը, եթէ վերջինը նրան պետք չէ։ Այդպիսով ապ-*	**№ 3** *Ինչպես մենք տեսանք, ապրանքը նպատակ ունի փոխանակվելու։ Սակայն այս պայմանավորվում է նրանով, որ նա պետք է որևէ մարդկային կարիք լրացնի. լինի այդ կարիքն իսկական, թե միայն երևակայական։ Ոչ ոք իր արդյունքն (ПРОДУКТ) ուրիշ արդյունքի հետ չի փոխանակի, եթե վերջինս նրա համար անպետք է։ Ապրանքը պետք է*

Ստ. Շահումյանի թարգմանությամբ (1905)	Ա. Զիլինգարյանի թարգմանությամբ (1922)	Ե. Տեր-Մինասյանի թարգմանությամբ (1930)
օգտակար իր լինի, նա պետք է ունենա սպառողական արժեք): Սպառողական արժեքը պայմանավորվում է ապրանք-առարկայի ֆիզիկական հատկություններով: Սպառողական արժեքները կազմում են հարստության նյութական պարունակությունը՝ անկախ այդ հարստության հասարակական ձևից: Սպառողական արժեքը, ուրեմն, միայն ապրանքի առանձնահատկությունը չէ: Կան սպառողական առարկաներ, որ ապրանքներ չեն, ինչպես օր. մեր վերև տեսած կոմունիստական համայնքի արդյունքները: Կան նույնպես սպառողական արժեքներ, որ բոլորովին աշխատանքի արդյունք չեն, ինչպես օր. անտառային պտուղները, կամ գետի ջուրը: Բայց դրա հակառակը՝ չկա մի այնպիսի ապրանք, որ սպառողական արժեք չունենա: Նույն տեղում, էջ 24: № 4 Ես կարող եմ կազմել հավասարություն այս ձևով	րանքը ամենից առաջ պետք է օգտակար առարկա լինի, պետք է սպառողական արժեք ունենա: Սպառողական արժեքը ստեղծում են իրական ապրանքի ֆիզիկական հատկությունները: Սպառողական արժեքները կազմում են հարստության իրական բովանդակությունը՝ անկախ նրա հասարակական ձևից: Սպառողական արժեքը հետևաբար ապրանքի բացառապես հատուկ հատկությունը չէ: Կան սպառողական արժեքներ, որոնք չեն ներկայացնում իրենցից ապրանքներ, օրինակ, ինչպես մենք վերը տեսանք կոմունիստական համայնքի արտադրության արդյունքները, կան և այնպիսի սպառողական արժեքներ, որոնք բնավ աշխատանքի արդյունքներ չեն, օրինակ, մրգերը նախնական անտառում կամ ջուրը գետում: Ընդհակառակը, չկա ապրանք, որ սպառողական արժեք չունենա: էջ 22:	ուրեմն մի օգտակար իր լինի, նա պետք է Սպառողական արժեք ունենա: Սպառողական արժեքը որոշվում է ապրանքի մարմնի ֆիզիկական հատկություններով: Սպառողական արժեքներն են կազմում հարստության նյութական բովանդակությունը, ինչպիսի հասարակական ձև էլ ունենալու լինի այդ հարստությունը: Սպառողական արժեքն ուրեմն այնպիսի մի հատկություն չէ, որ հատուկ է միայն ապրանքին: Գոյություն ունեն սպառողական այնպիսի արժեքներ, որոնք ապրանք չեն, օրինակ, ինչպես մենք վերևում տեսանք որևէ կոմունիստական համայնքի արդյունքները, մինչև անգամ այնպիսի սպառողական արժեքներ կան, որոնք ամենևին աշխատանքի արդյունք էլ չեն, ինչպես, օրինակ, պտուղները նախնական անտառում, գետերի ջրերը: Ընդհակառակն, չկա ոչ մի ապրանք, որ սպառողական արժեք չունենա: էջ 30:

Ստ. Շահումյանի թարգմանությամբ (1905)	Ա. Ջիլինգարյանի թարգմանությամբ (1922)	Ն. Տեր-Մինասյանի թարգմանությամբ (1930)
20 արշին կտավի 10 ֆունտ թեյի 1 բաճկոնը= 40 ֆունտ սուրճի 5 ցենտներ երկաթի 1 սամար ցորենի և այլն Բայց ես կարող եմ նաև դարձնել հավասարությունը և ասել 20 արշին կտավը 10 ֆունտ թեյը 40 ֆունտ սուրճը= 1 բաճկոնի 5 ցենտ. երկաթը 1 սամար ցորենը Նույն տեղում, էջ 50:	№ 4 Ես կարող եմ համեմատել հավասարությունը: 20 արշին քաթանի 10 ֆունտ թեյի 1 սերթուկը=40 ֆունտ սուրճի $7^1/_2$ փութ երկաթի 1 չետվերտ ցորենի և այլն: Բայց ես կարող եմ շրջել այն և ասել 20 արշին քաթանը 10 ֆունտ թեյը 40 ֆունտ սուրճը=1 սերթուկի $7^1/_2$ փութ երկաթը 1 չետվերտ ցորենը և այլն: էջ 43:	№ 4 Ես կարող եմ հետևյալ հավասարությունը կազմել. 20 արշին քաթանի 10 ֆունտ թեյի 40 ֆունտ սրճի 1 սերթուկն=5 ցենտներ երկաթի 2 շեֆֆել ցորենի և այլն: Ես կարող եմ շուռ տալ այդ հավասարությունը և ասել. 20 արշին քաթանը 10 ֆունտ թեյը 40 ֆունտ սուրճը=մի սերթուկի 5 ցենտներ երկաթը 2 շեֆֆել ցորենը և այլն: էջ 42:
№ 5 Փողի առաջին ֆունկցիան կայանում է նրանում, որ նա ծառայում է իբրև **արժեքաչափ**, որ նա մատակարարում է ապրանքների աշխարհին այն նյութը, որի միջոցով արտահայտվում է արժեքը: Նույն տեղում, էջ 60:	№ 5 Փողի առաջին գործառնությունը կայանում է այն բանի մեջ, որ որպես արժեքի չափ ծառայի, ապրանքների աշխարհին մատակարարի այն նյութը, որով արտահայտվում է արժեքը: էջ 53:	№ 5 Փողի առաջին ֆունկցիան այն է, որ ծառայի իբրև **արժեքի չափ**, ապրանքների աշխարհին մատակարարի այն նյութը, որով արտահայտվում է արժեքը: էջ 48:

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման և իրագործման ժամանակաշրջանում հայերեն հրատարակվում են մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների և նրանց հավատարիմ աշակերտների շատ աշխատություններ, որոնք քաղաքականապես զինեցին Հայաստանի պրոլետարիատին և աշխատավորությանը՝ ազգային-ազատագրական, հեղափոխական պայքարում: 1917 թ. Բաքվում Աշ. Հովհաննիսյանի թարգմանությամբ լույս տեսավ Կ. Մարքսի «Ինչ պիտի դուրս գա եվրոպական Թուրքիայից» աշխատությունը[35]: Նույն թվականին Թիֆլիսում հրատարակվեց «Կարլ Մարքսի «Պատմական մատերիալիզմը» և հավելյալ արժեքի թեորիան» գիրքը, որը հանրամատչելի ձևով ներկայացնում էր հարցի պատմությունը: Այն գերմաներենից թարգմանել էր Հայկ Ազատյանը: 1919 թ. Թիֆլիսում՝ Դրաստամատ Տեր-Սիմոնյանի թարգմանությամբ լույս տեսավ Ֆ. Էնգելսի «Կոմունիզմի սկզբունքները («Կոմունիստական մանիֆեստ»-ի սկզբնական նախագիծը») աշխատությունը:

«Կոմունիզմի սկզբունքները» աշխատությունը շարադրված է հարց ու պատասխանի (կատեխիզիսի) ձևով: Նրանում Ֆ. Էնգելսը առաջադրել է 25 հարց, այդ թվում՝ «Ի՞նչ է կոմունիզմը», «Ի՞նչ է պրոլետարիատը», «Ինչպե՞ս է ծագել պրոլետարիատը», «Ինչպե՞ս է տարբերվում պրոլետարիատը ստրուկից», «Ինչո՞վ է տարբերվում պրոլետարիատը ճորտից», «Ինչպե՞ս է տարբերվում պրոլետարիատը մանուֆակտուրային բանվորից», «Բուրժուա կամ բուրժուական դասակարգը», «Ի՞նչ տեսակ պիտի լինի նոր հասարակարգը», «Հնարավո՞ր է արդյոք մասնավոր սեփականության ոչնչացումը խաղաղ ճանապարհով», «Հնարավո՞ր կլինի արդյոք միանգամից ոչնչացնել մասնավոր սեփականությունը», «Զարգացման ի՞նչ ընթացք կընդունի այս հեղափոխությունը», «Կարող է այս հեղափոխությունը կատարվել որևէ երկրում», «Ի՞նչպիսին կլինեն մասնավոր սեփականության վերջնական ոչնչացման հետևանքները», «Ի՞նչպիսի ազդեցություն կգործի կոմունիստական

---

35 Կ. Մարքս, Ի՞նչ պիտի դուրս գա եվրոպական Թուրքիայից... գերմաներենից թարգմանեց Աշոտ Հովհաննիսյանը՝ Օյաղանովի մեկնաբանություններով, Բաքու, ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեին կից «Արշալույս» հրատարակչություն, 1917: Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունների հայերեն հրատարակությունների մասին տե՛ս «Հիսուն տարում», Մատենագիտություն ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի հրատարակությունների: 1923—1973, Երևան, 1973, էջ 13—17, 49—54:

հասարակարգը ընտանիքի վրա», «Ի՞նչպես կվերաբերվի կոմունիստական կազմակերպությունը դեպի գոյություն ունեցող ազգությունները», «Ի՞նչով են զանազանվում կոմունիստները սոցիալիստներից», «Ի՞նչպես ենք վերաբերվում մեր ժամանակի մնացած քաղաքական կուսակցություններին» և այլն։ Այս ամենը շարադրված է հանրամատչելի լեզվով, որը և ժողովրդականացնում է կոմունիզմի հիմնական սկզբունքները։

Հարկավոր է նկատել, որ «Ի՞նչով է զանազանվում պրոլետարը արհեստավորից» (9-րդ հարց), պատասխանի ձեռագիրը ընդհատվում է, «Ի՞նչպես կվերաբերվի կոմունիստական կազմակերպությունը դեպի գոյություն ունեցող ազգությունները» (22-րդ) և «Ի՞նչպես է նա վերաբերվելու գոյություն ունեցող կրոններին» (23-րդ հարց), պատասխանի դիմաց գրված է «остается»։

Այդ, հավանաբար, նշանակում է պատասխանը պետք է մնա այն ձևակերպմամբ, ինչպես դա եղել էր Կոմունիստների միության մեջ չհասած նախնական նախագծերից մեկում։

«Կոմունիզմի սկզբունքները» երկում կան որոշ մանրամասներ, որոնք ավելի են հարստացնում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստում» առաջադրած գաղափարները։ Հատկապես հանգամանորեն է շարադրված արդյունաբերական պրոլետարիատի առաջացումը, նրա պատմական դերը։ Կոմունիզմը,— ասում է Ֆ. Էնգելսը,— պրոլետարիատի ազատագրման պայմանների գիտություն է։

Հետագայում մեկը մյուսի հետևից լույս են տեսնում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մյուս աշխատությունները, որոնք ձևավորում են հայ մարքսիստական միտքը, տարածում կոմունիստական գաղափարներ։

2

Վ. Ի. Լենինի աշխատություններից հայերեն առաջին անգամ լույս են տեսել «Միապետությունը տատանվում է...»* հոդվածը և «Ծանուցումը» Կազմակերպիչ կոմիտե «կազմելու առթիվ»-ի վերջաբանը ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի օրգան «Պրոլետարիատի կռիվը» թերթի 1903 թ. № 2—3-ում (ապրիլ-մայիս)։ Վ. Ի. Լենինը մերկացնելով ցարական ինքնակալությունը և նրա 1903 թ. փետրվարի 26-ի մանիֆեստը, «Միապետությունը տատան-

* Այստեղ և հաջորդ էջերում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատությունների վերնագրերը տրվում են այն ժամանակվա թարգմանությամբ։

վում է...» հոդվածում նշել է, թե ցարն արդեն զգում է, «...որ անդարձ անցնում են այն ժամանակները, երբ Ռուսիայում կարող էր պահվել աստուծո ողորմածությամբ կառավարությունը, որ Ռուսաստանում միակ հաստատուն կառավարությունը այսուհետև կարող է լինել ժողովրդի կամքով *կառավարությունը»*[36]:

«Պրոլետարիատի կռիվը» թերթի այդ նույն համարում տպագրվել է Գ. Վ. Պլեխանովի «Կարլ Մարքս» հոդվածը, նվիրված գիտական կոմունիզմի մեծ հիմնադրի մահվան 20-ամյակին: Նրանում Գ. Պլեխանովը հավաստում էր, որ մարքսիզմը դարձել է բանվոր դասակարգի հեղափոխական գիտական աշխարհայացքը: «Եթե սոցիալիզմը այժմ գիտությունների շարքն է անցել, դրանում մենք Մարքսին ենք պարտական: Եվ եթե գիտակցող պրոլետարներն այժմ լավ հասկանում են, որ բանվոր դասակարգի վերջնական ազատության համար անհրաժեշտ է սոցիալիստական հեղափոխություն և որ այդ հեղափոխությունը հենց իր՝ բանվոր դասակարգի գործը պետք է լինի, եթե նրանք այժմ բուրժուական կարգերի անհաշտ ու անխոնջ թշնամիներն են՝ դրա մեջ երևում է գիտական սոցիալիզմի ազդեցությունը»[37]:

1903 թ. մայիսին Ժնևում լույս տեսավ Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությանը» բրոշյուրը, որի նպատակն էր գյուղացիներին հանրամատչելի ձևով պարզաբանել ՌՍԴԲԿ ագրարային ծրագիրը: Իլյիչը պատրաստել էր այդ բրոշյուրի պլանի մի քանի տարբերակներ: Հավելվածում տրված էր ՌՍԴԲԿ ծրագրի նախագծի տեքստը, որի ներածությունը գրել էր Վ. Ի. Լենինը: «Գյուղական չքավորությանը» բրոշյուրը անլեգալ փոխադրվել է Ռուսաստան և տարածվել երկրի շատ ու շատ վայրերում: Այն հասել է նաև Կովկաս: Բրոշյուրը ուսումնասիրվում էր մարքսիստական ընդհատակյա խմբակներում, լենինյան իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններում, հեղափոխական պարապմունքների ընթացքում, բանակում և նավատորմում: Ոչ լրիվ տվյալներով լենինյան բրոշյուրը 1903 թ. մայիսից մինչև 1905 թ. դեկտեմբերը տարածվել է Ռուսաստանի 39 քաղաքներում և 15 նահանգներում[38]:

1904 թ. սկզբին Ս. Շահումյանը, Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությանը» բրոշյուրը թարգմանել է հայերեն և հրատարակել

---

36 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 6, էջ 435*:

37 *«Պրոլետարիատի կռիվը», 1903, № 2—3, էջ 4*:

38 *Տե՛ս* Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 6, ծանոթ. № 86*:

633—19

ՌՍԴԲԿ Կենտկոմին կից Ժնևի հրատարակչական հանձնաժողովի գրիֆով: Թեև մեր ձեռքի տակ չկա այդ գրքույկի հայերեն առաջին հրատարակության օրինակը, բայց ժնևյան հանձնաժողովի հաշվետվություններից երևում է, որ այն թարգմանվել և մարքսիստական այլ գրականության հետ մեկտեղ ընդհատակյա առաքվել է Կովկաս:

1904 թ. մարտին Ժնևում հայերեն հրատարակվել է ՌՍԴԲԿ Կենտկոմի՝ «Ռուսաստանի պրոլետարիատին» նշանավոր թռուցիկը, որը գրել է Վ. Ի. Լենինը:

Նախասովետական շրջանում Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանություններն ու հրատարակություններն առանձնապես մեծ ծավալ են ստացել ռուսական առաջին հեղափոխության տարիներին և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման ու իրագործման ժամանակաշրջանում: Միայն 1903—1917 թթ. պարբերական մամուլում և առանձին գրքերով հայերեն հրատարակվել է Վ. Ի. Լենինի 28 աշխատություն[39]*:*

1905—1907 թթ. ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն, ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի, Ալեքսանդրապոլի և այլ կոմիտեները իրենց ընդհատակյա տպարաններում հայերեն լույս են ընծայել Վ. Ի. Լենինի բազմաթիվ աշխատություններ, այդ թվում՝ «Պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական դեմոկրատական դիկտատուրայի մասին» (թարգմանված է «Վպերյոդ»-ի 1905 թ. № 14-ից), «Երրորդ համագումարի որոշումը՝ Կովկասում պատահած անցքերի մասին», «Երրորդ համագումարը», «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները», «Պետական կազմի երեք սահմանադրություն կամ երեք կարգ», «Ծանուցումը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության երրորդ համագումարի մասին», «Նոր վերելք», «Փոթորկից առաջ», «ՌՍԴԲԿ կուսակցության երկու տակտիկան պետական դումայի վերաբերյալ» և այլն[40]*:*

---

39 *Տե՛ս* Խ. Հ. Բարսեղյան, *Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների պատմություն, Երևան, 1969:*

40 *Տե՛ս «Պրոլետարիատի կռիվը», № 6, 1 (14) հունիսի 1905 թ., «Կայծ», № 14, 14 մայիսի 1906 թ.: «Նոր խոսք», № 6, 31 օգոստոսի 1906 թ.: «Բանվորի ձայնը», № 1, 18 մարտի 1906 թ.: Տե՛ս* Խ. Հ. Բարսեղյան, *Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների պատմություն, Երևան, 1969, էջ 50, 139, 167, 168:*

Վերոհիշյալ աշխատություններում արտացոլված են ռուսական առաջին հեղափոխության ընթացքում բոլշևիկների տակտիկան, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի լենինյան տեսությունը, Կովկասում ծավալված հեղափոխական իրադարձությունները, ՌՍԴԲԿ III համագումարի ծրագրային որոշումները։ ՌՍԴԲԿ III համագումարում Կովկասի իրադարձությունների մասին Վ. Ի. Լենինի ներկայացրած բանաձևի նախագծում ասված է. «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության երրորդ համագումարը Ռուսաստանի գիտակից պրոլետարիատի անունից ջերմագին ողջույն է հղում Կովկասի հերոսական պրոլետարիատին ու գյուղացիությանը և կուսակցության Կենտկոմին ու տեղական կոմիտեներին հանձնարարում է ամենաեռանդուն միջոցներ ձեռնարկել՝ Կովկասի գործերի դրության մասին ամենալայն կերպով տեղեկություններ տարածելու բրոշյուրների, միտինգների, բանվորական ժողովների, խմբակային զրույցների և այլ միջոցներով, ինչպես նաև ժամանակին աջակցություն ցույց տալու Կովկասին՝ զինված ուժով»[41]։

Բոլշևիկյան «Նոր խոսք» (Թիֆլիս) 1906 թ. օգոստոսյան համարում «Պրոլետարի» թերթի № 1-ից թարգմանվել և տպագրվել է Վ. Ի. Լենինի «Փոթորկից առաջ» հոդվածը։ Լենինյան աշխատությունն ավարտվում է Մաքսիմ Գորկու «Մրրկահավի երգը» ստեղծագործությունից բերված՝ «Թող ուժգին թնդա փոթորիկը» քաղվածքով։ «Նոր խոսք»-ը այդ տողերից հետո ավելացրել է. «Ամբողջ սրտով միանում ենք «Պրոլետարի»-ի այդ խոսքերին, միաժամանակ նրա հետ գոչելով «Թող թնդա փոթորիկը»։

Այդ տարիներին Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանության ու հրատարակման գործում աչքի ընկնող դեր են խաղացել «Կայծ», «Նոր խոսք», «Բանվորի ձայն» թերթերը, որոնք հրատարակվում էին Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ս. Կայանի (Տեր-Գասպարյան) խմբագրությամբ։ Ստոլիպինյան ռեակցիայի տարիներին, թեև պակասեցին Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանությունները, բայց Հայաստանի մարքսիստները չթուլացող եռանդով շարունակում էին բնագրերով ուսումնասիրել Իլյիչի աշխատությունները, հատկապես մենշևիկ-լիկվիդատորների և օտզովիստների դեմ գրած հոդվածները, «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գիրքը։

---

41 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 8, էջ 536—537։*

Անդրկովկասի աշխատավորները ջերմորեն արձագանքեցին մեծ Հոկտեմբերին։ Երկրամասում պրոլետարական Բաքուն առաջինը դարձավ ազատարար Հոկտեմբերի դրոշակակիրը։ Բաքվի բազմազգ պրոլետարիատի 1918 թ. ապրիլի 1-ին վառած ջահը՝ Հերոսական կոմունան ուղի ցույց տվեց Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի աշխատավորությանը, որոնք կռիվներով եռամյա պայքարում և լցված լինելով անհուն հավատով, հաղթանակեցին։

1918—1920 թթ. մամուլում և առանձին գրքերով հայերեն հրատարակվեցին Վ. Ի. Լենինի 50 աշխատություն։ Առանձին գրքույկով լույս տեսան՝ «Նամակ ամերիկյան բանվորներին» (Մոսկվա, 1918), «Կարլ Մարքս։ Համառոտ կենսագրություն և մարքսիզմի շարադրանքը» (Մոսկվա, 1918), «Ինչ պետք է լինի մեր կուսակցության անունը» (Մոսկվա, 1919), «Երրորդ Ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ» (Մոսկվա, 1919), «Թեզիսներ բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի մասին» (Թիֆլիս, 1919), «Միջին գյուղացիության մասին» (Թիֆլիս, 1919), «Պետություն և հեղափոխություն» (Մոսկվա, 1920), «Մեծ նախաձեռնություն» (Մոսկվա, 1920), «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի ամենաբարձր փուլը» (Մոսկվա, 1920) և այլն։

Հոկտեմբերի շրջանում լենինյան աշխատությունների հայերեն հրատարակությունների կազմակերպման ասպարեզում արդյունավետ գործունեություն է ծավալել ՌՍՖՍՀ Ազգությունների ժողկոմատի Հայկական գործերի Կոմիսարիատը, որը ղեկավարել են Վարլամ Ավանեսովը և Վահան Տերյանը։

Հայկական գործերի կոմիսարի տեղակալ, բոլշևիկ, ՌՍՖՍՀ Կենտգործկոմի անդամ, բանաստեղծ Վ. Տերյանը 1918 թ. հմտորեն թարգմանեց Վ. Ի. Լենինի «Կարլ Մարքս», իսկ 1919 թվականին՝ «Պետություն և հեղափոխություն» աշխատությունները։ «Պետություն և հեղափոխություն» գրքի տերյանական թարգմանության «Երկու խոսք»-ը գրել է Պ. Մակինցյանը, իսկ վերջաբանը՝ «Պետություն և հեղափոխությունը հայերեն»՝ Ա. Մյասնիկյանը։ «Երկու խոսք»-ում (22 դեկտեմբերի 1920 թ.) Պ. Մակինցյանը նշում է, որ նույնիսկ նրա հարուստ ու ճոխ լեզվի և ոճի առկայության պայմաններում, դժվար է սույն գրքի թարգմանությունը։ Խոսելով այն ժամանակվա քաղաքական հայ տերմինաբանության, հեղափոխական բառապաշարի աղքատության մասին, Մակինցյանը գրել է. ավելի զարգացած լեզվից պակաս մշակված լեզվի վերածելիս՝ թարգմանիչը դեմ է առնում հատուկ դժվարությունների, մանավանդ, եթե

նյութը բարդ է։ Թարգմանության միջոցով մենք հեղափոխական մթնոլորտում հասունացած հասկացությունները տեղափոխում ենք մեր երկիրը, որտեղ այդ հասկացությունների համապատասխան լեզվային միջոցները օրգանապես չեն աճել։ «Վահան Տերյանը, որ այնպես ճոխ, փարթամ հայերենով արտահայտել է ինտելիգենտ մարդու զգացումներն ու տրամադրությունները, նույն ինտելիգենտ մտածողությունն ու մտապատկերները նկարագրելիս նեղվում է լեզվային միջոցների պակասից, անգամ բացակայությունից։

Ներկա աշխատությունը թարգմանչական գործի մի շարք դժվարություններ հաղթահարելու փորձեր է պարունակում»[42]։ Այնուհետև նա նշում է, որ «Հայոց կոմիսարիատում Վահան Տերյանի օրոք քանիցս խոսք է բացվել հատուկ տերմինաբանական հանձնաժողով գումարելու, թարգմանիչների գործը կանոնավորելու և դյուրացնելու նպատակով։ Ինչ-ինչ պատճառներով այդ գործը Մոսկվայում գլուխ չեկավ։

Թերևս խորհրդային Հայաստանում իրագործվի այդ»[43]։

Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների պատմության մեջ ուշագրավ էջ է կազմում Ա. Մյասնիկյանի «Պետություն և հեղափոխություն»-ը հայերեն վերջաբանը։ Լենինյան դասական այս երկը գնահատված է մարքսիստական բարձրակետից, պատշաճ ձևով են գրվատված Վ. Տերյանի թարգմանության արժանիքները։

Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն» գիրքը,— գրել է Ա. Մյասնիկյանը,— նորագույն հասարակական պատմության համար մի խոշոր անկյունաքար է կազմում։ Կարելի է համարձակորեն ասել, որ այդ գիրքը հանճարեղ ստեղծագործություն է։ Ըստ իս՝ Մարքսի «Կապիտալ»-ից հետո, իր նշանակությամբ, խորությամբ ու պարզությամբ սա երկրորդ գիրքն է։— Եվ ահա թե ինչու։

Հին սոցիալիստները Երկրորդ ինտերնացիոնալի բանակից վերջ ի վերջո դավաճանեցին մարքսիզմին՝ թե՛ գաղափարապես և թե՛ գործնականում։ Երկրորդ կարգի դավաճանությունը հասկանալի դարձավ մեծ իմպերիալիստական կռվի ընթացքում։ Առաջին տեսակի դավաճանությունը վաղուց ևեթ բուն է դրած եղել սոցիալ-դեմոկրատական շրջաններում, բայց մասսաները և շատ ու շատ անկեղծ, ոգևորված առաջավորները չէին նկատում այն։ Երկրում

---

42 Տե՛ս Վ. Ի. Լենին, *Պետություն և հեղափոխություն*, Մոսկվա, 1920, էջ 3։

43 Նույն տեղում, էջ 4։

ինտերնացիոնալի տակտիկան այն աստիճան խոհեմ, խորամանկ ու նուրբ էր, որ ճռճռան բառերի տակից շատ դժվար էր դուրս բերել իրականը, իսկականն ու էականը: Այնուհետև Ս. Մյասնիկյանը գրել է. «Մարքսն ու Էնգելսը շատ են գրել պրոլետարիատի դիկտատուրայի, պրոլետարական հեղափոխության և սոցիալիստական պետության մասին: Նրանք քանիցս խոսել են կոմունիզմի ու սոցիալիզմի մասին, քաշելով նրանց միջև որոշ և հայտնի գիծ, սակայն կարողացե՞լ են արդյոք նրանց կոմենտատորները: Ո՛չ և ո՛չ: Երկրորդ ինտերնացիոնալի սոցիալիստներն այդ խնդիրների կողքից անցել են միշտ զարմանալի թեթևամտությամբ, անհասկանալի թեթևությամբ:

Պրոլետարիատի դիկտատուրա: Դա մի ցանկություն է, մի ինչ-որ անբացատրելի հեռավոր ապագա է սոցիալ-դեմոկրատի համար: Դեպի այն կարելի էր գնալ պառլամենտական խաղաղ կռվով, ընտրողական պայքարով, պրոպագանդայով, մեծամասնության սոցիալիստական դաստիարակությամբ, ինչով կուզեիք, բայց ոչ հեղափոխության, ապստամբության միջոցով, փողոցի կռվով: Մեզ բոլորիս էլ այդ կրթությունն էր աշխատում տալ սոցիալ-դեմոկրատիան:

Պրոլետարական հեղափոխություն: Սա էլ ոչ այլ ինչ է, եթե ոչ հանգիստ կերպով մեծամասնություն դարձած ճնշված դասակարգերի քվեական հաղթարարությունը հօգուտ նոր հեղափոխության: Իսկ ինչ էր տալու այդ հեղափոխությունը, ինչ բովանդակություն էր ունենալու նա, սրա մասին սոցիալիստները չէին էլ մտածում:

Պրոլետարական պետություն կոչվածը սոցիալ-դեմոկրատի համար մի դատարկ հնչյուն է եղել: Մարքսի հայտնի դարձվածքը «Գոթայի ծրագրի քննադատությունը» գրքույկից, թե՝ «Կապիտալիստական ու կոմունիստական հասարակության միջև ընկնում է մի շրջան, երբ առաջինը հեղափոխական ձևով փոխակերպվում է երկրորդին: Այդ շրջանին համապատասխանում է նաև անցման մի քաղաքական շրջան, և այդ շրջանի պետությունն ուրիշ ոչինչ չի կարող լինել, բացի պրոլետարիատի հեղափոխական դիկտատուրայից». այս դարձվածքը ոչ թե միայն անհասկանալի է մնացել սոցիալ-դեմոկրատական սերնդին, այլ նույնիսկ պահ է տրված եղել փոշու ու մագաղաթների թանձր ծածկոցի տակ»:

Վ. Ի. Լենինի անգնահատելի ծառայությունն այն է, ասում է նա,— որ առաջինը եղավ հին սոցիալիստական բանակում, որ դուրս գալով նրանից՝ կտրուկ ու համարձակ դրեց մասսաների

առաջ այն խնդիրների այժմեականությունը և տվեց նրանց իսկական ու հեղափոխական, ուստի և գիտական բացատրությունը։ «Իր այս գրքում Վ. Ի. Լենինը ցույց է տալիս,— գրել է Ա. Մյասնիկյանը,— որ Մարքսն ու Էնգելսը միշտ էլ ջոկել են սոցիալիզմը կոմունիզմից, որ նրանք վերջինս համարում են ավելի բարձր հասարակարգ, քան առաջինը, որ կոմունիզմին կարելի է հասնել սոցիալիզմի միջոցով, որ դրա համար պետք է ստեղծել պրոլետարական պետություն, որից վերջ կլինի կոմունիզմը, քանի որ նա կարիք չի զգա առհասարակ որևէ պետական կազմի, որ այդ պետությունը առաջ կգա և կզարգանա պրոլետարիական դիկտատուրայի կամ իշխանության միջոցով, և որ առանց ապստամբության, բռնի ուժի և արյուն թափելու, անհնար է հասնել դիկտատուրայի։ Այստեղ մեր առաջն է ցցվում բուրժուական կամ առհասարակ դեմոկրատիայի խնդիրը։ Առաջին դեմոկրատիային համապատասխանում է բուրժուական կամ կապիտալիստական պետությունը (պառլամենտարիզմը), իսկ երկրորդին՝ սոցիալիստական կամ սովետական իշխանությունը։

Այն, ինչ որ կատարվում է մեր աչքերի առաջ Ռուսաստանում, Ուկրաինայում, արևելյան ազգերի մոտ, Ադրբեջանում ու Հայաստանում, իսկ վաղը պիտի լինի և մյուս երկրներում, այդ ամենը տարկայորեն ապացուցում է մարքսիզմի հանճարեղ ուսմունքի ճշմարտությունը և նրա նույնքան հանճարեղ պարզաբանության իրավացիությունը։ Ահա թե ինչու մենք այն համարում ենք երկրորդ «Կապիտալ»։ «Կապիտալ»-ը տվեց մարդկության կապիտալիստական տնտեսության ու կազմի ըմբռնողության բանալին. «Պետություն և հեղափոխություն»-ը մեր առաջ բաց է անում պրոլետարիատի հեղափոխության դռները։ Ով չի իմանա այս բանը, ով չի ուսումնասիրի այս փոքրիկ գրքույկը, ով չի ըմբռնի նրա էականը, նա կույրի գին չի ունենա նոր ժամանակների շինարար աշխատանքի համար»[44]։

Ա. Մյասնիկյանը հմուտ կերպով վերլուծելով լենինյան աշխատությունը, պրոպագանդելով նրա անմահ գաղափարները, ասում է՝ հանգուցյալ Վահան Տերյանը շատ լավ էր ըմբռնում մարքսիզմի այդ գաղափարական հիմունքները։ Հոկտեմբերյան օրերին Ռուսաստանի պրոլետարիատի հետ միասին և նրա շարքերում նա էլ

---

44 Տե՛ս Վ. Ի. Լենին. Պետություն և հեղափոխություն, Մոսկվա, 1920, էջ 145—146, նույնը՝ Ա. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 270—272։

դուրս եկավ բարիկադ, տակավին մինչ Հոկտեմբերը նա կռիվ էր մղում մանրբուրժուական անբարոյականացնող կարգերի դեմ։ Ահա թե ինչու մի հայ բանաստեղծ կարևոր համարեց Լենինի խոշոր գրվածքը հայ ընթերցողին ներկայացնել դեռ այն ժամանակ, երբ նա տքնում էր հայ ու եվրոպական ենիչերիների դժնդակ լծի տակ։

Տերյանի թարգմանությունը իսկապես նրա հեղափոխական պատգամն է հայ պրոլետարիատին։ Տերյանն այսուհետև անբաժանելի է պրոլետարիատից և մասնավորապես հայ աշխատավորներից։ Նրա համար նա աշխատեց երկար ժամանակ, կռվեց նրա համար և այդ կռվում ստացավ մահացու վերք։ Նա մինչև իր վերջին շունչը հավատարիմ մնաց պրոլետարիատին։ Հեռավոր Օրենբուրգում, մինչև վերջին պահը նա ամուր կանգնած հեղափոխության ու կոմունիզմի դիրքերում և պրոլետարիատի հոգսերով մտահոգված, կնքեց իր մահկանացուն։

Մեծ գրքի հայկական փարթամ թարգմանությունը,— լինելով մի ուղեցույց աստղ և պրոլետարիատի համար, թող լինի և մի հավետ մահարձան ընկած խոշոր հայ գրողի ու խիզախ մարտիկի հեռավոր ու անշուք շիրիմի վրա[45]։

Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն» աշխատության թարգմանությամբ Վ. Տերյանը նոր ակոս ձգեց հայ քաղաքական հեղափոխական թարգմանական գրականության, հատկապես հայկական լենինապատման պատմության մեջ, հարստացրեց հայկական հեղափոխական-մարքսիստական գրականության տերմինաբանությունը։

Վ. Տերյանի գրչին է պատկանում «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» բրոշյուրը, որտեղ հանրամատչելի ձևով բացատրում է մեծ Հոկտեմբերի նշանակությունը, կուսակցության ագրարային ծրագիրը, մեծարում Իլյիչին։ «Լենինը շատ պայծառ է և զարմանալի... և պարզ»,— գրել է Վ. Տերյանը։

Ա. Մյասնիկյանը և Պ. Մակինցյանը իրենց խմբագրական աշխատանքով ուղի հարթեցին մարքսիստ հրապարակախոսների համար։

Հենվելով Վ. Ի. Լենինի ագրարային հարցի մասին գրած աշխատությունների, հատկապես 1917 թ. մայիսի 22-ին գյուղական պատգամավորների խորհրդում արտասանած ճառի վրա. Վ. Տերյանը 1917 թ. գրում և 1918 թ. «Բանվորի խոսք» (Բաքու) բոլշևիկ-

45 Նույն տեղում, էջ 272։

յան թերթում հրատարակում է իր հոդվածաշարը, որը 1919 թ. Մոսկվայում, առանձին գրքույկով լույս տեսավ «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» խորագրով: Դա հայկական քաղաքական ինքնատիպ լենինապատում ստեղծելու առաջին լուրջ և հաջող փորձն էր[46]:

Քսանական թվականների հայկական լենինապատման մեջ իր ուրույն տեղն ունի Հարություն Սոլովյանի թարգմանությամբ 1919 թ. Մոսկվայում հրատարակված Վ. Ի. Լենինի «Քաղաքական կուսակցությունները Ռուսաստանում և պրոլետարիատի վերաբերմունքը» աշխատությունը:

1917—1920 թթ. լենինյան մի շարք աշխատություններ հրատարակվեցին բոլշևիկյան հայ պարբերական մամուլում: Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների երկրային և Թիֆլիսի կոմիտեների օրգան «Բանվորի կռիվը» թերթում մեկը մյուսի ետևից լույս տեսան Վ. Ի. Լենինի «Ի՞նչպես վերջ տալ պատերազմին» (№ 22, 3 սեպտեմբերի 1917), «Ստիպողական միությունների կազմակերպելը» (№ 39, 10 նոյեմբերի, 1917), «Թե ինչպես է կառավարությունը քանդում իր դեմոկրատական կազմակերպությունների աշխատանքը» (№ 44, 17 նոյեմբերի, 1917), «Ֆինանսական անկումը և նրա դեմ կռվելու միջոցները» № 46, 20 նոյեմբերի, 1917), «Կարելի է գնալ առաջ վախենալով մոտենալ սոցիալիզմին» (№ 47, 21 նոյեմբերի, 1917), «Փլզման դեմ կռվելը և պատերազմը» (№ 48, 23 նոյեմբերի, 1917), «Հեղափոխական դեմոկրատիան և հեղափոխական պրոլետարիատը» (№ 49, 24 նոյեմբերի, 1917), «Ընկեր Լենինի ճառը գյուղացիական համագումարում» (№ 52, 28 նոյեմբերի, 1917), «Պետություն և հեղափոխություն» (№ 17, 27 հունվարի, 1918), և այլ աշխատություններ, նամակներ, ճառեր:

Շուշու բոլշևիկյան կազմակերպության օրգան «Նեցուկ» թերթի 1917 թ. սեպտեմբերի 14-ի № 5-ում լույս տեսավ Վ. Ի. Լենինի «Լոզունգների մասին» («Լոզունգների առթիվ») աշխատությունը, որը գրվել է 1917 թ. հուլիսի կեսին: Իլյիչն իր այդ աշխատությամբ, հուլիսյան իրադարձություններից հետո կուսակցությանը կոչ էր անում զինված ապստամբության: Իր հանճարի ամբողջ ուժով լուսավորելով պրոլետարիատի պայքարի ուղին, նա ցույց էր տալիս, որ հուլիսի 4-ից հետո երկրում իրադարձությունն արմատապես

---

46 Տե՛ս «Բանվորի խոսք», № 2—4, 1918: Վ. Տերյան, Երկերի ժողովածու, երեք հատորով, կազմեց և ծանոթագրեց Վ. Պարտիզունի, հատ. II, Երևան, 1961, էջ 349—365:

փոխվել է, իշխանությունը վճռական տեղում անցել է հակահեղափոխության ձեռքը, «Ամբողջ իշխանությունը Սովետներին» լոզունգը տվյալ մոմենտին կհնչեր որպես դոնքիշոտություն կամ որպես ծաղր։ Հայտնի է, որ «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգը հուլիսից մինչև սեպտեմբերի սկիզբը ժամանակավորապես հանվեց։ «Սովետները կարող են և պետք է հանդես գան այդ նոր հեղափոխության մեջ,— գրել է Վ. Ի. Լենինը «Լոզունգների առթիվ» հոդվածում,— բայց ոչ այժմյան Սովետները, ոչ դեպի բուրժուական համաձայնողականություն ցուցաբերող օրգանները, այլ նրա դեմ հեղափոխական պայքար մղող օրգանները։ Որ մենք այն ժամանակ էլ կողմնակից կլինենք ամբողջ պետության կառուցմանը Սովետների տիպով, այդ այդպես է։ Դա սովետների հարցը չէ ընդհանրապես, այլ տվյալ հակահեղափոխության դեմ և տվյալ սովետների դավաճանության դեմ պայքար մղելու հարցը»[47]։

1918 թ. լենինյան շատ աշխատություններ, նամակներ, դեկրետներ և ճառեր են հրապարակվել Բաքվի կոմունայի «Տեղեկատու», Մոսկվայի «Կոմունիստ», Թիֆլիսի «Բանվոր» և այլ պարբերականներում։ «Բանվոր» թերթի 1918 թ. մարտի 8-ի № 7-ում հայերեն հրապարակվեց Վ. Ի. Լենինի՝ 1913 թ. դեկտեմբերի 6-ին ազգային հարցի վերաբերյալ Ստ. Շահումյանին գրած նշանավոր նամակը։ Շահումյանը 1913 թ. Աստրախանի աքսորավայրում Վ. Ի. Լենինից ստանալով ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամների և կուսակցական աշխատողների Պորոնինոյի խորհրդակցության բանաձևը ազգային հարցի մասին, նոյեմբերի 15-ին այդ առթիվ նամակ է գրում Վ. Ի. Լենինին (Շահումյանի այդ նամակը տակավին չի հայտնաբերված), այնտեղ շոշափելով պետական լեզվի, ֆեդերացիայի, ավտոնոմիայի և այլ հարցեր։ Վ. Ի. Լենինը ծանոթանալով Ստ. Շահումյանի նամակին, իր նոյեմբերի 23-ի (դեկտեմբերի 6-ի) նամակում հանգամանորեն քննարկում է դրանք և բարեկամական դիտողություններ անում Շահումյանին, նշում Ռուսաստանում ազգային հարցի լուծման ճիշտ ուղիները։ 1918 թ. մարտի 16(3)-ին Շահումյանը Բաքվի բոլշևիկյան մամուլում առաջին անգամ հրապարակում է Իլյիչի վերոհիշյալ նամակը՝ որոշ մեկնաբանություններով, ցույց տալով, որ ազգերի ինքնորոշման իրավունքի մասին բոլշևիկյան կուսակցության պաշտպանած հայացքները «ճշտորեն արտահայտել է Վ. Ի. Լենինը դեռևս 1913 թ.», որ «Ընկեր Լենինի

---

[47] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 25, էջ 231—232։

նամակից պետք է հասկանալի լինի, որ մենք կողմնակից ենք լինելու անջատման և անջատումը պաշտպանելու ենք այն դեպքում, երբ այդ թելադրում են իրենք, ազգի մեծամասնությունը կազմող մասսաները»[48]։

Վ. Ի. Լենինի վերոհիշյալ նամակն այդ օրերին հրապարակվել է նաև «Պրավդա» և «Իզվեստիա» թերթերում[49]։

Լենինյան աշխատությունների հայերեն հրատարակությունները Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության իրականացման և Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման համար մղած գոտեմարտերում լուսավորեցին Հայաստանի աշխատավորության ազատագրական պայքարի ուղին։

Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն թարգմանությունները լայն ծավալ ստացան Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո։ Առաջին փորձը Վ. Ի. Լենինի 1920 թ. դեկտեմբերի 2-ի պատասխան հեռագիրն էր՝ ուղղված Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Կասյանին, որը լույս տեսավ «Կոմունիստ» (Բաքու), «Կարմիր աստղ» (Կրասնոդար), «Կարմիր աստղ» (Թիֆլիս), «Կոմունիստ», «Խորհրդային Հայաստան» (Երևան) և այլ թերթերում։

Վ. Ի. Լենինի ողջույնը թևավորեց Սովետական Հայաստանի աշխատավորությանը, նրանց մղեց նոր սխրանքների։

1921 թ. «Կոմունիստ»-ի գրադարան» մատենաշարով հայերեն լույս տեսավ Վ. Ի. Լենինի «Ձախության» երեխայական հիվանդությունը կոմունիզմի մեջ» (Թիֆլիս, Գյուղցենտրոպեչատ, 122 էջ) աշխատությունը, որը կարևոր դեր խաղաց Հայաստանի կոմկուսի գաղափարական կյանքում։ Այդ ժամանակ հայ պարբերական մամուլում հրատարակվեցին լենինյան շուրջ 20 աշխատություն, այդ թվում՝ Վ. Ի. Լենինի եզրափակիչ խոսքը ՌԿ(բ)Կ կոնֆերանսում, «Նոր ժամանակներ, հին սխալներ նոր կերպարանքով», «Պարենավորման տուրքի մասին», «Մանրբուրժուազիայի տնտեսական ուժեղացումը և սոցիալիզմի շահերը», և այլ հոդվածներ ու ճառեր[50]։

---

48 Ստ. Շահումյան, *Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 40։*

49 *Նամակը տե՛ս* Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 19, էջ 623—627, նույնը՝* Ստ. Շահումյան, *Նամակներ, էջ 34, 38։*

50 *Տե՛ս «Խորհրդային Հայաստան», № 101, 107, 207, 224, 257, 1921, «Կարմիր աստղ» (Թիֆլիս), № 82, 84, 85, 89, 176, 178, 209, 1921, «Ավանգարդ», № 17, 1921 և այլն։*

Սովետական Հայաստանում մարքսիստական մտքի, փիլիսոփայության զարգացման գործում ծանրակշիռ դեր է խաղացել Վ. Ի. Լենինի «Մարտնչող մատերիալիզմի մասին» աշխատությունը որն առաջին անգամ հրապարակվել է 1922 թ.՝ «Պոդ զնամենեմ մարքսիզմա» պարբերականում: Լենինյան այդ երկի հրապարակ գալուն անմիջական առիթ է ծառայել նույն թվականի փետրվարին համանուն ամսագրի առաջին միացյալ համարի (№ 1—2) տպագրությունը: Այն լույս է տեսել Վահան (Վաղարշակ) Տեր-Վահանյանի խմբագրությամբ՝ 5000 տպաքանակով: Կյանքից կտրված գրքային ու վերացականորեն շարադրելով ամսագրի խնդիրները, «Խմբագրության կողմից»-ում հայտարարվում էր, թե երկրում վրա հասած «ժամանակավոր անդորրը» պետք է օգտագործվեր «գիտելիքների ամբողջացման» համար: Դրան հաջորդում էր «Լ. Դ. Տրոցկու նամակը», որը հավակնություն ուներ Առաջաբանի դեր խաղալու, բայց իրականում գրված էր վերացական, տիրացուական ոճով: Նրանում չէին դրված մարքսիստական փիլիսոփայության կուսակցականության պրոբլեմը, ժամանակակից բնագիտության հետ նրա կապի հարցը, մատերիալիստական դիալեկտիկայի տեսության և գիտական աթեիզմի պրոպագանդայի հետագա զարգացման խնդիրները: Հարկավոր էր ճիշտ կողմնորոշում տալ ամսագրին, ուղղել նրա գիծը, հստակ դարձնել նրա բովանդակությունը, այդ ամենը սերտորեն կապելով սովետական հասարակության, գիտության, ինչպես և միջազգային կոմունիստական շարժման գաղափարական պայքարի, մարքսիստական-լենինյան տեսության կենսական պահանջների հետ: Դա պատմական դժվարին ու բարդ մի խնդիր էր, որը կուսակցության XI համագումարի բացման նախօրյակին փայլուն կերպով իրականացրեց Վ. Ի. Լենինը:

Իլյիչի առողջական վիճակը լավ չէր: Այդ ժամանակ նա գտնվում էր Մոսկվայի մերձակա Տրոիցկոե-Լիկովո գյուղի մոտ՝ Կորզինկինո հանգստավայրում և աշխատում էր ՌԿ(բ)Կ XI համագումարին ներկայացվող Կենտկոմի քաղաքական հաշվետվության վրա: Վ. Ի. Լենինը, որ մինչև մարտի 25-ը մնաց այդտեղ, ծանոթացավ հակակրոնական թեմաներով բազմաթիվ բրոշյուրների հետ, ընթերցեց գերմանացի գիտնական Արթուր Դրևսի «Քրիստոսի առասպելը», Ն. Է. Սինկլերի «Կրոնի մարգարեները» և «Պոդ զնամենեմ մարքսիզմի» ամսագրի անդրանիկ համարը, հանգեց այն եզրակացության, որ հրապարակի վրա եղած աշխատություններում

խորությամբ չի շոշափված հակակրոնական պրոպագանդան, այն չի կապակցված բնագիտության հետ, անբավարար են բացահայտված կրոնի սոցիալական արմատները։ Վ. Ի. Լենինը միաժամանակ նկատեց, որ թույլ է ամսագրի անդրանիկ համարը, որի խնդիրն էր մարտնչող մատերիալիզմի և աթեիզմի պրոպագանդան։ Նա գրեց իր նշանավոր «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» աշխատությունը, որով և բացվում է ամսագրի երրորդ համարը։

Ուշագրավ է հետևյալ դրվագը։

Վ. Ի. Լենինը իր հոդվածն ավարտելուց հետո,— Ն. Կրուպսկայայի վկայությամբ,— չդադարեց նրա վրա աշխատել։ Իլյիչը մարտի 12-ից հետո քարտուղարին խնդրում է իր կատարած փոփոխություններն ու լրացումներն անցկացնել տեքստում և ուղարկել ամսագրի խմբագրությանը[51]*։ Լենինյան փոփոխությունը հոդվածի այն մասում է, որը նվիրված է կրոնի գիտական քննադատության ներկայացուցիչներ Դրևսին և պրոֆ. Ռ. Վիպպերին։ Հավանական է, որ դրա հետ կապված է Իլյիչի կողմից ամսագրի «Խմբագրության կողմից» հայտարարության տեքստի լուսանցքում կատարած «Դրևս+Վիպպեր» նշումը*[52]*։*

Վ. Ի. Լենինը «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» աշխատությունում հստակ կերպով սահմանեց փիլիսոփայական ամսագրի խնդիրները, խմբագրությանը զինեց մարտնչող մատերիալիզմի և գիտության կուսակցականության սկզբունքներով տոգորված ծրագրով։ Իլյիչը ցույց տվեց այն դերը, որ կոչված է խաղալու մարքսիստական փիլիսոփայական ժուռնալը դասակարգային պայքարի սրման պայմաններում։ Ժուռնալի երրորդ համարից ակնբախ է լենինյան աշխատության ներգործությունը։

Հերթական երրորդ համարից պարբերականի մշտական աշխատակիցների ազդարարվող ցանկում ավելացվեց Վ. Ի. Լենինի անունը։ Հատկանշական է նաև այն, որ 1922 թ. հոկտեմբերի 13-ին պատասխանատու խմբագիրը նամակով դիմել է Վ. Ի. Լենինին՝ հաղորդելով նրա աշխատության ոգով խմբագրության գործունեության վերակառուցման մասին։

«Թանկագին Վլադիմիր Իլյիչ»— ասված է նամակում,— մեր

---

51 См. XXXV Ленинский сборник, М., 1945, стр. 340.

52 См. *В. И. Ленин,* Полн. собр. соч., т. 45, примечан. 20.

խմբագրությունը արտակարգ ուրախ է Ձեր ապաքինման համար և ջերմ ողջույն է հաղորդում Ձեզ։

Ընդսմին Ձեզ առաքում եմ մեր ժուռնալի № 7—8-ը։ Բոլոր հոդվածների մեջ մենք կուզենայինք Ձեր ուշադրությունը հրավիրել մատերիալիստների կոնգրեսի մասին փոքրիկ հոդվածի (էջ 165) վրա։

Մենք արդեն որոշ ժամանակ առաջ Կենտկոմին ենք հանձնել զեկուցագիր։

Իհարկե, անհրաժեշտ է կոնգրեսը նախապատրաստել մեծագույն ջանադիրությամբ, որպեսզի ապահովվի մեզ համար առավել ձեռնտու ելք. սակայն հենց այն բանի համար, որպեսզի սկսվեն նախապատրաստական աշխատանքները, անհրաժեշտ է այդ հարցի մասին Ձեր կարծիքը։

Նախապատրաստական միջոցները մենք համարում ենք երկու ձևի. առաջին՝ նյութերի հավաքում, որոնք բնութագրում են գիտության մեզ համար ընդունելի գործիչների աշխարհայացքը, և երկրորդ՝ գիտության և մատերիալիզմի պրոբլեմներին նվիրված միջազգային ժողովածուների, գիտական ժուռնալի համարների կազմում, ձգտելով ներգրավել այն գիտնականներին, որոնց մենք նկատի ունենք ներգրավել կոնգրեսում. բացի այդ՝ միջազգային հարցաթերթիկների կազմում և արտասահմանյան կոմունիստ ընկերների միջոցով առանձին գիտնականների հետ մասնավոր բանակցությունների վարում— ահա այն նախապատրաստական շատ երկար և դժվարին աշխատանքը, որ մենք պետք է անենք, եթե Դուք համաձայնվեք և ընդունեք Միջազգային Կոնգրեսի գումարման մասին մեր տեսակետը կարևոր։

Իսկ գիտնականներից ո՞ւմ ենք մենք մտածում ենթարկել «Փորձարկման» և «մշակման»— կհարցնեք Դուք։

Ահա համաշխարհային ճանաչում ունեցող գիտնականների մի քանի ազգանուններ, որոնց մենք հիշեցինք Ա. Կ. Տիմիրյազևի հետ այդ հարցի ակնթարթային շտապ քննարկման ժամանակ։

Ֆ. Սոդդին, որը բազմաթիվ անգամ հարձակումների է ենթարկվել մատերիալիզմի հետ շատ մոտիկ իր համարձակ ելույթների համար։

Ջ. Տոմսոն՝ էլեկտրոնային տեսության մատերիալիստական բացատրություն տված ֆիզիկոս։

Էդվ. Ռոսս Լենկեստեր—կենսաբան
Տիլզըն Դա՛յեր
Էլիոտ
Պլատտ Լ.— դարվինիստ
Ռ. Լադենբուրգ—քիմիկոս
Շտայնախ—երիտասարդ[աց-ման] փորձերի հեղինակ
Բեյլիս—կենս. (աբան)
Ստերլինգ
Ջեֆեր—ֆիզիոլոգ
Լենար Ֆիլիպ—միապետական և միաժամանակ էյնշտեյնի հակառակորդ և մի շարք հարցերում մատերիալիստների հետ մոտիկ

Ռուսաստանից՝

Պրոֆ. Պավլովը, պրոֆ. Ձերդանցևը, Զավադովսկիները, Ուսպենսկիները, Պշերորովսկին, Տիմիրյազևը, և մի շարք երիտասարդներ։

Վերջապես, գիտության այնպիսի վետերաններ և բացահայտորեն համակրող մարդիկ, ինչպես Ավգուստ Ֆորելը և ուրիշներ։

Մի խոսքով, Վլադիմիր Իլյիչ, այդ հարցը այնքան էլ անհուսալի չէ, ինչպես կարող է թվալ առաջին հայացքից։

Միջոցներ մի կերպ կստեղծենք, այդ դժվարին նախապատրաստական աշխատանքը մենք կկատարենք. մեզ անհրաժեշտ են միայն Ձեր՝ մարտնչող մատերիալիզմի առաջնորդիդ հավանությունը և խորհուրդները։

Կոմունիստական բարևներով

Վ. Տեր (Վ. Տեր-Վահանյան)»[53]։

1922թ.
12/X

---

53 Նամակի բնագիրը պահվում է ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական արխիվում, մեր տրամադրության տակ է նամակի լուսապատճենը։

Վ. Տեր-Վահանյանը չկարողացավ պարբերականի աշխատանքները մինչև վերջ վերակառուցել լենինյան պահանջների ոգով։ 1923 թ. նա ազատվում է «Պոդ զնամենեմ մարքսիզմա» ամսագրի խմբագրի պարտականություններից։ 1923—1930 թթ. այն լույս է տեսնում խմբագրական կոլեգիայի ղեկավարությամբ։ Ըստ երևույթին Վ. Տեր-Վահանյանին խանգարում էին նրա տրոցկիստական հայացքները։ Քաղաքական սխալների, սայթաքումների, հակակուսակցական-ֆրակցիոն գործունեության համար 1928, 1933, 1935 թթ. Վ. Տեր-Վահանյանը հեռացվել է ՀամԿ(բ)Կ շարքերից։

Վ. Ի. Լենինը գիտա-տեսական աշխատանքում մեծ նշանակություն էր տալիս կոմունիստների հետ համատեղ այն մարդկանց ներգրավմանը, որոնք բոլշևիկյան կուսակցության անդամներ չէին, բայց փիլիսոփայական ռեակցիայի դեմ մղվող պայքարում հանդիսանում էին նրա կողմնակիցները։ Յա. Մ. Սվերդլովի անվան կոմունիստական համալսարանի Գիտական խորհուրդը 1921 թ. որոշեց գիտա-փիլիսոփայական աշխատանքում ներգրավել փիլիսոփայության հայտնի մասնագետներ, անցյալում մենշևիկներ Ա. Մ. Դեբորինին և Լ. Ի. Աքսելրոդին։ Կենտկոմի կազմբյուրոն սկզբում Աքսելրոդի մասին համաձայնություն չավեց։ Երբ որոշ ժամանակ անց այդ հարցը համալսարանի դասախոսական խմբի կողմից նորից բարձրացվեց, Յեմ. Յարոսլավսկին Վ. Ի. Լենինին դիմեց հետևյալ երկտողով. «Հնարավո՞ր եք գտնում արդյոք Դուք Դեբորինի և Լ. Աքսելրոդի ներգրավումը փիլիսոփայության (փիլիսոփայության պատմության և պատմական մատերիալիզմի) գծով դասախոսություններ կարդալուն»։ Վ. Ի. Լենինը, ապրիլին (20-ից ոչ շուտ), պատասխանել է. «Ըստ իս, երկուսին էլ պարտադիր։ Օգտակար կլիներ, եթե նրանք պաշտպանեին մարքսիզմը (եթե նրանք սկսեն ագիտացիա անել մենշևիզմի օգտին, մենք նրանց կբռնենք, պետք է հետևել)։ Երկուսին էլ պետք է ներգրավել փիլիսոփայության գծով ամենամանրամասն ծրագրի (և դասախոսությունների կոնսպեկտի) ու փիլիսոփայության գծով հրատարակությունների պլանի մշակման գործում»[54]։

Թեև Վ. Ի. Լենինի «Մարտնչող մատերիալիզմի մասին» երկը հայերեն առաջին անգամ լույս է տեսել 1927 թ., «Լենինյան գրադարան» մատենաշարով՝ «Բանվոր դասակարգը և կրոնը» լենինյան թեմատիկ ժողովածուում, բայց այն, ինչպես նշեցինք, ուղի հարթեց մարքսիստական փիլիսոփայության զարգացմանը Հայաստանում։ Լենինյան նշանավոր երկի թարգմանությունը կատարել է Շ. Տեր-Ղազարյանը, խմբագրությունը՝ Դ. Տեր-Սիմոնյանը։ Մինչ այդ լենինյան տվյալ աշխատության առանձին հատվածներ, դրույթներ հրապարակվել էին հայ պարբերական մամուլում, մասնավորապես «Խորհրդային Հայաստան», «Ավանգարդ» թերթերում և այլ պարբերականներում։ Ինչպես «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» աշխատության, այնպես էլ վերոհիշյալ ժողովածուում զետեղված «Սոցիալիզմը և կրոնը», «Բանվորական

54 *В. И. Ленин*, Полн. собр. соч., т. 52, стр. 159.

կուսակցության դեպի կրոնն ունեցած վերաբերմունքի մասին»։ «Դասակարգերն ու կուսակցությունները և նրանց վերաբերմունքը դեպի կրոնը» երկերը թարգմանված են 30-ական թվականներին մարքսիստական գրականության թարգմանության բնագավառում եղած դժվարությունների հաղթահարման ճանապարհով, լենինյան նուրբ արտահայտությունները, հստակ ոճը, յուրօրինակ դարձվածքները հայերեն ճշգրիտ արտահայտելու մեծ զգուշությամբ։

1928 թ. հայերեն, 2000 տպաքանակով, լույս տեսավ Վ. Ի. Լենինի «Սոցիալիզմը և կրոնը» թեմատիկ ժողովածուն։ Նրանում հրապարակված էր «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» աշխատությունը՝ որոշ կրճատումով։ Ինչպես 1920 թ., Վ. Տերյանի թարգմանությամբ, Ա. Մյասնիկյանի և Պ. Մակինցյանի խմբագրությամբ լույս տեսած «Պետություն և հեղափոխություն» աշխատությունը նշանավորեց լենինյան աշխատությունների հայերեն հրատարակության նոր էտապ, այնպես էլ Ա. Խանջյանի խմբագրությամբ, 1930 թ. հրատարակված Վ. Ի. Լենինի Երկերի առաջին հատորով հիմք դրվեց Իլյիչի աշխատությունների բազմահատոր հրատարակությանը, հայկական լենինապատման հարստացմանը։ Լենինյան գաղափարական ժառանգության պաշտպանության և պրոպագանդման գործում մեծ են կրթված մարքսիստ, փայլուն հրապարակախոս Ա. Խանջյանի ծառայությունները։ Լինելով Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար, 1930—1935 թթ. նա մեծ եռանդ ներդրեց Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությանը, անձամբ գլխավորելով մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերի հայերեն թարգմանության հանձնաժողովի աշխատանքները։

Իրականացավ Վ. Տերյանի երազանքը՝ Սովետական Հայաստանում ստեղծվեց թարգմանական քաղաքական գրականության հանձնաժողով, որը մեծ չափով խթանեց հայ մշակույթի զարգացմանը, պետական հիմքերի վրա դրեց թարգմանական գործը։ Լենինյան աշխատությունները դեռ երբեք այնքան շատ չէին հրատարակվել հայերեն, որքան այդ տարիներին։ Միայն 1930—1935 թթ. Հայաստանում առանձին գրքերով լույս է տեսել 70 անուն գիրք, իսկ պարբերական մամուլում՝ 83 հոդված, նամակ, հեռագիր և վավերագիր։

1933 թ. հայերեն, 13 հազար տպաքանակով, լույս է տեսնում Վ. Ի. Լենինի «Մարքս, Էնգելս, մարքսիզմ» թեմատիկ ժողովածուն, որը հետագայում վերահրատարակվում է 1940 թ.՝ 7000, իսկ 1950 թ

633—20

6000 տպաքանակով։ Ժողովածուում բազմաթիվ աշխատությունների հետ միասին զետեղված է նաև «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» երկը։ Ժողովածուի հայերեն թարգմանության խմբագրությունը կատարել է Գ. Պարիսը։ Նախորդ թարգմանությունների համեմատությամբ սա, անշուշտ, ավելի հաջող է։ Թեև թարգմանիչը չի հիշատակված, բայց հայտնի է, որ այն քննարկվել է ՀԿ(բ)Կ Կենտկոմի կողմից հաստատված թարգմանական քաղաքական գրականության հանձնաժողովում և արժանացել նրա հավանությանը։ Հայտնի է նաև այն, որ Վ. Ի. Լենինի Երկերի երկրորդ հրատարակության առաջին հատորի հայերեն թարգմանությունը կատարել են Պ. Աբելյանը, Լ. Աբովյանը, Ր. Ավդալբեգյանը, Մ. Գևորգյանը, Ց. Խանզադյանը, Ե. Տեր-Մինասյանը և Վ. Փոթեյանը։ Նրանք են այդ շրջանի հայկական լենինապատման աչքի ընկնող թարգմանիչները։

1947 թ. 6000 տպաքանակով, հայերեն, առանձին գրքույկով լույս է տեսնում «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» աշխատությունը։

Վ. Ի. Լենինի Երկերի չորրորդ հրատարակության հայերեն թարգմանությունը, որը նշանավոր իրադարձություն է հայ մշակույթի, հանրապետության գաղափարական կյանքում, հարստացրեց քաղաքական թարգմանական գրականությունը, լիովին հնարավորություն տվեց բացահայտելու մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների յուրաքանչյուր ֆրազի իմաստային երանգը, բարձր հիմքերի վրա դնել թարգմանական արվեստը։ Եթե անցյալում շեշտը դրվում էր ազատ թարգմանության վրա, ապա 40-ական թվականներից սկսած, ՍՄԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի ղեկավարությամբ, հիմնականը դառնում է բնագրին հարազատ մնալը, բովանդակության ճիշտ մատուցումը։

Վ. Ի. Լենինի Երկերի չորրորդ հրատարակության հայերեն թարգմանությունը, անշուշտ, նոր էտապ է Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատությունների հրատարակության ու տարածման պատմության մեջ, հայկական լենինապատման զարգացման գործում։ Այն նշանավորում է մարքս-լենինյան գաղափարների գանձարանի նոր համալրում։ Չորրորդ հրատարակության ընթացքում զգալի չափով վերացվեցին ինչպես մյուս աշխատությունների, այնպես էլ «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» երկի թարգմանական թերությունները։ 1952 թ. Վ. Ի. Լենինի Երկերի

33-րդ հատորում, 5000 տպաքանակով լույս է տեսնում «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» ստեղծագործությունը։ Այնուհետև այն հայերեն հրատարակվել է «Լենինը պրոպագանդայի և ագիտացիայի մասին» (Երևան, 1958 թ., էջ 612—623, 5000 օրինակ), «Լենինը կուլտուրայի և արվեստի մասին» (Երևան, 1958, էջ 420—430, 5000 օրինակ) ժողովածուներում, Վ. Ի. Լենինի Ընտիր երկերի երեք հատորյակում (Երևան, 1964, հատ. 3, էջ 773—783, 5000 օրինակ)։

«Հայաստան» հրատարակչությունը 1965 թ. առանձին գրքույկով՝ 5000 տպաքանակով լույս է ընծայել «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին»-ը։

«Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» աշխատության հայերեն հրատարակությունն առանձին գրքերով, ըստ տարիների և տպաքանակի, հետևյալ պատկերն է ներկայացնում.

1927 թ. — 5000 օրինակ
1928 թ. — 2000 օրինակ
1940 թ. — 7000 օրինակ
1947 թ. — 6000 օրինակ
1950 թ. — 6000 օրինակ
1952 թ. — 5000 օրինակ
1958 թ. — 5000 օրինակ
1959 թ. — 5000 օրինակ
1964 թ. — 5000 օրինակ
1965 թ. — 5000 օրինակ
1973 թ. —13000 օրինակ

Այսպիսով, Վ. Ի. Լենինի փիլիսոփայական կտակը՝ «Մարտնչող մատերիալիզմի նշանակության մասին» աշխատությունը, մինչև այժմ հայերեն լույս է տեսել 11 անգամ՝ 64 հազար տպաքանակով, որը հզոր զենք է բուրժուական գաղափարախոսության դեմ մղվող պայքարում։

Կովկասի ժողովրդական տնտեսության զարգացման գործում ծրագրային նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի՝ «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» 1921 թ. ապրիլին գրած նամակը, որն իր հետ Կովկաս բերեց Ա. Մյասնիկյանը։ Իլյիչն այդ նամակում Կովկասի կոմունիստներին սովորեցնում էր, թե ինչպես վերականգ-

նել և պարզացնել քայքայված ժողովրդական տնտեսությունը, խորհուրդ էր տալիս զգույշ և նրբանկատ ազգային քաղաքականություն վարել Արևելքի արթնացող ժողովուրդների նկատմամբ։

Վ. Ի. Լենինի Կովկասի կոմունիստներին ուղղած նամակը տասնյակ հրատարակություններ է ունեցել։

Հարուստ ու բազմաբովանդակ է հայկական լենինապատումը։ Մեծ է նրա նշանակությունը Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման, քաղաքական գրականության զարգացման գործում։

3

Մարքսիստական գրականության առաջին հայ թարգմանիչներն ու խմբագիրները, ինչպես տեսանք, Եվրոպայում և Ռուսաստանում սովորող ուսանողներն էին։ 1880—90-ական թվականներին այդ գրականության ստեղծողներից էին Գևորգ Ղարաջյանը, Հովսեփ Աթաբեկյանցը, Մարո Վարդանյանը (Նազարբեկյան), Ավետիս Նազարբեկը (Նազարբեկյան, Լեռենց), Հակոբ Մեղավորյանը, Ա. Արասխանյանը և ուրիշներ*։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի հայ անդրանիկ թարգմանիչներից է Գ. Ղարաջյանը (Ա. Տ. Արկոմեդ, Նուբար, 1861—1936)։ 1883 թ. ավարտելով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը նա մեկնում է արտասահման և մինչև 1889 թ. սովորում է Ժնևի համալսարանի սոցիոլոգիայի բաժնում։ Այստեղ, ռուս քաղաքական վտարանդիների միջավայրում նա սերտ շփման մեջ է մտնում հեղափոխական գործիչների հետ, ուսումնասիրում սոցիալիստական գրականությունը, հրապուրվում ժամանակի առաջավոր գաղափարներով։ 1886—1889 թթ. Գ. Ղարաջյանը հանդիպումներ է ունենում «Աշխատանքի ազատագրություն» մարքսիստական խմբի, մասնավորապես ռուս ականավոր մարքսիստ Գ. Վ. Պլեխանովի հետ։ Հաղթահարելով իր վաղեմի նարոդնիկական հայացքները՝ Գ. Ղարաջյանը 1887 թ. շրջադարձ է կատարում դեպի մարքսիզմը, ձեռնարկում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի թարգմանությունը։ 1887—1900 թթ. «Արմենիա», «Մուրճ», «Տարազ», «Մշակ» և այլ պարբերականներում հրապարակված «Քաղաքակրթության սա-

* Սույն մենագրության համապատասխան բաժիններում շարադրել ենք այդ ուղղությամբ կատարած նրանց գործունեությունը, ուստի հարկ չկա այն կրկնելու

տիճանները», «Բանվորների ապահովացման խնդիրները», «Ո՞ւր է գնում մեր երկիրը» և այլ հոդվածներում որոշակի է նրա էվոլյուցիան։ Հեղինակը աշխատում է մարքսիստական վերլուծության ենթարկել հայ ազգային-ազատագրական շարժման հետ կապված հարցերը, ընդդիմակայում է նարոդնիկության ժամանակավրեպ դավանանքին, նկարագրում XIX դարի վերջին տեղի ունեցած սոցիալ-քաղաքական տեղաշարժերի իմաստը, երկրամասում կապիտալիզմի զարգացման, բանվոր դասակարգի ձևավորման, արևելահայերի հասարակական առաջընթացի տենդենցները։ Կովկաս վերադառնալով, նա իր հետ բերում է մարքսիստական հարուստ գրականություն, կապվում տեղի սոցիալ-դեմոկրատների հետ, ղեկավարում 1898 թ. Թիֆլիսում ստեղծված բանվորական հայ մարքսիստական անդրանիկ խմբի գործունեությունը։ Աշխատելով Գանձակում (1883—1886), Վերին Ագուլիսում (1889—1890), Երևանի և Շուշու թեմական դպրոցներում (1891—1895), իսկ ավելի ուշ (1919—1920)՝ Թիֆլիսի Ներսիսյան և Գայանյան դպրոցներում, նա նպաստել է սովորող երիտասարդության քաղաքական աշխարհայացքի ձևավորմանը, պրոպագանդել Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ստեղծագործությունները։

1898—1908 թթ. Գ. Ղարաջյանը հեղափոխական աշխատանք է կատարել Կովկասում։ 1902—1906 թթ. նա կրել է Մետեխի բանտի և Սիբիրի աքսորի դառնությունները, 1906 թ. աշխատակցել «Կայծ», 1907 թ.՝ Երևանում, Գ. Սոկոլովսկու խմբագրությամբ լույս տեսած «Ֆակտի» թերթերին, իսկ 1908—1909 թթ.՝ «Շավիղ», «Երկրի ձայն», «Նոր հոսանք» (Կ. Պոլիս) պարբերականներին։

1908—1917 թթ. Գ. Ղարաջյանը իբրև քաղաքական վտարանդի եղել է Շվեյցարիայում։ Հարելով սոցիալ-դեմոկրատիայի մենշևիկյան թևին, ընթանում էր Գ. Պլեխանովի հետ միասին։ 1910 թ. լույս է տեսել նրա «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» մենագրությունը՝ Գ. Պլեխանովի առաջաբանով, որը Անդրկովկասի հեղափոխական և սոցիալ-դեմոկրատական շարժման լուսաբանման առաջին փորձերից էր։

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Գ. Ղարաջյանը վերադառնում է Կովկաս, նետվում քաղաքական կյանքի հորձանուտը, ընտրվում բանվորական պատգամավորների երկրային կոմիտեի անդամ, Պետրոգրադի դեմոկրատական խորհրդակցության պատգամավոր, սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կոլ-

մից՝ Հայաստանի պառլամենտի անդամ, Թիֆլիսի և Երևանի քաղաքային դումաների անդամ։ 1917—1920 թթ. Գ. Ղարաջյանը մենշևիկ ինտերնացիոնալիստ էր[55]։

Գ. Ղարաջյանն իր մոլորություններով ու տատանումներով հանդերձ հայ անդրանիկ մարքսիստներից է, որը զգալի դեր է խաղացել Հայաստանում մարքսիզմի տարածման գործում։

1893—1894 թթ. Ֆ. Էնգելսի «Գիտական սոցիալիզմ»-ը և Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը թարգմանել է Հովսեփ Աթաբեկյանցը (1870—1916)։ Այդ մասին իրազեկ էր Ֆ. Էնգելսը[56]։ Հավանական է, որ Էնգելսի ձեռքի տակ եղած հայերեն թարգմանությունը Աթաբեկյանցինն էր։ Վերադառնալով Կովկաս, նա իր հետ բերել է մարքսիստական գրականության ընտիր հավաքածու։ Միայն հարյուրից ավելի քաղաքական գիրք ջերմ ընծայականներով ստացել էր Եվրոպայի այն ժամանակվա աչքի ընկնող մարքսիստներից, սոցիալ-դեմոկրատիայի գաղափարախոսներից։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունների հայերեն անդրանիկ թարգմանիչներից են Ավետիս և Մարո Նազարբեկյանները։ Հնչակյան կուսակցության հիմնադիրներից Ավետիս Նազարբեկյանը (1866—1939) իր գիտակցական կյանքի գրեթե մեծ մասը անցկացրեց արտասահմանում՝ զինվորագրվելով հայ ժողովրդի ազատագրության գործին։ Նա թարգմանել է Կ. Մարքսի «Վարձու

---

55 Երկրամասում մեծ Հոկտեմբերի գաղափարների հաղթանակից հետո Գ. Ղարաջյանը ողջունեց սովետական իշխանության հաղթանակը։ 1920—1936 թթ. աշխատել է Վրաստանի հեղափոխական թանգարանի վարիչ։ Երևանի պետական համալսարանի խորհրդային շինարարության ֆակուլտետի դեկան, զբաղվել է դասախոսական, գրական աշխատանքով, աշխատակցել է «Զարյա Վոստոկա», «Մարտակոչ», «Պրոլետարի», «Խորհրդային Հայաստան» և այլ պարբերականներին։ Գ. Ղարաջյանի գրչին են պատկանում տասնյակ հոդվածներ, բազմաթիվ բրոշյուրներ, այդ թվում՝ «Բանվորների ապահովությունը Արևմտյան Եվրոպայում և Ռուսաստանում» (1894), «Անդրկովկասի քաղաքական կյանքը 1918 թվականին» (1919), «Արտասահմանում», «Անցյալի հիշողություններից» (1918), «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում» (1927), «Խանապատի հեքիաթները» (1928), «Սանդալը և նրա վեպերը» (1930) և այլն։ Բացի քաղաքական-հրապարակախոսական գործերից, «Հեղափոխականի հիշատակարանը» բազմահատոր անտիպ նոթագրությունից, նա 1902 թ. Մետեխի բանտում գրել է «Փուշ պսակ» դրաման, «Բայց և այնպես նա շարժվում է» (1929), «Արտեմ Սոլոմոնովիչ Դալմատովը բանտում» (1926) և այլ երկեր։

56 См. *К. Маркс, Ф. Энгельс,* Соч., т. 39, стр. 270—271.

աշխատանք և կապիտալ»-ը, Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը, անձնական հանդիպումներ է ունեցել Վ. Ի. Լենինի, Ստ. Շահումյանի հետ, թարգմանել է ՌՍԴԲԿ ծրագիրը, II համագումարի նյութերը: Իր «Ինքնակենսագրության» մեջ նա պատմում է, թե արտասահմանում «Լենինը Ստեփան Շահումյանի հետ եկել է իր մոտ, և նրանք ունեցել են մտերմական զրույցներ»[57]:

Ալ. Նազարբեկյանը հարուստ կենսագրություն ունի[58]: Բերենք միայն մի դրվագ: Արշալույս Արշարունին իր «Նշանավոր գրքերի ճակատագիրը» գրքում պատմում է, թե 1920 թ. ինչ պայմաններում է հրատարակվել Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն» գիրքը՝ Վ. Տերյանի թարգմանությամբ: «Լենինը տեղյակ էր, որ իր աշխատությունը («Պետություն և հեղափոխություն»-ը — Խ. Բ.) հայերեն է թարգմանվել ու տպագրության հանձնվել: Նրան այդ մասին հայտնել էին Հայկական գործերի կոմիսար Վ. Ավանեսովը և Կոմունիստական կուսակցության Մոսկվայի կոմիտեի քարտուղար Ալ. Մյասնիկյանը»[59]: Իլյիչը, հավանական է, տեսել է իր աշխատության հայերեն հրատարակությունը: Արշարունին նկարագրում է գրքի հայերեն առաջին հրատարակության այն օրինակի ոդիսականը, որը 1923 թ. Ավետիս Նազարբեկյանը տարել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ՝ Բոստոն, ծանոթացրել տեղի բանվորներին, հեղափոխական գործիչներին: «Պետություն և հեղափոխություն»-ը տասը տարի ԱՄՆ-ի հայ առաջադիմականների սիրած գիրքն էր. օտար ափերում այն մասնակցել է կրակոտ գաղափարական բանավեճերի, անվեհեր զինվորի պես մարտնչել, լենինյան գաղափարներով լուսավորել հայ աշխատավորների ուղին, ծխի ու բոցերի միջից անցնելով՝ 1933 թվականի դեկտեմբերին նորից վերադարձել հայրենիք՝ Մոսկվա: «ԱՄՆ-ից վերադարձող Ա. Նազարբեկի հարստությունը,— գրել է Արշարունին,— 40-ամյա դեգերումներից հետո մի ճամպրուկ էր և հոգատար ձեռքով ու խնամքով փաթաթված մի կապոց:

---

57 Տե՛ս Արշ. Արշարունի, *Հանդիպումներ անցյալի հետ*, Երևան, 1969, էջ 171: «Ինքնակենսագրության» բնագիրը գտնվում է Արշ. Արշարունու մոտ:

58 Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», Երևան, 1972, հատ. 4, էջ 668—673:

59 Արշալույս Արշարունի, *Նշանավոր գրքերի ճակատագիրը*, Երևան, 1973, էջ 13:

— Ձեր խոսքը,— Մոսկվայի մաքսատանը դիմեց նրան պաշտոնյան,— այս երկու կտո՞րն է: Գրում եք, թե կապոցում միայն ձեռագրեր են ու անձնական նամակներ:

— Այո՛: Ես հարցաթերթիկի կեսին ճիշտ եմ պատասխանել:

— Գրքեր չե՞ք բերել ձեզ հետ:

— Ոչ: Քառասուն տարվա թափառիկ կյանքում գրքեր եմ ստացել, գրքեր նվիրել, բայց հետս տուն չբերի ոչ մի գիրք: Սակայն ձեզ պիտի ասեմ, որ կապոցում իմ հեղինակած ձեռագրերի հետ միասին հայրենիք եմ տանում միայն մի գիրք:

— Պարզ է, բայց ի՞նչ գիրք է:

— «Պետություն և հեղափոխություն»-ը հայերեն լեզվով:

— Լենինի՞:

— Այո, Լենինի, տպագրված Մոսկվայում, 1920 թվականին, որը անլեգալ կերպով օտարություն գնաց և հասավ Ամերիկա: Նա անբաժան ինձ հետ է 10 տարի:

— Ընկեր Նազարբեկ, մենք ձեր խոսքը, ինչպես և կապոցը քննության չենք ենթարկում...

— Զգացված եմ, ընկեր...»[60]:

Ավ. Նազարբեկյանն իր կյանքի վերջին տարիներն անցկացրեց Հայաստանում և Մոսկվայում՝ «Հեղափոխության վետերանների տանը», վայելելով մարքսիզմի հաղթանակների պտուղները:

Հեղափոխական կյանքի հետաքրքիր ուղի անցավ **Մարո Վարդանյան-Նազարբեկյանը** (1864—1941): Թիֆլիս, Պետերբուրգ, Ժնև, Փարիզ, Մարսել, Աթենք, Լոնդոն և այլուր,— ահա Մարո Նազարբեկյանի գործունեության շրջանակները: Ոգևորված ռուս նարոդնիկների հեղափոխական գործողություններով, Պետերբուրգում ուսումնառության տարիներին տարվում է ռոմանտիկ հովերով: Ցարական իշխանության ներկայացուցիչները շուտով նրա անունը մտցնում են «քաղաքական անբարեհույսների» ցուցակներում, հետապնդում նրան: Ավետիս Նազարբեկյանի հետ նա մեկնում է արտասահման, հրապուրվում Պ. Լավրովի գաղափարներով: Նա սերտ կապեր է հաստատում «Աշխատանքի ազատագրություն» խմբի, հատկապես Գ. Պլեխանովի, Վ. Զասուլիչի հետ, կարդում նրանց հրատարակած «Սոցիալ-դեմոկրատ»-ը: Մարո Նազարբեկյանը սկզբում հարում էր հնչակյաններին, իսկ հետագայում՝ 1924 թ.,

60 Արշալույս Արշարունի, Նշանավոր գրքերի ճակատագիրը, Երևան, 1973, էջ 20—21:

անցնում է կոմունիստական կուսակցության շարքերը[61]: Նրան բախտ է վիճակվել անձամբ տեսնելու Ֆ. Էնգելսին, ծանոթանալու Վիլհելմ Լիբկնեխտի, Ավգուստ Բեբելի, Կլարա Ցետկինի և այլոց հետ:

1890-ական թվականներին էլ նա թարգմանում է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ը, Պոլ Լաֆարգի, Գ. Պլեխանովի, Դիկշտեյնի և այլոց մի քանի գործերը: Դարասկզբին Մարո Նազարբեկյանը արտասահմանում քաղաքական կապեր է հաստատում ՌՍԴԲԿ-ի ղեկավար գործիչների, հատկապես Վ. Ի. Լենինի հետ, պրոպագանդիստական ակտիվ աշխատանք ծավալում: Նրան լավ գիտեին Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի պատասխանատու աշխատողները: 1917 թ. մարտին Ստոկհոլմում Մարո Նազարբեկյանը հանդիպում է Վ. Ի. Լենինին, նրան ծանոթացնում Պետրոգրադից ստացած այն նամակների բովանդակությանը, որոնց մեջ հաղորդվում էր Վ. Ի. Լենինի Ռուսաստան վերադառնալու մասին: «Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումը Ստոկհոլմում և զրույցը,— գրել է Ա. Մնացականյանը,— որոշակի նշանակություն ունեցան Մարո Նազարբեկյանի համար, նրա շուտափույթ Ռուսաստան վերադառնալու և հետագա գործունեության համար»[62]:

1917 թ. հունիսին Մարո Նազարբեկյանը վերադառնում է Ռուսաստան, զբաղվում քաղաքական աշխատանքով, սկզբում՝ Պետրոգրադում, իսկ հետո՝ Կովկասում: Նա ղեկավար մասնակցություն է ունեցել 1919 թ. Թիֆլիսում հրատարակվող «Գործավոր» թերթին, ՍՍՀՄ-ում հնչակյան կուսակցության լուծարքին: Քաղաքական դեգերումների ծանր փորձություններով անցնելով, Մարո Նազարբեկյանը, ի վերջո, դարձավ բոլշևիկ, բարի անուն թողնելով Հայաստանում մարքսիստական գրականության տարածման պատմության մեջ:

XX դարի առաջին տասնամյակում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի առանձին աշխատություններ թարգմանել և խմբագրել են Ստ. Շահումյանը, Ի. Լալայանցը, Ս. Մյասնիկյանը, Բ. Կնուն-

---

61 Մարո Նազարբեկյանի մասին տե՛ս Ար. Մնացականյան. Ազատագրական պայքարի հերոսուհին: Տե՛ս «Սովետական գրականություն», 1961, № 11, էջ 122—132: ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. 4045, ց. 12, թ. 3—21:

62 Տե՛ս «Սովետական գրականություն», 1961, № 11, էջ 130: Տե՛ս նաև ЦГАОР (Москва), ф. 102, ДПОО, оп. 12, д. 129, л. 39.

յանցը, Վ. Կասպարովը, Ս. Սպանդարյանը, Ա. Խումարյանը, Ս. Խանոյանը, Ա. Բեկզադյանը, Ս. Կասյանը, Ա. Զուրաբյանը, Հայկ Ազատյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Մ. Մանուչարյանը (Զար), Հայկ Գյուլիքեխվյանը, Ա. Մռավյանը, Արամայիս Երզնկյանը, Ռուբեն Քաթանյանը, Սուրեն Հովսեփյանը, Սիմոն Տեր-Պետրոսյանը, Հ. Կոստանյանը, Ա. Տեր-Գաբրիելյանը և ուրիշներ[63]։

Աշոտ Քրիստափորի Խումարյանը *(1875—1937)* *տակավին 14 տարեկան էր, երբ թողեց Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի 4-րդ դասարանը։ Շուտով նա ծանոթացավ խառատի աշխատանքին, 1891 թ. մտավ «Արոր» տպարանը՝ տպագրական գործը սովորելու համար։ Նույն թվականին Թիֆլիսում գործող հայ աշակերտական խմբակներից մեկի շուրջը համախմբվում են առանձին բանվորներ, արհեստավորներ, մտավորականներ, որոնք մեկ տարի անց, 1892 թ. վերջերին, հիմք են դնում «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա»-ին, որը և գործեց մինչև 1895 թվականը։ «Ասոցիացիա»-ի հիմնադիրներից էր Ա. Խումարյանը, որը գործուն մասնակցություն է ցուցաբերում «Ազատ Հայաստան» և «Կռիվ» թերթերի հրատարակությանը, կազմակերպում հեղափոխական կոչերի և թռուցիկների տպագրության ու տարածման գործը։*

Տասնյոթամյա Ա. Խումարյանը, գիտակցաբար ընտրելով հեղափոխությունը, կյանքի ու պայքարի բովանդակալից ուղի անցավ։ Աստիճանաբար հաղթահարելով վաղ շրջանի քաղաքական մոլորությունները, նա դարասկզբին հաստատապես կանգնեց մարքսիստական դիրքերի վրա, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո։ Ա. Խումարյանի կյանքում անջնջելի հետք թողեցին 1898—1900 թթ. Վյատկայի նահանգում անցկացրած քաղաքական աքսորի առաջին տարիները։ Մոսկվից չփվելով աքսորում գտնվող

[63] *Տե՛ս* Ստ. Շահումյան, *Երկեր (երեք հատորով), հատ. 1, Երևան, 1955, հատ. 2, Երևան, 1957, հատ. 3, Երևան, 1958։ Նույնի՝ «Նամակներ, 1896—1918, Երևան, 1959։* Ս. Սպանդարյան, *Երկեր (երկու հատորով), հատ. 1, Երևան, 1959, հատ. 2, Երևան, 1959։* Ա. Մյասնիկյան, *Ընտիր երկեր, Երևան, 1957։* Ս. Կասյան, *Ընտիր երկեր, Երևան, 1967։ «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք առաջին, Երևան, 1958, գիրք երկրորդ, Երևան, 1961։ Б. М. Кнунянц,* Избранные произведения, 1903—1911, Ереван, 1958; *С. Г. Шаумян,* Избранные произведения (в двух томах), т. 1, 1902—1916, 1957, М., 1957; т. 2, 1917—1918, М., 1958; *А. Ф. Мясникян,* Избранные произведения, Ереван, 1965, «В. И. Ленин, о Закавказье», Сборник, Ереван, 1963, «Воспоминания коммунистов Закавказья о В. И. Ленине», Ереван, 1970.

Ն. Բաումանի, Ձ. Ջերժինսկու, Պ. Ստուչկայի (Լատվիայի Կոմունիստական կուսակցության հիմնադիրներից), նաև գրող Յան Ռայնիսի, Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» առանձին անդամների և այլ նշանավոր հեղափոխականների հետ, Ա. Խումարյանը ծանոթանում է Ռուսաստանի մարքսիստական խմբակների գործունեությանը, 1898 թ. մտնում ՌՍԴԲԿ շարքերը: «Վյատկայի նահանգի Սլոբոդսկի աքսորում ես մկրտվեցի մարքսիստական ավազանում»— հետագայում գրել է Ա. Խումարյանը: Նա աքսորում Յան Ռայնիսին այնպիսի խանդավառությամբ է պատմում հայ ժողովրդի պատմության, մանավորապես մշակույթի և գրականության մասին, որ 1900 թ. Յան Ռայնիսը գրում է իր «Աշխարհի ամենադժբախտ երկիրը և ամենադժբախտ ժողովուրդը» հայերին նվիրված նշանավոր հոդվածը: Յան Ռայնիսի և Աշոտ Խումարյանի ջերմ բարեկամությունը հետագայում ևս շարունակվեց:

1901 թ. վերադառնալով աքսորից, Ա. Խումարյանը սերտ կապեր է հաստատում ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի և քաղաքում գործող հեղափոխական գործիչների հետ: 1902 թ. Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Զուրաբյանի և մյուսների հետ միասին նա եռանդուն մասնակցություն է ունենում լենինյան-իսկրայական առաջին հայ կազմակերպության՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» ստեղծմանը և նրա տպագիր օրգանի՝ «Պրոլետարիատ»-ի հրատարակությանը: Քաջ ծանոթ լինելով տպագրական տեխնիկային, Ա. Խումարյանը Կամոյի (Սիմոն Տեր-Պետրոսյան), Մ. Միրաքյանի (բանվոր Շանթ) և այլոց հետ միասին Թիֆլիսում, Բաքվում և երկրամասի այլ քաղաքներում մեկը մյուսի հետևից հիմնադրում է կուսակցական ընդհատակյա տպարաններ, օգնում Բաքվի «Նինա» և Թիֆլիսի Հավլաբարի ընդհատակյա տպարանների պոլիգրաֆիական բազայի ամրապնդմանը:

Ա. Խումարյանը 1903 թ. մարտին մասնակցելով ՌՍԴԲԿ Անդրկովկասի կազմակերպությունների առաջին համագումարին, ընտրվում է Կովկասյան միութենական կոմիտեի և «Պրոլետարիատի կռիվը» թերթի խմբագրական կոլեգիայի կազմում: Որոշ ժամանակ Բաքվի «Նինա» տպարանում Վ. Ստուրուայի, Ա. Ենուկիձեի, Ս. Թոդրիայի և այլ գործիչների հետ «Նինա» տպարանում աշխատելուց հետո Ա. Խումարյանը նորից փոխադրվում է Թիֆլիս՝ կուսակցական աշխատանքի: 1904 թ. նա մեկնում է Աստրախան, Ցա-

րիցին, Նիժնի-Նովգորոդ՝ տպագրական տեխնիկան կարգավորելու և ղեկավարելու համար։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ա. Խումարյանը պայքարի առաջին գծումն էր։ Նա Կովկասյան միութենական կոմիտեի ղեկավար աշխատողների հետ միասին պրոպագանդիստական-ագիտացիոն աշխատանք էր տանում երկրամասի բանվորական կենտրոններում, հատկապես Թիֆլիսում, ակտիվորեն մասնակցում քաղաքական ցույցերին, բանվորական միտինգներին, ինքնակալության դեմ մղվող պայքարին։ Ա. Խումարյանը աշխատակցել է Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի խմբագրությամբ 1906 թ. Թիֆլիսում հրատարակվող բոլշևիկյան «Կայծ» թերթին, հանդիսացել «Նոր խոսք» թերթի փաստական խմբագիրը։ Ասոցիացիայի տպագիր օրգաններում, «Պրոլետարիատի կռիվը», «Կայծ», «Նոր խոսք» թերթերում լույս են տեսնում Վ. Ի. Լենինի աշխատություններից կատարած նրա թարգմանությունները։ Խումարյանը չթուլացող թափով մասնակցել է նախահեղափոխական բոլշևիկյան գրեթե բոլոր հայ պարբերականներին, աշխատավոր զանգվածներին հուզող հարցերի վերաբերյալ հրապարակելով թղթակցություններ, նամակներ, հոդվածներ։ 1903 թ. «Պրոլետարիատի կռիվը» թերթում առաջին անգամ լույս է տեսել Վիկտոր Հյուգոյի «Նոքա կարթնանան» պատմվածքը՝ Ա. Խումարյանի թարգմանությամբ։

Ցարական գործակալներն ու ոստիկանությունը քայլ առ քայլ հետևում էին Ա. Խումարյանին։ Նա մի քանի անգամ ձերբակալվել և բանտ է նետվել, կամ աքսորվել։ Ոչ ցարական բանտերը և ոչ էլ աքսորականի ծանր ու դաժան կյանքը չկարողացան ընկճել հավատարիմ լենինյանի անսասան կամքը։ 1909 թ. Ա. Խումարյանը հեղափոխական գործունեության համար Կովկասից արտաքսվում է Աստրախան։ Այստեղ նա աքսորում գտնվող Ստ. Շահումյանի, Ն. Նարիմանովի, Շ. Էլիավայի, Ֆ. Մախարաձեի և քաղաքական մյուս աքսորականների հետ միասին կուսակցական բեղմնավոր աշխատանք է ծավալում։ Աշխատելով մասնավոր տպարանում՝ այն հմտորեն օգտագործում է մարքսիստական գրականության հրատարակման նպատակով։ Աստրախանի բանվորների մեջ նա ագիտացիա է մղում բոլշևիկյան «Պրավդա»-ին աջակցելու և «Երկաթյա ֆոնդ» ստեղծելու ուղղությամբ, մասնակցում է կուսակցական միջոցառումներին, 4-րդ Պետական դումայի ընտրական կամպանիային։

Ա. Խումարյանն ավելի քան 10 տարի գտնվելով Աստրախանում, չթուլացող ուժով պահպանում է իր կապը Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հետ։ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունը նա դիմավորում է Աստրախանում որպես դրաշար։ Մարտին ընտրվում է Աստրախանի սովետի պատգամավոր՝ դրաշարների կողմից։ 1917 թ. խմբագրում է «Աստրախանսկի ռաբոչի» թերթը, ղեկավար դեր խաղում քաղաքի բոլշևիկյան կազմակերպության կյանքում։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ժամանակ Ա. Խումարյանը Աստրախանում էր։ 1918 թ. հունվարին նա հաստատվում է Աստրախանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ, ներքին գործերի ժողկոմ, նշանակվում ՌՍՖՍՀ-ի Ազգությունների գործերի ժողկոմատի հայկական գործերի կոմիսարիատի հատուկ լիազոր Մերձվոլգյան հարավում։ 1918 թ. ապրիլ-օգոստոս ամիսներին նա իր հիմնական աշխատանքների հետ միասին Աստրախանի վրայով իրականացնում էր կապը՝ Բաքվի կոմունայի և ՌՍՖՍՀ ժողկոմսովետի, Վ. Ի. Լենինի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի միջև։ Նա ապահովում էր սովետական Ռուսաստանից Բաքվին Աստրախանի վրայով ծովով ուղարկվող ռազմական ու պարենային օգնությունը։ Բաքվի կոմունայի մարտական ղեկավար Ստ. Շահումյանը հաճախ է կարևոր հանձնարարություններ տվել Ա. Խումարյանին։

1919 թ. վերջերին կուսակցության կամքով Աստրախան է ուղարկվում Ս. Մ. Կիրովը, որը կազմակերպում է քաղաքի հերոսական պաշտպանությունը։ Գ. Աթարբեկյանի հետ միասին Ա. Խումարյանը օգնում է Ս. Մ. Կիրովին՝ պատմական մեծ միսիայի կատարման գործում։

1920 թ. կարճ ժամանակով Ա. Խումարյանը ուղարկվում է Պարսկաստան։ Օգոստոսին վերադառնալով Մոսկվա՝ աշխատանքի է նշանակվում Բանգյուղտեսչության ժողկոմատում՝ սկզբում կենտրոնական ապարատում, իսկ հետո՝ Սամարայում։ 1921 թ. ամռանը նա փոխադրվում է Թիֆլիս՝ Կովկասյան առանձին բանակում որպես ՌՍՖՍՀ-ի ԲԳՏ-ի ժողկոմատի լիազոր։ Ա. Խումարյանը կուսակցական-պետական պատասխանատու մի շարք աշխատանքներ է տարել Անդրկովկասյան ֆեդերացիայի սիստեմում։ Նա երկար ժամանակ աշխատել է Անդրկովկասյան ֆեդերացիայի բանգյուղտեսչության ժողկոմատում որպես ժողկոմի տեղակալ։ Լինելով ազնիվ կոմունիստ, նա անդուլ հոգատարություն էր ցուցաբերում աշ-

խատավորների նկատմամբ, պայքարում բյուրոկրատիզմի և բուրժ-բըշուկի դեմ։ Ա. Խումարյանը երկրամասի ժողովուրդների բարեկամության լավագույն ջատագովներից էր, մեծ ինտերնացիոնալիստ։ Ս. Կիրովի, Ա. Մյասնիկյանի, Ս. Օրջոնիկիձեի, Մ. Օրախելաշվիլու և մյուս ականավոր գործիչների հետ միասին նա բեղմնավոր աշխատանք է կատարել Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման ու ամրապնդման, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովրդական տնտեսության զարգացման գործում։

Ա. Խումարյանը կուսակցական-սովետական գործունեությունը սերտորեն զուգակցում էր մամուլում կատարվող աշխատանքին։ Նա «Մարտակոչ» թերթի խմբագիրներից էր։ Խումարյանի գրչին են պատկանում բազմաթիվ արժեքավոր հոդվածներ, որտեղ արծարծված են մարքսիզմ-լենինիզմի տեսության ու պրակտիկայի կարևոր հարցերը, երկրամասի հեղափոխական շարժման շատ դրվագներ։ Գրական-հասարակական և ընթացիկ կյանքի հուզող խնդիրները լայն ու բազմակողմանի արձագանք են գտել նրա հրապարակախոսության մեջ։

Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման գործում արժանի տեղ ունի Սարգիս (Սերգո) Խանոյանը (1877—1937)։ Նա լենինյան հին գվարդիայի այն անձնուրաց մարտիկներից է, որոնք անցել են ռուսական երեք հեղափոխությունների բովով, ակտիվ մասնակցություն ցուցաբերել Անդրկովկասում սովետական կարգերի հաստատմանը։ Նա երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար գործիչներից էր, կրթված մարքսիստ, նշանավոր ժուռնալիստ-հրապարակախոս։ Խանոյանը շատ շուտ հարեց հեղափոխական շարժումներին։ Տակավին Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի 4-րդ դասարանում էր, 16 տարեկան, երբ հրապուրվեց աշակերտական ընդհատակյա խմբակների գործունեությամբ, իր դասընկերներից Աշոտ Խումարյանի հետ միասին մասնակցեց «Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիայի» հիմնադրմանը, նրա տպագիր օրգանների, ինչպես և թռուցիկների, կոչերի հրատարակությանն ու տարածմանը։ Իբրև «անբարեհույս» և «խռովարար» աշակերտի Ս. Խանոյանը երկու անգամ հեռացվեց հոգևոր սեմինարիայից, իսկ 1895 թ. Երևանում ձերբակալվեց «Ասոցիացիայի» գործով։ Նվիրվելով հեղափոխությանը, կյանքի ու պայքարի արգասավոր ուղի անցավ Ս. Խանոյանը։ Աքսորից խուսափելու նպատակով 1896 թ. տեղափոխվում է Ղրիմ, աշխատում Կերչ և Թեոդոսիա քաղաքներում (1902)։ Մանկավարժական աշխատան-

քից բացի, շփվում է տեղի բանվորների հետ, եռանդուն կերպով ուսումնասիրում մարքսիստական գրականությունը։ Այստեղ նա վերջնականապես համոզվում է, որ հայ ժողովրդի ազատագրության միակ ելքը համատեղ պայքարն է համառուսական պրոլետարիատի հետ։

1902 թ. գալով Թիֆլիս, Ս. Խանոյանը կապվում է Ռուսաստանի բարձրագույն դպրոցներից այնտեղ վերադարձած հայ հեղափոխական ուսանողների հետ, Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի, Ա. Զուրաբյանի և այլոց հետ միասին գործուն մասնակցություն ունենում լենինյան-իսկրայական հայ անդրանիկ կազմակերպության՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» ստեղծմանը և «Պրոլետարիատ»-ի հրատարակությանը։ 1902 թ. Ս. Խանոյանը մտնելով ՌՍԴԲԿ շարքերը, II համագումարից հետո ընդմիշտ զինվորագրվում է լենինիզմին, բարձր պահելով լենինյանի վսեմ անունը։

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին ՌՍԴԲԿ Թիֆլիսի և Կովկասյան միութենական կոմիտեի հանձնարարությամբ եռանդուն աշխատանք է ծավալում երկրամասում, մասնակցում «Պրոլետարիատի կռիվը» թերթի խմբագրմանը, մարքսիստական գրականության հրատարակմանն ու տարածմանը։ Նրա բնակարանը կուսակցության գաղտնի կետերից էր, իսկ ինքը՝ ընդհատակում հայտնի էր «Սերգո» մականվամբ։

1904 թ. Ս. Խանոյանը հեղափոխական գործունեության համար ձերբակալվում է երկրորդ անգամ։ Սակայն լինելով փորձված կոնսպիրատոր, այնպես էր թաքցրել իր տանը պահվող հեղափոխական նյութերն ու գրականությունը, որ ոստիկանությունը հարկադրված՝ «հիմնավոր ապացույցներ չունենալու» պատճառով նրան ազատում է կալանքից։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ս. Խանոյանը ՌՍԴԲԿ Կովկասյան միության ղեկավար գործիչների հետ միասին ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանք է տանում բանվորների շրջանում, գլխավորում ինքնակալության դեմ ուղղված քաղաքական գոտեմարտերը։ 1905 թ. նա մասնակցել է Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությանը», «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները» աշխատությունների, Ս. Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում» գրքույկի թարգմանությանը և հրատարակությանը։ 1906 թ. Ս. Խանոյանը մեկնում է Ջալալօղլի և զբաղվում մանկավարժական աշխատանքով։ Իր շուրջը համախմբելով բոլշևիկներին, օգնում է նրանց քաղաքական կրթության գործին, պրոպագանդում լենինյան գաղափարները։

1907—1911 թթ. Ս. Խանոյանը մանկավարժական աշխատանք է կատարում Նուխում և Ղլլարում, նույն եռանդով շարունակելով իր բոլշևիկյան գործունեությունը պրոլետարական հեղափոխության օրրան Պետրոգրադում: Մանկավարժական ակադեմիայում (1912—1914) սովորելու տարիներին, բացի գիտելիքների հարուստ պաշարից, նա ձեռք է բերում նաև կուսակցական ընդհատակյա աշխատանքի մեծ փորձ, դառնում հասուն մարքսիստ:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին Ս. Խանոյանը վերադառնում է Թիֆլիս, նետվում քաղաքական կյանքի հորձանուտ: 1915—1917 թթ. Ստ. Շահումյանի, Ա. Մռավյանի, Վ. Ծրեմյանի, Ա. Միկոյանի, Ա. Ամիրյանի և այլոց հետ ակտիվորեն աշխատակցում է «Պայքար» թերթին: «Պայքար»-ում են լույս տեսել նրա «Չենք զարմանում», «Խմորման նշաններ և սոցիալիստական սպեղանիներ», «Պարենավորման հարցը», «Բանվորական հայ մամուլը», «Անգլիական մամուլը և ռուսական հեղափոխությունը», «Ողջույն «Բրձոլա»-ին» և այլ հոդվածներ: 1917 թ. հունիսին բոլշևիկները «Պայքար»-ից հեռանալուց հետո հիմք են դնում «Բանվորի կռիվը» թերթին, որը Ա. Մռավյանի հետ միասին խմբագրել է Ս. Խանոյանը: Թերթի յուրաքանչյուր համարում լույս են տեսել նրա հրապարակախոսական հոդվածները: Ս. Խանոյանը բոլշևիկյան հայ մամուլի հիմնադիրներից է, նրա աչքի ընկնող խմբագիրներից: Հետագայում նա խմբագրել է «Ալիք» (Ալեքսանդրապոլ) «Կոմունիստ» (Բաքու), «Պահակ», «Նոր ուղի», «Կարմիր աստղ», «Մարտակոչ» (Թիֆլիս) թերթերը և այլ պարբերականներ:

1917 թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունների ժամանակ Ս. Խանոյանը գտնվում էր Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար կենտրոնում: 1918 թ. նա ակտիվ մասնակցություն է ունեցել Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ ծագած ապստամբություններին, մասնավորապես Դուշեթի գյուղացիական ապստամբությանը:

Ս. Խանոյանի հեղափոխական գործունեության վառ էջերից է Հայաստանում սովետական կարգերի հաստատման և ամրապնդման համար մղած պայքարին ցուցաբերած մասնակցությունը: ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի հանձնարարությամբ տեղափոխվելով Հայաստան, 1919—1920 թթ. Ս. Կասյանի, Ա. Ալավերդյանի, Ա. Մռավյանի և մյուս գործիչների հետ միասին նա բեղմնավոր աշխատանք է տանում Հայաստանի բոլշևիկյան կուսակցության կազմավորման, մեծ Հոկտեմբերի ազատարար գա-

զափարների շուրջը հայ աշխատավորությանը համախմբելու ուղղությամբ։ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների 1919 թ. սեպտեմբերյան խորհրդակցությունում և 1920 թ. հունվարյան կոնֆերանսում նա ընտրվել է ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի (Արմենկոմի) կազմում, ակտիվ դեր խաղացել 1920 թ. մայիսյան հերոսական ապստամբության ղեկավարման գործում։ Աշխատելով Ալեքսանդրապոլում, Խանոյանը ընտրվել է Ալեքսանդրապոլի բոլշևիկյան գավառային կոմիտեի կազմում։ Մայիսյան ապստամբության օրերին նա գտնվում էր Ղարաքիլիսայում (Կիրովական)։ Այստեղ էլ դաշնակցական կառավարության հրամանով ձերբակալվում է և արտաքսվում Հայաստանից։ Նա գաղտնի մեկնում է Թիֆլիս, բայց վրաց մենշևիկյան կառավարությունը իմանալով հրամայում է 24 ժամվա ընթացքում թողնել Վրաստանի սահմանները։ Ս. Խանոյանը անցնում է Հյուսիսային Կովկաս։ 1920 թ. հոկտեմբերին նա մեկնում է Սովետական Ադրբեջան, նշանակվում «Կոմունիստ» հայերեն թերթի խմբագիր։ Հայաստանում և Վրաստանում սովետական կարգերի հաղթանակից հետո Ս. Խանոյանը տեղափոխվում է Վրաստան, սկզբում աշխատում իբրև Սովետական Հայաստանի ներկայացուցիչ, իսկ հետո՝ խմբագրում է «Կարմիր աստղ» թերթը։ 1921 թ. փետրվարյան ավանտյուրան Հայաստանում ջախջախվելուց հետո Ս. Խանոյանը մոբիլիզացվում է Երևան և նշանակվում Ալ. Մյասնիկյանի ղեկավարած Սովետական Հայաստանի կառավարության ֆինժողկոմ։ Շատ չանցած նա արտակարգ լիազորություններով ուղարկվում է Լոռու «չեզոք գոտի»։ Հետագայում Ս. Խանոյանը աշխատում է «Մարտակոչ» թերթի խմբագիր, Անդրերկրկոմի վերստուգիչ հանձնաժողովի նախագահ։

Ս. Խանոյանն իր ամբողջ եռանդն ու գիտելիքները նվիրաբերել է Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծմանն ու զարգացմանը։ Լինելով լավագույն ինտերնացիոնալիստ, նա ոչ մի ջանք չի խնայել երկրամասի բազմազգ ժողովուրդների եղբայրական կապերի է՛լ ավելի ամրապնդման համար։ Նա շատ անգամ է ընտրվել Հայաստանի և Անդրկովկասի կուսակցական-սովետական ղեկավար օրգաններում։ Ամենուրեք աչքի է ընկել իր համեստությամբ, սկզբունքայնությամբ և աշխատասիրությամբ։ Ս. Խանոյանն իր ամենօրյա գործունեությունը հմտորեն զուգակցում էր մամուլում կատարվող աշխատանքի հետ։ Նա գրել է բազմաթիվ տեսական-պրոպագանդիստական արժեքավոր հոդվածներ, ակնարկներ, հուշեր, որոնք նվիրված են լենինիզմի տեսությանը, երկրամասի հեղա-

633—21

փոխական շարժումների պատմության: Արժեքավոր են Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների վերաբերյալ նրա գրած հոդվածները: Նա է առաջին անգամ առանձին գրքույկով ներկայացրել լավագույն լենինյան Բ. Կնունյանցի կյանքն ու հեղափոխական գործունեությունը: Նրա գրական ժառանգությունը տոգորված է մարտնչող կուսակցականությամբ:

Երկրամասի կրթված մարքսիստներից էր Սարգիս Հովհաննեսի Կասյանը (Տեր-Գասպարյանց, 1876—1937): Նախնական կրթությունը ստանալով Շուշիում, 1900 թ. մեկնում է Գերմանիա: Լայպցիգի առևտրական ինստիտուտն ավարտելուց հետո սովորում է Բեռլինի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետում, ծանոթանում մարքսիզմին, 1902 թ. կապվում է ՌՍԴԲԿ կազմակերպությունների հետ: 1904 թ. ավարտում է համալսարանը: Այդ ժամանակ «Վերածնություն» (Ռուսչուկ) թերթում հրատարակվում է նրա «Դաշնակցականները Կովկասում» հոդվածաշարը, որտեղ ցույց է տալիս, որ «սպեցիֆիկները» դաշնակցությունից են անջատվել և նույն նացիոնալիստական գաղափարախոսությունն ունեն: 1905 թ. գալով Կովկաս, մտնում է ՌՍԴԲԿ շարքերը, հրապարակախոսական ակտիվ գործունեություն ծավալում: «Դասի հեռանկարներ», «Կյանքը և կյանքականները», «Անվերջ կեղծիքներ», «Գողության, ագիտության ու տհասության մասին», «Հասարակական կարծիքը և մամուլը», «Հայկական հարցը և հայ դեմոկրատիան» և այլ հոդվածներում մերկացրել է բուրժուական նացիոնալիստներին, պրոպագանդել մարքսիզմը: Հետագայում թարգմանել է «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», խմբագրել Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի մի շարք աշխատություններ[64]:

Հայկ Ազատյանը (1881—1964) Ռուսական առաջին հեղափոխությունից սկսած ակտիվ մասնակցություն է ցուցաբերել մարքսիստական գրականության, մասնավորապես Կ. Մարքսի աշխատությունների թարգմանություններին և խմբագրական աշխատանքին: Երիտասարդական տարիներին նա կլանված էր արհմիութենական շարժման հարցերով: Մենշևիզմից նրա անցումը բոլշևիզմի դիրքերը, ամենից առաջ արդյունք էր մարքսիզմ-լենինիզմի տքնաջան ուսումնասիրության, կայուն համոզվածության: Հ. Ազատյանը բանվորական հեղափոխական շարժման միասնության մեջ էր տես-

---

64 Ս. Կասյան, Ընտիր երկեր, Երևան, 1967: Հ. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, Երևան, 1963:

նում հաղթանակի գրավականը։ Հատկապես բնորոշ էր այն բողոքագիրը, որ նա արտասահման էր ուղարկել Տրոցկու օպորտունիստական բլոկի դեմ՝ առաջ բերելով Վ. Ի. Լենինի գոհունակությունը[65]։

1910—1920 թթ. Հ. Ազատյանը հրապարակախոսական արդյունավետ գործունեություն է ծավալում, Ստ. Շահումյանի հետ միասին Բաքվում խմբագրում է «Սովրեմեննայա ժիզն» թերթը, իսկ Թիֆլիսում՝ «Պայքար»-ը։ 1920 թ. իր համախոհների հետ մտնելով կոմունիստական կուսակցության շարքերը, մեկ տարի անց՝ 1921 թ. ընտրվում է Հայաստանի կոմկուսի կենտկոմի քարտուղար։ «Նա պատկանում էր Անդրկովկասի մարքսիստ այն պրոպագանդիստների թվին,— գրել է Աշ. Հովհաննիսյանը,— որոնք իրենց գործունեությունը չէին սահմանափակում սոսկ շրջան գիտելիքների ժողովրդականացումով»[66]։

Հ. Ազատյանի գրչին են պատկանում հայ ժողովրդի և բանվորական հեղափոխական շարժումների պատմությանը, պառլամենտարիզմի, պրոլետարիատի դիկտատուրայի, սոցիալիստական հեղափոխության և այլ պրոբլեմներին նվիրված բազմաթիվ մեծ ու փոքր աշխատություններ։ Նա, ինչպես ասում են, «գոց գիտեր» Կ. Մարքսի «Կապիտալ»-ը, մարքսիստական քաղաքատնտեսությունը, Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի տնտեսագիտական աշխատությունները։ Մարքսիստ-տնտեսագետ Հ. Ազատյանն է, որ առաջին անգամ հայերեն լեզվով խմբագրել է «Կապիտալ»-ը, մարքսիստական գրականության թարգմանական արվեստի գանձարանին նվիրաբերել իր համակողմանի գիտելիքները։

Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման և նրա հաղթանակի ապահովման գործում մեծ է **Ալեքսանդր Ֆեդորովիչ Մյասնիկյանի** (1886—1925) երախտիքը։ Նա հեղափոխական շարժումներին մասնակցել է 1904 թվականից։ Բոլշևիկյան կուսակցության անդամ է 1906 թվականից։ 1906—1908 թթ. կուսակցական ընդհատակյա աշխատանք կատարելով Բաքվում՝ պրոպագանդել է մարքսիզմ-լենինիզմը, դասախոսություններով հանդես եկել ազգային հարցի շուրջ, պաշտպանելով ազգերի ինքնորոշման լենինյան գաղափարը։ Մյասնիկյանը հատկապես մեծ աշխատանք է կատարել զորամասերում, հեղափոխական գործունեություն ծավալել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախա-

65 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 92։
66 Նույն տեղում։

պատրաստման և իրականացման շրջանում։ Նա բոլշևիկյան կուսակցության ճանաչված հրապարակախոսներից էր, կրթված մարքսիստ-լենինյան։

Մարքսիստական ինքնուրույն և թարգմանական գրականության ստեղծման ասպարեզում զգալի ավանդ ունի **Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը** *(1887—1972)։ Միջնակարգ կրթությունը ստացել է հայրենի Շուշի քաղաքի ռեալական դպրոցում։ Դա այն ժամանակ էր, երբ հրապարակորեն բախվում էին հայ հասարակական-քաղաքական իրարամերժ հոսանքները։ Շուշիում ևս իր ծիլերն էր արձակել հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան։ Տակավին 90-ական թվականների սկզբներին Շուշու թեմական դպրոցում մանկավարժական աշխատանք էր կատարում հայ անդրանիկ մարքսիստներից Գևորգ Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ), հեղափոխական երիտասարդությունն իրենց թևերի տակ էին քաշել Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» բովով անցած Բոգդան Կնունյանցը, Հովսեփ Մելիք-Հովսեփյանը, Սիմոն Ավետիսյանը, Եվրոպայի և Ռուսաստանի քաղաքների բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող մարքսիստական գաղափարներով տոգորված ուսանողները։ Աշ. Հովհաննիսյանի քաղաքական աշխարհայացքը ձևավորվել է հայ առաջին մարքսիստների և հատկապես Բ. Կնունյանցի, Ս. Բեկզադյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Վլադիսլավ Կասպարովի (Գասպարյան), Ս. Համբարձումյանի և այլոց գործունեությամբ ստեղծված մթնոլորտում։ 1904 թ. նա ոտք է դնում հեղափոխական ուղու վրա, զինվորագրվում բանվոր դասակարգի ազատագրության գործին։ «1905 թվականի հեղափոխության նախօրեին,— գրել է Աշ. Հովհաննիսյանը,— Հ. Գյուլիքևխյանի և իմ հայացքների մշակման վրա ազդում էին գրական հրապարակը հեղհեղող թերթերն ու բրոշյուրները։ Մարքսի և Էնգելսի դժվարամարս երկերից ավելի անմիջական էր նրանց հետևորդների ազդեցությունը։ Մեր աշակերտության տարիներին լարված ուշադրությամբ կարդում էինք Կաուցկու և մանավանդ Պլեխանովի հայտնի աշխատությունները։ Այդ ժամանակ մեզ զբաղեցրած ստվարագրքերից ոչ մեկը ազդեցության այնքան խոր հետք չէր թողել մեզ վրա, որքան Պլեխանովի «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի հարցի շուրջը» աշխատությունը։ Լենինի գործերը մեզ մատչելի դարձան ավելի ուշ՝ մեր ուսանողության տարիներին։ Հիշում եմ, սակայն, որ նրա երկերից մեկը տեսա դեռ դպրոցի նախավերջին դասարանում։ Ես ու Կասպարովը*

նստում էինք վերջին նստարանին։ Ռուսաց լեզվի դասի ժամանակ Սլավան ծնկի վրա թերթում էր ստվար մի հատոր։ Դասատուն՝ Լյոնտեր, այդ նշմարեց և նկատողություն արեց նրան։ Դա Լենինի «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» նշանավոր գիրքն էր, որը լույս էր տեսել Վ. Իլյին կեղծանունով։ Սլավան ինձ ասաց, որ այդ անվան տակ թաքնված է բոլշևիկների գլխավոր տեսաբանը՝ Լենինը»[67]։

1905 թ. հեղափոխության ալիքները ծփանք տալով թափանցեցին հայ իրականություն, ազատագրական-հեղափոխական պայքարի կոչեցին աշխատավոր զանգվածներին։ Աշոտ Հովհաննիսյանն իր ընկերների՝ Վ. Կասպարովի, Հ. Գյուլիքևխյանի հետ միասին 1905 թ. գարնանը ղեկավար մասնակցություն է ունենում Շուշու ռեալական դպրոցի աշակերտական աղմկահույզ դասադուլին, ցրում հակացարական բովանդակությամբ թռուցիկներ։ Դասադուլը երկու ամիս շարունակվելուց հետո թեև ճնշվեց, բայց անջնջելի հետք թողեց Աշ. Հովհաննիսյանի հոգում։ 1906 թ. նա մեկնում է արտասահման և որոշ ընդհատումով՝ մինչև 1913 թ. սովորում Ենայի, ապա Հալլեի և այնուհետև Մյունխենի համալսարաններում։ Գերմանական սոցիալ-դեմոկրատական միջավայրում Հովհաննիսյանը խորապես ուսումնասիրում է Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և նրանց հետևորդների աշխատությունները, դառնում համոզված մարքսիստ։ Նա սերտ շփման մեջ է մտնում ռուս ուսանողական գաղութի և նրա սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ, յուրացնում մարքսիզմը։ 1906 թ. վերջին Աշ. Հովհաննիսյանը Ենայի համալսարանում մտնում է ՌՍԴԲԿ շարքերը, սկզբից ևեթ հարելով բոլշևիկներին, գործուն մասնակցություն ցուցաբերելով մենշևիկների դեմ մղվող գաղափարամարտերին։ 1907 թ. գարնանը Հ. Գյուլիքևխյանի հետ միասին նա մեկնում է Ապոլդա քաղաքը և լսում Ավգուստ Բեբելի՝ Ռայխստագի ընտրապայքարի կապակցությամբ արտասանած կրակոտ ճառը, որը խոր տպավորություն է թողնում նրա վրա։ Զինվելով պատմա-փիլիսոփայական ու սոցիոլոգիական հարուստ գիտելիքներով, նա միաժամանակ ձեռք է բերում քաղաքական պայքարի անհրաժեշտ փորձ։ «Այդ ժամանակ այլևս կասկած չմնաց, հետագայում վերհիշում է նա,— որ միայն կազմակերպու-

---

67 Աշոտ Հովհաննիսյան, *Հուշեր անցյալից (տե՛ս «Լրաբեր հասարակական գիտությունների», № 3, 1966)։ Նույնը՝* Աշոտ Հովհաննիսյան, *Հուշեր և բնութագրումներ, Երևան, 1969, էջ 79։*

թյան միջազգային՝ ինտերնացիոնալիստական սիստեմը կարող է հիմք դառնալ և ապահովել հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի գաղափարական և մարտական միասնությունը»[68]:

1913 թ. հունվարին, ավարտելով համալսարանական ուսումնառության շրջանը՝ Աշ. Հովհաննիսյանը գերմաներեն հաջողությամբ պաշտպանում է «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» դիսերտացիան՝ ստանալով փիլիսոփայության դոկտորի գիտական աստիճան։ Նրանում մարքսիստական հայեցակետից նշվում է, որ Իսրայել Օրին առաջինն էր, որ հայ ժողովրդի ազատագրական ակնկալությունները կապեց բացառապես Ռուսաստանի օգնության հետ, որով և դրավ դարեր շարունակ իր ազատության համար մարտնչող հայ ժողովրդի ազատագրության հուսալի ուղին։

Աշ. Հովհաննիսյանը, մարքսիստական գիտելիքներով հարստացած, վերադառնում է Հայաստան և 1914—1917 թթ. աշխատում էջմիածնի Գևորգյան ճեմարանում, իր շուրջը համախմբում հեղափոխական տրամադրություններով տոգորված երիտասարդությանը, Գ. Աթարբեկյանի, Ա. Միկոյանի և այլոց հետ միասին ակտիվ մասնակցություն ցուցաբերում տեղական բոլշևիկյան կազմակերպության կյանքին, օգնում ճեմարանում ընդհատակյա գործող մարքսիստական խմբակին, ծրագրում նրանց աշխատանքը, սերտ կապ հաստատում Երևանի բոլշևիկների և նրանց ճանաչված ղեկավար Արշավիր Մելիքյանի հետ։

1917—1920 թթ. նա մարքսիստական հրապարակախոսական ակտիվ գործունեություն է ծավալում՝ սկզբում Շուշիում և Բաքվում, իսկ հետո՝ Մոսկվայում, Դոնի Ռոստովում և Երևանում։ Հայկական գործերի կոմիսարիատում, իբրև հրատարակչության բաժնի վարիչ նա եռանդուն ջանքեր ներդրեց Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների թարգմանությունների, մարքսիստական ինքնուրույն հանրամատչելի գրականության ստեղծման ու հրատարակման, այն Հայաստան ու հայաբնակ վայրերը առաքելու ուղղությամբ։ Աշ. Հովհաննիսյանը հայկական քաղաքական լենինապատման առաջին ստեղծողներից է, Վ. Ի. Լենինի կյանքի և հեղափոխական գործունեության կրակոտ պրոպագանդիստը։

Լինելով համոզված մարքսիստ, Հովհաննիսյանն իր ավանդն է մուծել Հայաստանում մարքս-լենինյան գաղափարների տարածման ու պրոպագանդման, հեղափոխական շարժումների ծավալ-

---

68 Աշոտ Հովհաննիսյան, *Հուշեր և բնութագրումներ*, Երևան, 1969, էջ 5։

ման, բոլշևիկյան կազմակերպությունների ամրապնդման, սովետահայ սոցիալիստական մշակույթի զարգացման գործում։ Հավատարիմ լենինյանն ավելի քան 60 տարի կոմունիստական կուսակցության շարքերում իր ուժերն ու գիտելիքները նվիրաբերեց Սովետական Հայաստանի բարգավաճմանը, հայագիտության առաջընթացին, հայ ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների մարքսիստական լուսաբանությանը։

1922—1927 թթ. Հովհաննիսյանն աշխատելով որպես Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի գլխավոր քարտուղար, Ա. Մյասնիկյանի, Ս. Լուկաշինի, Ա. Մռավյանի, Ա. Կարինյանի, Ս. Մարտիկյանի և մյուս ղեկավար գործիչների հետ միասին բազում ջանքեր գործադրեց Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության և մշակույթի զարգացման համար։ Հետագայում՝ իբրև գիտնական, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, երիտասարդական ավյունով լցված պեղում էր հայ ժողովրդի, նրա հասարակական-քաղաքական մտքի պատմության չհայտնագործված ծալքերը, մարքսիստորեն լուսաբանում շրջանցված կամ վիճելի գիտական բարդ պրոբլեմները։ Աշ. Հովհաննիսյանը հայագիտական հարուստ ժառանգություն թողեց։ Նրա տեսական գործունեության փայլուն էջը Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածումն է, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքների պրոպագանդան։

Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների պատմության մեջ պայծառ էջ է կազմում ՌՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողկոմատի հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը։ 1918—1922 թթ. Մոսկվայում հայերեն լույս տեսան մարքսիստական ավելի քան 50 թարգմանական և ինքնուրույն գրքեր։ Այդ ուղղությամբ արդյունավետ աշխատանք կատարեցին Վառլամ Ավանեսովը, Ալեքսանդր Մյասնիկյանը (Մարտունի), Վահան Տերյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Դրաստամատ Սիմոնյանը, Պողոս Մակինցյանը, Գուրգեն Հայկունին, Հայկ Հովսեփյանը, Արտաշես Կարինյանը, Գրիգոր Վարդանյանը, Հայկ Բժշկյանը (ԳԱՅ), Հովակիմ Սոլովյանը, Երվանդ և Շավարշ Գարագաշյանները և ուրիշներ։

Վառլամ Ավանեսովը՝ Սուրեն Կարապետի Մարտիրոսյանը (1884—1930) նախնական կրթությունը ստացել է իր ծննդավայրում՝ Կաղզվանում։ 1896 թ. իր ծնողների հետ միասին նա փոխադրվում է Ստավրոպոլ, ընդունվում տեղի արական գիմնազիան, որն ավարտում է 1907 թվականին։ Նա իր քաղաքական մկրտու-

թյունը ստանում է ռուսական հեղափոխական միջավայրում։ Ռուսաստանի պրոլետարիատի դասակարգային առաջին գոտեմարտերի ազդեցությամբ հաղթահարելով գաղափարական մոլորությունները, կանգնում է իսկական հեղափոխական ուղու վրա, 1903 թ. մտնում ՌՍԴԲԿ շարքերը։ Հյուսիսային Կովկասում (Ստավրոպոլ, Եկատերինոդար-Նովոռոսիյսկ) Վ. Ավանեսովն ակտիվ մասնակցություն է ունենում ռուսական առաջին հեղափոխությանը, բանվորների մեջ, զինվորական կայազորներում բոլշևիկյան պրոպագանդա մղում, օգնում հեղափոխական տրամադրությունների զարգացմանը։ 1907 թ. առողջական վիճակը ստիպում է նրան մեկնել արտասահման՝ Շվեյցարիա (նա գնաց պարսկահպատակ Արմենակ Ալեքսանդրի Ավանեսյանցի անձնագրով և այդ ժամանակից էլ կրում է Վարլամ Ավանեսով անունը՝ իբրև կուսակցական ծածկանուն), ուր մինչև 1913 թ. սովորում է Ցյուրիխի համալսարանի բժշկական ֆակուլտետում։ 1909—1912 թթ. նա ղեկավարում է համալսարանի ռուս ստուդենտների ՌՍԴԲԿ միացյալ խմբի գործունեությունը։ Տեղատվության տարիներին նա պրոպագանդում և պաշտպանում է լենինյան գաղափարները։ 1914 թ. սկզբներին Վ. Ավանեսովը վերադառնալով Ռուսաստան, Մոսկվայում կապվում է տեղական բոլշևիկյան կազմակերպության հետ, ընդհատակյա աշխատանք կատարում առևտրա-արդյունաբերական ձեռնարկությունների արհմիություններում։ Դա, հիրավի՛, շրջադարձային նշանակություն ունեցավ նրա կյանքում։ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ ժողովրդի կրած ծանր կորուստները խոր վերքեր ակոսեցին բոցաշունչ հայրենասերի սրտում։ Նա լարված ուշադրությամբ հետևում էր հայրենիքում կատարվող իրադարձությունների ընթացքին, դատապարտում դաշնակցության արկածախնդրությունը, մերկացնում թուրքական կառավարող շրջանների ցեղասպան քաղաքականությունը։

1917 թ. ցարիզմի անկումից հետո, Վ. Ավանեսովը քաղաքական պայքարի առաջին գծումն է, ղեկավար մասնակցություն է ունենում Մոսկվայի սովետի բոլշևիկյան ֆրակցիայի աշխատանքներին, ընտրվում Մոսկվայի սովետի և նրա նախագահության անդամ, սովետական պետության հիմնադիր համագումարի՝ Սովետների II համագումարի պատգամավոր։ Պետրոգրադում՝ ռազմահեղափոխական խորհրդի կազմում նա եռանդուն մասնակցություն է ունենում Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը։ Վ. Ավանեսովը սոցիալիստական հեղափոխության փոթորկածին-

ներից է։ Սովետների II համագումարում նա ընտրվում է Համամիութենական Կենտգործկոմի և նրա նախագահության անդամ, Կենտգործկոմի քարտուղար, որ աշխատում է մինչև 1919 թվականը։ Գտնվելով սովետական բազմազգ սոցիալիստական պետության ղեկավար աշխատողների կորիզում, անմիջականորեն աշխատելով Վ. Ի. Լենինի հետ, Վ. Ավանեսովը դրսևորում է պետական անխոնջ գործչի փայլուն հատկություններ։ Իլյիչը բարձր էր գնահատում և հաճախ խորհրդակցում նրա հետ։ 1918—1921 թթ. որպես Հայկական գործերի կոմիսար, եռանդուն աշխատանք կատարեց հայ գաղթականության համախմբման, նրանց մեջ մեծ Հոկտեմբերի, սովետական իշխանության գաղափարները տարածելու, հայ ազատագրական-հեղափոխական պայքարը կազմակերպելու ուղղությամբ։ Նա սիստեմատիկաբար ՌԿ(բ)Կ Կենտկոմին, Սովետական կառավարությանը և անձամբ հայ ժողովրդի մեծ բարեկամ Վ. Ի. Լենինին իրազեկ էր պահում հայ աշխատավոր մասսաների վիճակին, պատմում Հայկական գործերի կոմիսարիատի և նրա տեղական բաժանմունքների գործունեության մասին։

Վ. Ավանեսովը համոզված լենինյան էր, կրթված մարքսիստ։ Նրա ղեկավարությամբ իրականացվեցին Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի բազմաթիվ աշխատությունների հայերեն թարգմանությունները ու հրատարակությունները, նրանց Հայաստան առաքումը։ 1920 թ. աշնանը նա լավատեսությամբ լցված գրել է. «Ես հաստատ համոզված եմ, որ Ինտերնացիոնալի հաղթական հիմնը կարթնացնի և կյանքի կկոչի Կովկասի բոլոր աշխատավորներին։— Մոտ է ժամը, երբ բոլոր հայ աշխատավորները, որոնք կապիտալի և իմպերիալիզմի դաժան ձեռքերով վտարված են հարազատ վայրերից, նորից կվերադառնան իրենց օջախները, և դեն նետելով դարավոր ստրկության շղթաները՝ կմիաձուլվեն աշխարհի բոլոր աշխատավորների անբաժան ընտանիքի մեջ»[69]։

Վ. Ավանեսովը մարքսիզմի կրակոտ պրոպագանդիստ էր, կուսակցական-պետական աչքի ընկնող գործիչ, նոր, սոցիալիստական կյանքի ջերմեռանդ կառուցողներից մեկը։

Թարգմանական-խմբագրական արդյունավետ գործունեություն է ծավալել Դրաստամատ Սաքանազի Տեր-Սիմոնյանը (1895—1937)։ Ծնվել է Ապարանի շրջանի Համամլու գյուղում։ 1903 թ. Տեր-Սիմոնյանների ընտանիքը տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ

---

69 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 19, оп. 1, д. 7, л. 2.

և սովորում է պատանի Դրաստամատը։ 1912 թ. ավարտելով Ներսիսյան դպրոցը, նա ընդունվում է Կիևի Առևտրական ինստիտուտի տնտեսագիտական ֆակուլտետը։ Այստեղ նա կապվում է տեղի սոցիալ-դեմոկրատական խմբակների հետ, ջանադրաբար ուսումնասիրում մարքսիզմը և 1913 թ. ընդմիշտ զինվորագրվում բոլշևիզմին, դառնում կոմունիստ։ Կիևի հեղափոխական միջավայրը, ուսանողական շարժումները քաղաքականապես կոփեցին Դ. Տեր-Սիմոնյանին։ 1914 թ. վերջերին նա զորակոչվում է բանակ։ 1915 թ. արդեն ռազմաճակատումն էր։ Այստեղ կապվելով բոլշևիկների հետ, անդուլ աշխատանք է կատարում զինվորների շրջանում, որն աննկատ չի մնում ցարական պահնորդական բաժնի կողմից։ Դ. Տեր-Սիմոնյանի հեղափոխական գործունեությունը նոր թափով դրսևորվեց 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո։ Նա ակտիվորեն մասնակցում էր զինվորների դեպուտատների Սովետների ստեղծմանը, բոլշևիկների գնդային, բանակային համագումարների, կոնֆերանսների և խորհրդակցությունների աշխատանքներին։ Տեր-Սիմոնյանն իր բոլոր ջանքերը նվիրաբերեց հեղափոխության առաջին էտապից երկրորդին անցնելու՝ բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից՝ սոցիալիստական հեղափոխության անցնելու վերաբերյալ Լենինի Ապրիլյան հուշակավոր թեզիսների ու կոմունիստական կուսակցության որոշումների պրոպագանդմանը, ինչպես և ժամանակավոր կառավարության իմպերիալիստական քաղաքականության մերկացմանը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության օրերին Դ. Տեր-Սիմոնյանը Օմսկումն էր։ Այստեղ նա գործուն մասնակցություն է ցուցաբերում սովետական կարգերի հաստատման համար մղվող պայքարին՝ զենքը ձեռքին կռվում ժամանակավոր կառավարության տեղական օրգանների տապալման համար։ Իշխանությունը նվաճելուց հետո նա ընտրվում է Օմսկի մարզային Սովետի կազմում, կայազորի զինվորական տարբեր կոմիտեներում և ընտրովի այլ օրգաններում։ Նա Օմսկի զինվորական օկրուգի կոմիսարն էր։ 1918 թ. մայիսին Դ. Տեր-Սիմոնյանը Մոսկվայում էր, Ազգությունների ժողկոմատի Հայկական գործերի կոմիսարիատում։ Այստեղ Վարլամ Ավանեսովի, Վահան Տերյանի և այլոց հետ միասին բեղմնավոր աշխատանք է ծավալում սովետական իշխանության, լենինյան ազգային քաղաքականության իրականացման համար։ Հայկական գործերի կոմիսարիատի տպագիր օրգաններում, հատկապես «Կոմունիստ» հանդեսի էջերում, լույս են տեսնում Դ. Տեր-

Սիմոնյանի տեսական արժեքավոր հոդվածները, որոնք պրոպագանդում էին կուսակցության տեսական-քաղաքական հարցերը, Մեծ Հոկտեմբերի գաղափարները։ Արժեքավոր է նրա «Բոլշևիզմի ծագումն ու զարգացումը» հոդվածը։

Դ. Տեր-Սիմոնյանը, իբրև սպա, շատով զորակոչվում է կարմիր բանակի շարքերը և 1918 թ. սեպտեմբերից մինչև 1919 թ. մարտը աշխատում որպես կարմիր բանակի մատակարարման կենտրոնական վարչության հրահանգիչ։ Այդ տարիներին նա մերթ Ուկրաինայում էր՝ Կիևում, մերթ Օդեսայում, մերթ Մոսկվայում։ Ուր էլ կուսակցությունը ուղարկել է նրան, նա արդարացրել է կուսակցության և ժողովրդի վստահությունը։ 1919 թ. վերջերին (նոյեմբեր) ՌԿ(բ)Կ Կենտկոմի կողմից Դ. Տեր-Սիմոնյանն ուղարկվում է Անդրկովկաս՝ կուսակցական ընդհատակյա աշխատանքի։ Թիֆլիսում ՌԿ(բ)Կ Կովկասյան Երկրային կոմիտեի որոշմամբ Սերգո Խանոյանի, Վահան Երեմյանի և այլոց հետ միասին նա խմբագրում է Երկրային Կոմիտեի օրգան՝ «Պահակ» թերթը։ «Պահակ»-ի էջերում նա հանդես է գալիս մարտական հոդվածներով, որոնք աչքի էին ընկնում իրենց կուսակցականությամբ, ճշմարտացիությամբ, աշխատավոր զանգվածներին համոզելու մեծ ուժով։ Դ. Տեր-Սիմոնյանը մերկացնում էր Անդրկովկասի նացիոնալիստական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականությունը, ընդգծում, որ Անդրկովկասի ժողովուրդների «լավագույն սպասելիքներն ու հույսերը անքակտելիորեն կապված են կոմունիզմի հաղթական երթի հետ»[70]։ Նույնպիսի եռանդով նա խմբագրում է «Նոր ուղի» թերթը, որը հիմնադրվել է Թիֆլիսում՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի Կոմիտեի (Արմենկոմի) նախաձեռնությամբ։ 1920 թ. ապրիլին ՌԿ(բ)Կ Կովկասյան Երկրային Կոմիտեի որոշմամբ Դ. Տեր-Սիմոնյանը ուղարկվում է Հայաստան՝ ընդհատակյա կուսակցական աշխատանքի։ Նա կոոպտացիայի է ենթարկվում Արմենկոմի կազմում, Ս. Կասյանի, Արշ. Մելիքյանի հետ միասին ձեռնամուխ լինում «Գյուղացու ձայն» թերթի հրատարակմանը։

Դ. Տեր-Սիմոնյանը Հայաստանում եռանդուն մասնակցություն ունեցավ սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարին՝ 1920 թ. մայիսյան քաղաքական ցույցերին, որը վերածվեց զինված ապստամբության։ ՌԿ(բ)Կ Հայաստանի Կոմիտեի կողմից Արտաշես Մելքոնյանի հետ միասին Դ. Տեր-Սիմոնյանն ուղարկվեց

70 Տե՛ս «Պահակ», 13 հունվարի 1920 թ.։

Ալեքսանդրապոլ, որտեղ իբրև Արմենկոմի ներկայացուցիչ, Ա. Նուրիջանյանի, Ս. Մուսայելյանի և մյուս բոլշևիկների հետ միասին ղեկավարում էր ապստամբությունը։ Մայիսյան ապստամբության ժամանակավոր պարտությունից հետո Դ. Տեր-Սիմոնյանը անցնում է ընդհատակ, հաղթահարելով մեծ դժվարություններ, մեկնում է Բաքու և աշխատում Հայաստանի կոմունիստական կազմակերպության արտասահմանյան բյուրոյում։ 1920 թ. աշնանը նա մեկնում է Դոնի-Ռոստով, որտեղից ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի դեկտեմբերի 10-ի որոշմամբ նորից է գալիս Հայաստան և լիովին նվիրվում հայ ժողովրդի ազգային և սոցիալական վերածնության մեծ գործին։

Դ. Տեր-Սիմոնյանն իր հեղափոխական եռանդը, մարքս-լենինյան գիտելիքները լիովին ի սպաս դրեց Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության և մշակույթի զարգացմանը։ Նա կուսակցական-պետական աշխատանքը հմտորեն զուգակցում էր ժուռնալիստական-հրապարակախոսական, գրականագիտական աշխատանքի հետ։ Նա ճանաչված մարքսիստ-գրականագետ էր։ Նրա գրչին են պատկանում բազմաթիվ տեսական-գրականագիտական աշխատություններ, այդ թվում՝ «Կ. Մարքս» հանրամատչելի ուսումնասիրությունը, «Արդի գեղարվեստական գրականությունը Հայաստանում», «Մեր թատերական արվեստի մասին», «Մարքսը և արվեստը», «Մարիետա Շահինյան», «Միքայել Նալբանդյան», «Տերյանի պոեզիան» և այլ հոդվածներ։

Դ. Տեր-Սիմոնյանը տեսական պատրաստականությամբ, լավագույն հատկություններով օժտված մարդ էր, հայկական լենինապատման հմուտ խմբագիր։

Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունները նոր, բարձր աստիճանի հասան սովետական իշխանության տարիներին, որոնց պսակն են կազմում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Ընտիր երկերը», Վ. Ի. Լենինի Երկերի չորրորդ հրատարակությունը։ Ներկայումս հաջողությամբ իրականացվում է Վ. Ի. Լենինի Երկերի լիակատար ժողովածուի հինգերորդ հրատարակության հայերեն տպագրությունը[71]։

---

71 Տե՛ս Խ. Բարսեղյան, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների պատմություն, Երևան, 1969։ «Հիսուն տարում։ Մատենագիտություն ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի հրատարակությունների։ 1923—1973», Երևան, 1973։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՈՒՂԻՆԵՐՈՒՄ

1. Մարքսիստական-լենինյան հետևողական գծի իրականացման համար: 2. «Նոր այդպիսի կուսակցություն»: 3. Կենտրոնի գործիչները շատ մեծ կարիք ունեն «նեցուկ»-ների: 4. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը և նրա արձագանքները: 5. Հողի, խաղաղության և հաշտության վերաբերյալ լենինյան դեկրետների պրոպագանդան: 6. Դեպի սոցիալիզմի բազավորություն:

I

Ցարիզմի անկումից հետո Հայաստանում կառավարող կուսակցության դիրք գրավեց դաշնակցությունը։ Հավատարիմ իր վաղեմի նացիոնալիստական ավանդույթներին, քողարկվելով սոցիալիստական կեղծ դիմակի տակ, դաշնակցությունը պաշտպանում էր հակահեղափոխական ժամանակավոր կառավարությանը և նրա տեղական օրգաններին ամեն ինչ անում էին այն բուրժուական շրջանակներում պահելու համար։ Այդպիսի ուղեգիծ էին վարում մանրբուրժուական կուսակցություններն ու հոսանքները, հատկապես «սպեցիֆիկները»։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները անցնելով լեգալ գործունեության, շարունակում էին հետևողական մարքսիստական-լենինյան գիծը՝ հեղափոխական աշխատանք տանել բանվորների, աշխատավոր գանգվածների մեջ։ Ստեղծված նոր իրադրության պայմաններում բոլշևիկները գաղափարական պայքարի կրակն ուղղել էին պրոլետարական հեղափոխության թշնամիների դեմ։ Ճիշտ է, Երկրամասի քաղաքական կյանքում առաջացած որոշ իրադարձությունների պատճառով շատ տեղերում բոլշևիկ-լենինյանները և մենշևիկները աշխատում էին մի կազմակերպության

մեջ, բայց դա ձևական բնույթ էր կրում։ Բոլշևիկները անզիջում դիմակայում էին մենշևիկներին։ Այսպես, ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունում բոլշևիկ-լենինյանները, Արշ. Մելիքյանի ղեկավարությամբ, քաղաքական աշխատանք էին կատարում արհմիություններում, երիտասարդության մեջ, մերկացնում ազգայնական կուսակցությունների և մենշևիկների հակաժողովրդական գործողությունները։

ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության աչքի ընկնող գործիչները՝ Գ. Աթարբեկյանը, Պ. Արվելաձեն, Գ. Ղարիբջանյանը, Բ. Ղոզյանը, Ի. Շապովալենկոն և ուրիշներ մասսաներին պարզաբանում էին բոլշևիկների քաղաքականությունը հեղափոխության հաղթանակի հարցում, սուր քննադատության ենթարկում մենշևիկներին, էսեռներին, դաշնակցությանը[1]։ Օրավուր աճում էր բոլշևիկյան կուսակցության հեղինակությունն ու ազդեցությունը։ Արդեն 1917 թ. սեպտեմբերին ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության շարքերում կար շուրջ 600 մարդ[2]։ Նրանց ազդեցությունը հատկապես ուժեղ էր կայազորի զինվորների վրա։ ՌՍԴԲԿ Ալավերդու, Սարիղամիշի և այլ կազմակերպություններում նույնպես ազդեցիկ դեր ունեին բոլշևիկները։ Հայ լենինյանները քաղաքական աշխատանք էին կատարում ոչ միայն Հայաստանի (այդ ժամանակ Անդրկովկասը դեռևս վարչական մեկ միավոր էր և ազգային տերիտորիալ որոշակի սահմանազատումներ չկային), այլև երկրամասի մյուս նահանգներում ու քաղաքներում։ Միանգամայն հասկանալի է, որ դա լիովին բխում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի շահերից։ Հիշենք, որ 1916 թ. Երևանի ամբողջ բնակչությունը 30 հազարից չէր անցնում, այնինչ, միայն Թիֆլիսում կար 149 հազար հայ, իսկ ամբողջ Վրաստանում ապրում էր 454 հազար հայ, Ադրբեջանում՝ 432 հազար հայ, այն դեպքում, երբ Հայաստանի տարածքում (նկատի ունենք այժմյան Հայկական ՍՍՀ-ն) ապրող բնակչությունը կազմում էր մեկ միլիոնից քիչ ավելի[3]։ Սա նույնպես բազմազգ երկրամասի այն առանձնահատկություններից էր, որ հաշվի էին առնում բոլշևիկները և ազգային հարցի մարքսիստական լուծման փայլուն օրինակ տալիս։

---

[1] *Г. Б. Гарибджанян,* Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти, Ереван, 1957.

[2] Տե՛ս «Кавказский рабочий», № 75, 1917.

[3] Տե՛ս «Հայաստանի բնակչությունը նախախորհրդային և խորհրդային շրջանում, Պ. Աբելյանի կազմած վիճակագրական տվյալները, Երևան, 1931, էջ 56, 62, 69, 70։

Հայաստանում եռում էր քաղաքական կյանքը։ Աշխատավորների ժողովների ու միտինգների ամբիոններից, բոլշևիկյան մամուլի էջերից հնչում էր լենինյանների ճշմարտացի և իրավացի ձայնը։ Նրանք մերկացնում էին ժամանակավոր կառավարության հակաժողովրդական քաղաքականությունը, պարզաբանում երկիշխանության իմաստը, «Ամբողջ իշխանությունը սովետներին» լենինյան պահանջի նշանակությունը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման և իրագործման ժամանակաշրջանում, Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունների ղեկի մոտ էին Ստ. Շահումյանը, Ա. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Ի. Ֆիոլետովը, կոմունիստական կուսակցության այլ ականավոր գործիչներ։ Այդ օրերին, Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ, Կովկասում էր գտնվում Կենտկոմի ներկայացուցիչ Բ. Բորյանը, որը շրջագայում էր երկրամասում, օգնում կուսակցական կազմակերպություններին, նրանց զինում լենինյան գաղափարներով։ 1917 թ. հուլիսի 16-ին Բ. Բորյանը հանդես գալով ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպության քաղաքային ժողովում, շարադրում է ընթացիկ մոմենտի հարցերը, բոլշևիկների տակտիկան ու ստրատեգիան։ Ժողովը, որին մասնակցում էին Բ. Ղարիբջանյանը, Պ. Սրվելաձեն, Գ. Աթարբեկյանը, Գ. Հաննաօղլյանը, Ի. Ի. Կորոստելենկոն, Վ. Տարախչյանը, Ա. Ստամբոլցյանը, Էդ. Ամատունին, Ն. Լեժավան և շատ ուրիշներ, միահամուռ հավանություն տվեց կուսակցության լենինյան քաղաքական գծին։ Հենց այդ ժողովում էլ, Բ. Բորյանի զեկուցումից հետո, որոշում կայացվեց անջատվել մենշևիկների հետ ունեցած ձևական միավորումից և ստեղծել ինքնուրույն բոլշևիկյան կազմակերպություն։ Ընտրվեց ՌՍԴԲ(բ)Կ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության բյուրո՝ 9 հոգուց, որի կազմում էին Պ. Սրվելաձեն (զինվոր), Բ. Ղարիբջանյանը (ուսուցիչ), Լ. Մակարովը (զինվոր), Ի. Կորոստելենկոն (զինվոր), Վ. Թարախչյանը (ուսուցչուհի), Ց. Ամաշուկելին (զինվոր), Լ. Հովհաննիսյանը (բանվոր), Ն. Լեժավան (բանվոր) և Ի. Շապովալենկոն (զինվոր)[4]։ Այսպիսով, Հայաստանում առաջինը Ալեքսանդրապոլի բոլշևիկները սահմանազատվեցին մենշևիկներից։ Հետագա ամիսներին, աստիճանաբար նրանց օրինակով մենշևիկներից իրենց քաղաքական կապերը խզեցին մյուս կազմակերպությունների բոլշևիկները։

---

[4] Տե՛ս «Рабочий и солдат», № 29, 1917, Александрополь.

Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման գործում մեծ երախտիք ունեն Լ. Կեցխովելին, Ա. Ծուլուկիձեն, Ի. Ստալինը, Մ. Ցխակայան, Պ. Ջափարիձեն, Ֆ. Մախարաձեն, Մ. Դավիթաշվիլին, Գ. Օրջոնիկիձեն, Պ. Արվելաձեն և ուրիշներ: Մեծ Հոկտեմբերի նախօրյակին Ալեքսանդրապոլում և զորամասերում իր պրոպագանդիստական, ագիտացիոն-հրապարակախոսական գործունեությամբ աչքի ընկավ Պյոտր Արվելաձեն *(1888—1919): Ծանր ու զրկանքներով է անցել նրա մանկությունը: Տասնյոթամյա պատանին նետվում է ռուսական առաջին հեղափոխության հորձանուտը. երկրամասի երկաթուղային բանվորների շարքերում մասնակցում ցարիզմի դեմ ծավալված դասամարտերին: 1906 թ. զինվորագրվում է բոլշևիկյան կուսակցությանը, դառնում կայուն լենինյան: Ներկուսակցական և քաղաքական պայքարի բովում թրծվում են Պ. Արվելաձեի հայացքները, ինտերնացիոնալիստական ոգին, որը նրան տանում է ՌՍԴԲԿ Թիֆլիսի կազմակերպության ղեկավար գործիչների շարքերը: 1909 թ. ընտրվելով Թիֆլիսի կուսակցական կոմիտեում, ակտիվ մասնակցություն է ցուցաբերում Անդրկովկասի հեղափոխական շարժումներին, մարքսիստական պրոպագանդայի ծավալմանը, բոլշևիկյան մամուլի, այդ թվում՝ «Թիֆլիսսկի պրոլետարի» թերթի աշխատանքներին: 1910 թ. ցարական գործակալները, ի թիվս բոլշևիկյան այլ գործիչների, ձերբակալում են Պ. Արվելաձեին, նետում Մետեխի բանտը և ապա աքսորում երկրամասի սահմաններից:*

Հեղափոխական շարժման նոր վերելքի տարիներին գտնվելով Ուկրաինայում, Խարկովի բանվորների շարքերում, Պ. Արվելաձեն շարունակում է եռանդուն մասնակցություն ցուցաբերել բանվորական շարժումներին, Պետական IV դումայի նախընտրական կամպանիային, պրոֆմիութենական կազմակերպությունների աշխատանքներին, հմտորեն զուգակցելով լեգալ և անլեգալ հնարավորությունները:

1914—1916 թթ. Պ. Արվելաձեն, իբրև զինապարտ, գտնվում էր Հարավ-արևմտյան ռազմաճակատում, իսկ 1916 թ. առաջին կեսից՝ Թուրքական: Զինված լենինյան գաղափարներով, նա քաղաքական աշխատանք է տանում զորամասերում, զինվորներին պարզաբանում պատերազմի թալանչիական բնույթը, նրանց տոգորում բոլշևիկյան տակտիկայով:

Ռազմաճակատում Պ. Արվելաձեն երեք անգամ ծանր վիրավորվում է: 1917 թ. նա գրել է. «Առաջին անգամ վիրավորվել եմ

Լվովի մոտերքում 1914 թ. օգոստոսի 17-ին, երկրորդ անգամ՝ Դուկմենսկյան լեռնանցքում՝ 1915 թ. ապրիլի 21-ին, երրորդ անգամ՝ Թուրքական ռազմաճակատում՝ 1916 թ. մայիսին, Մամախաթունի և Բայբուրտի միջև»: Թուրքական ճակատում Պ. Արվելաձեն վիրավորվելով, փոխադրվում է Կովկասյան ռազմաճակատի Ալեքսանդրապոլում տեղավորված թիկունքային զորամասը: Նա գործուն մասնակցություն է ունենում Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների կյանքին, հայ ժողովրդի ազատագրական պայքարին, թողնելով հեղափոխական լավ ավանդներ: Պ. Արվելաձեի կյանքի նվիրական շատ էջեր կապված են Ալեքսանդրապոլի հետ:

1916—1917 թթ. Ալեքսանդրապոլում տարած կուսակցական և հեղափոխական աշխատանքով նա անջնջելի հետք թողեց հայ ժողովրդի սրտում: Դեռևս 1916 թ. կեսերին Պ. Արվելաձեն Բագրատ Ղարիբջանյանի հետ Ալեքսանդրապոլում հիմք է դնում բոլշևիկյան ընդհատակյա խմբակին, որը նրանց հմուտ ղեկավարությամբ բեղմնավոր աշխատանք է կատարում երկաթուղային բանվորների, աշխատավոր զանգվածների և կայազորի զինվորների շրջանում: Ընտրվում է Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության բյուրո, որի կազմում էր նաև Պ. Արվելաձեն: Նա բանվորների, զինվորների և գյուղացիների Ալեքսանդրապոլի սովետի, հատկապես նրա բոլշևիկյան ֆրակցիայի կազմակերպիչներից և աչքի ընկնող ղեկավարներից մեկն էր, «Ռաբոչի ի սոլդատ» թերթի առաջին շրջանի, իսկ հետո «Պրավդա ժիզնի» թերթի խմբագիրներից: Պ. Արվելաձեն միաժամանակ աչքի ընկնող ժուռնալիստ էր: Նա իր ճշմարիտ գրչով «Ռաբոչի ի սոլդատ», «Պրավդա ժիզնի», «Կավկազսկի ռաբոչի» և այլ թերթերում հրապարակված հոդվածներով արգասավորում էր իր քաղաքական գործունեությունը, պրոպագանդում բոլշևիկյան գաղափարներ, հարվածներ հասցնում հակալենինյան հոսանքներին:

Վայելելով Ալեքսանդրապոլի բանվորների և կայազորի հեղափոխական զինվորների, բոլշևիկների սերն ու համակրանքը, Պ. Արվելաձեն, 1917 թ. հոկտեմբերին մասնակցում է ՌՍԴԲ(բ)Կ կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների I համագումարին: Համագումարն ավարտվելուն պես Ստ. Շահումյանը Պ. Արվելաձեի հետ հոկտեմբերի 7-ին մեկնում է Ալեքսանդրապոլ: Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախօրյակին Ալեքսանդրապոլում ստեղծված քաղաքական բարդ իրադրության մեջ Պ. Արվելաձեն հանդես է բերում հեղափոխական մեծ կորով, կազմակերպ-

չական տաղանդ, անհուն նվիրվածություն։ Նա քայլ առ քայլ մերկացնում է էսեռա-մենշևիկյան և բուրժուա-նացիոնալիստական խմբավորումների կործանարար քաղաքականությունը, սպանիչ հարվածներ հասցնում նրանց։ Նոյեմբերի կեսերին, երբ ծավալվեցին Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի ընտրությունները, կովկասյան երկրային կոմիտեի առաջարկությամբ, բոլշևիկների ցուցակում Անդրկովկասի ընտրական օկրուգից, Ստ. Շահումյանի, Ի. Ֆիոլետովի, Ա. Ջափարիձեի, Ն. Նարիմանովի, Ս. Խանոյանի և մյուս նշանավոր գործիչների հետ միասին առաջադրված էր նաև Պ. Արվելաձեի թեկնածությունը։ «Ավրորա»-ի հաղթական համազարկերի ղողանջը տակավին չէր դադարել, երբ ՌՍԴԲ(բ)Կ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը, Պ. Արվելաձեի, Բ. Ղարիբջանյանի և այլոց ղեկավարությամբ, հատուկ կոչով ազդարարեց. «Հասավ բաղձալի ժամը... Հոկտեմբերի 25-ին իշխանությունն անցավ սովետներին, և արդեն 26-ին հրապարակվեց դեկրետ հաշտության մասին»։ Այնուհետև նշվում էր, թե սովետական իշխանության առաջին՝ խաղաղության քայլին հաջորդում է երկրորդ քայլը՝ հողի մասին դեկրետը։ Իշխանության ղեկի մոտ գտնվում են այնպիսի մարդիկ, ասված էր Ալեքսանդրապոլի բոլշևիկների կոչում, որոնք հեղափոխություն են կատարել և պատրաստ են մեռնել հանուն հեղափոխության։ Փոթորկալից և սխրանքներով լի այդ օրերին Պ. Արվելաձեն իր ընկերների հետ միասին եռանդուն ջանքեր գործադրեց մեծ Հոկտեմբերի պատմական նշանակությունը աշխատավոր զանգվածների գիտակցությանը հասցնելու, նրանց ուժերը համախմբելու, երկրամասում հակահեղափոխական խմբավորումներին մերկացնելու ուղղությամբ։ Նոյեմբերի 10-ին և 23-ին Ալեքսանդրապոլի կայազորի և 39-րդ հետևակային դիվիզիայի զինվորները, լսելով Բ. Ղարիբջանյանի, Պ. Արվելաձեի և այլոց զեկուցումները, ջերմորեն ողջունում են Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական իշխանությունը, երդվում զենքը ձեռքին պաշտպանել բանվորա-գյուղացիական կառավարությունը։ Դեկտեմբերի 10-ից 23-ը Պ. Արվելաձեն մասնակցում է կովկասյան բանակի II համագումարին, որը տեղի ունեցավ Թիֆլիսում։ Համագումարից հետո նա այլևս չվերադարձավ Ալեքսանդրապոլ, Երկրային Կոմիտեի որոշմամբ տեղափոխվեց Բաքու՝ հեղափոխական աշխատանք ծավալելու։

Պյոտր Արվելաձեն ակտիվ մասնակցություն ցուցաբերելով Բաքվի հերոսական կոմունայի ստեղծմանը, դարձավ Բաքվի սո-

վեստի քարտուղարի օգնական և ապա Բաքվի ժողկոմսովետի քարտուղար։ Կոմունայի առաջին իսկ օրից մինչև վերջ նա գտնվում էր պայքարի առաջին գծում, սովետական իշխանության անդրանիկ կառույցների շարքերում։ Գ. Ալվելաձեն 1918 թ. օգոստոսին Բաքվից էվակուացվող կոմունարների հետ էր։ Ստ. Շահումյանի հանձնարարությամբ նա պետք է «Էվելինա» նավով Աստրախան փոխադրեր կոմունայի բանկի արժեքները։ Գ. Ալվելաձեին հաջողվում է իր փոքրաթիվ ընկերների հետ միասին հասնել Աստրախան։ Այստեղ նա նետվում է քաղաքացիական կռիվների հորձանուտը, Ս. Մ. Կիրովի ղեկավարությամբ զենքը ձեռքին մարտնչում հակահեղափոխական սև ուժերի՝ խռովարարների և օտարերկրյա զավթիչների դեմ ծավալված քաղաքացիական կռիվներում, մասնակցում Աստրախանի հերոսական պաշտպանությանը։ Լինելով կոփված բոլշևիկ և ռազմական գործին քաջատեղյակ, Գ. Ալվելաձեն նշանակվում է 11-րդ բանակի Լենինի անվան գնդի կոմիսար։ Մեծ Հոկտեմբերի նվաճումները թշնամու զինված արշավանքներից պաշտպանելու համար մղած ճակատամարտերում նա աչքի է ընկնում իր խիզախությամբ, երկաթյա վճռականությամբ և համարձակ գործողություններով։

2

Բոլշևիկների գործունեությունը Հայաստանում լայն թափ ստացավ հատկապես ՌՍԴԲ(բ)Կ կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարից հետո, որը տեղի ունեցավ 1917 թ. հոկտեմբերի 2—7-ը, Թիֆլիսում։ Համագումարին Հայաստանից մասնակցում էին Ալավերդու, Հաղպատի, Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի պատգամավորները[5], այդ թվում՝ Ա. Միկոյանը (Ալավերդի—Հաղպատ), Գ. Ալվելաձեն (Ալեքսանդրապոլ), Ի. Կիասովը՝ Կիասաշվիլի (Սարիղամիշ), Ս. Սկարյակինը (Կարս) և ուրիշներ[6]։ Համագումարը քննության առավ հետևյալ հարցերը. 1. Մանդատային հանձնաժողովի զեկուցումը։ 2. Զեկուցում ՌՍԴԲ(բ)Կ VI համագումարի մասին։ 3. Զեկուցումներ տեղե-

---

5 Սահմանված կարգի համաձայն, կուսակցության 300 անդամից ընտրվում էր մեկ պատգամավոր. մեկ պատգամավոր էր ընտրվում նաև այն կազմակերպությունից, որի անդամների թիվը 300-ի չէր հասնում, բայց 100-ից ավելի էր։

6 Տե՛ս «Кавказский рабочий», № 169, 1917.

վից։ 4. Սահմանադիր ժողովը։ 5. Կուսակցական մամուլը։ 6. Ազգային հարցը։ 7. Ագրարային հարցը։ 8. Ընթացիկ մոմենտը։ 9 Կովկասյան երկրային կոմիտեի ընտրությունները և այլ հարցեր[7]։ Բոլոր հարցերն էլ խիստ հրատապ էին և երկրամասի քաղաքական կյանքի համար բախտորոշ։ Դրանք մեծ Հոկտեմբերի նախօրյակին հասունացած այն պրոբլեմներն էին, որ անհապաղ լուծում էին պահանջում։ Համագումարի ամբողջ աշխատանքը, որ գլխավորում էր Ստ. Շահումյանը, ընթացավ լենինյան ուղիով։ Համագումարում զեկուցումներով հանդես եկան Ստ. Շահումյանը, Ֆ. Մախարաձեն, Մ. Մալաքիան-Տորոշելիձեն, Ս. Քավթարաձեն, Դ. Շահվերդյանը, Գ. Կորգանովը և ուրիշներ։ Ընթացիկ մոմենտի վերաբերյալ զեկուցման մեջ, որը կենտրոնական հարցն էր, Շահումյանն ամբողջ ուժով ցույց տվեց, որ Անդրկովկասում ստեղծված է հեղափոխական բարենպաստ իրադրություն՝ իշխանությունը բոլշևիկների կողմից նվաճելու համար։ «Մեր խնդիրն է,— ասում էր Շահումյանը,— գլխավորել հեղափոխությունը և իշխանությունը վերցնել մեր ձեռքը»[8]։ Շահումյանը գտնում էր, որ երկրամասում հեղափոխական իրադրություն է ստեղծված։ Հոկտեմբերի 29-ին Կովկասյան բանակի զինվորներին հղած կոչում Շահումյանը ասում էր. «Հասել է այն մեծագույն րոպեն, երբ վճռվում է բանվորա-գյուղացիական հեղափոխության բախտը... Հնչեց բանվորա-գյուղացիական հեղափոխության մեծ ժամը»[9]։ Իսկ դրանից մեկ ամիս անց, Թիֆլիսից Պետրոգրադ, Սմոլնի Վ. Ի. Լենինին ուղարկած հեռագրում հավաստում էր, թե երկրամասում հեղափոխական իրադրություն է ստեղծված[10]։

Բոլշևիկյան կուսակցության VI համագումարի գաղափարներով էին տոգորված նաև մյուս որոշումները։ Համագումարը որոշակի պարզություն մտցրեց Կովկասում ագրարային հարցի լուծման, ազգային հարաբերությունների զարգացման գործում, երկրամասի աշխատավորությանը կոչ արեց նախապատրաստվել զինված ապստամբության։

---

7 Там же.

8 Ստ. Շահումյան, *Երկեր*, *հատ. 2, էջ 513։*

9 Ստ. Շահումյան, *հատ. 3, էջ 7, 8։*

10 См. «Брдзола», Тифлис, 9 декабря 1917 г. (на груз. яз.); *Տե՛ս նաև* Ծ. Հ. Բարսեղյան, *Ստեփան Շահումյան։ Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն։ Երևան, 1968։*

Հայաստանում տարվող կուսակցական-քաղաքական աշխատանքի մասին զեկուցումով հանդես եկավ Ա. Միկոյանը։

Համագումարը ընտրեց ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան Երկրային կոմիտե, որի կազմի մեջ մտան Ստ. Շահումյանը, Ֆ. Մախարաձեն, Մ. Ցխակայան, Ա. Ջափարիձեն, Ի. Ֆիոլետովը, Գ. Կորգանովը, Մ. Օրախելաշվիլին, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Հ. Նազարեթյանը, Գ. Շահվերդյանը, Ս. Աթաբեկյանը, Ն. Կուզնեցովը և այլ նշանավոր բոլշևիկներ[11]*։*

Մասսաների նվաճման, բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերաճելու գործում կուսակցական կազմակերպությունների ձեռքում հզոր ուժ էր բոլշևիկյան մամուլը, որը քաղաքականապես կոփեց պրոլետարիատին և նրա մերձավոր դաշնակցին՝ գյուղացիությանը, համախմբեց նրանց ուժերը սոցիալիստական հեղափոխության, լենինիզմի հաղթանակի համար։ Լենինյան գաղափարները աշխատավոր զանգվածներին հասցնելու խնդրում անգնահատելի ծառայություն մատուցեցին «Պրավդա»-ն և բոլշևիկյան մամուլի մյուս օրգանները։ Վերածնվելով փետրվարյան հեղափոխությունից հետո (1917 թ. մարտի 5 (18)-ին) «Պրավդա»-ն մարտի 21-ից սկսում է հրատարակել Վ. Ի. Լենինի «Նամակներ հեռվից» հռչակավոր հոդվածաշարը։ Այն հինգ նամակները, որ Իլյիչը գրել էր Շվեյցարիայում և ուղարկել Պետերբուրգ՝ «Պրավդա»-ին, նոր լույսով լուսավորեցին Ռուսաստանի պրոլետարիատի ուղին, ոգեշնչեցին մասսաների բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխության անցնելու հեռանկարով։ Ընդգծելով հեղափոխության առաջին էտապից երկրորդին անցնելու յուրօրինակությունները, Վ. Ի. Լենինը «Նամակներ հեռվից»-ում գրել է. «Բանվորնե՛ր, դուք պրոլետարական, ժողովրդական հերոսության հրաշքներ ցուցաբերեցիք ցարիզմի դեմ մղված քաղաքացիական պատերազմում. դուք պետք է պրոլետարական և համաժողովրդական կազմակերպության հրաշքներ ցուցաբերեք, որպեսզի նախապատրաստեք ձեր հաղթանակը հեղափոխության երկրորդ էտապում»[12]։

---

11 *Համագումարի մասին տե՛ս* Ա. Ի. Միկոյան, *Պայքարի ուղիով, Երևան, 1972, էջ 144—152։* Կ. Ուղումյան, *ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը, Երևան, 1957։* Ռ. Մովսիսյան, *Կովկասյան բոլշևիկյան կազմակերպությունների երկրային առաջին համագումարը և Ստեփան Շահումյանը, Երևան, 1955։ Ц. П. Агаян,* Вековая дружба народов Закавказья, часть 2, Ереван, 1972.

12 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 23, էջ 411։*

«Պրավդա»-ն ուշի-ուշով հետևում էր Ռուսաստանի բանվորների հեղափոխական պայքարին, ոգեշնչում և նոր սխրանքների մղում նրանց: Ռուսաստանի պրոլետարիատին, աշխատավոր մասսաներին դեպի սոցիալիստական հեղափոխություն էր առաջնորդում բոլշևիկյան կուսակցությունը: Փետրվարից հետո սանձված բարդ իրադրության մեջ, 1917 թ. հունիսի սկզբին գումարված սովետների Համառուսաստանյան I համագումարում, երբ մենշևիկների լիդեր Ծերեթելին հայտարարեց. «Ներկայումս Ռուսաստանում չկա մի այնպիսի քաղաքական կուսակցություն, որն ասեր՝ իշխանությունը հանձնեցեք մեզ, հեռացեք, մենք կզբաղեցնենք ձեր տեղը...» վստահ ու վճռական տոնով հնչեց Վ. Ի. Լենինի ձայնը.

— Կա այդպիսի կուսակցություն:

Դա բոլշևիկյան, լենինյան կուսակցությունն էր: Եվ նրա առաջնորդ Վ. Ի. Լենինի վստահ, ազդու խոսքը հզոր ուժ հաղորդեց մասսաներին, նրանց ավելի համախմբեց Վ. Ի. Լենինի, Կենտկոմի և նրա օրգան «Պրավդա»-ի շուրջը: Սովետների I համագումարին ակտիվ մասնակցություն ունեցավ և Համառուսական Կենտգործկոմի կազմում ընտրվեց Ստ. Շահումյանը: «...Իլյիչը 1917 թ. ուրախ էր տեսնվելու Ստեփանի հետ,— իր հիշողություններում պատմում է Ն. Կ. Կրուպսկայան,— և խոսելու ընդհուպ այն բոլոր խնդիրների մասին, որոնք այնպես հասուն կերպով ծառացել էին բոլշևիկների առաջ»[13]:

Հուլիսյան օրերից հետո հակահեղափոխական ուժերը խաչակրաց արշավանք սկսեցին բոլշևիկների դեմ: Այն ժամանակ, երբ դաժան կերպով հալածում, գրպարտում և արատավորում էին բոլշևիկյան կուսակցությանը, Վ. Ի. Լենինը հպարտորեն ասում էր. «Մենք հավատում ենք մեր կուսակցությանը, մենք նրա մեջ ենք տեսնում մեր դարաշրջանի միտքը, պատիվն ու խիղճը»[14]:

«Պրավդա»-ի օրինակով 1917 թ. հեղափոխական-պրոպագանդիստական բեղմնավոր աշխատանք էին ծավալում երկրի տարբեր քաղաքներում, այդ թվում Հայաստանում հրատարակվող բոլշևիկյան թերթերը: Բոլշևիկյան մամուլը պայքարի սուր ծայրն ուղղելով բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների դեմ, աշխատավորներին պարզաբանում էր, որ Կովկասում հեղափոխության ամենակատաղի թշնամին նացիոնալիզմն է: Հայ աշխատավոր

13 Ն. Կրուպսկայա, *Հիշողություններ, Մոսկվա, 1933, էջ 510:*
14 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 25, էջ 327:*

զանգվածներին դեպի մեծ Հոկտեմբերի ուղիներն էին կոչում «Սոցիալ-դեմոկրատ» (խմբագիր՝ Ստ. Շահումյան, Բաքու, 1917 թ. մայիս-օգոստոս), «Բանվորի կռիվը» (Թիֆլիս, 1917 թ. հունիսից մինչև 1918 թ. փետրվար), «Նոր կյանք» (Ալեքսանդրապոլ, 1917 թ. հունիս-հուլիս), «Պրավդա ժիզնի» (Ալեքսանդրապոլ, 1917 թ. հոկտեմբեր), «Նեցուկ» (Շուշի, 1917 թ. օգոստոս-սեպտեմբեր), «Սոցիալ-դեմոկրատ» (Սարիղամիշ, 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր) և այլ թերթեր[15], որոնք իրենց ճշմարտացի խոսքի շնորհիվ մամուլի այդ օրգաններում մեծ մասսայականություն էին վայելում։ Ուշագրավ է Սարիղամիշի բոլշևիկների օրգան «Սոցիալ-դեմոկրատ»-ը, որը լույս է տեսնում աննկուն լենինյան Ս. Ալավերդյանի և Ի. Կիասովի խմբագրությամբ։ Թերթը մերկացրել է կոռնիլովյան դավադրությունը, սպանիչ քննադատության ենթարկել էսեռներին, մենշևիկներին և բուրժուական նացիոնալիստներին։ «Սոցիալ-դեմոկրատ»-ը ինֆորմացիա է զետեղել Կովկասի բոլշևիկների առաջին համագումարի մասին, ջերմորեն արձագանքել Բաքվի պրոլետարիատի հեղափոխական պայքարին[16]։ Հայ բոլշևիկ հրապարակախոսների բոլոր լավագույն ներկայացուցիչները, որոնք համախմբվել էին մամուլի այդ օրգանների շուրջը, լենինյան գաղափարներով էին զինում հայ աշխատավոր զանգվածներին, հույս ներշնչելով, որ շուտով կգա «իններորդ ալիքը» և կսրբի-կտանի շահագործող բոլոր դասակարգերին ու կհաստատի սոցիալիստական ազատ կարգեր։

3

«Նեցուկ»-ը Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության Շուշիի կազմակերպության օրգանն էր։ Այն պատմական ասպարեզ իջավ՝ պաշտպանելու բանվորների և չքավոր գյուղացիների շահերը, իր ձայնը միացնելու կոմունիստական մամուլի հզոր և հաղթական ձայնին։ Թերթի առաջին համարը լույս տեսավ 1917 թ. օգոստոսի 17-ին։ Այն խմբագրել են Աշոտ Հով-

---

15 *Վերոհիշյալ թերթերի մասին տե՛ս* Խ. Բարսեղյան, *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն, Երևան, 1956, նույնը՝ ռուսերեն, 1958։* Նույնի՝ *Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, Երևան, 1959,* Հ. Ֆելեքյան, *«Պրավդա»-ի տրադիցիաներով, Երևան, 1963։*

16 *«Սոցիալ-դեմոկրատ»-ի մասին տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների» № 2, 1964, էջ 24—53։*

հաննիսյանը և Հակոբ Կամարին։ Տվյալ ժամանակաշրջանում,— ինչպես ճիշտ կերպով նկատել է «Բանվորի կռիվ»-ը, «Նեցուկ»-ի մասին գրած հոդվածում,— խոշոր նշանակություն ուներ և միաժամանակ անթիվ դժվարությունների հետ էր կապված գավառում բոլշևիկյան թերթ ունենալը։

Շուշիի բոլշևիկները, ստանալով Բաքվի և Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեների աջակցությունը, «Նեցուկ»-ի միջոցով գավառում սոցիալիստական գաղափարներ էին տարածում աշխատավորության մեջ, մերկացնում դաշնակներին և բուրժուա-նացիոնալիստական մյուս տարրերին։

«Բանվորի կռիվ»-ը ողջունելով «Նեցուկ»-ի առաջին համարների երևան գալը, գրել է. «Ցանկանում ենք հարատևություն և հաջողություն «Նեցուկ»-ին։ Կենտրոնի գործիչները շատ մեծ կարիք ունեն նման «Նեցուկ»-ների, եթե միայն վերջիններն ունենան դիմացկունություն և որ գլխավորն է՝ նյութական միջոց»[17]։ Եվ իրոք, գավառական կյանքի խավարի թագավորության մեջ անչափ մեծ դեր ուներ բոլշևիկյան թերթը, որը կոչված էր ոչ միայն նեցուկ լինելու «կենտրոնի գործիչներին», այլև հարստահարված և իրավազուրկ գյուղացիությանը։ Հայ իրականության մեջ «Նեցուկ»-ն առաջիններից մեկն էր, որ լայնորեն լուսաբանում էր անդրկովկասյան աշխատավոր գյուղացու կյանքը, ցույց էր տալիս, որ չքավոր ու խեղճ այդ մասսան, ժամանակավոր կառավարության քաղաքականության հետևանքով, շարունակում է հարստահարվել և մնալ հողազուրկ։ «Նեցուկ»-ը հենվելով իրական փաստերի վրա, իր հարվածի սլաքն ուղղում էր ժամանակավոր կառավարության դեմ, նախազգուշացնում, որ էսեռա-մենշևիկյան կառավարական հետադիմությունն իր թաթն է տարածում ռուսական երկրի վրա[18]։

Փետրվարից մինչև օգոստոս, այսինքն՝ ռուսական երկրորդ հեղափոխությունից հետո անցած 6 ամիսները ոչ միայն չբարելավեցին Ռուսաստանի բանվորների և գյուղացիների դրությունը, այլև ավելի ծանրացրին։ Հեղափոխության մեղրամիսն անցավ,— ասում էր «Նեցուկ»-ը։ Երկրի բոլոր «կենդանի ուժերը»՝ կալվածատիրությունն ու բուրժուազիան, քաղքենիությունն ու դիմացկուն գյուղացիությունը (իմա՝ կուլակությունը) կյանքի են կոչում ցարական Ռուսաստանի մեռած հոգիներին՝ վաղուց չքացած դումաների մե-

---

17 «Բանվորի կռիվը», № 23, 10 սեպտեմբերի 1917 թ.։

18 Տե՛ս «Նեցուկ», Շուշի, № 3, 31 օգոստոսի 1917 թ.։

ծապատիվ անդամներին և դրանց հետ միասին կապիտալի ու կալվածատիրության քաղաքացիական, «զինվորական բոլոր արթուն դարձակալներին»[19]*:*

Հրապարակախոսական բարձր շնչով են գրված այն առաջնորդողներն ու նյութերը, որոնք մերկացնում են կոռնիլովյան դավադրությունը: «Նեցուկ»-ը միանգամայն ճիշտ էր, թե՝ կոռնիլովականության լիկվիդացիան բուրժուազիայի և նրա մանրբուրժուական սատարների քաղաքական անէացման մեջ է, կոռնիլովականության պարտությունը հեղափոխության հաղթանակի մեջ է:

Թերթը թարգմանել և տպագրել է Վ. Ի. Լենինի «Լոզունգների մասին» նշանավոր հոդվածը, որը կուսակցությանը զինված ապստամբության էր կոչում:

Հուլիսյան դեպքերից հետո երկրում ստեղծված դրության պարզաբանմանն են նվիրված Աշ. Հովհաննիսյանի («Ներհակ») «Ռուսական հեղափոխությունը և պրոլետարիատի տակտիկան», «Շուշի բանվորական ներկայացուցիչների խորհրդի վերակազմության խնդիրը» (№ 2, 3, 4), «Ազգային համախորհրդակցությունը» (№ 7), Հ. Կամարիի «Կարմիր գծեր» (№ 3 և 4), «Միջազգային պրոլետարիատը և միջազգային բուրժուազիան» (№ 4), «Բանվորությունը և գյուղացիական չքավորությունը» (№ 5) և այլ հոդվածներ:

4

Կովկասի բոլշևիկների I համագումարը ավարտելուն պես պատգամավորները և երկրային կոմիտեի անդամները նոր լիցք ստացած վերադարձան տեղերը: Ստ. Շահումյանը Պ. Սրվելաձեի հետ հոկտեմբերի 7-ին մեկնեց Ալեքսանդրապոլ: Եղավ կայազորի զորամասերում, քաղաքի ձեռնարկություններում, կրակոտ ելույթներ ունեցավ: Նա Պ. Սրվելաձեի, Բ. Ղարիբջանյանի և այլոց հետ միասին Ալեքսանդրապոլի կայազորը հեղափոխության կողմն էր նվաճում: Այդ օրերին, «Ռաբոչի պուտ» («Պրավդա») թերթում տպագրված ինֆորմացիայում, Ստ. Շահումյանը ասում էր՝ 2000 զինվորների ժողովը հետաքրքրությամբ է լսել իր զեկուցումը դեմոկրատական խորհրդակցության մասին, և որ «քանհազարանոց կայազորը ամբողջությամբ բոլշևիկյան է»[20]*: Ստ. Շահումյանի այցը*

---

19 *«Նեցուկ», Շուշի, № 3, 31 օգոստոսի 1917 թ.:*

20 «Рабочий путь», № 35, 1917: *Տե՛ս նաև* Ստ. Շահումյան, *Երկեր, հատ. 2, էջ 521:* Գ. Բ. Ղարիբջանյան, *Հայաստանի կոմունիստական կազմակերպության-*

Ալեքսանդրապոլ ուժեղ թափ հաղորդեց ոչ միայն տեղի, այլև Հայաստանի կուսակցական-քաղաքական աշխատանքին։ Հոկտեմբերի 12-ին ՌՍԴԲ(բ)Կ Կարսի կոմիտեի քարտուղար Լ. Քարթվելիշվիլին (Յա. Լավրենտև) կուսակցության Կենտկոմին հաղորդում էր, որ Կարսում բոլշևիկներն իրենց կապերը խզել են մենշևիկներից, ինքնուրույն գործունեություն են ծավալել, իսկ նույն ամսի 14-ին գրած նամակում խնդրում էր ուղարկել Վ. Ի. Լենինի ագրարային հարցի վերաբերյալ աշխատությունները և բոլշևիկյան այլ գրականություն։ ՌՍԴԲ(բ)Կ Կենտկոմը ողջունում է Կարսի բոլշևիկներին, բավարարում նրանց խնդրանքը, աջակցություն ցույց տալիս տեղական կազմակերպություններին[21]։

1917 թ. հուլիսի 23-ին Բ. Բորյանը «Ընթացիկ մոմենտը և հեղափոխության հիմնական խնդիրները» թեմայով զեկուցում է կարդում Երևանի նահանգի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության կոնֆերանսում, պատգամավորներին հասցնելով Վ. Ի. Լենինի ցուցումները։ Կոնֆերանսը ընտրում է ՌՍԴԲԿ Երևանի կոմիտե և որոշում օգոստոսին հիմնել հայերեն և ռուսերեն լեզուներով թերթ։ Կոնֆերանսից հետո, հուլիսի 31-ին ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեն այդ ժամանակ Մոսկվայում գտնվող Արշավիր Մելիքյանին հեռագրում է. «Ընկեր Արշավիր, Երևանի նահանգի կուսակցական համագումարը (այդպես է տեքստում— Խ. Բ.) խնդրում է լինել իր ներկայացուցիչը օգոստոսի 10-ին Պետրոգրադում բացվող միացյալ կուսակցական կոնֆերանսում։ Նահանգային բյուրո»[22]։

Կուսակցական-քաղաքական աշխատանքը մեծ թափով ծավալվում էր Հայաստանի նաև մյուս քաղաքներում, գավառներում և կայարաններում։ ՌՍԴԲ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչ Բ. Բորյանը շարունակում էր իր ակտիվ գործունեությունը Հայաստանում, հեղափոխական իրադարձությունների մասին սիստեմատիկաբար հաղորդում կուսակցության Կենտկոմին, Վ. Ի. Լենինին։ 1917 թ. նոյեմբերի 6-ին Ալեքսանդրապոլից Վ. Ի. Լենինին ուղարկած նամակում Բ. Բորյանը գրել է. «Ողջունելով Ձեզ, ես չեմ կարող նկարագրել իմ հրճվանքը։ Կովկասի ընկերները հաստատ կանգնած են

ները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Երևան, 1955, էջ 129—131։

21 Տե՛ս «Исторический архив», 1956, № 5. стр. 20.

22 Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, Ա. Մ. Մելիքյանի անձնական ֆոնդի նյութերը։

իրենց գրքերում և պետք է հուսալ, որ մենք կկարողանանք լրիվ անցկացնել բոլշևիզմի գիծը:

Ես եղա Կովկասի շատ քաղաքներում և հարկավոր է ասել, որ զինվորական մասսան ամենուրեք մեր կողմն է:

Մանրամասն կգրեմ Բաքվից»[23]:

Բ. Բորյանը, այնուհետև, հետագա կարգով Վ. Ի. Լենինին է ներկայացնում Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարներից Բ. Ղարիբջանյանին: Նա նշում է. «Ղարիբջանյանը ցանկանում է նամակագրություն ունենալ Ձեզ հետ Կովկասի կյանքի մի քանի հարցերի վերաբերյալ և, ինչպես ես գիտեմ Ձեզ, Դուք, իհարկե, չեք զլանա Ձեր օգնությունը ցույց տալ մեր ընկերոջը»: Բ. Բորյանի նամակի տակ Բ. Ղարիբջանյանը շարունակել է գրել.

«Ընկեր Լենին.

Ձեզ հետ պատիվ ունի խոսելու Կովկասի լեռների վրայով Բ. Ղարիբջանյանը: Տեսած չլինելով և ծանոթ չլինելով Ձեզ, ես հիացած եմ Ձեզնով և սիրահարված եմ Ձեզ: Ես ժողովներում և միտինգներում հանդես եմ գալիս, Ձեզ անվանելով ռուսական Մարքս, խոսելով Ձեր աշխատությունների մասին, որոնք շատ քիչ են ծանոթ ինձ: Բարի եղեք ինձ ուղարկել մի քանի խոսք պարունակող Ձեր նամակը և, եթե կարելի է, նաև Ձեր բրոշյուրներից մեկը:

Ձեր ընկեր Բ. Ղարիբջանյան:

6 նոյեմբերի 1917 թ.»[24]:

Այո, Կովկասի բոլշևիկները հաստատուն կերպով կանգնած էին իրենց մարտական դիրքերում և զինված ապստամբության էին նախապատրաստում աշխատավորությանը:

1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) «Ավրորա»-ի համազարկերը ազդարարեցին մարդկության պատմության նոր դարաշրջանի՝ կապիտալիզմի կործանման, կոմունիզմի հաղթանակի դարաշրջանի սկիզբը: Ռուսաստանում սոցիալիստական հեղափոխության հաղթանակը իրենով նշանավորեց համաշխարհային պատմության մեջ արմատական շրջադարձը հին, կապիտալիստական աշխարհից դեպի նոր՝ սոցիալիստական աշխարհը: Ամբողջ

---

23 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 2 (В. И. Ленина), оп. 4, ед. хр. 163, л. 15, 16, 16 об.

24 Там же, *«Լենինի հետ Վավերագրեր և հուշեր», Երևան, 1969, էջ 73—74:*

երկրով մեկ ծավալվում էր Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթարշավը։

Անդրկովկասի աշխատավորները ջերմորեն արձագանքեցին մեծ Հոկտեմբերին։ Բանվորների և զինվորների դեպուտատների Բաքվի սովետը, որի նախագահն էր Ստ. Շահումյանը, հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո կանգնեց Ռուսաստանի սովետական կառավարության կողմը։

1917 թ. նոյեմբերի 4-ին (17-ին) Բաքվի սովետը ազդարարում է. բոլորը, ովքեր ցանկանում են ժողովրդի բարօրություն, խաղաղություն և կարգի ամենաշուտ հաստատում տանջված ու խոշտանգված երկրում, պետք է անհապաղ և վճռականորեն կանգնեն Լենինի գլխավորած ժողովրդական կոմիսարների նոր կառավարության կողմը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը ջերմ արձագանք գտավ Հայաստանում։ Ամենուրեք աշխատավորները, բոլշևիկների ղեկավարությամբ, ժողովներ և միտինգներ էին գումարում, ողջունում ռուս ժողովրդի հաղթանակը և լիակատար պատրաստակամություն հայտնում՝ կանգնել սոցիալիստական հեղափոխության և նրա մեծ կազմակերպիչ ու ոգեշնչող Վ. Ի. Լենինի դրոշի ներքո։ Հայ աշխատավոր մասսաները իրենց պատմական բախտի վերջնական լուծումը, իրենց ազգային ու սոցիալական լիակատար ազատագրությունը տեսնում էին Հայաստանը սովետական հայտարարելու և սովետական Ռուսաստանի հետ եղբայրական սերտ դաշինքի մեջ[25]։

ՌՍԴԲ(բ)Կ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը ողջունելով մեծ Հոկտեմբերի հաղթանակը նշել է. «Եվ այսպես իրականացվում է այն, ինչին ձգտում էին զինվորները, բանվորները և գյուղացիները հեղափոխության ութ ամիսների ընթացքում։ Իսկ դա այսպես եղավ, որովհետև իշխանության գլուխ անցան իրենք զինվորները, բանվորները և գյուղացիները, ժողովրդական շահերի այդ հավատարիմ, անդավաճան պաշտպանները»[26]։ Այնուհետև կոչ էր արվում պաշտպանել և տարածել սովետական իշխանության գաղափարները, համախմբվել բոլշևիկյան կուսակցության դրոշի տակ։

---

25 Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության և համագործակցության մասին տե՛ս Զ. Տ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960։

26 Տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, գ. 657, թ. 7։ «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», 1902—1921, Երևան, 1960, էջ 425։

Նույն ոգով էին տոգորված Երևանի, Կարսի, Սարիղամիշի, Զանգեզուրի և Հայաստանի մյուս վայրերի բոլշևիկների կոչերը։

5

Վ. Ի. Լենինը բոլշևիկյան «Պրավդա»-ի և մյուս թերթերի էջերից աշխատավորներին պարզաբանում էր, որ սոցիալիզմից դուրս փրկություն չկա աշխատավոր մարդկությանը։ Միայն 1917 թ. ապրիլից մինչև հուլիսյան օրերը Վ. Ի. Լենինը գրեց ավելի քան 160 հոդված և մի քանի գիրք։ «Պրավդա»-ի օրինակով Անդրկովկասում՝ «Կավկազսկի ռաբոչի», «Բրձոլա», «Բանվորի կռիվը» և այլ թերթերն անում էին ամեն բան՝ պրոլետարական հեղափոխության քաղաքական բանակի մոբիլիզացման համար։ «Բանվորի կռիվը», որին ակտիվորեն աշխատակցում էին Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Ա. Մռավյանը, Ս. Խանոյանը, Մ. Մելիքյանը, Ա. Կարինյանը, Ս. Հովսեփյանը և ուրիշներ, մերկացնում էր ժամանակավոր կառավարության հակահեղափոխական էությունը, ընթերցողներին ծանոթացնում Վ. Ի. Լենինի գործունեության հետ։ Սովետների համառուսաստանյան I համագումարում (1917 թ. հունիս), Վ. Ի. Լենինը մերկացնելով բուրժուազիայի հետ համաձայնության գալու կորստաբերությունը, ապացուցեց բոլշևիկների գծի ճշտությունը, հայտարարելով, որ միայն Սովետների իշխանությունը կարող է հաց տալ աշխատավորներին, հող՝ գյուղացիներին, հաշտություն կնքել և երկիրը դուրս բերել քայքայումից։

Հուլիսյան իրադարձությունները լիովին բացահայտեցին ժամանակավոր կառավարության, էսեռների, մենշևիկների դավաճանական դեմքը։ Դաշնակցած սպիտակ-գվարդիական գեներալների հետ, կատարելով անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստների կամքը, նրանք ռազմաճակատում հարձակման նետեցին զինվորներին, արյան մեջ խեղդեցին բանվորների և զինվորների ցույցը, հարձակվեցին բոլշևիկյան կուսակցության վրա, տակնուվրա արեցին «Պրավդա»-ի խմբագրության շենքը, փակեցին «Պրավդա», «Սոլդատսկայա պրավդա» և բոլշևիկյան մի շարք այլ թերթեր։ Փողոցում յունկերները սպանեցին բանվոր Վոյնովին՝ «Լիստոկ պրավդի» վաճառելու համար։ Տակնուվրա արվեց «Տրուդ» տպարանը, որտեղ տպագրվում էին բոլշևիկյան հրատարակությունները։ Ահա այդ պայմաններում Անդրկովկասի բոլշևիկները, ուժեղացնելով իրենց աշխատանքը, մամուլի միջոցով մերկացնում էին հակահեղափոխական ուժերին։

«Բանվորի կռիվը» տալով ստեղծված դրության ճշմարտացի պատկերը, պահանջում էր. իշխանությունը հանձնել բոլշևիկներին, զինվորներին և գյուղացիներին, ոչ մի րոպե չմոռանալ օրվա հեղափոխական այս լոզունգը[27]:

Հեղափոխական բանվորները ձգտում էին քաղաքական իշխանության, ոչ ոք այլևս չէր կարող խաբել բանվորներին և զինվորներին, որոնց վրա պատմական մեծ խնդիր էր դրված՝ փրկել հեղափոխության հաղթանակը: «Փրկության ելքը» առաջնորդողում թերթը նշում է, թե բանվորներին, զինվորներին և գյուղացիներին բշելով դեպի կռիվ, բուրժուազիան հույս ունի կանգնեցնել հեղափոխությունը: Բայց զուր են այդ հույսերը: «Գիտակից պրոլետարիատը և նրա դաշնակից գյուղացիությունը փրկության միայն մի ելք ունեն՝ տապալել ժամանակավոր բուրժուական կառավարությունը և ստեղծել զուտ ժողովրդական կառավարություն»[28]:

ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան Երկրային Կոմիտեն, գլխավորելով աշխատավոր մասսաների պայքարը, զինված ապստամբության էր նախապատրաստվում: «Բանվորի կռիվը» մեծ դեր կատարեց կուսակցության նոր կուրսը կենսագործելու, Սովետներում բոլշևիկների ազդեցությունն ուժեղացնելու, ընտրություններում բոլշևիկների թեկնածությունը պաշտպանելու գործում:

«Բանվորի կռիվը», որի հրապարակ գալը սրտանց ողջունեց Բաքվի «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, հեղափոխական մարքսիզմի օրգան էր, անկաշառ պաշտպանում էր աշխատավորների շահերը, բարձր ու անաղարտ պահում պրոլետարական ինտերնացիոնալիզմի և սոցիալիզմի սրբազան դրոշը: Նրանում զետեղված շատ հոդվածներ լուսաբանում էին ժամանակի գլխավոր հարցերը, հեռանկարի պարզություն մտցնում բանվորների հեղափոխական պայքարում:

«Բանվորի կռիվը» լինելով բոլշևիկյան կուսակցության Կովկասյան երկրային կոմիտեի օրգան, լայն տեղ էր տալիս Հայաստանի և Անդրկովկասի հայաբնակ վայրերի աշխատավորության և կոմունիստական կազմակերպությունների պայքարի լուսաբանությանը:

«Բանվորի կռիվը» թերթի խմբագիր Ա. Մռավյանի գրչին են պատկանում «Հ. Առաքելյանը սոցիալիստ է դառնում» (№ 16, 19 օգոստոսի, 1917 թ.), «Դաշնակցականների ծանր մտածումները»

---

27 Տե՛ս «Բանվորի կռիվը», Թիֆլիս, № 1, 29 հունիսի 1917 թ.:

28 «Բանվորի կռիվը», Թիֆլիս, № 3, 5 հուլիսի 1917 թ.:

(№ 25, 17 սեպտեմբերի, 1917 թ.), «Մի փոքրիկ զրպարտիչ» (№ 44, 17 նոյեմբերի 1917 թ.), «Հայ կալեդինականները» (№ 46, 19 նոյեմբերի 1917 թ.) և այլ հոդվածներ։ Հատկապես ուշագրավ են «Կեցցե՛ նոր հեղափոխությունը» (№ 4), «Գեղեցիկ բառեր և անարգ գործեր» (№ 19), «Հին խաղը շարունակում են» (№ 26), «Դիվային քրքիջներ» (№ 36, 1917 թ.) և այլ առաջնորդող հոդվածները։ Թերթը, ջերմորեն ողջունելով Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, հայ աշխատավորներին էր հասցնում սովետական երիտասարդ հանրապետության դեկրետները, Վ. Ի. Լենինի ճառերն ու հոդվածները։ «Հաց, հող, խաղաղություն». «Երկու հրովարտակ» առաջնորդող հոդվածում, որ լույս է տեսել 1917 թ. նոյեմբերի 11-ին, թերթը պրոպագանդում էր հողի, խաղաղության և հաշտության վերաբերյալ սովետական կառավարության լենինյան առաջին դեկրետները։

6

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից անմիջապես հետո հիմք է դրվում սովետական մամուլին, որը նոր, բարձր տիպի մամուլ է, ազատ մամուլ, ժողովրդական մամուլ։ «Պրավդա»-ի հետ միասին լույս էր տեսնում «Իզվեստիա»-ն։ Սովետական կառավարությունը հատուկ դեկրետ է ընդունում բուրժուական թերթերը փակելու մասին։ 1917 թ. նոյեմբերի 17-ին Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նիստում Վ. Ի. Լենինը, բնութագրելով կուսակցական ու սովետական թերթերի դերը, նշել է. «Մենք առաջ էլ հայտարարում էինք, որ բուրժուական թերթերը կփակենք, եթե իշխանությունը մեր ձեռքը վերցնենք։ Հանդուրժել այդ թերթերի գոյությունը՝ նշանակում է դադարել սոցիալիստ լինելուց։ Ով ասում է՝ «բաց արեք բուրժուական թերթերը» նա չի հասկանում, որ մենք լրիվ ընթացքով գնում ենք դեպի սոցիալիզմ»[29]։

Կովկասի բոլշևիկյան թերթերը աշխատավոր մասսաներին էին հասցնում սոցիալիստական հեղափոխության նվաճումները, Վ. Ի. Լենինի ծրագրային հոդվածները և կոմունիստական կուսակցության միջոցառումները, լոզունգներն ու կոչերը։

Կովկասում հեղափոխական իրադրություն էր ստեղծված։ Ստ. Շահումյանը Բաքվից գալով Թիֆլիս ձեռնամուխ է լինում

---

[29] Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 343։

իրականացնելու բոլշևիկյան հեղափոխական տակտիկան: Նոյեմբերի 23-ին նա Վ. Ի. Լենինին հեռագրում է. «Մենք՝ Անդրկովկասի կոմիսարիատին, որպես հակահեղափոխական մարմնի, կռիվ ենք հայտարարել: Կայազորի մեծ մասը մեր կողմն է: Մենք կարող ենք բանակի օգնությամբ կոմիսարիատին ստիպել ճանաչելու ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը: Խնդրում ենք անհապաղ հաղորդել, թե ինչ է պետք»[30]*:*

Պատասխանը չստացվեց: Շահումյանը նորից է Վ. Ի. Լենինին համանման հեռագիր ուղարկում: Բայց այդ հեռագրերը մենշևիկների ձեռքն էին ընկնում և Իլյիչին չէին հասնում:

1917 թ. դեկտեմբերի 16-ին Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննարկելով Կովկասում ստեղծված դրությունը, որոշում է Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար: Ստ. Շահումյանին տրված մանդատում ասված էր.

«Սույն մանդատը ներկայացնող, բոլշևիկների կուսակցության Կենտրոնական Կոմիտեի անդամ, Բանվորների և Զինվորների դեպուտատների Բաքվի Սովետի նախագահ Ստեփան Շահումյանը *նշանակված է Կովկասի գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար, մինչև Կովկասում երկրամասային Սովետական իշխանության կազմվելը»*[31]*:*

Կովկասի բանվորները, գյուղացիները, զինվորներն ու առաջադեմ մտավորականությունը մեծ ոգևորությամբ ողջունեցին Ստ. Շահումյանին Կովկասի գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար նշանակելը: Շահումյանի գլխավորությամբ եռանդուն պայքար է ծավալվում Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում՝ սովետական կարգերի հաստատման համար:

Կովկասը թևակոխում էր նոր շրջան: Բոլշևիկյան հայ մամուլի առջև ծառանում էին նոր խնդիրներ՝ համահավաքել պրոլետարական բանակի հեղափոխական ուժերը՝ Կովկասում պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումն ապահովելու համար:

---

30 Ստեփան Շահումյան, *Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Երևան, 1968, էջ 444:* Ա. Ի. Միկոյան, *Պայքարի ուղիով, Երևան, 1972, էջ 160—161:*

31 *Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 7 (Շահումյանի ֆոնդ): Տե՛ս նաև* Ստ. Շահումյան, *Նամակներ, 1896—1918, էջ 62:* Խ. Հ. Բարսեղյան, *Ստեփան Շահումյան: Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Երևան, 1968, էջ 455:*

1918 թ. հունվարի 31-ին Թիֆլիսում Կովկասի գործերի ժամանակավոր Արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը հրատարակում է «Կավկազսկի վեստնիկ սովետա-նարոդնիխ կոմիսարով» թերթը, որտեղ հրապարակվեցին Արտակարգ կոմիսարի հրամաններն ու դեկրետները:

«Բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների բոլոր Սովետներին, Կովկասի բոլոր բանվորներին ու գյուղացիներին» ուղղված դիմումում Ստ. Շահումյանը պարզաբանում է, որ հակահեղափոխական ուժերի դավաճանության հետևանքով Կովկասը և մասնավորապես Անդրկովկասը գլորվում են դեպի հակահեղափոխության և ազգայնական պատերազմների անդունդը: «Կովկասը կանգնած է անդունդի եզրին,— ասում էր Շահումյանը,— փրկեցեք նրան: Ստեղծեցեք այստեղ ինտերնացիոնալ, բանվորա-գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների և ժողովրդական կոմիսարների Սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով, վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությանը»[32]:

Ստ. Շահումյանի այս դիմումը ամբողջովին արտահայտում էր բոլշևիկյան կուսակցության տվյալ ժամանակաշրջանի վարքագիծը, տակտիկան Կովկասում:

«Բանվորի կռիվը» և այլ թերթեր իրենց աշխատանքները վերակառուցեցին այդ պահանջներով:

1918 թ. հունվարի 18-ին «Բանվորի կռիվը» լույս տեսավ «Կեցցե՛ ժող.-կոմիսարների խորհուրդը»: «Կեցցե՛ Լենինը» մարտական կոչերով:

Թերթի յուրաքանչյուր համարը աչքի էր ընկնում իր նպատակասլացությամբ, ճշմարտացիությամբ: Հանգամանորեն նկարագրելով Անդրկովկասի կոմիսարիատի և Սեյմի դեմ աշխատավորների մղած պայքարը, քայլ առ քայլ հետևելով թշնամու գործողություններին, թերթը մի կողմից մերկացնում էր հակահեղափոխական ուժերին ու կուսակցություններին, մյուս կողմից՝ համախմբում աշխատավորությանը:

Փետրվարյան հեղափոխության տարեդարձը Անդրկովկասի աշխատավորները դիմավորեցին ծանր պայմաններում: Հայաստա-

---

32 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 69—70:

633—23

նում իշխանության տեր էին դարձել դաշնակները, Վրաստանում՝ մենշևիկները, Ադրբեջանում՝ մուսավաթականները։ Բուրժուա-նացիոնալիստական խորհուրդների զինված ազգային զորամասերը և զանազան անվան տակ քողարկված խմբերը եղբայրասպան դավեր էին նյութում, ազգամիջյան կոտորածներ կազմակերպում։ Փրկության միակ ելքը օրապակաս Սեյմի տապալումն էր։

Բոլշևիկյան «Բանվոր» թերթը նկարագրելով ստեղծված դրությունը, նշում էր, որ փրկության միակ ելքը սոցիալիստական հեղափոխության մեջ է։ Միայն այդ հեղափոխությունը վերջ կտա ազգամիջյան կռիվներին, կոչնչացնի դավեր նյութող ազգային խորհուրդները և կստեղծի իսկական հեղափոխական կառավարություն, բանվորների և գյուղացիների իշխանություն։

«Բանվոր»-ում հրապարակված «Մեծ հեղափոխության էությունն ու ընթացքը», «Մենշևիկյան-բեկական բլոկը քանդվում է», «Փորձության ժամին», «Նրանք ցնծում են», «Կայծերը բռնկվում են» և այլ հոդվածներ պատասխան էին տալիս ժամանակի ամենակենսական հարցերին։ Թերթի խմբագրական կոլեկտիվը և հեղինակները «Բանվորի կռիվը» թերթի շուրջը համախմբված բոլշևիկներն էին։ Հայաստանի ամենատարբեր վայրերից բանվորներն ու գյուղացիները, հատկապես Հաղբատի աշխատավորները, օգնություն էին ցույց տալիս «Բանվոր»-ին[33]։

«Բանվոր»-ը պրոպագանդում էր ժողովուրդների բարեկամության մարքս-լենինյան գաղափարները, պարզաբանում բոլշևիկյան կուսակցության ազգային քաղաքականությունը։ Թերթը, բացահայտելով նացիոնալիստական ուժերի կողմից Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու կործանարար քաղաքականության վնասակարությունը, նախազգուշացնում էր, որ այդ «անկախությունը» մի վիհ է, ուր անխուսափելիորեն կգլորվեն Կովկասի աշխատավորները։ Ռուսաստանից անջատվելը այսպիսի մոմենտին, 1918 թ. մարտի 14-ին գրել է «Բանվոր»-ը, հակահեղափոխական, մի անպատիվ քայլ է՝ Կովկասի զանազան ազգություններից հեղափոխության նվաճումները խլելու ուղղությամբ։ Այդ անջատումը դավաճանություն է ռուսական մեծ հեղափոխությանը։

«Գյուղացիական կյանք» բաժնում հրատարակված թղթակցություններում և նամակներում «Բանվոր»-ը լուսաբանում էր երկրա-

33 Տե՛ս Սիմոն Եվոյան, Բոլշևիկների ժողովը Հաղբատում («Կավկազսկի ռաբոչի», № 15, 21 հունվարի 1918 թ.)։

մասի ագրարային շարժումները, ողջունում արթնացող հայ գյուղի աշխատավորությանը, հավաստիացնում գյուղացիությանը, որ նրանց թիկունքում կանգնած է Ռուսաստանի սովետական, բանվորա-գյուղացիական կառավարությունը։

«Բանվոր»-ը սերտ կապ էր պահպանում Բաքվում լույս տեսնող «Բանվորի խոսք» բոլշևիկյան շաբաթաթերթի հետ։ «Բանվորի խոսք»-ը ՌՍԴԲ(բ)Կ Բաքվի Կոմիտեի օրգանն էր։ Նրա առաջին համարը հրատարակվել է 1918 թվականի հունվարի 19-ին[34]։ Թերթին, բացի Ստ. Շահումյանից, Ա. Միկոյանից, ակտիվ աշխատակցել են Աշ. Հովհաննիսյանը, Հակոբ Հովհաննիսյանը, Արտաշես Կարինյանը, Վահան Տերյանը, Արսեն Ամիրյանը, Մելիք Մելիքյանցը, Ասքանազ Մռավյանը, Ս. Կասյանը և ուրիշներ։

«Բանվորի խոսք»-ում զետեղվել են Կ. Մարքսի «Ի՞նչ պիտի դուրս գա եվրոպական Թուրքիայից», Վ. Ի. Լենինի «Քաղաքական կուսակցությունները Ռուսաստանում և պրոլետարիատի վերաբերմունքը» և այլ հոդվածներ։

Իր լրագրական կուլտուրայով, բարձր գաղափարականությամբ «Բանվորի խոսք» շաբաթաթերթն աչքի ընկնող տեղ է գրավում հայ պարբերական մամուլի պատմության մեջ։ Երբ 1917 թ. ապրիլի սկզբներին Վ. Ի. Լենինը գրեց «Քաղաքական կուսակցությունները Ռուսաստանում և պրոլետարիատի խնդիրները» բրոշյուրը, «Բանվորի խոսքը» թարգմանաբար հրատարակեց հեղափոխության առաջնորդի այդ աշխատության առանձին հատվածները։ Լենինյան բրոշյուրը, որը գրված է հարց ու պատասխանի ձևով, օգնում էր աշխատավորներին ճանաչելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության բարեկամներին ու թշնամիներին, մերկացնում էր սոցիալիստական փետուրներով քողարկված բուրժուական և նացիոնալիստական կուսակցությունների ունայնամիտ ու կեղծպատիր խոստումները և ցույց էր տալիս, որ Ռուսաստանի պրոլետարիատի և գյուղացիության շահերի միակ պաշտպանը բոլշևիկյան կուսակցությունն է։

Շաբաթաթերթը հայ ընթերցողներին ծանոթացրել է Վ. Ի. Լենինի հեղափոխական գործունեության հետ։ Վահան Տերյանը իր «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» հոդվածաշարում, որը տպա-

---

[34] Ընդամենը լույս է տեսել այդ թերթի 7 համար, այդ թվում՝ № 1, 19 հունվարի 1918 թ., № 2, 27 հունվարի, № 3, 16 փետրվարի, № 4, 24 փետրվարի, № 5, 3 մարտի, № 6, 10 մարտի, № 7, 27 մարտի։

գրվել է նաև սուանձին բրոշյուրով, տալիս է բոլշևիկյան կուսակցության գործունեության ճշմարտացի նկարագիրը, պատմում Վ. Ի. Լենինի մասին, նշում, որ Լենինը բոլշևիկյան կուսակցության ամենաազնիվ և մարտական առաջնորդն է, դրա համար էլ բոլշևիկներին լենինյաններ են անվանում։

«Անդրկովկասի կոմիսարիատը և հեղափոխությունը Անդրկովկասում» հոդվածում Ստ. Շահումյանը նշում էր, թե դժվար է երևակայել, որ աշխարհիս երեսին որևէ մի տեղ կամ երբևէ կարողանար գոյություն ունենալ ավելի խղճուկ և անփառունակ կառավարություն, քան Անդրկովկասյան կոմիսարիատն էր՝ Գեգեչկորու գլխավորությամբ։ Շահումյանը հիշեցնում է, թե Անդրկովկասյան ոճրագործ կոմիսարիատը կազմելու առաջին իսկ օրից, մենք ասել և ասում ենք. պետք է վերջ տալ սեպարատիզմին և նացիոնալիզմին, ճանաչել բանվորա-գյուղացիական կառավարության— Ժողովրդական կոմիսարների խորհրդի իշխանությունը, հրավիրել Բանվորական, Զինվորական և Գյուղացիական դեպուտատների համագումար և թո՛ղ, որ կազմակերպված հեղափոխական դասակարգերը սահղծեն Կովկասում միջազգային ուժեղ հեղինակավոր իշխանություն։

Ուշքի եկեք, քանի դեռ ուշ չի,— Անդրկովկասի աշխատավորությանը նախազգուշացնում էր Ստ. Շահումյանը։

«Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հաշտության քաղաքականությունը» ծավալուն հոդվածում Ա. Միկոյանը, պարզաբանելով բոլշևիկյան կուսակցության տակտիկան պատերազմի և հաշտության հարցերում, սոցիալիստական հեղափոխության հանդեպ ունեցած հավատի աներեր գիտակցությամբ նշում էր, որ ոչ ոք չի կարող հաղթել Ռուսաստանի պրոլետարիատին, և որ բուրժուազիան մահվան է դատապարտված, աշխատավոր մարդկությունը բոլշևիկների առաջնորդությամբ ընթանում է դեպի սոցիալիզմի թագավորությունը։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԵՎ ՀԱՅ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ՈՒ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Ակունքների մոտ: 2. Թանկագին Իլյիչ... 3. Վ. Ի. Լենինի ծանոթությամբ: 4. Լենինը խոսում էր մեզ հետ... 5. Կանգնեցեք Լենինի դրոշի տակ: 6. Բեռլինցին մեր լավ բարեկամն է: 7. Անձամբ ճանաչում եմ... 8. Անչափ երջանիկ եմ, որ եղել եմ այդ հսկայի, մեր ժամանակի հանճարի հետևորդն ու փոքր աշակերտը: 9. Իլյիչը ժամանակ էր գտնում պատասխանելու բոլոր հարցերին: 10. Իլյիչի մանդատով: 11. Ինչպես լայնահուն, վիպաշունչ ասք:

1

Լենին...

Այս նվիրական անվան մեջ են պարփակված մարդկային ամենագեղեցիկ երազանքն ու անսասան հավատը, խիղճն ու առաքինությունը, միտքն ու բանականությունը: Չկա մեկ ուրիշ մտածող, որ կարողանար քաղաքական ամենաբարդ ու ամենախճճված խրադրությունները մեկնաբանել այդքա՜ն պարզ ու հստակ, այդքա՜ն խորն ու իմաստուն, այլ մի առաջնորդ, որի մեջ կամքի անհողդողդ ուժը ուղեկցվեր այդքան քնքուշ և զգայուն մարդկայնությամբ: «Մեզանից ոչ ոք Վ. Ի. Լենինից ավելի սրտացավ մարդ չի տեսել,— ասել է Ս. Մ. Կիրովը: Լենինն աշխարհ էր եկել վերջ տալու մարդկության կեղեքման ու տառապանքին, հեղափոխական ուժերի գլուխ անցած, աշխարհի վրա հաստատելու սոցիալիզմի թագավորությունը:

Աշխարհի ամենակեղեքված ու տառապած, բազմաչարչար ժողովուրդներից էր հայ ժողովուրդը: Ով, եթե ոչ նա, ամենից ավելի կարիք ուներ մարքս-լենինյան գաղափարների:

Հայ ժողովուրդն անթիվ թելերով կապված էր Վ. Ի. Լենինի հետ։ Նրա հանդեպ տածած անհուն սիրո և նվիրվածության վկայությունն են Իլյիչի և հայ ականավոր հասարակական-քաղաքական գործիչների համատեղ գործունեությունը, հանդիպումները, նամակագրությունը, Հայաստանի աշխատավորության Իլյիչին հղած ողջույնի նամակներն ու հեռագրերը։ Հայ ժողովրդի լավագույն զավակներն առաջիններից էին, որ կանգնեցին Վ. Ի. Լենինի դրոշի տակ, ընդմիշտ զինվորագրվեցին լենինիզմին։

Ինչպես Սովետական Միության բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի հեղափոխական ավանդույթները սերտորեն կապված են կոմունիստական կուսակցության գործունեության, Վ. Ի. Լենինի և նրա հավատարիմ զինակիցների անվան հետ։ Հոկտեմբերի ուղիներում՝ սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղած պայքարի բովում, Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ, կոփվել են պրոլետարիատի ազատագրության, մարքսիզմ-լենինիզմի վսեմ գործին անսահմանորեն նվիրված բազմաթիվ հայ հեղափոխականներ։

Թերթելով Վ. Ի. Լենինի կյանքի և հեղափոխական գործունեության անմոռաց էջերը, տարբեր ազգերի զավակների հետ միասին հանդիպում ենք Ի. Լալայանցի, Բ. Կնունյանցի, Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ա. Բեկզադյանի, Ս. Տեր-Պետրոսյանի (Կամո), Վ. Կասպարովի (Կասպարյանց), Ս. Կասյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Ա. Մյասնիկյանի, Ա. Միկոյանի, Վ. Ավանեսովի (Ս. Մարտիրոսյան), Վ. Տերյանի, Ա. Վերմիշևի, Սուրեն Շահումյանի, Բ. Բորյանի, Հ. Նազարեթյանի, Ա. Խալաթյանի, Ա. Կարինյանի, Ա. Կախոյանի, Մ. Տեր-Հարությունյանցի, Ա. Մռավյանի, Արշ. Մելիքյանի, Աշ. Հովհաննիսյանի և տասնյակ ուրիշ հայ նշանավոր մարքսիստների անունները, որոնք Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ պայքարել են մարքսիզմի հաղթանակի, նոր, լուսավոր կյանքի համար[1]։

---

[1] *Տե՛ս* «В. И. Ленин о Закавказье». Сборник. Азербайджанский, Армянский, Грузинский филиалы ИМЛ при ЦК КПСС, Ереван, 1963; «В. И. Ленин о Закавказье». Аннотированная библиография. Тбилиси, 1969; «Воспоминания коммунистов Закавказья о В. И. Ленине», Ереван, 1970, «Грузинские страницы Ленинианы», Тбилиси, 1970; *Г. Б. Гарибджанян,* В. И. Ленин и большевики Закавказья, М., 1971; *Г. К. Жвания,* В. И. Ленин, ЦК партии и большевики Закавказья, Тбилиси, 1969; *С. В. Хармандарян,* Ленин и становление Закавказской федерации (1921—

Մարքսիզմի զարգացման լենինյան փուլի սկզբից Ի. Լալայանցը դարձավ Իլյիչի գաղափարական զինակիցը, Սամարայի 1893 թ. մարքսիստական «Նույակի» գործուն անդամը։

Իր հուշագրություններում Ի. Լալայանցը պատմում է 1893—1900 թթ. Վ. Ի. Լենինի հետ ունեցած անմոռանալի հանդիպումների մասին։ Իլյիչը բացառիկ հեղինակություն էր վայելում իր համախոհների շրջանում։ «Այդ 23-ամյա մարդու մեջ,— պատմում է Լալայանցը,— ամենազարմանալի կերպով զուգակցվում էին, մի կողմից՝ պարզությունը, նրբազգացությունը, կենսուրախությունն ու կրքոտությունը, իսկ մյուս կողմից՝ մեծալրջությունը, գիտելիքների խորությունը, տրամաբանական անողոք հետևողականությունը, դատողության և սահմանումների պարզորոշությունը և հստակությունը»[2]։

Վ. Ի. Լենինի և Ի. Լալայանցի քաղաքական մտերմությունն ու կապերը շարունակվեցին «Իսկրա»-ի խմբագրությունում, II համագումարից հետո, երբ Լալայանցը, իբրև Կենտկոմի գործակալ աշխատում էր Ռուսաստանում։ 1913 թ. Լալայանցը ցմահ աքսորվելով Սիբիր, ազատվում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ և նվիրվում սոցիալիստական շինարարության գործին։

«Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» ակտիվ անդամ Բ. Կնունյանցը, Արշակ Զուրաբյանի հետ միասին Ռուսաստանի և միջազգային բանվորական շարժման շրջադարձային պահին, ՌՍԴԲԿ II համագումարում, մինչև վերջ ընթանում էր Լենինի հետ, պաշտպանում մարքսիստական նոր տիպի կուսակցության ստեղծման լենինյան պլանը։ Իլյիչը բարձր գնահատելով Կնունյանցի՝ Ռուսովի համագումարում բռնած դիրքը,

---

1923), Ереван, 1970; *Дж. Б. Гулиев,* Борьба Коммунистической партии за осуществление ленинской национальной политики в Азербайджане, Баку, 1970; *П. А Азизбекова,* Ленин и Советский Азербайджан. Летопись, 1917—1924. Баку, 1970; *Ц. П. Агаян,* Вековая дружба народов Закавказья, Ереван, 1970, часть I, часть II, 1972. *Г. А. Галоян,* Рабочее движение и национальный вопрос в Закавказье, 1900—1922. Ереван, 1969; Խ. Հ. Բարսեղյան, *Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների պատմություն, Երևան, 1969։ «Լենինի հետ, վավերագրեր և հուշեր», Երևան, 1969 և այլն։*

2 Ի. Լալայանց, *1893—1900 թվականների ընթացքում Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումների մասին հուշերից։ Տե՛ս «Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին», Երևան, 1957, էջ 135։*

*«Մի քայլ առաջ երկու քայլ ետ» գրքում գրել է. «Մենք խորհուրդ կտայինք բոլորին, ովքեր ուզում են ինքնուրույնորեն վերլուծել կուսակցական պառակտման պատճառները և գտնել նրա արմատ-*ները *համագումարում,* կարդալ և վերստին կարդալ *ընկ. Ռուսովի ճառը, որի փաստարկումները փոքրամասնությունը ոչ միայն չհերքեց, այլ նույնիսկ չվիճարկեց: Ասենք՝ չի էլ կարելի վիճարկել այնպիսի տարրական, այբբենական ճշմարտություններ, որոնց մոռացումն արդեն ինքն ընկ. Ռուսովը արդարացի կերպով բացատրում էր միայն «ներվային գրգիռով»*[3]*:*

Համագումարից հետո Բ. Կնունյանցը մեկնում է Ժնև, ակտիվ մասնակցություն ունենում «Իսկրա»-ի 46—51 համարների հրատարակությանը: Նրա խմբագրությամբ լույս տեսան «Իսկրա»-ի վեց համար (№ 46—51): Մ. Էսսենը 1923 թ. մարտին «Զարյա վոստոկա» թերթում «էջեր բոլշևիկյան մամուլից» հուշագրություններում գրել է, որ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ ետհամագումարյան շրջանում արտասահմանում Բ. Կնունյանցի գործունեությունը չափազանց բեղմնավոր էր: Վ. Ի. Լենինը 1903 թ. հոկտեմբերի 5-ին Կրժիժանովսկուն և Նոսկովին գրած նամակում նշել է. այստեղ է Ռուբենը (Բ. Կնունյանցը)[4]*, իսկ նույն թվականի հոկտեմբերի 20-ին Ժնևից կովկասյան միությանը գրել է. «Թանկագին ընկերներ: Մենք ձեր գործերի մասին տեղեկություն ստացանք թե՛ Ռուբենից անձնապես, և թե՛ Ռաշիդ-բեկից (Արշակ Զուրաբյանից—* Խ. Բ.*) գրավոր»*[5]*:*

Կուսակցության մեջ տիրող ճգնաժամը վերացնելու նպատակով Բ. Կնունյանցը հանդես է գալիս ՌՍԴԲԿ III համագումար հրավիրելու օգտին, վերազանում է Ռուսաստան և պրոպագանդում լենինյան գաղափարները: Բաքվի բոլշևիկյան կազմակերպության ժողովներից մեկում II համագումարի արդյունքների մասին Բ. Կնունյանցի տված զեկուցման մասին, նրա քույր, հին բոլշևիկ Ֆ. Ռիզելը (Կնունյանցը) գրել է. «Նա այնպիսի ջերմությամբ էր խոսում Լենինի և լենինյանների մասին, որ նրա այդ ճառը և Լենինի մեծ կերպարը ընդմիշտ մնաց իմ, և ոչ միայն իմ, հիշողության

---

3 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 7, էջ 399—400:*

4 *В. И. Ленин,* Полн. собр. соч., т. 46, стр. 305.

5 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 34, էջ 198:*

մեջ»[6]։ Բ. Կնունյանցը 1904—1907 թթ. շարունակում է իր սերտ քաղաքական կապը Վ. Ի. Լենինի հետ։ Նա իր կնոջ՝ Ելիզավետա Գոլիկովայի-Կնունյանցի միջոցով տեղեկություններ է ստանում ներկուսակցական հարցերի մասին։ 1905 թ. ամռանը Բ. Կնունյանցը արտասահմանում նորից է հանդիպում Վ. Ի. Լենինին, սրտառուչ զրույցներ ունենում նրա հետ։ Կնունյանցը, իբրև Կենտկոմի գործակալ, Իլյիչի համաձայնությամբ վերադառնում է Ռուսաստան։ Վ. Ի. Լենինը 1905 թ. հունիսի 16-ին (29) Կենտկոմի ռուսական բյուրոյի քարտուղար Ս. Գ. Ստասովային գրել է. «Առաջիկա քաղաքական կամպանիայի պլանը կատարելու համար որպես Կենտրոնական կ(ոմիտեի) գործակալներ նշանակեցինք ը(նկերներ) 1. Իգորին (Բ. Ի. Գոլև), 2. Ռուբենին (Բ. Մ. Կնունյանց), 3. Լյադովին»[7]։

Դրանից մի փոքր ավելի ուշ Բ. Կնունյանցը կոոպտացվել է ՌՍԴԲԿ Կենտկոմի կազմում։ «1905 թվականի սեպտեմբերին ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամ Բոգդան Կնունյանցի համաձայնությամբ մեկնեցի Ժնև,— ասել է Ե. Ստասովան։— Կնունյանցը այն ժամանակ Կենտկոմի անդամ էր, Իլյիչը նրա միջոցով էր կապ պահպանում Պետերբուրգի սովետի հետ։ Նա (Կնունյանցը) միաժամանակ Պետերբուրգի կոմիտեի անդամ էր»[8]։

Ն. Կրուպսկայան 1911 թ. օգոստոսի 6-ին Պետերբուրգի, Սամարայի, Տվերի, Բրյանսկի և այլ բոլշևիկյան կոմիտեներին գրած նամակներում հաղորդել է, թե Բ. Կնունյանցը վախճանվել է Բաքվում՝ տիֆից։ «Բանտում նա նստել է ինը ամիս։ Վերջին ժամանակներս անլեգալ աշխատանքից հեռացել էր», քանի որ նրան «սպասում էր տաժանակրությունը»[9]։

Բ. Կնունյանցը իր գործունեության ընթացքում հետևողականորեն պրոպագանդում էր լենինիզմը։

---

6 Ֆ. Օրվել, *Հիշողություններ Բ. Կնունյանցի մասին (ձեռագիր)*։ Տե՛ս նաև Հ. Ինճիկյան, *Բոգդան Կնունյանց, Երևան, 1957, էջ 111*։

7 «V Ленинский сборник», стр. 471.

8 *Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ռուսական առաջին հեղափոխության 50-ամյակին նվիրված գիտական սեսիայի սղագրությունը։ Քաղվածքը օգտագործված է ըստ Հ. Ինճիկյանի «Բոգդան Կնունյանց» գրքի, էջ 145*։

9 ЦПА ИМЛ при КПСС, док. 20705.

2

Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի հանդիպումներն ու նամակագրությունը, նրանց մեծ բարեկամությունը դասակարգային համերաշխության և գաղափարական համագործակցության հիասքանչ օրինակ են։ 1903 թ. գարնանը (գուցե և ավելի շուտ՝ 1902 թ.) Ժնևում Վ. Ի. Լենինի հետ Շահումյանի առաջին հանդիպումը միանգամից վերածվում է սերտ բարեկամության։ Նրանք այնպես հարազատացան, որ Շահումյանը Իլյիչի համար դարձավ «Ստեփան», իսկ Վ. Ի. Լենինը Շահումյանի համար՝ «Թանկագին Իլյիչ»։ Շահումյանը գործելով Վ. Ի. Լենինից հեռու (բացառությամբ 1903—1904 թթ. Ժնևյան ժամանակաշրջանը), պարտավորված էր դրում իրազեկ պահել նրան իր և ընկերների քաղաքական գործունեությանը, ցուցումներ ստանալ նրանից։

Ցարական ռեակցիայի ծանր ռեժիմը խանգարում էր նրանց՝ նամակներում ազատ արտահայտելու իրենց մտքերը։ Պահնորդական բաժանմունքի գործակալները կրնկակոխ հետապնդում էին հեղափոխական գործիչներին, խեղդում այն ամենն, ինչ որ առաջադիմական էր։ Լինելով հմուտ կոնսպիրատոր, Շահումյանը հազարավոր կիլոմետր հեռավորության վրա նամակագրական կապ էր պահպանում Վ. Ի. Լենինի հետ։ Նրա նամակների մի մասը հաճախ ցարական ոստիկանության ձեռքն էր ընկնում, բայց մեծ մասը տարբեր ծածկանուններով ու հասցեներով հասնում էր Լենինին։

Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի նամակները, որոնք նվիրված են մարքսիստական տեսության, կուսակցական շինարարության բազմապիսի հարցերին, վառ կերպով ցույց են տալիս Վ. Ի. Լենինի հոգատարությունը իր մերձավոր զինակցի նկատմամբ, թե ինչպես է Շահումյանը նրա օգնությամբ աճել ու կոփվել պրոլետարական հեղափոխության հորձանուտում։ Իլյիչին գրած նամակներում Ստ. Շահումյանը հաղորդում է մարքսիստական հայերեն անդրանիկ ժողովածուի հրատարակության մասին, խնդրում Գ. Պլեխանովին, Ա. Լունաչարսկուն աշխատակցել այդ ժողովածուին։ Նա պատմում է հայ իրականության հուզող հարցերի, քաղաքական հոսանքների ու կուսակցությունների, Կովկասում ծավալված հեղափոխական շարժումների, ներկուսակցական կյանքի, բուրժուական գաղափարախոսության դեմ մղվող պայքարի մասին, հանգամանորեն քննարկում է ազգային հարցի վերաբերյալ եղած խճճված տեսակետները, մասնակցում լենինյան ազգային քաղաքականության սկզբունքների մշակմանը։ Այդ խնդիրներին է նվիրված

Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի 1904—1918 թթ. նամակագրությունը, որը մի ստվար գիրք է կազմում։

Ժնևյան ժամանակաշրջանում Ստ. Շահումյանը ՌՍԴԲԿ կովկասյան միութենական կոմիտեի, Թիֆլիսի, Բաքվի և այլ քաղաքների հեղափոխական առանձին գործիչների արտասահմանում ծանոթացնում է Վ. Ի. Լենինի հետ։

Մալաքիա Տորոշելիձեն պատմում է, թե Ստ. Շահումյանը 1904 թ. Ժնևում իրեն ծանոթացրել է Վ. Ի. Լենինի հետ։ «Նշանակված ժամին,—ասում է նա,— ես և Շահումյանը գնացինք Վ. Ի. Լենինի տունը։ Այդ ժամանակ նա ապրում էր Ժնևում։ Երբ մենք տուն մտանք, Ստեփանին ասացին, որ Լենինը իր սենյակումն է, միանգամայն մենակ։ Մենք մտանք Լենինի սենյակը, բայց ես նրան այնտեղ չնկատեցի։ Բազմոցին պառկած էր ինձ անծանոթ մի մարդ և թերթ էր կարդում։ «Ո՞վ կարող է լինել»։ Մտածեցի ես և աչքերով փնտրեցի Լենինին։ Դա տևեց մի քանի վայրկյան։

Շահումյանն արդեն մոտեցել էր բազմոցին պառկած մարդուն, ձեռքը սեղմել և ներկայացնում էր ինձ.

— Ընկերը, օրերս է եկել Կովկասից։

Նա ձեռքը մեկնում է ինձ և ինչ որ բան հարցնում, բայց ես չեմ լսում հարցը, ես ապշած եմ։ «Անհնարին է»,— մտածում եմ ես և լայն բացված աչքերով նայում նրան։ Նրան ես բոլորովին այլ կերպ էի պատկերացնում»[10]։

Նա Վ. Ի. Լենինն էր։

Ռուսական առաջին հեղափոխության շրջանում Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի նամակագրությունը գլխավորապես նվիրված է հեղափոխության տակտիկային և ստրատեգիային, հայկական իրականության և երկրամասի հեղափոխական շարժումների հարցերին։

Գալով Կովկաս, Ստ. Շահումյանը չի ընդհատել իր նամակագրությունը Վ. Ի. Լենինի հետ։ Նա հաճախ իր նամակները գրում էր անուղղակի հասցեներով, և, ինչպես ցարական պահնորդական բաժանմունքի հաղորդագրություններում է ասված, «հանդես բերելով վերին աստիճանի զգուշություն»։ 1907 թ. Ստ. Շահումյանը Կովկասի քաղաքական դրության մասին կազմում է հաշվետվություն՝ Վ. Ի. Լենինին ուղարկելու համար։ Նա Արշակ Աթաբեկյանին հանձնարարում է մեկնել Պետերբուրգ, այնտեղից Ֆինլանդիա՝ հաշվետվությունը Իլյիչին հանձնելու համար։ «Շահումյանի հանձնարարությամբ Կովկասի բոլշևիկյան կոմիտեի գործունեության

---

10 См. «Грузинские страницы Ленинианы», Тбилиси, 1970. стр. 234.

մասին հաշվետվությունը,— գրել է Ս. Աթաբեկյանը,— մեր կուսակցության Կենտկոմի, ավելի ճիշտ ընկ. Լենինի համար իմ կողմից կատարվեց արագ»[11]։

Ընդհատակի ծանր տարիներին Շահումյանը Իլյիչին հավաստիացնում էր, թե «Ձեր նամակները, խորհուրդները և ցուցումները ինձ համար միշտ ամեն բանից թանկ են եղել», որ «ես և մեր բոլոր ազգականները (բոլշևիկները) բարձր ենք պահում մեր ընտանեկան (բոլշևիկյան) կուսակցության Դրոշակը», որ «Դուք կարող եք մեր ռեպուտացիայի համար հանգիստ լինել»[12]։

1913 թ. օգոստոսին Ստ. Շահումյանը նամակ է գրում Վ. Ի. Լենինին, որը ցավոք սրտի, չի հայտնաբերվել։ Վ. Ի. Լենինը Ն. Կ. Կրուպսկայայի հետ Բեռնից վերադառնում է Պորոնինո, ծանոթանում նրա նամակի բովանդակությանը և օգոստոսի 24-ին պատասխանում. «Թանկագին ընկեր,— գրել է Վ. Ի. Լենինը,— վերադառնալով տուն, ես գտա Ձեր նամակը։ Անպայմանորեն ավելի շատ նյութեր ուղարկեցեք ազգային հարցի մասին Կովկասում (քանի որ Դուք, դժբախտաբար, ինքներդ գրել չեք կարող), և Կաստրովի (Ն. Ժորդանիայի— Խ. Բ.), հոդվածը, և՛ նրա գրքույկները, դելեգատների զեկուցումները ռուսերեն թարգմանությամբ (հուսով եմ, կգտնեք որևէ մեկին, որին կարելի է հանձնարարել), և՛ Կովկասի ազգությունների վիճակագրությունը և նյութեր Կովկասում, Պարսկաստանում, Թուրքիայում և Ռուսաստանում ազգությունների հարաբերությունների մասին, մի խոսքով այն բոլորը, ինչ կա ու ինչ հավաքել կարող եք, ուղարկեք։ Մի մոռացեք նույնպես փնտրել այնպիսի կովկասցի ընկերներ, որոնք կարողանային Կովկասում ազգային հարցի մասին հոդվածներ գրել։

Ողջույն և հաջողության ցանկություն։

Ձեր Վ. Իլյիչ»[13]։

---

11 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 124, оп. 1, д. 91, л. 8. Ս. Ն Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963։

12 Տե՛ս Ստ. Շահումյան, Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 59։ Նույնի. Երկեր, հատ. 2, էջ 349։ Սույն մենագրության հաջորդ բաժիններում հանգամանորեն լուսաբանվում է Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի նամակագրությունը։ Տե՛ս նաև Խ. Բարսեղյան, Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի նամակագրությունը (1904—1917), «Սովետական գրականություն», № 4, 1957։ «Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի նամակագրությունը Բաքվի կոմունայի շրջանում, 1918, «Լենինյան ուղիով», № 4, 1957։

13 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 104։

Երկու շաբաթ անց, սեպտեմբերի 7-ին, Ստ. Շահումյանը հանգամանորեն պատասխանել է Վ. Ի. Լենինի նամակին, որտեղ նշում է, որ ուղարկում է անհրաժեշտ նյութեր Կովկասի մասին։ Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի 1913—1914 թթ. մյուս նամակները նվիրված են 1913 թ. սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 1-ը Պորոնինոյում, Կրակովի մոտ, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ տեղի ունեցած ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամների և կուսակցական աշխատողների միացյալ խորհրդակցությունում ընդունված բանաձևերին, հատկապես ազգային հարցին[*]։

Ստ. Շահումյանը Աստրախանում Վ. Ի. Լենինից ստանալով ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամների և կուսակցական աշխատողների Պորոնինոյի խորհրդակցության բանաձևը՝ ազգային հարցի մասին, նոյեմբերի 15-ին այդ առթիվ նամակ է գրել Վ. Ի. Լենինին, նրանում շոշափելով պետական լեզվի, ֆեդերացիայի, ավտոնոմիայի և այլ հարցեր։ Իլյիչը ծանոթանալով Շահումյանի առաջադրած խնդիրներին, նոյեմբերի 23-ի (դեկտեմբերի 6-ի) նամակում հանգամանորեն քննարկում է այն, բարեկամաբար դիտողություններ անում, օգնում նրան ճիշտ կողմնորոշվելու ազգային հարցի լուծման գործում։ Վերոհիշյալ նամակի վերջում Վ. Ի. Լենինը Շահումյանին խնդրում է մանրամասն գրել, հիշեցնելով, որ ազգային հարցի վերաբերյալ հանրամատչելի բրոշյուրը խիստ անհրաժեշտ է։ «...Թող այժմ խոթեն իրենց քիթը,— ասում է Վ. Ի. Լենինը,— օպորտունիստական (բունդական, լիկվիդատորական, նարոդնիկական) սինլքորները, թող տան իրենց նույնչափ ճշգրիտ և նույնչափ լիակատար պատասխանները բոլոր մեր այն հարցերին, որ շոշափված ու վճռված են մեր բանաձևում։ Թող մի փորձեն։ Ոչ,

---

[*] 1918 թ. Բաքվի «Արև», Թիֆլիսի «Աշխատանք» և այլ թերթերում հրապարակվել է ինֆորմացիա այն մասին, որ Թուրքմենստանի պահնորդական բաժանմունքի փաստաթղթերից մեկում հայտնաբերվել է մի զեկուցագիր, ուր ասված է. «1913 թ. դեկտեմբերի 3-ի գործակալության հաղորդման համաձայն ՌՍԴԲԿ բոլշևիկյան արտասահմանյան կենտրոնական խմբակը կազմում են Ուլյանովը (Լենին, Իլյին), նրա կինը՝ Նադեժդա Կոնստանտինովնան (Կրուպսկայա), Արմանդը (Ինեսա)... բոլորն էլ Կրակովում են ապրում, Ուլյանովները Լյուբոմիրսկու փողոցի № 3 տանը։ Աշխատում են եռանդով և սաստիկ թափով, բայց նյութականի կողմից շատ նեղված են, ուստի կուսակցական գրականությունը ուշ-ուշ է հրատարակվում և միայն պատահմամբ գնացողների միջոցով Ռուսաստան ուղարկվում»։ Տե՛ս «Աշխատանք» (Թիֆլիս), № 77, 6 հուլիսի 1918 թ.։

օպորտունիստների առաջ մենք չզիջեցինք, այլ նրանց ջախջախեցինք բոլոր կետերում»[14]։

Վ. Ի. Լենինը 1914 թ. մայիսի 19-ի նամակում Շահումյանին խորհուրդ է տալիս հաճախակի գրել «ոչ պակաս շաբաթը մեկ անգամ»։ Նույն թվականի մայիսի 30-ին Շահումյանը Վ. Ի. Լենինին գրել է. «Թանկագին Վլադիմիր Իլյիչ.

Ստացա Ձեր նամակը և օրինագիծը։ Շատ շնորհակալ եմ Ձեզանից վստահության և ուշադրության համար։ Նախագիծը հազիվ թե ես ինքս կարողանայի կազմել, բայց առջևս ունենալով Ձեր պատրաստի նախագիծը, կարող եմ հայտնել լիակատար բավարարվածություն։ Իմ կարծիքով, այդ իսկապես մի սաստիկ հարված կհասցներ ազգային-կուլտուրական ավտոնոմիայի կողմնակիցներին։ Անշուշտ, օրինագծի շուրջը բանավեճ կծագի, որի ընթացքում հեշտությամբ կհաջողվի պարզաբանել ազգային-կուլտուրական ավտոնոմիայի ամբողջ անհեթեթությունն ու նացիոնալիստական բնույթը»[15]։

Այնուհետև Շահումյանը նորից է անդրադառնում Պորոնինյի բանաձևին։ Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի նամակագրությունը ցույց է տալիս, որ Շահումյանը ազգային հարցի խոր տեսաբաններից էր, որի հետ Իլյիչը անձամբ խորհրդակցում էր և հաշվի առնում նրա կարծիքը։

Արժեքավոր է Վ. Ի. Լենինի և Ստ. Շահումյանի 1917—1918 թթ. նամակագրությունը։

3

Ալեքսանդր Բեկզադյանը 1906—1914 թթ. գտնվելով քաղաքական տարագրության մեջ (Շվեյցարիա, Ֆրանսիա), 1908 թ. ծանոթանում է Վ. Ի. Լենինի հետ, կատարում մի շարք պատասխանատու հանձնարարություններ։ Նա Թիֆլիսի Երևանյան հրապարակում 1907 թ. հունիսի 13-ին Կամոյի գլխավորությամբ բռնագրաված 250 հազար ռուբլու 500-անոցները մանրացնում է արտասահմանում։ 1913 թ. սեպտեմբերի 14—20-ը մասնակցում է գերմանական սոցիալ-դեմոկրատական կուսակցության Ենայի համագումարին։

---

14 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 19, էջ 626*։

15 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 16, ед. хр. 69—4773. «Исторический архив», № 2, 1957. Ստ. Շահումյան, *Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 46*։

Այդ առթիվ նա նամակագրական կապ է հաստատել Վ. Ի. Լենինի հետ, նրանից ցուցումներ ստացել։ Վ. Ի. Լենինը 1914 թ. հուլիսին հանձնարարում է Բեկզադյանին որպես պատվիրակ մեկնել Բրյուսել և մասնակցել Միջազգային սոցիալիստական բյուրոյի (Ինտերնացիոնալի) գործադիր կոմիտեի, այսպես կոչված, «միավորիչ խորհրդակցությանը», որտեղ քննարկվում էր «Ռուսական հարցը»։ Ա. Բեկզադյանը Լենինին խնդրում է միասին գնալ։ «Գնալ անհրաժեշտ է,— գրել է նա,— և որպեսզի այնտեղից չհեռանանք որպես «գլխագնով ծախված աղջիկ» (այդպես են ասում մեզանում), այլ որպես «գլխագին վճարած կտրիճ»։ Հարկավոր է, որ Դուք լինեք այնտեղ»[16]։

Ա. Բեկզադյանը մասնակցել է միջազգային կոմունիստական շարժման այն ժամանակվա բարդ խնդիրների քննարկմանը, դառնալով Վ. Ի. Լենինի հուսալի հենարաններից մեկը։

1914 թ. հուլիսի վերջին Բեկզադյանը նամակ է գրել Վ. Ի. Լենինին և հաղորդել իր Ռուսաստան մեկնելու նախապատրաստության մասին[17]։ Նույն թվականին Իլյիչի հանձնարարությամբ Շվեյցարիայից նա գալիս է Ռուսաստան, իր հետ բերելով Վ. Ի. Լենինի «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները եվրոպական պատերազմում» թեզիսները և ՌՍԴԲԿ Կենտկոմի «Պատերազմը ու Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» մանիֆեստը, որը գրել է Վ. Ի. Լենինը։ «1914 թ. նոյեմբերի սկզբին վերադարձա Ռուսաստան,— գրել է Բեկզադյանը,— առաջին պարտվողական մանիֆեստով հանդերձ, որը ընկեր Լենինի հանձնարարությամբ պետք է հանձնեի դումայի բոլշևիկյան ֆրակցիային։ Ինձ հաջողվեց լատիշ ընկերոջ՝ Աշուրայի օգնությամբ այդ փաստաթուղթը հասցնել ում հարկն էր»[18]։ Եմ. Յարոսլավսկուն ուղարկած նամակում նա կրկին անդրադարձել է այդ դրվագին։

Վերադառնալով Կովկաս, Բեկզադյանը հանդիպում է Ստ. Շահումյանին, Պ. Ջափարիձեին և Բաքվի բոլշևիկյան կոմիտեի մյուս ղեկավարներին, նրանց հասցնում լենինյան ցուցումները։ Ստ. Շահումյանի հանձնարարությամբ Բագրատ Բորյանը, որ այն ժամանակ գտնվում էր Թիֆլիսում, ապահովում է «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» մանիֆեստի հրատարակությու-

16 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 2, оп. 5, ед. хр. 470; «Լենինի հետ, վավերագրեր և հուշեր», Երևան, 1969, էջ 20։

17 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 2, ед. хр. 288.

18 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 124, оп. 1, ед. хр. 153.

նը։ Ցարական գործակալները Բ. Բորյանին ձերբակալելիս բոլշևիկյան բազմաթիվ գրքերի ու փաստաթղթերի հետ միասին նրա մոտ հայտնաբերել են Բաքվից ուղարկված հայերեն մի նամակ, ուր ասված է. «Ուղարկում եմ Լենինի կարծիքը պատերազմի մասին, աշխատիր այն բազմացնել ռեմինգտոնով և տարածել մեր շրջանում»[19]։

Բաքվեցիների պահանջը կատարվում է։ Ի դեպ՝ Կ. Ֆ. Սիդորովը իր «Վ. Ի. Լենինի «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» մանիֆեստի երևան գալու և տարածման հարցի շուրջը» հոդվածում իզուր է կասկածի տակ առնում Ա. Բեկզադյանի պատմածը՝ լենինյան մանիֆեստը նրա կողմից Ռուսաստան բերելու մասին»[20]։

Ա. Բեկզադյանը աչքի ընկնող դեր է խաղացել Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման ու ամրապնդման, Հայաստանում մարքս-լենինյան գաղափարների հաղթանակն ապահովելու գործում[21]։

4

Ասատուր Կախոյանը (բանվոր խաչս, Բորչալինսկի, 1874—1937) 1898 թ. մտնելով ՌՍԴԲԿ շարքերը, ակտիվորեն մասնակցել է Երկրամասի հեղափոխական շարժումներին, կովկասյան միութենական կոմիտեի հանձնարարությամբ կուսակցական-քաղաքական պատասխանատու աշխատանք է կատարել Բաքվում, Թիֆլիսում, Բաթումիում, Ալավերդում և այլուր։ Աշխատակցել է նախահոկտեմբերյան բոլշևիկյան հայ պարբերական մամուլին, գրել բանվորների կյանքից, նրանց հուզող հարցերի մասին։ 1907 թ. Ստ. Շահումյանի, Գ. Սոկոլովսկու, Արամայիս Երզնկյանի հետ մասնակցել է ՌՍԴԲԿ V (Լոնդոնի) համագումարին, ծանոթացել Վ. Ի. Լենինի հետ, լսել նրա կրակոտ ճառերը, պաշտպանել բոլշևիկյան դիրքերը։

Իր հուշագրություններում Ա. Կախոյանը, հետագայում, ակնածանքով է հիշել Լոնդոնի համագումարում Իլյիչի հետ ունեցած հանդիպումների մասին։ «Ես շատ էի երազում տեսնել մեր կու-

---

19 ЦГИА Груз. ССР, ф. 1215, с. оп. 2, д. 596, л. 121.

20 «Исторические записки», АН СССР, т. 75, стр. 300.

21 Ա. Բեկզադյանի կյանքի և հեղափոխական գործունեության մասին տե՛ս Հ. Ն. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, գիրք երկրորդ, Երևան, 1968, էջ 221—481։

սակցության առաջնորդ Լենինին, պատմում է նա,— նրա մասին շատ էի լսել, մանավանդ Վ. Կունատովսկուց... Վ. Ի. Լենինի պատկերն անգամ չէի տեսել, որովհետև ոչ մի տեղ չկար։ Մենք շատ էինք պահանջել մեր կուսակցության կենտկոմից նրա պատկերը, բայց մեզ պատասխանել էին, թե Լենինը հաճախ է լինում Ռուսաստանում, և որպեսզի լրտեսները չճանաչեն, դրա համար էլ խուսափում ենք նրա նկարը տարածելուց...»։ Համագումարի նիստերը նշանակված էին անգլիական մի եկեղեցում։ Առաջին օրը, մինչև համագումարի սկսելը, Կախոյանը հանդիպում է Միխա Ցխակայային, Մաքսիմ Գորկուն, Գ. Պլեխանովին և ուրիշ պատգամավորների։ «Փոքր առ փոքր հավաքվող ընկերներից մեկն իմանալով իմ կովկասցի լինելը ու նոր գալը,— գրել է Կախոյանը,— մոտեցավ ինձ և, ճանապարհին մեզ հանդիպող պատգամավորների մասին մի քանի հարցեր տալուց հետո,— անմիջապես հեռացավ։ Նրա տված հարցերն էին՝ «Քանի հոգի էիք, որ գծով եկաք, քանիսն էին մենշևիկ և քանիսը բոլշևիկ, ինչ նյութի մասին էիք վիճում, պատգամավորներից քանիսն էին բանվոր և քանիսը ինտելիգենտ, վիճաբանության ընթացքում մենշևիկ բանվոր պատգամավորներից չթեքվեցի՞ն բոլշևիկների կողմը» և այլն։

...Նա բերանիս կիսատ խոսքից ըմբռնելով ասելիքս, նոր հարցեր էր տալիս, նրա գնալուց հետո ես մոտեցա Միխային և հարցրի ո՞ւր է Լենինը։

— Чудак, Ленин говорил с тобой,—պատասխանեց նա։ Ես շփոթվեցի և զարմացա, որ Լենինը այն շեկ մազերով, կարճահասակ ու արագաշարժ մարդն էր»[22]։

Վ. Ի. Լենինի հետ ունեցած լոնդոնյան հանդիպումը վճռական նշանակություն ունեցավ բանվոր հեղափոխական Կախոյանի կյանքում։ Նա Կովկաս վերադարձավ լենինյան գաղափարներով տոգորված և իր կյանքը լիովին նվիրաբերեց մարքսիզմ-լենինիզմի հաղթանակին։

5

Վ. Ի. Լենինի հեղափոխական հանճարը Սուրեն Սպանդարյանի համար դարձավ ուղեցույց-աստղ։

ՌՍԴԲԿ II համագումարից հետո Սպանդարյանն անվերապահ կանգնելով բոլշևիկյան դիրքերի վրա, 1912 թ., Պրագայի կոնֆե-

---

22 «Լենինի հետ, վավերագրեր և հուշեր», Երևան, 1969, էջ 207։

րանսում, անձամբ հանդիպում է Վ. Ի. Լենինին, ընտրվում Կենտկոմի կազմում։

Այնուհետև Իլյիչի և Կենտկոմի մյուս անդամների հետ մեկնում է Լայպցիգ, Բեռլին և ապա՝ Փարիզ։

Վերադառնալով Ռուսաստան, Սպանդարյանը քաղաքական ակտիվ պայքար է մղում մենշևիկ-լիկվիդատորների դեմ, մերկացնում բուրժուական գաղափարախոսությունը կրողներին։ Սակայն ցարական գործակալների կողմից նա շուտով ձերբակալվում է և աքսորվում Հեռավոր Սիբիր՝ Կրասնոյարսկ։

1912 թ. մայիսի 5-ին, Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան Փարիզում այցելում են Սպանդարյանի հիվանդ հորը՝ Սպանդար Սպանդարյանին և նյութական ու բարոյական օգնություն ցույց տալիս նրան։ Ոսկի Տեր-Հովհաննիսյանին հասցեագրված նամակում Վ. Ի. Լենինն այդ առթիվ գրել է. «Զգիտեմ՝ հայտնի է արդյոք Ձեզ մի տխուր լուր մեր ընդհանուր բարեկամի՝ Սուրեն Սպանդարյանի մասին, որն ինձ Ձեզ հետ ծանոթացրեց Բեռլինում։ Նա Բաքվում ձերբակալված է... Սպանդարյանի հայրն ապրում է այստեղ (Hotel Nieele, 19, Rul Pierre Nieele, 19). Նա շատ հիվանդ է և ծեր տեսք ունի։ Որդին նրան խոստացել է ամեն ինչ անել՝ Բաքվից նրան փող ուղարկելու համար։ Ձերբակալման պատճառով չի կարողացել։ Հայրը փող չունի, բնակարանից քշում են, նրա դրությունը շատ տխրալի է, նույնիսկ հուսահատական։

Մենք նրան մի փոքրիկ փոխատվությամբ օգնեցինք։ Բայց ես, այնուամենայնիվ, վճռեցի գրել Ձեզ... Բաքվում որևէ մեկին արդյոք չե՞ք ճանաչում, որին կարելի լինի գրել Սուրենի մասին և խնդրել հոգ տանելու նրա մասին...»[23]։

---

[23] Ленинский сборник, XVIII, стр. 205—206. Ոսկի Աթանեսի Տեր-Հովհաննիսյանը նշանավոր հայ գրող Մուրացանի կինն էր։ 1890-ական թվականներից ապրում էր Գերմանիայում և ակտիվ աշխատակցում Սպանդար Սպանդարյանի խմբագրած «Նոր դար» թերթին։ ՌՍԴԲԿ Կենտկոմին այդ ժամանակ օժանդակել է Ռուսաստանի հետ կապեր հաստատելու գործում։ 1918 թ. նա մտավ ՌԿ(բ)Կ շարքերը։

Հետագայում, 1921 թ. հուլիսին, Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ ՌԿ(բ)Կ Կենտկոմը նորից է նյութական օգնություն ցույց տվել Սպանդար Սպանդարյանին, նրան ուղարկելով 200 ռուբլի՝ ոսկու կուրսով։ Վ. Ի. Լենինը 1921 թ. հունիսի 11-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղարությանը գրել է. «Ես և կուսակցության կենտրոնի բոլոր աշխատողները 1908—1909 թթ. լավ գիտեինք Սուրեն Սպանդարյանին։ Նա արժեքավոր և նշանավոր աշխատող էր»։

Տե՛ս նաև Խ. Հ. Բարսեղյան, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրա-

Ոսկի Տեր-Հովհաննիսյանը 1914 թ. հուլիսի 10-ին (հունիսի 27-ին) նամակ է գրում Վ. Ի. Լենինին, հաղորդում Ս. Սպանդարյանի աքսորի նոր վայրի՝ Տուրուխանյան երկրամասի հասցեն, խնդրում դումայի բոլշևիկյան ֆրակցիայի և «Պրավդա»-ի միջոցով աջակցել Սպանդարյանին՝ վատառողջության պատճառով հին տեղը փոխադրելու համար[24]։

Հաղթահարելով դժվարությունները, Սպանդարյանը սիբիրյան աքսորավայրից նամակագրական ջերմ կապ է հաստատում Վ. Ի. Լենինի հետ։ 1914 թ. մարտի 28-ին Վ. Ի. Լենինին գրած նամակում, լավատեսությամբ լցված նա հաստատ հույս է հայտնում, որ «օրը հեռու չէ, և որ մենք դեռ կպատրաստվենք գործի համար»[25]։ 1915 թ. փետրվարի 27-ին Ս. Սպանդարյանը Մոնաստիրսկոյե գյուղից Վ. Ի. Լենինին գրած նամակում հարցնում է. «Ինչպե՞ս եք ապրում։ Ի՞նչ եք անում, ինչպե՞ս է Ձեր տրամադրությունը։ Գրեցեք, ինչ որ կարող եք։ Ծարավի ենք կենդանի խոսքի», իսկ 1916 թ. մայիսի 28-ի նամակում գրել է. «Մենք ոգով արի ենք և նույնն ենք ցանկանում Ձեզ»[26]։

Ս. Սպանդարյանին բախտ չվիճակվեց նորից տեսնել Վ. Ի. Լենինին։ Իլյիչը իր մեծ գաղափարներով հզոր արևի պես ջերմացնում էր հեղափոխության մարտիկներին, այդ թվում՝ սիբիրյան աքսորում գտնվող Ս. Սպանդարյանին։ Մահից առաջ Սպանդարյանն ասել է. «Կանգնեցեք Լենինի դրոշի տակ»[27]։

6

«Կասպարովին շատ լավ գիտեի արտասահմանում, որտեղ նա գտնվում էր վտարանդիության մեջ. 1905 թ. առաջին հեղափոխությունից հետո մտնում էր բոլշևիկյան կազմակերպության մեջ, մեծ հարգանք էր վայելում բոլոր այն բոլշևիկների կողմից, որոնց հետ ես առիթ եմ ունեցել հանդիպել»[28]— 1921 թ. դեկտեմբերի 20-ին այսպես է գրել Վ. Ի. Լենինը Վլադիսլավ Կասպարովի մա-

---

տարակությունների պատմություն, Երևան, 1969, էջ 51—52, Նույնի՝ Լենինի հետ, Երևան, 1973, էջ 10։

24 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 2, ед. хр. 253.

25 «Լենինի հետ, վավերագրեր և հուշեր», Երևան, 1959, էջ 44։

26 «Пролетарская революция», № 7, 1936.

27 «Комсомольский пропагандист и агитатор», № 13, М., 1937.

28 Ленинский сборник XXXV, М., 1959, стр. 378—379.

սին։ Վլադիսլավ (Սլավա) Կասպարովը, (1884—1917), կոմունիստական կուսակցության նշանավոր գործիչ է, հավատարիմ լենինյան։ Սլավան տակավին ինը տարեկան էր, երբ նրա ծնողները փոխադրվեցին Շուշի։ Նախնական կրթությունը ստացել է Գանձակի Միխայլովյան արհեստագործական ուսումնարանում (1896—1901), իսկ 1901—1906 թթ. սովորել և հաջողությամբ ավարտել է ռեալական ուսումնարանը։ Շուշու հասարակական-քաղաքական իրադարձություններով հարուստ միջավայրում էլ ձևավորվում է նրա հեղափոխական աշխարհայացքը։ Կապ հաստատելով լենինյան «Իսկրա»-ի հետ, Շուշու իսկրայականները պրոպագանդում էին մարքսիզմը, հետևողական պայքար մղում բուրժուանացիոնալիստական դաշնակցություն կուսակցության, հայ բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների ու քաղաքական հոսանքների դեմ։

Հայ մարքսիստների ավագ սերնդի ներկայացուցիչների նախօրինակով է, որ Վլադիսլավ Կասպարովը ռեալականում սովորելու հետ միասին ուսումնասիրում է մարքսիստական գրականությունը, ծանոթանում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի, Գ. Վ. Պլեխանովի աշխատություններին, մասնակցում աշակերտական բանավեճերին, ընթերցում լենինյան «Իսկրա»-ն և նրա հրատարակությունները։

1906 թ. ամռանը Վ. Կասպարովը տեղափոխվում է Բաքու։ Երկրամասի արդյունաբերական խոշոր կենտրոնի պրոլետարական ինտերնացիոնալ ընտանիքում, ռուսական առաջին հեղափոխության հորձանուտում, նա քաղաքական մկրտություն է ստանում։ Ստ. Շահումյանի, Պ. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Գ. Օրջոնիկիձեի. Ա. Ենուկիձեի, Ս. Սպանդարյանի և այլ նշանավոր բոլշևիկների հետ համատեղ նա բեղմնավոր գործունեություն է ծավալում։ Շուտով Կասպարովը ընդգրկվում է ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի կազմում, ուր մեծ եռանդ է ներդնում Սև քաղաքի, Բալախանիի, Բիբի-Հեյբաթի և երկաթուղու բանվորների շրջանում։ Գտնվելով քաղաքական պայքարի առաջին գծում, նա բանվորներին առաջնորդում էր քաղաքական ցույցերի ու գործադուլների, աշխատակցում բոլշևիկյան մամուլին։ Այդ ժամանակաշրջանում Կասպարովը ծանոթացավ և համագործակցեց Ռ. Զեմլյաչկայի, Մ. Օլմինսկու, Յա. Լենցմանի հետ, որոնց բոլշևիկյան կենտրոնը Վ. Ի. Լենինի ցուցումներով Բաքու էր ուղարկել բոլշևիկների պայքարին զորավիգ լինելու համար։

1907—1908 թթ. ուսումնական տարում Վ. Կասպարովը սովո-

րում է Պետերբուրգի համալսարանում։ Հեղափոխության օրրանում, քաղաքի բոլշևիկյան կոմիտեի կազմում նա աչքի ընկնող դեր է խաղում, ընդարձակում հեղափոխական կապերը, հարստացնում իր գիտելիքներն ու փորձը։ Վերադառնալով Կովկաս լիովին մխրճվում է հեղափոխական հորձանուտում։ Ցարական ղորմակալները հետապնդում էին Կասպարովին, հալածում, բանտ նետում։ Բայց բոլորաչունչ հեղափոխականը բնավ չէր երկրում, համարձակորեն շարունակում էր գաղափարական-դասակարգային պայքարը։

Վ. Կասպարովը ակտիվ մասնակցություն է ունեցել ՌՍԴԲԿ 6-րդ՝ Պրագայի կոնֆերանսի նախապատրաստությանը, Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս տեսած «Սովրեմեննայա ժիզն», «Վոլնա» և այլ թերթերի հրատարակությանը։ Օգոստոսի 6-ին Բալախանիում նա ներկա եղավ բոլշևիկների այն խորհրդակցությանը, որտեղ քննարկվեց Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Փարիզից եկած Գ. Օրջոնիկիձեի զեկուցումը՝ արտասահմանում բոլշևիկների գործունեության և Համառուսական կոնֆերանս նախապատրաստելու մասին։ Խորհրդակցությունը լիովին հավանություն տվեց լենինյան ձեռնարկումներին։ 1911 թ. սեպտեմբերին Ստ. Շահումյանի, Ա. Ենուկիձեի և Բաքվի կոմիտեի այլ անդամների հետ միասին ձերբակալվում և նետվում է Բայիլովի բանտը։ Ձերբակալվածների մեջ էին Ստ. Շահումյանը, Ա. Ենուկիձեն, Մ. Մելիքյանը (Դեդուշկա), Բոգդան Կնունյանցի եղբայրը՝ Տիգրանը, 35 մարդ։ Բաքվի նահանգային ժանդարմական վարչությունը շտապեց Պետերբուրգ հաղորդել, թե ձերբակալվածների մեջ է ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության Քաղաքային և երկաթուղային շրջանների պրոպագանդիստ Սլավան, որը հեղափոխականի իր տեսական ու գործնական բարձր հատկանիշներով լավ հայտնի է Պետերբուրգի ուսանողության հեղափոխական կազմակերպությունների մեջ։ Նա միաժամանակ առաջարկում էր՝ Շահումյանին, Կասպարովին, Ենուկիձեին, Մելիքյանցին հինգ տարով աքսորել Ռուսաստանի հեռավոր նահանգներից մեկը։ Հունվարի 16-ին Բաքվի քաղաքագլուխը փոխարքայի գրասենյակին զեկուցում է Վ. Կասպարովի և նրա հետ ձերբակալված ուրիշ 15 քաղաքական բանտարկյալների մասին, խնդրելով երկարաձգել նրանց կալանքի ժամկետը մինչև արտաքսումը։ Ըստ որում նշված է, որ Կասպարովի ժամանակը լրանում է փետրվարի 1-ին։ Կովկասի փոխարքան երկարաձգում է կալանքի ժամկետը։ Որոշ ժամանակ անց, 1912 թ. հուլիսին, Կովկասի փոխարքայի կարգադրությամբ Կասպարովը արտաքսվում է Կովկասի

սահմաններից դուրս՝ Դոնի-Ռոստով։ Այստեղ ոստիկանության խիստ հսկողության պայմաններում էլ նա կապեր է հաստատում տեղի բոլշևիկների, Դոնի կազմակերպության կոմիտեի քարտուղար Պ. Ջափարիձեի և այլոց հետ, դառնում Ռոստովի բոլշևիկների ճանաչված ղեկավարներից մեկը։ Նրա ակտիվ մասնակցությամբ անհաշտ պայքար է տարվում մենշևիկ-լիկվիդատորների դեմ, հիմք է դրվում բոլշևիկյան «Կենտրոնական խմբին», բոլշևիկները սահմանազատվում են մենշևիկներից, պարզաբանվում է բոլշևիկների դումայական պլատֆորմը, կազմակերպվում է Դումայում բոլշևիկ դեպուտատների ընտրության գործը։ Վ. Կասպարովը «Կենտրոնական խմբի» գործուն անդամներից էր, մեծ հեղինակություն էր վայելում Ռոստովի բոլշևիկների շրջանում։

Վ. Կասպարովը շատ բան արեց Դոնի Ռոստովի բոլշևիկյան կազմակերպության մարտունակության բարձրացման գործում։ «Սլավին», «Սլավիչ» և այլ ծածկանուններով նա աշխատակցում էր «Պրավդա»-ին, ուղիներ փնտրում վտարանդիության մեջ գտնըվող հեղափոխական գործիչների հետ կապ հաստատելու համար։ Սակայն ոստիկանությունը հանգիստ չի տալիս նրան։ 1913 թ. հունվարին ընկերների օգնությամբ նա դիմում է վտարանդիության։ Բուռն ցանկություն ունենալով ուսումը շարունակելու, ընդունվում է Բեռլինի բարձրագույն առևտրական դպրոցը, ապրում ուսանողական փոթորկալից կյանքով։ Վ. Կասպարովի հեղափոխական գործունեության պսակն են կազմում Վ. Ի. Լենինի հետ ունեցած հանդիպումներն ու նամակագրությունը։ Իր կյանքի վերջին չորս տարիները նա անցկացրեց Վ. Ի. Լենինի և Ն. Կ. Կրուպսկայայի հետ քաղաքական ջերմ բարեկամության մթնոլորտում։ Ստ. Շահումյանի և Ա. Ենուկիձեի օգնությամբ նա նամակագրական կապեր է հաստատում Վ. Ի. Լենինի և Ն. Կ. Կրուպսկայայի հետ, արժանանում Իլյիչի վստահությանը, դառնում նրա մերձավոր զինակիցներից, կուսակցական պատասխանատու հանձնարարություններ կատարում Բեռլինի, Բեռնի, Ժնևի, Ցյուրիխի, Դավոսի, բոլշևիկների արտասահմանյան կազմակերպություններում։ 1913 թ. հունիսի 10-ին Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինի հարցմանը՝ Վ. Կասպարովի մասին, գրել է. «Այն բեռլինցին, որի մասին դուք հարցնում եք, մեր լավ բարեկամն է, կարող եք լիովին վստահել նրան»։

Վ. Ի. Լենինը լիովին վստահում էր Կասպարովին, նրա միջոցով ստանում Ռուսաստանից իրեն ուղարկած նամակները, Ռուսաստանի բոլշևիկյան տեղական կոմիտեներին առաքում մարքսի-

տական գրականություն և այլ նյութեր։ Ինչպիսի գաղտնիքներ ասես, որ Իլյիչը չի վստահել Սլավային։ Նա վստահելի կամուրջ է դառնում Վ. Ի. Լենինի և արտասահմանի, ինչպես և Ռուսաստանի բոլշևիկյան կազմակերպությունների, Կովկասի լենինյանների ու քաղաքական աքսորականների միջև։ Իլյիչին տեղեկություններ է հաղորդում Ռուսաստանի քաղաքական կյանքի, Պոլտավայի և Անդրկովկասի կուսակցական կոմիտեների գործունեության մասին, առաքում է «Պրավդա» և այլ թերթեր։ Բոլշևիկներն ընդհատակում էին, վտարանդիության մեջ, իսկ նրանց մարքս-լենինյան գաղափարները ժողովրդի սրտում։ Ժողովրդական մասսաները՝ պատմության իսկական կերտողները անսահմանորեն հավատում էին բոլշևիկներին, մեծ առաջնորդ Լենինին, ընթանում հեղափոխական ճանապարհով։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, թե հեղափոխական կազմակերպության ուժը նրա կապերի մեջ է։ Այդպիսի կապերից էր պրոֆեսիոնալ հեղափոխական Կասպարովը, որը հմտորեն կատարում էր կուսակցության հանձնարարությունները, ակտիվորեն մասնակցում քաղաքական պայքարին։ Վ. Ի. Լենինը ղեկավար ցուցումներ և հանձնարարություններ պարունակող նամակներ է գրել Վ. Կասպարովին՝ 1913 թ. հունիսի 14-ին, 18—22-ին, օգոստոսի 20-ին, օգոստոսի 26-ին, սեպտեմբերի 11-ին, 1914 թ. հունվարի 6-ին, փետրվարի 11-ին, հուլիսի 18-ին, հուլիսի երկրորդ կեսին, 1915 թ. օգոստոսի 19-ին, 1916 թ. դեկտեմբերի 31-ին, 1917 թ. ապրիլի 8—9-ին։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ շատ նամակներ է գրել Ն. Կրուպսկայան։— 1913 թ. հունիսի 13-ի նամակում Իլյիչը Կասպարովից խնդրում է ուղարկել «Պրավդա»-ի № 119-ը, որտեղ «Վ.» ստորագրությամբ՝ [Վիտիմսկի] հրապարակված է Մ. Օլմինսկու «Կասկածելի վրիպում» խորագրով հոդվածը։

— Հունիսի 14-ի նամակում խորհուրդ է տալիս նրան մշակել ազգային հարցի մասին գրած հոդվածը։ «Իմ կարծիքով, վերցված է լավ թեմա և մշակված է ճիշտ, բայց գրական տեսակետից բավականաչափ հղկված չէ։ Ջափազանց շատ է, այդ ինչպես ասեմ «ագիտացիան», որը հարմար չէ տեսական հարցի շուրջը գրած հոդվածին։ Կամ դուք ինքներդ, ըստ իս, պետք է վերամշակեք, կամ մենք կփորձենք»։ Այնուհետև հարցում է անում՝ «Արդյոք չե՞ք կարող ճարել և թարգմանել Կոստրովի (Ժորդանիայի), վրացերեն հոդվածները ա) ընդդեմ լիկվիդատորների, բ) ազգային հարցի շուրջը՝ կուլտուր-ազգային ավտոնոմիայի օգտին, գ) ամենա-

կարևորը— ընդդեմ Արկոմեդի աշխատության պլեխանովյան առաջաբանի, ընդդեմ հեգեմոնիայի պլեխանովյան պաշտպանության»[29]։

Դա այն ժամանակ էր,՝ ինչպես ճիշտ կերպով նկատել է Ն. Կրուպսկայան, երբ Իլյիչի ուշադրությունը գամված էր ազգային հարցին և ձգտում էր ավելի սերտորեն կապվել Ստ. Շահումյանի, և բոլոր նրանց հետ, ովքեր հետաքրքրվում էին այդ հարցով և ճիշտ մոտեցում հանդես բերում։

Վ. Կասպարովը ազգային հարցի մասին թղթակցում է մարքսիստական «Պրոսվեշչենիե» ամսագրին, հոդվածներ է գրում «Պրավդա»-ին։ Նրա գրչին են պատկանում «Պրավդա»-ի 1913 թ. մարտի 8-ի «Փոքրիկ տեղեկանք» (նամակ խմբագրության), և մարտի 27-ի՝ «Ճապոնական կադետները» ու այլ հոդվածներ։ Սակայն Միրոն Չերնոմազովը (Լյուտիկով Խարիմովիչ), որը Բաքվից գիտեր Սլավային, և ինչպես հետագայում պարզվեց պահնորդական բաժանմունքի գաղտնի աշխատակից էր, արգելակում էր «Պրավդա»-ում նրա հոդվածների հրատարակությունը։ Այդ առիթով Կասպարովը 1913 թ. հուլիսի 19-ին Աստրախան՝ Ստ. Շահումյանին ուղարկած նամակում գրել է. «Թանկագին Ստեփան... սկզբում,— երբ ես դեռ չգիտեի, թե ով է նստած խմբագրությունում (խոսքը «Պրավդա»-ի մասին է— Խ. Բ.), ես իմ մերժված հոդվածների առթիվ գտնվում էի մի տեսակ «ուսած» վիճակում։ Ես մտածում էի. «ուրեմն Սլավկա, դու դեռ չես հասունացել, մի քիչ էլ պիտի սովորես»։ Բայց երբ ես իմացա, այդ համբավավոր մարդկանց մասին, ես հանգստացա, որովհետև թեև չէի ճանաչում Նատաշային, բայց հո՛ լավ ճանաչում էի Լյովային, Խարիմովիչին, Սերգեյին և երբ նրանք մերժում էին իմ հոդվածները, նշանակում է, բանն այնքան էլ վատ չէ...»[30]։ Այնուհետև Կասպարովը Շահումյանին պատմում է, թե «Պրավդա»-ում դաղվել եմ, բայց մի ուրիշ տեղ բախտս բերեց։ Ես հոդված գրեցի «Պրոսվեշչենիեի» համար և խնդրեցի Վոլոդիային [Վ. Ի. Լենինին] նայել։ Նա մեծ սիրով համաձայնեց։ Կարդալով հոդվածս, նա այն հավանել է։ Տակավին պարզ չէ Կասպարովի ազգային հարցի մասին գրած հոդվածի ճակատագիրը, բայց փաստը ուշագրավ է։

---

29 «Լենինի հետ, վավերագրեր և հուշեր», էջ 23—26, տե՛ս նաև Հ. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, գիրք II, էջ 486—621, Խ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան, Երևան, 1968։ Г. Б. Гарибджанян, В. М. Каспаров видный деятель Коммунистической партии, Ереван, 1965.

30 Խ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան, էջ 314։

Վ. Կասպարովը արտասահմանում ակտիվ մասնակցություն է ունեցել ռուսաստանցի ուսանողության հեղափոխական շարժումներին, նրանց մեջ տարածել բոլշևիկյան գաղափարները։

Համաշխարհային առաջին պատերազմը սկսվելուց հետո, սեպտեմբերին, Վ. Կասպարովը տեղափոխվում է Շվեյցարիա՝ Բեռն, որտեղ անձամբ հանդիպում է Վ. Ի. Լենինի հետ, մասնակցում բոլշևիկների հայտնի խորհրդակցությանը, հանդես գալիս և պաշտպանում պատերազմի վերաբերյալ լենինյան պլատֆորմը, որն արտացոլված է բոլշևիկյան Կենտկոմի «Պատերազմը և ռուսաստանյան սոցիալ-դեմոկրատիան» մանիֆեստում։ «Երբ սկսվեց պատերազմը, Կասպարովը Գերմանիայից տեղափոխվեց Բեռն,— գրել է Կրուպսկայան,— հանդիպեցինք բարեկամների պես։ Բեռնում տեսնվում էինք ամեն օր, և շուտով Կասպարովը մեր խմբում դարձավ ամենամոտ ընկերներից մեկը»։ Բեռնի խորհրդակցությունը, որին մասնակցում էին Փարիզի, Լոնդոնի, Ցյուրիխի, Ժնևի և այլ քաղաքների բոլշևիկյան սեկցիաների ներկայացուցիչները, տեղի ունեցավ 1913 թ. փետրվարի 27-ից մինչև մարտի 4-ը։ Կոնֆերանսին մասնակցում էին Վ. Ի. Լենինը, Ն. Կ. Կրուպսկայան, Ի. Ֆ. Արմանդը, Գ. Լ. Շկլովսկին, և ուրիշներ։ Կոնֆերանսում հիմնական հարցի մասին՝ պատերազմը և կուսակցության խնդիրները հանդես եկավ Վ. Ի. Լենինը։ Կոնֆերանսը ընտրեց բոլշևիկների արտասահմանյան կազմակերպության կոմիտեի նոր կազմ, որոնց մեջ էր նաև Վ. Կասպարովը։

Պատերազմի տարիներին Վ. Կասպարովը հետևողականորեն պաշտպանել է բոլշևիկների տակտիկան ու քաղաքական լոզունգները։ Իբրև բոլշևիկների արտասահմանյան կազմակերպության կոմիտեի և նրա առաքող հանձնաժողովի անդամ, նա մեծ գործ կատարեց։ Ցիմերվալդյան կոնֆերանսի նախօրյակին Կասպարովը հանձնարարություն է ստանում օգնել շտապ թարգմանելու Վ. Ի. Լենինի «Սոցիալիզմը և պատերազմը» աշխատությունը, որի հավելվածում տրված էր Կենտկոմի մանիֆեստը պատերազմի մասին, Բեռնի կոնֆերանսի բանաձևերը և կուսակցական աշխատողների հետ ՌՍԴԲԿ Կենտկոմի Պորոնինոյի խորհրդակցության բանաձևը ազգային հարցի մասին։ Հաջողությամբ իրականացնելով լենինյան ծրագրային աշխատության գերմաներեն հրատարակությունը, առաքող հանձնաժողովը տարածում է «Սոցիալիզմը և պատերազմը» գիրքը և 500 օրինակ ուղարկում ԱՄՆ՝ Ա. Ս. Կոլոնտային։

Ռուսիկանական հալածանքներն ու բանտերը, աքսորն ու վտա-

րանդի կյանքը քայքայեցին Կասպարովի առողջությունը։ Բայց անվեհեր զինվորի պես լավատեսությամբ լցված, նա հաղթահարում էր ցավը, հայրենիքի կարոտը սրտում սպասում մեծ լուսաբացին։ 1916 թ. դեկտեմբերի 30-ին Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան շնորհավորելով Կասպարովի նոր տարին, հաջողություններ են բարեմաղթել։ Կրուպսկայան նշել է, թե շատ լավ է, որ կազդուրվում եք և պլաններ եք մտահղանում, որոնց ցանկանում եմ, որ դրանք իրականանան։ Վ. Կասպարովն ապրում և այրվում էր հեղափոխական գործերով, աշխատում էր ինքնամոռացության աստիճանի, թաքցնելով հիվանդությունն ու ծանր ցավը։ Վ. Ի. Լենինը անհանգստացած խորհուրդ է տալիս անհապաղ մեկնել առողջարան և բուժվել, նյութական օգնություն է ցույց տալիս։

1917 թ. փետրվարին Ռուսաստանում հաղթանակեց բուրժուադեմոկրատական հեղափոխությունը, խորտակվեց Ռոմանովների երեքհարյուրամյա գահը։ Ցարիզմի անկման լուրը մեծ ուրախություն պատճառեց Կասպարովին։ Ռուսաստանի դռները բացվեցին քաղաքական վտարանդի զավակների առջև։ Վ. Ի. Լենինը նկատի ունենալով, որ Վ. Կասպարովը վատառողջության պատճառով մնում է արտասահմանում, շտապում է նամակով հուսադրել նրան և իրեն հատուկ ջերմությամբ հաջողություններ մաղթել։ «Թանկագին Կասպարով,— գրել է Վ. Ի. Լենինը,— ամուր, ամուր սեղմում եմ Ձեր ձեռքը, ցանկանում եմ առողջություն և առույգություն։ Հարկավոր է դիմանալ։ Հուսով եմ կհանդիպենք Պիտերում և այն էլ շուտով»[31]։

Վ. Կասպարովին բախտ չվիճակվեց այլևս տեսնել Իլյիչին։ 1917 թ. սեպտեմբերի 6-ին, ծանր հիվանդությունից հետո, ծաղիկ հասակում վախճանվեց Դավոս քաղաքում, բարի հիշատակ թողնելով ժամանակակիցների, բոլշևիկների ու երախտագետ սերունդների սրտերում։

Վ. Կասպարովը ընդամենը 33 տարեկան էր։ Այդքան երիտասարդ հասակում այնքան շատ գործեր արեց հեղափոխության համար, նեցուկ դարձավ Իլյիչին։ Իսկ ինչքա՜ն վառ երազանքներ, ինչպիսի՜ անկատար ծրագրեր տարավ իր հետ։

Ցարական դաժան կարգերին ծաղիկ հասակում կոհ դարձան հայ ժողովրդի բազում հերոս զավակներ։ Հիշենք՝ վառվռուն Ղուկաս Ղուկասյանին, որն ապրեց ընդամենը 21 տարի, անձնվեր Գրիգոր Ղորղանյանին (Կորգանյան)՝ 32, կայուն իսկրայական Բոգդան

31 «Լենինի հետ, վավերագրեր և հուշեր», էջ 72։

Կնունյանցին՝ 33, բոցաշունչ Տիմոֆեին՝ Սուրեն Սպանդարյանին՝ 34, Հոկտեմբերի հրաբորբ երգիչ Վահան Տերյանին՝ 35, ազատության զինվորագրված Միքայել Նալբանդյանին՝ 37, ընդմիշտ անմոռաց և պայծառ, բոցավառվող ջահ, Իլյիչի մերձավոր բարեկամ Ստեփան Շահումյանին՝ 40... և այսպես... ամեն մեկը կենդանի պատմություն, մի դյուցազնաերգ։

7

Կա արդյոք որևէ մեկը, որ չհուզվի հեղափոխության ասպետ Կամոյի՝ Սիմոն Տեր-Պետրոսյանի (1882—1922) սխրագործություններով։

Անկետային այն հարցին, թե որն է ձեր սոցիալական դրությունը և մասնագիտությունը, Կամոն պատասխանել է՝ հեղափոխական։

Կամոն՝ Սիմոն Արշակի Տեր-Պետրոսյանը նախնական կրթությունը ստանալով հայրենի Գորի քաղաքում, փոխադրվում է Թիֆլիս, 1901 թ. մտնում ՌՍԴԲԿ շարքերը, զինվորագրվում պրոլետարական հեղափոխության գործին։ Ռուսական առաջին հեղափոխության և հետագա տարիներին Կամոն դրսևորել է իրեն որպես խիզախ և տոկուն հեղափոխական։ Նա արտասահմանից Կովկաս էր առաքում մարքսիստական գրականություն, իսկ 1907 թ. հունիսի 13-ին, Ստ. Շահումյանի ղեկավարությամբ, Թիֆլիսի Երևանյան հրապարակում բռնագրավում է 250 հազար ռուբլի և հաջողությամբ հասցնում Ֆինլանդիա՝ կուսակցության կենտրոնին։ Ֆինլանդիայում մի քանի օր մնալուց հետո Կամոն մեկնում է Բեռլին՝ ապահովագրական ընկերության ներկայացուցիչ Դիմիտրի Միրսկու անձնագրով։ Պրովոկատոր Յա. Ժիտոմիրսկու մատնությամբ նոյեմբերի 7-ին ձերբակալվում է և բանտարկվում։ Ռուսական դեղին մամուլը Նիկոլայ II-ին ծառայություն մատուցելու նպատակով պահանջում է Միրսկի-Տեր-Պետրոսյանին հանձնել ցարական կառավարությանը։ Հարկավոր էր փրկել Կամոյի կյանքը։ Այդ ուղղությամբ մեծ ջանքեր են թափում միջազգային բանվորական շարժման ականավոր գործիչները։ Կարլ Լիբկնեխտն իր ընկերների հետ գերմանական Ռայխստագում բանվոր դասակարգի անունից պահանջում է ազատել Կամոյին, նրան չհանձնել ցարական կառավարությանը։ Գերմանական «Ֆրանկֆուրտեր ցայտունգ», ֆրանսիական «Յումանիտե» և այլ թերթերն իրենց ձայնն են բարձրացնում ի պաշտպա-

նություն Կամոյի: Վ. Ի. Լենինի, բոլշևիկյան կուսակցության ղեկավար գործիչների և ամբողջ պրոլետարիատի ջերմ վերաբերմունքը ավելի են ամրապնդում Կամոյի կամքն ու տոկունությունը: Դաժան փորձությունների բովով անցած հեղափոխականը բանտում ձևանում է խելագար և երկու տարի շարունակ կատարում այդ սարսափելի դերը: Նրա առողջական վիճակը պարզելու համար շիկացած երկաթով այրում են մարմինը, ծեծում և խոշտանգում են նրան: Պողպատե կամքի տեր լենինյանն այդ ամենը տանում է, իր բոցավառ սրտում փայփայելով միայն մի միտք՝ ազատվել դահիճների ձեռքից և նոր թափով շարունակել հեղափոխական պայքարը: 1909 թ. սեպտեմբերի 21-ին գերմանական կառավարությունը որոշում է Կամոյին հանձնել Նիկոլայ II-ի կառավարությանը:

Կամոյին տեղափոխում են Թիֆլիս՝ Մետեխի բանտը, ապա՝ Միքայելյան հիվանդանոցը: Կամոյի և նրա ընկերների հնարագետ միտքը նորից ելք է գտնում: 1911 թ. օգոստոսի 15-ին նա փշրում է հիվանդանոցի երկաթապատ լուսամուտը, ճեղքում պահակների կրկնակի շարքերը և ազատվելով՝ նորից նետվում հեղափոխության փոթորիկների մեջ: Մեկնելով արտասահման, նա Փարիզում հանդիպում է Վ. Ի. Լենինին, պատմում իր կրած բոլոր տառապանքների մասին: «Իլյիչը լսում էր և խորապես խղճում այդ անձնվեր, համարձակ մարդուն, որը երեխայի նման միամիտ էր, ուներ ջերմ սիրտ, պատրաստ էր մեծամեծ քաջություններ կատարելու և որը բանտից փախչելուց հետո չգիտեր, թե ինչ անի: Նրա աշխատելու ծրագրերը ֆանտաստիկական էին: Իլյիչը չէր առարկում, զգուշությամբ աշխատում էր տրանսպորտ կազմակերպելու մասին և այլն[32]:

Փարիզում Կամոն Վ. Ի. Լենինի մոտ մնում է մոտ երկու ամիս: Տեսնելով նրա վատառողջ վիճակը, Իլյիչը խորհուրդ է տալիս բուժվել: Նկատելով, որ Կամոն վերարկու չունի և Ֆրանսիայից Բելգիա մեկնելու ճանապարհին կարող է մրսել, Վ. Ի. Լենինը նրան է նվիրում իր մորից ընծա ստացած թիկնոցը: 1912 թ. Կամոն Սեմյոն Սավչուկ անվամբ մեկնում է Կոստանդնուպոլիս: Իլյիչից հանձնարարություն ուներ Բուլղարիայում, Թուրքիայում և Հունաստանում ընդհատակյա հին ուղիներն ամրապնդել և նորերը կազմակերպել: Հասնելով Թուրքիա, նա ձեռնամուխ է լինում գաղտնի բնակարաններ և զենքի պահեստներ ստեղծելու գործին: Բուլղարիա

32 Ն. Կ. Կրուպսկայա, *Հիշողություններ*, *Մոսկվա*, 1933, էջ 311—312:

կատարած ուղևորություններից մեկի ժամանակ Կամոն ձերբակալվում է որպես թուրքական զինվորական լրտես: Դրությունը ծանրանում է: Հանկարծ նրա գլխում սրամիտ մի միտք է առկայծում՝ խնդրել քննչական օրգաններին հանդիպելու Դիմիտրի Բլագոևի հետ, որն իբր թե իրեն ճանաչում է որպես ռուս սոցիալ-դեմոկրատի և կարող է երաշխավորել: Ոստիկանական գործակալի ուղեկցությամբ Սեմյոն Սավչուկը՝ Կամոն ուղարկվում է Բլագոևի բնակարանը, որին երբեք չէր տեսել: Պատահաբար տեսակցությունը տեղի է ունենում փողոցում: Նկատելով Դ. Բլագոևին, գործակալն ասում է «Հենց լավ է, որ Բլագոևին հանդիպեցինք»: Հնարամիտ Կամոն այդ խոսքի վրա իսկույն նետվում է առաջ, ջերմորեն գրկում Բլագոևին, համբուրում և ականջին շշնջում, որ Կամոն է և անձամբ Իլյիչն է ուղարկել: Դա բավական էր: Բլագոևը կռահում է, թե ինչ է կատարվում, անվերապահ երաշխավորում է, որ մոտիկից գիտի իբրև թուրքական լրտես ամբաստանված մարդուն: Այս հուզիչ դըրվագի մասին Կամոն 1913 թ. Մետեխի բանտից գրել է Ա. Բոգդանովին ուղարկած նամակում, որը տակավին անծանոթ է ընթերցող լայն շրջաններին:

«...Այժմ ես ուզում եմ փոքր հաշվետվություն տալ Ձեզ իմ գործունեության մասին, որը վերաբերում է Ձեզնից բաժանվելուց հետո ընկած շրջանին: Ափսոս, որ չեմ կարող լրիվ հաշվետվություն տալ: Անկախ իմ ուժերից վեր պայմանների, ստիպված եմ սահմանափակվել իմ գործունեության մասին ամենահակիրճ շարադըրանքով: Բայց հույս ունեմ, որ Դուք այդպես էլ կհասկանաք և կգնահատեք այն, կգտնեք այնտեղ և դրական և բացասական կողմեր: Եվ այսպես, անցնենք գործի: Բաժանվելով Ձեզնից ես գնացի Ժնև: Ցանկանում էի տեսնվել ընկերներիս հետ: Իսկապես նրանք շատ ուրախացան դրա համար, ինձ խորհուրդ տվեցին գնալ Ռուսաստան, բայց ես, իհարկե, չհամաձայնեցի: Ժնևից ես գնացի Դանիա, բայց այնտեղ չհասա այն բանին, ինչ ես ցանկանում էի: Հանդիպելով այնտեղ մի ընկերոջ, ես նորից վերադարձա և գնացի ուղիղ Ցարգրադ: Այնտեղ ես այցելեցի մի գնդապետի՝ երիտթուրքի, նախկին վրաց իշխանի, որին երաշխավորական նամակ ունեի: Նա ինձ ընդունեց սրտաբաց, խոստացավ անել ամեն հնարավորը: Ծանոթացրեց «երիտթուրքական կազմակերպության» նշանավոր անդամների հետ: Ես շարադրեցի նրանց իմ ցանկությունները ինձ հարկավոր իրերի գնման վերաբերյալ: Նրանք խոստացան պայմանավորվել տեղի և ժամանակի կապակցությամբ: Տվեցի պահանջ-

վող թղթադրամներ։ Ներկայացա պայմանավորված տեղը, բայց նրանք չկային։ Գնացի ուրիշ անգամ, դարձյալ չկային։ Ես կասկածանքի մեջ ընկա։ Գնացի գնդապետի մոտ, դարձյալ խոստացավ, բայց ոչինչ չստացվեց։ Համոզվելով, որ խաբում են, փողերը հետ պահանջեցի, բայց դրանք էլ չստացա։ Ինձ հարկավոր էր շտապել, թողեցի։ Այնտեղ հանդիպեցի վրացի բանվորների, որոնք ծանոթացրին ինձ տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության հետ։ Այնտեղ կային երկու բուլղարացի ընկերներ*։ Նրանց օգնությամբ ես ուղևորվեցի Սոֆիա։ Տրված էր հասցեն։ Բայց այնտեղ ինձ ձերբակալեցին իբրև թուրքական ռազմական լրտեսի։ Տարան քաղաքապետի մոտ։ Ես ներկայացա որպես ռուսական սոցիալ-դեմոկրատ։ Նրանք պահանջեցին վկայակոչել ծանոթ սոց. դեմոկրատի... ես, թեև ծանոթ չէի, բայց վկայակոչեցի Բլագոևին։ Տարան նրա մոտ։ Նա հասկացավ գործի էությունը։ Հաստատեց իմ ցուցումը, ներողություն խնդրելով՝ ինձ ազատեցին և առաջարկեցին 24 ժամվա ընթացքում հեռանալ։ Բայց ես, այնուամենայնիվ, հասցրի կատարել ամեն ինչ։ Գտա պրոֆեսիոնալ հեղափոխական մի մարդու, գնեցի բոլորը, պարգևատրեցի նրան նոր տասնոցներով և վերադարձա Ցարգրադ։ Բայց գնալու ժամանակ նորից ձերբակալվեցի իմ գնած իրերի հետ (մի մոռանա, որ ես շատ համառոտ եմ շարադրում բոլորը)։ Ես բողոքարկեցի, բայց այնուամենայնիվ, բերման ենթարկվեցի ոստիկանական ատրճանավորի մոտ։ Ինձ պահում էին բանտային խցիկում, մեծ հարգանքով էին վերաբերվում, կերակրում էին լավ, բայց պարզվեց, որ այդ բոլորը արվում է իմ հաշվին։ Ես զարմացա, երբ իմացա այդ։ Օրական ծախսվում էր 4 ռուբլի։ Նրան ես ներկայացա որպես կովկասյան հեղափոխական՝ ռուսական կառավարության ոխերիմ թշնամի։ Ճնշում գործադրեցի թուրքերի ազգային զգացմունքների վրա, և նրանք առաջարկեցին ինձ մեկնել Հունաստան։ Բայց իրերս չվերադարձրին, որովհետև վախենում էին ռուսական կոնսուլից։ Ես գնացի Պիր, այնտեղից՝ Աթենք։ Այնտեղ կա հայկական եկեղեցի։ Ծանոթացա վտարանդի հայերի հետ։ Ներկայացա որպես «հայ դաշնակցական»։ Մեծ հարգանքով վերաբերվեցին։ Ես նրանցից ընտրեցի համապատասխան մարդկանց։ Հայտնեցի իմ գալու նպատակը։ Հաճույքով համաձայնվեցին։ Ծանոթացա մի մարդու հետ.

* Խոսքը Նիկոլա Տրայչևի և հավանական է նրա քրոջ՝ Ցվետայի մասին է.—Խ. Բ.

որը ձեզ բերեց ինչ որ պետք էր (զենք և այլն)։ Այստեղ ես հաստատեցի այնպիսի կապ, որ այնտեղից կարելի էր մատակարարել ոչ միայն Կովկասին, այլ ամբողջ Ռուսաստանին։ Պատրաստվեցի մեկնելու։ Փակել էին Դարդանելը։ Ստիպված էի սպասել մեկ ամիս։ Հետո մեկնեցի Ցարգրադ։ Իրերս թողեցի մի ապահով տեղ։ Ես այցելեցի ոստիկանական աստիճանավորին։ Նա ուրախացավ և խոստացավ, որ ինձ ոչ ոք չի նեղացնի։ Այստեղ ասացին, որ ինձ ուզում է տեսնել Կովկասից, ավելի ճիշտ, Պարսկաստանից ժամանած ընկ. Գիգոն*։ Ես նրան գիտեի որպես լավ մարտիկի։ Լուրեր էին շրջում Պարսկաստանում նրա կատարած փայլուն հերոսությունների մասին։ Ես գնացի նրա մոտ։ Շարադրեցի անելիքի պլանը։ Նա ուրախությամբ համաձայնվեց։ Որոշեցինք մեկնել Կովկաս։ Նրան փորձելու համար ես մի քանի հանձնարարություն տվեցի։ Նա բոլորը կատարեց փառահեղ։ Ուղարկեցի նրան Տրապիզոն, այնտեղ տրանսպորտն ընդունելու համար։ Բոլորը կատարեց գերազանց։ Հետո նա Բաթումիով մեկնեց Կովկաս, զգուշության համար Թիֆլիս եկավ Պարսկաստանով։ Այստեղ հավաքվեցին մեր նախկին խմբի անդամները և անցան գործի։ Կատարվեց մեկ մահափորձ, բայց ապարդյուն, մի քանի հարգելի պատճառներով։ Բայց Պաչուան հրաժարվեց մեզա գալուց։ Գիգոն ամեն ինչում հավատում էր ինձ, բայց Պաչուան սկսեց լարել նրան իմ դեմ, համոզելով Գիգոյին այն բանում, որ ես փառասեր եմ և գործի մարդ չեմ։ Դա փչացրեց գործը։ Կորավ վստահությունը։ Ես ուշադրություն չէի դարձնում և փաղաքշում էի երկուսին էլ։ Վատնվեցին դրամները, որը և վերջակետ դրեց դրեթե ամեն ինչի վրա։ Գնացի Բաքու Լ-վիի մոտ։ Ծանոթացրի նրան իմ պլանի հետ։ Նա ուրախացավ։ Խորհրդակցելով մեկնեց Մոսկվա (Դուք գիտեք ում մոտ)։ Մոսկվայում իր սովորության համաձայն նա հանդիպեց ղեկավարությանը։ Բայց հետո հանդիպեցինք։ Նա փող չուներ, տվեցի 100 ռուբլի։ Խորհուրդ տվեց մեկնել արտասահման, խոստանալով ուղարկել դրամ ամեն ամիս և հետո տարվա ընթացքում հավաքել 1000 ռուբլի և ապա անցնել գործի։ Ես չլսեցի, գնացի նրա հետ։ Նորից անցա գործի։ Այստեղ ինձ ներկայացավ մի մարտիկ, որին ես գիտեի վաղուց։ Նա մենշևիկ էր։ Համաձայնեց աշխատել ինձ հետ և մատնեց բոլորիս։ Այդ նպատակով էլ նա եկել էր մեզ մոտ։ Ավելի ճիշտ նա ուղարկված էր մենշևիկների կողմից, որոնք ինձ առաջարկում

* Խոսքը Գրիգոր Օսիպովիչ Մասիաշվիլու մասին է—Խ. Բ.։

էին թողնել Ռուսաստանը, հակառակ դեպքում սպառնում էին միջոցներ ձեռք առնել իմ դեմ։ Միջոցներն արտահայտվեցին պրովոկացիայով։ Դա ես կհաստատեմ դատարանում, կխայտառակեմ նրանց ամբողջ աշխարհով մեկ։ Ես կապացուցեմ ճահճային այդ գորտերին, թե ինչքան դժվար է կռվել բոլշևիկների հետ։ Ահա համառոտ իմ գործունեության մասին։ Այժմ նստած եմ Մետեխում։ Մի գործի համար դատապարտվել եմ 20 տարվա տաժանակրության։ Կան ուրիշ գործեր։ Ես դեռ առույգ եմ և մտածում եմ ճողոպրել։

Վերջապես ես պարտավոր եմ երկու խոսք ասել այն ընկերոջ վերաբերյալ, որին դուք ուղարկել եք 2000 ռուբլի և որին ես անխնա հայհոյում էի։ Ես նրան հանդիպեցի բանտում։ Նա շուտով ազատվեց։ Ներողություն եմ խնդրում ձեզնից, որ անտեղի անվանարկել եմ նրան։ Պարզվեց, որ նա գործին նվիրված ամենալավ ընկերներից է։ Ես մոլորության մեջ եմ ընկել ուրիշների խոսքով։ Նա միակն է Կովկասում, որը ընդունակ է ամեն մի լուրջ գործ կատարելու։ Նա ուզում է պոկել ինձ այստեղից և նորից գործել։ Եթե նա դիմի Ձեզ ինչ-որ բանի համար, վստահեցեք և չմերժեք։ Ես չեմ կարողանում ինձ ներել այն սխալի համար, որ այնպես անտեղի հայհոյել եմ նրան։ Այն փողը, որ նա ստացել է Ձեզնից, մի մասը ծախսել է ինձ վրա, մի մասը գործերի և նախկին ընկերներին աքսորից վերադարձնելու համար, իսկ մյուս մասն էլ գտնվում է այն ընկերոջ մոտ, որի մասին ասում էի, թե նա կարող է վերադարձնել։ Եվ այսպես ցտեսություն, համբուրում եմ ջերմորեն և բարեկամաբար սեղմում Ձեր ձեռքը։ Գրում եմ ցտեսություն, որովհետև համոզված եմ, որ կհանդիպեմ Ձեզ։

Այսպես անընթեռնելի գրեցի, որովհետև հարյուրավոր աչքեր հետևում են ինձ, և նստած եմ մենախցիկում։ Անգամ չեմ կարող վերընթերցել գրածս՝ վախենալով, թե կարող եմ տապալել նամակս։ Հուսով եմ, որ կջոկեք։

Դարձյալ ցտեսություն, նորից համբուրում եմ։ Եղեք առողջ և առույգ։

Ձեր՝ Կամո»[33]։

Բուլղարիայի կոմկուսի Պլովդիվի օկրուգային կոմիտեի, ժողովրդական օկրուգային սովետի և հայրենական ճակատի օկրու-

---

33 ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 259. оп. 1. ед. хр. 64. л. 1—2 об.

դային կոմիտեի օրգան «Օտեչեստվեն գլաս» («Հայրենական ձայն») թերթի 1970 թ. մարտյան համարներում հրապարակվել է ժուռնալիստ Դ. Դոյչինովի «Կամոն՝ Իլյիչի սիրելին» հոդվածը, որի մեջ խոսվում է Կամոյի և բուլղարական հեղափոխականների քաղաքական կապերի մասին:

Պարզվում է, որ Դ. Բլագոևի երաշխավորությամբ ազատվելուց հետո, Կամոն, Իվան Ջունգովի անվամբ, բուլղարական կեղծ անձնագրով Բուրգասում զենքով բարձում է մի նավակ և ուղևորվում Տրապիզոն: Զենքի փոխադրման ժամանակ, ցարական կառավարության պահանջով, Կամոն, իբրև քրեական հանցագործ ձերբակալվում է թուրքական իշխանությունների կողմից: Քաղաքական վտարանդիներին թուրքերը թեև չէին հանձնում, բայց տվյալ դեպքում հարցը բարդանում է Կամոյի հայ լինելու պատճառով: «Ճակատագիրը դարձյալ բուլղարացու միջամտություն է պահանջում,— գրել է «Օտեչեստվեն գլաս» թերթը:— Այս անգամ վիճակն ընկնում է Պլովդիվի մեծ հեղափոխական Նիկոլա Տրայչևի վրա, որը տվյալ շրջանում Կ. Պոլսում կազմակերպել էր առաջին ընդհատակյա կուսակցական կազմակերպությունը: Կամոն Տրայչևի լավ բարեկամն էր: Մի անգամ չէ, որ Կ. Պոլսում եղած ժամանակ նա օգտագործել է ընդհատակյա կուսակցական կազմակերպության ծառայություններն ու օժանդակությունը»[34]:

Ն. Տրայչևի և նրա քրոջ՝ Ցվետա Տրայչևի փաստաթղթերը, որոնք Պլովդիվի կուսակցական արխիվը ձեռք է բերել 1970 թ., նոր լույս են սփռում Կամոյի գործունեության վրա, լրացնում Բոգդանովին ուղղված նրա նամակի փաստերը:—Ես Կամոյին ճանաչում էի ավելի շատ, որպես եղբորս՝ Նիկոլայի բարեկամի,— գրել է Ցվետան,— քան որպես պրոֆեսիոնալ հեղափոխականի, որը դարձել էր ռուսական ցարիզմի սարսափը: Նա բացառիկ սրտակից մարդ էր, որ կապվել էր մեր ընտանիքի հետ և հաճախ մեր հյուրն էր: Կ. Պոլսում մարդիկ նրան գիտեին որպես հայր Բերնարդո: Իր բնավորության բոլոր լավ գծերի հետ մեկտեղ, Կամոն հիանալի ձայն ուներ: Երբ երգում էր «Սանտա Աննա»-ում, եկեղեցին նեղ էր գալիս:

Բուլղարական վավերագրերը պատմում են, թե երբ Կամոն թուրքերի կողմից կալանավորված էր, Նիկոլան, որ մոտիկից ծանոթ էր նահանգապետին, որոշեց միջամտել և օգնել ազատման

[34] «Отечествен глас», № 139, 1 մարտի 1970 թ.:

գործին։ Սակայն նահանգապետը նրան ասել էր. «չէ՞ որ նա հայ է. Կամոյի ազատվելը թուրքերի կողմից կմեկնաբանվի որպես հանցագործություն»։ Նիկոլան նրան պատասխանել է. «Փաշա էֆենդի, չէ՞ որ դուք էլ կովկասցի չերքեզ եք, բայց գտնվում եք այստեղ, որովհետև ձեր պապերն ու հայրերը փախել են ցարական Ռուսաստանի բռնակալությունից։ Կամոն հայ է, սակայն նա չերքեզների, վրացիների, ադրբեջանցիների և այլ ազգությունների մարդկանց հետ պայքարում է ճնշված ժողովուրդների ազատության համար։ Եվ այդպիսի մի մարդուն դուք ուզում եք հանձնել ռուսական ցարին։

Նահանգապետը Կամոյին ազատում է[35]։

Դրանից հետո Կամոն և իր բարեկամ Գրիգոր Մարխաշվիլին կեղծ անձնագրերով վերադառնում են Թիֆլիս։ Այստեղ իր հեղափոխական գործունեության համար Կամոն նորից է բանտարկվում և երկրորդ անգամ դատապարտվում մահվան։ Ռոմանովների տան 300-ամյակի առթիվ տրված ներման հրամանագրի համաձայն Կամոյի մահապատիժը փոխարինվում է 20 տարի տաժանակիր աշխատանքով։

— Իմ աստվածը, իմ հավատը սոցիալիզմն է։ Այլ աստված, այլ հավատ ես չունեմ և չեմ կարող ունենալ,— այսպես է ասել Կամոն դատարանում իր մահվան դատավճիռը լսելուց հետո։

1915 թ. Կամոյին Թիֆլիսից փոխադրում են Խարկովի բանտը։ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո նա ազատվում է բանտից և հեղափոխական գործունեություն ծավալում Թիֆլիսում, Բաքվում, Պետերբուրգում, Մոսկվայում և այլուր[36]։

---

35 Տե՛ս «Отечествен глас», № 140, 3 մարտի, 1970 թ.։ Հոդվածը բուլղարերենից թարգմանել է Հովհաննես Թագվորյանը։

36 Կամոն լիովին վայելում էր Վ. Ի. Լենինի վստահությունը։ Իլյիչի ստորագրությամբ, 1919 թ. սեպտեմբերի 3-ին, Կամոյին տրված վկայականում ասված է. «Սույնը ներկայացնող ընկ. Կ. Պետրովին, որն ունի № 483 տոմսը (մինչև 1919 թ. հոկտեմբերի 1-ը) ԿԳԿ շենքը մտնելու համար և որը աշխատում է ԿԳԿ բաժիններից մեկում՝ Ճանաչում եմ անձամբ։

Խնդրում եմ բոլոր սովետական հիմնարկներին, զինվորական և այլ իշխանություններին լիակատար վստահություն և ամեն տեսակ աջակցություն ցույց տալ ընկ. Կ. Պետրովին։ Պաշտպանության խորհրդի նախագահ՝

Վ. Ուլյանով (Լենին)։—Տե՛ս «Լենինի հետ, վավերագրեր և հուշեր», Երևան, էջ XVI։

Կամոն իր պլանների մասին ամենից շատ խորհրդակցում էր Վ. Ի. Լենինի հետ, նրանից ստանում իմաստուն խորհուրդներ[37]։

8

Ալեքսանդր Ֆեդորովիչ Մյասնիկյան (Ալ. Մարտունի 1886—1925) *հեղափոխական շարժումներին սկսել է մասնակցել 1904 թ., ՌՍԴԲԿ շարքերն է անցել 1904 թվականին։ 1906—1909 թթ. ընդհատակյա աշխատանք է կատարել Բաքվում։ 1914 թ. զորակոչվել է բանակ, բոլշևիկյան ակտիվ գործունեություն ծավալել զինվորների շրջանում։ 1917 թ. փետրվարյան հեղափոխության ժամանակ եղել է կուսակցության Հյուսիս-արևմտյան մարզկոմի, ինչպես նաև Արևմտյան ռազմաճակատի կոմիտեի անդամ և նրա բոլշևիկյան ֆրակցիայի ղեկավարը։ Խմբագրել է բոլշևիկյան «Զվեզդա» (Բելոռուսիա) թերթը, կուսակցության VI համագումարում հանդես է եկել Արևմտյան ռազմաճակատի վերաբերյալ հաղորդումով։ 1917 թ. սեպտեմբերին, Հյուսիս-արևմտյան մարզի բոլշևիկների առաջին կոնֆերանսում ընտրվել է ՌՍԴԲԿ(բ) մարզկոմի նախագահ, եղել է Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության և սովետական*

---

[37] *1921 թ. մայիսին Կամոն Վ. Ի. Լենինին գրել է. «Մեծարգո և թանկագին Վլադիմիր Իլյիչ՝*

Ռուսաստանի կոմունիստական կուսակցության կոնֆերանսի ժամանակ ես Ձեզ հաղորդեցի իմ նոր, ցնցող պլանների վերաբերյալ Ձեզ հետ խոսելու իմ ցանկության մասին։ Այդ խոսակցությունը կարող է տեղի ունենալ Ձեր զբոսանքի կամ հանգստի ժամանակ և Ձեզ բոլորովին չի հոգնեցնի։ Գուցե Դուք կգտնեք, որ իմ նկատառումները դուրս կգան շատ արժեքավոր և դրանց իրագործումը չափազանց կարևոր է ներկա մոմենտի համար, կամ թե Դուք դրանք կհամարեք խիստ զվարճալի և սրտանց, ինչպես այդ կարող եք, Դուք կծիծաղեք։

Ես կուզեի, որ Դուք ինձ լսեք մինչև Կոմինտերնի կոնգրեսը սկսելը կամ նրա սկզբին» (Ленинский сборник, XXXV, 264)։ *Կամոյի նամակի վրա կա Վ. Ի. Լենինի հետևյալ մակագրությունը՝ «Կամո։ Հիշեցնել ինձ։ Հեռախոս 3—77—55։ Սովետների 4-րդ տուն, բն. 20»։ Կամոյի կյանքի և հեղափոխական գործունեության մասին ստեղծված է հարուստ գրականություն (տե՛ս К. Либкнехт,* Речь на 76-ом заседании прусской палаты депутатов 2 июня 1910 года. Стенографические отчеты прусской палаты депутатов, 21-й заседанный период. III сессия 1910 года, стр. 6517—6518, 6537—6538 (на нем. яз.); *А. Б. Арутюнян*, Камо, Ереван, 1957; *Б. Бибинейшвили*, Камо, М., 1934; *М. Горький*, Камо, Соб. соч., т. 17, М., 1952; *Н. Крупская*, Воспоминания о Ленине. М., 1957; *С. Медведевой-Тер-Петросянц*, Герой революции, М.—Л., 1925; *Сурен Шаумян (С. Ш.)*. Тов. Камо, «Правда», № 158, 18 июля 1922 г., *Л. С. Шаумян*, Камо, М., 1959.

իշխանության կազմակերպիչներից մեկը։ 1917 թ. նոյեմբերին ընտրվել է Արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար, 1918 թ. գարնանը նշանակվել է Մերձվոլգյան ռազմաճակատի հրամանատար և մասնակցել չեխոսլովակյան խռովության ջախջախմանը։ 1919 թ. ընտրվել է Բելոռուսիայի կոմկուսի կենտկոմի բյուրոյի նախագահ։ 1919—1920 թթ. աշխատել է որպես բոլշևիկյան կուսակցության Մոսկվայի կոմիտեի քարտուղար։

Ա. Մյասնիկյանը հայ հասարակական-քաղաքական մտքի մարքսիստական ուղղության և՛ ստեղծողներից է և՛ նրա պատմության խոր տեսաբաններից։ Նա լենինիզմի անխոնջ պրոպագանդիստ է, հայկական լենինապատման առաջին ստեղծողներից, հայ ժողովրդի նորագույն շրջանի պատմության փայլուն դեմքերից մեկը։

Ա. Մյասնիկյանի աշխատություններն ու հոդվածները տեսական մարքսիզմի հիասքանչ օրինակ են, Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման համար մղած պայքարի հատու զենք։

Մյասնիկյանը ոչ միայն կովկասյան, այլև համառուսական մասշտաբի գործիչ էր, Վ. Ի. Լենինի հավատարիմ աշակերտներից։ 1917—1924 թթ. նա աշխատել է Իլյիչի ղեկավարությամբ, բազմաթիվ հանդիպումներ ունեցել նրա հետ։ Մյասնիկյանի օրագրերը, ճառերը, հոդվածները, հուշերը, ինչպես և կուսակցական-պետական ամբողջ գործունեությունը ցույց են տալիս նրա խոր սերն ու անսահման հավատը Իլյիչի նկատմամբ և նրա պատրաստակամությունը՝ իր ամբողջ կյանքում պայքարելու Լենինի գաղափարների կենսագործման համար[38]։

Աշխատելով կուսակցության Մոսկվայի քաղաքային կոմիտեում, Մյասնիկյանը 1920 թ. ապրիլի 23-ին ղեկավարել է Վ. Ի. Լենինի ծննդյան 50-ամյակին նվիրված երեկոն, որտեղ ելույթ են ունեցել Ի. Ստալինը, Մ. Գորկին, Ա. Լունաչարսկին, Իլյիչի բարեկամներն ու ընկերները։ Վ. Ի. Լենինը Ա. Մյասնիկյանի միջոցով է ուղարկել Կովկասի կոմունիստներին ուղղված այն ծրագրային նամակը, որի իրականացման համար շատ ջանքեր գործադրեց մեծ լենինյանը։ Ա. Մյասնիկյանը միշտ ակնածանքով է հիշել Իլյիչի հետ ունեցած հանդիպումների մասին։

«Ես անչափ երջանիկ եմ և մինչև կյանքիս վերջը կհպարտա-

38 Տե՛ս Ա. Մնացականյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1955, էջ 161։

նամ, որ եղել եմ Վ. Ի. Լենինի ժամանակակիցը, անձամբ ծանոթ եմ եղել, խոսել եմ Նրա հետ, սեղմել եմ Նրա ձեռքը, ման եմ եկել, շրջագայել Նրա հետ միասին, եղել եմ այդ հսկայի, մեր ժամանակի հանճարի հետևորդն ու փոքր աշակերտը»,— գրել է Մյասնիկյանը[39]։

9

Հայ ժողովրդի արժանավոր զավակները, համառուսական պրոլետարիատի շարքերում, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ խիզախաբար մարտնչել են հոկտեմբերյան բարիկադների վրա, ներքին և արտաքին թշնամիների դեմ ծավալված ծանր ռազմաճակատներում կրծքով պաշտպանել մեծ Հոկտեմբերի նվաճումները։ 1917 թ. ապրիլի 3-ին, երբ Վ. Ի. Լենինը երկարամյա տարագրությունից վերադարձավ Ռուսաստան, Պետրոգրադի Ֆինլանդական կայարանում դիմավորողների մեջ էին նաև մի խումբ հայ հեղափոխական գործիչներ, այդ թվում՝ Մ. Տեր-Հարությունյանցը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ս. Լուկաշինը (Սրապիոնյան), Երեմիա Բակունցը, Հմայակ Բեգլոևը և ուրիշներ։ Պետերբուրգում հեղափոխական գործունեությամբ աչքի էին ընկնում Բ. Բորյանը, Հ. Ադոնցը, Ս. Բաղդասարյանը, Նինա Աղաջանյանը (Ալաջալովա), Ալեքսանդր Վերմիշևը, Վ. Ավանեսովը, Լ. Կարախանը (Կարախանյան) և ուրիշներ։ Մեծ Հոկտեմբերի նախօրյակին, հոկտեմբերի 20-ին, Պետրոպավլովյան ամրոցի և նրան կից՝ կրոնվերյան զինանոցի առաջին կոմիսար է նշանակվում **Մ. Տեր-Հարությունյանցը** (1894—1961)։ Հետագայում նա գրել է. «Հոկտեմբերի 20-ի երեկոյից սկսած Պետրոպավլովյան ամրոցին կից կրոնվերյան զինանոցը, որտեղ պահվում էին 100 հազար հրացան, մեծ քանակությամբ գնդացիր, զանազան սիստեմների ատրճանակներ, հրետանի, սրեր և մեծ քանակի մարտական հանդերձանք, ինչպես նաև Պետրոպավլովյան ամբողջ ամրոցը լիովին անցան Ռազմա-հեղափոխական կոմիտեի իշխանության տակ[40]։ Հոկտեմբերի 23—25-ը Մ. Տեր-Հարությունյանցի ղեկավարությամբ ռազմա-հեղափոխական կոմիտեի ցուցակով բաշխվում էր զենքը։ Վ. Ի. Լենինի ցուցումներով Մ. Տեր-Հարությունյանցը ռազմական

---

39 Տե՛ս Ալ. Մյասնիկյան, Իմ հանդիպումներն ընկեր Լենինի հետ, Երևան, 1960, Նույնը՝ Լենինի հետ, վավերագրեր և հուշեր, Երևան, 1969, էջ 294։

40 Մ. Տեր-Հարությունյանց, Վ. Ի. Լենինը որպես ռազմական ղեկավար սովետական իշխանության ստեղծման ժամանակաշրջանում (տե՛ս «Լենինի հետ. վավերագրեր և հուշեր», Երևան, 1969, էջ 244—259)։

օգնություն է ցույց տվել Բաքվի պրոլետարիատին։ 1919 թ. հուլիսին ծովային գործերի կոմիսարիատին ուղարկած նամակում Տեր-Հարությունյանը խնդրում է՝ բացի ականներից, շտապ կերպով Կասպից ծովն ու Քուռ գետ հասցնել և Բաքվի ժողկոմսովետի ռազմա-ծովային բաժնի տրամադրության տակ դնել մոտորային շարժիչ ունեցող 8—10 «Նիքսոն» տիպի նավեր կամ «Ստացիոնար» տիպի պահակային կատերներ։ Գործն արագացնելու նպատակով Վ. Ի. Լենինը Տեր-Հարությունյանցի նամակի վրա երկտող է գրել ուղղված ծովային գործերի ժողկոմատին։ «13 հուլիսի 1918. Շատ եմ խնդրում ձեռք առնել բոլոր միջոցները՝ պատշաճ տիպի բոլոր ռազմական ծովային նավերը Կասպից ծով հասցնելը արագացնելու համար»[41]։

Այնուհետև նա պատմում է այսպիսի մի դրվագ։ Վ. Ի. Լենինը պահանջում էր, որ ամեն օր որոշակի ժամերի հաղորդվի Բաքվի կոմունային ցույց տրվող օգնության մասին։ Տեր-Հարությունյանը մեկ անգամ Իլյիչին հաղորդում է, որ հրետանային գլխավոր վարչության պետը զանազան պատրվակներով ձգձգում է Բաքու զենք և ռազմամթերք ուղարկելը։ Լենինը նրանից հեռախոսով բացատրություն է պահանջում, որը նրան չի բավարարում։

— Եթե վաղը պահանջված զենքը չուղարկվի Ստեփան Շահումյանի տրամադրության տակ,— ասում է Լենինը,— ապա ես ձեզ կուղարկեմ Լուբյանկա՝ Ֆ. Է. Ձերժինսկու մոտ։

Դա իր ազդեցությունն ունեցավ, հետևյալ օրը զենքն ու ռազմամթերքն ուղարկվեցին Բաքու։

Հայ ժողովրդի զավակները մեծ ոգևորությամբ են մասնակցել Հոկտեմբերի հաղթանակի համար 1917 թ. Մոսկվայում մղված մարտերին։ Անմահ սխրագործություն կատարեց Զամոսկվորեցկի շրջանի կոմերիտական Լուսիկ Լիսինյանը (Լիսինովա), որը զոհվեց հերոսի մահով՝ մարտական առաջադրանքը կատարելու պահին։ Նա, որ թաղված է Կրեմլի պատի տակ, հոկտեմբերյան դյուցազնամարտերում ընկածների հետ կողք-կողքի՝ եղբայրական գերեզմանոցում, խորհրդանշում է հոկտեմբերյան գոտեմարտերին հայերի ցուցաբերած մասնակցությունը։

Քաղաքական-մասսայական աշխատանք էր կատարում Ռուբեն Քաթանյանը, որը Մոսկվայի ռազմա-հեղափոխական կոմիտեի օրգան «Իզվեստիա»-ի խմբագիրն էր, Կարմիր բանակի քաղաքա-

---

41 XXXIV Ленинский сборник, стр. 33.

կան վարչության պետի պաշտոնակատարը (1919) և ապա՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչը։

Թևավորված Վ. Ի. Լենինի գաղափարներով, Ավ. Վերմիշևը թշնամու դեմ արիաբար մարտնչում էր թե՛ զենքով, և թե՛ գրչով։ 1919 թ. նա նամակով իր «Կարմիր ճշմարտությունը» պիեսը ուղարկում է Իլյիչին, խնդրելով նրա կարծիքը։ Մի քանի օր անց, ապրիլի 16-ին, Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ, ՌՍՖՍՀ ժողկոմսովետի քարտուղար Ֆոտիևան գրել է. «Վլադիմիր Իլյիչի հանձնարարությամբ հայտնում ենք, որ Ձեր «Կարմիր ճշմարտություն» պիեսը ուղարկված է կարծիքի... Նրանց գնահատականը հետևյալն է. «Մեր ընդհանուր կարծիքն այն է, թե որպես ագիտացիոն պիեսը պետք է ուժեղ ազդեցություն ունենա հատկապես այն տեղերում, որտեղ վերապրում է քաղաքացիական պատերազմը»։ «Կարմիր ճշմարտությունը» կարդացել էր Մաքսիմ Գորկին և բարձր գնահատական տվել։

«...Ոչ թե մելոդրամ, այլ ժամանակակից թեմայով ագիտացիոն կենցաղային պիես։ Հեղինակը զուրկ չէ տաղանդից։ Կան խարակտերներ»[42]։

Վ. Ի. Լենինի հետ հայ հեղափոխական գործիչների քաղաքական կապերն արտացոլված են Ա. Միկոյանի «Խոհեր և հուշեր Լենինի մասին», Շ. Մանուչարյանցի՝ «Աշխատանքը Վլադիմիր Իլյիչի դրադարանում», Ս. Կարինյանի՝ «Լսելով Լենինի խոսքը», Հ. Բեգլուևի՝ «Սպասում ենք Լենինին», Ս. Տեր-Գաբրիելյանի՝ «Բաքվի ժողկոմսովետի առաջադրանքով», Աշ. Հովհաննիսյանի՝ «Լենինը ամբիոնի մոտ», Ա. Մռավյանի՝ «Լենինի մոտ», Ա. Վարդանյանի՝ «Կենդանի լենինյան խոսքը», Ս. Մխչյանի՝ «Երբ և որտեղ տեսա ընկեր Լենինին» և այլոց հուշագրություններում։

Ա. Միկոյանը Վ. Ի. Լենինին առաջին անգամ հանդիպել է 1919 թ. որը և անջնջելի տպավորություն է թողել նրա ողջ կյանքում։ Շ. Մանուչարյանցը ակնածանքով է հիշում Վ. Ի. Լենինի դրադարանում աշխատած տարիներին Իլյիչի հետ ունեցած հանդիպումների մասին, նշում, թե նա ինչպիսի նշանակություն էր տալիս գրքին։ Վ. Ի. Լենինը իր գրքերի վրա կատարում էր տարբեր և բնորոշ նշումներ,— ասում է Մանուչարյանցը. օրինակ՝ «Լենինի օրինակը», «Լենինի սեղանին», «վերադարձնել», «իմ դրադարանին», «պա-

---

[42] *ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, Ա. Վերմիշևի ֆոնդի նյութերը։ «Լենինի հետ, վավերագրեր և հուշեր»։ Երևան, 1969, էջ XXIV։*

հել գրադարակի վրա», «պահել գաղտնի»։ Ֆ. Էնգելսի քաղաքական կտակը» ժողովածուի վրա Լենինը գրել է. «պահել գրադարակի վրա», իսկ Դենիկինի՝ «Ռուսական խառնակության ուրվագծերը» գրքի վրա նշել է. «Հեղինակը դասակարգային պայքարին մասնակցում է կույր քոթոթի նման»։

1907 թ. ՌՍԴԲԿ անդամ Ս. Կարինյանը (1886) «Լսելով Լենինի խոսքը» հուշագրությունում պատմում է, թե մի խումբ կովկասցի ուսանողների հետ Ֆիննական փոքրիկ Տերիոկի քաղաքում (այժմ՝ Զելենոգորսկ) ինչպես է լսել Իլյիչի զեկուցումը։ «Լսելով Լենինին,— գրել է նա,— մենք տեսանք և համոզվեցինք, որ նույնիսկ «ընթացիկ մոմենտի» մասին կարդացած իր զեկուցման մեջ ականավոր հեղափոխական տրիբունը միաժամանակ շատ խոհուն գիտնական էր, որի զեկուցման թե՛ կուռ հյուսվածքը, և թե՛ մեթոդոլոգիան մեզ՝ երիտասարդ մարքսիստներիս համար շատ և շատ ուսանելի են»[43]։ Կարինյանը Վ. Ի. Լենինին երկրորդ անգամ տեսել է փետրվարյան հեղափոխությունից հետո՝ Ֆինլանդական կայարանում։ Դրանից հետո, Տավրիկյան պալատում, նա շատ անգամ է տեսել և լսել Իլյիչին։ Լենինի աշխատությունների լույսի ներքո,— պատմում է Կարինյանը,— մենք սկսեցինք նոր լույսով մոտենալ Մարքսի և Էնգելսի երկերի ուսումնասիրությանը, Լենինն օգնեց մեզ ճիշտ դիրքերից մոտենալ գիտության նվաճումներին և մշակույթի կարևոր արժեքները քննադատորեն յուրացնելու գործին։

«Լենինի խելացի դեմքը, խոր հայացքը, արտահայտած պարզ ու ազդու մտքերը, և ուժեղ ձայնը լսողին կարծես հիպնոզում էին, մի ինչ-որ մագնիսական ուժով քաշում էին դեպի իրեն,— այսպես է պատմում Սաթենիկ Մխչյանը, որը 1917 թ. Պետրոգրադի Կամենոստրովսկի հրապարակում լսել է Իլյիչի ելույթը[44]։

Այսպես անվերջ ու անծայր է Վ. Ի. Լենինի և հայ հեղափոխականների քաղաքական կապերի պատմությունը, որի ուշագրավ էջերից են Ս. Տեր-Գաբրիելյանի հանդիպումները։

10

Վ. Ի. Լենինի մանդատով է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նվաճումների պաշտպանության գործում

43 «Լենինի հետ. վավերագրեր և հուշեր», Երևան, 1969, էջ 261։

44 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. 3, կապ. 12, գ. 554, թ. 16։

լիովին դրսևորել իր հեղափոխական եռանդն ու կորովը Սահակ Տեր-Գաբրիելյանը (1886—1937)։ 1900 թ. թողնելով հայրենի Շուշին, նա մեկնում է Բաքու, զբաղվում սևագործ բանվորությամբ։ Դարասկզբին Բաքվում ծավալված իրադարձությունները թևավորում են նրան։ Աստիճանաբար ձևավորվում է նրա մարքսիստական աշխարհայացքը։ Տեր-Գաբրիելյանը կապ է հաստատում Բ. Կնունյանցի, Ս. Բեկզադյանի, Մ. Մելիքյանցի և այլոց հետ, 1902 թ. մտնում է ՌՍԴԲԿ շարքերը։ Հեղափոխական շարժումներին ակտիվորեն մասնակցելու համար շուտով նա ձերբակալվում է և արտաքսվում Բաքվից։ Մեկ տարի անց, 1903 թ. նորից է վերադառնում Բաքու և եռանդուն կերպով շարունակում կուսակցական ընդհատակյա աշխատանքը։ Ռուսական առաջին հեղափոխության և նրան հաջորդած տարիներին Տեր-Գաբրիելյանը Բաքվի բոլշևիկյան կազմակերպության աչքի ընկնող գործիչներից էր, սիրված պրոպագանդիստ ու ագիտատոր։ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո նա բոլշևիկյան ֆրակցիայի կողմից ընտրվում է Բաքվի սովետի և նրա նախագահության կազմում, մասնակցում Սովետների համառուսաստանյան մարտյան խորհրդակցությանը։ 1917 թ. ապրիլի 3-ին նրան բախտ է վիճակվում առաջին անգամ տեսնել տարագրությունից նոր վերադարձած Վ. Ի. Լենինին, իսկ հաջորդ օրը Տավրիկյան պալատում լսել Իլյիչի հռչակավոր Ապրիլյան թեզիսները։ Տեր-Գաբրիելյանն է առաջին անգամ Ապրիլյան թեզիսները հասցրել Բաքվի բոլշևիկներին, նրանց մարտական ղեկավար Ստ. Շահումյանին։ Իլյիչի կենդանի ու ոգևորիչ խոսքը բազմապատկում է Տեր-Գաբրիելյանի հեղափոխական կորովը, նրա առջև բացելով նոր, պայծառ հորիզոններ։

Ս. Տեր-Գաբրիելյանն անմոռանալի էջեր է գրել Բաքվի հերոսական կոմունայի տարեգրության մեջ, որպես Արտակարգ հանձնաժողովի (Չեկա) նախագահ։ Ստ. Շահումյանի հանձնարարությամբ նա մեկնել է Մոսկվա, Վ. Ի. Լենինի մոտ զեկուցել Բաքվի դրության մասին։ «Ես մտա Իլյիչի մոտ և երեք ժամվա ընթացքում պատմեցի այն մասին, թե ինչ է տեղի ունենում մեզ մոտ»,— հետագայում գրել է Ս. Տեր-Գաբրիելյանը։

Անհրաժեշտ օգնություն ստանալով Մոսկվայում՝ նա վերադառնում է Բաքու։ Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, իր հետ բերում է լենինյան ցուցումները, ռազմական հանդերձանք և զենք՝ Բաքվի կոմունան պաշտպանելու համար։

1918 թ. հունիսի 28-ին ՌԿ(բ)Կ Բաքվի կազմակերպության

քաղաքային կոնֆերանսում տված զեկուցման մեջ Տեր-Գաբրիելյանն ասել է, թե երբ ինքը Վ. Ի. Լենինին պատմում էր Բաքվի նավթարդյունաբերության ազգայնացման վերաբերյալ բանվորների ցանկության մասին, նրա առաջին խոսքն էր՝ մենք բավականաչափ ուժեղ ենք, որպեսզի այն իրականացնենք։ Անհրաժեշտ է նշել,— ասում է Տեր-Գաբրիելյանը,— որ Վ. Ի. Լենինը բազմաթիվ անգամ իր հրճվանքն էր արտահայտում Բաքվի սովետի և նրա թանկագին ընկեր Շահումյանի քաղաքականության առթիվ... «Ամեն ինչ Բաքվի համար»— ես լսել եմ ոչ միայն առաջնորդի բերանից, այլև առանձին գործարանների բանվորներից, որոնք երջանկություն են ունեցել ողջունելու Բաքվի կայուն պրոլետարիատին»[45]։

Վայելելով Վ. Ի. Լենինի և նրա զինակից Ստ. Շահումյանի վստահությունը, Ս. Տեր-Գաբրիելյանը 1918 թ. մայիսին ՌՍՖՍՀ ժողկոմսովետից հանձնարարություն է ստանում բոլոր միջոցները ձեռնարկել Բաքվից նավթը Ռուսաստան փոխադրելու համար։

Հոկտեմբերյան հեղափոխության շրջանում Ս. Տեր-Գաբրիելյանը լենինյան մանդատով շատ պատասխանատու գործեր է կատարել, դրսևորելով սոցիալիզմի ակտիվ շինարարի իր ունակությունները։ 1918 թ. մայիսի 23-ին Վ. Ի. Լենին ստորագրությամբ Ս. Տեր-Գաբրիելյանին տրված մանդատում ասված է. «Սույնը ներկայացնող ընկ. Տեր-Գաբրիելյանը գործուղվում է Բաքու,— բոլոր միջոցները ձեռք առնելու՝ Բաքվից նավթը Վոլգայով անհապաղ արտահանելու համար։

Սովետական բոլոր կազմակերպությունները պարտավոր են լիակատար աջակցություն ցույց տալ նրան և նրա տրամադրության տակ դնել իրենց տնօրինության տակ եղած բոլոր ուժերն ու միջոցները՝ այդ առաջադրանքը կատարելու համար»[46]։

Բաքվի պրոլետարիատը հաջողությամբ կատարեց Իլյիչի ցուցումները։

Կոմունայի ժամանակավոր պարտությունից հետո Ս. Տեր-Գաբրիելյանը մեկնում է Մոսկվա, նշանակվում Սովետական Ռուսաստանի բոլոր տեսակի վառելիքի փոխադրման էքսպեդիցիայի կոմիսար։ Կատարելով Վ. Ի. Լենինի հանձնարարությունը, նա ջանք չի խնայում երիտասարդ սովետական հանրապետությանը վառելիքով ապահովելու համար։ Ս. Մ. Կիրովի, Գ. Կ. Օրջոնիկիձեի և այլ

---

45 «Լենինի հետ, վավերագրեր և հուշեր», Երևան, 1969, էջ 502։

46 Նույն տեղում։

ընկերների հետ միասին Ս. Տեր-Գաբրիելյանը Աստրախանում, Գրոզնիում, Սարատովում, Դոնի Ռոստովում և այլուր 1918—1919 թթ. հաջողությամբ կազմակերպում է նավթի, քարածխի և այլ վառելանյութերի փոխադրումը։ 1919 թ. հոկտեմբերին Ս. Տեր-Գաբրիելյանը նշանակվում է ՌՍՖՍՀ Կարմիր բանակի մատակարարման Արտակարգ հանձնաժողովի նախագահի օգնական և ապա՝ 12-րդ բանակի ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ։ Ս. Տեր-Գաբրիելյանը ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարին, եղել է Հայաստանի առաջին հեղափոխական կոմիտեի անդամ։ Նա իր կյանքը լիովին նվիրաբերել է Հայաստանում սոցիալիզմի կառուցմանը։

Վ. Ի. Լենինի և հայ հեղափոխական գործիչների քաղաքական կապերի ամրապնդման գործում արժանի տեղ ունի մեծ ինտերնացիոնալիստ Գ. Կ. Օրջոնիկիձեն (Սերգո)։ Նա ղեկավար մասնակցություն է ունեցել Հայաստանում սովետական կարգերի հաստատման, Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։ Ծնվել է 1886 թ. հոկտեմբերի 27-ին, Քութայիսի նահանգի Շորապանի գավառի Գորեշա գյուղում։ Տակավին 17 տարեկան հասակում, 1903 թ. նա մտնում է բոլշևիկյան կուսակցության շարքերը, բոցաշունչ հեղափոխականին հատուկ խիզախությամբ պայքարում ինքնակալության դեմ։ 1904 թ. հանդիպելով Կամոյին, ջերմ բարեկամություն է հաստատվում նրանց միջև։ 1922 թ. Կամոյի ողբերգական մահվան առթիվ արտասանած ճառում, վերհիշելով այդ հանդիպման մասին, Օրջոնիկիձեն ասել է. «Թանկագին Կամո, քեզ հետ հանդիպեցի 18 տարի առաջ։ Ես երիտասարդ էի։ Դու քո պարտականությունն էիր համարում պարզաբանել ինձ, թե ինչպես դառնալ բոլշևիկ, ինչպես պայքարել պրոլետարիատի շահերի համար»[47]։

Գ. Օրջոնիկիձեն եռանդուն մասնակցություն է ունեցել ռուսական երեք հեղափոխություններին, երկրամասի կոմունիստական շարժմանը։ Նա բազմիցս հալածվել է ցարիզմի կողմից, մի քանի անգամ բանտ նետվել և աքսորվել։ Ութ տարի բանտերում և աքսորում անցկացնելուց հետո, 1909 թ. փախչում է Սիբիրի աքսորից, հաղթահարելով դժվարությունները, հասնում Բաքու և ապա՝ բոլ-

---

47 ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, քաղվածքների ֆոնդ։

շևիկյան կուսակցության Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ մեկնում Պարսկաստան, ղեկավար մասնակցություն ունենում իրանական հեղափոխությանը: Օրջոնիկիձեի կյանքում նշանավոր իրադարձություն էին Վ. Ի. Լենինի հետ ունեցած անձնական ծանոթությունն ու հանդիպումները: 1911 թ. մեկնելով արտասահման, Օրջոնիկիձեն մասնակցում է Փարիզին մերձակա Լոն-Ժյումո վայրում Վ. Ի. Լենինի կազմակերպած կուսակցական դպրոցի պարապմունքներին: Լենինյան չորսամսյա դասընթացներն ավարտելուց հետո Սեմյոն Շվարցի և նույն դասընթացն ավարտած մյուս բոլշևիկների հետ միասին վերադառնում է Ռուսաստան՝ կուսակցական ընդհատակյա աշխատանքի: «1911 թ. Սերգոն դալով Փարիզ, գրել է Ն. Կրուպսկայան,— դարձավ ամենամոտիկ ընկերներից մեկը»: Օրջոնիկիձեն մեծ դեր է խաղացել կուսակցության 1912 թ. Պրագայի կոնֆերանսի նախապատրաստման և անցկացման գործում: Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ, 1911 թ. նա շրջագայում է երկրի արդյունաբերական մի շարք կենտրոններում, այդ թվում՝ Դոնի Ռոստովում, Եկատերինոսլավում, Բաքվում, Թիֆլիսում և այլուր, պայքար ծավալում մենշևիկների ու հաշտվողականների դեմ, տեղական կուսակցական կազմակերպությունները համախմբում Վ. Ի. Լենինի շուրջը: Պրագայի կոնֆերանսում նա զեկուցում է Ռուսաստանի կազմակերպական հանձնաժողովի մասին, ընտրվում լենինյան կենտկոմի և նրա ռուսական բյուրոյի կազմում: 1912 թ. ապրիլին Օրջոնիկիձեն ձերբակալվում է: Նույն թվականի հոկտեմբերից մինչև 1915 թ. հոկտեմբերը, երեք տարի շարունակ, ոտքերը շղթայակապ նա տարավ բանտային ծանր պայմանները: Այնուհետև նրան աքսորեցին Սիբիր և ապա՝ Յակուտսկ: 1917 թ. փետրվարին Օրջոնիկիձեն աքսորական բարեկամներից հեռագիր ստացավ՝ «մորդ հետ տեսակցությունը թույլատրված է»: Այդ նշանակում էր Պետերբուրգում հեղափոխություն էր:

1917 թ. Օրջոնիկիձեն Յակուտյայից հեռանալուց առաջ «Հիշողություններ Յակուտյայի քաղաքական աքսորի մասին» ալբոմում գրել է. «Մնաս բարև, աքսորի երկիր, հայրենի երկիր: Կեցցե՛ ռուսաստանյան մեծ հեղափոխությունը: Կեցցե սոցիալիստական հեղափոխությունը»:

1917 թ. հունիսին Օրջոնիկիձեն Պետրոգրադում էր, Վ. Ի. Լենինի մոտ: Իլյիչի առաջարկությամբ նա ընտրվում է կուսակցության Պետերբուրգի կոմիտեի և խորհրդի գործադիր կոմիտեի կազմում և գործուն մասնակցություն ունենում քաղաքական կյանքին:

Կուսակցության Կենտկոմի հանձնարարությամբ նա այդ օրերին այցելում է ընդհատակում գտնվող Իլյիչին: Հետագայում վերհիշելով այդ մասին, Օրջոնիկիձեն գրել է. «Մենք գնացինք լճի մոտ, նստեցինք նավակը և, անցնելով մյուս ափը, գնացինք մացառուտով: Ես վճռեցի, որ Լենինն ապրում է մի որևէ ամառանոցում: Հանկարծ մենք կանգ առանք խոտհարքի մոտ, որտեղ դրված էր խոտի մի փոքրիկ դեզ: Տղան անունով կանչեց ինչ որ մեկին: Ես ոչինչ չէի հասկանում: Դուրս եկավ ինչ որ մի մարդ: Բանից պարզվեց, որ նա այդ տղայի հայրն է: Բարևեցի նրան, բացատրեցի թե բանն ինչումն է և այլն: Մտածում եմ, այնուհետև Լենինի մոտ կտանի: Այդ մոմենտին ինձ մոտենում է սափրված մի մարդ, առանց մորուքի և բեղերի: Մոտեցավ և բարևեց. ես պատասխանեցի հասարակ, չոր կերպով: Այն ժամանակ նա ուսիս խփեց և ասաց. «Ի՞նչ է, ընկեր Սերգո, չե՞ս ճանաչում»: Բանից դուրս եկավ, որ ինձ հետ խոսում է ընկեր Լենինը: Ես խանդավառությամբ սեղմեցի նրա ձեռքը: Սկըսվեցին խոսակցությունները»[48]:

Գ. Օրջոնիկիձեն կուսակցության VI համագումարի ակտիվ մասնակիցներից է: Համագումարում նա հանդես է գալիս Վ. Ի. Լենինին ժամանակավոր հակահեղափոխական կառավարության դատարան չներկայացնելու հարցի մասին: Իր ելույթում նա դիմելով հակահեղափոխական տարրերին, ասում է. «Մենք Իլյիչին ձեզ չենք տա»:

Օրջոնիկիձեն եռանդուն մասնակցություն է ունեցել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը, Անդրկովկասում սովետական կարգերի հաստատմանը, քաղաքացիական կռիվներին: 1919 թ. հոկտեմբերին (16-ին կամ 17-ին) Վ. Ի. Լենինը Օրջոնիկիձեի նամակի վրա մակագրել է. «...Սերգոն շատ հուսալի ռազմական *աշխատող է, որ նա ամենահավատարիմ և* ամենազործունյա *հեղափոխականն է, ես ինքս նրան գիտեմ 10 տարուց ավելի»*[49]:

1920—1926 թթ. Օրջոնիկիձեն ղեկավարել է Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, սկզբում որպես ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի նախագահ, իսկ հետագայում՝ կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեի քարտուղար:

Օրջոնիկիձեն հայ ժողովրդի անշահախնդիր բարեկամն էր: Նա

---

48 «Грузинские страницы Лениннаны», Тбилиси. 1970.

49 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 35, էջ 460:*

շատ բան է արել Հայաստանում մարքս-լենինյան գաղափարների տարածման և իրականացման համար։

II

Մոսկվա, 1920 թվականի մայիսի մեկ։ Կինոօպերատորը հավերժացրել է Վ. Ի. Լենինի կերպարը «Աշխատանքի ազատագրություն» հուշարձանի հիմնադրման պահին։ Վլադիմիր Իլյիչը իրեն հատուկ բարի ժպիտով ու հայացքով. ձեռքը պարզած ողջունում է ժողովրդին։ Նրա կողքին, աջից իր կյանքի ու հեղափոխական գործի մարտական ընկերն ու զինակիցն է՝ Ն. Կ. Կրուպսկայան, իսկ ձախից՝ ժպտադեմ մի թխահեր երիտասարդ։ Քչերը գիտեն, որ նա հայ անվանի քանդակագործ Հակոբ Գյուրջյանն է։ Վ. Ի. Լենինը, դեռևս 1912 թ. Մաքսիմ Գորկու հետ միասին Փարիզում այցելել է նրա արվեստանոցը։ «Մի անգամ սեանսի ժամանակ Գյուրջյանի արվեստանոցը մտավ Գորկին,— գրել է դրամատուրգ Ի. Սուրգուչևը,— բայց ոչ մենակ, այլ արտասովոր, խորաթափանց աչքերով մի մարդու հետ։ Այդ աչքերը սահեցին կտավի վրայով և կարծես միանգամից ընկալեցին այն ամենը, գնահատեցին և մարդը ասաց. «շրթունքները չոր ու ցամաք են ստացվել, չոր ու ցամաք»։ Այդ մարդը Լենինն էր»[50]։

Հ. Գյուրջյանը ժամանակին կերտել է Լև Տոլստոյի, Մ. Գորկու, Ֆ. Շալյապինի, Ս. Ռախմանինովի, Ալ. Շիրվանզադեի և այլոց հոյակապ քանդակները։ Նա շատ է ցանկացել ստեղծել Վ. Ի. Լենինի քանդակը։ Լուժողկում Անատոլի Լունաչարսկին օգնել է, որպեսզի Գյուրջյանը մոտիկից տեսնի Իլյիչին, ուսումնասիրի թանկագին առաջնորդի դիմագծերը, իսկ հետո անմահացնի բրոնզի վրա։ Լավ իմանալով Վ. Ի. Լենինի անսահման համեստության մասին, Գյուրջյանը խնդրել է Լունաչարսկուն օգնել իրեն լինել Իլյիչի աշխատասենյակում, քաղել արվեստագետին անհրաժեշտ նյութեր։ 1920 թ. հուլիսի 23-ին Լունաչարսկին Վ. Ի. Լենինին գրել է. «Դուք ինձ խոստացել եք մի քանի անգամ կեցվածք ընդունել նկարիչ քանդակագործ Գյուրջյանի համար։ Այդ նկարիչը հայկական հպատակ է, բոլոր համապատասխան իշխանությունների թույլտվությամբ շուտով մեկնում է Արևմուտք։

Այնտեղ նա կարող է ավելի ամուր նյութից պատրաստել կիսանդրի, որ նա այստեղ կծեփակերտի Ձեղանից։

---

50 Տե՛ս Р. Дрампян, Акоп Гюрджян, Ереван, 1974, стр 27.

Այդ բանդակագործը շատ լավն է և բյուստը, հավանորեն, հաջող կլինի։ Ես շատ կխնդրեի Ձեզ չմերժել ամենամոտ ապագայում համեմատաբար կարճ սեանսներ նշանակելու այդ աշխատանքի համար»[51]։

Քանդակագործը ուզում էր ստեղծել հայ ժողովրդի մեծ ազատարարի՝ Վ. Ի. Լենինի կերպարը, ժողովուրդ, որն իր սրտում հավերժ փայփայում է սիրելի Իլյիչի նվիրական անունը։

Մոսկվայում հրատարակվող հայկական գործերի կոմիսարիատի օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթի 1918 թ. հուլիսի 7-ի համարը բացվում է Վ. Ի. Լենինի նկարով։ Հայ իրականության մեջ դա առաջին անգամն էր, որ Իլյիչի նկարը հրապարակվում էր։ Գնալով շուրթից շուրթ, սրտից սիրտ էր թափանցում Լենինի անունը։

Սիրելի առաջնորդի նկատմամբ հայ ժողովրդի տածած անհուն սիրո և նվիրվածության արտահայտություններից մեկն էլ այն բազմաթիվ նամակներն ու ողջույններն էին, որ ուղարկվում էին Իլյիչին։ Դրանք նման են մի լայնահուն, վիթխարաշունչ ասքի։ Հերոսական տարիներ, հերոսական դեմքեր է ոգեկոչում այդ ասքը, մեր միտքն ու զգացումները կրկին անգամ ուղղում դեպի Լենինի՝ մարդկայնորեն պայծառ ու անաղարտ կերպարը։ Այդ վիթխարաշունչ ու սրտառուչ ասքը ընթերցողի սիրտը Իլյիչի նկատմամբ հպարտությամբ է լցնում։ Դրանք հայ ժողովրդի սրտի ձայնն են։ Վ. Ի. Լենինի նկատմամբ տածած սիրո և երախտագիտության առհավատչյան։ 1918—1924 թթ. Հայաստանի աշխատավորները սրտաբուխ շատ նամակներ են ուղարկել Իլյիչին։ Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին օրը Հայաստանի Հեղկոմը ողջույնի խոսքն ուղղեց իր մեծ ազատարարին՝ Վ. Ի. Լենինին։

Մոսկվա, Կրեմլ, ընկեր Լենինին...
Մոսկվա, Ժողկոմսովետի նախագահ ընկ. Լենինին...

Այս հասցեով Հայաստանից շատ նամակներ, հեռագրեր էին առաքվում, իրենց հետ տանելով հայ աշխատավորության ամենանվիրական խոհերն ու զգացմունքները։ Այդ նամակները պատմական վավերագրեր են, որ խոսում են նոր, սոցիալիստական պետության ղեկավարի և շարքային մարդու կապի ու միասնության մասին։

Տակավին նոր էր սովետների հաղթական դրոշը ծածանվում Երևանի վրա, երբ 1920 թ. դեկտեմբերի 6-ին քաղաքի աշխատավորները, իրենց բազմամարդ միտինգում արտահայտելով ամբողջ հայ

[51] ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 461, ед. хр. 30919.

ժողովրդի միաձայն կամքը, որտեղից ողջույն ուղարկեցին Վ. Ի. Լենինին։

Սովետական Հայաստանի աշխատավորների մտքերն ու խոհերը ամբողջովին ուղղված էին Լենինին։ Բանվորներն ու գյուղացիները, ժողովրդական ինտելիգենցիայի ներկայացուցիչները Իլյիչին հաղորդում էին, որ ֆիզիկական բնաջնջման, անկման վիհի եզրին հասցված հայ ժողովուրդը, մոխիրներից ու փլատակներից վեր խոյանալով, լծվել է սոցիալիստական շինարարության, կերտում է իր լուսավոր ու երջանիկ կյանքը։ 1921 թ. հուլիսին Ալեքսանդրապոլի գավառի 145 գյուղերի հեղկոմների նախագահները, հավաքվելով համագումարի, հեռագիր ուղարկեցին Լենինին, նրանում ջերմորեն ողջունելով «Ռուսաստանի մեծ հեղափոխության ռահվիրային, բանվորա-գյուղացիական շահերի միակ պաշտպանին»։

1922 թ. հունիսին Երևան քաղաքի աշխատավորները Լենինին ընտրում են քաղաքային սովետի պատվավոր անդամ։ Հունիսի 6-ին Երևանի քաղսովետի նախագահ Հայկ Ազատյանը Իլյիչին ուղարկած հեռագրում նշել է, որ նա միաձայն ընտրվել է Երևանի Քաղսովետի պատվավոր Նախագահ և խնդրում է, որ Լենինը ընդունի խորհրդի նախագահությունը և իր գաղափարական ղեկավարությամբ ուժեղացնի խորհուրդը։ Նույն թվականի դեկտեմբերի 27-ին Երևանի Քաղսովետը նորից է ողջույնի հեռագիր ուղարկել Վ. Ի. Լենինին։ Նրանում ասված էր. «Երևան քաղաքի բանվորների, կարմիր բանակայինների դեպուտատների վերընտրված սովետը իր պատվավոր անդամին և պրոլետարական առաջին հեղափոխության թանկագին առաջնորդին հղում է ջերմագին ողջույն։

Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները մեծ, սովետական ֆեդերացիայի ընդհանուր ընտանիքում, խաղաղ պայմաններում կռում են կոմունիստական հասարակության հիմքերը, նվիրվելով իմպերիալիստների ու նրանց լակեյների՝ հայկական նացիոնալիստական կուսակցությունների կողմից քարուքանդ արված իրենց օջախների վերականգնման ստեղծարար աշխատանքներին։ Հայաստանի աշխատավորները դրա համար երախտապարտ են Հոկտեմբերյան մեծ հեղափոխությանը և առաջին հերթին համաշխարհային պրոլետարիատի դասակարգային պայքարը ղեկավարող Ձեր հանճարին»[52]։

Վ. Ի. Լենինի հիվանդությունը մեծ վիշտ պատճառեց ամբողջ

---

52 «Լենինի հետ, նամակներ և հուշեր», Երևան, 1969, էջ 349—377։

աշխարհի առաջավոր մարդկության։ Այդ օրերին Հայաստանի աշխատավորները Մոսկվա, Կրեմլ ուղարկած հեռագրերում, նամակներում անհամբեր հետաքրքրվում էին Իլյիչի առողջությամբ, նրան մաղթում երկար ու երկար կյանք։ ՀԿՊ էջմիածնի գավառային կոմիտեն, արտահայտելով աշխատավորների իղձերը, 1923 թ. սեպտեմբերի 8-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմին ուղարկած հեռագրում հաղորդում էր, որ Իլյիչի առողջական վիճակի բարելավման լուրը մեծ ոգևորություն և խանդավառություն է առաջացրել։ «Հուսով ենք, որ մենք նորից կտեսնենք Իլյիչին միջազգային շարժման ղեկի մոտ», ասված էր հեռագրում։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՂՆԵՐԸ

1. «Թուրքահայաստանի» մասին դեկրետը և նրա պրոպագանդան: 2. Բաքվի հերոսական կոմունան ժողովուրդների բարեկամության ջահակիր: 3. «Տեղեկատու»-ն սոցիալիստական վերափոխությունների տարեգիր: 4. Արշավիր Մելիքյանը և նրա «խոսք» թերթը: 5. Հայկական գործերի կոմիսարիատի մամուլը: 6. «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը» սովետական իշխանության գաղափարների մունետիկ:

1

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով ազատագրվեցին Ռուսաստանի փոքր ու մեծ ժողովուրդները: Ոչ ռուս ազգությունների ճնշման ու ազգային խտրականության քաղաքականությունը լիովին ձախողվեց: Սովետական կառավարության 1917 թ. նոյեմբերի 2-ին հռչակած «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան» օրենսդրական կարգով սահմանեց Ռուսաստանի բոլոր ազգությունների ազատ զարգացում և լիակատար իրավահավասարություն: Բոլոր ազգերի համար ապահովվում էր ինքնորոշման իրավունք՝ ընդհուպ մինչև անջատումը և ինքնուրույն պետությունների ստեղծումը: 1917 թ. դեկտեմբերին սովետական կառավարությունը ճանաչեց Ուկրաինայի և Ֆինլանդիայի պետական անկախությունը, նույն թվականի դեկտեմբերի 29-ին (1918 թ. հունվարի 11-ին) ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիսարների սովետն ընդունեց «Թուրքահայաստանի» մասին հայտնի դեկրետը[1], որով ՌՍՖՍՀ բանվորական և գյուղացիա-

---

[1] *1918 թ. հունվարի 15-ին (28) «Թուրքահայաստանի» մասին դեկրետը հաստատվել է Սովետների Համառուսաստանյան III համագումարում: Առաջին ան-*

կան կառավարությունը պաշտպանում էր Ռուսաստանի կողմից «պատերազմի իրավունքով» գրավված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն։ Դա հայ ժողովրդի նկատմամբ լենինյան հոգատարության վառ արտահայտություններից էր։ Սովետական Ռուսաստանի կառավարությունն այդ դեկրետով ազգային ճնշման իմպերիալիստական քաղաքականությանը հակադրեց ճնշված ժողովուրդների լիակատար ազատագրության իր քաղաքականությունը։ Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության Սահմանադրությունում, որն ընդունվել է 1918 թ. հուլիսի 10-ին, ասված է. «Սովետների Համառուսաստանյան 3-րդ համագումարը ողջունում է ժողովրդական կոմիսարների սովետի քաղաքականությունը, որը հռչակել է Ֆինլանդիայի լիակատար անկախությունը, սկսել է զորքերը դուրս բերել Պարսկաստանից, հայտարարել է Հայաստանի ինքնորոշման ազատությունը»[2]։

«Ռուսաստանի և Արևելքի բոլոր մուսուլմանական աշխատավորներին» ուղղված դիմումում Ժողկոմսովետը հայտարարում էր, որ ազատ ու անձեռնմխելի են մուսուլմանների ազգային ու կուլտուրական հաստատությունները, սովորությունները ու հավատը, և այդ ժողովուրդներին երաշխավորում էր լիակատար ազատություն։ Հարկավոր էր Արևելքի ճնշված ժողովուրդներին արթնացնել դարավոր քնից, նրանց դաստիարակել սոցիալիստական հեղափոխության ոգով, պայքարի հանել ընդդեմ իմպերիալիզմի։ Պատմական այդ մեծ խնդրի իրականացման համար մղված պայքարում առաջացան կոմունիստական մի շարք կուսակցություններ, այդ թվում՝ «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը»։

ՌԿ(բ)Կ-ն և նրա Կենտրոնական կոմիտեն,— ինչպես 1919 թ. նշել է Ա. Միկոյանը,— առանձնահատուկ վերաբերմունք էին հանդես բերում դեպի հայկական հարցը, քան, օրինակ, դեպի վրաց կամ Կովկասի մյուս ազգությունների հարցը։ Եվ դա միանգամայն հասկանալի էր։ Հայկական հարցը փոխադրվել էր միջազգային ոլորտները։ Չէ՞ որ Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի մեծ

գամ դեկրետի բովանդակությունը՝ ընդարձակ բացվածքներով հայ ընթերցողին է հասցրել բոլշևիկյան «Բանվորի կռիվը» թերթը։ Տե՛ս № 11, 18 հունվարի 1918 թ. (Ժողովրդական կոմիսարների խորհուրդը և հայկական հարցը), № 16, 24 հունվարի 1918 թ. (Հայկական հարցը և խորհուրդները) և այլն։

2 Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության Սահմանադրություն (հիմնական օրենք), Մոսկվա, 1920, էջ 5 (ռուս. հրատ.)։

հատվածը բնաջնջվել էր բարբարոսների ձեռքով։ «Նպատակ ունենալով արմատապես «լուծել», ավելի շուտ վերացնել հայկական հարցը,— գրել է Ա. Միկոյանը,— որն այնպես անհանգստացնում էր թուրքական կառավարությանը, օգտվելով պատերազմի ժամանակ ստեղծված անպատասխանատու «բարենպաստ» իրադրությունից, թուրքական կառավարությունը անշեղորեն վարում էր հայերին «Թուրքահայաստանի» տերիտորիայում ոչնչացնելու, գլխովին բնաջնջելու կապաշտական քաղաքականություն, հրի ու սրի մատնելով ավելի քան մեկ միլիոն մարդու։ Իսկ Թուրքիայում ռուսական բանակի հարձակումների ու նահանջների կապակցությամբ Թուրքահայ բնակչության էվակուացիաներն ու ռեէվակուացիաները, մի քանի հարյուր հազար հայերի՝ չորս տարի «գաղթականների» վիճակում, համաճարակների, ցրտի, սովի և աղքատության ճիրաններում գտնվելը ավարտեցին թուրք ջարդարարների ավերածությունները, որի հետևանքով Թուրքահայաստանը մնաց առանց հայերի՝ այս բառի ուղղակի իմաստով»[3]։

Ոչ մի երկիր այնպես չէր տուժել իմպերիալիստական պատերազմից, ինչպես Հայաստանը։ Այդպիսին էր արևմտահայերի վիճակն այդ ժամանակ։

Դաշնակցականները հենվելով իմպերիալիզմի, ինչպես և Դենիկինի աջակցության վրա, նորից սկսեցին թմբկահարել «մեծ Հայաստան», «ծովից-ծով Հայաստան» գաղափարը։ Միանգամայն պարզ է, թե քաղաքական ինչպիսի նշանակություն ուներ «Թուրքահայաստանի» մասին դեկրետը և որի իրագործումն ամենից առաջ պայմանավորված էր մի շարք երաշխիքներով, որոնք պետք է ապահովեին հայ ժողովրդի կամքի ազատ արտահայտությունը, այն է՝

«1. «Թուրքահայաստանի» սահմաններից զորքերի դուրս բերումը և անհապաղ հայկական ժողովրդական միլիցիայի ստեղծումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական ու գույքային անվտանգությունն ապահովելու համար։

2. Տարբեր երկրներում ցրված գաղթական հայերի, ինչպես և վտարանդի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները։

---

3 Տե՛ս Ա. Միկոյանի «Կովկասյան հարցի շուրջը» թեզիսները։ Տե՛ս Архив Азерб. филиала ИМЛ при ЦК КПСС, Копийный фонд, д. 39, л. 1—24. «Հայկական հարցի մասին» բաժինը, 1919։

3. Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնությամբ Թուրքիայի խորքերը քշված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները, որի վրա ժողովրդական կոմիսարների սովետը պետք է պնդի թուրքական իշխանությունների հետ հաշտության բանակցություններ վարելիս։

4. «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական կառավարության կազմակերպումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի դեպուտատների սովետի ձևով։

Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստեփան Շահումյանին հանձնարարվում է «Թուրքահայաստանի» բնակչությանը ցույց տալ ամեն տեսակ աջակցություն 2-րդ, 3-րդ կետերի իրականացման գործում, ինչպես և ձեռնարկել խառն հանձնաժողով ստեղծելուն՝ «Թուրքահայաստանի» սահմաններից զորքերը դուրս բերելու ժամկետն ու եղանակը որոշելու համար (1-ին կետ)»[4]։

Դեկրետում նշվում էր նաև, որ «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշում են հայ ժողովրդի կողմից դեմոկրատական ձևով ընտրված ներկայացուցիչները՝ համաձայնության գալով հարակից և վիճելի (մահմեդական և այլ) շրջանների դեմոկրատական ձևով ընտրված ներկայացուցիչների հետ՝ Կովկասի Գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի հետ միասին։

Սրանք էին «Թուրքահայաստանի» մասին դեկրետի գլխավոր պահանջները։

2

Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակի համար բոլշևիկների ղեկավարությամբ աշխատավոր մասսաների մղած ինտերնացիոնալ պայքարի ծնունդ էր Բաքվի հերոսական կոմունան՝ մեծ Հոկտեմբերի զավակը։

Այն ժողովուրդների լենինյան բարեկամության, ինտերնացիոնալ համախմբվածության և եղբայրության փայլուն խորհրդանիշն էր։ Բաքվի հերոսական կոմունան ստեղծվեց 1918 թ. ապրիլի 1-ին

---

[4] «Декреты Советской власти, т. 1, М., 1957, стр. 298—299; «Документы внешней политики», т. 1, М., стр. 74—75.

և քաղաքական բարդ իրադրության մեջ գործեց մինչև հուլիսի 31-ը[5]:

1918 թ., երբ Անդրկովկասում իշխանությունը զավթել էին նացիոնալիստական կուսակցությունները, ոմանց թվում էր, թե արդեն կորած է հեղափոխական Անդրկովկասի աշխատավորների ավանդական միասնությունը: Բաքվում պրոլետարիատը և աշխատավոր զանգվածները Ստ. Շահումյանի, Ա. Ջափարիձեի, Ի. Ֆիոլետովի, Մ. Ազիզբեկովի և մյուս բոլշևիկ կոմիսարների գլխավորությամբ բարձր պահեցին պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների համերաշխության դրոշը: Մեծ Հոկտեմբերի դրոշի ներքո Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բանվորները, աշխատավոր գյուղացիությունը, առաջավոր ինտելիգենցիան, շարունակեցին իրենց պայքարը սոցիալիստական հեղափոխության վերջնական հաղթանակի համար:

Պրոլետարական Բաքուն դարձավ երկրամասի առաջին սովետական քաղաքը, Անդրկովկասում մեծ Հոկտեմբերի գաղափարների հաղթանակի համար ծավալված պայքարի առաջամարտիկն ու դրոշակակիրը: Բայց այդ շրջանում Բաքվի սովետում մեծամասնություն էին կազմում էսեռամենշևիկյան ու նացիոնալիստական կուսակցությունները: Անդրկովկասում իշխանությունը գտնվում էր բուրժուա-կալվածատիրական կուսակցությունների ձեռքում: Անդրկովկասյան կոմիսարիատը և ապա սեյմը երկրամասը կտրելով Ռուսաստանից, հակաժողովրդական քաղաքականություն էին վարում՝ ամրապնդելով բուրժուազիայի, ազնվականության և խաների տիրապետությունը:

1918 թ. Կովկասի համար անկյունադարձային ժամանակաշրջան էր: Հեղափոխության գործը, ինչպես այդ օրերին գրել է Ստ. Շահումյանը, ոչ մի տեղ այնպես վտանգված չէր, ինչպես Կովկասում, «Կովկասը կանգնած է անդունդի եզրին,— ասում էր Շահումյանը: Փրկեցեք նրան: Ստեղծեցեք այստեղ ինտերնացիոնալ բանվորա-գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական կոմիսարների Սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչությանը կառաջ-

---

[5] *Բաքվի կոմունայի մասին տե՛ս* Խ. Հ. Բարսեղյան. *Ստեփան Շահումյան, կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Երևան, 1968:* Է. Բուրջալով. *Բաքվի քսանվեց կոմիսարները, Երևան, 1939:*

նորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[6]։

Միջազգային իմպերիալիզմի և հակահեղափոխության սև ուժերը կատաղի պայքարի էին ելել Հոկտեմբերի դեմ։ Բաքուն դարձել էր կռվախնձոր։ Նրա վրա էին արշավում մի կողմից՝ գերմանաթուրքական օկուպանտները, իսկ մյուս կողմից՝ անգլո-ֆրանսիական իմպերիալիստները, որոնք ջանում էին զավթել Բաքուն, իրականացնել իրենց թալանչիական նպատակները, տիրել նավթին և Արևելքի ստրատեգիական կարևոր հանգույցին։ Սա դեռ բոլորը չէր։ Բաքվի պրոլետարիատին դավաճանում էին էսեռները, մենշևիկները, դաշնակցականները և մուսավաթականները։ Մեծամասնություն կազմելով Սովետում, նրանք աջակցում էին օտարերկրյա զավթիչներին։ Միայն բոլշևիկյան կուսակցությունն էր, որ հետևողականորեն պաշտպանում էր ժողովրդի շահերը, Ռուսաստանի Սոցիալիստական Հանրապետության շահերը։ Հաշվի առնելով ստեղծված բարդ իրադրությունը, բոլշևիկներն աշխատավոր զանգվածներից Բաքվում ստեղծում են կարմիր գվարդիա, ինտերնացիոնալ բանակ, մարտական ջոկատներ։ 1918 թ. մարտի կեսերին Ադրբեջանի հակահեղափոխական ուժերը բացահայտ հարձակման են անցնում։ Հրահրելով ազգամիջյան ընդհարումներ, դաշնակցականներն ու մուսավաթականները գաղտնի բանակցություններ են վարում սովետական իշխանության դեմ միասնաբար հանդես գալու համար։ Նման պրովոկացիաները մուսավաթիստների «վայրենի դիվիզիայի» Բաքվին մոտեցնելը խիստ վտանգավոր պայմաններ ստեղծեցին քաղաքում։ Բաքվի բոլշևիկները դիմեցին կտրուկ միջոցների՝ արյունահեղությունից խուսափելու համար։ Մարտի 30-ին

---

6 Ստ. Շահումյան, *Երկեր*, հատ. 3, էջ 69—70։ *Сур. Шаумян,* Бакинская коммуна, Баку, 1927, *Л. С. Шаумян,* Расстрел 26 бакинских комиссаров английскими интервентами, М., 1949; *А. И. Микоян,* Дорогой борьбы, М., 1971; «Последние дни Комиссаров Бакинской Коммуны». По материалам судебных процессов. Сост.: *А. С. Букшпан,* Баку, 1928, *Я. Ратгаузер,* Арест и гибель Коммуны, Баку, 1928; *Г. С. Акопян,* Степан Шаумян, М., 1973; *Х. А. Барсегян,* Степан Шаумян, М., 1960; *Ц. П. Агаян,* Вековая дружба народов Закавказья, Ереван, 1970, ч. I, 1972; ч. II, История Коммунистической партии Азербайджана, Баку, 1958, ч. I; *Г. А. Галоян,* Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922, Ереван, 1969; *Г. Б. Гарибджанян,* В. И. Ленин и большевистские организации Закавказья, Ереван, 1967; *Дж. Гулиев,* Мужественные борцы за коммунизм. Баку, 1956.

մուսավաթիստները հակասովետական խռովություն բարձրացրին: Նույն օրը Բաքվում ստեղծվեց քաղաքի պաշտպանության հեղափոխական կոմիտե՝ Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի գլխավորությամբ: Կոմիտեն միաժամանակ իրականացնում էր ռազմական գլխավոր իշխանության ֆունկցիաները: Ադրբեջանական ժողովրդի պանծալի զավակ, հավատարիմ լենինյան Մ. Ազիզբեկովը նշանակվեց քաղաքի մուսուլմանական մասի պաշտպանության գծով կոմիսար:

Մարտի 30-ից մինչև ապրիլի 1-ը (նոր տոմարով) ծավալված եռօրյա համառ մարտերը, որ հրահրել էին մուսավաթիստները և մղվում էր հեղափոխության ու հակահեղափոխության զինված ուժերի միջև, ավարտվեց Բաքվի պրոլետարիատի փայլուն հաղթանակով:

1918 թ. ապրիլի 1-ին Բաքվում հաղթանակեց սովետական իշխանությունը, ստեղծվեց Բաքվի կոմունան:

Մուսավաթիստական բանդաները պարտություն կրելով, նահանջեցին և ամրացան Ելիզավետպոլում: Թուրքիայից և Դաղստանից նոր համալրում ստանալով, նրանք սկսեցին հետագա արշավանքները Բաքվի վրա:

Այսպիսով, Բաքվի կոմունան, գործելով պատմական բարդ իրադրության մեջ, պայքարում էր երկու ճակատով՝ ներքին և արտաքին: Կոմունայի հաստատումից անմիջապես հետո, Ստ. Շահումյանը զեկուցում է Վ. Ի. Լենինի գլխավորած կենտրոնական ժողովրդական կոմիսարների սովետին՝ ծավալված իրադարձությունների մասին: Ապրիլի 13-ին Բոյցովի միջոցով Ժողկոմսովետին ուղարկած նամակում Շահումյանը պատմում է, որ «Անդրկովկասը թևակոխել է սովետական իշխանության համար մղվող զինված ակտիվ պայքարի շրջանը: Երեք օրվա ընթացքում մարտի 30-ին ու 31-ին և ապրիլի 1-ին Բաքվում կատաղի մարտեր էին տեղի ունենում: Կռվում էին մի կողմից, սովետական կարմիր գվարդիան. մեր կազմակերպած կարմիր ինտերնացիոնալ բանակը, կարմիր նավատորմը, որը մեզ հաջողվեց կարճ ժամանակամիջոցում վերակառուցել, և հայկական ազգային զորամասերը: Մյուս կողմից՝ մուսուլմանական «վայրենի դիվիզիան», որի շարքերում բավական թվով ռուս սպաներ կային, և «մուսավաթ» կուսակցության ղեկավարած զինված մուսուլմանների բանդաները: Երկու կողմից քաղաքային մարտերում 20 հազարից ավելի մարդ էր մասնակցում...

Մարտերի արդյունքները փայլուն են մեզ համար։ Թշնամու ջախջախումը կատարյալ էր»[7]։

Ստ. Շահումյանը, մարքսիստ-լենինյանին հատուկ խորաթափանցությամբ վերլուծելով Կովկասում ստեղծված դրությունը, մերկացնում է հակահեղափոխականներին, հեղափոխության շտաբին իրազեկ դարձնում, որ անհավասար պայքարում վճռվում է Անդրկովկասի բախտը, որ Բաքվում տարած հաղթանակից հետո Սովետը վերջնականապես ամրապնդվել է, պայմաններ են ստեղծվել սոցիալիստական վերափոխումների համար, բոլշևիկները Բաքվում դրության լիակատար տերերն են դարձել և ապա՝ օգնություն ու ցուցումներ է խնդրում։

1918 թ. ապրիլ-մայիս ամիսներին սովետական իշխանությունը հաղթանակում է Ադրբեջանի մի շարք գավառներում։ Ապրիլի 25-ին Բաքվի Սովետի նիստում ստեղծվում է Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետ, որը հանդիսանում էր պրոլետարիատի դիկտատուրայի օրգանը։ Այն իր առջև խնդիր էր դրել սերտ կապ պահպանել Համառուսաստանյան կենտրոնական իշխանության հետ և հարմարվելով տեղական պայմաններին՝ կյանքում կիրառել Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարության, ժողովրդական կոմիսարների սովետի բոլոր դեկրետներն ու կարգադրությունները։ «Սովետների հանրապետությունում, բանվորա-գյուղացիական կոմունաների հանրապետությունում,— ասված է Բաքվի ժողկոմսովետի դեկլարացիայում,— որի հիմքը դրել է Հոկտեմբերյան հեղափոխությունը, Բաքվի սովետը շարունակում է մնալ որպես միասնական մեծ ամբողջի անքակտելի մասը։ Բաքվի ժողկոմսովետի հիմնական խնդիրներից մեկն է լինելու՝ հաստատել որքան հնարավոր է սերտ կապ կենտրոնական իշխանության հետ և Բաքվի բանվորների ու նահանգի չքավոր գյուղացիությանը որքան հնարավոր է սերտորեն միավորել համայն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ»[8]։

Բաքվի ժողկոմսովետի նախագահ և արտաքին գործերի կոմիսար է ընտրվում Ստ. Շահումյանը, ներքին գործերի կոմիսար՝ Պ. Ջափարիձեն, նահանգային կոմիսար, և ներքին գործերի կոմիսարի տեղակալ՝ Մ. Ազիզբեկովը, ժողովրդական տնտեսության խորհրդի նախագահ՝ Ի. Ֆիոլետովը, ռազմա-ծովային գործերի կո-

7 Ստ. Շահումյան, *Նամակներ.* էջ 65—66։

8 Ստ. Շահումյան, *Երկեր,* հատ. 3, էջ 157։

միսար՝ Գ. Կորգանովը (Ղորղանյան), քաղաքային տնտեսության գործերի կոմիսար՝ Ն. Նարիմանովը, լուսավորության գործերի կոմիսար՝ Ն. Կոլեսնիկովան, աշխատանքի գործերի կոմիսար՝ Յա. Զևինը, ֆինանսների կոմիսար՝ Կիրեևը, արդարադատության գործերի կոմիսար՝ Ա. Կարինյանը (Գաբրիելյան)։

Բաքվի ժողկոմսովետում բոլշևիկների հետ միասին մտնում էին նաև «ձախ» էսեռների աչքի ընկնող ներկայացուցիչները, այդ թվում՝ հողագործության ժողովրդական կոմիսար՝ Մ. Վեզիրովը, հաղորդակցության ծովային տրանսպորտի, փոստ-հեռագրի կոմիսար՝ Ի. Սուխարցևը։

Կոմունայի օրերին ամբողջ ուժով փայլեց լենինյան հին գվարդիայի անձնվեր մարտիկ Շահումյանի կուսակցական ու պետական տաղանդը, դրսևորվեց նրա անսահման նվիրվածությունը կոմունիզմի գործին։ Օժտված լինելով վիթխարի էրուդիցիայով և երկաթյա տրամաբանությամբ, Շահումյանը ուժ և ուղղություն էր տալիս կոմունայի գործունեությանը, բարձր պահելով հեղափոխական մարքսիզմի դրոշը, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշը։ Շահումյանի բարոյական մեծության առջև խոնարհվում էին և՛ բարեկամները, և՛ թշնամիները։ Գ. Կ. Օրջոնիկիձեի պատկերավոր արտահայտությամբ Շահումյանը «թեորետիկական մարքսիզմի ծանր հրետանին էր»։

Անսպառ էներգիայով օժտված անխոնջ կազմակերպիչ Ա. Ջափարիձեն իր գիտակցական ամբողջ կյանքը նվիրեց բանվոր դասակարգի ազատությանը, դրսևորեց իր բազմաբովանդակ եռանդն ու կորովը։ Ջափարիձեն Բաքվի պրոլետարիատի սիրված ղեկավարներից էր։

Ադրբեջանական ժողովրդի արժանավոր զավակ Մ. Ազիզբեկովը 1898 թ. զինվորագրվելով հեղափոխությանը, արդյունավետ աշխատանք է կատարում երկրամասում մարքսիզմի տարածման, ժողովուրդների բարեկամության ամրապնդման, ինտերնացիոնալ համախմբման համար։

Լենինյան գվարդիայի լավագույն մարտիկներ Ի. Ֆիոլետովը, Յա. Զևինը, Գ. Կորգանովը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Պ. Արվելաձեն, Ն. Նարիմանովը և մյուս կոմիսարները աշխատանքի ու պայքարի հիասքանչ օրինակ էին տալիս։

Մոսկվայի համալսարանում քաղաքականապես կոփված Գ. Կորգանովը անցնելով ռուսական երեք հեղափոխությունների բո-

վով մեծ հեղինակություն էր վայելում զորամասերում: 1917 թ. դեկտեմբերին, կովկասյան բանակի II համագումարում, Կորգանովը ընտրվում է ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ: Փոխադրվելով Բաքու, նա իր ունակությունները լիովին ի սպաս է դնում կոմունային, ղեկավարում ռազմա-ծովային կոմիսարիատը, հակահեղափոխության դեմ ծավալված զինված պայքարը, դառնում Բաքվի հեղափոխական պաշտպանության ոգին:

«Բոլշևիկյան առաջնորդ, Բաքվի պրոլետարիատի պարծանք»— այսպես է Գ. Կ. Օրջոնիկիձեն բնութագրել 1900 թ. ՍՄԿԿ անդամ Ի. Ֆիոլետովին, Բաքվի պրոլետարիատի խոհերի թարգմանին:

Բաքվի պրոլետարիատը, ոգեշնչված Վ. Ի. Լենինի իմաստուն ցուցումներով, կազմակերպում էր քաղաքի պաշտպանությունը՝ անհավասար մարտեր մղելով ներքին և արտաքին թշնամիների դեմ: Բաքվի Ժողկոմսովետը պատմական կարճ ժամանակամիջոցում իրականացրեց սոցիալիստական մի շարք կարևոր միջոցառումներ՝ կարմիր գվարդիայի և կոմունիստական ջոկատների բազայի վրա ստեղծվեց Կարմիր բանակ: Ջախջախելով պետական հին մեքենան, Բաքվի Ժողկոմսովետը ծրագրային դեկրետներ ընդունեց հողի, ընդերքի, նավթարդյունաբերության, Կասպիական առևտրական նավատորմիղի ազգայնացման, ժողովրդական լուսավորության սիստեմը վերակառուցելու, դատական հին օրգանները վերացնելու մասին և այլն:

Տնտեսական-քաղաքական կարևոր նշանակություն ուներ նավթարդյունաբերության ազգայնացումը: Բաքվի նավթն անհրաժեշտ էր մեծ Հոկտեմբերի նվաճումները պաշտպանելու, Սովետական Ռուսաստանի երիտասարդ հանրապետության պաշտպանունակությունը բարձրացնելու և ժողովրդի կարիքները հոգալու համար: Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, կոմունան ազգայնացրեց նավթարդյունաբերական ձեռնարկությունները: Բաքվի պրոլետարիատի քրտնաջան աշխատանքի շնորհիվ միայն 3 ամսվա ընթացքում Սովետական Ռուսաստան և երիտասարդ Կարմիր բանակի մարտնչող զորամասերին ուղարկվեց մոտ 80 միլիոն փութ նավթ:

Բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական դաշինքի ամրապնդման գործում վճռական դեր խաղաց հողի ազգայնացումը: Ժողկոմսովետի դեկրետով բեկական-խանական հողերը բռնագրավվում և հանձնվում էին աշխատավոր գյուղացիներին:

Մեծ ուշադրություն էր դարձվում աշխատավորների նյութական-կենցաղային պայմանների բարելավմանը։ Ձեռնարկություններում և հիմնարկություններում մտցվեց 8-ժամյա աշխատանքային օր, բարձրացվեց բանվորների և ծառայողների աշխատավարձը։

Բաքվի կոմունայի այս միջոցառումները, որ իրականացվում էին հակահեղափոխական ուժերի դեմ մղվող դաժան պայքարի պայմաններում, անսահման հրճվանք էին պատճառում Վ. Ի. Լենինին՝ կոմունայի հաղթանակների մեծ կազմակերպչին ու ոգեշնչողին։ 1918 թ. Ստ. Շահումյանին ուղարկած նամակներում և հեռագրերում Իլյիչը քաջալերում էր կոմունիստներին, օգնում միջազգային բարդ իրադրության մեջ ճիշտ կողմնորոշվելու և հմուտ քաղաքականություն վարելու։ Հավանություն տալով կոմունայի և նրա ղեկավար Ս. Շահումյանի եռանդուն գործունեությանը, ողջունելով Բաքվի պրոլետարիատի հեղափոխական ակտիվ պայքարը, Վ. Ի. Լենինը 1918 թ. մայիսի 14-ին, Շահումյանին ուղարկած նամակում գրել է.

«Թանկագին ընկեր Շահումյան։ Շատ շնորհակալ եմ նամակի համար։ Մենք հրճվանքի մեջ ենք ձեր հաստատակամ և վճռական քաղաքականությունից։ Կարողացեք դրան միացնել այն ամենազգույշ դիվանագիտությունը, որն անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ,— և մենք կհաղթենք։ Դժվարությունները անհաշիվ են։ Առայժմ *մեզ փրկում են* միայն *իմպերիալիստների հակասությունները, կոնֆլիկտներն ու պայքարը։ Կարողացեք օգտագործել այդ կոնֆլիկտները,* առայժմ *հարկավոր է դիվանագիտություն սովորել։*

Լավագույն ողջույններ ու ցանկություններ և ողջույն բոլոր բարեկամներին։

Ձեր՝ Լենին»[9]։

---

9 *В. И. Ленин,* Полн. собр. соч., т. 50, стр. 73—74; Ստ. Շահումյան, *Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 63։*

Ինչպես հայտնի է Վ. Ի. Լենինի այդ նամակը մինչև վերջին տարիներս նրա երկերի ժողովածուներում մտել է որպես ռադիոգիր և ցույց է տրվել, որ այն գրվել է 1918 թ. փետրվարի 14-ին։ «Օգոնյոկ» հանդեսի 1962 թ. № 17-ում, Ս. Ս. Շահումյանը իր «Երկու նամակի պատմություն» հոդվածում ճիշտ հիմնավորելով, որ այն ոչ թե ռադիոգիր է, այլ նամակ, միաժամանակ մատնանշել է, որ այն գրվել է ոչ թե 1918 թ. փետրվարի 14-ին, այլ մարտի 14-ին։ Պրպտումներ կատարելով այդ ուղղությամբ, մենք միանգամայն հավաստի ապացույցների հիման վրա ցույց ենք տալիս, որ Վ. Ի. Լենինի այդ նամակը, որ կոմունայի ժամանակավոր պարտությունից հետո, Շահումյանի այլ փաստաթղթերի հետ

Կոմունայի ղեկավարներն անում էին հնարավոր ամեն բան սովետական իշխանությունը ամրապնդելու, կոմունան պահպանելու համար։ Ստեղծված բարդ ու խճճված պայմաններում անգամ, երբ թշնամու կրակի օղակն աստիճանաբար սեղմվում էր Բաքվի շուրջը, բոլշևիկները անսահման հավատով էին լցված դեպի իրենց ուժերը, դեպի ռուս մեծ ժողովուրդը։ Շահումյանը արտահայտելով հերոս կոմունարների կամքը՝ այդ օրերին Վ. Ի. Լենինին հավաստիացնում էր, թե՝ «մենք կայուն ենք և հավատով լեցուն», որ այսպիսի պայմաններում, երբ սպառված չեն հեղափոխական Ռուսաստանի ուժերը, մենք հաստատակամորեն պետք է շարունակենք պայքարը և հաղթանակով պսակենք կոմունայի գործը։

Բաքվի բանվորների պարենային դրությունը չափազանց ծանր էր, քաղաքում թագավորում էր սովը։ Կոմունարները հեղափոխական կռիվ էին մղում երկու ճակատում՝ ռազմական և տնտեսական։ Ժողկոմսովետն ամեն ինչ անում էր բնակչության մատակարարման գործը բարելավելու, կաշառակերությունն ու սպեկուլյացիան լիկվիդացնելու ուղղությամբ։

«Պաշտոնատար անձանց կաշառակերության ու չարաշահումների հին խոցը տեղ-տեղ թափանցում է նոր հասարակական հիմնարկները,— ասված է դեկրետում,— օգտվելով անցման ժամանակաշրջանից։ Հանցավոր տարրը սովետական իշխանության կողմնակիցների դիմակի տակ շարունակում է իր քայքայիչ աշխատանքը և վարկաբեկում բանվորական իշխանության նոր օրգանները։ Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետը սրանով հայտարարում է, որ ինքը անողոք կերպով պատժելու է կաշառակերության ու պաշտոնեական չարաշահումների մեջ մերկացված բոլոր անձանց և կոչ է անում լայն աջակցություն ցույց տալ նրան հասարակական այդ խոցի դեմ պայքարելու գործում»[10]։

միտքն ընկել է «Ցենտրոկասպի դիկտատուրայի» ձեռքը և առաջին անգամ հրատարակվել է «Бюллетень диктатуры Центрокаспия и Президиума Временного исполнительного Комитета» (տե՛ս № 33, 8 սեպտեմբերի 1918), և ապա՝ նույն թվականի սեպտեմբերի 10-ին «Արև» թերթում, նամակը գրելու ժամանակը տեխնիկական պատճառով աղավաղվել է։ Այն գրված է 1918 թ. ոչ թե 14/II այլ 14/V։ Մեր հիմնավորումները ժամանակին ներկայացրել ենք ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի դիրեկցիային, որը քննության է առել և ընդունել։ Ճշտվել և ուղղվել է լենինյան նամակի տարեթիվը, նամակ, որը լուսաբանում է Բաքվի կոմունայի և նրա առաջնորդ Ստ. Շահումյանի գործունեությունը։

10 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 168։

Ստ. Շահումյանը մայիսի 14-ին Վ. Ի. Լենինին գրած նամակում հայտնում էր, որ Բաքվում պարենային հարցը սաստիկ դժվարացնում է իրենց դրությունը, բանվորները քաղցի են մատնված[11]:

Բաքվի ժողկոմսովետը Վ. Ի. Լենինին խնդրում էր ռազմական և նյութական աջակցություն ցույց տալ:

Սովետական կառավարությունը ջանք չէր խնայում Բաքվին օգնելու համար: Մայիսի 12—14-ին Շահումյանին գրած նամակում Ի. Վ. Ստալինը հարցնում էր.

«1. Ստացե՞լ եք արդյոք երկու միլիոնը Կամոյի միջոցով:

2. Ստացե՞լ եք վերջերս Ձեզ ուղարկած հարյուր միլիոնը:

3. Ստացե՞լ եք արդյոք Տեր-Պետրոսյանի և մի ռուս ընկերոջ (ազգանունը մոռացել եմ) միջոցով ծովային ճանապարհով ուղարկած ռազմամթերքը»[12]:

Մայիսի 23-ին Վ. Ի. Լենինը հեռագրում է Շահումյանին թե՝ «Ժողկոմսովետը որոշեց՝ «անհապաղ ջրային ճանապարհով Ցարիցինից Բաքու ուղարկել մեծ քանակությամբ հաց՝ Բաքվի Սովդեպի տրամադրության տակ, այն հաշվով, որպեսզի առաջին հերթին և անպայմանորեն ապահովվի նավթի հանույթը մեծ քանակությամբ»[13]: Հունիսի 10-ին Ս. Օրջոնիկիձեն Ցարիցինից Բաքվի կոմունայի ղեկավարներին հաղորդում է. «Վաղը ջրային ճանապարհով ուղարկում ենք տասը հազար փութ հացահատիկ: Կարգադրված է անհապաղ մարշրուտային գնացքներ ուղարկել Ստավրոպոլի նահանգից և Թերեքի մարզից: Ողջույն Բաքվի ընկերներին, որոնք հերոսական պայքար են մղում պրոլետարիատի բռնապետիչների և դավաճանների դեմ[14]:

Հուլիսի 19-ին Աստրախանից հայտնում են, որ Բաքվի համար ստացված է 180 վագոն բեռ, առաջիկա օրերին կուղարկվի 28 հազար տուփ պահածո: Շահումյանը հուլիսի 23-ին Վ. Ի. Լենինին գրած նամակում շնորհակալություն է հայտնում ցույց տված օգնության համար: «Այսօր վերջապես, եկավ Տեր-Գաբրիելյանը,— գրել է Շահումյանը,— մեզ համար բերեց 4 գրահամքենա, 13

---

[11] Տե՛ս Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 74:

[12] ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 40409: Տե՛ս նաև Խ. Բարսեղյան, Ստեփան Շահումյանի կյանքի և գործունեության փաստագրական տարեգրություն 1878—1918, Երևան, 1968, էջ 525—531:

[13] Տե՛ս Ստ. Շահումյան, Նամակներ, էջ 75:

[14] «Бакинский рабочий», № 110, 11 июля 1918 г.

օգնավ և ուրիշ շատ բաներ։ Այս բոլորի համար շատ և շատ շնորհակալություն Ձեզ։ Մենք ստացանք այն, ինչ մեզ պակասում էր և, որը մեզ այժմ անգնահատելի ծառայություն է մատուցելու»[15]։ Հուլիսի 13-ին Վ. Ի. Լենինը ծովային գործերի ժողկոմին կարգադրում է. «Բոլոր միջոցները ձեռք առնել հարմար տիպի բոլոր ծովային ռազմանավերը Կասպից ծով հասցնելու գործը արագացնելու համար»[16]։

Հուլիսի 20-ին Ուկրաինական ռազմաճակատից Բաքու է ուղարկվում Գ. Պետրովի ջոկատը, իսկ 24-ին Աստրախանից Բաքու է հասնում մի հեծյալ մարտկոց, որի կազմում կային 4 հրանոթ՝ ռազմական սպառազինությամբ և 170 ռազմիկ։ Հուլիսի վերջին և օգոստոսի սկզբներին կոմունարները ստանում են 85 հրանոթ, 160 գնդացիր, 1000 հրացան, զրահապատ ավտոմեքենաներ։

Վ. Ի. Լենինը հաճախ է ընդունել Բաքվի կոմունայի ներկայացուցիչներին, այդ թվում՝ Ս. Տեր-Գաբրիելյանին, Բ. Բորյանին, Ն. Կուզնեցովին, Կամոյին, Տեր-Հովսեփյանին, Սուրեն Շահումյանին և այլոց, ուշադիր լսել և շուտափույթ օգնություն կազմակերպել Բաքվի պրոլետարիատին։

Բաքվի կոմունան, ուժերի խիստ անհավասար պայմաններում, սոցիալիստական վերափոխումների հետ միասին, շարունակում էր հերոսական պայքարը, վճռական մարտեր մղելով մուսավաթական «վայրենի դիվիզիայի», գերմանա-թուրքական զավթիչների, Իմամ-Գոցինսկու բանդաների և անգլիական իմպերիալիստների դեմ։ Կոմունայի զինված ուժերը հունիսի 10-ից հարձակման անցնելով ազատագրեցին Սալյանը, Շամախին, Քյուրդամիրը, Ղուբան և այլ վայրեր։ Ռազմաճակատում խիզախաբար մարտնչում էին կարմիր գվարդիականները, ինտերնացիոնալ բանակի ռազմիկները, որոնց մարտական գործողությունները ղեկավարում էին Գ. Կորգանովը, Գ. Պետրովը, Ի. Մալիգինը, Ա. Միկոյանը, Յ. Սոլնցևը, Բ. Ավագյանը, Ար. Գուլոյանը, Ի. Գարիշևը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ս. Մարտիկյանը և ուրիշներ։

Տոկունության և պրոլետարական հեղափոխությանը նվիրվածության օրինակ էր ծառայում Շահումյանի ընտանիքը, կինը՝ Եկատերինա Շահումյանը, որդիները՝ Սուրենը և Լևոնը։ Հաճախ կրակի գիծն էր մեկնում Ս. Շահումյանը։ Հուլիսին նա մի քանի անգամ եղավ Հաջիկաբուլի ռազմաճակատում, ուր գտնվում էր կարմիր

15 Ստ. Շահումյան, *Նամակներ*, էջ 106։

16 XXXIV Ленинский сборник, стр. 33.

բանակի շարքը և Գ. Կորգանովի հետ միասին մարտական առաջադրանքներ տվեց ճակատայիններին՝ քաղաքի պաշտպանությունն ամրապնդելու, թուրքական արշավանքը կասեցնելու համար:

Բաքվի կոմունային զգալի օգնություն ցույց տվեց Սարդարապատի հերոսամարտը, որի հայ աշխարհազորայինները, արևմտահայ ազատագրական շարժման մասնակցած հին ու նոր պարտիզանները, երիտասարդ սպարտակայիններն ու կոմունիստները՝ ռուս և այլ ազգի զինվորների հետ, արիաբար մարտնչում էին թուրքական զավթիչների դեմ: Հինավուրց հայկական հողի վրա, Արարատյան դաշտավայրում, Կովկաս ներխուժած թուրքական բանակը ջախջախվեց և խուճապահար նահանջեց:

Հայ աշխարհազորայինները Ղարաքիլիսայի, Բաշ-Ապարանի, Ղափանի և այլ ճակատամարտերում տարած հաղթանակներով ոչ միայն հայ ժողովրդին փրկեցին թուրքական զավթիչների նոր ավերներից, այլև անուղղակի օգնություն ցույց տվին Բաքվի կոմունային, կաշկանդելով ու կասեցնելով թուրքական ուժերի հետագա առաջընթացը:

Կոմունայի համար առեղծված ծանր պահին հայ ազգային ազատագրական շարժման առաջնորդ Անդրանիկը (Անդրանիկ Թորոսի Օզանյան) պատրաստակամություն է հայտնում իր զորամասով օգնության գնալ Բաքվի սովետական իշխանությանը: Հուլիսի 14-ին Ջուլֆայից նա Շահումյանին հեռագիր է ուղարկում, ուր ասված էր.

«Անառարկելիորեն ենթարկվելով Բրեստ-Լիտովսկու պայմանագրին, Նախիջևանի գավառը, որտեղ այժմ գտնվում եմ իմ ջոկատով, հայտարարել եմ ռուսական Հանրապետության անբաժան մաս:

Խնդրում եմ հայտնել ում որ հարկն է, որ ես իմ ջոկատով այսօրվանից գտնվում եմ Ռուսաստանի կենտրոնական կառավարության տրամադրության տակ և ենթարկվում եմ նրան:

Կաշխատեմ արգելակել թուրքական զորքերի մուտքը Նախիջևանի գավառ:

Սպասում եմ պատասխանի և կարգադրության:

Գեներալ-մայոր Անդրանիկ»[17]:

---

[17] *Տե՛ս* «Бакинский рабочий», № 139 (255), 18 июля 1918 г. *Сур. Шаумян*, Бакинская Коммуна, Баку, 1927, стр. 93. *Տե՛ս նաև* Խ. Բարսեղյան, *Ստեփան Շահումյան: Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն*, էջ 386:

Բաքվի Կոմունայի ղեկավարությունը ջերմորեն է ընդունում Անդրանիկի ռադիոգիրը: Բաքվի Ժողկոմխորհի հանձնարարությամբ Շահումյանը պատասխանում է.

«Ջուլֆա, ժողովրդական առաջնորդ Անդրանիկին:

Ձեր հեռագիրը ստացա: Լրիվ ուղարկեցի Մոսկվա կենտրոնական կառավարությանը: Իմ կողմից, հանձին Ձեզ՝ ողջունում եմ իսկական ժողովրդական հերոսին:

Եթե պարոնայք Քաջազնունին և մյուսները Ձեզ նման լինեին, հայ գյուղացիությունը այժմ այսպիսի ողբերգություն չէր ապրի: Ողջույն հաղորդեցեք Ձեր դրոշի ներքո կանգնած բոլոր քաջ զինվորներին և ամբողջ աշխատավոր բնակչությանը, որը կրկնակի տառապում է թե՛ թուրքական ավերից, և թե՛ ազգային առաջնորդների դավաճանությունից: Չնայելով ոչ մի դժվարությունների, կոչ եմ անում Ձեզ չիջեցնել հեղափոխական դրոշակը... Բաքվի պրոլետարիատը Ռուսաստանի իշխանության ուժգին աջակցությամբ հերոսական պատերազմ է մղում բեկական բանդաների դեմ՝ Քյուրդամիրի և Աղսուի ուղղությամբ: Երբ մենք հաղթենք թուրքերին, խաներին ու բեկերին, վրացական իշխաններին ու հայ բուրժուազիային, այն ժամանակ ամբողջ Անդրկովկասի միավորված գյուղացիները և բանվորները իրենց ընդհանուր համագումարում կհաստատեն սովետական իշխանություն և նորից կկապվեն Ռուսաստանի մեծ հանրապետության հետ: Ուրախ կլինեի Ձեզ անհրաժեշտ աջակցություն ցույց տալու հնարավորության համար: Թերևս դուք ուղիներ գտնեք կապի համար:

Կովկասի Արտակարգ կոմիսար և ժողովրդական կոմիսարների Բաքվի սովետի նախագահ՝

Ստ. Շահումյան»[18]:

Հուլիսի 17-ին Շահումյանը Անդրանիկի ռադիոգիրը ուղարկել է Մոսկվա՝ Վ. Ի. Լենինին, հետևյալ հավելագրմամբ:

«Իմ կողմից պատասխանել եմ՝ ողջունում եմ և առաջարկում եմ հաստատ կանգնել: Խնդրում եմ Ձեր պատասխանը»[19]:

Ստ. Շահումյանի հեռագիրը Մոսկվայում ստացվել է հուլիսի 21-ին:

---

[18] «Бакинский рабочий», № 141, 20 июля 1918 г. Տե՛ս նաև Խ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան: Կյանքի և գործունեության փաստագրական տարեգրություն, էջ 587:

[19] ЦГАОР СССР, ф. 130, оп. 2, д. 569, л. 11 об.

Դժբախտաբար դեպքերն այնպես են դասավորվում, որ Անդրանիկը հնարավորություն չի ունենում օգնության հասնելու Բաքվին։

Այդ օրերին Բաքվի կոմունային իրենց օգնությունն են առաջարկում Հյուսիսային Կովկասում գտնվող մի խումբ արևմտահայեր։ Հունիսի 18-ին Շահումյանը Ի. Վ. Ստալինին հասցեագրած նամակում գրել է.

«Սույնը ներկայացնողը՝ Տիգրան Ղազանչյանը անձամբ ինձ հայտնի հին հնչակյան է։ Նա եկել է այստեղ և, իմիջիայլոց, պատմում է, որ իր ընկերներից 500 հոգի, որոնք զինաթափվել էին Թիֆլիսում, գտնվում են Հյուսիսային Կովկասում և պատրաստակամություն են հայտնում կրկին զենք վերցնել և լինել մեր տրամադրության տակ։ Ես նրան խոստացա քո անունով նամակ տալ, որպեսզի դու տեղում որևէ մեկին հանձնարարես ստուգելու բոլոր հանգամանքները և եթե նրանք մեզ օգտակար կլինեն, նրանց աջակցություն ցույց տալ, մտցնել մեր ջոկատների մեջ, մի բան, որը և ես կանեմ»[20]։

Տ. Ղազանչյանն իր 24-րդ գումարտակով հուլիսին Բաքվի հեղափոխական պաշտպանության դիրքերում էր։

Ստ. Շահումյանը, ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, օգտագործում էր իմպերիալիստական տերությունների, ինչպես և ներքին հակահեղափոխական ուժերի միջև եղած տարաձայնություններն ու հակասությունները։ Մարտական կռիվներում և այդ հետագա ռազմական գործողությունների ընթացքում, ձախ էսեռների և հայկական ազգային որոշ ուժերի օգտագործումը Բաքվի կոմունայի վարած ճիշտ տակտիկայի արդյունքն էր։ Կոմունայի ղեկավարությունը համոզված էր, որ այդ ուժերը հեղափոխության մշտական ուղեկիցները չեն, որ նրանք հարմար առիթի են սպասում հեղափոխությանը դավաճանելու համար, բայց ստեղծված ռազմա-քաղաքական իրավիճակը պահանջում էր ժամանակավորապես օգտագործել նրանց։ Հատկապես Բաքվի պայմաններում դա խիստ անհրաժեշտ էր, քանի որ կոմունան շրջապատված էր թշնամի ուժերով։ Բացի այդ, հայկական ազգային զինված ուժերի շարքերում կային ոչ քիչ թվով աշխատավորներ, որոնք տոգորված էին հայրենիքի ազատագրության գաղափարով և պատրաստ էին զոհվել հանուն ազատության։

---

20 Տե՛ս Խ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան։ Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, էջ 562։

Կոմունայի ղեկավարները բաց գիտեին, որ ցարական սպա Լ. Բիչերախովին չի կարելի վստահել, բայց ելնելով իրադրությունից, հնարավոր էին համարում օգտագործել նրան: Հուլիսի 7-ին, Կենտրոնական կառավարության գիտությամբ, Լ. Բիչերախովի Պարսկաստանից եկած ջոկատը Բաքվում միանում է կոմունայի զինված ուժերին և մասնակցում պատերազմական գործողություններին: Բայց, ինչպես սպասվում էր, Բիչերախովը շուտով դրժում է իր խոստումը, լքում ռազմաճակատը և պահանջում անգլիացիներին անհապաղ հրավիրել Բաքու: Ի վերջո նա իր ջոկատով շարժվում է Հյուսիսային Կովկաս, միանում սովետական իշխանության թշնամի զորամասերին: Ստ. Շահումյանը հուլիսի 23-ին Աստրախանի վրայով Վ. Ի. Լենինին ուղղված հեռագրում ռազմական ուժ խնդրելով, նշում է. «Մեր զորքերի գլխավոր կոնտինգենտը— սկըզբում քաջաբար կռվող հայկական զորամասերը բարոյալքված են հրամանատարական կազմի մի մասի վախկոտության և անգլիական ագիտացիայի հետևանքով»[21]: Մայիսի 29-ին Շահումյանը Բաքվի Սովետում հանդես գալով և քննադատելով դաշնակցությանը, նշել է, որ երկրամասում կա հսկայական զինված ուժ, բայց դաշնակցությունը մենշևիկների ու մուսավաթականների հետ միասին այլասերում և կազմալուծում է զորքերի շարքերը: Ոչ թե այն զորքերի, որոնք երեք տարվա պատերազմից հետո հաշտության էին ծարավի, այլ այն հայկական զորքերի, որոնք պատրաստ էին մեռնել, բայց պահել իրենց երկիրը: Դաշնակցությունը մի կողմից գաղտնի ուղղակի կապի մեջ էր անգլիացիների՝ Դենստերվիլի հետ. իսկ մյուս կողմից՝ հավատարիմ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Թուրքիայի հետ կնքած պայմանագրին, ջանք չխնայեց Բաքվի կոմունայի տրամադրության տակ եղած հայկական զորամասերի դիմադրությունը թուլացնելու և քայքայելու համար, դրոշակ բարձրացնելով անձնատուր եղավ «հաղթողների գթասրտությանը»: Վճռական պահին ռազմաճակատը լքեցին նաև դաշնակ շատ հրամանատարներ: Նույնիսկ Ս. Վրացյանը իր «Կյանքի ուղիներով» հուշագրքում չի ժխտում խմբապետ Համազասպի՝ կոմունայի նըկատմամբ գործած ծանր հանցանքները: Նա ասում է, որ 1920 թ. դեկտեմբերին, Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո, երբ Համազասպին խորհուրդ է տվել անմիջապես հեռանալ Հայաստանից, ոչ մի պայմանով չներկայանալ

21 Ստ. Շահումյան. Նամակներ, էջ 131:

բոլշևիկներին, որպեսզի «Բաքվի գործերի համար» չպատժեն նրան:

Կոմունայի համար ստեղծված դժվարին պայմաններում էսեռները, մենշևիկները, դաշնակները և հակաբոլշևիկյան մյուս տարրերը պահանջում էին Բաքու հրավիրել անգլիացիներին: Կոմունայի ղեկավարները հետևողականորեն վարելով լենինյան գիծ, մերկացնում էին նրանց կործանարար քաղաքականությունը: Բայց համաձայնողական կուսակցությունների քաղաքականության հետևանքով Բաքվի Սովետը, որ կանգնած էր կրկնակի դավաճանության փաստի առջև, հուլիսի 25-ին, ձայների աննշան տարբերությամբ՝ 259-ը ընդդեմ 236-ի, որոշեց անգլիացիներին հրավիրել Բաքու: Միայն բոլշևիկներն էին, որ, Շահումյանի գլխավորությամբ, մինչև վերջ վարելով հեղափոխական քաղաքականություն, պաշտպանում էին իրենց դիրքերը, մերկացնում պրոլետարիատի շահերը վաճառողներին:

Վ. Ի. Լենինը հավանություն տալով անգլիացիների նկատմամբ Բաքվի բոլշևիկների վարած քաղաքականությանը, 1918 թ. օգոստոսի 29-ին ասել է. «Անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ որևէ համաձայնություն կնքելուց վճռականորեն հրաժարվելը Բաքվի ընկերների միակ ճիշտ քայլն է, քանի որ չի կարելի նրանց հրավիրել, առանց ինքնուրույն, սոցիալիստական իշխանությանը, թեկուզ և կտրված տերիտորիայում, վերածելու իմպերիալիստական պատերազմի սարքի»[22]:

1918 թ. հուլիսի 31-ին Բաքվի կոմունան ժամանակավորապես ընկավ: Իշխանությունն անցավ էսեռ-դաշնակցական-մենշևիկյան, այսպես կոչված «Ցենտրոկասպիայի դիկտատուրայի» ձեռքը: Բաքվի բաշարի կոմիսարները ձերբակալվեցին: Կասպիական ռազմական նավատորմի կոմիսար Վ. Պոլուխինը Բաքվի դրության մասին օգոստոսի 1-ին ՌՍՖՍՀ ծովային գործերի կոմիսարիատի կոլեգիայի անդամ Ս. Ե. Սաքսին հեռագրել է. «Ընկերները Բաքվից հինգ վերստի վրա են: Ժողկոմսովետը ցած է դրել լիազորությունները: Շահումյանը, Տեր-Գաբրիելյանը, Պետրովը իր ջոկատով և ես էշալոնով ձերբակալված ենք»[23]:

Վ. Ի. Լենինն օգոստոսի 9-ին Աստրախանի սովդեպի նախա-

---

22 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 9:

23 «Документы Внешней политики СССР», М., 1957. стр. 489. ЦГАВМФ, ф. р. 5, оп. 1, 9, 124, л. 26. Տե՛ս Խ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան: Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, էջ 602:

գահին ուղարկած հեռագրում անհանգստացած պահանջում էր՝ պարզել Բաքվի դրությունը, իմանալ, թե որտեղ է Շահումյանը։

«Դրությունը Բաքվում ինձ համար, այնուամենայնիվ, պարզ չէ։

Ո՞վ է կանգնած իշխանության գլուխ։

Ո՞րտեղ է Շահումյանը։

Հարցում արեք Ստալինին և գործեցեք բոլոր հանգամանքները նկատի առնելով, դուք գիտեք, որ ես լիովին վստահում եմ Շահումյանին։ Այստեղից չի կարելի հասկանալ դրությունը և արագ օգնելու հնարավորություն չկա։

Լենին»[24]։

Սեպտեմբերի 14-ին կոմունիստական ջոկատը (Ա. Միկոյան, Արտակ Ստամբոլցյան, Ա. Աղամիրյան, Սուրեն Շահումյան) Շահումյանի գլխավորությամբ բանտից ազատում է Բաքվի կոմիսարներին։ Նույն օրը Բաքվի բոլշևիկյան կոնֆերանսի որոշմամբ նրանք ծովով ուղևորվում են Սովետական Աստրախան, բայց ճանապարհին նավի հրամանատարությունը անգլիացիների և նրանց գործակալների պահանջով նավի ուղղությունը փոխում է Կրասնովոդսկ, որտեղ տեր ու տնօրինություն էին անում հակահեղափոխական ուժերը։ Սեպտեմբերի 17-ին անգլիական իմպերիալիստների հրամանով աջ էսեռները ձերբակալում են Բաքվի կոմիսարներին և տանում Կրասնովոդսկի բանտը։ Սեպտեմբերի 19-ին ՌՍՖՍՀ արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը Նիդերլանդների դեսպանորդ Ացենդիկին հղած նոտայում վճռականորեն բողոքում է. «Բաքվից էվակուացվելիս, անգլիացիներն իրենց հետ տարել են Բաքվի սովետական կառավարության նախկին անդամներ Շահումյանին, Ջափարիձեին, գլխավոր հրամանատար Պետրովին և ուրիշների։ Վճռականորեն բողոքում եմ։ Պահանջում եմ վերադարձնել նրանց»[25]։

Բաքվի կոմունարների ճակատագիրը անհանգստություն էր պատճառում Վ. Ի. Լենինին։

Անգլիական ինտերվենտները և նրանց էսեռա-մենշևիկյան գործակալները տմարդի կերպով դատաստան տեսան Բաքվի պրոլետարիատի ականավոր գործիչների հետ։

1918 թ. սեպտեմբերի 20-ին էսեռական «Գոլոս Սրեդնեյ Ազիի» թերթը գրել է, թե իրենց ձեռքն է ընկել Շահումյանը, որին վաղուց

---

24 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 380։

25 «Документы Внешней политики СССР», М., 1957, т. I, стр. 489.

արդեն մկրտել են «Կովկասի Լենին» անունով, թե Բաքվի կոմիսարները ենթարկվելու են ամենասոսկալի խոշտանգումների և «քառատման»։

Նույն օրը երեկոյան, Կրասնովոդսկ—Աշխաբադ երկաթուղու 207-րդ վերստի վրա, Ախչա-Կույմա և Պերեվալ կայարանների միջև, Անդրկասպիական ամայի ավազուտներում ստոր մարդասպանների ձեռքով ընկան պրոլետարական հեղափոխության անվեհեր մարտիկները։ Բոցաշունչ կոմիսարները մահից առաջ բացականչում են. «Մենք մեռնում ենք կոմունիզմի համար: Կեցցե՛ կոմունիզմը»:

Մարքսիզմ-լենինիզմի գաղափարներով տոգորված քաջարի կոմունարների թափած արյունը իզուր չանցավ։ Տեռորն ու վայրի կամայականությունները, օտարերկրյա զավթիչների ասպատակությունները, նրանց սվինների վրա հենված բուրժուա-նացիոնալիստական, հակաժողովրդական կառավարությունների մռայլ տիրապետությունը երկար չտևեց Անդրկովկասում։ Ադրբեջանում, Հայաստանում, Վրաստանում ծածանվեց մեծ Հոկտեմբերի հաղթական դրոշը։ 1920 թ. Բաքու փոխադրվեցին 26 կոմիսարների աճյունները և թաղվեցին քաղաքի կենտրոնում՝ Ազատության հրապարակում։ Կասպիական ափերին, կանաչ ու մշտադալար պուրակում հանգչում են պրոլետարիատի անձնվեր և անմոռաց զավակների շիրիմները... Նրանց վրա բոցկլտում է եղբայրության հավերժ կրակը։ Եվ «Ինչպես Ստեփանի, Ալյոշայի եղբայրական գերեզմանը չգիտե ոչ հայի, ոչ վրացու, ոչ թաթարի, ոչ հրեայի,— ասել է մեծ ինտերնացիոնալիստ Գ. Կ. Օրջոնիկիձեն,— այնպես էլ Բաքվի պրոլետարիատը չգիտե ոչ մի ազգային խտրություն։ Բաքվի պրոլետարիատի առաջնորդները ինչպես որ կենդանի ժամանակ չէին տարբերում աշխատավորներին ըստ իրենց ազգությունների, այնպես էլ մահից հետո նրանք, կարծես թե ցուցադրելով ազգամիջյան խաղաղության և համերաշխության մեծ գաղափարը, հանգչում են մի ընդհանուր գերեզմանում»։

Դարեդար կապրեն և չեն խամրի Բաքվի կոմունայի ղեկավարների անուններն ու փառքը[26]։

---

26 Բաքվի կոմունայի պատմությունը ջանացել են կեղծել նրա դահիճները, անգլիական զավթիչները՝ մալեսոնները, էսեռները, սովետական իշխանության բոլոր գույնի թշնամիները։ 1956 թ. վերջերին թուրքական «Ենի Իստամբուլ» թերթում լույս տեսավ Ադրբեջանի մուսավաթական պառլամենտի անդամ, հակասո-

Եվ ասես, ինչպես կենդանի ժամանակակիցներ, Բաքվի անմահ կոմունարներն ամենուրեք քայլում են մեզ հետ և պոետի խոսքերով շշնջում՝

«Տոկացե՜ք ընկերներ անգին,
Վառվել է հորիզոնը լուսե,
Առավոտը ցանկալի կյանքի։
Քանի կաք, ընկերներ, քանի կաք,
Քանի կա աշխատանքը անդուլ—
Մեր երգին վախճան չկա,
Մեր պայծառ գործին— պարտություն...

Հերոսներն անմահ են։ Կոմունիզմ կառուցող սովետական ժողովուրդը ընդմիշտ վառ կպահի պրոլետարական հեղափոխության մարտերում զոհված իր զավակների՝ Բաքվի 26 կոմունարների պայծառ հիշատակը։

3

Ինչպես միշտ, այնպես էլ կոմունայի օրերին, Ստ. Շահումյանն ականավոր դեր է կատարում բոլշևիկյան թերթերի և գրականության հրատարակությունը կազմակերպելու գործում։ Դեռևս մարտյան կռիվների ընթացքում Շահումյանի խմբագրությամբ հրատարակվում էր Բաքվի «Հեղափոխական պաշտպանության կոմիտեի բյուլետենը», որի էջերից կոչ էր արվում անխնա ջախջախել հակահեղափոխական մութ ուժերին և Բաքվում ծածանել Հոկտեմբերի դրոշը։ Այնուհետև Շահումյանը խմբագրում է «Բակինսկի ռաբոչի» և այլ թերթեր։ «Բակինսկի ռաբոչի», «Իզվեստիա», «Կովկասյան կարմիր բանակ» (խմբագրում էր Ս. Հովսեփյանը) լրագրերի հրատարակությանը զուգընթաց հիմք է դրվում «Տեղեկատու» հայերեն թերթին, որը խմբագրում էր Ա. Միկոյանը։

վետական գործունեությամբ հայտնի Մեհմեդ Սաղըկ Արանի հերյուրանքներով լի պամֆլետը։ Ռեակցիոն գրչակը, նացիոնալիստական թույնով լցված, լուտանք էր թափում Բաքվի կոմունայի, Սովետական Ադրբեջանի լավագույն գործիչների վրա, վարկաբեկում Սովետական Ադրբեջանը։

Կոմունարների ամարդի գնդակահարության գործում անգլիական իմպերիալիզմի կամակատարների մասնակցությունը մեկ անգամ ևս մերկացնում է Դեյլի արխիվներից Լ. Վ. Միտրոխինի հայտնաբերած նյութերը։ Տե՛ս (Ереван) «Коммунист», № 108, 11 марта 1974 г. («Новые материалы о 26 бакинских комиссарах).

1918 թ. ապրիլի 16-ին (հին տոմարով) Բաքվում լույս է տեսնում բանվորների, զինվորների, նավաստիների դեպուտատների Սովետի օրգան «Տեղեկատու» օրաթերթի առաջին համարը[27]։

«Տեղեկատու»-ին ակտիվորեն աշխատակցել են Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Ա. Ամիրյանը, Ս. Հովսեփյանը, Ա. Կարինյանը, Գ. Ղազարյանը, Հ. Կարախանյանը և ուրիշներ[28]։ Թերթի առաջին համարի «Մեր խոսքը» առաջնորդող հոդվածում վերլուծվում էր երկրի սոցիալ-քաղաքական վիճակը, ցույց տրվում, որ Անդրկովկասի աշխատավորները կանգնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ, առանց ազգային խտրության, համախմբվում են Սովետների շուրջը, պայքարում իրենց ազատության համար։

«Տեղեկատու»-ի «Քաղաքացիական կռիվը Բաքվում», «Պարենավորման ճգնաժամը», «Զորակոչը», «Դիմակավորված թշնամիներ», «Համաշխարհային սպանդանոցի վերջը» և այլ հոդվածներ, որոնք գրված են բոլշևիկյան մարտական հրապարակախոսության ոգով, լուսաբանում են քաղաքական դրությունը, Բաքվի պրոլետարիատի հերոսական պայքարը՝ ուղղված հակահեղափոխության դեմ, հանուն Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակի։

«Տեղեկատու» թերթում են առաջին անգամ տպագրվել Ստ. Շահումյանի բազմաթիվ ճառերն ու հրահանգները, Ա. Միկոյանի՝ «Տարած հաղթությունը և հերթական խնդիրները», «Բանվորական խորհրդի կուլտուրլուսավորական խնդիրները», «Իշխանության կազմակերպումը», «Բուրժուական և պրոլետարական իշխանության ձևերը», «Ինչո՞ւ ենք դաշնակցականներին և էսեռներին զրկում Բաքվի ժողկոմսովետում ներկայացուցչությունից», «Աշխատավորական կոմունա» և այլ հոդվածներ։ Միկոյանի հրապարակախոսական ելույթներում այն միտքն է արծարծվում, թե ինչպիսի պատմական-համաշխարհային նշանակություն ունի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, թե ինչպես պետք է պրոլետարիատը պաշտպանի Հոկտեմբերի նվաճումները։ Կոմունիստ հրապարակախոսը Անդրկովկասի աշխատավորությանը կոչ էր

---

27 Սկզբում այն հրատարակվում էր երկու էջից. չորրորդ համարից (ապրիլի 9-ից) սկսեց լույս տեսնել չորս էջից. ընդ որում երկու էջը ադրբեջաներեն։ Ապրիլի 16-ից մինչև հուլիսի 31-ը տպագրվել է «Տեղեկատու»-ի 84 համար։

28 «Տեղեկատու»-ի մասին տե՛ս Ս. Ավագյան, Բաքվի կոմունայի մամուլը։

անում լինել այն, համերաշխ կերպով պայքարել թշնամիների դեմ, Ռուսաստանի և Բաքվի պրոլետարիատի օրինակով ստեղծել սովետական կարգեր: «Պետք է Բաքուն իր ռայոններով դարձնել բանվորական կոմունա,— գրել է Ա. Միկոյանը,— ժամանակին և վճռական քայլերով գնալ Ռուսաստանի Սովետների ճամփով...»[29]: «Բանվորական խորհրդի կուլտուր-լուսավորական խնդիրները» հոդվածում Ա. Միկոյանը նշում է, որ պրոլետարիատը իր մերձավոր դաշնակցի աշխատավոր գյուղացիության հետ միասին պետք է գրագիտություն ձեռք բերի, բարձրացնի իր կուլտուրական-գաղափարական մակարդակը[30]:

1918 թ. ապրիլի 25-ին ստեղծվում է Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետը: «Տեղեկատու»-ի 8-րդ համարի «Բաքվի Ժողովրդական կոմիսարների սովետը» առաջնորդողում ասված է, որ Բաքվում Ժողկոմսովետի կազմակերպումով էլ ավելի է ուժեղանում կապը կենտրոնական Ռուսաստանի հետ, և ռուս ժողովրդի օգնությամբ Անդրկովկասի աշխատավորները ձեռք կբերեն ազատություն:

«Տեղեկատու»-ում լուսաբանվել են նաև մարքսիստական տեսության, կոմունայի սոցիալիստական միջոցառումներին, բանվորական, գյուղացիական և կարմիր բանակային կյանքին վերաբերող և այլ հարցեր:

Թերթը հաճախ ընթերցողներին դիմում էր կոչերով: Հունիսին, երբ ծանրացավ կոմունայի դրությունը «Տեղեկատու»-ն իր համարներում գրում էր. «Ընկեր բանվորներ և Կարմիր բանակի զինվորներ.

Ձեր ազատության, ձեր կյանքի և ձեր իշխանության դեմ մահացու հարված է պատրաստվում:

Բոլորդ որպես մի մարդ պատրաստվեցեք ուժեղ հակահարված տալու թշնամուն:

Առա՛ջ մինչև կատարյալ հաղթանակ»:

Ահա մեկ ուրիշ կոչ.

«Ընկե՛ր բանվորներ, նավաստիներ և Կարմիր բանակի զինվորներ, անգլիական իմպերիալիզմի ագենտները անդադար առաջ են տանում իրենց հակահեղափոխական աշխատանքը, ձեզ մաս-մաս են անում և ցանկանում բանվորներին հանել Սովետական իշխանության դեմ: Անգլիական կապիտալիստների ծառաները ցան-

29 «Տեղեկատու», Բաքու, 16 ապրիլի 1918 թ.:

30 Նույն տեղում:

կանում են խորտակել Սովետական իշխանությունը և հաստատել անգլիացիների ու բուրժուաների տիրապետությունը։ Բուրժուազիան և նրա վարձու ծառաները անգլիացիների կողմն են անցել։ Բանվորներն ու նավաստիները պաշտպանում են Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետությանը։

Կորչեն անգլիական իմպերիալիստները։ Կորչեն կաշառված ագենտները։

...Կեցցե՛ Սովետական իշխանությունը...»[31]։

«Տեղեկատու»-ն հետևողականորեն մերկացնելով օտարերկրյա գաղութարարներին, բացահայտում էր անգլիական, ամերիկյան, ֆրանսիական, գերմանական, թուրքական իմպերիալիստների զավթողական պլանները, ցույց տալիս, որ իմպերիալիստները համաշխարհային սպանդի կազմակերպիչներ են, հարյուր միլիոնավոր մարդկանց թշվառության պատճառը։

Մերկացնելով բուրժուազիայի կեղծ հայրենասիրությունը՝ թերթը ցույց էր տալիս, որ բուրժուազիան լոկ մի բանի է ձգտում՝ որքան կարելի է շատ շահույթներ կորզել։ Բուրժուազիան՝ լինի այն Ֆրանսիայում, թե՛ Գերմանիայում, Անգլիայում, թե՛ Ամերիկայում,— գրում է թերթը,— դավանում է միայն մի աստված՝ շահը և այն ստանալու համար պատրաստ է նույնիսկ իր հայրենիքը վաճառելու։

«Համաշխարհային սպանդանոցի վերջը» առաջնորդողում, որը լույս է տեսել հունիսի 6-ի համարում, մերկացված են անգլիական, ֆրանսիական, գերմանական, ամերիկյան և մյուս երկրների իմպերիալիստները։

«Տեղեկատու»-ն Անդրկովկասի աշխատավորներին կոչ էր անում ամրապնդել եղբայրական կապերն ու համագործակցությունը ինչպես միմյանց, այնպես էլ ռուս ժողովրդի հետ։ Մայիսյան համարներից մեկում պարզաբանելով հեղափոխության նվաճումները ոչնչացնելու ներքին ու արտաքին թշնամիների ձգտումը, պահանջում էր միշտ հիշել Մարքսի խոսքերը այն մասին, որ հեղափոխությունը չի կարող մեռնել, այն կհաղթանակի։

«Տեղեկատու»-ն հայերեն առաջին սովետական թերթն էր։

Բաքվի ժողովրդական կոմիսարների Սովետը մեծ աշխատանք կատարեց բոլշևիկյան հրատարակությունների ծավալման ուղղությամբ։ Կոմունայի մամուլի բյուրոն և տպարանների կոմիսար

31 «Տեղեկատու», Բաքու, № 74, 19 հուլիսի 1918 թ.։

Ա. Խաչիկը կարճ ժամանակամիջոցում ստեղծեցին տպագրական հարուստ բազա։ Հունիսի սկզբներին Ստ. Շահումյանը գրաշար Ավ. Կողաբաշյանին ուղարկեց Մոսկվա՝ Սովետական Ռուսաստանի կառավարության օգնությամբ հայերեն տառեր ձեռք բերելու։ Ճանապարհին՝ Սիզրանում Կողաբաշյանը հանդիպում է Ա. Մյասնիկյանին, պատմում Մոսկվա մեկնելու իր նպատակների մասին և խնդրում նրա օժանդակությունը։ «Մոտենում եմ Մյասնիկյանին, բարևում,— ասում է Կողաբաշյանը,— նա մի հասարակ զինվորական շինելով էր, որի հայացքը ինձ վրա թողնում է մի վերին աստիճանի ազնիվ և խոհեմ մարդու տպավորություն։

— Ի՞նչ եք կամենում։

Մոսկվա ենք գնում, խնդրում եմ թույլտվություն։

— Ինչո՞ւ համար։

Տալիս եմ ձեռքումս պատրաստ պահած գործուղման թուղթ

— Դուք գրաշա՞ր եք։

— Այո։

— Շահումյա՞նն է ձեզ ուղարկել։

— Այո։

— Ինչպե՞ս է, լա՞վ է Շահումյանը, դուք տեսա՞ք նրան։

— Շատ լավ է, մենք գալու օրը տեսանք նրան Գործկոմում։

Այդ խոսակցությունից հետո նա գիմեց մի ընկերոջ, որին կարգադրեց անմիջապես գնալ պարետի մոտ և ձրի տոմսակ տալ ընկերներին (Կողաբաշյանը մեկնում էր իր յոթ ընկերների հետ միասին) մինչև Մոսկվա— առաջին հերթին»[32]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման ու իրագործման և Բաքվի կոմունայի ժամանակաշրջանում բոլշևիկյան հայ պարբերական մամուլը զգալի դեր կատարեց մասսաների հեղափոխական ուժերի համախմբման, պրոլետարիատի դիկտատուրայի հաղթանակն ապահովելու համար մղված պայքարում։ «Սոցիալ-դեմոկրատ» (Բաքու), «Նոր կյանք» (Ալեքսանդրապոլ), «Բանվորի կռիվը», «Բանվոր» (Թիֆլիս), «Բանվորի խոսք», «Տեղեկատու» (Բաքու) և բոլշևիկյան այլ թերթեր հայ աշխատավորությանը հասցրին կոմունիստական կուսակցության ճշմարտացի խոսքը, մեծ հոկտեմբերի առաջին փաստաթղթերը, մարքսիստական լենինյան վսեմ գաղափարները։

---

32 «Խորհրդային Հայաստան», № 71 (1125), 29 մարտի 1925 թ.։

Իր «Ինքնակենսագրականում» Արշավիր Միքայելի Մելիքյանը գրել է.

«1. Ծննդյան տարին 1879 թ. հունվարի 28-ին (հ. տ.) Հին Նախիջևան քաղաքում։

2. Լեզուներ— գիտեմ հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, թուրքերեն, իտալերեն, անգլերեն, հունարեն և լատիներեն, թույլ՝ իսպաներեն, չեխերեն, տաճկերեն, բուլղարերեն և ուկրաիներեն։

3. Ծանոթություն տեղերի— Հայաստանի որոշ մասերը, Թիֆլիս, Խարկով, Ցյուրիխ, Նեվշատել, Մոսկվա։

4. Արտասահմանում— 1903 թ. մայիսից մինչև 1911 թ. ամռանը եղել եմ Շվեյցարիայում։

5. Զինվորական պատրաստականություն— ոչ մի զինվորական չեմ եղել։

6. Կրթություն— 1899 թ. հունիսի սկզբներում վերջացրել եմ Երևանի արական գիմնազիան, նույն թվականին ընդունվել եմ Խարկովի համալսարանը և 1901 թ. դեկտեմբերին ընդմիշտ արտաքսվել համալսարանից, 1903 թվականից մինչև Կովկաս վերադառնալը, ուսանել եմ Շվեյցարիայում։

7. Հիմնական զբաղմունք— գրականություն և քաղաքականություն։

8. Անդամ կուսակցության— պաշտոնապես 1906 թ. աշնանից, ոչ պաշտոնապես 1901 թ. գարնանից։

9. Ուրիշ կուսակցությունների պատկանելիությունը— 1893 թ. աշնանից մինչև 1894 թ. աշունը ,ինձ համարել եմ «մշակական» այնուհետև համակրել եմ սոցիալիստներին և անիշխանականներին։

10. Մասնակցությունը քաղաքական կյանքին և հեղափոխությանը—1894 թ. աշնանը մի խումբ աշակերտների հետ հիմք ենք դրել Երևանում Ընկերավարական-ռամկավարական կազմակերպության։ 1901 թ. փետրվարի 19-ին, բանտարկվել եմ Խարկովում փողոցային ցույցի ժամանակ, 1902 թ. աքսորվել եմ Խարկովից, 1903 թ. էմիգրացիա, 1914—1915 թթ. բանտարկություն Երևանում, 1917—1920 թթ. բոլշևիկյան գործունեություն Երևանում։ 1921—1926 թթ. գործունեություն Մոսկվայում և Թիֆլիսում։

11. Անհատական (անձնական) մտածմունքներ (մտորումներ)— ինձ սարսափելի կերպով տանջում է այն միտքը, որ մինչև

այժմ (ես այժմ 47 և կես տարեկան եմ) դեռ շատ ու շատ քիչ բան եմ արել թե՛ գրական, և թե՛ քաղաքական-կուսակցական ասպարեզում: Ես մտադիր եմ մի նոր թափով նետվել այդ երկու ասպարեզները արշավի՛ր նշանաբանով:

20/ VII (1926)[33]

«Ինքնակենսագրության» անկետային 11 կետերը, որ յուրօրինակ կազմել և պատասխանել է հայ մարքսիստ-լենինյանների համաստեղության լավագույն ներկայացուցիչ Արշ. Մելիքյանը, հակիրճ, բայց խորիմաստ ձևով պատկերում է նրա կյանքի գլխավոր նշանաձողերը. բացահայտում անձնվեր հեղափոխականի մտորումները: Արշ. Մելիքյանը XX դարի առաջին քառորդի հայ իրականության կրթված, մարքսիստական պատրաստությամբ օժտված տեսաբաններից է, գաղափարական ասպարեզի աչքի ընկնող դեմք[34]:

Տակավին աշակերտական տարիներին նա հանդես է բերում որոշակի ընդունակություններ հասարակական-քաղաքական երևույթների ճիշտ ընկալման գործում: Մելիքյանը 14 տարեկան էր, երբ 1894 թ. մարտին «Մշակ»-ի «Խառը լուրեր» բաժնում լույս տեսավ նրա երգիծական հոդվածը: Ահա այն,— «Բարձր հասակով մի փաստաբան մտնելով դատարանը և այնտեղ տեսնելով մի կարճահասակ մարդու ասաց նրան.

— Դուք փաստաբա՞ն եք:

— Այո, եղավ պատասխանը:

Դուք այնքան պստիկ եք, որ ես ձեզ իմ գրպանում կպահեմ. ասաց բարձրահասակ փաստաբանը:

Այն ժամանակ ձեր գրպանում ավելի շատ խելք կլինի, քան թե ձեր գլխում,— պատասխանեց կարճահասակը»[35]:

Հենց այդ ժամանակից էլ սկսած Ա. Մելիքյանը աշխատակցում է «Մշակ», «Նովոե օբոզրենիե», «Արձագանք» և այլ պարբերականներին: Ուշագրավ են նրա «Փողոցային տեսարանները Երևանում»

---

33 Սույն «Ինքնակենսագրության» ձեռագիրը 1958 թ. մեզ է տրամադրել Ա. Մելիքյանի այրին՝ Ելենա Նիկոլաևնա Սոկոլովսկայա-Մելիքյանը:

34 Արշ. Մելիքյանի կյանքի և հեղափոխական գործունեության մասին տե՛ս Ծ. Աղայան. Արշավիր Մելիքյան, Երևան, 1969:

35 «Մշակ», № 27, 8 մարտի 1894 թ.:

«Երևան, 20 մայիսի 1896 թ.», «Տկար խիղճը հաղթեց» և այլ հոդվածները[36]։

1897 թ. Արշ. Մելիքյանը մի խումբ աշակերտների հետ միասին խմորատիպ հրատարակում է «Գրիչ» պարբերականը։ Ընդամենը լույս է տեսել երկու համար, երրորդ համարը թեև պատրաստ էր, բայց չի բազմացվել։ Մելիքյանը իր հոդվածների տակ ստորագրել է՝ «Ռեալիստ», «Ջուխ» և այլն[37]. «Գրիչի» տետրակները լույս են տեսել գարնանը, —գրել է Արշ. Մելիքյանը,— «Միածանի» (եթե չեմ սխալվում, կամ եթե հիշողությունս ինձ չի դավաճանում) ազդեցության տակ[38]։

Այդ տարիներին Մելիքյանը քաղաքական որոնումների մեջ էր։

1899—1902 թթ. սովորելով Խարկովի համալսարանում՝ սկզբում իրավաբանական, ապա՝ ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետում, նա ակտիվ մասնակցություն է ցուցաբերում ուսանողական հեղափոխական շարժումներին, կապվում սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, մասնակցում ուսանողական համառուսական խորհրդակցություններին[39] 1901 թ. դեկտեմբերի 10-ից մինչև 22-ը Ա. Մելիքյանը մասնակցում է Օդեսայի հայ ուսանողների համառուսական խորհրդակցությանը, որ առաջին անգամ ծանոթանում է Ստ. Շահումյանի հետ, հրապուրվում մարքսիզմի՝ նրա խոր իմացությամբ։ Մեկ տարի անց (1902 թ. փետրվարի 2-ից մինչև 8-ը) Մելիքյանը մասնակցել է Պետերբուրգում գումարված ուսանողների համառուսաստանյան համագումարին[40]։ Նա կրկին հանդիպում է Ստ. Շահումյանին, պաշտպանում նրա և համագումարի մյուս հեղափոխական սոցիալ-դեմոկրատների բանաձևերը, համերաշխում Շահումյանի ելույթին, որ ասված էր. «անիրագործելի են համալսարանական բոլոր տեսակի ազատությունները,

---

36 Տե՛ս «Մշակ», № 139, 4 դեկտեմբերի 1894 թ., № 331, 14 նոյեմբերի 1895 թ., «Արձագանք», № 58, 24 մայիսի 1896 թ., № 111, 25 սեպտեմբերի (7 հոկտեմբերի) 1896 թ. և այլն։

37 Տե՛ս Արշ. Մելիքյանի գրառումները, որոնք պահվում են նրա որդու՝ Ավգուստ Մելիքյանի մոտ։

38 Նույն տեղում։

39 См. *Х. А. Барсегян,* Из истории революционных связей украинского и армянского студенчества накануне первой русской революции. См. Сборник «Исторические связи и дружба украинского и армянского народов», Ереван. 1971, стр. 138—145.

40 Ար. Մե-ն (Արշավիր Մելիքյան), Հիշողություններ Ստ. Շահումյանի մասին տե՛ս «Նոր աշխարհ», Թիֆլիս, 1922, № 2, էջ 154—157։

մինչև որ չխորտակվի քաղաքական գլխավոր խոչընդոտը, այն է՝ ցարիզմը»[41]: Ուսանողական հեղափոխական շարժումներին և քաղաքական ցույցերին ունեցած ակտիվ մասնակցության համար Ա. Մելիքյանը իբրև «անբարեհույս» հեռացվում է համալսարանից և արտաքսվում Կովկաս: Այստեղ նա թարգմանում և «Կովկասյան վեստնիկում» հրատարակում է Տիրվանդացու «Կրակը»:

1903 թ. Ա. Մելիքյանը մեկնում է Շվեյցարիա, ընդունվում Ցյուրիխի համալսարանի փիլիսոփայական ֆակուլտետը:

Սերտ կապ հաստատելով ռուս քաղաքական վտարանդիների, արտասահմանում սովորող կովկասցի հեղափոխական երիտասարդության հետ, Մելիքյանը խորապես ուսումնասիրում է մարքսիզմը և 1906 թ. պաշտոնապես մտնում ՌՍԴԲԿ շարքերը: 1903 թ. ամռանը արտասահմանում Արշ. Մելիքյանը «Կովկասեց» ստորագրությամբ մի հոդված է տպագրում «Ստուդենտ» անլեգալ թերթում: Այն խմբագրել են Վարշավսկին, Զագորսկին և Ռեզնիկովը[42]:

1904 թ. սկզբներին, անցնելով Ցյուրիխի վրայով,— գրել է Ա. Մելիքյանը,— Շահումյանը պատահաբար իմանում է իմ հասցեն և այցելում ինձ: Մի ամբողջ օր մենք անցկացրեցինք միասին: Նա այդ ժամանակ տկար էր և գնում էր ռոմանական Շվեյցարիա (լավ չեմ հիշում՝ Մոնտրեո թե Կլարան) կազդուրվելու: Նա այդ ժամանակ կողմնակից էր Լենինին: Իր պատմելով 1903 թ. եղել էր Գերմանիայում: 1903 թ. Դրեզդենի պարտայտագի վեճերը ձախ և աջ թևերի միջև՝ մեծապես ազդել էին նրա վրա: Հմայիչ տպավորություն էր թողել Շահումյանի վրա Բեբելը, որին նա տեսել էր ընտրողական պայքարի ժամանակ կուսակցական ժողովներում...

Շահումյանը հեգնանքով էր խոսում այն հայ ուսանողների մասին, որոնք, երկար տարիներ ապրելով Բեռլինում, հափշտակվում էին հայկական երեկույթներ կազմակերպելու գործով և առաջվա նման տգետ ու բոբիկ վերադառնում Կովկաս, առանց ուսումնասիրած լինելու դասակարգային պայքարը Գերմանիայի պես մի արդյունագործական երկրում»[43]:

1904—1905 թթ. Մելիքյանը սովորում է Նյուշատելի ակադեմիայի գրականության ֆակուլտետում[44]: Այստեղ նա ուսումնասի-

---

41 Տե՛ս «Նոր աշխարհ», 1922, № 2, էջ 155:

42 Տե՛ս Ավգուստ Մելիքյանի մոտ պահվող նյութերը:

43 Ար. Մե–Ե, Հիշողություններ Ստ. Շահումյանի մասին, տե՛ս «Նոր աշխարհ», 1922, № 2, էջ 156:

44 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկա-

րում է հունական փիլիսոփայության պատմություն, ընդհանուր փիլիսոփայություն, ֆրանսիական, իտալական, անգլիական և գերմանական դասական գրականություն, գրականագիտություն, Եվրոպայի պատմություն և այլ առարկաներ[45]։ Կարո Մելիք-Օհանջանյանի վկայությամբ, Ա. Մելիքյանը ծանոթ էր Վ. Ի. Լենինի, Գ. Վ. Պլեխանովի, Ա. Վ. Լունաչարսկու և վտարանդիության մեջ գտնվող ռուս բազմաթիվ հեղափոխականների, գերմանական հեղափոխական շարժման նշանավոր գործիչներ Կարլ Լիբկնեխտի, Ռոզա Լյուքսեմբուրգի, Ժան Ժորեսի, Ավգուստ Բեբելի և այլոց հետ[46]։

«Արշ. Մելիքյանը պայծառ մտքի տեր էր,— գրել է Ծ. Աղայանը,— որն իր փայլուն ունակություններով ու նվիրվածությամբ, որպես համակրելի անձնավորություն առաջին իսկ հանդիպումներից արժանացավ Վլադիմիր Իլյիչի ուշադրությանը և դարձավ նրա տան ցանկալի այցելուներից մեկը։ Նրանք հաճախ բախվում էին շախմատի դաշտում, որի ընթացքում Իլյիչը կատակում և իր զինակիցներին ցույց էր տալիս գալիք մեծ մարտերի ընթացքը։ Լենինի հետ հանդիպումներից Արշ. Մելիքյանը աստիճանաբար յուրացրեց լենինյան հեռատեսողականությունը, ազնվությունն ու նվիրվածությունը մարքսիզմի մեծ գաղափարներին, պրոլետարիատի ազատագրության մեծ գործին»[47]։

Ցավոք սրտի արտասահմանում՝ ռուս հեղափոխական վտարանդիների շրջանում Արշ. Մելիքյանի կատարած եռանդուն գործունեության մասին քիչ բան գիտենք։ Հայտնի է միայն, որ ՌՍԴԲԿ շարքերում և որպես կայուն լենինյան պայքարել է հակալենինյան խմբավորումների՝ մենշևիկների, լիկվիդատորների, բուրժուական գաղափարախոսության այլևայլ կողմերի դեմ։ Հայտնի է նաև, որ արտասահմանում ուսումնառության տարիներին Արշ. Մելիքյանը շարունակում է կապը Ռուսաստանի, մասնավորապես Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հետ, օգնում մարքսիստական գրականության առաքմանը։ Ամառային արձակուրդներին գալով Կովկաս, նա հանդիպումներ է ունենում Ստ. Շահումյանի, Ս. Սպան-

կան ֆիլիալի արխիվ, Ֆ. 4056, ց. 1, գ. 1, թ. 6։ Մելիքյանի այդ ֆոնդի նյութերը ժամանակին մեզ է տրամադրել նրա այրին՝ Ե. Սոկոլովսկայա-Մելիքյանը։

45 Տե՛ս Կ. Մելիք-Օհանջանյանի հուշերը, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», № 3, 1969։

46 Տե՛ս «Լրաբեր», 1969, № 3, էջ 84, տե՛ս նաև Ծ. Աղայան, Արշավիր Մելիքյան, Երևան, 1969, էջ 10։

47 Նույն տեղում։

դարյանի, Ս. Խոմարյանի, Ս. Կասյանի, Ա. Մյասնիկյանի և այլոց հետ։

1908 թ. օգոստոսի 6-ին Ջալալօղլիից Թիֆլիս Արշ. Մելիքյանին ուղարկած նամակում Աշխեն Տեր-Գրիգորյանը (Շահումյանի կնոջ՝ Եկատերինա (Քեթևան-Քեթո) Տեր-Գրիգորյանի ազգականը) գրել է. «Շահումյանը ամսույս 15-ին այստեղ կլինի, գուցե այդ Ձեզ ավելի հետաքրքրի և ավելի լավ տրամադրված կգաք»[48]։

Այս նամակից պարզ է դառնում, որ Շահումյանն ու Մելիքյանը քաղաքական ջերմ կապերի մեջ էին։ Այն միաժամանակ վկայում է, որ Մելիքյանն այդ տարիներին հաստատորեն էր կանգնած բոլշևիկյան գծի վրա։ Մեր այս միտքը հավաստում է հենց ինքը՝ Մելիքյանը։ 1909 թ. գարնանը,— հետագայում գրել է Մելիքյանը,— հիշում եմ՝ զատկի տոներին Շահումյանին այցելեցի Բալախանում և մոտ մի շաբաթ հյուր մնացի մոտը։ Շահումյանը մնացել էր նույն Շահումյանը և մազաչափ անգամ չէր փոխվել։ Նա շարունակում էր պարապել կուսակցական գործերով, սերտորեն կապվել էր բանվորության հետ, կարծես քաղաքական ռեակցիան բնավ գոյություն չուներ՝ թե՛ նրա, և թե՛ Բալախանու բանվորության համար... գործնականը ամենաէականն էր նրա համար... Չնայած սպառնացող վտանգին և հետապնդումներին, Շահումյանն իր մոտ էր պահում քաղաքական հանցագործներին։ Շահումյանն ամեն օր լինում էր կուսակցական բջիջներում և պարապում բանվորների հետ։ Կուսակցական գործերով նա Բալախանուց հաճախ գալիս էր քաղաք և տեսնվում կուսակցական ընկերների հետ»[49]։

1908 թ. Պոլսի «Սուրհանդակ» թերթում լույս է տեսնում Արշ. Մելիքյանի Ցյուրիխից ուղարկած «Շվեյցարական նամականին», որ պատմում էր միջազգային պրոլետարիատի համերաշխության օրվա՝ Մայիսի մեկի տոնակատարության, գերմանական սոցիալ-դեմոկրատիայի Partei tag-ի հերթական հարցերի, կանանց խնդրի և այլ կարևորագույն պրոբլեմների մասին։

1911 թ. Մելիքյանը աշխատանքի է նշանակվում Երևանի Գայանյան դպրոցում, ուր դասավանդում է ռուսաց լեզու և գրականություն, հայ և ռուս ժողովուրդների պատմություն։ Այստեղ իր կնոջ

---

48 Տե՛ս Խ. Հ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան։ Կյանքի և գործունեության փաստագրական տարեգրություն, Երևան, 1968, էջ 210։

49 Ար. Մե-ն, Հիշողություններ Ստ. Շահումյանի մասին («Նոր աշխարհ», 1922, № 2, էջ 156)։

եղբոր, ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության աչքի ընկնող գործիչ՝ Գ. Ն. Սոկոլովսկու և մյուսների հետ քաղաքական ակտիվ աշխատանք է կատարում, որոշակի ազդեցություն թողնում հայ հասարակական մտքի զարգացման վրա, մասնավորապես մարքս-լենինյան գաղափարների պաշտպանության ու պրոպագանդման ասպարեզում:

1911—1920 թթ. Արշ. Մելիքյանը Հայաստանի աչքի ընկնող քաղաքական դեմքերից էր, ճանաչված հրապարակախոս, տեսաբան, գիտության կուսակցականության լենինյան սկզբունքների ջատագով: Նա օգտագործելով լեգալ և անլեգալ հնարավորությունները, գաղափարական պայքարի կրակն ուղղում է մարքսիզմի թշնամիների դեմ, մերկացնում բուրժուական, այդ թվում՝ դաշնակցության հետադիմական գաղափարախոսությունը:

1911 թ. «Կռան», «Ձայն» և այլ պարբերականներում լույս են տեսնում նրա մարտաշունչ հոդվածները: «Ձայն»-ում հրապարակվեց Մելիքյանի քննադատական սուր գրախոսականը Երվանդ Ֆրանգյանի՝ «Ն. Կ. Միխայլովսկին որպես փիլիսոփա-սոցիոլոգ», սուբյեկտիվ իդեալիստական մախիստական գրքույկի դեմ:

Բանվորական հեղափոխական շարժման վերելքի տարիներին, Լենայի նշանավոր դեպքերից հետո երկրում ստեղծված քաղաքական նոր իրադրության պայմաններում, Արշ. Մելիքյանին հաջողվում է Երևանում իր շուրջը համախմբված մարքսիստների օգնությամբ հիմք դնել «Խոսք» թերթին, որի առաջին համարը լույս է տեսել 1913 թ. դեկտեմբերի 30-ին[50]: Այն լեգալ թերթ էր՝ դեմոկրատական ուղղությամբ, և իր էջերը բացել էր «տնտեսական ուսումնասիրությունների և հոդվածների համար»[51]: Բացի Երևանի սոցիալ-դեմոկրատներից, նրան աշխատակցել են Բաքվից՝ Բ. Բորյանը (Սաշա), Պետերբուրգից՝ Ա. Կարինյանը, Զանգեզուրից՝ Քր. Մկրտչյանը և ուրիշներ: Թերթի № 17-ում «Կյանքից և գրականությունից» տեսության մեջ Արշ. Մելիքյանը, քննադատելով «Մշակ»-ի 73-ում զետեղված Հ. Սուրխաթյանի մի նամակը, նշել

50 1913—1914 թթ. լույս է տեսել «Խոսքի» ընդամենը 25 համար: Տե՛ս Խ. Հ. Բարսեղյան, Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն, Երևան, 1956 (նույնը ռուսերեն, Երևան, 1968), Նույնի՝ Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, Երևան, 1959, Նույնի՝ «Խոսք» թերթը, «Երևան», № 213, 7 սեպտեմբերի 1960 թ.:

51 Տե՛ս «Խոսք», Երևան, № 1, 30 դեկտեմբերի 1913 թ., 30 դեկտեմբերի «Առաջնորդողը, որը գրել է Արշ. Մելիքյանը:

է, որ մարքսիստի համար անթույլատրելի է բուրժուական օրգանին թղթակցելը, բայց եթե հնարավորություն չկա ունենալ որոշ ուղղության թերթ և այնտեղ կարմիր թելի պես անցկացնել մարքսիստական աշխարհայացքի էությունը, այդ դեպքում հարկավոր է ընտրել չարիքի փոքրագույնը՝ այն է՝ ստեղծել մի խառը «անգույն» օրգան»[52]։ Դժվար չէ կռահել, որ Արշ. Մելիքյանը Սուրխաթյանի հետ ունեցած այս բանավեճի միջոցով բնութագրում է իր իսկ խմբագրած «Խոսք»-ը։ Նա Հայաստանի քաղաքական իրադրության ծանր պայմաններում ընտրել էր «չարիքի փոքրագույնը»։ 1914 թ. ապրիլին իշխանությունները «հակակառավարական» ուղղության համար արգելում են «Խոսք»-ի № 17-ի հրատարակությունը, իսկ խմբագրին դատի տալիս։ «Հաճեցեք կարգադրել արգելելու հայերեն «Խոսք» թերթի 17-րդ համարը»— 1914 թ. ապրիլի 28-ին Երևանի նահանգապետին հեռագրել է Թիֆլիսի մամուլի կոմիտեի նախագահը[53]։ Թիֆլիսի դատական պալատը հոկտեմբերի 3-ին որոշում է Արշ. Մելիքյանին երեք ամսով բանտարկություն, կամ երեք հազար ռուբլի տուգանք[54]։

«Խոսք»-ի 1914 թ. № 17-ի «Երևան, 26 ապրիլի» առաջնորդողը, որ գրել է Արշ. Մելիքյանը, այդ հալածանքների առիթը հանդիսացավ։ «Բուրժուա-կապիտալիստական կարգերը, որոնց անկյունաքարն է մասնավոր սեփականությունը և ուրիշի աշխատանքի շահագործումը և սեփականացումը,— ասված էր առաջնորդողում,— զարգացնում և ստեղծում են այնպիսի հիվանդություններ, որոնց կատարյալ բուժումը կարող է տեղի ունենալ միայն հասարակական արմատական կերպարանափոխություններով և հիմնական հեղաշրջումով»[55]։ Այնուհետև քննադատվում են կապիտալիստական հասարակարգի արատներն ու խոցերը, հասարակական կյանքի թշվառ պայմանները։ Մարքսիստական նկատից մերկացնելով շահագործողներին, բուրժուազիային և նրա կամակատարներին, Արշ. Մելիքյանը գրում է. «Փարիսեցու կեղծ դիմակ հագած նրանք ճգնում են բարեգործությամբ և ժամանակավոր միջոցներով սպեղանի դնել մարդկության այդ վերքերի վրա, որոնց համար անհրաժեշտ է վիրաբույժի անխնա նշտարը»[56]։

---

52 «Խոսք», № 17, 26 ապրիլի 1914 թ.։

53 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4056, ց. 1. գ. 19, թ. 1։

54 Տե՛ս Մ. Աղայան. Արշավիր Մելիքյան, Երևան, 1969, էջ 12—20։

55 «Խոսք». № 17, 26 ապրիլի 1914 թ.։

56 Նույն տեղում։

Հետևողականորեն զարգացնելով բուրժուական կարգերի քննադատությունը, Ա. Մելիքյանը քարը քարի վրա չի թողնում, անարգանքի սյունին է գամում բուրժուազիային, հայտարարելով՝ «կա՞ արդյոք այս աշխարհում մի բան, որ ավելի արգահատելի և ավելի շինծու լինի, քան այս դիմակահանդեսը, այս բուրժուական դիմակահանդեսը»[57]:

«Խոսք»-ի բնարկվող համարում են լույս տեսել «Պատգամավորական ընտրությունները», «Գաղթը Երևանի նահանգից», «Կյանքից և գրականությունից», «Կրթական գործը Զանգեզուրում», «Սուրմալուի գավառ», «Ջրի հարցը Նախիջևանի գավառում», «Թեմական դպրոցի հոբելյանի շուրջը», «Պետք է սթափվել» և այլ հոդվածներ։ «Կյանքից և գրականությունից» հոդվածում, որը գրել է Արշ. Մելիքյանը, ցույց է տրված մարքսիստ-լենինյանների դիրքորոշումը բուրժուական, մանրբուրժուական և լիբերալ հոսանքների ու տպագիր օրգանների նկատմամբ։ Մելիքյանը ճիշտ կերպով եզրակացնում է, թե «մարքսիզմի վերաբերմունքը դեպի այլ հոսանքները պիտի լինի անհաշտ և ոչ մի երկիմաստության առիթ չպիտի տա»[58]։ Նա ընդգծում է, որ մարքսիստները կանգնած են դասակարգային պայքարի հողի վրա, որ մարքսիստական գաղափարների պաշտպանության ու տարածման գործում մեծ դեր ունի մամուլը։

«Խոսք»-ը 1914 թ. հունիսի 20-ին դադարեց լույս տեսնել, նրա խմբագիր Արշ. Մելիքյանը երեք ամսվա բանտարկությունից (չեղոքացումից) հետո նորից նվիրվեց աշխատավորության հեղափոխական դաստիարակության գործին։

1915—1917 թթ. Արշ. Մելիքյանը աշխատում է Համառուսաստանյան քաղաքների միության կովկասյան բաժանմունքում, մեծ օգնություն ցույց տալիս հայ գաղթականությանը, մերկացնում սոցիալիստ շովինիստներին, քննադատում պատերազմի նկատմամբ Գ. Պլեխանովի բռնած սխալ դիրքորոշումը։ Նա լենինյան դիրքերից է մեկնաբանում պատերազմի և խաղաղության հարցերը, Գ. Պլեխանովին մեղադրում է կյանքից ետ մնալու, պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից նահանջելու մեջ։ «Դուք այստեղ սխալվում եք,— Գ. Պլեխանովի մասին ասում է Արշ. Մելիք-

---

57 «Խոսք», № 17, 26 ապրիլի 1914 թ.։

58 Նույն տեղում։

յանը,— և իրականությունը մոտիկ դանվեց Լենինը, կյանքի ըմբռնումը նրանից չի բաժանվել»[59]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման և իրագործման տարիներին Կովկասում սովետական իշխանության հաղթանակի համար մղած պայքարում Արշ. Մելիքյանը գտնվում էր հեղափոխության անձնվեր մարտիկների առաջին շարքերում։

1918 թ. հունվարի 29-ին Ստ. Շահումյանը Արշ. Մելիքյանին գրել է. «Հարգելի ընկեր։ Շատ սպասեցի, որ կերևաք մեր հորիզոններում, չերևացիք։

Խնդրում եմ, կարծելով, որ առաջվա նման մեզ հետ եք Ձեր հայացքներով— գաք Տփղիս՝ գոնե ժամանակավորապես, որ խոսենք»[60]։

Թեև երկրամասում տիրող քաղաքական իրադարձությունները խանգարեցին նրանց հանդիպելու, բայց Արշ. Մելիքյանը իր հայացքներով միշտ էլ Շահումյանի հետ էր, նրա գործի ջերմ պաշտպանը[61]։

1918—1919 թթ. Երևանում Արշ. Մելիքյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Խոսք» մարքսիստական լեգալ թերթը։ Վեց ամսվա ընթացքում հրապարակվեց «Խոսք»-ի 22 համար, այդ թվում, 1918 թվականին՝ 10, իսկ 1919 թվականին՝ 12 համար։

Թերթն իր գլխավոր ուշադրությունը նվիրում էր Հայաստանի աշխատավոր մասսաների մարքս-լենինյան դաստիարակությանը, լենինյան գաղափարների, Սովետական Ռուսաստանի նվաճումների տարածմանը։ «Խոսք»-ը հայ ընթերցողներին է հասցրել Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն», «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» և այլ աշխատությունների հիմնական գաղափարները։ Գրախոսելով Վ. Ի. Լենինի «Հոդվածներ պատերազմի և հաշտության մասին» աշխատությունների ժո-

---

59 Տե՛ս Ն. Ազայան. Արշավիր Մելիքյան, էջ 32։

60 Ստ. Շահումյան. Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 200։

61 «Հիշողություններ Ստ. Շահումյանի մասին» հուշագրությունները, որ Արշ. Մելիքյանը գրել է 1922 թ., ավարտվում է այսպես. «1873 թվականին գրած մի հոդվածում Դոստոևսկին ասում է. «Ես առհասարակ չեմ սիրում հիշողություններ գրել»։ Թե ինչն է դրդել նրան այդպես արտահայտվել, մնում է մութ։ Բայց անժխտելի է մի բան։ Այն հիշողությունները, որոնք կապված են Շահումյանի նման գաղափարական և մաքուր գործիչների անվան հետ, տխուր խոհերի առարկա են դառնում. երբ գիտակցում ես, թե չկա և այլևս երբեք չի լինելու մեզ հետ նա, որն ամենից շատ է աքնել, տանջվել և հալածվել նոր կարգերի հաստատման համար» (տե՛ս «Նոր աշխարհ», 1922, № 2, էջ 157)։

ղովածուն, Արշ. Մելիքյանը գրել է. «Խորհուրդ ենք տալիս ընթերցողներին ծանոթանալու Վ. Ի. Լենինի վերոհիշյալ հոդվածների ժողովածուի հետ՝ գեթ մեկ անգամ համոզվելու համար, թե ինչպիսի անհամ, տափակ, ջրալի անհեթեթություններ են վերագրում այդ մարդուն, նրա անհամ, ջրալի և անհեթեթ հակառակորդները»[62]:

Պաշտպանելով և պրոպագանդելով Վ. Ի. Լենինի «Պետություն և հեղափոխություն» աշխատության դրույթները, Արշ. Մելիքյանը նշել է, թե Վ. Ի. Լենինի գիրքը մի պատասխան, մի ապտակ է ստախոս ու վաճառված բուրժուական մամուլին: «Երբ այդ աղտոտված պարբերականները լուրեր են տարածում, թե Լենինը գերմանական սուզանավով փախել է Գերմանիա,— գրել է Արշ. Մելիքյանը,— երբ «Կերենսկի-Ծերեթելի» խայտառակ ընկերության խուզարկու լրտեսները վխտում էին նրա շուրջը, իսկ կադետները և սպիտակգվարդիականները փափագում էին հղփանալ նրա արյունով, ահա այդ ժամանակ Մարքսի լավագույն աշակերտը, Պետերբուրգի մոտ նստած, գրում էր իր ուսումնասիրությունը ժամանակակից ամենահրատապ հարցի մասին: Լույս ընծայելով իր գիրքը՝ նա իր ստոր և սինլքոր հակառակորդներին տալիս է լավագույն պատասխանը[63]:

«Խոսք»-ը մերկացրել է լենինիզմի թշնամիներին, բուրժուական գաղափարախոսներին, մենշևիկներին, դաշնակցականներին, մուսավաթիստներին, հետևողականորեն պաշտպանել երկրամասի ժողովուրդների եղբայրության և միասնության գաղափարը: «Միակ ուղիղ ճանապարհ» առաջնորդողում Արշ. Մելիքյանը ցույց էր տալիս, որ կովկասյան ժողովուրդներն ունեն ընթանալու մի ճանապարհ, նախ՝ փոխադարձ համաձայնություն այստեղ ներսում, երկրորդ՝ սերտ և անկեղծ կապ՝ Ռուսաստանի, համաշխարհային հեղափոխության հետ: Ամեն մի այլ ճանապարհ երկիրը տանում է դեպի քաղաքական ստրկացում, ազգային նվաստացում և տնտեսական քայքայում»: Արշ. Մելիքյանը Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը սերտորեն կապում էր ռուս մեծ ժողովրդի, Հոկտեմբերյան հեղափոխության հետ: Անջնջելի տպավորություն էին թողնում Արշ. Մելիքյանի կրակոտ հոդվածները, մարտաշունչ հրապարակային դասախոսություններն ու զեկուցումները բուրժուական պառլամենտում արտասանած ճառերը: Կ. Մելիք-Օհան-

62 «Խոսք», № 3, 12 հոկտեմբերի 1918 թ.:

63 «Խոսք», № 7, 6 դեկտեմբերի 1918 թ.:

ջանյանը պատմում է, որ 1918 թ. գտնվելով Բեռլինում, իբրև «Բոստայի» աշխատակից, թերթերում կարդում է Հայաստանի քաղաքական դրության մասին այն լուրերը, որ գալիս էին Կովկասից։ Ռոզա Լյուքսեմբուրգը ծանոթանալով այդ հաղորդագրություններին, վերհիշում է Կ. Մելիք-Օհանջանյանը, ասում է. «Ուրեմն Արշավիր Մելիքյանը Հայաստանում է։ Լավ է։ Դա նշանակում է, որ հեղափոխության գործն ու ղեկը գտնվում է վստահելի ձեռքերում»[64]։

Արշ. Մելիքյանի մարքսիստական խոր գիտելիքների, լենինիզմի հանդեպ հավատարմության մասին է խոսում նաև Հայաստանի հանրապետության խորհրդարանի 1918 թ. օգոստոսի նիստում կարդացած դեկլարացիան[65]։

Մելիքյանը Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղած պայքարի ակտիվ մասնակիցներից է. երիտասարդական «Սպարտակ» կազմակերպության ստեղծման նախաձեռնողներից, Հայաստանի կոմկուսի կազմավորման ընթացքի գործուն մասնակիցներից։ 1920 թ. մեկնելով Մոսկվա, Վ. Ի. Լենինի առաջարկությամբ նա որոշ ժամանակ աշխատում է Կրեմլում, որպես արտասահմանյան մամուլի ռեֆերենտ։ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո նա եղել է գաղափարական բնագավառի աչքի ընկնող գործիչ, մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների աշխատությունների հմուտ թարգմանիչ-խմբագիր։

5

Հայաստանում մարքսիզմի տարածման, մարքս-լենինյան գաղափարների հաղթանակի համար մղած պայքարում 1917—1920 թթ. մեծ դեր է խաղացել ՌՍՖՍՀ Ազգությունների գործերի ժողկոմատի Հայկական գործերի կոմիսարիատը։

Սովետների II համագումարում Վ. Ի. Լենինի առաջարկությամբ 1917 թ. նոյեմբերի 8-ին ստեղծված Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատը կոմունիստական կուսակցության լե-

---

64 «Լրաբեր», 1969, № 3, էջ 85։

65 Տե՛ս «Խոսք», № 1, 22 սեպտեմբերի 1918 թ., տե՛ս «Մեծամասնականների դեկլարացիան՝ կարդացած Հայաստանի խորհրդարանում»։ «Խոսք»-ի այդ համարի անձնական օրինակում Արշ. Մելիքյանը գրել է. «Իմ կազմածն է, այն ընդունեց Երևանի մեր կազմակերպությունը, մտցնելով որոշ փոփոխություններ»։ Դեկլարացիայի մեկնաբանությունները տե՛ս Ծ. Աղայան, Արշավիր Մելիքյան, 1969, էջ 49—61։

նինյան ազգային քաղաքականության արդյունք էր։ Այն իր առջև խնդիր էր դրել՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության դրոշի տակ համախմբել Ռուսաստանի նախկինում ճնշված ժողովուրդներին, աճեցնել և դաստիարակել պետական գործիչներ ապագա ազգային հանրապետությունների և մարզերի համար։

Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի օրգան «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթը պարզաբանելով Ռուսաստանի ժողովուրդների ազատագրական պայքարը, կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությունը, մեծ տեղ էր տալիս ինչպես մյուս, այնպես էլ հայ ժողովրդի հեղափոխական ազատագրական պայքարի լուսաբանմանը։ «Ժիզն նացիոնալնոստեյ» թերթում զետեղվել են Հայաստանին և հայ ժողովրդին նվիրված ավելի քան 70 թղթակցություն՝ հոդված, առաջնորդող և ինֆորմացիա։ 1917 թ. դեկտեմբերին Ժողկոմսովետի որոշմամբ Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծվում է Հայկական գործերի կոմիսարիատ։ Այն կոչված էր օգնելու կուսակցությանը լուծելու հայության համար բախտորոշ այնպիսի խնդիրներ, ինչպիսիք էին՝ հայ ժողովրդի ազատագրումը ֆիզիկական բնաջնջումից, Հայաստանի փրկումը անգլո-ամերիկյան իմպերիալիզմի գործակալների՝ դաշնակների արյունոտ տիրապետությունից և սովետական կարգերի հաստատումը։ 1918—1919 թթ. Հայկական գործերի կոմիսարիատը Ռուսաստանի հայաբնակ վայրերում տեղական Սովետներին կից կազմակերպում է իր բաժանմունքները, լիազորությունները, տեղական Սովետների ազգային փոքրամասնությունների բաժիններում՝ իր մասնաճյուղերը։ Բաժանմունքներ էին կազմակերպվել Աստրախանում, Սարատովում, Խարկովում, Արմավիրում, Պյատիգորսկում, Ցարիցինում, Դոնի Ռոստովում և Բաքվում, լիազորություններ՝ Պետրոգրադում, Վլադիկավկազում, Դերբենտում, Կիևում, Օդեսայում, Նիկոլաևում, Մինսկում, Եկատերինոդարում, ինչպես և Սիբիրի և Ղրիմի հայաբնակ քաղաքներում։

Հայկական գործերի կոմիսար Վ. Ավանեսովը և կոմիսարի տեղակալ Վահան Տերյանը հայ աշխատավորության մեջ կոմունիզմի գաղափարները տարածելու համար խոշոր աշխատանք են կատարում։

Սովետական կառավարությունը բազմակողմանի օգնություն է ցույց տալիս Հայկական գործերի կոմիսարիատին։ Հունիսի 22-ին Մոսկվայում լույս է տեսնում Հայկական գործերի կոմիսարիատի

օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթի առաջին համարը։ «Կոմունիստ»-ը սովետական իշխանության կենտրոնական թերթերից էր, որը Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի օրգան՝ «Ժիզն նացիոնալնոստեյ»[66] թերթի օրինակով հրապարակում էր սովետական իշխանության դեկրետները, որոշումները, Վ. Ի. Լենինի ճառերը, զեկուցումները և ղեկավար հոդվածները։ «Կոմունիստ»-ին աշխատակցում էին Ստ. Շահումյանը, Ալ. Մյասնիկյանը, Ն. Կրասպսկայան, Վ. Ավանեսովը, Վ. Տերյանը (խմբագիր), Շավարշ Գարագաշը, Ա. Միկոյանը, Մ. Ցխակայան, Ա. Մռավյանը, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ։

Թերթի առաջին համարում բացի սովետական կառավարության մի շարք դեկրետներից, տպագրված է Վ. Տերյանի «Նամակներ հայ գյուղացիներին ու բանվորներին» (էջ 10—12) կոչը։ Ինչպես այս կոչում, այնպես էլ «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» աշխատությունում Վ. Տերյանը պատմում էր սոցիալիստական հեղափոխության նշանակության մասին, մերկացնում էսեռներին ու մենշևիկներին, հայ աշխատավորությանը հասցնում մեծ Լենինի գաղափարները, կոչ անում միանալ ռուսական պրոլետարիատի կարմիր գնդերին։ «Եվ ահա մենք՝ հայ կոմունիստ բոլշևիկներս,— ասում էր Տերյանը,— կոչ ենք անում ձեզ, հայ գյուղացիներ ու հայ բանվորներ, միացեք Ռուսաստանի խորհուրդների կարմիր գնդերին, ուժ տվեք նրանց, որովհետև բանվորական և գյուղացիական Ռուսաստանի սոցիալիստական կարմիր գնդերն են, որ պիտի մի գեղեցիկ օր եղբայրական ձեռք մեկնեն տանջված ու կեղեքված, մահացու վտանգի մեջ գտնվող հայ գյուղացուն ու բանվորին, միայն Ռուսաստանի բանվորական ու գյուղացիական խորհուրդների իշխանության կարմիր գնդերն են, որ կարող կլինեն ազատություն ավետել արյունաներկ երկրին»[67]։

Թերթը անողոք կերպով մերկացրել է հայ նացիոնալիստներին և օտարերկրյա գաղութարարներին։ Երկրորդ համարում զետեղված հոդվածներից մեկում նշված է, թե դաշնակցությունը ավանտյուրիստական շավիղ է, որը ռեակցիոն քաղաքականությամբ երկիրը վերածում է ամերիկյան իմպերիալիստների ռազմական պլացդարմի։

---

66 Լույս է տեսել շաբաթը մեկ անգամ. Մոսկվայում՝ 1918 թ. նոյեմբերի 9-ից մինչև 1922 թ. փետրվարի 16-ը։ 1922 թ. փետրվարի 25-ից թերթը վերափոխվեց ամսագրի, որը նույն անունով լույս տեսավ մինչև 1924 թ. հունվարը։

67 «Կոմունիստ», № 1, 22 հունիսի 1918 թ.։

1918 թ. դեկտեմբերի 7-ի համարում թարգմանվել և տպագրվել է Մաքսիմ Գորկու դիմումը՝ ուղղված աշխատավոր ժողովրդին և մտավորականությանը։ Գորկու խոսքերով հայ աշխատավորներին բացատրվում էր, որ Ռուսիայի դեմ արշավի նախաձեռնողը Վուդրո Վիլսոնն է։ «Ամբողջ երկրագունդը լուսավորող ռուսական հեղափոխության կերոնն ամուր բռնել է Վլադիմիր Իլյիչ Լենինը»— ասում էր Մաքսիմ Գորկին։

Հայկական գործերի կոմիսարիատը տեղական բաժանմունքներին կից ստեղծում է իր թերթերը. Պյատիգորսկում՝ «Կարմիր օրեր»-ը, Արմավիրում՝ «Բանվորի ձայն»-ը (1918), Աստրախանում՝ «Կարմիր բանվոր»-ը (1919), Կրասնոդարում՝ «Կարմիր աստղ»-ը, Դոնի Ռոստովում՝ «Բանվորի կռիվը» (1920)։

Հայկական գործերի կոմիսարիատի պարբերական մամուլը մերկացնում էր Սովետական Ռուսաստանի նկատմամբ օտարերկրյա իմպերիալիստների պլանները, լուսաբանում Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումները և բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքը։ «Կարմիր օրեր»-ը, որը Հյուսիսային Կովկասում սովետական սոցիալիստական հանրապետության Ազգությունների կոմիսարիատի Հայկական բաժնի օրգանն էր, եռանդուն գործունեություն ծավալեց հայ աշխատավորության գաղափարական դաստիարակության գործում։ «Կարմիր օրեր»-ին ակտիվ աշխատակցել են այն ժամանակ Հյուսիսային Կովկասում գտնվող հայ բոլշևիկները՝ Գ. Աթարբեկյանը, Վ. Թարախչյանը և ուրիշներ։ Թերթը խմբագրել է Տ. Ամիրխանյանը։

«Կարմիր օրեր»-ը կոչ էր անում աշխատավորությանը՝ ըմբռնել մոմենտի լրջությունը, մտնել կարմիր զորամասերի շարքերը և պաշտպանել իրենց դասակարգային շահերը։ «Հեղափոխական ժայթքումների ահազանգն է հնչում,— գրում է թերթը։ Մեզանից յուրաքանչյուրը պետք է հիշի գերմանական առածը, որ ասում է.

«Ով որ երկաթի կտոր ունի, իշխող է իր տան սրբություններին, անպարտելի՝ սարի վրա, և հրամայող՝ լեռան գագաթին»։

1919 թ. մարտի 3-ին Աստրախանում հայերեն լույս է տեսնում Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Աստրախանի կոմիտեի օրգան «Կարմիր բանվոր» թերթի առաջին համարը։

«Կարմիր բանվոր»-ը կոչված էր պրոպագանդելու հեղափոխության նվաճումները, կոմունիստական կուսակցության ազգային իմաստուն քաղաքականությունը։ «Կուսակցական կյանք», «Ան-

դրկովկասի կյանքից», «Ինչու ենք մենք հարկադրված պատերազմել», «Գաղթականների կյանքից», ահա այն հիմնական մշտական նյութերը, որոնք տեղ էին գտնում «Կարմիր բանվոր» թերթում: Թերթը հրապարակել է Վ. Ի. Լենինի ճառերը, հոդվածները, սովետական իշխանության դեկրետները, կարմիր բանակի քաղաքական վարչության հրամանները, Ս. Մ. Կիրովի, Վ. Վ. Կույբիշևի հոդվածները: Թերթը նկարագրում էր երկրում ստեղծված իրադրությունը, աշխատավորներին կոչ անում՝ համախմբվել բոլշևիկյան կուսակցության շուրջը, եղբայրական օգնության ձեռք մեկնել Անդրկովկասի աշխատավոր մասսաներին:

«Դեպի Բաքու» առաջնորդող հոդվածում թերթը նշել է. «Գարունը նոր կյանքի ազդանշանն է: Արևի ճառագայթները կյանք են տալիս բնությանը և տերևներում գեղեցիկ ներդաշնակություն ստեղծում: Ռուսաստանի բանվորական հեղափոխության երկրորդ գարունը գալիս է նոր շունչ փչելու, նոր եռանդ տալու մաքառող բանվորությանն ու չքավոր գյուղացիությանը: Կարմիր բանակը փառավոր հաղթանակներ է տարել՝ սոցիալիստական Հայրենիքը ազատագրելով թշնամիներից: Մնում է մեր Կովկասը: Միթե՞ մենք Բաքուն չենք վերցնելու... գրում էր թերթը,— Այո, Բաքուն պետք է վերցնենք: Ռուսաստանի բանվորության համար Բաքուն անհրաժեշտ է: Գարունը եկավ, ջրերը բացվեցին, Բաքուն մատչելի դարձավ, ուստի կարմիր մարտիկները արշավելու են դեպի Կովկասի ափերը:

Ժամը հնչել է մեծ մարտնչումի: Բաքվում անհաշիվ կերպով թափված բանվորության կարմիր արյան և մեր հերոս ընկերների հիշատակը հավերժացնելու սրբազան ժամն է, առանց տատանվելու պետք է շարժվել առաջ, դեպի **Բաքու...**

Բաքուն մերն է եղել ու մերն է լինելու»[68]:

«Կարմիր բանվոր»-ը պարբերաբար նյութեր էր արտատպում բոլշևիկյան կենտրոնական և տեղական թերթերից՝ «Պրավդա»-ից, «Իզվեստիա»-ից, «Կարմիր դրոշակ»-ից: Նյութեր են տպագրվել նաև Բաքվի 26 կոմիսարների, Սվերդլովի, Բ. Կնունյանցի հիշատակին նվիրված: Հիշատակության արժանի են Վահան Տերյանի «Անմոռաց ընկեր», «Գայլը» ստեղծագործությունները: «Անմոռաց ընկեր» հոդվածը 1919 թ. սեպտեմբերին տպագրվել է «Կարմիր դրոշակ», «Կարմիր բանվոր» և այլ թերթերում:

---

68 «Կարմիր բանվոր», Աստրախան. 18 ապրիլի 1919 թ.:

«Կարմիր բանվոր»-ը անողոք կերպով մերկացրել է օտարերկրյա իմպերիալիստներին և բուրժուական նացիոնալիստներին, բանվորներին նախազգուշացրել՝ միշտ աչալուրջ և արթուն լինել, երբեք չհավատալ թշնամու կեղծ խոստումներին։ Մերկացնելով ամերիկյան, անգլիական, ֆրանսիական և այլ օտարերկրյա իմպերիալիստների՝ Հայաստանում վարած քաղաքականությունը, թերթը նշում էր, որ իմպերիալիստները հոշոտում են Հայաստանը, սարդի պես ծծում հայ ժողովրդի արյունը։

«Կարմիր դրոշակ»-ը և Հայկական գործերի կոմիսարիատի մամուլը 1918—1920 թթ. պանդուխտ հայերին հույս ու հավատ էին ներշնչում, նրանց հասցնում սովետական իշխանության սոցիալիստական առաջին դեկրետներն ու նվաճումները։ Մամուլը բանվորներին, գյուղացիներին, մտավորականությանը կոչ էր անում կարմիր զորագնդերի հետ միասին օգնության հասնել տանջված ու բազմաչարչար հայ ժողովրդին, օտարերկրյա և նրանց գործակալ դաշնակների ծանր լծից ազատագրել «արյունոտված հայոց երկիրը», հայ ժողովրդին։

Հյուսիսային Կովկասի աշխատավորները ձեռնամուխ էին եղել սոցիալիստական խաղաղ շինարարության։ Ռոստովում, Նոր Նախիջևանում և Հյուսիսային Կովկասի մյուս քաղաքներում ու գյուղերում բոլշևիկյան կազմակերպությունները ակտիվ աշխատանք էին տանում մասսաների կոմունիստական դաստիարակության ուղղությամբ։ Հյուսիսային Կովկասի հայ աշխատավորությունը նույնպես քաղաքական մեծ ակտիվություն էր հանդես բերում։ Գնալով ավելանում էր Ռոստովի և Նոր Նախիջևանի բոլշևիկյան կազմակերպության Հայկական մասնաճյուղի անդամների թիվը, նորանոր ուժեր էին հավաքագրվում հատկապես Մոսկվայից։ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Ռոստով—Նախիջևանի Հայկական մասնաճյուղը ուժեղացնում էր քաղաքական-մասսայական աշխատանքը քաղաքի գործարաններում, հայաբնակ գյուղերում, դպրոցներում և այլուր։

1920 թ. մարտի 3-ին լույս է տեսնում Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության Ռոստով—Նախիջևանի Հայկական մասնաճյուղի օրգան «Բանվորի կռիվ» թերթի[69] առաջին համարը։ Այն կոչված էր հեղափոխության անմահ գաղափարները

---

69 Գլխավոր խմբագիրն էր Ա. Հովհաննիսյանը։

տարածել ոչ միայն Դոնի, այլև Հյուսիսային Կովկասի՝ իրար ետևից սովետականացվող քաղաքների աշխատավորության միջև:

Հյուսիսային Կովկասի, հատկապես Նախիջևանի հայ գյուղացիության համար հասկանալի լինելու նպատակով «Բանվորի կռիվ»-ը ստացված նյութերի որոշ մասը հրապարակում էր բարբառով՝ «Գեղի ղալեթ» խորագրով: Հետագայում բարբառով հրապարակվում է «Խաթիրլիքը» («Զբավորություն») գյուղացիական թերթը[70]:

«Բանվորի կռիվ» թերթի համարներում տպագրված նյութերը պարզ, հասկանալի լեզվով պատմում էին երկրում ստեղծված իրադրության մասին: «Անդրկովկասը բռնկված է» ինֆորմացիայում, որն արտատպված էր «Սովետական Դոն» թերթից, նշվում էր, որ Կովկասում ծավալվում են հեղափոխական շարժումները:

Թերթը նյութեր էր հրապարակել Ռոստովի կոմունիստական առաջին կիրակնօրյակի մասին: Կուսակցության Ռոստովի կոմիտեի և 40-րդ դիվիզիայի քաղաքական մասի փոխադարձ համաձայնությամբ մարտի 7-ին նշանակված կոմունիստական առաջին կիրակնօրյակը Ռոստովում ունի մեծ նշանակություն,— գրում է թերթը,— մեռնում է նախկին ստրկական աշխատանքը, երևան է գալիս նորը, ազատ, կոմունիստականը: Թերթը հետևողականորեն լուսաբանում էր սոցիալիստական մրցության, կոմունիստական առաջին շաբաթօրյակների ընթացքը, խրախուսում առաջավորներին:

«Աշխատանքի շաբաթը» լուրեր էր հրապարակում բանվորների, զինվորների աշխատանքային սխրագործությունների վերաբերյալ:

«Բանվորի կռիվ»-ը ղեկավարվելով կոմունիստական առաջին

---

70 Աշնանը Ռոստովի հայ կոմունիստների մի զգալի մասը, այդ թվում «Բանվորի կռիվը» թերթի խմբագրության շատ աշխատակիցներ, մեկնեցին Անդրկովկաս: Թերթի աշխատանքը որոշ ժամանակ դադարեց, և նրան հաջորդեց «Բանվոր»-ը, որը հրատարակվեց մինչև 1922 թվականը: Մոտ 100 համար լույս տեսնելուց հետո «Բանվոր»-ը նույնպես դադարեց, նրան հաջորդեցին «Մուրճ-մանգաղ» և «Դրոհ» թերթերը: 1905 թ. ամռանը Նոր Նախիջևանում Լուկաշինի (Ս. Սրապիոնյանի) խմբագրությամբ լույս է տեսել «Նոր խոսք» խառնատիպ ժուռնալի չորս համար: «Նոր խոսք»-ն իր առջև խնդիր էր դրել՝ ընթերցողներին ծանոթացնել գիտական սոցիալիզմի հետ, «Հետաքրքրություն զարթնեցնել երիտասարդ ինտելիգենտների մեջ դեպի հասարակական գիտությունները ընդհանրապես և դեպի մարքսիզմը մասնավորապես» («Նոր խոսք», № 1, էջ 2, 1905, հուլիս): «Նոր խոսք»-ը միաժամանակ մերկացրել է աշակերտական նացիոնալիստական «Աղավնի» թերթին: «Նոր խոսք»-ն ունեցել է մարքսիստական ուղղություն:

շարաթօրյակների մասին Վ. Ի. Լենինի տված գնահատականով, ամեն կերպ քաջալերում էր մասսաների ստեղծագործական նախաձեռնությունն ու ձեռներեցությունը։ Լրագիրը հրատարակվում էր Հայաստանից հեռու, բայց այդ չէր խանգարում նրան լուսաբանելու հայ աշխատավորների կյանքը, բանվորների և գյուղացիների պայքարը, մերկացնելու անգլո-ամերիկյան, ֆրանսիական և թուրքական իմպերիալիստների կողմից Կովկասում վարած զավթողական նենգ քաղաքականությունը։ «Բանվորի կռիվ»-ը դասակարգային պայքարի էր մղում հայ աշխատավորությանը, լուսավորում նրա ուղին մեծ Հոկտեմբերի լույսով։

Թերթը մեծ տեղ էր տալիս երիտասարդության կոմունիստական դաստիարակության հարցերին, երիտասարդ բանվորներին ու գյուղացիներին օգնում էր մտնել Կոմունիստական Երիտասարդական Միության շարքերը։ «Ուժը միության մեջ է,— ասում էր թերթը,— երիտասարդներ, մտեք Երիտասարդական Կոմունիստական Միության մեջ, շարունակեցեք ձեր հայրերի սկսած գործը, կառուցեցեք կոմունիզմը»[71]։

«Բանվորի կռիվ»-ը մայիսմեկյան համարում ողջունել է Ադրբեջանում սովետական կարգերի հաղթանակը, հրապարակել Ադրբեջանի Ռազմա-հեղափոխական կոմիտեի առաջին հաղորդումները։

1920—1921 թթ. Կրասնոդարում լույս է տեսնում Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության Կուբանո-Չեռնոմորյան քարտուղարությանը կից Արևելյան ազգությունների բաժնի օրգան (38-րդ համարից սկսած այն լույս էր տեսնում որպես ՌԿ(բ)Կ Եկատերինոդարի Հայկական սեկցիայի օրգան) «Կարմիր աստղ» թերթը[72]։ Թերթին աշխատակցում էին Արսեն Մուսայելյանը[73], Վաղարշակ Տեր-Պողոսյանը[74], Բագրատ Մալումյանը, Արշավիր Բաբայանը, Հայկ

71 «Բանվորի կռիվ», № 4, 16 մարտի 1920 թ.։

72 1920 թ. հրատարակվել է «Կարմիր աստղ»-ի 138 համար. 1921 թվականին՝ 100 համար.

73 Արսեն Մուսայելյանը Հայաստանում 1920 թ. մայիսյան ապստամբության հերոս Սարգիս Մուսայելյանի եղբայրն է, որը նույնպես աչքի ընկնող հեղափոխական էր։ Զոհվել է Զանգեզուրում՝ դաշնակցական ավանտյուրայի դեմ մղված կռիվների ժամանակ։

74 Վաղարշակ Տեր-Պողոսյանը ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Վաղարշ Վաղարշյանն է։

Պառաձյանը և ուրիշներ։ «Կարմիր աստղ»-ը[75] իր առջև խնդիր էր դրել քաղաքացիական կռիվների տարիներին համախմբել աշխատավորության ուժերը, տարագիր հայությանը պարզաբանել կոմունիստական կուսակցության և Ռուսաստանի երիտասարդ սովետական հանրապետության քաղաքականությունը։ «Կարմիր աստղ»-ը ուղի էր ցույց տալիս հայ աշխատավորությանը, որը 1920 թ. ապստամբության դրոշ էր պարզել դաշնակցականների և օտարերկրյա զավթիչների կործանարար քաղաքականության դեմ։ Դիմելով Հայաստանի աշխատավորներին՝ թերթը գրել է, որ հայերը «...անխուսափելիորեն եղբայրական ձեռք պիտի մեկնեն Խորհրդային Ռուսաստանին և միմիայն նրան, որովհետև նա է, որ պաշտպանում է բանվորների և գյուղացիների շահերը, նա է, որ կռվում է միջազգային ավազակ իմպերիալիստների դեմ, նրան են հարում Արևելքի բոլոր ճնշված ժողովուրդները և Արևմտյան Եվրոպայի հեղափոխական պրոլետարիատը»[76]։

1920 թ. Ղուկասյանում (Աշխաբադ) լույս տեսավ «Կոչնակ» բոլշևիկյան թերթը, որը Անդրկասպյան Երկրի հեղկոմի օրգանն էր։

Բոլշևիկյան հայ մամուլի զարգացման գործում խոշոր դեր կատարեց Հայկական գործերի կոմիսարիատը։ Միայն 1918 թ. յոթ ամսվա ընթացքում Հայկական գործերի կոմիսարիատը հրատարակել է 26 անուն, իսկ 1918—1920 թթ.՝ 80 անուն գիրք, 422.000 տպաքանակով[77]։

Մարքսիստական այդ աշխատությունները օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում լուրջ դեր կատարեցին հայ աշխատավորությանը դաստիարակելու, բուրժուա-նացիոնալիստական տարրերին մերկացնելու, բանվորների ու գյուղացիների, աշխատավոր մասսաների մեջ կոմունիստական գաղափարներ սերմանելու գործում։ Թարգմանվեցին և Մոսկվայում հրատարակվեցին[78] Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», Ֆ. Էնգելսի «Հեղափոխությունը և հակահեղափոխությունը Գերմանիայում», «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության

---

75 1918—1920 թթ. գրող Ներսես Բարգոմյանի խմբագրությամբ Եկատերինոդարում հրատարակվել է «Արձագանք» գրական-հասարակական թերթը։

76 «Կարմիր աստղ», Կրասնոդար, № 19, 21 հոկտեմբերի 1920 թ.։

77 ЦГАОР, ф. 13—18, д. 630, л. 148.

78 Հայկական գործերի կոմիսարիատի Մոսկվայի ապարանի վարիչը բանվոր Շավարշ Դարագաշն էր, հրատարակչական աշխատանքներով զբաղվում էր նրա եղբայրը՝ Եր. Դարագաշյանը։

ծագումը», Վ. Ի. Լենինի՝ «Նամակ ամերիկյան բանվորներին». «Կարլ Մարքս», «Ռուսաստանի քաղաքական կուսակցությունները և պրոլետարիատի տակտիկան», «Երրորդ Ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ», «Ի՞նչպես պետք է կոչվի մեր կուսակցությունը», «Պետություն և հեղափոխություն», «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա» և այլ աշխատություններ։ Հայ մարքսիստներից նույն ժամանակաշրջանում հրատարակվեցին 8 անուն բրոշյուրներ, այդ թվում՝ Վ. Ավանեսովի՝ «Հայ փախստականներին», Ալ. Մյասնիկյանի՝ «Ազգային հարցի մասին», Վ. Տերյանի՝ «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» և այլն։

Հայկական գործերի կոմիսարիատը հիմք դրեց հայերեն մարքսիստական, սովետական գրականության և մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների աշխատությունների հայերեն հրատարակությունների գործին։

6

Ծանոթ լինելով երիտասարդ սովետական Ռուսաստանի ազգային քաղաքականությանը, այս դեպքում «Թուրքահայաստանի» մասին նախապատրաստվող դեկրետի նպատակներին, Թիֆլիսում աշխատող մի խումբ հայ կոմունիստներ, Անդրկովկասի բոլշևիկների I համագումարից հետո, 1917 թ. նոյեմբերին, ձեռնարկում են Արևմտահայաստանի համար առանձին սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ստեղծմանը[79]։

Այդ նպատակով նրանք գումարում են նիստեր, ստեղծում են 9 հոգուց կազմված կոմիտե (7-ը ծնվել էին Արևմտահայաստանում), որի մեջ էին Հայկ Հովսեփյանը (Լիվի), Գրիգոր Վարդանյանը (Գրիվարդ), Վահան Երեմյանը, Գուրգեն Հայկունին, Գաբրիել Կարագուլյանը և ուրիշներ։ Նախապատրաստական որոշ աշխատանքներից հետո Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության ներկայացուցիչ Գ. Հայկունին, որն այն ժամանակ աշխատում էր Թիֆլիսում, Արևմտահայ խորհրդի բյուրոյում, մեկնում է Պետերբուրգ[80]։ Պրոլետարական օրգանում նա արժանանում

79 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի արխիվ, ֆ. 17, ց. 4, պ. մ. 19, թ. 21. «Պրավդա», № 54, 11 մարտի 1919 թ.։

80 Արևմտահայ խորհուրդը և նրա բյուրոն ստեղծվել են 1917 թ. մայիսի 2-ից մինչև 9-ը Երևանում գումարված «Թուրքահայերի» առաջին համագումա-

է Ազգությունների գործերի կոմիսարիատի աշխատակիցներ, բոլշևիկներ Վարլամ Ավանեսովի (Սուրեն Մարտիրոսյան) և Վահան Տերյանի ջերմ ընդունելությանը, հնարավորություն է ստանում մոտիկից ծանոթանալու կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությանն ու «Թուրքահայաստանի մասին» պատրաստվող դեկրետի բովանդակությանը: Հենց այդ օրերին էլ (գուցե մինչև այդ) Գ. Հայկունու մոտ միտք է ծագում ՌԿ(բ)Կ Կենտկոմին զեկուցել Հայաստանի (Արևմտյան Հայաստանի— Խ. Բ.) սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն ստեղծելու մասին: Դա պատմական մի այնպիսի ժամանակաշրջան էր, երբ Վ. Ի. Լենինը տիտանական աշխատանք էր ծավալում III Ինտերնացիոնալի հիմնադրման համար: Մոմենտը բարենպաստ էր: Եվ ահա Գ. Հայկունին հանդիպումներ է ունենում ՌԿ(բ)Կ Կենտկոմի և սովետական կառավարության առանձին ղեկավար աշխատողների հետ:

1918 թ. հունվարի վերջերին, կազմակերպական կոմիտեն ստանալով ՌԿ(բ)Կ Կենտկոմի համաձայնությունը և անհրաժեշտ դրամական միջոցներ (30.000 ռուբլի), ձեռնամուխ է լինում հետագա աշխատանքների ծավալմանը[81]: Քանի որ Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսներից հետո արդեն սկզբունքորեն որոշվել էր, որ կուսակցության առաջիկա համագումարում պետք է ՌՍԴԲԿ-ն վերանվանվի ՌԿ(բ)Կ, ապա Արևմտյան Հայաստանի համար ստեղծված կուսակցական կազմակերպությունը կոչվեց «Հայաստանի կոմունիստական կուսակցություն»[82]:

բում: Բոլշևիկները համագումարին չէին մասնակցում: Նրանում ակտիվ դեր էին կատարում դաշնակցականները, հնչակյանները, ինչպես նաև ռամկավարները, տե՛ս «Երևան», № 235, 236, 237 և 243, հոկտեմբեր, 1962. Գ. Հայկունու «Անմոռանալի հանդիպումներ Իլյիչի հետ» հուշերը:

81 Տե՛ս «Պրավդա», № 54, 11 մարտի 1919 թ.: Նաև՝ ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի արխիվ, Վ. Ի. Լենինին Գ. Վարդանյանի գրած «Անդրկովկասի կամ Հայաստանի դրությունը Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո» զեկուցագիրը:

82 Ա. Մռավյան. Ե՞րբ և ի՞նչպես է հիմնադրվել Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը. «Խորհրդային Հայաստան» 114, 30 մայիսի և № 116, 1 հունիսի 1923 թ.: Նաև՝ «ընկեր Մռավյանի հոդվածների, հիշողությունների ժողովածու», Երևան, 1930, էջ 37—41: Ն. Ամիրխանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920), Մոսկվա, 1926, էջ 21: Ա. Կասյան, Սպեցիֆիկները և սպեցիֆիզմը, Զակկնիգա, Թիֆլիս, 1928, էջ 19—20: *Б. Борьян*, Армения, международная дипломатия и СССР. М.—Л., 1929. ч. II. стр. 94—95. Գ. Ղարիբջանյան, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917—1918 թթ.: Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 7, 1948,

«Հայաստանի կոմունիստական կուսակցությունը» քաղաքական հորիզոնում առաջին անգամ երևաց Թիֆլիսում, 1918 թ. փետրվարին, և իր գոյությունը որպես էքստերիտորիալ կոմունիստական կազմակերպություն պահպանեց մինչև 1920 թ. կեսերը: 1918 թ. մարտին ձևավորվում է «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ժամանակավոր Կենտրոնական կոմիտեն, որի կազմում մտնում էին Գ. Վարդանյանը, Վ. Երեմյանը, Հ. Հովսեփյանը, Գ. Հայկունին, Գ. Կարապետյանը, Մ. Սահակյանը: Որոշվում է հրատարակել մարքսիստական թերթ և գրականություն: 1918 թ. մարտի 10-ից մինչև մարտի 29-ը Թիֆլիսում հրատարակվում էր «Կարմիր օրեր»-ը: Ընդամենը լույս է տեսել 14 համար: Նրան փոխարինել է «Կարմիր դրոշակ»-ը (1918 թ. ապրիլի 14-ից մինչև 27-ը՝ ընդամենը 11 համար): Թերթին ակտիվորեն աշխատակցել են Գ. Վարդանյանը (Գրիվարդ) Վ. Երեմյանը (Վ. Մահիկյան), Մ. Սահակյանը, Գ. Հայկունին, Ն. Գարագաշը (Ն. Լուսինյան), Գ. Միլոյանը, Դ. Դզնունին, Վ. Թաթիկյանը, Ջ. Աշրաֆյանը (Ջարմայր), Հովս. Տեր-Վարդանյանը և ուրիշներ: Երկու օրգաններն էլ լավ ընդունելություն գտան հայ աշխատավորության, մանավորապես գաղթականության շրջանում:

էջ 33—34: **Նույնի՝** *Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների պայքարը սովետական իշխանության հաղթանակի համար, Երևան, 1955:* *С. Х. Карапетян,* Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской революции в Армении, Ереван, 1959. **Գ. Խաճակյան,** *Սովետական Հայաստան, Երևան, 1960,* **Խ. Բարսեղյան,** *Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմակերպական ձևավորման մասին «Լենինյան ուղիով», № 7, 1960, էջ 28—46:* **Նույնի՝** *Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմակերպական ձևավորման պատմությունից, Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 11, 1960, էջ 51—54,* **Նույնի՝** *Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը, Երևան, 1965: Հայաստանի կոմունիստական պարտիայի ուրվագծեր, Երևան, 1963, 1967:* *С. А. Товмасян,* О некоторых вопросах научного освещения истории Коммунистической партии Армении, «Вопросы истории КПСС», № 5, 1960; *Г. Д. Обичкин, Г. Шаншиев, Л. Шаумян,* Некоторые вопросы истории Коммунистической партии Армении, «Коммунист», № 6, 1962, М., *Ц. П. Агаян,* Великий Октябрь и борьба трудящихся . Армении за победу Советской власти, Ереван, 1962; *его же,* Вековая дружба народов Закавказья, Ереван, ч. II, 1972; *А. Микоян,* «Дорогой борьбы», М., 1971, *Г. Б. Гарибджанян, Г. К. Жвания, Х. А. Барсегян,* Под знаменем пролетарского интернационализма и дружба народов *(Բանբեր Հայաստանի արխիվների, № 3* (30), 1971, 3 (31); *Г. А. Галоян,* Рабочие движения и национальный вопрос в Закавказье, 1900—1922. Ереван, 1968.

Մերկացնելով բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հետադիմական քաղաքականությունն ու գործելակերպը, նրանք հայ աշխատավորության մեջ պրոպագանդում էին մարքս-լենինյան ուսմունքը, տարածում սովետական իշխանության, Հոկտեմբերյան հեղափոխության ազատարար գաղափարները, երկրամասի պրոլետարիատին և աշխատավոր գյուղացիությանը կոչ անում՝ տեղում տապալել բուրժուազիայի տիրապետությունը և հաստատել սովետական կարգեր։

«Կարմիր օրեր»-ի առաջին համարում լույս տեսավ «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» խորագրով (կազմկոմիտեի) դեկլարացիան, որի մեջ խոսվում էր նորաստեղծ կազմակերպության նպատակների ու խնդիրների մասին։ Տալով տվյալ ժամանակաշրջանի բնութագիրը, դեկլարացիան ընդգծում էր, որ կոմունիստական (սոցիալիստական) կուսակցությունների բեղմնավոր աշխատանքի շնորհիվ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» լոզունգը հնչում է աշխարհով մեկ, միջազգային պրոլետարիատի հաղթական դրոշի տակ համախմբելով նորանոր գնդեր, որոնք վերջին կռիվն են մղում մարդկության թշնամիների՝ իմպերիալիստների դեմ։ «Ռուսաստանի Հոկտեմբերյան հեղափոխությունը,— ասված է դեկլարացիայում,— փառավոր հաղթանակներով ամրապնդված բանվորա-գյուղացիական և զինվորական խորհուրդների միակ նպատակահարմար և անսասան իշխանությունը, դուրս է եկել իր ընդարձակ շրջաններից և ստանում է արդեն համաշխարհային պրոլետարական հեղափոխության բնույթ։

Ռուսաստանի աշխատավոր դասակարգերի այդ մեծ հեղափոխությունը հայտարարել է շիտակ, ի լուր աշխարհի, բոլոր ազգությունների ինքնորոշման իրավունքն ընդհանրապես և Հայաստանի ինքնորոշումը մասնավորապես»[83]։ Այնուհետև դեկլարացիան ազդարարում էր, թե պատմական այս ծանր ժամանակներում «հրացանների որոտի և համաշխարհային հեղափոխության հրդեհի մեջ ծնունդ է առնում «Հայաստանի կոմունիստական կուսակցություն-ը, միջազգային սոցիալիստական բանվորական միության, երրորդ ինտերնացիոնալի մի նոր մասնիկը... Բերելով իր հետ միջազգային պրոլետարիատի ընկերական ողջույնները և ունենալով իր թիկունքում Ռուսաստանի հաղթական բանվորությունը, որպես զորավիգ, որպես հավատարիմ հենարան «Հայաստանի կոմունիստական կու-

83 «Կարմիր օրեր», № 1, 10 մարտի (25 փետրվարի) 1918 թ., Թիֆլիս։

ակցության»-ը ժողովրդական զանգվածների փրկության գործը տանելու է հեղափոխական, սոցիալիստական շարժումների և մասսայական ըմբոստացումների ուղիով»[84]:

«Հայաստանի կոմունիստական կուսակցության» դեկլարացիան ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Կեցցե Հայաստանի ինքնորոշումը: Հանուն Հայաստանի ինքնորոշման, ահա այն բաղձալի նպատակը, որի համար ծնունդ է առել և պայքարելու է «Հայաստանի կոմունիստական կուսակցություն»-ը:

Այսպես էին հասկանում իրենց խնդիրները «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ղեկավարները: Նրանք պայքարում էին Հայաստանի ինքնորոշման համար: 1918 թ. ապրիլի 8-ին այդ կազմակերպության Թիֆլիսի քաղաքային ժողովը քննարկելով ընթացիկ դրության հարցը, ընդունեց բանաձև, որի մեջ ասված էր. «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը... իր զենքը ձեռքից վայր չի դնի, մինչև որ Ռուսաստանի հեղափոխական պրոլետարիատի աջակցությամբ Հայաստանի բոլոր ճնշված ժողովուրդները ձեռք չբերեն ինքնորոշման լիակատար իրավունք»[85]:

«Կարմիր օրեր» թերթում որոշակի տեղ էր տրվում «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիա»-ի և «Թուրքահայաստանի» մասին դեկրետի պրոպագանդային: Թերթը ընդգծում էր, որ «Հայաստանի ժողովրդի ազատագրական հարցի հաջող լուծումը ամբողջովին կախված է Ռուսաստանի պրոլետարական հեղափոխության հաղթանակից, որ Հայաստանն իր հեղափոխական կռվում միայն այն ժամանակ կհաղթանակի, երբ կչախչախվի անդրկովկասյան հակահեղափոխությունը...»[86]:

«Կարմիր օրեր»-ում տպագրվեցին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի առաջին բաժինները, ազգային հարցի վերաբերյալ Վ. Ի. Լենինի՝ Ստ. Շահումյանին գրած նշանավոր նամակը, Վ. Ի. Լենինի՝ «Ի՞նչ պետք է լինի մեր կուսակցության անունը» և այլ աշխատություններ: «Կարմիր օրեր»-ը և «Կարմիր դրոշակ»-ը պահանջում էին հետևել սովետական Ռուսաստանի և կարմիր բանակի օրինակին, Անդրկովկասում տապալել բուրժուազիայի իշխանությունը և հաստատել սովետական կարգեր: Իր առաջին համարում թերթը փառաբանելով հեղա-

---

84 Նույն տեղում:

85 «Կարմիր դրոշակ», № 8, 24 ապրիլի (11), 1918 թ.:

86 Տե՛ս «Կարմիր օրեր», № 10, 24 մարտի 1918 թ.:

փոխություն կատարած ռուս ժողովրդին, նշում էր, որ նա օգնության ձեռք է մեկնում հարստահարված ոչ ռուս ժողովուրդներին, որ Հոկտեմբերի շնորհիվ «Ազատություն, Հավասարություն և Եղբայրություն վեհ նշանաբանները սովետների երկրում այլևս դատարկ հնչյուններ չեն»։

1918 թ. փետրվար-մարտ ամիսներին «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ղեկավարությունը, բացի հրատարակչական գործունեությունից, Արևմտյան Հայաստանից Կովկաս գաղթած հայերի մեջ քաղաքական-պրոպագանդիստական աշխատանք ծավալեց։ Դա հիմնականում կատարվում էր Թիֆլիսում։ Օդեսայից, Սևաստոպոլից և Ղրիմի այլ վայրերից Կովկաս եկած ավելի քան 2500 զինված հայ կամավորների, որոնց ճնշող մեծամասնությունը արևմտահայեր էին, «Հայաստանի կոմունիստական կուսակցություն»-ը պահում էր իր ազդեցության տակ՝ նրանց հեռու պահելով դաշնակցության և նացիոնալիստական մյուս կազմակերպությունների կողմից ավանտյուրիստական նպատակներով հրահրվող գործողություններից։ «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ղեկավարները, ագիտատորները զորանոցներում կազմակերպում էին միտինգներ և «նրանց նախապատրաստում տեղական իշխանության և սեյմի տապալման համար»[87]։

«Հայաստանի կոմունիստական կուսակցությունը», չնայած իր բարի նպատակներին, չկարողացավ խոր արմատներ ձգել հայ իրականության մեջ, մասնավորապես Անդրկովկասի բանվորների և աշխատավոր զանգվածների շրջանում[88]։

«Հայաստանի կոմունիստական կուսակցություն»-ը ինչպես Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, աշխատում էր լարված պայմաններում, դաժան հալածանքի էր ենթարկվում հակահեղափոխական իշխանությունների կողմից։ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը 1918 թ. մայիսին հրաման է արձակում «Կարմիր դրոշակ»-ը փակելու և նրա աշխատակիցներին (փաստորեն «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ղեկավարությանը) ձերբակալելու վերաբերյալ։

---

87 Տե՛ս Գ. Վարդանյանի 1919 թ. զեկուցագիրը Վ. Ի. Լենինին։ ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 51, թ. 1—10։

88 Տե՛ս «Կարմիր օրեր», № 1, 10 մարտի 1918 թ., № 4, 17 մարտի 1918 թ. և այլն: Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 4 (общ.) ед. хр. 19, л. 14, 14 об., 15 и др.

«Հայաստանի կոմունիստական կուսակցության» Կենտկոմը տեղափոխվում է Հյուսիսային Կովկաս, նրա գործունեությունը ժամանակավորապես դադարում է, և դրանով էլ ավարտվում նրանց գործունեության առաջին շրջանը։ Ութամսյա դադարից հետո, 1919 թ. սկզբներին «Հայաստանի կոմունիստական կուսակցության» անդամներ Հ. Հովսեփյանը, Գ. Վարդանյանը, Գ. Հայկունին, Վ. Երեմյանը և ուրիշներ Հյուսիսային Կովկասից, սովետական Ռուսաստանի զանազան վայրերից և կարմիր բանակից հավաքվում են Մոսկվա, որտեղ իբրև ՌԿ(բ)Կ անդամներ պատասխանատու աշխատանք էին կատարում կուսակցական-սովետական հիմնարկներում։ «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ղեկավարները և նրա անդամների մեծ մասը ՌԿ(բ)Կ անդամներ էին և միաժամանակ աշխատում էին երկու կազմակերպությունում։

Տեղավորվելով Հայկական գործերի կոմիսարիատում, Վ. Ավանեսովի և Վ. Տերյանի ղեկավարությամբ նրանք հեղափոխական աշխատանք են կատարում հայ գաղթականության շրջանում, պրոպագանդում սովետական իշխանության ազգային քաղաքականությունը։ Հայկական գործերի կոմիսարիատում, բացի Վ. Ավանեսովից և Վ. Տերյանից, արդյունավետ աշխատանք են կատարել Պ. Մակինցյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ս. Լուկաշինը, Արփենիկ Նազարբեկյանը, Ե. Դարագաշը, Հ. Կոստանյանը, Հ. Հովսեփյանը, Հ. Գյուլիքևխյանը, Ա. Խումարյանը, Ա. Կարինյանը և ուրիշներ։

Հայկական գործերի կոմիսարիատի աշխատանքները ծավալվել էին արդեն, երբ Կոմիսարիատ փոխադրվեցին «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ղեկավարները։ Մոսկվայում Գ. Հայկունին նշանակվում է Հայկական գործերի կոմիսարիատի տեղակալ, Հ. Հովսեփյանը՝ քարտուղար, իսկ հետո ազգային փոքրամասնությունների լուսավորության բաժնի ենթաբաժնի վարիչ և Հայկական ինստիտուտի կոմիսար, Վ. Երեմյանը՝ լիազոր Ուկրաինայում, Ա. Կարինյանը՝ լիազոր հրատարակչությունում և այդ «Կարմիր դրոշակ»-ի (Մոսկվա) խմբագիր։ Գ. Վարդանյանի հիմնական աշխատանքը նույնպես կենտրոնացած էր Հայկական գործերի կոմիսարիատում։

«Հայաստանի կոմունիստական կուսակցության» ղեկավարությունը իր գործունեության երկրորդ շրջանում (1919—1920) փաստորեն ձուլվել էր Հայկական գործերի կոմիսարիատի հետ։ Այլևս խոսք չկար Արևմտյան Հայաստանում գործունեություն ծավալելու մասին, իրադրությունը փոխվել էր։ «Հայաստանի կոմունիստա-

կան կուսակցության» աշխատանքը կենտրոնացվում է հայ գաղթականների շրջանում: 1919 թ. մայիսին Մոսկվայում ստեղծվում է «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ժամանակավոր ղեկավար կենտրոն[89], որն իր առջև խնդիր է դնում ի մի հավաքել և կուսակցական խմբերի մեջ միավորել հայ կոմունիստներին, պրոպագանդա մղելու նպատակով մարդիկ ուղարկել Հայաստան, գրականություն ու թերթեր հրատարակել՝ գաղթական մասսաների մեջ տարածելու և Անդրկովկասի տարբեր շրջաններն ուղարկելու համար: Ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքներ են կատարվում սովետական Ռուսաստանի քաղաքներում ցրված հայ գաղթականների մեջ: Այդ նպատակով 1919 թ. Հ. Հովսեփյանը գործուղվում է Սարատով, Վ. Երեմյանը՝ Աստրախան, Ս. Կարինյանը՝ Ուկրաինա (Խարկով, Կիև և Օդեսա), Գ. Հայկունին՝ Պետրոգրադ: Ուկրաինայում գտնվող հայ գաղթականների շրջանում ագիտացիոն աշխատանք են ծավալում Ի. Մարտիրոսյանը (Վիննիցա, Հարավ-արևմտյան ռազմաճակատ), Գ. Տեր-Սահակյանը, Կ. Տեր-Կարապետյանը (Խարկով), Հ. Կոստանյանը, Գ. Աբովյանը (Ղրիմ): Հայ կոմունիստների ցուցակագրում է անցկացվում Մոսկվայում, Պետրոգրադում, Սարատովում, Աստրախանում, Ցարիցինում, Խարկովում, Կիևում, Օդեսայում, Սևաստոպոլում, Սիմֆերոպոլում, Յալթայում[90]:

Հայկական գործերի կոմիսարիատի հետ միասին «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ղեկավարությունը հրատարակում է մոտ 40 անուն գիրք, այդ թվում՝ ՌԿ(բ)Կ ծրագիրը, Վ. Ի. Լենինի «Թեզիսներ բուրժուական և պրոլետարական դեմոկրատիայի մասին», «Երրորդ ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ», «Քաղաքական կուսակցությունները», «Ի՞նչպես պետք է կոչվի մեր կուսակցությունը», Վ. Լիբկնեխտի՝ «Սարդեր և ճանճեր», «Երրորդ ինտերնացիոնալի պլատֆորմը» և այլն:

1919 թ. մայիսի մեկից Մոսկվայում վերսկսվում է «Հայաստանի կոմունիստական կուսակցության» Կենտկոմի օրգան «Կարմիր դրոշակ»-ի հրատարակությունը: Այն խմբագրում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի ներկայացուցիչ Ս. Կարինյանը: Լույս է տեսել ընդամենը 16 համար:

---

89 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 4, ед. хр. 19, л. 9.

90 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17, оп. 4, ед. хр. 19, л. 10; ЦГАОР Л., ф. 75, ед. хр. 109, л. 28.

Թերթը բացվում է «Հայաստանի կոմունիստական կուսակցության» հայտարարությամբ: Նրա հիմնական բովանդակությունը Հայաստանի ինքնորոշման գաղափարի իրականացման համար տարվող պայքարի կոչն էր: Թերթը մերկացնում էր օտարերկրյա իմպերիալիստական զավթիչներին, անգլո-ամերիկյան և ֆրանսիական իմպերիալիստների զավթողական քաղաքականությունը Անդրկովկասում և Հայաստանում: Այստեղ տպագրվել են Վ. Ի. Լենինի «Երրորդ ինտերնացիոնալը ու նրա տեղը պատմության մեջ» աշխատությունը, «Երրորդ կոմունիստական ինտերնացիոնալի կոչը»... և այլ նյութեր: Թերթի երկրորդ համարը նվիրված էր Ստ. Շահումյանի, իսկ 16-րդ համարը՝ Բաքվի 26 կոմիսարների հիշատակին: Գ. Հայկունու «Բաքվի պրոլետարիատի հրաշամանուկը», Վահան Տերյանի «Անմոռաց ընկեր...», «Երեք հանդիպում», «Գազել», Աշ. Հովհաննիսյանի «Ստ. Շահումյանի տեղը հայ բանվորական շարժման մեջ», Ս. Մարտիկյանի «Սիրելի Ստեփանի հետ վերջին անգամ», Ա. Աթաբեկյանի «Ստ. Շահումյանը որպես ժողովրդականացնող թեորետիկ և հեղափոխական մարքսիզմը Կովկասի պրոլետարիատի մեջ կիրառող» և այլ հոդվածներում լուսաբանվում էր Ստ. Շահումյանի կյանքն ու հեղափոխական գործունեությունը:

«Ո՛չ մի անուն այնպիսի պայծառ ու վառ լուսապսակով չի շրջապատված,— ասել է Վահան Տերյանը,— ո՛չ մի անուն այնքա՛ն մրրկալի հուզում, այնպի՛սի այրող կսկիծ, այնքա՛ն անսահման քնքշություն ու սեր չի հարուցելու կովկասյան պրոլետարիատի կրծքում, ինչպես Ստեփան Շահումյանի անունը: Նա պրոլետարիատի սիրելին էր»[91]:

«Կարմիր դրոշակ»-ը մարքսիստական հայ պարբերական մամուլի լավագույն օրգաններից է: Այն մարտական հրապարակախոսության օրինակ է տվել: Նրա էջերում են հրապարակվել Գ. Հայկունու «Պրոլետարական հեղափոխությունը և Հայաստանի կոմունիստական կուսակցությունը», «Կոմունիզմ և Արմենիա», Ա. Կարինյանի՝ «Անդրկովկասի արդի կացությունը», «Անկախ Հայաստան», Բ. Բորյանի՝ «Վերսալյան խաղաղությունը, Հայաստանը և հայերի ապագան» և այլ հոդվածներ[92]:

---

91 «Կարմիր դրոշակ», № 2, 25 մայիսի 1919 թ.:

92 Տե՛ս «Կարմիր դրոշակ»-ի 1919 թ. մայիս-օգոստոսյան համարները: Տե՛ս նաև՝ Խ. Բարսեղյան. Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, 1900—1920, Երևան, 1959, էջ 191—195:

«Կարմիր դրոշակ»-ը «Զգույշ, խաբում են ձեզ ընկերներ» հոդվածում մերկացրել է անգլո-ամերիկյան զավթիչների ոճրագործությունները Հայաստանում: «Ամերիկա-անգլիական իմպերիալիստները ոչ մի կարիք չունեն և չունեին մտածելու, հոգ տանելու Վանի, Բիթլիսի, Մուշի, Տիգրանակերտի, Երևանի և այլ տեղերի հայերին, քրդերին և թուրքերին (աշխատավոր մասսաներին) կերակրելու, հագցնելու և բուժելու մասին,— ասված է այդ հոդվածում: Ամերիկյան իմպերիալիստները՝ այդ բոլոր խաբեբաները եկել են Հայաստան հայ, քուրդ, թուրք, ասորի, հույն աշխատավոր մասսաներին վերջնականապես կործանելու, նրանց ավերակների վրա կանգնելու՝ բուրժուազիայի շահերի պաշտպան»[93]: Թերթը մի այլ հոդվածում ցույց է տալիս, որ Վիլսոնը, Կլեմանսոն, Լոյդ Ջորջը, անկարող գտնվելով կանխել բանվորա-գյուղացիական հեղափոխական շարժումների վերելքը, գայլի նման պատառոտեցին Անդրկովկասի աշխատավորությանը և այժմ քերթում են ջոկ-ջոկ»[94]:

«Կարմիր դրոշակ»-ը «Հայաստանի կոմունիստական կուսակցության» մյուս տպագիր օրգանների օրինակով պրոպագանդում էր սովետական իշխանության առաջին դեկրետները, հայկական գործերի կոմիսարիատի միջոցառումները, պանդուխտ հայերին հույս ու հավատ ներշնչում: Թերթը հայ աշխատավոր զանգվածներին կոչ էր անում կարմիր զորագնդերի հետ միասին օգնության հասնել տանջված ու բազմաչարչար հայ ժողովրդին:

Անուրանալի են «Կարմիր դրոշակ»-ի և նրա շուրջը համախմբված հրապարակախոսների մատուցած ծառայությունները հայ աշխատավորության գաղափարական դաստիարակության գործում[95]:

ՌԿ(բ)Կ Կենտկոմի օգնությամբ Մոսկվայում 1919 թ. ամռանը ստեղծվում է Ստ. Շահումյանի անվան ակումբ, որտեղ զեկուցումներով հանդես էին գալիս Վ. Ավանեսովը, Ա. Ենուկիձեն, Ա. Աթաբեկյանը, Ա. Կարինյանը և ուրիշներ*:

1919 թ. մարտի սկզբներին «Հայաստանի կոմունիստական կու-

93 «Կարմիր դրոշակ», № 3, 1919:

94 «Կարմիր դրոշակ», № 5, 1919:

95 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 27. оп. 4, ед. хр. 19.

* ՌԿ(բ)Կ Կենտկոմը 1919 թ. հուլիսի 25-ին Ստ. Շահումյանի անվան ակումբի ֆոնդին տրամադրել է 50.000 ռուբլի (տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1 (Վ. Ի. Լենին), ՌԿ(բ)Կ Կենտկոմին Վ. Ավանեսովի ուղարկած զեկուցագիրը (հուլիս, 1919 թ.), տե՛ս նաև՝ ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 17. оп. 4 (общ.), ед. хр. 19, л. 14—15.

ակցության» ներկայացուցիչ Գ. Հայկունին վճռական ձայնի իրավունքով մասնակցում է երրորդ, կոմունիստական ինտերնացիոնալի առաջին կոնգրեսին[96]: Նա գրավոր զեկուցագիր է ներկայացնում կոնգրեսին Հայաստանի կոմունիստական կուսակցության մեկ տարվա գործունեության մասին, որը տպագրվել է «Պրավդա»-ի 1919 թ. մարտի 11-ի համարում: Զեկուցագրում Գ. Հայկունին վերլուծում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իրադրությունը, համառոտակի շարադրում «Հայաստանի կոմունիստական կուսակցության» գործունեությունը, մերկացնում Կովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների՝ մենշևիկների, դաշնակցականների և մուսավաթիստների հակահեղափոխական, դավաճանական քաղաքականությունը, ոչնչացնող քննադատության ենթարկելով մենշևիկներ Ժորդանիային, Գեգեչկորուն, Չխենկելուն, Ծերեթելուն, դաշնակ պարագլուխներ Խատիսովին, Քաջազնունուն և նրանց համախոհներին:

Հանրագումարի բերելով «Հայաստանի կոմունիստական կուսակցության» մեկ տարվա գործունեությունը, ցույց է տրվում նացիոնալիզմի դեմ մղած պայքարում նրա կատարած դերը, երրորդ ինտերնացիոնալին նրա հավատարմությունը[97]: Հայաստանի կոմունիստական կուսակցության ներկայացուցչի մասնակցությունը III ինտերնացիոնալի I կոնգրեսին, ի թիվս 17 պատվիրակությունների ներկայացուցիչների՝ «Կոմունիստական ինտերնացիոնալի մանիֆեստը ամբողջ աշխարհի աշխատավորներին» նշանավոր փաստաթղթի տակ Գ. Հայկունու ստորագրելը կարևոր իրադարձություն էր, Հայաստանում մարքս-լենինյան գաղափարների տարածման և նրա հաղթանակն ապահովելու համար մղած պայքարի ուշագրավ էջ[98]:

---

96 Ուշագրավ է հետևյալ փաստը. Կոնգրեսի նիստերի դահլիճում, նախագահության սեղանի վերևի մասում, ռուսերեն և այլ լեզուներով ողջույնի լոզունգների հետ միասին հայերեն գրված էր. «Կեցցե երրորդ կոմունիստական ինտերնացիոնալը»:

97 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф 276, оп. 3, ед. хр. 164, ф. 1, ед. хр. 56; ф. 17, оп. 3, ед. хр. 43, л. 21—25. Պատճենները տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1 (Վ. Ի. Լենինի), գ. 56:

98 Երրորդ ինտերնացիոնալի առաջին կոնգրեսներին մասնակցել են հայ ականավոր բոլշևիկներ Ալ. Մյասնիկյանը, Հ. Նազարեթյանը, Ավ. Նուրիջանյանը, Վ. Ավանեսովը, Ի. Քաթանյանը, Ս. Կասյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ս. Վարդանյանը և ուրիշներ:

«Հայաստանի կոմունիստական կուսակցության» ներկայացուցչի մասնակցությունը III Ինտերնացիոնալին ուներ նաև քաղաքական նշանակություն: Բեռնի երկրորդ, դեղին Ինտերնացիոնալում էին գտնվում հայ «սոցիալիստները», որոնք քողարկվելով «ազգային ինքնորոշման» լոզունգի տակ, դավաճանում էին հայ ժողովրդի շահերին, շարունակում իրենց ավանտյուրիզմը: Հարկավոր էր հետևողականորեն մերկացնել այդ «սոցիալիստների» քաղաքականությունը, աշխատավոր մասսաներին դուրս բերել նրանց գաղափարական ազդեցությունից, լուսավորել ժողովրդի ազատագրության իսկական ճանապարհը, ցույց տալ, որ կեղծիք են նացիոնալիստական կուսակցությունների սանձած այն սին պատրանքները, ըստ որոնց ժամանակավոր կառավարության հռչակած ազգերի ինքնորոշման իրավունքն իբր հայ ժողովրդի ազատագրության միակ ուղին է: Քաղաքական այդ խնդրի կատարմանը ակնհայտ չափով նպաստեց «Հայաստանի կոմունիստական կուսակցություն»-ը: Հենց դա էլ նրա պատմական գլխավոր ծառայությունն է կոմունիստական շարժման առջև ընդհանրապես, հայ աշխատավոր զանգվածների՝ գաղթականական խմբերի հանդեպ՝ մասնավորապես: «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ներկայացուցիչներ Գ. Հայկունին և Վ. Տերյանը վճռական ձայնի իրավունքով մասնակցեցին նաև ՌԿ(բ)Կ VIII համագումարին[99]:

«Հայաստանի կոմունիստական կուսակցություն»-ը և նրա տպագիր օրգանները սոցիալիստական հեղափոխության ջատագովն էին, հայ աշխատավոր զանգվածների մեջ Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի գաղափարների տարածողն ու մունետիկը:

---

99 ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի և Հայաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարության միջև եղած տարաձայնությունների մասին տե՛ս Խ. Բարսեղյան. Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը, էջ 230—247:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

1. Կոմունիստական կուսակցությունների առաջացումը։ 2. Կուսակցության կառուցման գործում ինտերնացիոնալիզմ և ոչ թե ֆեդերալիզմ։ 3. Կազմակերպական նոր քայլ։ 4. ՌԿ(բ)Կ Հայաստանի կազմակերպությունների 1919 թվականի սեպտեմբերյան խորհրդակցությունը և 1920 թվականի հունվարյան կոնֆերանսը։ 5. ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի (Արմենկոմի) գաղափարական-քաղաքական աշխատանքը։ 6. Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կազմակերպական ձևավորման ավարտումը։

1

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը նշանավորեց մարքսիզմի հաղթանակը ռեֆորմիզմի դեմ, լենինիզմի հաղթանակը սոցիալ-դեմոկրատիզմի դեմ, III, Կոմունիստական ինտերնացիոնալի հաղթանակը II ինտերնացիոնալի դեմ։ Ամբողջ աշխարհով մեկ բարձրացավ հեղափոխական շարժման հուժկու ալիքը, լայն ժողովրդականություն ստացավ «Ամբողջ իշխանությունը բանվորներին և գյուղացիներին» բոլշևիկյան լոզունգը։ Կապիտալիստական շատ երկրներում բանվորների մասսայական գործադուլները վեր էին ածվում զինված ընդհարումների բուրժուազիայի հետ։ 1918 թ. բանվորական հեղափոխություն տեղի ունեցավ Ֆինլանդիայում։ 1918 թ. օգոստոսին ծավալվեցին, այսպես կոչված, «բրնձի բունտերը» Ճապոնիայում, հոկտեմբերին ընկավ Հաբսբուրգների միապետությունը Ավստրո-Հունգարիայում։ Եվրոպայում հեղափոխական ճգնաժամի զարգացմանը նպաստեց

1918 թ. նոյեմբերյան հեղափոխությունը Գերմանիայում։ Հեղափոխական պայքարը լայն ծավալ ստացավ Ֆրանսիայում, Իտալիայում, Բելգիայում, Բուլղարիայում, գաղութային և կիսագաղութային երկրներում։ Եվրոպայի մի շարք երկրներում առաջ եկան Սովետներ։

Ազատարար Հոկտեմբերի շնորհիվ բանվորների հեղափոխական ելույթները և ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը միավորվեցին իմպերիալիզմը տապալելու միասնական ուժի մեջ։ Հեղափոխական կարևորագույն իրադարձություններով լի այդ ժամանակաշրջանում բոլոր երկրներում (բացի Ռուսաստանից, որտեղ արդեն կար) առանձնակի ուժով զգացվում էր մարքսիստական-լենինյան կուսակցությունների անհրաժեշտությունը, առանց որոնց, հասկանալի է, պրոլետարական հեղափոխությունը հաղթանակել չի կարող։

Ռուսական կոմունիստները պատմության մեջ առաջինը պրոլետարիատին առաջնորդեցին պայքարի անծանոթ ուղիներով և հաստատեցին պրոլետարիատի դիկտատուրա՝ սովետական իշխանություն։ Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գործի մեծ շարունակող Վ. Ի. Լենինը, գլխավորելով անծայրածիր Ռուսաստանի բանվոր դասակարգի և աշխատավոր զանգվածների հեղափոխական, ազատագրական պայքարը, սովորեցրել է «...Պրոլետարիատի դիկտատուրան հնարավոր է միայն կոմունիստական կուսակցության միջոցով և ոչ այլ կերպ»[1]։

Պրոլետարիատը այլ զենք չունի իշխանությունը նվաճելու համար մղվող պայքարում, բացի կազմակերպությունից։ Լենինյան այս դրույթը տրամաբանական զարգացումն է Ֆ. Էնգելսի այն նշանավոր թեզիսի, թե՝ «Որպեսզի պրոլետարիատը վճռական պահին բավականաչափ ուժեղ լինի և կարողանա հաղթել, անհրաժեշտ է (Մարքսը և ես այդ դիրքը պաշտպանում էինք 1847 թվականից), որպեսզի նա ստեղծի առանձին կուսակցություն, որն անջատ լինի մյուս կուսակցություններից ու հակադրվի նրանց, իրեն գիտակցի որպես դասակարգային կուսակցություն»[2]։

Մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, իսկ պատմությունը հաստատում, որ բանվոր դասակարգը կարող է հաղթանակի հասնել, լուծել պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու, սոցիալիզմ

---

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, *հատ. 32, էջ 242*։

2 *К. Маркс* и *Ф. Энгельс.* Избранные письма, М., 1963. стр. 446.

ու կոմունիզմ կառուցելու պատմական խնդիրները միայն կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, որը լիովին արտահայտում է բանվոր դասակարգի արմատական շահերը և զերծ է օպորտունիզմից։ «Միայն կոմունիստական կուսակցությունը,— գրել է Վ. Ի. Լենինը,— եթե նա իսկապես հեղափոխական դասակարգի ավանգարդն է, եթե նա իր մեջ է առնում նրա բոլոր լավագույն ներկայացուցիչներին, եթե նա բաղկացած է լիովին գիտակից և անձնվեր կոմունիստներից, որոնք համառ հեղափոխական պայքարի փորձով լուսավորված և կոփված են, եթե այդ կուսակցությունը կարող է իրեն անխզելիորեն կապել իր դասակարգի ամբողջ կյանքի հետ, իսկ նրա միջոցով շահագործվողների ամբողջ մասսայի հետ և ներշնչել այդ դասակարգին ու այդ մասսային լիակատար վստահություն,— միայն այդպիսի կուսակցությունն է ընդունակ ղեկավարելու պրոլետարիատին ամենաանողոք վճռական, վերջին պայքարում՝ ընդդեմ կապիտալիզմի բոլոր ուժերի»[3]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը հզոր ազդակ հանդիսացավ ինչպես կապիտալիստական, այնպես էլ գաղութային ու կիսագաղութային երկրներում կոմունիստական կուսակցությունների ստեղծման համար։ 1918 թ. երկրորդ կեսին կոմունիստական կուսակցություններ ստեղծվեցին Գերմանիայում, Լեհաստանում, Ֆինլանդիայում, Հունգարիայում, Ավստրիայում. Արգենտինայում։ Գերմանիայի կոմունիստական կուսակցությունը հիմնադրել են բանվորական շարժման ականավոր գործիչներ Կ. Լիբկնեխտը, Ռ. Լյուքսեմբուրգը, Ֆ. Մերինգը և Վ. Պիկը։ Կապիտալիստական շատ երկրներում կազմակերպվեցին կոմունիստական խմբեր և ձախ սոցիալիստական կազմակերպություններ։ Մեծ Հոկտեմբերի հաղթանակի շնորհիվ լենինիզմի գաղափարները տարածվեցին ամբողջ աշխարհում և բանվոր դասակարգին ակտիվ պայքարի հանեցին հանուն իմպերիալիստական պատերազմի դադարեցման և բուրժուազիայի տիրապետության ոչնչացման։

Կոմունիստական շարժումը ծավալվում և միջազգային բնույթ է ստանում։ Այս ամենի շնորհիվ հնարավոր է դառնում իրագործել երրորդ, Կոմունիստական Ինտերնացիոնալի ստեղծման խնդիրը, որ առաջադրել էր Վ. Ի. Լենինը դեռևս առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում։ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը՝ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 219—220։

հանդես է գալիս որպես երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալի կազմակերպիչ ու ոգեշնչող: Կոմունիստական երրորդ Ինտերնացիոնալը ամենից առաջ կոչված էր ապահովելու նոր տիպի, մարքսիստական-լենինյան կուսակցությունների ստեղծումը բոլոր երկրներում: «Բոլշևիզմը,— ասել է Վ. Ի. Լենինը,— ստեղծեց երրորդ Ինտերնացիոնալի իդեական ու տակտիկական հիմքերը»[4]:

1918 թ. հունվարին կայացավ բոլշևիկյան կուսակցության Կենտկոմի նախաձեռնությամբ հրավիրված Եվրոպայի և Ամերիկայի մի շարք երկրների սոցիալիստական կուսակցությունների հեղափոխական ձախ թևի ներկայացուցիչների խորհրդակցություն, որը քննարկեց սոցիալիստական կուսակցությունների միջազգային կոնֆերանս հրավիրելու հարցը՝ երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալ ստեղծելու համար: Վ. Ի. Լենինը 1919 թ. ապրիլի 15-ին «Երրորդ Ինտերնացիոնալը և նրա տեղը պատմության մեջ» հոդվածում գրել է. «Երրորդ Ինտերնացիոնալը փաստորեն ստեղծվեց 1918 թվականին, երբ օպորտունիզմի և սոցիալ-շովինիզմի դեմ մղված պայքարի բազմամյա պրոցեսը, առանձնապես պատերազմի ժամանակ, հանգեց կոմունիստական կուսակցությունների կազմակերպման մի շարք ազգերի մեջ: Ձևականորեն երրորդ Ինտերնացիոնալը հիմնված է 1919 թվականի մարտին Մոսկվայում՝ նրա առաջին համագումարում»[5]:

Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալը, որի առաջին կոնգրեսը Վ. Ի. Լենինի նախագահությամբ բացվեց Մոսկվայում, 1919 թ. մարտի 2-ին, I Ինտերնացիոնալի արժանավոր ժառանգորդն էր:

Կոմունիստական Ինտերնացիոնալը հանդես է եկել նոր դարաշրջանի արշալույսին՝ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու դարաշրջանում: Երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրումը «այն բանի գրանցումն էր, ինչ նվաճել են ոչ միայն ռուսական, ոչ միայն ռուսաստանյան, այլև գերմանական, ավստրիական, հունգարական, ֆինլանդական, շվեյցարական,— մի խոսքով՝ միջազգային պրոլետարական մասսաները:

Եվ հենց դրա համար էլ երրորդ, Կոմունիստական Ինտերնացիոնալի հիմնադրումը մի հաստատուն գործ է»[6]: Կոմունիստական Ինտերնացիոնալի մատուցած պատմական մեծագույն ծառայու-

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 371:

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 370:

6 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 621:

թյուններն էին՝ կոմունիզմի կառուցման համար մղվող վեհ պայքարի ծավալումը, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածումը բոլոր երկրներում, ինչպես և այդ գաղափարների պաշտպանությունը բուրժուական ու աջ սոցիալիստական թշնամիներից, պայքարը ռևիզիոնիզմի, օպորտունիզմի, դոգմատիզմի և աղանդավորության դեմ, աշխատավոր մասսաների մոբիլիզացումը ընդդեմ ֆաշիզմի և պատերազմի վտանգի, անխոնջ պայքարը կոմունիստական և բանվորական կուսակցությունների ինտերնացիոնալ համախմբվածության համար։

«Առաջին ինտերնացիոնալը,— գրել է Վ. Ի. Լենինը,— դրել է սոցիալիզմի համար մղվող պրոլետարական միջազգային պայքարի հիմքը։

Երկրորդ ինտերնացիոնալը հող նախապատրաստելու դարաշրջանն էր՝ մի շարք երկրներում շարժումը լայնորեն մասսայաբար տարածելու համար։

Երրորդ ինտերնացիոնալը ընդունեց Երկրորդ ինտերնացիոնալի աշխատանքների պտուղները, դեն գցեց նրա օպորտունիստական, սոցիալ-շովինիստական, բուրժուական ու մանրբուրժուական աղտեղանքը և սկսեց իրագործել *պրոլետարիատի դիկտատուրան»*[7]։

Կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադիր կուսակցություններից էին ՌԿ(բ)Կ-ն, Գերմանիայի, Հունգարիայի, Լեհաստանի, Ուկրաինայի, Լատվիայի, Էստոնիայի և այլ երկրների կոմունիստական կուսակցությունները, Շվեյցարիայի, Բալկանյան ֆեդերացիայի, Արևելյան Ռուսաստանի ժողովուրդների կենտրոնական բյուրոյի և այլ կոմունիստական ու սոցիալիստական խմբերի ներկայացուցիչները[8]։

Հիմնադիր կոնգրեսին մասնակցում էր նաև Արևմտահայաստանի հայ աշխատավորության համար 1918 թ. սկզբներից Թիֆլիսում կյանքի կոչված «Հայաստանի կոմունիստական կուսակցություն» խումբը[9]։

Երրորդ կոմունիստական ինտերնացիոնալը մարքսիզմ-լենինիզմի դրոշակակիրն էր։

---

7 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 29, էջ 370—371։*

8 *Տե՛ս* «Первый конгресс Коммунистического интернационала», М., 1933.

9 *«Հայաստանի կոմունիստական կուսակցության» մասին տե՛ս «Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը», Երևան, 1965, էջ 189—247։*

2

Մինչև 1917 թ. չհաջողվեց ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները միավորել ՌՍԴԲԿ-ի մեջ: Բունդը Լիբերի, Մավիչի, Վինիցկու գլխավորությամբ (նրանց ձայնակցում էին նաև հայկական «սպեցիֆիկները») ձախողեց ՌՍԴԲԿ չորրորդ («Միավորիչ») համագումարի որոշումները: Փաստորեն այն հանդես էր գալիս իբրև մանր-բուրժուական նացիոնալիստական կուսակցություն: Վ. Ի. Լենինը դեռևս 1913 թ. գրել է. «Ավստրիայում ֆեդերացիան ավարտվեց միասնական կուսակցության սեպարատիզմով ու կրախով: Մեզ մոտ ևս հանցագործություն կլիներ ներողամտաբար վարվել Բունդի սեպարատիզմին և նրան քողարկել»[10]: Վ. Ի. Լենինը խորապես ուսումնասիրելով ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի փորձը, մերժեց ֆեդերալիզմը կուսակցության կառուցվածքում: Կուսակցության կառուցման գործում նահոկտեմբերյան ժամանակաշրջանում դա պատմական մեծ նշանակություն ուներ մարքսիզմ-լենինիզմի տեսության մեջ: Դա, ըստ էության, կուսակցության մասին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքի զարգացումն էր նոր պայմաններում:

Մեծ հոկտեմբերից հետո ամբողջ երկրով մեկ ծավալվեց սոցիալիստական հեղափոխության հաղթարշավը: 1917 թ. դեկտեմբերին Ուկրաինայում հաստատվեցին սովետական կարգեր, մինչև 1918 թ. մարտը իշխանությունը սովետներին անցավ՝ Բելոռուսիայում, Էստոնիայում, Լատվիայի այն մասում, որը չէր օկուպացված գերմանացիների կողմից, Ղրիմում, Մոլդավիայում, Բաքու քաղաքում, Պովոլժիեի ազգային շրջաններում, Թուրքեստանում, Ղազախստանի մեծ մասում: Ռուսաստանի ազգային շրջանների աշխատավորների պայքարը գլխավորում էին բոլշևիկյան կազմակերպությունները: ՌԿ(բ)Կ-ն իր շարքերում ընդգրկում էր Ռուսաստանի բոլոր ազգությունների բանվորների և աշխատավոր մասսաների ծոցից դուրս եկած, մարքսիզմ-լենինիզմին նվիրված հեղափոխական մարտիկների մի պատկառելի ջոկատ:

Երբ մեծ հոկտեմբերի հաղթանակից հետո Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը դարձավ կառավարող կուսակցություն, կուսակցական շինարարության մեջ տեղի ունեցան նոր փոփոխություններ, Վ. Ի. Լենինի պլանով, հիմք դրվեց մեր երկրի ազգային կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն-

[10] *В. И. Ленин*, Полн. собр. соч., т 48, стр. 147.

633—30

ների՝ որպես ՌԿ(բ)Կ տեղական ջոկատների՝ կազմակերպական ձևավորմանը։ Նրանք մտնում էին ՌԿ(բ)Կ մեջ և ենթարկվում ՌԿ(բ)Կ Կենտկոմին։ 1918 թ. հուլիսին ձևավորվում է Ուկրաինայի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը, նույն թվականի դեկտեմբերին՝ Բելոռուսիայի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը։

Վ. Ի. Լենինի հռչակավոր Ապրիլյան թեզիսների հրապարակումից հետո կուսակցության մեջ լայնորեն դիսկուսիա ծավալվեց կուսակցության անվան շուրջը։ 1918 թ. մարտին կուսակցության VII համագումարում Վ. Ի. Լենինը հանդես գալով այդ առթիվ, նշել է. «Կենտկոմը առաջարկում է փոխել կուսակցության անունը և կոչել Ռուսաստանի կոմունիստական, փակագծում բոլշևիկների»։ Վ. Ի. Լենինի կազմած և համագումարում ընդունված բանաձևում ասված է. «Համագումարը որոշում է այսուհետև մեր կուսակցությունը (Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական բոլշևիկների կուսակցությունը) անվանել Ռուսաստանի կոմունիստական կուսակցություն, փակագծերում ավելացնելով (բոլշևիկների)»[11]։

Կուսակցության անվան ճշգրտումն այդ ժամանակ հասունացել էր և ուներ գիտական ու քաղաքական սկզբունքային մեծ նշանակություն։ Կուսակցության անվան մեջ «բոլշևիկների» բառի ավելացումը ցույց էր տալիս, որ նա նոր տիպի կուսակցություն է, լենինյանների համախոհ կազմակերպություն, որն անհաշտ պայքար է մղում մարքսիզմի, կոմունիզմի անունից խոսող մենշևիկների և պրոլետարիատի թշնամի մյուս կուսակցությունների ու խմբավորումների դեմ։ Այնուհետև, «բոլշևիկների» բառի ավելացումը ազգային կոմունիստական կուսակցությունների համար ուներ նաև այն նշանակությունը, որ ցույց էր տալիս, թե նրանք հանդիսանում են Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության տեղական ջոկատները։

1919 թ. մարտին ՌԿ(բ)Կ VIII համագումարը քննության առնելով ազգային կուսակցական կազմակերպությունների հարցը, նշել է.

«Ներկայումս Ուկրաինան, Լատվիան, Լիտվան ու Բելոռուսիան գոյություն ունեն որպես առանձին սովետական հանրապետություններ։ Տվյալ մոմենտում այսպես է լուծված պետության գոյության ձևերի հարցը։

---

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 156։

Բայց դա բնավ չի նշանակում, որ ՌԿԿ-ն իր հերթին պետք է կազմակերպվի ինքնուրույն կոմունիստական կուսակցությունների ֆեդերացիայի հիման վրա»: VIII համագումարը անհրաժեշտ գտավ «միասնական կենտրոնացված կոմունիստական կուսակցության գոյությունը՝ միասնական Կենտկոմով, որը ղեկավարում է կուսակցության ամբողջ աշխատանքը ՌՍՖՍՀ բոլոր մասերում: ՌԿԿ և նրա ղեկավար հիմնարկների բոլոր որոշումներն անպայման պարտադիր են կուսակցության բոլոր մասերի համար, անկախ նրանց ազգային կազմից: Ուկրաինական, լատիշական, լիտվական կոմունիստների Կենտրոնական կոմիտեներն օգտվում են կուսակցության մարզային կոմիտեների իրավունքներից և ամբողջությամբ ենթակա են ՌԿԿ Կենտկոմին»[12]: Նկատենք, որ համագումարում կազմակերպչական հարցի մասին զեկուցող Գ. Զինովևը չկարողացավ հստակ բնութագրել սովետական բազմազգ ֆեդերատիվ հանրապետության պայմաններում կուսակցության կառուցման սկզբունքները: Սխալներ էին թույլ տրվում ծայրամասերում: Բունդական տեսակետ էր պաշտպանում Մ. Սուլթանգալիևը: Նա դեմ էր թաթարական ու բաշկիրական կոմունիստներին ՌԿ(բ)Կ-ի մեջ միավորմանը: 1918 թ. ձևավորվել էր «Չուաշական կոմունիստական կոմիտեն», որը չէր մտնում ՌԿ(բ)Կ-ի կազմում և հավակնություն ուներ Չուաշական կուսակցության անկախ կենտկոմի դեր խաղալ: Նույնպիսի տրամադրություններ կային Կովկասում[13]:

Այո, միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո, երբ Ռուսաստանի ազգային շրջանների կուսակցական կազմակերպությունների առջև ծառացան սովետական պետականության հարցերը, գործնական ձևով դրվեց ազգային սովետական հանրապետությունների կոմունիստական կուսակցությունների կազմակերպական ձևավորման հարցը:

Եթե Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կոմունիստական կուսակցությունը, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, պետական ֆեդերացիան ընդունել էր որպես սովետական պետության կառուցվածքի հիմք, ապա կուսակցական շինարարության բնագավառում բոլշևիկներն անփոփոխ և հաստատուն կերպով պաշտպանում էին

---

12 «ՍՄԿԿ-ի համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում», մաս 1, էջ 561—562:

13 См. «История Коммунистической партии Советского Союза», т. 3, кн. 2, стр. 336; *Н. Ф. Шитов,* В. И. Ленин и пролетарский интернационализм (1917—1924 гг.), М., 1974, стр. 129.

մի կենտրոնից ղեկավարվող միասնական կոմունիստական կուսակցության սկզբունքը:

ՌԿ(բ)Կ VIII համագումարի այդ որոշումը ծրագրային խոշոր նշանակություն ուներ: Դրանով հակահարված էր տրվում ազգային կուսակցական կազմակերպություններում եղած կոմունիստների առանձին խմբավորումների կենտրոնախույս տրամադրություններին:

Ռուսաստանի կոմունիստական կուսակցության մեջ մտնում էին Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Ղազախստանի, Կիրգիզիայի, Տաջիկստանի, Թուրքմենիայի կոմունիստական կուսակցությունները: Այն հանգամանքը, որ բոլոր ազգությունների և հանրապետությունների կոմունիստական կուսակցությունները միաձուլվել էին (сливались) մեկ միասնական կուսակցության՝ Ռուսաստանի Կոմկուսի մեջ, պատմական մեծ նշանակություն ուներ մարքսիզմ-լենինիզմի հաղթանակի, բանվոր դասակարգի և աշխատավոր մասսաների ինտերնացիոնալ համախմբվածության ու դաստիարակության, սովետական ժողովրդի համագործակցության ստեղծման ու ամրապնդման գործում: 1922 թվականին ՌԿ(բ)Կ իր շարքերում միավորում էր ավելի քան 400 հազար անդամ, այդ թվում՝

ռուսներ՝ ավելի քան	270 հազար
ուկրաինացիներ	22 —»—
հրեաներ	18,5 —»—
լեհեր, լիտվացիներ, լատվիացիներ, էստոնացիներ	18,6 —»—
վրացիներ	6,9 —»—
բելոռուսներ	5,5 —»—
կիրգիզներ	4,9 —»—
հայեր	3,8 —»—
թուրքեր	2,4 —»—
ուզբեկներ	2 —»—
օսեթներ	1,6 —»—
բաշկիրներ	469 մարդ
տաջիկներ	421 —»—
մինգրելներ	413 —»—
կարելցիներ	337 —»—

կաբարդիններ	229	—»—
թուրքմեններ	197	—»—
լեզգիներ և այլ ազգեր	159[14]	—»—

Համառոտակի այսպիսին էր ՌԿ(բ)Կ ազգային կազմը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո։

3

Անդրկովկասում ստեղծված ներքին և արտաքին յուրահատուկ պայմանները՝ երկրամասի տնտեսական հետամնացությունը, օտարերկրյա իմպերիալիստների և ներքին կեղեքիչների կողմից ոգեշնչվող և օգնություն ստացող հակահեղափոխական բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները, որոնց հաջողվեց ժամանակավորապես զավթել իշխանությունը, հեղափոխության զարգացման համար մեծ չարիք հանդիսացան։ Հեղափոխության գործը,— ինչպես այդ օրերին գրել է Ստ. Շահումյանը,— ոչ մի տեղ այնպես վտանգի տակ չէր, ինչպես Անդրկովկասում։ Իմպերիալիստների թելադրանքով անդրկովկասյան հակասովետական բլոկը 1918 թ. ապրիլի 22-ին օրապակաս սեյմի որոշմամբ հռչակեց Անդրկովկասի «անկախությունը»։

Հակահեղափոխական, բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններն Անդրկովկասում զավթելով իշխանությունը, երկրամասը փաստորեն դարձրին իմպերիալիստական տերությունների գաղութ։

Իրենց կարճատև ու անփառունակ տիրապետության շրջանում դաշնակցականները վարելով հակաժողովրդական, իմպերիալիստներին հաճոյանալու քաղաքականություն, Հայաստանը հասցրին լիակատար քայքայման ու «անկման վիհի եզրին»։ Հարկավոր էր երկիրը դուրս բերել այդ օրհասական վիճակից։ Հարկավոր էր փրկել հայ ժողովրդին և նրան զարգացման իսկական ճանապարհ ցույց տալ։

Հեշտ ու խաղաղ չէր ընթանում հայ ժողովրդի ուղին դեպի ազ-

14 «Центральный Комитет ВКП(б). Статистический отдел», Социальный и национальный состав ВКП(б). Итоги Всесоюзной партийной переписи 1927 г. М.—Л., 1928, стр. 112; *Н. Ф. Шитов*, В. И. Ленин и пролетарский интернационализм. М., 1974, стр. 6—7, 21—22.

գային ազատագրությունն ու սոցիալիզմը։ Իր ազատումների ու պայքարի ճանապարհին բազում տառապանքներ ու ձախողումներ են բաժին ընկել նրան, որը դարեր շարունակ հանուն իր գոյատևման, արիաբար մաքառել է սեփական և օտար ճնշողների դեմ։ Հայաստանի աշխատավորներն իրենց ազատագրությունը տեսան Ռուսաստանի դեմոկրատական և հեղափոխական ուժերի հետ համագործակցության մեջ, ռուսական պրոլետարիատի հեղափոխական պայքարի թեժ գոտեմարտերում, մեծ Հոկտեմբերի ազատարար ուղիներում։

Կուսակցական-քաղաքական աշխատանքը 1918 թ. սկսած Հայաստանում աշխուժանում է։ Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Երևանի, Զանգեզուրի, Ղազախ-Շամշադինի և այլ վայրերի կուսակցական կազմակերպությունները զինված մեծ Հոկտեմբերի գաղափարներով կազմակերպչական մեծ աշխատանք են ծավալում մասսաների շրջանում։ 1918 թ. հունվարի 21-ին Ալեքսանդրապոլի բոլշևիկների ժողովը քննության առնելով ընթացիկ մոմենտի հարցը, ընտրում է 9 հոգուց կազմված բյուրո, որի մեջ մտնում էին Բ. Ղարիբջանյանը (նախագահ), Նիկոլենկոն, Ս. Վարոսյանը, Տատուշվիլին, Ռ. Սաֆարյանը, Հ. Մարկոսյանը, Գ. Հովհաննիսյանը, Տ. Թադևոսյանը և Կրիվոպյասովը[15]։ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը մեծ աշխատանք է կատարում թուրքական բանակայինների արշավանքը ետ մղելու ուղղությամբ։ 1918 թ. ապրիլի 6—8-ը Ալեքսանդրապոլում տեղի ունեցած արտակարգ խորհրդակցությունում, որին մասնակցում էին անդրկովկասյան Սեյմի հայ անդամները, ազգային խորհրդի և քաղաքական տարբեր կուսակցությունների ներկայացուցիչներ, Բ. Ղարիբջանյանը մերկացնում է անդրկովկասյան հակահեղափոխական բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների վարած քաղաքականությունը։ Արտահայտելով բոլշևիկների կամքը, նա հայտարարում է, որ Անդրկովկասը փրկելու միայն մեկ ելք կա՝ ձեռք մեկնել Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների սովետին, «հակառակ դեպքում փրկություն չկա»[16]։

1916 թ. երկրորդ կեսին դաշնակցության տիրապետության դեմ բոլշևիկների ղեկավարությամբ մի շարք ելույթներ եղան Երևանում,

---

15 Տե՛ս «Բանվորի կռիվը», № 23, 26 հունվարի 1918։

16 ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 47, ց. 1, գ. 213, թ. 16։

Ալեքսանդրապոլում, Կարսում, գյուղացիական ընդվզումներ բռնկվեցին Զանգեզուրում, Նոր Բայազետում, Լոռում և այլ վայրերում։ Երկրամասի այդ թվում՝ Հայաստանի կուսակցական կազմակերպությունների աշխատանքն աշխուժացավ 1918 թ. ՌԿ(բ)Կ անդրկովկասյան կազմակերպությունների նոյեմբերյան կոնֆերանսից հետո։ Կոնֆերանսը, որը գումարվեց նոյեմբերի 15-ին, Սաբուրթալոյում (Թիֆլիսի մոտ), կարևոր նշանակություն ունեցավ երկրամասում կուսակցական-քաղաքական աշխատանքը բարելավելու, աշխատավորության հեղափոխական պայքարը կազմակերպելու համար։ Կոնֆերանսին մասնակցում էին Մ. Ցխակայան, Ս. Կասյանը, Մ. Տորոշելիձեն, Գ. Ստուրուան, Դ. Շահվերդյանը, Գ. Ալիխանյանը, Ա. Կախոյանը, Գ. Աղաբաբովը և ուրիշներ։ Նոյեմբերյան կոնֆերանսը միաձայն ընդունեց բանաձև, որի մեջ շարադրված է Հոկտեմբերյան հեղափոխության նշանակությունը և երկրամասի բոլշևիկների խնդիրները Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում՝ սովետական իշխանության հաղթանակն ապահովելու գործում[17]։ Մերկացնելով միջազգային իմպերիալիզմի թալանչիական հարձակումը Սովետական Ռուսաստանի վրա, բանաձևը դիմակազերծ էր անում մենշևիկներին, դաշնակներին, մուսավաթականներին՝ որպես իմպերիալիստների գործակալների, բացահայտում նրանց քաղաքականության և գործելակերպի հակաժողովրդական էությունը[18]։

ՌԿ(բ)Կ կովկասյան երկրկոմը Վ. Ի. Լենինի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումներով 1919 թ. ուժեղացնում է Հայաստանի կուսակցական կազմակերպություններին ցույց տրվող օգնությունը։ Հայաստանի կուսակցական կազմակերպությունները ձեռնամուխ են լինում կոնֆերանսի որոշումների կենսագործմանը։ Տեղական կազմակերպությունները համալրվում են նոր ուժերով, զգալի թափ է

17 Հ. Կարապետյանն իր «Մեծ պայքարի մարդիկ» գրքում քաղվածքներ է բերում Մ. Տորոշելիձեի և Գ. Աղաբաբովի հուշերից և հավանական համարում, որ կոնֆերանսի բանաձևը գրել է Ս. Կասյանը (տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 124, ед. хр. 2129, л. 7—10). ՄԼԻ-ի վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 12789, ց. 7, գ. 4, թ. 1—2։ Հ. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, Երևան, 1963, էջ 97—98։

18 Բանաձևն առաջին անգամ լույս է տեսել 1918 թ. դեկտեմբերի 8-ին, բոլշևիկյան «Կոմունա» թերթի առաջին համարում։ Այն հրապարակվել է «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» փաստաթղթերի ժողովածուում, Երևան, 1960, էջ 244—247։

հաղորդվում քաղաքական ագիտացիային, հրատարակվում և տարածվում են մարտական ոգով գրված կոչեր և թռուցիկներ[19]։ Կուսակցական կազմակերպությունների գործունեության համար հզոր ուժ էր բոլշևիկյան մամուլը։ «Բանվորի կռիվը», «Բանվոր», «Կոմունա», «Պահակ», «Նոր ուղի», «Տեղեկատու»·(Բաքու), «Խոսք», «Սպարտակ» (Երևան), «Ալիք» (Ալեքսանդրապոլ) և այլ թերթեր սիստեմատիկաբար նյութեր էին հրապարակում աշխատավոր զանգվածներին հուզող հարցերի մասին, պրոպագանդում սովետական իշխանության գաղափարները։ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունում (որը ստեղծված յուրահատուկ պայմանների հետևանքով տակավին միացյալ էր) գնալով ավելի էին խորանում բոլշևիկների և մենշևիկների տարաձայնությունները։ **1918 թ. նոյեմբերին, Սաբուրթալոյի** կոնֆերանսից հետո, ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունում բոլշևիկյան ֆրակցիան վերջնականապես անջատվում է մենշևիկներից[20]։ Բոլշևիկ Արշավիր Մելիքյանի խմբագրությամբ Երևանում լույս տեսնող «Խոսք» թերթը դեկտեմբերի 6-ին հրապարակում է ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի հայտարարությունը՝ ուղղված Հայաստանի կոմունիստական բոլոր կազմակերպություններին և կոմունիստներին։ «Կազմված է Երևանի կոմունիստական կազմակերպություն։ Կազմակերպությունը, մինչև ընդհանուր համագումարը, հանրապետության սահմաններում հանդիսանալու է կուսակցության գերագույն օրգանը, որին պետք է դիմել բոլոր հարկավոր պարագաներին կուսակցական ամեն տեսակ գործերով և խնդիրներով։

Առաջարկվում է ընկերներին՝ Երևանից դուրս հիմք դնել տեղական կոմիտեներին և խմբերին, կապ հաստատել Երևանի Կենտրոնական կոմիտեի և կազմակերպության հետ»[21]։

ՌԿ(բ)Կ Երևանի կոմիտեն (կամ ինչպես իրենք էին անվանում կոմունիստական կազմակերպության Երևանի Կենտրոնական կոմիտեն), իհարկե, որոշ քայլեր կատարեց Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններին օգնություն ցույց տալու ուղղությամբ,

19 Տե՛ս «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ, 1902—1921», Երևան, 1959։

20 1917 թ. ՍՄԿԿ անդամ Ալեքսանդր Իսահակյանի վկայությամբ մինչև այդ էլ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ղեկավարության մեջ բոլշևիկները մեծամասնություն էին կազմում՝ 10—12 հոգի, իսկ մենշևիկները հազիվ 4—5 հոգի էին (տե՛ս Ա. Իսահակյան. Մեր պայքարի մասին, Հին բոլշևիկների հիշողություններ, գիրք 1, էջ 227)։

21 «Խոսք», № 7, 6 դեկտեմբերի 1918 թ.։

հատկապես «Խոսք» թերթի միջոցով, որը հրատարակվում էր մինչև 1919 թ. մարտի 22-ը: Բայց, ինչպես ճիշտ նկատել է Ա. Մռավյանը, Երևանում աշխատող բոլշևիկների այդ խմբակը չնայած մեկ-մեկ հանդես էր գալիս Հայաստանի կոմունիստական կուսակցության անունով, այնուամենայնիվ, չկարողացավ համահայաստանյան ղեկավար օրգանի դեր խաղալ[22]: Բայց նրանք շատ քիչ բան արեցին գավառական կազմակերպությունների հետ կապվելու համար: Աշտարակ, Նոր Բայազետ, Դիլիջան, Իջևան, Ղարաքիլիսա, Ալեքսանդրապոլ, Կարս, Կաղզվան և այլուրեք կային կոմունիստ ընկերներ ու բջիջներ, որոնք կարոտ էին կենտրոնի ղեկավարման[23]:

1918 թ. Երևանի բոլշևիկյան ուժեղ բջիջներից էր գարաժի կազմակերպությունը, որի մեջ էին Համբարձում Խաչատրյանը, Պողոս Պողոսյանը, Արշավիր Ղազարյանը, Գևորգ Դանիելյանը, Պետրոս Պետրոսյանը, Գրիշա Բերինովը, Հայկ Զարզարյանը, Աշոտ Բաբայանը և ուրիշներ: Գարաժի բոլշևիկները Ս. Ալավերդյանի և Ա. Մռավյանի խորհրդով աշխատանք էին կատարում Երևանի բանվորների շրջանում, տարածում մարքսիստական գրականություն, հեղափոխական կոչեր և թռուցիկներ: «Բջիջում սկսեցին մշակել «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», որը մեզ էր տվել Սարգիս Ալավերդյանը, վերհիշում է Գ. Դանիելյանը:— Սովորում և տարածում էինք կուսակցության հիմնը՝ «Ինտերնացիոնալը»: Ձեռքից ձեռք էր անցնում Ն. Չերնիշևսկու «Ի՞նչ անել»: Սարգիս Ալավերդյանը դասախոսություն էր կարդում մարքսիզմի վերաբերյալ»[24]: Այդ ժամանակ գարաժի բջջի հետ սերտ շփման մեջ էին Աղասի Խանջյանը, Սերգո Մարտիկյանը, Գևորգ Ալիխանյանը և ուրիշներ: Այնուամենայնիվ, ՌԿ(բ)Կ Երևանի կազմակերպությունը մինչև 1919 թ. վերջը դեռևս այն կազմակերպությունը չէր, որ պետք է կոորդինացներ և ղեկավարեր Հայաստանի բոլոր կազմակերպությունների գործունեությունը: Նա այդ խնդիրն իրագործեց 1919 թ. սեպտեմբերյան և 1920 թ. հունվարյան կոնֆերանսներից հետո:

1918—1919 թթ. կուսակցական նոր կազմակերպություններ ստեղծվեցին Զանգեզուրում (Գորիս, Խնձորեսկ, Քարահունջ, Շաղաթ, Անգեղակոթ և այլն), Նոր Բայազետում, Ղազախ-Շամշադի-

---

22 Ա. Մռավյան. Հոդվածներ և ճառեր. Երևան, 1961, էջ 326:

23 Նույն տեղում:

24 «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք երկրորդ. Երևան. 1961, էջ 199:

նում, Սև Քարում, Քավթառլուում և այլ տեղերում։ 1918 թ. սկզբներին Նոր Բայազետի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունում բոլշևիկները առանձնանում և ինքնուրույն քաղաքային ու գավառային կոմիտեներ են ստեղծում։ Իր ակտիվությամբ հատկապես աչքի էր ընկնում զինվորական ծառայությունից նոր վերադարձած Բաբիկ Բաբիկյանը։

Զանգեզուրի բոլշևիկները սերտ կապերի մեջ էին պրոլետարական Բաքվի հետ[25]։

1918 թ. վերջերին բոլշևիկյան կազմակերպություններ են ստեղծվում Պրիվոլնոյե, Վորոնցովկա, Ռուս-Դյառգյառ և այլ գյուղերում։ Երկրամասում բոլշևիկների գործունեությունը գնալով ակտիվանում է։

1919 թ. սկզբին Վլադիկավկազում տեղի է ունենում ՌԿ(բ)Կ կովկասյան կազմակերպությունների II համագումարը, որից հետո երկրային կոմիտեն տեղափոխվում է Թիֆլիս։ Բաքվում ստեղծվում է երկրային կոմիտեի Բաքվի բյուրո, որի ղեկավար է նշանակվում Ա. Միկոյանը։ Բաքվի բոլշևիկների մարտյան համաքաղաքային կոնֆերանսը քննարկում է ընթացիկ մոմենտի և բոլշևիկների անելիքների վերաբերյալ հարցը, ընտրում ՌԿ(բ)Կ Բաքվի կոմիտե, որի կազմում էին Ա. Միկոյանը, Վ. Նանեիշվիլին, Լ. Միրզոյանը, Մ. Մամեդյարովը, Օլգա Շատունովսկայան, Մ. Կասումովը, Մ. Պլեշկովը և ուրիշներ[26]։ Կոմունիստական կուսակցությունը ղեկավարվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով, ելնելով Անդրկովկասում հեղհեղուկ ժամանակաշրջանում առաջացած իրադրությունից, «Սովետական Կովկաս» լոզունգի փոխարեն 1919 թ. սկզբներին հռչակում է «Սովետական Ադրբեջան», «Սովետական Վրաստան», «Սովետական Հայաստան» լոզունգները։ Տվյալ ժամանակաշրջանում դա միանգամայն ճիշտ էր արտահայտում երկրամասի աշխատավոր մասսաների՝ բանվորների, գյուղացիների, հեղափոխական զինվորների կենսական շահերն ու քաղաքական պայքարի խնդիրները։ Այդ լոզունգը առաջինն առաջ քաշեցին Բաքվի բոլշևիկները՝ ազգային անկախության համար պայքարի դրոշը ազգային բուրժուազիայի և կալվածատերերի ձեռքից խլելու նպատակով։ Բայց կուսակցական ոչ բոլոր ղեկավար աշխատողները միանգամից ընկալեցին և պաշտպանեցին այն։ Նոր լոզունգի կապակցությամբ օրակարգի մեջ է

25 Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք երկրորդ, Երևան, 1961։

26 Տե՛ս Ա. Մնացականյան, Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատմիրակները, Երևան, 1961, էջ 59։

դրվում Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի կոմունիստական կուսակցությունների կազմակերպական ձևավորման հարցը: Կազմակերպական այդ քայլը 1919 թ. մայիսին քննության ենթարկվեց Բաքվի կազմակերպության կոնֆերանսում, որտեղ և առաջացան սուր տարաձայնություններ: Միևնույն հարցում,— ինչպես ասված է Ադրբեջանի կոմկուսի պատմության գրքում,— բացահայտ դարձավ չորս տարբեր կարծիք: Մի խումբը առաջարկում էր հիմնել կուսակցություն, որը պետք է բացառապես կազմված լիներ ադրբեջանցի կոմունիստներից, մի բան, որ հակասում էր կոմունիստական ինտերնացիոնալ սկզբունքներին: Մյուս խումբը առաջարկում էր Ադրբեջանի կոմկուսի կազմում չմտցնել ՌԿ(բ)Կ Բաքվի կազմակերպությանը, որը նույնպես ճիշտ չէր և կոմունիստներին բաժանում էր ըստ ազգային հատկանիշների: ՌԿ(բ)Կ երկրային կոմիտեի շատ անդամներ դեմ էին Անդրկովկասում ազգային կոմկուսների ստեղծմանը, պատճառաբանելով, թե դա կոմունիստական կուսակցության կազմակերպական սկզբունքների խախտումն է: Բաքվի կոմունիստների մեծ մասը և երկրային կոմիտեի մի շարք անդամներ պահանջում էին Ադրբեջանում կոմունիստական կուսակցություն ստեղծել ինտերնացիոնալ սկզբունքներով, նրա մեջ համախմբելով Ադրբեջանում աշխատող բոլոր ազգերի կոմունիստներին[27]: Այդ տեսակետն անցնում է. կոնֆերանսը ձայների մեծամասնությամբ որոշում է ստեղծել Ադրբեջանի կոմունիստական կուսակցություն՝ ինտերնացիոնալ սկզբունքներով: 1919 թ. մայիսին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումով, Գ. Օրջոնիկիձեի ղեկավարությամբ[28], Բաքվում կայացած կուսկոնֆերանսում և նույն օրերին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեի ընդլայնված պլենումում, որին մասնակցում էին Մ. Ցխակայան, Ա. Միկոյանը, Ս. Կասյանը, Մ. Տորոշելիձեն և ուրիշներ, քննարկվեցին ազգային կոմկուսներ ստեղծելու հարցը և կուսակցական կազմակերպությունների խնդիրները երկրամասում սովետական իշխանության համար մղվող պայքարում:

---

27 Տե՛ս «История Коммунистической партии Азербайджана». Баку. 1958, էջ 344:

28 Գ. Օրջոնիկիձեն Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ, անլեգալ կերպով, Կովկասյան լեռնաշղթայի վրայով մեկնել էր Թիֆլիս և մեծ օգնություն ցույց տվել կուսակցական կազմակերպություններին: Վերադարձին գնացել էր Բաքու՝ ղեկավարելու այդ նիստերը ու ապա՝ ձկնորսական առագաստանավակով անլեգալ մեկնել Աստրախան (տե՛ս З. Орджоникидзе. Путь большевика. М., стр. 246—247).

Հարազատ մնալով պատմական փաստերին, պետք է նշել, որ ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն, մինչև 1919 թ. մայիսը չառաջադրելով Անդրկովկասի անկախ սովետական հանրապետությունների ստեղծման և Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի կոմունիստական կուսակցությունների կազմավորման լոզունգը, ճիշտ չէր վարվում, եթե չասենք, լուրջ սխալ էր թույլ տալիս։ Քանի որ բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների ձեռքից չէր խլվում ազգային անկախության համար մղվող պայքարի դրոշը, իսկ դա նրանց հնարավորություն էր ընձեռում չարաշահելու երկրամասի ժողովուրդների ազգային զգացմունքները[29]։

Սովետական ազգային հանրապետություններ ստեղծելու լոզունգի հետ միասին օրակարգի մեջ է դրվում Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի եղբայրական կոմունիստական կուսակցությունների ձևավորման հարցը, կուսակցություններ, որոնք մինչև այդ գործում էին որպես ՌԿ(բ)Կ տեղական կազմակերպություններ և անմիջականորեն ենթարկվում էին ՌԿ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեին, իսկ վերջինիս միջոցով՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմին։

ՌԿ(բ)Կ Հայաստանի կազմակերպությունները միավորելու և Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն ստեղծելու հարցը ՌԿ(բ)Կ Կենտկոմի առջև ծառացավ 1919 թ. աշնանը։

Բաքվից, Թիֆլիսից և Անդրկովկասի պրոլետարական այլ վայրերից երկրային կոմիտեն Հայաստան է ուղարկում մի շարք փորձված բոլշևիկների, որոնք անխոնջ գործունեություն են ծավալում կուսակցական-քաղաքական աշխատանքը բարելավելու ուղղությամբ։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումներով երկրային կոմիտեն միջոցներ ձեռնարկեց Հայաստանի տերիտորիայում գտնվող կուսակցական կազմակերպությունների գործունեությունն ակտիվացնելու, մասսաներից կտրվածությունը վերացնելու և աշխատանքը կոորդինացնելու ուղղությամբ։ Այդ ժամանակ Հայաստանում մի կողմից վերականգնվում էին ընդհատակում գտնվող, դաշնակցության կողմից հալածված ու ջախջախված բոլշևիկյան կազմակերպությունները, իսկ մյուս կողմից ստեղծվում էին նոր բջիջներ։ Հյուսիսային Կովկասից և Կովկասի արդյունաբերական վայրերից Հայաստան՝

---

29 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963, էջ 277։

կուսակցական աշխատանքի ուղարկված կայուն ու փորձված բոլշևիկները տեղերում քաղաքական աշխատանք էին ծավալում, օգտագործում լեգալ և անլեգալ հնարավորությունները, արհմիությունները և այլ կազմակերպություններ։ Հենց այդ ժամանակ էլ հիմնվեց երիտասարդական «Սպարտակ» կազմակերպությունը։

1919 թ. Հայաստանի շատ գավառներում և գյուղերում ստեղծվեցին բոլշևիկյան նոր բջիջներ, ամրապնդվեցին եղած կազմակերպությունները։ Կուսակցական ղեկավար կորիզը համալրվեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի և երկրային կոմիտեի կողմից՝ Մոսկվայից, Բաքվից, Թիֆլիսից և այլ քաղաքներից ուղարկված ընդհատակյա հեղափոխական աշխատանքի հարուստ փորձ ունեցող կոմունիստներով։ ՌԿ(բ)Կ երկրային կոմիտեի որոշմամբ Հայաստանի կուսակցական կազմակերպություններին օգնության եկան Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Շահվերդյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Հ. Կոստանյանը, Ս. Խանոյանը և ուրիշներ։ 1919 թ. սեպտեմբերին Մուղանից գաղտնի կերպով Ալեքսանդրապոլ անցան բոլշևիկներ Միտրոֆանովը և Լ. Առուստամյանը, որոնք տեղի բոլշևիկներին հասցրին Բաքվի կոմիտեի հանձնարարությունները։

1919 թ. սեպտեմբերին ձևավորվեց Երևանի բոլշևիկյան ընդհատակյա կոմիտեն, որի կազմում ընտրվեցին Աղասի Խանջյանը, Սերգո Մարտիկյանը, Գարեգին Հարությունյանը (պոլիգրաֆիստ), Մամիկոն Կորխմազյանը (երկաթուղային), Գևորգ Դանիելյանը (ավտոգարաժից) և ուրիշներ։ Կոմիտեի քարտուղար ընտրվեց Ա. Խանջյանը։ Կատարվեց աշխատանքի բաժանում[30]։ Հայաստան եկան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության բովով անցած բոլշևիկներ, որոնք օգնում էին պայքարի ելած աշխատավոր մասսաներին, նրանց համախմբում կոմունիստական դրոշի ներքո։

1919 թ. ապրիլին Բաքվից վերադարձած բոլշևիկներ Անդրեաս Ասրեյանը, Աբել Ղավալյանը, Իվան Բրդանունցը և ուրիշներ հիմք են դնում Խնձորեսկ գյուղի կուսակցական բջիջին, որը շուտով կապ է հաստատում Զանգեզուրի ընդհատակյա բոլշևիկյան կոմիտեի հետ։ Մինչ այդ անձնվեր բոլշևիկներ Քրիստափոր Մկրտչյանի, Մակիչ Մաշուրյանի և ուրիշների ղեկավարությամբ, ՌԿ(բ)Կ Բաքվի կոմիտեի օգնությամբ, Գորիսում կազմակերպվել էր բոլշևիկյան ընդհատակյա գավառային կոմիտե։ 1919 թ. ձևավորվում են նաև

30 Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք երկրորդ, էջ 205։

Քարահունջի, Տեղի, Գորիսի, Ծավի, Շիկահողի, Կեմանցի, Բանակոթի և Զանգեզուրի բոլշևիկյան այլ բջիջներ: Հին բոլշևիկ Պյոտր Գրյուկովի վկայությամբ այդ ժամանակ Լոռու համարյա թե բոլոր գյուղերում կազմակերպվել էին կոմունիստական բջիջներ, որոնց մեջ հաստատվել էին փոխադարձ կապեր[31]: 1919 թ. օգոստոսին Հաղբատի կիրճում տեղի ունեցավ Լոռու «չեզոք գոտու» բոլշևիկների կոնֆերանս, որին մասնակցում էր նաև ՌԿ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեի ներկայացուցիչ՝ Աստուր Կախոյանը: Կոնֆերանսը քննարկեց ընթացիկ մոմենտը, կուսակցական կազմակերպությունների խնդիրների հարցը և ընդունեց գործնական որոշումներ: ՌԿ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեի ցուցումներով, Ս. Խանոյանի ակտիվ մասնակցությամբ, ձևավորվում է Ղարաքիլիսայի բոլշևիկյան բջիջը:

4

1919 թ. սեպտեմբերին, ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի նախաձեռնությամբ, Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն: Սկզբում նախատեսված էր հրավիրել կոնֆերանս, բայց հնարավոր չեղավ ժամանակին ապահովել Հայաստանի բոլոր գավառների ներկայացուցիչների մասնակցությունը, որի պատճառով կոնֆերանս տեղի չունեցավ, այլ գումարվեց խորհրդակցություն: Խորհրդակցությանը մասնակցում էին Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Արշ. Մելիքյանը, Ս. Խանոյանը, Ա. Կախոյանը, Ս. Ալավերդյանը, Ղ. Ղուկասյանը, Գ. Շահվերդյանը, Ս. Մարտիկյանը և ուրիշները: Սեպտեմբերյան խորհրդակցությանը ներկա չէին Ալեքսանդրապոլի, Աշտարակի, Նոր Բայազետի կազմակերպությունների ներկայացուցիչները: Խորհրդակցության նախապատրաստման և անցկացման գործում մեծ է Ս. Կասյանի դերը: Խորհրդակցությունը, քննարկելով ընթացիկ մոմենտի և Հայաստանի կուսակցական կազմակերպությունների գործունեության հետ կապված հարցերը, գործնական միջոցառումներ նշեց կոմունիստական բջիջների և խմբերի հետագա ամրապնդման ուղղությամբ: Խորհրդակցությունում քննարկվեցին՝ 1. Զեկուցում կուսակցական դրության և կուսաշխատանքի մասին 1917—1919 թվականների ընթացքում, զեկու-

---

31 Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք երկրորդ, էջ 671:

ցողներ՝ Մելիքյան և Մռավյան, 2. Զեկուցում ընթացիկ մոմենտի և մեր անելիքների մասին, զեկուցող՝ Կասյան։ 3. Զեկուցումներ տեղերից։ 4. Զեկուցում Հայաստանում երիտասարդ կոմունիստների շարժման մասին, զեկուցողներ՝ Ղուկասյան և Մելիքյան։ 5. Առաջարկություն՝ մոտ ապագայում, ոչ ուշ 1920 թվականի հունվար-փետրվարը, հրավիրել մի նոր խորհրդակցություն, որպես լրիվ և իսկական կոնֆերանս, առաջարկող՝ Մռավյան։ 6. Հայաստանի կոմիտեի ընտրություն (Арменком). որոշվեց չմասնակցել պառլամենտական ընտրություններին (հակառակ Ա. Մելիքյանի առաջարկության)։ Հաստատվեցին ընթացիկ դրության մասին Կասյանի 10 թեզիսները։ Որոշվեց, որ երիտասարդական «Սպարտակ» կազմակերպությունը պետք է ղեկավարվի ընտրվելիք կուսակցական բարձրագույն օրգանի՝ Արմենկոմի կողմից։ Այնուհետև հավանություն արվեց 1920 թ. հունվարին համահայաստանյան կոնֆերանս հրավիրելու առաջարկությանը[32]։ Խորհրդակցությունը և ապա՝ նոր ստեղծված Արմենկոմը հանձնարարեցին Ս. Կասյանին, ելնելով ստեղծված իրադրությունից և այդ առթիվ խորհրդակցությունում ծավալված մտքերի փոխանակությունից, պատրաստել մի փաստաթուղթ կուսակցական կազմակերպություններին ուղարկելու համար։ Շատ կարճ ժամանակում Կասյանը կատարեց այդ հանձնարարությունը։ 1919 թ. դեկտեմբերին, Երևանում, ընդհատակյա պայմաններում, լույս տեսավ այդ փաստաթուղթը Ս. Ատենյան մականունով և «Ո՞ւր է ելքը» խորագրով։

Այս, որն էր հայ ժողովրդի համար դաշնակցության և նրա անգլո-ամերիկյան հովանավորների ու թուրքական բարբարոսների ձեռքերով ստեղծված դժոխքից դուրս գալու ելքը։ Ահա պատմական այն խնդիրը, որ ծառացած էր Հայաստանի կոմունիստների սեպտեմբերյան խորհրդակցության մասնակիցների առջև։ Մարքս-լենինյան իմացությամբ նկարագրելով Հայաստանում այդ ժամանակ գոյություն ունեցող իրավիճակը և վերլուծելով երկրի ներքին և արտաքին պատճառները, Ս. Կասյանը իր վերոհիշյալ գրքույկում գրել է. «Հայաստանի ժողովրդի փրկության ուղին այնտեղ չէ, ուր որոնում են պատեպատ ընկած դաշնակցականները և մյուս ազգա-

32 Տե՛ս Արշ. Մելիքյանի հուշերը, ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, Ա. Մելիքյանի ֆոնդ։ Նաև՝ «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 290—292։

յին հեղհեղուկ մտավորականները: «Փրկությունն» այն ուղին, որ ցույց են տալիս այդ բոբկամիտ, իրական կյանքի տված դասերը մոռացության մատնող մարդիկ, ընդհակառակը, տանելու է ժողովրդին դեպի նոր արհավիրքներ, դեպի նոր դժոխք, կապիտալիստների աշխարհում, իմպերիալիստական բանակում նա չէր կարող գտնել անկեղծ, անշահասեր բարեկամ, իրեն իրապես փրկող ձեռք: Երկաթի և արյան միջոցով պահվող, ժողովրդական տառապանքի և հառաչանքի վրա կառուցված այդ աշխարհը չէ, որ պիտի փրկե հայ ժողովրդին տանջանքից և հառաչանքից, այլ այն աշխարհը, որի արշալույսը բացվել է ռուսական հյուսիսում»[33]:

Միակ ելքը այդ է, ուրիշ ելք չկա,— ասում է հեղինակը: Վերջնական կործանման ահավոր վտանգից Հայաստանի փրկությունը Կասյանը կապում էր Հոկտեմբերյան հեղափոխության բացած ճանապարհով ընթանալու՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման հետ: «Հիմնելով խորհրդային հանրապետություն Հայաստանում, իր ձեռքը առնելով քաղաքական իշխանությունը, հայ ժողովուրդն ամենից առաջ կապահովի իր ֆիզիկական գոյությունը: Խորհրդային իշխանության առաջին հզոր հանրապետությունը, առաջին սոցիալիստական մեծ երկիրը— բանվորա-գյուղացիական Ռուսաստանը իր հուժկու թևերի պաշտպանության տակ կառնի Հայաստանի տառապյալ ժողովրդին»— եզրակացնում էր հեղինակը[34]:

«Ո՞ւր է ելքը» մարքսիստական արժեքավոր աշխատություն է: Այն բոլշևիկյան բոցաշունչ մարտակոչ է՝ հանուն Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի:

Սեպտեմբերյան խորհրդակցության նշանակությունն ամենից առաջ այն է, որ բոլշևիկյան ցաքուցրիվ կազմակերպությունները

---

33 Ս. Առենյան, *Ո՞ւր է ելքը*, 1920, էջ 68:

34 Ս. Առենյան, *Ո՞ւր է ելքը*, էջ 73: «Ո՞ւր է ելքը» գրքույկը 1920 թ. վերահրատարակվել է նաև ՌՍՖՍՀ Ազգությունների ժողկոմատի Հայկական գործերի կոմիսարիատի Դոնի Ռոստովի (Նոր Նախիջևան) բաժանմունքի կողմից, Ս. Լուկաշինի համառոտ առաջաբանով: Ա. Մռավյանը 1920 թ. մարտի 22-ին բոլշևիկյան «Նոր ուղի» (Թիֆլիս) թերթում հրատարակվել է ծավալուն գրախոսություն՝ վերոհիշյալ գրքույկի մասին (տե՛ս «Նոր ուղի», № 1, 22 մարտի 1920 թ., նաև «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3, 1962, էջ 27—31, որը տպագրության է պատրաստել տողերիս գրողը): «Ո՞ւր է ելքը» գրքույկը բարձր է գնահատել նաև Շ. Ամիրխանյանը՝ «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» գրքում: Այդ առթիվ հոդվածներ են գրել Բ. Մանդալյանը՝ «Նոր ուղի» ամսագրում, № 4, 1929, Գր. Տեր-Սիմոնյանը՝ «Խորհրդային Հայաստան», № 128, 11 ապրիլի 1932 թ. և ուրիշներ:

առաջին անգամ այն միավորեց և ստեղծեց Համահայաստանյան մի միասնական կուսակցական Կոմիտե (ԱրմԵնկոմ), որի կազմում մտան Ս. Կասյանը, Ս. Ալավերդյանը, Ղ. Ղուկասյանը, Ա. Մռավյանը, Արշ. Մելիքյանը, Դ. Շահվերդյանը, Ս. Խանոյանը։

Հայաստանի բոլշևիկների 1919 թ. սեպտեմբերյան խորհրդակցությունը առաջին լուրջ քայլը կատարեց Հայաստանի կուսակցական կազմակերպությունների աշխատանքը կոորդինացնելու ճանապարհին, նախապատրաստելով 1920 թ. հունվարյան առաջին կոնֆերանսը։

* * *

1920 թ. հունվարի 18—19-ին Երևանում, անլեգալ պայմաններում, գումարվեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը, որին մասնակցում էին կուսակցական կազմակերպությունների 22 ներկայացուցիչներ[35]։ Կոնֆերանսի պատգամավորներն էին՝ ՌԿ(բ)Կ երկրային կոմիտեից՝ Սարգիս Կասյանը և Ասքանազ Մռավյանը[36], Երևանի կազմակերպությունից՝ Ստեփան Ալավերդյանը, Սերգո Մարտիկյանը, Արշավիր Մելիքյանը, Արշավիր Տեր-Ղազարյանը, Դանիել (Դանուշ) Շահվերդյանը, Ալեքսանդրապոլի կազմակերպությունից՝ Ավիս Նուրիջանյանը, Ալեքսանդր (Սաշա) Գրիգորյանը, Արշակ Գոգունցը (խորհրդակցական ձայնով), Նոր Բայազետից՝ Հովհաննես Սարուխանյանը, Բաբիկ Բաբիկյանը, Էջմիածնից՝ Հովսեփ Պողոսյանը (որոշ նյութեր վկայում են, որ նա ընտրվել է Երևանից) Լոռու «չեզոք գոտուց»՝ Ասատուր Կախոյանը, Դիլիջանից՝ Եղիշե Շամախյանը, Ղազախից (Իջևանից)՝ Պետրոս Վարդանյանը, Սարիղամիշից՝ Ռ. Ռս-

35 Տե՛ս «Պրավդա», № 90, 28 ապրիլի 1920 թ.։

36 Ասք. Մռավյանը թեև զեկուցող էր նշանակված, բայց հնարավորություն չունեցավ մասնակցել կոնֆերանսին։ «Երրորդ զեկուցումը՝ վերաբերմունքը դեպի ընմայական շարժումը տեղի չունեցավ,— 1922 թ. նոյեմբերի 15-ին ասել է Ս. Կասյանը,— ընկ. Մռավյանի բացակայության պատճառով» (տե՛ս ՄԼԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, մաս. 1, գ. 36, թ. 5)։ Կոնֆերանսի պատգամավորներից Ս. Մարտիկյանը, Հ. Պողոսյանը, Դ. Շահվերդյանը, Ա. Խանջյանը և ուրիշներ նույնպես նշել են, որ Ա. Մռավյանը կոնֆերանսին չի մասնակցել (տե՛ս նույն տեղում)։ Այդ մասին Ա. Մռավյանը գրել է, «Թիֆլիս՝ Երկրային կոմիտե մեկնելու պատճառով ես Հայաստանի կուսակցական կազմակերպությունների հունվարյան կոնֆերանսին չեմ մասնակցել» (տե՛ս նույն տեղում, գ. 36, թ. 27—28)։ Այսպիսով, ակնհայտ է, որ ճիշտ չեն այն հեղինակները, որոնք հունվարյան կոնֆերանսի մասնակիցների թվում հիշատակում են նաև Ա. Մռավյանին։

կանյանը (դաշն և Երկաթուղու), Ղարաքիլիսայից՝ Վ. Վարդանյանը։ «Սպարտակ» երիտասարդական կազմակերպությունից՝ Արմենակ Բուդաղյանը, Աղասի Խանջյանը (խորհրդակցական ձայնով), Ղուկաս Ղուկասյանը (խորհրդակցական ձայնով), Ջալալօղլուց՝ Ներսես Ջիլավյանը[37]։ Զանգեզուրի, Կարսի, Սուրմալուի, Շամշադինի կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչները չկարողացան մասնակցել կոնֆերանսին։

Հունվարյան կոնֆերանսը, որի նախագահն էր Դ. Շահվերդյանը, քննարկեց 1. ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի հաշվետու զեկուցումը՝ փաստորեն Հայաստանի բոլշևիկների տակտիկական գիծը (զեկուցող՝ Ս. Կասյան), 2. ընթացիկ մոմենտը և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների խնդիրները (զեկուցող՝ Ս. Ալավերդյան), 3. կուսակցության կազմակերպական կառուցվածքի հարցը, 4. երիտասարդության շրջանում, արհմիություններում, գյուղացիության և զինվորների մեջ կատարելիք աշխատանքի մասին, 5. զեկուցումներ և հաղորդումներ տեղերից և 6. ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի ընտրությունը։ Վերաբերմունքը դեպի քեմալական շարժումը (արևելյան հարց) զեկուցողի՝ Ա. Մռավյանի բացակայության պատճառով առանձին չքննարկվեց, միացվեց Ս. Կասյանի զեկուցմանը։

Դեռևս կոնֆերանսի նախօրյակին, 1920 թ. հունվարի 3-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն քննարկեց Հայաստանում կատարվող կուսակցական աշխատանքի հարցը և ընդունեց որոշում, որտեղ ասված էր. «Տեղական շովինիզմի դեմ պայքարի և ռուսական ցարիզմի լծի տակ գտնվող ազգերի մեջ սոցիալիստական հեղափոխություն պրոպագանդելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը անհրաժեշտ են դարձնում, որպեսզի նախկին ռուսական կայսրության սահմաններում փաստորեն ստեղծված «ինքնուրույն» պետություններում կոմունիստական կազմակերպությունները աշխատեն որպես ինքնուրույն կոմունիստական կուսակցություններ։ Առանձնապես կարևոր է կազմակերպական նման եղանակը Արևելքում, այնքան, որքան Ասիայում և Ասիայի նախադռանը աղ-

---

[37] Որոշ նյութերի համաձայն կոնֆերանսին որպես հյուր մասնակցել է Հ. Զարգարյանը։ Ճիշտ չեն այն պնդումները, թե Աղասի Խանջյանը իբրև հյուր է մասնակցել կոնֆերանսին։ 1923 թ. հունվարի 4-ին Ա. Խանջյանը անդրադառնալով կոնֆերանսի հարցերին, գրել է, որ նիստերին նա «մասնակցել է խորհրդակցական ձայնի իրավունքով» (տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Վրացական ֆիլիալի արխիվ, ֆ. 13, մաս 1, ցուց. 1, գ. 36, թ. 30)։

րող ժողովուրդների վստահության նվաճումը կազմում է Սովետական Ռուսաստանի և ՌԿԿ-ի հիմնական խնդիրներից մեկը»[38]։

Քաղբյուրոյի որոշումը իր մեջ ամփոփում էր Հայաստանում կոմունիստական շարժման ծավալման և նրա խնդիրների վերաբերյալ վերադաս օրգանների մինչ այդ ունեցած տեսակետը, լիովին արտահայտում հայ ժողովրդի ազատագրական պայքարի արմատական շահերը։ Այն նվիրված էր Հայաստանում կուսակցական շինարարության նոր էտապի հարցերին և նրա առանձնահատկություններին։ Այն միաժամանակ լիովին արտահայտում էր ՌԿ(բ)Կ Հայաստանի կազմակերպություններին զուգահեռ 1918 թ. հայ գաղթականության մեջ գործող «Հայաստանի կոմունիստական կուսակցության» խնդիրները։ Պատմական ճշմարտությունը պահանջում է նշել, որ վերոհիշյալ որոշման նախապատրաստմանը ակտիվ մասնակցություն են ունեցել նաև «Հայաստանի կոմունիստական կուսակցության» ղեկավարները։

Քաղբյուրոյի որոշումը Հայաստանում կոմունիստական շարժման զարգացման, մարքս-լենինյան գաղափարների տարածման, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության ակտիվացման ծրագիր էր, նրա ոգով էր տոգորված 1920 թ. հունվարյան կոնֆերանսը։ Կոնֆերանսում գլխավոր հարցի մասին զեկուցումով (թեզիսների ձևով) հանդես եկավ Ս. Կասյանը, որը մարքսիստական խորաթափանցությամբ վերլուծեց ստեղծված վիճակը. «Ո՞ւր է ելքը» գրքույկի (փաստորեն սեպտեմբերյան խորհրդակցության որոշումների) ոգով նպատակամղեց պատգամավորներին։ Կոնֆերանսի մասնակիցները միահամուռ հավանություն տվեցին Ս. Կասյանի զեկուցման մեջ առաջադրված տակտիկական գծին։ ՌԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կազմակերպության ներկայացուցիչներից Ավիս Նուրիջանյանը, մինչև կոնֆերանսը ծանոթ չլինելով Ս. Կասյանի զեկուցման բովանդակությանը, թույլտվություն էր խնդրել նույն հարցի մասին հարակից զեկուցում կարդալ։ Ալեքսանդրապոլի պատգամավորների և Ռ. Ոսկանյանի առաջարկությամբ կոնֆերանսի օրակարգում մտցվում է նաև Ա. Նուրիջանյանի հարակից զեկուցումը։ Բայց տեսնելով, որ Ս. Կասյանի թեզիսները միանգամայն սպառիչ պատասխան են տալիս կազմակերպությանը հուզող հարցերին, Նուրիջանյանը հրաժարվում է իր մտադրությունից և բովա-

[38] Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Ադրբեջանական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 125, գ. 1, թ. 13։

բարվում է միայն մաքերի փոխանակությանը մասնակցելով: Համավարյան կոնֆերանսը լսեց և հաստատեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կազմակերպական կանոնադրությունը, լեգալ կազմակերպությունների մեջ կատարվող աշխատանքի ծրագիրը, հարց ու պատասխանի ձևով գրված թեզիսները, որոնք կրում էին «Հարցեր» խորագիրը և այլն[39]: Կազմակերպական կանոնադրության հիմքում դրված էին ՌԿ(բ)Կ կանոնադրության, դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքները: Այնտեղ ասված էր նաև, որ ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն հանդիսանում է Կովկասի բոլոր կուսակցական կազմակերպությունների ղեկավար օրգանը, իսկ Հայաստանի տարածքում գտնվող մյուս բոլոր կազմակերպությունների ղեկավար օրգանը ՌԿԿ Հայաստանի խորհուրդն է՝ ընտրված հիշյալ կազմակերպության կոնֆերանսի կողմից: Այն ղեկավարում է Հայաստանի բոլոր կուսակցական կազմակերպությունների կազմակերպական, քաղաքական, գաղափարական աշխատանքը, տալիս նրանց հրահանգներ և ցուցումներ՝ համաձայն կոնֆերանսի որոշումների, հրատարակում է գրքեր, թերթեր և թռուցիկներ, տեղական կազմակերպություններին մատակարարում գրականություն, վարում կենտրոնական դրամարկղը և պահում կուսակցության գույքը, նյութական նպաստ է տալիս տեղական կազմակերպություններին՝ համաձայն վերջինների նախահաշիվների և ստանում նրանցից դրամական հաշիվներ[40]:

Կանոնադրության մեջ շարադրված է կուսակցական կազմակերպությունների կառուցվածքը: Նախատեսվում էր սկզբնական կազմակերպություններ (բջիջներ) ստեղծել գյուղերում և քաղաքներում:

Կոնֆերանսն առանձնահատուկ նշանակություն տալով լեգալ կազմակերպություններում կատարվող աշխատանքին, ծրագրային որոշում ընդունեց արհմիություններում, բանվորական ակումբներում, գյուղացիական միություններում, կոոպերատիվներում, ժողովրդական համալսարաններում և այլ օրգաններում կուսակցական-քաղաքական աշխատանքն ուժեղացնելու մասին: Հասարակական բոլոր կազմակերպությունները պետք է աշխատեն կուսակ-

39 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 394, թ. 3:

40 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 894, թ. 3:

ցական ղեկավար օրգանների ցուցումներով։ Պրոֆմիությունները պետք է ուսումնասիրեն բանվորների նյութական և աշխատանքային պայմանները, պայքարեն նյութական և իրավական դրության բարելավման համար, կուլտուր-լուսավորական աշխատանք կատարեն աշխատավոր զանգվածների մեջ։ Գյուղացիական միությունների խնդիրն է՝ ուսումնասիրել գյուղացիության վիճակը, օգնել նրանց, գյուղացիական աշխատավոր զանգվածներին դաստիարակել դասակարգային ոգով, ամրացնել բանվորների և գյուղացիների կապը։

Հունվարյան կոնֆերանսը Ադրբեջանի, Վրաստանի, Պարսկաստանի և Թուրքիայի կոմունիստական կազմակերպություններին ուղարկեց ողջույնի հեռագրեր, որոնք այդ օրերին հրապարակվեցին ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի օրգան «Պահակ» թերթում։ Այնտեղ նշվում էր, որ դեռ մոտիկ անցյալում սկսած կոմունիստական աշխատանքը, համաձայն կոնֆերանսի, տվել է խոշոր արդյունք։ Այսօրվանից համարձակորեն կարելի է ասել, որ կոմունիստական կազմակերպությունը Հայաստանում միակն է, որ իր լոզունգներով ու գործելակերպով կազմակերպում և առաջնորդում է պրոլետարական մասսաներին՝ ընդդեմ բուրժուազիայի և նրա դասակարգային պետության։ «Մեր նպատակն է,— ասված էր ողջույնի մեջ,— Ադրբեջանի, Տաճկաստանի և Պարսկաստանի կոմունիստական կազմակերպությունների հետ միացյալ ուժերով բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների՝ «դաշնակցության», մուսավաթի, մենշևիկների և թուրք նացիոնալիստների ձեռքից դուրս քաշել բանվորա-գյուղացիական մասսաները, ֆրոնտ կազմել այդ երկրներում կոմունիստական հեղափոխության համար և մեծ, կարմիր Ռուսաստանի աջակցությամբ խորտակելով Անտանտայի բոլոր սև ու մութ ուժերը՝ անցնել մեր թշնամիների դիակների վրայից և միանալ համաշխարհային մեծ ու խաղաղ կոմունիստական ընտանիքին»[41]։

Կոնֆերանսում արմատական հարցերում տարաձայնություններ չկային։ Միայն ղեկավարներին մասնակցելու հարցում էր, որ Հովսեփ Պողոսյանը կողմ քվեարկեց, իսկ մյուս բոլոր պատգամավորները՝ դեմ։ Միաձայն մերժվեց Ալեքսանդրապոլի ներկայացուցիչների պահանջը՝ համահայաստանյան կուսակցական կենտրոնը Երևանից Ալեքսանդրապոլ փոխադրելու մասին։ Նրանք փաստարկ ունեին, թե Ալեքսանդրապոլը Հայաստանի միակ բանվորական

---

[41] «Պահակ», № 19, 27 հունվարի 1920 թ., նաև՝ ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 832։

կենտրոնն է, հարկավոր է ղեկավարությունը մոտեցնել մասսաներին։ Բայց, ինչպես ասացինք, կոնֆերանսը և ապա՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն գտան, որ հարկ չկա նման քայլի դիմելու։

Հունվարյան կոնֆերանսը կազմակերպական կանոնադրության համաձայն ընտրեց 7 հոգուց բաղկացած ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե, որի կազմում մտան Ս. Կասյանը, Ս. Ալավերդյանը, Ա. Մռավյանը, Ա. Նուրիջանյանը, Հ. Պողոսյանը, Դ. Շահվերդյանը և Ս. Մարտիկյանը։ Կոնֆերանսից հետո, տարբեր ժամանակ, կոոպտացիոն կարգով Արմենկոմում ընտրվել են նաև Ղ. Ղուկասյանը, Հ. Կոստանյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Հ. Սարուխանյանը, Ա. Գուգունցը։ Մայիսյան ապստամբության ժամանակ վերոհիշյալ բոլոր 13 ընկերներն էլ Արմենկոմի կազմում էին։ Արմենկոմի նախագահը Ս. Կասյանն էր։ Նրա ձերբակալվելուց և Հայաստանից արտաքսվելուց հետո (1920 թ. փետրվար) նախագահը դարձավ Ս. Ալավերդյանը։

Հունվարյան կոնֆերանսը Հայաստանի կուսակցական կազմակերպություններին, աշխատավոր զանգվածներին նպատակամղեց զինված ապստամբության։

Կոնֆերանսը իր ընդունած այդ կուրսով ՌԿ(բ)Կ Հայաստանի կազմակերպություններին հավատ էր ներշնչում՝ պատրաստվել առաջիկա գոտեմարտերին, տապալել դաշնակների տխրահռչակ տիրապետությունը և հաստատել սովետական կարգեր։

Այն, ինչ չստացվեց 1919 թ. սեպտեմբերյան խորհրդակցությանը, հաջողությամբ իրականացրեց հունվարյան կոնֆերանսը։

Հունվարյան կոնֆերանսի որոշումները տոգորված են բոլշևիկյան կուսակցության գաղափարական, կազմակերպական, տակտիկական ու տեսական հիմունքների նկատմամբ հավատարմության, ՌԿ(բ)Կ-ի հետ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների միասնության ոգով։ Կոնֆերանսը փաստորեն ավարտեց Հայաստանի տերիտորիայում մինչև այդ անջատ-անջատ գործող բոլշևիկյան կազմակերպությունների միավորումը կուսակցական մեկ ղեկավար օրգանի՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի շուրջը և նրա ղեկավարության ներքո, և դրանով իսկ վճռական քայլ կատարեց Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական ձևավորման ճանապարհին։ Կոնֆերանսը, որ կարևոր իրադարձություն էր Հայաստանի կոմկուսի պատմության մեջ, ամբողջովին ելնում էր ՌԿ(բ)Կ VIII համագումարի որոշումներից։ Ինչպես որ ՌԿ(բ)Կ VIII համագումարի որոշման համաձայն Ուկրաինայի, Լատ-

վիայի, Բելոռուսիայի, Լիտվայի կոմունիստական կազմակերպությունների կենտկոմները օգտվում էին մարզային կոմիտեների իրավունքներով և ամբողջությամբ ենթարկվում ՌԿ(բ)Կ Կենտկոմին, այդպես էլ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանսը որոշեց, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունը օգտվելու է մարզային կազմակերպության իրավունքներով։

1920 թ. ապրիլի 28-ին բոլշևիկյան «Պրավդա» թերթը կոնֆերանսին նվիրված ինֆորմացիայում գրել է, որ կուսակցական աշխատանքը Հայաստանում «փայլուն արդյունքներ է տվել, հունվարին տեղի ունեցած կուսակցական կոնֆերանսին մասնակցել են 22 ներկայացուցիչ, որոնք ներկայացրել են 1200 անդամների... Կոնֆերանսը որոշեց մտնել ՌԿ(բ)Կ-ի մեջ մարզային կազմակերպության իրավունքներով»[42]։

Հունվարյան կոնֆերանսը վճռական հակահարված տվեց Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական մեկուսացման կողմնակիցներին, մասնավորապես Ա. Ջուրաբյանի անկախ սոցիալ-դեմոկրատական խմբին։ Կոնֆերանսը դրանով իսկ իր քաղաքական հասունությունը ցուցաբերեց բոլշևիկյան կուսակցության շինարարության տվյալ էտապում և հավատարմությունը՝ լենինիզմին։

1919 թ. սեպտեմբերյան խորհրդակցությունից մինչև 1920 թ. հունվարյան կոնֆերանսը թեև շատ ժամանակ չէր անցել, բայց ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն՝ համահայաստանյան կուսակցական առաջին ղեկավար օրգանը, կարողացավ արդյունավետ աշխատանք կատարել կուսակցական կազմակերպությունների գործունեությունը կոորդինացնելու և ակտիվացնելու ուղղությամբ։ Մինչև հունվար ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն ունեցել է ինը նիստ[43], ուր քննարկվել են տեղական կուսակցական կազմակերպությունների՝ մասնավորապես Ալեքսանդրապոլի, Դիլիջանի, Նոր Բայազետի, Ղարաքիլիսայի, Էջմիածնի, Կարսի, Աշտարակի և այլ վայրերի հետ կապն

---

[42] *Տե՛ս* «Правда», № 90, 28 апреля 1920 г. «На Кавказе. В Армении». *Հունվարյան կոնֆերանսի մասին տե՛ս* Խ. Բարսեղյան, *Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը, Երևան, 1965, Г. А. Галоян.* Рабочее движение и национальный вопрос в Закавказье, 1900—1922. Ереван, 1969.

[43] *Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, Արշ. Մելիքյանի հուշերը։*

ամրապնդելու, կուսակցական թերթ ստեղծելու, Լոռվա, «Չեզոք գոտու» ապարատն օգտագործելու, գյուղացիական միություններին աջակցելու, Արագածոտնի գյուղացիական միության օրգան «Գյուղացու ձայն» թերթը հրատարակելու, երիտասարդական «Սպարտակ» կազմակերպության աշխատանքը բարելավելու, երիտասարդության նկատմամբ ղեկավարությունն ուժեղացնելու հարցերը։ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն զբաղվել է նաև Լոռվա «Չեզոք գոտում» և ադրբեջանական բնակչության մեջ քաղաքական աշխատանքի կազմակերպման, հեղափոխական թռուցիկների և գրականության հրատարակման խնդիրներով։ Կապը ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի հետ ավելի ամրապնդելու համար հանձնարարվեց Ս. Կասյանին գրել հանրամատչելի մի գրքույկ Հայաստանի արդի դրության մասին՝ ցույց տալ դաշնակցության տիրապետության տապալման և Հայաստանում բանվորա-գյուղացիական իշխանության հաստատման ուղին։ Ս. Կասյանը, հաջողությամբ կատարեց իրեն տրված հանձնարարությունը։ Նրա «Ո՞ւր է ելքը» գրքույկը արտացոլում էր սեպտեմբերյան խորհրդակցության ոգին։

ՌԿ(բ)Կ Հայաստանի առաջին կոմիտեի կազմակերպական աշխատանքում հատուկ տեղ է գրավում 1920 թ. հունվարյան կոնֆերանսը։ Կոնֆերանսի ընտրած ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն ավելի գործնական քայլերի դիմեց նոր բջիջներ ստեղծելու, նրանց միջև փոխադարձ կապ հաստատելու, մասսաների ուժերը համախմբելու, սովետական իշխանության հաղթանակի համար տարվող պայքարը գլխավորելու, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կազմակերպական ձևավորման պրոցեսը արագացնելու ուղղությամբ։

ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն 1920 թ. հունվարին հատուկ կոչով դիմեց բանվորներին և գյուղացիներին, որի մեջ մերկացնում էր իմպերիալիստական տերությունների խաբեությունները և դաշնակցության վարած ազգակործան քաղաքականությունը։

ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի և Արմենկոմի մարտաշունչ կոչերն ու թռուցիկները, դաշնակցության հալածանքների և դաժան վայրագությունների պայմաններում, տարածվում էին բանվորների և աշխատավոր զանգվածների շրջանում։

ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն 1920 թ. սկզբներին Երևանում հրատարակեց Ս. Մռավյանի «Կոմունիստական ինտերնացիոնալ» հանրամատչելի գրքույկը։ Այստեղ հեղինակը համառոտակի շարադրել էր Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի 1864 թ. սեպտեմբերին հիմնա-

գրած բանվորների միջազգային ընկերության I Ինտերնացիոնալի՝ սոցիալիզմի համաշխարհային սիստեմի նախագուշակի պատմությունը։

Ա. Մռավյանն իր բրոշյուրում քննադատում էր II Ինտերնացիոնալի պարագլուխներին, մերկացնում նրանց դավաճանական գործունեությունը։ Նա մեծ ոգևորությամբ էր խոսում կոմունիստական Ինտերնացիոնալի, նրա հիմնադիր Վ. Ի. Լենինի, ՌԿ(բ)Կ-ի մասին։ III Ինտերնացիոնալի իսկական խարիսխը,— գրում էր նա,— ՌԿ(բ)Կ-ի 600 հազար կոմունիստներն են, Ռուսաստանի 200 միլիոն աշխատավորները։

ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն սկզբից ևեթ ուժեղացրեց երիտասարդական «Սպարտակ» կազմակերպության կուսակցական ղեկավարումը։ Արմենկոմի անդամները, Ա. Խանջյանը, Ղ. Ղուկասյանը, Ս. Բուդաղյանը և ուրիշ խանդավառներ քաղաքական-մասսայական բեղմնավոր գործունեություն ծավալեցին երիտասարդության մեջ։ Դեռևս 1919 թ. մայիսին Երևանում լույս տեսավ Հայաստանի հեղափոխական երիտասարդության «Սպարտակ» միության համանուն թերթի առաջին և միակ համարը։ «Սպարտակ»-ի առաջին էջը զարդարում էին՝ «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»։ «Կեցցե՜ երրորդ կոմունիստական ինտերնացիոնալը», «Կեցցե ինտերնացիոնալի մեծ տոնը՝ Մայիսի մեկը» կոչերը։ Նույն էջում զետեղված էր Երևանի սոցիալիստ-ինտերնացիոնալիստների «Սպարտակ» միության ծրագրի նախաբանը, որ ընդգծվում էր պրոլետարիատի ղեկավար դերը մարդկությունը կապիտալիզմի լծից ազատագրելու գործում։ Հեղափոխական պայքարում բանվորա-գյուղացիական երիտասարդությունը հզոր ուժ էր։ «Պրոլետարիատի շարժմանը,— ասված է ծրագրի նախաբանում,— օժանդակիչ դեր կարող է կատարել նաև այն երիտասարդությունը, որը դուրս գալով պրոլետարիատի և կիսապրոլետարիատի ծոցից, պետք է մտնի նրա շարքերը։ Այդ երիտասարդությունը, խորացնելով մարտական ինտերնացիոնալիզմի սկզբունքները, կկազմի այն հզոր ուժերը, որ պատրաստ կլինի անհրաժեշտ րոպեին լրացնելու պրոլետարիատի շարքերը, որ հաճախ նոսրանում է անհավասար կռվում»[44]։ «Սպարտակ»-ում տպագրված էին «Ինտերնացիոնալի մեծ տոնը» խմբագրականը, Ս. Բուդաղյանի՝ «Կեցցե մայիսի մեկը» (ստորագրությունը՝ «Ս. Բ.»), Ղ. Ղուկասյանի՝ «Ընկածներին» (ստորագրությունը՝ «Բանվոր»), Ա. Մռավյանի «Ստեփան Շահում-

44 «Սպարտակ», № 1, 1 մայիսի 1919 թ.։

յան» (ստորագրությունը՝ «Մանուկ»), Գ. Ղարաջյանի «Մայիսի մեկը և սոցիալիստ-երիտասարդությունը» (ստորագրությունը՝ «Օրթոդոքս»), Պ. Թորոսյանի «Բանվոր ընկերներին» հոդվածները, Շուշանիկ Կուրղինյանի «Բանվորները» բանաստեղծությունը և այլ նյութեր։

Ա. Մռավյանը և Ղ. Ղուկասյանը իրենց հոդվածներում մեծարում էին Բաքվի 26 հերոս կոմիսարներին, հատկապես բոցաշունչ հեղափոխական Ստ. Շահումյանին, երդվում հավատարիմ մնալ նրանց մղած մեծ պայքարի ավանդույթներին։

«Սպարտակ» թերթի հրատարակությունը աչքի ընկնող իրադարձություն էր ոչ միայն նախահեղափոխական բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմության մեջ, այլև Հայաստանի հեղափոխական շարժման, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների տարածման պատմության մեջ։

«Սպարտակ»-ը իր բովանդակությամբ, երիտասարդական ավյունով խիստ անհանգստացրեց հեղափոխության թշնամիներին՝ դաշնակներին և նրանց օտարերկրյա տերերին։

Հայաստանի «Սպարտակ» կոմունիստական երիտասարդական կազմակերպությունը, բոլշևիկների ղեկավարությամբ, շարունակում էր պայքարը։ 1919 թ. բանվորներին, զինվորներին և գյուղացիներին ուղղված մայիսմեկյան կոչում միությունը մերկացնում էր դաշնակցությանը և բուրժուա-նացիոնալիստական մյուս կուսակցություններին, նշում, որ «Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից... սկիզբ դրեց այն կատակերգական ողբերգությանը, որից այնքան շատ տուժեցին անդրկովկասյան բանվորն ու գյուղացին»։ Սպարտակյանները հայ աշխատավորությանը նախազգուշացնում էին՝ երբեք չհավատալ դաշնակցության խաբեություններին, խտացնել կոմունիստական կուսակցության շարքերը, համախմբվել հեղափոխության կարմիր դրոշի շուրջը, հայացքը դարձնել Սովետական Ռուսաստանի կողմը, այսինքն՝ հեղափոխական ինտերնացիոնալիզմի ճանապարհով հաղթականորեն ընթանալ դեպի մարդկության լուսավոր ապագան՝ սոցիալիզմը։ Հատկապես ուժեղ տպավորություն գործեց Բոյուք-Վեդիի ադրբեջանական աշխատավորության նկատմամբ դաշնակցության կիրառած շովինիստական քաղաքականությունը մերկացնող այն թռուցիկը, որ լույս է ընծայել «Սպարտակ» կազմակերպությունը 1919 թ. ամռանը։

ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն հունվարյան կոնֆերանսից հետո լայնորեն օգտագործում էր Երկրային կոմիտեի օրգան «Պա-

հակ» թերթը, որը լույս էր տեսնում Թիֆլիսում։ «Պահակ»-ը լուսաբանում էր Հայաստանում այդ ժամանակ տեղի ունեցող բոլոր կարևոր իրադարձությունները, որպես Հայաստանի կոմիտեի (Արմենկոմ) ձայնափողը։ Թերթը աշխատավորներին կոչ էր անում Ռուսաստանի օրինակով ստեղծել սովետական կարգեր։ Այդ է փրկությունը։ Դրան հասնելու համար հարկավոր է ժողովուրդների եղբայրություն և համերաշխություն...,— նշում էր թերթը։

«Պահակ»-ում է առաջին անգամ հրապարակվել Հակոբ Հակոբյանի «Վ. Ի. Լենին» բանաստեղծությունը։ Դա հայ գրականության մեջ Վլադիմիր Իլյիչի կերպարի գեղարվեստական արտացոլման՝ հայկական գեղարվեստական լենինապատման առաջին փորձն էր։

1920 թ. Հայաստանում «Պահակ»-ի մարտական զինակիցներն էին «Ալիք»-ը (Ալեքսանդրապոլ), «Գյուղացու ձայնը» (Լոռի-Ուզունլար) և բոլշևիկյան այլ թերթեր։

1920 թ. ապրիլին ՌԿ(բ)Կ Երևանի քաղաքային կոմիտեն անլեգալ հրատարակում է «Կոմունիստ» թերթը, որը, ըստ էության, ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի օրգանն էր։ Թերթի առաջին էջը բացվում էր ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի «Բանվորներ և գյուղացիներ» կոչով, որտեղ մերկացվում էր դաշնակցությունը, աշխատավոր մասսաներին խորհուրդ էր տրվում համախմբվել կոմունիստական կուսակցության դրոշի շուրջը։ Թերթը իր էջերում տպագրած «Մեր ձայնը», «Անդրկովկասի հակահեղափոխության օրերը հաշված են», «Գյուղը Հայաստանում» և այլ հոդվածներում պատմում էր ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի տակտիկական գծի, հասունացող հեղափոխական իրադարձության մասին։

ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն 1920 թ. մարտին Թիֆլիսում հիմք է դնում «Նոր ուղի» թերթին, որը շարունակում է «Պահակ»-ի սկսած գործը։ Թերթին ակտիվորեն աշխատակցում էին Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Ս. Խանոյանը, Վ. Երեմյանը, Հ. Հակոբյանը և ուրիշներ։ «Պահակ»-ի և «Նոր ուղու» գաղափարական-քաղաքական ուղղությունը նույնն էր։ Դրանց էջերում զետեղված հոդվածները հունվարյան կոնֆերանսի որոշումների ոգով լուսաբանում էին Հայաստանի տնտեսական վիճակի, հայ ժողովրդի ազատագրական պայքարի, սոցիալիստական հեղափոխության, կոմունիստական կազմակերպությունների գործունեության հետ առնչվող հրատապ հարցերը[45]։

---

45 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1962, № 3, էջ 9—36։

«Նոր ուղին» հայ աշխատավորությանը ցույց էր տալիս ազգային ազատագրության իսկական ճանապարհը, մեծ Հոկտեմբերի դրոշի տակ պայքարելու և սովետական կարգեր հաստատելու անհրաժեշտությունը։ Օրաթերթում լույս է տեսել աշխատավոր կազակների համառուսաստանյան առաջին համագումարում 1920 թ. մարտի 1-ին Վ. Ի. Լենինի կարդացած զեկուցման շարադրանքը[46]։

«Նոր ուղին» սուր քննադատության էր ենթարկում քեմալական շարժումը։ Ուշագրավ են Ս. Խանոյանի «Որն է բոլշևիկների և պանիսլամիստների պայմանագիրը» (ստորագրությունը՝ Տ. Ս.), Դ. Տեր-Սիմոնյանի «Սովի անխուսափելիությունը Հայաստանում», Ա. Մռավյանի՝ «Ինչպես են հիմարացնում» (ստորագրությունը՝ Ս. Սրթունյան), Ս. Ստենյանի (Ս. Կասյանի) «Ո՞ւր է ելքը» գրքի գրախոսությունը և այլ հոդվածներ։

«Նոր ուղու» հոդվածները վկայում են, որ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն հունվարյան կոնֆերանսից հետո զգալի չափով ուժեղացրել էր գաղափարական-քաղաքական աշխատանքը։ «Ամենածանր պայմաններում, նույնիսկ այն ժամանակ, երբ պառլամենտը (խոսքը Հայաստանի պառլամենտի մասին է— Խ. Բ.) սանկցիա էր տալիս բոլշևիկների դեմ կառավարության մղած անողոք պայքարին,— ասված է III Ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսին Հայաստանի պատվիրակության ներկայացրած զեկուցագրում,— կուսակցությունը ոչ մի րոպե չէր դադարեցնում աշխատանքը, լույս էր ընծայում թռուցիկներ, թերթեր, ժուռնալներ և այլն (հայերեն հրատարակված են հետևյալ թերթերը՝ «Ալիք», «Կոմունիստ», «Գյուղացու ձայնը», «Նոր ուղի», «Տեղեկագիր» և այլն)[47]։ Նույն զեկուցագրում ասված էր, որ միայն վեց ամսվա ընթացքում (1920 թ. հունվար-հուլիս) Հայաստանի կուսակցական կազմակերպությունները մեծ չափով աճել են, նրանց շարքերում կա 3000 անդամ, հաշված բանակը, որտեղ ևս կան ուժեղ կազմակերպություններ[48]։

Այս բոլորը նկատի ունենալով, Ա. Միկոյանը 1920 թ. մարտի 6-ին հեռագրում է Աստրախան Ս. Կիրովին՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմին հաղորդելու, որ «Հայաստանում աշխատանքը կարգի է գցվել։ Մեր

---

46 Տե՛ս «Նոր ուղի», № 2, 8 մարտի 1920 թ., տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 485—510։

47 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 54, оп. 1, ед. хр. 12, лл. 12—18.

48 Նույն տեղում։

ուժերն ասում են»[49]: Հետևյալ օրը Ս. Կիրովը այդ հեռագիրը հաղորդում է Մոսկվա՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմին[50]:

1920 թ. մարտի երկրորդ կեսին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կազմակերպության քաղաքային կոնֆերանսում, որին մասնակցում էին նաև Կարսից, Սարիղամիշից, Ղարաքիլիսայից եկած կուսակցական ընկերները, քննարկվեցին մի շարք հրատապ հարցեր, այդ թվում՝ կոմիտեի հաշվետվությունը: Կոնֆերանսում Երկրային կոմիտեի վերջին պլենումի արդյունքների մասին հաղորդումով հանդես եկավ Արմենկոմի անդամ Ս. Մարտիկյանը: Կոնֆերանսն ընտրեց Ալեքսանդրապոլի գավառային կոմիտե հետևյալ կազմով՝ Ս. Խանոյան, Ս. Գրիգորյան, Բ. Ղարիբջանյան, Ա. Նուրիջանյան, Թ. Մանդալյան, Ա. Գոգունց, Ա. Տեր-Սահակյան, Լ. Ովրենկյան և Գ. Հանեսօղլյան[51]:

5

ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն բանվորներին, աշխատավոր զանգվածներին մեծ Հոկտեմբերի դրոշով դեպի սոցիալիստական հեղափոխության էր առաջնորդում ազդարարելով՝ «Կեցցե՛ խորհրդային Հայաստանը»: Ազատագրական պայքարի այդ ճանապարհին նշանավոր իրադարձություն էր 1920 թ. մայիսյան հերոսական ապստամբությունը[52], որի կազմակերպիչն ու ոգեշնչողը կոմու-

---

49 Տե՛ս *С. М. Киров*, Статьи, речи, документы, 1912—1921. М., т. 1, 1936, стр. 205.

50 *Նույն տեղում, էջ 205—206:*

51 Ս. Սուքենյան. *Այդ օրերը չեն մոռացվի: Տե՛ս «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք երկրորդ, էջ 335:*

52 *Մայիսյան ապստամբության մասին գրվել են բազմաթիվ աշխատություններ, այդ թվում՝* Ս. Կասյան, *Ջախության երեխայական հիվանդությունը մեզանում («Նոր աշխարհ» 2, 1922),* Ս. Հովհաննիսյան, *Հայաստանի հուլիսն ու հոկտեմբերը («Նորք», գիրք երկրորդ, 1923),* Շ. Ամիրխանյան, *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920), Մոսկվա, 1927,* նույնի՝ *Մայիսյան ապստամբության բնույթի մասին, «Լենինյան ուղիով», № 7, 1959,* Թ. Մանդալյան. *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1929, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, հոդվածների և փաստաթղթերի ժողովածու, 1930,* Ս. Խանոյան. *Մայիսյան ապստամբությունը, 1930,* Ա. Մելիք-Շահնազարյան, *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1930, Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում (Մայիսյան ապստամբությունը) («նյութեր և փաստաթղթեր», կազմեցին Կ. Ղազարյանը և Մ. Ներսիսյանը, 1932),* Մ. Հարության. *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում և հակահեղափոխությունը («Նոր ուղի», գիրք 2. 1932),* Կ. Ղազարյան, *Մայիսյան ապստամբու-*

իստական կուսակցությունն էր, ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն։ Մայիսյան ապստամբությունն իր բնույթով համաժողովրդական էր։ Այն Հայաստանում սովետական կարգերի հաստատման մեծ նախերգանքն էր։

ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի ղեկավարությամբ 1920 թ. մայիսմեկյան ցույցերն անցան աշխատավորների քաղաքական բարձր ակտիվության պայմաններում։ Արմենկոմը, թեև որոշ ուշացումով, հաշվի առնելով երկրում ստեղծված հեղափոխական իրադրությունը և արտաքին բարենպաստ պայմանները (քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում Սովետական Ռուսաստանի տարած հաղթանակները, Ադրբեջանում սովետական կարգերի հաստատումը, Կարմիր բանակի մոտենալը Հայաստանի սահմաններին), դաշնակցության տիրապետությունը ոչնչացնելու համար հայ ժողովրդին զինված ապստամբության էր պատրաստում։ Ապստամբության ազդանշանը, Արմենկոմի որոշմամբ, պետք է տար Սովետական Ադրբեջանին սահմանակից հեղափոխական բավականաչափ ուժ ունեցող Ղազախը[53]։ Նրան այնուհետև պետք է հետևեին մյուս քաղաքներն ու գավառները։ Հենց այդպես էլ նախապատրաստվում էին։

Մայիսի 1-ը Երևանում, Սարիղամիշում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Ղարաքիլիսայում և այլ վայրերում նշվեց քաղաքական ցույցերով։ Ցուցարարները, բոլշևիկների ղեկավարությամբ, տանում էին մարտական լոզունգներ, կարմիր դրոշներ։ Աշխատավորների երթը ղեկավարում էին Արմենկոմի և Երևանի կոմիտեի անդամներ՝ Ս. Ալավերդյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Խանջյանը, կուսակցական կարևոր հանձնարարություն ստանալու նպատակով Կարսից նոր վերադարձած Ղ. Ղուկասյանը, Նոր Բայազետից ապրիլին հեղափոխական գործունեության համար արտաքսված Հ. Սարուխան-

---

թյունների նշանակությունը և նրանց տեղը Հայաստանի նորագույն պատմության մեջ («Լենինյան ուղի» 3—4, 1932), Ա. Խանջյան, Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակը, 1935, Գ. Ղարիբջանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1955, Հ. Տոնոյան, Փառապանծ էջ Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունից, 1920 թ. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, 1955, Ա. Բերբերյան, Կարմիր պարտիզանի հուշատետրերից, Գ. Գալոյան, Մայիսյան հերոսական ապստամբությունը, 1960, Հ. Ն. Կարապետյան. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում։

53 Տե՛ս ՍՄԿԿ ԿԿ-ին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 850, թ. 1—4։ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի մայիսի 31-ի զեկուցագիրը ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեին։ Զեկուցագիրը գրել է Ս. Ալավերդյանը։

յանը: Բացաշունչ ճառ արտասանելով, Ս. Ալավերդյանը մերկացրեց դաշնակցության հակաժողովրդական քաղաքականությունը: Նա իր խոսքն ավարտեց «Կեցցե խորհրդային Հայաստանը» բացականչությամբ, որն արժանացավ ցուցարարների ջերմ ընդունելությանը:

ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն 1920 թ. մայիսի 1-ին ռադիոյով ողջույնի հեռագիր ուղարկեց Բաքվի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախագահ Ն. Նարիմանովին. շնորհավորելով Ադրբեջանի պրոլետարիատի և աշխատավոր զանգվածների տարած փայլուն հաղթանակը, կոմիտեն հույս էր հայտնում, որ հեռու չէ այն օրը, երբ սովետական իշխանություն կհաստատվի նաև Հայաստանում ու Վրաստանում:

«Կեցցե խորհրդային իշխանությունը ամբողջ Անդրկովկասում»— այսպես էր ավարտվում Արմենկոմի ողջույնի հեռագիրը: Մայիսմեկյան ցույցերը լայնորեն ծավալվեցին: Ալեքսանդրապոլում մայիսի 2-ին ցույցը վերածվեց զինված ապստամբության: Նույն օրը բանվորներն ու հեղափոխական զինվորները նվաճեցին երկաթուղային կայարանը, ապստամբների կողմն անցավ «Վարդան զորավար» զրահագնացքը՝ կապիտան Սարգիս Մուսայելյանի հրամանատարությամբ: Մարտերը գնալով ավելի էին բորբոքվում: Ալեքսանդրապոլի երկաթուղային հանգույցը դառնում էր քաղաքացիական կռվի ասպարեզ, իսկ զրահագնացքը՝ զինված ապստամբության շտաբ: Չնայած Արմենկոմը, տակտիկական նկատառումներով որոշել էր ապստամբությունը սկսել Ղազախից, բայց Ալեքսանդրապոլի իրադարձությունները, ՌԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեի և հատկապես Ավիս Նուրիջանյանի համառ պնդումները ապստամբությունը Ալեքսանդրապոլից սկսելու մասին[54], ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեին թելադրեցին միջամտել գործին: «Պարզ է, որ մենք գործ ունենք կատարված փաստի հետ,— ասված է ՌԿ(բ)Կ

54 1920 թ. մայիսի 3-ին, 5-ին և 6-ին Ավիս Նուրիջանյանը ՌԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեի անունից մի քանի անգամ նամակ ուղարկեց Արմենկոմ, ոգևորված նկարագրելով ապստամբության ընթացքը, և պահանջելով թույլ տալ գրավել իշխանությունը, մայիսի 5-ի նամակում նա գրել է. «Ձեր որոշումը նախ սկսել Ղազախում և հետո այստեղ,— այն էլ դեռ կապ հաստատել և ապա հանդես գալ, համարում եմ հիմնովին սխալ: Նախ պետք է գրավել և ապա առաջ շարժվել: Եվ առաջինը պետք է սկսենք Ալեքսանդրապոլում, որտեղից մենք կսկսենք Ղազախի վրա շարժվել» (տե՛ս ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 30, գ. 24 և 25): Արմենկոմին գրած մի այլ նամակում Ա. Նուրիջանյանն ասում էր՝ «Կամ մենք, կամ նրանք (դաշնակցականները—Խ. Բ.),— այսպես է դրված հարցը» (նույն տեղում):

երկրային կոմիտեին Արմենկոմի ներկայացրած զեկուցագրի մեջ,— և որոշեցինք գործին միջամտել, նրան կազմակերպված բնույթ տալ և զինանալ մինչև այլ վայրերում՝ նույնիսկ Երևանում, գործողությունների սկսվելը։

Ուրիշ ելք մենք չունեինք»[55]։

Մայիսի 4-ին Ա. Խատիսովի գլխավորած կառավարությունը հրաժարական տվեց։ Նրան փոխարինելու եկավ դաշնակցական բյուրոյի կառավարությունը՝ Համո Օհանջանյանի ղեկավարությամբ։ Ցրելով պառլամենտը, դաշնակները ավելի սանձարձակ դարձան։ Նրանք օրենքից դուրս հայտարարեցին կոմունիստական կուսակցությունը, արտակարգ դատարաններ կազմեցին, ապստամբության մասնակիցների նկատմամբ մահապատիժ սահմանեցին։

ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեն, ելնելով ստեղծված դրությունից, մայիսի 6-ին լայն լիազորություններով Ալեքսանդրապոլ ուղարկեց Գ. Տեր-Սիմոնյանին և Արտաշես Մելքոնյանին, վերջիններիս ցուցում տալով. «...եթե չի կարելի կասեցնել ապստամբությունը, որ անհրաժեշտաբար պետք էր անել, ապա միաժամանակ կապվել Ղարաքիլիսայի շրջանների, «Զեզուր գոտու» և հարակից շրջանների հետ»[56]։ Մայիսի 7-ին (կամ 8-ին) «Վարդան զորավար» զրահագնացքում տեղի ունեցավ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի (Գ. Տեր-Սիմոնյան, Ա. Նուրիջանյան, Ա. Գոգունց, Ղ. Ղուկասյան, Ա. Մելքոնյան) նիստը, որին մասնակցում էին նաև Ալեքսանդրապոլի, Կարսի, Դիլիջանի, Քավթառլուի, Սարիղամիշի կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչները, «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատար Ս. Մուսայելյանը և ուրիշներ[57]։ Երկար վիճաբանություններից հետո որոշվեց ապստամբությունը սկսել, ծավալել և գրավել իշխանությունը։ Այն որոշվում է սկսել մայիսի 10-ին՝ Ալեքսանդրապոլից։ Կազմվում է Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտե, Ս. Մուսայելյան, Ա. Նուրիջանյան, Գ. Տեր-Սիմոնյան, Ա. Մելքոնյան, Ա. Գոգունց, Ա. Տեր-Սահակյան, Լ. Ուլիբեկյան, Պ. Պետրոսյան և Գ. Սարգսյան։ Մայիսի 8-ին ռազմա-հեղափոխական կոմիտեն վերածվում է կառավարության։ Ալեքսանդրապոլի ապստամբները, մայիսի 10-ին

---

55 ՍՄԿԿ-ի կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 850, թ. 1—8։

56 Նույն տեղում։

57 Որոշ նյութերի համաձայն դա ՌԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կազմակերպության կոնֆերանսն էր Արմենկոմի անդամների մի մասի մասնակցությամբ։

գրավելով քաղաքը, Հայաստանում հռչակում են սովետական իշխանություն: Ռազմա-հեղափոխական կոմիտեն և կարմիր բանակի հրամանատարությունը (հրամանատար՝ Ս. Մուսայելյան) նույն օրը հրապարակված հայտարարության մեջ գրում են. «Պրոլետարիատի, չքավոր գյուղացիության, բանվորների և կարմիր զորքի կամքով Հայաստանի կոմունիստական կուսակցության ռազմա-հեղափոխական կոմիտեն Հայաստանի մեջ հռչակում է խորհրդային իշխանություն: Այսօրվանից մաուզերիզմի, խմբապետների, սպեկուլյանտների վրա հենված և բռնության, կողոպուտի, իշխանության վրա հիմնված դաշնակների կառավարությունը տապալված է: Ռազմա-հեղափոխական կոմիտեն կոչ է անում երկրի ազգաբնակչությանը՝ պահպանել հեղափոխական կարգ ու կանոն, ստեղծագործական աշխատանքի խանգարման ամեն մի փորձ կխեղդվի իր բնում Խորհրդային Հայաստանի կարմիր զորքերի կողմից»[58]:

Ալեքսանդրապոլին անմիջապես հետևում են Սարիղամիշի, Կարսի, Ղազախի, Նոր Բայազետի, Ղարաքիլիսայի և ապա Զանգեզուրի աշխատավորների ապստամբությունները: Մայիսի 10-ին ապստամբություն է բռնկվում Կարսում: Դաշնակներն ու նրանց ամերիկացի տերերը դուրս են շպրտվում քաղաքից: Երիտասարդ բոլշևիկ, Արմենկոմի անդամ Ղ. Ղուկասյանի ղեկավարությամբ Կարսում ստեղծվում է ռազմա-հեղափոխական կոմիտե, որն իշխանությունը իր ձեռքն է վերցնում և փորձում կապվել Ալեքսանդրապոլի հետ: Կարսում Ղ. Ղուկասյանի հետ միասին գործում էին Ա. Նազարյանը, Դ. Մելիքյանը, Գ. Բայթունին, Վ. Ղազանչյանը և Ա. Թովմասյանը:

Յոթ օր շարունակ, մայիսի 11—18-ը, իշխանությունն իրենց ձեռքում էին պահում Սարիղամիշի երկաթուղայինները և հեղափոխական զինվորները: Բալթալուում ապստամբության դրոշ բարձրացրած ապստամբները՝ Արշալույս Փանյանի ղեկավարությամբ, հաղթանակի են հասնում դարձյալ մայիսի 10-ին: Մոսկվայի Լազարյան ճեմարանում և համալսարանում քաղաքական մկրտություն ստացած, առաջին համաշխարհային պատերազմի բոցերով անցած Արշալույս Փանյանը (1892—1920)— ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի ցուցումներով աշխատանքի էր անցել Հայաստանում: Նրա կյանքն անբաժանելի է մայիսյան ապստամբությունից, նրա

---

58 Տե՛ս «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», նյութեր և փաստաթղթեր, 1932, էջ 286—287:

ղեկավարների կյանքից։ Միաձուլվելով հերոսների անվանը, Ա. Փանյանը դարձել է լեգենդ, իր ընկերների օրինակով նա նույնպես մահից առաջ արիաբար բացականչել է «Մենք մեռնում ենք, բայց Հայաստանը խորհրդային կլինի»[59]։

Նոր Բայազետում Հ. Սարուխանյանի և Բ. Բատիկյանի ղեկավարությամբ ծավալված ապստամբությունն ավարտվեց նրանով, որ մայիսի 17-ին քաղաքն անցավ ապստամբների ձեռքը։ Ղափան-Շամշադինում, Քարվանսարայում (Իջևան) բռնկված ապստամբությունը, որը ղեկավարում էին Շավարշ Ամիրխանյանը, Ենոք Մկրտումյանը, Կոստյա Այվազյանը, Անանիա Բեքբերյանը և ուրիշներ, ցույց տվեց աշխատավոր զանգվածների ուժը, նրանց անսահման ցասումը դաշնակցության նկատմամբ։ Ստեղծվեցին ռազմա-հեղափոխական կոմիտեներ, կապ հաստատվեց Սովետական Ադրբեջանի և XI կարմիր բանակի հետ։

Մայիսյան ապստամբության հաղթական դրոշը բարձրացրին նաև Զանգեզուրի աշխատավորները։ Հակոբ Կամարու (Հ. Բեժանյան) Ք. Մկրտչյանի, Մ. Մաշուրյանի, Բ. Հարությունյանի և բազմաթիվ այլ հեղափոխական գործիչների ղեկավարությամբ հերոսական պայքարի պայծառ էջեր գրեցին ապստամբները։ Նրանք կռվում էին քաջաբար։ Բայց դաշնակները, հենվելով անգլո-ամերիկյան բուրժուազիայի, սպիտակ գվարդիականների, օտարերկրյա իմպերիալիստների և երկրի ներսում բույն դրած ռեակցիոն ուժերի վրա, արյան մեջ խեղդեցին ապստամբությունը։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված հերոսական պայքարում քաջի մահով ընկան կոմունիզմի գործի անվեհեր զավակներ՝ Ստեփան Ալավերդյանը, Սարգիս Մուսայելյանը, Բագրատ Ղարիբջանյանը, Հովհաննես Սարուխանյանը, Ղուկաս Ղուկասյանը, Եգոր Սևյանը, Խրիստովսկին, Պ. Մատիչկոն, Վասիլի Ալեքսեևը, Արշալույս Փանյանը, Բատիկ Բատիկյանը, Արտաշես Մելքոնյանը, Քրիստափոր Մկրտչյանը, Մակիչ Մաշուրյանը, Բագրատ Հարությունյանը, Ենոք Մկրտումյանը և շատ ուրիշներ։

Հայաստանի հողը ներկվեց ժողովրդի լավագույն զավակների արյամբ։ Նրանք ընկան զանգվածների հաղթանակի անսահման հավատով, «...ոչնչանում էին բանվոր դասակարգի լավագույն մարդիկ,— ասել է Վ. Ի. Լենինը,— որոնք իրենց զոհաբերում էին, հասկա-

59 Տե՛ս Խ. Բարսեղյան, Հերոսներն անմահ են, «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1972, № 5, էջ 11—13։

նալով, որ իրենք կոչնչանան, բայց կփրկեն սերունդներ, կփրկեն հազար ու հազար բանվորներ և գյուղացիներ»[60]:

Դաշնակների կողմից բանտերում ստեղծված դատարաններում իրենց հերոսաբար էին պահում ապստամբները: Խիզախության, հեղափոխության գործին անսահման նվիրվածության ոգով է տոգորված Բագրատ Ղարիբջանյանի «Մահապատժից առաջ» խոսքը: Մերկացնելով դաշնակցության ազգակործան քաղաքականությունը, հաստատ մնալով իր հեղափոխական համոզմունքներին և արհամարհելով մահը, Բ. Ղարիբջանյանը մահապատժից առաջ, կոմունիստին վայել հպարտությամբ հայտարարել է՝ «Ես երջանիկ եմ, որ գնում եմ ժողովրդի լավագույն զավակների ճանապարհով. գնդակահարված 26 կոմիսարների ուղիով, որոնց գլխավորում էր Շահումյանը»[61]:

Գնդակահարությունից առաջ, իր մարտական ընկերների ներկայությամբ, դեպի դաշնակները խոր ատելությամբ լցված Ս. Ալավերդյանը հայտարարել է. «Լավ հիշեցեք, հեղափոխության գործը չի մեռնի: Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տեր կդառնան իշխանությանը... Կեցցե՛ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը»:

Ս. Մուսայելյանը դաշնակ դահիճների երեսին է շպրտել այս խոսքերը. «Ես մահից վախեցող չեմ, սպանեցեք ինձ հենց այստեղ, բայց դուք չեք կարող խափանել անխուսափելին, այն, որ Հայաստանն ազատ կլինի, և մեր գործը չի մեռնի»:

Իր ընկերների օրինակով Բ. Ղարիբջանյանը բացականչել է. «Հայաստանի հողը մեր արյունով կներկվի և կդառնա կարմիր: Մի մոռանաք իմ խոսքերը՝ Հայաստանը սովետական կդառնա: Կեցցե սովետական Հայաստանը»[62]: **Բագրատ Ղարիբջանյանը** (1890—1920) իր քաղաքական դաստիարակությունը ստանալով Բաքվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունում, ծանոթանում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններին, մեծ Հոկտեմբերի նախօրյակին Ալեքսանդրապոլում հանդես է գալիս բովանդակալից

---

60 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 636:

61 ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 9, ց. 2, պ. մ. 5, թ. 25—35:

62 Ս. Ալավերդյանի, Ս. Մուսայելյանի և Բ. Ղարիբջանյանի գնդակահարությունից առաջ արտասանած խոսքերը քաղված են Մ. Ադայանի հուշերից, որոնք հրապարակված են «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում» Հիշողությունների և փաստաթղթերի ժողովածու գրքում, Երևան, 1930, էջ 136:

դասախոսություններով, այդ թվում՝ «Լենինիզմը և Ռուսական հեղափոխությունը», «Ռուսական հեղափոխության էվոլյուցիան», «Ովքեր են բոլշևիկներն ու մենշևիկները», «Մարքսն ու Էնգելսը ագրարային հարցի մասին», «Մարքսը պետության մասին», «Սոցիալիզմը իբրև կոմունիզմի առաջին ստադիա», «Ռևոլյուցիոնիզմը և ռեֆորմիզմը» և այլն։ Ուշագրավ է նրա «Քաղաքական այբբենարան»-ը (դասախոսության սոցիալ-տնտեսական թեմաներով գիրքը), որտեղ զետեղված են 1917—1918 թթ. Թիֆլիսում և Ալեքսանդրապոլում նրա կարդացած դասախոսությունները։ Հենվելով Վ. Ի. Լենինի աշխատությունների վրա, նա բացահայտում է պատերազմների առաջացման արմատները, մեկնաբանում դասակարգային պայքարի և ագրարային հարաբերությունների հարցերը։

Դասակարգային պայքարի թեժ օրերին, հեռավոր Զանգեզուրում հնչեց աննկուն հեղափոխական Բագրատ Հարությունյանի անկոտրում խոսքը՝ ուղղված մաուզերիստներին. «Բոլշևիկները մահից երբեք չեն վախենում... Վերջին անգամ եմ հայտարարում. Զանգեզուրը էլի կլինի կարմիր ու խորհրդային։ Բայց մի մոռանաք, որ կգա մի օր, երբ Ռուսաստանի մեծ պրոլետարիատը ձեզանից հաշիվ կպահանջի այդ անտանելի զոհերի համար, իսկ մենք ձեր ձեռքով ոչ թե մահանում ենք, այլ անմահանում, հայտարարում եմ, որ ես եղել եմ բոլշևիկ, մեռնում եմ բոլշևիկ»։

Անցյալում հրապարակված մի շարք աշխատություններում և հոդվածներում Մայիսյան ապստամբության պարտության գլխավոր պատճառը համարվել է միայն սուբյեկտիվ գործոնը։ Սխալ դիրքերից գնահատելով պատմական փաստերը և իրադարձությունները, նման մոտեցման հեղինակները ծանր մեղադրանքներ էին հորինում և դրանք բարդում Արմենկոմի ու ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամների վրա, միաժամանակ տալով զանազան պիտակներ՝ «օպորտունիստներ», «տհաս մարքսիստներ», «ավանտյուրիստներ» և նույնիսկ... «դավաճաններ» որակումը, ներկայումս այդ սխալը չի կրկնվում[63]։ Ապստամբության պարտության պատճա-

63 Միայն հանգուցյալ Շ. Մ. Ամիրխանյանն էր, որ 1959 թ. հուլիսին «Լենինյան ուղիով» ամսագրում հանդես եկավ «Մայիսյան ապստամբության բնույթի մասին» հոդվածով, որտեղ տուրք էր տվել այդ հարցում վաղուց մերժված հայացքներին։ Նա գտնում էր, որ մայիսյան ապստամբության համար Հայաստանում «հող չկար», որ ռազմա-հեղափոխական կոմիտեն «պաշտպանություն չգտավ» մասսաների կողմից, որ Արմենկոմը «իր և կուսակցական կազմակերպությունների առջև զինված ապստամբության խնդիր չէր դնում» և նման կարգի

ների բացահայտումը հետաքրքիր է ոչ թե այս կամ այն հեղափոխական գործչին մեղադրելու տեսակետից, այլ պատմական ճշմարտությունը վերականգնելու անհրաժեշտության տեսանկյունից։

Իրոք Արմենկոմը և ռազմա-հեղափոխական կոմիտեն տակտիկական քիչ սխալներ չեն թույլ տվել՝ անհամարձակությունը, միաժամանակյա գործողությունների բացակայությունը, հապաղելը, երկրի քաղաքական կենտրոնում՝ Երևանում ապստամբություն չբարձրացնելը, «անարյուն հեղափոխության» և «խաղաղ ելքի» հարցում եղած տարաձայնությունները և այլն։ Բայց դրանք հիմք չեն տալիս ուրանալու այն մեծ գործը, որ կատարել են Արմենկոմի և ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամները, այն բոլոր ընկերները, որոնք խիզախաբար կռվում էին հանուն Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի։ Իհարկե, հիմք չկա անտեսել պատմականությունը՝ Հայաստանի այն ժամանակվա բարդ իրադրությունը, քաղաքական ուժերի դասավորությունը։ Որ Արմենկոմը հապաղում էր իր որոշումների կատարման մեջ, այդ ճիշտ է։ Բայց տեսնենք, թե մայիսյան օրերին, ապստամբության ժամանակ, ինչ վիճակում էին Արմենկոմի ուժերը։ Դեռևս հունվարի 31-ին Արմենկոմի աչքի ընկնող անդամներ Ս. Կասյանը և Ա. Մռավյանը դաշնակցության կողմից ձերբակալվել և փետրվարի երկրորդ կեսին արտաքսվել էին Հայաստանի սահմաններից։ Նրանք գտնվում էին Վրաստանում և մենշևիկյան կառավարության հալածանքների պայմաններում, ՌԿ(բ)Կ Երկրային կոմիտեի անդամների հետ միասին ընդհատակյա կուսակցական աշխատանք էին կատարում, օգնում էին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններին։ Երբ Հայաստանում մայիսմեկյան ցույցերը բուռն կերպով ծավալվել էին, Արմենկոմի անդամ Հայկազ Կոստանյանը մեկնեց Թիֆլիս՝ երկրային կոմիտեի հետ մի շարք հրատապ հարցեր լուծելու[64]։

Արմենկոմի մյուս անդամներից Հ. Սարուխանյանն ուղարկվել էր Նոր Բայազետ, Ղ. Ղուկասյանը՝ Կարս, Ս. Խանոյանը՝ Ղարաքիլիսա, Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Նուրիջանյանը, Ա. Գոգունցը գտնվում էին Ալեքսանդրապոլում։ Միայն Ս. Ալավերդյանն ու

ու հիմնավոր հետևություններ։ Ամիրխանյանի սխալները սուր քննադատության ենթարկվեցին և մերժվեցին մամուլում ու գրականության մեջ (տե՛ս «Լենինյան ուղիով», № 3, 1959, էջ 3—26, 1959, № 1, էջ 85—94, Լ. Ղազարյանի «Մենք համաձայն չենք» հոդվածը և այլն)։

64 Ինչպես Կոստյա Այվազյանն է նշում՝ Հ. Կոստանյանը Թիֆլիս չհասած, սահմանագլխին ձերբակալվել էր (տե՛ս «Հին բոլշևիկների հիշողությունները», գիրք երկրորդ, էջ 458)։

Ս. Մարտիկյանն էին մնացել Երևանում։ Պարզ է, որ ուժերի նման տեղաբաշխումը (որը թեև կատարվել էր անհրաժեշտությունից ելնելով) Արմենկոմին հնարավորություն չտվեց օպերատիվ և վճռական միջոցառումների դիմելու։ Արմենկոմի անդամներ Ս. Ալավերդյանը և Ս. Մարտիկյանը թեև տեղում արագությամբ լուծում էին այս կամ այն հարցը, բայց հաղորդակցության միջոցների անբավարարություն, հաճախ նույնիսկ բացակայության պատճառով հնարավոր չէր լինում նույն արագությամբ ընթացք տալ և պատասխանել Արմենկոմի՝ տարբեր շրջաններում գտնվող անդամների հարցումներին։

Եթե ապստամբության առաջին օրերին, մինչև մայիսի 10-ը, վճռական խոսքը Արմենկոմինն էր, ապա դրանից հետո, Ալեքսանդրապոլի ռազմա-հեղափոխական կոմիտեի (իրականում Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեի) ստեղծումով, որը, ի դեպ, կազմվեց խիստ ուշացումով (մայիսի 7-ին), Արմենկոմից բավականաչափ հետո, ընդհանուր ղեկավարությունը, ըստ էության, բաժանվեց երկու օրգանների միջև։

Գնալով ավելի էր սրվում Ալեքսանդրապոլի պարենավորման հարցը։ Թշնամին ուժեղացնում էր հարձակումները։ Խորանում են ապստամբության ղեկավարների միջև եղած տակտիկական տարաձայնությունները։ Մայիսի 13-ին, երեկոյան ժամը 8-ին, զրահագնացքում, Ա. Նուրիջանյանի նախագահությամբ հրավիրված ռազմահեղափոխական կոմիտեի ընդլայնված նիստը, կուսակցական ակտիվի մասնակցությամբ, քննության է առնում ռազմա-հեղափոխական կոմիտեի որոշումը՝ ստեղծված դրության մասին։ Զեկուցող Ս. Մուսայելյանը ցավով հաղորդում է, որ խմբապետ Սեպուհի բանդաները Աղինը գրավելով առաջ են շարժվում դեպի Ալեքսանդրապոլ, քաղաքում գլուխ են բարձրացրել թշնամական տարրերը, դաշնակները գրավել են Ջաջուռը, ռազմամթերքի և պարենի մատակարարման գործում ծանր վիճակ է ստեղծվել կարմիր գվարդիայի և ապստամբության եղած աշխատավորների համար[65]։

---

[65] Նիստին ներկա էին Ս. Մուսայելյանը, Ա. Նուրիջանյանը, Ց. Զարիբջանյանը, Ա. Տեր-Սահակյանը, Գ. Տեր-Սիմոնյանը, Ա. Գոգունցը, Ե. Սեյանը, Ս. Գրիգորյանը, Խ. Օհանջանյանը, Ա. Մելքոնյանը, Լ. Ուլիբեկյանը, Հ. Ղազարյանը, Ռ. Մանուկյանը, Մ. Վիրաբյանը, Գ. Մեհրաբյանը (Գ. Հակոբյանը), Բ. Մանգալյանը, Ա. Տեր-Մարտիրոսյանը։ Ռ. Մանուկյանի վկայությամբ ստեղծված դրության մասին Մուսայելյանից առաջ հանգամանորեն խոսել է Ա. Նուրիջանյանը։

Ճակատագրական հարցի քննարկումն անցնում է շիկացած մթնոլորտում։ Ելույթներ են ունենում Լևոն Ղազարյանը, Բագրատ Ղարիբջանյանը, Գրիշա Հակոբյանը, Խաչիկ Օհանջանյանը և Ավիս Նուրիջանյանը[66]։ Վիճաբանությունների ընթացքում այնքան են խորանում տարաձայնությունները, որ ոմանք պաշտպանողական դիրք են գրավում և քվեարկում են քաղաքն առանց կռվի հանձնելու առաջարկության օգտին[67]։

Մայիսյան ապստամբությունը, չնայած ժամանակավոր պարտությանը քաղաքական հեղափոխական մեծ դաս էր ոչ միայն Հայաստանի բոլշևիկների ու ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի, այլև աշխատավոր զանգվածների համար։ Նրանք մարտական նոր մկրտություն ստացան, ձեռք բերեցին քաղաքացիական կռվի, սոցիալական ազատագրության համար պայքարի հարուստ փորձ։ «Մայիսյան ապստամբության ամենագլխավոր դասը դա այն գիտակցությունն է,— ասել է Ա. Մյասնիկյանը,— որ Հայաստանի աշխատավորության համար չկա փրկություն առանց խորհրդային իշխանության»[68]։

---

66 Ալեքսանդրապոլի ռազմա-հեղափոխական կոմիտեի՝ կուսակցական պատասխանատու աշխատողների մասնակցությամբ գումարված մայիսի 13-ի նիստի արձանագրության բնագիրը պահպանվում է ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվում։ Այն չի հրապարակված։ Նրա իսկության մասին առանձին ընկերների մոտ եղած կասկածանքները անհիմն են։ Վերոհիշյալ նիստի մասնակից Ռ. Մանուկյանի վկայությամբ, արձանագրվածը այնտեղ եղած ելույթների համառոտ բովանդակությունն է։ Բացի այդ, ասում է Մանուկյանը, շիկացած մթնոլորտի պատճառով հնարավորություն չեմ ունեցել բոլոր ելույթներն արձանագրելու։ Հիշատակված ընկերներից բացի ելույթ են ունեցել նաև Ա. Տեր-Սահակյանը, Ռ. Մանուկյանը, Ս. Գրիգորյանը, Ա. Գոգունցը, Ե. Սեյանը, Լ. Ռուբինկյանը (տե՛ս Ռ. Մանուկյանի հուշերը ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվում)։

67 Նիստի արձանագրության մեջ ասված է. «Միաձայն ընդունվում է ընկ. Ավիսի բանաձևը՝ մեկ հոգու ձեռնպահությամբ։

Ռազմա-հեղափոխական կոմիտեի նիստը պատասխանատու կուսակցականների հետ, լսելով ընկ. Մուսայելյանի զեկուցումը ճակատում տիրող դրության և Սեպուհի ուլտիմատումի մասին, ուլտիմատումը համարում է անընդունելի և առաջարկում ՌՀ կոմիտեին՝ շտապ կազմակերպել քաղաքի պաշտպանությունը»։

Այնուհետև ավելացված է.

«Մի ժամ հետո ՌՀ կոմիտեի նիստում որոշվեց հանձնել քաղաքը առանց մարտի»։ Նիստի քարտուղար, 1917 թ. ՍՄԿԿ անդամ Ռ. Ս. Մանուկյանը այդ առթիվ գրած հիշողություններում հավաստիացնում է, որ վերջին տողերը գրվել են մայիսի 13-ի լույս 14-ի գիշերը, երբ դրահագնացքում հայտնի է դարձել, որ թշնամին մեծ ուժերով արդեն մտել է քաղաք և դիմադրելն արդեն ուշ է։

68 «Կոմունիստ», Երևան, № 82, 13 մայիսի 1921 թ.։

Մայիսյան ապստամբության պարտությունից հետո դաշնակ-մաուզերիստները, ինչպես հայտնի է, դաժան դատաստան տեսան կոմունիստների, հեղափոխական մարտիկների հետ: Միայն մայիսի 15-ից մինչև 30-ը Արմենկոմի տվյալներով, Երևանում ձեր-բակալվել էին 50 մարդ, որոնցից 14-ը արտաքսվել էին Սևանա կղզին: Ալեքսանդրապոլում ձերբակալվել էին 100 մարդ[69]: Հետագա օրերին ավելի մեծ թվով ապստամբներ բանտարկվեցին: ՌԿ(բ)Կ երկրային կոմիտեին հունիսի 1-ին գրած նամակում Ս. Մուսայել-յանը հայտնում էր. «Ալեքսանդրապոլում 250-ից ավելի ձերբակալ-ված ընկերներ կան, ամբողջ Հայաստանի բանտերը մերոնցով լիքն են»[70]: Կոմինտերնի II կոնգրեսին Հայաստանի պատգամավո-րության գրած զեկուցագրում ասված էր՝ Կարսում գնդակահարվել է 50 և ձերբակալվել՝ 100 մարդ: Ալեքսանդրապոլում գնդակահար-վել է 100, ձերբակալվել՝ 2500 մարդ և այլն[71]:

Ապստամբության ղեկավարներից մեկը՝ Շիրակի նահանգապետ Կարո Սասունին ցարական պահնորդական բաժանմունքի մեթոդ-ներով պրովոկատորական խումբ կազմած շրջագայում էր նահանգի գյուղերում, Կարսում, Կաղզվանում և այլ վայրերում, ձերբակա-լում բոլշևիկներին, հափշտակում կուսակցական փաստաթղթերը և միջոցները: Իր սանձարձակ գործողությունների մասին նա զեկու-ցագրեր էր ուղարկում դաշնակցության կառավարության պարա-գլուխ Համո Օհանջանյանին՝ արժանանալով նրա սիրալիր վերա-բերմունքին[72]: Կ. Սասունին այդ ճանապարհով իմացավ նաև Ար-մենկոմի առանձին միջոցառումների, տեղերին ցույց տրվող օգնու-թյան և այլ հարցերի մասին:

Ահա թե ինչ է գրում Կարո Սասունին իր դաշնակ շեֆերին: «Բո-լոր բյուրոները (տեղական կոմիտեները— Խ. Բ.) անմիջապես կա-պակցություն ունեն Արմենկոմի հետ:

...Արմենկոմից (Ալեքպոլում) հրահանգներ ստանում է Առ-բանը (Աղասի Վարոսյանը—Խ. Բ.), իսկ գործերը կատարում է Ավի-

---

69 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 850, թ. 1—8:

70 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 15, գ. 4, թ. 1—4:

71 «Второй конгресс Коммунистического интернационала», Пг., 1920, стр. 403, 405.

72 Տե՛ս «Առաջին մասսայական-հեղափոխական շարժումները Հայաստանում», նյութեր և փաստաթղթեր, Երևան, 1932, էջ 405—413:

րը... Թիֆլիսից Հայաստան է ուղարկվում ամսական 6 000 000 ռ.։ Այդ բոլորը ուղարկում են Արմենկոմին, որը գտնվում է Երևանում, որից 300 000 ռ. ուղարկվում է Ալեքպոլ, 1 000 000 ռ. Կարս և 200 000 ռ. Երևան... Մեծամասնականների կենտրոնը Երևանն է»[73]։

Մեկ ուրիշ դաշնակ մաուզերիստ՝ Սեպուհը Ալեքսանդրապոլի ապստամբության ղեկավար ռազմա-հեղափոխական կոմիտեին ուղարկած ուլտիմատումի մեջ ցինիկաբար հայտարարում էր. «Մենք կորցրել ենք Վանը, Մուշը, Էրզրումը և Թուրքահայաստանը, մեզ համար նշանակություն չունի կորցնել ևս մի քաղաք՝ Ալեքսանդրապոլը։ Քարը քարի վրա չեմ թողնի, կոչնչացնեմ բոլորը, որպեսզի այդ քաղաքի հետքերն անգամ չմնան։ Տվեք շարժման պարագլուխներին, կապիտան Մուսայելյանին՝ կարմիր բանակի հրամանատարին, Ավիսին, Մելքոնյանին՝ ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամներին»[74]։ Տարիներ անց, 1968 թ. Կ. Սասունին Բեյրութում հրատարակեց «Մայիսյան խռովությունները ու թաթարական ապըստամբ շրջանները» գրքույկը, որի մեջ խեղաթյուրելով պատմական փաստերը, սուտ ու կեղծիքի միջոցով փորձում է արդարացնել դաշնակցության և իր իսկ հակաժողովրդական գործունեությունը, թունոտ ատելությամբ անարգում մայիսյան ապստամբության հերոսների բարի հիշատակը, իրեն և իր համախոհներին «ազգի փրկիչներ» հռչակելով։

Չնայած դաշնակներին հաջողվեց ճնշել ապստամբությունը, սակայն Արմենկոմը շարունակում էր իր ընդհատակյա գործունեությունը։

Մայիսի 20-ին Երևանում հրավիրվում է ՌԿ(բ)Կ Երևանի կազմակերպության քաղաքային խորհրդի նիստ, որտեղ լսվում է Արմենկոմի զեկուցումը, ընտրվում է քաղաքային բյուրո, որի վրա էլ ժամանակավորապես դրվում են քաղաքային կոմիտեի պարտականությունները։ Գրեթե ամեն օր բյուրոն նիստեր էր գումարում, աշխատանքի ծրագրեր մշակում, ինֆորմացիաներ լսում, «Կարմիր խաչի» միջոցով օգնություն ցույց տալիս քաղաքական կալանավորներին և նրանց ընտանիքներին։ Ապստամբության քաղաքական

---

73 Տե՛ս «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 406, 407 և 408։

74 Տե՛ս «Второй конгресс Коммунистического интернационала», Пг., 1920, стр. 400. Մեջ է բերվում ըստ «Ապստամբությունը Հայաստանում» նյութի, որը դրված է Հայաստանի պատգամավորության զեկուցագրի վերջում, ստորագրված է՝ «Я. К.».

դասերը ցույց տվեցին, որ բոլշևիկյան կազմակերպությունների հեղինակությունը մասսաների մեջ ոչ միայն չի ընկել, այլև օրավուր բարձրանում է։

Մայիսյան ապստամբության պարտությունից հետո, ստեղծված օբյեկտիվ պատճառների հետևանքով, Արմենկոմի, որպես կուսակցական ղեկավար օրգանի, աշխատանքի թափը թուլացավ։ Այլևս չկար Ստեփան Ալավերդյանը՝ Արմենկոմի կենտրոնական դեմքը։ Արդվինայի ձորում, մայիսի 14-ին թշնամու դեմ անհավասար կռվում հերոսաբար ընկել էր Ղուկաս Ղուկասյանը։ Նոր Բայազետում բարբարոսական խոշտանգումների ենթարկվելուց հետո վախճանվել էր քաջակորով Հովհաննես Սարուխանյանը... Արմենկոմի մյուս անդամները Երևանում, Ալեքսանդրապոլում և այլուր ձերբակալվել կամ արտաքսվել էին երկրից։ Մայիսյան ապստամբության օրերին դաշնակցական մաուզերիստները ձերբակալել և բանտ էին նետել Աղասի Խանջյանին (1901—1936), որը շարունակում էր կապը ազատության մեջ գտնվող ընկերների հետ, լավատեսությամբ լցված ոգեշնչում քաղաքական բանտարկյալներին։ Հետագայում նա մասնակցել է 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի ջախջախմանը։ Սովորել է Մոսկվայի Յա. Սվերդլովի անվան կոմունիստական համալսարանում, 1922—1928 թթ. աշխատել է ՀամԿ(բ)Կ Լենինգրադի Վիբորգի և Մոսկովսկո-Նարվսկի շրջկոմներում, 1930 թ. Հայաստանի կոմկուսի երկրորդ քարտուղար, իսկ 1930 թ. մայիսից մինչև 1936 թ. հուլիս Կենտկոմի առաջին քարտուղար։

Ժողովրդի հետ, ժողովրդի համար,— այս էր Ա. Խանջյանի կյանքի գլխավոր իմաստը։

Ապստամբության բոցերի միջով անցավ Ավիս Նուրիջանյանը (1897—1937), որը 1918 թ., մտնելով ՌԿ(բ)Կ շարքերը, աշխատել էր Բաքվի կոմիտեի քարտուղար։ ՌԿ(բ)Կ Երկրային կոմիտեի որոշմամբ 1919 թ. գալով Ալեքսանդրապոլ, նա ղեկավար դեր է խաղում քաղաքի և կայազորի կուսակցական կյանքում, իր փորձն ու կարողությունները ի սպաս դնում Հայաստանի բոլշևիկյան կուսակցության կազմավորման, հեղափոխական շարժումների ծավալման գործին։ Ա. Նուրիջանյանը Հայաստանի անդրանիկ ռազմա-հեղափոխական կոմիտեի անդամներից է, Հայաստանում սովետական իշխանության առաջին հռչակողներից մեկը։

Հայաստանի բանվորները, գյուղացիները, հեղափոխական զինվորները թեժ պայքարով անցան քաղաքացիական պատերազմի

դժվարին դպրոցը։ Իսկ քաղաքացիական պատերազմի դպրոցը իզուր չի անցնում ժողովուրդների համար, թեև այն «...անխուսափելիորեն պարունակում է իր մեջ հակահեղափոխության հաղթանակներ, գազազած ռեակցիոներների սանձարձակություններ, հին իշխանության վայրագություններ խռովարարների նկատմամբ և այլն»[75]։

Մայիսը ուղի հարթեց նոյեմբերյան հաղթանակի համար։

6

1920 թ. փետրվարի 11—12-ին Բաքվում անլեգալ տեղի ունեցած Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպությունների առաջին համագումարը հիմնադրեց Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը, նույն թվականի ապրիլի 28-ին Ադրբեջանի կոմկուսը դուրս եկավ ընդհատակից և դարձավ ղեկավարող միակ կուսակցությունը։ Մայիսի 7-ին Վրաստանի մենշևիկյան կառավարությունը պայմանագիր կնքեց Սովետական Ռուսաստանի հետ, որի համաձայն Վրաստանը անկախ ճանաչվեց։ Այդ պայմանագրով Վրաստանի կոմունիստական կազմակերպությունները «լեգալ գործելու» իրավունք ստացան։ ՌՍՖՍՀ-ի կառավարությունը հուլիսի 18-ին Բորիս Լեգրանին լիազորություններ ավեց իր միսիայով (նրա խորհրդականներն էին Ս. Տեր-Գաբրիելյանը և Օտտո Անդրեևիչը, քարտուղարները՝ Իսամինը և Շիֆֆերսը) մեկնել Երևան և բանակցություններ վարել Հայաստանի կառավարության հետ։ Սովետական Ռուսաստանի պատվիրակներն առաջադրանք ունեին թուրքական զավթիչների ոտնձգություններից պաշտպանել հայ ժողովրդին։ Լեգրանի միսիան խնդիր ուներ նաև օգնել տեղի բոլշևիկներին՝ վերջիններիս կողմից նախապատրաստվող հեղափոխական նոր ելույթները կազմակերպված անցկացնելու գործում[76]։

Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ ՌԿ(բ)Կ շինարարության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, Հայաստանում մայիսյան ապստամբության դասերը, Կովկասի կուսակցական կազմակերպությունների աշխատանքի նոր մեթոդներն ամուր հա-

75 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 15, էջ 217։

76 Տե՛ս ՍՍՀՄ Արտ. քաղ. արխիվ, ֆ. 148, ցուց. 3, գ. 10, թ. 1, Հայկական ՍՍՀ ՓԿՊԱ, ֆ. 113, ց. 4, գ. 9, թ. 1։ Ա. Մնացականյան. Ռևոլյուցիան Անդրկովկասում և Սովետական Ռուսաստանի պատվիրակները, էջ 209—210։

խադրյալներ ստեղծեցին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումն արագացնելու համար։

Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի կոմունիստական կուսակցությունների կազմավորումը ակներև էր դարձնում կովկասյան կուսակցական ղեկավար կենտրոնի կառուցվածքի փոփոխման անհրաժեշտությունը։

Դեռևս 1920 թ. ապրիլի 8-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը քննարկելով այդ հարցը, հավանություն տվեց Կովկասի կազմակերպությունների միասնական ղեկավար օրգանի նոր կառուցվածքին։ Այսպիսով, 1920 թ. ապրիլի 8-ին[77] (և ոչ թե մայիսի երկրորդ կեսերին, կամ մայիսի վերջին, ինչպես նշում են մի շարք հեղինակներ), ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը ստեղծում է ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրո, որին իրավունք է վերապահվում հանդես գալ և գործել իբրև Կենտկոմի ներկայացուցչություն և նրա բաղկացուցիչ մաս։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի նախագահ է հաստատվում ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամ Գ. Օրջոնիկիձեն։ Բյուրոյի կազմում բացի Գ. Օրջոնիկիձեից հաստատվում են Ս. Կիրովը, Ա. Միկոյանը, Ն. Նարիմանովը, Ե. Ստասովան, Հ. Նազարեթյանը, Մ. Օրախելաշվիլին, Ա. Բեյբուտովը, Ի. Դովլաթովը (Դովլաթյան), Գ. Սմիլգան և ուրիշներ։ Հետագայում փոփոխություններ են կատարվում Կովկասյան բյուրոյի կազմում։ Բյուրոյի անդամներ են հաստատվում Ա. Մյասնիկյանը, Ֆ. Մախարաձեն, Կ. Ցինցաձեն, Ա. Կարաևը, Շ. Էլիավան, Մ. Պլեշկովը և ուրիշներ[78]։

Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման լենինյան ծրագրի իրականացմանը ձեռնամուխ եղան Կովկասյան բյուրոն և երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները։

---

77 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 61, ед. хр., 1. «Известия», (орган РКП(б)), 1920, № 18—19.

78 Տե՛ս Ա. Ն. Մնացականյան, *Ռևոլյուցիան Անդրկովկասում և Սովետական Ռուսաստանի պատվիրակները, Երևան, 1961, էջ 74—75*, Г. К. Орджоникидзе, Статьи и речи. М., 1959, т. 1, стр. 192. *ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոն 1920 թ. սկզբում գտնվում էր Դոնի Ռոստովում, Ադրբեջանում սովետական կարգերի հաստատումից հետո փոխադրվեց Բաքու։ 1921 թ. փետրվարին, Վրաստանում սովետական կարգերի հաստատումից հետո, Կովկասյան բյուրոն տեղափոխվում է Թիֆլիս։ Բյուրոյի կազմում այդ ժամանակ ստեղծվում է Բաքվի բյուրո՝ Անդրկովկասի աշխատանքը ղեկավարելու և առանձին բյուրո՝ Հյուսիսային Կովկասի համար (տե՛ս* ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 64, оп. 1, ед. хр. 1)։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն երկրկոմի հետ միասին 1920 թ. մայիսի 20-ին Թիֆլիսում հրավիրում է երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդակցություն, որը փաստորեն կոնֆերանսի նշանակություն ուներ: Ընդհատակից Վրաստանի կոմունիստական կազմակերպությունների դուրս գալու պատճառով կոնֆերանսին մասնակցում էին մենշևիկյան բանտերից նոր ազատագրված բազմաթիվ պրոֆեսիոնալ հեղափոխականներ այդ թվում և Հայաստանի կուսակցական կազմակերպությունների նշանավոր գործիչներ: Քննարկվում են երկրամասի բոլշևիկների տակտիկական և ստրատեգիական հարցերը, հավանություն է տրվում ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմանը՝ Երկրային կոմիտեի փոխարեն ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրո ստեղծելու մասին: Ադրբեջանի կոմունիստական կուսակցության ձևավորումից հետո, ՌԿ(բ)Կ Կենտկոմը և Կովկասի բոլշևիկների մայիսյան կոնֆերանսը որոշում են Վրաստանի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները նույնպես ձևավորել, որպես ինքնուրույն ազգային կոմունիստական կուսակցություններ: Կոնֆերանսը հատուկ կոչով դիմում է Հայաստանի և Վրաստանի կոմունիստական կազմակերպություններին՝ պարզաբանելով երկրամասի կուսակցական կառուցվածքի մեջ տեղի ունեցած նոր փոփոխությունների նշանակությունն ու կարևորությունը: ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի վրաց (Վրաստանի) անդամներից ձևավորվում է Վրաստանի կոմունիստական կուսակցության ժամանակավոր Կենտրոնական կոմիտեն[79]:

---

79 Տե՛ս Վրաստանի կոմունիստական կազմակերպության ժամանակավոր Կենտրոնական կոմիտեի նամակը Վրաստանի կոմունիստական կուսակցության բոլոր կազմակերպություններին և անդամներին: Նամակում ասված է. «Ելնելով նախ այն բանից, որ Հյուսիսային Կովկասում և Ադրբեջանում հաստատվել է սովետական իշխանություն, երկրորդ, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը ճանաչել է Վրաստանի պետական անկախությունը, Կովկասյան երկրային կոմիտեն, համաձայն Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշման, 1920 թ. մայիսի 20-ի նիստում որոշեց դադարեցնել իր գործունեությունը որպես կուսակցական գերագույն ղեկավար օրգանի:

Նույն օրը ստեղծվեց Վրաստանի կոմունիստական կազմակերպությունների ժամանակավոր Կենտրոնական կոմիտե, որը ամենամոտ ժամանակներս կգումարի կուսակցական կոնֆերանս և համագումար՝ կազմակերպչական, գործնական և տակտիկական հարցերը լուծելու համար: Համագումարի գումարման ժամկետի, օրակարգի և ներկայացուցչության նորմայի մասին առանձին կհայտարարվի:

Բոլոր կուսակցական կազմակերպություններին և կուսակցության բոլոր ան-

Նույն սկզբունքով էլ ձևավորվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն, որի մեջ մտնում են ՌԿ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեի անդամներ Ս. Կասյանը, Ա. Բեկզադյանը, Ա. Մռավյանը և Երևանի բանտում ու ընդհատակում գտնվող Արմենկոմի անդամները:

Ելնելով ստեղծված առանձնահատուկ պայմաններից (Մայիսյան ապստամբության պարտության հետևանքով Հայաստանի կուսակցական կազմակերպությունները ծանր կորուստներ էին կրել, թշնամին ուժեղացրել էր հետապնդումները), Թիֆլիսում հիմնվում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների (փաստորեն Հայաստանի կոմկուսի) Արտասահմանյան բյուրո, որի մեջ մտնում են Ս. Կասյանը, Ա. Բեկզադյանը, Ա. Մռավյանը, իսկ հետո՝ Գ. Շահվերդյանը և Հովս. Պողոսյանը:

Արտասահմանյան բյուրոյին հաջողվեց վերականգնել ընդհատված կապերը Հայաստանի կուսակցական խոշոր կազմակերպությունների հետ, նյութեր և փաստեր հավաքել Մայիսյան ապստամբության և նրա ակտիվ գործիչների վերաբերյալ, կուսակցական աշխատողներ ուղարկել Հայաստան՝ ընդհատակում աշխատելու համար, դրամական օգնություն ցույց տալ քաղաքական բանտարկյալներին:

Վրաստանի մենշևիկյան կառավարությունը դրժելով իր խոստումները, կոմունիստների մասսայական ձերբակալություններ է կատարում: Մեկը մյուսի հետևից բանտարկվում և Վրաստանի սահմաններից արտաքսվում են նաև Հայաստանի կոմունիստական կազմակերպության Արտասահմանյան բյուրոյի անդամները, որի պատճառով էլ շատ չանցած այդ բյուրոն Թիֆլիսում դադարում է գործելուց:

1920 թ. հունիսին, Բաքվում, ուր հավաքվել էին Հայաստանից և Վրաստանից արտաքսված կոմունիստները, ձևավորվում է Հա-

---

ցամներին հանձնարարվում է կուսակցական աշխատանքը շարունակել անդուլ և կրկնապատկված եռանդով:

Կոմունիստական ողջույնով՝ Վրաստանի կոմունիստական (բոլշևիկների) կազմակերպությունների ժամանակավոր Կենտրոնական կոմիտե։ Թիֆլիս, 22 մայիսի 1920 թ. (նամակը ուղարկվել է վրացերեն, ռուսերեն և հայերեն: Վրացերենից մեկ օրինակը պահվում է ՄԼԻ-ի Վրացական ֆիլիալի արխիվում, ֆ. 33, ց. 1, կապ. 9, գ. 872):

Համանման մի նամակ էլ ուղղված է եղել Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններին:

յաստանի կոմունիստական կազմակերպության Արտասահմանյան նոր բյուրո, որն իր աշխատանքը շարունակում է մինչև նույն թվականի նոյեմբերը։ Հունիսին սահմանվում է կազմակերպական հանձնաժողով, որը Կենտկոմի հաստատմանն է ներկայացնում Արտասահմանյան բյուրոյի հետևյալ կազմը՝ Ա. Նուրիջանյան, Հ. Կոստանյան, Սահակյան*, Շ. Ամիրխանյան և Լ. Ուլիբեկյան[80]։

Հայաստանի կոմունիստական կազմակերպության (փաստորեն Հայաստանի կոմկուսի Կենտկոմի) Արտասահմանյան բյուրոյում՝ իբրև անդամներ գործնական աշխատանքը վարել են Հայկազ Կոստանյանը, Ավիս Նուրիջանյանը, Շավարշ Ամիրխանյանը, Լևոն Ուլիբեկյանը։ Արտասահմանյան բյուրոյի քարտուղարն էր Հ. Կոստանյանը։ Բաքվի բյուրոյին ակտիվ օգնություն են ցույց տվել Ս. Տեր-Գաբրիելյանը (որն այդ ժամանակ գտնվում էր Հայաստանում՝ դիվանագիտական աշխատանքում), Վահան Շահգելդյանը (Կարլ ծածկանունով, գտնվում էր Երևանում, ընդհատակում), Անանիա Բերբերյանը, Եղիշե Շամախյանը, Եղիա Չուբարը, Հայկ Յազուբյանը, Արտո Ղազարյանը, Հովսեփ Պողոսյանը, Տիգրան Ղալթախչյանը, Խաչիկ Օհանջանյանը, Արշակ Գոգունցը, Վարդուշ Թարախչյանը և ուրիշներ[81]։ Արտասահմանյան բյուրոյում վճռական դեր են կատարել Արմենկոմի անդամներ Ս. Կասյանը և Ա. Մռավյանը։

Հայաստանի կոմունիստական կազմակերպության Արտասահմանյան բյուրոն, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի ղեկավարությամբ, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի և Բաքվի կոմիտեի

---

* Բնագրում գրված է Տեր-Սիմոնյանին (հավանաբար Դր. Տեր-Սիմոնյանին նկատի ունի) և ապա ջնջված և դարձված է Սահակյան։ Վերջինս, ինչպես երևում է, չի հաստատվել և չի աշխատել Արտասահմանյան բյուրոյի կազմում։ Արտասահմանյան բյուրոյում աշխատել է Դրաստամատ Տեր-Սիմոնյանը։ «1920 թվականի ամառը Բաքվում Կենտկոմի անդամներից ձևավորվում է Արտասահմանյան նոր բյուրո (Загбюро),— գրել է Ս. Մասլյանը,— որի մեջ մտնում էին ընկ. ընկ. Հայկազ Կոստանյանը, Դր. Սիմոնյանը, Ավիսը և Բաքու եկած մի քանի այլ ընկերներ» (տե՛ս Ս. Մասլյան. Երբ և ինչպես է հիմնադրվել Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը. «Խորհրդային Հայաստան», № 116, 1 հունիսի 1923 թ.)։

Ս. Տեր-Գաբրիելյանը այդ աշխատանքում նշանակվել է ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի հունիսի 19-ի որոշմամբ (տե՛ս արձ. № 26, 1920, կետ 2)։

80 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, ց. 1, կապ. 9, գ. 890, թ. 42։

81 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, կապ. 10, ց. 1, գ. 944, թ. 144, 145, 146— գ. 890, կ. 9, ց. 1։

հետ սերտ համագործակցած աշխատանք ծավալեց Հայաստանի կուսակցական կազմակերպությունների գործունեությունը ղեկավարելու, աշխատավորների հեղափոխական պայքարը գլխավորելու, կուսակցական կադրեր աճեցնելու և կոփելու, Հայաստանի շրջանները պրոֆեսիոնալ գործիչներ ուղարկելու ուղղությամբ։ Արտասահմանյան բյուրոն Հայաստանի աշխատավորներին նախապատրաստում էր հեղափոխական նոր գրոհների, հանուն Հայաստանում սովետական կարգերի հաստատման։ Արտասահմանյան բյուրոյին և այդ՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմին անմիջական օգնություն էին ցույց տալիս Ս. Մ. Կիրովը և Ա. Ի. Միկոյանը՝ հայ մարքսիստներին հասցնելով Վ. Ի. Լենինի դիրեկտիվները։ 1920 թ. հուլիսի 27-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի քարտուղար Գ. Օրջոնիկիձեին Ս. Կիրովը խնդրում է տրամադրել Հայաստանի կոմկուսի Կենտկոմի կազմը հաստատելու հետ կապված հարցերի լուծումը[82]։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների Արտասահմանյան բյուրոն, բացի Թիֆլիսից ու Երևանից, սերտ կապերի մեջ էր Հայաստանի գավառների գյուղերի կազմակերպությունների հետ, իր ներկայացուցիչներն ուներ մի շարք վայրերում, օրինակ՝ Ղազախ-Շամշադինում։ Նա հեղափոխական գործիչներ էր ուղարկել Քարվանսարայի (Իջևանի) գավկոմի տրամադրության տակ՝ տեղում կուսակցական-քաղաքական աշխատանք կատարելու համար։ Բյուրոն Ղազախ-Շամշադինում աշխատելու համար նշանակել էր Տ. Ղալթախչյանին, Սահակ Միրզոյանին, Առաքել Աթաբեկյանին, Մելիք Օքմինյանին[83]։ 1920 թ. հուլիսին Արտասահմանյան բյուրոն Քարվանսարայի գավկոմի տրամադրության տակ է ուղարկում մի խումբ կոմունիստների, այդ թվում՝ Մ. Գյանջեցյանին, Բ. Արզումանյանին, Մարուսյա Վիրաբյանին, Կոստյա Այվազյանին[84]։ Միայն հունիսին Հայաստանից հեռացած ապստամբ բանվորներից և գյուղացիներից ավելի քան 1200 մարդ համախմբվել էին Կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի շուրջը։ Հ. Կոստանյանի և Շ. Ամիրխանյանի ջանքերով ձևավորվում է Հայաստանի ապստամբական զորամաս, որը մեծ օգնություն էր ստանում Սովե-

---

82 Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 85, оп. 15, ед. хр. 61, л. 1.

83 Տե՛ս ՄԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, ցուց. 10, գ. 1, գ. 944, թ. 146։

84 Նույն տեղում, թ. 144։

տական Ռուսաստանից։ Այն որոշակի դեր խաղաց Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար սկսված պայքարին օգնելու գործում։ Ղազախում բացված էր ավիտացիոն կետ, որի վարիչն էր Տ. Ղալթախչյանը։ Վերջինս և իր զինակիցները սահմանի վրայով հեղափոխական գրականություն, թերթեր էին տեղափոխում և տարածում Հայաստանի աշխատավորության մեջ։ Դա կապի մի ակտիվ օղակ էր Հայաստանի և Արտասահմանյան բյուրոյի միջև։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման նախօրյակին, Արտասահմանյան բյուրոն Բաքվում ստեղծեց կուսակցական դպրոց, որտեղ բացի բյուրոյի անդամներից, դասախոսություններ էին կարդում Հայկ և Եպրաքսյա Յաղուբյանները, Հովսեփ Պողոսյանը, Խաչիկ Օհանջանյանը, Արշակ Գոգունցը։ ՌԿ(բ)Կ Կենտկոմն ամեն տեսակ աջակցություն էր ցույց տալիս Արտասահմանյան բյուրոյին, հայ մարքսիստներից կուսակցական պրոֆեսիոնալ կադրեր կոփելու համար։ 1920 թ. հուլիսին Մոսկվայի կուսակցական համալսարանում սովորելու են ուղարկվում 13 կոմունիստներ, այդ թվում Մ. Ենգիբարյանը, Մատինյանը, Մ. Աբրահամյանը, Առուստամյանը և ուրիշներ[85]։

Արտասահմանյան բյուրոյի աշխատանքներն ավելի ակտիվացան Անդրկովկասում ազգային կոմկուսների ձևավորման մասին ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1920 թ. հուլիսյան որոշումից հետո։ Հուլիսի 30-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կազմբյուրոն, քննության առնելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի միջնորդությունը, որոշեց. «Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում ստեղծել կոմունիստական կուսակցություններ՝ նրանց տալով կուսակցության մարզային կազմակերպությունների իրավունքներ և ենթարկելով Կենտկոմի կովկասյան բյուրոյին։ Տվյալ կուսակցական կազմակերպություններից յուրաքանչյուրն սպասարկում է իր տերիտորիայում ապրող ամբողջ բնակչությանը՝ անկախ ազգային կազմից»[86]։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոյի 1920 թ. հուլիսյան որոշումը ամրապնդեց և օրինականացրեց Կովկասի բոլշևիկյան կազմակեր-

---

85 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, գ. 890, կապ. 9, ցուց. 1, թ. 63։

86 Տե՛ս ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կազմբյուրոյի 1920 թ. հուլիսի 30-ի նիստի № 41 արձանագրության 7-րդ կետը, նաև՝ ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Ադրբեջանական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 125, գ. 23, թ. 2, որոշման մեկ օրինակը Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմ է ուղարկվել ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ն. Ն. Կրեստինսկու ստորագրությամբ, նույն թվականի հուլիսի 31-ին։

պությունների կազմակերպական նոր քայլը, գործողության մեջ դրեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի նույն թվականի հունվարի 3-ի որոշումը, որի իրականացումը մի շարք օբյեկտիվ պատճառներով կասեցվել էր։

* * *

Գնալով ուժեղանում է Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների աշխատանքը։ ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոն 1920 թ. օգոստոսի 13-ին Ս. Տեր-Գաբրիելյանին նշանակում է իր ներկայացուցիչը Հայաստանում[87]։

Հուլիս-օգոստոս ամիսներին Հայաստանի կոմունիստական կուսակցության ներկայացուցիչներ Ավիս Նուրիջանյանը և Հմայակ Նազարեթյանը վճռական ձայնի իրավունքով մասնակցում են III կոմունիստական Ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսին։ Որպես Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ազգային ջոկատներից մեկի պատվիրակներ նրանք կոնգրեսին ներկայացնում են մի շատ հետաքրքիր զեկուցում, որը հայտնի է «Կոմունիզմը Հայաստանում» խորագրով[88]։ Զեկուցման մեջ հանգամանորեն տրված էր Հայաստանի այն ժամանակվա հեղափոխական իրադրության վերլուծությունը, քննարկված էին մայիսյան ապստամբության վավերագրերը և նախանշված Հայաստանի կոմկուսի հերթական խնդիրները[89]։

---

87 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4049, ցուց. 1, գ. 3, թ. 35։

88 Առաջին անգամ հրապարակվել է «Կոմմունիստիչեսկի ինտերնացիոնալ», 1920 թ., № 13-ում, էջ 2543—2550, «А. Н.» ստորագրությամբ։ Մենք այն կարծիքին ենք, որ այն գրել է Ավիս Նուրիջանյանը։ Զեկուցման բնագիրը պահվում է ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի կենտրոնական կուսակցական արխիվում։ Ձեռագիրը Ավ. Նուրիջանյանինն է։

«Կոմունիստական ինտերնացիոնալի երկրորդ կոնգրեսը» ժողովածուում (Պետրոգրադ, 1920) նույնպես լույս է տեսել Հայաստանի պատվիրակության զեկուցումը։ Իբրև հավելված ներկայացվել են 1920 թ. մայիսյան ապստամբության որոշ նյութեր (Ա. Նուրիջանյանի և Հ. Նազարեթյանի ստորագրությամբ)։ ՌԿԿ Երևանի կոմիտեն Արմենկոմին և երկրային կոմիտեին գրած նամակում խնդրում էր ապստամբների նկատմամբ դաշնակցության վարած դաժան գործողությունների մասին իրազեկ պահել կենտրոնին, իսկ կոնգրեսի Հայաստանի պատգամավորությունը լիահույս էր, որ կոմինտերնի գործկոմը բոլոր միջոցները կձեռնարկի, որպեսզի Հայաստանի դաշնակցական կառավարությունը վերջ տա բանվորների և գյուղացիների նկատմամբ ցուցաբերվող դաժանություններին։

89 Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 54, оп. 1, ед. хр. 12, л. 13—18.

1920 թ. օգոստոսի 18-ին Արտասահմանյան բյուրոն Երևանի բոլշևիկյան կազմակերպության ղեկավարների գիտությամբ հրապարակեց «Հայաստանի բանվորներ և գյուղացիներ» դիմումը Արևելքի ժողովուրդների համագումար հրավիրելու կապակցությամբ: Դիմումում նկարագրվում էր հայ ժողովրդի ծանր վիճակը, մերկացվում օտարերկրյա և ներքին հակահեղափոխական ուժերի գործողությունները, պարզաբանվում կոմունիստական ինտերնացիոնալի արևելյան քաղաքականությունը, դրվատվում հայ ժողովրդի ազատագրման ուղղությամբ կոմունիստական կուսակցության թափած ջանքերը[90]: Արտասահմանյան բյուրոյի դիմումը հայ աշխատավոր զանգվածները ընդունեցին ջերմորեն:

Օրավուր ուժեղացվում էր քաղաքական, տնտեսական կազմակերպական օգնությունը Հայաստանին: Օգոստոսի 29-ին Ավիս Նուրիջանյանը և Հայկազ Կոստանյանը Բաքվից, Թիֆլիս՝ Ալեքսանդր Շահսուվարյանին գրել են.

«Հայաստանի կոմունիստական կուսակցության Արտասահմանյան բյուրոն տեղեկացնում է Ձեզ, որ այստեղ կազմակերպված է Հայաստանի ԿԿ Կենտկոմ և հաստատված է ՌԿԿ Կենտկոմի կողմից: Ներկայումս գոյություն ունեցող մյուս բոլոր Կենտրոնները, ղեկավար օրգանները համարվում են վերացված:

Հայտնում ենք, որ Դուք նշանակված եք ՀԿԿ Կենտկոմի ներկայացուցիչ Թիֆլիսում, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների հետ կապ պահպանելու համար: Այն բոլոր ընկերները, որոնք ընդհատակյա աշխատանքի համար մեր կողմից կգործուղվեն Հայաստան և կանցնեն Թիֆլիսով, կկապվեն միայն Ձեզ հետ: Դուք Ձեր կողմից սերտ կապ պահպանեցեք Հայաստանի հետ: Ձեզ իրավունք է վերապահվում Ձեր հայեցողությամբ աշխատողներ ուղարկել Հայաստան, իհարկե, այդ մասին մեզ իրազեկ պահելով հանդերձ, որ մենք իմանանք, թե քանի՞ ընկեր է ուղարկված, ովքե՞ր, ո՞ւր, ո՛ր շրջանը և ի՛նչ աշխատանքի:

Այդ առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցներ մենք ձեզ կուղարկենք: Հայտնեցեք, թե սկզբնական ժամանակի համար ինչքան փող է անհրաժեշտ (մոտավորապես): Ձեզ հանձնարարվում է հաշվետվություններ պահանջել այն ընկերներից, ովքեր մինչև այժմ զբաղվում են այդ աշխատանքով և այդպիսիք ուղարկել մեզ: Պարզել նաև (ըստ հնարավորին) Հայաստա-

---

90 Տե՛ս «Կոմունիստ», Բաքու, № 77, 18 օգոստոսի 1920 թ.:

նում գնդակահարված ընկերների ստույգ ցուցակը, ձեռք բերել նրանց լուսանկարները և ընդհանրապես լրիվ ինֆորմացիա տալ Հայաստանի վերաբերյալ։

Կապվեցեք նաև ընկ. Լեգրանի հետ, պարզեցեք, թե այդ նպատակի համար ունեցած փողից ինչքան է ուղարկված Հայաստան։

Ուղարկում ենք Ձեզ մանդատ, միայն թե Արտասահմանյան բյուրոյի կնիքով, որովհետև Կենտկոմի կնիքը դեռ պատրաստ չէ։

Կոմքարեններով Ավ. Նուրիջանյան
Հ. Կոստանյան
29/VIII—20 թ. քաղ. Բաքու»[91]։

Ա. Շահսուվարյանի հետ ունեցած նամակագրությունից երևում է, թե Արտասահմանյան բյուրոն ինչպիսի օգնություն է կազմակերպել Հայաստանի կուսակցական կազմակերպություններին։ Միայն 1920 թ. օգոստոսին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կարիքների համար ուղարկվում է հարյուր հազար ռուբլի։ «Ուղարկում եմ քեզ հարյուր հազար ռուբլի նիկոլաևյան հինգհարյուրանոցներ Հայաստանի կուսկազմակերպության կարիքների համար»։

Օգոստոսի 29-ին Հ. Կոստանյանը,—Բաքվից Ա. Շահսուվարյանին գրել է,—«...ընկ. Արտոյի միջոցով հիսուն հազար ռուբլի գնացել է, իսկ մնացած հիսուն հազարը որևէ մեկի (շատ հուսալի ընկերոջ) միջոցով ուղարկել Հայաստանի բյուրոյին, այսինքն՝ Երևանում Հայաստանի ժամ. կոմիտեին։ Կարելի է կապ հաստատել ընկ. Արտոյի միջոցով։ Հաղորդում ենք նաև, որ ընկ. Սուրենը** (Երևանում) մտնում է Հայաստանի ԿԿ Կենտկոմի մեջ, այնպես որ անհրաժեշտ է նրա հետ կապվել և դրամական գումարները ուղարկել նրա անունով։*

Կրկին անգամ հաղորդում ենք, որ Վրաստանի վրայով Հայաստանի հետ մեր կապը զուր եք և ամեն ինչ պետք է արվի ձեր միջոցով։ Ամենակարճ ժամկետում, բոլոր գործերը Մասլյանից և

---

91 *Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4049, ց. 1, գ. 15։ Առաջին անգամ հրապարակվել է 1960 թ. (տե՛ս* Խ. Բառսեղյան, *Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմակերպական ձևավորման մասին, «Լենինյան ուղիով», 1960, № 7, էջ 37—38։*

* *Խոսքը Արտո Ղազարյանի մասին է*—Խ. Բ.։

** *Խոսքը Վահան Շահգելդյանի մասին է*—Խ. Բ.։

մյուսներից վերցրեք ձեր ձեռքը: Փողն ստանալու և այն ուղարկելու մասին անհապաղ հաղորդեք:

Կոմբարևներով՝ Հ. Կոստանյան»[92]:

Նույն թվականի սեպտեմբերի 1-ին Հ. Կոստանյանը Սահակ Տեր-Գաբրիելյանին հայտնել է, թե Սովետական Ադրբեջանի արտաքին գործերի մինիստր Հուսեյնովի անձնական քարտուղար Ջավահիր Տեր-Պետրոսյանի (Կամոյի քրոջ) միջոցով Ս. Շահսուվարյանին 100 հազար ռուբլի է ուղարկված: Նկատի ունենալով, որ Շահսուվարյանը Թիֆլիսում չէ (Մռավյանի հաղորդման համաձայն), ուստի նա խնդրում է Տեր-Գաբրիելյանին ստանալ այդ դրամը և հուսալի մարդկանց միջոցով ուղարկել Երևանի կազմակերպությանը[93]:

1920 թ. սեպտեմբերի 10-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կավբյուրոն (Բաքվի եռյակը)* Ս. Կիրովի, Ե. Ստասովայի, Շ. Էլիավայի, Բ. Լեգրանի, Բելա Կունի մասնակցությամբ քննության է առնում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի և Հայաստանի Արտասահմանյան բյուրոյի կազմի առաջադրման հարցը: Կենտկոմի անդամներ են հաստատվում Ի. Դովլաթյանը, Ա. Նուրիջանյանը, Հ. Կոստանյանը, Ա. Խանջյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, թեկնածուներ՝ Շ. Ամիրխանյանը, Վ. Շահգելդյանը[94]: Տեղերի հետ կապն ավելի ուժեղացնելու նպատակով ՀԿԿ Կենտկոմին կից ստեղծվում է ինֆորմացիայի բաժին, որը ոչ միայն վերադաս օրգանների որոշումներն ու ցուցումներն էր կուսակցական կազմակերպություններին հասցնում, այլև նյութեր էր հավաքում Հայաստանում կատարվող կուսակցական-քաղաքական աշխատանքների մասին և ներկայացնում ՀԿԿ Կենտկոմին ու կուսակցական բարձրագույն մյուս օրգաններին:

---

92 ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4049, ցուց 1, գ. 15:

93 Նույն տեղում:

* ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոն 1920 թ. հոկտեմբերի 29-ին (տե՛ս արձանագրություն № 5) որոշել է Ռոստովի եռյակի ղեկավարության ոլորտում թողնել Ղրիմի և սևծովյան ափերի կուսակցական աշխատանքների ղեկավարությունը և Վրաստանի կոմկուսի Կենտկոմի հետ ինֆորմացիոն կապի պահպանումը, Բաքվի եռյակին՝ Կովկասի մյուս բոլոր շրջանների և Մերձավոր Արևելքի ղեկավարությունը (տե՛ս ЦПА ИМЛ, ф. 64, оп. 1, ед. хр. 1, л. 16):

94 Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 64, оп. 1, ед. хр. 1, л. 14.

Նույն օրը՝ սեպտեմբերի 10-ին Բաքվում բացվում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանս, որին մասնակցում են 50 պատգամավոր՝ վճռական ձայնի իրավունքով։ Կոնֆերանսը քննության առավ Արմենկոմի զեկուցումը՝ իր գործունեության և հեղափոխական շարժումների մասին, Հայաստանի միջազգային դրությունը և կոմկուսի անելիքներն ու այլ հարցեր[95]։

Մարքսիստական վերլուծության ենթարկելով Հայաստանում ստեղծված հեղափոխական իրադրությունը, կոնֆերանսը որոշեց զինված ապստամբության միջոցով Հայաստանում տապալել դաշնակների տիրապետությունը և հաստատել սովետական կարգեր։ Հայաստանի բոլշևիկների սեպտեմբերյան կոնֆերանսը մեծ ոգևորությամբ ողջույնի հեռագրեր ուղարկեց Վ. Ի. Լենինին և կոմունիստական III ինտերնացիոնալին։

Սեպտեմբերյան կոնֆերանսից հետո Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը թևակոխում է մի նոր, ավելի բեղմնավոր ժամանակաշրջան[96]։

Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտկոմը ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի ղեկավարությամբ ամենօրյա օգնություն էր ցույց տալիս բոլոր, այդ թվում՝ Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպություններին։ Բուրժուա-նացիոնալիստական դաշնակցություն և մուսավաթ կուսակցությունների սկսած ընդհարումներին վերջ տալու համար 1920 թ. ամռանը Ղարաբաղին, Զանգեզուրին, Նախիջևանին եղբայրական օգնության ձեռք մեկնեցին ազատարար կարմիր բանակի զորամասերը։ Դաշնակցության տիրապետության դեմ կռվի ելած Զանգեզուրի աշխատավորության պայքարը գլխավորում էին կոմունիստները։ Զանգեզուրի բոլշևիկյան գավառային կոմիտեն ղեկավարում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Կամարին (Բեժանյան), Մ. Մաշուրյանի, Բ. Մկրտչյանի, Բ. Հարությունյանի, Ն. Բակունցի, Հայկ Սիմոնյանի և այլոց ակտիվ մասնակցությամբ։ Նրանց հետ համագործակցում էին սովետական Շուշու կուսակցական կազմակերպությունները։ Հեղափոխական անսահման ավյունով էր տոգորված XI կարմիր բանակի ռազմական

---

95 Տե՛ս «Коммунист», Баку, 13 сентября 1920 г.

96 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 353—359, 369—374։

խորհրդի Ղարաբաղ-զանգեզուրյան արտակարգ-լիազոր Արմենակ Ղարագյոզյանը։ Այդ օրերին Զանգեզուրի գրեթե բոլոր գյուղերում ստեղծվել էին բոլշևիկյան ամուր բջիջներ, որոնցում ընդգրկված էին մեծ մասամբ Բաքվում, ինչպես և երկրի արդյունաբերական այլ կենտրոններում քաղաքական մկրտություն ստացած բոլշևիկներ։ Միայն Խնձորեսկի կոմբջիջն ուներ ավելի քան 60 անդամ։ Դրանց թվում էին Հ. Թաթարյանը, Ա. Մայսուրյանը, Գ. Յուզբաշյանը, Ի. Իքսիրսարյանը, Ա. Ղավալյանը (1918 թ. Բաքվի կարմիր գվարդիայի շարքերում կռված մարտիկ), Բ. Ղարագյոզյանը, Մ. Ասատրյանը, Մ. Աղաբաբյանը, Ա. Խոյլունցը և շատ ուրիշներ։ Զանգեզուրի աշխատավորության հեղափոխական պայքարի ավանգարդում էին Գաբրիել և Ալեքսան Սեյանները (Քարահունջ), Խաչատուր Միքայելյանը, Նիկոլայ Հայրյանը (Քարաշեն), Հարություն Թովմասյանը, Անդրանիկ Խաչատրյանը, Արմենակ Մայիլյանը, Լևոն Գալստյանը, Ասատուր Խուրշուդյանը, Հովսեփ Թումանյանը (Շինուհայր), Թովմաս Ադոնցը, Հակոբ Տանինը, Նիկոլայ Արզումանյանը, Սամսոն Գրիգորյանը (Սիսիանի շրջան), Պատվական և Փառանձեմ Բաբայանները, Արարատ Հարությունյանը, Բեգլար Բաղդասարյանը, Արտաշես Տեր-Մարտիրոսյանը (Ղափանի շրջան) և տասնյակ այլ ընկերներ[97]։

1920 թ. հուլիսի 5-ին սովետական իշխանության դրոշը ծածանվեց Զանգեզուրի գավառակենտրոն Գորիսի վրա։ Աշխատավորները գրկաբաց էին դիմավորում ազատարար կարմիր բանակի զորամասերին։ Ստեղծվեց 5 մարդուց կազմված Զանգեզուրի ռազմահեղափոխական կոմիտե՝ Հակոբ Կամարու նախագահությամբ։ Կոմիտեի կազմում էին Միքայել Զալյանը (նախագահի տեղակալ), Քրիստափոր Մկրտչյանը (քարտուղար), Լևոն Առուստամովը և Համբարձում Տեր-Հովհաննիսյանը։

Ռազմա-հեղափոխական կոմիտեն Զանգեզուրում հռչակում է սովետական իշխանություն, ստեղծում տեղական իշխանության օրգաններ՝ Զանգեզուրի սովետական կառավարություն։

Այդ օրերին կուսակցական աշխատանքի հարուստ փորձ ունեցող Արամ Շահգելդյանի ղեկավարությամբ գործում էր «Զանգեզուրի գյուղացու շաբաթ կազմակերպող կոմիտե», որը գյուղացիու-

---

97 Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մասին տե՛ս Ա. Սողոմոնյան, Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում, Երևան, 1959, Ս. Մնացականյան, Ռևոլյուցիան Անդրկովկասում և Սովետական Ռուսաստանի պատմաբանները, Երևան, 1961։

թյանը պարզաբանում էր սովետական իշխանության ազգային քաղաքականությունը։

1920 թ. ամռանը Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունները կարմիր բանակի քաղաքական օրգանների օգնությամբ ուժեղացրին աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքը։

ՌԿԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն 1920 թ. հոկտեմբերի 1-ին քննության առնելով Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայաստանի Արտասահմանյան բյուրոյի կազմի հարցը, որոշեց. «Համաձայն կովկասյան բյուրոյի առաջարկության հաստատել Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմ հետևյալ կազմով՝ ընկ. ընկ. Դովլաթով, Ավիս, Կասյանյան, Աղասի և վեցերորդ ընկերը Հայաստանում աշխատող ընկերների կողմից՝ Երևանի խմբի գիտությամբ։ Թեկնածուներ՝ ընկ. ընկ. Ամիրխանյանին, Շահգելդյանին (Կարլ)։ Արտասահմանյան աշխատանքին վերաբերող բոլոր հարցերը Հայաստանում լուծվում են Կովկասյան բյուրոյի և ընկ. Դովլաթովի, Ավիսի ու Կասյանյանի հետ համատեղ։ Ընկ. Սահակ Տեր-Գաբրիելյանին Կենտկոմի մեջ չմտցնել, քանի որ նա Հայաստանում Ռուսաստանի ներկայացուցչության պատասխանատու աշխատող է»[98]։

Այս որոշումը ծրագրային նշանակություն ունեցավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կազմավորումը վերջնականապես ավարտելու գործում։ Մի քանի օր անց, Բաքվում ռուսերեն լույս է տեսնում Հայաստանի կոմկուսի Կենտկոմի «Տեղեկագիրը»՝ «Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտե» խորագրով։

Թերթը իր «Բաքու, 22 նոյեմբերի» առաջնորդողում նշել է, որ Հայաստանը կանգնած է իր ազատագրման անառարկելի փաստի առջև, միայն Հայաստանում սովետական իշխանության հաստատմամբ, Անդրկովկասի սովետական հանրապետությունների համերաշխ ընտանիքում, հայ ժողովուրդը ձեռք կբերի խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն[99]։

1920 թ. հոկտեմբերի 8-ին Բաքվի «Կոմունիստ» թերթում հրա-

---

98 Տե՛ս Կազմբյուրոյի 1920 թ. հոկտեմբերի 1-ի նիստի № 57 արձանագրությունը, գ. 1, պ. մ. 78։

99 Տե՛ս «Բաքու, 22 նոյեմբերի» առաջնորդողը, որը մեր կողմից հրապարակվել է «Բանբեր Հայաստանի արխիվների», № 3-ում, 1962, էջ 33—35։

պարակվում է «Հայաստանի բանվորներին և գյուղացիներին» կոչը, որի տակ ստորագրված էր «Հայաստանի կոմունիստական կուսակցության (բոլշևիկների) Կենտրոնական կոմիտե»:

Հայաստանի կոմկուսի Կենտրոնական կոմիտեն բնութագրելով Հայաստանի աշխատավորության մղած պայքարը դաշնակցության արյունոտ տիրապետության դեմ, հատկապես մայիսյան պանծալի ապստամբության կազմակերպման ու ղեկավարման գործում կոմկուսի խաղացած դերը, իր մարտական կոչն ավարտում է հետևյալ խոսքերով. «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին, նրանց հեղափոխական կորովն ու դասակարգային գիտակցությունը՝ կազմակերպելու կոմունիստական կուսակցության դրոշի շուրջը, հավաքելու ցրված հեղափոխական ուժերը, որպեսզի ձեռք-ձեռքի տված խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական-դաշնակցական հավածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշակը Հայաստանում»[100]:

Հայաստանում սովետական կարգերի հաստատման նախօրյակին, 1920 թ. նոյեմբերի 11-ին, Կովկասյան բյուրոն Գ. Օրջոնիկիձեի գլխավորությամբ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի կազմում լրացուցիչ կերպով մտցրեց Ս. Կասյանին, Ա. Բեկզադյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին[101]: Այսպիսով, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի լրիվ կազմը բաղկացած էր հետևյալ գործիչներից՝ Ա. Նուրիջանյան, Հ. Կոստանյան, Ի. Դովլաթով, Ս. Տեր-Գաբրիելյան, Ա. Բեկզադյան, Ս. Կասյան և Ա. Խանջյան[102]:

1920 թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսները նշանավորվում են նրանով, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները ՌԿ(բ)Կ Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի ցուցումներով, միավորվում, համախմբվում են մեկ միասնական ղեկավար կենտրոնի՝ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի շուրջը: Թեև երկրում առեղծված վիճակը այդ ժամանակ հնարավորություն չի տալիս կուսակցության համագումար հրավիրել, բայց վերացվում են մյուս բոլոր «կենտրոնները» ու ղեկավար օրգանները և Հայաստանի կուսակցական կազմակերպությունների ղեկավարությունը կենտրոնանում է ՀԿԿ Կենտկոմի ձեռքում:

---

100 Տե՛ս «Կոմունիստ», Բաքու, 8 հոկտեմբերի, 1920 թ., նաև «Կարմիր աստղ», Կրասնոդար, № 19, 21 հոկտեմբերի, 1920 թ.:

101 Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 64, оп. 1, ед. хр. 1.

102 Նույն տեղում:

Այսպիսով, Վ. Ի. Լենինի ցուցումներով, ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ, 1920 թ. ամռանը Հայաստանի տերիտորիայում գործող բոլշևիկյան կազմակերպությունները միավորվում և ձևավորվում են որպես Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն, որը նույնպես, ինչպես և Ադրբեջանի ու Վրաստանի կոմունիստական կուսակցությունները, ենթարկվում էր ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյին և հանդիսանում լենինյան կուսակցության անբաժան մասը, նրա տեղական ջոկատներից մեկը։

Կովկասում հեղափոխության ամենավտանգավոր թշնամին բուրժուական նացիոնալիզմն էր։ Ինչպես արդեն նշել ենք, բուրժուական նացիոնալիստական կուսակցությունների դեմ պայքարն ուժեղացնելու, աշխատավոր մասսաներին նրանց ազդեցությունից զերծ պահելու և լենինիզմի դրոշի տակ համախմբելու գործում հսկա դեր խաղաց ազգային կոմկուսների ստեղծումը։ Եվ վերջապես, կոմունիստական կուսակցության շինարարության մեջ նման փոփոխությունը՝ ազգային կոմկուսների ստեղծումը առանձնապես կարևոր էր Արևելքում, քանի որ Արևելքի, Ասիայի և նրա նախադռանն ապրող ժողովուրդների վստահության նվաճումը, մեծ Հոկտեմբերի գաղափարները նրանց մեջ տարածելը հանդիսանում էր սովետական իշխանության և բոլշևիկյան կուսակցության հիմնական խնդիրներից մեկը։

Ձևավորվելով որպես առանձին ազգային կոմկուսներ, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները առաջվա նման մնում էին ՌԿ(բ)Կ կազմի մեջ, ղեկավարվում մեկ միասնական կանոնադրությամբ ու ծրագրով։ Դեռևս 1920 թ. ապրիլի 12-ին ՌԿ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեն Հյուսիսային Կովկասի բոլոր կոմունիստական կազմակերպություններին ուղղած կոչում այդ առթիվ գրել է. «Մենք ուզում ենք, որ ամբողջ Կովկասը, կովկասյան բոլոր կազմակերպությունները, որպես մի ամբողջություն, մտնեն Ռուսաստանի կոմունիստական կուսակցության մեջ։ Սովետական իշխանությունը ինչ ձևեր էլ որ ընդունի Կովկասում՝ վերջինիս աշխարհագրական, ազգագրական, կուլտուր-պատմական և կրոնական-կենցաղային ու այլ առանձնահատկությունների պատճառով, կուսակցական առումով մենք այստեղ չենք կարող թույլ տալ ոչ մի մեկուսացած կազմակերպության կամ առանձին ինքնուրույն կուսակցությունների ստեղծում։ Մենք փորձից գիտենք, որ այդպիսի մեկուսացման ինքնուրույնության ամեն մի ձգտում պարունակում

է հետամնացության, ռեակցիոնության սաղմ, որ այն հակասում է բոլոր երկրների ու ժողովուրդների աշխատավոր մասսաների եղբայրության ու միասնության բոլոր մեծ սկզբունքներին»[103]։

Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպական ձևավորումը մի պրոցես էր, որը սկսվելով 1919 թ. սեպտեմբերյան խորհրդակցությունից, իր զարգացումն ստացավ 1920 թ. հունվարյան կոնֆերանսում և նրանից հետո ընկած ժամանակաշրջանում, հատկապես 1920 թ. ամռանը՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի որոշումներում և Հայաստանի կուսակցական կազմակերպությունների գործնական կյանքում։ «Եթե Ադրբեջանի կոմկուսը հաջողվեց ստեղծել դեռևս 1920 թ. մարտ-ապրիլին,— գրել է Ա. Միկոյանը,— ապա Վրաստանի և Հայաստանի ազգային կուսակցությունների կազմակերպումը, Կենտկոմի որոշման համաձայն, հետաձգվեց մինչև 1920 թ. վերջը, երբ Ադրբեջանում արդեն գոյություն ուներ սովետական իշխանություն և կարմիր աստղը հաստատապես սավառնում էր Վրաստանի և Հայաստանի վրա»[104]։

* * *

1920 թ. նոյեմբերին Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը Բաքվում և այլ տեղերում գտնվող հայ կոմունիստների հավաք է հայտարարում։ Նոյեմբերի 4-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի միացյալ նիստում, որին մասնակցում էին նաև ՀԿԿ Կենտկոմի անդամները, Հայաստանում ՌՍՖՍՀ-ի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը և ուրիշներ, քննության է առնվում Հայաստանում տիրող դրությունը։ Դրանից մի քանի օր անց, նոյեմբերի 23-ին, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի որոշմամբ մի խումբ հայ կոմունիստներ ազատվում են իրենց զբաղեցրած կուսակցական-սովետական պատասխանատու պաշտոններից և ուղարկվում ՀԿԿ Կենտկոմի տրամադրության տակ։ ՀԿԿ Կենտկոմում նոյեմբերի առաջին օրերից սկսած արտակարգ եռուզեռ էր։ Ամենուրեք իշխում էր մարտական տրամադրություն, հեղափոխական խանդավառություն՝ օր առաջ Հայաստանի սահմանի վրա ոտք դնելու և տառապած ժողովրդին ազատություն պարգևելու համար։

---

103 Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 64, ед. хр. 2, л. 1—7.

104 Տե՛ս «Бакинский рабочий», № 75, 5 апреля 1925 г.

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի ապստամբ բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ տապալեցին դաշնակների ատելի լուծը և երկրում հաստատեցին սովետական իշխանություն։ Այդ բախտորոշ օրերին Հայաստանի աշխատավորությանը եղբայրական օգնության ձեռք մեկնեցին ռուս մեծ ժողովուրդը, հերոսական XI բանակի զորամասերը։

Հայաստանի վրա ծածանվեց մեծ Հոկտեմբերի ազատարար դրոշը։ Հայաստանը դարձավ սովետական։ Արտահայտելով երախտագետ հայ ժողովրդի միասնական կամքը, Հայաստանի բոլշևիկները շնորհակալության առաջին խոսքն ուղղեցին Վ. Ի. Լենինին։ «Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին,— ասված է Հեղկոմի ողջույնում,— որ Դիլիջանի ու Քարվանսարայի շրջանների գյուղացիները, զայրացած դաշնակցական կառավարության ոճրագործ քաղաքականությունից և երկրում խուժող անարխիայից, բարձրացրին ապստամբության դրոշը։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը իսկույնևեթ ստանձնեց այդ ինքնաբուխ շարժման ղեկավարությունը և ստեղծեց Հայաստանի Հեղկոմ՝ Հայաստանը հայտարարելով սոցիալիստական խորհրդային Հանրապետություն։

Հասցված է առաջին հարվածը, Դիլիջան քաղաքը մեր ձեռքումն է։ Ոգևորված ապստամբները առաջ են նետվում վերջնականապես խորտակելու Անտանտի անպատկառ գործակալի իշխանությունը։ Կատարելով նրանց կամքը, մենք ստեղծեցինք տեղական Հեղկոմ, առաջ ենք շարժվում լիահույս, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարար մեր ավագ դաշնակից՝ սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական կարմիր բանակը ցույց կտա մեզ իրական օգնություն մեր այս դժվարին պայքարում։ Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների անունից մենք խնդրում ենք ժողկոմսովետին ցույց տալ այդ օգնությունը։

Կեցցե Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետությունը։ Կեցցե նրա հաղթական կարմիր բանակը։

Հայաստանի Հեղկոմի նախագահ՝ Կասյան, Հայաստանի Հեղկոմի անդամներ՝ Ավիս, Բեկզադյան, Դովլաթյան, Մռավյան, Տեր-Գաբրիելյան»[105]։ Վ. Ի. Լենինը ստանալով Հայաստանում սովետա-

---

105 ЦПА ИМЛ, ф. 2609, оп. 14, ед. хр. 36, л. 1. ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 67, թ. 1։ Հեղկոմի ողջույնի արխիվային մի քանի տարբերակ կա, այդ մասին տե՛ս մեր հոդվածը «Սովետական Հայաստան» թերթի 1970 թ.

կան իշխանության հաստատման լուրը, դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանին հեռագրում է. «Հանձին ձեզ՝ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին։

Չեմ կասկածում, որ դուք կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխության հաստատելու համար»[106]։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի առաջին իսկ օրը Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը ողջույնի հեռագիր ուղարկեց ՌԿ(բ)Կ Կենտկոմին՝ նրանում շարադրելով հայ ժողովրդի երախտագիտության խոսքը՝ ուղղված Վ. Ի. Լենինին, կոմունիստական կուսակցությանը և ռուս մեծ ժողովրդին։ Ողջույնի հեռագրում նշված էր, որ Հայաստանում սովետական կարգերի հաստատումով վերջ տրվեց Հայաստանի կոմկուսի և նրա Կենտրոնական կոմիտեի անլեգալ, ընդհատակյա ծանր աշխատանքների շրջանին։ Այսուհետև Հայաստանի կոմկուսը գործելու է ազատ, կանգնած լինելով հանրապետության քաղաքական կյանքի կենտրոնում, առաջավոր գծում։ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը ՌԿ(բ)Կ Կենտկոմին խնդրում էր միջոցներ ձեռնարկել և օգնել տեղերում կուսակցական ապարատը ամրապնդելու, Հայաստանին հեղափոխական պայքարում կոփված, բոլշևիկ կադրեր տրամադրելու գործում[107]։ Կուսակցության Կենտրոնական կոմիտեն, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, Ադրբեջանի, Վրաստանի կոմկուսների կուսակցական Կենտկոմները մեծ օգնություն ցույց տվեցին Հայաստանի կուսակցական կազմակերպություններին։ Մոսկվայից, Բաքվից, Դոնի Ռոստովից, Թիֆլիսից, Ռուսաստանի արդյունաբերական խոշոր քաղաքներից, կարմիր բանակի քաղաքական վարչություններից շուտով հավաքագրվեցին և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի տրամադրության տակ ուղարկվեցին հարյուրավոր հայ կոմունիստներ։

Հայաստանում սովետական կարգերի հռչակման մասին Հեղ-

օգոստոսի 6-ի համարում։ Պատմական անճշտություններ են պարունակում «Լենինյան ուղիով»-ի 1971 թ. № 9-ի (էջ 112) և 1972 թ. № 3-ի (էջ 110—112) Հեղկոմի ողջույնի վերաբերյալ մեկնաբանությունները։

106 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 550։ Վ. Ի. Լենինի ողջույնն առաջին անգամ հրապարակվել է 1920 թ. դեկտեմբերի 4-ին «Պրավդա»-ում (№ 272), «Իզվեստիա»-ում (№ 272), «Կոմունիստիչեսկի տրուդ»-ում (№ 214), «Գուդոկ»-ում (№ 175) և այլ թերթերում։

107 Տե՛ս «Коммунист», Баку, № 180, 5 декабря 1920 г.

կոմի որոշումները կայծակի արագությամբ տարածվեցին Անդրկովկասում, հասան Հյուսիսային Կովկաս, Մոսկվա, Պետրոգրադ, կարմիր բանակի զորամասերին։ Բաղձալի լուրը անհուն ուրախություն պատճառեց հայ ժողովրդի բարեկամներին։ Դեկտեմբերի 1-ին տեղի ունեցավ Բաքվի սովետի հանդիսավոր նիստը, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատման առթիվ ողջույնի ճառեր արտասանեցին Գ. Օրջոնիկիձեն, Ն. Նարիմանովը, Հայաստանի Հեղկոմի անդամ Ս. Բեկզադյանը, Բ. Միխայլովը, Կամենսկին և ուրիշներ։ Նույն օրը ընդունվում է Ադրբեջանի Հեղկոմի դեկլարացիան՝ Հայաստանում սովետական կարգերի հաստատման առթիվ։ Հայաստանի աշխատավորությանը և Հեղկոմին ողջունեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, հավատալով, թե ռուսական պրոլետարիատը և Կովկասի ազատագրված աշխատավոր ժողովուրդը «բաժանելով Հայաստանի բանվորների ու գյուղացիների ուրախությունը, բոլոր միջոցներով նրանց օգնության կգան, նոր, սովետական պրոլետարական կյանքի կառուցման գործում»[108]։

Այն պահին, երբ հայ ժողովրդի բարեկամներն ուրախանում և պատրաստակամություն էին հայտնում օգնելու Սովետական Հայաստանին, նրա թշնամիները նոր որոգայթներ և դավեր էին նյութում։ Հեղկոմը, ղեկավարվելով Գ. Օրջոնիկիձեի ցուցումներով, հաշվի առնելով այն, որ թուրքական զորքերն առանց դիմադրության շարժվում են դեպի Ղարաքիլիսա, 18-րդ հեծյալ դիվիզիայի հրամանատար Կուրիշկոյին մարտական առաջադրանք է տալիս հեծելազորային առաջին բրիգադի և հետևակային 179-րդ գնդի ուժերով շարժվել Ղարաքիլիսա և օգնել ապստամբներին։

Աշխատավորները, բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությամբ, բերկրանքով են դիմավորում կարմիր բանակի զորամասերին, նրանց հետ Ղարաքիլիսա մեկնած Հայաստանի կոմկուսի ներկայացուցիչներ Ասատուր Կախոյանին (բանվոր Խեչո), Լևոն Ուլուբեկյանին, Վռամ Ղազանչյանին։ Կազմակերպվում է Հեղկոմ, հռչակվում սովետական իշխանություն։

Ավելորդ արյունահեղությունից խուսափելու համար Բ. Լեգրանի պահանջով Հայաստանի Հեղկոմը Դիլիջանում մինչև դեկտեմբերի 3-ը դադարեցնում է Երևանի ուղղությամբ կատարվող առաջ-

108 Տե՛ս ЦПА ИМЛ, ф. 85, оп. 14, д. 36, л. 3. Տե՛ս նաև «Հեղափոխական կոմիտեները Հայաստանում», Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. 1920 թ. նոյեմբեր—1922 թ. հունվար, Երևան, 1974։

խաղաղությունը։ Բ. Լեգրանը ղեկավարվելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումներով, դաշնակցական կառավարությունը վճռականորեն հասկացնում էր, թե իշխանությունը խաղաղ ճանապարհով հանձնելու վերաբերյալ բանակցությունների ձգձգումն անիմաստ է։ «Հայաստանում սովետական իշխանության հաստատումն արդեն կատարված փաստ է, ասում էր Բ. Լեգրանը,—Հայաստանի Հեղկոմը Կարմիր բանակի զորամասերի գլուխը անցած մտել է Հայաստանի տերիտորիա»[109]։

Դաշնակցականները հայ ժողովրդի նկատմամբ ծանր ոճիր գործեցին՝ Ալեքսանդրապոլում, դեկտեմբերի 2-ին Թուրքիայի հետ կնքելով խայտառակ համաձայնագիր։ Դրանով նրանք, փաստորեն, համաձայնվեցին հայ ժողովրդի ազգային անկախության ոչնչացման քաղաքականության հետ։ Դաշնակցականները տերիտորիալ մեծ զիջումներ էին անում։ Նրանք համաձայնության եկան Արևմտյան Հայաստանի տերիտորիաներից հրաժարվելու և դրանք Թուրքիային զիջելու մասին (պայմանագրի 3-րդ հոդվածը)։ Թուրքիային հանձնվեց մինչև 1914 թ. Ռուսաստանին ենթակա Կարսի մարզը, ինչպես նաև Ալեքսանդրապոլն ու գավառը։ Բացի այդ, սահմանի վերաբերյալ հոդվածում նշված է, որ Նախիջևանի Շարուրի և Շահթախտի շրջաններում «Թուրքիայի հովանավորության ներքո» հաստատվում է հատուկ վարչություն և «Հայաստանը պարտավորվում է չմիջամտել այդ վարչության գործերին»։ Պայմանագրում ասված էր, թե Թուրքիային զիջված տերիտորիաները «պատմական, էթնիկական և իրավաբանական անվիճելի կապ ունեն Թուրքերի հետ»։

Դաշնակցականները համաձայնվեցին ցրել ազգային զինված ուժերը։ Պայմանագրի չորրորդ հոդվածում նշված էր, որ «Հայաստանի կառավարությունը համաձայնվում է, որ բացի թեթև և երկրի կարգն ու անվտանգությունը պաշտպանելու համար բավարար քանակությամբ զենք ունեցող ժանդարմերիայից, սահմանների պաշտպանության համար չունենալ այլ ռազմական ուժ, բացի 1.500 զինվորից բաղկացած ջոկատից՝ լեռնային կամ դաշտային 8 հրանոթով և 20 գնդացրով։ Հայաստանում զինապարտություն չի լինի»։

Պայմանագրի 5-րդ հոդվածով Երևանում Թուրքիայի ներկայացուցչին իրավունք էր տրվում անմիջականորեն միջամտելու Հա-

[109] Տե՛ս ЦПА ИМЛ при ЦК КПСС, ф. 64, оп. 2, д. 12.

լաստանի ներքին գործերին և երկիր բերելու թուրքական զորքեր, «երբ այդ պահանջի արտաքին կամ ներքին վտանգը»:

Այդ նույն ժամանակ ՌՍՖՍՀ լիազոր Բ. Լեգրանի հետ կնքած պայմանագրով դաշնակցության կառավարությունը կապիտուլյացիայի էր ենթարկվել: Երևանում բոլոր գործողությունները մինչև Հեղկոմի գալը կատարվում էին ՌՍՖՍՀ ռազմական կոմիսար Օ. Սիլինի ղեկավարությամբ: Դեկտեմբերի 3-ին Երևանից հատուկ հանձնարարությամբ Դիլիջան մեկնեց Բ. Լեգրանի խորհրդական Բոբրիշևը: Նա Հեղկոմի նախագահ Ս. Կասյանին հանձնեց կարևոր փաստաթղթեր, պատմեց մայրաքաղաքի դրության մասին: Նրանց զրույցը դեռ չէր ավարտվել, երբ ուղիղ հաղորդալարով Կասյանի հետ խոսակցություն սկսեց Բ. Լեգրանը: Նա ասում էր՝ այլևս հապաղել պետք չէ, հարկավոր է արագացնել Հեղկոմի մուտքը Երևան:

Ահա հատվածներ նրանց խոսակցությունից.

Երևան— Լեգրան

Դիլիջան— Կասյան

Լեգրան.— Ասացեք, ինչու եք այդպես հապաղում մեկնել... Զինադադարը թուրքերի հետ վերջանում է հինգին, թյուրիմացություններից խուսափելու համար մինչև այդ պետք է Հեղկոմի դեկլարացիայով դիմել նրանց: Դուք ե՞րբ կգաք:

Կասյան.— Հենց նոր եկավ ընկեր Բոբրիշևը: Հանձնեց փաստը, ծանոթացանք: Փաստում էլ պատասխանում եմ խոսակցությանը: Ծածկագիր նամակը Բաքու և Մոսկվա կաշխատենք այսօր ևեթ հաղորդել, կհաղորդենք նաև Բոբրիշևի բանավոր հաղորդումը... Դեկլարացիան հիմա ուղարկում ենք Կարաբեքիրին: Մենք կմեկնենք այսօր կամ ավելի ճիշտ, վաղը առավոտյան:

Լեգրան.— ...Դուք պետք է հնարավորին չափով շուտ մեկնեք այստեղ: Հաղորդեցեք հրամանատարությանը, որ Կարաբեքիրը Մդիվանու միջոցով հայտնել է իր խնդրանքը, որպեսզի կարմիր զորամասերը, ընդհարումներից և թյուրիմացություններից խուսափելու համար, չանցնեն զինադադարով հայկական զորքերի համար հաստատված սահմանները, այդ մասին հայտնված է Օրջոնիկիձեին:

Սպասում եմ Ձեր հաղորդմանը Երևան մեկնելու մասին, Ձեզ դիմավորելու համար ավտոմոբիլներ ուղարկված են:

Առայժմ այսքան:

Լեգրան:

Կասյան.— Մի քիչ սպասեցեք։ Այսօր կարմիր զորամասերը, Բաքվից արված հրամանով, շարժվում են Սեմյոնովկայի ուղղությամբ, ինչպես և Ղարաքիլիսայի ուղղությամբ։

Արդյո՞ք հետ կանչել նրանց։

Շիֆֆերս.— Հեռախոսի մոտ է ընկ. Լեգրանի անձնական քարտուղար Լ. Շիֆֆերսը։ Ընկ Լեգրանը հայտնում է Ձեզ հետևյալը։ Մինչև Օրջոնիկիձեից որոշակի ցուցումներ ստանալը զինադադարի գիծն անցնելը խորհուրդ չեմ տալիս։ Ինչ վերաբերում է Սեմյոնովկայով շարժվող զորքերին, խնդրում եմ մատնանշել, թե ինչ զորամասեր են և ինչ թվական կազմով, որպեսզի հնարավոր լինի նախապես Երևանում շենք նախապատրաստել։ Իսկապես, երբ եք մեկնում այստեղ։ Ամեն ինչ պատրաստ է ձեզ դիմավորելու համար։

Կասյան.— Թե ինչ զորամասեր են և զորամասերի քանակը չգիտեմ։ Կհայտնեմ միայն մեր մեկնելու ժամի մասին։

Շիֆֆերս.— Ցտեսություն։ Սպասում ենք»[110]։

Սովետական Ռուսաստանի զգույշ և հեռատես քաղաքականությունը, դաշնակցական կառավարության հետ Բորիս Լեգրանի կնքած պայմանագիրը ձախողեցին հայ ժողովրդի թշնամիների ներքին և արտաքին հակահեղափոխական ուժերի դավադրությունը, հող պատրաստեցին Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի և ամրապնդման համար։

Այդ հաղթանակը բոլշևիկների ղեկավարությամբ նախապատրաստվել էր ավելի քան 25-ամյա դասակարգային, պրոլետարական հուժկու պայքարով, մայիսյան հերոսական ապստամբությամբ, նոյեմբերյան քաղաքական փոթորկալից իրադարձություններով, ռուս ժողովրդի անշահախնդիր օգնությամբ։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն 1920 թ. դեկտեմբերի 5-ին քննության է առնում ՀԿ(բ)Կ Կենտկոմի խնդրանքը կուսակցական-սովետական մի շարք աշխատողների Սովետական Հայաստան աշխատանքի ուղարկելու մասին։ Հանձնարարվում է Կավբյուրոյին Հայաստան ուղարկել մեծ թվով հայ կոմունիստներ։ Դեկտեմբերի 5-ին Բաքվի «Կոմունիստ» և այլ թերթերում, Ս. Բեկզադյանի ստորագրությամբ հրապարակվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի նամակը Ռուսաստանի Կ(բ)Կ բոլոր օրգաններին։ «Առաջարկվում է, որ բոլոր

---

110 ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, քաղվածքների ֆոնդ։

կուսակցական ընկերները՝ կուսակցական կարգապահության կարգով անմիջապես Հայաստան մեկնեն ի տնօրինություն Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի։ Թախանձագին խնդրում ենք, որ Ռուսաստանի կոմունիստական կուսակցության բոլոր կուսակցական օրգանները Հայաստանի պատասխանատու կոմունիստներին և այլ ընկերների, որոնց նրանք անհրաժեշտ կգտնեն իրենց հետ վերցնելու, ամեն տեսակ աջակցություն ցույց տան, որ պետք եղածը արվի ու շուտով մեկնեն Հայաստան ի տնօրինություն Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի»[111]։

1920 թ. դեկտեմբերի 10-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն որոշում է Հայաստան ուղարկել Ա. Կարինյանին (Պետրոգրադից), Դր. Տեր-Սիմոնյանին, Վահան Երեմյանին (Դոնի Ռոստովից), Պ. Մակինցյանին (Մոսկվայից), Արշակ Աթաբեկյանին (Պյատիգորսկից) և ուրիշների։ Կազմբյուրոն հետաձգում է Ա. Մյասնիկյանի, Արարատ Մռավյանի, Մ. Տեր-Հարությունյանցի, Գայի (Հայկ Բժշկյանի), Բ. Բորյանի և մի քանի ուրիշների հավաքագրումը[112]։ Երկու շաբաթ անց, դեկտեմբերի 26-ին, կազմբյուրոն նորից է անդրադառնում Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի խնդրանքին՝ հայ կոմունիստների հավաքագրման մասին։ Որոշվում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմի պահանջած բոլոր կոմունիստներին շտապ կերպով ուղարկել Սովետական Հայաստան։ Միայն դեկտեմբերին Մոսկվայից Հայաստանում աշխատելու նպատակով գործուղվում են 200, Հյուսիսային Կովկասից՝ 54, Բաքվից՝ 70 կուսակցական։ 1921 թ. Հայաստան է ուղարկվել ավելի քան 500 կուսակցական, այդ թվում Ա. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը (Ս. Սրապիոնյան)[113], Գայը (Հայկ Բժշկյան) և շատ ուրիշներ։ Ա. Մյասնիկյանը նշանակվեց Հայաստանի Հեղկոմի նախագահ, իսկ այն վերանվանվելուց հետո՝ Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ և ռազմական գոր-

---

111 «Կոմունիստ», Բաքու, № 167, 7 դեկտեմբերի 1920 թ.։

112 Տե՛ս ՌԿ(բ)ԿԿ կազմբյուրոյի 1920 թ. դեկտեմբերի 10-ի № 78 արձանագրությունը, կետ. 8։

Տե՛ս Ա. Մնացականյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963, էջ 382, 383։

113 Ա. Մյասնիկյանին և Ս. Լուկաշինին Հայաստան ուղարկելու վերաբերյալ ՌԿ(բ)Կ Կենտկոմին ուղղված նամակը ստորագրել էր Ս. Տեր-Գաբրիելյանը։ Հարցը քննարկվել է 1921 թ. հունվարի 11-ին (տե՛ս արձ. № 86, կետ 40)։

ների ժողովրդական կոմիսար։ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտկոմի քարտուղար առաջադրվեց Ս. Լուկաշինը, որը միաժամանակ ժողկոմխորհի նախագահն էր։

Սովետական Հայաստանում աշխատելու ուղարկված կոմունիստների մեջ էին Ս. Համբարձումյանը, Ա. Իվանյանը, Ե. Գենկինը, Ն. Կուրսեյը, Ս. Մարտիկյանը, Ա. Շաղունցը, Ե. Բակունցը, Ա. Շահսուվարյանը և ուրիշներ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը, Հայաստանի ժողկոմխորհը, գավառային կուսակցական և սովետական օրգաններն ապահովվեցին պրոլետարական հեղափոխության գործին նվիրված բոլշևիկյան հմուտ կադրերով։

Արդեն 1921 թ. Հայաստանում (առանց Զանգեզուրի գավառի) կուսակցականների թիվը հետևյալ պատկերն էր ներկայացնում.

Գավառի անունը	ՍՄԿԿ անդամների թիվը	ՍՄԿԿ անդամության թեկնածուների թիվը	Ընդամենը
Երևան	637	784	1421
Լոռի	730	800	1530
Դիլիջան	946	800	1746
Ն. Բայազետ	288	581	896
Ալեքսանդրապոլ	252	72	324
Էջմիածին	130	600	730
Ղարաքիլիսա	70	310	380
Դարալագյազ	45	62	107
Ընդամենը	3098	4009	7107

1921 թ. կուսակցական հաշվառումից և ապա զտումից հետո Հայաստանում կար կուսակցության 5800 անդամ և թեկնածու։ Թեև կուսակցական հաշվառման գործը այդ ժամանակ ստույգ հիմքերի վրա չէր դրված, բայց եղած նյութերը վկայում են, որ 1921 թ. վերջերին Հայաստանի կոմկուսի կողմում հաշվառման ենթարկված 2495 անդամներից և թեկնածուներից՝ 1438-ը գյուղացի էին, 534-ը՝ բանվոր, 471-ը՝ մտավորական (ծառայող), 52-ի սոցիալական դրությունը չի նշված։

Կուսակցության անդամության թեկնածուներից 83-ը ՍՄԿԿ

շարքերն էին մտել մինչև 1917 թվականը, 271-ը՝ 1917 թ. 306-ը՝ 1918, 269-ը՝ 1919, իսկ 308-ը՝ 1920 թվականին[114]։

Սովետական կարգերի հաստատումով Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը վերջնականապես ձևավորվեց և դարձավ հանրապետությունում կառավարող կուսակցություն։

---

114 *Տե՛ս* «Известия Центрального Комитета Коммунистической партии (большевиков) Армении», № 1, 1922.

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԵՎ ՄԱՆՐԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԿՐԱԽԸ

1. Դաշնակցության պառակտումը: 2. Անհեռատես քաղաքականության ծանր հետևանքները: 3. 1921 թ. փետրվարյան խռովության ջախջախումը: 4. Հայկական կադետականության առաջացումը և սնանկությունը: 5. Հայ սոցիալիստ-հեղափոխականները՝ էսէռները դաշնակցության զինակից: 6. «Սպեցիֆիկյան» մանրբուրժուական սոցիալիստների խոսքն ու գործը: 7. Հնչակյան աղճատված մարքսիզմը: 8. Հայկական մենշևիզմի վախճանը: 9. Հայրենիքի և հայրենասիրության մասին ճամարտակությունները: 10. Բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների կազմակերպական լուծարը ՍՍՀՄ-ում:

1

Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածմանը մեծ չափով վնասեցին բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունները՝ «Հայ հեղափոխական դաշնակցությունը», կադետները, էսէռները, հնչակյանները, մենշևիկները, «սպեցիֆիկները» և բուրժուական գաղափարախոսությունը կրող քաղաքական մյուս կազմակերպությունններն ու հոսանքները:

Մարքսիստական հայ հասարակական-քաղաքական միտքը բախվում էր բուրժուական նացիոնալիզմին, ճշմարտության լույսով լուսավորում աշխատավոր մասսաների ճանապարհը: Պրոլետարական հեղափոխության շահերը պահանջում էին ակտիվացնել պայքարը բուրժուական գաղափարախոսության, առաջին հերթին դաշնակցության դեմ, բանվորներին, աշխատավոր մասսաներին պարզաբանել, որ դասակարգի գաղափարախոսությունը երբեք չի

կարելի շփոթել նրա առանձին ներկայացուցիչների հոգեբանություն, հպանցիկ տրամադրությունների հետ։

Հայ իրականության մեջ մարքսիզմի գլխավոր թշնամին դաշնակցությունն է իր նացիոնալիստական-հետադիմական գաղափարախոսությամբ, արկածախնդրությամբ։

Վ. Ի. Լենինը 1907 թ. գրել է, որ Ռուսաստանի յուրաքանչյուր ազգության մեջ երկու կուսակցություն են պայքարում պրոլետարիատի վրա ազդեցություն ձեռք բերելու համար, ռուսների մեջ՝ սոցիալ-դեմոկրատիան և սոցիալիստ-հեղափոխականները, լեհերի մեջ՝ լեհական սոցիալ-դեմոկրատական և լեհական սոցիալիստական կուսակցությունը, լատիշների մեջ՝ լատիշական սոցիալ-դեմոկրատիան և լատիշական սոցիալիստ-հեղափոխականները, հայերի մեջ՝ սոցիալ-դեմոկրատիան և դաշնակցությունը[1]։

Դաշնակցությունը, որ ձևավորվել է 1890 թ. Թիֆլիսում, այնուհետև իր ճյուղերը տարածել Հայաստանում և նրանից դուրս հայաբնակ վայրերում, իր շարքերը համալրում էր խոշոր և մանր բուրժուազիայի, կալվածատերերի, կուլակների, արհեստավորների, աշխատավորական մոլորված տարրերի խայտաբղետ ներկայացուցիչներից[2].

XX դարի սկզբին նա իր ղեկավար կենտրոնները՝ բյուրոներն է ստեղծում Կովկասում, Եվրոպայում և Մերձավոր Արևելքում։ Դրանք, թեև գործում էին անջատ-անջատ, ունեին մամուլի առանձին օրգաններ, բայց նպատակը մեկ էր՝ աշխատավորության մեջ սերմանել բուրժուական գաղափարախոսություն, թունոտ նացիոնալիզմ։

Դաշնակցության եվրոպական բյուրոն «Հայկական հարցի» լուծումը կապում էր եվրոպական պետությունների դիվանագիտական միջամտությունների հետ։

1907 թ. դաշնակցությունը սոցիալիստական դունավորումով մտավ երկրորդ ինտերնացիոնալի շարքերը։ Դա, ինչպես նշել ենք, ոչ միայն թյուրիմացություն էր, այլև II ինտերնացիոնալի օպորտունիստական պարագլուխների քաղաքական սխալը։ Եվ ապա, ինչ փույթ, թե՝ Ռուբեն Դարբինյանն ասում էր. «սոցիալիզմին կա-

---

[1] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 99։

[2] Այդ մասին տե՛ս Խ. Հ. Բարսեղյան. Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, 1967, Ռ. Հ. Անանիկյան. Դաշնակցության գաղափարաքաղաքական կրախը, Երևան, 1974։

ցնել է հավատալ. սոցիալիզմը կարելի է բաղձալ, կամենալ և ձգտել իրականացնել: Բայց կարելի չէ գիտենալ, թե ի՞նչպես, ի՞նչ միջոցներով, ի՞նչ պայմանների մեջ, ե՞րբ և ո՞վ պիտի իրագործե սոցիալիզմը»[3]:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դաշնակցության եվրոպական բյուրոն կողմնորոշվում է դեպի այն երկրի քաղաքականությունը, որի տերիտորիայում գործում էին դաշնակցական կազմակերպությունները՝ լծորդելով գերադանցապես ցարիզմի և նրա արևմտաեվրոպական դաշնակիցների մարտակարգին:

Դաշնակցության Մերձավոր-արևելյան բյուրոն իր գործունեության առաջին շրջանում Արևմտյան Հայաստանում ինքնապաշտպանական խմբեր է կազմակերպում հայ բնակչությանը թուրքական կառավարող շրջանների հալածանքներից փրկելու նպատակով: 1907 թ. բյուրոյի անդամները մասնակցում են երիտթուրքերի փարիզյան համագումարին, որտեղ դաշինք են կնքում սուլթանական կառավարության դեմ պայքարելու համար:

Դաշնակցությունը մասնակցել է նաև 1908 թ. թուրքական հեղափոխությանը: 1909 թ. Ադանայի արյունոտ սպանդից հետո էլ, ուր երիտթուրքերը կազմակերպել էին շուրջ 30 հազար անմեղ հայերի ջարդը, դաշնակները չլքեցին երիտթուրքերին:

Դաշնակցության Կովկասյան բյուրոն մինչև 1903 թ. ցարի հունիսի 12-ի օրենքի առթիվ ծավալված հակացարական-ժողովրդական շարժումները, ճանաչում էր միայն «թուրքահայերի հարցը», բոլոր միջոցները գործադրում էր կովկասահայերի ուշադրությունը դասակարգային պայքարից շեղելու համար:

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին դաշնակցությունը իր ազդեցությունը կովկասահայերի վրա տարածելու նպատակով զինազարդվում է սոցիալիստական երանգով, հրապարակ հանում, այսպես կոչված «Կովկասյան նախագիծը», «ընդունում» ռուսական լծից հայերին ազատագրելու հարցը: «Կովկասյան նախագծով» դաշնակցությունն իրեն հորջորջում էր «սոցիալիստական կազմակերպություն», կոչ էր անում՝ հայ ժողովրդին «հավաքվել իր դրոշի տակ», ստեղծել «համազգային շարժում»: Դաշնակցությունը բնավ չէր հրաժարվում իր հին ծրագրից, այն

---

3 Տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4004, ց. 1, գ. 11, թ. 405:

մնում էր իբրև գործողության պլան, իսկ աշխատավոր մասսաներին կերակրում էր «Կովկասյան նախագծով»։ Ավելին, նա երբեմն թռուցիկներ էր հրապարակում, հնչակյանների և «սպեցիֆիկների» հետ միասին ինչ-որ տնտեսական պահանջներ առաջադրում, անգամ մամուլի էջերից տնտեսական մատերիալիզմի գրքերից քարոզներ կարդում[4]։ Ստոլիպինյան ռեակցիայի առաջին իսկ ալիքը բավական էր, որպեսզի մոռացվեր «Կովկասյան նախագիծը», դաշնակցությունը բուրժուական մյուս կուսակցությունների հետ ճակատ կազմած պայքարում է պրոլետարիատի դեմ, մարքսիզմի դեմ։

«Սպեցիֆիկ»—նացիոնալիստ Դավիթ Անանունն անգամ հարկադրված նշել է, թե դաշնակցությունը թեև ջանում էր իրեն «սոցիալիզմի ասպետ հռչակել», բայց «պատմությունը, որ անաչառություն է նախ և առաջ, այսօր ասում է, թե՝ Հ. Յ. Դաշնակցությունը Ռուսաստանի հեղափոխության առաջին շարքերում չէ որ գնում էր, այլ նրա հետևից էր վազում աղմկելով և հևալով»[5]։

Ինչ խոսք, դա լավ գիտեր նաև ռուսական ցարիզմը, որը և գնահատում էր պատշաճ ձևով։

1905 թ. նոյեմբերին Թիֆլիսում գումարվում է Կովկասի դաշնակցականների արտակարգ համագումար, որը քննարկում է տակտիկական հարցեր։ Համագումարը որոշում է ընդունել սոցիալիստ-հեղափոխականների տակտիկական գիծը՝ նացիոնալիստական երանգով։ Համագործակցելով վրաց ֆեդերալիստների հետ, դաշնակցությունը առաջ է քաշում Անդրկովկասի ֆեդերացիայի կամ ավտոնոմիայի գաղափարը։ Դաշնակցության թելադրանքով Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը (Խրիմյան հայրիկ) 1906 թ. մայիսի 10-ին ազդարարում է «Հայկական սահմանադիր ժողով» հրավիրելու մասին։ Անդրկովկասի բոլշևիկները վճռական պայքար են մղում դաշնակցության հակաժողովրդական այդ քաղաքականության դեմ։ Կովկասի դաշնակցականների կողմից ավտոնոմիայի գաղափարի առաջքաշումը լուրջ վնաս հասցրեց պրոլետարական ինտերնացիոնալիզմին, համառուսաստանյան բանվորական և գյուղացիական հեղափոխական շարժումներին, որը և

---

4 Նման մտայնության արդյունք է «Դրոշակ»-ի 1901 թ. հունիսյան համարում հրապարակված «Տասնիններորդ դար։ Քաղաքական-սոցիալական տեսություն» բաժնում Փարիզի կոմունայի մասին հրապարակված հոդվածը (տե՛ս «Դրոշակ», № 4 (115), հունիս, 1901, էջ 76—77)։

5 Դ. Անանուն, Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. III, էջ 136։

օբյեկտիվորեն օգնում էր ցարիզմին։ Բայց տեղատվության տարիներին, երբ ցարիզմի դիրքերը համեմատաբար ամրացան, ավտոնոմիայի գաղափարը նրա կողմից դիտվեց իբրև վտանգավոր և սկսեց հալածել դաշնակցությանը։ Դաշնակցականների ձերբակալումը և նրանց հայտնի դատավարությունը ցարիզմի «Նոր գծի» արտահայտությունն էր։ Ցարական կառավարությունը ջանում էր «խելքի բերել» հայ բուրժուազիային, դաշնակցության պարագլուխներին թելադրել իր կամքը։ Դրանով էլ բացատրվում է պատմական այդ պրոցեսի ուրույն ընթացքը և մեղադրյալների այնքան նշանակալից վարքագիծը պրոցեսի ժամանակ։

Ցարիզմը, պետք է ասել, մեծ հմտությամբ առաջ է տանում իր գործը։ Նա նետում է դաշնակցականներին գետին և ստիպում նրանց ավելի քան կտրուկ կերպով դատափետման ենթարկել «հեղափոխական ուղիները և մեթոդները»[6]։

Դաշնակցության «դատավարության պրոցեսը» որոշակիորեն տարբերվում է ցարական Ռուսաստանի՝ քաղաքական մյուս կուսակցությունների նկատմամբ կազմակերպած պրոցեսներից։ Ամեն անգամ, երբ առիթ էր լինում, բոլշևիկները ցարական դատարանն օգտագործում էին ինքնակալությունը մերկացնելու համար։ Ռուսաստանով մեկ հնչում էր Բոգդան Կնունյանցի ցարական դատարանում արտասանած ճառը՝ «դատեցեք պարոնայք դատավորնե՛ր, իսկ մեզ ձեզ հետ միասին կդատի հեղափոխությունը»։ Այնինչ, դաշնակցությունն այդպես չվարվեց։ «Դաշնակցության գործով» ձերբակալվել և դատվում էին նրա շատ պարագլուխներ, ղեկավար գործիչներ, շարքայիններ, դաշնակցական ողջ մտավորականությունը։ Դաշնակցությունը ավելի մեծ հնարավորություններ ուներ դատական պրոցեսն օգտագործելու ընդդեմ ցարիզմի, մերկացնելու տիրող կարգերը, բայց նա այդպես չվարվեց, շատ «խաղաղ էր», հլու հնազանդ։ Նույնիսկ լիբերալները տարակուսում էին, թե ինչու է այդ ազգային և ցարիզմի նկատմամբ խիստ լոյալ կազմակերպությունը դատի ածվել։ Դատարանում դաշնակցության երկչոտ գործիչները դատափետում էին իրենց և յուրայիններին, աղաղակում, թե «դաշնակցությունը երբեք հեղափոխական չի եղել», որ «հայ ժողովրդի ազատագրումն իրենք սպասել են բացառապես ցարից և ցարական կառավարությունից», որ դաշնակցությունը պայքարել

6 Ա. Կարինյան. Հայ բուրժուազիայի իդեոլոգիայի պատմությունից։ Տե՛ս նույնի՝ Դաշնակցությունը և իր զինակիցները, Երևան, 1932, էջ 30։

է «միայն թուրքական սուլթանիզմի դեմ», որ «ռուսական ցարիզմը հայ ժողովրդի բարեկամն է» և այլն։ Այս ամենից հետո, ինչ խոսք, ցարական կառավարությանը քիչ բան էր մնում անելու։

1890—1920 թթ. դաշնակցության հրապարակած տեսական աշխատությունների հիմնական նյութը ցեղական նացիոնալիզմի վերաբերյալ ճամարտակություններ էին, առանձին հայդուկների միապաղաղ փառաբանումը, խմբապետների մեծարումը... Փույթ չէ, որ նրա որոշ հրապարակագիրներ նույնիսկ Կ. Մարքսից և Ֆ. Էնգելսից քաղվածքներ էին բերում իրենց հոդվածներում։ Նրանք ռուսական «լեգալ մարքսիստների» հայկական էպիգոններն էին, որոնք խնկարկում էին բուրժուազիային, կեղծ ֆրազներով մոլորեցնում հայ աշխատավորությանը։ Դաշնակցությունն անսկզբունք կուսակցություն էր։ Այն իր կնիքն էր դնում նրա գործունեության վրա։ Ներքաղաքական տարաձայնություններն ու հակասությունները դաշնակցության շարքերում հատկապես ուժեղացան ռուսական առաջին հեղափոխության տարիներին։ «Երիտասարդ դաշնակցականների պրոկլամացիան» հոդվածում, որը առաջին անգամ լույս է տեսել 1907 թ. փետրվարին «Զվենի ցխովրեբա» («Մեր կյանք») բոլշևիկյան լեգալ թերթում, Ստ. Շահումյանը խոսելով դաշնակցության պառակտման մասին, նշել է, որ «Հիշյալ կուսակցությունում տեղի է ունենում պառակտում, որ այդ կուսակցությունը քայքայվում և կորցնում է իր հողը»[7]։ Հեղափոխության տարիներին քաղաքականապես հասունացած բանվորները, որոշ մտավորականներ և գյուղացիներ երես թեքեցին դաշնակցությունից։ Դաշնակցական պարագլուխներն իրենց «հեղափոխական» և «սոցիալիստական» ֆրազաբանությամբ ջանում էին մոլորեցնել աշխատավոր զանգվածներին, հատկապես երիտասարդությանը, բայց բոլշևիկյան խոսքն ավելի զորեղ էր, համակում էր մասսաներին, քայքայում նացիոնալիզմի դիրքերը։

Ստոլիպինյան ռեակցիայի տարիներին դաշնակցության մեջ ավելի է ուժեղանում «աջ» և «ձախ» անջատողական հոսանքների պայքարը։ Խմբապետ Միհրանը (Գաբրիել Քեշիշյան), որ գլխավորում էր «աջերի» պայքարը, մերժելով դաշնակցության սոցիալիստական ֆրազներով գունազարդումը, «ռուսահայ խնդրի» ճանաչումը, մոլուցքով պահանջում էր պայքարել միայն հանուն «թուրքահայ դատի»։ «Դաշնակցությունը հիմնված է ոչ թե սոցիալիզմի

---

7 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 1, էջ 305։

համար,— ասում էր նա,— այլ «թուրքահայերի» դատը պաշտպանելու համար։ Եթե ես նրա շարքերի մեջ եմ, այս պարզապես այն պատճառով, որ ուխտել եմ վրեժ հանել թուրքերից, որոնք սպանել են իմ քույրերին և եղբայրներին։ Այսպես է և ամեն մի ուրիշ թուրքահայ։ Մենք սոցիալիզմից ոչինչ հասկացություն չունենք։ Նահապետական ժողովուրդ ենք և որոնում ենք գլուխ դնելու մի ապահով անկյուն։ Մեր ինչն է սոցիալիզմը...»[8]։

Միհրանը դաշնակցությանը կոչ էր անում՝ մերժել «կովկասյան նախագիծը», խնկարկել միայն «թուրքահայ դատը», վերացնել «կուսակցության բյուրոկրատական կարգը», կռվել նախկին նահատակների նման, որոնց նշանաբանն էր՝ «Կեցցե՛ Ֆիդային, որի մահը կյանք է ծնելու»[9]։ Միհրանական շարժումը՝ խնդիր ուներ դաշնակցության մեջ խմբապետական դիկտատուրա հաստատել։ Գնալով լարվածությունն ուժեղանում է. «ձախերը» և այսպես կոչված «կովկասյան նախագծի» պաշտպանները պայքարի մեջ էին մտնում միհրանականության դեմ։ Գործի է դրվում անհատական տեռորի տակտիկան, որը որդեգրել էին անիշխանականներից ու էսեռներից։ 1907 թ. վերջերին ահաբեկիչները մահափորձ կատարեցին Միհրանի դեմ։ Վիրավոր վիճակում նա ցարական իշխանությանը մատնեց իր ընկերներին։ Սա դեռ բոլորը չէր։ Նրա եղբայր Հաբեթը իր վրեժը լուծեց՝ սպանելով դաշնակցության գաղափարախոսներից Եղիշե Թոփչյանին, իսկ վերջինիս կողմնակիցները սպանել տվեցին Միհրանին։ Միհրանական շարժումը, դիմադիր գործողությունները լիովին բացահայտեցին դաշնակցության քստմնելի կերպարանքը, խորացրին այն վիհը, որ կար դաշնակցության ղեկավարների և նրանց ազդեցությանը կրող զանգվածների միջև։

Դաշնակցության կազմալուծման պրոցեսը խորանում է։ Այն ավելի ակտիվ էր «ձախ»-ից։ 1906 թ. Արսեն Ամիրյանի (Մրավյան), Լևոն Աթաբեկյանի (Ռիխարդ) գլխավորությամբ դաշնակցությունից անջատվեցին մի խումբ անդամներ, որոնք «երիտասարդ դաշնակցականներ» անունը ստացան։ «Ձախ» հոսանքի ներկայացուցիչ Արսեն Ամիրյանը 1906 թ. հրապարակեց «Ժամանակն է սթափվելու։ Դաշնակցականի դիմումը իր ընկերներին», իսկ 1907 թ. «Դաշնակցության կրիզիսը։ Մի դիմում դաշնակցական բանվորության»

8 Քաղվածքը բերվում է ըստ Լեոի «Անցյալից» գրքի, Թիֆլիս, 1925, էջ 197։

9 Նույն տեղում։

գրքույկները, որոնք ազդում առաջացրին բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսների, ամեն տեսակ ազգայնականների շրջաններում։ Հեղինակը հակադրվելով դաշնակցությանը, փաստերով ապացուցում էր դաշնակցության սոցիալիստական ֆրազաբանության սնանկությունը, քաղաքական գունափոխությունները, երկերեսանիությունն ու խաբեբայությունը։ Ս. Ամիրյանը, ռուսական առաջին հեղափոխության ազդեցությամբ վերափոխվում է։ Նա կոչ է անում աշխատավոր զանգվածներին սթափվել, միանալ Ռուսաստանի ազատասեր ժողովուրդների հեղափոխական պայքարին։ Նա բացեիբաց հայտարարում էր, որ դաշնակցությունն ընթանում է սխալ ուղիով, և մենք քննադատական հայացք ձգելով մեր անցած ուղու վրա, այսուհետև պետք է որոշենք մեր ճանապարհը[10]։ Նա մերժում էր դաշնակցության դեպի Արևմուտք ունեցած դիրքորոշումը, այն համարելով նոր, միլիոնավոր զոհերի փշոտ ճանապարհ։

«Դաշնակցության կրիզիսը» «Երիտասարդ դաշնակցականների հրատարակություն» մատենաշարի առաջին գրքույկն է։ Հեղինակը, քննադատելով «Մշակ» թերթին, ցույց է տալիս, որ «Դրոշակ»-ը «Մշակ»-ի արտասահմանյան անցենզուր հրատարակությունն է... միևնույն մեդալի երկու երեսներն են նրանք»[11], որ դաշնակցությունը ճգնաժամ է ապրում։ Իբրև հավելված զետեղված էր «Պատասխան պ-ն Վարանդյանին» և «Պատասխան պ-ն Բարսեղին» ընդդիմախոսականները, որ գրել էր «Ժամանակն է սթափվելու» գրքույկի «Ալիք» և «Կովկասյան ռեչ» թերթերում հրապարակված հոդվածների առթիվ։ Հանրագումարի բերելով իր ասածները, Ս. Ամիրյանը նշել է. «Այո, պարոններ, դաշնակցության դեմ պետք է կռվել, որովհետև դա բուրժուական կազմակերպություն լինելուց բացի, մի կատարյալ բանդիտություն է հայ ժողովրդի գլխին»[12]։

«Երիտասարդ դաշնակցականների հրատարակություն» մատենաշարի երրորդ թողարկումը Լ. Աթաբեկյանի (Ռիխարդ) «Ի՞նչու ենք անջատվում դաշնակցությունից» գրքույկն է։ Փաստական նյութերով հեղինակը պարզաբանում էր անջատման դրդապատճառները, ջրի երես հանում դաշնակցության արատները։ Աթաբեկյանը մերկացնելով դաշնակցության երկվությունը՝ էկլեկտիզմը, գրել

---

10 Տե՛ս Մրավյան. Ժամանակն է սթափվելու, 1906։

11 Մրավյան. Դաշնակցության կրիզիսը, Վիեննա, 1907, էջ 15։

12 Նույն տեղում, էջ 63։

է. «Նա, որը սոցիալիզմը ատում է, նա, որը անտարբեր է դեպի սոցիալիզմը և նա, որը սոցիալիզմը կարող է սիրել, նստած են իրար կողքի և կազմում են այն, ինչ որ կոչվում է Հայ Հեղափոխական դաշնակցություն»[13]: Նա գտնում էր, որ դաշնակցությունը համազգային կուսակցություն չէ: Անդրադառնալով Արևմտյան Հայաստանի ազատագրության հարցին, նա գրում է. «Խենթություն է կարծել, որ հայ ժողովուրդը, որը մինչև անգամ իր հայրենիքում փոքրամասնություն է կազմում, պիտի կարողանա սեփական ուժերով ազատագրվել: Խենթություն է կարծել, որ եվրոպական դիպլոմատները պիտի կամենան և տաճկահայ դատի երկու զույգ եվրոպական բարեկամները պիտի կարողանան նպաստել հատկապես տաճկահայերի ազատագրության գործին: Հայ ժողովուրդը պիտի ազատվի տաճիկի հետ միասին, կամ բնավ չպիտի ազատվի: Տաճկահայ հեղափոխությունը, այդ պատճառով, տաճկական հեղափոխության բաղկացուցիչ և ենթակա երևույթներից մեկը պիտի կազմի և չի կարող ունենալ որևէ սեպարատիստական նպատակ»[14]:

«Երիտասարդ դաշնակցականների» խումբը, առաջին հերթին Ս. Ամիրյանը և Լ. Աթաբեկյանը, քողազերծելով դաշնակցությունը, առաջադիր խնդիր ունեին ոչ թե լուծարքի ենթարկել, այլ բարենորոգել կուսակցությունը, այն դարձնել «հեղափոխական-սոցիալիստական»: Սին ու վնասակար պատրանքներ: Հարկավ, նրանք դաշնակցությունից չէին դժգոհ, այլ նրա տակտիկայից, դիրքորոշումից:

Այսուհանդերձ, անջատողական երևույթը ուշագրավ էր և սթափեցնող, քանի որ հայ բանվորների մեջ ես արթնանում է հեղափոխական խիղճն ու հեղափոխական գիտակցությունը,— գրել է Ստ. Շահումյանը[15]:

Դաշնակցության պարագլուխները դժկամությամբ ընդունեցին «ձախ» հոսանքի ելույթները: Ն. Թոփչյանը (Վահե) իր «Անջատվածները» պատասխան գրքույկում նրանց անվանում էր «ուրացողներ», «սրբապիղծներ»:

Բոլշևիկյան ագիտացիայի, կազմակերպական-քաղաքական աշխատանքի շնորհիվ նախկինում մոլորված, քաղաքական կողմ-

---

13 Ոփիարդ. Ինչու ենք անջատվում դաշնակցությունից, էջ 8—9:

14 Ոփիարդ, Ինչու ենք անջատվում դաշնակցությունից, Բաքու, 1907, էջ 18—19:

15 Ստ. Շահումյան. Երկեր, հատ. 1, էջ 305:

Նարոշումը կարգած աշխատավորներին ստիպողաբար հեռանում են դաշնակցությունից և պայքարում հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դրոշի ներքո։

«Երիտասարդ դաշնակցականների» հոսանքը, այնուամենայնիվ, քաղաքական լուրջ հետք չթողեց հայ հասարակական մտքի զարգացման, բուրժուական գաղափարախոսության մերկացման գործում։ Դաշնակցությունից անջատված «ձախ» հոսանքը, Լ. Աթաբեկյանի ղեկավարությամբ 1907 թ. հունիսին Բաքվում ձևավորվեց որպես «սոցիալիստ հեղափոխական կուսակցության հայ կազմակերպություն»—ռուսական սոցիալիստ-հեղափոխական կուսակցության հայկական մասնաճյուղը։

Կոտորակվող դաշնակցությունը շարունակում էր իր գործունեությունը, փորձում նույնիսկ օգտագործել ինտերնացիոնալի ամբիոնը։

1910 թ. օգոստոսի վերջերին II ինտերնացիոնալի՝ Կոպենհագենում գումարված կոնգրեսին մասնակցում են դաշնակցության ներկայացուցիչներ Նիկոլ Դումանը, Շիրակունին (Մարտիրոս Հարությունյան), Արմենակ Բաբալեզյանը և Միքայել Վարանդյանը (Հովհաննիսյան)։

Կոնգրեսում և միջկուսակցական խորհրդակցությունում ելույթ է ունենում Ն. Դումանը։ «Ընդհանուր կուսակցությունը, այնուամենայնիվ, միլիտարական է— ասում է նա,— մեզ մոտ այսօր ոչ թե զորավարներ կան առանց բանակի, այլ բանակ՝ առանց զորավարների... ցաք ու ցրիվ ամեն տեղ, Թուրքիա, Պարսկաստան, արտասահման, ուր մղեր է զանոնք ռեակցիայի ալիքը, այդ հալածական զորավարները, որ մի կուսակցության ազդանշանը ընդունելուն պես, վերստին կհավաքվեն բոլոր ծայրերեն, և կզարնեն ահա՝ կոչնակը և անմիջապես բանակը կհամախմբվի անոնց հրամանատարության տակ»[16]։

Դաշնակցության գաղափարախոսությունը լայնորեն տարածվում էր նրա թերթերի ու հանդեսների, ինչպես և գրականության միջոցով։ Շարունակվում էր «Դրոշակ»-ի հրատարակությունը, որը 1890 թ. հիմնադրվել էր Թիֆլիսում, այնուհետև տեղափոխվել է Ժնև։ 1899 թ. Բոստոնում լույս էր տեսնում դաշնակցության Ամերիկայի կենտրոնական օրգան «Հայրենիք» թերթը։ Լույս են տեսա-

16 Տե՛ս Մ. Վարանդյան, Հ. Յ. դաշնակցության պատմություն, Բ հատ., Փարիզ, 1950, էջ 116։

նում «Շարժում» (1898—1907) Վառնա, խմբագիր-տնօրեն Գամեր Աբշավիր, հետագայում՝ Վարդան Մեղատունյան), «Ալիք» (1906—Թիֆլիս, խմբագիր, հրատարակիչ բժ. Տիգրան Թադևոսյան), «Զանգ» (1906, Թիֆլիս, «Երկիր» թերթի շարունակությունը), «Ժամանակ» (1906—1907, շարունակությունը «Զանգ» թերթի), «Հառաջ» (Թիֆլիս, 1906), «Արօր» (1907, Թիֆլիս), «Ժայռ» (1907, Թիֆլիս), «Խարիսխ» (1907, Թիֆլիս), «Կովկասի առավոտ» (1907, Թիֆլիս), «Նոր ալիք» (1907, Թիֆլիս), «Փայլակ» (1907, Թիֆլիս), «Ազդակ» (1908—1909, Կ. Պոլիս), «Անիվ» (1908, Բաքու), «Գործ» (1908—1909, Թիֆլիս), «Ազատամարտ»[17] (1909—1912, Կ. Պոլիս), «Հորիզոն»[18] (1909—1918), «Պոնտոս» (1910—1913, Տրապիզոն), «Նոր հոսանք» (1913—1915, Թիֆլիս), «Ազատամարտ» (1917—1918, Թիֆլիս), «Հայաստանի աշխատավոր» (1917—1919, Երևան, խմբագիր Վահան Խորենի), «Ապառաժ» (1917—1919, Շուշի), «Ասպարեզ» (1917, Շուշի), «Զանգ» (1917—1919, Երևան), «Ժայռ» (1917—1918, Ալեքսանդրապոլ), «Շարժում» (1917—1918, Ախալցխա), «Որոտան» (1918—1919, Գորիս), «Սյունիք» (1918—1920, Գորիս), «Հառաջ» (1919—1920, Երևան) և այլ պարբերականներ:

1912—1917 թթ. լույս են տեսնում Գ. Խաժակի «Ի՞նչ է ազգությունը», «Ի՞նչ է դասակարգը», Վ. Խորենի «Երբ և ի՞նչպես պետք է լինի սոցիալիստական հանրապետությունը», «Ի՞նչ է սոցիալիզմը», «Սոցիալիզմ և բարոյականություն», Քաջբերունի Կարմիրյանի «Ի՞նչ է ազգայնականությունը» և այլ գրքույկները, որոնք «Դաշնակցության արշալույսը» հորինել էր մարքսիզմը գռեհկացնելու, այն բուրժուազիայի շահերին ծառայեցնելու համար: «Անջատական» շարժումից տասը տարի անց, 1917 թ. Բաքվում ձևավորվում է «ձախ» դաշնակցությունը, որը պայքարի մեջ է մտնում պաշտոնական պարագլուխների և նրանց գաղափարախոսության դեմ: Ավելի

---

17 «Ազատամարտ» թերթը 1912 թ. № 967-ից «Առաջամարտ» էր կոչվում նույն թվականից, դարձյալ անվանափոխություններ է կրում «Բազին», «Բութանիա», «Ազդակ», «Մեղու», «Շանթ» մինչև 1914 թ. № 1430-ը, ապա 54 համար հրատարակվելով որպես «Ճակատամարտ»-ը. այն դադարում է լույս տեսնել: 1918 թ. այն վերսկսում է «Ազատամարտ» անունով, դարձյալ անունների փոփոխումներով՝ «Արիամարտ», «Ճակատամարտ», «Մարմարա», նորից «Ճակատամարտ»:

18 «Հորիզոն»-ի փաստական խմբագիրներն էին՝ Լեո, Հովհ. Թումանյան, Մարգար, Վալադյան, Ն. Աղբալյան, (1909—1912), Լեո, Ս. Ջամալյան, Ա. Ղազարյան (1912—1913), Ա. Ղազարյան (1913—1914), Ս. Ղազարյան, Ա. Շախաթունի (1915), Մ. Վարանդյան (1916—1917), Ս. Դրուզինյան-Վրացյան (1918): 1918 թվականի № 20-ից՝ «Նոր Հորիզոն»:

Նուրիջանյանը, որ պատերազմի հետևանքով խաթարված ազգայնական տրամադրությունների մթնոլորտում հրապուրվել էր դաշնակցության գաղափարներով, ընդամենը մի ամիս մնաց նրա շարքերում: Գլխավորելով «Ձախ» դաշնակցականների ֆրակցիան, նա պառակտում է դաշնակցության շարքերը, նրանց ազդեցությունից ազատում մոլորված բանվորներին, միանում բոլշևիկներին, ակտիվ մասնակցություն ցուցաբերում Բաքվի կոմունայի գործունեությանը: Բաքվի կոմունայի օրերին, Ավելին ունենալով բուն էության. բոլշևիկյան հայացքներ, ասում է Ա. Միկոյանը,— առեղծված քաղաքական բարդ իրադրության մեջ տվյալ պահին ցանկալի չէր, որ վաղաժամ խզեր իր կազմակերպական կապերը դաշնակցությունից, քանի որ նրա ղեկավարած «Ձախ» դաշնակցականների ֆրակցիան ընդառաջում էր բոլշևիկյան ուղեգծին, և ապա նա կարողանում էր ներգործել դաշնակցական տրամադրություններ ունեցող բանվորների վրա և աստիճանաբար նրանց բոլշևիկների կողմը ներքաշել: Այս հանգամանքը չէին բացառում Բաքվի բոլշևիկները և նրանց առաջնորդ Ստ. Շահումյանը: Ա. Նուրիջանյանը Բաքվի կոմունայի ղեկավարների հետ պայքարում էր բուրժուական գաղափարախոսության դեմ: 1918 թ. օգոստոսի 25-ին Վ. Ի. Լենինին և Յա. Մ. Սվերդլովին ուղարկած հեռագրում Ստ. Շահումյանը, Գ. Պետրովը, Վ. Պոլուխինը, Ա. Ջափարիձեն և Ա. Նուրիջանյանը ցասումով էին նշավակում կոմունայի թշնամիներին, բացահայտում էսեռների, մենշևիկների և դաշնակցականների դավաճանությունը, լի այն հավատով, թե «բանվորա-գյուղացիական Ռուսաստանը դարձյալ կգա Բաքու և Բաքվի պրոլետարիատը կրկին կկապվի հարազատ հեղափոխական Ռուսաստանի հետ և նորից կկանգնի սովետական սոցիալիստական Ռուսաստանի դրոշի ներքո»[19]:

Բաքվի կոմունայի ժամանակավոր պարտությունից հետո «Ձախ» դաշնակցականների ֆրակցիան դադարում է գոյություն ունենալուց: Նացիոնալիզմի ծանծաղուտում մնված դաշնակցական Մ. Մինասյանը 1918 թ. Բոստոնում հրատարակեց «Ի՞նչու կը հակառակինք հայերուս մեջ ընկերավարության բրօքականանեն» գրքույկը, որտեղ սարսափահար հորդորում էր հեռու մնալ մարքսիզմեն ու կոմունիզմեն: «Հայ ինքնավարության մեջ ընկերավարության հաստատվելուն վտանգ չկա», «գիտական ընկերավարության չորս հիմնական ուսուցումները» և այլ բաժիններում հեղինակն աշ-

---

19 Ստ. Շահումյան. Երկեր. հատ. 3, էջ 417:

խոստում էր հիմնավորել այն միտքը, որ իբրև թե «Կարլ Մարքսի գիտական սոցիալիզմը երբեք ու երբեք չկարենար հաստատվել մարդկային ընկերության մեջ» թե՝ «Կապիտալ»-ը ազգաքանդ» գործ է, «ազգային կենաց դեմ կատարված ոճրագործություն մը կզգանա անոր քարոզչությունը ժողովրդին»։

Մինասյանը ցինիկաբար կոմունիզմը համարում էր «միջազգային չարիք»։ «Ընկերավարության նյութապաշտության փիլիսոփայությունը» բաժնում չարակամորեն քննադատում էր դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը, պաշտպանում մետաֆիզիկան։ «Պետք է, որ այսքան կամենայինք ընկերավարության նյութապաշտական կողմին նկատառմանը վրա,— գրել է նա,— որպեսզի կարելի ըլլա մեզ համար հայ հասարակության մտքին վրա անջնջելիորեն տպավորել սա ահավոր ճշմարտությունը, թե ժանտախտն է հայերու մեջ քարոզուած ընկերավարությունը, որու՝ հայ մտայնության ու հայ կենաց մեջ տարածմամբ ու տիրապետությունովը արդեն իսկ կորսուած պիտի ըլլանք, ամեն ինչ որ թանկագին է մեր ազգային պատմության մեջ, ինչպես նաև կորսուած պիտի ըլլանք հայկական վերածնության ամեն հույս, և այսքան դարերու տառապանք ու նահատակությանց հոգին ձեռք բերուելիք մեր ազգային բովանդակության ժառանգություններովը պիտի գահավիժենք կորստյան անդունդներու մեջ»[20]։

Բոլշևիկները մերկացրել են Մ. Մինասյանի ինչպես այդ, այնպես էլ «Ծագումն ու նկարագիրն հայ ազգին», «Նոր օրվան տեսիլքը» գրքույկների և «Հայրենիք»-ում հրատարակած նրա հոդվածների նացիոնալիզմը, ցույց են տվել, որ Մ. Մինասյանը և նրա համախոհները միջազգային իմպերիալիզմի ծախու գրչակներն են[21]։

---

20 Մ. Մինասյան, Ինչո՞ւ կը հակառակինք հայերու մեջ ընկերավարության պրոպագանդին. Բոստոն, 1918, էջ 91։ Դաշնակցության պարագլուխներից Ռուբեն Դարբինյանը կոմունիզմի նկատմամբ ատելությամբ լցված գրել է. «Դժվար է երևակայել մեր քաղաքական մտքի և ազատագրական պայքարի համար ավելի մեծ չարիք մը, քան այն, որ բերավ իր հետ չմարսված ընկերավարությունը իր դասակարգային անանցի քարոզով» (տե՛ս ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. 400—4, ց. 1, գ. 11, թ. 402։ Նույնը՝ «Հայրենիք»-ի 1922 թ. № 2—12-ում հրատարակված «Հայ քաղաքական մտքի դեգերումները» խորագրով հոդվածաշարում)։

21 Տե՛ս Ս. Կարինյան, Դաշնակցությունը և իր զինակիցները. Երևան, 1932, էջ 54—58։

2

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո հակահեղափոխական ուժերը բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների գլխավորությամբ Անդրկովկասը կտրեցին Ռուսաստանից։ 1917 թ. նոյեմբերի 15-ին, այսպես կոչված, Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումով երկրամասը վերածվեց ռազմական պլացդարմի։ Հակահեղափոխական սև ուժերը պայքարում էին սովետական իշխանության դեմ, ջանում արյան մեջ խեղդել հեղափոխական շարժումները։ Անդրկովկասյան կոմիսարիատին հերթափոխի եկած սեյմը շարունակում էր նույն հակաժողովրդական քաղաքականությունը։ 1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան սեյմը ցրվեց. նացիոնալիստական կուսակցությունների կողմից ղեկավարվող ազգային խորհուրդները առանձին-առանձին հռչակեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի «անկախությունը»։ 1918 թվականի մայիսի 28-ին Հայկական ազգային խորհուրդը Հայաստանը հայտարարեց «անկախ» հանրապետություն։ Դաշնակցությունը զավթելով իշխանությունը դարձավ կառավարող կուսակցություն։ 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. նոյեմբերի 29-ը Հայաստանում բուրժուական հանրապետության, ավելի ճիշտ դաշնակցության, անփառունակ տիրապետության շրջանն է։ Այդ տարիներին լիովին բացահայտ դարձավ դաշնակցության գաղափարական-քաղաքական սնանկությունը։ Երկիրը հասցվեց «անկման վիհի եզրին», ամենուրեք թագավորում էին սովն ու համաճարակը, դաշնակ մաուզերիստների կամայականությունները։ Գրականության մեջ համակողմանիորեն ցույց է տրված դաշնակցության տիրապետության ներքին և արտաքին անհեռատես քաղաքականության ծանր հետևանքները, բարոյական ու քաղաքական անկումը։ Հայաստանը դարձել էր ողբի ու որբի հայրենիք։ Արդյունաբերությունը 1913 թ. համեմատությամբ կրճատվեց 12 անգամ, լիակատար քայքայում ապրեց գյուղատնտեսությունը, ցանքատարածությունները նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կրճատվեցին 4 անգամ, իսկ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 5,8 անգամ[22]։ Ծանր հոգևարք էր ապրում մշակույթը։ Հայաստանում կար շուրջ 300 հազար գաղթական։

---

22 «Социалистическое строительство Арм. ССР. 1920—1940 гг.». Статистический сборник. Ереван, 1940, стр. 23, 41.

Սով հնձում էր հազարավոր կյանքեր։ Հայաստանի դրությունն ավելի ծանրացավ 1920 թ. սեպտեմբերի վերջերին բռնկված հայ-թուրքական պատերազմի հետևանքով։ Դաշնակցության հեղափոխական գաղափարախոսությունը նոր, ծանր աղետներ բերեց բազմաչարչար հայ ժողովրդին։

3

Դաշնակցության գաղափարական և քաղաքական կրախը աներկբայ էր՝ նաև 1921 թ. փետրվարյան խռովության ժամանակ.

Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակից շատ չանցած պարտակված դաշնակցական ուժերը Ս. Վրացյանի ղեկավարությամբ օտարերկրյա իմպերիալիստների ակտիվ աջակցությամբ դավադրություն սարքեցին, որը հայտնի է դաշնակցականների 1921 թ. փետրվարյան հակահեղափոխական զինված խռովություն-ավանտյուրա անվամբ։ Փետրվարյան խռովությունը բուրժուա-նացիոնալիստական դաշնակցության գործունեության սև էջերից է։ Այն միջազգային իմպերիալիզմի հակասովետական պլանների շղթայի մի օղակն էր, որը խնդիր ուներ տապալել խորհրդային իշխանությունը Հայաստանում, վերականգնել հին, պատմության կողմից մահվան դատապարտված կարգերը։ 1921 թ. սկզբներին Թիֆլիսում ստեղծվում են Հայաստանի, Ադրբեջանի, Կովկասի լեռնային հանրապետության «փրկության կոմիտեներ», որոնք կազմակերպում են հակասովետական զինված խռովությունները։ Դաշնակցականներն այդ օրերին Երևանում՝ Ս. Վրացյանի ղեկավարությամբ ստեղծում են, այսպես կոչված, գաղտնի կոմիտե, որը կապեր է հաստատում հակասովետական մութ ուժերի հետ։ Օգտվելով իրավիճակից, Հեղկոմի կազմում մտցված Դրոն՝ Դրաստամատ Կանայանը, կազմակերպում է խորհրդային իշխանության թշնամիներին, Հայաստանի նորաստեղծ կարմիր բանակի պատասխանատու աշխատանքներում նշանակում խորհրդային իշխանության դեմ ատելությամբ լցված դաշնակցական սպաների։ Հունվարի վերջերին Ս. Վրացյանի և նրա համախոհների կարգադրությամբ դաշնակցական զինված բանդաները կենտրոնացվում են Արագածի ստորոտում, Ներքին Ախտայի, Բաշ-Գյառնիի, Նոր-Բայազետի և Դարալագյազի շրջաններում։ Դավադիրները հունվարի 22-ին գրավում են Բաշ-Գյառնին։ Մեկ շաբաթ անց տեղի աշխա-

տավորությունը և սովետական օրգաններին Երևանից օգնության հասած կարմիր բանակի ջոկատները ճնշում են խռովությունը։

Հայաստանի կոմկուսի կենտկոմը և Երևանի քաղաքային կոմիտեն փետրվարի 12-ին հատուկ կոչով դիմում են աշխատավորությանը, նախազգուշացնելով՝ արթուն եղեք, խմբվեք ձեր կոմունիստական կուսակցության շուրջը, լցրեք կարմիր բանակի շարքերը, անողոք կռիվ մղեք ձեր դասակարգային թշնամիների դեմ։ **Նրանց պետք է** ոչնչացնել[23]։

Դաշնակցականների փետրվարյան խռովության ազդանշանը փետրվարի 13-ին Քեշիշքենդում խորհրդային իշխանության դեմ դաշնակցական բանդաների կազմակերպած զինված ելույթն էր։ Նրանց արձագանքեցին Կոտայքի, Ախտայի, Նոր Բայազետի, Աշտարակի, Էջմիածնի խռովարարները։ Զանգեզուրում այդ ժամանակ ծվարել էին Նժդեհի հրոսակները։ Փետրվարի 17-ին դաշնակցական ավանտյուրիստները զինված հարձակում են սկսում Երևանի վրա։ Բորբոքվում է կռիվը։ Օգտվելով ուժերի ժամանակավոր գերակշռությունից, երբ կարմիր բանակի զորքերի և հեղափոխական գործիչների մի զգալի մասը մեկնել էր Լոռու «չեզոք գոտի»՝ Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ ապստամբած աշխատավորներին օգնելու։ Դաշնակցական արկածախնդիրները արյան խրախճանք են սարքում, փետրվարի 18-ին գրավում Երևանը, հռչակում իրենց խղճուկ «Կառավարությունը»՝ «Հայրենիքի փրկության կոմիտե» մեծագոռոզ ցուցանակով։ Նրանք ի լուր բոլորի ազդարարեցին «նոր կառավարության» կազմը։ Հայտարարվեց, թե վարչապետ, արտաքին գործոց նախարար և գյուղատնտեսական գործերի վարիչ է նշանակված Ս. Վրացյանը, զինվորական գործերի վարիչ Արշակ Հովհաննիսյանը, ներքին գործոց՝ Կ. Սասունին, ելևմտական՝ Հ. Տերտերյանը, պարենավորման՝ Հ. Տեր-Հակոբյանը, խնամատարական՝ բժ. Ս. Եղիազարյանը, պրոպագանդայի և աշխատանքի՝ Հ. Սարգսյանը, Հ. Յ. դաշնակցության ներկայացուցիչ՝ Ն. Սարգսյանը, բանակի ընդհանուր հրամանատար՝ Կուռո Թարխանյանը (Սուրեն), շտաբի պետ՝ Գ. Սարգիսբեկյանը։ Մեկ շաբաթ անց՝ սոցիալիստ-հեղափոխական կուսակցության կողմից Վահան Մինախորյանը և Արշամ Խոնդկարյանը ևս մտան կառավարության կազմի մեջ՝ իբրև խնամատարության և արդարա-

23 Տե՛ս «Ռեզոլյուցիան կոչեր և թռուցիկներ, 1902—1921», Երևան, 1960, էջ 586։

դատության գործերի վարիչներ: Քաղաքական անհեռատես, ազգային զգացմունքներից ու արժանապատվությունից զուրկ կլիկը և նրանց շուրջը հավաքված արկածախնդիրները հայ ժողովրդի վզին փաթաթեցին եղբայրասպան քաղաքացիական պատերազմ, որը անթիվ զոհեր պատճառեց և նորից կործանման եզրին հասցրեց քայքայված ու բզկտված երկիրը: Ժողովրդի սրտում ալեկոծվեց դաշնակցության, նրա անհեռատես պարագլուխների նկատմամբ կուտակված ցասումը: Ամենուրեք տեղի ունեցան բանվորների, գյուղացիների, հեղափոխական զինվորների բողոքի միտինգներ և ցույցեր: Հայ ժողովրդի ազգային հանճարը՝ բանաստեղծ Հովհ. Թումանյանը, նշավակելով խռովարարներին, այդ օրերին գրել է. «Սրտի խորքին կսկիծով հաստատ աղբյուրներից տեղեկանում ենք, որ Երևանի «հեղաշրջում» կոչված ավանտյուրան կազմակերպողները կույր գործիք են հանդիսացել մի սոսկալի դավադրության, նույնիսկ հայ ժողովրդի և նրա դատի դեմ և որ «հեղաշրջումը» կատարվել է արյունալի ոճիրներով: Էապես, մի նոր աղետ է գալիս դժբախտ հայ ժողովրդի գլխին հենց էն ժամանակ, երբ նա պետք է ազատվեր ամեն աղետներից»[24]: Հովհ. Թումանյանը, առաջվա պես հայ ժողովրդի փրկության միակ ճիշտ ուղին տեսնում էր Հյուսիսի հսկայի՝ ռուս մեծ ժողովրդի եղբայրական, անշահախնդիր օգնության մեջ: Հայ ժողովուրդը, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ, ազատագրական հայրենասիրական պայքարի ելավ դաշնակների ավանտյուրան ճնշելու համար: ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Հայաստանի Հեղկոմի, պետական հիմնարկների ղեկավար գործիչները գտնվում էին քաղաքացիական կռվի առաջին կրակագծում՝ Ղամարլու—Վեդի հատվածում: Նրանք հաջողությամբ ղեկավարեցին կարմիր բանակի զորամասերի և նրա շարքերը համալրած աշխարհազորայինների 45-օրյա մարտական գործողությունները: Դաշնակցականների խռովության ջախջախումը գլխավորում էին անձնվեր հեղափոխականներ՝ Ս. Կասյանը, Ա. Նուրիջանյանը, Գ. Աթարբեկյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ի. Դովլաթյանը, Շ. Ամիրխանյանը, Հ. Յաղուբյանը, Մելիք Օհանովը և ուրիշներ: Մոսկվայից, Բաքվից օգնություն էին կազմակերպում Հեղկոմի անդամներ Ա. Մռավյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Հ. Կոստանյանը: Փետրվարի 26-ին Գ. Աթարբեկյանի նախագահությամբ ստեղծվեց Հայաստանի հյուսիսային շրջանների՝ Դիլիջան—Ղարաքիլիսա գավառների

24 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 430:

ռազմա-հեղափոխական կոմիտեն, որը մեծ դեր խաղաց դաշնակցության դավադրությունը ճնշելու համար ծավալված մարտերում։ Մարտի 25-ին առաջին անգամ Հայաստանի երկնակամարի վրա երևաց խորհրդային ինքնաթիռը, որը բերում էր ոսկի։ Հաղթահարելով թռիչքի հետ կապված բոլոր դժվարությունները նա Ղամարլուի ռազմաճակատ հասցրեց 47 կիլոգրամ (5000 հատ) ոսկի՝ պարեն և ռազմամթերք հայթայթելու համար։ Դա լենինյան օգնությունն էր հայ ժողովրդին, որը թևավորեց նրա մարդկանց, քաջարի կարմիր ռազմիկներին։ Դաշնակցական մաուզերիստները մի պարտություն մյուսի հետևից կրելով, գրավված շրջաններում ամարդի կերպով դատաստան էին տեսնում արյունակից եղբայրների հետ, կողոպտում ժողովրդի ունեցվածքը, հրկիզում տները, բանտերը նետում հեղափոխականներին, կոմունիստներին, խորհրդային իշխանության ջատագովներին։ Դաշնակցական բանդաները Արմեկի դաշտում (Արարատի շրջան) սվինահար արեցին Հայաստանի կոմերիտմիության կենտկոմի քարտուղար Ա. Բուդաղյանին, բանվոր Տ. Թադևոսյանին, Գնդևազի մոտ ձորը նետեցին 12 քաղաքական բանտարկյալների, Նժդեհի հրամանով նրանք բարբարոսաբար Տաթևի ժայռից ձորը գլորեցին հարյուրավոր հեղափոխականների, հայրենիքի քաջարի զավակների։ Կարմիր նահատակները, արհամարհելով մահը, բացականչում էին՝ «Կեցցե խորհրդային Հայաստանը»։ Խռովարարները ամենուրեք մահ էին սփռում։ Նրանց ոտքի տակի հողը այրվում էր։ Ժողովրդի և կարմիր բանակի զորամասերի հարվածների տակ դաշնակցական մաուզերիստների դրությունը ծանրանում է։ «Հայրենիքի փրկության կոմիտեն» խուճապահար դիմում է քստմնելի միջոցների, գործարքի մեջ է մտնում Թուրքիայի հայատյաց կառավարողների հետ։ Մարտի 18-ին Ս. Վրացյանը Թուրքիայի արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի Երևանի ներկայացուցչի միջոցով դիմում է Թուրքիայի Ազգային ժողովի կառավարությանը՝ ռազմա-տնտեսական օգնություն աղերսում։ Իրենց մամուլի էջերից նրանք թունոտ կամպանիա սկսեցին սովետական Ռուսաստանի դեմ, հօգուտ թուրքական օրիենտացիայի։

Ահա թե մինչև ուր էին գլորվել դաշնակցականները՝ հայրենիքի վայ փրկիչները։ Խռովարարները դատապարտված էին մահվան։ Կարմիր բանակի զորամասերը բոլշևիկների ղեկավարությամբ Ելենովկայի, Համամլու-Ապարանի և Ղամարլուի հատվածներում մարտեր մղելով առաջ են շարժվում, կոտրում թշնամու դիմադրությու-

նը, գրոհում Երևանի վրա։ Ապրիլի 2-ին Երևանը ազատագրվում է։ Հոկտեմբերի ապստամբ դրոշը նորից է փողփողում Հայաստանի մայրաքաղաքի վրա։ Ապրիլի 3-ին Գ. Աթարբեկյանը Վ. Ի. Լենինին և Գ. Կ. Օրջոնիկիձեին հեռագրով հաղորդում է. «Այսօր հայ աշխատավոր մասսաների ջանքերով, կարմիր բանակի զորամասերի օգնությամբ, լիկվիդացված է դաշնակցություն կուսակցության նողկալի ավանտյուրան, մի կուսակցություն, որը հենվելով թուրքահպատակ գաղթականների ապադասակարգայնացած մասի, կուլակների և մաուզերիստների վրա, իր մահից առաջ վերջին անգամ փորձեց լակեյական դեր խաղալ Անտանտի առջև, աղետների հորձանուտը նետելով դժբախտ, հյուծված երկիրը։ Իրենց տիրապետության կարճ ժամանակամիջոցում դաշնակցականները կատարյալ հյուծման և հուսահատության հասցրին երկիրը»[25]։ Մինչև ապրիլի 15-ը լիովին ազատագրվում է փետրվարյան խռովության հետևանքով դաշնակների գրաված տերիտորիան։

Անփառունակ վախճան ունեցավ դաշնակցության արկածախնդրությունը։ Խռովության ճնշման գործում ամենից առաջ աչքի ընկան ժողովրդի հեղափոխական ուժերը, հաղթանակեցին մարքս-լենինյան գաղափարները։ Արիաբար մարտնչեցին կարմիր բանակի 3-րդ հրաձգային գնդի ռազմիկները՝ Ա. Բաղդասարյանի և կոմիսար Հ. Աթոյանի ղեկավարությամբ։ Մարտերում հերոսի մահով ընկավ բրիգադի կոմիսար Լ. Մխչյանը։ Թշնամու դեմ զենքը ձեռքին մարտնչում էր բանաստեղծ Եղիշե Չարենցը։

Դաշնակցական գրչակները, սփյուռքում ծառայելով հակակոմունիզմին, չարամտորեն խեղաթյուրում են փաստերը, ծուռ հայելում պատկերում 1921 թ. փետրվարյան արկածախնդրությունը, թիկունքից հայ ժողովրդին հասցրած դավաճանական հարվածը։ Փետրվարյան խռովության հիմնական ուժը մաուզերիստները, խմբապետներն ու կուլակներն էին՝ դաշնակցական ավազանու ղեկավարությամբ։ Այնինչ, կեղծելով պատմությունը, նրանք փորձում են համոզել, որ իբր թե խռովություն բարձրացրին աշխատավորները, այն «համաժողովրդական ապստամբություն էր»։ «Ինչպես քանիցս ընդգծել ենք,— գրել է Ռ. Դարբինյանը,— փետրվարյան ապստամբությունը բոլշևիկներու իշխանության դեմ 1921-ին տարերային ինքնաբուխ շարժում մըն էր, որուն մասնակցեցան հայ

25 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 568—569։

ժողովրդի բոլոր քաղաքական և կրոնական հոսանքները։ Նույնն էր բարբաջում Ս. Վրացյանը իր «Կյանքի ուղիներով» հուշագրություններում։ «Մերկ իրականությունն այն է,— գրել է Ս. Վրացյանը,— որ հայ բոլշևիկները իրենք Հայաստան եկան իբրև հայրենիքի դավաճաններ և իբրև միջազգային բոլշևիզմի գործակալներ, անհուն ոճիրներ գործեցին՝ ոտնահարելով հայ ժողովրդի անբռնաբարելի իրավունքները, որի դեմ հայ ժողովուրդը փետրվարի 18-ին ըմբոստացավ արդար ցասումով»[26]։

Ս. Վրացյանը, կեղծիքների կծիկը երկարացնելով, չարամտորեն նենգափոխելով պատմական փաստերը, ցինիկաբար գրել է. «Այսօր կույրերն անգամ տեսան, որ բոլշևիզմ և նացիզմ երկու չարիքներից նացիզմը փոքրագույնն է»։ Դաշնակցության փետրվարյան հայասպան արկածախնդրությանը ոչ մի արդարացում չկա։ Դավաճանության խարանը չի ջնջվի նրա կազմակերպիչների՝ դաշնակցության ճակատից[27]։

1921 թ. փետրվարին դաշնակների հրահրած խռովության և ապա քաղաքացիական կռիվների պատճառով Հայաստանի կոմունիստական կուսակցության I համագումարը հետաձգվեց, այն տեղի ունեցավ 1922 թ. հունվարին, որը խոշոր նշանակություն ունեցավ մարքսիստական-լենինյան գաղափարների տարածման, Հայաստանում լենինիզմի հաղթանակի համար մղած պայքարի պատմության մեջ։

---

26 Ս. Վրացյան, *Կյանքի ուղիներով*, հատ. 6, Բեյրութ, 1967, էջ 206։

27 Փետրվարյան խռովության մասին տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հատ. 7, Երևան, 1967, էջ 136—154, «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 317—322, «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաստատումը Հայաստանում» (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», 1902—1921, Երևան, 1960, Ա. Հակոբյան, *Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ.*, Երևան, 1948, Ծ. Աղայան, *Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը*, Երևան, 1957, Խ. Բարսեղյան, *Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը*, Երևան, 1965, Գ. Գալոյան, *Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ*, Երևան, 1960, Ա. Բաղդասարյան, *Քաղաքացիական պատերազմը Հայաստանում*, Երևան, 1928, Ա. Գրիգորյան, *Ճշմարտության կեղծված պատմության մասին*, «Սովետական Հայաստան» (ամսագիր) № 9, էջ 23—26, № 10, էջ 23—26, 1972, № 1, էջ 23—27, № 2, էջ 23—26, 1973։ Բ. Հ. Անանիկյան. *Դաշնակցության գաղափարական-քաղաքական կրախը*, Երևան, 1974։

4

Ինչպես հայտնի է, ռուսական բուրժուազիայի քաղաքական ազդեցիկ կազմակերպությունը կադետական կուսակցությունն էր։ Այն ձևավորվել է 1905 թ. հոկտեմբերին, ռուսական առաջին հեղափոխության ընթացքում, լիբերալ միապետական բուրժուազիայի, կալվածատերերի և բուրժուական մտավորականության ներկայացուցիչներից, որոնք քողարկվելով կեղծ դեմոկրատիզմով «ժողովրդական կուսակցություն» անվան տակ ջանում էին իրենց կողմը գրավել գյուղացիությանը։ Ռուսական կադետականությունը հող հանդիսացավ հայկական կադետական կուսակցության առաջացման համար։ Հայ իրականության մեջ ռուսական կադետականության յուրատեսակությունն էր մշակականությունը՝ «ժողովրդական կուսակցությունը», որը հիմնադրել է «Մշակ»-ի խմբագիր Համբարձում Առաքելյանը (Տահրիր, 1855—1918), Հայկական «ժողովրդական կուսակցության» ղեկավար գործիչներն էին Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը, Սամսոն Հարությունյանը, Միքայել Աթաբեկյանը, Ստեփան Մամիկոնյանը, Խաչատուր Աֆրիկյանը, Ալեքսանդր Քալանթարը, Տիգրան Եսայանը և ուրիշներ։ Կադետները ձգտում էին պահպանել ցարիզմը՝ միապետության ձևով, իշխանությունը բաժանել ցարի հետ, աշխատավոր մասսաներին համատեղ շահագործելու համար։ Նրանք վճռականորեն դեմ էին կալվածատիրական հողերի բռնագրավմանը։ Ստեփան Մամիկոնյանն ասում էր՝ «ազգովին գործենք»։ «Շավիղ» թերթը 1907 թ. հոկտեմբերի 12-ի № 9-ում հրապարակված «Կադետ թե՞ դաշնակցական» առաջնորդողում գրել է. «Մեր երկրի կադետները, ինչպես բոլոր նշաններից երևում է, ընդհանրապես կազմում են կադետական կուսակցության աջ թևը, նրանք ինչպես և իրենց Եվրոպական Ռուսաստանի եղբայրները, շարունակ տարուբերման, տատանման մեջ են, ընդունակ են շարունակ աջ թեքվելու և «մեծությունների» առաջ խոնարհվելու և համակերպվելու, այնպես որ վճռական րոպեներին նրանք շատ անվստահելի, վտանգավոր տարրեր են ներկայացնում»[28]։ Սակայն պետք է ասել, որ արևելահայ իրականության մեջ շատ փոքր է եղել «Սահմանադրական-ազատական» կուսակցության՝ հայկական կադետականության ազդեցությունը[29]։

---

28 «Շավիղ», Թիֆլիս, № 9, 12 հոկտեմբերի 1907 թ.։

29 Ռամկավար-ազատական կուսակցության մասին տե՛ս Ա. Մարտունի (Մյասնիկյան), Կուսակցությունները գաղութահայության մեջ, Մոսկվա, 1924։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կադետները ակտիվ պաշտպանել են ցարիզմի զավթողական արտաքին քաղաքականությունը, փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության օրերին ջանում էին փրկել ինքնակալությունը, շարունակելով ցարիզմի արտաքին քաղաքականությունը: Կադետները կատաղի պայքար էին մղում մարքս-լենինյան գաղափարախոսության դեմ: Նրանք զինված ուժով ճնշում էին բանվորական հեղափոխական ելույթները, կազմակերպում հակահեղափոխական խռովություններ՝ կոռնիլովյան դավադրությունը: ՌՍՖՍՀ կառավարության 1917 թ. նոյեմբերի 28-ի (դեկտեմբերի 11-ի) դեկրետով կադետները հայտարարվել են ժողովրդի թշնամիներ[30]:

5

Ռուսական երեք հեղափոխությունների, ինչպես և Անդրկովկասում սովետական կարգերի հաստատման համար մղած պայքարի ընթացքում, սոցիալիստական հեղափոխության վտանգավոր թշնամիներից մեկը էսեռներն էին (սոցիալիստ-հեղափոխականները): Էսեռական կուսակցությունը ձևավորվել է Ռուսաստանում, XX դարի սկզբին, նարոդնիկական տարբեր խմբերից, իբրև մանրբուրժուական կուսակցություն: 1905 թ. էսեռների I համագումարն ընդունեց կուսակցության ծրագիրը, որի հիմքում դրված էին լիբերալ նարոդնիկության և Արևմտյան Եվրոպայի օպորտունիզմի՝ ռևիզիոնիզմի դրույթները: Էսեռների ագրարային ծրագիրը նախատեսում էր հողը բաժանել գյուղացիական զանգվածներին, ձեռք չտալ արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը, պահպանել կապիտալիզմը: Սոցիալիստ-հեղափոխականները թշնամի էին մարքսիզմ-լենինիզմին, ժխտում էին բանվոր դասակարգի ղեկավար դերը հեղափոխության մեջ, կողմնակից էին անհատական տեռորին, մի բան, որը մեծ վնաս հասցրեց հեղափոխական շարժումներին:

Ստոլիպինյան ռեակցիայի և բանվորական հեղափոխական շարժման վերելքի տարիներին էսեռների վերնախավը ձուլվեց կադետական լիբերալիզմին:

1917 թ. փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխու-

---

30 *Տե՛ս* «Политический словарь», под редакцией проф Б. Н. Пономарева, М., 1958, стр. 225—226.

թյան ժամանակ էսեռները ձգտում էին Ռուսաստանում պահպանել կապիտալիզմը, համագործակցած մենշևիկների հետ նրանք համաձայնողական քաղաքականություն էին վարում բուրժուա-կալվածատիրական ժամանակավոր կառավարության հանդեպ։ Էսեռները նույնպես միատարր չէին։ 1917 թ. դեկտեմբերին ձևավորվում է «ձախ» էսեռների ինքնուրույն կուսակցությունը, որը ձգտում էր իր ազդեցությունը պահպանել գյուղացիության վրա։ «Ձախ» էսեռները հետագայում դարձան կուլակության շահերի արտահայտիչը։ Սովետական իշխանության առաջին տարիներին սոցիալիստ-հեղափոխականները կազմակերպեցին կուլակային խռովություններ, ամարդի կերպով սպանեցին Վոլոդարսկուն, Ուրիցկուն, չարանենգ մահափորձ կատարեցին Վ. Ի. Լենինի կյանքի վրա[31]։

Կովկասում, ինչպես տեսանք, սոցիալիստ-հեղափոխականների կազմակերպությունը սկզբում ձևավորվեց Բաքվում՝ դաշնակցությունից անջատված «ձախ» հոսանքի հիման վրա, այնուհետև տարածվեց Թիֆլիսում, Ալեքսանդրապոլում, Երևանում և այլուր։ Հայ էսեռական կազմակերպությունում, բացի Լևոն Աթաբեկյանից, ակտիվ դեր էին կատարում Վ. Մինախորյանը, Վ. Խորխոռունին, Գ. Մելիք-Շահնազարյանը, Մ. Խաչատրյանը, Ա. Տեր-Սարգսյանը, Հ. Ստեփանյանը, Հ. Ղազանչյանը (Բաքայանը), Գ. Բագադ-Ադաջանյանը և ուրիշներ։

1918 թ. ապրիլի 2-ին, Բաքվում հեղափոխության և հակահեղափոխության միջև ծավալված պայքարի ընթացքում զոհվեց Լ. Աթաբեկյանը։ Նա Սերգեյ Դենեժկինի, Կուլիշովի հետ միասին, իբրև բանագնաց (պառլամենտյոր), ուղարկվել էր թշնամու դիրքերը՝ ազգամիջյան արյունոտ սպանդը կասեցնելու նպատակով։ Ճանապարհին նրանք սաստիկ հրացանաձգության են ենթարկվում, Աթաբեկյանը և Դենեժկինը սպանվում են։ Այսպիսի ողբերգական վախճան ունեցավ հայկական սոցիալիստ-հեղափոխականների տեսաբաններից Լևոն Աթաբեկյանը, որը շուրջ քառորդ դար քաղաքական կյանքում լույս էր որոնում և չէր գտնում։ Չէր գտնում, որովհետև ճիշտ ուղի չէր ընտրել, մարքսիզմը չէր յուրացրել ինչպես պետքն է։ «Անջատական» շարժման նախաձեռնությունը, դաշ-

---

[31] Տե՛ս «Политический словарь», под редакцией проф. Б. Н. Пономарева. М., 1958, стр. 667—668; *Х. А. Ерицян.* Советы Крестьянских депутатов в октябрьской революции. М., 1960; *К. В. Гусев, Х. А. Ерицян.* От соглашательства к контрреволюции, М., 1968.

նակցության սուր քննադատությունը Լ. Աթաբեկյանին անջատում են յուրայիններից, բայց նրա գաղափարախոսությունը մնում է նույնը՝ մանրբուրժուական սոցիալիզմ: Հարազատ մնալով պատմականությանը, հարկավոր է նշել, որ Լ. Աթաբեկյանը պատկերացրել է դաշնակցության սոցիալիստական ֆրազաբանությունը, ցույց տվել, որ «դաշնակցության սոցիալիզմը մի կիրակնօրյա զգեստ է», միայն «ցուցադրելու մի իր», որ նա «էապես աղճատված, սոցիալիզմի կենակցությունն է գործնական շովինիզմի հետ» և այդ պարազիտային նացիոնալիզմի սիմբիոզը սոցիալիստական մարմնի վրա իրոք մի կատարյալ դավադրություն է սոցիալիզմի դեմ[32]:

Արդարությունը միաժամանակ պահանջում է նշել, որ Լ. Աթաբեկյանը երբեք չհասավ գիտական սոցիալիզմին, չազատագրվեց մանրբուրժուական կապանքներից, Ա. Մյասնիկյանի արտահայտությամբ, մնաց բանվոր դասակարգին օտար[33]:

Դաշնակցությունից անջատվածներից էին Հ. Ստեփանյանը, Հ. Ղազանչյանը, Գրիգոր Բաղալ-Աղաջանյանը և ուրիշներ: Գ. Բաղալ-Աղաջանյանը խմբագրել է հայ սոցիալիստ-հեղափոխականների անդրանիկ թերթը՝ «Անիվ»-ը, ակտիվորեն աշխատակցել «Շեփոր», «Զնդան», «Աշխատանքի դրոշակ» թերթերին: Նա գլխավորապես հանդես էր գալիս ագրարային հարցի վերաբերյալ «Տանթուրյան», «Մոքուշ» ծածկանուններով:

Հայ էսէռական կազմակերպությունը փոքրաքանակ էր: «Դաշնակցությունը շատ մոտիկ է էսէռներին,— գրել է Վ. Ի. Լենինը,— իսկ երիտասարդները» նույնիսկ մտնում են ս. ռ. կուսակցության մեջ»[34]:

6

1903 թ. վերջերին Ժնևում ձևավորված «սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը» («սպեցիֆիզմը») իր գործունեությունը տեղափոխելով Կովկաս, մեծ վնաս հասցրեց հեղափոխական շարժումներին, մարքսիզմ-լենինիզմի տարածմանը: Դաշնակցության դասալիքներից ստեղծված կազմակերպությունը թեև իր գաղափարախոսների (Բ. Իշխանյան, Ղազար և Նարիման Ղազարյան, Տ. Խախանյան, Ե. Պալյան, Ալեքսանդր Ռուբենի (Սա-

32 Տե՛ս Ռիխարդ, Վերագնահատումներ, սոցիալիզմի պրոբլեմները, էջ 62:
33 Տե՛ս «Աշխատանքի դրոշակ», Բաքու, № 1, 1919, էջ 15—16:
34 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 513:

ատրյան, Գ. Պիճիկյան, Գարեգին Կուզիկյան (Նազիմ), Դավիթ Անանուն (Տեր-Դանիելյան) և ուրիշների կողմից կնքվել էր բանվորական անունով, բայց իրականում շատ հեռու էր այդպիսին լինելուց։ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպություն»-ը, ըստ էության, խորթ էր հեղափոխական մարքսիզմը, պրոլետարական ինտերնացիոնալիզմը, ժողովուրդների բարեկամությունը, բանվոր դասակարգի ազատագրության գործը։ Դա սոցիալ-ազգայնականների կազմակերպություն էր, մինչև այդ՝ դաշնակցություն և հնչակյան կուսակցություններին պատկանող գրականագետ մտավորականների խմբակցություն։ Մանրբուրժուական ինտելիգենտական այդ տարրերը, լքելով իրենց նախկին դրոշները, պատսպարվել էին «կովկասյան գործերով» զբաղվելու պատրվակով։ «Պառակտումը նման էր մեծ նահապետական ընտանիքից բաժանվելու «տխուր անհրաժեշտության»— գրել է «անջատական» Վ. Մենախորյանը,— այնպես որ կարծես թե այդ ընկերները «սալղաթ գնացին» ...Հիշում եմ նրանց ու մեծ կես թղթի վրա տպված առաջին հայտարարից մեկ-երկու խոսքեր, ավելի ճիշտ նրանց իմաստը՝ «գլուխ ենք խոնարհում դաշնակցության մեծ նահատակների առաջ...» բայց անհրաժեշտ է գործել նաև Կովկասում»[35]։

«Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» առաջին և հիմնական սկզբունքը բանվորներին ըստ ազգությունների բաժանումն էր, պրոլետարիատի հեղափոխական ուժերի ջլատումը։ Ամեն մի ազգություն ներկայացնում է յուրահատուկ «սպեցիֆիկ» միջավայր,— ասում էին նրանք,— տարբեր դասակարգային շերտավորումով։ Այդ պատճառով էլ հարկավոր է, որ ամեն մի ազգի մեջ գործի ազատ և ավտոնոմ կերպով այդ ազգի բանվորական կազմակերպությունը...

Բունդի օրգան «Վեստնիկ բունդա» թերթը շտապեց ի լուր աշխարհի հայտարարել, թե ինքը դաշնակից ունի Կովկասում, հանձին «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության»[36]։ «Սպեցիֆիկները» իրենց գործունեության հենց սկզբից հակադրվեցին ՌՍԴԲԿ-ին և նրա տեղական կազմակերպություննե-

35 Տե՛ս «Վեմ», հատ. Ա, Փարիզ, էջ 103—104, Խ. Հ. Բարսեղյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը, Երևան, 1965, էջ 99։ Տե՛ս նաև Հ. Գ. Վարդանյան, Անդրկովկասում նացիոնալիզմի դեմ բոլշևիկների մղած պայքարի պատմությունից, 1903—1920, Երևան, 1962։

36 Տե՛ս «Վեստնիկ բունդա», № 1—2, և № 3, հունիս, 1904։

րին, բոլոր միջոցները գործադրում էին կազմալուծելու բանվորական շարժումները, հայ բանվորներին մեկուսացնելու ռուս, վրացի, ադրբեջանցի և այլազգի բանվորներից, աշխատավորների շարքերում սերմանելու նացիոնալիզմ: «Սպեցիֆիկները» վրացական ֆեդերալիստների, հրեական բունդի օրինակով, հետևելով ավտարխական իրենց ուսուցիչներին, իրենց համարում էին ինքնավար, «իբրև միակ ներկայացուցիչը հայ պրոլետարիատի»[37]: Նրանք նույնիսկ հանդգնեցին ասելու, թե ովքեր կողմնակից են ՌՍԴԲԿ-ի «...կազմակերպական սխեմին, բիչ արգելք չեն հանդիսանում, խանգարելով մեզ»[38]:

1905 թ. հոկտեմբերին տեղի ունեցած համագումարում «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը» իր կանոնադրության մեջ հարձակումներ կատարելով ՌՍԴԲԿ-ի, հատկապես բոլշևիկների վրա, գրում է, որ «նա մինչև այսօր չի կարողացել կանոնավոր դաստիարակել և կազմակերպել հայ պրոլետարիատը... որ նա անկարող է եղել հասկանալ զանազան ազգությունների բանվորների ներքին առանձնահատուկ քաղաքական-հասարակական պայմանները, մանավանդ հայ պրոլետարիատի,— սոց.-դեմ. բան. հայ կազմակերպության խորհրդաժողովը հայտարարում է, որ այդ կուսակցությունն անընդունակ է հանդիսանալ հայ պրոլետարիատի ներկայացուցիչը»[39]:

«Սպեցիֆիկները» պահանջում էին բանվորներին ըստ ազգությունների բաժանող նրբին նացիոնալիզմ քարոզող «կուլտուր-ազգային ավտոնոմիա», հայ բանվորներին կոչ էին անում պարփակվել ազգային շրջանակներում, մնալ «ազգային բնակարաններում»: Այդ է պատճառը, որ երբ 1904 թ. ՌՍԴԲԿ խորհրդում քննարկվեց ազգային սոցիալ-դեմոկրատների միավորման հարցը և որոշվեց միջկուսակցական կոնֆերանս հրավիրել, Վ. Ի. Լենինը դեմ արտահայտվեց «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» ներկայացուցիչների մասնակցությանը վերահիշյալ

---

37 Տե՛ս «Կյանք», № 14, 1906, էջ 215:

38 «Կյանք», № 16, էջ 248:

39 «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծը: Կազմակերպական սխեմը և կանոնադրությունը», 1905, էջ 1, 26, 27 և այլն: Մինչև այդ իրենց կոչում էին «Հայ (հայկական) սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն», հետագայում՝ «Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն»: Նման բառախաղից բունդի դաշնակցի էությունը չի փոխվում:

կոնֆերանսին։ «Այդ մասին խոսք անգամ չի կարող լինել»[40],— ընդգծել է Վ. Ի. Լենինը։ Նա 1905 թ. սեպտեմբերի 5-ին, ՌՍԴԲԿ Կենտկոմին գրած նամակում նշում էր՝ «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» սերտ կապը բունդի հետ[41]։ Իսկ «Պրոլետարի» թերթին ուղարկած, այսպես կոչված «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության մասին» (1905 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր) դիրեկտիվներում գրում էր. «Կենտրոնական կոմիտեից մենք ստացել ենք նամակ, որ հայտնում է, թե «Հայկական սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը» ցանկություն է հայտնել ստորագրելու այն բանաձևի տակ, որն ընդունված է բոլոր սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների կոնֆերանսում (խոսքը Ռիգայում սեպտեմբերի 20—22-ին տեղի ունեցած կոնֆերանսի մասին է— Խ. Բ.)։ Բայց Կենտկոմը չի համաձայնում այդ ստորագրությունը ընդունելու, որովհետև նա դեմ էր, որ Ռուսաստանի հետ լուրջ կապեր չունեցող լոկ արտասահմանյան այդ կազմակերպությունը կոնֆերանսին մասնակցի։ Մենք հույս ունենք, որ «Պրոլետարի»-ում շուտով տեղավորենք ավելի մանրամասն տեղեկություններ այդ կազմակերպության իսկական բնույթի վերաբերյալ։ Առայժմ նկատենք, որ բոլոր նրանք, ովքեր ցանկանում են իրոք օգնել Կովկասում հայկական բանվորների մեջ սոցիալ-դեմոկրատական շարժմանը, պետք է գործ ունենան միայն ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների հետ, որոնք հայկական գրականություն հրատարակում են Կովկասում և ոչ թե Ժնևում[42]։

Երկու օր անց, 1905 թ. սեպտեմբերի 7-ին, Վ. Ի. Լենինը, ՌՍԴԲԿ Կենտկոմի անդամներին ուղարկած ծրագրային նամակում գրել է. «Խիստ նախազգուշացնում եմ «Հայկական ս. դ.-ֆրակցիայի» վերաբերյալ։ Եթե դուք համաձայնվել եք, որ նա մասնակցի կոնֆերանսին, ապա ճակատագրական սխալ եք կատարել, որպիսին հարկավոր է ուղղել ինչ էլ որ լինի։ Դրանք, մի զույգ ժնևյան կազմալուծիչներ են, որոնք այստեղ հրատարակում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ։ Դա բունդական կրեատուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է կովկասյան բունդիզմը սնելու համար։ Եթե դուք թույլ տաք այդ մարդկանց ռուսական կոնֆերանս, այսինքն՝ Ռուսաստանում աշխատող կազ-

---

[40] Ленинский сборник XV, стр. 511.

[41] Տե՛ս Ленинский сборник V, стр. 493.

[42] Վ. Ի. Լենին. Երկեր, հատ. 9, էջ 380։

մակերպությունների կոնֆերանս գալու, դուք սարսափելի կխայտառակվեք։ Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են գրականագետ-կազմալուծիչների այդ շալկային (այդ բանը ես գիտեմ շատերից), և մենք շուտով կշշպենք նրանց «Պրոլետարի»-ում։ Դուք կառաջացնեք միայն Կովկասի բողոքները և «հաշտության» ու «միավորման» փոխարեն՝ նոր գզվռտոց։ Ասացեք, խնդրեմ, ինչպես կարելի է անտեսել կովկասյան միությունը, Ռուսաստանում բազմաթիվ աշխատողներին և մեծամասնական ժնևյան տակտիկների հետ։

Աղերսում եմ, մի արեք այդ բանը»[43]։

ՌՍԴԲԿ IV և V համագումարներին մասնակցել են «Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության» ներկայացուցիչները։ IV («միավորիչ») համագումարում Ստ. Շահումյանը առաջարկ է մտցրել ազգային սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների մասին։ ՌՍԴԲԿ V (Լոնդոն) համագումարում ազգային այլ կուսակցությունների ներկայացուցիչների հետ միասին մասնակցում էին նաև Ղազար և Նարիման Տեր-Ղազարյանները, որոնք իրենց նացիոնալիստական մտումներն էին քողարկում։

Հետհամագումարյան շրջանում «սպեցիֆիկների» պարագլուխները՝ Դ. Անանունը, Բ. Իշխանյանը, Տ. Խախանյանը և այլք, ավելի սանձարձակ դարձրին իրենց գործողությունները, թշնամանքով լցվեցին բոլշևիզմի նկատմամբ։ Բ. Իշխանյանը ամբաստանելով հայ լենինյաններին, ցինիկաբար ասում էր. բոլշևիկները «մի խորթ և օտար բույս են հայ կյանքում»[44]։ Դ. Անանունը արձագանքելով նրան գրել է. «ՌՍԴԲԿ անդամներ Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը ոչ միայն իրենք անձնապես հայ իրականության խորթ ու օտար դեմքեր են, այլև նրանք խորթացրել են իրենց հետևորդների միտքը հայ կյանքից ու իրականությունից,— նրանք բաց արձակեցին հետադեմ ուժերի ձեռքերը՝ մեր ժողովրդին առաջնորդելու ծուռ ուղիներով»[45]։ Հեղափոխության և նրան հաջորդած տարիներին «սպեցիֆիկների» ձախ թևը, առողջ մասը և շարքային շատ այլ անդամներ մնացին ՌՍԴԲԿ շարքերում, հավատարիմ բոլշևիզմին, պայքարեցին սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար։

---

43 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 34, էջ 383, 384։

44 Բ. Իշխանյան, *Երկու ամիս բոլշևիկյան բանտում*, էջ 193։

45 Դ. Անանուն, *Ռուսահայերի հասարակական զարգացումը*, հատ. 3, էջ 99։

«Սպեցիֆիկներ»-ը իրենց գաղափարախոսությունը տարածում էին տպագիր օրգանների՝ «Սոցիալիստ» (1904, Բաքու, 1905—1906, Ժնև), «Սոցիալ-դեմոկրատ» (1905, Բաքու, խմբագրությամբ՝ Եր. Պալյանի), «Կյանք» (1906, Թիֆլիս), «Ձայն» (1906—1907, Թիֆլիս), «Բանվոր» (1907, Բաքու), «Կոչ» (1911, Բաքու, խմբագրությամբ՝ Դ. Անանունի), «Նոր կյանք» (1911—1912 խմբագիր-հրատարակիչ, Դ. Տեր-Դանիելյան, Անանուն), «Մեր ուղին» (1912, Բաքու) և այլն, ինչպես և գրականության միջոցով: Եթե մինչև 1920 թ. դաշնակցությունը Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությանը նվիրված փոքր ի շատե գրականություն չստեղծեց, «Սպեցիֆիկներ» Դ. Անանունը, Բ. Իշխանյանը, Գ. Կարիկյանը (Նալիմ) և ուրիշներ որոշ փորձեր կատարեցին, խեղաթյուրելով իրականությունը: «Սպեցիֆիկներ»-ը 1908 թ. լույս ընծայեցին Կ. Կաուցկու ռեֆերատը Կարլ Մարքսի մասին: Բ. Իշխանյանն իր «Առաջաբան»-ում կեղծում էր փաստերը, թմբկահարում II Ինտերնացիոնալը, հայտարարում թե՝ «իր հատակ պրոլետարական իդեոլոգիայով և գիտական սոցիալիզմի առաջնորդող պրինցիպներով, պետք է իրավամբ այն կոչել մարքսիստական ինտերնացիոնալ»[46]:

Բուրժուական նացիոնալիզմի «սպեցիֆիկ» սպասավոր Դ. Անանունը, քաղաքական առաջին քայլերն անելով հնչակյանների ընտանիքում, հետագայում թեքվեց դեպի սոցիալ-դեմոկրատիան, դարձավ «սպեցիֆիզմի» հիմնադիրներից և տեսաբաններից մեկը, իսկ հետո... դաշնակցության հլու կամակատարը:

«Ակնունին (Խ. Մալումյանը) ջանֆիդայական դաշնակիզմի իդեոլոգն էր,— գրել է Ա. Կարինյանը,— Ոշասնյաց լեռների բարձունքների վրա կապիտալիստական դիվանագիտության կոչերը տարածող կովկասահայ բուրժուազիայի առաջին սուրհանդակների պետը: Վարանդյանը (Մ. Հովհաննիսյանը) լինում է ավելի կիրթ, ավելի «խորամանկ» և «հեռատես»: Նա ճիգ է անում կոկել բուրժուազիայի սուրհանդակներին, շղարշել նրանց դեմքը «հեղափոխական» և «սոցիալիստական» դիմակով, ծածկել վայրագ բուրժուա-պոգրոմշչիկի իսկական դեմքը: Դ. Անանունը (Տեր-Դանիելյանը) հակառակ այդ երկուսին, օգնության է կանչում մենշևիկյան մարքսիզմը և «նոր արսենալից» առնված զենքերով կառուցում է ռազմատենչ նացիոնալիզմի կատարելագործված այն կոնցեպցիան,

46 Տե՛ս Կ. Կաուցկի, Ռեֆերատ Կարլ Մարքսի մասին, Թիֆլիս, 1908, էջ 6:

որի միջոցով բանվոր և գյուղացի մասսաների շարքերում մղվող ազգայնական ագիտացիան պետք է դառնար դաշնակների համար ավելի դյուրին և ավելի հարմար»[47]։

Դ. Անանունը «հղկում է» իր նախորդների «գռեհիկ կողմերը», մերժում է «խանչալի» քաղաքականությունը։ Նացիոնալիզմը սոցիալիստական շղարշով պարուրելուց հետո, 1918 թ. նա աղաղակում էր «ես և բոլոր իսկական հայրենասերները (իմա, նացիոնալիստները— Խ. Բ.)— կանգնած ենք այն տեսակետի վրա, որ «հայությունը ոչ մի սպասելիք չունի բոլշևիկյան հեղափոխությունից», որ «հայության հավաքական ուժ ավողը կաթողիկոսն է և էջմիածինը», «Հայության բարձրացման նպատակը հայ բուրժուազիան է»։ Դ. Անանունը դաշնակցության հին «ուխտի» նորոգ սպասավորն էր։ Անգութ կերպով խեղաթյուրելով պատմական փաստերը, անտեսելով Անդրկովկասում սոցիալիզմի և մարքսիզմի անդրանիկ ջահակիրներին, նա առաջին պլան էր մղում «սպեցիֆիզմի» ծխական տեսաբաններին, երկրամասի բանվորական հեղափոխական ինտերնացիոնալ շարժումները քննարկում իբրև իրարից անջատ ազգային հատվածների շարժում։ Ս. Վրացյանը (Մասուրյան) թմբկահարելով Դ. Անանունի «Ռուսահայերի հասարակական զարգացումը» գիրքը նշել է. «հեղինակին կծծև դաշնակցության հիմնական գաղափարները հայրենաշինության մասին»[48]։ Դաշնակցության պարագլուխներից Վահան Նավասարդյանը աղճատելով փաստերը Բ. Իշխանյանին հորջորջում է որպես «մարքսիզմի առաջին տեսաբանը հայ իրականության մեջ»[49]։

Բ. Իշխանյանը, Դ. Անանունը 1920 թ. մայիսյան ապստամբության օրերին բաց քարտ (Carte blanche) վերցրած շրջում էին Հայաստանում և նողկալի գործեր կատարում։ Այդ նրանց մասին է տակավին 1906 թ. Շահումյանը գրել. «զզվանք և անեծք «հեղափոխության» և «սոցիալիզմի» մեծ գաղափարներն արատավորող, շահագործող այդ գաճաճներին»[50]։

---

47 Ա. Կարինյան, *Դաշնակցությունը և իր զինակիցները*, Երևան, 1932, էջ 99։

48 Տե՛ս Ս. Մասուրյան, *Ռուսահայոց հասարակական զարգացումը։ «Հին պատգամը»*, «Հառաջ», 30 հոկտեմբերի 1926 թ.։

49 Տե՛ս Բ. Իշխանյան, *Երկու ամիս բոլշևիկյան բանտում* (դաշնակցության հրատարակած գրքին կցված Վ. Նավասարդյանի առաջաբանը). Վիեննա, 1923, էջ 7։

50 Ստ. Շահումյան. *Երկեր*, հատ. 1, էջ 264։

Հնչակյան կուսակցությունը իր ձևավորման օրից՝ 1887 թ. մինչև պառակտումը քաղաքական ոլորումների բարդ ուղի է անցել: Նա մի քանի անգամ կոտորակվել: Կազմակերպության հիմնադիրները հրաժարվելով իրենց իսկ որդեգրած քաղաքական ուղեգծից, հեռացան նրա շարքերից, ասպարեզը թողնելով նորերին՝ Սապահգյուլյանին և այլոց, որոնք աստիճանաբար խորացնում էին նացիոնալիզմը՝ աղճատում մարքսիզմը: Այսուհանդերձ ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին Բուլղարիայում հրատարակվող հնչակյան «Վերածնություն» թերթը կոչ էր անում՝ թողնել նացիոնալիստական ավանդույթները և միանալ սոցիալ-դեմոկրատիային: 1905 թ. «Վերածնություն»-ը հերթափոխի եկած «Ապագա»-ն, որն Ավետիս Նազարբեկի խմբագրությամբ լույս էր տեսնում Փարիզում, ավելի խորացրեց այդ պահանջը, նպատակ ունենալով Կովկասահայ բանվորության և աշխատավոր զանգվածների մեջ տարածել սոցիալ-դեմոկրատական, կամ ինչպես իրենք էին ասում, մարքսիզմի պրոպագանդան: «Ապագա»-ի հրատարակությունը Ստ. Շահումյանը համարում էր բանվորական շարժման մի նոր հաղթանակ և մի նոր նվաճում Կովկասում: Հենց այդ պրոպագանդայի և Կովկասում բոլշևիկյան կազմակերպությունների բարձրացող հեղինակության շնորհիվ էր, որ ռուսական առաջին հեղափոխության տարիներին Անդրկովկասում հնչակյանների մի մասը մասնակցում էր բանվորական ցույցերին և ժողովներին, մարքս-լենինյան գաղափարների ազդեցությամբ, աստիճանաբար ազատագրվելով նացիոնալիստական պատրանքներից, անցնում սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպությունների կողմը: Կովկասյան հընչակյանների քաղաքական թուլություն, և միաժամանակ ողջամըտություն, ստեղծված դրության սթափ գնահատման արդյունք էր նրա կազմակերպությունների տրոհումը՝ նացիոնալիզմից ինտերնացիոնալիզմի անցումը: Դա միաժամանակ հեղափոխության բովում մարքսիզմի դիրքերի ամրապնդման, հայ հասարակական մտքի մարքսիստական ուղղության հաղթանակի դրսևորումն էր. Բայց ամբողջությամբ վերցրած հնչակյան կուսակցությունը մնում էր մանրբուրժուական, գաղափարախոսությունը՝ նացիոնալիստական: Հնչակյան մարքսիզմը արտացոլված է նրանց թողարկած գըրքույկներում և պարբերական մամուլում: 1900—1920 թթ. լույս էին տեսնում հնչակյան «Մարտ» (1897—1901, Լոնդոն), «Ձայն հայ-

բնույց» (1899—1910, Նյու-Յորք և ապա Բոստոն, Կ. Պոլիս), «Հնչակ» (1901—1903, Լոնդոն, վերակազմյալ հնչակյանների կենտրոնական օրգանը), «Վերածնություն» (1903—1904, Ռուսչուկ. № 53-ից, «Ապագա» Փարիզ), «Երիտասարդ Հայաստան» (1903-ից մինչև այժմ, ԱՄՆ), «Ազատ բեմ» (1903—1907, Եգիպտոս), «Ապագա» (1907—1908, Թիֆլիս), «Պայքար» (1907, Թիֆլիս), «Պահակ» (1911—1921, ԱՄՆ), «Հայկաշեն» (1917—1918, Թիֆլիս), «Ինքնավար Հայաստան» (1916, Բուխարեստ), «Շեփոր» (1918, Բաքու), «Գործավոր» (1919, Թիֆլիս), «Երկիր» (1919—1922, Կ. Պոլիս) և այլ պարբերականներ:

Հնչակյանների տարաձայնությունները ևս հաճախ վերջանում էին այս կամ այն ղեկավար գործչի ահաբեկմամբ: Հնչակյանների III համագումարի օրերին, 1903 թ. հոկտեմբերին, Լոնդոնում միաժամանակ սպանվեցին Բաքվի հնչակյան կազմակերպության պատգամավորներ Սաղաթել Գևորգյանը (Սագունի) և Արամ Գրիգորյանը (Համբ), Բաթումի պատգամավոր Տիգրան Իզմիրլյանը: Որոշ ժամանակ անց Շվեյցարիայում ծանր վիրավորվեց Ավետիս Նազարբեկյանը, իսկ Ամերիկայում Սարաֆ-Գյուլյանը («Երիտասարդ Հայաստան»-ի խմբագիրը): Այսպես կոչված «վերակազմյալները» որոշել էին 300 հնչակյանի տեռորի ենթարկել և դրանով իսկ քաղաքական դաշտը մաքրել՝ «Նոր կուրսը» իրականացնելու համար:

Հնչակյան կազմակերպության IV համագումարում, որը տեղի է ունեցել 1905 թ. ամռանը, Փարիզում, ներքաղաքական տարաձայնություններն ավելի են սրվում: Ավ. Նազարբեկը առաջարկում է Ռուսաստանում գործող հնչակյան կազմակերպությունները ձուլել սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ, որը և հանդիպում է դիմադրության: Նրա առաջարկության օգտին քվեարկում են միայն Երևանի, Բաքվի և Յալթայի պատգամավորները. Ավ. Նազարբեկյանը հնչակյան կուսակցության ղեկավար կազմում այլևս չի ընտրվում, նա հեռանում է V համագումարից: Սարգիս Քալաշյանը վերադառնում է անարխիստական տրամադրություններով և դառնում անիշխանական, իսկ Ռուբեն Խանազատը որոշ ժամանակ հարում է մենշևիզմին, իսկ հետո հեռանում քաղաքական կյանքից: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հնչակյան կուսակցությունը Անտանտի կողմն էր, Անդրկովկասում դաշնակցության հետ միասին կամավորական ջոկատներ էր կազմակերպում:

Համառոտակի այսպիսին են փաստերը:

Ա. Կիտուրը, Հ. Գանգրունին և այլք, շարունակում են հին երգը

երգել, գունազարդել Հնչակի պատմությունը: Կրկնելով իր նախորդներին, Գանգրունին գրել է. «1890—1905-ի միջև, բացի քանի մը մատի վրա համարվող հայ ռուս-սոց. դեմ. ներեն, որո՞նք էին Պաքվի, Պաթումի, Երևանի, Ալեքպոլի, Կարսի և Զանգեզուրի մեջ մարքսիզմ տարածողները... Մարքսի և Էնգելսի Կոմ. մանիֆեստը և տասնյակ ծանոթ սոցիալիստներուն երկերը թարգմանողները, եթե ոչ Հնչակյանները»[51]: Տեսության ու պատմության հանգուցային պրոբլեմների մեկնաբանման ընթացքում մանկական անհոգությունը անթույլատրելի է:

Տ

Հայկական մենշևիզմը ռուսական մենշևիզմի ծնունդն է, նրա քաղաքականությունն ու տակտիկան նացիոնալիստական տարբեր երանգներով իրականացնողը: ՌՍԴԲԿ II համագումարից հետո Կովկասում ձևավորվում է հայկական մենշևիկների փոքրաթիվ կորիզը՝ Գ. Ղարաջյանի, Ա. Երզնկյանի, Հ. Աղասյանի, Ա. Բանվորյանի (Միրզոյանի) և այլոց ղեկավարությամբ: Որոշ ժամանակ անց նրանց է միանում Ա. Զուրաբյանը: Նրանք իրենց գաղափարախոսությունը հիմնականում տարածում էին մամուլի և թռուցիկների միջոցով: 1905—1920 թթ. Անդրկովկասում լույս են տեսնում հայ մենշևիկների մի քանի թերթեր, այդ թվում «Սոցիալ դեմոկրատ» (1905, Թիֆլիս), «Հոսանք» (1906—1907, Թիֆլիս՝ Ա. Զուրաբյանի և Ար. Երզնկյանի փաստական խմբագրությամբ), «Պայքար» (1917 թ. № 100-ից (հունիս) մինչև 1918, խմբագրությամբ՝ Ա. Զուրաբյանի և Ս. Տ. Արկոմեդի), «Կայծ» (1918—1919, Երևան, խմբագրությամբ՝ Թադևոս Ավդալբեգյանի) և այլն: Ինչպես իր մամուլի էջերից, այնպես էլ իրական կյանքում հայկական մենշևիզմը մանրբուրժուական պատրանքներ էր սերմանում: Բայց փաստն այն է, որ եթե Վրաստանում մենշևիզմը արգելակում էր հեղափոխական շարժումը, ապա Հայաստանում այն աննշան էր և հաճախ ձուլվում էր հնչակյան ու «սպեցիֆիկյան» մարքսիզմին, ընդդիմակայում նույնիսկ վրացական մենշևիկների քաղաքական ուղեգծին: Կովկասյան մենշևիզմի վրացական ու հայկական հատվածները Կովկասյան Զեմստվոյի, պոլիտեխնիկական ինստիտուտի և համալսարանի կառուցման վայրի, ազգայնական բուրժուական հան-

---

51 Հրանտ Գանգրունի, Հայ հեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դէմ (1890—1910), Պէյրութ—Լիբանան, 1973:

պետությունների տերիտորիալ սահմանների և այլ հարցերում հակադրվում էին միմյանց, բայց էությամբ, երկուսն էլ նույն գաղափարախոսությունն ունեին։ Երկրամասի բոլշևիկները համառորեն պայքարում էին թե՛ վրացական, և թե՛ հայկական մենշևիզմի դեմ, արագացնում նրանց վախճանը։ Առանձին դեպքերում հայ մենշևիկների ղեկավարները (Գ. Ղարաջյան, Ս. Զորաբյան, Ս. Երզնկյան և այլք) հանդես էին գալիս Ն. Ժորդանիայի, Ռամիշվիլու, Չխենկելիի և այլոց դեմ։ Ի վերջո, վրացական և հայկական մենշևիկները միահյուսվում են իրենց ազգայնական կուսակցություններին և քաղաքական հոսանքներին։ Ազգային խորհուրդներում, հետո նաև Անդրկովկասյան սեյմում ու ազգային բուրժուական հանրապետությունների պառլամենտներում կովկասյան մենշևիկները ձգտում էին ծառայել «ազգային համերաշխության» գաղափարին, «շրջանցել» բուրժուազիայի առանձին «վրիպումները»՝ հանուն բուրժուազիայի շահերի հարատևության։

Մենշևիկյան «Բանվորի ձայն» (Թիֆլիս) թերթը բացահայտ թշնամական դիրք գրավեց մայիսյան ապստամբության նկատմամբ։ «Մեզանում երևան եկած մեծամասնական սոցիալիստական շարժման հանդեպ մեր վերաբերմունքը պարզ է ու որոշ, մեծամասնական սոցիալիստական մեթոդները և գործելակերպը մենք միշտ գտել ենք միանգամայն սխալ և անհամապատասխան պրոլետարիատին և դեմոկրատիային,— գրել է թերթը,— իսկ անտեսական-քաղաքական այն կատաստրոֆիկ դրությունը, որի մեջ այժմ գտնվում է Հայաստանը, միանգամայն անմիտ ու խելագար բնույթ է տալիս մտածմունքներին կամ գործնական քայլերին, որոնց նպատակն է Հայաստանում սոցիալիստական հեղաշրջում կատարել»[52]։

Ահա թե մինչև ուր էին գլորվել մենշևիկները։

«Պայքար»-ի 1918 թ., «Կայծ»-ի 1918—1919 թթ. նյութերը լուսաբանում են հայկական մենշևիզմի տխուր էվոլյուցիան, նրա քաղաքական հետադիմությունը։

Հակագիտական ու սխալ է մենշևիկների կողմից հորինված այն պնդումը, որ իբր թե՝ մենշևիկների շրջանում մարքսիստական միտքն էր ուժեղ, իսկ բոլշևիկների մոտ՝ պրակտիկան։ Բոլշևիզմը մարքսիզմն է, որն աճել ու ամրապնդվել է մենշևիզմի գաղափարախոսությունից անկախ՝ ընդդեմ մենշևիզմի։ Հայ մենշևիկները համագործակցելով «սպեցիֆիկների», հնչակյանների ու սոցիալիստ-

52 «Բանվորի ձայն», 20 մայիսի 1920 թ.։

հեղափոխականների հետ, 1920 թ. մայիսյան ապստամբության և նրա հաջորդած օրերին, պաշտպանում էին դաշնակցության անհեռատես ու ազգակործան քաղաքականությունը, աշխատավորությունը կոչ անում՝ համախմբվել Հայաստանի ազգային հանրապետության շուրջը:

9

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայկական բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների գաղափարախոսության մեջ զգալի տեղ էին գրավում ճամարտակությունները՝ հայրենիքի և հայրենասիրության մասին: Բուրժուական գրչակները ազգայնական նկրտումները ներկայացնում էին իբրև հայրենասիրություն, նացիոնալիստական ձգտումները շղարշում սոցիալիստական երանգներով: Հնչակյան տեսաբան Ս. Սապահ-Գյուլյանը 1916 թ. հրատարակեց «Սոցիալիզմ և Հայրենիք» խորագրով հոդվածների հավաքածուներ, որոնց մեջ «ինքնուրույն» մեկնաբանությունների հետ միասին զետեղված էին հայրենասիրության և սոցիալիզմի մասին La vie Socialiste *(«Սոցիալիստ կյանք») ժուռնալի առաջադրած հարցերին Է. Բեռնշտայնի, Է. Վանդերվելդեի, Գ. Հերվեի, Ա. Բեբելի, Գ. Պլեխանովի և այլոց տված պատասխանները: Երկրորդ պրակի «Ներածության» մեջ Ս. Սապահ-Գյուլյանը ասում է. «սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցությունն է, նրա գաղափարները, առաքյալները, գործիչներն էին, որ* գիտական սոցիալիզմը առաջին անգամ *հայ կյանքին, հայ ազգին ներկայացրին և վերանորոգչի պատմական կոչման մեջ մտան»*[53]*: Այնուհետև նա դատողություններ է անում սոցիալիզմի ու հայրենասիրության մասին, կրկնելով բուրժուական գաղափարախոսների հնացած մտքերը:*

«Սոցիալիստ կյանք»-ի խմբագրությունը ցիտելով «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի «Բանվորները հայրենիք չունեն» ձևակերպումը, այդ առթիվ չորս հարց էր առաջադրել.—

1. Ի՞նչ եք մտածում և ի՞նչպես եք մեկնաբանում այդ թեզը, հայրենասիրությունն ու միջազգայնականությունը կարո՞ղ են իրար հետ հաշտվել:

2. Միջազգայնականությունը ի՞նչ գործնական դիրք, պրոպագանդայի ի՞նչ ձև է թելադրում սոցիալիստներին՝ ընդդեմ միլիտա-

---

53 Ս. Սապահ-Գյուլյան. *Սոցիալիզմ և Հայրենիք, պրակ II, 1916, Փրավիդենս:*

րիզմի, գաղութականության՝ նրանց պատճառներն ու անցողիկ ձևությունները:

3. Սոցիալիստները ի՞նչ դեր պիտի խաղան միջազգային հարաբերությունների (օր. մաքսագների, գործավարական օրենսդրության) մեջ:

4. Սոցիալիստների պարտականությունը ո՞րն է պատերազմի ժամանակ:

Վերահիշյալ գործիչների պատասխանները հեռու էին մարքսիստական լինելուց, մի բան, որը և եռանդուն պրոպագանդում էին հայկական ազգայնականները: Է. Բեռնշտայնը քմահաճորեն մեկնաբանելով «բանվորները հայրենիք չունեն» արտահայտությունը ասում էր. մարքսյան միտքը ճիշտ է միայն այն ժամանակի համար, երբ պրոլետարիատը քաղաքականությունից դուրս էր: Բայց քաղաքական պայքարի մեջ մանելով, ընտրական և այլ իրավունքներ ստանալով, նա հայրենիք է ձեռք բերում: Այստեղից էլ նրա, Ֆոլմարի, Նոսկեի և այլոց շովինիստական եզրակացությունը՝ պրոլետարիատը բոլոր պայմաններում, նույնիսկ թալանչիական պատերազմի ընթացքում, պետք է պաշտպանի հայրենիքը: «Կոմունիստական կուսակցության մանիֆեստ»-ի այդ բանաձևումը նույնիսկ միլիտարիզմի թշնամի՝ Ժան Ժորեսը չի ըմբռնել, նա հայրենիքի գաղափարի դասակարգային ըմբռնումից նահանջել է: Ժան Ժորեսը հայտարարել է. «Կոմունիստական մանիֆեստ»-ի ֆորմուլան ճիշտ էր միայն այն ժամանակ, երբ Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի բանվոր դասակարգը չէր օգտվում համընդհանուր ընտրական իրավունքից, քաղաքականապես կաթվածահար էր[54]:

Անարխիստ Գուստավ Էրվեն, հավատարիմ իր գաղափարներին, ընդհանրապես ժխտում էր հայրենիքի գաղափարը: Իսկ ինտերնացիոնալիզմի և հայրենասիրության գաղափարի հարցում, ի վերջո, հանգում էր Բեռնշտայնի տեսակետին:

Գ. Պլեխանովը, II Ինտերնացիոնալի պարագլուխների համեմատությամբ շատ հարցերում բարձր կանգնած լինելով հանդերձ, հայրենասիրության պրոբլեմին մոտենում էր նեղ դիրքերից: Դա իր արտահայտությունն է գտել նրա «Հայրենասիրություն և սոցիալիզմ» հոդվածում[55]:

---

[54] Տե՛ս *Ж. Жорес*, Новая армия. Пгр., 1919, стр. 279.

[55] Գ. Պլեխանով, *Փիլիսոփայական ընտիր երկեր, հատ. III, Երևան, 1957, էջ 100—101:*

Գ. Պլեխանովը պատերազմի տարիներին ճիշտ չգնահատելով աշխատավոր մասսաների հայրենասիրական զգացմունքները, ընկավ շովինիստների ազդեցության տակ:

Վ. Ի. Լենինը պատերազմի սկզբից ևեթ հանդես է գալիս Գ. Պլեխանովի «Սոցիալիստների վերաբերմունքը պատերազմի հանդեպ» ռեֆերատի դրույթների շուրջը. սոցիալիստական հայրենիքի ստեղծման համար պայքարի կոչ անում: Վ. Ի. Լենինը նշել է. «Չմոռանալով Մարքսի խոսքերը, որ «Բանվորները հայրենիք չունեն», պրոլետարիատը պետք է մասնակցի ոչ այն բանում, որպեսզի պաշտպանի բուրժուական պետությունների հին շրջանակները, այլ, որպեսզի ստեղծի սոցիալիստական հանրապետությունների նոր շրջանակներ»[56]:

Սպառիչ քննադատության ենթարկելով «բանվորները հայրենիք չունեն» դրույթն աղավաղողներին, Վ. Ի. Լենինը 1916 թ. Ինեսա Արմանդին գրած նամակում ցույց է տվել, որ «Բանվորը հայրենիք չունի» այդ ամենից առաջ նշանակում է (a) նրա տնտեսական դրությունը (Le salariat) ազգային չէ, այլ ինտերնացիոնալ է (β). նրա դասակարգային թշնամին ինտերնացիոնալ է (V) նրա ազատագրության պայմանները նույնպես (δ) բանվորների ինտերնացիոնալ միասնությունը ավելի կարևոր է, քան ազգայինը»[57]: Վ. Ի. Լենինը բացահայտելով «Կոմունիստական մանիֆեստ»-ի ծրագրային դրույթի նշանակությունը, պարզաբանել է, որ հայրենիքի և նրա պաշտպանության վերաբերյալ դրույթը բոլոր պայմաններում միատեսակ կիրառելի լինել չի կարող «Եթե վերցնենք առաջին դրույթը (բանվորները հայրենիք չունեն),— գրել է Վ. Ի. Լենինը,— և մոռանանք նրա կապը երկրորդի հետ) բանվորները որպես դասակարգ կազմավորվում են ազգայնորեն, բայց ոչ այն իմաստով, ինչպես բուրժուազիան, ապա դա խիստ սխալ կլինի»[58]: Կապ տեսնելը սկզբունքային նշանակություն ունի: Վ. Ի. Լենինի բնութագրությամբ կապը հենց նրանում է, որ դեմոկրատական շարժման մեջ (այսինչ պահին, այսինչ կոնկրետ պայմաններում) պրոլետարիատը չի կարող հրաժարվել դրան օժանդակելուց (հետևապես, և ազգային պատերազմում հայրենիքը պաշտպանելուց)[59]: Ազգային

---

56 В. И. Ленин, Полн. собр. соч., т. 26, стр. 25.

57 Վ. Ի. Լենին. Երկեր. հատ. 35, էջ 261:

58 Նույն տեղում, էջ 266:

59 Նույն տեղում:

պատերազմում «Հայրենիքի պաշտպանության» լոզունգը լիովին համապատասխանում է մարքսիզմ-լենինիզմին։

Ինչպես տեսանք, դաշնակցություն, այսպես կոչված, տեսաբանները ևս ջանում էին լիովին հերքված համարել «բանվորները հայրենիք չունեն» դրույթը։

Մ. Վարանդյանը, կամ ինչպես դաշնակները են անվանում՝ «Հայկական Կաուցկին» 1910 թ. II Ինտերնացիոնալի օպորտունիստների օրինակով, ասում էր. «Անցան այն ժամանակները, երբ սոցիալիստական փրոպագանդության մեջ հոլովում էին շարունակ «Բանվորները հայրենիք չունեն» և նման պարզ ֆորմուլաները։ Կյանքը հղկեց նրանց իր երկաթե տրամաբանության տակ և այսօր աշխարհի բոլոր սոցիալիստ կուսակցությունների ծրագրերում ու տակտիկի մեջ շեշտվում է առողջ ազգայնության դավանանքը»[60]։

Դաշնակցության մի ուրիշ գաղափարախոս Գ. Խաժակը 1912 թ. իր «Ի՞նչ է ազգությունը» գրքույկում, խեղաթյուրելով հայրենիքի գաղափարը, գրել է. «Մարքսը դեմ է հայրենիքի գաղափարին», նա «դեմ է ազգային գաղափարին», նա «չի ըմբռնել ազգային կոչված խնդիրը» և այլն[61]։ Վարանդյանների ու Խաժակների բերանով խոսում էր դաշնակցությունը։ Տասնամյակներ շարունակ դաշնակցության գաղափարախոսները հոլովել են միևնույն մտքերը, թունավորել աշխատավոր մասսաներին։ Մ. Վարանդյանը հայտարարում էր, թե մարքսիզմի համար ազգային խնդիր չկա, այլ կա միայն դասակարգային կամ սոցիալական խնդիր, որը հռչակել է իր «1848-ի «Մանիֆեստ»-ի մեջ իր զուտ կոսմոպոլիտ համաշխարհայնական դավանանքը ծանոթ դարձվածքով՝ ուր կա շահ, այնտեղ և հայրենիք,— այս չոր բանաձևին էր վերածվում ազգային հարցը և հայրենասիրությունը»[62]։

Դաշնակցությունը դասեր չի քաղել պատմությունից։ Հայրենիքից քշված դաշնակցականները սփյուռքում շարունակում են մարքսիզմի հասցեին իրենց զրպարտությունները, հակակոմունիստական ճամարտակությունները։ «Բոլշևիզմը,— գրել է Բ. Նավասարդյանը,— դավանանքով ու տեսաբանությամբ, ոխով ու համոզմունքով, սկզբունքով ու վարդապետությամբ դեմ է Ազգին, դեմ է Հայրենիքին»[63]։

---

60 Մ. Վարանդյան, *Վերածնվող հայրենիքը և մեր դերը.* էջ 170—171։

61 Գ. Խաժակ, *Ի՞նչ է ազգությունը*, Կ. Պոլիս, 1912, էջ 93—94։

62 Մ. Վարանդյան, *Հատանքներ*, էջ 25—26։

63 Բ. Նավասարդյան, *Բոլշևիզմը և դաշնակցությունը*, էջ 619։

Ազգային հարցի դաշնակցական մեկնաբանները թունոտ ու նողկալի են։ Շարունակ աղմկում և աղաղակում են «Հայ-հարայ, հանեք, ազգը ձեռքից գնում է», «ձուլվում է», «կործանվում է»։ Հայաստանի բոլշևիկները զինված լենինյան գաղափարներով աշխատավորությանը շարունակ պարզաբանել են իսկական հայրենասիրության, գիտական սոցիալիզմի, ազգային հարաբերությունների, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները, մերկացրել այդ սուտ գաղափարների խեղաթյուրողներին։

Իսկական հայրենասիրությունը հայրենիքի նկատմամբ տածվող զգացմունք է, ջերմ սեր ու նվիրվածություն, սոցիալ-քաղաքական ամուր բազայի վրա ծավալվող երևույթ։ Հայրենասիրությունը իբրև սոցիալ-քաղաքական ու պատմական երևույթ տարբեր հասարակարգերում տարբեր բովանդակություն է ունեցել։ Մարդկության պատմության զարգացման օրինաչափությունը մեկ անգամ չէ, որ հաստատել է այն ճշմարտությունը, որ իսկական, բարձր հայրենասիրությունը միայն աշխատավորական զանգվածներին է հատուկ և որ շահագործող դասակարգերը երբեք չեն կարող հայրենասիրական ճշմարիտ զգացմունքների կրողներ լինել, քանի որ նրանց շահագիտական ձգտումները խոր հակասության մեջ են ազգային շահերի, ժողովրդի արմատական շահերի հետ։ «Հայրենասեր» բառը առաջին անգամ քաղաքական բառարանում մտել է ֆրանսիական մեծ հեղափոխության տարիներին։ Հայրենասեր էին կոչում հայրենիքի և ազատության բարեկամներին՝ հեղափոխականներին, ֆեոդալիզմի և ռոյալիզմի թշնամիներին[64]։ Հայտնի Լարուս բառարանի համաձայն «հայրենասեր» նշանակում էր «Նոր Ֆրանսիայի հատուկ քաղաքացի, հին կարգերի թշնամի, հեղափոխության մարտնչող առաքյալ և զինվոր»։ Վ. Ի. Լենինը գրել է. «Հայրենասիրական գաղափարն իր սկիզբն է առնում դեռ XVIII դարի մեծ հեղափոխությունից»[65]։

Գիտական կոմունիզմի մեծ հիմնադիր Կարլ Մարքսը ցույց է տվել, որ բուրժուազիայի հայրենասիրությունը մաքուր կեղծիքի է վերածվել այն ժամանակվանից, երբ նրա ֆինանսական, առևտրական և արդյունաբերական գործունեությունը ընդունել է կոսմոպոլիտ բնույթ։ Բուրժուազիան աշխատում է մասսաների հայրենասի-

---

64 Տե՛ս П. М. Рогачев, М. А. Свердлин. Патриотизм и общественный прогресс, М., 1974, стр. 13

65 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 13, էջ 612։

րությունը ենթարկել իր նպատակներին, իր տիրապետությունն ամրապնդելու համար:

Վ. Ի. Լենինը 1914 թ. «Ազգերի իրավունքների և ինքնորոշման մասին» աշխատությունում «Հարցի պատմական կոնկրետ դրումը» բաժնում, բանավիճելով Ռոզա Լյուքսեմբուրգի հետ, ցույց է տվել, որ անհրաժեշտ է «խիստ կերպով բաժանել ազգային շարժումների տեսակետից արմատապես իրարից տարբերվող՝ կապիտալիզմի երկու էպոխաները: Մի կողմից՝ դա ֆեոդալիզմի ու աբսոլյուտիզմի կրախի դարաշրջանն է, բուրժուա-դեմոկրատական հասարակության և պետության կազմավորման էպոխան, երբ ազգային շարժումներն առաջին անգամ մասսայական են դառնում, այսպես թե այնպես քաղաքականության ասպարեզ են դրավում բնակչության բոլոր դասակարգերին՝ մամուլի միջոցով, ներկայացուցչական հաստատություններին մասնակցելու և այլ միջոցներով: Մյուս կողմից՝ մեր առաջ է լիովին կազմավորված կապիտալիստական պետությունների դարաշրջանը, վաղուց հաստատված կոնստիտուցիոն կարգերով, պրոլետարիատի և բուրժուազիայի խիստ զարգացած հակամարտությամբ, մի դարաշրջան, որը կարելի է կապիտալիզմի փլուզման նախօրյակ անվանել»[66]:

Իմպերիալիզմի շրջանում բուրժուազիան դառնում է բանվորական շարժման կատաղի թշնամի:

Հայրենասիրության խոշոր տեսաբաններից մեկը՝ Պ. Լաֆարգն ասել է. «Այնտեղ, որտեղ շահույթի ավելի բարձր նորմա կա, այնտեղ էլ կապիտալի հայրենիքն է»[67]:

II Ինտերնացիոնալի պարագլուխ է. Վանդերվելդեն ամեն տեսակի հայրենասիրությունը որակել է որպես «մյուս ազգությունների նկատմամբ թշնամանք կամ արհամարհանք»[68]:

Վանդերվելդեն միայն բուրժուական հայրենասիրությունն էր տեսնում, նա անգիտանում էր բանվոր դասակարգի սոցիալիստական հայրենասիրությունը: 1917 թ. «Ավրորայի» համազարկերով ծնվեց աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: Սովետական բազմազգ պետության առաջացմամբ պայմանավորվեց

---

66 Վ. Ի. Լենին, *Երկեր, հատ. 20, էջ 499:*

67 *Поль Лафарг.* Патриотизм буржуазии, Одесса, 1906, стр. 10. *Լաֆարգի աշխատության բաժիններից մեկը կոչվում է՝* «Буржуазный патриотизм—норма прибыли».

68 Մ. Վարանդյան, *նո՛ւյն նշվ. աշխ.:*

նաև սոցիալիստական հայրենասիրության ծնունդը: Դա եղբայրական մեծ ընտանիքում համախմբված սոցիալիստական ազգերի հայրենասիրությունն է, որը մարմնավորում է այդ ազգերի լավագույն ավանդույթները: Դա սովետական մարդու բազմերանգ կենդանի աշխարհն է, որի համար չկա ավելի վսեմ նպատակ, քան արդարությունը, ճշմարտությունը, ժողովուրդների ազատությունն ու անկախությունը, նրանց արմատական, կենսական շահերը: Վ. Ի. Լենինը բարձր գնահատելով պատմության իսկական կերտողի՝ ժողովրդի նվիրվածությունը սոցիալիստական հայրենիքին, աշխատավոր մասսաների գիտակցության և հայրենասիրության մեջ էր տեսնում նոր հասարակարգի ուժի և անպարտելիության գրավականը: «Երբեք չեն հաղթի այն ժողովրդին,— 1919 թ. ապրիլի 16-ին Մոսկվայի հանգույցի երկաթուղայինների կոնֆերանսում արտասանած ճառում ասել է Վ. Ի. Լենինը,— որի մեջ բանվորներն ու գյուղացիները իրենց մեծամասնությամբ իմացել, զգացել և տեսել են, որ իրենք պաշտպանում են իրենց, սովետական իշխանությունը՝ աշխատավորների իշխանությունը, որ պաշտպանում են այն գործը, որի հաղթանակն իրենց և իրենց զավակների համար կապահովի կուլտուրայի բոլոր բարիքներից, մարդկային աշխատանքի ստեղծագործություններից օգտվելու հնարավորությունը»[69]:

Սովետական հայրենասիրությունը կոմունիզմ կառուցող մարդու բարոյական կերպարի ամենաբնորոշ գիծն է: Բարձր գաղափարայնություն և անսահման սեր աշխատանքի ու հայրենիքի նկատմամբ, անհուն նվիրվածություն կոմունիզմի վսեմ գործին, դժվարությունները հաղթահարելու մեծ կարողություն, մատերիալիստական աշխարհայացք և ինտերնացիոնալիստական գաղափարախոսություն, կոլեկտիվիզմ և սոցիալիստական համակեցության կանոնների հետևողական պահպանում,— ահա թե ինչով է բնորոշվում սովետական հայրենասերների բարոյական կերպարը: Այդ հատկությունները սովետական մարդկանց մեջ պատրաստվում են մանկությունից, դպրոցական հասակից, սոցիալիստական ամբողջ ապրելակերպով: Սոցիալիստական հայրենասիրությունը սովետական ժողովրդի անձնուրաց նվիրվածությունն է, աշխատանքային սխրանքները, սոցիալիզմի թշնամիների դեմ տածվող մահու չափ ատելությունը, հայրենիքի սրբազան պաշտպանությունը: Բանվոր դասակարգի հայրենասիրությունը դա համաժողովրդական հայ-

69 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 386:

ընտասիրություն է, որը խարսխված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ՍՍՀՄ ժողովուրդների անխախտ բարեկամության, բարոյա-քաղաքական միասնության վրա։

Սովետական հայրենասիրությունը գիտակցված հայրենասիրություն է, նրա հիմքը մարքսիզմ-լենինիզմն է։

Ինչպիսին հասարակարգն է, այնպիսին էլ նրա մարդկանց հայրենասիրությունն է։ Սոցիալիստական հայրենիքը նոր տիպի հայրենիք է։ Սովետական հայրենասիրությունն էլ նոր, բարձր տիպի հայրենասիրություն է, որն իր վիթխարի ուժն է դրսևորել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության բարիկադների վրա, քաղաքացիական կռիվների ճակատներում, Խալխին գոլի ու Խասանի մոտ, սպիտակ ֆինների դեմ մղած կռիվներում, Սովետական Միության 1941—1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում... Այն իր ուժը ցուցադրել է ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման, երկրի սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, հետպատերազմյան խաղաղ շրջանի հերոսիկայում, խամ ու խոպան հողերի յուրացման համար ծավալված արշավում։ Հիրավի, քաղաքակրթության իսկական չափանիշը տվյալ երկրի մարդու բարոյա-քաղաքական կերպարն է։ Սովետական մարդու բարձր առաքինությունը, հումանիզմն ու ինտերնացիոնալիզմը վառ կերպով դրսևորվել են սոցիալիզմի կառուցման համար մղած պայքարի բոլոր փուլերում։

10

Անդրկովկասում սովետական կարգերի հաղթանակով գաղափարական քաղաքական սնանկության մատնվեցին բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունները։ Հաղթանակեց սոցիալիստական գաղափարախոսությունը։

Հնչակյան կուսակցությունը, որն իր կազմավորման առաջին տարիներից սկսած կոտորակվում էր, 1923 թ. Թիֆլիսում գումարված կովկասյան համագումարում որոշում ընդունեց ՍՍՀՄ-ում լուծարել հնչակյան բոլոր կազմակերպությունները։ Հնչակյան կազմակերպությունների քայքայման գործում որոշակի դեր խաղացին Կոմինտերնի գործկոմի 1923 թ. փետրվարի 5-ի «Հնչակյանների մասին», ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի 1924 թ. հունիսի 19-ի «Հնչակյանների մասին», ՌԿ(բ)Կ Անդրկովկասյան երկրային կոմիտեի՝ «Հնչակյան կուսակցության նախկին անդամներին ՌԿ(բ)Կ

շարքերն ընդունելու մասին» որոշումները, Հնչակյան կուսակցության գործադիր կոմիտեի 1924 թ. նոյեմբերի 19-ի դեկլարացիան և այլ միջոցառումներ: ՌԿ(բ)Կ կենտկոմի Քաղբյուրոն որոշեց՝ Կենտկոմի 1924 թ. փետրվարի 26-ի որոշման համապատասխան, Անդրերկրկոմի հաստատմամբ, Հնչակյան կուսակցության նախկին անդամներին կոմունիստական կուսակցության մեջ ընդունել ընդհանուր հիմունքներով: Առաջինը, առանց թեկնածուական ստաժի, բոլշևիկյան կուսակցության շարքերն անցավ Հնչակի հիմնադիրներից Մարո Նազարբեկյանը-Վարդանյանը, որը մինչ այդ խմբագրում էր կովկասյան հնչակյանների տպագիր օրգանը՝ «Գործավոր» թերթը: ՍՍՀՄ-ում հնչակյան կազմակերպությունները լուծարքվեցին, գործունեության ասպարեզը մնաց սփյուռքի հայ գաղթօջախները:

1923 թ. նոյեմբերի 20—23-ը Երևանում տեղի ունեցավ նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան համագումարը, որին մասնակցում էին 200 պատգամավոր: Համագումարը, որը ներկայացնում էր ավելի քան 4000 դաշնակցականների, քննարկեց դաշնակցության լուծարքը նախաձեռնող բյուրոյի գործունեությունը, դաշնակցության պատմության ու քաղաքականության վերագնահատումները, լսեց Ա. Մռավյանի զեկուցումը միջազգային քաղաքական դրության մասին, ընդունեց համապատասխան որոշումներ: «Դաշնակցությունն այլևս անելիք չունի»,— այս էր շարքային դաշնակցականների համագումարի գլխավոր հանրագումարը: Դատապարտելով դաշնակցության անհեռատես ու արկածախնդիր քաղաքականությունը, հավաստելով նրա գաղափարական-քաղաքական սնանկությունը, համագումարը «Բոլոր շարքային դաշնակցականներին» ուղղված կոչում առաջարկում էր. «Հեռանալ դաշնակցությունից, լուծել դաշնակցական կազմակերպությունները, ազատագրվել դաշնակցության հակաաշխատավորական մտայնությունից և ընդունելով երրորդ ինտերնացիոնալի պլատֆորմը, հարել տեղական այն կազմակերպություններին, որոնք պայքարում են երրորդ ինտերնացիոնալի դրոշի տակ կապիտալիզմի դեմ, մի պայքար, որի հաղթանակից է կախված համաշխարհային աշխատավորության հետ, նաև Հայաստանի բանվորների և գյուղացիների բախտը»[70]: Համագումարն անվավեր համարեց այն բոլոր

---

70 «Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը: Ստենոգրաֆիկ արձանագրություն», Երևան, Տրեստի առաջին տպարան, 1924, էջ 131:

մանդատները, որ դաշնակցության ղեկավար օրգանները ավել էին այս կամ այն խմբակին կամ անհատին»[71]: Դաշնակցության քայքայման պրոցեսը շարունակվեց մինչև 1928 թվականը: Քաղաքականապես մոլորված շարքային շատ դաշնակցականներ աստիճանաբար հեռացան կուսակցությունից և լծվեցին հայրենիքի շինարարության ազնիվ գործին:

Պատմությունից դասեր չքաղածները քողարկելով իրենց քաղաքական դեմքը, թաքնվեցին և աշխատեցան հատկապես գյուղատնտեսության կոլեկտիվացման ժամանակաշրջանում, 1930-ական թվականներին, կազմակերպելով կուլակային-բանդիտական խռովություններ: Դաշնակցությունը իր գործունեությունը փոխադրելով արտասահման՝ սփյուռքահայության շրջանները, դարձավ հակակոմունիզմի թունոտ զենք:

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների քաղաքական պայքարի շնորհիվ լուծարքվեցին հայկական մենշևիկյան, էսեռական, կադետական, «սպեցիֆիկյան» և բուրժուական գաղափարախոսությունը կրող, սոցիալիզմին խորթ կազմակերպությունները:

* * *

Մարքսիզմի զարգացման լենինյան փուլում ժողովուրդների բարեկամության ուղենիշը պրոլետարական, սոցիալիստական ինտերնացիոնալիզմն է, որի անմիջական ջատագովը բանվոր դասակարգն է՝ ամենահետևողական, հեղափոխական դասակարգը: Ինտերնացիոնալիզմը լիովին արտահայտում է հեղափոխական պայքարում միավորված Կովկասի պրոլետարիատի և աշխատավոր մասսաների կենսական շահերը:

Մարքսիզմ-լենինիզմի հաղթանակով հայ ժողովրդի կյանքում նշանավորվեց արմատական շրջադարձ: Պատմական կարճ ժամանակաշրջանում ՍՍՀՄ-ի եղբայրական մեծ ու հզոր ընտանիքում Սովետական Հայաստանը լիովին կերպարանափոխվեց: Պատմության գիրկն անցավ բազմաչարչար Հայաստանը: Նախապատերազմյան հնգամյակների հերոսիկայում հանրապետությունում վեր խոյացան ավելի քան 200 արդյունաբերական ձեռնարկություն և կառույց, այդ թվում՝ Երևանի սինթետիկ կաուչուկի և Արարատի ցեմենտի գործարանները, Լենինականի տեքստիլ և Կիրովականի քիմիական կոմ-

---

71 «Հայաստանի նախկին դաշնակցականների համագումարը: Ստենոգրաֆիկ արձանագրություն», Երևան, Տրեստի առաջին տպարան, 1924, էջ 129:

բինաները, Երևան ու Ջերմուկ, կյանքի կոչվեցին Ղափանի ու Ալավերդու լեռնահանքային՝ պղնձաձուլական ձեռնարկությունները, շահագործման հանձնվեցին Շիրակի և Սարդարապատի ջրանցքները։ Լիովին վերափոխվեց հայկական գյուղը։ Գյուղատնտեսության կոլեկտիվացումը, ոռոգիչ շինարարության զարգացումը, գյուղացու կյանքում կատարված սոցիալ-քաղաքական արմատական տեղաշարժերը, սովետական տնտեսությունների ու մեքենատրակտորային կայանների ստեղծումը և սոցիալիստական բազմաթիվ նոր միջոցառումները լենինյան կոոպերատիվ պլանի իրականացման լավագույն առհավատչյան են։

Հայ ժողովրդի ծաղկման ու բարգավաճման գործում մեծ դեր խաղաց կուլտուրական հեղափոխությունը։ Հայաստանը համատարած գրագիտության երկիր է, բարձր զարգացած սոցիալիստական ինդուստրիայի, առաջավոր գյուղատնտեսության, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական, ինտերնացիոնալիստական ծաղկող մշակույթի, գիտության, գրականության երկիր։

Վ. Ի. Լենինի հանճարով կյանքի կոչված Անդրկովկասյան ֆեդերացիան, որը գործեց շուրջ 14 տարի, հանդիսացավ այն ամուր հիմնաքարը, որի վրա բարձրացավ երկրամասի ժողովուրդների լենինյան անխախտ բարեկամության ամրոցը։ Քիչ փոթորիկներ, անցանկալի երևույթներ, դիմադրություն և թշնամական հարձակումներ չեղան Անդրֆեդերացիայի կազմավորման ճանապարհին։ Բայց դրանք բոլորն էլ վնասազերծվեցին, հանուն եղբայրական հարաբերությունների ամուր հաստատման, հանուն ազգային հարցի լենինյան լուծման։ Ֆեդերացիան երկրամասի ժողովուրդներին կոփեց պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով։

Սոցիալիստական շինարարության զարգացման, ժողովուրդների բարեկամության ամրապնդման, սովետական պետության պաշտպանության ու հզորության բազմապատկման և այլ ասպարեզներում մատուցած մեծագույն ծառայությունների համար Սովետական Հայաստանը պարգևատրվել է Լենինի երկու, Հոկտեմբերյան հեղափոխության և Ժողովուրդների բարեկամության շքանշաններով։ Կառավարական չորս բարձր պարգևները մեծ խորհուրդ ունեն վերածնված հայ ժողովրդի համար։ Գոտեպնդված նվաճումներով, Սովետական Հայաստանի աշխատավորները, կոմունիստական կուսակցության իմաստուն ղեկավարությամբ, պայքարում են ՍՄԿԿ Կենտկոմի որոշումների իրականացման համար։ Ստեղծագործ աշխատանքի հևքը ամենուրեք հնչում և արգասավորում է

633—37

կյանքը Զանգեզուրի ստորերկրյա հորիզոնականներում, Արարատյան և Շիրակի բերքառատ դաշտերում, Լոռվա հիասքանչ սարերում, Արփա-Սևան ջրատարի կառույցում, արդյունաբերական ձեռնարկություններում, շինարարական հրապարակներում։

Սովետական կարգերի հաստատմամբ մարքսիստական գաղափարների տարածումը Հայաստանում թևակոխեց մի նոր շրջան՝ սոցիալիզմի կառուցման, սոցիալիստական մեծ վերափոխությունների, մարքսիզմ-լենինիզմի հաղթանակի, կոմունիզմի կառուցման ժամանակաշրջանը։

ՑԱՆԿԵՐ*

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբեղյան Պ. 306, 334
Աբովյան Գ. 455
Աբովյան Լ. 306
Աբովյան Խ. 176, 193
Աբրահամյան Լ. 58
Աբրահամյան Մ. 513
Աբրիխիմով Վ. 63
Ադոնց Ի. 519
Ադոնց Հ. 389
Ադոնց Մ. 39—41
Ադամյան Հ. 163, 287, 314, 322, 323, 400, 565
Ազիզբեկով Մ. 117, 121, 123, 124, 208, 335, 372, 406, 408—410
Աթաբեկյան Աստղիկ 512
Աթաբեկյան Արշակ 341, 363, 364, 456, 457, 530
Աթաբեկյան Լևոն 539—542, 555, 556
Աթաբեկյանց Հովսեփ 270, 271, 308, 310
Աթաբեկյան Միքայել 553
Աթարբեկյան Գ. 130, 168, 206, 317, 326, 334, 335, 442, 549, 551
Աթոյան Հ. 551
Ալաջալովա Ն. 150, 389
Ալավերդյան Ստ. 206, 320, 343, 473, 478, 481, 482, 486, 494, 495, 498, 499, 501, 502, 506
Ալավերդով (Ալավերդյան) Կ. 68, 130
Ալլերտ Մ. 21, 22
Ալեքսանդր II 146
Ալեքսանդր III 146
Ալեքսեև Վ. 498
Ալիլուև Ս. 64, 103
Ալիխանյան Գ. 471, 473
Ալյոշա 152
Ակն-եանցի (Նազարբեկ) 257
Ակնունի 561
Ահարոնյան 195, 197
Աղաբաբյան Մ. 519
Աղաբաբով Գ. 471
Աղամիրյան Ա. 421
Աղայան Ծ. 57, 75, 341, 359, 407, 429, 432, 435, 437, 439, 450, 552
Աղայան Ղ. 176, 179
Աղայան Մ. 499
Աղաջանյան Ն. տե՛ս Ալաջալովա Ն.
Աղբալյան Ն. 543
Ամաշուկելի Յ. 335
Ամատունի Էգ. 163, 335
Ամիրխանյան Շ. 442, 449, 480, 493, 498, 500, 501, 511, 512, 517, 520, 549
Ամիրյան Ա. 192, 195, 198, 204, 320, 355, 424, 539—541
Այաքս տե՛ս Շահումյան Ս.
Այվազյան Կ. 498, 501, 512
Անանիկյան Բ. 232, 239, 534, 552
Անանուն Դ. 177, 198, 199, 232, 241—

* Կազմեց Ա. Հ. Շաղգամյանը

244, 536, 557, 560—562
Անդրանիկ 416—418
Անդրեևիչ Օտտո 507
Աշրաֆյան Զ. 450
Աշուրա 367
Ապրեսյան Ա. 477
Առաքելյան Հ. 350, 553
Առաքելյան Միսակ 117
Առաքելյան Միր. 117
Առուստամյան Լ. 169, 477, 513, 519
Ասատրյան Մ. 519
Ավագյան Բ. 415
Ավագյան Գ. 275
Ավագյան Ս. 424
Ավանեսյանց Ալեք. 328
Ավանեսով Վ. 292, 311, 327—330, 358, 389, 440, 441, 448, 449, 454, 457, 458
Ավգարբեգյան Բագ. 260, 280, 281, 306, 565
Ավենարիուս Ռիխարդ 133, 136, 232, 234
Ավետիսյան Ս. 230, 324
Ավետիսյան Վ. 96
Ատենյան Ս. տե՛ս Կասյան Ս.
Արազի Մ. 50, 194
Արամյանց 56
Արասխանյանց Ավ. 279, 280, 308
Արգումանյան Բ. 512
Արգումանյան Մ. 58
Արգումանյան Ն. 519
Արիսյան 275
Արթունյան Ս. 492
Արծրունի 198
Արկոմեդ Ս. տե՛ս Ղարաջյան Գ.
Արմանդ (Ինեսա) 365, 377, 569
Արշարունի Արշ. 311, 312
Արվելաձե Պ. 206, 334—339, 345, 410
Արսեյրոդ Լ. 304
Աֆանասև Մ. 141
Աֆանասև Ֆ. 103
Աֆրիկյան Խ. 553

Բաբայան Աշոտ 473
Բաբայան Արշակ 446
Բաբայան Պ. 519
Բաբայան Փ. 519
Բագրաձե Ա. 64
Բազազ-Ադաջանյան Գ. 555, 556
Բազարով Վ. 133
Բաժանուկի 68
Բակունին Ա. 254
Բակունին Մ. 268
Բակունց Ե. 389, 518, 531
Բաղդասարյան Ա. 551, 552
Բաղդասարյան Բ. 519
Բաղդասարյան Ս. 389
Բաղդասարյան Վ. 68, 169
Բայթունի Գ. 497
Բանվոր Ճանիլ տե՛ս Միքարյան Մ.
Բանվորյան Ս. 512, 565
Բատիկյան Բ. 474, 481, 498
Բարաթով 56
Բարսեղ 540
Բարսեղյան Ա. 542
Բարսով տե՛ս Ցխակայա Մ.
Բասման Ն. 107, 315
Բեբել Ա. 54, 104, 111, 162, 182, 207, 254, 313, 325, 431, 432, 567
Բեգլուն Հմ. 50, 389, 391
Բեժանյան տե՛ս Կամարի Հակոբ
Բեժանյան Ճ. 131
Բել Գ. 13
Բելինսկի Վ. 170, 175, 198, 243
Բելոբորոդով Ա. 508
Բեկկեր Ի. 161
Բեկզադյան Ա. 5, 50, 136, 138, 165, 314, 324, 358, 366—368, 393, 510, 521, 524, 526, 529
Բեյլիս 303
Բեռնշտայն Է. 14, 115, 235, 567, 568
Բերբերյան Ա. 494, 498, 511
Բերինով Գ. 473
Բերկլի 134, 136
Բերման Յա. 133
Բերնարդս 385
Բժեզինսկի Զ. 21—23
Բժշկյանց Հ. տե՛ս Գայ
Բիձա տե՛ս Ղարաջյան Գ.
Բիչերախով Լ. 419
Բլագոև Դ. 276, 381, 382, 385
Բորքիշե 528

Բոգդանով Ա. 133, 138, 140, 150, 152, 153, 155, 232, 281, 385
Բոյցով 408
Բոնչ-Բրուևիչ Վլ. 110
Բորյան Բ. 165, 168, 225, 230, 335, 346, 347, 358, 367, 368, 389, 415, 434, 449, 456, 530
Բորշալինսկի տե՛ս Կախոյան Ա.
Բրեգիձե Գ. 63
Բրեժնև Լ. Ի. 11, 34
Բրեշկովսկայա Ե. 195
Բրդանունց Ի. 477
Բրուցե Լ. 140
Բուդաղյան Ա. 482, 489, 550
Բուլնիցկի 211
Բուրգիլաձե 82
Բուրդհարդ 261
Բուրջալով Է. 406

Գարիշե Ի. 415
Գաբրիելյան Հ. 232, 236
Գաբրիելյաններ 72
Գալաֆյան Ս. 275
Գալյորկա տե՛ս Օլմինսկի Մ.
Գալոյան Գ. 11, 39, 57, 359, 407, 450, 487, 494, 552
Գալստյան Լ. 519
Գամեր Արշ. 543
Գայ 327, 530
Գանդրունի Հ. 564, 565
Գասպարյան տե՛ս Կասպարով Վ.
Գարագաշյան Եր. 327, 447, 450, 454
Գարագաշ Ճ. 189, 192, 204, 327, 441, 447
Գարրոնովա-Կարուլկովա Մ. 278
Գարոդի Ռ. 14—19, 25, 26
Գեգենաշվիլի Ս. 63
Գեգեչկորի 356, 458
Գելֆոնդ Օ. 133
Գեհլեն Մ. 26
Գենկին Ե. 531
Գերցեն Ա. 170, 175, 179, 194, 268
Գյանջուցե Մ. 512
Գյախամանս Կ. 182
Գյուլբեխվյան Հ. 314, 324, 325, 454
Գյուլնազարյան Խ. 156
Գյուրջյան Հ. 398
Գոգոլ Ն. 175
Գոզունց Ա. 481, 486, 493, 496, 501—503, 511, 513
Գոլդբլատ 82
Գոլիկովա-Անանյանց Ե. 361
Գոնդաձե 82
Գորկի Մաքսիմ 50, 134, 150, 156, 170, 171, 173—175, 178, 188, 189, 193, 194, 229, 291, 369, 387, 388, 391, 398, 442
Գորցի Անդրեյ 21
Գորև Բ. (Իգորին) 361
Գրիգորյան Ալեք. (Սաշա) 481, 552
Գրիգորյան Արամ (Համր) 564
Գրիգորյան Գր. 181
Գրիգորյան Զ. 348
Գրիգորյան Ս. 493, 502, 503, 519
Գրիգուլա Ժ. 31
Գրիվարդ տե՛ս Վարդանյան Գր.
Գրյուն Գ. 263
Գրուզինյան-Վրացյան Ս. 543
Գուդմեն Է. 23
Գուլանյան Խ. 40
Գուլոյան Ար. 415
Գուչկով 219
Գուսև Ս. 108
Գևորգյան Մ. 306
Գևորգյան Ս. (Սադունի) 564

Դալմատով Ա. 310
Դանիելյան Գ. 473, 477
Դանիելյան Ն. 278
Դանուշ տե՛ս Շահվերդյան Դ.
Դաշտոյան Ռ. 119, 176
Դավիթաշվիլի Մ. տե՛ս Ստեփանով Մ.
Դարբինյան Ռ. տե՛ս Չիլինգարյան Սրտ.
Դարվին Չ. 160
Դերոբին Ա. 394
Դեդուշկա տե՛ս Մելիքյանց Մ.
Դեմոկրիտ 158
Դենեժկին Ս. 555
Դենիկին 392, 404
Դենստերվիլ 419
Դզնունի Գ. 450
Դիկշտեյն Ս. 257, 313, 319

Դիցգեն 138
Դյուկլո Ժ. 276
Դոբրոլյուբով Ն. 170, 175
Դոյչեր Ի. 33
Դոյչինով Դ. 385
Դոստոևսկի Ֆ. 437
Դովլաթյան տե՛ս Դովլաթով Ի.
Դովլաթով Ի. 508, 517, 520, 521, 524, 549
Դրյուկով Պ. 478
Դրո տե՛ս Կանայան Դր.
Դրևս Ա. 300, 301
Դուման Նիկ. 542

Եղիազարյան Ս. 548
Ենգիբարյան Մ. 513
Ենուկիձե Ա. 225, 315, 372—374, 457
Եսայան Տ. 553
Եվա 154
Երեմյան Վ. 320, 331, 448, 450, 454, 455, 491, 530
Երզնկյան Ա. 314, 368, 565, 566
Երվանդ Սաֆո տե՛ս Մուրադյան Ե.

Զապորսկի 431
Զասուլիչ Վ. 279, 312
Զավարյան Ս. 154
Զավոդովսկիներ 303
Զարգարյան Հ. 105, 473, 482
Զարմայր տե՛ս Աշրաֆյան Զ.
Զեմլյաչկա Ռ. 108, 372
Զոհրապ 194
Զոմբարտ Վ. 115
Զորգե Ռ. 277
Զուրաբով Ա. 140—142
Զունգով Ի. 385
Զուրաբյան Ա. 108, 314, 315, 319, 359, 360, 487, 565, 566
Զևին Յա. 150, 410

Էլիավա Շ. 316, 508, 517
Էլիստա 303
Էյնշտեյն 303
Էնգելս Ֆր. 5, 6, 8, 13, 14, 52, 81, 104, 106, 112, 115, 130, 133, 135, 156, 157, 159, 160, 198, 199, 215, 232, 234, 236—239, 243, 257, 258, 260, 263—274, 276, 278, 279, 281, 287, 288, 294, 295, 299, 305, 308—311, 313, 322—327, 329, 332, 372, 392, 447, 452, 459, 461, 465, 488, 499, 509, 538, 565
Էպիկուր 158
Էսսեն Մ. 124, 360
Էսխաշվիլի Վ. 128
Էվոյան Ս. 56, 131, 354

Թագվորյան Հովհ. 386
Թադևոսյան Տ. 470, 543
Թաթարյան Հ. 519
Թաթիկյան Վ. 450
Թագիանոսյան Տ. 550
Թարախչյան Վ. 335, 442, 511
Թարխանյան Կ. (Սուրեն) 548
Թոդրիա Ս. 315
Թովմասյան Ա. 497
Թովմասյան Հար. 519
Թորգոմյան Ս. 447
Թորոսյան Պ. 490
Թոփչյան Ե. 539, 541
Թումանյան Ան. 63, 131
Թումանյան Աշ. 169
Թումանյան Հովհ. 176, 194, 244, 245, 543, 549
Թումանյան Հովս. 519

Ժիտոմիրսկի Յա. 379
Ժորդանիա Ն. 61, 71, 105, 222, 242, 364, 375, 458, 566

Իգլա 207
Իզմիրլյան Տ. 564
Իզրայելով 63
Իլյին Վ. տե՛ս Լենին Վ. Ի.
Իմամ-Դաշինսկի 415
Ինժեներ տե՛ս Առաքելյան Միք.
Ինճիկյան Հ. 361
Իշխանյան Բ. 198, 199, 232, 235, 242, 258, 556, 560—562
Իսախանյան Տ. 556, 560
Իսահակյան Ալեք. 472
Իսահակյան Ավ. 176, 194, 276

Իսահակյան Գ. 450
Իսահակյան Հ. 209—211
Իստոմին 507
Իսրայել Օրի 326
Իվանյան Ա. 531
Իրտիբարյան Խ. 519

Լադենբուրգ Ռ. 303
Լալայանց Ի. 313, 358, 359
Լապատին Գ. 278
Լասսալ 257
Լավրենտև Յա. տե՛ս Քարթվելիշվիլի Լ.
Լավրով Պ. 125, 269, 312
Լաֆարգ Լաուրա 271
Լաֆարգ Պոլ 106, 257, 271, 272, 313, 572
Լերանիձե 82
Լեգրան Բ. 507, 516, 517, 523, 526—529
Լեժավա Ն. 335
Լելիաշվիլի Գ. 105
Լենին Վ. Ի. 5—8, 12, 14, 16, 18, 22, 26—29, 33, 34, 39—42, 46, 48—52, 54, 55, 57, 58, 71, 80—82, 90, 98, 102—109, 111—113, 116, 120, 121, 124, 125, 128, 130, 133—140, 142, 149—151, 163—168, 170—172, 175, 176, 179, 182, 183, 185, 186, 189—193, 199, 206—210, 213, 214, 217, 218, 222—226, 235, 236, 241, 242, 245, 247, 257, 261, 262, 264, 269, 272—274, 277, 288—301, 303—308, 311—314, 316, 317, 319, 324—327, 329, 330, 332, 335, 338—342, 345—349, 351—353, 355—381, 385—401, 408, 411, 413—415, 417—422, 431, 432, 437—439, 441—443, 446, 448, 449, 452, 453, 455—459, 461—467, 471, 474, 475, 489, 491, 492, 498—500, 507, 512, 518, 522, 524, 525, 530, 534, 544, 551, 555, 556, 558—560, 569, 571—573, 577
Լենցման Յա. 372
Լեո 539, 543
Լեսենց տե՛ս Նազարբեկյան Ավ.
Լեսսներ Ֆ. 268
Լերմոնտով Մ. 170, 175
Լիբեր 465
Լիբկնեխտ Կ. 54, 162, 379, 387, 432, 462
Լիբկնեխտ Վ. 104, 244, 313, 455
Լիսինյան Լ. 390
Լիսինովա տե՛ս Լիսինյան Լ.
Լիվի տե՛ս Հովսեփյան Հ.
Լիֆշից Լ. 166
Լյադով Մ. 108, 361
Լյոնաև 325
Լյուբոմիրսկի 365
Լյութեր 18
Լյուդվիկով Խարիմովիչ տե՛ս Չերնոմազով Մ.
Լյուքսեմբուրգ Ռ. 54, 280, 281, 432, 439, 462, 572
Լոզյան Բ. 334
Լվով 201
Լուիզին Ի. 103
Լուկաշին Ս. 327, 389, 445, 454, 480, 530, 531
Լունաչարսկի Ա. 107, 110, 362, 388, 398, 432
Լուսինյան Ն. տե՛ս Գարագաշ Եր.
Լևիցկի Բ. 26
Լևոնյան Գ. 155

Խաժակ Գ. 543, 570
Խալաթյան Ա. 358
Խանազատ Ռ. 564
Խանզադյան Ց. 306
Խանոյան Ս. (Սերգո) 119, 128, 192, 206, 314, 318—321, 331, 338, 349, 477, 478, 481, 491—493, 501
Խանջյան Ա. 305, 473, 477, 481, 482, 489, 494, 506, 517, 520, 521
Խաչատրյան Անդ. 519
Խաչատրյան Համբ. 473
Խաչատրյան Մ. 555
Խաչատրյան Վ. 132
Խաչիկ Ա. 427
Խաչո տե՛ս Կախոյան Ա.
Խատիսով Ա. 458, 496
Խոյլունց Ա. 519
Խոնդկարյան Արշ. 548

Խորենի Վահան (Գրիգորյան) 232, 543
Խորխոռունի Վ. 555
Խրիմյան Հայրիկ տե՛ս Խրիմյան Մ.
Խրիմյան Մ. 536
Խրիստովսկի 498
Խումարյան Աշ. 64, 128, 180, 314—319, 433, 454
Խուրշուդյան Աս. 519

Ծատուրյան Ալեք. 556, 557
Ծատուրյան Ռ. 556, 557
Ծերեթելի 342, 458
Ծոցիկյան Ս. 275
Ծուլուկիձե Ս. (Սաշա) 111, 112, 336

Կալինին Մ. 103
Կախոյան Ա. (Բանվոր Խեչո) 56, 61, 128, 132, 150, 206, 358, 368, 369, 471, 478, 481, 526
Կամարի Հակոբ 192, 194, 202, 344, 345, 498, 518, 519
Կամենսկի 526
Կամո 50, 140, 314, 315, 358, 366, 379—381, 384—387, 395, 414, 415, 417, 420, 421
Կան Գ. 21
Կանայան Դրաստ. 547
Կանտ 232, 234
Կասյան Ս.* 5, 50, 116, 118, 119, 128, 136, 145, 165, 168, 169, 186, 187, 202, 210, 225, 246, 291, 299, 314, 316, 320, 322, 331, 341, 355, 358, 433, 449, 458, 471, 475, 477—483, 486, 488, 491—493, 501, 510, 511, 521, 524, 525, 528, 529, 549
Կասպարով Ս. տե՛ս Կասպարով Վ.
Կասպարով (Կասպարյանց) Վ. 165, 225, 314, 324, 325, 358, 371—378
Կաստրով տե՛ս Ժորդանիա Ն.
Կասումով Մ. 474
Կարագուլյան Գ. 448, 450
Կարախան Լ. 389
Կարախանյան տե՛ս Կարախան Լ.

* 331 էջում Հ. Կասյանի փոխարեն՝ Ս. Կասյան

Կարախանյան Հովս. 175, 176, 182, 424
Կարապետյան Հ. 322, 368, 376, 471, 494
Կարաև Ա. 508
Կարինյան (Գաբրիելյան) Ա. 50, 176, 177, 181, 192, 193, 198—200, 202, 224, 225, 229, 327, 349, 355, 358, 391, 392, 410, 424, 434, 454—457, 530, 537, 545, 561, 562
Կարմիրյան Բ. 543
Կաուցկի Կ. 14, 223, 239, 270, 281, 282, 324, 561, 570
Կեցխովելի Լ. 105, 112, 336
Կեցխովելի Վլ. տե՛ս Կեցխովելի Լ.
Կիասով (Կիասաշվիլի) Ի. 339, 343
Կիրպիչև Ն. 268
Կիտաուր Ս. 564
Կիրեև 410
Կիրով Ս. Մ. 317, 318, 339, 357, 394, 443, 492, 493, 508, 512, 517
Կլեմանսո 457
Կնունյանց Բ. 5, 50, 69, 108, 123, 136, 145, 147, 157, 170, 209, 210, 212, 215—218, 220, 313—315, 319, 322, 324, 358—361, 373, 378, 379, 393, 443, 537, 560
Կնունյանց Տ. 373
Կոգան Ի. 103
Կոգարաշյան Ավ. 427
Կոգորենկո Ն. 103
Կոլեսնիկովա Ն. 410
Կոլոնտայ Ա. 106, 377
Կոնդուրով 76
Կոստանյան Հ. 314, 454, 455, 477, 486, 501, 511, 512, 515—517, 520, 521, 549
Կոստանյան Ն. 50
Կորգանյան (Կորգանով) Գ. 340, 341, 378, 410, 411, 415, 416
Կորխմազյան Մ. 477
Կորոստելենկո Ի. 335
Կրապոտկին Ա. 253, 254
Կրասիկով Պ. 107
Կրասին Լ. 103
Կրեստինսկի Ն. 513
Կրժիժանովսկի Գ. 126, 360
Կրիվոպյատով 470

Կրուպսկայա Ն. Կ. 104, 107, 113, 137, 166, 168, 186, 187, 210, 226, 301, 342, 361, 364, 365, 370, 374—378, 380, 387, 396, 398, 441
Կուզիկյան Գ. (Նալիմ) 557, 561
Կուզյան Երվ. 230
Կուզնեցով Ն. 164, 341, 415
Կուլիշով 555
Կույբիշև Վ. 443
Կուն Բելա 276, 517
Կուտատովսկի Վ. 98, 103—107, 369
Կուսիկյան Հ. 281, 282
Կուրիշկո 526
Կուրղինյան Ճ. 194, 490
Կուրսել Ն. 531

Հաբեթ 539
Հակոբյան Ա. 552
Հակոբյան Գ. 503
Հակոբյան Հ. 50, 119, 126, 127, 132, 149—156, 176, 177, 192, 194, 202, 210, 225, 441, 491
Հակոբյան Ս. 234
Համազասպ 419
Համբարձումյան Ս. 324, 531
Հայկունի Գ. 194, 327, 448—450, 454—456, 458, 459
Հայնե Հենրիխ 159
Հայրյան Նիկ. 519
Հանեսօղլյան Գ. 335, 493
Հասրաթյան Մ. 493
Հարությունյան Ար. 519
Հարությունյան Բ. 498, 500, 518
Հարությունյան Գ. 41, 43, 79, 477
Հարությունյան Մ. տե՛ս Շիրականի
Հարությունյան Ս. 553
Հեգել 254
Հերվե Գ. 567, 568
Հյուգո Վիկտոր 316
Հովհաննիսյան Աշ. 5, 206, 287, 314, 323—327, 343—345, 355, 358, 391, 444, 454, 456, 493, 549
Հովհաննիսյան Արշ. 230, 233, 548
Հովհաննիսյան Գ. 230, 324, 470
Հովհաննիսյան Լ. 335
Հովհաննիսյան Հ. 202, 355
Հովհաննիսյան Մ. տե՛ս Վարանդյան Միք.
Հովսեփյան Հ. 327, 448, 450, 454, 455
Հովսեփյան Ս. 157, 225, 229, 230, 246, 314, 349, 423, 424
Հովսեփյան Վ. 128, 169
Հուսեյնով 517

Ձերժինսկի Ֆ. 315, 390
Ձիթողցյան 61

Ղազանչյան (Բարայան) Հ. 555, 556
Ղազանչյան Տ. 418
Ղազանչյան Վ. 497, 526
Ղազարյան Արշ. 473, 481, 543
Ղազարյան Արտո 511, 516
Ղազարյան Գ. 194, 202, 424
Ղազարյան Լ. 169, 501—503
Ղազարյան Կ. 493
Ղալաչյան Գ. 169
Ղալթախչյան Տ. 511—513
Ղավալյան Ա. 477, 519
Ղարագյոզյան Ա. 519
Ղարագյոզյան Բ. 519
Ղարաջյան (Մավր) Գ. 105—107, 153, 209, 220—224, 308—310, 324, 376, 490, 565, 566
Ղարիբջանյան Բ. 169, 337, 338, 345, 347, 470, 493, 498, 499, 502, 503
Ղարիբջանյան Գ. 39, 58, 91, 136, 334, 335, 358, 376, 407, 449, 450, 494
Ղորղանյան Գր. տե՛ս Կորղանյան Գ.
Ղուկասյան Ղ. 378, 478, 479, 481, 482, 486, 489, 490, 494, 496—498, 501, 506

Մագնեյչանյն Ն. 130
Մալաքիա-Տորոշելիձե Մ. 340, 363, 471, 475
Մալխա Մ. 27
Մալիգին Ի. 415
Մալխասյան Ալեք 68, 69
Մալխասյան Հ. 69
Մալխասով տե՛ս Մալխասյան Հ.
Մալումյան Խ. տե՛ս Ակնունի
Մալունցյան Բ. 446
Մախ Էռնեստ 133, 134, 136, 232, 233

Մախարաձե Ֆ. 105, 316, 336, 340, 341, 508
Մակարյան Ա. 248
Մակարով Լ. 191, 335
Մակինցյան Պ. 275, 292, 296, 305, 327, 454, 530
Մակքրայդ Մ. 26
Մաչիկյան Վ. տե՛ս Երեմյան Վ.
Մամեդյարով Մ. 474
Մամիկոնյան Ստ. 553
Մայակովսկի Վլ. 276, 277
Մայիլյան Ա. 519
Մայսուրյան Ա. 519
Մանդալյան Թ. 480, 493, 502
Մանուկյան Գ. 96
Մանուկյան Ռ. 502, 503
Մանուկյան Ս. 156
Մանսուր տե՛ս Մուավյան Ա.ս.
Մանուչարյան Մ. 169, 273, 274, 314
Մանուչարյանց Շ. 391
Մաշուրյան Մ. 477, 498, 518
Մասխաշվիլի Գ. (Գիգո) 383, 386
Մասուրյան Ս. տե՛ս Վրացյան Ս.
Մատինյան 513
Մատիչկո Պ. 498
Մարեկ Ֆ. 14, 18
Մարկոսյան Հ. 470
Մարկուզե Հ. 23
Մարտիկյան Ս. 50, 327, 415, 456, 473, 477, 478, 481, 486, 493, 502, 531
Մարտինով 166
Մարտիրոսյան Ա. 76, 169
Մարտիրոսյան Ի. 455
Մարտիրոսյան Կ. 327
Մարտիրոսյան Ս. տե՛ս Ավանեսով Վ.
Մարտունի Ալ. տե՛ս Մյասնիկյան Ալ.
Մարքս Կ. 5, 6, 8, 11, 12—14, 16, 18, 20, 21, 40, 52, 105, 106, 112, 113, 115, 130, 133—135, 138, 149, 156—163, 181, 198, 214, 215, 230—232, 234, 236—239, 242, 243, 247, 254, 257, 258, 260—274, 276—282, 287—289, 292—295, 299, 305, 308—311, 313, 322—327, 329, 332, 347, 355, 372, 392, 426, 438, 447, 448, 452, 459, 461, 465, 488, 499, 500, 538, 545, 561, 565, 569—571
Մաքսիմովսկի 59
Մդիվանի 528
Մելիքյան Արշ. 132, 136, 138, 140, 157, 165, 169, 206, 246, 326, 331, 334, 346, 358, 402, 428—439, 472, 478, 479, 481, 487
Մելիքյան Ավ. 430, 431
Մելիքյան Գ. 497
Մելիքյան Հ. 57, 60, 131
Մելիքյանց Մ. 56, 59, 119, 128, 192, 198, 202, 349, 355, 373, 393, 428
Մելիք-Ազարյան 76
Մելիք-Գրիգորյան Գ. 50
Մելիք-Հովսեփյան Հովս. 324
Մելիք-Վարագյոզյան Գ. 553
Մելիք-Շահնազարյան Գ. 555
Մելիք-Օհանջանյան Կ. 432, 438, 439
Մելոյան Գ. 450
Մելքոնյան Ա. 331, 496, 498, 502, 505
Մեհմեդ Սադըկ Արա 423
Մեհրաբյան (Հակոբյան) Գ. 502
Մեղավորյան Հ. 308
Մեղատունյան Վ. 543
Մենախորյան Վ. 548, 555, 557
Մես Խոսե 276
Մենեոլինգ Մ. 182
Մերինգ Ֆ. 54, 133, 280, 281, 462
Մերկուրով Ս. 63
Միլյուկով 201
Միլտոն Ֆիլիա 137
Միխա Երկրորդ (Միխո) տե՛ս Ձողրիաշվիլի Ձ.
Միխայլով Բ. 526
Միխայլով Կ. 77
Միխայլովսկի Ն. 232, 434
Միկոյան Ա. 192, 195, 197, 198, 201—204, 206, 320, 326, 339, 341, 349, 352, 355, 356, 358, 391, 403, 404, 407, 415, 421, 423—425, 441, 450, 474, 475, 492, 508, 512, 523, 544
Միհրան տե՛ս Քեշիշյան Գար.
Մին Դորա 153
Մինասյան Մ. 247, 544, 545
Միտրոխին Լ. 423
Միտրոֆանով 447

Միրաքյան Մ. 50, 65, 68, 80, 315
Միրզոյան Լ. 474
Միրզոյան Ս.* տե՛ս Բանվորյան Ս.
Միրսկի Դ. տե՛ս Կամո
Միրայելյան Խ. 519
Միրսայելյան Ք. 198
Միշյան Լ. 551
Միշյան Ս. 391, 392
Մկոյան Ա. տե՛ս Միկոյան Ա.
Մկրտչյան Քր. 434, 477, 498, 518, 519
Մկրտումյան Ե. 498
Մյասնիկյան Ալ. 5, 111, 136, 138—140, 145, 157, 169, 170, 175, 199, 200, 202, 235, 246, 292—296, 305, 307, 311, 313, 314, 318, 321, 323, 327, 358, 387—389, 427, 433, 441, 448, 458, 503, 508, 530, 553, 556
Մյասնիկյան Ֆ. 387
Մյասնիկով 191
Մնացականյան Ար. 193, 313, 364, 388, 474, 507, 508, 519, 530
Մնեյան Գ. 62
Մոլլ Ի. 263
Մոլոտով Յու. տե՛ս Սոկոլովսկի Գ.
Մոնաքին Մ. 103
Մովիչ 465
Մովսիսյան Ի. 341
Մորուշ տե՛ս Բաղադ-Աղաջանյան Գ.
Մռավյան Ասք. 50, 68, 70, 72, 192, 193, 198, 204, 224, 225, 246, 314, 320, 327, 341, 349, 350, 355, 358, 391, 441, 449, 473, 477—482, 486, 488—492, 500, 510, 511, 516, 517, 524, 549, 575
Մռավլյան Ար. 530
Մրավյան տե՛ս Ամիրյան Ա.
Մուսայելյան Ս. 446
Մուսայելյան Ս. 332, 446, 496—499, 502—505
Մուրադյան Ե. տե՛ս Մուրադյան Ս.
Մուրադյան Գ. 57
Մուրադյան Ս. 158—162
Մուրացան 370

* 565 էջում Ա. Միրզոյանի փոխարեն՝ Ս. Միրզոյան

Յաղուբյան Ե. 513
Յաղուբյան Լ. 50, 68
Յաղուբյան Հ. 511, 513, 549
Յարոսլավսկի Եմ. 304, 367
Յուզբաշյան Ղ. 519
Յուժանին Մ. տե՛ս Շահումյան Ստ.
Յունուս տե՛ս Սպանդարյան Ս.
Յուշկևիչ Պ. 133, 232

Նազարբեկ Ավ. տե՛ս Նազարբեկյան Ավ.
Նազարբեկյան Ավ. 100, 272, 308, 310—312, 563, 564
Նազարբեկյան Արփ. 454
Նազարբեկյան Մարո 272, 308, 310, 312, 313, 575
Նազարեթյան Համ. 341, 358, 458, 508, 514
Նազարյան Ա. 497
Նազարյան Ստ. 198
Նալբանդյանց Միք. 175, 193, 194, 332, 379
Նանեիշվիլի Վ. 474
Նավասարդյան Բ. 570
Նավասարդյան Վ. 562
Նարիմանով Ն. 123, 316, 338, 410, 495, 508, 526
Նեկրասով Ն. 170—175
Ներսիսյան Մ. 493
Նիկոլայ II 47, 379, 380
Նիկոլաենկո 470
Նինոշվիլի 68
Նժդեհ 548, 550
Նոսկե 568
Նոսկով 360
Նուբար տե՛ս Ղարաջյան Գ.
Նուրիջանյան Ա. 332, 458, 481, 483, 486, 493, 495, 496, 501—506, 511, 514—517, 520, 521, 524, 543, 544, 549

Շաղունց Ս. 531
Շախաթունի Ս. 543
Շալյապին Ֆ. 398
Շահգելդյան Ա. 519
Շահգելդյան Վ. (Կարլ) 511, 516, 517, 520

Շահինյան Ա. 132
Շահինյան Մ. 332
Շահսուվարյան Ա. 225, 515—517, 531
Շահվերդյան Գ. 119, 128, 132, 150, 169, 340, 341, 471, 477, 478, 481, 482, 486, 510
Շահումյան Ե. 415
Շահումյան Լ. 387, 407, 415, 450
Շահումյան Ստ. 5, 50, 56—61, 67—69, 71, 72, 86—89, 90, 91—96, 98, 100, 108, 110, 115, 118—121, 123, 124, 128, 130, 132, 136—138, 140, 143—147, 149, 150, 152, 154—157, 165—176, 178—182, 186—188, 192, 193, 195, 197—202, 204, 205, 207, 208, 210, 212, 215, 216, 219, 225—227, 231, 240—246, 258, 260, 273—275, 281—286, 289, 291, 298, 311, 313—317, 319, 320, 322, 323, 335, 337—343, 345, 348, 349, 351—353, 355, 356, 358, 362—368, 372—374, 376, 379, 390, 393, 394, 405—410, 412—424, 427, 430—433, 437, 441, 452, 456, 457, 469, 489, 490, 499, 538, 541, 544, 560, 562, 563
Շահումյան Ս. 358, 387, 407, 415, 416, 421
Շամախյան Ե. 481, 511
Շանթ տե՛ս Միրարյան Մ.
Շանթուրյան տե՛ս Բաղաղ-Աղաջանյան Գ.
Շապովալենկո Ի. 334, 335
Շատունովսկայա Օ. 474
Շաումաշվիլի 470
Շելգունով Վ. 103
Շենդրիկով Գ. 141, 142
Շենդրիկով Ի. 141—143
Շենդրիկով Լև 141, 142, 144
Շինդարև 201
Շիրվանզադե Ալ. 194, 398, 431
Շիրակունի 175, 542
Շիֆֆերս 507, 529
Շկլովսկի Գ. 377
Շոտման Ա. 107
Շպիլման 152
Շվարց Ս. 166, 396
Շվեյցեր Վ. 168
Շտայնախ 303
Շուստով 67, 130
Շչենկո Տ. 175

Ոսկանյան Ռ. 481—483

Չալյան Միք. 519
Չար տե՛ս Մանուչարյան Մ.
Չարենց Ե. 551
Չեխով Ա. 170, 173, 175
Չերտանցև 303
Չերնիշևսկի Ն. 170, 175, 198, 243, 278, 473
Չերնոմազով Մ. 376
Չերչուորդ Լ. 27
Չիլինգարյան Արտ. 233, 245, 246, 534, 545, 551
Չիլինգարյան Ա. 281—286
Չիչերին 421
Չիրկով 173
Չխենկելի Ա. 158, 566
Չոդրիաշվիլի Զ. 105, 151, 154
Չուբար Վ. 511

Պալյան Եր. 556, 561
Պաժիտկով Կ. 40
Պայպս Ռ. 23
Պաշուտ 383
Պասադաս 32
Պավլով 303
Պատկանյան Ռ. 193, 194
Պարոնյան Հ. 446, 447
Պարխս Գ. 306
Պարտիզունի Վ. 297
Պեսկով 14
Պետրոսյան Պ. 473, 496
Պետրով Գ. 415, 544
Պետրով Կ. տե՛ս Կամո
Պետրովիչ 179
Պիկ Վ. 462
Պիճիկյան Գ. 39, 557
Պլեխանով Գ. 104, 120, 133, 138, 153, 157, 198, 220, 222, 223, 269, 270, 272, 289, 308, 309, 312, 313, 324, 362, 369, 372, 432, 436, 567—569

Պլեշկով Մ. 474, 508
Պլեվե 146
Պլատա Լ. 303
Պշեբորովսկի 303
Պոլուխին Վ. 420, 544
Պողոսյան Հովհ. 192, 194, 481, 485, 486, 510, 511, 513
Պողոսյան Պ. 473
Պոտյոմկինցիներ 78
Պրուդոն 263
Պուշկին Ա. 170, 175

Ջաբարլի 76
Ջամալյան Ա. 543
Ջափարիձե Ս. 121, 123, 124, 136, 143, 144, 149, 151, 154, 208, 335, 336, 338, 341, 367, 372, 374, 406, 409, 410, 421, 422, 544
Ջեֆեր 303
Ջիլավյան Ն. 482
Ջոխաձե 81, 82
Ջորջ Լոյդ 457
Ջունկովսկի 142

Ռադին Բ. տե՛ս Կնունյանց Բ.
Ռախմանինով Ս. 398
Ռամիշվիլի 566
Ռայնիս Յան 315
Ռաշիդ-բեկ տե՛ս Զուրաբյան Ա.
Ռաու Լենկաստեր Էդվ. 303
Ռեզինկով 431
Ռեկկոնե տե՛ս Ցխակայա Մ.
Ռեմիլ Ժան Ֆրանսուա 21
Ռիգգի Տ. 26
Ռիզել (Կնունյանց) Ֆ. 69, 360, 361
Ռիխարդ տե՛ս Աթարբեկյան Լ.
Ռյազանով 287
Ռոզենբերգ 30
Ռոժե դը Լիլ 125
Ռոմանովներ 378, 386
Ռոշեր 228
Ռուբեն տե՛ս Կնունյանց Բ.
Ռուսով տե՛ս Կնունյանց Բ.

Սալտիկով Շչեդրին 170
Սահակյան Բ. 169
Սահակյան Գ. 50
Սահակյան Մ. 450
Սահակյան Ս. 192
Սամեդով Վ. 40
Սանդալ 310
Սաշա տե՛ս Բորյան Բ.
Սապահ-Գյուլյան Ս. 563, 564, 567
Սասուն Կարո 504, 505, 548
Սարաջև 67, 130
Սարգիսբեկյան Գ. 548
Սարգսյան Գ. 496
Սարգսյան Ե. 548
Սարգսյան Հ. 548
Սարգսյան Մ. 50
Սարուխանյան Հովհ. 83, 169, 481, 486, 494, 495, 498, 501, 506
Սարսի Ս. 420
Սարուլյան Ա. 50
Սաֆարյան Ռ. 470
Սեմյոնով տե՛ս Շահումյան Ստ.
Սեմյոն Սավչուկ տե՛ս Կամո
Սեպուհ 502, 503, 505
Սերվան-Շրայբեր Ժ. 21, 22
Սիդորով Կ. 368
Սիլագաձե Մ. 136
Սիլանյան Հ. 518
Սիլին Օ. 528
Սիկորսկի Տ. տե՛ս Կասյան Ս.
Սիմակ 194, 204
Սիմոնյան Հ. 11
Սինկլեր Ն. 300
Սիրվարդ 158
Սլավին, Սլավա, Սլավիկ տե՛ս Կասպարով Վ.
Սկարյուկին Ս. 339
Սկուրատով 278
Սմիլգա Գ. 508
Սնարյան Ս. տե՛ս Հակոբյան Ս.
Սոդդի Ֆ. 302
Սոլնցև Ֆ. 415
Սոլովյան Հար. 297
Սոլովյան Հովակիմ 169, 182, 327
Սոկոլովսկայա-Մելիքյան Ե. 132, 429, 432
Սոկոլովսկի Գ. 67—69, 74, 130, 131, 309, 368, 434

Սողոմոնյան Ս. 519
Սպանդարյան Սպ. 50, 165—170, 173, 175, 176, 198, 314, 358, 370, 432, 433
Սպանդարյան Սուրեն 5, 53, 56, 60, 119, 121, 123, 128, 132, 136, 138, 140, 143—146, 149, 150, 155, 157, 198, 224, 246, 291, 316, 369—372, 379, 560
Սվերդլով Յա. 304, 443, 506, 544
Ստալին Ի. Վ. 111, 136, 143, 168, 336, 388, 414, 418, 421
Ստամբոլցյան Ս. 335, 421
Ստասովա Ե. 166, 168, 169, 361, 508, 517
Ստարցով 207
Ստեպանով Մ. 91, 336
Ստեփանյան Հ. 555, 556
Ստեփանյան Ս. 76
Ստոլիպին 120, 146, 188
Ստոպանի Ալ. 108, 147, 176, 180, 181
Ստրուգանով Ի. 39, 40
Ստուչկա Պ. 315
Ստուրուա Գ. 471
Ստուրուա Վ. 315
Սրապիոնյան Ս. տե՛ս Լուկաշին Ս.
Սուլթանգալիև Մ. 467
Սուլթանյան Ս. 117
Սուխարցև Ի. 410
Սունդուկյան Գաբ. 176, 194
Սուսան 194
Սուվորով Ա. 133, 134
Սուրգուչև Ի. 398
Սուրեն, Սուրենին տե՛ս Շահումյան Ստ.
Սուրենյան Ս. 493
Սուրին Ն. տե՛ս Հովսեփյան Ս.
Սուրխաթյան Հար. 163, 434, 435
Սևյան Ալ. 519
Սևյան Գար. 519
Սևյան Եղ. 498, 502, 503
Սևյան Վ. 232, 236

Վալադյան 543
Վահե տե՛ս Թոփչյան Ե.
Վաղարշյան Վ. 446
Վանդերվելդե Է. 567, 572
Վարանդյան (Հովհաննիսյան) Միք. 51, 52, 90—91, 178, 223, 231, 232, 236, 237, 239—241, 540, 542, 543, 561, 570, 572
Վարդանյան Ան. 193, 391
Վարդանյանց (Վարդանով) Ա. 176, 177
Վարդանյան Գր. 327, 448—450, 453, 454
Վարդանյան Հ. 557
Վարդանյան Մարո տե՛ս Նազարբեկյան Մարո
Վարդանյան Պ. 481
Վարդանյան Ս. 202, 458
Վարդանյան Վ. 482
Վարդոյան Գ. 105
Վարշավսկի 431
Վարոսյան Աղ. (Ասրան) 470, 504
Վացլով Սմ. 126
Վեզիրով Մ. 410
Վեյրուշիչ Մ. 141
Վեյդեմեյեր 266
Վերեսաև 173
Վերմիշյան Լ. 79
Վերմիշև Ալ. 358, 389, 391
Վիլսոն Վուդրո 442, 457
Վինիցկի 465
Վիպպեր Ռ. 301
Վիրապյան Մ. 502, 512
Վկերիոդով 82
Վ-ն տե՛ս Վարանդյան Միք.
Վշտունի Ա. 192, 194
Վոլոդարսկի 555
Վոլոսկի 75
Վոլֆ Վիլ. 278
Վոյնով 349
Վորովսկի Վ. 107, 110, 136
Վ. Տեր տե՛ս Տեր-Վահանյան
Վրացյան Ս. 252, 419, 547, 548, 550, 552, 562

Տանին Հ. 519
Տեր-Ավետիքով 130
Տեր-Գաբրիելյան Ս. 314, 324, 358, 389, 391—395, 410, 414, 415, 420, 458, 507, 511, 514, 517, 520, 521,

524, 530, 549
Տեր-Ղազարյանց տե՛ս Կասյան Ս.
Տեր-Գրիգորյան Աշ. 433
Տեր-Գրիգորյան Եկ. 433
Տեր-Դանիելյան Դ. տե՛ս Անանուն Դ.
Տեր-Կարապետյան Կ. 455
Տեր-Հակոբյան Հ. 548
Տեր-Հարությունյանց Մ. 358, 389, 390, 530
Տեր-Հովհաննիսյան Ա. 370
Տեր-Հովհաննիսյան Համ. 519
Տեր-Հովհաննիսյան Ոսկի 370, 371
Տեր-Հովսեփյան Լ. 50, 65, 68, 81, 130, 169, 206, 415
Տեր-Ղազարյան Ղ. 556, 560
Տեր-Ղազարյան Ն. 556, 560
Տեր-Ղազարյան Ճ. 304
Տեր-Մարտիրոսյան Ա. 502, 519
Տեր-Մինասյան Եր. 282—286, 306
Տերյան Վ. 58, 176, 178, 194, 292, 293, 295—297, 305, 311, 327, 330, 332, 355, 358, 379, 440, 441, 443, 448, 449, 454, 456, 459
Տեր-Պետրոսյան Արշ. 379
Տեր-Պետրոսյան Ջ. 517
Տեր-Պողոսյան Վ. տե՛ս Վաղարշյան Վ.
Տեր-Սահակյան Ա. 493, 496, 502, 503
Տեր-Սահակյան Գ. 455
Տեր-Սարգսյան Ա. 555
Տեր-Սիմոնյան Ասր. 329
Տեր-Սիմոնյան Դր. 275, 287, 304, 327, 329—332, 477, 480, 486, 491, 492, 494, 496, 501, 502, 511, 530
Տեր-Սիմոնյաններ 329
Տեր-Վահանյան Վահան (Վաղարշակ) 300, 303
Տեր-Վարդանյան Հովս. 450
Տերտերյան Ա. 248
Տերտերյան Հ. 548
Տիգրեն Դայեր 303
Տիմիրյազև Ա. 302, 303
Տիմոֆեյ տե՛ս Սպանդարյան Սուրեն
Տոլստոյ Լ. 82, 170—173, 175, 398
Տոմսոն Ջ. 302
Տոնոյան Հ. 494
Տրայչև Նիկ. 382, 385, 386
Տրայչև Ցվետա 382, 385
Տրեպով Դ. 140

Րաֆֆի 176, 194, 198

Ցետկին Կ. 54, 313
Ցխակայա Մ. 56, 61, 110, 132, 137, 138, 149—152, 154, 156, 336, 341, 369, 441, 471, 475

Ուզունյան Կ. 341
Ուլիբեկյան Լ. 493, 496, 502, 503, 511, 526
Ուլյանով Ալ. 103
Ուլյանով Դ. 107, 108
Ուլյանով Վլ. տե՛ս Լենին Վ. Ի.
Ուսպենսկիներ 303
Ուրիցկի 555

Փանյան Ա. 497, 498
Փանոս 276
Փափազյան Վ. 176, 179, 180
Փոթեյան Վ. 306

Քաթանյան Ռ. 128, 314, 390, 458
Քալանթար Ալ. 553
Քալաշյան Ս. 564
Քաջազնունի 417, 458
Քամթարաձե Ս. 340
Քարթվելիշվիլի Լ. 346
Քեթևան-Քեթո տե՛ս Տեր-Գրիգորյան Եկ.
Քեշիշյան Գար. 538, 539
Քյազիմ Կարաբեքիր 550

Օզոնյան Ա. տե՛ս Անդրանիկ
Օզոնյան Բ. 416
Օլմինսկի* (Վիտիմսկի) Մ. 107, 110, 372, 375
Օհանջանյան Խ. 502, 503, 511, 513
Օհանջանյան Հ. 496, 504
Օսիպով Մ. 549
Օտյան Եր. 248—254
Օրախելաշվիլի Մ. 318, 341, 508

---

* 372 էջում Օլիմինսկու փոխարեն՝ Օլմինսկի

Օրջոնիկիձե (Սերգո) Գ. 123, 149, 165—167, 318, 336, 372, 373, 394—397, 410, 411, 414, 422, 475, 508, 512, 521, 526, 528, 529, 551
Օրմինյան Մ. 512

Ֆելերյան Հար. 543
Ֆեոդոր 153
Ֆիգատներ Կ. 508
Ֆիլիպ Լ. 303
Ֆիշեր Է. 14, 18, 19, 25
Ֆիոլետով Ի. 103, 123, 335, 338, 341, 406, 409—411
Ֆոմար 568
Ֆոյերբախ Լ. 133
Ֆուրիե 391
Ֆորել Ավ. 303
Ֆրանգյան Երվ. 232, 233, 434
Ֆրանկոպոլ Եղ. 77
Ֆրանկոպոլ Աղ. 77
Ֆրանչեսկի Գ. 103

Азизбекова П. 359
Айзафт С. 142
Аконян Г. 407
Арутюнян А. 67, 387

Базылев Л. 54
Бибинейшвили Б. 387
Брейтерман 43
Букшпан А. 407
Бутник-Северский Б. 41

Григорьевский М. 142
Гулиев Дж. 359, 407
Гулишамбаров 39
Гусев К. 555

Драмиян Р. 398

Ерицян Х. 555
Ермак Р. 164

Жвания Г. 358, 450
Жорес Ж. 54, 89, 158, 432, 568

Зауерцапф Р. 54

Кабанов Т. 164
Карапетян С. 450
Коледова О. 54
Костян А. 14, 24
Кузьмин Б. 140

Лунц М. см. Григорьевский М.

Медведева-Тер-Петросянц* С. 387
Мелконян В. 43, 75
Момджян Х. 14

Найдус А. 54
Ноткин Б. 21

Обичкин Г. 450
Одуев С. 14
Орджоникидзе З. 475

Пакшивский В. 40
Пиш М. 54
Пономарев Б. 14, 554, 555

Ратгаузер Я. 407
Рогачев П. 571
Ронин А. 39

Слепов Л. 14
Соколов Р. 14

Товмасян С. 450

Ульяновский Р. 14
Ушаков А. 164

Федосеев П. 14, 19

Харманларян С. 358
Хоштария З. 39

Шаншиев Г. 450
Шитов Н. 467, 469
Штерн Л. 54
Charlot 91
Motia M. 27

* *387 էջում* Медведевой-Тер-Петросянц С.-*ի փոխարեն՝* Медведева-Тер-Петросянц С.

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ

Ադանա 228, 535
Ադրբեջան 37, 44, 49, 128, 292, 295, 307, 318, 321, 334, 352, 354, 406, 407, 409, 422, 423, 446, 468, 471, 474—476, 485, 494, 495, 498, 507—509, 511, 513, 517, 522, 523, 525, 526, 546, 547
Աթենք 257, 272, 276, 312, 382
Ախթալա 43, 56
Ախալցխա 543
Ախչկա-Կուլմա 422
Ախտա 548
Ալաշկերտ 229
Ալավերդի 40, 43, 44, 49, 56, 57, 59, 60, 75, 130, 164, 168, 211, 334, 339, 368, 577
Ալեքսանդրապոլ տե՛ս Լենինական
Ագին 502
Ագստաֆա 42
Ագուլ 417
Ամերիկա 21, 31, 32, 158, 160, 234, 257, 275, 311, 312, 377, 426, 463, 542, 564
Անատոլիա 228, 229
Անգլեգակիթ 473
Անգլիա 32, 196, 262, 426, 568
Անդրկասպիա 422, 447
Անդրկովկաս 37, 39, 41, 45, 49, 50, 58, 62, 65, 66, 75, 103, 105, 110, 116, 124, 130, 137, 144, 148, 149, 164, 165, 173, 186, 189, 191, 200, 205, 208—211, 213—215, 218, 219, 222—227, 273, 297, 299, 309, 310, 315, 317, 318, 320, 321, 323, 331, 334—336, 338, 340, 348—350, 352, 353, 354, 356, 368, 375, 395, 397, 405, 406, 408, 409, 417, 422—426, 438, 442, 443, 448, 452, 453, 455—458, 469, 470, 474—476, 490, 491, 495, 507, 508, 513, 519, 520, 522, 526, 536, 546, 552, 554, 557, 562—565, 574
Աշխաբադ 422, 447
Աշտարակ 473, 478, 487, 548
Ապարան 550
Ապոլդա 325
Առաջավոր Ասիա 228
Ասիա 482, 522
Աստրախան 142, 143, 179, 186, 225, 226, 241, 298, 315—317, 339, 365, 376, 395, 414, 415, 419—421, 440, 442, 443, 455, 475, 492
Ավստրիա 14, 22, 191, 462, 465
Ավստրո-Հունգարիա 460
Արագած 547
Արագածոտն 488
Արարատի շրջ. 550, 576
Արարատյան դաշտ. 416, 578
Արգենտինա 462
Արգինայի ձոր 506
Արխանգելսկ 103
Արմավիր 440, 442
Արմենի դաշտ 550
Արփա 578
Արևելք 23, 30, 126, 160, 308, 403, 407, 447, 482, 515, 522, 524
Արևելյան Սիբիր 104
Արևելահայաստան 6

633—38

Արևմուտք 11, 22, 89, 240, 398, 540
Արևմտյան Եվրոպա 46, 159, 262, 310, 447, 554
Արևմտյան Հայաստան 248, 403, 448, 449, 453, 454, 527, 535, 541
Աֆրիկա 160

Բաթումի 37—40, 47, 49, 50, 85, 105, 110, 111, 125, 167, 191, 223, 368, 383, 419, 564, 565
Բալախանի 142, 155, 372, 373, 433
Բալկանյան Ֆեդերացիա 464
Բայբուրդ 337
Բայիլովի բանտ 373
Բաշ-Ապարան 416
Բաշ-Գյառնի 547
Բաքու 37—42, 47, 49, 50, 53, 64—66, 75—77, 79—82, 84, 86, 88, 105, 110, 116, 117, 121, 123—125, 128—130, 141—147, 150, 151, 155, 157, 158, 165—167, 169—172, 175—177, 179—181, 191, 200, 201, 203, 206—208, 211—213, 219, 223, 225—228, 230, 245, 246, 275, 287, 290, 292, 296, 298, 299, 315, 317, 320, 323, 326, 332, 338, 339, 343, 344, 347, 348, 350—352, 355, 359—361, 363—365, 367, 368, 370, 372, 373, 376, 383, 386, 387, 390, 393—396, 402, 405—427, 434, 440, 443, 456, 465, 472, 474—477, 490, 506—508, 510, 511, 513, 515—521, 523, 525, 528—530, 541—544, 549, 555, 556, 561, 564, 565
Բելգիա 31, 380, 461
Բելոռուսիա 387, 388, 465, 466, 487
Բեյրութ 158, 505, 552, 565
Բեռլին 91, 158, 173, 273, 322, 370, 374, 379, 431, 439
Բեռն 364, 374, 377, 459
Բերկլի 26
Բիբի-Հեյբաթ 142, 226, 372
Բիթլիս 457
Բոյուք-Վեդի 490
Բոնն 158, 159
Բոստոն 247, 311, 542, 544, 564
Բորչալու 55—61, 65, 85, 121, 128, 129, 131, 150, 168, 213
Բոնակոթ 478
Բրեստ-Լիտովսկ 416
Բրյանսկ 361
Բրյուսել 263, 264, 278, 367
Բութանիա 543
Բուլղարիա 190, 275, 276, 380, 384, 461, 563
Բուխարեստ 564
Բուրգաս 385

Գաճիրե 51, 240, 542
Գայանյան դպրոց 309, 433
Գանձակ տե՛ս Կիրովաբադ
Գերմանիա 29, 81, 159, 162, 190, 191, 262, 322, 370, 377, 426, 431, 438, 447, 461, 462, 464, 568
Գենուա 550
Գայա 162
Գորեշա 395
Գորի 167, 379
Գորիս 78, 473, 477, 478, 519, 543
Գրոզնի 395
Գուրիա 110, 214
Գևորգյան ճեմ. 326

Դաղստան 307, 408
Դանիա 381
Դավոս 374, 378
Դարալագյազ 531, 547
Դարդանել 383
Դելի 423
Դերբենտ 440
Դիլիջան 42, 473, 487, 496, 524, 526, 528, 531, 549
Դոն 374, 445
Դոնի Ռոստով 47, 53, 326, 332, 374, 395, 396, 440, 442, 480, 508, 525, 530
Դրեզդեն 431
Դուկմենսկյան լեռնանցք 337
Դուշեթ 320

Ելենովկա 550
Ելիզավետպոլ 37, 38, 41, 84, 85, 124, 408

Եկատերինաբուրգ 166
Եկատերինադար 328, 440, 446, 447
Եկատերինոսլավ 110, 396
Ենա 158, 325, 366
Եվլախ 42
Եվրոպա 7, 82, 104, 160, 190, 196, 205, 262, 263, 265, 269, 273, 308, 310, 324, 432, 460, 461, 463, 534
Եվրոպական Ռուսաստան 41
Երևան 11, 34, 39—42, 44, 57, 58, 60—63, 66—72, 74, 78, 80, 81, 83, 86, 87, 90, 91, 100, 111, 126 128—131, 137, 141, 143, 144, 156, 164—169, 173—176, 189, 193, 208, 210, 211, 215, 217, 223, 224, 226, 232—236, 241, 245, 248, 257, 258, 260, 265, 267—272, 274, 277, 279—282, 287, 290, 295, 297, 299, 307, 309—312, 314, 318, 321—323, 325, 326, 332, 334, 340, 341, 343, 346—349, 352, 361, 364, 366—369, 371, 376, 386—389, 392, 394, 398—400, 406, 407, 412, 414, 423, 428—430, 432—436, 448—450, 456, 457, 464, 470—474, 476—479, 481, 485, 487, 489, 491, 494, 495, 499—508, 510—512, 514—517, 519, 520, 526—531, 534, 537, 543, 545—552, 555, 557, 562, 564, 565, 568, 575, 576
Երևանի նահանգ 38, 41, 44, 61, 65, 127, 213, 346
Երևանյան հրապարակ 366, 379

Զամոսկվորեցկի շրջ. 390
Զանգեզուր 37, 41—44, 75, 76, 124, 165, 349, 434, 436, 446, 470, 471, 473, 474, 477, 478, 482, 497, 498, 500, 518—520, 531, 548, 565, 578
Զաքաթալա 37, 38
Զելենոգորսկ 392

Էստոնիա 49, 464, 465
Էջմիածին 197, 213, 326, 401, 481, 487
Էրզրում 505, 531, 548, 562
Էրֆուրտ 162

Թեհրան 241
Թեոդոսիա 318
Թերեքի մարզ 414
Թիֆլիս 37—40, 42, 44, 49, 50, 59, 64—67, 70, 72, 80, 83—86, 88, 105, 111, 125, 126, 128, 129, 131, 145, 150—153, 166—169, 173, 174, 186—188, 191, 200, 215, 216, 219, 221, 223, 227, 230, 241, 258, 272, 280, 281, 287, 291, 292, 297, 298, 308—310, 312—321, 323, 329, 331, 334, 336, 338—340, 343, 344, 350, 351, 353, 358, 363, 365—368, 383, 379, 380, 386, 396, 397, 418, 427, 428, 430, 433, 437, 515, 517, 525, 534, 536, 539, 542, 543, 547, 553, 555, 561, 564—566, 574
Թուրքահայաստան 92, 94, 402, 403, 405, 448, 449, 452, 505
Թուրքեստան 465
Թուրքիա 197, 287, 355, 364, 380, 404, 405, 408, 419, 485, 525, 527, 542, 550
Թուրքմենիա 365, 468

Ժնև 95, 98, 100, 102, 107, 108, 132, 133, 149, 150, 154, 156, 220, 222, 240, 249, 251, 260, 268, 272—275, 289, 290, 308, 312, 360, 362, 363, 374, 377, 381, 542, 556, 559, 561

Իգդիր 83, 130, 499
Ինդիանայի նահանգ 26
Իջևան 473, 481, 498, 512
Իվանո-Վոզնեսենսկ 48, 53
Իտալիա 14, 22, 189, 461
Իրան 229
Իրկուտսկ 106

Լազարյան ճեմ. 497
Լայպցիգ 322, 370
Լատվիա 49, 315, 464—466, 486, 487
Լաֆայետ 26
Լեհաստան 45, 49, 115, 126, 462, 464
Լենայի հանքեր 164, 434
Լենինական 39, 40, 42, 49, 50, 61—65,

78—81, 86, 125, 128, 130, 132, 164, 165, 200, 290, 320, 321, 332, 334—339, 343, 345—348, 400, 427, 449, 470—473, 477, 478, 481, 483, 485, 487, 491, 493—497, 499—506, 527, 531, 543, 555, 565, 576
Լենինգրադ 37, 43, 45, 47, 48, 50, 53, 54, 76, 81, 103, 104, 109, 110, 123, 140—142, 147, 164, 169, 204, 217, 225, 226, 230, 278, 281, 309, 312, 313, 315, 320, 324, 328, 340, 341, 346, 359, 361, 363, 373, 386, 387, 389, 392, 396, 430, 434, 438, 440, 448, 455, 469, 506, 514, 526, 530, 568
Լիբանան 565
Լիոն 159, 262
Լիտվա 466, 487
Լոնդոն 60, 61, 128—130, 133, 249, 250, 258, 264, 312, 368, 377, 560, 563, 564
Լոն-Ժյումո 396
Լոռի 42, 56, 57, 60, 131, 321, 471, 478, 481, 488, 531, 548, 578
Լոձ 48, 74
Լվով 337
Լուբյանկա 390
Լուգանսկ 53

Խալխին 574
Խասան 574
Խարկով 49, 141, 181, 336, 386, 428, 440, 445
Խնձորեսկ 78, 116, 473, 477, 519
Խոնի 111

Ծաթեր 57
Ծապլվար 253
Ծավ 478

Կապան 40
Կախեթիա 82
Կալիֆորնիա 26, 261
Կաղզվան 169, 327, 473, 504
Կամենաստրովսկի հրապ. 392
Կանբերրա 26
Կանսկ 69
Կապրի կղզի 189
Կասպից ծով 415, 390
Կարաքեբիր 528
Կարին 158
Կարս 37—39, 42, 44, 49, 50, 62—65, 78, 79, 83, 130, 165, 169, 213, 339, 346, 349, 470, 471, 473, 482, 487, 493, 494, 496, 497, 501, 504, 505, 527, 565
Կերչ 318
Կեմանց 478
Կիրգիզիա 468
Կիրովաբադ 191, 309, 372
Կիրովական 57, 58, 62, 83, 213, 321, 416, 473, 478, 482, 487, 493, 494, 496, 497, 501, 526, 529, 531, 549, 576
Կիև 53, 110, 141, 330, 331, 440, 455
Կոլումբիա 21
Կոզր 164
Կոնդի թաղամ. 68
Կոպենհագեն 542
Կոստանդնուպոլիս 158, 163, 270, 309, 380, 385, 433, 543, 564, 570
Կոստրոմա 53
Կովկաս 39—41, 51, 56, 65, 71, 74, 76, 80, 84, 86, 87, 91—93, 95, 98, 100, 103, 105, 106, 108, 113, 115, 120, 126—128, 142, 149—151, 153, 155, 165, 168, 184, 186—189, 205, 206, 209, 214, 216, 218, 220—224, 226, 227, 240, 241, 272, 273, 289—291, 307—310, 313, 316, 322, 329, 335, 340, 342, 343, 345—347, 351—354, 356, 362—365, 367, 369, 373, 375, 379, 383, 384, 388, 403, 405, 406, 408, 409, 416—418, 422, 428, 431, 432, 437, 439, 443, 445, 446, 453, 456, 458, 467, 476, 484, 507—509, 513, 517, 522, 526, 534, 536, 543, 547, 555—557, 559, 560, 565, 576
Կովկասյան լեռն. 475
Կոտայք 548

Կորդինկինո 300
Կորյունապատ 191
Կ. Պոլիս տե՛ս Կոստանդնուպոլիս
Կրակով 189, 365
Կրասնայա Պրեսնյա 53
Կրասնոդար 442, 446, 447
Կրասնոյարսկ 168, 198, 370,
Կրասնովոդսկ 421, 422
Կրեմլ 390, 401, 439
Կրեմլի գրադարան 217, 223
Կուբանո-Չեռնոմոր 446
Կուրլան 57

Հաբսբուրգների միապ. 460
Հալլե 325
Հաղբատ 56, 57, 131, 339, 354, 478
Համամլու 329, 550
Համբուրգ 25, 277, 278
Հայաստան 5—7, 34, 37, 39, 41—44, 49, 55—58, 62, 65, 69, 72, 74, 75, 78—80, 82, 83, 87, 88, 95—98, 103, 118, 121, 127—132, 145, 158, 162, 164, 168, 169, 176, 179, 191, 196, 205, 206, 208—211, 213, 215, 223, 225, 227—229, 231, 239, 246—248, 257, 258, 260, 269, 271, 272, 274, 275, 280, 287, 291—293, 295, 299, 300, 304, 305, 307, 308, 312—314, 318, 320—323, 326, 327, 329, 331—337, 339, 341, 342, 346, 348—350, 352—354, 358, 368, 388, 395, 398—404, 406, 419, 422, 427, 428, 434, 435, 437, 439, 440, 442, 444, 446—460, 464, 468—534, 543, 546—552, 557, 561, 562, 564—567, 575—578

Հաջիկաբուլ 415
Հավլաբար 83, 151, 315
Հարավային Ռուսաստան 47
Հյուսիսային Կովկաս 321, 328, 418, 419, 442, 444, 445, 454, 476, 508, 522, 526, 530
Հոլանդիա 190
Հուդզոն 21
Հունաստան 380, 382

Ջունգարիա 276, 462, 464
Ձմեռային պալատ 45

Ղազախ 124, 470, 473, 474, 481, 494, 495, 497, 498, 512, 513
Ղազախստան 465, 468
Ղաթար տե՛ս Ղափան
Ղամարլու 549, 550
Ղարաբաղ 518, 519
Ղարաքիլիսա տե՛ս Կիրովական
Ղափան 40, 43, 75—77, 128, 130, 164, 169, 416, 519, 577
Ղզլար 320
Ղրիմ 237, 318, 440, 453, 455, 465, 517
Ղուբա 415

Ճապոնիա 32, 460
Ճիաթուրի 39

Մամախաթուն 337
Մանչեստր 278
Մասիս 250
Մարսել 312
Մելբուրն 27
Մեղրի 78
Մետեխի բանտ 77, 105, 106, 151, 309, 310, 336, 380, 381, 384
Մերձավոր Արևելք 517, 534
Մերձբալթիկա 45, 48
Միխայլովյան ուսումն. 372
Մինսկ 49, 140, 141, 440
Մինուսինսկ 104
Միջագետք 197
Միջին Ասիա 45
Միքայելյան Հիվանդանոց 380
Մյունխեն 325
Մոլդավիա 465
Մոնաստիրսկոյե 371
Մոնտրեո 431
Մոսկովսկո-Նարովսկի շրջ. 506
Մոսկվա 10—12, 14, 17, 21, 24, 30, 39, 40, 48, 53, 54, 58, 60, 61, 64, 67, 70, 75, 103, 105, 110, 133, 136, 139—142, 147, 164, 166, 175, 204, 212, 214, 215, 222, 224, 275, 281, 282, 292, 293, 295, 297, 298, 300,

301, 311—314, 317, 326—331, 342, 346, 380, 383, 386—388, 390, 393, 394, 398, 399, 401, 403, 405, 407, 410, 417, 420, 421, 427, 428, 439—441, 444, 447, 449, 450, 454, 455, 457, 461, 463, 464, 467, 469, 475, 477, 493, 497, 506, 508, 513, 525, 526, 528, 530, 549, 553, 555, 571, 573
Մուղան 477
Մուշ 457, 505

Յաֆա 455, 564
Յակուտսկ 106, 396

Նագիրովակ 151
Նախիջևան 416, 428, 436, 445, 518, 527
Նեվշատիլ 428
Ներսիսյան դպ. 308, 309, 330
Ներքին Ախտա 547
Նիժնի-Նովգորոդ 316
Նիկոլաև 69, 440
Նյու-Յորք 23, 234, 564
Նովոռոսիյսկ 328
Նոր Բայազետ 40, 83, 165, 168, 471, 473, 474, 478, 481, 487, 494, 497, 498, 501, 506, 531, 547, 548
Նոր Նախիջևան 444, 445, 480
Նուխի 124, 320

Շահալի-էլար 43
Շահթախտի շրջ. 527
Շահրիար 553
Շաղաթ 473
Շամախի 415
Շամլուղ 43, 56
Շամշադին 470, 473, 474, 482, 498, 512
Շարուրի շրջ. 527
Շինուհայր 519
Շիշթափա 213
Շիրակ 42, 504, 577, 578
Շիրակի դաշտ. 578
Շորապանի գավառ 395
Շվեյցարիա 273, 309, 328, 341, 366, 367, 377, 428, 431, 464, 564
Շտուտգարդ 270, 282
Շուշի 78, 124, 234, 309, 322, 324—326, 343—345, 372, 393, 518, 543
Շուշինսկո 105

Ոսնակ 57

Չինաստան 14, 30—32
Չիտա 106

Պարսկաստան 317, 364, 383, 396, 403, 419, 485, 542
Պեկին 30, 32
Պետերբուրգ տե՛ս Լենինգրադ
Պետրոգրադ տե՛ս Լենինգրադ
Պետրոպավլովյան ամրոց 389
Պերուջայի համալս. 26
Պերեվալ 422
Պիտեր 378
Պիր 382
Պլովդիվ 384, 385
Պյատիգորսկ 440, 442, 530
Պոլտավա 141, 375
Պոլտորացկ տե՛ս Աշխաբադ
Պոմպեյի 48, 465
Պորոնինո 186, 298, 364—366, 377
Պսկով 49
Պրագա 165, 167—169, 182, 185, 369, 373, 396
Պրիվոլնոյե 474
Պրուսիա 158
Պուտիլովյան գործ. 47

Ջաբրայել 124
Ջալալօղլի 132, 150, 319, 433, 482
Ջաջուռ 502
Ջուլֆա 42, 63, 416, 417

Ռիգա 48, 103, 173, 430, 559
Ռշտունյաց լեռներ 561
Ռուս-Պոլյանա 474
Ռուշչուկ* 100, 564
Ռոստով 374, 444, 445, 517
Ռուսաստան 5, 7, 23, 25, 28, 37,

* 564 էջում Ռուշչուկի փոխարեն՝ Ռուսչուկ

40—43, 45, 47—49, 51—55, 58, 63, 64, 69, 70, 75, 78, 82, 84, 86, 88—90, 96, 98, 99—105, 107, 109, 110, 116, 117, 125—127, 136, 137, 139, 140, 145, 146, 163—168, 170—172, 178, 179, 183—185, 188—192, 197, 198, 201, 203—207, 212, 213, 215, 217, 218, 223, 227, 246, 268, 269, 272, 273, 278, 279, 289—291, 295, 297, 298, 303, 308, 310, 313, 315, 317, 319, 324—326, 328, 341—344, 347, 348, 352—356, 359 361, 364, 365, 367—370, 373—375, 378, 381, 383, 384, 386, 387, 389, 394, 396, 400, 402, 403, 406, 407, 409, 411, 413, 416, 417, 425—427, 432, 437, 438, 440—444, 446—448, 451, 452, 454, 455, 461, 462, 464—468, 470, 471, 474, 480, 483, 489—491, 494, 495, 500, 507—509, 513, 514, 519—522, 524, 525, 527, 529, 530, 534, 536, 537, 540, 544, 546, 550, 553—555, 559, 560, 564

Սաբուրթալո 471, 472
Սալիխարդ տե՛ս Օբդորսկ
Սալյան 415
Սամարա 269, 317, 359, 361
Սանահին 56, 58, 59, 168
Սանկտ-Պետերբուրգ տե՛ս Լենինգրադ
Սարատով 395, 340, 455
Սարիղամիշ 49, 83, 165, 334, 339, 343, 349, 470, 481, 493, 494, 496, 497
Սարդարապատ 416, 577
Սբ. Կարապետի վանք 253
Սեմյոնովկա 529
Սիբիր 79, 81, 123, 222, 261, 309, 359, 370, 395, 396, 440
Սիզրան 427
Սիլեզիա 159, 262
Սիմֆերոպոլ 455
Սիսիան 519
Սիսիմադան 164
Սլաբոդսկի 315
ՍՍՀՄ 10, 11, 22, 23, 26, 29, 31, 33, 34, 45, 54, 262, 269, 313, 358, 465, 572, 574—576
Սմոլնի 340
Սյունիք 43, 75, 543
Սոֆիա 382
Սպիտակի շրջ. 329
Ստավրոպոլ 327, 328, 414
Ստոկհոլմ 313
Ստրասբուրգ 279
Սևանա լիճ 44, 578
Սևանա կղզի 504
Սևաստոպոլ 453, 455
Սևծովյան նահանգ 38
Սև Քար 83, 474
Սուխումի 37, 38, 167
Սուրմալու 436, 482

Վաննա 543
Վարդաբլուր 57
Վան 254, 457, 505
Վանի նահանգ 253
Վարշավա 48, 49
Վեդի 549
Վենեսուելա 14
Վերին Ագուլիս 309
Վերժբոլովա կայարան 104
Վիբորգ 506
Վիեննա 13, 182, 258, 540, 562
Վիետնամ 31
Վիննիցա 455
Վլադիկավկազ 440, 474
Վյատկայի նահանգ 314, 315
Վոլգա, գետ 394
Վորոնեժ 49
Վորոնցովկա 474
Վրաստան 37, 39, 44, 48, 128, 216, 227, 292, 307, 310, 318, 320, 321, 334, 352, 354, 406, 422, 453, 468, 471, 474—476, 485, 495, 501, 507—510, 513, 516, 517, 522, 523, 525, 546, 548, 565

Տաթևի ժայռ 559
Տաճկաստան 485
Տաշքենդ 49
Տաջիկստան 468
Տաոնաուտ 278

Տավրիկյան պալատ 392, 393
Տեզ 478
Տիբեթ 242
Տիգրանակերտ 457
Տիթրոյիթ (Դետրոյտ) 275
Տիրիոկ տե՛ս Զելենոգորսկ
Տոմսկ 69
Տվեր 53, 361
Տրապիզոն 383, 385, 543
Տրոիցկոե-Լիկովո 300
Տփղիս տե՛ս Թբիլիսի
Տուրուխանյան երկրամաս 371

Ցարգրադ 381—383
Ցարիցին 315, 316, 414, 440, 455
Ցիմերվալդ 377
Ցյուրիխ 104, 328, 374, 377, 428, 431, 433

Ուլուխանլու 61, 164
Ուզունլար 57, 491
Ուկրաինա 45, 48 295, 331, 336, 402, 454, 455, 464—466, 486
Ուրալ 177, 227

Փարիզ 15, 16, 21, 100, 103, 106, 137, 158, 159 162, 165, 185, 237, 250, 263, 268, 271, 312, 370, 373, 377, 380, 396, 398, 536, 557, 563
Փոթի 167
Փոքր Ասիա 228
Փրովիդենս 567

Քավթաղու 474, 496, 497
Քարահունջ 473, 478, 519
Քարաշեն 519
Քարվանսարայի շրջ. 498, 512, 524
Քեշիշքենդ 548
Քյուրդամիր 415, 417
Քոլագիրան 56
Քութայիսի 37—39, 49, 110, 111, 167, 191, 395
Քուռ, գետ 390

Օբդորսկ 147
Օդեսա 48, 110, 131, 440, 453, 455, 572
Օմսկ 330
Օրենբուրգ 296

Ֆինլանդիա 363, 379, 402, 403, 460, 462
Ֆրանսիա 14, 21, 22, 25, 81, 196, 239, 261, 262, 266, 276, 366, 380, 426, 461, 568, 571

47-րդ էջի՝ 12 ն. «նախափոթորկային կայծակ էր» բառերի փոխարեն կարդալ՝ քաղաքական խոշոր իրադարձություն էր

54-րդ էջի 26-րդ ծանոթության վերջում կարդալ. «Օգտագործել ենք Ռուսաստանի առաջին հեղափոխությանը նվիրված գրականությունը, այդ թվում՝ ՍՄԿԿ Կենտկոմի՝ «Ռուսաստանի 1905—1907 թթ. հեղափոխության 70-ամյակի մասին» որոշումը (տե՛ս «Правда», 1975, 9 հունվարի), ինչպես և «Ռուսական առաջին հեղափոխության 50 տարին» թեզիսները—Խ. Բ.:

195-րդ էջի՝ 16 ն. մարքսիստ- փոխարեն՝ մարքսիստական-

567-րդ էջի՝ 4 վ. ազգային-ի փոխարեն՝ ազգային բուրժուական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Առաջաբանի փոխարեն 9

ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ

1. Գիտական կոմունիզմը: 2. Հակակոմունիզմի հիմնական կոնցեպցիաների բնութագրությունը: 3. Կուսակցության մասին լենինյան ուսմունքի արդի ննդափոխողները: 4. Տրոցկիզմը հակակոմունիզմի զենքն է:

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ԼԵՆԻՆԻԶՄԸ ՄԱՐՔՍԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆՆ Է

Գլուխ առաջին.— Հեղափոխական շարժման ավանգարդը . . 37

1. Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորումը և նրա զարգացման օրինաչափությունները: 2. Առաջին գրոհը ցարական ինքնակալության դեմ: 3. Գործադուլային շարժման ղեկավարը: 4. Քաղաքական կոփումը: 5. ՌՍԴԲԿ Երևանի բոլշևիկյան կոմիտեն: 6. Արձագանքներ Զանգեզուրում: 7. «Զորքը չի կարող, երբեք չի եղել և երբեք չի լինի չեզոք»: 8. Դաշնակցությունը «հայկական իրականության» դատաստանի առջև: 9. Մեկնաբանություններ:

Գլուխ երկրորդ.— Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների պրոպագանդան 98

1. ՌՍԴԲԿ երկրորդ համագումարի որոշումների ժնևյան հայերեն հրատարակությունները: 2. Վիկտոր Կոստանովսկին Կովկասում: 3. Լենինյան «Վպերյոդ»-ի կովկասյան զինակիցը: 4. Ստ. Շահումյանի «Էվոլյուցիոնիզմը և հեղափոխականությունը հասարակական գիտության մեջ» անտեսագիտական-փիլիսոփայական աշխատությունը: 5. Հեղափոխական շարժումների արտացոլումը: 6. Ինտերնացիոնալը աշխարհը կփրկի: 7. Տեղատվության տարիների բոլշևիկյան հայ հրապարակախոսությունը: 8. Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատության մարտական դիրքերում: 9. «Ոստիկանական սոցիալիզմի» (շենդրիկովականության) մերկացումը: 10. «Մենք ամբողջովին Իլյիչի կողմն ենք...»:

Գլուխ երրորդ.— Երկու հեղափոխությունների միջև . . . 149

1. Հակոբ Հակոբյանի («Պրոլետար») նամակները Ժնև Միխա Ցխակայային։ 2. «Կարլ Մարքս» (1910) հայերեն գրքույկը։ 3. Հեղափոխական շարժման նոր վերելքը։ 4. Մարքսիստական հայ գրականագիտության ձևավորումն ու զարգացումը։ 5. Բոլշևիկյան «Նոր խոսք» հանդեսը։ 6. Լենինյան «Ուսմունքը» հայերեն։ 7. Տարածել և խորացնել մարքսիզմը։ 8. Ընդդեմ բուրժուական նացիոնալիզմի։ 9. Պատերազմի բոցերի միջով։ 10. Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսների լույսը։

Գլուխ չորրորդ.— Հայաստանի հասարակական կյանքի առաջընթացը բոլշևիկյան կենտրոնական մամուլում 209

1. Ժողովրդի խորհրդատուն։ 2. Թարմ շունչ է փչում։ 3. Բ. Կնունյանցի հոդվածները «Նովայա ժիզն» թերթում։ 4. Ընդդեմ մենշևիկ լիկվիդատորների և օտզովիստների։ 5. Ս. Տ. Արկոմեդի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գրքի արձագանքները։ 6. «Պրավդա»-ն և հայ իրականությունը։

Գլուխ հինգերորդ.— Հայ բուրժուական գաղափարախոսության սնանկությունը 231

1. Իդեալիստական փիլիսոփայության բավիղներում։ 2. Թե ինչպես «Դրոշակ»-ը նշեց Կ. Մարքսի մահվան 25-ամյակը։ 3. Միքայել Վարանդյանի «Հուշանոթները»։ 4. Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի ջատագովների բնազատությունը։ 5. Թյուր ըմբռնումներ։ 6. Կեղծ մարքսիստների սատիրական մերկացումը։

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ
ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Գլուխ առաջին.— Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունները 257

1. Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատությունները հայերեն։ 2. Հայկական Լենինիանայում։ 3. Մարքսիստական գրականության առաջին հայ թարգմանիչներն ու խմբագիրները։

Գլուխ երկրորդ.—Հոկտեմբերի ուղիներում 333

1. Մարքսիստական-լենինյան հետևողական գծի իրականացման համար։ 2. «Կա այդպիսի կուսակցություն»։ 3. «Կենտրոնի գործիչները շատ մեծ կարիք ունեն «նեցուկ»-ների»։ 4. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը և նրա արձագանքները։ 5. Հացի, խաղաղության և հաշտության վերաբերյալ լենինյան դեկրետների պրոպագանդան։ 6. Դեպի սոցիալիզմի թագավորություն։

Գլուխ երրորդ.— Վ. Ի. Լենինը և հայ հեղափոխական գործիչների հասարակական կապերն ու նամակագրությունը 357

1. Ականջների մոտ։ 2. Թանկագին Իլյիչ։ 3. Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ։ 4. Լենինը խոսում էր քեզ հետ։ 5. Կանգնեցիր Լենինի դրոշի տակ։ 6. Բեռլինցին մեր լավ բարեկամն է։ 7. Անձամբ ճանաչում եմ։ 8. Անչափ երջանիկ եմ, որ եղել եմ այդ հսկայի, մեր

ժամանակի հանճարի հետևորդն ու փոքր աշակերտը։ 9. Ինչի՞ց ժամանակ էր գտնում պատասխանելու բոլոր հարցերին։ 10. Ինչի՞ մասնագետ։ 11. Ինչպես լայնահուն, վիպաշունչ տաք։

Գլուխ չորրորդ.— Բոլշևիկյան գաղափարների տարածողներ . . 402

1. «Թուրքահայաստանի» մասին դեկրետը և նրա պրոպագանդան։ 2. Բաքվի հայկական կոմունան ժողովուրդների բարեկամության ջահակիր։ 3. «Տեղեկատու»-ն սոցիալիստական վերափոխությունների տարեգիր։ 4. Աբրահամ Միքայելյանը և նրա «Խոսք» թերթը։ 5. Հայկական գործերի կոմիսարիատի մամուլը։ 6. «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը» սովետական իշխանության գաղափարների մունետիկ։

Գլուխ հինգերորդ.— Պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում կուսակցության կառուցման լենինյան սկզբունքների հաղթանակը 460

1. Կոմունիստական կուսակցությունների առաջացումը։ 2. Կուսակցության կառուցման գործում ինտերնացիոնալիզմ և ոչ թե ֆեդերալիզմ։ 3. Կազմակերպական նոր քայլ։ 4. ՌԿ(բ)Կ Հայաստանի կազմակերպությունների 1919 թվականի սեպտեմբերյան խորհրդակցությունը և 1920 թվականի հունվարյան կոնֆերանսը։ 5. ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտեի (Արմենկոմի) գաղափարական-քաղաքական աշխատանքը։ 6. Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության կազմակերպական ձևավորման ավարտումը։

Գլուխ վեցերորդ.— Բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների գաղափարական կրախը 533

1. Դաշնակցության պառակտումը։ 2. Անհեռատես քաղաքականության ծանր հետևանքները։ 3. 1921 թվականի փետրվարյան խռովության ջախջախումը։ 4. Հայկական կադետականության առաջացումը և սնանկությունը։ 5. Հայ սոցիալիստ-հեղափոխականները՝ էսեռները դաշնակցության զինակից։ 6. «Սպեցիֆիկյան» մանրբուրժուական սոցիալիստների խոսքն ու գործը։ 7. Հնչակյան աղճատված մարքսիզմը։ 8. Հայկական մենշևիզմի վախճանը։ 9. Հայրենիքի և հայրենասիրության մասին ճամարտակությունները։ 10. Բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունների լուծարքը ՍՍՀՄ-ում։

Ցանկեր 579

СОДЕРЖАНИЕ

Два слова 5

Вместо предисловия

Современные фальсификаторы марксизма-ленинизма 9

1. Научный коммунизм. 2. Критика основных концепций антикоммунизма. 3. Современные фальсификаторы ленинского учения о партии. 4. Троцкизм—оружие антикоммунизма.

РАЗДЕЛ ПЕРВЫЙ

ЛЕНИНИЗМ — ВЫСШАЯ СТУПЕНЬ РАЗВИТИЯ МАРКСИЗМА

Глава первая.—Авангард революционного движения . . . 37

1. Формирование рабочего класса Армении и закономерности его развития. 2. Первый штурм царского самодержавия. 3. Вожак забастовочного движения. 4. Политическая закалка. 5. Ереванский большевистский комитет РСДРП. 6. Отклики в Зангезуре. 7. «Войско не может, никогда не было и не будет нейтральным». 8. Дашнакцутюн перед судом «армянской действительности». 9. Комментарии.

Глава вторая.—Пропаганда идей марксизма-ленинизма . . 98

1. Женевские армянские издания решений II съезда РСДРП. 2. Виктор Курнатовский на Кавказе. 3. Кавказский соратник ленинской «Вперед». 4. Экономическо-философское произведение Ст. Шаумяна «Эволюционизм и революционизм в общественной науке». 5. Отражение революционных выступлений. 6. «С Интернационалом воспрянет род людской». 7. Армянская большевистская публицистика в годы реакции. 8. На боевых позициях труда В. И. Ленина «Материализм и эмпириокритицизм». 9. Разоблачение «полицейского социализма» (шендриковщины). 10. «Мы всецело на стороне Ильича...».

Глава третья.—Между двумя революциями 149

1. Письма Акопа Акопяна («Пролетар») в Женеву—Михе Цхакая. 2. Брошюра «Карл Маркс» (1910) на армянском языке.

3. Новый подъем революционного движения. 4. Формирование и развитие армянского марксистского литературоведения. 5. Большевистский журнал «Нор хоск». 6. Ленинское «Извещение» на армянском языке. 7. Распространять и углублять марксизм. 8. Против буржуазного национализма. 9. Сквозь пламя войны. 10. Свет «Апрельских тезисов» В. И. Ленина.

Глава четвертая.—Освещение политической жизни Армении в центральной большевистской печати 209

1. Наставник народа. 2. Веют свежие ветры. 3. Статьи Б. Кнунянца в газете «Новая жизнь». 4. Против ликвидаторов-меньшевиков и отзовистов. 5. Отклики на книгу С. Т. Аркомеда «Рабочее движение и социал-демократия на Кавказе». 6. «Правда» и армянская действительность.

Глава пятая.—Банкротство армянской буржуазной идеологии . 231

1. В лабиринтах идеалистической философии. 2. Как «Дрошак» отметил 25-летие смерти К. Маркса. 3. «Течения» Микаэла Варандяна. 4. Критика апологетов «национально-культурной автономии». 5. Превратное восприятие. 6. Сатирическое разоблачение лже-марксистов.

РАЗДЕЛ ВТОРОЙ

ПОБЕДА ИДЕЙ МАРКСИЗМА-ЛЕНИНИЗМА

Глава первая.—Армянские издания трудов К. Маркса, Ф. Энгельса, В. И. Ленина 257

1. Труды К. Маркса, Ф Энгельса на армянском языке. 2. Армянская Лениниана. 3. Первые армянские переводчики и редакторы марксистской литературы.

Глава вторая.—На путях Октября 333

1. За осуществление последовательной марксистско-ленинской линии. 2. «Есть такая партия». 3. Работники Центра очень нуждаются в «операх». 4. Победа Великой Октябрьской социалистической революции и ее отклики. 5. Пропаганда ленинских декретов о земле и мире. 6. К царству социализма.

Глава третья.—Политические связи и переписка В. И. Ленина и армянских революционных деятелей 357

1. У истоков. 2. Дорогой Ильича... 3. По заданию В. И. Ленина. 4. Ленин говорил с тобой. 5. Становитесь под знамя Ленина! 6. Берлинец наш лучший друг. 7. Лично известен. 8. Безмерно счастлив, что был последователем и маленьким учеником этого великана и гения нашего времени. 9. Ильич находил время для ответа на все вопросы. 10. По мандату Ильича. 11. Как широкое эпическое слово.

Глава четвертая.—Распространение большевистских идей . . 402

1. Декрет о «Турецкой Армении» и его пропаганда. 2. Ге-

роическая Бакинская Коммуна светоч дружбы народов. 3. «Тегекату» («Известия») — летопись социалистических преобразований. 4. Аршавир Меликян и его газета «Хоск». 5. Печать Комиссариата по армянским делам. 6. «Коммунистическая партия Армении» — глашатай идей Советской власти.

Глава пятая.— Победа ленинских принципов построения партии в условиях диктатуры пролетариата 460

1. Появление коммунистических партий. 2. Интернационализм, а не федерализм в деле строительства партии. 3. Новый организационный шаг. 4. Сентябрьское (1919) совещание и Январская (1920) конференция армянских организаций РКП(б). 5. Идеологическая и политическая работа Армянского комитета (Арменкома) РКП(б). 6. Завершение организационного оформления Коммунистической партии (большевиков) Армении.

Глава шестая.— Идеологический крах буржуазных и мелкобуржуазных партий 533

1. Раскол «дашнакцутюн». 2. Тяжелые последствия недальновидной политики. 3. Разгром февральской авантюры 1921 года. 4. Возникновение и крах армянского кадетства. 5. Армянские эсеры — соратники дашнаков. 6. Слова и дела мелкобуржуазных социалистов — «спецификов». 7. Искаженный марксизм гнчакистов. 8. Конец армянского меньшевизма. 9. Разглагольствования о Родине и патриотизме. 10. Ликвидация буржуазных и мелкобуржуазных партий в СССР.

Указатели 579

ԽԻԿԱՐ ՀԱԿՈԲԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ
ХИКАР АКОПОВИЧ БАРСЕГЯН

Մարքսիզմի տարածումը Հայաստանում

Պայքար մարքս-լենինյան գաղափարների հաղթանակի համար 1905—1920

Գիրք երկրորդ

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ
պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պատասխանատու խմբագիր
Գ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հրատարակչական խմբագիր
Ա. Հ. ՇԱՂԳԱՄՅԱՆ

Նկարչական ձևավորումը
Կ. Բ. ՏԻՐԱՏՈՒՐՅԱՆԻ

Տեխնիկական խմբագիր
Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ

Սրբագրիչ
Ջ. Խ. ՕՐՄԱՆՅԱՆ

ՎՖ 05424 Պատվեր 633 Հրատ. 4283 Տպաքանակ 3000

Հանձնված է շարվածքի 17/IX 1975 թ.: Ստորագրված է տպագրության 30/1 1976 թ.: Տպագրական 38 մամուլ, հրատ. 32,65 մամուլ: Թուղթ № 1, 60×90 1/16, Գինը 2 ռ. 85 կ.:

Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության, 24:
Издательство АН Арм. ССР, Ереван-19, Барекамутян, 24
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության Երևանի տպարան

A II
56288

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220056288